

ՄԱՆՈՒԿ
ԱԲԵՂՅԱՆ

Ա.







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯН

МАНУК АБЕГЯН

ТРУДЫ

1

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

Ա

Հ
III
3253

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱՆՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966



ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐ

ԱՂԱՏԱՆ Է. Ք., ՀԱՎՈՐՑԱՆ Պ. Հ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՏԱՆ Ս. Ք., ՂԱՆԱԿԱՆՏԱՆ Ա. Տ.,
ՄԵԼՈՒՆԻՍՏԱՆ Կ. Ա., ՆԱԲԱՆԴՏԱՆ Վ. Ս., ՊԻԼԱՉՏԱՆ Է. Ա., ՍԱՐԳՍՏԱՆ Խ. Ա.

Հասցի: Խմբագրություն, Նախարար և Նախարարություններ
Ա. ՂԱՆԱԿԱՆՏԱՆԻ



Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Սովետական Հայաստանի կառավարությունը տարիներ առաջ հանձնարարեց Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիային հրատարակել նույն ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Գ-ր Մանուկ Աբեղյանի երկերի ժողովածուն: Ակադեմիայի նախագահությունն իր հերթին այդ պարտականությունը դրեց ինստիտուտի վրա, որը և, համապատասխան նախապատրաստական աշխատանքներ կատարելուց ձեռո, այժմ սկիզբ է դնում վերոհիշյալ հրատարակությանը:

Երկերը կազմելու են 8 հատոր, ուր տեղ են գտնելու հեղինակի ոչ յն տպագիր, այլև անկազմին անտիպ կարևորագույն հեռագրություններն ու հոդվածները: Երկերի մեջ չեն բնդգրկվելու նրա գրչին պատկանող գեղարվեստական և թարգմանական գործերը, դասագրքերի ու ձեռնարկների մի մասը, հրապարակախոսական և այլ կարգի մի շարք հոդվածներ ու գրախոսություններ, բանհայտական և պատմագրական սկզբնաղբյուրների հրատարակությունները (ժողովածուներ, բնագրեր): Հրատարակվող աշխատությունները ըստ հատորների բաշխվելու են հետևյալ կերպ.

Ա հատոր. Հայ վիպական բանահյուսություն (ուսումնասիրություն ժողովրդական առասպելների, հին ու նոր վեպերի և վիպական երգերի մասին):

Բ հատոր. Հայ բնարական բանահյուսություն (ուսումնասիրություններ հին գուսանական երգերի և ժողովրդական խաղիկների մասին):

Գ հատոր. Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա (սկզբից մինչև X դար):

Դ հատոր. Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ (XI—XIV դարեր) և հոդվածներ հայոց հին գրականության վերաբերյալ:

Ե հատոր. Տաղաչափական հետազոտություններ («Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ», «Հայոց լեզվի տաղաչափություն», «Մի քանի տաղաչափական խնդիրների մասին», «Շահնամայի շափր հայ բանաստեղծության մեջ»):

Ձ հ ա տ օ ր. Քերականագիտական-լեզվաբանական աշխատություններ («Աշխարհարարի հարվեներ», «Աշխարհարարի շարահյուսություն», «Հայոց լեզվի տեսություն» և այլն):

Է հ ա տ օ ր. Հետազոտություններ հայկական հավատալիքների մասին («Հայ ժողովրդական հավատք», «Վիշապներ» կոչված կոթողները):

Ը հ ա տ օ ր. Գրական-ֆենեղատական, բառերագիտական, հրապարակախոսական հոդվածներ և նամակներ:

Մ. Արևիլյանի բոլոր գործերը ներկա հրատարակության մեջ տպագրվելու են անփոփոխ ձևով, սոսկ մասնակի խմբագրական կրճատումներով և շտկումներով:

Մ. ԱՐԵՂԵԱՆԻ ԱՂՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ:

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայն ու բնագրիկուն է Մանուկ Արեղյանի գրական, հասարակական, մանկավարժական և գիտական գործունեությունը: Քննադատություն, հրապարակախոսություն, ուսուցչություն, դասախոսություն, բանասերություն, քերականագիտություն, գրականագիտություն. ահա ոչ լրիվ ցանկն այն բնագավառների, որոնց նվիրել է նա իր գիտակցական ողջ կյանքը, իր մտքերն ու զգացմունքները, ոգորումներն ու ավայտանքները, միշտ նայելով դեպի առաջ, միշտ ղեկավար ակզրունք ունենալով՝ գիտություն ջաշերը, ժամանակի ոգին, հարազատ ժողովրդի լավագույն իզներն ու ակնկալությունները:

Արեղյանը աչքի էր ընկնում ոչ միայն բնատուր մեծ տաղանդով և ստեղծագործական խոշոր կարողություններով, այլև անսպառ եռանդով, բացառիկ աշխատասիրությամբ, իմացությունների հսկայական պաշարով, ուսումնասիրվող երևույթների ու առարկաների էական առանձնահատկությունները քաջաճայտելու և դրանք իրար հետ համագրելու հզոր ունակությամբ:

Հետոքեն հետազոտելով մեր վաղըջական առասպելներն ու վեպերը, գուսանական երգերը, գրաբարի քերականությունը, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և մյուսների կյանքն ու քրոթը, նախորապես լուսաբանել է նաև հայ ժողովրդի նորագ շրջանի վեպերն ու վիպական երգերը, ժողովրդական խաղիկները, աշխարհաբարի շարահյուսությունը, Հովհաննիսյանի, Քումանյանի, Զարենցի և Թրիշևի գրական ժառանգությունն էական հարցերը, երկու դեպքում էլ մատարելով՝ գիտական լուրջ ընդհանրացումներ և նշանակալից հայտնագործումներ:

Հասարակական կյանքի ասպարեզ մտնելով անցյալ դարի 80-ական թվականների ակզրին, երբ հայ ժողովուրդն ասպրում էր ակզային ինքնագիտակցություն իր բուն վերելքը, իսկ նոր, երիտասարդ սերունդն էլ տոգորված էր արևմտահայերի ազատության գործին նվիրվելու գաղափարով, Արեղյանը գինյորագրվեց նրա առաջավոր մատարականությունն այն բանակին, որն փրեն նշանաբան էր բնտրել ժառանգելու հարազատ ժողովրդի ինքնահաստատման, ազատություն, լուսավորության ու առաջադիմության գործին: Հովհաննես Քումանյանի, Կամիաթոյի, Քոր-

րոս Քորամանյանի և գրականութիւնն արվեստի ու գիտութիւնն գործիչ իր անընդակից մյուս ընկերներին հետ, իրեն հուզող ազգային, քաղաքական, շուտամորակայան ու այլ հարցերի պատասխանը սինտրելով ժողովրդի վիճակունակ ուժերի և վերջինիս ստեղծած դարամոր առողջ ավանդների մեջ, Արեղյանը վճռականորեն հակադրվեց հին, իր դարն ապրածին, դառնալով նորի ու առաջավորի համոզված պաշտպանն ու քատագովը:

Առանձնապես մեծ է Արեղյանի վաստակը հայ ժողովրդական բանահյուսութիւն, լեզվի ու գրականութիւնն ուսումնասիրութեան քննադատականութեամբ: Նա եղել է և մնում է հայագիտութեան այդ կարևոր մարզերի ամենակարևորագոյն և ամենից ակնելի հեղինակավոր դեմքը, դասական հայագիտութեան միջնորդ, զիմակայունն ու անհողող կազմին, որի արմատները ձգվում են դեպի մեր մշակույթի պատմութեան խորքերը, դեպի Մծսրոպ Մաշտոցն ու Մովսէս Խորենացին:

Կանգնած լինելով ժամանակի հիւրոպական ու ռուսական առաջավոր գիտութեան գիրքերի վրա, և քննադատորեն ու ստեղծագործաբար յուրացնելով իր մեծ նախորդներին՝ Ղևոնդ Ալիշանի և Արսեն Ալտնյանի, Մկրտիչ Էմինի ու Ստեփաննո Պալասանյանի հարուստ ժառանգութիւնը, Արեղյանը կեն դարից ավելի պեղեց, ուսումնասիրեց և մեկը մյուսի ետևից հրատարակ հաննց ժողովրդի հոգևոր ստեղծագործութեան հազարամյա գանձերը, և իր ինքնուրույն ու ծանրակշիռ խոսքն ասելով դրանց մասին, նոր աստիճանի բարձրացրեց հայագիտութիւնը:

1

Մանուկ Արեղյանը ծնվել է 1865 թվականի մարտի 17-ին (ն. տ.), Հին Նեախիջևանի Աստապատ գյուղում, ջինականի տրդի և տոհմիկ հողագործ Խաչատուր Արեղյանի բազմամարտ զնտանիքում:

Միջնակարգ կրթութիւնը Արեղյանը ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր սովորել է 1876—1885 թվականներին: Նրա ուսուցիչներն այստեղ եղել են ժամանակի այնպիսի առաջավոր մտավորականներ, ինչպիսիք են՝ Ստեփաննո Պալասանյանն ու Սեդրակ Մանգիւնյանը, Կարապետ Կոստանյանն ու Նիկողոսյո Քարամյանը: Վերջիններս իրենց ուղիժ և ընդունակ աշակերտին հաղորդել են ոչ միայն համապատասխան հիմնավոր գիտելիքներ՝ հայոց հին ու նոր լեզուների, գրականութեան, պատմութեան ու այլ առարկաների վերաբերյալ, այլև ներշնչել են հայրենասիրական ու լուսավորական քարձր գաղափարներ, ամուր պատվաստել նրա մեջ հարազատ ժողովրդին անձնվիրորեն ծառայելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը:

1885 թվականին ճեմարանի գնահատականներով ավարտելով Գևորգյան ճեմարանը, Արեղյանը սկսում է զբաղվել մանկավարժութեամբ: Իրրև հայոց լեզվի ու գրականութեան ուսուցիչ նա պաշտոնավա-

րում է նախ ճեմարանում (1885—1887 թթ.), ապա՝ Շուշի վանքի մեծական դպրոցում (1887—1889 թթ.), այնուհետև՝ Քիֆլիսի Ղովնայան օրիորդաց դպրոցում (1889—1893 թթ.): Մանկավարժության հետ զուգընթաց նույն այդ տարիներին նա կատարում է նաև զգալի գրական, հասարակական և գիտական աշխատանքներ:

Արձագանքելով 80—90-ական թվականների հայ հասարակական միտքը հուզող ազգային, քաղաքական, սոցիալական և մասնավորապես գրական ու մշակութային հրատապ հարցերին, Արեղյանը ժամանակի նշանավոր պարբերականների (սենտր-Պարս, սՄուրեճ և այլն) էջերում տրայագրում է բազմաթիվ հոդվածներ ու գրախոսություններ (մեծ մասամբ Վառսամ ու Գիսավոր ծածկանուններով), լույս է ընծայում մի քանի զբոսայգիներ:

Ամուր հենված ժողովրդայնության դիրքերին, Արեղյանն իր այդ գործերում առաջ է քաշում և հետևողականորեն զարգացնում է ժողովրդի լուսավորության, նրա լայն խավերի նյութական բարեկեցության, կրթության, դաստիարակության, ընտանեկան ու հասարակական բարքերի բարեփոխման անհրաժեշտությունը, լեզվի, գրականության, մամուլի, ֆատրոնի վարդաքման, անգիր ֆանահյուսության գրառման և ուսումնասիրության, վերջինիս պրականության ու արվեստի վրա ունենալիք բարձրար ազդեցության կարևոր հարցերը: Նա միաժամանակ անձամբ զբաղվում է ժողովրդական ֆանահյուսության նյութերի գրառման և ուսումնասիրության գործով, գրում է շահածո և արձակ գեղարվեստական ստեղծագործություններ, կատարում քարզամանություններ ռուս և նվրդական նշանավոր հեղինակներից (Գոգոլ, Ելեգրին, Շաֆն և այլն):

Արեղյանի գրական երախայրիքը հանդիսանում է սՄիփանա քաղերս խորագրով բանաստեղծությունը, որը սրվել է 1886 թվականին, Կոմիտասի դաշնակաժ անբառ սեօ՞, լօ՞, լօ՞ հայտնի քայլերգի համար: Բանաստեղծության նյութն ընտրված է IX դարի կեսին արաբ զավթիչների դեմ սասունցոց բարձրացրած նշանավոր զինված ապստամբությունից: սՄիփանա քաղերսը սղքի է ընկնում իր տգեղունչ տրամադրությամբ, զեղուուն շափով և ուժեղ թափով: Այն լավ ներգաշնակում է Կոմիտասի քայլերգի երաժշտական առանձնահատկություններին (ձայների սպաստ շարժում, վարդաքոջ ընթացք և այլն):

Արեղյանի գիտական կենսագրության առաջին էջը նշանավորվում է սՄասունցի Դավթի երկրորդ պատումի հայտնաբերումով, որը նա գրի է առնում նույն 1886 թվականին էջմիածնում, մոկացի պատեղոստեսախո քեռուց: սՄասունցի Դավթին 1874 թվականին հրատարակված Արվանձույանի առաջին պատումից հետո, Արեղյանի տրվյալ պատումը մի նոր հայտնություն էր: Այն ոչ միայն լրացնում էր Արվանձույանի պատումի թերի կողմերը, այլև ուներ իր ինքնուրույն արժանիքները (գեղարվեստական ամբողջականություն, լիպական նոր մոտիվներ ու միջադեպեր, նոր հերոսներ ու հերոսուհիներ), որի համար ն

ժամանակին արժանանում է հայ ժողովրդական վեպով հետաքրքրվող-ների քարձր զնահասականին:

Իր գրախոսականում նիկողայոս Մառը գրում է, որ Արեղյանի պատմաբան կարևոր է ամենից առաջ իբրև մի քարթառային նյութ լեզվաբանութեան համար: Բայց դա, ասում է նա, բանհամեմատ ավելի կարեւոր է իբրև մի հազվագյուտ հիշատակարան հայ ժողովրդական ստեղծագործութեան, և մասնավորապես իբրև մի վարիանտ Սասունի հերոսների մասին ձեռած հայտնի պատմվածքների: Եւրեղյանի գրի առած քննադիրը արժեքավոր է նաև այն նկատմամբ, որ դա յուրահատուկ ժողովրդական ուսանավորի ձեռով է և եթև իր ձեռով որևէ բան հիշեցնում է, այդ ամենից շուտ հենց հին հայ ժողովրդական բանաստեղծութիւնն է, որ, ցավոք, միայն հատվածներով է պահվել մի քանի հայ պատմագիր-ների մեջ¹:

1893 թվականին, քարձրագույն մասնագիտական կրթութիւն ստանալու նպատակով, Արեղյանը մեկնում է արտասահման: Մինչև 1895 թվականը նա ուսանում է Խնայի և Լայպցիգի (Գեյմանիա) համալսարանների բանասիրական ֆակուլտետներում: 96—97 թթ. նա իբրև ուսանող աւազատ տնկնդիր դասախոսութիւններ է լսում Ռեոքիսի և Փարիզի (Սորբոն) համալսարաններում: Այստեղ Արեղյանը հիմնավորապես տիրապետում է գերմաներեն և ֆրանսերեն լեզուներին, խորանում գերմանո-ֆրանս դասական բանասիրութեան գլխավոր առարկաների մեջ (լեզու, պատմութիւն, գրականութիւն, գրականութեան տեսութիւն, փիլիսոփայութիւն), ծանօթանում և մտերիկից շփվում է ժամանակի մի շարք նշանավոր պրոֆեսորների հետ, այդ թվում եվրոպացի աշխարհահռչակ հայագետներ Է. Զելցերի և Ա. Մելիի հետ:

Արտասահմանում եղած տարիներին Արեղյանը գործոն մասնակցութիւն է ունենում տեղի հայ ուսանողական կազմակերպութիւնների կյանքին, զբաղվում գրական ու գիտական աշխատանքներով, պարբերաբար հոդվածներ և ուսումնասիրութիւններ տպագրում Քիֆուիսի «Նոր-Պարս օրագրում և էքսիաժնի սերարատ» ամսագրում:

Զիշալ տարիներին հրատարակված նրա գործերից առանձնապես նշանակալից է «Նոր-Պարս»-ի 96 և 97 թվականների բազմաթիվ համարներում լույս տեսած «Գրական դպրոցներ» խորագրով ընդարձակ հոդվածաշարը²:

Հայ փրակտիկութեան մեջ առաջին լուրջ աշխատութիւնն է դա՝ նվիրված գրականութեան տեսութեան անպիսի կարևոր հարցի, ինչպիսին գրական ուղղութիւնների հարցն է, ուր հեղինակը օգտագործելով եվրո-

1 «Записки Вост. отд. русскаго археолог. общества», том 4, СПб 1889, էջ 414 և 417.

2 «Նոր Պարս», 1896 թ., № № 28, 29, 32, 33, 38—100, 102, 104, 107, 108, 112, 117, 121, 125. 1897 թ., № № 47, 48, 51, 52, 58, 60, 62, 68, 69, 71.

պական և աստուծոյն ժամանակակից առաջավոր գեղագետների համապատասխան մտքերը, քննական վերլուծման է ենթարկում գրական ուղղութիւնները, բացահայտելով դրանց առաջացման, զարգացման ու վերացման պատմա-հասարակական պատճառները:

1898 թվականին Արեղյանը Ենայի համալսարանում հանձնում է ավարտական քննութիւնները, փայլուն կերպով պաշտպանում իր դիտարտացիան՝ Եվիբրլած հայ ժողովրդական հավատարիքներին և ատանում է փիլիսոփայութիւնի դոկտորի աստիճան:

Արեղյանի այդ ուսումնասիրութիւնը 1899 թվականին լույս է տեսնում Հայպիզում գերմաներեն լեզվով՝ «Der Armenische Volksglaube» խորագրով: Վերջինիս մասին թե՛ գերմանական և թե՛ հայկական մասնագիտական պարբերականներում տպագրվում են մի շարք դրական գրախոսութիւններ:

1898 թվականին արտասահմանից հայրենիք վերադառնալով, Արեղյանը ստանձնում է էջմիածնի Գեոքղյան ճեմարանի յարանական բաժնի հայագիտական մի շարք կարևոր առարկաների դասախոսի պարտականութիւնը, և մինում է էջմիածնում մինչև 1914 թվականը:

Այդ նույն տարիներին Արեղյանի հետ ճեմարանում աշխատում են նաև բանաստեղծ Լոյհաննես Լոճհաննիսյանը, մանկավարժ Աեղրակ Մանդինյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, լեզվագրան Հրայր Աճառյանը, բանասեր Ստեփան Կանայանը, հրապարակախոս և գրականագետ Մինաս Բերբերյանը, արվեստարան Փարեգին Լեոնյանը, բանասերներ Փարեգին Լովսեփյանը, Կարապետ Տեր-Մկրտչյանը, Արեղյանի մտերիմ ընկեր ու լավ բարեկամ Կոմիտասը և ուրիշներ:

Վերջիններիս շնորհիվ ճեմարանը դառնում է համազգային հրոշակ ու հեղինակութիւն վայելող ուսումնական մի բարձր հաստատութիւն, որը դեպի իրեն է ձգում Արևելյան ու Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում և մտտիկ ու հեռավոր գաղութներում ապրող ուսումնածարավ հայ երիտասարդներին:

Մի շրջան էր դա, ձյր ճեմարանի անջի ջնկնող դասախոսները մանկավարժական գործունեութիւնը հաջողութեամբ պուզակցում էին իրենց ստեղծագործական աշխատանքի հետ, առանձին գրքերով և ժամանակի նշանավոր սրարերակաւ հանդեսներում հրատարակելով հիշյալ աշխատանքի արդյունքները: Այդ գործին մեծապես նպաստում էր էջմիածնի հռչակավոր Զեռագրատմամատենադարանն իր հարստ գրլագրերով:

Ճեմարանի այս ընդհանուր բարենպաստ մթնոլորտում լավագույնս բացահայտվում են նաև Արեղյանի մտավոր ու ստեղծագործական կարողութիւնները: Այստեղ է, որ նա հայագիտական հիմնական առարկաների (գրաբար, հայոց հին գրականութիւն, ժողովրդական բանահյուսութիւն, հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն) դասավանդման հետ միասին, ծավալում է նաև գիտական բեղմնավոր գործու-

նեռութիւն, տարիների լեթացքում պատրաստելով և մեկը մյուսի ետևից հրատարակելով քանագիտական, քերականագիտական և գրականագիտական իր մի շարք կարևոր աշխատութիւնները:

Գասախոսական և դիտական պարապմունքների հետ միաժամանակ, ճեմարանում եղած տարիներին, Արեղյանը գործոն մասնակցութիւն է ունենում հասարակական աշխատանքներին: Ուրիշների հետ նա հիմնադրում է Կովկասի հայոց ուսուցիչների արհեստակցական միութիւնն էլ միաժամին ճյուղը և տարիների շարունակ կատարում է նրա նախագահի պարտականութիւնները:

Ձևայած ճեմարանի դասախոսների և ուսանողութիւն միջավայրում իր ունեցած հեղինակութիւնը և վայելած հարգանքին, Արեղյանը 1914 թվականին թողնում է ճեմարանը: Այդ քայլն անելու նրան դրդում են վանական իշխանութիւն և իր միջև ստեղծված յարված հարաբերութիւնները:

1914 թվականի կեսերին, Ներսիսյան դպրոցի վարչութիւն հրավերով Մանուկ Աբեղյանը տեղափոխվում է Քիֆլիս՝ այդ դպրոցում գրասրար և հայոց հին գրականութիւն ավանգերու համար: Քիֆլիսում եղած տարիներին Աբեղյանը աշխատել է մասն աշատեղի Հովնանյան օրրոցաց դպրոցում, Կովկասյան համալսարանում և 4-րդ դիմնագիայի քարեր դասարաններում, ավանգելով հայոց լեզու և գրականութիւն:

Նաև այդ շրջանում նա գործոն մասնակցութիւն է տնօնել տեղի մշակութային կյանքին. Հայ գրողների ընկերութիւն և Հայոց ազգագրական ընկերութիւն նիստերին, Քումանյանի և Սրվանդ Հայայանի խնդրանքով, կարդացել է մի շարք հրատարակային դասախոսութիւններ հայոց հին գրականութիւն տարբեր հարցերի վերաբերյալ:

1919 թվականին Արեղյանը Քիֆլիսից տեղափոխվում է Սրբան, ուր և մնում է մինչև մահ:

Մանուկ Աբեղյանի կյանքն ու գործունեութիւնը քննական հոնի մեջ են մտնում և մեծ թափ ստանում Հայաստանում սովետական իշխանութիւն հաստատումից հետո, որին վաստակավոր զիտնականը դիմափորում է զրկարաց, կապելով նրա հետ իր բազմաշարք ժողովրդի ֆիզիկական փրկութիւն և հոգևոր վերածննդի հույսը:

Իր կյանքի այս նոր փուլում, Արեղյանը կատարում է, նախ և առաջ, պետական-հասարակական մի շարք կարևոր հանձնարարութիւններ:

1921 թվականին Հայաստանի լուսժողովուրդի հանձնարարութիւններ նա պատրաստում է հայոց լեզվի ուղղագրութիւն ռեֆորմի նախագիծը, որի հիման վրա և ժողովուրդը 1922 թվականին հրատարակում է նոր ուղղագրութիւն ղեկընտար, նպատակ ունենալով դուրսացնել մասսայական ուսուցման դժուրը:

1924 թվականին Արեղյանն ընտրվում է Կովկասյան վարմարգրող քանուկի ռազմա-հեղափոխական խորհրդին կից թարգմանչական հանձնաժողովի անդամ՝ ռազմական կանոնագրերը լեզվական խմբագրութիւն

ենթարկելու և հայկական դիվիզիայում գործածվող հրամանները հայացնելու համար:

1925 թվականին նա նշանակվում է Հայաստանի զինական մտքի առաջին կենտրոնի՝ Գիտություն և արվեստի ինստիտուտի խորհրդի նախագահ և հինգ տարի անփոփոխ պատվով կատարում այդ պատասխանատու պարտականությունը:

1932 թվականին Արեղյանը ընտրվում է Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությանը կից Առվեստական Հայաստանի քննակազմի անունների ճշգրտման ու ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ և տեղի ներքինական հանձնաժողովի անդամ, իր բանիքուն ցուցումներով ու խորհուրդներով երկար տարիներ շատ օգտակար դեր խաղալով այդ բնագավառում:

1939 թվականին զինականը ընտրվում է Ասսուենցի Դավթի 1000-ամյակի հանդեսի փրակտիկական հանրապետական Գործընկերության հանձնաժողովի անդամ, և իր փորձով ու լիարժեքությամբ մեծ աշխատանքներով անհրաժեշտ է հրահանգներ կատարում:

Նշված տարիներին Արեղյանը կատարում է նաև դասախոսական բեղմնավոր աշխատանք:

1922 թվականին նա հայոց լեզու է ավանդում Երևանի նորաբաց ուղղական դպրոցում:

1923—1935 թվականներին Արեղյանը Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում կարդում է հայոց լեզվի տեսություն, հայոց հին գրականության պատմություն և ժողովրդական բանահյուսություն և առարկաների դասընթացները:

1935—1936 թվականներին նա Գրողների տան կից գրական համալսարանում ավանդում է հայոց լեզվի տաղաչափություն և ուղղական:

Առանձնապես արգյունավետ է եղել Արեղյանի սովետական տարիների բուն զինական ստեղծագործությունը: Այդ տարիներին նա համապատասխան բարենպաստ պայմաններ է ստանում ու միայն շարունակելու և ավարտին հասցնելու նախորդ շրջանում սկսած, բայց այս կամ այն պատճառով կիսատ թողած լի ամի քանի մարտեր գործերը, այլև ձևափոխված ու ավարտում մի զարթ նոր աշխատություններ:

Սովետական տարիներին Արեղյանը իրեն հիանալի դրսևորում է նաև իր քննադատական և քննադատական ու մեծ հայրենասերի նախորդական ապրում է իր ժողովրդի կյանքով, շինարարության, լուսավորության, զինություն, դրսևականության, արվեստի ու այլ բնագավառներում նրա ձեռք բերած փայլուն հաջողություններով, մտաբերված նրա մեծ ու փոքր հոգեկերպով, բաներով ու գրքով արձագանքում նրան հուզող հասարակական-ազդեցական պարտադրույն խնդիրներին:

Հայաստանի խորհրդայնացման 10 և 15-րդ տարեդարձերի, հայկական սահմանադրության նախագծի քննարկման, Մոսկվայում կայացած

հայ գրականության ու արվեստի առաջին տասնօրյակի, Ֆաշխատական Գերմանիայի՝ մեր ինրկրի վրա կատարած ուխտագրուծ հարձակման, Հայաստանում գիտությունների ակադեմիայի հիմնադրման և այլ առիթներով գրված նրա բազմաթիվ հրապարակախոսական ոգեշունչ, լավատես ու ճշմարտացի ելույթներն ու հոգեվածները մեր ասածի լավագույն ապացույցներն են:

Եվ Արեղյանը մինչև իր արգասավոր կյանքի ավարտը, մինչև Ֆիզիկական մահը, որը անդի ունեցավ 1944 թվականի սեպտեմբեր ամսի 25-ին, Երևան քաղաքում, մնաց միշտ նույն ազնիվ քաղաքացին ու մեծ հայրենասերը, սիրեցյալ ժողովրդի հարազատ ու հավատարիմ զավակը:

Երկրամեջա մանկավարժական, հասարակական, գիտական քննմանավոր դործունեության, և հատկապես հայագիտությանը մատուցած մեծագույն ծառայությունների համար, Մանուկ Արեղյանը բարձր գնահատականի է արժանացել Առվետական Հայաստանի կառավարության կողմից:

1925 թվականին նա ընտրվել է Հայաստանի ու Անդրկովկասի Կենտրոնական գործադիր կոմիտեների անդամ և այնուհետև վերընտրվել մի քանի տարի շարունակ:

1935 թվականին Արեղյանին շնորհվել է գիտության վաստակավոր դործի պատվավոր կոչում և բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, առանց գիտերտացիայի պաշտպանության (honoris causa):

1943 թվականին նա հաստատվել է Նոր հիմնադրված Հայկական ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմում:

1944 թվականին, Արեղյանի մահվան կապակցությամբ, Հայաստանի կառավարությունը որոշում է ցնդունում՝ Հայաստանի ակադեմիայի գրասենյակային վեկտորությունը և Երևան քաղաքի միջնակարգ դպրոցներից մեկը կոչել մեծ գիտնականի անունով և հրատարակել նրա երկերի ժողովածուն:

2

Հարց հնազույն Կաթաղախիքների ու առասպելների, ի Աստուծոցի Դաշիթա աշխարհահռչակ էպոսի, պիսյական ու քնարական երգերի, հին ու նոր լեզվի, բազմադարյան գրականության ուսումնասիրությունը անխորհելիորեն կապված է Մանուկ Արեղյանի անվան հետ: Նա եղել է և մնում է հայագիտության այդ բոլոր բնագավառների ամենամուտ և ամենից ավելի հեղինակավոր հետազոտողն ու մեկնիչը: Հայ ժողովրդական բանահյուսությանը նվիրված նրա ժանրակցի ու մենաբուն աշխատություններին, թե քանակով և թե որակով չեն գիրում քննականագիտական-լեզվաբանական բազմաթիվ երկերը, իսկ այս պերդիկներին էլ՝ հարց հին ու նոր գրականության հիմնական ու կարևոր հարցերն ընդգրկող մեծաթիվ հետազոտությունները:

Խորը է Արեղյանի վաստակը, նախ և առաջ, հայ ժողովրդի հնա-
դարյան անգիր քանարվեստի ուսումնասիրութեան գործում: Հանգամա-
նայից ու խորը քննութեան առարկա դարձնելով մեր վիպական ու քնա-
րական բանահյուսութեան հիմնական ժանրերը (առասպել, վեպ, վիպա-
կան երգ, գուսանական տաղեր, ժողովրդական խաղիկներ), նա ստեղծել
է այդ ժանրերի համակողմանի, ամբողջական ու կուռ գիտական տեսու-
թյունը, սերտորեն կապելով այն ժողովրդի հասարակական-քաղաքա-
կան կյանքի հանգամանքների ու երևույթների հետ:

Ինչ առ մի հետազոտելով Խորենացու Պատմութեան մեջ իրրև սկզբ-
նաղբյուր քննադատորեն օգտագործված հայոց հին առասպելները և վեր-
ջիններին այլազգի գուգահեռներն ու տարբերակները, Արեղյանը պատ-
մաբանասիրական զորավոր փաստարկներով և բանասիրական իրեն հա-
տուկ մեծ տաղանդով հերքեց ու մերժեց այդ առասպելների շինծու կամ
կեղծ լինելու մասին մեղանոս ժամանակին հայտնված անհիմն վար-
կածը: Նա միանգամ ընդմիջտ հաստատեց ՊատմաՆոր օգտագործած
ժողովրդական աղբյուրների վավերականությունը, դրանով իսկ վերա-
դարձնելով նրա հռչակավոր թշուրջ պատմութեան հավաստութեանն ու
արժանի հեղինակութունը:

Թորամանյանի պես, որը դպրերի ավերամներից մեացած առանձին
քարտեհներների հիման վրա կարողացավ վերակազմել հայ ճարտարա-
պետութեան հրաշալիք Ջվարթեոցը, Արեղյանը, հեկտիչելով պատմիչների
մոտ պահպանված առանձին վիպական դրվագների վրա, ապացուցեց ու
հաստատեց պարսից մոխաճուղների դեմ հայ ժողովրդի մղած ազատա-
գրական կռիվների շուրջը հորինված մեր հին, կորած քանավոր վեպերից
մեկի (Մարտից պատերազմ) գոյությունը: Զրավարարվելով հիշյալ
վեպի անացորդների հայտնաբերումով և նրա ունեցած ամբողջական
նկարագրի վերականգնումով, վերջինիս հասարակական-քաղաքական
բովանդակութեան և գեղարվեստական առանձնահատկութեանների բա-
ցահաստատումով, գիտնականը մեծ հաջողութեամբ ցույց տվեց նաև այդ
վեպի դարերի ընթացքում կրած փոփոխությունները:

Արեղյանը եղել է և մնում է Մասունցի Դավթի ամենահմուտ ու-
սումնասիրողը: Ծիշտ է, նրա հետ միասին, նրանից առաջ ու հետո,
հայկական հերոսական էպոսի մասին գրել են և ուրիշները, սակայն ոչ
մեկը նրա նման ճշմարտացի, բազմակողմանի, հանգամանորեն ու խորը
չի հետազոտել այն:

Տակալին կես դարից էլ առաջ Արեղյանը հավաստել է Մասունցի
Դավթի բուն ժողովրդական, գեղջիկական ստեղծագործություն լինելու
հանգամանքը: Եվսպը քննելու և պատմում է Մաւունի տերերի մասին,
բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ. այլ ազնվական և
նուրիակ թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները:
Այն ամբողջապես ուսմիական, գեղջիկական բնավորություն ունի. հայ
հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստ

ու կացը, պարապմունքը, բարձրը և այլն³, — գրել է նա 1908 թվականին:

Մանրամասն քացահայտելով սկսածուցի Դավթիս տարածման նախապարհները, Արեղյանը նկնել է գիտական այն ճիշտ և զգրահանգման, ըստ որի սկսածուցի Դավթիթրս ակզրնասպես ստեղծված լինելով Սասնո միջավայրում, փր մեջ եղած ազգային տարրերի շնորհիվ, տարածվել է ամբողջ հայութիան մեջ և դարձել է համազգային վեպ⁴: Երեսու կարևոր մի բնորոշանքացում, որի առաջնություն պատկեր մեր իրականությունից պատկանում է Արեղյանին:

Արեղյանը այն գիտնականն էր, որը կարողացավ վերջնականապես լուծել երկար ժամանակ մեզանում վեճի առարկա դարձած հայոց հարուստ ու հին քնարական բանահյուսության կարևորագույն փոփոխությունների հեղինակային պատկանելության հարցը: Թաղմաթիվ անառարկելի փաստերով և վերին հաստեղ զորեղ տղամարանությունով, նա ապացուցեց, որ նախապես Փռուչակին վերագրված սեպերն անտեսելով հայտնի սիրտ, ուրախության, պանդխտության, ճարտանկան, օրորոցի և սգո հարյուրամյակը երգերը ու մի կասկ շունեն հիշյալ աղուղի անձնական ստեղծագործություն հետ Դրանք ժողովրդական սերգիլ-գուսանների բազմաթիվ անուններով բանաստեղծական ստեղծագործության առարկան են, որոնք Հայաստանում գոյություն են ունեցել նախապես Փռուչակից հարյուրամյակը տարվելեր առաջ և բանավոր սովանդությունով ապրելով ժողովրդի բան խախտում, անթիվ ու անհամար տարբերակներով հասել են մինչև նոր ժամանակները:

Արեղյանն էր դարձյալ, որ հատուկ ուշադրություն նվիրեց մեր գյուղական հազարամյակ խաղիվներին, որոնք մինչ այդ չէին դարձել բանագիտական լուրջ փնտրության առարկա: Նա սովանդ նախապես սկսածուցից բացահայտեց բուն ժողովրդական-աշխատավորական այդ երգերի ապրած հարստությունը կյանքը, նրանց առաջացումը, զարգացումը հմտորեն վերլուծեց նրանց հասարակական թղանդակություն և բանաստեղծական սերվեստի քուրդ առանձնահատկությունները:

Արեղյանի բանագիտական հիմնական գործերն են.

ա. «Հայ ժողովրդական առաստիները Մ. Խորենացու Հայոց պատմության վերջ» լույս է տեսել էլմիտանի սկրայատա ամսագրի 1899—1900 թթ., համարներում և ստորաարտասովին առանձին գրքով (Վաղարշապատ, 1900 թ.):

բ. «Հայ ժողովրդական վեպը» լույս է տեսել Երվ. Լալայանի սկզբագրական հանդեսի 1906—1908 թթ. մի շարք հատորներում, և ապա արտասովին առանձին գրքով (Թիֆլիս, 1908 թ.):

³ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 22:

⁴ Նույն տեղում, էջ 18—19:

գ. «Հին գուսանական ժողովրդական երգեր»։ լույս է տեսել 20 հւշ պետհամալսարանի «Տեղեկագրի» 1927—1931 թթ. մի շարք համարներում, և ապա արտատպվել էր առանձին գրքով (Երևան, 1931 թ.)։

դ. «Ժողովրդական խաղեր»։ լույս է տեսել էքսիանի Բեռլինում համադրի 1904 թ. մի շարք համարներում, ապա արտատպվել էր առանձին գրքով (Վաղարշապատ, 1905 թ.), և հետո, կարևոր լրացումներով, դարձել է «Ներածությունը» հեղինակի «Ժողովրդական խաղիկներ» խորագրով ստվար ժողովածուի (Երևան, 1940 թ.)։

Հայ վիպական ու քնարական քանահյուսությունն ուսումնասիրության բնագավառում Արեղյանի կատարած գիտական վիթխարի ներդրումից պակաս չէ նաև այն, ինչ որ կատարել է նա տասնյակ տարիներ հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում։

Խորապես հետազոտելով ինչպես գրաբարի, այնպես էլ աշխարհաբարի լեզվական հարուստ փաստերն ու նրևույթները, հմտությամբ դասակարգելով և համապատասխան համակարգերի վերածելով դրանք, Արեղյանը Ռիմենի հայերենի գիտական քերականությունը, որը որակապես տարբերվում է սովյալ ուղղության մեզանում մինչև այդ արիստակետից ավանդական քերականություններից։

Առանձնապես խոշոր է նրանականի սխառուկը հայոց աշխարհաբարի լեզվի ուսումնասիրության բնագավառում։

Արեղյանը առաջինն էր մեզանում, որ մշակեց հայերենի շարահյուսությունը՝ դարձնելով ձևաբանության իրավահավասար բաժին, սահմանեց հայոց լեզվի հնչյունական համակարգը, և հիմնեց նրա բառագիտության ուսումնողը՝ մանրադիվանականությունը և հիմնեց հայերենի վիճակագրականությունն ու լեզվաբանությունը։

Արեղյանի քերականագիտական գործերը երկար ժամանակ եղել են անփոխարինելի ձեռնարկներ և ուղեցույցներ մեր միջնակարգ ու բարձրագույն դպրոցների աշակերտության, ուսուցչության և դասախոսների համար։ Նրանցից մեծապես օգտվել են և այժմ էլ շարունակում են օգտվել հայոց լեզվի ուսումնասիրության գրադիմող բոլոր տարեց ու երիտասարդ հայ քերականները։

Արեղյանն էր դարձյալ, որ ստեղծեց հայոց լեզվի տաղաչափության գիտական և սովորական համակարգված ստեղծությունը, դրանով իսկ իր խոշոր ավանդը մտածելով լրագրման դարձան հայ բանաստեղծության ուսումնասիրության գործի մեջ, ինչ տեսական և թե՛ գործնական մեծ ծառայություններ անտեսելով հայ գրականագիտության ու բանաստեղծությանը։

Արեղյանի քերականագիտական և լեզվաբանական հիմնական գործերն են.

ա. «Վաղարշապատի շարանյուսություն», լույս է տեսել 1912 թ.՝ Վաղարշապատում։

Տրանսիտի աշխարհաճշտակ լեզվարան-հայագետ Անտուան Մեյնեյն այս աշխատության մասին ժամանակին գրել է. «Արեղյանի աշխարհագրի շարահյուսությունը անսպասելույս լավագույնն է, որ ձրն է գրվել է հայերենի քերականության վերաբերյալ: Այն հարստ է ճշգրտորեն ընտրված քաղմաթիվ վավերական օրինակներով, որոնք ենթարկված են հիանալի դասակարգման ու վերլուծման: Պա խնդրական գիտական աշխատությունն է: Բոլոր նրանք, սկզբը հետաքրքրվում են ժամանակակից հայերենով, պետք է անպայման ուսումնասիրեն այս գիրքը»⁵.

բ. «Հայոց լեզվի տեսություն». լույս է տեսել 1931 թ. Երևանում:

գ. «Հայոց լեզվի տաղաչափություն». լույս է տեսել 1933 թ. Երևանում:

Հսկայական է Արեղյանի ներդրումը հայոց գրականության, մասնավորապես վերջինիս հին շրջանի ուսումնասիրության բնագավառում: Նա հատուկ խորությամբ ցնեություն է առել մեր հին գրականության բոլոր հիմնական թեմաներն ու հեղինակներին, գրանց հետ սերտորեն առնչվող պատմաբանասիրական բազմաթիվ կարևոր հարցերի հետ միասին:

Մինչև Արեղյանը տվյալ ուղղությամբ մեզանում կատարված գործերը հղեց են հիմնականում քանասիրական, նկարագրական շարադրանքներ և կամ միջնակարգ քաղոցներ համառոտ ձեռնարկներ Արեղյանն առաջինը սովոր հայոց հին գրականության գիտական պարզեցացումը, եկնչով ոչ թե ինչ որ ձևական հանգամանքներից, փնչպես այդ արել էին իր նախորդներն ու ժամանակակիցները, այլ ըստ բովանդակության, նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությունը, բազմակողմանիորեն վերլուծեց ու զննարկեց հայոց հին գրականության կարևորագույն հուշարձանների հասարակական գաղափարաբանությունը, շեղումն ու դեղարվեստական աստիճանականությունները: Հայոց հին գրականության բուն էությունը, նրա տղին ու ընդհանուր ուղղությունը նա միանգամայն իրավացիորեն համարեց օտարերկրյա բնիշխանությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարն ու անդուլ մաքառումը, մահու ու կենաց պայքարը, շանտեսելով միաժամանակ այդ գրականության մեջ արձագանք դասմտցիակ-դասակարգային ուղղումների դրվագները (աղանդավորական շարժումներ, գյուղացիական ապստամբություններ և այլն):

Արեղյանն էր առաջինը մեզանում, որ տակավին 800-ական թվականներին առաջ քաշեց հայկական վերածնության կարևոր խնդիրը և հետագա տասնամյակներին ընթացքում հարուստ փաստերով ու համոզիչ փաստարկներով (քաղաքների զարգացում և քաղաքացությունից առաջացում, կյանքի ու աշխարհայեցողության փոփոխություն, ազատամտություն),

⁵ „Journal Asiatique“, t. 101, 2, 1913, էջ 689—690:

աղանդավորութիւնը, բողոք տիրող անհավասարութեան դեմ, ձգտում դեպի բնութիւնը, նոր արվեստի պահանջ և այլն) հիմնավորեց այն:

Արեղյանի հայոց հին գրականութեանը նվիրված հիմնական աշխատութիւններն են.

ա. «Շարականների մասին». լույս է տեսել 1912 թվականին էջմիածնի «Արարատ» ամսագրում (№ № 7—8, 9, 10—11, 12):

բ. «Գրիգոր Նարեկացի». լույս է տեսել 1916 թվականին Երվանդ լայալանի «Ազգագրական հանդեսում»:

գ. «Հայոց միջնադարյան տակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ». լույս է տեսել 1935 թվականին, Երևանում:

դ. «Մետոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը». առաջին անգամ լույս է տեսել 1941 թվականին, Երևանում (տե՛ս «Մովսէսական գրականութիւն», ամսագիր, № № 1 և 2):

ե. «Հայոց ճին գրականության պատմություն», որի առաջին հատորը լույս է տեսել 1944. իսկ երկրորդը՝ 1946 թվականներին, Երևանում:

Վերլուծական-հետազոտական աշխատանքների հետ զուգընթաց, Արեղյանը յեր գիտական գործունեության ստորերը շրջաններում մշտապես զբաղվել է նաև հայագիտության համար խոշոր նշանակություն ունեցող սկզբնաղբյուրների հրատարակության և բառարանագրական բեղմնավոր աշխատանքով, հաջողությանը օգտագործելով տվյալ ուղղությամբ հայ բանասիրության մեջ տարիների ընթացքում կուտակված հարուստ ստորեր և միաժամանակ հանդես բերելով աղբյուրագետ բանասերի ու բառարանագրի իր մեծ տաղանդն ու հմտությունը:

Արեղյանի այդ բնույթի աշխատութիւններէրց են.

ա. Մ. Խոսեանցու «Հայոց սյտամութեան» բաղդատական բնագիրը (Սեթ Հարությունյանի աշխատակցութեամբ). լույս է տեսել 1913 թվականին, Քիֆլիսում:

բ. «Ռուս-հայերէն ռազմական բառարան». լույս է տեսել 1925 թվականին, Երևանում:

գ. «Սասնա Սոճ» (Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցութեամբ), որի առաջին հատորը լույս է տեսել 1936, երկրորդ հատորի Ա գիրքը՝ 1944, իսկ Բ գիրքը՝ 1951 թվականներին, Երևանում:

դ. «Ժողովրդական խաղիկներ» (գյուղական սիրեր երգեր իրենց փոփոխակներով, մասնակի աշխատակցութեամբ Վոճիտասի). լույս է տեսել 1940 թվականին, Երևանում:

ե. «Գուսանական ժողովրդական ապեր» (սուրախութեան, սիրո, հարսանիքի, օրոյորցի, տոգի). լույս է տեսել 1940 թվականին, Երևանում:

զ. Կոլունի «Վարբ Մաշտոցի» բաղդատական բնագիրը, ձեռագրական այլընթացվածներով, աշխարհաբար թարգմանութեամբ, առաջաբանով և ծանոթագրութիւններով. լույս է տեսել 1941 թվականին, Երևանում:

է. «Լատին-ուս-հայերէն բժշկական բառարան»-ը (Ղ. Հովհաննէս-
յանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցութեամբ). յուս է տեսել 1951
թվականին, Երևանում:

Իր գիտահետազոտական ուսումնասիրութիւններում Արեղյանը հիմ-
նականում կանգնած է պատմահամեմատական զարոյցի մեթոդաբանա-
կան դիրքերի վրա: Բանահայտական, լեզվական, գրական երևույթները
նա գիտում ու քննարկում է պատմական ամուր հողի վրա, այդ երևույթ-
ների զարգացման ընթացքի և փոխադարձ կապերի մեջ, տարբեր մշա-
կութային հուշարձանների լատիներոսացումը, ակղբնադրութեան ի տրվ-
յալների համակողմանի հաշվառմամբ:

Փաստերի հետ միասին Արեղյանը կարևոր տեղ է հատկացրել նաև
հետազոտական մեթոդին: Նրա կարծիքն այն է, որ նախքան պրոցեսների
հետազոտութիւնը, անհրաժեշտ է հետազոտել առարկաները: Պետք է
նախ իմանալ, թե ինչ բան է տվյալ առարկան, և հետո նոր ուսումնա-
սիրել այն փոփոխութիւնները, որոնք առաջանում են նրա մեջ:

«Բանասերը, ինչպես և ամեն իսկական գիտական աշխատող,—գրել
է Արեղյանը,—միայն մեկ մեթոդ ունի, այն է՝ նա բազմակողմանի կեր-
պով ճիշտ գիտում է օբյեկտիվ իրականութեան և դրանից հանում է իր
հասկացութիւնը, կամ ինչպես փիլիսոփայորեն ասում են, մտածութիւ-
նը անդրադարձնում է օբյեկտիվ իրականութեանը: Աստղագիտական լեզվով
ասում ենք, թե հետազոտողը, ուղիղ հետևութեան հասնելու համար, պետք
է քաղմակողմանի ուղղատեսչութեան ռեժիմն իր դիտած առարկայի նը-
կատմամբ, և իր հետազոտութեան ժամանակ լինի ուղղամիտ և ուղղա-
դաս:»⁶ Ճիշտ այդպիսին էր ինքը՝ Արեղյանը: Ուղղամտութիւնն ու ուղ-
ղադասութիւնը նրա գիտական մեթոդի և մարդկային փնտրութեան
ամենարևոտը հատկանիշներն են:

Իրեն զբաղեցնող գիտական խնդիրները Արեղյանը միշտ քննել է
ժամանակի հասարակարան կյանքի երևույթների առնչակցութեամբ,
դիտել դրանք այդ երևույթների շուրջի տակ: Նրա բոլոր հետազոտու-
թիւնները աչքի են ընկնում արժարժիւթ հարցերի կարևորութեամբ և
կատարված ընդհանրացումների հիմնավորութեամբ: Դրանք բազմամյա
ուսումնասիրութիւնների, մանրակրկիտ ու սուր գիտողութիւնների և
սկզբնադրութեան բարեխիղճ մշակման ու համակարգման արդյունք են:

Ինչպես շատ ուրիշ նշանաձոր գիտնականների, այնպես էլ Արեղ-
յանի մտ, անշուշտ, կան առանձին վիճելի մտքեր, գիտական վարկածի
ընդմիջ կրող որոշ դրույթներ: Այսպես.

«Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմու-
թեան մեջ հայտնի գործում, հանդամանորեն կանգ առնելով Հայոց ա-
ռասպելների ուրիշ ժողովուրդների նույնատիպ ստեղծագործութիւնների

⁶ Տճ՝ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափութեան երևան, 1952, էջ 5:

⁷ Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներ..., Երևան, 1941, էջ 28:

հետ ունեցած նմանություններին ու ընդհանրություններին փաստերի վրա, հետազոտողը համեմատաբար քիչ է անդրադառնում դրանց տեղային, ազգային բնույթին ու առանձնահատկություններին, շնայած այն հանգամանքին, որ այս առումով նրան հետաքրքիր նյութ կարող էին տալ հատկապես Հայկի և Արալի առասպելները:

«Հայ ժողովրդական վեպը» դասական ուսումնասիրության մեջ, տարվելով «Սասնա Մոերին» պատմական ատաղձի բացահայտման իր շատ շահեկան հետախուզումներով, Արեղյանը որոշ դեպքերում ընկել է ծայրահեղության մեջ, վեպի գերազանցորեն օտեղժական բնույթի առանձին գործող անձանց նույնացնելով համապատասխան պատմական դեմքերի հետ: Այս տեսակետից պետք է հիշել վիպական Դավթի նույնացումը պատմական Դավիթ Բագրատունու հետ և վիպական Մհերի դիցարանական կերպարի պատմական նախատիպը որոնելու նրա փորձերը:

Պարսից պատերազմ վեպին, հին գուսանական ժողովրդական երգերին, մասամբ էլ «Սասնա Մոերին» նվիրված իր մեծարժեք հետազոտությունների մեջ, Արեղյանը որոշ տուրք է տվել ժողովրդական բանահյուսության առանձին տեսակների և մասնավորապես ֆյոօսի վերաբերյալ 20—30-ական թվականներին մեր բանագիտության մեջ իշխող գոհճիկ սոցիոլոգիական ուղղությանը, գերազնահատելով այն դերն ու տեղը, որ ունեցել են սոցիալական վերնախավերը հիշյալ ստեղծագործությունների մեջ:

«Հայոց լեզվի տեսություն» մեջ Արեղյանը շահագանցել է այսպես կոչված անհատական լեզուների դերի խնդիրը, քանի որ բուն իմաստով անհատական լեզուներ ըստ էության գոյություն չունեն, այլ կան միայն անհատական ոճեր:

Նման կարգի առանձին վիճելի մտքեր, դրույթներ ու պնդումներ կարելի է գտնել գիտնականի մյուս աշխատություններում ևս, որոնք սակայն երբեք չեն կարող ստվեր նետել նրա կատարած վիթխարի գործի վրա:

Լինելով առաջավոր հայացքների տեր մտածող, Արեղյանը միշտ ուշի-ուշով հետևել է գիտության նվաճումներին և ըստ այդմ վերանայել, լրացրել, խմբագրել ու մշակել է իր հետազոտությունները:

Թնորոշ օրինակ է այս տեսակետից նրա զրածը հայկական առասպելների մասին՝ մեկ 1899 թվականին՝ «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» նշանավոր գրքում, և մեկ էլ 1944 թվականին՝ «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում: Իր նոր աշխատության մեջ, գրականության պատմության պահանջների թելադրանքով համառոտելով ու խմբագրելով իր հին գործի բանասիրական ու բանավիճային մասերը, գիտնականը միաժամանակ կատարել է նաև նշանակալից փոփոխություններ և լրացում:

ներ, նա հանգամանալից վերլուծման է ենթարկել Հայոց առասպելների հիմքն հանդիսացող նախնական աշխարհայեցութիւնն ու հավատալիքները, դիտելով զրանց, մի կողմից, իբրև համապատասխան հասարակական հարաբերութիւնների, մյուս կողմից՝ իբրև բնութիւնային ուժերի և երկվույթների ինքնօրինակ արտացոլումներ, մեծ վարպետութիւնով քաջահայտել է Հայկի, Վահագնի, Արայի, Տիգրանի ու Արտաշեսի մասին մեղանում վաղնչական ժամանակներում ստեղծված ժողովրդական առասպելների ու առասպելական վեպերի դադարաբաշխական կերպարներն ու արվեստը, հարցեր, որոնց նա քիչ էր ուշադրութիւն նվիրել իր նախորդ աշխատութիւն մեջ:

Նույն իմաստով պակաս պերճախոս լին նաև այն փոփոխութիւններն ու լրացումները, որ կատարել է Արեղյանը «Սասունցի Դավիթին» նվիրված իր աշխատութիւնների մեջ, որոնք լույս են տեսել տարբեր ժամանակ: Այսպես, 1889—90 թվականներին գրած իր «Ազգային վեպ» խորագրով ուսումնասիրութիւնը, սրի մեջ գլխավոր տեղը գրավում էր վեպի դիցարանական կողմի վերլուծումը, Արեղյանը հիմնովին վերաձգում է ընդլայնում է 1906—1908 թթ. հրատարակած «Հայ ժողովրդական վեպը» հետազոտութիւն մեջ, հանգամանորեն կանգ առնելով «Սասունցի Դավիթի» պատմական, աշխարհագրական, կենցաղային և այլ մտտիվների վրա. Նույն թեմայի ընդգլխում նա հետաքրքիր ու արժեքավոր լրացումներ է կատարել նաև 1939 թվականին գրած իր «Մատենագրութիւն Սասունցի Դավիթ հայ ժողովրդական վեպի մասին» աշխատութիւն մեջ, ուր առանձնապես ուշադրով են գիտնականի մտքերը հայկական էպոսի՝ դարերի ընթացքում կրած ազդեցութիւնների ու փոփոխութիւնների, նրա տարբերակների նշանակութիւն, ինչպես նաև էական թեմայի մասին:

Ահա թե ինչ է գրել նա այդ առթիվ. «Մեր Սասունցի Դավիթ կամ Սասնա տուն մեծ վեպը մի շատ հետաքրքիր երևույթ է իր ապրած դարավոր կյանքով և դարերի ընթացքում իր կրած պատմական փոփոխութիւններով: Հենց դրանց, այդ փոփոխութիւնների մեջ է մեր վեպի գլխավոր արժեքներից մեկը: Մեր վեպի բազմաթիվ վարիանտները շատ կարևոր են ընդհանրապես ժողովրդական վեպի—էպոսի դիալեկտիկական ուսումնասիրութիւն տեսնակետից: Վեպի այս դարավոր շարժումը մի հազվադեպ երևույթ է սովանդական վիպական բանահյուսութիւնների պատմութիւն համար: Այդ շարժման մեջ պարզ երևան են գալիս մեր վեպի ներքին հակասական ձգտումներն ու կողմերը, այդ կողմերի անցումը մեկից մյուսին: Եվ ապա. «Մեր վեպի մեջ, հենց իր այս դարավոր կյանքի շնորհիվ, արտացոլում է, կարելի է ասել, մեր պատմութիւնն էական կողմը՝ սկսած ամենահին դարերից: Մեր երկիրը հաճախ, շատ հաճախ ենթակա է եղել հարձակումների. այդ տեսնում ենք նաև մեր վեպերի մեջ, Բայց տեսնում ենք նաև ժողովրդի անընկճելի ձգտումն ու կամքը պաշտպանվելու դրսից հարձակվող թշնամու դեմ և ոչնչացնել—

լու նրան, հակահարված տալու իր նախնիների կեղծքերին ներքին և արտաքին իր անկախությունն և ազատությունը՝

Մեծանկ Արեղյանների բազմաժողովը աշխատությունները դասական հայաստանի մասին և քաղաքներից են, նրանց մեջ գյուղացիական և անվանի գիտնականների բնատուր խոշոր տաղանդը, լեզվական, գրական, պատմական և փիլիսոփայական գիտելիքների հարուստ պաշարը, սկզբնաղբյուրների հիանալի իմացությունը և տեսական ընդհանրացումներ անելու մեծ ուժը։ Այդ աշխատությունները հայ ժողովրդի գարավոր մշակույթի յարթերակ հանրագիտարաններն են, որոնցից առատորեն օգտվել են հեղինակի ժամանակակիցները և որոնցից պետք է շարունակեն օգտվել գիտություն ծարավի գալիք սերունդները։

Ներկա հասարի ընդգրկում է Արեղյանի՝ հայ ժողովրդական առասպելներին և վեպին նվիրված երկու դասական ուսումնասիրությունները, որոնք հեղինակը միացրել է իրար, ենթարկելով մասնակի կրճատման, զգալի վերամշակման և նշանակալից լրացումների։ Նշված ուսումնասիրություններն են.

ա. «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց Պատմության մեջ», որը նախապես տպագրվել է էջմիածնի Եկրարատա ամսագրի մի շարք համարներում⁸, և ապա արտատպվել ու լույս է տեսել առանձին գրքով, սփռնադատություն և ուղղվածք ենթադրանքով (Վաղարշապատ, 1900 թ.):

բ. «Հայ ժողովրդական վեպը», որը նախապես տպագրվել է Երվանդ Հայալանի Եկրարատա հանդեսին մի շարք գրքերում⁹, ապա արտատպվել և լույս է տեսել առանձին հատորով (Քիֆլիս, 1903 թ.)։ Վերջինիս մեջ օգտագործված է հեղինակի մի ուրիշ ուսումնասիրությունը կատարված Մասնա Մոսկովի երկու պատմիչների հիման վրա, որը Եկրարատային վեպա խորագրով ժամանակին տպագրվել է Երևան ամսագրի մի քանի համարներում¹⁰։

8 «Մասունցի Գավիթ», բիրիդգրաֆիա, Երևան, 1888, էջ 70—71.

9 Տճ՝ս «Արարատա ամսագիր», 1888 թ., № 1, էջ 30—37, № 2, էջ 81—87, № 3—5, էջ 136—142, № 6, էջ 200—207, № 8, էջ 248—256, № 7, էջ 304—310, № 8, էջ 360—367, № 10, էջ 459—467, № 18, էջ 529—535, 1900 թ., № 1, էջ 32—39, № 2, էջ 86—92, № 3, էջ 140—144, № 4, էջ 193—205, № 5, էջ 264—267, № 6, էջ 202—307, № 7, էջ 354—361, № 8—9, էջ 415—425, № 10, էջ 484—405, № 11, էջ 548—558, № 12, էջ 623—636, 1901 թ., № 2, էջ 107—118, № 3, էջ 174—180, № 4, էջ 250—257.

10 Տճ՝ս «Եկրարատա հանդես», 1888 թ., գիրք 13, № 1, էջ 5—36, գիրք 14, № 2, էջ 89—68, 1907 թ., գիրք 15, № 7, էջ 5—52, գիրք 16, № 2, էջ 80—117, 1908 թ., գիրք 17, № 1, էջ 5—36, գիրք 18, № 2, էջ 5—24.

11 Տճ՝ս «Մոսկովի ամսագիր», 1889 թ., № 10, էջ 1592—1608, № 11, էջ 1736—1747, 1890 թ., № 1, էջ 38—49, № 2, էջ 220—236.

Սույն հաստրի համար բնագիր է ծառայել Մանուկ Արեղյանի կողմից 1933—1935 թվականներին հրատարակութիւնս պատրաստված «Հայ վիպական բանահյուսութիւն» խորագրով ուսումնասիրութիւնը, որը, հեղինակից անկախ պատճառներով, մինչև այժմ մնացել էր անտիպ:

Այս աշխատութեան մեքենագիր առաջին օրինակը ինստիտուտին տրամադրեց հանգուցյալ գիտնականի որդին՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ ՄՀեր Աբեղյանը:

Տպագրութեան հանձնելուց առաջ աշխատութեան այդ մեքենագիր օրինակը համեմատել ենք Հայաստանի գրականութեան և արվեստի թանգարանի գրական բաժնի Մ. Աբեղյանի ֆոնդում պահվող հեղինակային ինքնագրերի հետ և ուղղել ենք եղած վրիպակներն ու լրացրել սակավաթիվ բացթողումները: Ամբողջ աշխատութիւնը նորից է մեքենագրվել, փոխադրվելով այժմ ընդունված ուղղագրութեան: Այս գործը բանիմաց բարեխղճութեամբ կատարել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակից Վահե Միքայելի Բարթիկյանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հեղինակը սույն աշխատութեան մի շարք գլուխները, որոշ փոփոխութիւններով (կրճատում, համեմատում), օգտագործել է 1944 թվականին Երևանում հրատարակված իր «Հայոց հին գրականութեան պատմութիւն» առաջին գրքի մեջ¹², այդ գլուխները համեմատվել են «Հայ վիպական բանահյուսութեան» հիմնական բնագրի հետ և կատարված կարևոր փոփոխութիւնները մտցվել են վերջինիս մեջ:

Ա. Ղ Ա Ն Ա Ղ Ա Ն Յ Ա Ն

12 Գրուք են. «Նախնական առասպելա-պատմական բանահյուսութիւն», «Հին առասպելներ», «Նկվանգական վեպ» (էջ 7—68), «Պարսից պատերազմ» (էջ 178—247), «Ջրույցներ պարսից պատերազմ ցիվիլիզ», «Տարոնի պատերազմ» (էջ 308—427), «Պատմական գրույցներ» (էջ 462—473), «Վիպասանքի պատմական հիմք» (էջ 570—575), «Պարսից պատերազմ վեպի պատմականութեան խնդիրը» (էջ 591—611):

ՀԱՅ
ՎԻՊԱԿԱՆ
ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Հայաստանի նԱՀ Աուտուրայի պատմութեան ինստիտուտը 1933 թ. ծրարքիով հրատարակելի աՀայ գրականութեան պատմութեան վերարձր-յալ ուրվագծեր, ուսումնասիրութիւններ և նյութեր՝ առաջարկեց ինձ իմ տպագրութեան և ձեռագիր աշխատութիւնների հիման վրա պատրաստել աՀայ վիպական բանահյուսութեան մասին այս աշխատութիւնը: Հին նյութերն այստեղ վերամշակութեան են և նոր կողմերով ընդարձակութեան:

Ա. Պ. ինստիտուտի ցանկութեամբ մեջ մնալով բնութագրելով հին վիպերից բա-վական ընդարձակ հատվածներ: Այդ կարևոր է համարութեան նկատու ունե-նալով, որ բնագիրներին որոշ շարքով ծանոթանալն անհրաժեշտ է հիշված վիպերի մասին պարզորոշ գաղափար կազմելու համար, և որ ընթեր-ցողները ոչ ամենքը և ոչ միշտ՝ վարդալիս ձեռքի տակ կոմենտան բուն աղբյուրները:

Իմ այս աշխատութիւնը բնավ համակնութիւն չունի իննելու մեր վիպական բանահյուսութեան պատմութիւնը և ոչ էլ այդ մասին մի գրա-կան ուսումնասիրութիւն: Սա մի բանասիրական գործ է կամ, ավելի ճիշտ, գանաղան ժամանակներում կատարված բանասիրական գործերի միակցութիւն, որի մեջ ավելի կամ պակաս ընդարձակութեամբ իմովսան հետազոտութեան ու լուսարանութեան են մեր այդ բանահյուսութեան զանո-պան կողմերը և սրանց հետ առնչակից այս կամ այն ինդիւստրի:

Մ. Ա Ք Ն Ղ Յ Ա Ն

1935 թ. մայիսի 23

Երևան

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒՔՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

1. Տերմիցները:— Եփրականութիւնն բառը XIX դարի կեներկց արդէն ընդհանրանում է այն նշանակութեամբ, որ ունի դա այժմ: Նույն ժամանակներում սրանաՀյուսութիւնն բառի փոխանակ գործածում էին բանավոր գրականութիւն, այլն անգիր գրականութիւն: Այդ տերմինների համար իբրև քնորոշ հատկանիշ առնվում էր այդ կարգի երկերի բերանացի ավանդված լինելը: Երբովհետև ավանդութիւնները բերանացի են լինում, ուրեմն և նրանց բովանդակութիւնն¹ անվանվում է բանավոր գրականութիւնն²: Բայց սգրականութիւնն բառի մեջ գրի, գրված լինելու հասկացութիւնը շատ զգալի է, ուստի անհարմար երևաց ասել գրականութիւն անգիր կամ բանավոր, այսինքն բերանացի: Այդ պատճառով 1890-ական թվականներին ետ մղվեցին այդ տերմինները և գործածութեան մեջ մտավ ժողովրդական բանաՀյուսութիւնն տերմինը³:

Ի՞նչպիսի է հասկացվում դա:

Ժողովուրդ ընդարձակ իմաստով նշանակում է ընդհանրապես ազգ, ազգութիւն, ուստի ժողովրդականն քառի փոխանակ գործածում էին նաև սաղգայինն և ժողովրդական բանաՀյուսութիւնը հակադրում էին ասեհատական գրականութեանը: Եթողովրդականն քառն այդ իմաստով գալիս է XIX դարի կեներկց, գերմանացիների, ապա և ուրիշների ազգային ուժանտիզմի շրջանից, երբ կարծում էին, թե սայս (բանավոր) գրականութիւնն ազգային ասվելու արժանի է, որովհետև նրա ստեղծողը մի քանի անձինք չեն, ինչպես որ պատահում է գրավոր գրականութեան մեջ, այլ ամբողջ ժողովուրդը, որ իր բանաստեղծական գրույցների մեջ կատարելապես նկարագրում է իր պատկերը⁴, այն էլ շատ

1 Բովանդակութիւնը— բովանդակը, ամբողջութիւնը, միահամուռը:

2 Առ. Պալտաեյան, Պատմ. հայոց գրականութեան, հատ. առաջին, Բանավոր գրականութիւն, Քիֆլիք, 1865, էր. 40:

3 Թուսական արծառային անբարձր բանաստեղծական տերմինի համապատասխան:

4 Առ. Պալտաեյան, Պատմ. հայ. գրակ., էր. 40, հտե.:

ուսմեղ և վառ զուլնհրով, բյուրեղացած ինքնատիպ ձևով, բխած ազգային խորը ծածկարաններին:

Ապա՝ ուրիշ տարբերություններ էլ էին դեռևս ժողովրդական բանահյուսության և սանհաստական գրականության միջև: Վերջինի երկերը համարում և անվանում էին «սարվեստավոր», իսկ ժողովրդական բանահյուսությունը՝ «սանարվեստ», իրր ազգի մեջ քնականորեն ծնված մի արտադրություն, «ժողովրդական բանաստեղծություն»—բնական բանաստեղծություն (Volksdichtung-Naturdichtung),—անա թե ինչպես էին բնորոշում այդ սազգային բանահյուսությունը: Թացի այդ՝ նկատի ունեկին և հետևյալը:

Անհատ հեղինակները, ուսած լինելով դպրոցներում, ընդարձակ ծանոթություններ են ձեռք բերում գրքերի միջոցով, թե իրենց ազգի անցյալի և թե այլ ազգերի ամբարած փորձառությունից և մտքով ավելի բարձրանում են և ավելի ազգվում ուրիշների մշակույթից, քան մի ամբողջ ժողովրդի բազմությունը: Դրա հետևանքով և նրանց հորինած գրական երկերի մեջ, —ասում էին,—արտահայտվում է նաև ուրիշ ազգերի հասարակական մտավոր վիճակը. ուստի և նրանց երկերն ունին մի ընդհանուր միջազգային բան: Ենչքան էլ ազգայնությունը տիրաբար իր դրոշմը դնելու լինեի բանաստեղծի քերթվածի վրա, բայց և այնպես ըլոր ազգերի «սարվեստավոր» բանաստեղծությունները մեջ կա մի ընդհանուր բան, մի ընդհանուր համաշխարհային մշակույթ, մինչ սանարվեստ» բանահյուսության, «մինչ ժողովրդական երգի մեջ ամեն ինչ, սկսած լեզվից, յուրաձև է, միակ և անկրկնելի»⁵, այսինքն բնիկ ազգային:

Այս տեսակետը ժողովրդական բանահյուսություն մասին՝ անընդունելի է: Թերանացի բանահյուսական երկերի ստեղծողը ոչ թե սամբողջ ժողովուրդն է առհասարակ, այլ, ինչպես ամեն գրական երկերինը, այս կամ այն անհատներն են իրենց անհատական ապրումներով, զգացումներով ու խոհերով, միաժամանակ և իրենց դասակարգային ձգտումներով ու շահերով, տրամադրությամբ ու աշխարհայեցողությամբ: Անհատի երգը կամ զրույցն ընդունվում և յուրացվում է ժողովրդական մասսաներից, որովհետև դուր է գալիս մասսաներին. իսկ դուր է գալիս, որովհետև դա զեղծցիկ կերպով արտահայտում է նրանց ընդհանուր միտումները: Մի սամբողջ ժողովրդի հավաքական գրական ստեղծագործություն չկա և չի կարող լինել: Բանահյուսական երկերն անանուն են, ոչ թե այն պատճառով, որ իբր սկզբնապես անհատ հեղինակների գործ չեն, այլ որովհետև դրանց հեղինակների անունները չեն մնացել:

Դարձյալ բանահյուսական երկերն ևս ենթակա են այլ ազգերի մշակույթի ազդեցությանը և իրենց խնդիրներով ու մտովներով և նույն իսկ ձևով հաճախ ավելի ընդհանուր միջազգային բնույթ ունեն, քան անհատ հեղինակների հորինած գրական երկերը:

⁵ В. Брюсов, Поэзия Армении, 1916, 4-е. 39:

Եվ վերջապես՝ քարվեհարավորն և քանարվեստն որոշումներն էլ ճիշտ շնն։ Ժողովրդական բանահյուսութիւնը քնա՛վ քանարվեստն չէ, ինչպէս երբեմն բնորոշում են դրա երկերը, եթէ միայն քարվեստն բառով շնն արտահայտում քարեր դարգացած արվեստը։ Ժողովրդական բանահյուսութիւնն էլ ունի իր առանձնահատուկ արվեստը, հաճախ, հարկա՛վ պարզ ու տարրական ձևով։

Այսպէս, ուրեմն, ճիշտ չէ ժողովրդական բանահյուսութիւնն այն բնորոշումը, որով ժողովրդականն բառը հասկացվում է ժողովրդին, այսինքն ամբողջ ժողովրդի իմաստով։ Բայց կա և մի երկրորդ հասկացութիւն, որ այժմ ավելի տարածված է։

Ժողովուրդ նեղ իմաստով նշանակում է հասարակ ժողովուրդ, ուսմիկ, ուստի և ժողովրդականն բառի փոխանակ մի ժամանակ գործածում էին սոսակականն⁵։ Որովհետև բանահյուսական երկերը գրի են առնված մեծ մասամբ գյուղացիներից, ուստի ժողովրդական բանահյուսութիւնն ասելով հասկանում են հասարակ ժողովրդի, սոսակի, մեղենում առանձնապէս գյուղացիների ստեղծած, գեղջկական բանահյուսութիւն։ Սրա դեմ էլ, սակայն, առարկութիւն կա ժողովրդական բանահյուսութիւնն տերմինը, ասում են, շի արտահայտում այդ կարգի բոլոր երկերը, որովհետև եղել են և կան սքանավոր գրականութիւնն երկեր, որոնք հոգեւորականութիւն կամ ազնվականութիւն արտադրութիւնն են. ուրեմն և ժողովրդական շնն այս բառի նեղ իմաստով կու։

Հետեաքար սքանավոր գրականութիւնն կարելի չէ ընդհանրապէս անվանել ժողովրդական՝ այս բառի ոչ ընդարձակ—սազգայինն և ոչ նեղ—սոսակականն իմաստով։ Այդ ժողովրդականն որոշումով չէ, ուրեմն, որ միայնացից տարբերվում են սքանավոր գրականութիւնն և սանհատական գրականութիւնն երկերը։

Ի՞նչ է այդ երկուսի էական տարբերութիւնը և ո՞ր բանահյուսական երկերը ժողովրդականն են։

Հենց սկզբից գրելով հորինված երկերը մնում են անփոփոխ, ինչպէս որ հորինել է հեղինակը, և եթէ փոփոխութիւն են կրում, այդ լինում է ընդհանրապէս արտագրողների կամ տպագրողների անփութութիւնից առաջացած վրիպակներով։ Բանահյուսական երկերն, ընդհանրապէս, ստեղծվում են բնականացի ասվելով կամ երգվելով, և ապրում են ավանդաբար կամ անգիր ժամանակներում կամ այնպիսի հասարակական խավերում, որոնք գրի կարիք չեն զգում և բնագրի հարազատ պահպանման մասին գաղափար ու հնարավորութիւն չունին։ Այդ պատճառով այդպիսի երկերը բնականաբար փոփոխութիւն են կրում բնականացի ավանդողների բնաւնին։ Վիպասաններն, օրինակ, իրենց ասած վեպի

⁵ Արեւմտաւրեց Մ. Մ., Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1888, էր. V (ցանկի մէջ) «Հասարակաց (սոսակական) երգեր» (die Volkslieder, les chansons populaires, народные песни)։

մեջ դնում են նոր սյուժետներ ու մտտիվներ, կամ միջից, մոռանալով, դուրս են ձգում այս կամ այն միջադեպը, կամ Հին միջադեպերը փոխանակում են նորերով, իրենց ժամանակ կատարված դեպքերով, իրենց դասակարգի կենցաղից առած գործերով, այլն անզգալի կերպով, փոխում են միջադեպերի դասավորությունը, կամ Հին անունների փոխանակ, երբեմն և նրանց կողքին, նորերն են դնում: Հաճախ գիտակցաբար կամ անգիտակցաբար մտքնում են իրենց պատմած Հին վեպի մեջ իրենց ժամանակի ու դասակարգի ձգտումներն ու զգացումներն և այլն:

Քանահայտական երկն այսպիսով, քանի ավանդաբար ապրում է, միշտ նորագիւում է, միշտ վերամշակվում է, այն էլ նորեմն դարերի ընթացքում շատ մարդկանց, շատ սերունդների բերանին: Այդ պատճառով, հաճախ տարբեր սոցիալական ձգտումների ազդեցությամբ, առաջ են գալիս բանասյուժեական երկերի փոփոխակներ, ասբերտ պատումներ, որոնց մեջ երևում են խավավորումներ, շերտավորումներ զանազան դարաշրջաններից ու տարբեր դասակարգերից: Այս է, ահա ժանհատական գրականությունն և սրանավոր գրականությունն էական տարբերությունը:

Քանահայտաբյուռն բառը մենակ ևս կարելի է և հաճախ այդպես ավելի հարմար է գործածել քերականացի՞ն կամ սովանդական քանահայտությունն նշանակությամբ: Այդ բարի վրա մի որոշիչ ավելացնելով՝ ավելի ևս թեթևություն կարելի է արտահայտել այդ կարգի երկերի տեսակներն ըստ բովանդակության և այլն: Այսպես՝ 1. վիպական բանահայտություն, 2. քնարական բանահայտություն և 3. դրամատիկական բանահայտություն:

Անուճեռն վիպական բանահայտությանը պատկանում են իր ենթատեսակները.

1. Վեպ (էպոս, էպոպեա), որ հարկավոր դեպքում պետք է կոչել սովանդական վեպ: Բացի այդ՝ նաև ժողովրդական վեպ, Այս տերմիններն սովանդական բառով ասել հարկավոր է այն ժամանակ, երբ պետք է ավանդական վեպը տարբերել սուսանից, որի համար XIX դարից ի վեր գործածվում են Հին թվեպ և վիպասանությունն բառերը:

2. Վիպական երգեր, որոնք են՝ առասպելական երգեր, պատմական երգեր, հոգևոր և բարոյակրթական երգեր: Հարկավոր դեպքում այս տեսակները պետք է կոչել սովանդական կամ ժողովրդական վիպական երգեր, սովանդական պատմական երգեր, սովանդական հոգևոր երգեր: Այսպես՝ այն ժամանակ, երբ պետք է այդ տեսակները՝ տարբերել նույնպիսի եկեղեցական կրոնական երգերից, կամ այնպիսի պատմական վիպական երգերից, որոնք սովանդական բանահայտություն չեն:

Ապա վիպական բանահայտության մեջ մտնում են նաև զանազան զրույցները, որոնք են՝ հեքիաթ, առակ, անեկդոտ, պատմական զրույց կամ պատմական սովանդություն, թարյակրթական ու վերականգնող զրույց, և վերապես՝ սնահավատական զրույց: Վիպական քանահայտության մեջ են դնում նաև հմայական կամ կապրի աղոթքները, առածն ու հանելուկը:

Այս բոլոր տեսակները մեծ մասամբ ժողովրդական են և կոչվում են՝ ժողովրդական հեքիաթ, ժողովրդական առակ և այլն:

Այս վերջին վիպական տեսակները՝ հեքիաթ, առակ և այլն, բացի սնահավատական դրույցներից և հմայական աղոթքներից, լին անսովորական աշխատութեան մեջ, որովհետև դրանք դեռևս կարող են հատուկ ուսումնասիրութեան:

Քնարական բանահյուսական տեսակներից ունինք ժողովրդական երգը, որը նույնպես տեղ չունի այս աշխատութեան մեջ:

Երանահյուսութունը բառը մենակ հարմար է և այնու, որ արդեն կազմված է բանահավաք բառը, ինչպես կոչվում են այն անձերը, որոնք գրի են առնում ամեն տեսակի ավանդական-բանահյուսական երկերը Ապա այդ երկու քառի նմանութեամբ կարելի է գործածել նաև բանագետ բառը Եթովպիայում բառի նշանակութեամբ և բանագիտություն բառն՝ իբրև բանահյուսութեան գիտություն: Այդ երեք բառերն էլ կազմված են քրանա բառով, որ բացի իր սովորական շխտքից, աստիճանաբար անաստեղծից նշանակում է նաև ամեն տեսակի բանահյուսական երկ, որն էլ պատմվածք, լինի առասպել, վեպ, զրույց, թե այլ ավանդություն, երգ և այլն: Այդ բառի այդպիսի նշանակությունները՝ Կատեգորիա հենց՝ հունարենի պատեռես («արարող, ստեղծիչ, ընթացող») բառի համապատասխան կազմված են քրանաստեղծ, նույն նշանակութեամբ նաև քրահյուս բառերը, որ նշանակում են՝ առակ, առասպել, այլև որն էլ ստանալով որ սրան, երգեր հորինող, նույն ընդարձակ նշանակութեամբ անընդունվում է այդ սրանա բառը նաև երբ կազմված քրահավաք բառի մեջը Այդ սրանա բառը, այլև քրանք, սրանա—ձևերով, գործածվում է նաև ժողովրդական ընդվի մեջ և նշանակում է պատմվածք, վեպ, զրույց, երգ՝

* Երանահյուսութունը բառի համապատասխան Եթովպիա (Եթովպիայի աստիճան) տերմինը 1866 թ. անգլիացիների մեջ է առաջ եկել և հետո անցել ուրիշներին Գերմանացիները գործածում են Volkskunde—ժողովրդագիտություն, ռուս. народоведение: Բայց, որ կատեգորիա է ժողովրդական ավանդությունների գիտությունը Թուրքերում վերջերս народная словесность—ժողովրդական բանահյուսություն տերմինի փոխանակ գործածում են այնպիսի Եթովպիայում: Ավելի ևս երբ են Եթովպիայում և Եթովպիայի արևելքում բառերը՝ քրահյուսութեան ուսումնասիրություն նշանակությամբ:

* Իրեն օրինակ կարելի է բերել հետևյալները: Է՛խն մարգիտ կարունքի բաներ (—զրույցներ) շատ գիտի, կը պատմի (—գիտի, կը պատմի): Ոգորմածիկ վեպի մեջ Ազուրը հին մարդ էր. էն շատ բաներ կ'ասեր, Կ'ասեր, թե մին որ և այլն: Տ. Նովոպետրովսկ, Հայ ժողովրդական հեքիաթներ, լուսնորդ գիրք, Քիֆիս, 1891, եր. 21 և 22—Մարի, սա Կործի պատմությունը և. ես պիտի գրեմ բարեկամս այ մտիկ կ'ընե—Կործի մեր զրկենց տրեն էր. Գուկո ինտեց տուն. ինոր բայեր (վեպեր) շատ են...: Գ. Մովսիսյանց, Մասնա, Կ. Պոլիս, 1896, եր. 125. Բրտեց կը հեղի բնայնս, կը ելանակ վեպ կամ առասպել: Գնպես բանս կարեր էին վրեն ու կ'ասէին: Մովսիսյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, եր. 359. Տե՛ս նաև Մ. Արիսյան, Հայ ժողովրդ. առասպելները, Վաղարշապատ, 1888, եր. 28—40.

2. Ուսումնասիրության Եղանակները:— Համեմատական լեզվագրա-
նություն հետ գրեթե միաժամանակ, XIX դարի առաջին կեսին, Ֆերմա-
նիայում առաջ է հեկել համեմատական առասպելաբանությունը: Իրար
հետ համեմատելով զանազան լեզվակից սազգերի գրույցներն ու առաս-
պելներն ու առասպելաբանական լեզուն, բացատրում ու որոշում են գր-
քանց սկզբնական հիմքը, որ լեզվի հետ իրր ժառանգած պիտի լինեին
այդ ազգերը՝ Ալյսինքն՝ ենթադրում են, թե հնդեվրոպական լեզուներով
խոսող ազգերն, ինչպես լեզվի, նույնպես և իրր ցեղական ծագման միու-
թյուն են ունեցել, այն մի առասպելաբանական խաղ, որ ծագում է
մի ընդհանուր աղբյուրից: Ընդունում են, թե իրր հղել է մի հնդեվրոպա-
կան նախնի ժողովուրդ, Դա զանազան էությունից բաժանվելուց առաջ ար-
դեն, հղել է հովիվ ու երկրագործ, ունեցել է տարրական բանաստեղծու-
թյուն զանազան տեսակներով՝ օրհներգություններ աստվածներին փա-
ռաբանելու համար, առասպելական երգեր ու գրույցներ աստվածներին
ժնեղի և արարքներին մասին, համայական աղոթքներ լար ոգիներին հա-
յածելու համար, առած, հանելուկ և այլն: Ըստ այսմ՝ բանահյուսության
ակիզքը հնդեվրոպական ազգերի մեջ հին է համարվել այդ տեսությանմ:
Այդ ազգերն, ուրեն, որոնց թվում և հայերը, ըստ այդ տեսության՝
իրենց լեզվի հետ բանահյուսական որոշ տարրեր իրր ժառանգած պիտի
լինեն հնդեվրոպական նախնի ցեղից:

Համեմատական առասպելաբանությունը, որի հիմնադիրն է Յակոբ
Ֆրեյը 1835 թ. լույս տեսած իր «Ֆերմանական առասպելաբանություն»
գրքով, արդյունք էր գերմանական շազգային ուսմանտիղմիք, որ իր
ժազգային իղեակները տեսնում էր հին և միջին դարերում՝ սրանց-մեջ
գտնելով հին վաղեմի շազգային ոգին: Այդ պատճառով ուսումնասի-
րում են պատմությունը, մեծ սիրով հավաքում և ուսումնասիրում են ոչ
միայն հին, այլև ժամանակակից ժողովուրդական, այսինքն՝ ռամկական
բանաստեղծությունը, գրույցները, հավատալիքները և այլն: Նույն հո-
սանքն ու շարժումն անցնում է նաև ուրիշ ազգերի, որոնց թվում և հա-
յերին:

Համեմատական առասպելաբանությունը, սակայն, չի մնում հնդեվ-
րոպական լեզուների նեղ շրջանակի մեջ, Գաղութային քաղաքականու-
թյունը, կապիտալիզմի զարգացումն ու այդ բազայի վրա առաջացած
միջազգային ապրանքափոխանակությունը բերում են ծանոթություն հե-
ռավոր հին ու նոր ժողովուրդների ու ցեղերի մշակույթներին: Դրա հետե-
վանքով առաջ է գալիս համեմատական փոխառական դպրոցը: Արևելա-
գետ Տ. Բենֆելը 1859 թ. հրատարակում է հնդկական «Պանլատալոգրա»
(Հնդամատյան) գիրքը, առակներն ու գրույցների մի հին ժողովածու
նա իր ուսումնասիրությանմ գտնում է, որ այդ գրքի մուգները Հնդկաս-
տանից անցել են VI դարում Պալսկաստան, VIII դարում արաբներին,
այս Մպանիայի վրայով՝ նվրոպայի ուրիշ կողմերը, ուր և ժողովրդակա-
նացել են: Ուրիշները հետո ցույց են տվել, որ նույն նյութերն անցել են

Քիզանդիա և այնտեղից Այազոնական երկրները: Հետագայում համեմատական մեթոդն ընդարձակ շահերով գործադրելով շատ ժողովուրդների բանահյուսության նկատմամբ՝ գտնում են, որ գրույցներն ու առհասարակ բանահյուսական երկերն անցնում են մի երկրից մյուսը, մի ազգից մյուսին: Գրանք հաճախ ունին միջազգային քնույթ, այսպես ասած, քափառում են: Ըստ այս տեսության, շատ առասպելներ ու գրույցներ, որ կան մի ազգի մեջ, հաճախ ուրիշներից փոխառություն են:

Նույն ժամանակներում, 1860-ական թվականներին, նույն պատճառներով առաջ է գալիս մատղաքաղական քաղաքացիական դպրոցը: Համեմատական եղանակն ավելի ևս ընդարձակ շահերով գործադրում են (էդ. Տայլոր, Հերբերտ Սպենսեր) ժամանակով և տարածությամբ իրարուց հեռու շատ ազգերի, ինչպես և մշակույթի ստոր աստիճանի վրա կանգնած ցեղերի հավատալիցների, առասպելների և այլի վերաբերմամբ և գտնում են նույն նյութերի համար համաշխարհային նմանություն: Երևան է գալիս, որ առասպելաբանական մտածության գլխավոր առարկաների՝ արեդակի ու լուսնի, երկնքի ու երկրի, կրակի ու ջրի, հողմի ու կայծակի մասին զանազան ժողովուրդների մեջ, իրարուց անկախ կերպով հավատում ու պատմում են համանման ցաներ, որոնք մինևույն հիմունքի վրա են աճած: Իսկ այդ հիմունքը, դրանք սկզբնական ազգյուրն է բնությունը, բնության երևույթները, Ուրիշ խոսքով, Խոսասպելները սկզբնապես անդրադարձնում են բնությունը կամ, ինչպես սովորաբար ասում են, Եֆիզիկական ծագումն ունեն, և աստվածների ու առասպելների ծագումը մեծ մասամբ բնության երևույթներով են քացատրվում: Արդ, քանի որ բնությունը, առասպելական առարկաները—արեգակ, ամպրոպ և այլն—ամեն անց նույնն է, ապա ևնրանցությունն այն է լինում, որ մարդկանց առասպելաբանական մտածությունը, լինելով օրյեկտիվ բնության անդրադարձումը, զարգացման որոշ աստիճաններում նույնն է բոլոր ցեղերի մեջ, զարգացման համանման շրջաններում զանազան երկրներում իրարուց անկախ ևս առաջ է գալիս միանման հայացք բնության վրա: Նախնական շրջանում բնության երևույթներն ու օրենքները ամենուրեք քացատրում են նման բանաստեղծական պատկերներով, մարդակերպ կամ կենդանակերպ ոգիներով, և իրենց կրոնական զգացումներն ու պատկերացումներն արտահայտում են նման զրբույցներով, պատմվածքներով, երգերով աստվածների ու դիցազների մասին:

Այս միևնույն տեսակետը տարածվում է ապա վեպի—էպոսի և մյուս բանահյուսական տեսակների ուսումնասիրության վրա. քանի որ զրբանք իրենց մեջ անդրապատկերում են հասարակական վիճակը, ապա նման պատմական դարաշրջաններում նման սոցիալական պայմանները, նման հասարակական հիմքը (գապիսը) առաջ են բերում վիպական հերոսների, մոտիվների ու սյուժետների նմանություն:

Բանահյուսական երկերի ծագման ուսումը այս վիճակի մեջ ես չի մնում, Հենց սկզբից, նույնիսկ Հին հույների ծամանակից, առաջ էր եկել առասպելների պատմական քուցուտուրությունը. աստվածները համարվել են աստվածացած պատմական անձեր: XIX դարի սաղագային ուսմանտիզմի շրջանում, ինչպես վերևում ասվեց, հետաքրքրվում են պատմությամբ, բնականաբար սկսում են ուսումնասիրություններ անել նաև պատմական տեսակետով: Հին առասպելներն ու մանավանդ ժողովրդական վեպերն ու զրույցները համեմատում են պատմության հետ և զրույցում են, որ հաճախ առասպելի և մանավանդ վեպի մեջ պահված է լինում ազգի պատմական կյանքից մի որևէ հիշողություն, պատմական անուններ ու եղևություններ, որով և առասպելն ստանում է պատմական գույն: Պատմական դեպքերն, ուրման, իրրև հիմք են ծառայում պատմական երգերի ու զրույցների, սրանցից և կազմվում են ավանդական վեպերը, որոնց գործող անձերի մեջ տեսնում են պատմական անձեր: Այս պատմական ուսումնասիրության եղանակը, որով պարզվում է վեպի պատմական հիմքը և որոշվում են նրա մեջ եղած պատմական և առասպելական մասերը, ավելի զարգանում է XIX դարի վերջին քառորդին:

Այսպես ուրեմն, համեմատական եղանակը մեծ դեր է խաղացել, ինչպես շատ գիտությունների, այդպես և բանահյուսության, առասպելների, վեպի և այլ ուսումնասիրության համար:

Մի ազգի հին հավատալիքների, առասպելների և այլ ուսումնասիրության ժամանակ համեմատության պիտի առնվեն, հարկավ, նաև նրանոր ժամանակի ժողովրդական զրույցներն ու առասպելները: Արդի ժամանակը հակացվում է հնի, անցյալի ուսումնասիրությամբ. բայց արդի ժամանակի ուսումնասիրությունն ևս իր կողմից բանում է մեր առաջ անցյալը, քանի որ անցյալի շարունակությունն է ներկան: Այսպես և մեր ժամանակի ժողովրդական հավատալիքները, զրույցներն ու առասպելները, որոնցից շատերը հենքի մնացորդներն են, կարող են պարզել մեզ մեր հին հավատալիքներն ու առասպելները:

Այս համեմատական ուսումնասիրության եղանակը մնում է այժմ էլ, և, նայելով բանահյուսական երկի քննադրությանը, զործադրվում է այս կամ այն չափով:

Բանահյուսությունը, սակայն, ինչպես առհասարակ բոլոր գրական երկերը, իրրև սոցիալական երևույթ, կապված է ուրիշ սոցիալական երևույթների հետ: Նրա ծագումն ու զարգացումը պայմանավորված է հասարակական հիմունքով ու արտադրական հարաբերություններով, համընթաց է հասարակական ձեերի պատմական զարգացմանը: Ուստի և բանահյուսության գրական ուսումնասիրության ժամանակ բանագետը գործ ունի մի շարք հասարակական կողմերի հետ: Նա պիտի օրյկտիվորեն լուսաբանի տվյալ երկի պատմական դարաշրջանին հատուկ հասարակական ձևը, Երկի դասակարգային բնույթը, որոշի, եթե կա երկի մեջ, դասակարգների հարաբերությունը միմյանց հետ. պարզի նրանց

տարբեր իդեալներն ու ձգտումները, նրանց տարբեր շահերը, և, եթե կան, տարտառ ազգնցութիւնները, տարբեր դասակարգերից առնված դասակարգային խափալդութիւնները և այլն, ինչպէս և իրենք ձեռք:

Ազանդակաւ վեպի, էպոսի, ուսումնասիրութեան ժամանակ՝ բանագնացը չի կարող ուշադրութեան լսուել նաև այն պատմական եղելութիւնները, որոնք կազմում են վեպի հիմքը: Բայց այդ քիչ է: Նա պիտի պարզի նաև, թե ինչպիսի պատմական անձեր և դիպվածներ նյութ են դարձել վեպի. ով և ում համար և ինչի համար է հորինել և ասել վեպը. ինչպիսի լուսաբանութիւն է տալիս վեպը պատմական եղելութիւններին:

Այս բանագնացն ուսումնասիրութեան ժամանակ նկատի պիտի ունենա՝ ինչ որ առհասարակ տեղտ կապված է այս կամ այն բանահայտական տեսակի հետ. նախնական աղիարհայեցութիւնը, կրօնը՝ առասպելները, շատ հին զրույցները ու վեպի, ինչպէս և հմայական աղբթների համար. պարս ու եղանակը՝ ժողովրդական երգերի համար. զանազան իրենցատրային իրևութիւններ, սովորութիւններ, ծեսեր՝ վեպի, հայտանքի և այլ երգերի համար: Եվ վերջապէս՝ բանագնացը պետք է ուշադրութեան առնի նաև ընդհանրապէս ազգագրութեան ընդարձակ մտքով: Անշուսակ՝ նա միաժամանակ և ժողովրդագիտութեան պիտի տաւանասիրի, ինչպէս և հենց կողմէ է այդ հետազոտութիւնը: Բացի այս ամենից՝ քանահայտական երկերի, ինչպէս և ամեն գրական երկերի ուսումնասիրութիւնը կարելի չէ անել՝ առանց պարզաբանելու և դրանց արվեստը, առանց որոշելու նրանց ձևն ու ձևատումը:

8. Հայ բանահայտութեան հավաքումն և ուսումնասիրությունը:—

Մինչ եվրոպական ազգերի մեջ XVIII դարուց արդեն սկսում են ժողովել քանահայտական երկերը, հայերի մեջ այդ ուշ է տեղի ունենում: Միայն XIX դարի վերջին երեսնամյակից սկսած առաջ են գալիս բանահավաքներու Բայց ինչ որ նրանք արել են, ամենը եղել է պատահարաբար, և մինչև այժմ էլ դեռ, մինչև 1930-ական թվականները, մեր բանահայտութեան հավաքումը բազմակողմանի և լիովին չի կատարված:

Ուսումնասիրութիւնները ևս քիչ կան: Անցած դարի կեսին միաժամանակ տպագրվում են երկու գրքույկ, նվիրված մեր հին բանահայտութեանը: Նրանց հեղինակները, Մկրտիչ Էմին և Հովսեփ Գաթրճյան իրենց ուսումնասիրութեամբ ցույց են տալիս, որ հայերն էլ, ինչպէս Մովսէս Խորենացու Պատմութիւնից երևում է, ունեցել են իրենց բնորոշ գա-

⁸ Մկրտիչ Էմին, Վեպ հեռու Հայաստանի, Մոսկովա, 1850; Ձեռքի տակ ունիմ Մկրտիչ Էմինի երկասիրութիւնները հայոց լեզվի, գրականութեան և պատմութեան մասին, Մոսկովա, 1868:

Սույն տարին նախ քննարկատու լրագրի մեջ և հաջորդ տարին առանձին գրքույկով հրատարակվում է Հովսեփ Գաթրճյանի Պատմութիւն մասնագրութեան հայոց, անցիկ ժամանակ, Վիեննա, 1857:

կանք երգերն ու վեպերը: Քանսանրենքի ուղադրութիւնն, ուրմն, գրավումք է ոչ թե ժողովրդի մեջ կենդանի ապրող բանահայտութիւնը, այլ հինը, անցյալը: Գրանք գաղութային հայութեան արտահայտութիւն են: Հին բանահայտութեանն է նվիրւած 1865 թ. նաև Ստ. Պալասանյանի վերնվում հիշված աշխատութիւնը, որի մեջ հեղինակը փորձում է տալ հին հայ բանահայտութեան պատկերը, դիմելով «ընդհանուր ազգերի գրականութեանը», որովհետև ազգերի զարգացման օրենքները միևնույն են: Հեղինակին արգեն ծանօթ են բանագիտական ուսումնասիրութեան առաջին եղևք եղանակներն եւ, որոնց մասին վերևում խոսվեց՝

Հետագա ուսումնասիրութիւններից պետք է հիշել Մ. էմինի մի նոր աշխատութիւնը¹⁰, գերմանացի Ֆետտերի հոդվածները¹¹, Գր. Խալաթեանցի «Հայկական վեպը»¹² և Մ. Արեղյանի մի աշխատութիւնը¹³: Այս վերջինի հեղինակը քննադատում է քոյոր Բախտրդ ուսումնասիրողներին¹⁴ կարծիքները հայոց հին բանահայտութեան մասին և պարզում իր տեսութիւնը: Այս աշխատանքից ի վեր շնն եղել նոր կարևոր ուսումնասիրութիւններ նույն նյութի մասին¹⁵:

Ինչ վերաբերում է նոր ժողովրդական բանահայտութեան ուսումնասիրութեանը, պետք է ասել, որ այս բնագավառում ավելի քիչ բան է արված: Կան մի քանի աշխատութիւններ միայն¹⁶:

10 Ստ. Պալասանյան, Պատմ. հայ. գրակ., հատ. առաջին, Բոնավոր գրակ., Քիֆլիս, 1865, էր. 178, հան., 185, հան.:

10 Մ. էմին, Մ. Խորենացի և հայոց հին վեպերը, Քարգմ. Գ. Խալաթեանց, Քիֆլիս, 1888, ոտա. բնագիրը Մոսկվայում, 1881:

11 Յուլյան, Հայկական աշխատասիրութեանց պ. Ֆեթթերի, ի մի ամփոփված և Քարգմանված հանգրձան ծանոթութեամբ, Վիեննա, 1885:

12 Գ. Халатянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896. Մտ. զննագրութիւնը է. Մտ.ի, ուղղված է «Византийский восточник», т. V, вып. 1 և 2, СПб, 1898., էր. 327, հան.:

13 Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մեջ, տպված Նախ Եկրարատ ամսագրի մեջ, արա առանձին գրքով, Վաղարշապատ, 1889—1891:

14 Գրանք թվում պետք է հիշել նաև Գար. Զարրեանյանի Հայկական պարութեան պատմութեան, Երկրորդ տպագր., Վենետիկ, 1888, էր. 118—134, «Գողթան երգեր»:

15 Ար. Զումինյան, Պատմութեան հայ գրականութեան, նոր նախընթաց, 1815, էր. 18—31: Ատ, Հայոց պատմութեան, Քիֆլիս, 1917, էր. 518—521:

16 Գրանք են՝

ա) Մ. Արեղյան, Ազգային վեպ, «Մուրեք ամսագրի մեջ, 1889 և 1890 թթ.:

բ) Նույնի Հայ ժողովրդական վեպը, Նախ՝ «Ազգագրական հանդես» 13—16-րդ գրքերի մեջ, հետո առանձին գրքով, Քիֆլիս, 1898:

գ) Նույնի ժողովրդական խոսքեր (ուսմանք), Նախ՝ «Արարատ» ամսագրի մեջ, հետո՝ առանձին գրքով, Վաղարշապատ, 1904:

դ) Նույնի Հին գրականական ժողովրդական երգեր, Նախ՝ Պետ. համալսարանի «Գիտական տեղեկագրի» մեջ, հետո առանձին գրքով, Երևան, 1821:

ե) Ստ. Կանայանց, Մամիկոնյան պատմութեան, «Արարատ» ամսագրի, 1808, ապրիլի հանդես—հուլիս, «Գոռոս»—հոկտեմբեր, դեկտեմբեր և այլն:

4. Բանասիրական աշխատանքի կարևորությունը:— Հայոց հին բանասիրության բնագիտությունը շուրջ հինգ դար ամառն գիտենք միայն մեր մի քանի պատմագիրներից, որոնք մեր վեպերը գործածում են իրրև պատմության աղբյուր: Գրանց մեջ առաջին տեղը բռնում են՝ Ազաթանգեղոս, Բուզանդ, Մովսես Խորենացի, ապա և ուրիշները: Որովհետև Մ. Խորենացին և Մուսնեբը պատմություն են գրել և ոչ բանահայտություն և վերջինիցս իրենց ուզած ձևով, հաճախ փոփոխելով են օգտվել պատմության համար, ուստի և Մ. Խորենացու հիշած առասպելների ու վիպասանքի այսինքն՝ ավանդական վեպի մասին ժայռահեղ, նույնիսկ հակասական կարծիքների են հանգել: Այդ առաջացել է նրանից, որ ուսումնասիրողները նախապես շեն կատարել բավարար բանասիրական աշխատանք, շեն ճշտել, թե այդ պատմագրի գրածների մեջ ինչը բանահայտությունից է ծագում:

Մկրտիչ էմինը Խորենացու Հայոց պատմության առաջին գիրքը և երկրորդ գրքի մի որոշ մասը համարում է մեծ մասամբ, եթե ոչ ամբողջապես, ժողովրդական վեպից, երգերից ու զրույցներից քաղած մի պատմություն, Մար Աբասի գիրքը՝ մի կեղծիք, և Մար Աբասը՝ Խորենացու հնարածը: Իսկ Գրիգոր Խայաթյանն իր վերևում հիշված աշխատության մեջ դալիս է այն եզրակացության, թե Խորենացու զվեպս կոչված աղբյուրները շինծու են և թե զվեպս անվան առակ ծածկված են մի ամբողջ շարք զանազան, թարգմանական և ինքնագիր, գրավոր հիշատակարաններ, որոնք և Խորենացու իսկական, բայց սխալագրած աղբյուրներն են¹⁷, և թե Խորենացու շատ անգամ հիշած ճշայն վեպըս ստվարարար գրքերի ծագում ունի և մեծ մասամբ Աստվածաշնչի մոտիվների շատ ու թիշ ճարպիկ փոխադրծումն է, որ հենց իրեն Պատմագրի գրչին է պատկանում¹⁸:

Գ. Խայաթյանի հիմունքները շատ թույլ տե խախտա են և հաճախ վեպի հետ կապ չունենցող: Նա այդպիսի նախագիրներով շատ հեշտություններ են գրականություններ է անում, անվերջ կրկնած ճշմանական էս, զգուցե, զկարելի է կարծել, սինձ թվում էս և նման դարձվածքներով: Մյուս կողմից էմինն ևս շարժազանցության մեջ է ընկնում, որանալով գրավոր աղբյուրը, և զվեպից քաղած համարելով ամբողջ կրտորներ, որոնց համար Խորենացին պարզապես ասում է, թե պրավոր աղբյուրներից է անում:

Երբ խոսք է լինում Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ եղած հայոց զվեպիս և ընդհանրապես մեր հին բանահայտության մասին, անհրաժեշտ է նախ մի քանասիրական աշխատանք կատարել: Առաջին խրնգիրը պետք է լինի որոշել, թե արդյոք Խորենացին հայտնում է, որ վեպից կամ զրույցներից է քաղում, թե չէ: Այս մասին շատ թեթև են անցնում, առանց օրել հիմքի շատ բան երգ կամ վեպ համարելով, կամ

¹⁷ Г. Халатьянц, Арм. вост., № 340.

¹⁸ Նույն տեղում, № 342.

Հայտնելով, թե Խորենացին վեպի տեղ է ուզում ծախել այս կամ այն պատմութիւնը, մինչդեռ նա պարզապէս հայտնում է, թե գրավոր աղբյուրից է առած: Այդ գրավոր աղբյուրը կարող է, արգարն, որն է ավանդական առասպելի, վեպի կամ դրույցի վրա հիմնված լինել, բայց կարող է և ամբողջապէս դիտանականների սարքած հերյուրում լինել:

Ապա՝ երբ մեկը Խորենացու մեջ եղած որոշ հատվածներ վիպական է համարում, եթե Պատմագիրը ցուցմունք չի անում դրանց բանահյուսական ծագման մասին, նա պետք է իր ասածը հիմնավորի համոզիչ բացատրութիւններով:

Ապա դարձյալ՝ հայոց հին վիպական բանահյուսութիւնը, որ կա Մ. Խորենացու Հայոց յաստմութիւն մեջ, կամ առասպելներ են, կամ անպիսի վեպ, որի մեջ խստն են առասպելներ: Եվ ողորկեմտե դրանք բառացի չեն պահված, ուստի այդ ավանդական բանահյուսութիւնն ուսումնասիրելիս պետք է վերականգնել այդ, նկատի ունենալով Մ. Խորենացու հայացքն առասպելի, ավանդական երգերի ու դրույցների վրա և այն, թե նա ինչպէս և որ շարիով է օգտվում այդ նյութներից:

Քանի դեռ բավարար չափով չեն պարզված այս բանասիրական խորհրդերը, ինչպէս և մեր վեպերի պատմական դարաշրջանը, դրանց սոցիալական հիմքն ու վիպական մոտիվները, թե ինչ է նրանց մեջ պատմական և ինչը առասպելական և ընդհանուր վիպական, ապա կարելի չէ այժմ մեր վիպական բանահյուսութեան զարգացման պատմութիւնն անել: Այս աշխատութեան նպատակը հենց այդ հետազոտել ու լուսաբանելն է:

Այդ պատճառով և այս ուսումնասիրութեան մեջ ամեն անգամ առանձնապէս որոշվում են մեր վիպական բանահյուսութեան աղբյուրները, ուրիշ ժողովուրդների առասպելների ու վեպերի և մեր հայոց պատմութեան հետ համեմատելով՝ ցույց են տրվում մեր հին ու նոր վեպերի պատմականութիւնը և նրանց մեջ եղած առասպելական և ընդհանուր վիպական սյուժետներն ու մոտիվները և թե ինչ են մեր առասպելները: Այս ամենը, մեր առասպելների ու ավանդական վեպերի այս բանասիրական ու բանագիտական հետազոտութիւնը համեմատական եղանակով, կրկնում եմ, այժմ դեռ մի անհրաժեշտ նախապայման է այդ վեպերի վիճակը և հին վեպերի գոյութիւնը, այսինքն՝ շինծու շինելը, նրանց ծագումն ու կյանքը երևան բերելու և հասկանալու համար:

Չպիտի մոռանալ, որ այս աշխատութիւնը ոչ գրականութեան պատմութիւնն է և ոչ գրական ուսումնասիրութիւն:

Յ. Խորենացու հայացքն առասպելի վրա և առասպելի մեկնութիւն:— Եվիպասանքի առասպելական մասը որոշելու համար, ինչպէս ասվեց, նախ պետք է տեսնել, թե ի՞նչ հայացք ունի Խորենացին՝ առասպելների կամ, որ նույն է, ավանդական երգերի ու դրույցների վրա:

¹⁰ Մ. Խորենացու Պատմագիրն Հայոց աշխատութեան Մ. Ազեղիան և Ս. Հարութիւնեան, Տփլիս, 1813:

ի նշակս և օ՞ր շափով է օգտվում նա այդ նյութերից իր գրած Հայոց պատմութեան մեջ: Այս հարցերի պատասխանը, որ անհրաժեշտ է իմանալ հորինացու հիշած առասպելների ուսումնասիրութեան համար, լինվին կարելի է ստանալ հորինացու Հայոց պատմութեանից:

Առասպել թառը, որ նշանակում է միթոս, հորինացու մեջ միայն մեկ նշանակութիւն ունի, այն է՝ պատմութիւն,—լինի երգ, դրույց, միթոս, օերգ վիպասանացն (այսինքն վեպ), առեկաժոր ասացվածք, թե ըստ կամս հերոսութեան շինծու գրովոր պատմութիւն,—որ ճշմարիտ չէ. հավաստի չէ:

Մեր պատմագրի համար ճշմարիտ պատմութիւն է ամենից առաջ Աստվածաշնչի պատմութիւնը և այս պատմութեան գրութիւնները: Իսկ արտագին պատմագիրների մեջ կա բան՝ որ սուտ է, կա բան՝ որ ճշմարիտ է: Ինչ որ Ս. Գրքի պատմութեան համեմատ է՝ ճշմարիտ է, ինչ որ համեմատ չէ՝ առասպել է:

Նման հայացք և հասկանալու եղանակ ունի հորինացին նաև ավանդական առասպելների նկատմամբ և մինչև իսկ նույն բառերն է գործ դնում գրավոր առասպել և ճշմարիտ պատմութիւն, ավանդական առասպել և դրա մեջ բովանդակված իսկութիւնը որոշելու համար: Այդ բառերն են՝ հավաստի, ճշմարիտ, անսուտ, ստույգ և նմաները, որ զանազան ձևերով հեղճեղում է նա. իսկ հակառակն՝ անհավաստի, սրտյօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան (Ա. իր.). սարսաքոյ ճշմարտութեան (Ա. Ե.) և այլն: Ինչպէս գատելով կամ թե Աստվածաշնչի հետ համեմատելով՝ առասպելի միջից հավաստին գտնելու համար նա գործ է ածում նույնպէս «Յմարիտ, Յմարտութեամբ և յայտնել թառերը. «Յայտարարութիւն սակաւութեւ, թէ ըստ արտագնացն ասացեալ թէ՛ր ըստ աստուածային բանից Յմարտութեամբ է ներքով» (Ա. է.): «Բայց ծանիր, զի Սմարտդ անուս... Յմարտութեամբ Շամբաթ է» (Ա. իր.):

Նման պատմութիւններից նա ճշմարիտ համարում է ոչ միայն այն, որ Ս. Գրքի համեմատ է, այլ և այն, որ սոճեղ է գրված. «Այլ հաստոտի մեզ թուեցաւ որ ի Մար Արայն կատինայն է քննութիւն քաղղէական մատենից քան զայտարիկ. քանզի ոճով իմն ասէ և զպատճառս պատեներազմին յայտնէ» (Ա. Ժր.): Իսկ Բագրատունյաց՝ Հայկից սերված լինելու մասին առասպելն անհավաստի է համարում, օգի ի բայ բանից և արեւ իմն յազգս Հայկայ և նմանացն կակաղէ» (Ա. իր.)²⁰:

20 Նման «ճշմարտութեանն օգ խորհելով քակել զոճ, յառասպելս զճշմարիտ քան ախորհելով փոփոխել փութասցէ» (Ա. զ.): «Եմատոյ պատմացոց անօղ» (Ա. իր.): «Էի ոչ ճշմարտութեամբ ոճով պատմէ, եւ ոչ զանուան նշանակէ կամ զտեղի կատարմանցի. յինչ կարողորդոյն համարեցաք երկրորդէ» (Բ. հե.): «Եմարմէ և ստուգադրեմս նս տեղեկացաւ զամենայն ոճով» (Բ. ձգ.): «Եմանացոց որ ինչ կարեւորագոյնն է ոճոյ բանիս» (Ա. իր.): «Անցի միտայն զանդիսն նշանակելով զհաւաստի, և զոճն ի բաց թողալ» (Բ. զ.): «Բայց քանզի քաղովք են, որ ասն զնրիստ մերոյ Արտաշեսի կայիս, և ոճով իմն պատմեն, նս հաւանիմ» (Բ. ձգ.): «Այս ամենայն... յայոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչինչ կարեւորագոյն համարեցաք ոճով երկրորդէ» (Բ. լր.):



Անցնենք ավանդական առասպելներին:

Հունական և պարսկական առասպելների մասին խոսված է Ա զրքի հավելվածների մեջ, որոնք Խորենացու հայացքը ավանդական առասպելների վրա՝ շատ պարզ կերպով ցույց են տալիս մեզ: Հունական առասպելները սարքն և ողորկն են, սահմանափակ պատճառաւ, որիչ խոսքով, տեղում են և զգճմարտութիւն իրաց այլարանարար յինքեանս ունին թացուցեալաւ: Այսպիսի սայլարանութիւնն է համարում և Պրոմէթէոսի առասպելը. սԷն ընդ՞որ... Պրոմէթէոս գողացեալ առ ի յաստուծոցն զհուր և շնորհեալ մարդկան,—որ է այլարանութիւն,—ու բերէ ասել կարգ բանիս (Ա. Ե.):

Իսկ պարսից առասպելները Րյուրասպ Աժդահակի մասին համարում է նա սփոռն և անճոռնիք, սանյարմար և անոճ բանք, այլև սանբանութիւնաւ: Նրանց հերոսները ստուտ հն²¹ և հննց առասպելներն էլ են սառասպելք սուտք, սանմիտ և անհանճար քանից յամարանք, որոնցով զբաղվելու պետք չկա²², քանի որ այդ առասպելները շատ հին լինելով՝ նույնիսկ պարսիկներին անհասկանալի են²³: Սակայն և այնպես Խորենացին պարսկական առասպելներն էլ համարում է այլարանութիւն, ինչպես սՊահլաւկաց առասպելներին համար (Բ. Հ.) պարզապես գրում է. ս...թողով զառասպելաց նոցա բարբառումնաւ: Փանդի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս... (պալիս է առասպելների համառոտ րովանդակութիւնը) և որ ինչ այլարանութեանն բերէ կարգ: Այլ մեք ասացուք միայն զստոյզն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւնաւ: Այսպես և Բիւրասպ Աժդահակի անոճ ու փծուն առասպելներն ևս այլարանութիւն ընդունելով՝ կարելի է համարում, թեպետ մեծ դժվարութիւնով, մեկնել, կամ, Խորենացու խոսքով, սպատճաս տալ անբանութեան նոցա, և զարդարել զանզարդսն, ուրիշ խոսքով, նորից սշարադրել: Հուեաց առասպելներին պես ոճով, սահմանափակ պատճառաւ, սմիտս անմտութեան նոցա տալովն, ս և զկարի վաղուց նոցա իրս և նոցա անհասանելիս յայտնելովս. ալսինքն՝ սանոճն առասպելներից մեկնելով հանել այն, ինչ որ սհավաստիք է²⁴:

Եվ ի՞նչպէս է Խորենացին պարսից առասպելները մեկնում, կամ իր խոսքով, սանհասանելիէն յայտնում: Նա նախ Բիւրասպին կապում է աշտարակաշինութիւն ժամանակի և Ներքովթի հետ իբրև պարսից սնախնիք, Ներքովթի իշխանութիւն տակ, և այնուհետև ամենայն ինչ ժամանակի հասկացողութիւնն ու քանական խելքին հարմարեցնելով.՝ անհասկանալին, զերթնականն այլարանութիւն համարելով և ժամանակի հաս-

21 սԷլ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և զուտնս:

22 սԲայց զի՞նչ արդեօք տարիանք թեզ... զի՞նչ թեզ այսոցից կարտութիւն առասպելք սուտք կամ զի՞նչ պէտք:

23 սԷկարի վաղուց նոցա իրս և նոցա անհասանելիս առասպել յայտնեմս:

24 սՍտորագրութիւն, որ ինչ սակա Բիւրասպին հասաստեալն, Հմմտ. սԷ նոցանէ զոր ինչ հասաստին կարծեմք սանուլն (Ա. Գ.):

կացողութիւնս մտնանք զճերածելուս Բերենք առասպելի վերջին կտորը՝ միայն իբրև օրինակ: Առասպելի մեջ ասված է համառոտ, թէ մտնուկ սաստանան Ածղահակի ուսերը համբուրում է և քանդուստ վիշապներենն ծնվում կամ բուսնում, և այնուհետև Ածղահակի շարութիւնը շատանում է (Շարութեան յաճախութիւնս) և նա սի պէտս որովայնիս մարդիկ է սպանում (սծախելս): Իսկ հետո Հրուդեն անունով մեկը նրան կոչում է պղնձի շղթաներով և տանում դեպի Պըմբալընդ լեռը: Մանասպարհին Հրուդենը նշում է և Բիրասսպը քաշում է նրան դեպի բլուրը, բայց Հրուդենը վարթնում է և տանում է նրան լեռան այրերն ու կապում և իր արձանը կանգնում նրա գիմաց (պղնձն անդրի ընդդէմ նորա հաստատելս), որից սարասփելով, Ածղահակը՝ սհնազանդեալ կայ շղթայիցն և շի կարողանում էլնել և ապականել ծրկիրը:— Այս առասպելը խորենացին մեկնում է այսպես. «Եսկ վիշապաց բուսումն, կամ կատարելապէս վիշապանալն Բիրասսպեայ, որ ասի, է այս, թէ նա սկսեց անբավ մարդիկ զոհել դեւերին (առասպելի մեջ՝ սծախել զմարդիկ ի պէտս որովայնիս), միևնև ժողովուրդը (սքազմութիւնս) տաղտկացավ նրանից և հալածեց նրան, և նա փախավ Պըմբալընդ լեռան կողմերը: Նրան սաստիկ հալածելուց՝ նրա մարդիկը (սամբոխս) ցրիվ նկան նրանից: (Առասպելի մեջ՝ Հրուդենը Ածղահակին կապած տանում է սարը): Այս բանի վստահացած նրան քողովները մի քանի օր հանգստացան այն տեղերում: (Առասպելի մեջ Հրուդենը հանապարհին նշում է): Իսկ Բիրասսպը ժողովելով իր ցրված մարդիկը, հանկարծ վրա է հասնում և սաստիկ վնաս է տալիս նրանց: (Առասպելի մեջ՝ Բիրասսպը նեցող Հրուդենին դեպի բլուրն է քաշում): Բայց բազմութիւնը հաղթում է Բիրասսպին, և նա փախատական է լինում. ետեից հասնում, սպանում են նրան և ձգում մի ծծմբի մեծ վիհ: (Առասպելի մեջ՝ Հրուդենը զարթնում է և տանում Բիրասսպին լեռան այրերն ու կապում և այլն):

Ինչպես կարելի է տեսնել, խորենացին իր մեկնութիւնս մեջ, թեպետ և էականը պահելով, բուրբուխն նոր թան է պատմում իրենից: Նրա պատմածն այլևս առասպելի գույն չունի, այլ պատմական կամ բնական իրողութիւնն: Պուրս են ձգված կամ քնական, խելքի մտտիկ են դարձրած դերբնական և վիպական գծերը, ինչպես են՝ սվիշապաց բուսումնս կամ Բիրասսպի կատարելապես վիշապանալը, Հրուդենի սղիցն անդրի ընդդէմ նորա հաստատելս, Ածղահակի սարասփահար ու շղթայված մնալն այրումը և շկարողանալը դուրս գալ աշխարհն ավերելու: Հրուդենի նշումը հանապարհին, Ածղահակի նրան դեպի սարը քաշելը, փորի համար մարդիկ կոտորելը և այլն: Բերած օրինակից շատ պարզ է, թէ խորենացին փնջպես է լըմբոնում առասպելները և ինչպես է մեկնում դրանք, սանջարդը զարդարումս, քանհասանելին յայտնումս և կամ առասպելի միջից, որ այլարանութիւն է, սհաստտինս գտնում և առնում:

Հայոց առասպելն երբևէ չատ տարօրինակ կերպեր, եթէ խորենացին նույն հայացքը չունենար, մեկնելու և օգտվելու նույն եղանակով

շղործագրեր և հայկական առասպելների վերաբերմամբ, ինչ որ հունական և պարսկական: Եվ հորենացին շի քաջցնում այդ նա շատ պարզ հայտնում է, որ նրա համար առասպելն առասպել է, լինի հունական, պարսկական թե հայկական, միայն մեկը կարող է պարզ և ողործ, եռոճիչ լինել, մյուսը՝ ոչ:

Տեսնենք հայոց առասպելները, ամենից առաջ Արտավազդինը, որ Աժդահակի առասպելի մի հայկական պատմվածք է:

Արտավազդի մահը պատմելիս (Ք. կա.) ասում է, որ Գողթան երգիչներն առասպելաբանում են, թե Արտավազդը նախանձի է հոր փառքին, ուստի և հայրն անիծել է որդուն, որ որսի զնալիս քաջքերը բռնեն նրան և տանեն շյվզատն ի վեր ի Մասիս, այնտեղ մնա և լույս չտեսնե: Այնուհետև ըստ առասպելին, Արտավազդը երկաթի շղթաներով կապված է մի այրի մեջ, երկու շուն կրծում են շղթաները, Արտավազդն աշխատում է նշնել և վերջ տալ աշխարհին, դայց դարբինների վտանահարության ծայնից կապանքը զորանում է: Արտավազդի մահվան մասին այս առասպելը, զերբնական բան ունենալով իր մեջ, խելքի մոտիկ ու ճշմարտիտ չէ: Բայց հորենացին այլաբանություն է համարում այդ. «Արտավազդայ... մահ հանդերձ այլաբանելով, ուստի և ավելացնում է մեկնելով. «Բայց է ճշմարտութեամբ այսպէս՝ որպէս ասացաք վերագրելու: Իսկ վերևում պատմել է քնական իրողությունը, թե Արտավազդը սանցնել զկամրջան Արտաշատ քաղաքի՝ որսով կիներս և իշավայրիս զանամբ Գինայ, և աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի»:

Առասպելն ասում է, Եվիշայագունը զողացան զմանուկն Արտաշատ և ղև փոխանակ եղին: Բայց այդ զերբնական է, խելքի մոտիկ չէ. ուստի և երմանք անշուշտ առասպելը մեկնելով, «համարեցան կախարդել զսա (զԱրտաշատը) կանանց դարձիցն Աժդահակայ»²⁰, քանի որ ժամանակի հասկացողութեամբ կախարդելուն կարելի էր հավատալ, իսկ

²⁰ Հմտ. մեկնելու ժամանակ զորժ դրած ձեռքը. «Ժայտարարութիւն օսկաւուց թի ըստ արտաքնոցն ասոցեալ Բելի՞ ըստ աստուածայն բանից ճշմարտութեամբ է ներքովք (Ա. է.): «Մտեր, զի Սմբատդ տես... ճշմարտութեամբ Մմբաթ էս (Ա. իք.): «Ե. Ոչ ինչ սակ Բիւրասպեայ Հասասիքն: «Են այս է առաջին երոտ ասացեալ տերտի քարերարութիւնն: «Ենկ-վիշայացն բուսում... է այս (Ք. Յակուած): «Յիշատակե. ցուք և մեք կարեառութիւն, և զայլաբանութիւնն ճշմարտեցուց (Ք. խթ.): «Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս: «Այս է ճշմարտութիւն բանիցս (Ք. ծ.): «Երայ ինձ արդարացեալ թախ յուր այն (Ք. կա.) և ուրիշերը (Ա. յ. Բ. ծ.):

²⁰ Այն հանգամանքը, որ հորենացին նախ բերում է մեկնությունը կախարդելու մասին և ապա առասպելը, մեք կարծել յոյնաց է տա, թե այս մեկնություն չէ: Մեկնություն լինելը պարզ երևում է կապող խոսքերից. «Են զայս նշն երգիչն յառասպելին ասն այսպէս: Հմտ. Ա զգրի Բ հավելված, քրի մեջ նույնպէս տալ մեկնությունն է բերում և ապա առասպելը վերելին նման կապող խոսքերով. «Քոր յառասպելին՝ մանուկ աստուեայի, սանն, սպասուորելով...»:

որ մարդիկ երեխա զողսնան և տեղը դե դնեն՝ ոչ: Սակայն Խորենացին ավելի քրանականս է մտածում. նա Արտավազգի կախարդված լինելուն էլ չի հավատում և գրում է. «Բայց ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ ի ծննդնէն և եթ մոլութեամբ լեալ, մինչ նովիմբ և վախճանեցաւ:»

Ուրեմն քոլոր սէսուստինն, ինչ որ իբրև պատմական բերում է Խորենացին Արտավազգի մասին, այն է՝ թե նա խնեթ ու խելառ (սմոլիչ) ծնվել է և որսի ժամանակ խելագարված ընկել է Մասիսի վիհերից մեկն ու անհետացել: Մնացածն առասպելներ են, որոնք, սակայն, քզճմարտութիւն իրաց այլաբանարար լինքեանս ունին թաքուցեալ: Եվ երբ մի անգամ գիտենք, թե ինչ եղանակով Խորենացին առասպելների մեջ այդ «թաքուցեալ ճշմարտութիւնը» կամ հավաստին մեկնելով հանում է առասպելից, և այն, որ նա իր պատմութիւնը սոճով է գրում—սխալված չենք լինի, եթե ասենք, որ Արտավազգի մասին քոլոր հավաստին էլ մի մեկնութիւն է միայն, որ սոճանք տվել են առասպելի մեջ պատմը-վածինս:

Աստատրուկի ձյունի տակ մնալու մասին թառասպելաբանն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն աւաքեալ՝ պահէր զմանուկնս (Բ. լգ.): Բայց քրիստոնյա Խորենացին այդպիսի բանի չի հավատում, ուստի և անմիջապէս մեկնում է. «Բայց որչափ եղաք վերահասու յայսպէս է. շուն սպիտակ ընդ խնարդկան լեալ, պատահեաց մանկանն և դայեկինս:»

Երվանդի մասին ասում են. «Ըստ հմայից դժնեայ զուղ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանայ այլարբացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէժս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդոյ, և ի հայեցուածոցն դժոնութենէ ասեն պայթել որձաքար վիժացնս: Պատմագիրն այս բանը սուտ և առասպել է անվանում, իբրև մի անհավատալի բան. բայց և անմիջապէս, հավատալի կացուցանելու համար, փոխում է այդ, մեկնելով իր ժամանակի հասկացողութիւնը և հավատալիքով. «Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել և կամ դիւականս ինչ առ իր տանել զօրոսթիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամիս (Բ. խբ.):»

Քողնում ենք մյուս առասպելներն ու երանց մեկնութիւնները: Բերած օրինակներից արգեն երևում է Պատմագրի հայացքն առասպելների վրա, և թե ինչպէս նա ամեն մի առասպելական պատմվածք նս, սուտ համարելով՝ հանգերձ, կարող է այլաբանութիւն համարել և մեկնելով միջից սայլարանօրէն թաքուցեալ ճշմարտութիւնը հանել իբրև հավաստի, ստույգ պատմութիւն: Սակայն այդ սհաւաստինն, ինչպէս բերված օրինակներից կտեսնի ընթերցողը, մի բոլորովին նոր շարադրված, իսկապէս հերյուրած պատմութիւն է, որ շատ անգամ առասպելի հետ նմանութիւն իսկ չունի:

Այսպիսի հերյուրած, թալաբանութիւնը ճշմարտած առասպելներն այլևս անշուշտ ժողովրդական կամ ավանդական առասպել կոչել կա-

րելի չէ, այլ միմիայն Պատմագրի կամ նրա նման մտածողների մի հորինվածք, որ, թեպէս և առասպելի հիման վրա շինած, բայց առասպելի մասին պարզ գաղափար տալ լի կարող: Ուստի շատ զգույշ պետք է լինել իբր ավանդակն առասպելից քաղած այդպիսի կտորների վերաբերմամբ, քանի որ դրանք,— «անպարզ լինելով և ապա զգարարված», «անհասանելի» կամ «անյայտ իրք» լինելով և ապա «յայտնուած» մի խոսքով, առասպել լինելով, բայց մեջն այլաբանութիւն տնտնող Պատմագրի կողմից ճշմարտված կամ «ճշմարտապատմութիւն» շինված,— կարող են բուն առասպելից հազվադեպ մի բառ կամ նախադասութիւն ունենալ իրենց մեջ:

Խորհնացիի հարկավ մենակ չէ նշել, որ առասպելի մեջ այլաբանութիւն է տեսնում: Առասպելի, միթոսի մեկնութիւն, ինչպէս տեսանք, միշտ պարապել են մարդիկ և զանազան ձևով մեկնել: Ըթն այժմյան գիտութեան մեջ իշխում է այն միտքը թե առասպելը շատ հազվադեպ մի այլաբանական կամ վերացական-փիլիսոփայական գաղափար կը բովանդակէ իր մեջ, ուստի և կարելի չէ սխալուական-այլաբանական մեկնութիւն տալ միթոսին, այլ թե աստվածների և առասպելների ծագումը մեծ մասամբ ֆիզիկական երևույթներով պետք է բացատրել,— մի ժամանակ էլ այլաբանական և անհասկանալի աստված մեկնութիւններ իշխում: Եվ Խորհնացիի իր ժամանակի գիտութեան մեջ իշխող հայացքի համեմատ, ինչ որ առասպելական է և անհասկանալի՝ այլաբանութիւն է համարում և, խելքի մոտիկ մի պատմվածք շինելով, մարդկորեն պատմութիւնը մեկնում է առասպելը: Այն ինչ որ Խորհնացու համար մեծ արժեք ուներ՝ «առասպելների մեկնութիւնը հորինված, հերյուրած պատմութիւնը,— մեզ համար, հարկավ, անարժեք է: Ուստի և ուսումնասիրողի խնդիրը պիտի լինի, դուրս ձգելով ինչ որ Պատմագրի մեկնութիւնն է, վերականգնել բուն առասպելը: Կնշանակե՞ հին հայկական առասպելների մասին դատելուց առաջ՝ միշտ պետք է որոշել, թե որոնք են այդ առասպելները, այսինքն՝ բուն ավանդական անշատել Խորհնացու զգարարեալ առասպելներից,— մի անհրաժեշտ բան, որ ամեն հետազոտող պետք է անի: Եվ այդ անելը դժվար չէ, քանի որ Խորհնացին ինքն ի սովորաբար որոշ ասում է, թե որն է բուն առասպելը և որը իր զգարարեալ պատմութիւնը:

Թեպէտև ցամ է, որ հերյուրած կտորները բավական մեծ տեղ են բռնում Խորհնացու մեջ, բայց հաճախ նա նախ բերում է և առասպելի կարճառոտ բովանդակութիւնը, երբեմն մինչև իսկ առասպելի խոսքերով, և ապա իր մեկնութիւնը կամ հերյուրումը: Այսպիսի դեպքերում «մեկնութիւնը» կամ դարձալ բնավ նշանակութիւն պիտի չունենա, կամ այն լսփով միայն նշանակութիւն պիտի ունենա, որ բուն առասպելի բովանդակութիւնն իմանալով՝ կարելի է քննադատելով ավելի

հեշտութիւնք ընդունել, թե այս կամ այն մասը բնականութեան մեջ առասպելից է վերցրած, թե չէ:

Մի երրորդ ձևով էլ օգտվում է խորենացիին առասպելներից, բերելով նրանց բովանդակութիւնն առանց բնականութեան, կամ այն պատճառով, որ արհամարհում է այդ առասպելները, ինչպես շարժականը: Եւրոպացիները և Տուրքի առասպելը, կամ բավականանում է միայն նրանով, որ իր՝ որևէ գրավոր աղբյուրից առած պատմութեան իբրև վկայութիւն է կոչում, ինչպես Շամիրամի մահվան առասպելը:

Խորենացիին ինչքան էլ առասպելներ հիշում է, շինք կարող ստել, թե շատ է օգտվում առասպելներից, Դրա պատճառը, հասկանալի է, խորենացու հենց այս հայացքն է առասպելների վրա: Նրա աչքին, ըստ մամանակի հասկացողութեան, ամեն մի գրավոր հիշատակարան, թեկուզ անվավեր մի գրվածք, որովհետև իր մեջ հավատալի բան ունի, ավելի մեծ արժեք ունի, քան թե առասպելը, որը, եթե չէ մեկնված և միջի սահմանափակ առած, նույնիսկ սուտ պատմութիւն է համարվում: Եւ որովհետև խորենացիին պատմութիւն է գրում ոչ թե առասպելարանութիւն, ուստի և որքան կարելի է թիչ՝ այն էլ հաճախ բնականութեան է օգտվում առասպելներից, որպէսզի մի գուցե իր գրած պատմութեան արժեքն ընկնի առասպելներով: Այսպես օրինակ. Բ. կդ. որոշ կերպով գրում վ՛ նա. «Որ շափ էր հնար, փախեաց յաւելորդ և ի պաճուճեալ բանից և որ ինչ յանհաւաստին հարէր բանն և մտածութիւնն. միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ ալուստ և կամ ի մէնջ՝ զարդարոյն և զհմարտի: Զնոյն և աստանօր պատրաստելով, արգելում զընթացս բանից յոչ պատշաճէն և որ զանհաստատութեանն ի ներքս ամել ակնարկէ կարծիս: Եւ զքեզ, որպէս բազում անգամ, և այժմ ազալեմ, մի յաւելորդոն հարկաւորել զմեզ. և սակաւ կամ յոլով բանից՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր ընդ վայր և անյորդ ցուցանել զործ. զի նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս»:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ՀՄԱՅՔՆԵՐ ԵՎ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Ա

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

6. Լեզուն ու սկզբնական պատմությունը:— Քե ինչ ծագում տունի հայ ցեղը, ինչպես և հրը է հաստատվել նա Հայաստանում, որտեղից և որ ճանապարհներով է եկել նա իր պատմական հայրենիքը. ինչ ցեղերի հետ շփում է ունեցել մինչև Հայաստան գալը և գալուց հետո, որից և ինչքան է ազդվել լեզվով և արենակցական խառնուրդով,— այս ամենի մասին ստույգ և ընդարձակ տեղեկություններ չկան: Բայց հիմնվելով հույն մատենագիրների հաղորդածներին, սեպագրական հիշատակարանների և հայերի պահած հին ավանդությունների, ինչպես և լեզվաբանական ուսումնասիրությունների վրա՝ որոշ եզրակացություններ են անում: Ամենից առաջ այն, թե հայոց լեզուն, ըստ հնդեվրոպական լեզվաբանության, կազմում է ուրիշներից անկախ մի առանձին ճյուղ հնդեվրոպական (արիական) լեզուների ընտանիքի մեջ, որին պատկանում են եվրոպական լեզուների մեծ մասը՝ հունարեն, լատիներեն, ռուսերեն, գերմաներեն և այլն. իսկ Ասիայում՝ պարսկերեն, հնդկերեն և ուրիշները: Հայերենն այս լեզվական ընտանիքի մեջ պատկանում է արևմտյան կամ եվրոպական խմբին:

Ցարեթական լեզվաբանական տեսությամբ, սակայն, հայերենը կատարյալ հնդեվրոպական լեզու չէ: Դա մի անցման լեզու է, հատկապես յարեթական լեզուների ընտանիքից հնդեվրոպական լեզուների սիստեմին անցման լեզու:

Ինչ վերաբերում է նախնական պատմությանը, ենթադրում են, թե հայերն իբրև առանձին ցեղ, մեր թվականությունից շատ առաջ, քնակվելիս են եղել Եվրոպայում հույների ու թրակացիների նախահայրերին

¹ Տե՛ս *Н. Я. Марр*, Яфетическая теория, Баку, 1928, кн. 2, с. 42, 43, 194:

մտտիկ, Այդտեղից նրանք անցել են Փոքր Ասիա, ուր հասվանորեն մի առ-
ժամանակ ապրել են փոփոգացիների հարևանութիւնը, քանի որ հույն
մատենագիրներից Հերոդոտը հայերին համարում է փոփոգացիներից ծա-
գած մի գաղութի: Այդ ցույց է տալիս, որ այդ հնդիւնակի ժամանակ, V
դարում մեր թ. ա., պարզ գիտակցութիւնն է եղել այն մասին, թե հայերն
արևմուտքից են եկել իրենց երկիրը²:

Այնուհետև հայերը շարժվելով դեպի արևելք՝ մտել են Կապադով-
կիա և Փոքր Հայք՝ Եփրատից արևմուտք և Գալլ գետից հարավ գտնված
երկիրը, ձալղական Մենուաս Թադափորի մի արձանագրութիւն մեջ հիշ-
ված ռուբանինա անվան մեջ տեսնում են զեռ Կապադովկիայում ապրող
հայերին, նույնպես հայերի հիշատակութիւնն են համարում Իլիականի
մեջ նալների ցոցակում հիշված ռեթիմա-նեբը, որոնց բնակութիւն վայրը
դնում են Կապադովկիայում, Կեսարիայի կողմերը³: Այստեղ ու Փոքր
Հայքում VII դարում մեր թ. ա. հայերին հարևան եղել են վաչկատուն
կիմերները—գամիրները, որոնք այդ դարում շարժվում են ամբողջ Առա-
ջավոր Ասիայի վրա: Գրանց անուանով հայերը Կապադովկիան կոչել են
Գամիրք: Բացի այդ՝ հայերն այդ հին դարերում անպայման հարաբերու-
թիւն են ունեցել նաև հետիտների (Հաստի, խաստի, խեստի) հետ, որոնք
մեր թ. ա. երկրորդ հազարամյակում արդեն ունեցել են իրենց հզոր
պետութիւնը և իրենց իշխանութիւնն ու մշակույթը տարածած ամբողջ
Փոքր Ասիայում:

Մյուս կողմում, Եփրատից արևելք, ի հնուց անտի բնակվելիս է
եղել մի կուլտուրական ժողովուրդ, որ իր սնպագիր արձանագրութիւն-
ների մեջ իրեն կոչում է խալդիի, իսկ ասորեստանցիները նրանց եր-
կիրը կոչում են Ուրարտու, որի հիշատակը մնացել է Հայաստանի Այ-
րարատ նահանգի և Արարատ գավառի (Կորդուք նահանգում) անուննի-
րի մեջ: Ուրարտացիները IX մինչև VI դարի սկզբները մեր թ. ա. կազ-
մած են եղել բավական զորեղ պետութիւն, որի զեռ երկար ժամանակ
պատերազմներ են մղել ասորեստանցիները: Նրանք շինած են եղել
քաղաքներ, սարոցներ: Նշանավոր են նրանց ջրանցքները, ժայռերի վրա
և մեջ շինած բնակարանները: Նրանցից են մնում Հայաստանի զանա-
զան կողմերում սնպագիր արձանագրութիւնները:

Ուրարտուն VI դարի սկզբներում ենթարկվում է մարերի գերիշխա-
նութիւնը: Այդ ժամանակներում հայերը, հավանորեն թիկունքից—արև-
մուտքից ճնշվելով, շարժվում են դեպի արևելք: Նրանք մի ճյուղը հյուսի-
սից Եփրատն անցնելով գնում, թռնում է Եկեղիք, մյուս ճյուղն անցնում
է դեպի Արածանու հովիտը, մտնում Տարուն: Իսկ մի երրորդ ճյուղն էլ
հարավով է շարժվում դեպի արևելք և հասնում մինչև Ադիաբենն Ասոր-
եստանում, Հայաստանի սահմաններից դուրս, և ասորեստանցիներից

² Prof. Dr. Jos. Markwart, Die Entstehung und Wtederherstellung der armenischen Nation, Berlin, 1918, էր. 5, հան.:

³ նույն սեղում.

գրաւում մի քանի գազաւոններ, ինչպէս Տմորիք և այլն: Հազմանորին V գարում մեր թ. ա. հայերը Տարոնի կողմից սկսել են անցնել դեպի հյուսիս, և հետո մտել են Արաքսի հովիտը: Այստեղ V գարի վերջում դեռ ապրելիս են եղել ալարոզցիները, որոնք մատիենների հետ (Որմիո լճի վրա) կազմելիս են եղել մի առանձին շրջան:

Նրք բարձրանում է պարսից Աքեմենյան իշխանութիւնը, Հայաստանը մարաց քոլոր երկրների հետ մտնում է նրանց տիրապետութեան տակ (մոտ 520—486 թ. մեր թ. ա.): Հայ (արմեն) անունը հիշատակվում է Գարեհ թագաւորի (521—486-ին մեր թ. ա.) մի սեպագիր արձանագրութեան մէջ: Այս աշխարհակալ թագաւորը մի քանի պատերազմներից հետո միայն կարողանում է նվաճել հայերին (արմեններին), որոնք եւլյնիսկ Հայաստանի սահմաններից դուրս, Ասորեստանում են կռիվներ մղում Գարեհի դեմ: Այնուհետև Հայաստանը դառնում է Պարսից տիրութեան մի երկիր, բաժանված երկու սատրապութիւնների, արևելյան և արևմտյան, որոնք կառավարվում են թագաւորական տոհմի մարդկանց ձեռքով: Ակա պարսկական մյուս երկրների հետ Հայաստանն էլ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից մտնում է Մակեդոնյան իշխանութեան մէջ (330 թ. մեր թ. ա.) և հետո, շնայելով մի քանի ապստամբութիւններին, Սելևկյան իշխանութեան տակ մտնում է մինչև երկրորդ գարը (189 թ. մեր թ. ա.):

Այս ավելի քան երեք հարյուր տարվա ընթացքում հայերն աճելով տարածվում են դեպի հյուսիս ու մտնում Կուր գետի հովիտը: Այդ շրջանում տեղի է ունենում հայ տոհմերի միացումը: Կազմակերպվում, առաջ է կալիս հայութիւնը մի ամբողջութեան գիտակցութեամբ ուրիշ ցեղերի դիմաց: Թեպետ և իրենք օտարների տիրապետութեան ներքո, բայց խաղաղութեամբ ապրելով՝ և տնտեսապես ու կուլտուրապես զարգանալով՝ ազգագրորեն նվաճում են երկիրը: Տեղացի քնիկ ժողովուրդները այդ շրջանում և ավելի ևս հետագայում հետզհետե ձուլվում են հայերի մէջ: Տեղ-տեղ միայն, այն էլ լեռնային կողմերում, հարատևում են նրանց մնացորդները մինչև երկար դարեր:

Գեոնս պարզված չէ, թե հայ ցեղը Փոքր Ասիայում և Փոքր Հայքում ունեցած դարավոր կյանքի ընթացքում որ ցեղերից, ինչ տարրեր է ընդունել իր մէջ և ինչով ու որքան է ազդել նրանցից: Պարզված չէ նաև ուրարտացիների կուլտուրական և ցեղային ազդեցութիւնը, որ անպայման մեծ է եղել հայերի վրա: Բայց մի բան պարզ է հիմա, որ հայոց լեզվի միայն հիմնական մասն է հեղեվրոպական: Բաղմաթիվ բառեր ու մասնիկներ, անպայման նաև քերականական ձևեր, որոնք դեռ բացատրված չեն, հազմանորին մասամբ ընդունված են ոչ հնդեվրոպական լեզվով խոսող տեղացի քնիկներից: Հայերեն լեզուն իշխել է Հայաստանի հին ժողովուրդների համար, բայց սրանց լեզուն էլ տեղի չի տվել առանց հայերենի վրա ազդելու. այնպես որ հայերենն է նույն իսկ մի խառնվածք լեզու:

Մյուս կողմից խառնուրդ է և հայ ցեղը, որ իր հետ ձուլելով ուրարտացիներին և ուրիշ շատ հարևաններ, մարդաբանական տեսակետով, իր մարմնի կազմութամբ, տարբերվում է այսպես կոչված Երևանյան հնդեվրոպական ցեղից՝, որը կարծում են թե իբր մաքուր մնացել է Եվրոպայի հյուսիսում:

Ուրարտացիներից շատ ավելի մեծ է եղել իրանացիների կուլտուրայի ազդեցությունը նույնիսկ կենցաղի, բարքերի, սովորությունների վրա: Փաննոֆոնի ժամանակից արդեն, Մ զարի վերջում մեր թ. ա. պարսկերեն լեզուն անհասկանալի չի եղել հայերի մեջ, Իրանական այս ազդեցությունը տեսնում է ոչ միայն մինչև մակեդոնացոց տիրապետությունը, այլև հետո հարևանությամբ մարերի ու պարսիկների հետ, ապա ավելի Արշակունի հարստության ժամանակ, համեմատաբար պակաս շափով նաև Սասանյանների իշխանության օրոք: Այդ ազդեցությունն ամենից առաջ երևում է հայ լեզվի վրա: Հայերենում այնքան շատ են այժմ արդեն բուրբուլիս հայացած պարսկերեն բառեր—մեծ մասամբ պարթևական չրջանոճ փոխառած և պահլավերենին նման,—որ մի ժամանակ հայերենը զենում էին հնդեվրոպական լեզուների իրանական ճյուղի մեջ: Մի կողմ թողած քաղմաթիվ հատուկ անունները, մոտ ութ հարյուր արմատներ արդեն ճշովմած են իբրև պարսկերենից փոխառություն: Դրանք վերաբերում են մշակույթի զանազան կողմերին՝ զինվորական կարգերի, դասակարգերի, արվեստների, վաճառականության, բույսերի, կրոնի և այլն⁴:

Իրանցիների հետ միաժամանակ հայերը հարաբերության մեջ են մտել հարավում Միջագետքի և Ասորեստանի բնակիչների—արամեացիների հետ, որոնք քրիստոնյա դառնալուց հետո ասորի են կոչվում: Հայերը նրանց ավելի բարձր կուլտուրական ազդեցությունն ևս կրել են. մանավանդ որ սահմանակից ասորարևակ գավառները մասամբ մտել են Հայաստանի մեջ, և հետագայում այդ կողմերի ասորի ժողովրդի մի մասը, ենթարկվելով հայերի քաղաքական ազդեցությանը, խառնվում է հայերի հետ: Դրա հետևանքը լինում է այն, որ հայերը ասորիներից էլ շատ բան են սովորում: Ասորերեն լեզուն,—թեպետ և պարսկերենից համեմատաբար պակաս շափով,—ազդում է մեր լեզվի վրա: Հայերենի մեջ մտնում են քավականին ասորական բառեր, որոնք հին ժամանակներից արդեն հայացած են, օրինակ՝ գուլքա, կաթա, կացին, կնիթ, մախթ, մանգաղ, քնար, շամփուր, շղթա, ձեթ, խանութ, հաղիվ և այլն:

Ուրիշների այսպիսի ազդեցությամբ հայերը Հայաստան մտնելուց հետո սկզբնական պատմական շրջանում բնականաբար արագ բարձրանում են կուլտուրապես: Նրանք ազդեցով գյուղերում անցել էին նստակյաց կյանքի. և ոչ միայն անասնապահությամբ, այլև վաղուց արդեն

⁴ Հայ ժողովրդական լեզվի վրա ազդել է և նոր դարեկերինք, մասամբ թուրքերենի միջնորդությամբ:

երկրագործութիւնքն ու պարտիզգործութիւնքն էին պարապում: Ժարտար-
արվեստի արդյունքները ձեռք էին բերում հարևան ժողովուրդներին:
Նրանց կենցաղը նահապետական էր, կազմած էին շատ տոհմեր, ապա և
գյուղական համայնքներ, որոնք կառավարվում էին տոհմայնտներով,
նահապետներով ու գյուղապետներով: Միաժամանակ և նրանց մեջ ար-
դեն տեղի էր ունենում սոցիալական խառնակոտում: Ժողովուրդն արդեն
բաժանված էր բռնիք և սեպատես դասակարգերի: Բռնիքն ու մեջ էր և
քրմութիւնը, որ և մշակում էր աստվածների ու դիցապանների պաշտա-
մունքն ու առասպելները ոչ բոլորովին ինքնուրույն կերպով:

7. **Նախնական հավատալիքներ:**— Պարական ազդեցութեանը զո-
րեղ է հղել նաև կրոնական հավատալիքների ու պաշտամունքի վերաբեր-
մամբ: Իրանական ծագում ունեն հայ աստվածների անունների մի մասը,
որ են՝ Արամազդ, Անահիտ, Վահագն, Միհր, Տիր: Պարսկերէնները են ան-
ցնլ հայերին նաև որոշ հավատալիքներ քարի ու շար ոգիների մասին,
ինչպես են հրեշտակ, դև, վիշապ, շահապետ, պարիկ և այլն:

Կրոնի նկատմամբ նույնպես ազդել են և ասորիները: Նրանց աստ-
վածներից մտել են հայերի մեջ Բարշամին, Նան, Աստղիկ, որոնք
պաշտվում էին գլխավորապես Հայաստանի հարավ-արևմտյան կողմե-
րում: Ասորերենից է և քուրմ բառը:

Բայց այդ պնթիզմը, աստվածների կաճառը, համեմատաբար
ավելի ուղ ժամանակի զարգացման արդյունք է: Սկզբնական շրջանում
հայերի մեջ, ինչպես առհասարակ նահապետական տոհմային հասարա-
կութիւնների մեջ, եղել են մտքի գաղափարներ արտաքին աշխարհի և
իրեն մարդու բնութիւն մասին: Այդ նախնական աշխարհայնցութիւնն ու
կրոնի մեջ գտնում ենք ամենից առաջ հոգու հավատքը, մի միամիտ
պատկերացում մարմինը կառավարող հոգու մասին: Դրա հետ սերտ-
կապված էր անիմիզմը, որով բոլոր առարկաներին ու բնութիւն երևութի-
ւորին վերագրում էին մարդկային հոգեբանութիւն, այսինքն՝ կարծում
էին, թե դրանք հոգի ունեն, և առաջ են բերվում ամեն մեկն առան-
ձին ոգիներով: Այդ պատկերացման հետ հետագայում, տոհմային հասա-
րակութիւն կազմակերպումից հետո, կապված էր բնութիւն պաշտա-
մունքը, աստվածացումն այն տարերային ուժերի, որոնցից կախված էր
տոհմի մարդկանց բարբոթութիւնը: Արեգակի, ամպրոպի և այլ աստված-
ներ ու յորիներ պաշտվում էին նվերներով ու զոհաբերութիւնքն և առան-
ձին ծեսերով: Նրանց մեջ առանձին տեղ ունեւ նախնիների. — ցեղի կամ
տոհմերի վարիչ նախնիների, նահապետների. — պաշտամունքը, որի մի
ձևն էր տոտեմիզմը, արտանմանակի պաշտամունքը մի տոտեմի (մի սրբա-
զան առարկայի, օրինակ. մի կենդանի՝ արջ, գալլ, ոճ կամ մի բույս,

⁵ M. Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899 (Մ. Աբեղյան, Հայ
ժողովրդական հավատքը, Լեյպցիգ, 1899):

կամ քնության մի երևույթ՝ քամի, որոտ և այլն, որ պաշտողները համարում էին իրենց նախնին և որի անունով կոչում էին իրենց)։ Տոսեմների պաշտամունքի հետ հաճախ կապված է եղել նաև կենդանակերպողքները ու կենդանակերպ աստվածների պաշտամունքը։

Այս նախնական կրոնը, ինչպես և տոհմային կենցաղը բնականաբար միանգամից շնն վերանոսե՞, նրանց մի քանի բնորոշ առանձնահատկությունները հարատևում են երկար։ Նրանց հետքերը գտնվում են ոչ միայն ֆեոդալական հասարակարգի շրջանում, մեր հին առասպելների ու հավատալիքների մեջ, այլև սրահպանվել, հասել են մինչև XIX դարը և երևում են անզամ մեր ժամանակի ժողովրդական հավատալիքների ու առասպելներին և նույնիսկ կենցաղի մեջ։

Այդ հին շրջանի վերապրուկներ են եղել XIX դարում՝ հայ գերդաստանի ժեթոթյունն ու նահապետական կազմությունը, գերդաստանի հոր, այլև մեծ նանի իշխանությունն ընտանիքի մյուս անդամների վրա, — մեծ նանինը՝ հոր կենդանութան ժամանակ, հատկապես կանանց և երեխաների վերաբերմամբ. կանանց առևանգումն ու գնումը, և վերջապես՝ արյան վրեժխնդրությունը, որ կատարվում էր սպանվածի ազգականների ձեռով մարդասպանից կամ նրա ազգականներից։ Ամբողջ գերդաստանն, ուրեմն, պատասխանատու է եղել իր անդամներից մեկի կատարած եղևնի համար։ Հին դարերում, անշուշտ ավելի ևս ուժեղ կերպով են մնացած եղել այս տոհմային կենցաղի գծերը։ Գերդաստանի հայրը կամ տան զլխավորը մեր թ. II դարում, ինչպես երևում է, ղեռ անսահման իշխանություն է ունեցել ընտանիքի մյուս անդամների վրա։ Հայաստանում այդ ժամանակ կարելի է եղել առանց պատասխանատվության սպանել իր կնոջը, իր երեխաներին, նույնպես և իր անդամակ եղբորն ու քրոջը⁴։ Այդ հին դարերում անպայման կատարվելիս են եղել նաև այն սպանությունները, որ Մ. Խորենացին (Գ. 4.) պատմում է վիպական Արտաղեսի թաղման համար, «...Ամբոխոսթինը մեռան ի մահուան Արտաղեսի, սիրելի կանայք և հարձք և մտերիմ ժառանգ... Եւ շուրջ զգերեզմանան լինէին կամաւոր մահունքս։

Առանձնապես հին առասպելների ու պաշտամունքների վերապրուկները⁵, նույնպես ղեռ պահված են եղել մինչև XIX դարի վերջերը և, անշուշտ, մինչև օրս էլ։ Ինչպես նախնական ցեղերի մեջ, գեղջուկ հայերից շատերը մեր օրով անզամ ղեռ հավատում են, թե հոգին քամի է, շունչ է (և հենց հոգի-ոգի բառը նշանակել է նաև շունչ)։ Կարծում էին, թե մարդու հոգին կարող է բաժանվել մարմնից և թափառել, ստեսիլը գնալը, շատ քաներ տեսնել։ Առանձին գեր իրր կարող են կատարել ուր-

⁴ Eusebius, Praeparatio evangelica, VI, 10. § 12.

⁵ Եւսեբիոս Կեսարացին այդ — եզեկությունը, ինչպես և արյան վրեժխնդրության վերաբերյալ մտան. առնու՛մ է մեր թ. II դարի հեղինակ առաջի Քարգաւածներից՝ ՅՈՒԼ. Դ. Խաւանյակ. Очерки истории Армении, Москва, 1910, кр. 227, ևառ.։

⁷ M. Abeghian, Der arm. Volks. ևզու. ևավաթ ժողով, կր. 8—20։

վականները—մեռելիների հոգիները: Նրանք իբր կարող են ընդունել զանազան տեսանելի կերպարանքներ՝ մարդու, կենդանու, թռչունի: Նրանց իբր վնասում են մարդկանց, հիվանդութուններ են առաջ բերում և այլն:

Մեր ժողովրդական հավատալիքների մեջ նույնիսկ պարզ կերպով երևան էր գալիս ուրվականների զարգացման մի երկրորդ աստիճանը, այն է՝ մեռելիների հոգիները վերածվում, դառնում են բնության ուժերի վրա իշխող ոգիներ: Այդ ժամանակ հոգիների ու ոգիների իբրև շունչ կամ քամի պատկերացման հետ առաջ է գալիս մի երկրորդը, այն է հոգիները երևակայվում էին իբրև լույս (ալուա-հոգիներ, ալույս դառնա-հոգիներ), իսկ ոգիները՝ իբրև երեղեն (աչրեղեն աղջիկներ, սգրեղեն կիներ): Բացի այդ՝ հոգիներն ու ոգիները քաժանվում էին երկու խմբի՝ լուսավոր, քարի հոգիներ ու սև, խավար, շար հոգիներ, և փայլուն հրեղեն քարի ոգիներ ու սև ժխանման շար ոգիներ: Ապա կենդանի մնացել էր մեզնում նաև այն հին հավատալիքը, թե մահից հետո հոգիները գնում են այն աշխարհը և ներկայանում մեռելիների դատաստանին, որ իբր կատարվում է ամեն օր լուսաբացին: Այսպես և նախնական ուրիշ շատ հավատալիքների մնացորդներ:

Հոգիների այս հավատքի հետ սերտ կապված էր մեռելիների պաշտամունքը, որ առանձնապես կատարվում էր մի ամբողջ տարի, սկսած մեռելիուց անմիջապես հետո, և որի նպատակն էր ալուսավորել նրանց հոգիները: Մեծապես պաշտելի են եղել տան նահապետների-նախնիների հոգիները: Հավատում էին, թե այդպիսի մեռելիների հոգիները հոգում են իրենց դարմերի համար. նրանք իբր գալիս պտտում են իրենց տան շուրջը, նույնիսկ ձայն են տալիս իրենց զավակներին, խոսում նրանց հետ, խորհուրդներ տալիս նրանց: Ինչպես հին իրանացիների մեջ ֆրավաշիները—ուրվականները, մեռելիների հոգիները—իրենց որոշ տուներին ալիելի պաշտելի էին, նույնպես և հայերի մեջ մեռելիների պաշտամունքն ատանձնապես կատարվում էր տարին հինգ անգամ հինգ մեծ տոներին: Հավատում էին, թե հինգ նավախտիքներին քանցնելուց հոգիներն այն աշխարհից վերադառնում են, ման գալիս իրենց գերեզմանների կամ տների շուրջը, լինում իրենց անբնդի մատ: Ոստի պետք էր խոսել ու մոմով սեղանակա մեծություն կատարել: Երեք օր անընդ իրբ մնում էին երկրի վրա և Երրորդ օրը, ամենընցքը կատարելուց հետո, վերադառնում երկինք իրենց տները:

Եվ, վերջապես, այս նախնական հավատքի մնացորդներից կարևոր է հիշել և հետևյալը: Ինչպես հին իրանացիների մեջ ֆրավաշիները, նույնպես և հայերի մեջ մեռելիների հոգիները և նրանց պաշտամունքը մոտիկ հարաբերության մեջ են դրվել աստղերի հետ: Հավատում էին և մինչև հիմա էլ ընտան Սոերի՝ աստղները հավատում են, թե ամեն մարդ ունի մի աստղ, որ խավարում է, երբ մարդ վտանգի մեջ է ընկնում. սփայլուն աստղերը, որոնք երբեք չեն ընկնում, պատկանում են երկնքում աստղերի վրա նստող արդարներին: Ինչպես հին իրանա-

ցիւների մեջ սրբերի ֆրաձաշիները նույնացվում էին աստղերի հետ, միանգամայն և իրրն բարի ոգիներ էին բմբռնվում, նույնպես և հայերի մեջ աստղերն իրրն պահապան ոգիներ էին մտածվում և պահապան հրեշտակներին հավասար դասվում: Նույնիսկ երգվում էին աստղերով, ինչպես և հոր գերեզմանով (սէն մեծ ու պատիկ աստղերը վկաւ. սէն հորս գերեզմանը վկաւ), և նույնիսկ աղոթում աստղերին. «Զնտ-Պետ (մեծ-փոքր) աստղունք, օգնական պահապան կայնեք. Չարբիել, Մուքայել հրեշտակներաց հետ մե ազատեք հըմեն փորձանաց, շար մարգուց, շար սըհաթից»¹:

Այս ամենը նախնական հավատալիքների ու նախնիների պաշտամունքի մնացորդներ են, որոնք դալիս են, —հարկավ, ոչ բոլորը, — նախնական ժամանակներից իրրն վերապրուկներ:

Այդ դարաշրջանի քանսահմանափայն վերապրուկային մնացորդներն են մեր ժամանակի հմայական աղոթքները, սնահավատական զրույցներից շատերը, այլ և այլ առասպելները, որ գտնում ենք Մ. Խորենացու Հայոց պատմութիւնի մեջ: Դրանք են՝ Հայկի, Արա Գեղեցիկի, Վահագնի և ուրիշների, ինչպես և Վիպասանքի մեջ երևան եկող վիշապների մասին պատմվածքները: Դրանց ուսումնասիրութիւնը կարեւի չէ անել առանց կանգ առնելու ման հասարակարարական ոգիները, ստատիստների կամ հեթոսների մասին:

Բ

Հ Մ Ա Յ Ք Ն Ե Ր

8. Հմայական աղոթքներ և սնահավատական զրույցներ:— Երբ առաջ է եկել կրոնի նախնական ձևը, բնութիւնն վրա փշխող ոգիների հավատն ու պաշտամունքը, զրա հետ միաժամանակ բնութիւնն դեմ կովի մեջ մշակվել է դուրբութիւնը: Դրա սկզբնական զլխավոր եղանն է քովելը, այն է՝ խոսելով, ձայնելով կամ շշնջալով որոշ խոսքեր կամ բանաձևեր, երբեմն նաև լեզվական անիմաստ հնչուներն արտասանելով, թոթովելով՝ ազդել ոգիների վրա՝ ուզած երևութիւններն առաջ բերելու, կամ անցանկալի երևութիւնները խափանելու համար: Դրանով՝ նախնական մարդը կարծում էր, ին կլրացնի բնութիւնն վրա ազդելու իր տեխնիկայի թերին: Այդ կապակցութիւնը որոշ դիրք են զրա վել սկզբում առանձին անհատներ—թովիներ, դուրբեր, որոնք իր կարող էին ազդել ոգիների վրա: Հետագայում, երբ հասարակութիւնն դասակարգային խավավորման հետ կազմվում է քմերի ազդեցիկ դասը, դուրբութիւնը կամ հմայութիւնն անցնում է նրանց:

Այս հավատքը՝ խոսքի ուժի մասին, քաղմաթիվ նախնական հավատալիքների ու կենցաղային կողմերի հետ, շատ երկար հարատեւել է մեր

8 Գ. Ստեփանյանց, Մանես, 4. Գոյիս, 1876, եր. 305. «Վանս պոստվունց ազմբա»:

ժողովրդի մեջ,— և ոչ միայն մեր,— և դրանց վերապրուկները հասել են նույնիսկ մինչև մեր օրերը: Ինչպես երևում է, հնումն այդ կարծեցյալ արվեստը բավական զարգացած է եղել Հայաստանում: Մեր մատենագիրները V դարից ի վեր հաճախ գրում են զանազան տեսակի համալուծումների, դյուբուվժումների դեմ:

Մինչև վերջերս էլ մեր ժողովրդի մեջ շատ տարածված էին և համալական թանաձևները, հրգամնեյուններն ու երգմենեցուցական խոսքերը, որոնք կոչվում էին սկապքի աղոթք՝ կամ պարզապես լոկ աղոթք, իսկ համալեռու գործողութունը՝ աղոթելը, որովհետև դրանք իսկապես նախնական աղոթքներ են եղել: Դրանք բերանացի էին, կային նաև գրավոր սեմայքներ, որ դյուբուվժ գրում էին երկայն շերտ մագաղաթի կամ թղթ-թերի վրա և ծալած կարում հազուստների մեջ: Դրանք կոչվում էին սեմայեակա, սեմայեկա (սեմալիա) և այլ անուններով: Քերանացի աղոթքներն ապրում էին հենց ժողովրդի մեջ, և հարկավոր համարված դեպքերում ասում էին երեք անգամ կրկնելով: Իսկ գրավոր սեմայեկներ հոբիներու կամ, ինչպես ասում են, ազիր անելու կամ սթուղթ անելու գործով պարապում էին քահանաները, տիրացուներն ու խալ-Ֆանները, որոնք փոխարինել էին Տին քրմերին:

Գրավոր համայեկներ լինում էին երբեմն նաև քրիստոնեական աղոթքներ, բայց իսկական համայական թանաձևերը մինևույն թովանդակութունն ունեն, ինչ որ ժողովրդական սկապքի աղոթքները: Գրավոր համայեկներն ընդհանրապես արձակ են հորինված, մինչդեռ ժողովրդական աղոթքները թուրքիկ ազատ ոտանավորներով են և հնության դրոշմ են կրում: Դրանք մեծ մասամբ տրամախոսական ձևով են, կամ սկսվում են մի սխալական փոքրիկ նախաբանով:

Մինչև այժմ լինե ժողովված և ուսումնասիրված մեր գրավոր համայեկները: Բանահավաքների կողմից առանձին ուղադրության լին արժանացած նաև ժողովրդական համայական աղոթքները: Ինչ որ հայտնի են, դրանք բոլորը շատ հին լին: Ժողովրդական աղոթքները նույնիսկ XIX դարի վերջին քոստոլդից են հայտնի: Բայց և այնպես դրանք ըստ էության գալիս են խորին հնությունից և փոխված, նորոգված լեզվով, կերպարանափոխված, խավավորված վերապրուկներ են, թեպետ և կլինեն, անշուշտ, և այնպիսիները, որոնք ուշ դարերում այլազգիներից անցած լինեն հայերին: Դրանց մեջ հիշվում են բազմաթիվ անծանոթ հատուկ անուններ, բայց և հաճախ հին անուններին փոխանակել են քրիստոնեական սրբերի անուններ: Բացի այդ՝ դրանք երբեմն անհասկանալիության աստիճանի աղճատված են:

Համայական աղոթքները, լինեն գրավոր թե բերանացի, ունեն ընդհանրապես երգմենեցուցական բնավորութուն. ուղղված են խորև խնդիրք քարի ոգիներին, բայց սովորաբար չար ոգիների դեմ են, որոնք իբր

1 Տճ'ս Եր. Լալայան, Պատմագրի բուրմուք, Քիֆլիս, 1892, եր. 3—18.

վնասում են մարդկանց և հիվանդութիւններ բերում: Իրրև այդպիսի-
ներ առանձնապես երևան են գալիս գիշերովա շարունջը, շարքերը, նո-
րածիններին ու ծննդկաններին վնասող ալերը (ալըերը), շար ալըը և
այլն, նույնպես և կենդանակերպ ոգիները և հենց իրական վնասատու
կենդանիները՝ գալլ, օձ, կարիճ, սրանց հետ միասին անգամ գորտն ու
մըղլուներ: Այս վերջին շարան ահլիմատեական շար կենդանիներ են հա-
մարվել հին պարսկական կրոնով և խոր հիվանդութիւններ են բերել:
Նույնը եղել է և հայերի մեջ. դրանք իրրև շար ոգիներ առաջ են բերել
գորտնուկ, մըղլուկ, օձիկ կողմած հիվանդութիւնները: Սրանց դեմ էլ
ուղղված են եղել համայնական աղոթքներ²: Կարծում էին, թե «գելկապի»,
սկարճի» և այլ սաղոթքներն» ասելուց հետո՝ գալլը, կարիճը և այլն
տեղներում կապված կմնան անշարժ:

Բերենք մի քանի այդպիսիները, ամենից առաջ մի սգորտնուկի
աղոթք, որ իսկապես մի հին աղոթք է: «Աղոթողը» դիմելով «նորին»,
այսինքն նորած լուսնին, որ հին ժամանակ պաշտվել է հայերի մեջ, իբրև
բարի ոգի, խնդրում է նրան աղատել իրեն այդ հիվանդութիւնից.

Նո՛ր, նո՛ր, թագա թագաւոր,
 Ես այնոր, դու թագաւոր,
 Էն աշխարքից ի՞նչ խաբար ես բերել:
 Նո՛ր, նո՛ր, տես զիս.
 Փորտնուկն էկն կ'ուտաս զիս,
 Կեր գորտնուկին, շուտա զիս:

Բազմաթիվ «գելկապի աղոթքներին» մեկն է հետևյալը.

Որդի Փալուտտին
 Հովիվ էր Քրիստոսին,
 Նստեր օխտը ճամփին,
 Կը լար, կ'ողբար:
 — Հե՛ր լաս, հե՛ր ողբաս,—
 Հարցուց նրան Քրիստոս:
 — Իմ տեր, կը լամ, կ'ողբամ,
 Կը վախեմ գելից-գազանից,
 Եվ ամենայն ջանավարից:
 Որ ժուռ կը գան մեջ գիշերին:
 — Փնա՛, մտիր առար Սիմեոնին,
 Ան երկթե զնչիլ, պողպտե բալնիք,
 Գի՛ր տղն ի տտին, գելն ի բերան,
 Եվ ամենայն ջանավարին,
 Որ ժուռ կը գան մեջ գիշերին:

² Մանրամասնութիւններ տե՛ս Մ. Արեղյանի վերահիշյալ «Հայ ժողովրդ. հավատքը».
 գիրք. լեզվով, երես 113—127, այլև եր. 29, 4 տե.:

Մեկ ուրիշ «ազոթքի» մեջ կատարվում է այս վիպական «ազոթքի»
մեջ պատվիրվածը:

Հուսին, հուսին, Մայր կուսին,
Երեք պիպեն (բեն) կա Քրիստոսին.
Մեկն ի սիրտն սատանին,
Մեկն ի բերան գեղ-գազանին,
Մեկն էլ ի սիրտ շարին,
Որ շուրթի մեջ գիշերին²:

Չարահալած են ըստ ընդհանուր տարածված նախնական հավատա-
լիքների՝ շար փուշը, կրակը, երկաթը: Վերևի «ազոթքներ» մեջ, ինչ-
պես կարելի է տեսնել, գործադրվում են երկաթ, պողպատ:

Չար ոգիների վնասակար ազդեցությունն, ըստ սնահավատքի, լի-
նում են նաև մարդու մարմնի զանազան մասերի վրա. առաջանում է
գկապչ կոչվածը, այսինքն՝ կալ ու կապ են լինում, շարժվելու ընդունա-
կությունը կորցնում են մարմնի այս կամ այն մասերը: Այսպես, օրի-
նակ, գրավոր համայնիներ կան լեզվակապիչ, թքակապիչ և այլն: Թե-
րե՛նք այդպիսիներից հետևյալը.

Հարբան նստեալ
Ի յանհուր և յանջուր և յանեղեմն դաշտին,
կայր զերդ գայրի,
Եւ ողբայր զինչ զգերի,
Եւ ձայն ածէր զինչ զանեղբայր քոյր:
Հրամայեաց տէրն... թէ՛
— Հա՛ւքալ, է՞ր ես նստել
Ի յանհուր, ի յանջուր և յանեղեմն դաշտին.
է՞ր կուլաս զերդ գայրի,
Եւ կ՞ողբաս զերդ զգերի,
Եւ ձայն ածես զինչ զանեղբայր քոյր:
Հարբան արար պատասխանի, թէ՛
— Ի՞նչ ցեղ չի՞ Սոտիմ
Ի յանհուր, ի յանջուր և յանեղեմն դաշտին.
Ի՞նչ ցեղ չի՞ լամ զերդ այրի,
Եւ շոքամ զերդ զգերի,
Եւ ձայն ածեմ զերդ անեղբայր քոյր.
Երբ չի ծնանին իմ յղիքն,
Չյգենան իմ երբնճնիքն,
Եւ չի արձակեցան իմ պզարգելքն:

3 Տե՛ս Ց. Կովաստույանց, Հալ ժողովրդական Հեթիմներ, վերջորդ գիրք, Քիֆ-
լիս, 1890, եր. 142—148; Այստեղ նաև շար այլքի և այլ «ազոթքներ»: Այլև նույնի յոթնե-
րորդ գիրք, Քիֆլիս, 1891, եր. 122, համ.:

նա հրամայեաց տէրն... թէ՛

— Մի՛ նստել

Ի յանհուր, ի յանջուր և յանեղեմն դաշտիդ,

Եւ մի՛ թայր զեւրդ ալրի,

Եւ մի՛ ողբայր զեւրդ զգնրի,

Եւ ձայն ասել զեւրդ անեղբայր թայր:

Քո յդիքն ձեանեցան,

Եւ զո երընճնիքն յգնեցան,

Եւ արձակեցան զո զոզարգելքն: —

Արձակեցաւ երկինք,

Եւ արձակեցաւ երկիր.

Եւ արձակեցաւ ծառայն աստուծոյ...⁴

Սկզբնական տաղոթքները, հարկավ, այսպես երկայն շին եղել, այլ միայն կարճ ու կրկնված խոսքեր են եղել, ինչպես հետեւյալն է.

Չար աշքը շար փշին,

Չար աշքը շար փշին,

Չար աշքը շար փշին:

Կամ հետեւյալը մի հմայնկից.

Չարակն ի շար փուշն,

Չար փուշն ի բարկ կրակն,

Բարկ կրակն ի քարն,

Քարն ի յանյատակ ծովն...

Կամ հետեւյալը.

Ալալոց, դալալոց...

Գիլի աշքերը զիզիկ անես,

Ատամները մոմիկ անես,

էս հանդեն կայես-կայես,

էն հանդեն արձակ թողես:

Ութ ութեն, երկու քթեն,

Աստվածամոր քաղցր կաթեն,

Սուրբ Սարգսի ձիու ձարեն,

Կապն զելը, կապն դաւաւը,

Կապն զիճն ու գիճավորը՞,

Կապն օձն ու թրավորը,

Կապն մեջ զիշերվա ծովը,—

Օր սինոուր մտավ՝ բերանը գոցվի,

Մինոոն ելավ՝ քացվի:

⁴ Ղ. Ալիշան, Հին Հատուցք. Վենետիկ, 1895, եր. 282: Այոսեղ շէմալքա և ալլն. եր-
280, հտն., Հմայնկք, եր. 402, հտն.:

⁵ Գիճ, զիճավոր, կիճ, կճավոր—խալիթոց, խալիթոցավոր:

Թերեք և մի ծննդկանի «աղոթք»:

էլանք դարով, շրջանք ձորով:
Մեր տերն է կամ Հազար բարով:
Ըսինք՝ «Տէ՛ր, տը կ'երթասս:
— կ'երթամ գուր հիվընդին,
էլեմ էրդիկ աղոցկընին,
ժնչիլ քաշեմ բուր պատին,
Գվախենա սիրտն ի փորին:

Հմայական աղոթքների հետ կապված են սևահավառական գրույցները, որոնք կաշվում են քրանա, քրանաս: Այդ գրույցները պատմություններն ու լատիները հավատում են դրանց բովանդակության իրապետ կատարված լինելուն: Հաճախ այդպիսի գրույցներն ասվում են ականատեսի կամ գործողության մասնակցի անտոնից, թե ինչպես վրենց ծանոթ այս ինչ կամ այն ինչ մարդն իսկապես տեսել է շարունք, քաջքն և կամ իր գլխին ինչ են արել նրանք: Հիշվում են գործողության տեղն ու ժամանակը և այլն: Այդպիսի հանդիպումների հետևանքը ըստ սևահավառքի լինում է հաճախ հիվանդություն, որ և կոչվում է «հանդեպք»: Մեր բանահավառքներն առանձին ուղադրություն լինելով դարձրել են այսպիսի գրույցներին:

Հմայականների մեջ էլ պատմվում են անցյալում շարքերին տեսնելու և նրանց հետ խոսելու դեպքեր: Թերեք մեկը.

Սուրբ Միսիանոս դայր ի լեռն է ի վայր.

Եւ տեսաւ պեղծ մի շար.

Եւ տւնէր աչք հրեղեն,

Եւ ի ձեռին երկաթի կտրոց,

Եւ հանդիպեցաւ ի տեղի աւազոյ:

Ասէ Սուրբ Միսիանոս.

— Ո՛ր երթաս, նզոված պեղծ:

Գատասխանի ետ նմա և ասէ.

— Երթամ զմանկունս կանանց թառամեցուցանեմ,

Զկաթն պակասեցուցանեմ,

Զլաւն խավարեցուցանեմ,

Զրդեղն ծծեմ և համբ առնեմ,

Եւ առնեմ զտղայն անժամանակ յորովայնի և այլն:

Դա նորածիններին ու ծննդկաններին վնասող այլն է:

Այսպիսի գրույցներն ու հմայական աղոթքները, հարկավ, շատ նոր են և զարգացած ձևով են, բայց դրանց սկիզբը շատ հին է և թաղված

¹¹ Մի քանիսը կան 9. Արվանձալուցի «Մտնանա», կր. 78, հտե. Առանձնապես Տ. կատարողանցի «Էջայ ժող. հեքիաթներ», յոթներորդ պրքը, կր. 26, հտե., «Ողբներ», Մ. Աբդուլանի ժողովածուից:

է նախնական դարաշրջանի մեջ: Ինչքան էլ նոր լինեն այդ բաղաձայնները ու գրույցները, դրանով այժմ մոտավոր գաղափար ենք կազմում անցած-գնացածի մասին, քանի որ այդ նոր համարվածներն անցյալից են գալիս և դրանցից շատերը հենքի փոխված մնացորդներն են, ինչպես այդ կարելի է տեսնել քաջքերի մասին ուսումնասիրութիւնից (հատմ. 58 սքաջքեր և սնահավատական գրույցները):

(Հնագոյն բանաստեղծութիւնի մի տեսակ են և առասպելները: Դրանք փոքրիկ գրույցիկներ են, որոնց մեջ, ըստ նախնական աշխարհայեցողութիւնի ու հավատալիքների, բերութիւնն ու հասարակական ձևերը... անգիտակցորեն մշակված են ժողովրդի հրեակալութիւններ: Դրանց մեջ՝ ոգիների, դիցազների կամ աստվածների պատկերով՝ ձևավորված ու դրոշմված են նախնական ժողովուրդների հայացքը մի կողմից՝ հասարակական հարաբերութիւնների, մյուս կողմից՝ բնութիւն ուժերի և երկվորեանքի վրայ) Հնուց ի վեր հայ ժողովրդի մեջ պատմվել են յայտնաբերված առասպելներ, որոնք մասամբ կապված են նաև հայոց սկզբնական պատմութիւնի և կրոնի հետ: Այդպիսին են Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնի մեջ բերված մի քանի առասպելները, որոնցից և Հայկիները:

Անցնենք Մ. Խորենացու բերած առասպելներին, որոնք նույնպես ուղ դարբերում են գրված, բայց իրենց քովանդակութիւնով պատկանում են նախնական դարաշրջանի բանահյուսութիւնը:

Գ.

ՀԱՅԿ ԴԻՅԱԶՆ

Թ. Արքայութիւնը:— Հայկի առասպելը դասում անք Սեբեոսի պատմութիւնի սկզբի մասում (սկիզբնապէս կոչված հատվածի մեջ) և Մ. Խորենացու Հայոց պատմութիւնի մեջ (Ա. Թ. Ժր.): Խորենացին այդ պատմելիս անգիր գրույցներ կամ երգեր չի հիշում իբրև աղբյուր, այլ մի քանի անգամ պարզապէս հայտնում է, որ գրավոր աղբյուրից, Մար Արասից է առած արև Բայց Արամի պատմութիւնն անհաշու հետո (Ա. Ժգ.— Ժդ.) նա գրում է. «Յիպէս Մար Արաս Կատինայ պատմէ՛ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց ի զուանակալնէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց» (Ա. Ժգ.): «Փոքր և անշան մարդիկը ոչ թե ժողովողներն են (ինչպես սխալ հասկացել են), այլ գուսանները: Մրանցից, սրանց գուսանական երգերից են ժողովված այդ պատմութիւնները, որոնց թվում և Հայկիները, քանի որ Խորենացու այդ ժանտիւթիւնը վերաբերում է Հայկից մինչև Արամ պատմվածքներին՝: Խորենացին հայ ժողովրդական գրույցներն ու երգերն ուրիշ տեղ ժողովանական չի անվանում: Բայց թե գուսանները հին ժամանակ նաև վեպեր ու գրույցներ են ասել, այդ հայտնի է Սեբեոսից և ուրիշներից»:

1 Մ. Արքայութիւն, Հայ ժող. առասպելներ, էր. 176—258, 581—590:

2 Տէ՛ս նույնի, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էր. 176.

Բացի Սերբոսից և խորհնացուց՝ Հայկ անունը հիշվում է և Աստվածաշնորհի մեջ³, Այստեղ Օրիոն համաստեղագիտունը Հայկ է Թարգմանված, Այժմ ևս մի քանի ևողմերում, ինչպես և ժողովրդական երգի մեջ գտնում ենք նեկ—Հայկ անունը այդ համաստեղագիտան համար⁴, Բացի այդ՝ Ազաթանգեղոսի մեջ ևս գործածված է «Հայկարար» բառը, հավանորեն «Հակայարար» բառի իմաստով⁵, Հակայի նշանակություն ունի Հայկ բառը և Փիլոնի Թարգմանություն մեջ, ուր հակաների մեծությունը «Հայկաչափ» բառով է արտահայտված⁶:

10. Հայկ և Օրիոն:— Մեր հին Թարգմանիչներն օտար աստվածներին ու դիցազների անունների տեղ դնում են համապատասխան հայկականները, ինչպես՝ Հևա—Արամազդ, Ափրոդիտե—Աստղիկ և այլն, այսպես և Օրիոն—Հայկ: Այս ցույց է տալիս, որ հակա դիցազն Հայկն իր հական գծերով նման է եղել Օրիոնին: Ի՞նչ է սրա առասպելը:

Օրիոնը, հունական առասպելաբանությամբ, մի քաջ և անխոնջ որսորդ է, ծովի աստված Պոսիդոնի որդին, մի վիթխարի հասակով հակա, բացառիկ ուժի և զեղեցկության տեր, էոսի—Արշալույսի սիրականը: Նա համարձակվում է մերժել Արտեմիսի սերը և կամ սկզբառակ ձգելիս մրցության է հրավիրում նրան: Դրա համար այդ դիցուհին պատժում է Օրիոնին. մի կարիճ կծում է նրան, որից և մեռնում է հական: Բայց հետո անմահիթար մնալով նրա կորստի համար, դիցուհին նրան փոխադրել է տալիս երկինք, ուր նա կազմում է ամենափայլուն համաստեղություններից մեկը:

Հայկը նույնպես մի զեղեցիկ «դիցազն» է, «զեղապատյուն և անձնեայ, քաջադանգուր, խայտալին և հաստաքազուկ», սի մեջ սկայիցն քաջ և երենլիս: Ապա՝ Հայկին խորև որսորդ է ներկայացնում և Բելի նրան ուղղած խոսքը Սերբոսի մեջ. «Կեաց ի տան իմոյ զորսականաց»:

Հայկն և Օրիոնն, ուրեմն, նման նկարագիր ունին. բայց Հայկի առասպելը, այսինքն՝ առասպելի գործողությունը, բոլորովին տարբեր է Օրիոնի մասին պատմվածից:

11. Պատմական և առասպելի մեջ:— Հայկի առասպելը մեզ տանում է ամենից առաջ այն նախապատմական դարը, երբ Հայերը դրսից գալիս

3 Նոայի, մ. 9. 10. Թոր լճ. 31.

4 Մերեք 9. Կանա սաղ. Ա. Թիֆլիս, 1885, էր. 52.

5 «Առեալ սկայազորն (Տրդատ) Հայկարար զոթ արձանես (Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ 9. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տիֆլիս, 1868, էր. 288)».

6 Տե՛ս Նոր բառը. Հայկ. լեզ. «Հայկաչափ» բառի տակ. Նույնպես Գ. ԽԱՐԱԿՅԱՆ, Արմ. ջոպ..., էր. 75, 118: Իսկ Հայկի մասին ավելի մանրամասն ծանոթություններ՝ Ղ. Վիթաճ, Հին Հատար, էր. 236, հտն., 119, հտն. 1.

7 Պատմութիւն Սերբոսի նպիկոպոսի ի Լերակն, Թիֆլիս, 1818, էր. 6.

Քն Ուրարտացոց երկիրը: Քն ինչ մարտերով և ինչ զորավարների առաջ-
նորդութիւնով են մտել հայերն Ուրարտու երկիրը և ինչպես տիրել նրան,
մենք այդ շղիտենք, Յայց այդ շրջանում անպայման կատարվել են սրիս-
րագործութիւններ, որոնք նյութ են դարձել երգերի ու զրույցների, որոնց
մեջ գովվել են տոհմապետ զորավարները: Հայկի առասպելի մեջ պահ-
ված է դրա հիշատակը: Եվ այս դարձանալի շէ: Ավանդական բանա-
հյուսութիւնը երբ մի անգամ հաստատուն բյուրեղացած կերպարանք է
ստանում, երկար դարեր այլևս չի մեղմում, մանավանդ, երբ կապում
է մի տեղի անվան հետ, ինչպես եղել է Հայկի ու Քելի առասպելի վերա-
բերմամբ: Առասպելի մեջ հիշված տեղանունները՝ Հարթ, Հայկաշեն, Հա-
յոց Ձոր՝ մեզ տանում են Վանա լճի շուրջը, ուր և սկզբում դեռ եղել է
հայութիւնը:

Հայկը նահապետական հասարակութեան մի հայր է, որի տոհմի մեջ
հաշվում են մոտ երեք հարյուր տղամարդ: Նրա հետ են նաև նրա տոհմի
հետ միացած եկվորները, այլև նրա ընդոճիները: Այս վերջիններք նա-
հապետական ժամանակի ստրուկներն են: Ընդոճինք նշանակում է
բունը մեղմած, համապատասխան լատինական *domi natus*. ինչպես
կոչվում էին ստրուկները: Նա շուրջով ենթարկվել Քելին, դալիս է
«Արարադայ» երկիրը, ոչ թե Այրարատ, այլ Արարադ Կորդուաց գավա-
ռի մեջ (Վանա ծովից դեպի հարավ-արևելք):

Ընդ արարեալ զնայ յերկիրն Արարադայ... հանդերձ որդովք իբրովք
և դատերօք և որդոց որդւովք, արամքք դօրաւորօք, թուով իբրև երեք
հարիւր, և այլովք ընդոճնօք և եկօք յարեցելովք ի նա և բուլըր աղխիւ
երթնայ բնակէ ի յեռնտիւն միում ի դաշտավայրի, յորում սակաք ի
մարդկանէ յառաջադոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ
իւր արարեալ Հայկ՝ շիտէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի
ժառանգորթիւն Կարմայ որդոյ Արամանեկայ: Են ինքն խաղայ...
այլով աղխիւն ընդ արեմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ
դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարթ, այս ինքն թէ
հարթ են աստիճ բնակեալք՝ սոզդի ասան թորգոմայ: Շիտէ և գիւլ մի և
անուանէ յիւր անուն Հայկաշէն:

Նա բնակիչներ գտնում է նաև Տարոնում, Սիմ լեռան մոտերը, «Ի
հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստի միով լերամբ,
բնակեալ յառաջադոյն արք սակաք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն»
(Ա. ժ.): Գրանք, այդ հին բնակիչները, որոնք հիշողութիւն են Ուրար-
տացիների, Հայկի ցեղից շեն, այլ տարբեր ցեղից: Գրանք, ըստ Խորե-
նացու մշակած առասպելին, Սեմական են, միևնույն Հայկն իր մարդ-
կանցով Յարթիւն ցեղից է՝:

Հայկի սերունդը նրա Արամանեակ (Արմենեակ) որդու առաջնորդու-
թիւնով Հարթի կողմից տարածվում է դեպի հյուսիս-արևելք և բնակ-

8 Մ. Արեղտե, Հայ ժող. առասպելները, էր. 176—188.

վում Այրարատում: Այստեղ նույնպես գտնվում են հին քնակիչներ. Ե՞ր
յուով տեղիս գտանէին բնակեցւոք ի մարգկանէ յերկրիս մերում ցան և
ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ» (Ա.
Ժք.): Ապա հետագայում հայերն անցնում են Եիրակ և վերջապես Գե-
ղարքունիք ու Սյունիք:

Վնշանակե՞ն Հայկի և իր սերունդի մասին ձեռած գրույցների մեջ
շատ պարզ կերպով պահւած է հայ ցեղի Հայաստան մտնելու և այնտեղ
հետզհետ տեղավորվելու հիշողութունը: Միայն ըստ արդի պատմական
տվյալների հայերն արեւմուտքից են անցնում արեւելք, մինչդեռ ըստ
Հայկի առասպելի, նրանք հարավից՝ Բարելունից են գալիս դեպի հյու-
սիս: Եթէ դա մի հիշողութունն էլ այն մասին, թե հարավով դեպի արե-
ւելք շարժված հայ ցեղի մի ճյուղը հետագայում դեպի հյուսիս է տա-
րածվել, ապա դա պարզապես քրիստոնյա մատենագրի ստեղծածն է:

Առասպելի կապով ինչ արագ աշխուժացան հետո—
Թե այդ հին ավանդական գրույցն սկզբնապես ինչպիսի կերպարանք է
ունեցել՝ դժվար է ասել: Մեր ունեցածը գրական մշակութուն կրածն է:

Ազգերի և լեզուների սկիզբն Բարելունի աշտարակաշինութան հետ
էր կապում հին ժամանակի հասկացութեամբ՝ Ս. Գրքին հետևելով
Խորենացին ևս այդպես է վարվում իր մեկնութան մեջ պարսից ազգի
սկզբնավորութան և Բյուրասպի մասին խոսելիս: Անսացեսալ ի նո-
ցանէ Բիրասպի Աժդահակ՝ առ ներուվրաւ Եսլխի Լոցա: Փանգի ի բու-
ժանել լեզուացն ընդ ամենայն իրկիր... զխաւորք և ցեղապետք որո-
շեալք գիրաքանչիւր սահմանս ժառանգեցին... Սա (Բիւրասպ)՝ զցե-
ղապետութիւն ազգին իւրոյ ունէր, հնազանդեալ ներբովթայ» (Ա. գրքի
բ. հավելւած):

Սուրբպիսի մի շինովի բան է, հարկավ, հայոց ազգի ժաղումն աշ-
տարակաշինութան հետ կապելը (Ա. Թ.): Եվ, ինչպես երևում է, Խո-
րենացու արածն է այդ նա, որպեսզի այդ հերոսութեան հավատ ըն-
ծալի, կարևոր է համարում առաջուց հայտնել, թե Բելը Ս. Գրքի ներ-
բովթն է՞, Բայց նա ոչ մի հիմք չունի այդ ենթադրութան համար, այլ
գրում է լոկ խոսքով. «ՋԲԵԼԱՅ, առ որով նախնին մեր Հայկ, բազումք
բազում փնջ ալլ լինոք ալլոյ պատմեն. քայց իս ստեմ զՎառնոսոյ անուն և
զԲԵԼ՝ ներբովթ յեալ»⁹:

Ինչպես երևում է, Խորենացու աղբյուրի մեջ այդ նույնացումը չէ
եղել: Եվ այս հավանական է թվում նաև այնու, որ ԲԵԼՆԱՆՈՒՆԻ՞՞

⁹ «Եմաշտարարութիւն սակաւոք թէ ըստ արտաքնոցն ասացնու Բելո՞ ըստ աստու-
ծային բանից ճշմարտութեամբ է ներբովթ» (Ա. է.):

¹⁰ Խորենացու պատճառարանութունը՝ «որպէս նորից ցեղապետք Թուն հասար Մով-
սիսի՝ Հեփեսոսս, Արեզակն, Կոռնոս, որ է Փամ, Փոշ, ներբովթ... շատ շատ՝ կարող
էր, մամանակի հասկացողութեամբ, Կոռնոսին նույնացնել ներբովթ հետ: Իսկ որպէսզի
Բելն էլ ներբովթի հետ նույնանար, հարկավոր էր զոնն, որ Կոռնոս և Բել նույնացած
լինեն: Բայց այդ չկաւ չմտաւ Ա. է. քննորովթ, որ է Բել»:

ևս, — թեպէսն Աստվածաշնչի մի քանի ձեւերից ու նկարագիրներէջ օգտւ-
վել է գրողը, — թիւը ներքովիք հետ նույնացած չէ:

12. Հայկը պաշտելի ցախնի:— Ինչքան էլ Խորենացու Հայոց պատ-
մութիան մեջ գրական մշակութիւն է կրած Հայկի առասպելը, բայց
և այնպէս դրա մեջ դեռ պարզ երևում է նախնիների պաշտամունքի
հետքը: Բնական է, որ այն դարերում, երբ իշխում էր հոգու համատն
ու նախնիների պաշտամունքը, հայ ցեղին առաջնորդող նահապետներից
մեկը դառնար հայ ազգի նախնին: Այդպէս էլ հենց կոչվել է Հայկը
(«Բնկին մերոյ նախնոյն Հայկայ») և հայ ժողովրդի ծագումն և անունը
բացատրել են նրա անունով: «Աշխարհս մեր կոչի յանուն նախնոյն մե-
րոյ Հայկայ՝ Հայք» (Խոր. Ան. Ժա.):

Թե ինչ լիզվաբանական կապ կա Հայկ և Գայ բառերի մեջ, այդ
պարզ չէ: Բայց ժողովրդավան ստուգաբանութիւնը Հայկ-Գսկա անունը
առնչութիւն մեջ է գրված «հայ» անվան հետ, որին նույնպէս հսկա
նշանակութիւն է տրված, և Հայկը դարձել է հայ ազգի էպոնիմ: Նույն-
պիսի ստուգաբանութիւնը Հարց գաղափար անունը կապված է հիմն նախ-
նիների հետ. «Հարց, այսինքն թէ հարց են աստէն քնակնայնք՝ ազգի
տանն թորգամայ»:

Այդ նախնին, ըստ այն դարերի հասկացութեան, մի պաշտելի էակ
է, աստվածային ծագում ունեցող դիցազն, ինչպէս և կոչվում է Հայկն
առասպելի մեջ: Այդպիսի նախնիների պաշտամունքն, ինչպէս վերևում
տեսանք, նախնական համապատասխան սեբստ հարազներութեան մեջ էր
գրվում որևէ աստղի հետ: Այդ պատճառով և Հայկ անունը կապված է
մի համաստեղքի հետ:

13. Առասպելի ծագումն ու զարգացումը:— Հայկի վերջը Բեկն դեմ
ջույց է տալիս, որ այդ առասպելը զարգացել է արամեացիների սահմա-
նակից հայերի մեջ: Այդտեղ պահված է ասորական քաղաքակրթութեան,
կուլտուրայի և կրոնի՝ հայերի վրա ունեցած ազդեցութեան պարզ հայտ-
նի մի հիշողութիւն, և մի հիշատակ այն թշնամական հարաբերութեան,
որ հայերն ունեցել են իրենց դրացի հարավային ազգերի հետ, որոնց
աստվածն էր Բեկ: Բայց կարող է այդ դրույցի մեջ մնացած լինել նաև
Հայաստանի նախահայ բնակիչների՝ ուրարտացիների ասորեստանցոց
դեմ մղած պատերազմների հիշատակը, որ հետո հայերը ժառանգել են
ուրարտացիներից: Հաճախ մի ազգ, քունելով մի ուրիշ ազգի երկիր, սե-
փականում է և սրա զրույցներն ու ավանդութիւնները, հարկավ. փոփո-
խութիւններով¹¹:

¹¹ Երա (Հայկը) համարենք Ուրարտուի Խայի աստվածն է, որի պաշտամունքը
գուցե մի աստվածակա պարել է Ղանտ կողմերում, առանց հայկական Պանթեոնի մեջ
մտնելու, Keovork Aslan, Etude historique, Paris, 1928, էջ 170:

Մյուս կողմից այդ առասպելը, քանի որ իր նմանները շատ ազգերի մեջ կան, կարող է պատկանել այսպես կոչված քափառական զրույցների տեսակին, որոնք անցնում են մի անձից մյուսին, մի տեղից մյուսին, մի գիւղից մյուսին. զանազան ժամանակներում կրկին պատմվում են իրենց գլխավոր բովանդակությամբ. որոշ լսփոյլ տեղե տեղ, ժամանակե ժամանակ թափառում, շրջում են: Բնականաբար այդպիսի պատմվածքները կրկին ու կրկին փոխանցման ընթացքում բավականին փոփոխվում են, բայց գլխավոր մտտիվները և հիմնական գծերը նույնն են մնում»¹².

Երբեմն նույնիսկ միթոսը թափառական զրույցի կերպարանք է ստանում, և կամ նույն առասպելը, միթոսը մի տեղ ներկայանում է իրրև բնիկ առասպել, մի ուրիշ տեղ իբրև փոխառություն: Այդպիսի մի թափառական առասպելի գծողեցիկ օրինակ են համարում Ձվիցերիայի ազատության գործի մեջ մեծ դեր խաղացող Տելի զրույցը: Տելը որսորդ է և քաջաձիգ աղեղնավոր, ինչպես մեր Հայկը. նա էլ Շվեցարիա մտնող բռնավորին սպանում է իր նետով և ազատում իր երկիրը: Նա նույնպես դարերից ի վեր երգով, խոսքով ու պատկերով փառաբանվում է ինչպես մեր Հայկը. նրա անուկով էլ կան տեղեր՝ մատու և սարահարթ: Բայց շնայելով այս ամենին՝ հետազոտությունը ցույց է տվել, որ այդ ազգային հերոս Տելի զրույցը Ձվիցերիայում բնիկ չէ, այլ ամենայն հավանականությամբ գանձացի քաջն Տոկոյի զրույցն է, որ նույնությամբ անցել է Շվեցարիա, և Տելն այստեղ ազգային հերոս է դարձել: Նույն զրույցը պատմվում է և ուրիշ ազգերի մեջ, և հիմնապես մի հին զրույց է, որ կարծում են, թե առասպելաբանական հիմք ունի և նույնանում է գերման առասպելական հսկաների որդի էգիլի և իր երկու եղբայրների զրույցի հետ: Երկ այդ երեք հսկաները հավասար են դասվում երեք զրույցի մարտակիրքների հնդկական Ինդրա աստծու, որ իւր նետերով և կայծակներով խորտակում է ամպրոպի ու գիշերվա դեերի, դեմոնների ամպեղեն փորձը: Ականդինավական առասպելաբանության մեջ ինդրային համապատասխան է հսկա Օդհին աստվածը, որ իր հնագույն կերպարանքով նույնպես նետ աղեղ է քանեցնում և կովում է ձմեռվա ու խաղարի հսկա բռնակալների դեմ: Այդ Օդհինը, աստվածների և հավանորեն մարդկանց հայր, ներկայանում է ոչ միայն իբրև զորավար, որ մի գործի գլուխ անցած կովում է մի ուրիշ թղնամեի զորախմբի դեմ, այլև իբրև կասաղի որսորդ, որի գերեզմանն անգամ շատ անգ ցույց են տալիս Գերմանիայում»¹³.

Այսպես այս տարածված զրույցը համարվում է բնության մի առասպել, որ իր հիմքն ունի այն աշխարհայեցողության մեջ, որ նախնական մարդիկ ունեին բնության երևույթների վրա: Դա մի բարի աստծու,

¹² E. Bernhelm, Lehrbuch der histor. Methode, Եր. 1864, հան. 1

¹³ E. H. Meyer, Germanische Mythologie, Եր. 1886

մարդկանց հոր կոխվել է ընդդեմ մարդկանց թշնամի շար ողու զՊալուսի կոխվել է ընդդեմ գիշերվա և ձմեռվա, որը մանուկ արգերն ըմբռնել են իբրև մի աստվածային աղեղնավորի կոխվել, Եվ այնուհետև բանաստեղծները շարունակելով և մարդկային կերպարանք տալով՝ դարձրել են այդ կոխվել քառաձեղ աղեղնավորի կոխվել իր բռնակալ տիրոջ դեմ, որ հարձակվում ու սարկացնել է ռալում ուրիշներին: Բայց աղեղնավորն սպանում է նրան: Ուրիշ խոսքով, առասպելն առասպելականից իջել, պատմական է դարձել:

Մի տեղ այդ առասպելն ամենահին ժամանակներից ի վեր գոյություն ունի, մի ուրիշ տեղ, փոխառություն է: Մի տեղ պահել է դա իր նախնական առասպելաբանական բնավորությունը, մի ուրիշ տեղ, ինչպես Զվիցերիայում, պատմական դառնալով՝ աստվածների առասպելը կապվել է ազգի ազատության կռիվ հետ և փոխվել դարձել է Տեիի հայրենասիրական գործը:

Արդ, թե՛ ճանաչման համարությունից անցած երևում է, որ մեր Հայկի առասպելն այդ միևնույն առասպելն է: Պա միևնույն որսորդի, քառաձեղ աղեղնավորի կոխվել է իր երկիրը խուժող քանակալի դեմ: Մեր առասպելի մեջ ևս կինտրոնը կազմում է քաջ նետածությունը, զբաղեցնելով թշնամուն նետով սպանելը և իր երկիրն օտար բռնավորից ազատելը:

Այս համեմատությունը միայն բավական է մեզ ցույց տալու, որ մեր Հայկի գրությունը սկզբնական հիմքը պատմական չէ, այլ առասպելաբանական: Պա ծագած է ընդհանուր առասպելաբանական աշխարհայեցողությունից: Հետագայում այդ առասպելը կապվել է Ուրարտացոց երկիրը հայ ցեղի մտնելու պատմության հետ, և հայոց նախնին, դիցազն Հայկը դարձել է առասպելական աղեղնավորը կամ, որ միևնույն է, հայոց պաշտեղի նախնին նույնացել է աստված աղեղնավորի հետ:

Մյուս կողմից՝ այդ առասպելը, հայերի կամ թե՛ նախահայերի՝ իրենց հարավային դրացիների հատկապես ասորեստանցոց, գուցե և բաբելացոց հետ ունեցած հարաբերության պատճառով, կրել է մի ուրիշ պատմական ազդեցություն: Հին թշնամի գեղի, դեմոնի, խալար ողու տեղ անցել է, անշուշտ, թշնամական հարաբերության պատճառով Բելը, որ Հայաստանի հարավային դրացիների սեմական ազգերի՝ ասորեստանցիների, բաբելացիների, քաղցեացիների և ուրիշների արեղակնային աստվածն է, երկնքի և լուսի տեր, աշխարհի և մարդկանց արարիչ, որ սաստեղծել է իրենց ճանապարհը ցույց է տվել: Բել կոչումը, որ նշանակում է տե՛ր, տրվում է և ուրիշ աստվածների և աստղերի, ինչպես և թագավորների: Այսպես և հենցիկ պատմությամբ Ասորեստանի թագավորներից մեկը կոչվել է Բել, որ սաղատել է Բաբելոնի արաբների լծից, և որի որդին է համարվում Նինոսը: Բայց Բելն սկզբնապես արեղակնային աստվածություն է: Եվ եթե ի նկատի ունենանք, որ մեր հսկա Հայկն ևս իբրև նախնի մի համաստեղություն է, ապա պարզ կլինի, որ հին առաս-

պելն իր այս կերպարանքի տակ դեռևս պահում է իր առասպելական, փրցարանական բնավորութունը, որով արեգակի կամ աստղերի աստված Քուի բն. որից ծագում են աստվածներն ու մարդիկ, կոչում է մի աստղային դիցազն Հայկ. Հայերի նախնին:

14. Վիպական քնավորությունը ընդհանրապես:— Ինչքան էլ Մ. Խորենացին քերթողաբար մշակել է Հայկի առասպելը, բայց դա, ծագած լինելով գուսանականից, դեռ շատ տարրեր ունի իր մեջ ավանդական բանահյուսութունից: Այդ նկատի ունենալով՝ անհետաքրքիր չէ տեսնել. թե այդ առասպելը որքան վիպական բնավորություն ունի, որով և մասամբ կպարզվի մեր հին վիպերի պոետիկան:

Հայկ ու Քելի առասպելն իր էությունով վիպական է, այսինքն՝ իր էական գծերով մի այնպիսի պատմվածք է, որ շատ տարածված է: Բայց վերևում հիշվածներից՝ դրան նման են, օրինակ նաև Գայթի ու Հսկա Գողիաթի կոնվը, մեր Սասունցի Գավթի ու Մարմենցի կոնվը: Իսկ այս երկսին նման է Տրդատի ու Գոթանց իշխանի մենամարտը, ինչպես և Մամբի ու Հեպթադի կոնվը Մեղեոսի պատմության մեջ: Հայկի ու Քելի կոնվը՝ դրանց նման լինելով Հանդերձ՝ իր ձևով ավելի նման է Հսկա Սամի և Քերթույի կոնվին: Համեմատենք այս վերջինի հետ մերը:

Ամենից առաջ նկատենք, որ պետք է բավականանք Ս. Գյուլզադյանի թարգմանած՝ Շահնամայի մի հատվածով միայն, և հատկապես շեչտում ենք, որ մեկը՝ Հայկի առասպելը՝ գրաբար է գրված, մեր կլասիկական լեզվով, իսկ մյուսը՝ մեր ժամանակի աշխարհաբար, ուստի և բառերի ու դարձվածների ընտրության մեջ մեծ տարբերություն կարող է լինել: Բայց տեսնեք, որքան նմանություն այդ երկու առասպելի մեջ:

Սամ պահլավանի դեմ ելնում են Մազանդարանի վայրենի, արագընթաց, կատաղի կոլոդները, Ենդ-սար կոլված նեռ դեերը (Հսկաներ), որոնք իրանի կտրիճներից ավելի քաջասիրտ են, կոլարար առյուծներ, ահեղ ինծերին իսկ հավասար, և որոնց գլխավորն է փղանման մի սալագագաթ դև (Համտ. Խորենացու մեջ՝ Հայկի դեմ եկող Քելի հավերժ քաջերը, սերկայնադիզոք հասակօքա, մրցող (կոլոդ), անհուն խու, ուժավոր ու զորավոր հսկաները): Այդ հսկաները սեի տեղ ժողոված խառնամարտի հրոսակա, Քերթույին դուրսնեն անցած, սգուրս են գալիս խուժելով դեպի դաշտը ընդարձակ այնքան սպա, որ լցվում է մի սարից մյուս սար. գալիս են շուտ Սամի դեմ կոլելու միահամուռ բազմությամբ, այնպես մթին խուռն ու խրթին գրու՜ տալով շտապմանը՝ հենց շարժ են անում, որ գետինը դրդվելով դողդողում են: (Համտ. Խորենացի՝ սեղնյան դուզուց և անճուռի գօրուֆեմայտ ամբոխին որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զարոյվար հեղեղեալ՝ փուլիայր:—...ի միջոց ինչ դաշտաձև լերանց... բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Քելայ ցան և ցիր յանդուզն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալովս սեղն առաջի ամբոխին եկեալս: սեւ հասեալ երկուցունց կողմանց սկայիցն ի միժեանս,

ահազին դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելովն»): Մի կողմից այդ դեերի ետզ և ծուծը դատարկվում է Սամի համբավից, և հարձակման ժամանակ քարհամարից խելագարվում է նոցա ամբողջ, իսկ մյուս կողմից, հարձակման ժամանակ և Սամի զորքերի մեջ երկյուղ է ընկնում, անվանի քաղերի դեմքը դնդնումն: (Հմմտ. Խորենացի՝ «Ահա պահագրանդս տարագուգ յարձակմանցն մկայազուց ըզմիմեամբք արկանէինն»): Կռվի մեջ ընկնում են երկու կողմից, իսկ Սամը սգնտին փութմ մեն մի հարձակումին հարյուրին, և մեն մի գուրզի տակ տապալում մի զկինն: (Հմմտ. Խորենացի՝ «Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն արք լաղթանդամք ընրանոյ սրոյ դիպեալ տապալ յերկիր կործանէինն»): Այնուհետև, ինչպես հայկական առասպելի մեջ, նկարագրված են երկու պարագլուխները, Սամ և Քերթույի: Քերթույին՝ Եփեսոսացի, զմնյա կերպարանքով, փղանման, սալ գտագլով, կտրիճ մարդ, նոճի հասակով, զլիտն սաղավարտ, ձեռին պաղպաղակոտ սուր, մեջքին դոտի, վես և աշխարհակալ Սեւմ Ծահի սերունդը, որի մոտ ամենասեպ խրոխտ խիզախը՝ հող է համարյա, որի հսկա զորքերը մըշյունի ու մորեխի են նմանում քաղմությամբ ու ծածկում դաշտ ու լեռն: (Հմմտ. Խորենացի՝ Քնլի բնավորությունը և ույժը, Քնլ բռնավոր, որին հաջողել էր քրոնանալ և ունել զամենայն երկիրն և տիրել քաղմակոյտ հրակայիցն անհուն խօւտց և ուժաւորացն, և խրոխտալով ուզում է Հայկին էլ նվաճել: «Քյսանոց աղուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց գոտեւորեալ զմէջսն, յահեկէ գտուրն երկայսրի և նիզակ անտրի ի ձեռին իւրում աշոյ, և յահեկումն վահան, և բնտիրք յաշմէ և ի ձախմէ... կուռ վառեալ»): Իսկ Սամը, որ նույնպես հսկա է, ինչպես մեր Հայկը, է սրով և քեյանեան աղեղով, որի կոթը խատանդ փայտից է և փքիքը պողպատ, նետը սրաթուղ արծվի: (Հմմտ. Խորենացի՝ Հայկ կորովածիք և հաստաղեղն, լայնալիճ, նետը՝ երեքթեյան, իսկ Հայկի որդիքը՝ քարք կորովիք էին յաղեղն և ի սոււերք»): Կռվի հարձակման ժամանակ Սամն իր աղեղից նետ է արձակում Քերթույի վրա և վերջը ընդունում է նորան և սփռի նման փրթավում ու զարկում գետնին: (Հմմտ. Խորենացի՝ Հայկը Եփեսոս հասանէ յարթայն (Բէլ), լի քարչէ զյայնալինն... և ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ»): Եվ սերը Շահն (արթան) այդպես նսեմաբար ընկավ, փնց իւր հօգին, նորա զօրքը երեսները դեպի փախուստ դարձրին, ընկան սար ու դաշտ... (Հմմտ. Խորենացի՝ «Աքթայն տիտանեան փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահապին գործ քաջութեան, փախեան իւրաքանչիւր զէպ երեսաց իւրեանց»):

Ահա երկու պատմություն, որ էությամբ ու ձեռով նույն են, այլ և շատ տեղ քառացի նույն: Երկու տեպքում էլ հսկաներ են իրար դեմ կրովողները, ունենալով իրենց զլիտն մի մի ավելի մեծ հսկա: Երկու դեպքում էլ նկարագրված են առանձնապես այժ ցայնավորները և նրանց

գրեթէ նման զինավատութունը: Երկու գեպքում էլ հարձակվողը՝ որ հետո հաղթում է, ավելի մեծ բազմութիւն է՝ մի խառնիխառն անկարգ հոտակալ, իսկ հաղթուող թվով նվազ է: Երկու դեպքում էլ հարձակման ժամանակ կրկիւր գողտում է, երկուստեք վախենում են և երկուստեք գնալին փոռում կամ կործանում շատերին: Երկու դեպքում էլ հաղթող հերոսը նետ-ապօղ է քանցնում: Երկու դեպքում էլ թշնամու պարագլուխը սպանվում է գետին վարնվելով, և երբ արքան սպանվում է, նրա ամբողջ գրտիս առած փախչում է: Այս նմանութիւնը ցույց է տալիս, որ մեր Հայկի ու Քելի գրույցն իր բովանդակութիւնով ոչ միայն ավանդական վիպական ոգուն հակասակ չէ, այլ և շատ նման է հանդուստիս բազմաթիվ աղբնայններին: Գա պատկանում է այն վրույցներին, որոնք բուրն էլ փրկնց ձեռով մի վիպական ամփոփումն են թշնամի ազգերի մեջ եղած նախնական կոնվենի, որոնց մեջ պարագլուխները առաջին տեղն են բռնում:

Այդ ավանդական գրույցները, — ինչին իրողութիւն վրա հիմնված, թե զուտ առասպելական, — իրենց վիպական բնավորութիւնով հաճախ իրարուց կախում չունին: Զպիտք է կարծել, թե այս նմանութիւնները մատենագրական են: Նույնիսկ սպատմական գրվածքների համար ժամանակագրական շարքը կամ դասավորութիւնը, որով իրողութիւնների առանձին դիպվածները կամ նույնիսկ իրողութիւնները պատմվում են, կարող չէ ինքնբնական իրքն մի դատանիլ — կրիտիկում ծառայել մի պատմագրի կախումը մյուսից ցույց տալու համար, զի յայդ շարքը կամ շարադասութիւնը, իրքն իրքի բնութիւն մեջ եղած մի բան, կարող է ներկայանալ ամեն մի հեղինակի՝ անկախ մի ուրիշից: Ուստի եթե տարբեր պատմվածքների, ինչպես և զանազան գրույցների մեջ բովանդակութեան և ձևի նմանութիւն կա, և պատերազմի նկարագրի մեջ նման դիպվածների շարքի նույնութիւն ենք գտնում, այդ ևս մենակ գեռ ապացույց չէ, թե մեկը մյուսից կախում ունի: Հին պատերազմներին շատ հատուկ է նախ զորք ժողովելը, ապա թշնամու վրա դիմելը, և այն, որ թշնամին էլ իր կողմից զորք ժողովի և հարձակվողի գեմը գործադար, ու երկուսը ճակատեն, այդ ժամանակ զորավարը ճագ խոսի, խրատուի, ապա իրար վրա հարձակվեն, կոտորեն և երբ մեկի զորավարն ընկնում է, որովհետև զորավարն ամենամեծ տեղն էր բռնում, նրա զորքերը փախչեն, հաղթողները ետևերից ընկնեն, կոտորեն, ապապատկեն, պիտի, ավար առնեն: Այս և սրա նմանները՝ նման կամ նույն ժամանակագրական կարգով կատարվել են գրեթէ ամեն հին պատերազմների մեջ: Ուստի և գրանց մասին գրույցներն իրար նման են հաճախ նույնիսկ մանրամասնութիւններով: Այսպես ուրեմն տարբեր գրույցներ զանազան ժողովուրդների բերանին միատեսակ կերպարանք են ստանում, քանի որ ամեն տեղ էլ ազգերի վիպական շրջանում ընդհանրապես ինչպես պատե-

¹⁶ Bernhelm, Lehrb. der hist. Meth. 57, 58, 59.

բազմներն իրար նման են, նույնպես և այդ պատերազմների մասին պատմվածքները: Մյուս կողմից, պետք չէ մոռանալ ժողովուրդների հոգեբանությունն և այն մեծ երևույթը, որով հին զրույցները միշտ նորոգվում են: Նոր կատարված իրողությունների և անցքերի պատմությունը բանահյուսների թերահին ստանում է արդեն պատրաստի հին նման զրույցների ու առասպելների կերպարանքը. այսպես ասած՝ նոր զրույցի հազուատը, որով և հինը փոփոխվելով հարատևում է: Այսպես պետք է հատկանալ մեր զրականության մեջ Հայկի ու Բելի, Մեքատի ու Հեպթադի, Տրդատի ու Գոթաց թագավորի, և Դավթի ու Մարամելքի զրույցների նմանությունը: Անշուշտ, Սերենսը Մեքատի ու Հեպթադի կռիվը, թեպետ և Ազաթանգեղոսի պատմվածքին շատ նման, իրենից չէ շինում¹⁵, Բայց և նա այդ բանը, հավաստյալ լսելով, այսինքն՝ ժողովրդի մարդկանց, թեկուզ նույնիսկ ականատեսների զրուցելով փ գրում: Իսկ այդ ժողովրդի մարդկանց բերանին հենց Մեքատի կռիվի պատմությունը մի տեսակ հին վիպական կերպարանք ստացած պիտի լինի և մոտեցած Հայկի ու Բելի կռիվին:

15. Վիպական մոտիվներ:— Երբ մի անգամ տեսնում ենք, որ Հայկի առասպելն իր էությունը վիպական զույգ ունի.— որ և գլխավորն է,— այնուհետև մեծ նշանակություն է ստանում այն հանգամանքը, որ Հայկի կռիվն իր մանրամասնությունների մեջ, գրեթե սկզբից մինչև վերջը տարված է շատ վիպական ձևերով, դիցարանական վիպական կերպարանքով: Քվենք գլխավորները:

1. Երկրի դարդալը երկու կողմերի հսկաների հարձակման ժամանակ իսկանան զիցազնական վիպական մի գիծ է, որ շատ ազդերի վեպերի մեջ կատնենք: Եթե փոքր ինչ ուղադրություն դարձնենք այնպիսի վիպական մոտիվներին, ճատենենք, որ երկիրը դողում ու թնդում է ոչ միայն հարյուրավոր՝ Հայկի ու Բելի նման ասեհեղեղ, յաղթանդամ մարմնով և վիթխարի, սքաղմակոյտ անհուն խօլ և ուժատու, սերկայնազեզ հասկօքա հսկաների կռիվ ժամանակ, այլ հենց այդպիսի հսկաներից մեկի սովորական քայլերիս էլ: Այսպես է, օրինակ, Ռոստամի և կամ Նուրիսկ մեր Մասնա Մուռ Դավթի քաղվածքը:

2. Վիպական գծերից է նաև Բելի զնսպան ուղարկելը Հայկին, որ սա իրեն հնազանդի: Բերենք երկու նման օրինակ միայն: Մեր Մասնա Մոերի մեջ, լնայելով հսկա Դավիթը վնասներ է հասցրել և նույնիսկ անպատվել է դեանման հսկա Մարամելքին, բայց սա իսկույն չի գալիս զորքով Մասուն, այլ նախ դեսպան է ուղարկում, որ իրեն հնազանդի Դավիթը: Երբ իր դեսպանը հպարտ Դավթից խայտառակաբար հետ է ճանապարհվում, նոր նա զորածողով է անում և դալիս Դավթի վրա: Բայց այս անգամ էլ գեռ նորից դեսպան է ուղարկում նույն նպատակով:

16 ՏՊՄ Մ. Ագեղյան, Հայ ժող. առասպելները, եր. 202--287:

կրկին մերժում ստանալուց հետո, նոր կուլում են, իսկապես Դավիթն ու Մարամելիքը մենամարտում են, Դավիթն սպանում է Մարամելիքին և կոխվր վերջանում է: Ուրեմն մեզ ժանոթ նույն պատմությունը՝ որ ուրիշ րատ գեղերով ևս նման է իր վերտհիշյալ ընկերներին:

Սահեամայիս և իջ-Քայ-Քավուան արշավում է Մազանդարանի վրա և շնայելով որ նա Մազանդարանի թագավորի քարեկամ հսկա դեևրից խիստ պատասխում է, բայց և այնպես իր գիցազն Յարհազին դեսպան է ուղարկում Մազանդարանի թագավորին, նամակ գրելով և պահանջելով նրանից հպատակություն և իր ավատականը դառնալու: Մազանդարանի թագավորը հպարտությամբ ու խստությամբ մերժում է: Չնայելով խիստ վիրավորական պատասխանին՝ Քեյ-Քավուար նորից դեսպան է ուղարկում, այս անգամ Ռոստամին, նամակ գրելով. «Ետտորնակ ու թուռ է քո խնջը՝ հիմարը միայն կարող է այգպիսի բաներ մտածել: Փարատիր քո հոգու այդ հպարտությունը: Արա ստրկորեն ինչ որ հրամայում եմ քեզ, թե չէ զորքերս քո դեմ կը վարեմ ու կը սպեմ ծովե ծով և քո ուղեղը՝ դեևրի դիակների պես մեղրակուր կը տամ անգղընդին: (Հմմտ. Խորենացի, Ա. ժա. Եկոսաքէ (Բէլ)...) Եվի ռն յորդոց իւրոց առ ձայկ... զայ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ: Եթեանկեցիք, ասէ, ի մէջ ցրտութեան սանձամենաց. այլ չեռուցեալ մեղկեա զցրտոթիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, եւ հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում քնակութեան: Երբաց դարձուցեալ Հայկայ զպատգամվորսն Քեյայ՝ խստութեամբ պատասխանեաց...): Մազանդարանի թագավորն ավելի ևս խստությամբ պատասխան է տալիս և զորածողով լինելով՝ սպառազինվում է: Քեյ-Քավուան էլ իր զորքն է առաջ վարում, աչ ու ձախ գեղերը հանձնելով այս ու այն զորավարին, ինքը մեջտեղում է մնում, իսկ զորքի առաջից գնում է Ռոստամը: (Հմմտ. Խորենացի, Ա. ժա. Եկարդէ զԱրամտենակն երկու եղբարքք ընդ աշմէ և զԿարթոս և զայլս երկուս յորդոց իւրոց ի ձայմէ... և ինքն առաջի): Ապա գալիս է Զուլայի և Ռոստամի մենամարտը, հաջողակից խոսակցությամբ, նման մեզ ժանոթ Դավթի ու Գոլիաթի, Դավթի ու Մարամելիքի, Հայկի ու Բելի կուլին և իր մյուս ընկերներին:

Այսպես, դեսպան ուղարկելը՝ հպատակություն և հարկ պահանջելու համար, ինչպես և դեսպանությունից հետո զորք ժողովելը և այլն, մի տարածված վիպական գիծ է:

3. Վիպական գիծ է խստությունը ու կոպտությամբ խոսելը, իրաւ ծաղիւր: Դեսպանություն խոսքերից Բելի պատգամը նուրբ խստութուն ունի և, թեպետ և Խորենացու կողմից ճարտասանորեն հղկված, բայց և այնպես կոպտությունը և Քեյ-Քավուի պատգամին նմանությունը դեռ

¹⁶ Heiden sagen von Firdus, in deutscher Nachbildung, von A. F. Schack, Berlin, 1865, S. 122, 126-7

երևում է, Հայկի պատասխանի համար հորենացին բավականացել է ասելով միայն, թե սխառութեամբա էր: Բայց Անրենսի մեջ գտնում ենք նույն բովանդակությունն իբրև խոսակցություն Հայկի և Բելի մեջ: «Ջի» պնդեալ դաս զհետ իմ. դարձիք անդրէն ի տեղի քո, զի մի մեռածնիցիս աչսար ի ձեռաց իմոց. քանզի տղ վրիպի նետ փմ իմից: Պատասխանի ետ Բէլ, և ասէ. սվասն այնորիկ զի մի անկցիս ի ձեռս մանկուոյ իմոյ և մեռանիցիս. ալ եկ ի ձեռս իմ, և կնաց ի տան իմում խաղաղութեամբ. ո՞նեւրով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսակտեսա: Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. սՇուն ես դու և յերամակէ շանց, դու և ժողովորդ քո: Եւ վասն այնորիկ ֆայիցիցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմս¹⁷:

«Երկու հերոսների իսկական վիպական հայհոյական խոսքերով այս պատմութիւնը թողնում է մի բուրբոսիկն նախնական և սկզբնական տրպավորութիւնս¹⁸: Օրինակներ քերեւն ազնորդ անք համարում: Շանկացողը կարող է գտնել Շահնամայի և Իլիականի, Գավթի ու Բողիաթի կովի մեջ և ուրիշ շատ տեղերում:

4. Վիպական գծերից է և Կաղմոսի փախուստը Բելի բազմութեան առաջից և քաջընթացիկ մարդկանց ձեռով իմաց տալը Հայկին, որ պատրաստութիւն տեսնէ Բելի դեմ ելնելու: Հիշենք միայն Շահնամայից Գեթղեհեմին, Իրանի և Թուրանի սահմանի վրա Սպիդ բերդի հրամանատարին: Սահարք ժողովում է զորքերի մեծ բազմութիւն, հսկաներ և մեծ ամբոխով գալիս է Իրանի վրա: Նրանք զալիս ժողովում են «Սպիդ կոչված բերդին: Գեթղեհեմը Սահարքին հաղթել ու հետ մղել չի կարողանում և «շտապով փախում է» սղեպի երկրի ներքո իր ամբողջ զորդաստանի մարդկանցով, մի «տաղքեաց մարդու» ձեռով հայտնելով Շահին. «Մեր վրա անկավ մի քաղաքիով ձիւղոր, ամենն էլ կոխարար և կտրիճ մարդիկ զորստրո, որոնց սպարազուխն է մի պահլավան քաչասիրտ մի հսկա, որի հասակը բարձրութեամբ երկնեզ բնով նոճուց է շատ վեր», կամ «թոյլ բարձր որպես մի լեռ»: Գեթղեհեմն այս հայտնելուց հետո՝ ազնուցնում է, թե իրենք չկարողանալով կովել Սահարքի դեմ, փախչում են դեպի երկրի ներքը և, ժիւ Շահը հապաղի և զորքերը լվարն կովելու, նորա երկիրը տակն ու վրա կը լինի և նորա փառքի մեծութիւնը կ'անցնի¹⁹: Ի՞նչ է Կաղմոսի արարքն և Հայկին ուղարկած լուրը, թայց նիւ ինչ որ այս Գեթղեհեմն է անում: Նմանութիւնը շատ տեղ նույնիսկ դատերի մեջ էլ երևում է: «Բէլ ամբոխի հետեակ զորաց, գալ հասանէ... մերձ ի տունն Կաղմեայ: Փախուսական լինի Կաղմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաջէ. Գիտեա, ասէ, ով մեծդ դիցազանց, զի դիմեալ գալ ի վերայ քո Բէլ յաւերժից քաջօք, և երկայնադիպօք հասակօք սկայիւրք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լի-

¹⁷ Պատմութիւն Անրենսի նպիօկոպոսի, Ս. Պետերբուրգ, 1872, էջ. 6:

¹⁸ Geiser, Zur. aem. Götterlehre, էջ. 137:

¹⁹ Արդար, Ռոսամ և Սահարք, թարգմ. Ս. Գյուլզազանց, էջ. 70, հան. 1

ննչն նորա ի տուն իմ, փախեալ, և դամ աւասիկ տազնապաւ: Արդ աճապարեա խորհնլ զոր ինչ գործելաց ես: Հմմտ. Սերէոս (Անանուն) հր. 3. Եփեմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն եհաս մինչև ի տուն անդր: և ես կնաւ իմով և որդւովք ահաւասիկ կամ փախտականա: Գեթղեհէմի և Կաղմոսի արարքը սահմանադիտի պաշտպանութիան մի հիշողութիուն է միայն: Իսկ Կաղմեացի, Կաղմեան նախարարութիուն, կամ տուն Կաղմեայ ըստ Խորենացու, հայտնի է մեր պատմութիան մեջ Հայաստանի հարազային սահմանների վրա²⁰:

5. Հայկի առասպելի վիպական ծագումը երևում է հատկապես և այս կտորից. «Իսկ զարուրն, ուր քաջամարտիօքն անկաւ: Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանակք: Բայց զգիական Բէլայ պաճոճեալ իմն դեղովք... հրամայէ Հայկ տանել ի Հարք և թաղել ի բարձրաւանդակ տեղոյ, ի տեսիլ կանանց և որդոց իւրոց» (Ա. ժա.):

Հին գերեզմանները սովորաբար բարձրավանդակ տեղերում են շինված: Խիստ շատ տարածված է զանազան հին և նոր ազգերի մեջ ցույց տալ մի տեղ (սովորաբար բարձր տեղերում) հսկայի-օղուղի կամ ազնավորի գերեզման իբրև պաշտամունքի առարկա: Թողնե՞ք օտարներինը: Հայաստանում ևս այդպիսի գերեզմաններ շատ կան: Հայտնի են Փռքր Մասիսի վրա եղած օղուղի գերեզմանները: ԵՄիյի ըսված գերեզմանները, զորս քրդերը կը պատվեն և շատ տեղ հայն ալ քրդին հետ ուխտի կ'երթա հոն... որք առհասարակ ծառերու պահներով շրջապատված կը լինին, և դարերու վրա քարերադիրք²¹: Մի ակնազնավորի գերեզման նկարագրում է Սրվանձտյանցը Մանազկերտի մտերը (հին Հարք գավառում) ռուժ քայլ մեծոթիամբ... որ քարակույտով մը բարձրացած է, որ գլուղի տեր շխր իր նախնին համարելով սկը մեծաբն իբրև մարգարի: շիրիմ: Եկյսպիսի մեծագիր և Ազնավուր անունով գերեզմաններ կը գտնվին ուրեք ուրեք, ավելացնում է Սրվանձտյանցը²², նույնպիսի մի Ազնավուրի գերեզման նկարագրում է նա նաև Թոստան Նայա գլուղի մտ, զարձայլ Մանազկերտի մտերը, և մինչև սեզամ Ազնավուրի մասին պատմված մի առասպել է մեջ բերում և թե սգեղի կնկտիքը շէր (ճրգ) կը կապեն Ազնավուրի վրա²³: Եկյսպես ուրեմն, այն հանգամանքը հենց որում Բէլի առասպելը կապված է հսկաների գերեզմանի մասին շատ տարածված մի ժողովրդական ավանդութիան հետ, ցույց է տալիս այդ առասպելի ավանդական ծագումը:

Երբ, այսպես, Հայկի առասպելն իր ընդհանուր բովանդակութիամբ ու գունդով, և ապա վերևում հիշված գլխավոր մասերով վիպական կեր-

20 Ալիշտե, Ալրարատ, հր. 425, 487.

21 Սրվանձտյանց, Գրոց-բրոց, էջ. 103.

22 Նույն տեղում, հր. 63.

23 Նույն տեղում, հր. 63, 66.

պարանք ունի, այն ժամանակ էր միայն իրենց նշանակութունն են ստանում և գաղիս վիպական կերպարանքը զորացնում էան մի քանի ուրիշ կողմեր, որոնք մենակ վերցրած, առանձին արժեք ունին, որովհետև դրանք, ինչպես և հերոսների նկարագիրը կարող են ճարտասանորեն հորինված լինել: Այդ կողմերն են. ետև՝ բազմաթիվ մակդիրները, որոնք մեծ մասամբ վերաբերում են, ինչպես սովորաբար վնասի մեջ, հերոսների արտաքինի նկարագրությանը, նրանց մարմնական ու հոգեկան հատկություններին, ինչպես են՝ կորուսածիդ, հաստաղեղն, անձնյա, հաստարազուկ, խայտակն, գեղապատշաճ, քաջագանգուր, անարի (նիզակ), երեքթևյան (նետ), լայնալիճ (աղեղ), անհուն խուլ, հավերժ քաջ, երկայնադեզ հասակ, ուշիմ և խոհեմ հսկայ, բազմակոյտ (հսկայք) և այլն: Այնուհետև նշանակութուն են ստանում նաև զրույցի մանրապատում հանգամանքը, թեպես և այստեղ ճարտասանությունն էլ կարող է մեծ դեր խաղացած լինել,—և սպաս,—հատուկ առունների ժողովրդական ստուգաբանությունը, ինչպես են՝ Հարք, Հայկաշեն, Հայոց Ձոր, Գերեզմանք²⁴:

10. Մեր ժամանակի ժողովրդական գրույցները, որոնք պատմվում էին Հայկի ու Քելի մասին Վանա ժողի շուրջը, անպատճառ խորհնացող գեղեցիկամբ լսիտի համարել ժողովրդի մեջ մտած: Դրանք խորհնացուցուց անկախ, հին պահպանյան գրույցների փոփոխված մնացորդներն են մասամբ և նոր կազմված, որոնք կապված էին միևնույն վերջերս վանա ժողի շուրջը—և հատկապես այդ ժողի շուրջը եղած տեղագրական անունների հետ: Ամեն ազգի մեջ էլ կան այդպիսի այսպես կոչված պատմաբանական (էտիմոլոգիական) գրույցներ, որոնք ստեղծված են այս կամ այն անդի, լեռան, ափերակի և այլն ժողովրդաբան համար պատմա մեջ մեկ ֆառ կա բնակչաց, քերդի պարսպին դուրս, որ մինչև ցայսօր Հայկավանք կը կոչվի... Հայոց ձոր... մինչև ցայսօր Հայոց ձոր կը կոչվի, այնտեղն է Տրշող գեղը, ուր Հայկի լայնալիճ նետով բացված հսկա Քելի դրահասպատ կողի շուրջ կը տեսնվեր, այնտեղ է Հայկ և Ատավածաշեն անունով գեղերը... բնակիչք ինչ կ'անվանեն այս (Հայկ) գեղը և հավու ձոր կ'անվանեն գՀայոց ձորն, որ կրնա ըսվի նաև Հայոց ձոր²⁵:

Նույն գրքում պատմվում է հետևյալ գրույցը. «Գատվան գեղեն Ջրհորի սահմաններով դնպի նեմրութի դաշտակողմն գնալով՝ կը տեսնես կարգ մը տնկվածի կամ կանգնվածի պես սև քարեր, որոնք հեռու են և մոթ ժամանակ կրնան խաբել զմարդ, թե կարավան են անոնք, կամ մարդ և ուղտ: Տեղացիք Քելի ուղտեր և ուղտապաններ կ'անուանեն զանոնք, և որանց համար կը վիպասանեն ու կ'ըսեն, թե. «Կուսպաշտ

24 Մ. Աբիդան, Հայ ժող. առասպելները, իր. 240—243:

25 Մովսես Խորենացի, Գրոց-բրոց, իր. 118, հատ. 1:

Քաղաքներ է եղեր Քնիւր, և մեծ զորքով եկեր Հայոց Քաղաքորի ու երկրի վրա կռիվ. Հայոց Քաղաքորը Աստուծո ձեռնով սպաններ է դիմել, և հաներ նեմրուիթա գուլիս, այնտեղը փորեր, թոնիր շիներ, մեջը կահեր վառեր է: Աստուծո հրամանքով այն կրակը շուր է կտրեր, զմոտիքն հողի տակ իջուցեր, որ շեղիի քամին անոր փոշին տանի: Քնիւր մարդիկ և ուղտերն ալ իրենց վախեն քար են կտրեր: Մինչև այսօր թոնիրն ու շուրը կա, և այս շուրն վէ, տր սարի տակով կ'իջնա Մեղրազեանի ակնն կը բղխն և այդ գետը կը կազմեն:

17. Առասպելի զաղափարը:— Վիպական ոգին են ցույց տալիս նաև առասպելի պարափարն ու պարզ քննադրութիւնները, որ երևում են ետեքնացու նույնիսկ սոճովք և սղարդարածա պատմվածքի մեջ: Գործող անձերը պատկերացված են կամ վատ կամ լավ կողմից. բնականաբար թշնամի հսկան, Քնիւր, նկարագրված է վատ կողմից: Նա մի ամբարտաւձան բռնակալ է, անհեղեղ վիթխարի մի հսկա, որին հաջողվել է բռնութիւնը տիրել երկրին և ստրկացնել բազմաթիւ անհուն խոլ և ուժավոր հսկաներ, նա լի կարողանում տանել, որ մեկն իր իշխանութիւնը շնորհաւորվի: Թեպետ և իր հետ ունի ընտիր և զինված հսկա կովուղներ, բայց և այնպես նա վախկոտ է և մարտի դաշտից փախուում է, շուրջով դեմ առ դեմ հանդիպել թշնամուն, այլ հույսը դնում է միայն իր զորքի բազմութիւն վրա:

Հայկն, ընդհակառակն, մի անվանի և կորովաձիղ դիցազն, գեղապատշաճ և անձնյա, պատկերացվում է իբրև քաղութիւն և աներկյուղութիւն մի կատարելատիպ: Նա ղկամենալով ենթարկվել Քնիւրն՝ ավելել լավ է համարում հեռանալ և ցուրտ կողմերում ապրել, քան ուրիշների պես ստրկանալ նրան: Նա շնայելով իր մարդկանց սակավութիւնը՝ անվախ դուրս է գալիս Քնիւր դեմ, ղի լավ է համարում մեռնել, քան հպատակվել բռնակալին:

Այսպես մի կողմում հարձակվող, բայց վախկոտ բռնակալն է իր ասկարգ հրոսակի, ամբիսի բազմութիւնք, մյուս կողմում պաշտպանվող, անվհեր հայր գիցազնն իր սակավթիւ որդիներով: Այդ աղեղնամար Հայկը սլառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարէ գլխանիւն, դիպեցուցանէ զերեքթեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն: Եւ այսպէս նոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զորդին: Իսկ ամբոխն տեսնալ զայսպիսի ահագին զործ քաղութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանցս:

Դա մեր վեպերի էական կողմն է և հայոց պատմութիւնն էութիւնը: Հիշենք մեր Նոր վեպից Մարտնեղին իր զորքի բազմութիւնը ու մենամարտիկ Դավթին, Հիշենք և հերթաթնների վերջարանը՝ բարին էստեղ, շարն էնտեղ:

18. Առասպելներ Արամի մասին:— Այս գրույցներն (հօր. Ա. ժր.— ժդ.) ևս ըստ Մ. Խորենացու ծագում են գոտանականից, քայքայատմված են շատ համառոտ և ավելի ևս գրական մշակությամբ, քան Հայկինը: Ուստի և դժվար է որոշել գրանց ավանդական քանահյուսական տարրերը: Գրանց մեջ ներում է հայերի հարաբերությունն իրենց սահմանակիցներին հետ՝ Մարաստանի, Ասորեստանի և Կապադովկիայի կողմերում:

Արամի կոխվն Ասորեստանի դեմ թերևս մի ավանդական հիշողություն է ուրարտական հզոր թագավոր Արամի, Սալմանասար Բ-ի (860—826 մեր թ. ա.) հակառակորդի, և նրա ուզածական գործողությունների ընդդեմ ասորեստանցոց:

Պատմականի հետ միասին այդ գրույցն ևս ունի միաժամանակ նաև առասպելական բնավորություն: Ասորեստանի կողմերում Հայոց երկրի ավերիչն է ժարչամ անուն, յազգէ սկայիցն... Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ... ևւ զայս Բարչամ... աստուածացուցեալ պաշտեցին Ասորիքս: Ուրեմն Արամի հակառակորդն է Բարչամ աստվածը:

Նույնպես սովորական մարդիկ չեն Արամի թշնամիները Կապադովկիայի կողմերում, «ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա»: Այստեղ նա պատերազմում է Տիտանյանների հետ («ընդ Տիտանեանսն») և առանձնապես՝ նրա դեմ է դուրս գալիս «Պայապիս Քաղեայ Տիտանեանս», որին հաղթելով Արամը քշում է «ի կղզի ինչ Ասիական ծովուն»: Այս հսկայի անվան մեջ տեսնում են «Պապայոս Խիմայրագենես» = Պապայոս Խիմայրածին (Քիմայրածին), որ հայերեն չինում է Քաղի զարմ, Քաղեայ¹: Խսկ ով են Տիտանյաններն ու Խիմայրա (Քիմայրա):

Տիտանը, հունական առասպելաբանությամբ, Ուրանոսի (Երկնքի) որդին է. Տիտանի և Գեայի (Երկրի) կամ Ուրանոսի և Գեայի որդիքն են Տիտանները կամ Տիտանյանները: Նրանք սպասամբում են Կրոնոսի, Ջեսի հոր դեմ. քայքջ Ջեսը կայծակներով զինված՝ նրանց դահավիժում է Տարտարոս: Նրանց պարտության վրեժը կատենում են առնել իրենց մոտիկ ազգականները, զիզանտները, վիթխարի հասակով հսկաներ, որոնք իրենց ուժին ու հրեշավոր հասակին վստահացած, վերելակում են երկինք և փորձում են Ջեսին վայր կործանել: Քայք սա նրանց մի քանիսն անդունդ է զլորում, ուրիշներին քանտարկում հրաթխային լեռների տակ: Գիգանտների գլխավորն է Տիփոն (Տիֆոն, Տիֆոս, Typhaeus), որ է իսկապես ծովս արծալկող, ծխող և իբրև հասարակ անուն նշանակում է պոռոտահողմ, կայծակնացայտ ու սրտայիթ ամպրոպ: Նա հրաբխային լեռների ու կորստաբեր փոթորիկների սիմբոլն էր. ուներ հարյուր

¹ Jos. Markwart, Die Entstehung u. Wiederherst. d. arm. Nation, էջ. 66—68.

զգտի և իր նպաստը բերանից բաց էր արձակում: Ձեռք նրան դնում է հրաբխային նստա սարի ծանրութան տակ կամ ըստ արհիշների Միլիթի-բուհան ծովի Բնարիմ կամ Ննարիս հրաբխային կղզու տակ, որտեղից նա շարունակում է ընդ արձակել: Ճիճուներ զտվանքն է ձիմնայնա, որ նյա-նակում է թաղ, մի հրեղ, որի հրաբուխը կրակ է զարթ հասում: նա սիմբոլ է էրկիտայի մի հրաբխային լուսան:

Արգ. Արամի առասպելի մեջ պատմված կոթվը Ճիտակյանները և Պալապիս Թագնայ Տիտակյանի դեմ Մաժաթի—Վեսարիտի կողմերում, ըստ Մարքիարոսի, Նույնն է. ինչ որ Ասիի կոթվը Տիտակյանները և Ճի-փոնի դեմ: Այդ առասպելը հայերը յուրացրել են այն ժամանակ, երբ զեռ Կապադովկիայում էին սուրբում: Ելիսիպետր մեջ արիմ-նարի, որ է հայերի բնակութան վայրը գրվում է ուշտեղ, սուր Ճիճուներ բնակա-տեղն էս: Իսկ այդ համարում են Արգայնո հրաբխային լեռը Վեսարիտ-ից (Մաժաթից) հարավ: Կեղտեակն Ձեռք և Տիտակյանի կամ Ձեռք և զիգանտների կոթի առասպելը, որ մեկնում են իրեն հրաբխային երե-վայթի առասպելական պատկերացում, պատմված է եղել նաև Արգայնո լեռան վրա: Այդ կողմերում ալբրոզ արիմները, որոնք իրենց անունը ծա-գած են համարել մի էլպոնիմ Արիմից, այդ առասպելը կապել են իրենց նախնու Արիմ անվան հետ, իրեն Արիմի կոթվ Տիտակյանի կամ զիգանտ-ների դեմ: Հետագայում Արիմ անունը դարձել է Արամ, թերևս ուրարտա-ցոց վերնում հիշված Արամ թագավորի անվան հիշողությամբ կամ հա-վանորեն ազդեցությամբ Աստվածաշնչի մեջ հիշված Արամ անվան, որ է արամեյացոց—Ասորիքի և Միջագետքի բնակիչների—նախնին: Բայց Տիտակյանների դեմ նրա կոթի վայրը դեռ հիշվում է Նույն Մաժաթի մոտ տեղում, և նա հաղթում է Տիփոնի զարմ Պապայնո Քաղնայ Տիտակյան, նրան սփռոտստական արկանելով ի կղզի ինչ Ասիական ծովունա (որ է Միլիթիբրակյան ծովը), ինչպես հունական առասպելի մեջ Ձեռք Տիփոնին դնում է նույն ծովի մի կղզու տակ:

Այսպես ուրեմն Արամի այս առասպելի մեջ պահված է մի հիշողու-թյուն Կապադովկիայի կողմերում հայերի բնակված լինելուն: Բայց բնութայն առասպելն այստեղ ևս դարձած է հայոց նախնու մի կոթի: Այդ նախնին, Արիմ-Արամ, հանդիսանում է Հայկի մի Երկրորդ տիպարը, իրեն Հայոց երկրի (հետև առած և Փոքր Հայք) սահմանների պաշտպան բնորդն օտարների: ՍՄա այր աշխատաւէր և հայրենասէր եղեալ... լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանէլ զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարապատից արեան նորա տիրել արանց օտարաց (Քոր., Ա. Ժգ.):

Նա միաժամանակ և երկրորդ էլպոնիմն է հայ ազգի. սՅորոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգս, որպէս յոյնք՝ Արմեն, իսկ Պարսիկք և Ասորիք Արմենի(կ)ք (Ա. Ժգ.):

Այս անունը Մարքիարոսը ծագած է համարում Արիմ անունից խալ-ցական ինի (խալց-իմի, Մալց-իմի) վերջավորությամբ իրեն Ար(ի):

մինքն, միջի ի ձայնավորի գուրս ընկնե՞րով: Դա խայզական արձանագրութիան մեջ երևում է Ուրմենի ձևով. պարսիկները դարձրել են Արմինա և հույները Արմենիոս, Արմենիա—«Աերիմ» և «Շալա» եղել են անշուշտ, առանձին տեղմերի անուններ, որոնք ընդհանրացել են մեկը հայերի մեջ, մյուսը՝ օտարներին: Մի անգամ, որ Արիմ դարձել է նախնի դիցազն, քնակտնաբար և նրա տեղմը կարող էր կոչվել «Լանա մասնիկով» «Արմանա» (սեռ. տր. «Արմենի», «Արմենի»), ինչպես և խորհնացին մույն անվան «Արամ» և «Ից» նույն մասնիկով կազմած սեփ «Արամանա» քաղաք սեռա՞ն նշանակությամբ. «Արթ» արամանաք, «Արաման» ազն» (Խոր., Բ. դր., Գ. իթ.):

Ե

ՏՈՒՐԲ ԱՆԳԵՂՅԱ

10. ԱՐՄԵՆԻԱ—Նախնական ժամանակներն էլ ասելով մեզ և այս հսկայի առաջագիծը, որի մասին շատ քիչ բան գիտենք, նրա անունը, որ Մոսխանա խորհնացուց է միայն հայտնի, ձևագիրքների մեջ կա թե՛ Տուրք և թե՛ Տորք ձևերով: Ակադեմիկոսը խորհնացու մեջ, ինչպես պիտի ընդունել, եղել է Տուրք: Մրա միջի սա տամն արտագրողները բաց են թողել, և առաջացել է «Տուրք» ձևը, որ և մտնելով վենետիկյան տպագրութունների մեջ՝ ընդհանրացել է XIX դարում¹: «Տուրք» ձևի մասին վրկայում է և այն հանգամանքը, որ հնումը եղել է Տուրք անուն. օրինակ՝ հիբլում է Քատենի եպիսկոպոս Տուրք²: Նույնիսկ խորհնացու պատմութիան մեջ (Ք. խէ) կա Տուր անունը, որից Տրունիք Այդ երկու անունը, «Տուր» և «Տուրք», նույնն են ինչ որ դրանց համանիշները՝ «Երնորհ(ք)», «Եպարգն» (տուրք պարգնաց, տուրք և պարգնք, տուր և շնորհ), որոնք նույնպես՝ Պարգն և Շնորհք իրրև հատուկ անուն գործածված կան³:

Թերեք Մ. խորհնացու այն կտորը, որի մեջ հիշվում է Տուրքը:

«Բայց զԱնգեղ Տունն առ նոյն պատմագիր (Մար Արաս) ի Պասքամայ ումմմէն է շայկայ թոռնէ լինելա (Ա. իգ.):

«Թնկ զայր խոստագեղ և քարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակ և դժնահարեաց, ի դաւակն Պասքամայ, ի շայկայ թոռնէ, Տուրք անուն կոչեցեալ, տր վատն ստաւել ժահարիմութեանն Լաշէիս Անգեղեայ⁴, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ պատակալ արև-

¹ Մ. Արեղյան, Հայ. ժող. առասպելները, հր. 259—268.

² Դ. Χαλατσαρη. Ἀρχ. εἰδος, հր. 228. ի հիշված աղբյուրը, որից վերջված է:

³ Մ. Խորեն. Գ. ձ., «Պարգն», «Պարգնեայ Ամատունայն»:

⁴ Պետք է նկատի ունենալ, որ Մ. խորհնացին սիրով կանգ է առնում մյուս նախարարների անունների բացատրութիան վրա ևս և այդ բացատրութիանները, ինչպես երևում է, ևս ինքն է առնալ «Եւ զԱրթունիս գիտեմ ոչ Արթունիս, ալ արթի ունիս, սքս արծուիս առաջի նորա կրէին: ԵՊիտեմ զՅունիս գինի ունիս, որ զարձանի քաղաքին»:

ժողովը և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ Տունս (Ք. Բ. Բ.)

«Անգեղոյ բարը նշանակում է ստգեղս. բայց այդ վիպական սԱնգեղեան տեսնեն իր կազմութիւնը չի կարող նշանակել ստգեղոյ: Դա կազմված է ս...-անուն, մասնիկով, ինչպես՝ ստգեղեան-արեւելեան, արեւմտեան-արեւմտեան, տասնամեան-աստամեան (սեռ. տասնամեկ), Մամիկոնեան-Մամիկոնեայ (սեռական՝ Մամիկոնէի, Մամիկոնէից): Ըստ այսմ՝ «Անգեղեայ» նույն է, ինչ որ «Անգեղեան»: Արդ, սեռականի կամ անականի այս սեայտեան մասնիկը նշանակում է ծագում: «Անգեղեայ» կոչումն, ուրեմն, ցոյց է տալիս, որ Տուրքը համարվի է Անգեղի սերունդ, կամ Անգեղի սուրբ:

Անգեղ Տան ծագումն, ինչպես տեսանք, Խորհնացիին առնում է պատմագրից, որ է՝ Մար Արասից: Ինչ որ նա Մար Արասից քաղած է դնում, գրեթէ բոլորը կա «Անանունի» (Մար Արաս Մծուրեացու, Սերէոսի սկզբի) մասի մեջ: Այստեղ վա իտկապեա նաև Անգեղ Տան ծագման մասին՝, սնւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամանեկայ... ապա Արմոզ, ապա Սարհանդ, ապա Շաւաշ, ապա Փաննաւազ: Սա ծնաւ զԲա... և զԲագարատ, և Բագարատ ծնաւ զԲիւրատ, և Բիւրատ ծնաւ զԱպատ, և որդիքն Բագարատայ՝ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այսինքն է Անգեղ Տան, սխալն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն ասուած կոչեցինս:

պատրաստեր զմպլիման: «Անամ և զԱպանդուհից ի վերայ զնարանաց և զՀասունից՝ բազմակիրս... և և ի՞նչ առ ջոգս ինչ ոչ ունիցիս, և զինանկանոց՝ ամբարանաց պահակ և ինանկիրս» (Ք. Է.). «Այնքարէն յանուն քաղցրութեան բարուց նորս անուանեցաւ Ազուանց, զի աղւռ ձայնէին զնա» (Ք. Ը.): Այս բացատրութիւնները կարգին է պատկանում նույն գլխի մէջ և «Անգեղեայ» բառի մեկնութեանը՝ սոր վաստ ասուել ժահագիտութեանն ձայնէին անգեղեայ... և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ Տունս:

5 «Անգեղ Տունս, «Անգեղ Տանն գաւառ է Զորբորը Լայցի կամ Մծծ Մոգքի գովառներից մեկը, որի մէջ է Անգեղ բերդը (Փ. Յուլիոն, Գ. 26): Բայց «Անգեղ Տունս միաժամանակ և նախարարական սոսմի անուն է: Արաթանգեղոսի մէջ հայոց պոլիտիկոս նախարարներն, սկոտակալներն մէջ առայինն է յիշխան Անգեղ Տունս, սգմծ իշխան Անգեղ Տունս:

6 Մ. Նրեղյան, Լայ ժող. առապելները, Եր. 388—410:

7 Պատմ. Սեղեոսի եղ., Թիֆլիս, 1918, Եր. 6:

8 Բագարի մէջ է «Բագարամ», «Բիւրամ»: Ք. Պատկանյանն իր հրատարակութեան մէջ այդ երկու անուններն ուղղում է «Բագարատ» և «Բիւրատ» ձևերով: Միայն «Անգեղ» է ապակոչում, մականուն Բագարատեանց: Բագարատ և Բիւրատ նույնպէս Բագարատեանի սերունդն են: Պատկանյանն ուղղումն ընդունելի է: «Բագարատ» անվան վերջի ազգեցութեան տակ՝ Բագարատ և Բիւրատ անունները կարող էին անուշադիր արտայայտուելից զանայ «Բագարամ», «Բիւրամ» կամ թէ երկաթադիր ձևերով: Երբ մ կարգաւորել:

Վերեւում տեսանք, որ ըստ *Խորենացու Հայկի Քոռ Պատգամից* է Տուրքը, որ կոչվում է Անգեղեայ և կարգվում պետական արևմտիցս որից և ժազում է Անգեղ Տուն նախարարական տոհմը: Մյուս կողմից՝ Սեբեոսի սկզբի մասում Հայկի որդի Արամանեկի սերնդից է Քազարատը, որ կոչվում է և Անգեղ, և որի որդիները ժառանգում են արևմտյան կողմերը: այսինքն Անգեղ Տունը Մեկի մեջ է Տուրք, մյուսի մեջ՝ Քազարատ: Պիտի տղասեհինք, որ երկուսի մեջ ևս նույն անունը լինելու Եվ իսկապես, թագարատս է Քազարատս¹⁰, որ հայերեն թարգմանվում է «Տուրք դից», կամ «Գից տուրք», (ինչպես «Քազարատս հայերեն է «Գից աւան»), Քե այդպիսի անունները հայերենում կարող էին այդպես ասվել, դրա համար օրինակ ունենք *Խորենացուց*. «Արդ վոչեցաւ Սանատրուկ... որպէս թէ տուրք Սանտայա» (Ք. լդ.)¹¹: Քե միևնույն դիցազնը կարող էր և հայերեն և օտար անուններով կոչվել, կամ մի լեզվից մյուսին թարգմանվել, դրա համար օրինակներ ունինք *Նույնակ մեր դիցաբանությունից*: Աստղիկ անունը նույն ասորական կառուցադա = Աստղիկ անունն է: Այսպես և սովորական են՝ Աստղիկ — Ափրոդիտե, Անահիտ — Արտեմիս և այլն: *Նույնպես և նույն դիցազնը կոչվել է Սեբեոսի սկզբի մասում Քազարատ Անգեղ = Գից տուրք Անգեղ, իսկ Խորենացու մեջ է Տուրք Անգեղեայ*.

Հիմա, ո՞վ է Անգեղը:

20. ԱԳՈՅ և ՏՈՒՐՔ ԱԳՈՅԱ: — Անգեղը ճշել է մի հայ աստվածություն: Սեբեոսի սկզբի մասում, ինչպես տեսանք, կա՝ «կոչեցաւ Քազարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ քաղարտոսացն աստուած կոչեցին»: Մեր հին թարգմանիչները հայոց աստվածների անուններով են կոչել համապատասխան օտարազգի-աստվածները: Ինչպես՝ Օրիոնի համար դեռևս են Հայկ, Հերակլեսի հետ նույնացնում են Վահագնին, Ափրոդիտե — Աստղիկ, Արտեմիս — Անահիտ, այսպես և Անգեղ են կոչել սեմականների Ներզալ աստծուն, որ հիշվում է Աստվածաշնչի մեջ (Չորս. Թաղ. ԺԷ. 30): Անգեղի մասին ուրիշ ոչինչ չգիտենք: Հատվանքներն ևս ունեցել է Ներզալի քնավորության գծեր, քանի որ թարգմանիչներն այդ երկուսին նույնացրել են: Ներզալն արեգակի բոցակնոց ջերմության, այդպիսի կորստաբեր տապի հզոր աստվածն է, որ «հրեղեն տուրք ձեռին, սարսակելի փայլք հագած, փողփողում և ավերում է: Իբրև պատերազմի աստված, ևս հաղթություն է տալիս և թշնամիների երկիրը քանդում: Բայց ևս միանգամայն ավելի ևս մեռելների աշխարհի վրա իշխողն է: Նրա Սումեյան Քուլթա քաղաքը հատկապես մեռելների քաղաք է: ևս պատկերացվում է իբրև մի ամենի ալուծ, որ ժանտափտ ու հիվանդություն-

¹⁰ H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1897, Կ. 31.

¹¹ Այս տուրք դիցը զազափարն ու կշումը, այլ և նույնը որոշ հատուկ դից տուրք, հնում սովորական է եղել, այդ ցույց է տալիս ոչ միայն Քազարատ անունը, այլև Տրդատ, Միհրդատ, Վարդգատ, Արարատ և այլն, որոնք հայերեն լինում են տուրք Տիրի, տուրք Միհրի և այլն.

Ներ է բերում: Բայց իբրև Սանդարմեսի աստված նա նույնպես պտղաբերութիւն է աւրիս¹¹:

Մեր Անգեղյա Տուրքի առասպելների մեջ Ներգալի բնութիւնն այս պէտքը չենք գտնում, բացի ուժից և թշնամիներէ դեմ կռիւիւն մի դեպքից: Իսկ Աստվածաշնչի թարգմանութեամբ միայն՝ Անգեղ=Ներգալ՝ դեռ չենք կարող, հարկաւ, մեր այդ աստծուն կամ դիցազնին վերագրել բոլորովին նույն հատկութիւններն, ինչ որ ունի Ներգալը:

Անգեղյա Տուրքի բնակորութիւնը չի պարզվում և այնու, որ նրա Տուրք կամ Տորք անվան մեջ ուզում են տեսնել Հաթիւն ցեղի Տարկու (Tarku) աստծու անունը, որ մեր բանասերները¹² գրում են զանազան ձևերով՝ Տարկու, Տարքու, Տարխու, Տուրքու, Տարգու, Տրգու նա եղել է պտղաբերութեան ու բուսականութեան աստված, բարձրաբանական մեջ ձեռին բռնած ունի ողկույզներ ու հասկեր: Նրա պաշտամունքը մի ժամանակ տարածված է եղել Փոքր Ասիայում և ալլուր: Կարծում եմ, թե նա պաշտված է եղել և Հարավային Հայաստանում, քանի որ հիշվում է Tarhuna, Tarhunabe լեռան անունը Նայիրի երկրում, աշխիւնքն Հայաստանի հարաւային մասում Եփրատից մինչև Վանա ծովը, տարեմն այնտեղ, ուր սրնկնում է նաև Անգեղ դավառը հին Նայիրի աշխարհում: Ենթադրւիւն ավանդութիւնը կապելով Տորքը Անգեղ աստվածութեան հետ, մեզ հիմն է տալիս կարծիւն, որ Տորքը ոչ այլ ինչ է, եթե ոչ հինավուրց Տարկունն:

Եթե ասուովի այս շատ հաւանական ենթադրութիւնը, թե Տորքը կամ Տուրքը... Միտանի — եւեռ Տրգ, Տարքու, Տարխու կամ Տուրգու աստծու ներկայացուցիչն է Հայաստանում, այն ժամանակ պետք է ընդունել, որ այդ անունը ժողովրդական աստվածաբանութեամբ նույնացել է հայերեն տուրքը բառի հետ: Այդ պատճառով դա ըմբռնել է իբրև շղից տուրք» և այն շրջանում, ուր հայերենի հետ խառն գործածվելիս է եղել պարսկերենը, դա ասվել է նաև Բաղադատա—Բաղարատ, որ է շղից տուրք: Ապա ինչպես դիցաբանութեան մեջ հաճախ պատահում է, որ սկզբնապես ուրույն աստվածներն ու հերոսները կամ նույնանում են միմյանց հետ, կամ մեկը մյուսի սերունդ է դառնում, — այնպես և այս երեւութութիւնը տեղի է ունեցել և այդ դեպքում: Տուրք աստվածը, հաւանորեն պաշտամունքի տեղի նույնութեան պատճառով, հարաբերութեան մեջ է դրվել Անգեղ աստծու հետ, կամ նույնանալով նրա հետ (եղուցեալ Բաղարատ և Անգեղ), կամ դառնալով անգեղի սերունդ — Տուրք Անգեղեան:

¹¹ Lehrbuch der Religionsgeschichte, herausgeg. von P. D. Chantepe de la Samsaye, Leipzig. 1897, հր. 185.

¹² Ն. Արեց, Տորք աստված Հին Հայոց, Յուզարան, գրական ժողովածու, Վիեննա, 1917, հր. 282, հտ. Ա. Խաչատրյան, Տորք Անգեղյա Հայ Հին մատենագրութեան և նոր բանասիրութեան մեջ, ԵՏԵՆԿԱԳԻՐ գիտութեան և արվեստի ինստիտուտի, Մ Տ, Երևան, 1921, հր. 40, հտ. Այտուղ «Տորք Անգեղեան» բացատրված է իբրև Անգեղի, Անգեղ քերդի Տորք:

Այդ առասպելի հետագա զարգացման ընթացքում, սակայն, «Անգեղեայ» անվան իսկական նշանակութիւնը մթնեւ է և այդ բնութեան վերջին իրերն անգեղեոս և առաջ մէկն էլ, — թերևս, գրական ճանապարհով ու երբեմնացու ձեռով, — այդ հսկայի տգեղութիւնն նկարագրելու Այդ ժամանակ և յաջորդել է այդ հսկայի ծագումն անգեղեոս, ու նրան կոչել են հսկա Հայկի հետ:

21. Առասպելները:—Մ. Խորենացին Անգեղայ Տուրքի մասին պատմածնե՛րը հիշում է յարև իրազ և առասպել. նա արճամարեհով այդ՝ բառացի ոչինչ չի բերում, այլ տհամոթյամբ տալիս է երգի բովանդակութիւնը, համարելով այդ սուտ, փոփոն քան, որովհետև դրա մեջ երևում է շափազանց նրբակայունութիւն:

«Բայց եթէ կամիս՝ ստեմ և ես յաղապս նորա անյայ և փցուն, որպէս և պարսիկք Վասն Ռոստոմայ Սաղճկի հարիւր և քսան փղոց ոյժ ասեն ունել: Քանզի կարի իմն անյարմար թռչելի և նմա երգ քանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն. որք ալ Սամսունի և ոչ Հերակլեայ և ոչ Սաղճկին յարմարին այս գրուցք: Քանզի երգէին նմա բուն հարկանել զործարար վիճաց ձեռք, ուր ոչ զորք գեղութիւն, և ձեռքն ըստ կամաց մեծ և փոքր. և քերել նղնգամբք և կազմել որպէս տախտակ, և դրել նոյնպէս եղնգամբք իւրովք արժուիս և այլս այսպիսիս:»

«Եւ լեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի յաղալն նոցա ի յորն իրրն ապարեղսս ութ, և սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու, ասեն, վիճա բյրածէ, և ձգէ զկնի. և ի սաստիկ պատումանէ շուրցն ընկզմին նաւք, ոչ սակաւք, և ամբարձումն այնացն, որ ի պատումանէ շուրցն, վարէ զմնացեալ նաւն քաղում մղոնս: Ոհ, կարի է առասպելս, այլ մ առասպելաց ասասպելս: Բայց քեզ զի՞ է. քանզի էր արդարն սաստիկ հզոր և այսպիսեաց զրուցաց արժանիս:»

Տուրքը հանդիսանում է մի վիթխարի քարակոփ — քանդակագործ: Նման ուժեղ հսկաներ զատ ազգերի ասասպելներին մեջ կան: Տեսնենք մի քանի նման գծեր մեր Տուրքի և սլաւոնների մեջ:

Տուրքի առասպելի երկրորդ մասին, թշնամիների նավերի ետևից ժայռեր ձգելու նմանութիւնը Հռոմեոսի «Ռոխսակառնի» Կիկլոս Պոլիփեմի արարքին՝ վաղուց ցույց է տրված: Եվ այս սկարմանալի յէւ Հաճախ ամբողջ ժողովրդական երգեր, վիպական ամեծ քերթվածներ, որոնք երբեք գրված չեն եղել, մի ազգից մյուսին, մի լեզվից մյուսին են անցնում՝ ասացողներին տերտերի գրեթե քառացի ոտանավորով թարգմանվելով: «Ռոխսակառն» ինքը քաղմազան ազգերի ասասպելների մի ժողովածու է արվեստով մշակված: Ուստի բնական է, որ հայերի մեջ նա պատմվեր մի այդպիսի զրուցք, որ Պոլիփեմի մասին պատմվածի հետ ընդհանուր նմանութիւն ունենալով հանդերձ՝ շատ էլ տարբերութիւններ ունի իր վիպական մանրամասնութիւնների մեջ: Տուրքը իր բնա-

վորութիւնը պահում է և իր այդ արարքի մէջ, նա այդ հսկա քարակո-
փր, որ կարողանում է բռնեցող ճեղքել որձաքարը և եղունգններով քե-
րել, տախտակ դարձնել այն ու վրան փորագորութիւններ անել, նա իր
արվեստին հատուկ տարերային ուժն է գործադրում թշնամիներէ ետեկց
ըլրածն ժայռեր է առնում, ձգում:

Բայց քանդակագործութեան արվեստը և Պոլիփեմի նման նախնա-
կան հերոսի քիրտ ուժ քաննցնելը կարծես այդ երկուսը շին զոնում իրար-
ջպետք է մոռանալ, սակայն, որ արվանդական քանակչուսութեան մեջ հա-
ճախ միևնույն անձնավորութեան հետ կապվում են, որոշ շերտավորում-
ներով, դանադան պատմական շրջանների տարբեր քնալվորութեան գծեր
Բերնը օրինակներ մեր արդի կենդանի Սօսնա ծոնբրից:

Ինչպիսի հսկաներ են մեր Գալիթն ու Մհերը, Որքան պինդ ու պող-
պատյա է մանուկ Գալիթի մարմինը, որի սեռն բուժ քիսաժի շարգու
քար՝ կրակ էլալ մտտնն¹³, կամ օրդունդ առաջ քաշին տւ կրակ տվեց¹⁴,
Մի՞թե դա միևնույն Տուրքի ձեռի ու եղունգի պնդութիւնը չէ՞: Իսկ նորա
ուժը, Այդ մանուկ Գալիթը սձեռ փթալ, դուռ շեմքով սարքարով թռալ՝
էկալա՞. սձեռ փթալ մեկ ապնդրի (քարտի) ծառ կոտնց գծեր իպի գետինն,
կամ սձեռ հուռ գհու դարձուցից իրեք փարթի ձիաժող փեղթի-փեղթիան
սպանիցա: նա երկաթի սուր հագած, բարդի ծառն ուսին՝ քին Վուս կր-
դարկեր գետին, գետին կը դնգբա: նորա ձայնից փախչում են գալլեր,
արջեր, վագրներ, առուծներ, որոնց զուրթին ժողովում է տղա հսկան և
քերում Սասուն: նա մի կոպալալ դէր է կտտորում, այն դները, որոնք
ուսչում են սքանց Պող ըլուրա, և որոնց դիակներից փախչում է նուրիակ.
քարտի ծառն աքմատահան անող և իրակ զենք գործածող Զենով Լովա-
նը—Ահա ձեզ դեռ երեսա Գալիթը, Բարձրութիւնն ու վիթխարութիւնն
եք ուզում,—երբ Սանասարը Քուրիկ Զալալիի վրա է նստում, նման է
սար որ էլեր ա սարի վրա:

Իսկ Մհերը, այդ դների ղեկերը, որ երբ ման է գալիս, որոնքը թաղ-
վում են գետնի մեջ, և որի ձեռների տեղը մնում է, երբ քարին է գոր-
նում,— մի՞թե այդ Մհերը մեր Տուրքին ցեղակից չէ: նա գալիս է Զգիրու
քաղաքը, ուր սէր լինի որ խարիր քառսուն գետ իրարու կը փառնվի, կը
լինի մեկ գետա (Զգիրու Ետտ, Տիգրիս). սէկալ էնտեխ, մեկ մեծ ահագին
քար էրի, կցից քաղաքի քամակ, գնաու մեջ, գետ էլալ էրկու ճող, մեկ
ճող էն յաննն կիլա, մեկ՝ էս. էլ քաղաք լի ավրի: Բրջա քալաքն էլ վար
էն քարին շինից. իսկի ապիղղի շիա էն քերդինն¹⁵:

Ահա Տուրքն ամբողջապես, պողպատյա մարմնով, վիթխարի հասա-
կով և ուժով և արտյա, որ մատով որձաքարից կրակ է հանում, ձեռներով,
քարերը փոս է ձգում, և վերցնում է կարծածից ավելի մեծ ժայռ: Բայց:

13 Մովսէսայանց, Գրոց-բրոց, էր. 151:

14 Գ. Լովսիպյան, Սասնա Մուր, էր. 26:

15 Նույն տեղում, էր. 146:

այդ Դավիթն ու Մհերը, այդ շեռնանման վիթխարիները, որոնք նույնպես քնուկթուխ բիրտ ուժերի հետ գործ ունին, այդ ուժերն իբրև զենք գործադրում են և նույնիսկ, ինչպես Մհերը, քնուկթուխ բիրտ ուժերի անձնավորումն են,— դրանք միաժամանակ և կուլտուրայի որոշ աստիճանի և նույնիսկ քաղաքացիական աստիճանի վրա են կանգնած: Որքան մտավոր ու քաղաքական մեծությունն ասես, որ նրանք շունչին: Ձանձրալի լինելու համար հիշենք, որ նրանք կարգալ գիտեն, այն էլ տերտերի կամ վարդապետի մոտ են դաս առնում. նամակ են գրում, ստանում, քերզ ու վանք, եկեղեցի են շինում. թաշկինակ գործել տալիս և ուզածը վրան նախշել տալիս, մինչև անգամ ռոյալթիսթրոնք (դիտակ) բանեցնում և այլն: Նման ուժի և շնորհքի տեր է և պարսից Ռոստամը: Այդ շեռնանման կամ, քստ խորենացու, հարյուր քսան փղի ուժ անեցող Ռոստամի առաջ նույնպես ոչ միայն գետինը, այլև քարը դիմանալ չի կարողանում:

Եթե նա վեր ձլլեր մի քաղի վրա ու կանգներ,
Մանրությունից երկու ոտքը քարի մեջը կը խրվեր...¹⁰

Եվսկա Ռոստամն, որ հենց ժայռին հետ էր ձգում և բռնում,
Որձաքարը անգամ տեղից պոկում կուլի օրերում,
Եվ ահագին կորովովը սարը տեղից էր շարժում,
Սակեր, աճուր քարը մո՞տ էր նա համարում իր բռնում¹⁰:

Ի՞նչ է այս նկարագիրը, եթե ոչ մեր Տուրքիները: Եվ այդ նույն Ռոստամն է, որ ներկայանում է, պարսից ժողովրդի ավանդույթյամբ, իբրև արքայի Պարսկաստանի ժայռերի վրա հղած հին քանդակների, որոնք հայտնի են Նախշի Ռուստամ անունով:

2

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ

22. Աղբյուրները:— Շամիրամի և Արա Գեղեցկի մասին պատմելիս Խորենացին իբրև աղբյուր հիշում է Մար Արաս¹, քսյց Ա. ժը. գլխի վերջում ավելացնում է.

Ե՛սկ առ այսօրիք և առասպելք աշխարհիս մերոյ դրազմաճմուտ Ասորին արդարացուցանեն՝ աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայս և այլն: Նա շատ բան չի բերում այս առասպելներին, այլ քաղաքականում է Շամիրամի մահվան մասին միայն հիշելով, որովհետև ինչդիրն այն է, թե Շամիրամը Զրադաշտի հետ պատերազմելուց հետո Հայաստան է փախած և այստեղ ապանված, ինչպես գնում է Մար Արաս: Բացի այդ

¹⁰ Խորենի, Ռոստամ և Մահար, թրդ. Ս. Գյուլաղզյանի, էր. 118—125.

¹ Մ. Արեղյան, Հայ ժող. առասպելները, էր. 511—549: Առասպելը տե՛ս Մ. Խորենացի, Ա. ժե.—ժը. 1.

ծգ. գլխի պատմութիւնը Խորենացիին այնպիսի դարձվածներով է պատմում, որոնցից պարզ երևում է դարձյալ, որ իր ժամանակ ավանդութիւն եղել է հայերի մեջ, թե Վան քաղաքի հնութիւնները, շինութիւններն ու սեպագիրները, ինչպես և ժամբարտակ գետոյնք վերադրված են եղել Շամիրամին: Երբ մի անգամ Շամիրամի մասին առասպել եղել է հայերի մեջ, ըստինքյան անհավանական չէ, որ քանահայտական ծագում ունեցած լինի Շամիրամի և Արայի առասպելն ևս: Տեսնենք այս զբոյցի բովանդակութիւնը, համեմատելով ուրիշ ազգերի մեջ եղած նույն զբոյցի հետ: Բայց նախ Շամիրամի բնավորութիւնը:

28. Իշտար, Շամիրամ, Աստղիկ (Անահիտ):— Շամիրամն ըստ հնների դուար է ասորեստանցոց Միլիտտա դիցուհու կամ ասորական Գերկետոյի: Նա նույն բնավորութիւնն ունի, ինչ որ փր մտայրը, սեմական ազգերի ախտ դիցուհին, Գերկետո, Ատարդատիս կամ Աստարտն, քաբելացոց և ասորեստանցոց Իշտարը, որին նույնացրել են հունական Ափրոդիտեի հետ:

Ասորեստանցիների մեջ այս սիրո դիցուհին մի հզոր հրամանատար, մարտիկ աստվածուհի է, պատերազմի գիցուհին, նետ-աղեղով զինված, առնական ու պատերազմական բնավորութեամբ, ճակատամարտի և որսի թագուհին: Բայց Իշտարը միանգամայն և փարթամ պտղաբերութեան, հեշտոցիան և զգայական սիրո դիցուհին է: Նա կապված է Արտայակ մոլորակի հետ, և նրա սիմբոլն է Գիշերավարը (Արտայակն արևը մտնելուց հետո): Փինիկեոսն և Ասորիցում այս սիրո գիցուհու նվիրական թրոյունն էր ադամանակն: Նրա պաշտամունքը քաբելացոց մեջ ջուր և անասակ էր. նույնպես բուն զգայական և անբարոյական վեր ասորական Աստարտեի, ըստ Կտեսիստի, Գերկետոյի զաշտամունքը: Նույն բնավորութիւնն ունի և փինիկյան Աշտարտը, որ պաշտվում էր կանաչ-բուրների և սրբազան անտառների մեջ²: Աստարտեին սոհաբերում էին կուսութիւնը, նրա պաշտամունքի հետ կապված վեր սրբազան պոռնկութիւնը: Շատ կողմերում ինչպես փինիկեոսն ու Հրեաստանում հին ժամանակ եղել են Շամիրամի անունով տեղեր և բլուրներ: Ստրաբոնը գրում է Կապադովկիայի Գիանա քաղաքի համար. «Փաղաքն շինեալ է ի վերայ միոյ ի սարաւտոք բարձրաւանդակաց անտի, որ կոչի Շամիրամայ» (Ստր. ժԲ. 2. 7): «Բայց քաղաք նուիրեալ բուն Անահտայ էր Զեղա գորմէ առ Ստրաբոն, թէ էր ի վերայ բարձրաւանդակի, որ կը կոչուէր Շամիրամայ»: «Զեղա, այս Ստրաբոն, ունի մեհեան անուանի նուիրեալ Անահտայ, այն է դիցն զոր պաշտեն և Հայքս³»:

Ամական ազգերի ախտ աստվածուհու պաշտամունքը Կիպրոսից կղզիների վրայով անցած էր և Կիթերա և Սիկիլիա, ուր փինիկյան Աշ-

² Lehrb. d. Religi., herausgeg. v. P. D. Chantepie d. l. Sanssaye, էջ. 180. հտն., 197, հտն., 225, հտն. 1

³ Գարագոյան, Քնն. պատմ. հայոց, Բ, էջ. 167, հտն. 1

տարածի անբարոյական պաշտամունքը խառնված է միացած էր հունական Ափրոդիտի պաշտամունքի հետ: Այդ դիցուհին պաշտվում էր և հայերի մեջ: Մեր Աստղիկը, որ համապատասխան են դնում Ափրոդիտին, համարվում է ասորիներից փոխառութուն: Նրա անունն իսկ Աստղիկ փարգամունքունն է սասորեան կառուկարտա քառի, որ նշանակում է աստղիկ: Արուսյակ (Venus) ասորական⁴, մեր այժմյան ժողովրդական Լույս-աստղը: Սակայն Աստղիկի պաշտամունքի մասին շատ տեղեկութուն չունենք: Հավաստի հայտնի է, որ հնումը մեր Անահիտի պաշտամունքը նույնն է եղել, ինչ որ այս սեմական սիրո դիցուհուն: Անահիտը քննվածն իրանական ծագում ունի, կրել է սեմական ազդեցութուն: Ստորաբունը գրում է, թե պարսից քոյրը աստվածները պաշտում են հայերը, մանավանդ Անահիտին, որին զանազան տեղերում և նկնդիցում մեհյաններ են կանգնած, և թե նրան այր և կին գործեր են նվիրում: և այնուհետև ավելացնում է. «Մինչև ցայս վայր չիք տեղի դարձանալոյ. բայց դիցապաշտութիւն հայոց ձրթայ սմար ևս, զի սովորութիւն առ նոսա արանց աւագաց ձօնել դիցն զգոտերս իրեանց կուսանս. այլ այս չէ ինչ արգել յետ տայոյ դանձինս ի պոռնկութիւն ի մեհեանսն Անահտայ՝ զտանել արս որ ոչ խղճիցնն առնուլ զնոսա ի կնութիւնս⁵: Հայերի մեջ այս պաշտամունքը գտնելը շատ քնական է, երբ նկատի ունենանք, որ հայերը հարավից և արևմուտքից ոչ միայն սահմանակից են եղել սեմական ազդերին, այլև Հայաստանի հարավային և արևմտյան կողմերի բնակիչները սկզբնապես եղել են ասորիներ և հետո են հայացած:

Անահիտի մեհյաններ եղել են նկնդիցում և Տարոնումը. Տարոնի Աշտիշաում Անահիտի հետ եղել է և Աստղիկի պաշտամունքը: Անահիտի մի ուրիշ մեհյան եղել է Վանից հարավ Անձաքիքի մեջ: Նույն տեղերում Պաղատո շեռան գլխին նաև Աստղիկի պաշտամունքը: Գրան է ակնարկում հետևյալը.

«Տուեալ յայնմ տեղուջէ դեզս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից... առեալ ի յաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն, որպէս զծրարն կիպրիանոսի առ ի պատիր Յուստինեայ կուսինս⁶: Վանի մտտ Արտամետում ևս Աստղիկի պաշտամունքը հայտնի է Քովմա Արծրունուց⁷: Այնուհետև Վան քաղաքը, առաջին անգամ հորենացու մեջ, կոչվում է քաղաք Մամիրամայ. նույնը հիշում է և Քովմա Արծրունին⁸, Բացի այդ՝ սա հիշում է ճուշը գովառում Մամիրամ քերդ, ամբոցն Մամիրամ: Մամիրամ գյուղ նմարոթ սարի ասորոսում հիշում է Սարգիսյանն իր Տեղադրութիւնների մեջ (եր. 272): Մամիրամ գյուղ

⁴ Geizer, Zur arm. Gotterlehre, էր. 128, 132:

⁵ Պարտոլլյան, ՔՆԼ. պատմ. հայոց, Ծ, էր. 267, հուն., Geizer, անդ, էր. 113:

⁶ Մ, Խոսեանցու Մասնակարգիւնք, էր. 294—301:

⁷ Քովմայի վ. Արծրունու Պատմ. տան Արծրունեաց, Մ. Պետրոսով, 1887, էր. 53, հուն.

⁸ Խոսե անգամ, էր. 26, 246, 252, 256, 270, 281:

կա այժմ նաև Քալինի շրջանում: Այսպես, տեսնում ենք, որ այդ բուն զգայական սիրս գիցումու պաշտամունքը մտած է եղել Հուդայական ևս: Բնականորաք նրա պաշտամունքի հետ ասորիներից հայերին անցած պիտի լինեն և առասպելները նրա մասին:

24. Իշտարի ու Իզդուբարի և Շամիրամի ու Արալի առասպելները:— Ասորեստանցոց Իշտարը, որ շամոնանացած աստվածուհի է, իր տարփանքի համար հոմանիներ է որոնում: Բայց նա հեշտասեր կողմի հետ ունի և մի սոսկալի մահաբեր կողմ: Նա իր սիրականին մահացնում է և ապա վշտից հետևում է նրան մինչև Սանդարամետի բանտը՝ իր տարփածոյն հարուժյուն տալու համար: Իշտարի առասպելներից հարյունի է Իզդուբարի նշանավոր վեպը, որ վարդացված է սեպագրությունների մեջ:

Հրաշայի, գեղեցիկ գիցազն է Իզդուբարը, որին սիրում է Իշտարը: Դիցուհին ինքն իրեն առաջարկում է գեղեցիկ երիտասարդին մեծ պարգևներ և իշխանություն խոստանալով նրան, որ իր կամքը կատարի: Բայց Իզդուբարը մերժում է նրա փոյր առաջարկությունները: Այդ ժամանակ Իշտարը զայրանում է և սպանում Իզդուբարին:— Այսպես սպանում է նա իր մի ուրիշ տարփածուին ևս, Քամմուզին, որի մահը ողբում է նա հետո և Սանդարամետ է իջնում նրան հարողջյուն տալու համար³:

Ասորեստանցոց ու բաբելացոց և ուրիշների մեջ այս առասպելի պաշտամունքը ևս վար իր պապողութուններով: Նույնը կար և ասորիների ու փինիկեցիների մեջ: Այստեղ Աշտարտի պաշտամունքի հետ միացած էր նրա սիրական Քամմուզի պաշտամունքը: Տիրուում նույնիսկ Քամմուզի մահվան և հարողջյան տոնն էին կատարում: Դա, Քամմուզը, դարնան երիտասարդ հասնող աստվածն էր, Կամմուզյան ամենամյա մահացման և կենդանացման անձնավորումը: Նույն առասպելն ու պաշտամունքը կար և հույներին մեջ: Գեղեցիկ երիտասարդ Ադոնիսին սիրահարվում է Ափրոդիտեն, սիրո աստվածուհին, որ ողբում է նրա մահը: Ադոնիսի տոնը կատարում էին մեծ հանդեսներով երկու օր շարունակ. առաջին օրը ողբում էին նրա մահը, մյուս օրը նվիրվում էր նրա հարողջյան ուրախությանը:

Արդ ինչ է մեր Շամիրամի և Արալի գրույցը: Ինչպես ասյրասիրտն այն և վաթոտն Շամիրամն նույն է, ինչ որ իր մայրը, սիրո աստվածուհին, մարտիկ և տարփագին գիցուհին Իշտար—Աստարտե—Ատարգատիս կամ Դերկետո, նույնպես և մեր Շամիրամի և Արալի գրույցը նույնն է, ինչ որ Իշտարի և Իզդուբարի վեպը: Համեմատությունը շատ պարզ է: Ի՛նչ Արան նույնպես գեղեցիկ է, ինչպես Իզդուբար—Քամմուզ, Ադոնիս և ուրիշները: Ինչպես Իշտարն Իզդուբարին, նույնպես և Շամիրամն Արալին իշխանության խոստումներ է անում փր կամքը կատարելու համար:

³ Lehrs. d. Relig., v. P. D. Chantepte d. l. Sanasaye, I, էք. 162, 216:

Բայց Արան հավանութիւն չի տալիս, ինչպէս և Իզդոքարը: Իշտարը զայրանում և մահացնում է Իզդոքարին: Այսպէս և Շամիրամ տիկինն՝ թի սաստիկ ցասման լեալ՝ զայիս կոմում է Արայի դեմ, և Արան սպանվում է այդ սիրո պատճառով: Այնուհետև մեծ մայր Իշտարը սաստիկ ցավում է և Սանդարամետ է լիչնում իր տարիածուին հարողթիւն տալու համար: Նույն հարողթիւն միջադեպը կա և մեր առասպելի մեջ, միայն մեր հեթանոս հայերի հավատալիքով պատմված, և այս շատ քնական է:

25. Աուլզը և Արալի Ռարությունը:— Լեթմանոս հայերն իրենց կրտսերում ունեցել են, ըստ Ծղնիկի, թի շանէ ելեալ՝ Արալեզը կամ Արլեզը կոչված ոգիներ, ասնեհույթ գորութիւնք, որ պատերազմի մեջ ընկած վիրավոր քաչերին կամ դիցազնեբոն լիզում և ողջացնում են: Գրա համար դիակները ղեւում էին բարձր տեղերում, որպէսզի Աուլզներն իչնեն և լիզեն: Շամիրամն Արալի դին, ըստ առասպելի, զնում է մի վերնատան:

Այս հավատալիքն, ինչպէս երևում է, շատ հին պիտի լինի, քանի որ Պլատոնի «Եւտարպակասկետութեան» մեջ գործված էր հայի հարողթիւն ասնելը, քնայետ և առանց Արալեզների, մեր այս հավատքի հետ նույն ընդհանուր գծերն ունի: Այստեղ ևս էրք քաչապիտ է և սպանվում է պատերազմի մեջ: Տասն օրից հետո, մինչ ուրիշների դիակները նեխած էին, էրինը անխախտ և ամբողջ հն գտնում: Բերում են տան, և տասնեբկուերորդ օրը, երբ խարուկի վրա էր քարձրացրած, կենդանանում է էրը: Էմինն առաջին անգամ այս առասպելը համեմատողթիւն բերելով Արա Գեղեցկի առասպելի հետ, ավելացնում է, թի Պլատոնի առասպելի իմաստը, «քաչք անկեալք ի պատերազմի, ըստնեն, ոչ այլ ինչ է, բայց եթե բուն հեթանոսական վարդապետութիւնն նախնի Հայոցք: Եվ նա էր հայր նույնացնում է Արա Հայկազնի հետ»¹⁰:

Այս հաջտան այնքան պոքնդ է եղել, որ նույնիսկ քրիստոնեութեան ժամանակ Գ դարում, ըստ Փավստոս Բուզանդի (Ծ. զլ.), լեալելով որ Մուզեղ Մամիկոնյանի զլուխը մարմնից կտրված էր, քայց սու հաւատալիքն ընտանիք նորա մահուն նորա... իսկ կէսը յատնելոյ ակն ունէին: նմա: Այս սպատեառով զլուխը կպցնում են մարմնին և զնում մի աշտարակի տանիքում, կարծերով թի սվասն զի այր քաչ էր, Աուլզը իշտանեն և յարուցանեն զգա:

Այսպէս պատերազմի դաշտում իբրև փաչ ընկնում է և Արան. «Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաչամարտկացն, և հրամայէ ղնել զնա ի վերնատանն ասպարանիցն: Իսկ ի գրգռել միտ անգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քիտախնդր լինել մահոան Արայի, ասէ. հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, եւ վնդանացիք: Եվ Շամիրամն իրոք սպասում է, որ Արան պիտի կենդանանա. սՄիանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վնդութեան փրոջ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տոփական ցանկութենէն»:

¹⁰ Մ. ԼՊԻՏ, Վէպ հետն Հայտոս. ճր. 146, հան...

Քրիստոնյա ժառանգները, որ այդպիսի աստվածների գործոթյան շէր հաւատում, Շամիրամի ձգտումն՝ աստվածների ձեռով Արային կենդանացնելու՝ քացատրում է սգիւթութեամբ վհկուծեանա: Մյուս կողմից նա շէր կարող երբեք հավատալ, որ աստվածները կամ Շամիրամն իր կախարդութեամբ կենդանացրած լինին Արային. ուստի և պիտի գրեր թե՛ սենխեցաւ դի նորա, հրամայեաց ընկենուլ ի վիճ մեծ և ծածկելա: Այստեղ եթե վերջացնէր նա, առասպելը թե՛րի կմնար, զի հայերը սրբոյնացած էին և նրանք հանդարտում են, երբ իմանում են, որ Արան հարուստուն է առել: Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց. և հավանեցուցեալ զամենեանեան դադարեցուցանէ զխազմնա: Ուստի և Արայի հարստութուն առնելու պատմութիւնը պետք էր պահել, միայն մի ձեռով քացատրած: Եւ նա քացատրած է շատ պարզ կերպով. սկսի ոմն ի համանեաց իւրոց վարդարեալ ունելով ի ծածուկ, համարաւ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոցն զԱրա և կենդանացուցեալ լցին զփայտագ մեր և դհնշտութիւն. վասն որոյ առաւել չայսմհետէ պաշտելիք են ի մէջ և փառաւորեալք, իբրև հնդացուցիչք և կամակատարք: Գարծալ քրիստոնյա մատենագրի համար մի հարմար աղիթ էր այս առասպելի մեք քացատրելու նաև Առնգնիքի պաշտամունքի խարեայական ծագումը. Եկանգնէ և նոր իմն պատկեր յանուն գիաց, և մեծապէս զոհիւք պատուցուցանելով մանեցուն, իբր թէ այս գորութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրա: Այս հատվածն Անանունի մեք (Մերէոս, եր. 6) գտնում ենք այսպէս. Եւ այնպէս հանէ համբաւ Արայեզաց տիկիին Շամիրամա: Այս գծերը պարզ կերպով քրիստոնյա հեղինակներից են մտած հին առասպելի մեք: Եթե այդ հիվանդերական հավելումները դեն դնենք, կրմնա միայն աստուածան սիրո աստվածուհու և իր տարբածուի առասպելը: Շամիրամի գրուցի մեք պահված է ուրեմն, Աստղիկի առասպելը: Գա մեծեղ և հարստութուն առնող աստուհու հայկական պատմվածք է:

Թե Արան աստվածական գրուցով հարստութուն է առել, այդ տեսնում ենք և թոյմա Արծրուհու մեք¹¹:

11 Այստեղ (եր. 215) գտնում ենք մի այսպիսի աղետված կտոր. Եւ զայնկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսայ, ի տեղուքն արծանաշար քարակարկառ զօրան մեքոցի երկուց ըլլակաց, որ հայի յերկվարաց արհման դաշտն, ի վերայ լեզուոյ գեաւղչն, որ զօրացն զերկցիկ առասպելաբանն սպիտեած վերայն սպտեանելոցն ի տեղեղեղն Շամիրամայ: Վերջին ընդգծած մասը աղավաղված է: Այսպէսը միայն հասկացվում է աղետված ձևից. թե Շամիրամի մանուկներից սպանվածների վերջերի սպանալու մի առասպել է զայս թայց քեզգիրը վերականգնելը շատ հեշտ է: Աղետուած միայն առանքի՝ յ. ք. ե. ի և այլն մեք է: Գտնակական արդեն սեղծի կեզ քար համար իբրև ծանթութիւն դնում է. «Թեհրն» ուր զԱրայն զեղեցիկ: Այնուհետև սպիտեանած քառք քառ պարզպաե կամ պիտեւհարարի նեւ պարպաե կամ ալիքի պարպաե պեռք է կարգալ: Անհատականի սվերայնա քառք սվերայնա է: քանի որ վերջերը պեռք է սպիտեան: Արպաե քեպիրք կատանեք. սմար զԱրայն հեղեցիկ առասպելաբանն՝ սպիտեալ վերացն սպանանելոյն ի մանկանցն Շամիրամայ: Եթանեղեցնա քառն ևս ձգակի սպանելոյն զարձրիք (Հմտ. Խարենացի, Ա. ԵՎ., ԵՄԻՆՈՒՅԻ Արայ ի պատերազ-

Սրանից իմանում ենք, որ առասպելաբանում են, թե Շամիրամի մանուկներից սպանված Արա Գեղեցկի վերջերը սպիանում են, ուստի և Արան կենդանանում է, լեզվո գլուխում:

26. Լեզքի և Արտամեաի գրույցները:— Արաի գրույցը գտնում ենք և XIX դարում Նույն Լեզք գյուղի մասին. «Զարմէ ասի յոմանց տեղի լինել անվճանն Արաի և Շամիրամայ, որոյ զոմն ի հոմանեացն զԱրայ կարծեցուցեալ՝ չուր հհան եթէ դին լիզեալ ողջացուցեալ են. և յայմանէ, ասեն, մնաց անոռն զեղջն Լեզք»¹², Իսկ Գ. Սրվանատյանցը գրում է. «Լեզքը իր անունով և հին պատմությանը հայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արա Գեղեցկին մեռած մարմինը լզեր ու կենդանացուցեր են եղեր. և Արալեզք անունով կուտք ու աստված շինեցին պաշտեցին այն ժամանակ հայեր այս գեղի քարձր գագաթին վրա, ուր այժմ Ամենափրկչի մատուռն վճ»¹³:

Լեզքը շատ հին ժամանակ եղել է կրոնական պաշտամունքի տեղ. Այդ գյուղի բարձր գագաթի վրա, ուր Ամենափրկչի մատուռն է, արևեռագրով քարեր լեցուն ան. և ձուլածո հին պղնձե վեղանյաց փոքր արձաններ գտնվեցան մեր օրերը դեռ ևս քանի մի տարի առաջ: «Այս Լեզք գյուղի մոտերը կա մի թոնիրի ձևով աղբյուրի փոսակ կամ շրհոր, որ Սուրբ թոնիր կը կոչեն, ուր հաճախ զնացողներ կան. շատերն իբրև ուխտատեղի:» Լեթանտական պաշտամունքի մեացորդ լինելը շատ պարզ է Բայց ի՞նչ պաշտամունքի մեացորդ է այդ— Շամիրամի-Իշտարի-Աստղիկի: Այս բացատրում է մեզ «Սուրբ թոնիր» հետ կապված առասպելը. «Ընթի միայն մեկ ձուկ կ'երևի այդ շուրիկ մեջ. և որին որ երևի, անոր բախտն ու ուխտը կը կատարվի: Դա կնկան կերպարանք ունի եղեր. և արծաթե օղն ալ իր քիթն անցուցած՝ կը տեսնվի տակալին: Երեցկին է եղեր դա. կին կարի գեղեցիկ. երբ նստած թոնրի շուրթն հաց կը թխե, աղքատ մը կու գա հաց կ'ուզե, կու տա: Կերակուր կ'ուզե, կու տա: Փրնի կ'ուզե, կու տա: Թշվառականը կը համարձակի պագ մը ուզելու. երեցկինը կը վարանի, քայց... պազն ալ կու տա: Եվ հանկարծ Նույն վայրկենին երեցը ներս կը մտնե. երեցկինը ամոթեն ու ահեն ինքզինքն կը ձգե ի թոնիր կրակին տեղ... կրակն չուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստծո հրամանով հալիտենական հիշատակ կը մնա Նույն տեղը»¹⁴:

Այս գրույցի հնագույն ձևը բերած է Դիոդոր Սիկիլիացին: Դա Գերկեսո գիցուհու գրույցն է, որ իր գուետը Շամիրամի ժնվելուց հետո ձուկ

մին ի մականց Շամիրամայ). մի անգամ որ քղերայն գարձած է քաղաքեն, ետևից պիտի բերեր և քաղաքեն ճոզակի թիվը:

12 Ն. Ստրուշով, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայո, Վենետիկ, 1884, ըր. 286:

13 Գ. Սրվանատյանց, Պրոց-բրոց, ըր. 52:

14 Նույն տեղում, ըր. 52: Այս առասպելի վարկանքը, ոչ մի տեղի հետ չկապված:

Տ. Նավասարդյանցի՝ Հայ Ժողովրդական Հեթաթներում, է գիրք, ըր. 29:

է դառնում հանցավոր սիրտ համար¹⁵։ Եամիրամի մայրը Գերկետոն, Առաջագատիս, ջրի աստվածուհի է։ Նրա սրբազան կենդանիներն են Փինիկենում և Ասորիքում աղաճնին և ձուկը։ Ասկադոնում նրա պատկերը ձկան մարմնով էր հանած կամ նրան պատկերացնում էին կնոջ կերպարանքով, ստորին մասը ձուկ։ Նրա տաճարը շինված էր ձկնառատ լճի մոտ։ Հերասպոլսում դիցուելու տաճարի գավթում կար Եամիրամի պատկերը, մոտին լիճ, մեջը սուրբ ձուկը։ Նրա տոնի օրերը շուր էին քերում նրա տաճարը և սրսկում¹⁶։ Եամիրամին իրեն ասորեստանցիները պաշտում էին աղաճնու ձևով. և պատմում էին, թե աղաճնիներ են սնուցել նրան։ Այս ամենը հիշեցնում է մեր Վարդավաթին (որ Անահտի կամ Աստղիկի տոնն է համարվում) շուր սրսկելը և աղաճնի քայքայումը, մի սովորություն, որից երևում է, որ մեզանում ևս այդ աստվածուհուն նշվիրական են եղել աղաճնին և շուրը։ «Սուրբ թոնրի», ջրի ու ձկան պաշտամունքը, որ իսկապես հեթանոսական է և ոչինչ չունի քրիստոնեություն հետ¹⁷ հարկավ նոր չէ և դալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից։ Նոր չէ և այդ Սուրբ թոնրի հետ կապված առասպելը, որ սիրտ աստվածուհու այս պաշտամունքի հետ ի հետոց անտի Ասորիքից մուտած պիտի լինի հայերի մեջ։

Ի՞նչ է եղբայրացությունը— Վանա մույն կեղք գրուդի մոտ, ուր ըստ Արծրունու սպիանում են Եամիրամի մանուկներից սպանված Արայի վերջերը, XIX դարի վերջերում գտնում ենք Արայի աստվածուհի՝ սիրտ դիցուելու հեթանոսական պաշտամունքի մնացորդը և որ գլխավորն է, այդ պաշտամունքի տեղի հետ կապված է, թեպետ և առանց Եամիրամ կամ Աստղիկ անվան, մի պրույց, որ պայտղապես մույն սիրտ աստվածուհուն է։ Արդի այդ գրույցն ու պաշտամունքը չկան խորենացու և Արծրունու մեջ և չեն էլ կարող սրանցից անցած լինել ժողովրդին։ Դա հնության մնացորդ է։ Եվ իբր խորենացուց անկախ գտնում ենք սիրտ աստվածուհու պաշտամունքն ու առասպելները Վանա մոտ կեղք գրուդում, դա ապացույց է, որ այդ տեղը իսկապես որ հնումը նվիրական է եղել Եամիրամին— Աստղիկին։ Երբ մի հին գրույց հարատևում է ժողովրդի մեջ, ասել չի ուզում ամենից ավելի այնտեղ պիտի հարատևի, ուր առասպելը կապված է եղել որոշ տեղի հետ։ Եթե հնումը Եամիրամի գրույցները Վանա մոտերն լին և այս կամ այն տեղի հետ կապված, շատ քնականորեն մեր օրերում ևս նրա առասպելներն ավելի շուտ մույն տեղերում կգտնենք, քան որն է ուրիշ տեղում։

Վանի մոտ գտնում ենք մի երրորդ գրույց ևս նույն ցիկլից։

¹⁵ Г. Халатъницъ, Арм. вѣст., кр. 180, — 116 Եւան հեղինակի Очерк вароли арм. сѣвѣок. Москва, 1885.

¹⁶ Chant., Religionsg. I, кр. 228:

¹⁷ Թոնրն ու թոնրում յարվելը բուրդին ուրիշ մոտիկ է, որ եկել կապվել է սիրտ դիցուելու այս առասպելին։ «Սուրբ թոնրը» գուցե հեթանոսական ուղտի պաշտամունքի մնացորդ լինի։

հորինացին շի ասում, թե Շամիրամի մահն իր իմացած գրույցով հատկապես որ տեղի հետ է կապված: և ա միայն ընդհանուր ձևով գրում է. «Առասպելք աշխարհիս մերոյ... աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայի»:

Արդի զրույցը, որ տրոսմ է ն. Սարգսյանը, որոշ կերպով ցույց է տալիս այդ տեղը. Շամիրամի վախճանը կապված է Արտամետի հետ: Եվ այս իր առանձին նշանակությունն է ստանում, երբ գիտենք, որ ըստ Քոզմա Աթորունու (եր. 53, հտն.) նույն տեղում եղել է Աստղիկի պաշտամունքը:

Վերկցոքը և զմիա առասպելն զոր ասեն զՇամիրամայ, զոր և համառոտ քանի չիքէ հորինացի ասելով Ռուլունք ի ծով Շամիրամայ¹⁰: Քազուհին Շամիրամ որ մի ի հզոր և ի մեծագործ ինքնակալացն էր, շըրջադայեալ, ասեն, երբեմն զքօսանաց աղտգաւ յերկրին՝ Վասպուրականի՝ տեսանէ ուրեք մանկունս խմբեալ ի մի. և մերձ եղեալ առ ևոսա տեսանէ զի գտեալ ճոցա ուլունս ի գետնի՝ ի զնին կան ևոցին. իսկոյն ծանուցեալ փպատուականութիւն ճոցա՝ առնու ի ձեռաց մանկանցն և պարգևս տուեալ արձակէ զնոսա: Ուլամբքն այնոցիք սկսանի Շամիրամ մոգել և կախարդել, և ըստ ապականեալ սրտի իւրոյ զամենայն շարութիւն գործել ընդ երկիրն համարէն. զոր կամէր առ փնքն Վաշել ի լրումն տոհմանացն՝ զօրութեամբ ուլանցն ոչինչ զծուարէր, և զոր կամէր կորուսանել՝ և յայնմ յաջողքը անաշխատ, մինչև սասանել ամենայն ումեք և շկտրել ճիկ հանել: Մերոյ ուրեմն որ երթեակէր առ նա և ամենայն իրաց նորա հմուտ և խք խորհրդական էր, քաղում ժամանակս խորհելով ի մտի թէ զիարդ գերծուցել զերկիրն ի ձեռաց նորա կամ ի գօրութենէ ուլանցն, յաւուր միո՞ւմ մինչդեռ յկրտամետ քաղաքին էր ընդ թագուհուն, ժամ դիպող գտեալ՝ յսփշտակեալ ի ձեռաց նորա զուլունս փախչի: Չայրացեալ Շամիրամայ և ի ցասման մեծի եղեալ յարձակի զհետ նորա, և շկարացեալ հասանել՝ առ անհնարին կատաղութեանն զգէսսն պարսատիկ գործեալ, քանզի յոյժ երկայն և թաւ էին. և ապառաժ մի ահեղ մեծութեամբ եղեալ ի նմա արձակէ զհետ ծերոյն, և առ մեծի բռնութեան զերծեալ հերացն ի գլխոյն՝ և ապառաժն մեծ զլորեալ անկանի ի փոս մի առ Արտամետուալ, զոր և ցուցանեն մինչև ցայսօր: Իսկ ծերն ասեալ զուլունսն փախչի ի Մովսղերս Դաստլանայ և անդ արկանէ ի ծով, և զերծանի երկիրն առ հասարակ ի մոզական շարութենէն Շամիրամայ: Ահաւասիկ զրույցքս Ռուլունք ի ծով Շամիրամայ:

Խորենացու պատմվածքի և այս զրույցի նմանությունն այն է, որ երկուսի մեջ էլ Շամիրամը մի վավաշ ու շար վճռել է. նա ունի ուլունքներ, որոնք վերջը ծովն են ձգվում: Մնացածն ամբողջապես տարբեր է: Խորենացու մեջ ալ մի քան լկա այն մասին, թի փնջպես է Շամիրամն

¹⁰ Այսպես է այս խոսքը Մ. Խորենացու Ա խմբի Առաջինը մեջ, իսկ Տ խմբի Առաջինը մեջ է՝ «Սկզբնք Շամիրամայ ի ծովն»:

ուլունքները ձեռք բերում, և այս կազմում է արդի զրույցի առաջին մասը: Խորհնացու մեջ չկա և զրույցի երկրորդ մասը, թե ուլունքներն ինչ զորութիւն ունենին և թե Շամիրամն ինչպես իր կիրքն էր հագեցնում նրանց զորութեամբ: Ըստ Խորհնացու Շամիրամը հոմանիներն է ձեռք բերում ոչ թե ուլունքներով, այլ նրանց քաղաքակրթութիւնը ինչպես և զգանձաք, կամ սղկամա ցանկութեանն կատարել է տալիս, քրնծալիք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստամբ պարգևացք, ինչպես Արայի զրույցի մեջ է,—մի բան որ անում է և իշտարը: Մենք չգիտենք՝ Խորհնացու մեջ հոռութեամբ ուլունքներն ինչի են պետք գալիս: Այնուհետև զրույցի երրորդ մասն ևս լուրի Խորհնացիին: Զրագաշտը, ըստ Խորհնացու, Ասորեստանի կողմնակետն է, որին հաղատում է Շամիրամը իր իշտանութեամբ, այսինքն՝ կառավարութիւնը նրան է թողնում: Նա ուզում է բռնանալ ամենքի վրա: Շամիրամը կովում է նրա հետ, հաղթվում է, փախում է Հայաստան, ուր ամառներն անց էր կացնում, և այստեղ որդին սպանում է նրան: Մեռնելուց առաջ, ըստ առասպելին, նա ուլունքները ձգում է ծովը: Իսկ զրույցի ծերունին երթեկութիւն ունի Շամիրամի մօտ. ամենայն իրաց նորա հմուտ և իրը խորհրդական էր, այսինքն՝ դիտեր, որ Շամիրամն ուլունքների զորութեամբ է շարութիւն գործում: Բարի ծերունին ժողովրդին ազատելու համար՝ խում է ուլունքներն ու փախում: Շամիրամն ետևից ընկնում է. մագերը պարսատիկ շինում, և պոկում: Եվ այսքան միայն: Զրույցից մենք մինչև անգամ որոշ չգիտենք, թե արդյոք Շամիրամը մեռնում է, թե չէ: Միայն նրա ուլունքները ծերունին ծովն է ձգում և ժողովուրդն ազատվում է նրա մոգական զորութիւնից:

Ասել կարելի չէ, թե այս ժողովրդական զրույցը ստեղծվել է Խորհնացու մի խոսքի ազդեցութեամբ տակ, թե Շամիրամ վավաջ է և թե ռուլունք Շամիրամայի ի ծով: Սա նույնպես կարող է Արտամետում պատմըված Աստղիկ-Շամիրամի հին առասպելի մնացորդ լինել, ինչպես Լեզքի Սուրբ Թանրի և Արայի հարութիւն առնելու առասպելներն են:

Խորհնացու բերած առասպելով Շամիրամի վախճանն ուրիշ տեսակ է լինում: Այստեղ Շամիրամն իր թշնամիներից հալածված փախում է Հայաստան, առասպելը պատմում է նրա սղհետեակ փախուստն, և զպաստումն և զիղձա չրոյն և զարդումնն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորացն, և զլուռութեան ի ծով, և բան ի նմանէ (այսինքն՝ նրա ասած խոսքը) ռուլունք Շամիրամայի ծով: Այլ... սե Շամիրամ քարս: Շամիրամն ուրեմն իր ուլունքները ծովը ձգելուց հետո՝ քար է դառնում:

ՎԱՀԱԳԻՆ ՎԻՇՆԱԳԱՔԱՂ

27. Առասպելը:— Բժաշկ Վահագնն անգործ էր հայերի տիրելի աստ. վաժներից մեկը, հավասար Արամազդին և Անահտին, որոնց հետ և մի երրորդութուն է կազմել նա: Երանից էին հայ թագավորները քաշութուն խնդրում: Եստ հույակավոր և մեծ ուխտատենդ է նշել Վահագնի Վահագն-վանյան կոչված մեհյանը Տարոնի Աշտիշատում, ուր նրա հետ պաշտվում էին և Անահտի ու Աստղիկ դիցուհիները: Այսպիսի մի ժողովրդական աստուծու առասպելներն ու զրույցները քննականացար պետք է շատ լինեին և երկար ապրեին նույնիսկ քրիստոնեություն ժամանակ:

Վահագնի մասին խորհնացին գրում է հետևյալը. «Սորա (Տիրորանի) որդի Բար, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք աշխարհիս»:

Երկնէր Երկին, երկնէր Երկիր,
Երկնէր և ծովն թիրանի.
Ծրկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող քոց ելանէր,
Եւ ի քոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ քոց ունէր մորուս,
Եւ ալկունքն էին արեգակունք:

Ղայա երգելով ոմանց փանդամք՝ լուսք մերովք իսկ ականքօք:
Ցետ որոյ և ընդ վիշապաց ասլիկն յերգիւն կուռն իմա և յաղթել, և կարի
իմն նմանազոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգելիս (Ա. լա.):

Ուրեմն, լստ խորհնացու, Վահագնի մասին այս պատմութիւնը մի առասպել է, որ երգվել է այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեությունն իրոք իշխում էր:

28. Վահագն աստված:— Վահագնը, որի աստվածութունը բացի խորհնացոց հայտնի և նաև Ագաթանգեղոսից, Բուզանդից և Աստվածաշընչից, խորհնացու մեջ դարձած է մարդ և հատկապես վիպական Տիգրանի որդին: Որ այդ աստծուն խորհնացիին հիշում է իբրև անցյալ ժամանակների հայ նախնիքներից մեկը, այդ անշուշտ, հետևանք է քրիստոնեությունից: Եվ հետևաբար ժամանակից ի վեր արդեն աստվածված և ապա քրիստոնեականների մեջ սովորական դարձած մի ուսմունք էր, աստվածները համարել հնագույն ժամանակներում եղած նշանավոր մարդիկ, որոնք հետագայում աստվածացել են: Այսպես, ոչ միայն խորհնացու մեջ Վահագնը Հայոց նախնիքներից մեկն է, այլև Անանիա Շիրակացու մեջ մարդ են համարվում Վահագնը և Բարշամբը: Բարձրագույն ոմանք յառաջնոցն հայոց ասացին, թէ ի խիստ ձմերանի Վահագն՝ Նախնի Հայոց՝

գողացաւ զյարդն Բաղասմայ (Բարշամայ) Ասորոց Եափնոյն, զոր և մեր սովորեցցաք բնախօսութեամբ Տարգղոդի հետ անուանելա՛ւ:

Ըստ Ագաթանդեղոսի ես մարդ է եղել Անահիտ դիցուհին. և Այլ զոր զուգ կաշեւ մեծ Անահիտ տրելին, յնայ իբնն ազգեք մարդիկ ոչ յայնժամ երբեմն մամանակի: Փանգի դիցուողաւ կախարհութեամբ զմարդիկն՝ որ յայնմամն էին՝ ցնորիք կնոյս ի կնոյս լինելով զիայն, հասանցալցին մեծանա լինել, և պատկերս կանգնել և արկիբ ուղղանել յնայ կարծիքն ունի և նզնիկը Տրվանի մասին. և զի և Տրուանն իսկ մարդ լեալ է, այր մի քաջ առ Տիտանօքն. և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց՝ զքաջա առ դիցադոնա ունել, հայնցնալ քէշակարկատին Պարսից՝ թէ որովհետև մարդիկ աշխարհին զնա առ աստուածս ունին, ես զերկնից և զերկրի և զամենայն արարածոց արարութիւն ի նմանէ կարծեցուցիցս:

Այսպես և Խորենացին, — զուցն և Վահագնի մասին առասպելի երգիչները, բայց ոչ առասպելը, — նույն ուսմունքին հետեւելով համարում է աստված Վահագնին մի մարդ, ուստի և դնում է նորան իր հերյուրած ազգաբանութեան մեջ, իբրև Վահնունի կամ Վահունի քրմապետական տոհմի նախնին (Ա. լա., Բ. ք. մր.): Բայց Պատմագիրը գիտե, որ այդ Վահագնը պաշտվել է իբրև աստված և յինքն էլ նրան դնում է աստվածների շարքի մեջ՝ համասար Հերակլեսին: Ուստի և նա, Վահագնի մասին երգի բովանդակութիւնը մեջ բերելուց հետո, հնարավոր է համարում ավելացնել. և Այլ ասուն զսա և աստուածացեալ. և անդրի ի Վրաց աշխարհին զսորա շատ հասակին կանգնեալ պատուէին զոհիցս (Ա. լա.):

Ի՛նչ աստված է Վահագն, — աստեբրազմի աստված³, ասում են հիմնվելով Ագաթանդեղոսի այն կտորի վրա, ուր Տրդատի հրովարտակի մեջ ասված է. «Քաղութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէս⁴, Բայց այդտեղ միայն իբրև քաջ է ներկայանում աստվածը և քաջութիւն շնորհում. իսկ այդքանը, ինչպես և Վահագնի համապատասխան լինելը Հերակլեսին, զեռ բավական ապացույցներ չեն, թե նա պատեբրազմի աստված եղած լինի: Մյուս կողմից՝ ոչնչով վի ապացուցված և Վահագնին սորսի և հաղթութեան աստված համարելը⁵ հիմնվելով, թերևս, Վահագն անվան ծագումի վրա պարտից Վերեթրագնա աստուծո անունից: Բայց եթե

1 Անտիոյի Երեմիոնով, Միացորդ բանից, Ս. Պետրոսի, 1877, եր. 48: Այստեղ Բարշամ անվան տեղ Բաղասմ է, սակայն Ալիշանի (Հին Հայաստ, եր. 288) ձեռքի տակ ունեցած ձեռագրի մեջ եղել է «Բարշամայ Ասորեստանայց Եափնելու, Բարշամ է գրում և Հ. Գելցերը (Zur arn. Götterlehre, եր. 120), Վենետիկ գրադարանի ձեռագրի նկարագրութիւնն ստացած լինելով:

2 Ագաթանդեղոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Գ. Տեր-Անթաշեան և Ա. Կանայանց, Տիգրս, 1809, եր. 23:

3 Г. Халатъянц, Арм. спос, եր. 203:

4 Ագաթանդեղոս, եր. 73:

5 Geizer, Zur arn. Götterlehre, եր. 108:

պարսից վերնթրագեան հաղթութեան աստիճան է, հայոց վահագնը այդ հասկումը կարող էր ունենալ և շունենալ Աստվածները մի ազգից մյուսին անցնելուց հետո՝ միշտ անպատճառ շնք պահում իրենց բնավորութիւնը: Իսկ որքա՞ն աստիճան հասնոյրը, հիմնվածով ինչ որ եղևիկի գրույցի վրա, որ պատմելու է Ս. Աթանազիոսին—վահագնի իրավունքի հաջորդը—մտպին, քննով արժեք չունի, քանի որ այդ գրույցը կարող է ալ անպատճառ վահագնից անցած լինել Ս. Աթանազիոսին:

Որտի աստիճան կամ աստիճանի արեւելքի պաշտպանաւ, կամ թե՛ հաղթութեան և պատերազմի աստիճան չլինելը, որ ենթադրութեաններ են, եթե ճիշտ էլ լինին, դեռ չեն քաջատրուում վահագնի ֆիզիկական քննարկութեանը, որ ժամայն ատասպելի մեջ դեռ պարզ միայն, նվաճման արար մտածելով ներկայանում է իրրե մարդ, կամ թե՛ պատերազմում է իրրե մի աստիճան վերաբանական զաղափարների, ինչպէս են՝ հաղթութեան ու քաջութեան:

Ի՞նչ ֆիզիկական ծագում ունի վահագնը, կամ ո՞ր ֆիզիկական երևութի անձնավորութեան է նա: Ահա թե՛ ինչ պետք է իմանալ, նրա ատասպելի իսկութեանը հասկանալու համար:

29. Վահագն արեգակ:—Ատասպելաբանութեան մտպին քիչ ու շատ ծանոթութեան ունեցող ամեն ոք իսկույն կնկատի, որ արեգակնանման աչքերով, հրամայող ու բոցամորուս պատանյակ աստվածը, երկնքի և երկրի, ծիրանի ծովի և մի բույսի—եղեգնի որդին, րեոթութեան մի երևութի անձնավորում պիտի լինի: Եվ այդ նկարագիրը բավական հարմարվում էլ է արեգակին: Ուստի և ո՞մանց վահագնի այդ նկարագիրն արեգակին են վերագրել? և քաջատրել, թե՛ դա պատերազմում է արեգակի ծագումը: Նրանք հետևել են այն ատասպելաբաններին, որոնց ասում են, թե արեգակի անձնավորում աստվածներն ունեն արեգակնանման աչքեր: Եւստի փայլուն, շողոքողուն աստիճան, որ արեգակն իրրե այն ունի, կարող է լինել միայն երկնք—աստիճան, կամ արեգակն—աստիճան, լինի Ջես, Վարունա, Ինդրա թե՛ Օդհինս⁶, Այսպէս և Միթրան, լուսին և արեգակի աստիճան, միանգամայն և արեգակը, ոչ միայն արեգակնանման բոցեղեն աչքեր ունի, այլև հենց արեգակը նրա աչքն է: Այսպէս և մեր վահագնը, որի յաշկուսքն էին արեգակուսքն:

⁶ Լ. Պիլլիեր, Հեանաբանութեան հայ դիցարանութեան, թարգմ. Յ. Փորթոյան, Վենետիկ, 1897, էր. 38. Թարգմանի ծանոթութեանը, զարգած Ռ. Սարգսյանի Ապաթանդրոսի աստվածաբանութեան, էր. 218: Ավելորդ չի լինի նկատել, որ մինչև վերջերս Հայաստանի զանազան կողմերում այս կամ այն սրբի, զխաղորդու Աստվածածնի վրա գումարում է նաև եղևիկի գրույցը, որը մենք այլուրեւութեան շնք համարում, ինչպէս Սարգսյանը, այլ իրք մի հին գրույց, որ սրբիին է անցել հեթանոսութեանց: Ոչ մի տեղիք չկա, սակայն, այդ գրույցը վահագնի վերաբերու, և ալ իսկ Ս. Աթանազիոսին համարելու միայն վահագնի հոլորդ:

⁷ Ալիքան, Հին հայաստան, էր. 88:

⁸ Darmesteter, Ormuzd et Ahriman, Paris, 1877, էր. 33:

Վաճաղքի այս մերձեցումն արեգակին նոր շէ: Փիլոն Երրայեցոս
«Վասն տասնրանհան օրինացս գրվածքի մեջ արդեն կա. «Քանզի կոչեն
սմանք... զհուր Հեփեստոսն և արեգական (վարիանտ արեգակն) զՎա-
հագն»⁹ Այսպես և ավելի ուշ դարերի գործ «Տօնական մատենանիս մեջ
հիշված է. «Ոմանք զարեգակն պաշտօնցին, և Վաճաղն կոչեցին. և այլք
զլուսին, և Արտեմիս ձայնեցին»¹⁰ Բայց այս երկու կտորը, որոնցից
Փիլոնի մեջ հիշվածը նշանակութուն ունի, քանի որ այդ թարգմանու-
թյունը հին է համարվում, դեռ բավական չեն կարծելու, թե Վաճաղն
արեգակի կամ սուրբիսակ գեղեցիկ պատանի Ապոլոնի հետ նույն է
եղել: Այդ հատվածները միայն այն են ցույց տալիս, որ դրանց թարգ-
մանիլը կամ հորինողը Վաճաղքին Ապոլոնին են մոտեցրել, մինչդեռ
ուրիշները և ավելի զատերը, որոնց թվում և Աստվածաշունչը և Խորե-
նացին, Վաճաղքին հավասարում են Հերակլեսին: Այս երկվությունն ան-
շուշտ այն պատճառով է, որ մեր աստվածներից ոչ մեկն էլ կատարելա-
պես համապատասխան չէր կարող լինել հունական այս կամ այն աստու-
ծուն, այլ որոշ գծերով կարող էր այս, միանգամայն և այն աստուծուն
մոտենալ ավելի կամ պակաս վայրով:

Երգի մեջ նկարագրված պատանին և նրա ծնունդն իսկապես որոշ
լսիրով նման են արեգակին և արեգակի ծագմանը, թեպետ ոչ Խորենա-
ցին և ոչ երգը ոչ մի խոսքով ակնարկողթյուն չեն անում արեգակի վրա:
Բայց այստեղ չենք համեմատիլ երգի պատանին արեգակնային աստված-
ների հետ, քանի որ մենք Վաճաղքի անձնավորության մեջ ոչ թե արե-
գակն ենք տեսնում, այլ մի ուրիշ երևույթի՝ ամպրոպի անձնավորում:
Այսպես ըմբռնելով միայն հասկանալի է լինում երգի ամեն մի տողն ու
բառը, և Վաճաղքի կոչվել վիշապնեյի հետ, և վիշապաբաղ մակդիրը, և
Վաճաղքն անունը, և Հերակլի հետ նույնանայլը, և նույնիսկ երբեմն Ապո-
լոնին հավասար գրվելը:

80. Վահագն ամպրոպային աստված:— Հայկական աստվածների
մասին եղած սակավ հիշատակութունների մեջ ամպրոպի աստված չի
հիշվում: Խորենացին մի տեղ միայն (Բ. ձգ.) գրում է. Նունե ակործա-
նեաց զամպրոպային պատկերն Արամազդայս: Բայց այդ պատկերը Հա-
յաստանում չէ, այլ Վրաստանում: Հայոց Արամազդը, որ իրտնացիներ-
ից է հայերին անցել, հավանորեն չի իշխել ամպրոպի և փոթորկի վրա,
ինչպես և պարսից Ահուրա Մազդան: Թերևս հելլենիստական ժամա-

⁹ Փիլոնի թարգմանութունը ձեռք առնել շունհեյլով՝ օգտվում ենք Փ. Կալաթյանի «Арм. список», стр. 203, ծան. 5 և Բ մաս, «Метерпалы», стр. 51: Նույն հատվածը
բերված է և Հայկ. լեզ. նոր բառարանի մեջ Վաճաղն բառի տակ. «Արեգական զՎաճաղն
(լուսն. զԱպոլոն) և լուսնի զԱրտեմիս (այսինքն զԱնահիտ), և Արուսեակ՝ զԱստղիկ
(այսինքն զԱփրոդիտե)»:

¹⁰ Տե՛ս նոր բառը, Հայկ. լեզ. Վաճաղք: Այնպես (Հին Հովտաց, եր. 88) մեք
բերել է նույն հատվածը, միայն Վաճաղն ընթերցվածով:

նակում, երբ Արամազդը հունական ամպրոպային Գիոսի հետ է համեմատվել, վերջինիս ամպրոպային քնամորուքունն Արամազդին վերագրված լինի, քայքայ յայ վկայված չէ: Դժվար է, սակայն, ընդունել, որ հայերի ամպրոպի աստված ունեցած շիկնն, քանի որ շատ ու շատ ազգերի մեջ ամպրոպային աստված ոչ միայն կա, այլև հաճախ առաջնակարգ տեղ է զբաղեցնում, և քանի որ ամպրոպային ֆիզիկական երևույթն է, որ արեգակի հետ համասար, և ըստ շատ առասպելաբանների՝ արեգակից էլ ավելի, ազգել է առասպելների ժառանգված: Մյուս կողմից՝ մեր ժողովրդի մեջ ցարդ կենդանի մնում են, անշուշտ հնուց եկած, բաղձաթիվ գրույթների ամպրոպի մասին: Դրանք էլ վկայում են, որ հայերի մեջ ևս ամպրոպի աստվածություն եղել է և նույնիսկ սիրելի ու նշանավոր:

Այդ հին ամպրոպային աստվածն եղել է Վահագն: Տեսնենք նրա մասին բոլոր ավանդածները: Նախ Վահագնի ծննդյան հրգը:

Երկն էր և ծովն է, և ծովն էր և Երկիր:— Շատ տարածված հավատալիքներից մեկն է, թե Ամպրոպի ժամանակ երկինքը երկնում է և մրրկով հողի ամպը հողմահույզի հեծծածներով և պտուտահողմի բախույունի տակ, ծննդյան ցավերով բռնվում է և մի կամ երկու լուսեղեն էակ ծնեղու համար¹¹: Այն ըմբռնումը, թե ամպրոպային աստվածը երկեփոց ու երկրից է ծնվում, գրում է Մաքս Մյուլլերը, համեմատական առասպելաբանության հիմնադիրներից մեկը, բոլորովին քնական է: Որովհետև փոթորիկն երկնքից է առաջ գալիս, ուստի և երկինքն իբրև ամպրոպային աստծու հայրն է ըմբռնվում. բայց փոթորիկն առաջանում է և հետո հորիզոնում երկրի վրա, և ուր երկինքը թվում է թե գրկախառնվում է երկրի հետ, ուստի և երկիրն ամպրոպային աստծու մայրն է: Այսպես Ռիզ-Վեդայում մեծապես ամպրոպային աստծու՝ Ինդրայի ծնունդն իբրև մի ամպրոպային օգիրույթ է ըմբռնվում, որի ժամանակ զոռում են երկինքն ու երկիրը, որոնք և Ինդրայի հայրն ու մայրն են¹²:

Այսպես և, քանի որ մեր Վահագնի ծննդյան ժամանակ երկնում են երկին ու երկիր, Վահագնը դրանով ներկայանում է իբրև ամպրոպային և ոչ թե արեգակնային աստված:

Երկն էր և ծովն է իրանի¹³:— Այս տողը ցույց է տալիս, որ երկնի ու երկրի որդի Վահագն՝ է միանգամայն և ծովածին: Ի՞նչ է այդ ծիրանի ծովը: Անշուշտ, ոչ երկրավոր, երկրի վրա տեղափակված մի ծով: Երկինքը, ամպերով ծածկված երկինքը ծովի նմանեցնելը մի սովորական բան է հին ու նոր քաղաքագիտության մեջ, և երկինքը, որտեղից անձրև է գալիս, ջրեղեն երևակայելը հատուկ է նախնական ազգերին: Նույն ըմբռնումն ունի երկնքի մասին և մինչև վերջերս մեր ժողովուրդը, որ հավատում է, թե յոթնամյակ երկնքի առաջին խապն ամպ է, և ամպերի

¹¹ W. Schwartz, Indogermanischer Volksglaube, Berlin, 1885, 4p. 55:

¹² M. Müller, Die Wissenschaft der Sprache, Leipzig, 1893, II, 4p. 516:

¹³ Վարդան Եփրեանի ծագել:

վրա մյուս շնորհները ջրերի ծովը, որի ծայրն ու վերջն օվկյանի վրա է հանգում¹⁴, Այսպես և մեր ժողովուրդն իր առավոտյան ազոթքի մեջ կոչում էր սերկինքը ծով ծիրանին¹⁵։ Այսպես և ժողովրդական հավատալիք է, որ որսորդ է, երբ թալենկոծն քամին ալյո երկնային ծովն է գալի¹⁶։ Նույն դադափաբը գտնում ենք և մի հանելուկի մեջ,—հայտնի է հանելուկների հնթթյունից գալը և հին առասպելական հավատալիքներ բովանդակելը։

Կով մի ունիմ հանա-հանա,
Կոտոշները մարխանա,
Կաթնաղբյուրեն ջուր կը խմա,
Աւլունծովեն ձեն կը հանա¹⁷։

Եվ այս հանելուկի պատասխանն է ամպ և ամպի գոռոց, որոտ-մունք։ Ամպը կամ ամպեղեն էակը պատկերացվում է այստեղ, ինչպես շատ ազգերի մեջ, իբրև արջառ, հասկապես կով, որ ձայն է հանում երկնային թարյուն, այսինքն տրեհազուլն (= ծիրանի) ծովի միջից։

Պարսիկների մեջ ևս ամպրուպի աստված Տիտորիան արջառի կերպարանքով է ներկայանում, նրա կոփվը ջրերը խափանող Ապտոշա դևի դեմ՝ լինում է երկնային—Վուրուկաշա ծովի մոտ, որից և անձրևում է այդ ամպրուպային աստվածը¹⁸։ Իսկ Վերայի մեջ ամպրուպային աստվածը՝ մուլ Ինդրան՝ անձրևելու համար՝ պատասխում է երկնային ջրերն արգելող ամպերի կամարը, որ կանգնեցնում է Ինդրայի հակառակորդ վիշտպը, Վրտրան, որ միևնույն ամպն է կամ ամպի անձնավորումը։ Սկզբնից կանգնած էր խավարը, ջրերը փակող կամարը, Վրտրայի կամարների ներսում—ջրերի լիքը. ծածկույթով զրջապատված հոսանքները ցած է զարնում Ինդրան նտն նտն ուղղորդ հանապարհներով¹⁹։ Կամ, օրինակ, ուրիշ տեղ. «Ջորոթթյամբ բարգավաճած է Ինդրան, որ Մարուտներին բարեկամ ունի. Վրտրային անդամաւոյծ արաւ և այդ ժամանակ դուրս թափեց ծովի ջուրը»²⁰։

Այսպես, երկնային ծովի դադափաբը, որ ի միջի ալյոց հատուկ է և հայերին, մեծ դեր է խաղում ամպրուպի առասպելների մեջ։ Բայց որ գլխավորն է՝ ամպրուպի անձնավորում աստվածը, որ վայրժակով գինված՝ հոսեցնում է երկնային ջրերը, համարվում է ծնունդ երկնային ջրերի։

14 Քեզզագրական հանդես, II, գիրք, էր. 248։

16 Գուրգին Լավոնիյան, Փշտանքեր, Քիֆլիս, 1883, էր. 77։ Մի ուրիշ ազոթքի մեջ՝ «երկինքը պարզ է, ծիրանիս։ Եւ. Լուլյուն, Դավաթի բարձունք, էր. 2։

16 Քեզզագր. հանդես, Բ գիրք, էր. 220։

17 Գ. Սրվանդուկեց, Մանաս, էր. 214, ուր «կովի» տեղ «հանք» է դրած (թերևս «հավք»)։ Եւզե բառով նույն հանելուկը գրի առած ունի Գ. Վանցյան։

18 Spiegeel, Iranische Altertumskunde, II, #8, հաճ.։

19 Der Rigveda, ähara. v. Alf. Ludwig, II, 453, 10.

20 Նույն տեղում, II, 613, 3.

Հնդիկների մեջ նա կրում է Ապտիա—զրածին, ջրերի որդի անունը: Այս մակդիրն այնքան առանձնապես վերաբերում է Ինդրային, որ նա նույնիսկ ապտիաների ապտիա և՛ կոչվում: Միայն Ինդրան չէ ջրերի որդին, այլև նրա անվճարյակ հղբայրը՝ Ապին, որին նույնպես վիշապի դեմ կռիվներ են վերադրում: Նա կոչվում է, փորձ կայծակի կռակի աստված: Ապամ նապատ—ջրերի զավակն, Ապտիա—ջրածին, ջրերի որդի կոչվում է ն նույնպես վիշապի դեմ կռվող Տրիտա աստվածը, որ Ինդրայի հասկոթուններն ունի, և որին համեմատվում է պարսից Ապիա Քրատտանա կամ Քրիտա աստվածը, որ ապանում է Ահրիմանի մի վիշապ²²:

Այսպես և մեր Վահագնը, իբրև վիշապի դեմ կռվող ամպրոպային աստված, մեռանդ վճարվանային ջրերի՝ ծովի:

Քե մեր Հին առասպելների մեջ ևս հղել է ամպրոպի աստված և նրան հատուկ է եղել ծովածին յիննչու դադափարը, այդ կարելի է տեսնել և մեր արդի ժողովրդական հավատալիքներից ու առասպելներից, որոնց մեջ հիշվում է մի ամպրոպային մարդակերպ ոգի՝ Եհրաչք անունով: Նա երբեմն երևում է և ամեն ինչ այրում իր հրեղեն աչքով և անհայտանում: Բացի այդ՝ կա նաև մի ամպրոպային կամ կայծակի աստվածուհի, ինչպիսին ունեցել են և Հույները: Պա է Երաչվ Մովսեսը կամ Մովիեարը, ամպրոպի և կայծակի կամ փայլակի անձնավորումը: Նա մի պաշտելի առասպելական էակ է, մի աղջիկ հրաշյա ու հրեղեն, որ վերին երկնքումն է ապրում և վերահաս ամպրոպից առաջ ամպերի մեջ, հրեղեն ձիու վրա նստած, խաղալով ցուլց է տալիս վայրկենապես իր երեսը, որից և փայլատակում է: Նրա ձիու և ալեկի ևս նրա իրեն աչքերից կրակ է ցայտում: Նրա հրեղեն զուսավոր երեսին նախը ոչ ոք չի կարողուստի նա երեսին ցող ունի քաշած: Նա անում է նաև իբրև տղամարդ հազնված: Ամպրոպային մովս գիշերները հանկարծ նա իր գլուխը հանում է ամպերի ետևից և նայում գեպի ցած: Այդ ժամանակ սՄովսեսը խաղում է, այսինքն՝ փայլատակում է²³, կամ «Մովիեարն էնեց խաղում ու, որ կ'ասես թե ուզում ա աղիարհքը կրակ տա»²⁴:

Այս սխաղացող Մովիեարը ժողովրդական հավատալիքների մեջ ներկայանում է իբրև մի ցատուկալից կայծակի էակ, որ մարդկանց պատուհասելու համար կարկուտ է ուղարկում: Բայց նա նաև պտղաբերող անձրև է ուղարկում: Արդ ժամանակ և աղոթում են նրան և նույնիսկ մատաղներ խոստանում²⁵:

²¹ W. Manhardt, Germanische Mythol., էր. 213, հան.

²² Spiegel, Iran. Altert. I, 440.

²³ «Մովսեսը խաղում է» գարվածը ան'ս Յե Աղևտեղդյուն, Քիֆլիսցոց մտավոր կյանքը, Քիֆլիս, 1885, էր. 275:

²⁴ Տ. Խովոստրյանց, Հայ մող. Հեթանոսներ, Ծ, էր. 40:

²⁵ Բալտայանց, Թատուկ և Սովան, Քիֆլիս, 1888, Ս. Փավսյանց, Մովիեար, Քիֆլիս, 1888, էր. 21, 21, հան., M. Abegjan, Der arm. Volkagl., էր. 77—80.

Այս ամպրոպային աստվածուհու կամ աստուծու անունը «Մովհան» վաղմիջած է պարզապես «ծով» բառից սովորական «հան» մասնիկով, որ ցույց է տալիս ծագում, մեկից սերված լինելը: Անշուշտ, սկզբնապես դա փայլակ ու կայծակի աստուծու մակդիրն է եղել և հետո, ինչպես հաճախ լինում է առասպելաբանության մեջ, առանձնացած դործ է անվել իրրև հատուկ անուն նույն աստվածության, այլև իբրև հասարակ անուն կայծակ ու փայլակ նշանակությամբ: Դրան համանիշ է «Մովինար», որ կաղմիջած է «ծովհան» բառից «ար» մասնիկով, ինչպես զարդաբառից կաղմիջած «Ջարդար»՝ աղջկա անունը, «Սոկեան» (Սոկան) անունից՝ «Սոկինար» աղջկա անունը, «Քեղինեան անունից՝ «Քեղինար», նույնպես և «Մովհան» անունից անանցված է «Մովինար» աղջկա անունը: «Մովհան» բառն ինքն էլ կա իբրև անձի անուն:

Այսպես ուրեմն հայկական ժողովրդական հավատալիքների մեջ ևս կայծակի աստվածությունը կապվում է ծովի հետ, իբրև ծովի սերունդ: Մյուս կողմից, ինչպես կտեսնենք, ծովածին է մեր արդի ժողովրդական վեպի մեջ կայծակի կամ ամպրոպային հերոս Սանասարը: Նրա մայրը հղանում է նրան և նրա եղբորը ծովի ջրից, և նա իր այդ ծագումը նկատի ունենալով՝ իրեն անվանում է Մովսիս, ունի կայծակի թուր, որ ստացել է ծովից. ունի ամպրոպային առասպել, կովելով վիշապի դեմ և կովի մեջ հողմ հարուցանելով ու անձրևելով: Նրա մոր անունն է Մովսյա կամ Մովինար²⁰:

Ծրկն ի ծովուն ունէր և զկարժրիկն եղեզնիկ.

Ընդ եղեզան փող ծուխ նյանէր,

Ընդ եղեզան փող բոց ելանէր.

Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանակիկ:

Ծրկնքի և երկրի որդի ծովածին Վահագնը երգի մեջ համարվում է «երված և մի բուսից» — կարմրիկ եղեգնիկից: Այսպես և երկնքի ու երկրի և ջրերի որդի Ազնին, իբրև կայծակի, կրակի աստվածություն, ծնվում է միանգամայն և բուսիներից: Ռիզվեդայի մեջ, օրինակ, երգվում է կայծակ Ազնիի համար. «Բուսիներ կանոնավոր երևացողին Ազնիին իրենց մեջ են առել իբրև սաղմ, այս Ազնիին ծնեցին մայրական ցրեղ նմանապես ծնում են երան ծառերն ու խոտերը հավետ հղանալով»²¹:

Արգեն վաղուց Կունը, համեմատական առասպելաբանության մի ուրիշ հիմնադիրը Գերմանիայում, իր մի նշանավոր աշխատության մեջ²² ցույց է տվել, թե ինչպես զանազան հին ազգերի, և հատկապես հնդկների առասպելների մեջ երկնային կրակը բուսիների հետ կապված է մշտնապես: «այսինքն՝ ինչպես երկրի վրա կրակը փայտից է առաջանում, հավատում էին, թե երկնքում էլ կայծակը փայտից է ծնվում: Ուստի և

²⁰ M. Abeghian, D. arm. Volksagl., էջ. 82—89:

²¹ Der. Rigveda, II, 432, 6.

²² Adalbert Kuhn, Die Herabkunft des Feuers, Berlin, 1859.

կայծակը պատկերացնում են հաճախ իբրև դանազան բույսեր, և կայծակի մարմնացումն են համարված շատ բույսեր, որոնք հետևը գործ են անում շփումով սրբազան կրակ հանելու համար: Այդպիսի բույսերից է, օրինակ, և փշենին կամ փուշը²⁰, որ և հայերի մեջ, իբրև կրակի մարմնացում, գորտվոր օկապք, այսինքն՝ պաշտպանութիւն միջոց է համարվում շար ուրիշների դեմ և մեր հմայական կամ սկապքի աղոթքներէն մեջ կրակին հավասար է դասվում: Հայերի մեջ կայծակի մարմնացում ուրիշ շատ բույսեր կան, բայց թե եղեզն ևս այդպիսի բույսերից է համարվում թե չէ, տեղեկութիւն չունենք: Անհամարանական չէ այդ, քանի որ տեսնում ենք, որ մի գերման դրույցի մեջ եղեզն իբրև կայծակ դուրս է գալիս Օղհին աստուծո ձեռին, որ սկզբնապես եղել է ամպրոպային աստված և Ինդրայի հետ է համեմատվում²⁰: Նույնիսկ, եթե եղեզն այդպիսի բույսերից չլինի, բանաստեղծը չէր կարող,— քանի որ առասպելական երկնային տեսարանն իսկապես միշտ երկրավորի նմանումն է,— ավելի լավ կերպով ուրիշ բույս ընտրել կարժիր կայծակի հրդեհումը ծիրանի ծովի մեջ նկարագրելու համար, քան թե կարժիր եղեզը, շամբուտների եղեզը, որ աճում է ջրերի միջին: Եղեզի կարմիր մակերես ևս կայծակից առնված պիտի լինի: Շատ ազգերի առասպելների մեջ կայծակին հատուկ գույններից մեկն է կարմիրը²¹, ուստի և շատ բույսեր իրենց կարժիր գույնի պատճառով հենց՝ համարվում են կայծակի մարմնացում²², և հաճախ ամպրոպային աստուծու նվիրական գույնն է կարժիրը:

Ի՞նչ է ցույց տալիս ծովի ծիրանի մակերեսը:—Այս բանը, որ համեմատովում է հանելուկի մեջ ծովի աբլուն (արենագույն) մակերես, կարող է վահագնի ծնունդը կարծել սույ իբրև արեգակի ծնունդ, ծագում արշալույսի ծիրանի ամպերի ծովից: Արդարև, ամպրոպի երևույթն և առավոտյան լուսաբացը զբույցների մեջ շատ անգամ իբրար խառնվում են. մի գրույց, որ սկզբնապես ամպրոպին է վերաբերում, փոխվում է, արբվում առավոտյան լուսաբացին, կամ բնդհանառակն: Դրա պատճառը հենց բնութիւնն այս երկու երևույթների նմանութիւնն է, արեգակը դիշերն աներևույթ է լինում և առավոտյան ծագում, այդպես և փոթորկի ժամանակ արեգակն անհետանում է և անձրևից հետո կրկին երևան գալիս²³: Այս իսկ պատճառով առասպելաբանական գիտութիւնն մեջ իշխող է երկու ուղղութիւն՝ արեգակնային և ամպրոպային: Միևնույն առասպելներն ու աստվածները ոճանց արեգակով են մեկնում, ուրիշները ամպրո-

²⁰ Նույն տեղում, էջ. 28:

²¹ Նույն տեղում, էջ. 180. F. Schwartz, Die poetischen Naturanschauungen, Berlin, 1864, I, 199, II, 99, Այլև Zeitschrift d. Vereins d. Volkskunde, 1892, II, էջ. 68:

²² A. Kuhn, Die Herkunft d. Feuers, էջ 106. F. Schwartz, Poet. Naturanschauung.

²³ A. Kuhn, Herakl. der F., էջ. 47:

²⁴ F. Schwartz, Poet. Natur., I, էջ., 67.

պով, մանավանդ որ միևնույն առասպելներէ մեջ հենց այս երկու երևույթի պատկերացումները միացած են՝ առավորտյան մեզերի և ամպրոպի ամպերի միջից ծագող արեգակի նմանութիւնն պատճառով³⁴։ Օրինակ հենց Ապոլոնի մեջ, որին մերձեցրել են մեր Վահագնին, միացած են արեգակի և ամպրոպի աստվածութիւնները, թեպետև նրա առասպելներէ մեջ վիշապասպան կայծակի կամ ամպրոպի աստվածքը, ծիածանի աղեղով և կայծակի նետով, ավելի զորավոր է երևում, քան թե ոսկեգլխակ արեգակնային աստվածը³⁵։ Ապոլոնի ծնունդն իսկ, երբ,— ինչպես կայծակի աստվածուհի Աթենասի ծննդան ժամանակ,— ոսկի անձրև է տեղում, բացատրվում է իբրև ամպրոպային ծնունդ³⁶։ Այդ սուկի տեղն առնված է ամպրոպի երևույթից, իբր թվում է թե ամբողջ երկինքը կայծակնաճարիւու ժամանակ փայլում է ոսկուց, որ իշնում է երկիր կամ երկնքումն էլ մնում է։ Պա երկնային ծովի ոսկեզույն, կարմիր, ծիրանի բոցավառումն է գրեթէ ամպրոպների ժամանակ։ Եվ շատ հաճախ բանաստեղծները փոթորկայից երկինքը պատկերացնում են իբրև ամպերի հրեղեն ծով, որի միջից կայծակը բռնկվում է սկարմիր հոսանքներով և որ բոցավառումն է իբրև հրդեհ։ Գերմանացի բանաստեղծ Պոտֆրիդ Ջոյմբի մի բանաստեղծութիւն մեջ, օրինակ, փոթորկի պալե ու գնալը նկարագրված է այսպես։

Գալիս մտանում է ինչպես գիշեր
 Նրա առաջից լուսավորում են կայծակներ,
 Եվ ինչպես մի բոցեղեն ծովի մեջ
 Ալիքներն ալիքների վրա են խռվում։

Այդպես և մեր մի հեքիաթի նկարագրի մեջ. «Ընհնց մթնում են ասորու ձոր, որ ես մութն ասեմ, դու գիշեր իմացիր... Քամին որ վշտացնում լի, ծառեր են որ դետնի հետ դզվում են։ Ամպն ու լանդը գետին ասել են. Մովիեարն էնհնց խաղում ա, որ կ'ասես թե ուզում ա աշխարքը կրակ ասալ³⁷։

Ռիքսլիզայում նուրբպիս շատ կգտնենք ամպրոպի այնպիսի նկարագրերներ, որոնց մեջ մի կողմից՝ Ինդրան արեգակի և արշալույսի հետնեքքին հարակցութիւն ունի, լուսավորում է երկինքն ու երկիրը արեգակով, բերում արշալույսն ու արևը. մյուս կողմից՝ իր կայծակներով բոցավառում է երկնային ծովը։

«Մուրայի (արեգակի) անիվը նա (Ինդրա) զորութիւնամբ էր առաջ գլորում իրեն ցույց տալով, կալմիր բոցավառվելով ձայն է արձակում...»³⁸։

³⁴ A. Kuhn, Herashk. d. F., էք. 60։

³⁵ F. Schwartz, Poet. Natur., I, XIII, հտե. 7

³⁶ Է. յ. Ե. Der Ursprung der Mythologie, Berlin, 1863, էք. 88, հտե. 113։

³⁷ Աովաարդանց Տ., Լույ ժողովրդ. հեքիաթներ, Ն., էք. 40։

³⁸ Rigveda, II, 472, 9.

«Այս Հզոր Ինդրան Դուրս ցշեց ջրերի ալեծուսի Հոսանքը, վիշապա- սպակը մտ վարեց ծովը, տեսանելի դարձրեց արեգակը, գտաւ արշառը. մի գիշերվա ընթացքում կատարեց նա օրերի գործը»³⁰,

«Ենվում է թե չէ՝ ճաճանչներով փայլեցնում է դիդիմ ցուր (Ինդրան) աճրոզը պայծառ երկնակամարը. խարտեշածին առնում է դիդիմ գնեցը, դիդիմ կայծակն իր ձեռքը»⁴⁰,

«Փայլելով փնջը փայլեցրեց անփայլը. պայծառ բոց է արել նա ըստ կարգին շատ (արշալույսներ)»⁴¹,

«Նա (Ինդրան) գտել է գուճաճառաւտ անագով ծովը պայծառութիւնս մեջ բնակող Ռշասի (Ուշալույսի) առաջակողմում...»⁴²,

«Կայծակեաճարի, Ինդրա, ինչպես Ագնի կրակի բոցերը...»⁴³,
«Ինդրան արեգակեային ճառագայթներով նրդեհում է վնասատուին (վիշապին). ինչպես Ագնին (կրակը), երբ սա նվաճում է անտանները, աճել, մեծացել է նա»⁴⁴,

«Շենց որ երկնքում մի սիրուն ճառագայթ գրվեցաւ, արագ բացվե- լով ստորածվեցաւ խարտեշ կայծակը. երկաթյան խարտեշ առամով դարկեց վիշապին, ճաղարապտիկ բոցեր ունեց նա, որ խարտեշ (կայծակն) է մկտում»⁴⁵,

Բերենք ն Մահարճարատայից մի կտոր, որի մեջ երկնային կար- նածովի մեջ (հմմտ. մեր հանելուկի տողը՝ «Կաթնաղբյուրեն ջուր կը խմա») ամպերի ասրի շուրջ փաթաթվում է կայծակի վիշապը, որին եր- կու կողմից քաշում են աստվածները. «Վաստեհի օձը, մինչ իրեն տա- րուքնը քաշում էին, փշում էր իր բերանից մի Հոսանքով՝ կրակ, ծուխ և ցամի, որոնք բարձրանում էին վեր՝ ինչպես կայծակներով հղի ամպ... (ամպերի) ասրի շուրջը գոռում է ծովը, ինչպես մի ամպի խուլ որոտ- մունց կրակը ժածկեց հանկարծ սարը բոցերով և ծխով, նման մի սև ամպի, որից կայծակ կայծակի վրա ցած են թափվում... Ըն՛ աճա ան- մահ Ինդրան, ուղարկեց մի ամպ, որ սաստիկ անձրևով հանգցրեց ճըր- դիճը»⁴⁶:

Մենք հետո կտեսնենք, թե ինչպես մեր համատալիքով ամպուղի վիշապը քաշում կամ հանում են վեր փոթորիկ ժամանակ, Բերած օրի- նակներն արդեն պարզ ցույց են տալիս, որ ամպուղուի երևույթն՝ ըմբռն- վում է իբրև մի բոցավառում, հրդեհ երկնային կարմիր բոցեղեն ծովի

³⁰ Rigveda, II, 402, 2.

⁴⁰ Նույն տեղում, 509, 4:

⁴¹ Նույն տեղում, 592, 4:

⁴² Նույն տեղում, 670, 6:

⁴³ Նույն տեղում, 589, 7:

⁴⁴ Նույն տեղում, 680, 9:

⁴⁵ Նույն տեղում, 645, 4:

⁴⁶ F. Schwartz, Der Urspr. d. Myth., եր. 481:

մեջ: նույն կայծակի հրդեհն է նկարագրված և մեր Կրդի մեջ եղեգի բու-
ցափառումով:

Երկրի վրա կրակ վառելու, ավելի ճիշտ շփումով երկու փայտից
սրբազան կրակ հանելու գործողությունը նախնական հայացքով նմա-
նեցրած է սերելու, ծնելու գործողությունը: Վեղաներում ոչ միայն կրակ
հանեն իբրև ծնունդ է նկարագրված, այլ և երկու շփելու փայտերը,
որոնք նկարագրվում են իբրև մարդու մարմին, պաշտամունքի մեջ անձ-
նավորված իբրև հայր ու մայր են լուրջում և նրանցից առաջացած
կրակն իբրև որդի: Միումով սրբազան կրակ հանելու այս գործողությու-
նը համարվում է կայծակի նշան հույներին, հնդիկներին ու գերմաններին
մեջ, և հավատացել են, թե կայծակի կրակն ևս երկնքում նույն ձևով է
առաջացել: Սակայն, եթե մի կողմից երկրի վրա փայտեր շփելով սկրակ
վառելու գործողությունը սերելու, ծնելու գործողությանն էին նմանեց-
նում, մյուս կողմից և կայծակի կրակի բացավառումը երկնքում բույ-
սերից, կամ սկայծակի առաջանալը փոխակերպվում էր մի աստվածու-
թյան ծննդյան⁴⁷, և հասկապես կայծակի անձնավորում աստուծու, որ
երկնքի ու երկրի և երկնային ծովի ու բույսերի զավակ լինելով՝ ծնվում է
ամպրոպի քոցերի միջից:

Այսպես և մեր՝ երկնքի ու երկրի և ծովի որդի Վահագն իբրև կայ-
ծակի աստված ծնվում է եղեգնից քոցերի մեջ:

Վահագնի ծնունդը նկարագրված է իբրև վազել: Այս գիծն ևս իր
համապատասխանն ունի: Ինդրան ևս ծնվելուն պես, երկինք ու երկիր
կարմիր բացավառելով, վազում է Վրարային կամ թե վիշապին սպանելու
համար: Եվ վազելով լարում է Ինդրան իր սլազաններով (ձիերով), արագ
ավարի առնելով ջրերը աչ (հարավի) կողմից...⁴⁸, Դա կայծակի արա-
գութունն է, որից և Ինդրան ու իր ձիերը վազան կռումն են ստացել, և
Ինդրայի սովորական մակդիրներից է և արագ⁴⁹:

Նա հուր հեր ունէր,

Բոց ունէր մորուս,

Եւ ալկունքն էին արեգակունք:

Այս տողերի մեջ նկարագրված է ծնվող աստուծու կերպարանքը,
որ կատարելապես համապատասխան է ուրիշ ազգերի ամպրոպային աստ-
վածների, ինչպես՝ Ինդրայի և գերմանական թորի⁵⁰ կերպարանքին: Նախ՝
մեր ճորածին Վահագնը մի երեխա չէ, այլ սլառանեակ և խորենացու-

⁴⁷ A. Kuhn, *Herabk. d. F.*, էջ. 70, հան., 255:

⁴⁸ Rigveda, II, 555, 5.

⁴⁹ Վազել բառը Հայկ. լեզ. նոր բառաքոյի մեջ բացատրված է՝ վազել, վազա տեղով,
արշակել, լուծակել: Ի վերոյ դիմել, ալ և ուտելով, լուղալ: Վերջին իմաստի համար
հմտ. «Սովինուր լուղում է» աստվածը, Ինդրան ևս խաղում, պարում է, որից և
ստացել է խաղազու, պարող մակդիրը: Rigveda, II, 552, 3, 472, 7, 455, 4:

⁵⁰ W. Manhard, *German. Myth.*, էջ. 252.

մեռագիր վարիանտներից շատերի մեջ խաբարյալ պատանեակ: Ինդրան
ևս պատկերացվում է իբրև խարտյալ պատանի: Ըջի մեծ է նրանց զոհի
երին, վսեմ է հրզը, գուրզը՝ հաստ, որոնց թարեկամ է պատանյակն Ին-
դրա: Արդարև առանց կուփի իբ ուժով գանձը ձեռք է բերում այն հերոսը,
որին բարեկամ է պատանեակն Անդրանը⁵¹: Ե՛րև ինքզ առար ուրախու-
թյամբ, հին նախնիքներից՝ զոհողներից փառաբանվելով, ով Ինդրա,
ոսկինճր: զու առնում էս (և այժմ) ամին՝ ջո գովաբանությանն արժանի,
կատարյալ, գեղեցիկ ստացված, զու որ խաբարյալ էս ծննդից ի վերս⁵²:

Խարտյալ և արեգակնալյա են նաև Ինդրայի ձիերը, որոնք նույն-
պես ամպրոպն են պատկերացնում: Ե՛բեզ պետք է այստեղ բերեն խաբար-
յալունճրը, սոժա խմելու (արիտի տերեն) ցուլին: Ինդրա, քեզ արեգակնալ-
յաները⁵³, նրա կայծակը նույնպես խարտյալ և արեգակնալյանման է⁵⁴,
ինքն Ինդրան ևս արեգակնալյա է⁵⁵, նրան արեգակի նման⁵⁶: Հագնվում
է արեգակի գեղեցկությամբ, անձամբ հրեղեն է⁵⁷: Եվ թեպետ պատա-
նեակ, բայց մորուք տնի, ինքզես և մեր պատանյակ վաճազնը: Ե՛րեղ-
նամորուքը, ղեղնաները, կրկաթյան, սոժա խմողն արադ խմելով անճց
զորոթյամբ, հիանալի զամբիկների տերը պետք է ամեն փորձանքից
ազասե իր խարտյալներիս (ձիերին)⁵⁸:

Պատանյակ խարտյալ, հրեղեն, ոսկեհեր, թև հուր հեր, դեղնամո-
րուք, բոց մորուք, թի կարմրամորուք (ինչպիսին է թորը), արեգակնալ-
յա թև հրալյա (թոր), այդ անված է հենց կայծակի երևույթից, նրա
այլոզ, հրեղեն ու բոցեղեն, կամ բոցի ու հրի ոսկեզույն, կարմիր ու փայ-
լուն հատկություններից:

Այսպես տեսնում ենք, որ վաճազների երգի մեջ նրա ծննդյան և կեր-
պարանքի բոլոր հատկություններն ամբողջապես մի ամպրոպային առ-
տուժու՞ Ինդրայինն են: Բայց այդ դեռ ամենը չէ:

Ինդրան ծնվելուն պես բոցերի միջից վազում է ամպրոպի վերջապի
Ահիի (օձի) կամ Վրտրայի (ամպի, ամպի անձնավորումի, որ հաճախ
ներկայանում է իբրև վիշապ) դեմ կուվելու, և կուվելով հաղթում ու սպա-
նում է նրան: Նույնն անում է և մեր վաճազնը: Խորենացին երգի շարու-
նակության միայն համառոտ թուվանդակությունն է մեջ բերել, ասելով.
Ե՛ձեա ոչոյ (ձննդյան նկարագրերն ամբողջ հետո) և ընդ վիշապաց ասէին
չերգին կուուել նա և յաղթել: Երբ մի անգամ իմանանք, թի ինչ են վի-
շապները, այն ժամանակ կարող ենք հավաստի ասել, որ բնական երե-

⁵¹ Rigveda, II, 450, 4, 499, 7, 493, 3.

⁵² Նույն տեղում, 945, 5:

⁵³ Նույն տեղում, 461, 1, 446, 1—2:

⁵⁴ Նույն տեղում, 457, 8:

⁵⁵ Նույն տեղում, 817:

⁵⁶ Նույն տեղում, 963:

⁵⁷ Նույն տեղում, 542, 12:

⁵⁸ Նույն տեղում, 865, 6:

վրայի անձնավորումն Վահագնի կոթիւր ոչ թե երկրի վրա օձերի դեմ է եղել, այլ իրոք իրրև օգերևութի, ամպրոպային կոթիւ է ըմբռնվել, ինչպէս Բնորայի կոթիւն է: Մի հայացք ու համատեք, որ մինչև վերջերս էլ կենդանի էր մեր ժողովրդի մեջ:

81. Վիշապ և ամպրոպային կոթիւ:— Առասպելաբանության մեջ վիշապը փոթորկի, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է, հենց ինքը փոթորկիւր, պտուտահողմն ու ամպը, — մի շար ոգի, որ սովորաբար օձի կերպարանքով է ներկայանում, բայց և զանազան կերպարանքներ է ընդունում: Նրա դեմ կռուում է նույն օլերևույթի ցարի անձնավորումը, ամպրոպային աստվածը, որը նույնպէս զանազան կերպարանքներով է պատկերանում:

Ինչ է վիշապը հայերի մեջ:— Վիշապն աստը, որ ժողովրդի մեջ նաև եռլապա է արտասանվում, հավանորեն իրանացիներից է անցել հայերին և պարսից ամպրոպային օձի՝ Աօխի մակդիրն է՞ն, նա՛ արդարև, ամեն ինչ որ հնումը և այժմ հայերի մեջ պատմվում է վիշապի մասին, ներկայացնում է նրան իրրև փոթորկի, ամպրոպի անձնավորում: Ետքան, հարկաւ, մուլն է. բայց բախկան է, որ մեր զրույցները համեմատենք ուրիշ ազգերի զրույցների հետ, և մեր վիշապի ամպրոպային բնավորութիւնը կպարզվի:

Ամենից առաջ քերեք մի հատված, որ Ալիշանը⁸⁰ վերագրում է Անանիա Եփրատացուն կամ մի երկրի հին բնախոսի: ԵՏազազ փոթորկի հողմոյ, գոր ի բաբազանս և յառասպելիս Վիշապ Գանել ասեն. փոթորկի հողմ է՝ որ ի յերկրէ ի վեր հլանէ, ուր վիշապ ինչ հատեալ ինչի ի խոտչացանալ տեղեաց ինչ, որ ի փող անկեալ ընդ երակս երկրի, և ել ինչ գտեալ՝ միատողով ի վեր դիմեալ քանծրացեալ ամպով ահագին զզրդիւնս առնէ. մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել, և պէմս խելի, և զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկնիւ յերկիր. և այս է զոր վիշապ Գանել ասեն: Նույն տեղում բերված է և Վանական վարդապետից. ԵՏայլ և այլ կողմանց հողմ շնչէ և ընդ իրար դիպի, այն փոթորկի ասէ. թէ ոչ յարթնն պիւրար՝ տլորին ընդ իրար, և փ վեր հլանեն. ախմարք զայն տեսեալ՝ վիշապ կարծեն կամ այլ ինչ: Նույն գրքի մեջ եր. 153 բերված է փոթորկի մասին Սարկապազ վարդապետից. ԵԱռասպելական ստեփանն ունկն դենլ և հավատալ մի երբեք յանձն առնուցոս վիշապ զնա անուանողաց: և

Այսպէս, մեր քրաջողանքներն և քառասպելներն մեջ վիշապը ներկայանում է պարզապէս իրրև փոթորկի, պտուտահողմի, ինչպէս և փոթորկալից ամպի անձնավորում, և միանգամայն իբրև փոթորկի ու պտուտահողմ՝ օթանձրացեալ ամպով: և նա նման է հունական Տիփոնին,

⁸⁰ H. Hübschmann, Atm. Gram., 1, 248.

80 «Հին համարք, եր. 88. Ման. 1.

որ ինչպես տեսանք, ձշանակում է պտուտահողմ, փոթորիկ կայծակներով՝ ու արտամունքով, և միանգամայն մի առասպելական էակ է օձանման, մի վիշապ, որ սիր հրեզն շնչով և ամպերի ծխով կամ շողիով լցնում է երկինքը՝ և Կբուն ամպրոպային վիշապ է ներկայանում: Նա ամբողջ իրեն երկրի որդի է հրենում, մերթ երկնային դիցուհի Հերայի որդի... առավելապես սակայն երկրածին է, ինչպես բուրբ ամպրոպային էակները՝ դիգանտներն ու վիշապների ամբողջ սերունդը, որ երկնքի դեմ են ելնում, որովհետև երկրից, այսինքն՝ հորիզոնի վրա են բարձրանում, ինչպես դեռ ասում ենք, Եփոթորիկ է բարձրանում⁶¹:

Այս պայամովով վիշապը՝ Տիփոնը, որից ծնունդ են առնում բուրբ լարհորմերը, Հեզիոտի Քնոսոսիայի մեշակարագրած է իրեն հարչորպիսանի օձ, որի աչքերից ու զլուխներից բոցեղեն ճառագայթներ են ելնում, հայացքն այրում է կրակի պես, հանում է զանազան հրաշալի ձայներ, մերթ կատաղած ցուլի նման քառալում է խուլ, մերթ առուծի նման մռնում, մերթ շների նման հալում կամ սուր սուլոցներ հանում⁶², Այսպես և մեր վիշապը, իրեն փոթորկի կամ ամպի էակ, Եզնիկի մեշ Եկեղծս ի կեզծս է լինում, այսինքն զանազան կերպարանքներ է ընդունում, մի անգամ օձան է հրենում, մյուս անգամ՝ մարդակերպ, երբեմն իբրև ուղտ ու շորիկամ այլ գրաստ, և երբեմն իբրև որսի ետևից ընկած ձիավոր: Այլ և վիշապի մասին պատմում է Եզնիկը, թե կայերից ցորենը դողանում է և գրաստի վրա քարձած կամ ինքը գրաստ դարձած տանում է: Նույնը պատմվում է շատ ազգերի գրույցների մեշ վիշապի մասին, իբրև փոթորկի կամ ամպրոպի անձնավորումի⁶³, կամ դերմանացիների մեշ տրուի մասին, որ պտուտահողմի անձնավորումն է⁶⁴:

Միջին դարերում արդեն վիշապի տեղ աստանան է անցնում, և Եփոթորկի մեշ իշխող սատանայի պատկերացումը պտուտահողմի վրա կապված⁶⁵ դեռ մնում է շատ ազգերի, որոնց թվում և հայերի մեշ: Մեր մոլոպիտոզը պտուտահողմն ու վիշապ հանելն, երբ փոքր է, այժմ կոչում է Եսատանի քամի⁶⁶:

Այնուհետև վիշապների մասին պատմվում է մեզնում, թե զգտոմականս անդէոց ծծենք⁶⁷, կամ կովերի կաթը ծծում են, և թե վիշապների բերանից թունավոր շոգի է դուրս գալիս, որ վնասում է պանսուններին ու մարդկանց⁶⁸, Այս դեռն ևս ուրիշ ազգերի մեշ փոթորկի վի-

⁶¹ F. Schwartz, Urspr. der Myth; էք. 20:

⁶² Նույն տեղում, էք. 39, հան.

⁶³ F. Schwartz, Poet. Anschauung, II, 89.

⁶⁴ Manhardt, Der Baumkultus, էք. 89, 157, հան., Նույն, Antiké Wald-und Feldkulte, էք 64. Latzner, Das Ratsel der Sphtox II, 275, 281.

⁶⁵ F. Schwartz, Urspr. der Myth., էք. 30.

⁶⁶ Ալիլան, Հին Հավատք, էք. 104:

⁶⁷ Հմմտ. Եզնիկ, էք. 107.

շապի, կամ պտուտահողմի անձնավորումի մասին են պատմվում⁶⁸, Այսպես նաև թե մեր և թե ուրիշ ազգերի գրույցների մեջ վիշապների քնակվելը բարձր սարերի վրա և քարայրների մեջ՝ առնված է պտուտահողմի նրնույթից և ամպերի հատկութունից:

Քողնում ենք վիշապի մասին պատմված ուրիշ գրույցները: Թերածներից արգեն պարզ երևում է, որ վիշապը մեզնում ևս փոթորկի, պտուտահողմի կամ փոթորկալից ամպի անձնավորումն է: Այդ առասպելներից մեզ համար արժեք ունի «վիշապ հաճելը», կամ «վիշապի վերաճելը երկրից երկինք», ինչպես գրում է Վահրամ վարդապետը⁶⁹, Դա ամպրոպային կոխվն է: Տեսանք, թե ինչպես հունական առասպելի մեջ Տիփոնն ու իր գիգանտները երկրից վերանում են երկինքը: Նրանք վերանում են հատկապես ամպրոպային Ջևսի դեմ կռվելու, որ և իր կալթակներով խորտակում է ու ցած գլորում նրանց ու դնում հրաբխային լեռների տակ: Գերմանների մեջ ևս Որոտը (Donner) կամ Քուրը հալածում է պտուտահողմի անձնավորումներին տրոլներին և ուրիշներին⁷⁰, և ճևսի կոխվը Տիփոնի դեմ նույնն է, փնէ որ նրան համապատասխանող գերման գրույցի մեջ Քուրի թշնամութունը տրոլներին դեմ, Որոտները վալդայր-ների (Waldweiber), րեսերի (Riesen) և ուրիշների դեմ⁷¹:

Բայց ի՞նչ է այդ ամպրոպային կոխվը— Վիշապը, պտուտահողմի կամ ամպրոպի շար անձնավորումը, իր ընկեր շար ոգիների հետ, իբրև հողմ թփանձրացնալ ամպով՝ բարձրանում է, արեգակի լույսի երեսը կտրում, կամ փոթորկի մեջ հարձակվում է արեգակի վրա, որ իբրև գեղեցիկ աղբյուր է անձնավորում, ամպրոպային ամենազոր աստուծու քույրը կամ կինը. ուզում է կուլ տալ կամ առևանգել նրան, և հափշտակում է նրան⁷². կամ ուրիշ առասպելներով այդ ոգին երկնային անձրևարեք ամպերի, ջրերի կամ ծովի առաջը կտրում է և վայր հոսելն արգելում, նրանց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուրգեր կանգնեցնելով: Բայց այդ միջոցին ահա ծնվում է փոթորկի կամ ամպրոպի աստվածը, որ մինևույն ոգերնույթի բարի անձնավորումն է, մի գեղեցիկ պատանյակ հրեղեն մազերով, ինչպես հնդկների մեջ Ինդրան, երբեմն և Ագնին: Նա կայծակներով ու որոտմունքով, Մարուտների (հողմերի անձնավորում աստվածներ) հետ միասին կռվում է վիշապի և նրա շար ոգիների դեմ, արձակում է իր հրեղեն նետերը, խորտակում նրա բուրգերը կամ լեռները, սպանում է վիշապին, կամ փախցնում, կամ բռնում, շղթայում, կամ վեր հանում, բարձրացնում է նրան ու ցած գլորում փշրում և այլն. ազատում

⁶⁸ *Manhardt*, German. Mythen, էր. 48. նույն, Antike Wald-und Feldkulte էր. 103, *Schwartz*, Poet. Natur., II, 164. նույն, Urspr. d. Myth. 30, 31.

⁶⁹ Այլշոն, Հին հավատք, էր. 172. «Յետով մարդիկ սեռեսալ են զի վիշապ վերանալը յերկրէ յերկինք»:

⁷⁰ *Manhardt*, Baumkultus, էր. 140.

⁷¹ նույն, Ant. Wald—u. Feldk., էր. 102:

⁷² *F. Schwartz*, Indogermantischer Volksglaube, էր. 112:

է գնրված արեգակը, լուսավորում երկիրը և վայր է հասցնում ծովի ջրերը:

Այսպես և մեր ժողովրդական զրույցների մեջ ամեն վիշապըս հասածու է արեգակը. նա սշարոցս հետ փոթորկի ժամանակ երկինք է բարձրանում՝ արեին, որ փերն ազջիկ է պատկերանում, կուլ տայու կամ նրա դեմ հակառակելու, որ մարդիկ նրա սլուչս երեսուր լսեսնեն: Բայց Գարբիել հրեշտակը, ուրիշ հրեշտակների հետ նկնում է նրանց դեմ և կոտում: Որտե՞ն այդ կովի ժխորն է, փայլակը Գարբիելի թրի փայլքը, կայծակը նրա նետը և ծիածանը նրա աղեղը⁷³: Նույն առասպելն ուրիշ ձևով պատմվում է, թե թեալվոր վիշապը, մեր մեծանում ի, վտանգավոր է դասնում: Բայց այդ միջոցին հրեշտակները նրան երկիրից վեր են հանում փոթորկի ժամանակ, վիշապը կոտում է նրանց հետ, հուր շնչում և բար փռում երկրի վրա: Կովից առաջանում է փոթորկի շառայունը: Հրեշտակները շարունակ ծծե՞նով վեր են հանում նրան, մինչև արևի ժառ, որի կրակն այրում ու մոխիր է դարձնում նրան և մոխիրը թափվում է երկրի վրա, կամ երկնքի թարձրությունից թողնում են, որ ընկնի գետին ու մանր-մանր փշրվի⁷⁴:

Եւտ պարզ է, որ Հրեղեն Գարբիել հրեշտակն իր կայծակով և աղեղով ամպրոպային կովի մեջ՝ փոխանակել է քրիստոնեութան ժամանակ հեթանոսական ամպրոպային աստծուն: Հրեղեն պատանյակ Վահագնի կոխմն ևս վիշապների դեմ իրքն այսպիսի ամպրոպային կոխվ պիտի լուրբընված լինի, քանի որ մի կողմից նրա թշնամի վիշապն ամպրոպի կամ փոթորկի անձնավորումն է, իսկ մյուս կողմից՝ Վահագն ամպրոպային աստծու հատկություններն ունի իր ձրգի մեջ: Թե իրոք այդպես էլ եղել է, այսինքն Վահագնի կոխվյ վիշապների դեմ մեր հին ու նոր ժողովրդական հավատալիքի համեմատ ամպրոպային կոխվ է եղել, այդ ցույց է տալիս նաև նրա սվիշապաքաղ ժականունը:

82. Վիշապաքաղ:— Ի՞նչ է նշանակում Վահագնի այս մակդիրը, որ կա Աղաթանգեղոսի մեջ: Անշուշտ, ոչ վիշապ ու քաղ, ինչպես թարգմանում են կամ րացատրել են ուզում ոմանց⁷⁵, քանի որ ավանդված կա Վահագնի կոխվյ վիշապների դեմ. րայց և ոչ սվիշապապանան կամ սվիշապ խեղդող⁷⁶, ինչպես թարգմանում են ըստ Աղաթանգեղոսի հունարեն թարգմանություն: Ըստ իմաստի, անշուշտ, ուղիղ վ՛ այս վերջինը, զի Վահագն հաղթում և սպանում է վիշապներին, և այդ սվիշապաքաղ ժակդիրն ապառ թարգմանություն է այդ աստծու ԵՎահագնա (= Վերթրազ-

⁷³ Սրվմեմյոնեց, Գրոց-րոց, եր. 109, «Ազգագրական հանրեա», II, եր. 220.

⁷⁴ Նույն տեղում, եր. 92, «Ազգագրական հանրեա», I, եր. 251. Հմմտ.

M. Abeghian, D. arm. Volks Glaube, էր. 77—82:

⁷⁵ Fustl, Iranisches Namenbuch, Marburg, 1895, Աիշուճ, ին հ-գոթք, էր. 183, 173:

⁷⁶ H. Hübnermann, Zur arm. Gr., 76. H. Gelzer, Zur arm., Göttelehre, էր. 164:

նա = վիշապասպան) անվան, Քայց ավիշապաքաղչ քառք բառացի ոչ վիշապ սպանողն է նշանակում և ոչ Տիտղոսը, քանի որ քաղելն քայի քաղչն արմատն այդ իմաստները չունի:

Քաղել բառը Հայկ. լեզվի նոր բառարքի մեջ բացատրված է ի միջի այլոց. «ժողովել՝ խլել, հանել»⁷⁷: Իսկ այդ քայի քաղչն արմատը բացատրված է. «Քաղելի խոտ անլիտան և վնասակարն: Այս իմաստով քաղչն բառը գործ է ածվում և այժմ, որից և քաղադրյալ քայր՝ քաղը տալ, կամ քաղհանել, որ է՝ ցանքի միջից վնասակար խոտերը կտրել հանել, ժողովել: Ավիշի գործածական է նույն իմաստով կրկնված քաղհան(ք) բառը: Այս իմաստի վրա պետք է ափելացնել և ժողովողի մեջ գործածական վեր քաղել ձևը, որ նշանակում է հանել, վերացնել, վերցնել, և գործ է ածվում նաև հմայութիան մեջ, որինսկ ավայր վեր քաղելն: Այսպես՝ ասում են և սեմայ ու լանդը վեր է քաղվում՝ այսինքն՝ քաշվում, վերանում, քարծրանում է: Քաղելն քայի այս նշանակութունն անշուշտ նոր չէ, քանի որ նույն վեր հանելու, վերցնելու, քարծրացնելով ժողովելու իմաստը կա արդեն և միայն քաղելն քաղի մեջ, որինսկ՝ Քաղելի զվարանս ի ներքո սեղանոյս (Դատ. Ա. 7) Այսպես և Տեսակարաղչ (հասկերը դետեից վերցնելով ժողովող), ասրմանաքաղչ քառերի և քաղել զոջիւ ձևի մեջ. նույնպես և Քաղելով գործնացես զտապանն (Մենդ. Զ. 16), որ արդեն Հայկ. լեզ. նոր բառարքի մեջ, համեմատած հունարեն ὁ οἰκουνη γαρονος հետ, թարգմանած է՝ վերածողովելով:

Արդ՝ վիշապափաղ քառացի նշանակում է վիշապ հաճող, վիշապ վեր քաղող կամ ցածից վերցնելով ժողովող, այլև վիշապ քաղհաճող, այսինքն, ինչպես քաղհանի ժամանակ, վնասակար վիշապները հանող, վերցնողը: Որ նշանակութունն էլ առնելու լինենք, ավիշապաքաղչ բառն արտահայտում է մեր հին ու նոր ըմբռնումը, թե վիշապները երկրից քաղհանելով, հանվում, վերցվում, վերանում են: Ըզնիկն այդ իմաստը հայտնում է քառնայլ քայով. «Ըմբէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն: Ուրիշներն մեջ նույն երևութն, ինչպես տեսանք, քառնայլ քայի համանիշ հանել քայով է արտահայտված. ավիշապ հանելն, կամ վերահալ քայով՝ ավիշապ վերանայլ չերկրէ չերկինս: Սրվանձտլանցի մեջ քաշվել, վեր քաշիլ քայով է ասված նույնը. ավիշապը լեռներն երկինք կը կաշվիս, կամ Տհրեշտակները վեր կը քաշեն վիշապները սակայն ոչ բոլոր վիշապները, այլ նրանց միջից առնելով, մի տեսակ քաղհանելով, այն-

77 Հանել նշանակութամբ. «Են քաղել զհողիս իշխանաց (Սաղմ. Ըն. 12). «Կայր ի տարակուսի և քաղելն ողիք ետրա» (Յովհան. Գ. 8). Հայկ. լեզ. նոր բառարքի մեջ նաև սեմայ. ողի ետրա քաղիլ ի նմանէն. «Գիրգս արկանեն և նա քաղել զլուսն իւրս՝ նույն իմաստով հանել քայի հետ կրկնված. «Քաղել հանել զլուսն ետրա» (Ծածր. պատմ. 3), նոյնի մեջ (Ա. Յնդ. հր. 9). «Ջի կուսս ի խորհուրդ զայնսինկ՝ որոց զոջոն ձեր ի ձէլք քաղեալ հանեալ է զանպականց յապականութիւնս: Եղիկ (Եր. 253). «Ե՛ պատգամաց Լողոյն սրբոյ քաղ հանել. զկէս աւետարանի ընտրել առնուլ՝ եւ զկէս իրն խոտան ի բաց թողուլս»

պիտինեբը, որոնք հազար տարեկան են, սարսփեկի մեծացած և վտանգավոր են, և կարող են սերկիրը կոչ տալ⁷⁸։ Իսկ ավելի հին ժամանակ նույն վիշապ հանելն արտահայտված է քաղել բառով, որ նույն իմաստն ունի, ինչ որ քառնալ, վերցնել, վերացնել, հանել, վեր քաղել և այլն։

Եզրակացուցիչունը պարզ է։ Եվիշապաքաղչ մակդիրը ցույց է տալիս, որ մեր հին հավատքի մեջ Վահագնի կոփվը վիշապների դեմ ըմբռնված է վերքն սվիշապ հանելը, որին, Եզնիկի ժամանակից մինչև վերջերս հավատում էր մեր ժողովուրդը։ Իսկ սվիշապ հանելը, ինչպես տեսանք, ամպրոպային կոփվն չէ, որ ամպրոպային աստվածը մղում է փոթորկի մեջ վիշապի դեմ, որ, վնջպես ուրիշ ազգերի, այդպես և մեր հին ու նոր հավատալիքով՝ ամպրոպի, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է։ Եվ ի՞նչ է՝ յեռներեն վիշապներուն երկինք քաղվելը կամ սվիշապաքաղուցիունը, եթե ոչ մի առասպելական արտահայտություն միայն՝ փոխանակ սովորական ասացվածի, թե ասպ ու լանգը վեր է քաղվում լեռների վրա։

88. Վահագն-Վերեթրագնա։— Վահագնի պաշտամովնքի՝ իրանացիներին հայերին անցած լինելը և նրա անվան նույն լինելը իրանական հաղթության աստված Վերեթրագնայի անվան հետ՝ վաղուց ասացուցված է⁷⁹։ Արդ, Վերեթրագնան բացատրում են, թե սկզբնապես ամպրոպային աստվածություն է եղել⁸⁰։ Թեպետև պարսից Վերեթրագնայի համար հիշատակված շկա վիշապների դեմ կոփվը, որ հատուկ է բոլոր ամպրոպային աստվածներին, զբայց և այնպես նա ճշտելով պահպանել է հին Վարահան (Վարա սպանոզ, վիշապասպան) աստվածների բոլոր առասպելական և ֆիզիկական գծերը⁸¹, և սկզբնապես ամպրոպային աստված է եղել Վերեթրագնան, որի անունն իսկ ինչպես մակդիրն է՝ Վարահան, փույլ ձևով ձայնավորներից առաջ՝ Վարագհա⁸²։

Պարսից Վերեթրագնան, իբրև ամպրոպային աստված, ներկայանում է բազմատեսակ կերպարանքներով. իբրև պինդ քալի, իբրև ցուլ, ձի, ուղտ, տասնուհինգ տարեկան գեղեցիկ, փայլուն պատանեակ, այլև իբրև թռչուն, վարազ, քաղ և տղամարդ։ Նույնպես և Տիստրիան, իրանական ամպրոպային աստվածը, երևում է գեղեցիկ պատանեակի, տղառի և ձիու՝ վերպարանքով, Ինչդրան նրեում է հաճախ իբրև ցուլ։ Ճուրի կոփվը վիշապի հետ փոթորկի ժամանակ կա և գերմանական առասպելաբան-

⁷⁸ Մովսեսյանց, Գրոց-բրոց, էջ. 92, հտե.:

⁷⁹ P. de Lagarde, Armenische Studien, Göttingen, 1877, էջ. 141. H. Hübschmann, Arm. Gramm., I, էջ. 76, H. Gelzer, Zur arm. Götterl., էջ. 104, հտե.:

⁸⁰ Pott, Etymologische Forschungen, II, 3, էջ. 557. Spiegel, Iran. Alterth., II, էջ. 98:

⁸¹ Darmesteter, Ormazd et Abriman, էջ. 120:

⁸² Grassman, Wörterbuch zum Rigveda.

Տուօթյան մեջ⁸⁴, Քն մեր հին հավատքի մեջ ևս ամպրոպային աստվածը զանազան կերպարանքներով երևեցած պիտի լինի, անհավանական չէ այդ, քանի որ ամպրոպային աստվածներն այդպես են երևում, մանավանդ որ մեր հին ու նոր հավատալիքների մեջ գտնում ենք ամպրոպային էակների համար նույն կերպարանքները, Ամպրոպային վիշապի իբրև ուլտ, ծիավոր կամ իլ, զորի երևալը տեսել ենք վերևում և թե ինչպես որոտացող էակը պատկերանում է իբրև Բավի, կով, և որ զլիսավորն է, իզնիկը գրում է. «Եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելով՝ այլ ծածուկ զորովթեամբ իւրք...» Այստեղից պարզ երևում է, որ սվիշապ հանողը կամ սվիշապաքաղ, այսինքն վիշապ բարձրացնող էակը ներկայացել է և եզան կերպարանքով։ Սակայն վիշապաքաղ Վահագնի համար հիշատակված է միայն շհրեղեն, փայլուն պատանյակն կերպարանք։

84—85*. Վահագն—Հերակլես։— Աստվածաշնչի մեջ Հերակլը թարգմանված է Վահագն, նույնիսկ Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ Վահագնը նույնացված է Հերակլի հետ։ Խոսելով աստվածների արձանների մասին՝ Խորենացին գրում է. «Ըն դտեալ (Արտաղիսի) յԱսիայ պղնձածալլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱյոդոնի՝ տալ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիքս Զար առեայ քրմապետացն, որ էին յազգէն Վահոճնեաց՝ զԱյոդոնին և զԱրտեմիդայն կանգնեցն յԱրմաւիք. փոկ զՀերակլեայն զառնապատկերն, ... զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարոն, յԻւրեանց սեպհական զիւղն յԱշտիշատն (Ք. ժր.)։ Երայց զԱփրոզիտեայ զպատկերն, իբրև Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց (Տիգրան) կտնգնել Յաշտից տեղիս» (Ք. ժր.)։

Բացի այդ՝ Խորենացին երգի վերջի մասի բովանդակութունը, — Վահագնի կոնիլը վիշապների հետ և հաղթութունը, — բերելուց հետո՝ տվելացնում է. «Ըն կարի իմն նմանազոյնս զՀերակլեայն նահատակութիւնս նմա երգէին»։

Քն Վահագնի մասին, բացի վիշապների դժմ կովից, և ուրիշ նահատակութիւններ, այսինքն քաջագործութիւններ են պատմել, անհավատալի չէ այդ։ Վերևում (28. սՎահագն աստված) արդեն տեսանք դրանցից մեկը՝ Բարշամի հարզը զողանալը, որից և Հարզողի ճանապարհն է գոյացել, որով անցել է Վահագն⁸⁴, նվ հննց կաթին Սրի ծագումը

⁸⁴ E. H. Meyer, Germanische Mythologie, ք. 97, 104։

* Բնագրի մեջ սխալմամբ բաց է թողնված 85 թիվը. 84-ից հետո գրված է 86. Հեղինակի համարակալումը յնախտելու համար՝ ուլյու համավածը դարձրել ենք 84—85 (Մանթ, խմբ.)։

⁸⁵ Այս աստվածը զամբում էր նույն մեր դրիւմ. Վարդգես կտն է, որ ժողովականով արիշ արարածաց աստված իր մշակները զրկեր, մեր երկրի աստուծո կալնն հարզերը զոյցեր... հարզը թափեր երկնից երևոն ու մնացեր։ Սրվածալտեց, Գրոց-գրոց. ք. 108.

հույնների մեջ էլ, թեպետև ուրիշ ձևով, Հերակլի մանկութիւնն հետ է կապւ-
ված, և կամ դա այն ճանապարհն է, որով Հերակլ անցնում է Քերիո-
նեսի արշաւը հափշտակած:

Հերակլի նահատակութիւնները կամ առապելները շատ բազմազան
տարբերից են կազմված. դրանցից շատերը գտնվում են զանազան ազ-
գերի մեջ, որոնց թվում և իրանացիներն: Իրանական Կերեսասպայի
արարքներն, օրինակ, ահապին վիշապ Արուար օձին սպանելը, համ-
մատվում են Հերակլի արարքների հետ⁸⁵, և մուսիսկ Տրիտա, Կերեսաս-
պա, Հերակլես, Քոո, Ինգրա և տւիշները, իբրև կայծակի Հերոսներ
կամ աստվածներ, իրենց առապելներով հավասարվում են իրար⁸⁶: Հե-
րակլեսի արարքներից մեկը, որով նա սպանում է հսկա Քերիոնեսի ար-
բաթ (ամպերի հետը) պահպանող շունը, և յիսայն նույն Ինգրայի
քաջագործութիւնն են համարում, այլև նույնիսկ շան անունը՝ Օրթ-
րոս օտուգարանորին նույն է, ինչ որ Ինգրայի ֆղնամի Վրտրա-ն⁸⁷:

Արդ՝ եթէ Հերակլեսը ներկայանում է փրբև կայծակի Հերոս, շատ
բնական է, որ հելլենիստական ժամանակներում, երբ հունական ազդե-
ցութիւն տակ սոնդական աստվածները ոչ միայն հայերի, այլև ուրիշ-
ների մեջ հունական աստվածների հետ նույնանում էին և հունական ա-
նուններով կոչվում, մեր Վահագն հավասար դասելը Հերակլին, ինչպետ
և եղել է իրոք: Այդ տեսքը միակը չէ պատմութիւն մեջ, Համանման
մտածողութիւն մեր գերմանական ամպրոպային աստված Քոոը կամ
Դոնարը հոմայական ազդեցութիւն տակ նույնացել է Հերկուլեսի հետ⁸⁸:
Անշուշտ առապելների նմանութիւն մը պետք է բացատրել դրանց և վա-
հագնի նույնացումը Հերակլի հետ: Այդ նույնացումները, որ հելլենիս-
տական կամ հոմայական ժամանակներում եղել են զանազան ազգերի
աստվածների մեջ, լոկ արտաքին ու պատահական չեն և ոչ էլ միշտ շղ-
բական մերձեցում, այլ որևէ ներքին նմանութիւն վրա հիմնված: Այդ
նույնացումները պետք է բացատրել նրանց առապելների ու պաշտա-
մունքի նմանութիւն մը: Արտաքին և պատահական չէ, որ Արամազդը Դիո-
սի հետ է նույնացել, Միհրը՝ Հեփեստոսի, Անահիտն՝ Արտեմիսի, Աստ-
ղիկն՝ Ափրոդիտեի, Տիրն Ապոլոնի և Վահագնը՝ Հերակլեսի հետ: Նմա-
նութիւնների վրա կատարված այդ նույնացումներն ավելի բան էլ են
ցույց տալիս. ԵԱյս կատարելագոյն հաստատուն... համապատասխանու-
թյունը եզրակացնել է տալիս, որ վաղուց ի վեր գործածութիւն մեջ է
եղել այն, և թե մատենագիրները ժողովրդի մեջ իշխող սովորութիւնից
են փոխ առել այն⁸⁹:

⁸⁵ Spiegel, Iran. Alterth. I, 501, 4-5.

⁸⁶ E. H. Meyer, Indogerm. Myth. II, 588, 4-5.

⁸⁷ Kuhn, Zeitschrift f. vgl. Sprachfor., 180:

⁸⁸ Manhardt, Germ. Mythol. 49. 285.

E. H. Meyer, Germ. Mythol. 49. 302.

⁸⁹ H. Gelzer, Zur arm. Götterl. 49. 187:

Ամփոփենք մեր հզրակացութիւնը Վահագնի և նրա երգի մասին:

Վահագն ըստ ամենայնի ամպրոպային կամ կայծակի աստված է, համապատասխան Ինդրային, կայծակի աստված Աղնիին, գերմանական Քոոփն, պարսից Վերեթրագնային, Տիստրիային և այլն:

Վահագն իբրև ամպրոպային աստված ծնունդ է նրկնքի ու երկրի, երկնային ծիրանի (ամպերի) ծովի և նրկնային բույսերի՝ հատկապես կարմիր անոթների, որ (ամպերի) ծովի մեջ բացառաբար է աչք կայծակի աստուծու ծննդան ժամանակ: Իբրև ամպրոպի աստված՝ նա հրամազ, բոցամիտրոք, արեգակնաշյա, խարտյաջ պատանյակ է:

Իբրև ամպրոպի աստված ծննդուն պես՝ նա վազում է վիշապի կամ վիշապների դեմ կռվելու: Նրա ծնունդն ու արտաքինն ամբողջապես քնական օգերևութից են վերցրած: Կռվն ևս օգերևութի ամպրոպային կռիվն է, քանի որ նրա թշնամի վիշապն ամպրոպային օղևերութի անձնավորումն է: Նույնը հաստատվում է և ավիշապաքաղա ժակգրով, որ ազատ թարգմանութիւն է «Վահագն-Վերեթրագնա» (= վիշապասպան) անվան և ցույց է տալիս, թե Վահագնի կռիվը վիշապների դեմ մեր ժողովրդի մեջ հին և նոր ժամանակներում հայտնի ավիշապ հանելու է: Իբրև ամպրոպի աստված նա քաջ մակդիրն է կրում և քաշութիւն շնորհում, քանի որ ամպրոպային աստվածներն, ինչպես Ինդրան, ամենազորն են, ուժեղ ու քաշ: Նա իբրև ամպրոպի աստված հելլենիստական ժամանակներում նույնացել է Հերակլեսի հետ, այլև մերձեցել է Ապոլոնին, քանի որ վերջինս էլ ամպրոպային հատկութիւններ ունի: Մեր Վահագնի մեջ ևս տեսել են արեգակն, որովհետև ամպրոպային և արեգակնային երևութիւնների անձնավորումները, քնութիւն մեջ հղած նմանութիւն պատճառով, շատ ազգերի առասպելների մեջ իրար նման են և նույնիսկ փոխանակում են միմյանց կամ իրար տեղ անցնում:

Վահագնի երգը, որ բովանդակում է այս հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստվածութիւն մասին, հայոց հնագույն ավանդական երգերից մեկն է, թեպետև ուշ ժամանակ գրի առնված:

Այս երգի ձևի մասին հետո:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՎԻՊԱՍԱՆՔ

Ա

ԱՌԱՍՊԵԼԱԽԱՌՆ ՎԵՊ

86. Վեպ, գրույց, վիպասանք:— Առասպելից տարբեր ծագում ունի հրկրորդ վիպական տեսակը—աշխնդական վեպը (կայոսը): Մինչ առասպելներն ունեն ալիքի դիցաբանական քնափորութիւն, շատ քիչ պատմական ազդեցութիւն են կրած և հաճախ փոխառութիւն են ուրիշներէց, — վեպն, ընդհակառակն, իր ծագումով, ընդհանուր առմամբ, քնիկ, ինքնուրույն ատեղծագործութիւնն է: Դա պատմական քանաստեղծութիւնն է: Դրա նյութը պատմութիւնն է, այս բառն ընդարձակ մտքով առած, լինի իսկական, թե կեղծ պատմութիւն: Եվ մեր Վեպը բարձր հնումն հենց այդ ընդարձակ նշանակութիւնն էլ ունեցել է, ինչպես շատ ճիշտ բացատրված է ռուսական լեզվի նոր բառագրի մէջ: Վեպ է, սէին գրույց՝ իրական կամ ստալոգ. պատմութիւն՝ արձակ կամ քերթողական. լուր՝ բանիւ կամ գրով: Մ. Խորենացին, որ մեր առաջին հին վեպի միակ աղբյուրն է, այդ բարձր գործածել է միշտ գրավոր պատմական հիշատակարանների համար: Նրա դրքի մեջ ավելի նշանակում է սպասմութիւն, սվիպագրել՝ սպասագրել, սպասմել, իսկ սվիպագիրը սպասագիր: Ինչպես հետո կտեսնենք, սվիպասունք բառն էլ նշանակում է պատմութիւն ասող:

Ապա գրույց բառն նա, որ այժմ նշանակում է ընդհանրապես բերանացի պատմված աշխնդութիւն, Խորենացու դրքի մեջ համանիշ է վեպ բառին և նշանակում է թե քերանացի և թե գրավոր պատմվածք, պատմութիւն ընդհանրապես, հաճախ դրավոր պատմութիւն: Խորենացին այդ

1 Տե՛ս Մ. Աքեղյան, Հայ ժող. առասպելները, էր. 10—15, իսկ սղույցը բառի համար՝ էր. 15—22:

բառը քերականացի գրույցիչ իմաստով գործածելիս՝ սովորաբար անգիր հին, վաղնջուց, նախնական բառերով, կամ ժյուսանդութենէ հասեալն, յորդի ի հօրէ առնելով յիշատակն, քերուցնն պատառնէ շրջարանություններով տարբերում է ավանդական գրույցը գրավոր գրույցից:

«Զրույցն քառի բուր այսպիսի դործածությունները նկատի ունենալով՝ տեսնուի ենք, թե որքան սակավ քան, իսկապես ոչինչ, ասեմք և ավանդական գրույցներին խորհնացու «Հայոց պատմութեան» մեր Մեկն է՝ Ռազոտտունյաց պաղեստինացի լինելու մասին վաղնջուց գրույցը, որ Պատմագիրը գործ է տնում, ուրիշի բերանը դրած՝ ժողովական կերպով և պատառնալ առասպելիքն է անվանում: Մյուսն է Արտավազդի շղթայած լինելու պատմական գրույցը, որը նույնպես քիչ ներքևուս դարձալ առասպել է կոչվում: Բացի դրանցից՝ կան Երվանդի ծննդյան, այլև Մամիկոնյանների ժազման մասին գրույցները, որոնց անպայման ավանդական են, թեպետ Պատմագիրը չի հիշում այդ մասին:

Խորհնացին վիպասանք, սերգը վիպասանացն կոչում է Երվանդի, Արտաշէսի, Սաթենիկի, Արզալանի և Արտավազդի մասին երգերն ու պատմվածքները: Սակայն դրանց համար նա ավելի հաճախ նաև ժողովակ, առասպելաբանելով երգել, տառապելու երգել, երգել յառասպելուս, երգելն առասպելաբանն, երգելը յառասպելին ասենք բառերն ու դարձվածքներն է գործածում: Առասպել չի կոչվում միայն Տիգրանի պատմութունը:

Խորհնացին, հարկավ, լիրենից չի տալիս ավանդական երգերին ու գրույցներին սերգը վիպասանացն և ժողովակը: Նա յորանք հենց սյուզան էլ կոչվել են: Այդ երևում է Բուզանդի «Հայոց պատմութունից», որի մեջ (III, ԺԴ.) նա հիշում է, որ հայ նախարարներն ու շինականները արհուս վին հարցը հեթանոսական հին երգերը, արիւրեանց երգառասպելաց զվիպասանութեանն»: Բուզանդի այս կտորից իմացվում է, որ հայոց հին հեթանոսական երգերը կոչվում էին սերգը առասպելացն, սերգը վիպասանութեանն:

Որ մեր առաջին վեպն այսպես կրկին կոչում ենք ունի, այդ ցույց է տալիս, որ առասպելները նրա մեջ մեծ տեղ են տնեցել: Եվ իսկապես, այդ վեպի հիմունքն է ավանդական պատմական: Այլապես էլ չէր կարող լինել, այն վէր բերանացի ավանդած պատմութեան համար այն հին դարերում, երբ մանուկ միտքը տարբերութուն չէր դնում իրականի ու երևակայականի միջև: Այդ պատճառով և այդ վեպի մեջ մտել են առասպելական գրույցներ, հրաշալի պատմվածքներ: Բացի այդ՝ իսկական պատմական եղելություններն էլ մասամբ ստացել են առասպելական գույն: Եվ այսպիսով առաջ է եկել առասպելական վեպ:

2 Մ. Խորհնացի. Բ. Կ. Ե. Ե. Ժ. Կ. Կ. Կ.

Բայց քանի որ վիպասաններն և նրանց ունկնդիրներն իսկական պատմություն էին համարում նաև առասպելները, այդ նրանց համար վիպասանությունն իր ամբողջությամբ մի պատմվածք է եղել անցյալում կատարված եղելությունների:

87. Վիպասանքի պատմական դարաշրջանն ու ծագումը և ունկնդիր Գասարակությունը— Առաջին արվեստական սխեմի համար, ինչպես ներքևում բերված հետազոտությունից պարզվում է, իրրև նյութ ծառայել են Հայաստանի պատմական դեպքերը մեր թվականությունից առաջ II դարի սկզբներից ի վեր: Այդ ժամանակներում սկսվում է մի նոր պատմական շրջան—Փեռզականը, որի սկիզբն, անշուշտ ավելի վաղ է եղել: Առաջ է դալիս նաև Հայ ցեղերի միացում, և հայերն արդեն գիտակցում են իրենց իրրև կազմակերպված ուրույն ազգություն³ և ուժ են զգում հանդես գալու իրրև անկախ, Մեծն Տրդրանի օրով նույնիսկ իրրև մեծ պետություն: Վիպական շրջանն սկսվում է հենց այս սոցիալական ու քաղաքական փոփոխությամբ:

Անտիոքոս Մեծի պարտությունը հոռոմայեցիներից Մազնեզիայի մոտ (190 թ. մ. թ. ա.) անմիջապես ազդանիշ է լինում, որ հայ իշխանները, որոնք մի քանի անգամ ապստամբել էին Սելևկյան տիրապետության դեմ, նորից ձգտեն անկախություն ձեռք բերելու: Բնիկ իշխանների ձեռով հիմնվում են երկու թագավորություններ, որոնցից Արտաշատինը կարողանում է շուտով ընդարձակել իր երկրի սահմանները և իր մեջ քնդունել ամբողջ Մեծ Հայաստանը:

Չարեր շարունակ խաղաղ կյանք վարելուց հետո հայերը, տնտեսապես ու քաղաքականապես ուժեղացած, այժմ ապրում են մի իսկական վիպական-հերոսական շրջան: Արտաշեսյան հարստության սկզբից և Արտաշատ քաղաքի հիմնադրությունից (180 թ. մ. թ. ա.) մինչև Արշակունիների իշխանության հաստատումը Հայաստանում (66 թ. մ. թ.) և այնուհետև մինչև IV դարի վերջերը, կատարվում են Հայաստանում մեծամեծ գործեր: Հիմնվում են թագավորություններ ու քաղաքներ, փոխվում են հարստություններ, իրար հետ բախվում են մեծ տերություններ, և Հայաստանը դառնում է երկարատև պատերազմների վայր: Այս պատմական մեծ իրողությունները առաջ են քերում բազմաթիվ պատմական երգեր, զրույցներ և սպանդանություններ: Պատմական նշանավոր անձերն ու դեպքերը—Նրվանդը, Արտաշես Ա-ն իր հիմնած թագավորությամբ,

³ «Ազգությունն նշանակում է национальность, народность, Völkerschaft և ոչ թա ռация, nation: Այգա՝ պետք է խմուշ, որ մեր այդ բառը՝ ազգությունն նոր է կազմված: Մեր բազա բառը, որ վերջերս գործածվում է քաղցրա բառի իմաստով, հնում ջրա գործածական է եղել զուտազուտ նշանակություններով, ինչպես են՝ սեռ, առհմ, ցեղ, մոզովորդ, ազգություն և այլն: Այժմ էլ սույն նշանակություններով գործածում ենք բազա և բազային բառերը: Հին ժամանակների համար «Հայաց ազգ», բազային չի հասկանալով, հարկավ, քաղցրա, քաղցրոնայա այժմյան նշանակությամբ:

Մեծն Տիգրանն իր անձով ու բախտով, սրա սրգի Արտավազը, թո՛ւն Արտաշեսը, այս հրեքի Հայաստանի մարերի հետ, և ապա Արշակունի Տրդատ Ա-ն իր նախորդներով ու Հայսրգիներով, մինչև IV դարի վերջերը, նյութ են դառնում պատմական հրգերի ու զրույցների և հրգվում հրգիչներից:

Այդ նախնական բանաստեղծությունը սկզբում, հարկավ, չի ելել ամբողջական վեպ, մի ընդարձակ պատմվածք: Այլ դա եղել է տարրական ձևով, պարզ ու միամիտ մի բանաստեղծություն, փոքր քերթվածներ ու զրույցներ հերոսների ու նրանց քաջագործությունների մասին. պատմական հրգեր, որոնց մեջ ասված են եղել ազնվական տոհմերի ծագումը, քաղաքների հիմնարկությունը, պատմված են եղել երկրի համար կարևորություն ունեցող դեպքեր՝ պատերազմներ, իշխող հարստությունների սկիզբը և նմանները:

Ժամանակի ընթացքում այս սկզբնապես անշատ պատմական հրգերն ու ավանդությունները, հարելով իրար և նախորդ դարերից ժառանգած հրգերի և առասպելների հետ, առաջ են բերել հրկու վիպական ամբողջություններ: Վաղժվել են հրկու մեծ վեպեր Առաջինն է Վիպասանը կամ Վիպասանություն, կամ Երգք առասպելաց, Երգք վիպասանաց (այլև Երգք թուխնաց), որի կենտրոնն են առաջին մասի մեջ Մեծն Տիգրանը և հրկորդ մասի՝ Արտաշեսը: Իսկ երկրորդ մեծ վեպն է Պարսից պատերազմը, որի մեջ պատմված է հայերի կռիվը Սասանյանների դեմ III և IV դարերում: Այս երկուսից առաջինը շատ վաղ մշակել են արվեստագործ հրգիչներն ու վիպասանները:

Դա մեր առաջին ավանդական վեպն է կամ առաջին հին վեպը, որ ծագել ու զարգացել է մեր վաղ ֆեոդալիզմի սոցիալական պայմաններում:

Տեսնենք այժմ, թե ինչ պատմական հիշողություններ են պահված մեր առաջին հին վեպի մեջ:

Բ

Մեծն Տիգրանի վեպը

88. Աղբյուրը—բանաստեղծական «չորս հարյուր տասնութ» Տիգրանի մասին:—Մ. Խորենացին իր սշախոց պատմությունում Ա դարի իր, գլխի մեջ Տիգրանի գովեստն անելիս հիշում է ավանդական հրգերը. «Ձորմէ ասէին ի հինսն մեր, որք փանդոսմբն հրգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյ շափաւորս: Եվ ապա ավելացնում է. «Եւ զինչ ինձ ի գիրսս յայտոսիկ արգեօք իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարելու Պատմագիրքն, ուրեմն, պարզապես հիշում է, որ սի հինսն», հնքերի մեջ (Խորենացու ժամանակի նկատմամբ)

երգեր ու գովեստներ են եղել Տիգրանի մասին՝ և ինքն օգտվում է դրանցից: Ալեուհետև, սակայն, նա երգեր չի հիշում: Եթե ոչ մի ուրիշ աղբյուր հայտնած չի կենք, պետք է ընդունենք անհրաժեշտորեն, որ հաշորգ գլուխների համար նա իբրև աղբյուր ծառայել են միայն հիշած երգերը:

Մեր Պատմագիրը, սակայն, իր Ա գրքի ժժ. գլխի մեջ հայտնում է, որ իր առաջին գրքի մեջ (քի գիրս յայտասիկս) պիտի հարմարելով կարգե՞ եզրագրի մերոյ ւապատգոյն արս և զնախնիս և նրանց մասին հղած պատմութիւնները, ոչ թե իրենից սարքելով, աչյո որ ինչ ի գրոց իսկ. ըստ նմանեացն ապա նւ որ ինչ ի բանից արեանց իմաստեոց և յայտասիկ քաջախոհակացս: Եվ ապա նա իր աղբյուրների այսպիսի ընդհանուր հիշատակութիւնից հետո՝ ավելացնում է. «Եւ յայտցիկ այսպէս կարգելոց, ... սկսայց քեզ և որ ինչ զկնի այտցիկ ի նիւման պատմութեանէ պիտոյից»: Այս հատվածը բառացի նշանակում է. «Այս (անունների կարգն իրենց ծանոթութեաներում) այսպես կարգելուց հետո, պիտի սկսեմ (կարգել կամ պատմել) քեզ արանից հետո եղածները պիտուից հիւսմանս պատմութիւնից (առնելով): Այստեղ մի աղբյուրի հիշատակութիւն է անում Պատմագիրը, ինչպես և վերևում գնում է նույն հոլովով քի գրոցս, քի բանից արանց իմաստեոցս: Այդ աղբյուրը նա կոչում է Պատմութիւն հիւսման պիտոյից սկսեմ ընդհանուր պիտութեանց: Դա վերաբրում է Տիգրանի պատմությանը:

Խորենացու Ա գրքի իս. գլխի մեջ գտնում ենք դարձյալ մի աղբյուրի հիշատակութիւն. «Եւ յոյժ ահա զուարեացայց՝ ոչ փոքր ինչ կրելով խընդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ քնիկ նախնոյն սիրունոց ի թագաւորութեան հասանն յաստիճանս Վասն որոյ արժան է մեզ աստանոր մեծ գործ մատարելի և ցաղաւս ասոյ առարկութիւնս՝ ճարից (մարիանտ՝ բանից), զորոց մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեաց ի շոքս հազներգայիւնս զարգասաւորիս ի քոնս և զիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստեոց իմաստնագունիս (Ա. իս.): Պատմագիրն այստեղ ասում է, թե որովհետև Հայկի անդունդները թագավորութեան են հասնում, ուստի արժան է մեծ գործ կատարել և շատ բաներ գրել: Այդ գրելու արժանի համարած «մեծ գործն» ու ըլլաւ պատմութիւնները պետք է տեսնել Հայկազանց բոլոր թագավորների պատմութեան մեջ, որոնց նա բարեկից, քրեիկց և իմոյ արեան առաք և հաստատի հարստագտոք է անվանում, և որոնց մեջ փսխապետ միջմայն Տիգ-

1 «Ե հինսն բառի նշանակութեան համար հմտ. սթայց առանի յոճարագոյն հինքն Առաջագինոյց ի նապար քաղաքն և նոր քաղց և դորայ զայտոյնի ասն միտասկան (նար., Ա. Գ.): Հմտ. Տ. Նավասարդաւորի քէւոյ ժողովրդ. հեթոթեքս, գրք. Է. Քիքիս, 1891, էր. 21: Եւնի մարգին յարունքի բաներ շատ գիտի, կը պատմին Ոգարմաթիկ Վերամենց Ազաւը հին մարդ էր. էն շատ բաներ կ'ուտեր: Կ'ասեր թե մին ար...»

2 «Առարկութիւնս բառի նշանակութեան համար հմտ. Բ. Ժ. Եւ դարձուլ պատմի առարկութիւն կրիտեայ և նեցտեներայ:

քանի պատմությունն է անում, այն էլ ընդարձակ ու երկարու Ուրիշ ոչ մի կերպ կայանի չէ հասկանալ Պատմագրի խոսքերը, թե Հայկազանց թագավորնեւ է համար սէւտ գործն պիտի կատարեի և շատ բաներն պատմի։ Մակայն այժմ խորհնացու խոսքերի մի կողմն է միայն։ Նա պարզպես հիշում է նաև, որ այդ սմեծ գործին սհիմունքը, հիմնական մասը, կարողացել է մի հեղինակի «Չորս հազներգություններին» մեջ։

Մյուս կողմից՝ տեսանք, որ խորհնացին մթ. գլխի մեջ շինուածն պիտոյից՝ կոչած գիրքն է ազգայն զնում նույն Հայկազանց թագավորներին, իսկպես Տիրքանի պատմության համար։ Ինքն իրեն առաջ է գալիս այն միտքը, թե միևնույն պատմության համար այս երկու տեղ հիշածները, շէնուածն պիտոյից և «Չորս հազներգութիւնք», միևնույն աղբյուրն են։ Երկու կոչումները ոչ միայն իրար լին բացասում, այլ լրացնում են մեկմեկու։

Ի՞նչպիսի գրվածք է եղել այդ աղբյուրը՝ «Հազներգություն» բառը, որ սովորաբար նշանակում է քերթված, վիպասանութիւն և քերթվածի մասերը, և ապա պատմական գրվածք ու դրա մասերը, կարող է ցույց տալ, որ բանաստեղծական էր այդ գրվածքը, հին բառով, մի սրանահայուսութիւն, որի համար իբրև նյութ ծառայած էր Տիրքանի պատմությունը։ Անուշտ, այդ սրանահայուսութիւնն իր մեջ պիտի ունենար, ինչպես ամեն պատմական բանաստեղծութիւն, նաև շատ հատվածներ և վիպական կամ թե ճարտասանական մանրամասնութիւններ, որոնք քերթողական երևակայության ստեղծագործութիւն են։ Բայց ինչպես ամեն պատմական բանաստեղծության, այդպես և այդ «Չորս հազներգություններին» էական մասը պետք է պատմական լիներ, և այդ կական մասն ահա խորհնացին առել է և իբրև հիմունք դրել իր Հայկազանց թագավորներին պատմության համար։

Մյուս կողմից՝ թե խորհնացու շէնուածն պիտոյից կոչած գիրքը նույնպես բանաստեղծական կամ բանահայուսական գրվածք է եղել, այդ ցույց է տալիս նույնիսկ կոչումը, որ Պատմագիրը տալիս է այդ գրվածքին։ Հայտնի է, միջնադարյան դպրոցներում սպիտոյք, հունական խրուս բառով կոչում էին այն ճարտասանական կամ բանահայուսական վարժութիւնը, որով մի իմաստալից ասացված կամ որևէ անձի պատմութիւն ու արարք ընդարձակում, աճեցնում էին այս կամ այն եղանակով ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ ճառ կամ բան։ Այդ ճարտասանական վարժութիւնները իրենց կանոններով նույնիսկ մեր գրականութեան սկզբներում աշխատել են մտցնել մեր մեջ թարգմանիչները։ Հայտնի է խորհնացուն վերագրված «Պիտոյից գիրքը», որի մեջ

3 Այդ շատ պատմություններին պետք է դուրս ձգել անուշտ ԻԳ պլուվը՝ Սենթերիմի սրբիկների մասին, որ Պատմագիրը մոռացած լինելով իր տեղում տեղի տալուց մար Աբասից տեղեկով միջնակալ է դեռում, ընդհանրով Հայկազանց թագավորներին պատմութիւնը։

բացի կանոնների բացատրութիւններէց կան և օրինակներ շահահան-
գիցն աղագու առ մանկունսս:

Այս գրքում⁴ ի միջի այլոց գտնում ենք Վարձան ներբողիքի, որի
ետևում իբրև օրինակ դրված է Ներբողեան Մովսէսի: Արա տեսակին
պատկանել է և Տիգրանի մասին գրվածքը: Ներբողեան է բան արտա-
գրական եղիլոյ բարեաց... Ներբողիքի է զղլմս (անձնավորութիւն) և
զիրո, և զմասնաձևերս, և պտեղիս... Զղլմս տրպէս զՊիստակինէս, կամ զՊր-
դատուն: Զիրս որպէս զարգարութիւն կամ զողջախոհութիւն...: Այնու-
հետև բերված է եղած, այսինքն՝ պատմական անձնավորութիւններ զո-
վելու կանոնները, մասերի բաժանելով ներբողիքներ:

Եթև փոքր ինչ ուշագրութիւն զարձնենք Խորենացու Հայկազանց Թա-
գավորների պատմութիւնը (Հարկավ զուրս պետք է ձգել Երեմիա մար-
գարից բերած վկայութիւնը, Մար Աբասից առած Փառնավազի մասը
և Պատմագրի բացատրութիւնները Ձուելիեաց երգերի մասին), կտես-
նենք, որ Տիգրանի վրա գրված այսպիսի մի ներբողիքն անավորութիւն
ունի այդ ամբողջ պատմութիւնը մինչև Վահագն: Ասել չի ուղի, որ քանի
որ Խորենացին պատմութիւն է գրում և ոչ թէ ներբողիք, մենք չենք կա-
րող պահանջել, որ նա իր ճարտասանական աղբյուրը ծայր ծայր ար-
տագրած լինի, — նա շատ տեղ կրճատում է, և կամ ամեն րան իր աղ-
բուրի կարգով չի բերած: Բայց եղածն էլ բավական է մեր կարծիքը հաս-
տատելու համար: Բավական է միայն, որ այդ պատմութիւնը բաղդա-
տենք Ձուելից գրքի ներբողիքի կանոնների հետ:

Ահա այդ կանոններն իրենց կարգով և բաղդատութիւնը.

1. Եւ ի գովելն պարտ և արժան է նախաշարժիդ առնել ըստ տեղ-
ւոյ պատճառին: Այսինքն նախ նյութը, եթև որն է անձն է, ուրեմն անձը
գովել ընդհանրապես: Եվ Խորենացին իր Հայկազանց և Տիգրանի պատ-
մութիւնն սկսում է ընդհանուր գովեստով (Ա. Իա. — Իգ.):

2. Եւ պա զնել զագզն, և զնոյն բաժանել ի գաւառս և ի նախածնողս
և ի հարս: Տիգրանի ներբողիքի Խորենացին կարիք լուներ սղավառիք,
այսինքն Տիգրանի հայրենիքի, Հայաստանի գովքը մտցնելու իր պատ-
մութիւն մեջ: Իսկ Տիգրանի նախածնող Հայկին և նրա մերձավոր հայրե-
րին՝ Պարուրից սկսած գովելով հիշատակում է Տիգրանի պատմութիւ-
նից առաջ:

3. Եւ պա զսնունդն. և բաժանել յուսումն և ի վարժս և յօրէնս: Այս
մասի մեջ պիտի պատմվի ներբողիքի անձի ծնունդը, սնվելը, կրթութիւ-
նը, մանկական կյանքն ու վարժունքը (Հմմտ. Վովսէսի ներբողեանի)
մեջ համապատասխան հասկանքները՝ Ե. — Թ., եր. 415—417): Ըստ ինք-
յան հասկանալի է, որ այս մասն, իբրև պատմութիւն համար եռը կարևոր
բան պիտի կրճատի Խորենացին: Բայց և այնպես ծննդյան, ինչպես և

⁴ Վարձանագրութիւնք Մովսէսի Խորենացու, Վնկայկ, 1885, եր. 418.

նախընթացում հիշված սցառառիք, հայրենիքի մասին գտնում ենք Աժ-
դահակի երազի մեջ:

4. Են: ապա զմեծ զլուխ ներբողիին զննլ զգործսն. և զնոյն բաժանել
յաննն և ի մարմին և ի դիպումսսս:

ա. Ձջանձն յիմաստութիւն և յողջախոհութիւն, յարութիւն և յարգա-
րութիւնս: Տեսնենք, ինչպես է գովում Խորենացիին Տիգրանի ժանձը (Ներ-
քինը). «Արանց կացեալ գլուխ, արութիւն ցուցնալս. պարկեշտն, ... օրի-
նատօր, ... ցանկութիւնս մարմնոյ շափատօր, մեծիմաստ... արդարադատ
և հաւասարաւոր կշիռս ունելով և ալլն: Ուրեմն ոչ մի գիծ պակաս չէ:

բ. Ձջմարմին՝ ի գեղեցկութիւն և ի զօրութիւն և յերգութիւն» Խո-
րենացի. «Խաբանաշս այս և աղէբէկ ծայրի հերաց Երուանգեանս Տիգ-
րան, երեսօք դունեան և մեղուակն, անձեանս և թիկնաւան, առոյգա-
րարձն և գեղեցկոտն»: ... Կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնու-
թեամբս: «Արժուանման սլացնալ թնօք... սքանչելի դիւցազն»: «Բայց
գովմա զքալ նահատակն իմ և զնիգակատրն և զամեննին բուր անդա-
մովք համեմատն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ. քանզի առոյգ,
ամենայնի ըստ իրնարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք ունելով իւր զոյգս:
Ուրեմն դարձյալ ոչ մի գիծ պակաս չէ:

գ. Ձջդիպուած» ի նոխութիւն և յընդլուրթիւն և ի սիւեյիսս: Այսինքն
գոված անձի կատարած մեծ դեպքը պետք է նոխութիւն և ընդլուրթիւն
պատճառն և սիրելի դարձնն նրան: Տիգրանի մեծ սգիպուածն է Աժդա-
հակի հետ կովելն ու նրան հաղթելը, որ այսպես է վերջացնում Խորենա-
ցին. «Են այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ, փառս յա-
ճախէր Տիգրանայս: Մեր թագավորի ճեղխութեանս և զընդլուրթեանս»
մանրամասն նկարագրին (Ա. իդ.) ավելորդ ենք համարում արտագրել:
Այնպիսի փնջը կտանեն Խորենացու մեջ, Ըսկ ասիրենք յինչու համար
բերենք միայն. «Ամենեցուն՝ որ առ իւրովքն էին ժամանակօք նախան-
ձելի, և զկենացս ըղձալի ինքն և ժամանակ իւրս: Ուրեմն դարձյալ ոչ մի
գիծ պակաս չէ:

Ե. Են ի վերայ այսոցիկ զննլ զբազդատութիւնն յարագրութեամբ
ներբողեցնելումն զմեծագոյնսն ընդունելս: Այսինքն ուրիշ Նշանավոր ան-
ձերի հետ բազդատել գոված անձին և նրան ավելի մեծ համարել: Այդ
բազդատութիւնն ևս գտնում ենք Խորենացու մեջ Տիգրանի պատմության
վերջում (Ա. լա.):

Ե. Են ապա զ ի վերայ քանին՝ ի կատարման ըստ պատճառիս: Այ-
սինքն՝ ինչպես ընդհանուր գովեստով սկսված էր, այդպես և ներբողելի
անձի վրա արած գովեստն ամփոփել և վերջացնել: Այսպես էլ անում է
Խորենացին: Լա. պլուխը, որ Տիգրանի պատմության վերջաբանն է, սկը-
սում է Տիգրանին գովելով, և ինչպես սպիտոյիցս կանոնները պահան-
ջում են, վերջում բազդատութիւն է անում շատ Տիգրանների մեջ և զըս-
տում, որ ամի է և միաճանկ սա քի Հայկազանցս, այսինքն՝ Տիգրան:

Այսպես տեսնում ենք, որ Տիգրանի պատմութիւն մեջ պահպանած են Վիտտոյից գրքին ներքողյանի ճարտասանական կանոնները, այն էլ մեծ մասամբ նույն կարգով, ինչ կարգով որ Վիտտոյից գիրքն է պահանջում: Եվ այդպես էլ պետք է զննել, քանի տղ մեր պատմագիրը ժժ. գլխի մեջ պարզապես հայտնում է, թե Հայկազանք և Տիգրանի պատմութիւնը պիտի առնեն թի հիւսման պատմութիւնէ պիտոյից: Կնշանակի, եղել է մի Վիտտոյից պիտք, տղի մեջ հյուսված են մղել զանազան բանահայտական կամ ճարտասանական օրինակներ, որոնց թվում և մի ընդարձակ ներքողյան հայոց թագավոր Տիգրանի մասին: Այդ գիրքը հայերի մեջ հանրածանոթ եղած պիտի լինի. հանրածանոթ՝ և նրա հեղինակը. ուստի և խորհնացին բավականանում է գրքի անունը տալով միայն և զովելով նրա թիմաստունէ հեղինակին և կոշելով նրան սարգասաւոր ի բանս: Վերջին խոսքը ակնարկում է կամ այն բանին, որ գրքի հեղինակը շատ այդպիսի բանքն է կամ ներքողյաններ է գրած եղել, կամ շատ պերճաբան քերթող է եղել:

Այսպես, մի կողմից սահմանափակ թառից իմտնում ենք, որ Հայկազն Տիգրանի պատմութիւնը վերցրած է մի քրանահայտական գրվածքից, իսկ մյուս կողմից տեսնում ենք, որ խորհնացին նույն պատմութիւնն փրոք քերթող է մի սելիսումն պիտոյից: Կոշված գրվածքից՝ Այդ երկու աղբյուրը նույնանում են: Պատահական մի բան չենք համարում և այն, որ Ա տեսակի ձեռագիրների մեջ փոխանակ թի հիւսման պատմութիւնէ պիտոյից գտնում ենք թի հիւսման պատմութիւնէ բանից, որ կանոնավոր ձևով է թի պատմութիւնէ նիւսման բանից: Արդ սելիսումն բանից մի բառով քրանահայտական նշանակում է քրանաստեղծութիւն: Հայտնի է, որ խորհնացու քրաները ձեռագրերի արտագրողները մեկ-մեկ թարգմանել են: Այսպես և այստեղ սելիսումն պիտոյից թարգմանված է սելիսումն բանից: Թարգմանողն հասկացել է, թե ինչ է անում: Նա գիտն խորհնացու գրածի բուն իմաստը, որ այնպես է թարգմանել, որ սճարտասանական աղբյուրը դարձած է մի քրանահայտական, քրանաստեղծական աղբյուր: Վերջին բաներս, անշուշտ, իրենց սկզբնական իմաստով իբրև քրան շինելն պետք է հասկանալ, ինչպես և պիտոյից կանոններով գրած ճառը նույնպես համարվում է իբրև քրան հայտնելն, քրան գործելն:

Ինչո՞ւ խորհնացին այդ քրանաստեղծական կամ ճարտասանական աղբյուրը սճորս հագներգութիւն է կոշում:— Կամ այն պատճառով, որ այդ արգասաւորն ի բանս քերթողն իր պիտոյից հիւսումն չորս հագներգութիւն, չորս գրքի էր բաժանած, որոնցից մեկի մեջ էր Տիգրանի ներքողյանը. կամ ավելի այն պատճառով, որ Տիգրանի ներքողյանը չորս հագներգութիւն, չորս մասի էր բաժանվում: Եթե ուղղութիւնով կարդանք Տիգրանի պատմութիւնը, կտեսնենք, որ չորս մասի ևս բաժանվում է:

Առ ա չի ն: Այս մասի մեջ, որ վիպական հանգույցն է, եղել են Տիգրանի զովեստն ու հաղորդութիւնները: Գովեստի մեջ հիշատակված են

եղել, ինչպես սովորաբար լինում է քերթվածի մեջ և ինչպես պահանջում են պիտոլից կանոնները, Տիգրանի նախորդները Պարուլրից սկսած: Անշուշտ շատ բան ասած չէր լինիլ սրանց մասին, այլ գրքերից քաղած ու հարմարեցրած մի բան, գուցե սոսկ անուններ, Տիգրան թագավորի ազգաբանութիւնը հայտնելու և Հայոց թագավորութեան սկիզբը ցույց տուաւ համար: Այդ ընդհանուր գովեստից հետո պիտի գային Մարաց թագավորի երկչուդն ու երազը, խորհուրդը և որոշումը Տիգրանուհուն կնութեան առնել և թուղթը:

Երկրորդ: Այս մասի մեջ, որ զարգացումն է, պատմված է եղել պատգամավորի գալը, Տիգրանի հոժարութիւնն իր քրոջը տալու, նրան ճանապարհ դնելը և Աժդահակի նրան արած ընդունելութիւնը:— Այս մասը հորինացին շատ համառոտ է անցնում, սկսելով. «Եւ առանց յերկարելոյ ասացիցա խոսքերով: Համարտտելու պատճառը հասկանալի է: Բացի իր բերած բովանդակութիւնից, ուրիշ առանձին պատմական զեպք չի տեսնում: Կայնքից առած վիպական մանրամասնութիւնները նրան շին հետաքրքրում: Օրինակ, Տիգրանի՝ իր քրոջը ճանապարհ դնելու համարտալով ընդարձակ նկարագրի համար նա բավականանում է միայն ասելով՝ «Ծուղարկէ գջոյր իւր որպէս օրէն է թագաւորաց»:

Երրորդ: Այս մասը, որի մեջ զարգացումն իր ծայրին է հասնում, սկսվում է՝ «Զկնի այսորիկ ասէ, թէ...» խոսքերով, տրից պարզ երևում է, թե նոր մաս է սկսվում: Եվ բովանդակութիւնն էլ հենց նոր մաս է ցույց տալիս: Մարաց թագավորն աշխատում է սիրելի դառնալ Տիգրանուհուն, նրա ձեռով թակարդ լարին Տիգրանի դեմ: Տիգրանուհին ստիպված երեսանց ընդունում է նրա առաջարկը, բայց նենգութիւնը հայտնում է եղբորը: Պատգամավորութիւն է լինում, և հայտնի թշնամութիւն սկսվում:

Չորրորդ: Վիպական լուծումն է այս մասը: Երկու կողմից զորածողով են լինում և կռվի պատրաստութիւն տեսնում: Կոնվը երկարատևում է որովհետև Տիգրանը զգելու իրացն հնարէր յարդարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ: Սա ազատվում է: Ժակատամարտու Տիգրանն և Աժդահակը կռվում են: Բայց հորինացին այդ կռվի մանրամասն նկարագրելը կրճատում է զտնելով. «Եւ զի՞» անկայնեմ զբախսա: Աժդահակն սպանվում է. նրա տունն ու կիներ գերվում են: Ուրեմն շարք պատժըվում է: Իսկ բարին, Տիգրանն ու Տիգրանուհին վարձատրվում են. մեկի փառքն է ավելանում, մյուսն իր եղբայրսիրութեան համար «թագավորացն ուղարկվում է քնակելու Տիգրանակերտում»:

Գործողութեան միութիւնը սկզբից մինչև վերջը պահված է և, որ զլիսավորն է, ամենայն քնականութեամբ բաժանվում է միայն շորս «հազնեղութեան»: Երկրորդ և երրորդ «հազնեղութեաններին» սկզբի խոսքերը՝ «Եւ առանց յերկարելոյ ասացից», «զկնի այսորիկ ասէ, թէ...» նույնիսկ ցույց են տալիս մի մասից անցումը մյուսին:

Եվ այս նյութը, որ զեղեցիկ մշակված պիտի լիներ թի բանս արգասաւորի և իմաստունիս ձեռով, իր զեղեցկութեան մեծագույն մասը, ավան-

դական երգից է ստանում: Լեզիկական իրենից չի ստեղծել, այլ ավանդականն է առել և ճարտասանորեն մշակել:

Քն Տիգրանի մասին երգեր եղել են երկ հինսն մերս, ինչպես տեսանք, այդ պարզապես հայտնում է հորենացին:

Արդ՝ այդ երգերը բոլորը հորենացու ճաշակով սանոճն ու արժուէն են եղել: Բացառութիւն չեն կազմել նույնիսկ սթուկեացաց կամ ավիպասանաց երգերը, քանի որ մեր պատմագիրն այս վերջիններն ևս ստիպւած է եղել սեշմարտեկուս, սեշմարտապատմութիւնս դարձնելու: Դրանք բոլորն առասպել են: Բայց ինչպես տեսել ենք, մեր ավանդական բանահյուսութեան բոլոր նյութերից Տիգրանի մասին եղածներին առասպել կոչումը չի տալիս հորենացին: Այս բացառութիւնը, որի մասին իր ստեղծած խոսել ենք, այժմ հասկանալի է լինում: Ըստ հորենացու, ուրեմն, Տիգրանի մասին եղածներն առասպել չեն, որովհետև Տիգրանի մասին նա ձեռի տակ ունեցել է ավանդական երգերի, ըստ իրեն հորենացու ճաշակի գրական մշակութիւն կրածը, մի թարգմարեալ և սոճով և հանդերձ պատճառաւ շարադրած պատմութիւն, որ նա այլևս առասպել կոչել չէր մտաբոլ: Այդ մի պատմութիւն էր, որ ոչ թէ առասպելի պես սեշմարտութիւն իրացն այլաբանաբար շինքնան ունէր թագուցեալը, այլ ամբողջ արդեն սեշմարտված, սոճով պատմված, առասպելական մասը դուրս ձգած և սեշմարտապատմութիւնս շինած: Ուրիշ խոսքով, դա սերգարան բանաւորս էր եղել, մի ճարտասանական բնավորութիւն ունեցող պատմական բանահյուսութիւն: Եվ այդ է պատճառը, որ երբ մեր պատմագիրը, որ ուղիւստն աղբյուրների մեծ պակասութիւն ունեւր, իր ձեռքի տակ ունենում է Տիգրանի պատմութեան համար՝ իր ճաշակով գրած մի պատմական աղբյուր, այն ժամանակ իրավամբ բառ չի գտնում դրա հայտնի հեղինակին զովելու համար:

Քն իրոք պատմական երգի վրա է հիմնված եղել այդ հազներգութիւնն, այդ աներկբա ցույց կտա մեզ նրա բովանդակութեան ուսումնասիրութիւնը:

88. Մեծն Տիգրան և պատմական երգեր նրա մասին:— Այդ երգերն աւ գովեստներն եղել են Մեծն Տիգրանի մասին, և հորենացին (թերևս հորենացու աղբյուրը) սթուր գիտնականութեամբ՝ կյուրոսի ժամանակակից՝ Քսենոֆոնի վիպասանութեան մեջ գործող Տիգրանին է վերագրել:

Ե Գուց անհետարքեր շինի հիշել, որ սրազմվելոյ, 1850, դեկտ. եր. 845, կա հիշատակված Գամթի (Գամիթ Անհա՛ղթ) վերագրված մի հին վիպասանութիւն՝ «Պատերազմն Լույց և Մարաքու Լավաստյով Տիգրանի վրա է եղած այդ հին վիպասանութիւնը, որի սողերից են..

եւ արդ ներգարծոյ ի միտս երևիւր առ խորհուրդս փողարին
Մեծուցոյ Տիգրանայ զհզանին Տիգրանեւհի,

Իր ներգարծոյ գիւղարտի, նաև սլլամիտ աղբարտեւի:

այն, մինչդեռ երգերը բնականաբար լուկովլոսի ժամանակակցին էին զովաբանումս⁶։

Անշուշտ, բուն նրգերը չի բերում խորենացին և շատ բան իրենից, իր կամ իր գրավոր աղբյուրի լեզվով է պատմում, բայց ամենայն ինչ որ նա ասում է, իսկապես Մեծն Տիգրանին է վերաբերում։ Մեծն այդ կտեսնենք շուտով։

Նրա ժամանակը, որ իրոք ղիցազնական էր հայ ազգի համար, քրտան և հինգ ամբ... անխառն հաջողութեանս, երբ ժհաւատային սուտակասպասք թէ ոգի իմն իցէ՝ Տիգրան, շէր կարող իր խորին տպավորութիւնը շանել վիպասանների նրեակայութիւն վրա, և նրանք, որ ինչպես կտեսնենք, գիտեին նրոցի թագավորութեան հիմնադրի՝ Արտաշես թագավորի Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրութիւնը, շէին կարող շերգել այդ թագավորական ցեղի ամենից փառավորին, արքայից արքա Մեծն Տիգրանին։ Եվ նրանք երգել են նրան ու նրա գործերը, անպայման հենց այդ թագավորի պատվերով, որ իր հիշատակն անժահացնելու համար, ինչպես հայտնի է, մի հուշն պատմագրի գրել է տվել իր պատմութիւնը։ Եվ մենք տեսնում ենք, թե իսկապես որ աստիճանի հիացել ու փառավորել են վիպասաններն իրենց այդ սիրելի թագավորին։ Նրանց սքանչալցումն ու ոգևորութիւնն է անցնում երգերից մեր ձերունի Պատմագրին, որ այս Ծովանդյան Տիգրանի պատմութիւնն անելիս՝ համարակված ու երկտասարդացած գրում է. «Ջի ո՞ ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կացցէ, սորա յիշատակօքն ոչ զուարճասցի, և յորդորեսցի այսպիսի այր շինել։ Ոչ թե կարողսի ժամանակակիցն, այլ Մեծն Տիգրանն է նզել այդ մարդը, որ ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաշա, ամենեցունց՝ որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկենացս ըզձայի ինքն և ժամանակ իւրա։ Ազնվականութիւն իղեայացած բազմանքն է այդ՝ հետագա քաղաքական աղետների միջոցին. մի բազմանք, որ, թերևս իր աղբյուրից, անցնում է խորենացուն, և նա ցանկանում է. Են սիրելի էր ինձ յայնժամ զալ Փրկչին և զիս զնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ շինել, և նոցա տեսութեամբն իրախճանալ, և յարդեացս ապրիլ վտանգիցս։ Այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն, թէ աղտեօք և ղիճակա (Ա. իք.)։ Մի խոտք, որ տեսել է մեր Պատմագիրը ոչ թե այդ զլիւի մեջ եղած լուկ անունների ցանկի համար, այլ միայն ամեծին Տիգրանայ, որ իննեբորդ ի բնկաց մերոց պսակաւորաց էր, հուժկու, անուանի և յաղթող ընդ այլ աշխարհակալաւ։

Համեմատենք իրար հետ Մեծն Տիգրանի պատմութիւնն ըստ օտար աղբյուրների և Տիգրանի վեպն ըստ խորենացու 1. Թեոդոր Ռայնախի

⁶ Լ. Գելլեր. Համառոտ պատմ. հայոց, թարգմ. Գր. վ. Գալմաթարյան, Վիեննա, 1897, էր. 8։

(Theodor Reinach) «Միհրդատ նպատորս գրքում՝ Մեծն Տիգրանի համար գտնում ենք, որ մի քանի անգամ նրա զորքերն անցնում են Կապադովկիա: Նա տիրում է Ասորիքին, կործանելով Սելևկյան պետությունը, տիրում է դաշտային Կիլիկիային: Ե՛կնտիք, մին յարքայանիստ քաղաքացի Տիգրանայ՝ հարկանէր գահեկան ի պատկեր նորա, և միում ի զօրաւարաց նորա Մագադաստայ լանձնէր վարով զԱսորիս իրրն սատրապ (Ապպ. Ասոր. 48)... Յարևմուտս արկ նա ձեռն ի վերջին ծաղիկ պսակին Սելևկեանց, ի դաշտային Կիլիկիա: Բազում քաղաքաց ծաղկելոց բնակիչ խախտեալ ածան ի Հայս (Դիոն Կաս. լԶ. 37, Պլուտ. Պոմպ. 28): Դարձեալ... Հայք մտին երրորդ անգամ ի Կապադովկիա, կայան զԱրիոմարզան իրրն ի վարմի և տիրեցին մայրաքաղաքին. բնակիչք Մամաեայ, որպէս և այլոց մետասակ քաղաքաց Յունաց, ընդ բնա իրրն բիրք երեսուն (300.000) ածան աննկ շէն զնոր Նիստ արքայից արքայի, ահաւորին Տիգրանայ, 77 և. ք. զՔր. (Ապպիան, Միհր. 6, 7, Ասոր. ԺԱ. 14, 15, ԺԲ. 2, 3) — Կարդանք շարունակությունը. «Շնչիկեպետութիւն էր յուծի յաշխարհս այն ինչ նուանեալս, որպէս ի Կիլիկիա, յԱսորիս, ի Միդգոնիա (Միդգոնիա հիստորի), որ առաւել քան կիսով լափ էին յունացեալք ընդ իշխանութեամբ Սելևկեանց»:

Եվ վկայի մեջ որքան շտուքով մեր արտահայտված, պահված է Մեծն Տիգրանի կարճատև տիրապետությունը հույների վրա, Ե՛ն զյոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեան նուաճեալ հնազանդէր»:

2. Մեծն Տիգրանի պատմության մի հիշողություն է նրանից առաջ Հայաստանի օտար լծի տակ լինելը և նրա օրով այդ լծից ազատվելը:

Մեծն Տիգրանի նախորդներն Արտաշես Ա-ի օրով (189 թ. մ. թ. ա.) թափափում են Սելևկյանների բռնը և Հայոց թագավոր անունն ստանում: Մեծ Հայքի թագավորներն այնուհետև հետզհետև ընդարձակում են իրենց երկիրները: Մակայն Տիգրանից առաջ. «ի վախճանեալ դարուն Բ-ի յառաջադէմն խաղացք Մեծին Հայոց արգելաւ, ի Պարթևաց, որ առին զՄարս և զՄիդգոնիս ի Սելևկեանց անտի վատթարելոց: Արշակ Թ (Միհրդատ Բ, 114—86) ետ պատերազմ ընդ Հայս, յաղթեաց թագաւորի նոցա Արտաւազդայ (Յուստ., հԲ, 2, 16), և էառ պատանդ զՏիգրան, իշխան թագաւորաց (Յուստ. լԸ, 3, Սար., ԺԱ, 14, 15): ...Յետ մահու Արտաւազդայ Միհրդատ չէառ յանձն տալ Տիգրանայ զաղատություն և զաթոռ հարցն իրոց՝ բայց տալով նման թողուլ դաշամբ 70 զաւտոս կամ սճովիտաք ի Հայոց (95 և. ք. զՔր.)... Եւ Հայն խոնարհեալ, այլ ոչ նուաճեալ» (Ստր., ԺԶ, 1, 19) Եվ հայն յայտնապէս, թէ Պարթևք ոչ նուաճեցին երբէք զՀայս»:

Եվ ահա իսկույն տեսարանը փոխվում է: Այդ սխոնարհեալս և պատանդ տվող ազգը բարձրանում է: Նրա թագավորը, Մեծն Տիգրան, որ ազատություն գտնելու համար իր երկրից յոթանասուն սճովիտաք է տալիս Պարթևների թագավորին, մտածում է սխոնարհել զվրէժ իւրոց նախնի

7 Գարսեպոլսե, Քնն. պատմ. Կայոց, Բ.:

Քշնամանաց: Գունդ մի հայացի եմուտ յերկիր իշխանութեանն Պարթևաց
և լինէր միշամուխ մինչև յԱրքեպա և Նինուլ, աւերել, զերփել զերկիրն
ընդ որ անցանէր: Պարթեք ստիպեցան կռել դաշնիս ի վնաս իզեանց.
դարձուցանել ի Հայս դեմանասուն հովիտսն, զորս հանեալ էր նոցա ի
նոցանէ յամին 95, նաև տալ նոցա զերկոսին գաւառն ժողկեալս Հիւ-
սասային Միշագետաց, այն է զՄիզդոնիա և Ուհայաստան (Սար., ԺԱ,
14, 15): Հանդերձ այսու հարկ եղև նոցա կռել դաշն նիզակակցութեան
ընդ յազմորդին (Յոսատ., ն. 1) և թաղուլ կամաց նորա դիրեանց հին ձե-
ռակերտս (առատ) ի հիւսիսոյ արևմտից:—«Տիգրան էր յայնժամ (72 թ.
Ք. ա.) հզօրագոյնն ի թագաւորս յառաջակողման Ասիայ: Տէրութիւն նո-
րա ձգէր յասիանց անտի Կուր գետոյ մինչև յեզերս Յորգանանու և ի լե-
րանց աշխարհին Մարաց մինչև ի ստորոտս Տարսուի. այլ շինուած յօտա-
րոտի մասանց, կառմեալ յամս 25, իբրև կոյա իմն բնկորոց խլելոց ի
դրացի ազգաց... ի հարատոյ կողոպուտք Սելևկեանց... իսկ առ սահ-
մանօքն Պարթևաց՝ շար իմն մանր մանր թագաւորութեանց, որոց էին
բժակ թագաւորք կամ սահմային իշխանք, այլ ի սերտ հպատակութեան...
Յարեւելից և ի հիւսիսոյ այլ ձեռակերտք (siei) դաշնաւոր անուամբ, որոց
պարտ էր տալ զօր ի թիկունս թագաւորին, որ կուչէր զանձն ձկրքայից
արքայոյ:

Քաղաքական կյանքի մեջ կատարուած այս մեծ և հանկարծական հե-
ղափոխութիւնը չէր կարող չազդել ժամանակի վիպասանների երևակա-
լութիւն վրա: Ելլ այդ որքան զեղեցիկ համառոտութեմ է կորննացու պատ-
մութիւն մեջ, պուցն տեղ-տեղ և երգի խոսքերով. ձկրանց կացեալ դուխ,
և արութիւն ցուցեալ, զազգս մեր քարձրացոյց, և զընդ լծով կացեալ-
ալը՝ յժադիրս և հարկաւարհանջս կացոյց բարձրացա:

3. Խորննացին Երվանդյան Տիգրանի հազմութիւններն ու նրա
հարստութիւնը նկարագրելուց հետո միայն անցնում է զօրքի նկարա-
գրին. «Հետնակամարտքն ի վերայ ուսոց ձիոց ըերծալք, և պարսաւոր-
քն ուհասարակ դիպաղեղոսնք, և շերտաւորքն ի առանք և ի տէգ նի-
զտկի վառեալք. մերկքն վահանօք և զգետուք երկաթեօք պարածածկե-
ալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նօ-
ցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք զՔշնամիսն արտա-
հալածելու:

Այժմ տեսնենք, թե ինչպես է նկարագրում պատմութիւնը Մեծն Տիգ-
րանի ահագին բանակը. «նախարարք և սեպուհք էին շունչ իմն և ոգի,
յորոց կազմէր հեծեալաօրն կուր վառեալ, ինքն և երկվարք նորա. յԱղուա-
նից անտի էին զբահաւորքն պատնենազէնք, իսկ Վիրք, զրացիք նոցա՝
աղեղնաւորք կորովիք: Թագաւորն Մարաց Ատրպատականի, փեսայ Տիգ-
րանայ՝ մարթէր գումարել հետնակս 40.000 և հեծեալս ըիր (Սար., ԺԱ,
13, 2): Մարք տային աղեղնաւորս հեծեալս. Արարացիք զայրութին անա-
պատի. Կորդուացիք ռահվիրայք էին և շինոգք կամրջաց. վարձկան՝
Հելլէնք և այլ նս ազգի ազգի գունդ զօրաց, ընդ ամենայն, ասեն, իբրև
500.000 այրոյ:

Հանկարծական փոփոխութիւնն է այս՝ հայ բանակի և այն էլ ինչ փոփոխութիւնն, Եվ միթե՞ն խորենացաւ մեջ նույնը շի ասված: Ավելացրեց վրան և փարթնամացած ու ճոխացած թագավորի և նախարարների զենք ու զրահներին շքեղութիւնն ու փայլքը, ըստ խորենացու:

4. Եւր աւելի կարեւոր էր Բզնաշխն Մեծին Մարաց (Գարեհ), որպէս հավանութեան է (ըստ Ապպիանու, Միհրդ. 106) ետես զՀայս եկհալ հասեալ մինչև զ դուրս Եկրատանայ, որք եւ այրեցին զապարանս նորա (Իսիդոր Քարակացի, Գ, 6): Այսպէս ամենայն արուարձանք բունադատեցան ընդունել լուրերին իշխանութիւն նորա ծանր ծանր պայմանօք, էր որ աւելի, էր որ պակաս: Քազաւորք Աղոռանից և Վրաց առ Կուր գետով, քազաւորք Մարաց Առաջատականի—(Միհրդատ աբօայ Առաջատականի առաւ կին զմին ի դատեբաց Տիգրանայ, Գիոն. Կաս., 12, 16)—և Մեծին Մարաց, զբազէս և թագաւորք Կորդուաց և Ադիաքենայ զվերին Գիդարաւ եղեն հարկատուք ի ժամանակի խաղաղութեան, և ձեռնտու զորք և սատարօք ի պատերազմունսս:

Վեպի մեջ ևս Երվանդայն Տիգրանը նվաճում է Մարերին Բայց ձերունի Պատմագիրը, թերևս իր աղբյուրից խաբւթած, Տիգրանին դնում է իբրև ժամանակակից և դաշնակից Կյուրոսի Այսպես դնելուց հետո նա Տիգրանին Մարաց տերութիւնը վերստին է տալիս Կյուրոսի աշակցութեամբ. Եւր և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զԻշխանութիւնս (Ա. իդ.), Եժժանեակ՝ կամօք և յոժարութեամբ՝ զԿիւրոսու յանձնով, զԻշխանութիւնս Մարաց և Պարսից իննցն յափշտակեացս (Ա. յա.): Անշուշտ անտեղուկութիւնն վ ասել, որ Կյուրոսն իր հոժար կամքով օգնել է Տիգրանին՝ հափշտակելու Պարսից տերութիւնը, որ իրեն Կյուրոսինն էր: Եթէ այդ նկատուող Կյուրոսն և իր աշակցութիւնը դուրս ձգենք, և անպատճառ պետք է դուրս ձգել, այն ժամանակ կմնա, որ Տիգրանը հափշտակել է Մարաց և Պարսից տերութիւնը: Այս դեպքում Պարսից քառը փոխանակած է Պարսեաց բառին. վիպասանների պատմիչների մեջ հին Պարթևների տեղ նորագույն (Սասանյան) պարսիկները կարող են անցած լինել, ինչպես է և Արտաշեսի վեպի մեջ: Պարսիկ անունը դրացի արիական ազգերի համար ամբի ժողովրդական եղած կարող է լինել հայերի մեջ, և է, քան Պարթև անունը: Կնշանակի երգը մշակողը, Տիգրանին Կյուրոսի ժամանակակից դնելով և Կյուրոսին՝ օգնել տալով Տիգրանին, թողել է երգի մի գիծը, թէ Տիգրանը հափշտակել է Պարսից (Պարթևաց) տերութիւնը և ստիպել նրանց սկսել դառն նիզակահեցութեանս հայերի հետ: Այս այսպես արդեն պատմական գիծ է:

5. Վեպի մեջ Տիգրանը շինել է Տիգրանակերտ քաղաքը: Խորենացին երկրորդ անգամ էլ հիշում է (Գ. 11.) միևնույն Տիգրանակերտը, որի որմերն էին Եր հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալս, և այս Տիգրանակերտը նա Միշազետքում գիտել: Ուրեմն Հայկազն Տիգրանի շինած Տիգրանակերտ ասելով՝ նա հասկանում է Մեծն Տիգրանի Միշազետքում շինած քաղաքը: Ուստի և նրա պատմութեան բուն աղբյուրը,

Իր դր, շատ լավ պահել է Տիգրանակերտի շինության հիշատակն ևս։ Ավելորդ չի լինիլ այստեղ բերենք այդ քաղաքի նկարագրից մի երկու դիժմ։ «Տիգրանակերտի թուէին արդարն յարուցեալ քաղաքը մեծամեծ հնոյն Ասորեստանի և Բարելացոց, հանդերձ պարսպօքն յաղիւսոյ յիսուն կանգնոյ քարերու թեմք, յայնք մինչև բաւական լինել շինութեան ապաստանաց, հանդերձ ամուր միջնաբերդան, հոյակապ ապարանիւքն արտաքոյ պարսպաց...» Եվ ի դուր չէ, որ Խորենացին Տիգրանակերտի պարիսպներին համար գրում է. «Ե՛ր Հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն»։

Շարունակենք համեմատել Խորենացու Հայկազն Տիգրանի պատմութիւնը Մեծն Տիգրանի պատմութիւն հետ։

6. Մեծն Տիգրանի պատմութիւն մեշ կարդում ենք. «Ենդկոքին թագաւորն (Տիգրան և Միհրդատ) եղին պալմասս, զի յամենայն մարտս պատերազմաց զորս տայցեն երկուստեք ծախիւք՝ երկիրն նուաճեալ յետ յաղթութեան լիցի Միհրդատայ, իսկ աւարն, այն է՝ գերիք, անասունք և գանձք՝ Տիգրանայ» (Յուստ., 10, 3, 5)։ Եվ այդ ավարն ու գերին, որ Տիգրանն առնում է Կասպոզովկայից, սակաւ բան չէ։ Էլ շնքն խոսում մյուս երկրներէից առած ավարների ու հարկատու ազգերից ստացած գանձերի մասին, «Ե՛ր պահպանութիւն այսպիսի և այսչափ զօրաց պիտոյ էր թագաւորին ամբու գանձ. և Տիգրան իբրև զՄիհրդատ ունէր քաղաքս մեծամեծս չի գանձուք, որպիսի էին Ողականն և Բոզքերդ ոչ հեռի յԱրտաշատէ, և Արտազերք առ Եփրատուս (Արածանի) (Ստր., ԺԱ, 14, 6)։ Լսենք և արքունիքի նկարագիրը. «Արքունիքն՝ ունայն շքով և պերճութեամբ արկանէր ա՛հ ժողովրդեան որ տղայն էր։ Թագաւորն մեծապատիւ մեծարեալ, մինչև կոշիլ աստուած, ոչ երբեք երևեր ի հրապարակի՝ եթէ ոչ մեծաշուք սպասու, զգեցեալ պատմունան նկարէն, գաւազան, ի սպիտակէ և ի կարմրոյ (Գիոն Կաս., 12, 52), և վերարկու ի ծիրանայ խորշ-խորշան. դուրսն պատկեալ քարձր աստնդարարդ խորիւս Յորժամ գային առ նա յայգորնի՝ թագաւորը չորք ձեռատունկը կային յտաին, ձեռք կցելովք առ գահոյի նորա. և ի հեծանել նորա ի ձի՝ ընթանային նորա առաջոյ նորա հետի, լոկով պատմունանաւ։ Փարթամացած հայ իշխաններն ևս անշուշտ պիտի հետենին իրենց թագավորի օրինակին։

Այժմ տեսնենք, թե ինչպէս այս պատմութիւնն անում է Խորենացին իր սեղմ ռճով։ Նա ասելով, որ Տիգրանը մեր ազգը բարձրացրեց և մեզ օլծադիրն և հարկապահանջս կացոյց բազմացս, ավելացնում է. «Մթերս ոսկույ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգնատուց և պէս պէս գունից և անդուածոց արանց միանգամայն և կանանց բազմացոյց. որովք տղեղագոյնքն իբրև զգնաւորս երևէին սքանչելիք և դեղաւորքն ըստ ժամանակին առհասարակ դիւցազնացեալք»։

7. «Յագաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու գամենայն հասակ պարսպեալս», գրում է Խորենացին Հայկազն Տիգրանի հետևիւր։

Եվ արդարև, Մեծն Տիգրանի ձեռով նվաճված Ասորիքի համար ա-
սում է պատմութիւնը, սկզբի առ Ասորաց աշխարհն դամա շորքտասան
(Ապպիան. 17) Թէպէտ ընդ օտար իշխանաւ վաշխիցիին խաղաղութիւն,
հանգիստ և աւուրս բարենշանս: Եթե օտար աշխարհն այսպէս բարգա-
վաճում էր նրա օրով, որչափ ևս ավելի քուն երկիրը, նվաճված ազգերի
աւլարով լիացած ու փարթաւացած՝ անշուշտ հանգիստ էր վաշխում Հա-
յաստանը, որի շինութիւնս համար Տիգրանը հրահանք և հույներ էր գաղ-
թեցնում: Եվ որքան գեղեցիկ ու բուն վիպական ձևով է արտահայտված
այդ շինութիւնն ու լիութիւնը, շիւղով և մեղու զամենայն հասակ պա-
րարեայւ, որ անշուշտ ժողովրդական երգի խոսքերն են: Յուր ու մեղրը
միևեւ այժմ մեր ժողովրդի մեջ վիպական սիրելի կերակուրն է. Սասուն-
ցի Դավիթն իր հայրենի յուր ու մեղրով է սնվում, և ժողովուրդն իր երգի
մեջ մեկին յով խնամելու համար ցարդ Երզում է. «Փեղ կոտացնեմ մեղր
ու կարագ»:

8. Մեծն Տիգրանին է վերաբերում, ինչպէս տեսանք, և Մարաստա-
նի նվաճումը: Բայց խորեանցու մեջ պահված է ոչ միայն այդ հիշողու-
թիւնը, ս՛կա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Ափղահայա, որ ի
Մարաց էր, տա նմա զքոյր իւր Տիգրանոսի կնութեան, ըզմիսք խնդրելով
Ափղահայայ: Այս խնամութիւնն ևս պատմական հիշողութիւն է: Ար-
դեն տեսանք, որ Մեծն Տիգրանի փեսան էր Ատրպատականի Մարաց
թագավորը, որ շարար կէին զմին ի դատերաց Տիգրանայա (Դիոն Կաս.,
Ձ, 16): Միայն առաստիճի մեջ Տիգրանոսին, սր սովորաբար նշանակում
է Տիգրանի որսորդ, Տիգրանի քոյրն է: Այսքան տարբերութիւն, հարկավ
կարող է մտնել ավանդական երգի մեջ:

9. Քննենք առասպելի Մարաց թագավորի հարաբերութիւնը Տիգ-
րանի հետ: Ափղահայը օյառաջագոյն դաշնաւորն է վիպական Տիգրանին,
փեսայանում է և ապա նրան շար նյութի է ուղղում, դայց հաղթվում և
ապանվում է Տիգրանից: Այսպէս և Մեծն Տիգրանի փեսան՝ Մարաց թա-
գավորը դաշնակից է Հայոց թագավորին և հիշվում է նրա պատերազմ-
ների մեջ: Զգիտենք, թե այդ փեսան ինչպէս է վարվում, երբ Մեծն Տիգ-
րանի աստղը թեքվում է: Բայց շատ շտառով, Տիգրանի անմիջական հա-
ջորդների՝ Արտավազդի և Արտաշեսի ժամանակ արգեն տեսնում ենք, որ
Մարանը թշնամացած են հայերի հետ: Արտաշես թագավորը նույնիսկ
կոխվ է ունենում Մարերի հետ և Պարթևների օգնութեամբ հաղթում է
նրանց:

Դիտենք, պատմական իրողութիւններ վիպական զանազուսութեան
մեջ երբեմն կցվում ու միանում են իրար, և մի քանի մոտիկ ժամա-
նակներում իրար հաջորդ սերունդների պատմութիւնից վազմվում է
մի պատմութիւն: Արդ՝ տեսնում ենք պատմութեան մեջ Մեծն Տիգրան
թագավորը Մեծ Մարաստանի մարաքաղաքն անում, ավերում է և նրա
թագավորին ստիպում ճանաչել իր իշխանութիւնը: Փոքր Մարաստանը
նախ դաշնակից է հայերին, նրա թագավորը հայոց թագավորի փեսան է:

Ակազ շտառով թշնամանում են այս երկու ազգերը՝ հայերն ու մարերը։ Մարաց թագավորը հայոց թագավորին վնասել է ուղում, և հայոց թագավորը հաղթում է նրան։ Եվ այս ամենը կատարում է մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Եվ այս ամենը հեշտությամբ կարող էր պատմվել մի հայոց թագավորի՝ Տիգրանի և մի մարաց թագավորի՝ Ածղահակի վրա։ Եվ պատմված էլ է։

Այսպես՝ վիպական Տիգրանի և վիպական Մարաց թագավորի հարաբերությունն ամբողջապես մի պատմական-ամլանդական հիշողություն է։

10. Վիպական Տիգրանի համար ասված է, թե նա, ինչպես և մեր մյուս առաջին հին թագավորները, քրեիկ և հարազատս է օրհնեերորդ ի բնկաց մերոց պատկաւորացս (Ա. իր. իգ. հմմտ. Ա. Լա։ սՀաւաստի պատմել զբուն և զառաջին Տիգրանն)։ Արդ զքնիկս լինելն իսկապես պատմական Մեծն Տիգրանին կամ Խորենացու Միշին Տիգրանին է վերաբերում։

Կարո՞ղ էր արդյոք երգի մեջ, որի վրա հիմնված է Խորենացու պատմությունը, Տիգրանը բնիկ, հարազատ և մեր առաջին (ոչ Արշակունի) թագավորներից համարվելու—Անշուշտ։ Մեծն Տիգրանի առասպելի կազմվելու և նրա մատին եղած երգերի կենդանի ժամանակը եղել է անհրաժեշտորեն նրանից քիչ ուշ, այսինքն՝ մեր թվականությունից քիչ առաջ և այսպես մեր թվականությունն առաջին դարը։ Այդ միջոցին Հայոց քնիկ թագավորների տեղը բռնում են օտարազգի թագավորներ։ Եվ այդ րավական լէ, երկիրը վրդովմունքի մեջ է ընկնում այդ մարացի, պոնտացի, վրացի թագավորների օրոք, մինչև որ Պարթևական Արշակունի օտար տոհմն իջնում է հայերի վրա։ Այդ այլազգի թագավորների խստանշտոթ և վստովաճուղ տիրապետությունն ժամանակ տեղի ունեւր, հայ վիպասանը հիշելու էր առաջին բնիկ թագավորներին և մասնավաւղ օրտաղաղութան և շինութան բերող Տիգրանին, իր քրեիկ և հարազատս թագավորին, և ասելու նրա համար օգնենացս (վար. քյետնոցս) ըղձալի ինքն և ժամանակ փոքս։

11. Մեծն Տիգրանի մակդիրն անգամ սմեծն պահված է Խորենացու պատմության մեջ երգից առած այս Տիգրանի վրա, սԱրգ յառաջ քսն զձեռնարկելն մեր ի քանն որ յաղազս Մեծին Տիգրանայ (Ա. իգ.)։ միևնդն Պոմպեոսի ժամանակակից և հռոմայեցիների հետ կռվող Տիգրանին, որ իսկապես Մեծն Տիգրանն է, Խորենացին մյուս Տիգրաններից որոշելու համար սմիշին է նկոչում։ Ժողովրդական երգը, ուրեմն, ճշտություն մը պահել է և իր գոված թագավորի մակդիրը։

12. Մեծն Տիգրանի նկուրագիրը երգերի մեջ.— Մենք տեսանք, որ Խորենացին անձամբ օգտվում է երգերից ևս, բայց վիպական Տիգրանի պատմությունն համար օգտվում է գլխավորապես մի գրավոր աղբյուրից, որ նա կոչում է սՀխաումն պիտոյիցս, քի շարս հագներգութիւնս։ Այս ի նկատի տաննաւոյ, այդոք կարելի է ընդոնել, որ Տիգրանի աղբյուրներ և ներքինի նկարագրությունը վիպական լինի կամ այդպիսի տարերջ ու-

նենա իր մեջ:— Անշուշտ: Ինչքան էլ այդ պատմութիւնն առաջին գրողը, բարգասաւորն ի բանս, այդ պատմութիւնը «Պիտոյից» կանոններով մշակած լինի,—ինչպիսի տր ւէ իբրոք,—Որս պատմութիւնը նրանկայական ու սկսմամտածականն ըլլաւ Այսպես և ինչքան էլ նա Տիգրանի մարմնի գեղեցկութիւնը, զորութիւնն ու արագութիւնը գովեր, ինչպես պահանջում էր «նեքրոյանի սահմանք», կարելի չէ ասել, որ այդ գովեստի գծերը, «կամամտածականն լինին և ոչ թե մեծ մասամբ բուն աղբյուրից՝ ժողովրդական հրգից քան: Ենթադրեան է քան արտագրական հղիւոյ բարեաց, ասված է Պիտոյից գրքի մեջ (եր. 413) ամենից առաջ, և ոչ թե կամամտածական մի բան: Այսպես և ետեից գոված «Մովսեսի ներքոյ-յանի» մեջ (417 Հտ. Ժ. Ժա. Ժր.) այդ ներքոյանի հեղինակը գովում է Մովսես մարգարեի մարմնի գեղեցկութիւնը, զորութիւնը և նրազութիւնը, բայց նա այդ ամենն իրենից չի ստեղծում, այլ Աստվածաշնչից է վերցնում կամ Մովսեսի կյանքի այս կամ այն դիպվածից է հանում:

Բայց որքան դժգոյն է այդ ամենը, ոչ մի մակդիր, ոչ մի կենդանի նկարագիր. իսկ ընդհանրական, Տիգրանի գովեստը որքան կենդանի է, վառ ու գունավոր և յակիրներով հարուստ: Ինչի՞ց է առաջանում այս հրկու ներքոյանի միատեսակ գովեստի՞ մարմնի գեղեցկութիւնն և զորութիւնն նկարագրի այս մեծ տարբերութիւնը:— Հարկավ ոչ միայն այս ներքոյանների հեղինակների ճարտասանական շնորհքի տարբերութիւնից, այլև այն հանդամանքից, որ Տիգրանի գովեստն առնված է ավանդական երգից: Մասամբ երգի մեջ արդեն պատրաստ գտած պիտի լինի ներքոյանի հեղինակն այդ իսկ հոմերական մակդիրներն ու նկարագրները. «Նարտեան» այս և աղերսի ծայրի հրաց... երեսուց քուրան, և մեղուակն անձնայն և թիկնամբն, առողարարն և գեղեցկոտն... կատարեալս ի դիցազանց հասակաւ և բնութեամբ... սքանչելի դիցազն քաղահասակն, նիդակաւորն ամենեկին յուր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն անարտեալ հասակի, առոյգ ամենայնի ըստ իրեարս պատշաճեալ և ուժով ոչ զոք ունեւով իւր զոյգ, «հայկազն բագմաբիրաւոր: Բագմաբիրաւոր» Տիգրան,—մի մակդիր, որ միայն Մեծն Տիգրանին և նրա կես միլիոն զորքին է վերաբերում: Իսկ մյուս մակդիրները, արդոք գրանք ևս թուն պատմական են, այսինքն՝ նորը ճշտութիւնը պահել է Մեծն Տիգրանի նկարագիրը:—Անշուշտ, կարելի չէ պահանջել, որ առաջին գարում մեր թ. ա. ապրող մի թագավորի արտաքինը ճշտութիւնը պահած լինի այն ավանդական վեպը, որ գրեթե շարունակ բերն բերան անցնելով, ամենավաղը Ծ դարում գրված պիտի լինի: Վեպ սիրում է խղայական պատկերներ ստեղծել և պատմական անձերին անգամ իր սիրած իղեալական կերպարանքը տալ: Բայց և այնպես անհնարին է, սր պիպակն նրաը շորտի պատմական ամենի արտաքինի և ներքինի այս կամ այն դիժը: Ուրիշներին ենք թողնում ընդարձակորեն համեմատելու երգի Տիգրանի և Մեծն Տիգրանի արտաքինը,—եթե վերջինս վառ նկարագրված ուր և է: Մենք կրաղջատենք մեզ հայտնի մի հրկու գիծ:

Մեծն Տիգրանը նկարագրվում է. «Անհնարին փառասէր և ծիր. եօրանանեմենի շէր կորուսեալ զիր կայտառութիւն... Մարմինն էր գորեղ: Միթե այս կարճ նկարագիրը նույնիսկ ամբողջապես չի՞ քովանդակում իր մեջ երգի Տիգրանի նկարագիրը: Ի՞նչ են ասնձեռայ, թիկնաւտ, առթագարած, կատարեալ հատակաւ կամ քաջահասակ, և ուժով նմանը լուսեցողք բառերը, եթե ոչ այս զգորեղ մարմնիչ գարգացումը: Եվ մի մարդ որ լոթանասուն տարեկան չի կորցնում իր կայտառութիւնը, մի՞թե երգը ճշմարիտ չի նկարագրում, կոչելով նրան սեքեսոս գունեան, առողջ ամենայնիւ:»

Ինչ որ Տիգրանի արտաքինի համար ասացինք, նույնը պէտք է ընդունել և անձնական հատկութիւնների համար, զանազան յիմաստութիւն և յողջախոհութիւն, յարութիւն և յարգարութիւն, ասած է սեքերոլյանի սահմանիչ մեջ: Ինչքան էլ Տիգրանի պատմութիւնը գրողը Պիտուլից կանոնների պահանջած այդ շորս հատկութիւնները զնում է Տիգրանի համար, կարելի չէ ասել, թե անհիմն ու մտացածին բան է գրել նա. «Արանց կայտալ գլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց, այսպես է գովված Տիգրանը, որ և արանցն այնպիսի և ամենեցունց քաջ: Եվ արարն ասնհնարին ժիրք, եռանդուն և արի է նկարագրվում Մեծն Տիգրանը. մի մարդ, որ մտ 45 տարեկան հասակում թագավորում է, քսան և հինգ տարի շարունակ քաջութիւն և արշարհակալութիւն գործերով զբաղվում, մտ յոթանասուն երկու տարեկան հասակում (69—68 թ. մեր թ. ա.) կտրում անցնում վճարմանայն արշարհս Հայոց կոչել զերիտասարդս ի զէն վասն հայրենի արշարհին, գրում է զգրովանդակ արշարհն ի զինուորութիւն, կալեալ զուժեղագոյնան միայն ընդ դրոշուս. բաժանում է այդ գորքը վաշտերի ու գնդերի և կրթում է կարճ ժամանակում, որչափ հնար է, զբոս Հոռոմոց որինիչ, որպէսզի կարողանա հոռոմայեցի լեգեոնների դեմ կռվել: Ահա բարութիւն ցույց տվողք թագավորը:»

Տիգրանի ներքին հատկութիւնները սովորաբար շատ բարձր շնն համարում: Բայց պէտք չէ մոռնալ, որ օտարներն են նկարագրել նրան և նկարագրել են իր մեծ զաշնակցի՝ Միհրդատի հետ համեմատելով: «Թէպէտ շարէր նա զալ ի կշիտ համեմատութեան ընդ դրացոյն իւրում (Միհրդատայ) ոչ հանճարով, ոչ բուռով բարուցն՝ ունէր ընդ նմա զոյգ հաւասար եռանդն մեծանայոյս: Ինչքան էլ Տիգրանը բախտավոր աստղի տակ ծնված լիներ և քաղաքական հանգամանքները նպաստավոր լինեին նրա համար, կարելի չէ կարծել, թե նա առանց ներքին մեծ արժանավորութիւն, առանց բիւհեմագոյնս և բեծեթմաքտս լինելու կարող էր այնքան մեծ հաջողութիւն ունենալ: Այն ժամանակ, արդարեւ, նա պետք է եղի իմնա լիներ, ինչպէս հավատում էին ժամանակակիցները, մի հավատ, որդի հիշողութեամբ նուրբագիս մնացել է երգի մեջ: Նա կռվում է սկաստրիայի դիւցազն հասակաւ և բնութեամբ, սքանչելի դիւցազն (Ա. իգ. հմտ. Ա. լա. քայոց ըստ դիւցազնութեանն կարծեաց... մի է և .

միայնակ սա ի Հայկազանցս Տիգրան. Ա, իդ., ԵՊեղատքն... դիցազ-
նացեալքս)։ Ընդ է հոռոմայեցիների հետ ունեցած հարաբերութիւն մեջ
երևում է նրա անզգուշութիւնը, բայց պետք չէ մոռանալ, որ ինչպես
ճիշտ դատում է Ույնախոր. Եփեսոս և հինգ ամբ... անխառն յաջողութեան
ետուն նմա սխալակեւ... Սուտակասպասք հաւատային թէ ոգի իմն իցէ
և ինքն յասող իւր յուսացեալ էրս։ Քողնում ենք այդ պայերճարանս թա-
գաւորի հովանավորութիւնը հունական գրականութիւն և նարտասանու-
թիւնս։ Քողնում ենք և այն, որ իր երկիրը ծաղկեցնեալու համար՝ նա հույն
և հրեա դերիներ է մերում Հայաստան, թատրոններ շինում և այլն։

Գաղով նրա արդարադատութիւնը, շահավորութիւնն և ուղղափա-
ռութիւնը՝ գուցե արամազիր լինեինք կարծելու, որ այդ հատվածը գուտ
հարտասանական ժառանգում ունի։ Սակայն խորհնացիս հենց այդուհի հի-
շում է հին ավանդական երգերն ու գովեստներն իրան աղբյուր խոր-
նացուն չհամապատու սլ մի տեղիք շունենք։ Մնում է, ուրմն, Տիգրանի
գովեստը՝ ճայրկեցուն ի կերակուրս և յրմպելիս, և ի խրախճանութիւնս
օրինատը... և ի ցանկութիւնս մարմնոյ շահարոք՝ համարել վիպական
խղճաշտոյանն, ցամախ որ Մեծն Տիգրանի համար ասում են, թն էր ամէտ ի
հեշտանս և արեւելյան սովորութիւնս բազմաթիւ կանայք ունելու Այդ-
պիսի մի գաղափարական նկարագիր է անշուշտ և այն համասար արդա-
րագատութիւնը, որ վիպասանները ցանկացել են, որ իրենց սիրելի թա-
գաւորն ունենաւ Եւրոպարագատ և հաւասարասէր կշիռս ունելով յամե-
նալի, ցամեկանս ուղտոք կենցաղ մտացն լծակաւ կշիռելու։ Ոչ ընդ շաւա-
գոյնս խանգայր և ոչ զնուստսն (վարիանտ՝ զստրուկսն) արհա-
մարէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր դիւանմոցն իւրոց ի վերայ
տարածանել զգգնասոս։

Նկատենք դարձայն վերջին անգամ, որ այս, ինչպես և վերելի խոս-
քերը, ինչքան էլ սրանք բովանդակութիւնը երգից ծագած լինի, գու-
ցե սակաւ բացառութիւնս՝ քառացի երգիչը շնն, հարկաւ խորհնացիս
միշտ իր սիրած հարտասանական լեզվով է պատմում կամ իր աղբյուրի
նարտասանական ոճով։

Հետո մի քանի ուրիշ գծեր էլ կտեսնենք, որ խորհնացու մեջ Եր-
վանդայն Տիգրանի վրա են ասված, բայց իսկապես պատմական Մեծն
Տիգրանին են վերաբերում։ Այս բերած կետերն արդեն լիովի ցույց են
տալիս, տր երգից առած Տիգրանի պատմութիւնն ամբողջովես Մեծն
Տիգրանինն է։ Հարկավոր է միայն դուրս ձգել իդ. գլխից Եփեսոսի աշակ-
ցեալս, լիւ. գլխից Երաշխատութիւն մտնումինն՝ տր ի կիւրոսէ առ
Տիգրան. կայ սիրոյ Պարսկաստան և Հայկազանս, և լա. գլխից օժան-
դակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելովս խոսքերը, որոնց բողոքի
իմաստն էլ նույն է՝ Կիւրոսի բարեկամութիւնն ու օժանդակութիւնը։

Մեծն Տիգրանի երգից առած այս պատմութիւնն, ըստ ինքյան հաս-
կանալի է, պետք է հանել այն տեղից, որ կա խորհնացու պատմութիւն
մեջ, և զնել իր իսկական տեղում։ Երգն ու գովեստը Պոմպոնոսի ժամա-

նակակից Մեծն Տիգրանի, ըստ խորենացու՝ Միլին Տիգրանի վրա է եղել. նրա վրա էլ պետք է պատմել այսուհետև Եվ այսպիսով խորենացու պատմութունը, սոր յաղագս Մեծին Տիգրանայ, որ... էր հուժկու, անուանի և յազթող ընդ այլ աշխարհակալս, ստանում է իր խկական պատմական արժեքը, և միանդամայն այդ պատմութունը դասնում է խորենացու Հայոց պատմութայն կարևոր մասերից մեկը: Երգը մեծ ճշտությամբ պահել է Մեծն Տիգրանի պատմութունը: Ծավոք խորենացին, թերևս հետևելով իր ազգյութին, սխալվել է իր ժամանակագրության մեջ²:

ԱՐՏԱՇԵՍԻ ՎԵՊԸ

40. Աղբյուրը:— Մ. խորենացին Երվանդի սնասին և ապա նրա և Արտաշեսի կոնվը (Ք. լճ.—խր.) պատմելուց հետո՝ հիշում է իր աղբյուրը: Են զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանույ, զրող մեհենական պատմութեանց, և զայլ քաղում գործս, զոր ասել կայ մեզ առաջի, որում և պարսից մատենանքն վկայեն և հայոց երգք վիպասանաց՝ (Ք. խր.): Մի կողմ ֆրոնելով հիշման գրասիր աղբյուրների խնդիրը, պետք է ընդունել, որ Սանատրուկի և Երվանդի պատմության էական մասը վիպական պիտի լինի, կամ վկայության կողմած Վիպասանքի քովանդակութունն, ըստ խորենացու, մոտավորապես նույնը պիտի լիներ, ինչ որ նա բերում է իբրև Երվանդի պատմութուն: Հավաստի վիպական է Սանատրուկի սնվան քաջատրության մատեն առասպելը (Ք. լչ.), ինչպես և Երվանդի շար ալքի մասին առասպելը (Ք. խր.), որ շատ տարածված մի ժողովրդական հավատալիք է հին և նոր ազգերի մեջ:

Վեպի շարունակության համար խորենացին երկու անգամ իբրև աղբյուր դնում է վիպասանների երգը և բերում է ավանդական պատմվածքի բովանդակութունը (Ա. լժ., Ք. խթ.): Բացի այդ՝ նա վիպասանների երգն ու առասպելն իբրև աղբյուր հիշում է մի քանի ուրիշ անգամ ևս (Ք. ծ.—ծք., վա.): Այսպես ուրեմն Արտաշեսի և Երվանդի պատմութունը, պատմագրի վկայությամբ, ծագում է ավանդական վեպից: Դա կազմել է Վիպասանքի երկրորդ մասը:

41. Պատմության արամիտությունը Վիպասանքի մեջ:— Արտաշեսի վեպի հիմնական մասն ևս պատմական է: Դրա մեջ էլ պահված է պատմական անցքերի հիշողություն, բայց մեծ անաբունիզմներով և այլափոխությամբ. օրինակ՝ ալանների արշավանքը, որ կատարված է Տրդատ Ա-ի օրով, վեպի մեջ կապված է Արտաշեսի անվան հետ:

² Այս մասին տեսել Մ. Արեղյան, Հայ ժող. առասպելները, հր. 422—493 :

1 Յ. Կովալուսկոյունց, Հայ ժող. հեքիաթներ, է, հր. 28: Հմմտ. M. Abeghian, Des. etm. Volkesg., հր. 188, հմմ.:

ի՞նչպէս է առաջանում պատմութեան այսպիսի վիպական այլափոխութիւնը:

Պատմական երգն ու զրույցը և վեպը, իբրև ամանդական բանահյուսութիւն, դարեր շարունակ ապրելով վիպասանների բերանին, ինչպէս տեսանք, անզգալի կենսով փոփոխութեան են ենթարկվում: Բայց այսպիսի փոփոխութիւնն էական նշանակութիւն չունի՝ վեպի մեջ իրական պատմութեանն այլափոխելու համար: Ավելի մեծ է այն փոփոխութեանը, որ կատարվում է ուրիշ նշանավոր իրողութիւններից և պատմական անձերից, որոնց հիշողութիւնն էլ պահում է զանազան զրույցների ու երգերի մեջ: Ամանդական վեպը ժամանակագրութեան չունի: Ուստի անշատ երգերն ու ավանդութիւնները, որոնք առաջ են եկել զանազան պատմական դեպքերի ազդեցութեան տակ, առանց զովարութեան ձգտում են հետզհետե միմյանց միանալու: Այդ ժամանակ զրույցներն ու երգերը սովորաբար ներքին փոփոխութեան են ենթարկվում և ոչ թե մեքենայաբար կցվում իրար: Բնականաբար ամենից ավելի տուժում են հերոսներին անունները: Մի պատմական անվան տեղ անցնում է մի ուրիշը: Առաջանում են անթրոնիզմներ: Տարբեր դարերում և տարբեր տեղերում ապրած պատմական անձերը տրվում են իբրև ժամանակակից և նույնիսկ ազգակից: Տարբեր անձերի տարբեր ժամանակներում կատարած արարքները համաքվում են ի մի և վերագրվում մեկ անձի, ինչպէս և քաղմասդան տւ քաղմասթիվ զրույցներ, նյութով ցեղակից լինելով, միանում են և մի մարդոջութեան կազմում: Այդ ժամանակ նշանավոր հերոսներն ու սիրելի անուններն իրենց են քաշում ուրիշների վրա եղած երգերն ու զրույցները, և նրանց պատկերը հարստանում է: Նրանք դառնում են, այսպէս ասած վիպական խմորման կենտրոնը: Այսպէս՝ Ֆրանսիական վեպի մեջ Մեծն Կարլոսի անվան հետ են կապված շատ արարքներ և գծեր², որոնք իրենք չեն, այլ Կարոլինգյան ցեղի ուրիշ թագավորներին: Նույնիսկ Մերովինգյան հարստութեան թագավորների գործերն անցել են Մեծն Կարլոսի վեպին:

Մի քանի պատմական անձերի արարքները միանում են, հարկավ, մի որևէ շոշափման կետ, հանգույց գտնելով: Ասել չի տալիք, որ ամենից շուտ միանում են համանուն պատմական անձերի մասին ձգած ավանդութիւնները: Մի քանի Կարլոսների կամ մի քանի Արտաշեսների երգերն ու զրույցներն այնպէս են ասվում, որ իբրև մի մարդու վրա լինեն: Բայց և տարբեր անուններով մարդկանց արարքներն անցնում են մեկից մյուսին:

Այնուհետև միացման համար իբրև հանգույց ծառայում են զգնավորապէս՝ զանազան անձերի գլխին եկած դեպքերի կամ երանց կատարած գործերի համանմանութիւնը: Նման դեպքերի ազդեցութեան տակ՝ հին

² G. Lanson, Histoire de la littérature française, Paris, 1895, էջ. 26, հառ.

պատրաստի վիպական երգը, և նույնիսկ վեպը, իր մեջ ընդունում է նոր տարրեր, նոր պատմական անցքերից:

Քացի տարրեր պատմական անձերի և նրանց գործերի այսպիսի միացումից, վեպի մի էական կողմն էլ այն է, որ հերոսները հարում են իրար ազգակցական կամ այլ կապերով: Մի հին վիպական հայացք է՝ ցեղակցությունն ու ժամանակակցությունը տեսնել ոչ թե ֆիզիկապես, այլ հոգեպես: Այս հայացքը վիպասաններից անցել է հին պատմագիրներին, որոնց դրածը շատ քանում լի տարրերվում ավանդական վեպից, որովհետև նրանք էլ հաճախ շին շանազանում բանաստեղծություն, առտապել ու պատմություն: Այսպես, օրինակ, Խորենացու Հայոց պատմության մեջ գտնում ենք ցեղակցության ու ժամանակակցության այդ հին վիպական հայացքը: Նա Ա. գրքի ե. գլխի մեջ հայտնում է, թե Նինսուր Քելի որդին չէ, թայց կան աշոգես ասողներ, որ ըստ նշանատր և անուանի լինելոյս պատե՛հ են համարել այսպես կարգել պզեհոյն մօտաւորս: Ծվ ինքն իսկ Խորենացին ուրիշ տեղ (Ա. լա.) գրում է. Ե՛րբմ կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիրարան. քանզի ըստ իմ քաջաց ազգք քաջն. իսկ միշոցքն որպէս տէպ ումիք թուրից ձուցելու:

Այս նախնական հայացքով քաջերը փնականաբար իրար ցեղակից ու ժամանակակից են համարվում: Ուստի ավանդական վեպի մեջ նրանք համարմբվում են կամ մի մեծ հերոսի շուրջը, ինչպես ռուսական վեպի մեջ, կամ, ինչպես հունական վեպի մեջ, մի նշանավոր իրողության շուրջ՝ դառնալով մի մեծ գործի մասնակից: Հաճախ ակորնապես իրարուց անկախ երգերի ու զրույցների հերոսները դառնում են եզրայրներ, կամ հայր ու որդի և հարսդում են միմյանց: Այս վերջին եղանկն են ջնարել հայ վիպասանները թե մեր հին վեպերի և թե նոր վեպի համար: ԵՄասնա Մոերիս հերոսները՝ Սանասար, Ալուոժաձե Մհեր, Գալիթ և Պատիկ Մհեր քաջերի մի սերունդ են, հորից որդի հաջորդությամբ, որոնց շուրջն իբրև ազգականներ դրված են՝ Ձինով Հսվան, Ճոան Վերգո, Քեռի Քորոս, Խոր Մանուկ և ուրիշները: Այս հայացքի ըստ հոգու ցեղակցության, արդյունք է և այն, որ Սասնա Մոերն ու Եահնամեի հերոսները ցեղակից են դարձել ժողովրդի աչքին: Զայլը տարձել է Սասուն քաղաքի թագավոր. Դավիթը՝ Զալի եղբայրը, Բուրզեն՝ Դավթի որդին, Ռուստամը սասունցի է և այլն: Ուրիշ խոսքով՝ պարսից վիպական հերոսները փոխադրվել են Սասուն և դարձել Սասնա ծոեր:

Այսպես ուրեմն, զանազան ժամանակներում ապրած պատմական անձերն իրերի փոփոխմամբ հենց մոտենում են միմյանց, և տարրեր ժամանակներում կատարված դեպքերը վեպի մեջ խառնիխառն կուտակվում են միմյանց վրա: Հինը հաճախ մնում է, թեև մթնացած ու ետ մղված: Հնի վրա աճելանում է նորը, հետագա ժամանակներում կատարված դեպքերի զրույցը, և կազմվում է իրոք մի ալլափոխ պատմություն: Ծվ այդ բավական չէ, քան պատմական վեպն անզգալի կերպով ստանում է առասպելական քնավորություն, և պատմական անձերը դառնում են դիպազներ:

Արդ, մեր Վիպասանքն ևս, ինչպես և մեր մյուս վեպերը, հուսված է այսպես հետզհետե, ժամանակի ընթացքում: Նրա համար իբրև նյութ ծառայել են մեր անցյալի պատմական նշանավոր իրողութիւնները: Եւ քանի որ մեր Վիպասանքի երկրորդ մասի կենտրոնը սկզբից մինչև վերջը,—Երվանդի թագավորելուց մինչև Արտավազդի մահը իր հոր անեծքի տակ,—կազմում է Արտաշես թագավորը, ուստի և վեպի նյութ եղած պիտի լինի ամենից առաջ մեր Արտաշես անունով թագավորների պատմութիւնը: Կնշանակի՞ Արտաշես անունը սիրելի է եղել և Արտաշեսների գործերն առանձին տարավորութիւն են թողել վիպասանների երևակայության վրա: Իսկ որովհետև Տրդատ Ա-ի գործերն ևս երևում են վեպի մեջ, կնշանակի՞ նրա ժամանակի արարքներն էլ իրենց ազդեցութիւնն արել են վիպասանների վրա և նրա պատմութիւնն էլ որևէ հանգույցով միացել է արդեն պատրաստի ավանդական վեպին, կերպարանափոխելով և ընդարձակելով այն: Արտաշեսի վեպն փր մեջ առել է Տրդատի արարքները, բայց սիրելի ու ժողովրդական Արտաշեսը մոռացութիւն է տվել Տրդատ անունը:

Փորձենք վերլուծել Արտաշեսի վեպի պատմական մասը և տեսնենք, թե ինչպես է հետզհետե նկազմված և ինչ տարրերից:

42. Արտաշես Ա և Արտաշատ քաղաքի շինութիւնը:— Հայերն ունեցել են հնումը մի քանի Արտաշես անունով թագավորներ: Ամենից առաջ Արտաշես (Արտաքսիաս), որ Հայոց թագավորութիւն հիմնադիրն եղավ (189 թ. մեր թ. ա.), որի զարմից է Տիգրան Ա՛նձն: Սրա թոռն էր Եսայակես Արտաշես (33—21): Այսպես և, ըստ Տակիտոսի, Տիրեբրիոսի ժամանակ հռոմայեցոց ձեռով թագադրում է Հայաստանում Պոնտացոց թագավորի որդին Զենոն (18 թ. մեր թ.), որ սիրելի էր հայերին: ԵՊերմանիկոս հրթա յԱրտաշատ քաղաք և հայանտութեամբ մեծամեծացն, ի ձայն ցնծութեան քաղձութեան՝ ած է զգլխով նորա զարքունական ասարոշն: Երկիր եպագ ժողովուրդն տեառն փրում նորոյ և կռչեաց հմա անուն Արտաշէս, ըստ անուան քաղաքին» (Տակիտոս, Տարեգր., Բ, 8)³: Այս պատմական դեպքը, որով թագադրութիւն ժամանակ ժողովուրդն Հայաստանի ազգով օտար թագավորի անունը փոխում է և Արտաշես է կոչում, ցույց է տալիս, որ հայերի մեջ Արտաշես անունը սիրելի և ժողովրդական է եղել, և թերևս, սովորութիւն է եղել թագավորներին օտար անունների տեղ հայ անուններով փոխելու: Թե Զենոն—Արտաշեսից ժամանակով ոչ շատ հեռու Տրդատ Ա-ի անունն էլ նույն ձևով փոխված է եղել Արտաշեսի, թե չ՛՝ մենք այդ չգիտենք: Իսկ թե վիպական երգը Տրդատ անվան տեղ կարող էր հայացած և ժողովրդին սիրելի Արտաշես անունով գովել իր թագավորին,—այդ շատ քնական է, երբ ի նկատի ունենաք վերոհիշյալ սովորութիւնը: Բայց անվան արդ փոփոխութիւնն

3 Գաբուզալյան, Քնն. դատմ. հայ., Բ, էջ. 197:

ունի իր Ա ուրիշ պատճառը, որ էական է Դեպքերի նմանությունն է այդ, որի մասին հետո:

Այստեղ պետք է նկատենք հատկապես Արտաշատ քաղաքի շինությունը, որ հիշվում է երգի մեջ, ըստ Վիպասանքի՝ Արտաշատ քաղաքը հիմնում է կամ շինում է Արտաշեսը (Ա. 1., Բ. 100.) Եվ այս իրական պատմության համեմատ է Արտաշատը հիմնում է, ըստ Ստրաբոնի, Արտաշես Ա-ն (180 թ. մեր թ. ա.): Այս Արտաշեսի ձևով է կատարվում և քաղաքական այն մեծ փոփոխությունը, որով հայերը՝ երկար դարեր պարսիկներին ու մակեդոնացիներին ենթարկվելուց հետո, ինչպես սկզբում ասվեց, անկախ-ազգային իշխանություն և քաղաքացիություն են ունենում: Այսպիսի մեծ իրողությունը չէր կարող իր փորին զղոցությունը ըթողնել ժամանակակիցների վրա: Եվ Եղեղեցիկն Արտաշատի՝ Հայաստանի քաղաքական կյանքի հնագույն կենտրոնի, հիմնվելու առաջին երգը քուն իսկ իր հիմնադրի՝ Արտաշես Ա-ի մասին է ասվել:

48. Երվանդ:— Ով է Արտաշեսի հակառակորդ Երվանդը: Այս անունով Հայոց թագավոր հայտնի չէ օտար աղբյուրներից: Բայց Երվանդ անունը կարող էր գործածական լինել հին հայերի մեջ, քանի որ այդ անունով կոչված կան՝ Երվանդաշատ, Երվանդակերտ, Երվանդավան և այլն: Մեր թ. ա. IV դարում Հայաստանի մի քանի սատրապները կրել են Երվանդ անունը⁴, և նույնիսկ վերջին կառավարիչը Սելևկյան իշխանության օրով, Արտաշեսի ու Զարեհի թագավորելուց առաջ, կոչվել է Օրոնտատ, որ է Երվանդ Ստրաբոնը (XI, 14, 15) գրում է. «Արմենիայի և Կարիայի իշխողները, ի վերջո՝ կառավարիչ էր այստեղ Օրոնտատը, որը չոթ պարսիկներից մեկի՝ Հիդառնոսի սերնդից էր. իսկ ապա զաժանեցին երկու մասի հռոմայեցիների դեմ պատերազմող Անտիոքոս Մեծի զորավարները՝ Արտաշեսը և Զարեհը»:

Վեպն ուրեմն պահել է Երվանդ անունը, Արտաշես Ա-ի նախորդի, որ քնականորեն եղել է Արտաշեսի հակառակորդը, երբ նա ապստամբել է Սելևկյան տիրապետությունից: Վեպի մեջ այս Երվանդի անվան հետ կապված են հիշողություններ նաև նախորդ Երվանդների և ուրիշների արարքներից Հայաստանում նախքան II դ. մեր թ. ա., այլև հետո կատարված դեպքերից:

49. Արտաշես Բ և Վիպասանք:— Արտաշես Ա-ից, Հայոց թագավորության հիմնադրից, հետո վիպասանների վրա իր փորին ազդեցությունը պիտի թողնեն և թողել է Արտաշեսի սերունդ Մեծն Տիգրանի եր-

⁴ Hübner, Arm. Gramm., էջ 40.

⁵ Այս հատվածն աշխատության համար թարգմանել է պրոֆ. Լ. Մանեղյանը: Տես և նույնի՝ «О торговле и городах Армении», էջ 27. Այլ և Գ. Халатянц, Арм. спос., էջ 40.

կարասն և աշխարհակալ իշխանութիւնք: Այս տեսանքս Արմուհեանս առանձին կերպով հուզել է երգիչներին Մեծն Տիգրանի որդու, Արտավազդի և այս Արտավազդի որդի Արտաշեսի (Ք) պատմութիւնք, որով սկսվել է վեպի երկրորդ մասը դառնալ մի ամբողջական պատմվածք:

Այս թագապետի պատմութիւնք, երբ այդ կարգում ենք իր համառոտութեամբ, մեզ վրա թերևս ոչ մի առանձին տպավորութիւն չի թողնում: Գուցէ դա նույնիսկ շատ լնչին բան թվա շատերին երգի կամ վեպի նյութ դառնալու համար: Բայց այդ միայն մեզ համար և այժմ: Պետք է իրևակայել Հայաստանի վիճակն 1 դարում մեր թ. ա., երբ հայ ժողովուրդն Արտաշես Ա-ի ձեռով նոր ոտի էր կանգնել, և այնուհետև Մեծն Տիգրանը միութիւն էր մտցրել րաժատումների մեջ: Հայկական հզորութեան գիտակցութիւնը նոր զարթնած և ցեղային հպարտութիւնը մեծացած էր: Բայց որքան ավելի ճոխացած էր այդ հպարտութիւնն, այնքան ավելի խորք պիտի լիներ և Մեծն Տիգրանի որդու և թոռան ցավալի վիճակի թողած տպավորութիւնը: Հանկարծ Մեծն Տիգրանի, արքայից արքայի, այդ պետութիւնն ընկնում է: Այն էլ ինչպե՞ս: Հռոմայեցի Անտոնինոսը դաշնակցելով հայերին թշնամի Մարաց Արտավազդ թագապետի հետ՝ զորքով մտնում է Հայաստան: Հայոց արքան՝ Արտավազդը խարվելով՝ իր կնոջ և որդիների հետ գերի է ընկնում Անտոնինոսի ձեռք և շղթայված տարվում վեճիպատու Արքան սպանվում է այնտեղ: Նրա որդիները գերութեան մեջ կորած են: Ազատվում է միայն մի արքայորդին Արտաշես: Հայ բերդապահները, զորք չէին ի ձեռին կայր, պաշտպանում են Արտաշեսին: Եվ նա իր կյանքն ազատելու համար ստիպված է Պարթևների մոտ փախելու: Իսկ Անտոնինոսը, բանկուցեալ զոմանս կամա, զոմանս բռնութեամբ՝ լինէր սէր համարէն աշխարհին Հայոցս: Հայաստանը հաղթված է և Անտոնինոսի գլուխը հայ խուլորով պատկված: Իշխում վեճարաց թագապետը, որի խնամակալութեանն է որոշում հանձնել Անտոնինոս իր որդուն, կարգելով սրան Հայաստանի թագապետ: Մեծն Տիգրանի արքայից արքայութիւնն այլևս չկար: Զկար և ստիճելն Արտաշեսի հին, լեռնի ցեղը, որ հարյուր հիսուն տարուց ի վեր փառքով թագապետում էր: Բայց սահա Պարթևների մոտ սպաստանած արքայորդին՝ Արտաշեսը պարթևական զորքով ու ոգնութեամբ գալիս է, մարերի դեմ կռվելով հաղթում է նրանց և հետ ստանում իր հոր գահը, տիրում նույնիսկ Մարաստանին:

Նա պարթևներին րարեկամ է և հռոմայեցիներին՝ թշնամի, բայց երբ ռզոստոս կայսրը հանում է Հայաստանի սահմանը, նա ստիպված էր ճանաչելու կայսրի ազդեցութիւնը:

Նոր զարթնող և փնջնաճանաչութեանն եկող մարդկանց համար, ի՞նչ ավելի արժեք երգել, քան այս անցքը: Վերավորված ցեղային հպարտու-

8 Գարուգոյան, Քնն. պատմ. հայոց, Բ, էջ. 188, հտն.: P. Asdourian, Die politischen Beziehungen zwischen Armenten und Rom, Wenedig: 1911, էջ. 85, հտն. 8

Քյուներ քաղաքանություն էր ստացած. ընկի թագավորական ցեղն իր գահի վրա էր նորից, այն էլ մեծ կատաստրոֆից հետո: Իսկ կատաստրոֆները, ինչպես և մեծ հայթախ կատաստրոֆից վիպական շրջանում — ահա հրեանկայությունը ցնցող պատմական իրողությունները: Եվ մեր վիպասանքի ստվերագրի՞ն արդեն պատրաստ է այս Արտաշեսի պատմութունից: Եվ ի՞նչ է մեր վիպասանքի միջին մասի բովանդակութունը, եթե ոչ այս Արտաշատից Արտաշեսի պատմութունն ամբողջապես:

Հայոց թագավորը (Սանատրուկ) սպանվում է. կինն ու որդիքը ոչնչանում են. իշխում է օտար ցեղի թագավոր (Երվանդ), որ բարեկամ է հոռոմայեցիներին ու մարերին և բարկաբոյն է մարացոց տեր Արգամին, տալով նրան թագավորության երկրորդական գահը (Ք. խդ.): Հայոց թագավորական տնից ազատվում է հավատարիմների ձեռով Արտաշես արքայորդին միայն, որ փախչում է պարսիկների մոտ. պարսիկների թագավորը զորքով օգնում է նրան, և նա գալիս է իր հոր կրթած գահը ձեռք բերում: Նա օրագրում գարշարում է մարաց ազգին (Ք. կա.): Նա բարեկամ է պարսիկներին, արհամարհում է հոռոմայեցիներին, քայց երբ սրանք զորքով գալիս են նրա վրա, հարկատու դառնալով հնազանդում է նրանց:— Ահա վիպական Արտաշեսի պատմութունը, քայց ահա և Արտաշատից Արտաշեսի իսկական պատմությունը: Ավելացրեք վրան և Արտաշատի շինության հին զրույցն ու երգը, որ Արտաշես Ա-ի անունով պատմվում կամ երգվում էր արդեն, ապա Արտաշես Ա-ի նախորդ Երվանդի անունը, և մենք կունենանք Արտաշեսի վեպի առաջին մասն ամբողջ: Երկու տարբեր Արտաշեսների մասին երգվածներն ու պատմըվածները վիպասաններից մի մարդու վրա են պատմված, մի Արտաշեսի անունով:

Այս երկու Արտաշեսների երգն ու զրույցը կարող էր շատ շուտով մի ուրիշ համանուն թագավորից ևս, հայերին դիբլի Արտաշես Գ-ից (18—34 թ. մ. թ. ա.) գծեր վերցնել և ամացնել իր մեջ: Հայտնի է Գրիգոր Մազիստրոսի նամակներից մեկում բերված հատվածը, թի գեոհիկն ավանդեալը, որ Վարթան Արտաշեսն ասում է թի վախճանին իրումս.

Ո՞տալր ինձ զժուգս ժխանի,
Եւ զառաւտն նաւասարդի,
Զվազելն եզանց
Եւ զվազելն հղչերուաց.
Մեք փող հարուաց
Եւ թմբկի հարկանէաց,
Որպէս օրէն վ թագաւորաց:

Վարթան կուտմն Արտաշեսի համար ըստ երևույթին՝ Մազիստրոսի իրեն ավելացրածն է. իսկ նրա տերած հատվածը հին վիպասանքի մնացորդ պետք է համարել: Զավոր, Մազիստրոսն ավանդությունն ամ-

բողջ զի տրուում Այս հատվածը հարմար են գտնում՝ Արտաշես Գ-ին, եոր հայտնի է, ըստ Տակիրտոսի, իր որսի և խնշուցների սիրով, նույնպես և ազգային սովորոթիւնների հավատարիմ մնալով, որով և ժողովրդի սերն էր զբաղած:

45. Տրդատ Ա և Վիպաւանքի զարգացումը:—Այս Արտաշեսյան վեպը նորոգող ու վերապահանափոխող տարրեր ընդունել է շատ մտտիկ ժամանակով կատարված այլ նշանավոր դեպքերից ևս, — Միհրդատ (35—37 ԲԲ. և 41—45 ԲԲ.), Հրադամիզը (45—52 ԲԲ.) և Տրդատ Ա Թագավորների անցքերից: Ի թիվս այլ պատճառների իրեն հանդույց ծառայել է պատմական դեպքերի նմանութունը Արտաշեսյան վեպի հետ:

Վրաց Փարսման Թագավորի որդին Հրադամիզը (ըստ վեպի՝ Երվանդ), սպանում է հայոց Միհրդատ Թագավորին (ըստ վեպի՝ Սանատրուկ) կանանցով և որդիներով հանդերձ և իր հոր օգնութիւմը Թագավորում է Հայաստանում, ծառայելով Հոռմի շահեմին: Նա բռնանում է հայերի վրա և ատելի դառնում նախարարներին: Բայց այդ ժամանակները Պարթևների Վաղարշ Ա Թագավորը հարմար է համարում Հայաստանը նվաճել: Նա իր կրտսեր եղբորը՝ Տրդատին ըստ վեպի՝ Արտաշես, պարթևական զորքով ուղարկում և Հայաստան Թագավորելու (51 Բ.), Հայերն ատելով օտար և բռնակալ Հրադամիզին՝ սիրով ընդունում են նրան և անցնում են Պարթևների կողմը: Հրադամիզը փախչում է, և Տրդատը քնակութիւն է հաստատում Արտաշատում: Փոփոխութունը հոռմայեցիների հաճութիւմը զէր եղել. ուստի նրանց ուղարկում են Գոմեստիս Կորուլոն պրակտիկ, որ արշավելով Հայաստան՝ առնում է Արտաշատն և այրում (58 Բ.): Բայց վերջը Պարթևները հաղթող են հանդիսանում, և Տրդատը մնում է Հայոց Թագավոր: Պարթևների և հոռմայեցիների միջև 63 Բ. վերջված համաձայնութիւմը Թագավոր պիտի դառնար Պարթևական հարստութիւն տան անդամներից մեկը, բայց Թագը պիտի ստանար Հոռմի կայսրից և համարվեր նրա ավատը—վասալ: Տրդատը փնջով Հոռմ՝ ներոն կայսրից Թագավոր է պատկերում փառավոր հանդեսով, որով և ձանաչում է հոռմայեցոց գերիշխանութունը (66 Բ.): Այդ ժամանակից սկսում է Արշակունի հարստութիւնը Հայաստանում: Այդ դրոթիւնը դադարեցնում է երկար ժամանակ տևող պատերազմները Պարթևների և հոռմայեցիների միջև՝ Հայաստանի վրա ազդեցութիւն ձեռք բերելու համար:

Տրդատ Ա-ն նորոգում է, իսկապես նորից շինում է Արտաշատ մայրաքաղաքը Հոռմից բերած արվեստագետների ձեռով: Նրա օրով խաղաղութիւնը վերդավում է 72 (կամ 75) Բ. միջին: Ախանները Կասպից անցքով արշավում, ասպատակում են Մարաստան և ապա անցնում են Հայաստան: Հայոց Թագավորը, ինչպես պատմում է ժամանակակից հրեապատմագիր Յովսեփոսը, նրանց դեմ և՛ զուրս դալիս կոմով, և՛ փոքր մի

⁷ Г. Халабянц, Арм. вѣст., 310:

ևս՝ և անկանէր ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկեց պարան ի պարանոց նորա, և քարշէր զնա՝ եթէ չէր նորա աճապարեալ հատանել զայն սրոճք⁶, Ալաններն ավերելով աշխարհը՝ քաշվում են իրենց երկիրը:

Ալանները 135 թ. դարձյալ, նախապէս համառայնելով վրաց թագավորի հետ, որ թաց է անում նրանց տառչ Կովկասյան կիրճը (Ալանաց դուռը, Դարիայի կիրճը), իրենց ավերիչ հարձակումն են գործում Ադվանքի, Մարաստանի և Հայաստանի վրա, և հասնելով մինչև Հոռոմեյական Կապադովկիա, ասպատակում ու ետ են դառնում:

Գեպքերի նմանութունը մեծ է, և վիպասաններն Արտաշեսյան վեպի վրա ավելացրել են տարբեր և այս նոր կատարված դեպքերից: Խորենացու վիպական պատմութիւնը, — մեկդի դրած անունների տարբերութիւնն ու դեպքերի շփոթութիւնը, — նույնն է, ինչ որ Հրազամիզդի և Տրդատ Ա-ի պատմութիւնը:

Վեպի մեջ վրացիներն օգնում են Երվանդին (Ք. խդ.), և նրանց Փարսման թագավորն անձամբ գալիս է կռվելու Արտաշեսի դեմ. սեւ զօրքն՝ Վրաց, հանդերձ արքայիւն իրեանց Փարսմանաւ, թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջացեալ քախէին, արագապէս ի միւս կողմն փախուցեալը (Ք. խդ.):

Առասպելի մեջ երգվել է, զի հոռոմայեցիների կողմից Դոմես ոմն եկել է կռվելու Արտաշեսի դեմ (Ք. ժդ.): Դա անշուշտ Տրդատի դեմ կռվող Դոմեստիոս Կորբուսն է, որ Խորենացիի սխալվելով մեկնում է իբրև Դոմեստիանոս կայսր (Ք. ժդ.):

Այսպէս և ասասպելի մեջ Արտաշատ քաղաքը շինելը և արանների դեմ կռիվը հիշեցնում են Տրդատ Ա-ին:

Վիպասանքի մեջ Արտաշեսը հիմնում է Արտաշատը: Տրդատ Ա-ի օրով Արտաշատը հիմնովին վերածանվում և նորից շինվում է Հռոմից բերել տված ճարտարապետների ձեռով (Անպայման այդ ժամանակ է շինված նաև Գառնու հեթանոսական տաճարը): Այսպիսի դեպքում Արտաշատի հիմնվելու հին երգը, փնլպես լինում է սովորաբար, ավելի ևս մեծ ուժով վարող էր կենդանանալ այդ քաղաքի վերաշինութիւն պատճառով, և հին թագավորի զովեստը նոր թագավորի համար երգվել, նորի համար ևս պահելով սիրելի ու ժողովրդական Արտաշես անունը: Արտաշատ քաղաքի շինութիւնն, ուրեմն, որ երգվում էր Վիպասանքի մեջ Արտաշեսի անունով, և Տրդատի մյուս գործերի նմանութիւնը Վիպասանքի ուրիշ միջադեպերին՝ հղել են վիպական խմորման կենտրոն: Եվ այնուհետև Արտաշատի մասին երգն և Վիպասանքի առաջին մասը իբրև թթիւրձ մոր իրենց են քաշել և Տրդատ Ա-ի մյուս արարքների գովեստն ու պատմութիւնը. Ալանների ասպատակութիւնը վրացիների հետ. Եփրատանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս վրաց աշխարհինս (Խոր., Ք. ժ.): Տրդատի կռիվը նրանց դեմ ու նրանց հետ

3 Գառուզայտն, Փեն. պատմ. հայոց, Բ. էր, 242:

խնամութիւնը, և Դոմենտիոս Կորբուլոնի գալուստը Հայաստան, և շատ կենցաղական դժեր, և վերջապես, ինչպես հետո պետեսնենք, նաև առասպելներ:

Այսպես է հետզհետե կազմվել Վիպասանքը, և այսպես միայն կարելի է քաջատրել, թե ինչպես Տրդատ Ա-ի ժամանակ վատարված պատմական դեպքերի հիշողութիւնը կապված է Արտաշես անվան հետ: Այսպես՝ Վիպասանքի գլխավոր հերոս Արտաշեսն է՝ պատմական Արտաշես Ա, Արտաշես Բ (և Արտաշես Գ) և Տրդատ Ա: Վիպական նրվանդը, ինչպես տեսանք, Արտաշես Ա-ի նախորդն է, Հայաստանի վերջին կառավարիչը Սելևկյան տիրապետութեան ժամանակ: Իսկ վիպական շղթայված Արաամազդը, դա Մեծն Տիգրանի որդին է, Արտաշես Բ-ի հայրն է, Հայոց Արաամազդ թագավորը, որ դարձել է վիպական Արտաշեսի որդին:

Սակատուկ թագաւորը, որ երևան է դալիս վիպի սկզբում իբրև Արտաշեսի հայր, հույնպես պատմական անձ է: Նա թագավորել է մ. թ. 190—196 թվերին:

46. Նոր քաղաք, Սահաորուկ և Վաղարշ թագավորներ:—Տրդատ Ա-ից սկսած հարչուր տարվա ընթացքում Հայաստանի քաղաքական վիճակն ընդհանրապես նույնն է մնում, չհաշված ալանների ասպատակութունները և այլն, որ Տրայանոս կայսրի օրով Հայաստանը մի տարի (115—116) հայտարարվում է հռոմեական պրովինցիա: Հայաստանի վիճակն զգալի կերպով սկսում է փոխվել 161 թվից, և այս ժամանակներից ի վեր պատմական անձերն ալ դեպքերը դառնում են ճշգրիտ վեպի նյութ:

Պարթևների Վաղարշ (148—191) թագավորի հրամանով պարթևական բանակը մտնում է Հայաստան՝ հայկական զահի վրա բարձրացնելու Արշակունի թակուրին, հակառակ հռոմայեցիներին: Առհեմ թագավորը փախչում է Հոսոմ Արտաշեսի խախտում է Հոսոմ-պարթևական դաշնագրութիւնը Հայաստանի վերաբերյալ, և Հայաստանում տեղի է ունենում համառ պատերազմ երկու մեծ տերութիւնների միջև: Հռոմայեցիները 163 թ. մարտով առնում, կողոպտում և հիմնովին ավերում են Արտաշատ մայրաքաղաքը (որ, սակայն, հետո դարձյալ վերականգնվում է): Նրանք Ալլարատյան դաշտում շինում են մի քաղաք, ուր և դնում են զորեղ կայսրը: Այս քաղաքը կոչվում է Նոր քաղաք, կամ մոտին եղած մի հին քաղաքի, կամ հին մայրաքաղաք Արտաշատի նիստամար, որից և շատ հետո ըէ:

Հայերն Արտաշատի ավերման պատճառով զրգուկում են և սկսում մարտնչել հռոմայեցիներին դեմ: Բայց սրանք զսպում են սրունկված ազգային ապստամբութիւնը և հաշորդ տարին, 164 թ., Նոր քաղաքը հայտարարելով մայրաքաղաք, Հայաստանի գահի վրա նորից բարձրացնում են Առհեմին: Պատերազմն այնուհետև շարունակվում է Հայաստանից դուրս մինչև 166 թ., երբ հաշտութիւն է կնքվում: Պարթևական տեսա-

կենտից Հայաստանի քաղաքական գրութիան մեջ ոչ մի փոփոխութիւն առայ չի գալիս, քայց նրան Հոռմի հետ կապող շղթաներն ալիւլի պիտեղ են ձգվում⁹, քայց և լարվում են հայ-հոռմեյական հարաբերութիւնները:

Նոր քաղաքում հոռմայեցիները պահում էին ուժեղ կայազոր, այդ պատճառով Սանատրուկ թագաւորը չի կամենում այդտեղ նստել: Նա իր նիստը փոխադրում է Միքսագետքի Մծրին քաղաքը, որ վաղուց ի վեր պատկանում էր Հայաստանին¹⁰, Կայսերական զահակալութիւն պատերազմի ժամանակ Սանատրուկը լեզոք է մնում՝ շահարկով կայսրութիւն թեկնածուներից ոչ մեկի կողմը: Անպատիմ Սելվերը (194—211) հաղթող հանդիսանալով քուրթ թեկնածուների վրա՝ արշավում է Արևելք ու գրավում Միշագետքը: Այդ ժամանակ 196 թ. ալանների դեմ պատերազմի մեջ սպանվում է Սանատրուկը¹¹, Չնայելով որ հայերը լեզոք էին մնացել, կայսրը հայերից գրավում է և Մծրինն իր մարզով: Բայց նա ստիպված է լինում, ներքին խռովութիւնների պատճառով, վերադառնալ Արևմուտք:

Պարթևներն օգտվելով այդ հանգամանքից՝ սկսում են հոռմայեցիների դեմ ռազմական գործողութիւններն: Սանատրուկի որդի Վաղարշը, հոռմայեցիներից դժգոհ լինելով Մծրինի դրավման պատճառով, միանում է Պարթևներին, նրանք պաշարում են Մծրինը (197 թ.): Սելվերն Արևմուտքը խաղաղեցնելով՝ վերադառնում է Արևելք պարթևների դեմ: Բայց պատերազմն սկսելուց առաջ՝ նա հաշտվում է Հայաստանի թագաւոր Վաղարշի հետ, տալով նրան Մծրինի փոխարեն կալվածներ Կապադովկիայում, Բացի այդ՝ նա Հայաստանից հեռացնում է հոռմեյական օկուպացիոն զորքերը և Հայաստանի սեփական թանակը գորացնելու համար՝ հոռմիայիսին պետական զանձապանից հատուկ դամադրներ է նշանակում իրեն մշտական նստատեղի Այս հաշտութիւնից հետո հոռմեյական կայսրը հեռանում է նոր քաղաքից, և Վաղարշը նստում է այնտեղ:

Սանատրուկ թագաւորին են վերադարձում այն գովքը, որ կա Սուիդասի (Suidas) մեջ. «Ունենալով ոչ մեծ հասակ, — ասում է հույն գրողը, — Հայոց Սանատրուկ թագաւորը, սակայն, հակում ուներ ամեն մեծ բաւելի, նա առաջինն էր ռազմական գործերի մեջ, խիստ պաշտպան էր արքաբազաւութիւն և այնպես ժուժկալ, ինչպես լավագույնները հույներից և հոռմայեցիներից»¹²:

Հայերի մեջ Սանատրուկի հիշատակը մնացել է իր շինարարութիւններով: Փայտոտս Բուզանդը (Գ. ժգ.) հիշում է այս թագաւորի շինած

⁹ Փ. Մոզեն, Римская история, т. 5, Москва, 1885, кр. 307 և այլն:

¹⁰ Գր. Հաւատյան, Очерк ист. Арм., кр. 316, այդ իբրև աղբյուր հիշում է Markwart, ZDMG, 49, 650 և Wirth, Quaestiones Severianae, p. 35, 37.

¹¹ Նույն, кр. 318, աղբյուր չի հիշված: Գոտգաշյան Ա. Մ., Քնն. պատմ. հայր. Բ, Բիթլիս. 1885, կր. 382:

¹² Գ. Հաւատյան, Очерки ист. Арм., кр. 315:

մի քաղաք Մծուրքում. «էջ (Մարդպետն Հայր) յափն գետոյն հոսանացն Ծփրատու, հովիտան Թանկրախուուն անտառին, ի գետախառնուուն երկուց գետոցն, ի քաւաթ խարձիցն մամխեացն, որ ի տեղուոյն ի հեոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղոյն Մծուրք կոչիս: Եւսլն Բուզանդը (Պ. իզ.) գրում է, թէ պարսիկները Մեքաթանի առջնորդութիւնով մտնում են Անի ամուր քերդը Պարանաղիք գալովաւում. «Եւ քանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց քարանց քաջաց զԱրշակունւոյ, և խազացուցանէին ի գերութիւն զուկերս թագաւորացն, տայց միայն զգերեզման շիրմին Սանատրուկ արքային ոչ կարացին քանալ վասն անհեղեղ սկայազորո՞ հաստաշինած ճարտարագործ արարածոցն»:

Մ. Խորենացին գրում է, թէ Սանատրուկը նորոգել է Մծրին քաղաքը. «Զի ի շարժմանէ խախտեալ՝ քակեաց և վերստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարապով և պատուարաւ. և զինքն անդրի ի միջին հաստատեաց, գրամ մի ի ձեռն ունեւով. որ նշանակէ այսպիսի ինչ, եթէ ի շինել քաղաքիս ամենայն դանձքս ծախեցան, և այս միայն մնաց» (Ք. լզ.):

47. Սանատրուկի առասպելը:— Այս Անատրուկն ժողովրդականութեամբ յայտնուեալով, դարձել է վիպական Արտաշեսի հայրը: Թե՛ն նա իսկապես վիպական անձ է, այդ երևում է նրա անվան համար ժողովրդական աստուգարանութիւնով կազմված առասպելից, որ ընդհանուր մտտովով կապված է հովանավորող շան հետ: Նրա մայրը ձանձոր ճանապարհորդելով Հայաստանում՝ կորցուց լինելու պատահում է քցի. «Յերուեաց դամեհեան մորիկն, մինչ ոչ գիտել ընկեր զընկեր՝ ընդ որ վարեցաւ: Իսկ զայնկին նորա Սանտայ, քոս Բիգատայ Բագրատունւոյ, կնոջ Խոսրենայ Արծրունւոյ, առեալ զմանուկն, քանզի տղայ էր, եղ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն գերիս տիւս և գերիս զիշերս: Զորմէ առասպելութեանն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն... Արդ կոչեցաւ Սանատրուկ, ի գայեկէն պանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանտայ» (Ք. լզ.): Օտար Սանատրուկ անունը, որ պարսկերեն է¹³, քաջատրված է, ուրեմն, հայերեն լեզվով:

48. Զրույցներ Վաղարշի և Վաղարշապատի մասին: Վարդգես Մանուկի վեպը:— Վիպական անձ է դարձել և Սանատրուկի որդի Վաղարշը: Նրա հաջողութիւնները, յինչպես և քան, որ նրա օրով Հայաստանի քաղաքական կենտրոնը ետ է փոխադրվում Մծրինից Այրարատ, առաջ են բերել զրույցներ, կապված նոր քաղաքի ու իրեն Վաղարշի անվան հետ Խորենացին (Ք. կե.) գրում է.

«Թէ լով և այլքն կեցին, քայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յազազս քարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն, Վասն զի ի

¹³ H. Hübbschmann, Arm. Gram., 40.

սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զնազրաց ասեմ
և զթաւաց, արտաքս քան զգոռն Ճորայ ելաննն, անաշնորդ և թագա-
ւոր ունելով ինքեանք զՎնասեպ ոմն Սուրհայկ. որք անցեալ վտարին
այսր զկուր գետով: Որոց պատահեալ Վազարշ ամբոխի մեծաւ և ա-
րամբք մարտկոք՝ ցիր դիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշ-
տին, և ձիզ զհետ եղեալ՝ անձանց ընդ Վասպանն Ճորայ: Ուր միտանգամ
միաբանեալ թշնամեացն՝ յորինեցին ճակատ. զորս թէպէտ և վանեալ քա-
ջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վազարշ մեռանի. ի ձեռաց
կորովեաց ազնունաւորաց:

Պատմական Վազարշի մահը, որ, ինչպէս կտեսնենք, այսպէս յի
եղել, մտնում է նրկորդ հին վեպի մեջ: Աթն ճիշտ է Սանատրուկի սպան-
վելն ալանների դեմ կովի մեջ (Հատվ. 46), այն ժամանակ պարզ է, որ
հոր մահվան եղբուկները պատմված է նրա որդու, Վազարշի վրա:

Զրույցները պատմում են Վազարշի շինարարութուններն էլ: Վա-
զին է աւան մեծ գտեղի ժնեղեան իւրոյ: Դա Վազարշաւանն է Սուրբի և
Երասխի գետախառնունքում: Ավելի կարևոր է նրա մյուս գործը. Վա-
պատեաց պարսպաւ և զհզոր ասանն Վարդգէսի, որ ի վերայ Փասախ գե-
տոյ... պատեաց պարսպաւ և հզոր պատուարաւ, և անուանեաց Վազար-
շապատ, որ և նոր քաղաք:

Թն այդ զրույցը պատմական իրողութեան վրա է հիմնված, այդ
երևում է նոր քաղաքի Վազարշապատ կոչումից, որ մնում է մինչև
այժմ:

Վազարշապատը III—V դարերում միառժամանակ իբրև մրցակից է
հանդիսանում Արտաշատի դիմաց, և այնուհետև դարձաւ բարձրանում է
Արտաշատն ու հետո Դովին Արտաշատի մտտ: Արտաշատն ուներ անց-
յալ, հիմնադիր ունենալով Հայոց հին թագաւորներից Արտաշեսին: Շատ
քննականորեն արտաշատցիների մրցակից վազարշապատցիները ևս, եր-
գելով Վազարշի շինարարութունը, միևնույն երգի ու զրույցի մեջ պիտի
աշխատեին իրենց նոր քաղաքի սկիզբը հին ցույց տալ և կապել որևէ
նշանավոր հին Հայ թագաւորի անվան հետ, ճիշտ ինչպէս իշխանները
ձգտում էին իրենց տոհմի հնութունը ցույց առաւ՝ այս կամ այն թագա-
ւորից անբոված համարելով իրենց: Արտաշատն ուներ իր հիմնարկութեան
վեպը, նույնը պիտի ձգտեին ունենալ և վազարշապատցիք: Զրույցը հո-
րինված է նոր քաղաքի, հին Վարդգէսի ավան անվան և նրա հիմնադիր
Վարդգէսի վրա, քզորով յառապելան ասենք, դրում է Մ. Խորենացին.
րերելով հետևյալը.

Հատուած .գնացեալ Վարդգէս Սանուկն
ի Տուհաց գաւառէն, զՓասաղ գետով,
եկեալ նստաւ զԵրէշ քաղաքով,
զԱրտիմեդ քաղաքաւ, զՓասաղ գետով,
կռել զովին զգոռնն Երուանդայ արքայի:

Ապա Պատմագիրն ազնւացնում է. «Այս ծրուանդ՝ առաջինն է, Սահաւանկեացն, որ ի Հայկազանց զորոյ զքորոյն կին առնալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս. յորում և Տիգրան Միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղև քաղաքագիրդ վաճառոց: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ...»:

Աստուգնի մէջ պատմում են, ուրեմն, թէ Վարդգէս Մանուկը զաղ-
թնալով Տուհաց զավառից, դայիս, նստում է Երեշ քորի¹⁴, Արտիմեդ քա-
ղաքի, Քասաղ գետի շուտերը սկսել կոփել զգուռն նրուանդայ արքա-
յիս: Նա կին է առնում թագավորի քրոջը և հիմնում իր անունով ավանը,
որի մէջ Տիգրան թագավորը հրեա գերիներ է բնակեցնում, և ավանը
մեծանում է: Եվ այդ ավանը Վաղարշը պատում է պարսպով և հզոր
պատվարով, և անխնայ վատարչապատ:

Նկատենք, որ «կոփել կոփել զգուռն» նշանակում է դուռը թակել,
ծծծել, իսկ մեկի սորուքը թակել, ծծծելու ցարդ ևս մի քանի տեղ հայերի
մէջ նշանակում է մեկի աղջիկն առել: Այդ մի դարձված է, որ երևի հին
սովորութիւններից է ծագում: Մեր հեթիաթների մէջ ցարդ ևս թագավորի
աղջիկն ուղղիկս խնամախոսք գնում, թագավորի դուռը ծծծում է և նշա-
տում դուռը սխնամագարիս վրա, որ նշան է, թէ աղջիկն ուզում են:

14 Այլոքն, Այրարատ, հր. 204, կարգում ենք. «Երէշ քուր ըստ այժմու գիտութեան
բնակեաց կողմանց՝ ոչ մի, այլ զՔ շորք են, քայլք բազում մղեոց տարակայն ի Վա-
ղարչապատը ընդ արևմուտս, յահեկէ Մեծամորի և հոյնն Երէշ քուր, վասն ռաստու-
թեամբ քուտուցանելոյ զքանչարն շրէշ և քոխ. իսկ այլազանց կոչին Պարլար, այսինքն
կարմիրք, վասնզի կարմրաճող ստաղաքք են, և զոգք նոցին մակաղատածք խաշունքս:
Վաղարչապատքից, որքան Հարցուսիրտից իմացանք, ի Հնուց միմիայն Երէշ քուր գի-
տեն, և այդ քուրն այժման գուշից հյուսիս է ընկնում: Դա 1870-ական թվականնե-
րին քավական մեծ և քարք հողաքուր էր, շուրջ կնս մետրաչափ բարձրութեամբ սքը-
րատուց քարերով պատած: Թայց տարիների ընթացքում պուշտանիները քլրի հողը շարու-
նակ կրում են արտերն ու աղիները՝ պարարտացնելու համար, և քուրը հետզհետ իջ-
նում է: Քուրը բնական չէ, այլ արվեստական, և ծառայել է իբրև գերեզմանատուն, մի-
ջից կմախքներ, հին սնոթներ և իրեզններ շատ են գուրս կնկել: Ամբողջը կազմված է
քաղմական Նյութերից. գուշագույն շերտերով մեծ կանեանգործութեամբ քլմած, որոնց
մէջ մոխիրը մեծ տեղ էր բռնում: Այս քուրը միայն, որի հին, սրբազան լինելը պար-
երում է, հայտնի է Երէշ անունով: Սակայն պետք է նկատել, որ նորենայու ձեռագոր-
ների մի խմբի մէջ կա Երէշ քորի ընթերցմանը, այնպես որ նախ պետք է որոշել՝ Երէշ
քուրի, թէ քորի մասին խոսք պիտի լինի: Այս քուրը 1918 թվին պնդել է Երվանդ Լա-
լայանը, որից բերվում է Հետևյալը. «Սա բնական քուր չէ, այլ քլմած հողի կուլտ է,
կլոր, տրամագիծը 133 մետր, բարձրութեանը տեղ-տեղ հասնում 3,5 մետրի: Ամբողջ
քուրը քար ու ցան է արված և հողը տարված է արտերը պարարտացնելու հեղ-տեղ
կանեմած բարձրութեանների պնդումները ջուրը սփին, որ սա հղել է նկարագուր սկսած
հղկած քարի շրջանից մինչև երկաթի դարը ներառյալ: Վերջին շերտերում գտնվում, մա-
նագանդ գտնվել են երկաթի, միջինում քրոնցի, իսկ ստորինում քարի իրեր: ...Տեղ-տեղ
քանգվիցին մտերմակույանը՝ խոսն մարդկային և կենդանիների ստամանքի և կտորի մա-
սերի արված կտորներով: Սրանց մաս կոչին քարի մտերմեր և աղն: Երվանդ Լալայանը,
Պատմաբանների պնդումներ նորերգային Հայաստանում, Երևան, 1931, հր. 81, հտ. 1»:

Ուրեմն սկսելի կոփելի զդուռնն Երուսնդայ արքայիս նշանակում է նրա աղչիկն ուզելս :

Վերևում ընդգծած բառերը միայն հորենացու բացատրութիւններն ու հարկելու մեծն ենք համարում : Բայց պատմագիրն այդ արել է առաջին հիման վրա : Մենք գիտենք, որ վիպականն Հայկազն Տիգրանի (= Մեծն Տիգրանի) հայրն է Երվանդ (Սակաւականացն) : Ետ առաջին վարդապետի առասպելի մեջ պատմում է, որ նույն Երուսնդ արքայի քույրն առնում է Վարդգես Մանուկն և շինում է իր անունով ավանը և անմիջապէս, թէ Տիգրանն այնտեղ բնակեցնում է հրեա գերիներ և ավանը մեծանում է : Ուրիշ խոսքով ավանը շինվում է վիպական Մեծն Տիգրանի հոր ժամանակ, բայց Տիգրանն ևս մասնակից է լինում, բնակեցնելով այնտեղ հրեա գերիներ, որ մինևույն է թէ ավանն ըստ առասպելին իսկապէս շինում է Մեծն Տիգրանի որով, հորենացին միայն սխալ մեկնելով՝ այդ Երվանդին ու Տիգրանին, որ հայր ու որդի են ըստ առասպելին, բաժանում, հեռացնում է իրարուց, մեկին թողնելով երգի բնիկ Մեծն Տիգրանի հայր, իսկ մյուսին, որ նույն Մեծն Տիգրանն է, նույնացնելով իր Արշակունի Միջին Տիգրանի հետ : Վարդգեսի ավանի առասպելի մեջ հիշված Տիգրանին մեր Պատմագիրն անհրաժեշտորեն պիտի տարբերի վիպական Երվանդեան Տիգրանից և նույնացնելը իր Արշակունի Միջին Տիգրանի հետ, քանի որ իր պատմական ծանոթութիւններով Միջին Տիգրանն Արշակունիին է արշավել Պաղեստին և հրեա գերիներ փերել¹⁵ :

Այն հանգամանքը, որ երկու տարբեր առասպելների մեջ ևս Երվանդ է Տիգրան (= Մեծն Տիգրան երկու դեպքում էլ, հակառակ հորենացու բացատրութեան) անունները միասին են գտնու գալիս, ցույց է տալիս, որ վեպի մեջ հենց Մեծն Տիգրանի հայր համարվել է Երվանդ : Այս անունով Հայոց թագավոր մեզ հայտնի չէ : Բայց Երվանդ անունը, կարող էր գործածական լինել հին հայերի մեջ : Ինչպէս տեսանք Դ զարում մեր թ. ա. Հայաստանի մի քանի ստորապետներ կրել են Երվանդ անունը, և նույնիսկ Հայաստանի վերջին կառավարիչն էլ (190 թ. մոտերը, Արտաշեսի և

15 Հորենացին Արշակունի Միջին Տիգրանի համար, որ է պատմական Մեծն Տիգրանը երկու հրեական գերութիւնն է պատմում : Նախ Բ. մ. զ. զլի մեջ, սեւեռալ գերի բազում ի հրէիցն, ետի շուրջ զՊողոսմայից քաղաքաւ և այնուհետոս մ. զլի մեջ այս գերութեան համար գրում է : Երկն թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէիցն նստուցեալ ի յԵրմուտիք և յաւանին Վարդգէսի, որ ի վերայ Փաստը գետոյս : Այս առաջին գերութիւնն է : Տիգրանի այս արշավանքը Պաղեստին և Պողոսմայից քաղաքը պաշարելը պատմական իրողութիւնն է : Երկրորդ գերութիւնը ևս պատմում է մ. զլի մեջ : Ետ առաջ մի քանի քանիստ Տիգրանայ և Արտաշիգի, և առաջեալ ասղատայի Պաղեստինն, և գերութիւն Հիւրկանու քանանայպետի և այլ բազմութեան Հրէիցն : Եւ զՀելլականոս կապեալ Կոնստանտինոպոլսի Հրէիցն... ի քաղաքն Շամիրամայո : Այս երկրորդ գերութիւնը կա և Փապստոս Բուպանդի մեջ :—Հրեական գերութեան մանրամասնութիւնները տեսնել՝ Մ. Աբելյան, Հայ մտ. առասպելները, եր. 556—558 :

Ջարեհի քաղաքի շրջանում կրում է Երվանդ անունը, իսկ Մեծն Տիգրանն այդ ժամանակից շատ հետո չէ (ծնված մոտ 140 մեր թ. ա. ըստ Ռայնախի)¹⁶։ Անդրառա, շենք ասում, թե Մեծն Տիգրանի հայրը, որի անունը պատմության մեջ հավաստյալ հայտնի չէ, Երվանդ կոչված լինի։ Մի անբնական բան էլ չէ, որ ավանդական առասպելը պահած լինենք այդ Երվանդ անունը և դարձրած Տիգրանի նախորդ և հայր, միաժամանակ նաև վիպական Արտաշեսի նախորդ և թշնամի։ Համենայն դեպս, մեզ համար նշանակալից չէ անի այն, որ մի առասպելի մեջ Մեծն Տիգրանի հայրն է Երվանդ, և մյուս առասպելը՝ Վաղարշապատի սկիզբը կապում է Մեծն Տիգրանի այս հոր և հենց իրեն Մեծն Տիգրանի հետ։

Այս առասպելի մեջ կարող է պահված լինել բուն պատմական հիշողություն ևս, թե Վարդգեսի ավանը շինված է Մեծն Տիգրանի և իր հոր օրով։ Ասկայն առասպելը հավաստյալ առանձին արժեք ու նշանակություն է ստացել և դարգացել հետո, երբ Վարդգեսի ավանը, նոր քաղաք և Վաղարշապատ անունով, Հայաստանի մայրաքաղաքն էր։ Մյուս կողմից՝ առասպելն ամբողջապես կարող է այս ժամանակներում ևս ստեղծված լինել՝ Վաղարշի շինարարության երգի առնչությամբ և միայն, հին երևալու համար կապված լինել ավանդական առասպելի հայտնի և սիրելի դիցազն Մեծն Տիգրանի և իր հոր անվանը։ Ինչպես էլ լինի այս առասպելի սկիզբը, դա կապված լինելով Մեծն Տիգրանի և իր վիպական հոր անունների հետ՝ պատկանել է Վիպասանքի ցիկլին։

Պետք է նկատել և հետևյալը։ Ըստ Խորենացու՝ Վաղարշը վիպական Արտաշես քաղաքի թոռն է, նրա որդի Տիգրանի որդին, մյուս կողմից՝ նա մեր երկրորդ հին վեպի, «Պարսից պատերազմի» սկզբում հանդես եկող վիպական Մեծն Խորենի հայրն է։ Այդ վիպական անձով, Վաղարշով, ուրեմն մեր երկու հին վեպերը կապվում են միմյանց հետ։ Քայքայից կապակցությունն արդյոք վեպից է ծագում, թե Խորենացու հերյուրած համակցությունն է, այդ դժվար է որոշել։

Գ

ԱՌԱՍՊԵՆԱԿԱՆԸ ՎԻՊԱՍԱՆՔԻ ՄԵՋ

48. Վիշապներ և վիշապազներ։— Մեր առաջին հին վեպն, լինչպես սկզբում ասվեց, առասպելախառն է։ Նրա մեջ իբրև դորժողներ երևան են դաշխ ոչ միայն պատմական անձեր, այլև վիշապներ ու վիշապազներ։ Տեսնենք նախ հետևյալը։

Մարք, զգարմք Աժդահակայ, Վիշապազներ և Մուրացան նախաբարներ, արդյոք Վիպասանքի մեկ այդ անուններն իբրև համանիշ և անխտիր գործածված են եղել, թե չէ։

¹⁶ Պատմություն, ԹԵՆ. պատմ. հայտն. Բ, հր. 131։

1. Մ. Խորենացիի Տիգրանի վեպի վերջում (Ա. 1.) պատմում է հետևյալը.

Երևի զԱնուշը, զառաջին կինն Ածղահակայ, և զրազումս ի սերմեղեն Ածղահակայ աղբլուսնս, հանդերձ պատանեկո՛ւ և բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան գրիւր մի, փնակեցուցանէ Տիգրան յարենելաց ուսոյ մեծի լերինն (Մասեաց) մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Գաթգոյնք, և որ ալլք առ եզերք գետոյն դասակերտք, յորոց մինն է Վրանչունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանն, զԽրամ և զՋուղայ և զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն. բոլոր դաշտն, որոյ գլուխն է Ածղահական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու: Բայց զնախասացեալ կինն Անուշը բնակեցուցանէ որպովք իւրովք յանդրորութեան սպառուածի փլածի մեծի լերինն... իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ուսամբ լերինն քնակեցանա:

Այս հատվածից իմանում ենք, որ Մասիսից զեպի արևելք, մինչև Գողթնի սահմանները, Ծրասխ գետի երկու կողմերում ապրող բնակիչները, որոնք հայտնի են և ուրիշ աղբյուրներին¹, ըստ վեպի, իբր գերի են բերված եղել Տիգրանի ձեռով: Նրանց մեջ են և Ածղահակի սերունդը, շարժված Ածղահակայ, Ածղահակի ու նրա կին Անուշի որդիները, որոնց բնակեցնում է Տիգրանը Մասիսի վրա: Վեպն, ուրեմն, բացատրում է Ածղահակի զարմերի ծագումն մարաց Ածղահակ թագավորից և նրա կին Անուշից:

Հաջորդ գլխի մեջ (Ա. 1ա.) Ածղահակի այդ կինը՝ Անուշ հիշվում է պարզապես իբրև բնակչի վիրավոր: Հավաստյալ կարելի է ասել, որ այդ կողմեր վիպական ծագում ունի Քեպես և Խորենացի այդ գործ է ածել մի տեղ, ուր առասպելի բովանդակությունը չի բերում, այլ Տիգրանին է գովում. Բնակչիք անուանեալք Տիգրան, մի է և միայնակ սա ի Հայկազանցս, որ զԱծղահակ ապան, և գտուն նորա ի գերութիւն վարեաց և զԱնուշ մայրն վիրավորացս: Կարելի չէ կարծել, թե Պատմագիրք բնակչիքն Ածղահակայ զարձրած լինի բնակչի վիրավորացս, քանի որ նա ճշմարտապատմողիան է համար, ինչպես կտեսնենք, միշտ հակառակն է անում: Այստեղ նա մոռացմամբ գործածել է այդ կողմն Անուշի համար: Կնշանակի՝ վեպի մեջ Ածղահակի զարմերը կուվել են նաև վիրավոր:

2. Մ. Խորենացիի Ածղահակի սերնդի գերութունը և նրանց բնակեցումը Մասիսի վրա պատմելուց հետո՝ նույն (Ա. 1.) գլխի մեջ անմիջապես ամփոփում է. Գայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք... յորս շարին քանք երկոցն զԱրտաշեսէ և զորդոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Ածղահակայ, վիրայազունս զնոսա կուելով, գի

¹ Հիշենք միայն՝ Կոտին, Պատմութիւն Վարուց և մահուան սրբոյն Մեսրոպոս վարդապետի, ՎճՆԽԻԿ, 1894, նր. 16, հան., 21:

Ածղահակ ի մեր լեզուս է վիշապս²։ Այս խոսքերից պարզ երևում է, որ գործողներին երգերի մեջ Վիշապագունք անունն է տրվում, և թե ինքը Պատմագիրն այդ վիշապ-ազունք (=պարմք վիշապի) անունը համարում է զգարմք Ածղահակայս։

Վիպասանքի բովանդակության մեջ (Բ. խթ.) նա հիշում է. «Եւ իբր տրվաւ Ե Սարինկան ընդ վիշապագունսն՝ առասպելաբար, այսինքն ընդ զարմս Ածղահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեացս։ Պատմագիրն այստեղ էլ շատ որոշ գրում է, որ իբրև առասպել պատմվում է Վիպասանքի մեջ, թե Ասթինիկը վիշապազնն է ախրել։ Բայց նա ինքը, ինչպես բացատրական այսինքնս բառը ցույց է տալիս, սվիշապագունքս հասկանում է զգարմք Ածղահակայս։ Ասթինիկի այդ տըրվանքը կամ անբը վեպի բովանդակության անջ, որ բերվում է Ա. 1. զլսի մեջ, գրված է Արգամանի համար։ Ուստի և Արգամանը ներկայանում է իբրև վիշապազն։ Թե Արգամանը վիշապազն կամ նույնիսկ վիշապ է, այդ երևում է նաև նույն տեղում բերած հետևյալ կտորից. «Այլև ճաշ ասեն գործեալ Արգամանայ ի պատիւ Արտաշիսի և փարգաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապացս։ Քանի որ Արգամանի այդ տաճարը, այսինքն այսարանքը, ուր ճաշն ու խարդավանքն է լինում, կոչվում է ստաճար վիշապացս, ապա և ինքն Արգամանն փորն վիշապ է ներկայանում»։

Վիպասանքի բովանդակության մեջ (Ա. 1.), Արգամանի այս ճաշից հետո և Ասթինիկի տրփանքից առաջ, բերված է երգից նաև հետևյալը. «Այլ և Արտաազգայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդալն Արտաշիսի, տեղնկիկ ազարանից ի հիմնանալն Արտաշատու, նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարտաց զՄարակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայս։ Այս կտորից երևում է, որ վեպի մեջ վիշապ և վիշապագունք անունները հետ նույն նշանակությամբ գործածվել է նաև սմարքս։

Վիշապազները հիշվում են նաև հետևյալ հատվածի մեջ. «Այլ ոմանք ասեն և ի Յնանելն զստ—զԱրտավազզ դիպիալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարզել զսա կանանց զարմից Ածղահակայ վաս որոյ զնոսա բազում շարչարեաց Արտաշէս։ Եւ զայս նոյն երգիչքն լառասպելին ասեն այսպէս, եթէ՝ Վիշապագունք գողացան զմանտկն Արտաազգ և դև փոխանակ եղինս (Բ. կա.)։ Այստեղից և այլ ենք իմանում, որ ոչ միայն Պատմագիրը, այլև ուրիշները սվիշապագունքս և զգարմք Ածղահակայս նույնն են համարել։

Եվ վերջապես՝ պետք է նկատի ունենալ և հետևյալը «Թուեմուսցս» երգերի, որ է Վիպասանքի բովանդակությունը բերելուց հետո՝ Խորենացին ասվելուցնում է. «Եւ արդ ո՞չ արգեօք առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յազատն ի վեր ի Մասիսս (Ա. 1.)։ Պատմագիրն, ուրեմն, ասում է, թե վերևում բերված պատմություններն իս-

² Այս մասին՝ Մ. Արեղյան, շաշ ժող. առասպելները, եր. 363—365.

կապես են օանչայտ իրք վիշապաց, որ ինքը ճշայտնում է³, այսինքն հասկանալի է դարձնում: Եվ ի՞նչ է անում նա, եթե ոչ այն միայն, որ երգերի մեջ հիշված վիշապներն տ. վիշապազները միշտ դարձնում է զգարմք Աժդահակայ, կամ, ամենի ճիշտ, երգերի մեջ հիշված անուններից, շեղմարտապատմության համար, նախընտրում է Աժդահակի զարմեր կոչումը: Եվ հասկանալի է, թե ինչու վիշապները կամ վիշապազներն առասպելական էակներ լինելով՝ անհավատալի բաներ են: Քրիստոնյա Պատմագիրը, որ նույնիսկ աստվածներն իբրև մարդ եղած է մեկնում, շէր կարող հավատալ, որ Սաթենիկ թաղուհին մի վիշապ կամ վիշապազներ սիրած լինի, և կամ Արտաշես թագավորը նրանց հետ հարաբերություն ունեցած լինի: Բայց մի անգամ որ նրանք մտնում են Արտաշեսի պատմության մեջ, պետք էր այդ շեղմարտելու⁴ իսկ ճշմարիտն այն է, որ դրանք մարաց Աժդահակ թագավորի զարմերն են, միայն հայերեն բառով ասած. թորովհետև Աժդահակ մեր լեզվով վիշապ է. որեմն և վիշապազն նույնն է ինչ որ Աժդահակի զարմ:

Անցնենք Մուրացանին: Խորենացին (Թ. Ե.) Մուրացան նախարարության համար գիտե, թե՛ ասան նահապետաց ազգին՝ Մուրացան տէր, այլ մարացաց տէր: Այստեղից եզրակացնում է նա Մուրացանների մարացի լինելը: Եվ երբ միանգամ նրանք մարացի են, մարական ծագում ունեն, անշուշտ հասարակ ծագում պիտի շունենալին, այլ մի իշխանից կամ թագավորից սերված պիտի համարվեն, ինչպես շատ նախարարական տներ: Եվ ումից հատկապես, եթե ոչ թի զաւակէ Աժդահակայ Մարաց եղելոյ թագաւորի (Թ. Ե.), որի սերունդները բերված են Հայաստան:

Այսպես մի կողմից Վրպասանքի մեջ հիշված վիշապները կամ վիշապազները նույն են, ինչ որ Աժդահակի զարմերը կամ մարերը. իսկ մյուս կողմից Մուրացանները կամ ժմարացուցն տնարք ունին մարական ծագում և հն Մարաց Աժդահակ թագավորի սերնդից: Ուստի բանավարութունը հեղտությամբ պիտի տաներ այն եզրակացության, թե Մուրացաններն են վիշապազներ, կամ, ընդհակառակն, երգերի մեջ հիշված վիշապազները մուրացաններ են, Արգաշի վիշապազն Աժդահակի զարմ Մուրացան Արգամն է:

Պատմագիրն իր այս եզրակացության համար իբրև հաստատություն գտնում է նրանց անկուսական տեղի նույնութունը կամ մոտիկությունը: Նա Ա. Ը. գլխի մեջ հայտնում է, որ ըստ թիուելեաց երգերի վիշապները, նույն և վիշապազները, քնակվում են սյազատն ի վեր ի Մասիս: Իսկ Թ. խթ. հայտնում է, որ զգարմք Աժդահակայ (= մարք-վի-

³ Հմմտ. Ա զրթի Թ հավելվածի մեջ Քրիստոսի անասպելի մեկնությունը. «...միտս անմտութեան նոցա տալով, և զկարի վազուց եոցա իրս և նոցա անհասանելիս արտելի յալուհեմ»:

⁴ «Բայց յիշատակեսցուց և մեզ կարեառուից և զայլարեսութիւնն ճշմարտեսցուց» (Թ. խթ.):

շապազունք) աունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց ինչպես և երգի մեջ նույնն ասվել է (Ա. 1-): Իսկ Բ. ծա. գլխի մեջ այդ կողմերը նա ղեռով է կալված Մուրացանների և հասեկապես Մուրացան Արղամի, որ ի ծննդոցն Աժդահակայա (Բ. 107-), և հիշում է նախնական և արստ հիստոյ Նրասխայ զամենայն պիղտա, որ Մասիսի դիմացն է հասկանում, Եարուրի դաշտը: Նույնպես Բ. ք. գրում է. «Ենդկորդ քազարութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ Մարաց եղելոյ քազարտի, որ այժմ Մուրացեանդ կոչեն... Եւ քազա ի վերայ նորա զամենայն շէնս, որք ի գերութենէն Մարացո: Այսպես մի կողմից, առասպելի մեջ վիշապների կամ վիշապազների բնակութեան տեղերը կապված են Մասիսի հետ, իսկ մյուս կողմից՝ Մարերի (կամ Աժդահակի զարմի) բնակութեան տեղերը, նույն և մաքացոց տեղերի՝ Մուրացանների, նույն Մասիսի ստորոտներում են և նրանից ղեպի արևելք, որով և Պատմագիրը հաստատված է համարում իր քաջատրոսփյունները:

50. Վիշապը կամ Աժդահակն իբրև տոտեմ:— Կա մի ուրիշ հանգամանք էս, որով վիշապա բառին փոխանակել է սմարա բառը կամ ընդհանկառակն: Մար նշանակում է օձ, վիշապ: Արղարև մեր ժատենագրութեան մեջ սմարա (= օձ, վիշապ) բառը չկա գործածված, բայց ոչ ամեն պարսկերեն քառեր, որ մեր ժողովրդի մեջ եղել են և կան այժմ, մտել են մեր հին մատենագիրների մեջ: Պարսկերեն լեզուն ղեռ Քաննեֆունի ժամանակ ծանոթ է եղել հայերին, ուստի սմարա բառի օձն նշանակութունն ամենահին ժամանակներից կարող էր ծանոթ լինել մեր ժողովրդին, ինչպես և այժմ ծանոթ է: Մի անգամ որ վիշապանների պատկերութեան մեջ մտն նշանակում է վիշապ, այն ժամանակ հեշտ հասկանալի է, թե ինչպես մարք և վիշապք, վիշապազունք և զարմք Աժդահակայա—զարմք վիշապ զահակայա, շփոթվել են իրար հետ:

Այս ամենը ցույց են տալիս, որ Մասիսի ստորոտներում և այդ լեռից ղեպի արևելք Արաքսի երկու կողմերում քնակվող Մարերը, որոնք մինչև V դարն արդեն հայացած են եղել, համարվել են վիշապազունք, իբրև վիշապ զահակի զարմեր: Դա նախնական շատ ցեղերի հավատալիքներից մեկն է, որով նրանք իրենց ծագած են համարում կենդանական գերբնական էակներից.— սրանք թվում և օձերից, վիշապներից.— հակը անունով կոչում իրենց: Ուրիշ խոսքով՝ վիշապը կամ վիշապ Գահար համարվել է Մասիսից ղեպի արևելք քնակված մարական ծագում ունեցող ցեղի տոտեմը, իրենց պաշտած կենդանի նախնին, որի անունով և նրանք կոչվել են նաև Վիշապազն կամ Աժդահակի զարմ:

Այս հավատալիքը թերևս ծագել է այն ժամանակից հետո, երբ սմաղառ անունը հնչափոխութեամբ դարձել է սմարա. կարող է դրանից անկախ ևս առաջ եկած լինել: Բայց մի անգամ ծագելուց հետո՝ այդ հավատալիքը հարատեւել է երկար դարեր, նույնիսկ քրիստոնեության ժամանակ և այդ հետեւյալ հանգամանքներով: Վերևում հիշված կողմերի

րնակիչները հրկար պահած են եղել իրենց մարական ժագման հիշողու-
թյունը, թեպետ և մեր թ. V դարում արդեն «Մարք» անունը, ինչպես
երևում է, դարձած է եղել մի աշխարհագրական տեղանուն. ուստի և
ստեղծվել է «մարացի» բառը: Ապա՝ պետք է նկատի ունենալ, որ Հեթա-
նոսությունը, այսինքն նախաքրիստոնեական կրոնն էլ այդ կողմերում
երկար է մնացել: Երբ Մեսրոպը Փողթնի րնակիչներին, տեղի իշխանի
սատարությամբ, քրիստոնյա է դարձնում, այդ ժամանակ,—գրում է կոր-
յունը (եր.—21),—«Պիւացն փախստական լինելով՝ անկանձին ի կող-
մանս Մարացո: Ապա Մեսրոպը գրերի պուտից հետո, երբ գալիս է
Վաղարշապատ, ամենից առաջ սկսում է հենց այդ կողմերում սովորեց-
նել. «գեղուժագուծ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն գիւական
սատանայակիր քարոզն ճիւղղութեան, այլև վասն խեցքեկազոյն լի-
զուին՝ դժուարամտոյց իննս ... Եւ ղնոցա հարուստ ամացն ծնունդա...
պարզախօս հոծտորարանս կրթեալս... կացուցանէին»:

Քնական է, որ այդպիսի «խուժագուծ կողմերում» երկար պահեն
իրենց հին առասպելներն ու հավատալիքները և իրենց «մար» անվան
ժագման ավանդությունը:

Նկատենք և այս: Խորենացին հայտնում է, թե «թուռնեացա երգերը,
որ է Վիպասանցը, «պահեցին ախորժելով... մարդիկ կողմանն պինեւտ
զառառին Փողթան» (Ա. 1.): «Յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատ-
մին ի Փողթան» (Բ. խթ.): Մի անգամ որ Փողթնի րնակիչները յուրացրել
և ախորժելով պահել են իրենց հարևանների-մարերի մասին հին երգն
ու առասպելը, վիշապապնների առասպելը, զարմանալի շի լինիլ, որ
երանք յուրացրած և պահած լինեին նաև «Աժի—Գահակի», Վիշապ Գա-
հակի զարմ կոչումը:

Հին առասպելական Դաճակ անունը, ինչպես հայտնի է, դարձած է
Ջոճուկ, սրանից է ծագում զոկ: Փողթն դավառի րնակիչների զոկ կոչումն
ուրեմն, ոչ այլ ինչ է, բայց եթե հին «զարմ» Աժի-Գահակայա կոչման
մնացորդը, որ հին դարերից պահվում է մինչև մեր օրերը: Դա տոտե-
միստական աշխարհայեցության մի վերապրուկ է:

Հայերի մեջ այս նախնական հավատքը շատ զորեղ է եղել, ինչպես
այդ երևում է օձերի պաշտամունքի արդի մնացորդներով:

51. Ան լուսն կամ Մասիսի վիշապները:— Հին առասպելական
հավատալիքները հեղուկությամբ լին մոռացվում: Մինչև մեր օրերը հա-
րատեել են նաև վիշապների մասին առասպելները: Թե ինչ են վիշապ-
ները, մենք այդ տեսանք վերևում: Գրանք առասպելական էակներ են
օձի կերպարանքով և հաճախ նույնացվում են հենց օձերի հետ: Հայաս-

5 Ատին, Թոմ. վարուց և մահուան ք. Մեսրոպայ, էր. 21:

8 Տե՛ս ն. Նալայան, «Ազգագր. հանգես», 289, 11, 312, հտե. Գ. Սրվանդյանց,
Գրոց-բրոց, էր. 44, հտե.: Առանձնապես՝ M. Adeghtan, Der arm. Volksgl. էջ 74—76,
Schlangenkultus (օձերի պաշտամունք): Ղ. Ալիշան, Հին հայագր., էր. 280:

տանի լեռներից շատերի համար ցարգ առասպելաբանում է ժողովուրդը, թե օձեր կամ վիշապներ են կենում այնտեղ: Նրանք բնակվում են քարայրերում, ուր և ունեն իրենց ապարանքները կամ տաճարները⁷. ունեն իրենց թաղամուտներն ու թագուհիները, զորքն ու զորավարը, և իրար դեմ կռիվներ են մղում բոլորովին նման մարդկային կյանքին ու թագավորութան: Այդ վիշապներն իբր իսկապես մարդիկ են, միայն սօձեղեն շապկով, որ տալով ժամանակ հանում են և մարդկային կերպասանք ստանում: Նրանք մարդկանց հետ հարաբերություն ունեն և կանանց հետ սեր էլ են անում⁸:

Այդպիսի գրույցներ շատ են պատմում Գողթնի սահմանի վրա, Նախիջևանից ոչ հեռու գտնվող մի գաղափի մասին, որի սանձան յիսկ օձայեռ (Իլանգաղ, Իլանու) պետք է անված լինի օձերի այդ պատմություններից: Մենք այդ զեռան օձերի կամ վիշապների մասին շատ հրաշալի պատմություններ ենք լսել, բայց զրի առած չլինելով՝ չենք կարող բերել:

Ի թիվս այլ լեռների այդպիսի օձերով կամ վիշապներով բնակված է համարվում և Մասիսը, որ Արտավազդի առասպելի մեջ սեռայտաուրքում, հորվում է սևեռա լեռան⁹, և հենց ժողովրդի մեջ, ըստ Թադիսգլանի, կռիվել է Մութն աշխարհ¹⁰, ըին ժամանակից ցայսօր Մասիսը կամ սևեռա լեռան համարվում է վիշապների բնակարան, որոնց մասին պակասք քաններ, ասհայտ իրքք են պատմում: Ասում են, թե Մասիսի վիշապները մի քանի տարին մի անգամ մեծ կռիվ են ունենում Արագածի վիշապների հետ: Միջուկս առասպելներն ունի հատկապես Փոքր Մասիսը: «Պատմում են, որ Փոքր Մասիսի վրա կան վիշապներ և օձեր ահագին մեծությամբ, այդ պատճառով խիստ դժվար է և համարյա անկարելի է նրա գաղաթը բարձրանալ: Եթաբարանալիս լեռան խորքերից կամ տակից մշտապես լսվում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ պրտապատառ կարող է լինել»¹¹:

7 Հմմտ. Նզրիկ, էր. 104: Են ոչ տաճարք իրքե մարդկան են նոցա (վիշապաց) ի բնակութեն: Վարդանի դասը՝ «Տեսնալ ոմանց քայոց և վիշապաց տաճարս ի լեռինս և բնակութենս» (Պատմաբան, Արմ. ՅՈՍՍ, II, 74):

8 Հմմտ. Մովսեսայանց, Գրոց-բրոց, էր. 44. M. Abeghian, Der arm. Volksgl. էջ 76:

9 Պատմաբան, Արմ. ՅՈՍՍ, II, 74:

10 «Մանապարհորդութիւն Մեսրոպայ Դ. Թաղապետանց», Կալկաթա, 1847, Ա, էր. 187:

11 «Ընտիր հատվածներ Նազարյանի», Տփլիս, 1863, Ա, էր. 230: Լեռն Տիգրանյանի ճանապարհորդությունը քննելի Փոքր Մասիսի գագաթը: Ավելորդ լի լինելու նույն տեղից բերել է հետևյալը. «Մյուսն էլ ասում են, թե գագաթի վրա Ազնավորի (հակա-Ների) գերեզմաններ կան... Մի քանիս էլ չլսել են, որ գագաթի վրա ուղտերի քարաձան կո քարացած, նաև ուղտապանն էլ այնտեղ քարացած կանգնած է, մեկ ձեռքով բռնած ունի առաջնորդող ուղտի սանձը, իսկ մյուս ձեռքին իր գագաթանը: Փոքր Մասիսի վրա լճի (որի գլուխը լեռնում է Տիգրանյանը) զամաթյուտը, միացած Ազնավորի կամ Օղուզի գերեզմանի և քարացած ուղտերի շարանի այդ պատմության հետ՝ հիշեցնում է նմանաթ սարի քրավազանի և Բելու ուղտերի առասպելը:

Մասիսի հետ կապված վիշապների այս դրույցները մոտենում և նույնանում են նույն լեռան վրա հորենացու պատմած առասպելի հետ:

52. Ածղառակի առասպելը:— Տեսանք, որ Տիգրանի պատմությունն իր մանրամասնություններով բուն պատմական հիշողություն է: Սակայն այդ պատմությունն ունի նաև առասպելական, հատկապես ամպրոպի վիշապի առասպելի լրնավորություն, որ ինչքան էլ Մեծն Տիգրանի պատմության ազդեցության տակ և եվհեմերական մատմոթյամբ պատմական գույն է ստացել, բայց դեռ երևում է պարզապես որոշ առասպելական գծերով:

1. Ածղառակ անունը մեզ ծանոթ Աժի-Գահակն, Վիշապ Գահակն է, որի դեմ կռվում է պարսիկների մեջ Հրուդենը— Թյայնտառնան, սրան համապատասխան է հնդիկների մեջ Տրիսա աստվածը, որ Ինդրայի հատկություններն ունի և կռվում է նույնպես Վիշապի դեմ: Ածղառակի վիշապ նշանակությունը ծանոթ է հորենացուն:

2. Ոչ միայն առասպելական Ածղառակ անունը և նրա վիշապ նշանակությունն է մնացել, այլև Ածղառակի կիևը՝ Անոյը հիշվում է (Ա. լա.) պարզապես իբրև սմայր վիշապացու:

3. Տիգրանն այդ Վիշապաց մայրն Անոյին իր որդիների հետ բնակեցնում է Մասիս լեռան վրա, որ, ինչպես տեսանք, վիշապների կամ վիշապազների լրնակարան է ըստ վիպասանների: Արդ որո՞նք են այդ Վիշապաց մորը որդիները, եթե ոչ նույն Մասիսի վիշապները կամ վիշապազները:

4. Նույն Մասիս լեռան վրա է մնում և Վիշապ Արտավազդը, որ ինչպես կտեսնենք, փոխանակած է Աժի-Գահակին:

5. Մյուս կողմից Մասիսի վիշապազների համար կա և զարմք Ածղառակայն կոչումը, դրա մեջ մնում է ուրեմն, մի առասպելական հիշողություն, թե Մասիսի վրա բնակվող վիշապազները, որ երևան են գալիս վեպի մեջ, են զարմք Ածղառակայն, վիշապ Գահակի և նրա կնոջ Վիշապաց մայրն Անուշի:

Վիշապաց մորը երևան գալը մեր առասպելի մեջ մի պատահական բան պետք չէ համարել: Վիշապի կանայք հաճախ դուրս են գալիս ամպրոպային կռվի մեջ: Այդ կանայք զերվում են ամպրոպային աստծուց, երբ օա հողթում է վիշապին: Ինդրայի կռվի մեջ Ահի (վիշապի) դեմ՝ նույնիսկ վերջինիս մայրն է դուրս գալիս¹⁵, Ամպրոպային առասպելի մեջ, ինչպես տեսել ենք, դուրս են գալիս և աստվածային կանայք, ամպրոպի աստծու քույրը կամ կինը, որոնց հափշտակում է վիշապն և արգելում իր բուրգում: Մեր առասպելի մեջ Տիգրանուհին նույն դերն էլ կատարում:

¹⁵ *Mannhardt, Germ. Mythen.,* №. 76—80.

Ածղահակի և Տիգրանի առասպելն ունի այսպիսով ամբողջապես մի ամպրոպային առասպելի բովանդակութիւնն: Ածղահակը, ամպրոպային վիշապը, որից սերում են Ածղահակայ զարմքը, վիշապներ կամ վիշապազներ, հափշտակում է Տիգրանից (= սկզբնապես ամպրոպային աստուծուց) նրա քրոջը և պահում իր մոտ: Բայց Տիգրանը հարձակվում է իր թշնամի վիշապի վրա, սպանում է նրան, ազատում քրոջը և գերում վիշապի կնոջը և բնակեցնում նրան իր սերնդով Մասիսի վրա:

Տիգրանի տեղ սկզբնապես ամպրոպային աստվածը եղած պիտի լինի: Մեր ամպրոպային աստվածն է Վիշապաքաղ Վահագնը: Սա ևս եղած պիտի լինի սկզբնապես վիշապ Ածղահակի դեմ կռիւղը: Այս ենթադրութիւնը հավանական է դառնում այնու, որ Ածղահակի դեմ կռււղից Տիգրանը նրա հայրն է, մի հանգամանք, որ կարելի չէ պատահական համարել: Այդ ազգակցութիւնը մեր Պատմագիրը կամ Վահագնի մասին երգողներից առած պիտի լինի, կամ Տիգրանի մասին պատմող աղբյուրից: Առասպելաբանութիւն մի քնդհանուր հատկութիւնք, մանավանդ երբ առասպելն սկսում է կորցնել իր դիցաբանական կերպարանքը և պատմական գույն ստանալ, հաճախ մի աստվածութիւն կամ դիցազն բաժանվում է երկսի. ստեղծվում է աստուծու կամ դիցազնի համար հայր կամ որդի, որի վրա պատմվում է, երբեմն փոխված ձևով, միևնույն հին առասպելու Զրույցի այսպես երկսի գաժանվելն անհրաժեշտ պիտի լիներ այն ժամանակ, երբ արդեն մարերն ու վիշապներն սկսել էին շփոթվել պատմողների գիտակցութիւն մեջ, երբ առասպել և իրականութիւն խառնվում էին: Վիշապների ազդի տեղ անցնում էր մարերի ազդը, հին առասպելական օձերի կամ վիշապների թագավոր Ածղահակին փոխանակում էր մարաց թագավորը, ինչպես և նրա սերունդը համարվում էին մարաց թագավորի զարմ—մարեր, կամ, քնդհակառակն, մարերը համարվում էին վիշապազն Ածղահակի զարմ, և Մասիսի վիշապների առասպելական գերութիւնը՝ նույն լեռան ստորոտներում և դեպի արեւելք բնակող մարերի գերութիւն: Հարկավոր էր, որ այդ ժամանակ ամպրոպային աստուծու տեղ ևս մի պատմական անձ անցներ: Եվ ո՞վ կարող էր այնչի հարմարավոր լինել այդ դերը կատարելու համար, քան Մեծն Տիգրանը, մի թագավոր, որ իր կենդանութիւն ժամանակ հենց աստված կամ դիցազն է համարված, որ մարերի հետ իրոք նման հարաբերութիւն ունեցել է, ինչպիսին պատմվում էր առասպելի մեջ, և որ հայտնի է իր՝ Հայաստան բերած բազմաթիւ գերիներով: Այսպիսով պատմվածքի մեջ երկվութիւն է մտնել, առասպել և իրականութիւն խառնվել են, վիշապները մարերին հավասար՝ դարձել են վիպասանութիւն մեջ գործող անձեր, ճիշտ ինչպես շատ ժողովրդական առասպելների մեջ, ինչպես և մեր արդի ժողովրդական վեպի ռեալիստ Մոսիսի մեջ, որ թի պատմական և թի առասպելական կերպարանք ունի:

Ասել չի ուղիւ, որ Ածղահակի առասպելը պատմական գույն ստանալով՝ իրեն պիտի քաշեր Տիգրանի պատմութիւնից շատ զմեք, որոնց

բուն պատմական են, և շատ առասպելական զծեր ևս պիտի կերպարանափոխվիին: Օրինակ, առասպելական կնոջ համըտակութիան տեղն անցնի է Մարաց թագավորի խնամութիւնը, այսինքն՝ վիշապի և ամպրոպային աստուծու սկզբնական թշնամութիւնը մեղմացած է պատմական բարեկամական զեպքի ազդեցութիւն տակ. աստվածուհին այլևս չի համըտակվում, այլ խնամութեամբ առնվում է, և Աժդահակն սկզբում բարեկամ է Տիգրանին, գոն ըստ երևույթին: Այս ամենը կարող էր կատարվել և նույնիսկ ժողովներդ կամ պատմողների գործում: Բայց վիպասանը, ինչքան էլ առասպելին պատմական գույն տա, միշտ ավելի շատ առասպելական զծեր է պահում, միևնույն վեպի մի պատումի մեջ ավելի, մյուսի մեջ պակաս: Ուստի հաճախ միևնույն վեպի մեջ պատմականն և առասպելականը կից ապրում են միևնույն անձի համար: Ինչպես Վասնա Մոերիս մեջ Սանասարն ու Բաղդասարը թե Բազդադի թագավորի ուղիքն են հիշվում, և թի գերբնական ձախտին ծնունդ ան, նույնպես և Վիլյամսոնի պատմութեան մեջ Աժդահակը թե մարտ, և թե վիշապաց թագավոր կարող էր հիշվել: Իսկ երբ այսպիսի մի առասպել մշակում է մի ճարտասան կամ քերթող, ժողովուրդին ի բանս, ի՞նչ ասել կոտի, որ նա վիշապները գուրս պիտեղ է ձգեր և պահեր միայն մարդ և մարաց թագավոր Աժդահակ: Եվ քանի որ նրան հայտնի էր մարաց Աստիափնա թագավորը, որա հետ ևս պիտի նույնացներ մեր ստասպելի Աժդահակին: Ուստի և մեր առասպելի մեջ մարաց Աժդահակ թագավորի դեմ կտող Տիգրանին նա պիտի համարեր մարաց Աստիափնա թագավորի ժամանակակից և իրենից ավելացներ Կյուրոսի անունը: Ուրիշ խոսքով նա շարունակել է ժողովրդի մարդու գործը, առասպելական պատմութեան կատարելապես պատմական գույն է տվել:

58. Երվանդի և Սաեադուրուկի առասպելները:— Եթե Երվանդը մի կողմից պատմական անձ է և նրա անվան մեջ ամփոփված են պատմական հիշողութիւններ նախքան II դարը մեր թ. ա., մյուս կողմից նա ևս մի առասպելական էակ է: Խորենացին (Բ. չէ.) Երվանդի ծննդի մասին գրում է. «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս: Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք զիմագրանաց առնուլ կնութեան, ծնանի երկու մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտավրոս: Եւ ի դարգանալ մանկանցն՝ կոշին անուանս Երուանդ և Երուազ»:

Մինոտավրոսը, Կրետեի հրեշք, ծնվում է հայր ցուլից և փակվում է լաբրիրինթոսի մեջ, որ նրան կերակրում են մարդկանց մտով: Թեևս դիցազներ մտնում է լաբրիրինթոս և ապառում նրան: Խորենացու արած համեմատութիւնից իմանում ենք, որ Երվանդի և Երվանդի մայրը-ցուլից է ծնում իր երկվորյակներին:

Այսպիսի ծնունդը շատ տարածված մի առասպել է: Իտալական զրույցով Պագուայի բունակալ Ծցցելինոյի և իր եղբայր Ալբրիկոյի

ծնունդը նույնպիսի է, նրանց մայրը ծնում է ցուլի կերպարանք առած գեղեցիկ այդ երկգորշակնեղվին, որոնցից առաջինն ավելի վատաղի է նշանավոր է, ինչպես և մեր գրույցի մեջ Երվանդը: Երջելինուն ամեն շարաթխոսում է իր հայր դիհ հետ և նրանից վայրագ խորհուրդներ ստանում: Նրա երեսին, իբրև գիվական ծագման հետք, մնում են օտարոտի աչքերը: Այսպիսի ծնունդներ կան և այլ ազգերի գրույցների մեջ, ինչպես ասորիների և այլն: Գրանց, «այս միատերիաների քանաձևն է՝ Յուլը ծնեց Վիշապ, Վիշապը՝ Յուլ»¹³, Այսպես և սերրական վեպի մեջ Մարկոն, մի քանի երգերով, ծնվում է կնոջից և օձից¹⁴:

Հայկական Երվանդի գրույցի մեջ գտնում ենք ոչ միայն այդ անբնական ծնունդը, այլև օտարոտի աչքերը: «Քայց ասնն զԵրուանդայ՝ ըստ հմայից զժենայ զոչ ական հայնցուածով. վասն որոյ ընդ այգուստը աչալըացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէ՛մս որձացաւոյն այս ունել ընդրէ՛մ Երուանդայ, և ի հայնցուածոցն զժնութիւնէ ասնն պայթել որձաքար վիճացն: Թայց այս վամ եղիցի ստու և առասպել, և կամ գիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայնցուածոցն անուամբ վնասեցէ զօրս կամիւս (Խոր., Բ. Խք):

Այս շար աչքի առասպելը շատ տարածված է հին ու նոր ազգերի մեջ: Հայ ժողովրդի մեջ մինչև այսօր էլ հավատում են, որ Էթե շար աչքը զքարին էլ տա, կը տրաքի¹⁵: Մեր Վիսասանքի տեսակետից ավելի կարևորություն ունի այդ միատերիաների գանաձևը, փն քցուլը ծնեց վիշապ: Ավիշապը, առանց աղբյուրը հիշելու, գրում է, թե «Երուանդ անուն օձ կամ վիշապ նշանակէ»: Ասկա նա Վահրամ վարդապետից բերում է ի միջի այլոց հետևյալը. «Եսկ ընդ՞ որ ար պա ասնն՝ տեսնալ ոմանց քաչաց և վիշապաց տաճարս ի լերինս քարձուռն և քնակութիւնս, ուր և զԱղբքսանդր կայանալ ունին ի Հոռմ, և զԱրտասազդ Հայոց թագաւոր ի Մասիս, և զԵրուանդ ի պետս և ի մռայլսս Այսպիսով Երվանդն իր ծնունդով հանդիսանում է յերբև մի վիշապ, որին և, ինչպես վիշապ Արտասազդին, քաչքերը կայած պահում են:

Երվանդի այս առասպելի մեջ ևս երևում է տոտեմիտական աշխարհայնցություն: Թայց միաժամանակ այսպիսի հրաշալի ծնունդը ծառայում է նույն ընդհանուր ձգտումին, որ ունի վեպը, այն է՝ փառազորել իր հերոսին: Գա, այդ գերբնական ծնունդը, նպատակ է ունեցել ցույց տալ հերոսի իրավունքն իրիսելու Երվանդը, կես Արշակունին, իր գերբնական ծագումով ու հայացքով արժանի պիտի լիներ թագավորելու: Գա ւայօրինի զահակալութիւնն որինամբողջարձնելու: մի եղանակ է եղել: Թագավորին մեծացնելու նույն ձգտումը պետք է տեսնել նաև Սանատրուկի անվանակոչությունն առասպելի մեջ: Սանատրուկը երբևս

¹³ A. B. Амфиштепрос, Армения и Рим, էք. 304, 322, հտ. 1.

¹⁴ «Сербский эпос», ред. Н. Кравцова, Academia, 1933, էք. 101.

¹⁵ Գ. Ստոյանովիչ, Հայ ժող. հեթանոսներ, է. 28, Հմմտ. M. Abeghlian, էր. 122, հտ. 1.

¹⁶ Ալիբե, 2 ճև հավատք, էր. 132.

ժամանակ բուքի պատահելով՝ երեք օր ու երեք գիշեր մնում է իր դա-
յակի ստինքներին մեջ Այն տակին Աստվածներն այդ ժամանակ մի նո-
բահարչ ապիտակ կենդանի են ուղարկում, նրան պահելու Աստվածներն,
ուրեմն, հովանավորել են Սանատրուկին, հետևաբար և նա ընտրվալ է:
Արդարեւ, այս գեպքում լկա ապօրինի գահակալութուն, բայց այդ նշա-
նակութուն լուսնի, Հնումը բաւոր իշխաններն իրենց կյանքն ու ծագումը
կապում էին որնէ հրաշալի գեպքի կամ նշանավոր անկի հետ: Զէ՞ որ
հայ Արդակունիներն էլ իրենց անվանում էին ադիցախանն:

54. Արգավանի առասպելը:— Վիպասանքի մեջ բացի Աժդահակի,
Երվանդի և Սանատրուկի վերնում հիշված առասպելներէք, կա նաև մեկ՝
Արտավազդի կուրծք Արգավանի կամ Ազատ Մասիսի վիշապների ու վի-
շապազների հետ, մեկ էլ՝ Վիշապ Արտավազդի փակվելը Ազատ Մասի-
սում:

Որոշներ այդ առասպելական մասերն ևս. նախ՝ առաջինը, Երվու-
տեղ (Ա. լ., Բ. վաթ.) առասպելի համառոտ բովանդակութիւնն է բերում
Պատմագիրը, իսկ մի տեղ (Բ. ժա.) պատմում է ճշմարտելով, այսինքն՝
առասպելականին տալով պատմական կերպարանք: Այդ երեք հատ-
վածն իրարու հետ համեմատելով՝ կատանանք մտազորայնութեան
առասպելի բովանդակութիւնը, ընդամենը լրոր միշտագեպ:

ա. Քուսկիաց երգէ (Ա. Է.):

1. Յժազատն ի վեր ի Մասիսս ընակվող վիշապ կամ վիշապազն
Արդավանը վիշապների տաճարում ճաշ է տալիս ի պատիվ Արտաշեսի
և խարդավանակ շինում նրան:

2. Արտաշեսի քաջ որդին Արտավազդը՝ թի հիմնանալն Արտաշա-
տուս ապարանքի տեղ լզտնելով՝ անցնում, գնում, շինում է թի մէջ Սա-
բաց (= Վիշապաց, Վիշապագանց) զմարակերտս:

3. Սաթենիկ տիկնոջ տեղանքը կամ սերն առ Արգավան վիշապը
կամ վիշապաղնը:

գ. Վիպասանք (Բ. յսթ.):

Այստեղ թողնում ենք սկզբում դրած պատմականն ու կենցաղա-
կանը¹⁷ աշինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս և ծնունդ զարմիցս,

17 Նկատենք, որ Պատմագիրն առանձին կարևորութուն չի տալիս նյութերն ըստ
ժողովրդականին գաղափարուն: Չլիսի վերնագիրը որած լինելով զվասն շինուածոյ Ար-
տաշատ ցօղացին, ընտանեորեն ամենից առաջ որել է աշինել զքաղաքն, և այլս բնա-
մութիւն ընդ Ալանս և ծնունդ զարմիցն: Մինչդեռ թուկիաց երգերի մեջ, ուր երգերի
խոսքերով է դրում, թի հիմնանալն Արտաշատուս Արտավազդն արդեն լսփահաս է: Սա-
կայն ճիմնանալն քառը հասկացվում է ոչ այնքան ճիմնել, որքան աշինանալ, շին-
լիք գտնալ, լցվել: Այն ժամանակ թի հիմնանալն Արտաշատուս կհասկացցի. «Ար-
տաշատը որ շինացավ, շինլիք գարեավ՝ Արտավազդն ապարտեթի տեղ լզտավ...»: Այս
գեպքում վիպասանքի և թուկիաց երգերի պատմական և կենցաղական միջադեպերի դա-
ստգորութիւններն իրար լնն հակասում այլևս:

և առևտում ենք միայն, ինչ որ վիշապնեբրին կամ վիշապազնեբրին է վերա-
բերում: Նկատենք նաև, որ շնն հիշվա՛լ սթունելնաց Երզնրի 1-ին և 2-րդ
միջազնակերը. այլ պատմականից ու կենցաղականից հետո հիշվում է
անմիջապես 3-րդ միջադեպը և մի շորորոդ միջադեպ ևս ավելանում է:

3. Վերք) տրտմանը Սաթենկան ընդ վիշապազնեբրին:

4. Վարտ ընդ Եսաս և քայքայումն լիշխանութենէն, և սպանումն
Եոցա, և հրկիզութիւն շինուածոցնս:

գ. Ճշմարտած պատմութիւնը (Բ. ժա.):

Այստեղ տեսնում ենք, որ 4-րդ միջադեպում հիշված մարտը Ար-
տավազդն է անում: Պատմագիրն իր սեջմարտեայն պատմութիւնն անե-
լուց հետո ավելացնում է. «Այս Արզամ է որ յառասպելին Արզաւանն
անուանին»: Խորհնացու յերտն և մեկնութիւնն եղանակը հասկացողը կը-
տեսնի, որ այս գլխի մեջ մինչդեռ Արզամ անունը Պատմագրին է, Ար-
զաման անունը առասպելին է:

Նկատենք և այն, որ Պատմագիրն իր սեջմարտեայն պատմութիւնն
մեջ լի բերում 3-րդ միջադեպը՝ Սաթենիկի սերն առ Արզաման: Անշուշտ
այն պատճառով, որ լի հավատում, թե Սաթենիկի պես մի տիկին կա-
րող էր այդ քանն անել: Եվ այս հավատով է այնու, որ Վիպաւանցի
բովանդակութիւնն մեջ րեբելիս էլ գրում է. «Իր տրտմանը Սաթենկանս:

Մնացածը, բացի սերկրորդութիւնն պատվիս մասին գրվածից և մի
քանի մանրամասներէից, նույնն է, ինչ որ «բովելեաց» Երզնրի և Վիպա-
ւանցի բովանդակութիւնն մեջ կա, և այն էլ միևնույն շարքով:

1. Վերթալով Արտաշիսի ի ճաշ Արզամայ, կատկած իմն անկեայ,
իւր թէ դանել զարքայն խորհեցին, յարուցանեն որդիք արեայիւն ար-
շուպ, և անդն իսկ ի հացին քարշնե զայիսն Արզամայ: Եվ այս ավելի
հավանական ենք համարում, մանավանդ որ Պատմագրի սեջմարտած
պատմութիւնն մեջ ևս նույն կարգն է պահված, ինչ որ ունի եթ. գլխի
սկզբում գերված բովանդակութիւնը: Են խորհուրթեամբ մեծաւ եկեայ
յԱրտաշատ Արտաշէս արքայ...»:

2. ա) Երբ արձեալ արձակեաց զորդի իւր զՄաման մեծաւ գնդաւ, և
գրազումս յազգէն Մուրացեան սպանանել հրամայեաց, և զապարանսն
Արզամայ յարել. և զհարձ նորին, որ կարի շքնազ էր գեղով և մնացեայ
գնացիւք ոտից, զոր կռչէին Մանգու, ամել ի հարձութիւն Արտաշիսի:
Ձոր արձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, ի բաց տալ հրամայէ զինչսն,
բաց ի հարձէնս:

բ) Ենսկ Արտաւազդ¹⁸ ի նոցանէ... յաւելու ևս հանել զնախճաւան և
ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գեղոս, յորում և ապարանս և բերդս
ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւնս:

Այս 2-րդ միջադեպի ա. մասը, ըստ որի Արտաշեսը Մամանի միջո-
ցով կռվում է Արզամանի հետ և երկու տարուց հետո հաշտվում է, չկա

¹⁸ Երկրորդութեան պատիւն իբրև մեկնութիւնն դուրս ենք եզուր:

բովանդակութեան մեջ, էութիւնը կարող է վիպական լինել: Իսկ բ. մասը նույնն է, ինչ որ բթուելեացն երգերի 2-րդ միջադեպը. «Արտապազ... շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ: Շարուրի դաշտն է ըստ հիւսիսոյ Երասխայ:»

3. Սաթենիկ տիկնոջ տրփանքը ըկա:

4. Եւլամ ոչ կտրացեալ համբերել որդոցն Արգամայ, ընդդիմանան նմա պատերազմաւ: Բայց յաղթեալ արքայորդոյն՝ սատակէ զամենայն ծնունդ Արգամայ հանդերձ հարոն, և որք միանգամ երևիլը յազգէ Մուրացեան. և որաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա: Ըստ ոչ որ ասրեաց ի նոցանէ...»:

Արգամի որդիներն են միայն իբրև նորութիւն մեջ մտնում: Բովանդակութեան մեջ հիշած սրկիզութիւն շինուածոցնս կամ դուրս ձգված կամ թե 2-րդ միջադեպի ա, հասվածի մեջ մտցրած պապարանսն Արգամայ այրելու:

Միացնելով այս ամենը, իբրև Վիշապազանց առասպելի բովանդակութիւն, կատանանք հետևյալը: Ենչմարտեալս կամ զարդարեալս պատմութիւնից առած կտորները փակագծի մեջ ենք զնում:

1. Եթազատն ի վեր ի Մասիսս ընակվում են վիշապներ կամ վիշապազներ, որոնց մասին ասնյայտ իբրք են պատմվում: Նրանք ունեն ստաճար վիշապաց: Այդ վիշապներից մեկն (և զլիւսավորն ու հայրն) է Արգամանը:

Վիշապ Արգամանը Հայոց թագավորին (և նրա որդիներին) իր մտտ ճաշի է հրաժիրում: Արտաղես թագավորը գնում է ի պատիվ իրեն վիշապաց տաճարում տրված ճաշին: Արգամանն ուզում է ճաշի ժամանակ խարդավանակ լինել կամ զավել թագավորին: (Սա զայրացած վերագատնալով Արտաշատ՝ իր Մածան որդուն ուղարկում է զորքով կովելու վիշապների զեմ և նրանց կտտորելու: Բայց երկու տարուց հետո հանգիստ է թողնում նրանց):

2. Արտաշեսի քաջ որդին Արտավազը, Արտաշատ քաղաքը շինեացած լինելով, այնտեղ իրեն համար ասպարանքի տեղ շին զտնում: Նա գնում է վիշապների մեջ մտնում, իլում է նրանցից նրանց կալվածները: (Երասխի հյուսիսային կողմում նրանց բոլոր գյուղերն, ասպարանքներով կամ տաճարներով ու բերդերով միասին, լրուրն իրեն է սնտականում): Երևում է սի մէջ Մարաց զՄարակերտ, Շարուրի դաշտում, և այնտեղ բնակվում:

3. Արտավազի մայրը, Սաթենիկ տիկինը տրփանք է ունենում վիշապազների հետ կամ տնջանք ու սեր առ Արգաման վիշապը:

4. Վիշապները լին ուզում տանել Արտավազի արարքները և կովում են Արտավազի հետ: Բայց նրանց իշխանութիւնը քայքայվում է, որովհետև Արտավազը հաջողում է նրանց, կտտորում է ամենքին, Արգամանի բոլոր ծնունդն, ու իրեն Արգամանին սպանում, շինվածներն այրում և իր ձեռը ձգում նրանց բոլոր գյուղերն ու իշխանութիւնը:

Այս է ամենը, ինչ որ Արգամի, վիշապազնէրի կամ վիշապնէրի առասպելին է վերարեբրում:

55. Առասպելի վարիագոյները մեր և ուրիշների մեջ:—Միթական բնավորութիւն ունեցող զրույցները հեշտութեամբ են մոռացվում ժողովրդի մէջ: Այլ երկար պահում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպելների հետ կցվելով, և կամ իրենցից որոշ մասեր մոռացութեան տալով: Մյուս կողմից դիցարանական քնավորութիւն ունեցող առասպելները մեծ մասամբ միայն մի ազգի շին պատկանում: Ուստի և շատ քննական է, որ Արտավազդի ու վիշապնէրի առասպելն ևս, ոչ միայն բնութանուր գծերով, այլև մասնավոր միջադեպերով գտնենք այժմ թե հայերի և թե ուրիշ ազգերի մէջ:

Ամենից առաջ նկատենք, որ ինչպես ուրիշ ազգերի, որինակ՝ գերմանե առասպելաբանութեան¹⁹ մեջ այդպէս և մեղանում դե, վիշապ, ամրահա կամ ամրահար, իրար հետ անրտ կապված են և հաճախ փոխանակում են իրար: Դրանք միեւնոյն ֆիզիկական երևութիւն անձնավորումն են զանազան կերպարանքներով: Այս պատճառով և հաճախ միեւնոյն առասպելը թե դեերի և թե վիշապների մասին է պատմվում:

Մեզ հետաքրքրող առասպելի արդի պատմվածքը հայերի մեջ լսել ենք իբրև հեքիաթ, նույն արդեն գրի առնված գտնում ենք նաև Սլոբովանտայանի²⁰ և Տ. Նավասարդյանի²¹ ժողովածուների մէջ:

Մի հարուստ թագավորի (փոփոխակ՝ արտորդ) աչքը վախեցել է Սև լեռան վրա բնակվող վիշապներից (փոփոխակ՝ դեերից): Ուստի նա մեռնելու ժամանակ կտակ է անում իր որդուն, որ Սև սար որսի լզնա:

Փայ որդին չի լսում հոր խոսքին, գնում է Սև սար որսի և պատահում է ամրահար վիշապի: Կռվում են, և որսորդ արքայորդին կիսասպան է անում վիշապին ու ձգում: Ապա նա մտնում է վիշապի ապարանքը, տիրում է նրա ստացվածքին ու հարստութեան և ապրում այնտեղ:

Որդին մտն էլ բերում է իր մոտ վիշապի ապարանքը: Սակայն մայրը դեռ է անում ու լավացնում վիրավոր վիշապին: Մայրը վիշապին ծածուկ պահում է ապարանքում և նրա հետ սիրողութիւն անում:

Վիշապը մոր սիրտն իր կողմն ունենալով՝ մոր հետ աշխատում է կորցնել որդուն: Մայրը հիվանդ է ձևանում և վիշապի խորհրդով ուղարկում է որդուն այնպիսի բաներ բերելու, որոնցով ինքը պիտի առողջանար, Իսկ այդ հաղվաղդուտ քաները,—անմահական փնձոր, ոսկեղջյուր եղնիկի կաթ, անմահութեան ջուր և այլն,—բերելու հետ կապված են մեծ վտանգներ որդու կյանքի համար: Դայք մի շուրի մալաք ազիլի (փոփոխակ՝ պառալ) օգնում է նրան և ամեն վտանգից ազատում: Մայրը վեր-

¹⁹ *Mannhardt, Germ. Mythen.,* էջ. 207:

²⁰ «Մանանա», էջ. 200, «Ննգավոր մայր»:

²¹ «Հայ մող. հեքիաթներ», Թ, էջ. 26, «Անշոգեար մեր»:

չապես իմանում է, որ եթե որդու երկու բուժին իր նետ աղեղի լարով կապի, աղան ուժից կ'ընկնին Ալդայես էլ անում է: (Փոսիոխ. գլխի երեք մազն է հանում): Տղային սպանում է: Սակայն Շուրի մալաթի շնորհիվ աղան կենդանանում է նորից, սպանում է վիշապին ու մորը պատժում: Իվ այսպես տեր է մեռնում վիշապի ապստանքին:

Այս միեւնույն Հեքիաթը կա կատարյալ նմանութիւնք, կարելի է ասել Նույնութիւնք, և ուրիշ ազգերի մեջ: Սըղվակներին մեջ այդ Հեքիաթը պատմվում է այսպես.

«Որդին մի բերդ մաքրելով վիշապներից՝ քնակվում է այնտեղ իր մոր հետ: Քայք բերդի մի սենյակում մեռնում է մի վիշապ, որին այնտեղ շղթայով էին իր եղբայր վիշապները: Այդ վիշապին հաղողվում է հրապուրել մորը, որ իր սիրական վիշապի հետ աշխատում է կորցնել որդուն: Մայրը հիվանդ է ձեւանում և խնդրում որդուն, որ իրեն բժշկելու համար բերի զանազան հաղվագլուտ համեմունքներ, որոնց ձեռք բերելը մահու շափ վտանգավոր է: Որդուն օգնում է սուր Շարաթը... Բայց մորը վերջապես հաղողվում է կապել որդուն մետաքս լարով. նա կանչում է վիշապին, որ և սպանում է որդուն... Սակայն ս. Շարաթը հարուցանում է որդուն անմահական (մեր Հեքիաթի մեջ աղբյուրի) ջրով ու սպանում վիշապին...»:

Նույն ավանդութիւնը կա և վալախների մեջ: Այստեղ որդին, Ֆլորիան, արդեն մի հասարակ մարդ չէ, այլ գերբնական հրաշալի ծնունդունի, որ նման է Մարսի ծնունդին՝ ըստ Օվիդիոսի և մեր սկսանա Սոսրիս Սանասարի ու Բաղդասարի ծնունդին:

«Մայրը որդուն՝ Ֆլորիանին հղանում է, խափելով մեքը մի փունջ ծաղիկներ դրած քրից: Մայր և որդի քնակվում են մի քերտում, որ վիշապներին է պատկանում: Ֆլորիանը քաղոր վիշապներին հաղթում ու կապում է բացի մեկից, որին հետո մայրը սիրում է: Վիշապը դառնում է գեղեցիկ աղա և մոր հետ աշխատում է, որ կորցնի որդուն: Երկու անգամ Ֆլորիանը մահից ազատվում է կարծեցյալ լուսով միջոցներ բերելով մորը, որ հիվանդ է ձեւանում, Բայց երրորդ անգամ մայրը վիշապի խրատով խնդրում է որդուն, որ զնա անմահութիւն շուր բերելու մի աղբյուրից, որ Ան օտրի վրա պահպանում է շար ոգին»:

Շարունակութիւնը շատ նման է մեր Հեքիաթին (ըստ նավասարդյանի պատմելի): Տղային օգնում են այստեղ ջրի փարիները:

Մեր Հեքիաթի և այս Հեքիաթների նմանութիւնը նույնութիւն է: Հասնում:

Նույն ավանդութիւնը Զեռնապորիայում ոչ թե Հեքիաթ է, այլ մի անշանափոր երգ: Միայն վիշապների տեղ այստեղ դեեր են դուրս գալիս, ինչպես և Սըղվանձոյանի վարիանտի մեջ զն է: Այդ երգի մեջ այսօր փանառուն րներ և նրանց գլխավորն ապրում են մի այրում. պահվում, ազատվում է միայն գլխավորը, որին և սիրում է մայրը: Ս. Շարաթի տեղը

ձերգի մեջ որդուն օգնում է մի վիճակ²²։—Վիւաները մեր քաղցրի կամ այգրիկներին տեսակին պատկանող ոգիներն են։

Մեր վիճակազանց առասպելի և այս հնգիւղիկների մուսկ լինելը ակընհայտնի է Գրանջ միևնույն առասպելի տարբեր պատումներ են միայն։ Անշուշտ, խորհնացին առասպելն իր մանրամասնութիւններով չի բերում։ Այնտեղ շննց գտնում, օրինակ, թե Սաթենիկ տիկինը, որ վիշապ Արգաւանին սիրում է, վիշապի հետ աշխատած լինի իր որդուն կորցնելու։ Ի՞նչպես կարող էր Պատմագիրն այդ մեջ բերել, նա՛ որ Սաթենիկի սերն անգամ բովանդակութեան մեջ իբր տրփանէ է անվանում, իսկ ճշմարտեալ պատմութեանն մեջ այդ սերը չի էլ առնում։ Սակայն այստեղ այդ հրկորդական է և կականը կա։ Էականն է, հայր թագաւորը (Արտաշէս) հարաբերութիւն ունի Սե սարի (Մասիսի) վիշապների հետ։ Նրա այլը վախեցել է վիշապներինց։ Քշնամի է նրանց, բայց, Երնի, կովկովով ըան անել շէ կարողանում²³, իսկ նրա որսորդ որդին (Արտավազդը), որ գերբնական ծնունդ ունի, տիրում է վիշապների ապարանքին ու բերդերին²⁴։ Մայրը, Սաթենիկը, սիրում է վիշապների գլխավորին։ (Մոր դավաճանութիւնը չկա)։ Եվ Արտավազդը ոչնչացնում է վիշապներին։

Թե այս առասպելը, որ այժմ հեքիաթի բնավորութիւն ունի, կարող էր հին ժամանակ հայերի մեջ վիպասանքի և նույնիսկ երգի նյութ լինել՝ այդ մասին կասկածել կարելի չէ։ քանի որ նույն առասպելն այժմ, ինչպես ասացինք, Չնոնագործիայում վիպական երգ է. բացի այդ՝ նույնն, այլև մի քանի ուրիշ հին առասպելներ, ինչպես հետո կտեսնենք, երևան են գալիս և մեր «Մասնա Մոերիս մեջ»։

Վիշապների դեմ կովի այս առասպելին միացել է վիշապներին և մի ուրիշ առասպել,—Արտավազդի փակվելը Ազատ Մասիսի մեջ։ Տեսնենք այդ առասպելն ևս։

56. Արտավազդի բնավորության երկվորյունը։—Արտավազդի առասպելը բացի խորհնացուց հիշում են նաև Աղնիկ, Վարդան վարդապետ, Վանական վարդապետ և «Յայսմաւուրք»²⁵։ Ըստ Աղնիկի Արտա-

²² Буслаев, Истор. очерк русск. народ. словесности, кр. 322. Նույն տեղում հիշված է „Песни Вука Караджича“, № 8, Սերբական այս վիպական երգի առաջին թարգմանութիւնը կա Академія наукъ Имперіи 1923 թ. տպված „Сербский эпос“, кр. 212, հան. „Иван и дивский старейшина“.

²³ Այս իմաստով կարելի է հասկանալ «Յշմարտեալ» պատմութեան 2, ա. հատվածը, թե Մաթան որդուն սուղարկում է վիշապների դեմ, բայց կրկն ասուց հետ հաշտվում է և սի բաց ասլ հրամայէ զինչօնս։

²⁴ Խորհնացու «Յշմարտեալ» պատմութեան այն տպագրութիւնն է թողնում, թե Արտավազդը հակասակ իր հօր կամքի է կովում Արգամի դեմ, ինչպես և հեքիաթի մեջ որդին հօր կտակի հակասակ է վարվում։

²⁵ Նյութերը գեղեցիկ կերպով դասավորված կարելի է գտնել Գ. Խայթյունցի «Արմ. ՅՊՏՏ»-ի մեջ, կր. 23, հան. ուր և բերված է երեք «Յայսմաւուրքից» Գրիգոր Կլաթեցու, Կիրակոս վարդ. Արևելցու և Գրիգոր Անավարդեցու

վազդին կապած պահում են վիշապները. «Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան արարեալ են վիշապաց, կամ առնիցեն, և ոչ տաճարք իրրև մարդկան են նոցա ի բնակութիւն, և ոչ զոր ի թագաւորագոցաց և ի դիցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի... Այլ որպէս զԱզգասանդր խարէին դէք՝ կենդանի կայցէ... Նոյնպէս և մոլորութիւնս դիւաց խարեաց գդիցապաշտս Հայոց, թէ զումն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց»²⁰, որ ցայժմ կենդանի կա, և նա ելանելոց է և ունեւոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհասարկ, որպէս և Հրեայք՝ որ իզուր ակնկալութիւն կապեալ կան, թէ Գալիթ գաւոց է՝ շինել զճորտադէմ և ժողովել զԼրեայս, և անդ թագաւորել նմա նոցա»:

Կապված Արտավազդն այստեղ ներկայանում է իրրև թագավորազգի կամ դիցազն, և հայերը նրան սպասում են, որ ելնի և տիրի աշխարհին: Այստեղ նա քարի ընտելութիւն ունի, ուստի և նրան կապողները շար են՝ վիշապներ, Տեսանք, վիպասանքի մեջ Արտավազդը նույնպէս թագավորի որդի է, որ կովելով վիշապների գեմ ներկայանում է իրեն դիցազն:

Գա կապված Արտավազդի զրույցի սկզբնական ծնն է: Պատմականորեն գա Մեծն Տիգրանի որդի Արտավազդն է, մարերի (— վիշապազներ) թշնամին, որին Անտոնիտը՝ մարերի հետ դաշնակցած՝ խարեյուց յամբր բռնում, շղթայում ու տանում է Եգիպտոս: Երևի, իր ժամանակին սպասել են, որ նա գերութունից ազատվի և վերստին տիրի Հայոց աշխարհին, բայց այս ակնկալութիւնը չի կատարվել:

Այնուհետև կապված Արտավազդի այս պատմական զրույցը շփոթվել է շղթայված Աժդահակի առասպելի հետ, որ շատ հին ժամանակներում իրանացիներից փոխադրված է եղել հրաբխային Մասիս լեռան վրա, և Աժդահակ անվան տեղ անցել է Արտավազդ անունը: Զրույցի այս զարգացման հետևանքով՝ Մասիսի մեջ կապված շար ոգու առասպելն ազդել է Արտավազդի պատմական զրույցի վրա: Ուստի Արտավազդը Վիպասանքի մեջ եթէ մի կողմից՝ հանդիսանում է իրրև վիշապների—մարերի գեմ կովող քայ արքայորդի, որին, ըստ Աղնիկի, կապում են վիշապները, մյուս կողմից՝ նա սուր ջայռու նախտանձուտ բնավորութեան, և նրան կապում են քաջքերը:

Վիպասաններն Արտավազդի ընտելութեան այս երկվութիւնը բացատրել են այնու, թէ Աժդահակի զարմի կանայք կախարհել են նրան: «Եւ զայս նոյն երգիչքն յԱռասպելին ասեն այսպէս, եթէ՝ Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և զն փոխանակ եղինս (Բ. կա.): Ուրեմն նույնիսկ Վիպասանքի մեջ Արտաշես թագավորի որդի Արտավազդը, որ վիշապների գեմ կովող զիցազն է, համարվել է իրոք մի դէպ: Այդ մի շատ տարածված ու հին հավատ է, որ ցարդ ևս ի թիվս այլ ազ-

²⁰ Եւ իցիկ, Վճնեա. ապ., հր. 104, Եղեկը խոսում է վիշապների մասին. եթէ նա այստեղ եղիացք բառն է գործածում, այդ պնդք է հասկտեալ ընդհանուր խմաստով: Նրա կարծիքով բոլոր ոգիները դեմքի զանազան ճրտոյթնեկ հնա.

գերի կենդանի մեռւմ է մեր ժողովրդի մեջ²⁷։ Զարունքը կամ ղենքը փոխում են իրենց երնխաները մարդկանց երնխանների հետ. մարդկանց երնխանները գողանում են և տեղն իրենցը դնում։ Եվ եթէ մասնուկ Արտավազդին գողացողները վիշապազններ են՝ գողացածի տեղն ևս վիշապազն կամ վիշապ պիտի ղենին ըստ հավատին։ Արտավազդն ուրեմն ներկայանում է իրոք իրրս վիշապ, և եթէ տղան է ասված նրա համար, այդ տղան բառն ևս պետք է հասկանալ ընդհանուր փմաստով՝ իրրն լար ոգի՝ Պենաք լէ մոտանալ և այն, որ ինչպես նկատուի ենք, որն, ազնավոր և վիշապ, ասողահա սերտ կապված են իրար հետ և հաճախ փոխանակում են միմյանց։

57. Վիշապ Արտավազդի առասպելը և ՔամաՕմմաճ արտասպելներ։—

Այդ վիշապ Արտավազդը, որ որդի շունի (սորդի ոչ գոյր նորայն, Բ. կա.) նախանձում է հոր փառքին։ Հայրն անիծում է նրան, և նա քաջքերից բռնվելով սրսի ժամանակ շղթավում է Մասիսի մեջ։ Մի օր պիտի նլնի և վերջ տա աշխարհին. բայց դարբինների կոանահարությունից զորանում են նրա շղթաները, որ կրծում են կամ լիզում երկու շննր։

Լեռան մեջ փակվելու այս վիպական պատմվածքը շատ տարածված և հին է։

Մարկո Կալվինը, հարավային սլավոնների մեծ հեքոսը, նախանձում է հերոս Գուկագինյի մեծ փառքին։ Սա մեռնելիս անիծում է Մարկոյին, որ և իր հոր անեծքի տակ է։ Անեծքի հետևանքն այն է լինում, որ Մարկոյի գերեզմանի տեղն անհայտ է մնում։ Բայց ուրիշ և ավելի տարածված ավանդությամբ՝ Մարկոն մեծ կոխվ է ունենում և երբ նա ձեններն երկինք բարձրացրած ասում է. «Տե՛ր աստված, ի՛նչ անեմ այժմ», աստված գթում է նրան և փակում մի այլի մեջ։ Մարկոն՝ սուրբ քարի մեջ խրած՝ քնած է. իսկ նրա Շարաց ձին մամուռն է ուտում քարայրի առաջ։ Սուրբ կամաց-կամաց դուրս է գալիս քարի միջից, և երբ ամբողջապես դուրս դա, ձին էլ մամուռն ուտի վերջացնի, այն ժամանակ Մարկո կրալնիքը նորից աշխարհ պիտի գա ձիով²⁸ և փրկի Սերբիան²⁹։ Մի ուրիշ վիպական երգով Վուկաշիկը անիծում է Մարկոյին սսելով. «Գու ժառանգ ու որդի շունենաս»³⁰։

ՄԱԿԵՐԻ առասպելն ավելի ևս նման է Արտավազդի առասպելին։ Նրա բնավորության մեջ ևս նույն երկվորյունը երևում է։ Նրա գերբնական ծննդյան մասին մեզ ոչինչ հայտնի չէ, բայց նա հասարակ հերոս լէ. մեր արդի վեպի ամենագործող դիցազն է։ Նա կոչվում է հոր հետ, նա-

²⁷ E. H. Meyer, Germ. Mythologie, Die Wechselbalge, Կր. 78, 117, 137, և 166; M. Abeghian, Կր. 168:

²⁸ Орест Миллер, Илья Муромец и богатыр. Киевское, Կր. 767:

²⁹ „Сербский эпос“, Академія, Կր. 78.

³⁰ Նույն տեղում, Կր. 100:

խանձում է հորը, Հայրն անիծում է նրան, որ անժառանգ լինի և ան-
մահ մնա: Նա տանջվում է հոր անհեծքի տակ:

Ով տէր Աստուած,
Իմ խոր անեծք ձի խասիր ի,
Իմ միջաց երակ քաշիր ի,
Իմ մտտեն ժառանգ շքնկամ մըլ աշխարթին.
Ձի էլ մախ շկա,
Չուր Քրիստոս կա դատաստան,
Ով տէր Աստուած,
Ձքիզ եմ կանչիր,
Տիւ բնցկուն էնես,
Ձի ձգես Վանայ քար:

Եվ Մհերը, ինչպես Արտավազդը, որսորդութիան ժամանակ փակվում
է Վանա քարայրի մեջ:

Վանա դաշտեն իրիշկից, տեսավ՝
Մեկ ազոավ կըեր, կը խուանը.
Նետ-անեղ առից, էղար, դիպավ ազոավին...
Ազոավ փախավ, էնիկ ձին հիտիվ կինաց,
Խասավ մեկ քեար, տեսավ, որ պեաց ի, մաղազայ ի...:

Եվ Մհերը փակվում է քարայրի մեջ, մինչև աշխարհի վերջը: Երբ
ցորենի հատը դառնա մասուրի շափ, նա պիտի ելնի և կոտորում անե-
լում աշխարհն ավերի կամ, ինչպես Արտավազդը, թառնուլ վախճան աշ-
խարհիս: Անկայն ուրիշ ավանդությամք, նա աղ ժամանակ պիտի թմար-
ախրոսվիս, այսինքն՝ հաղատքը պաշտպանելու համար նահատակ պիտի
դառնա: Ազգն, ուրեմն, սպասում է նրան, ինչպես Արտավազդին ըստ
Օգնիկի, միայն ուրիշ ձևով: Արտավազդն՝ աշխարհական հայացքով՝
պիտի տիրի աշխարհին և թագավորի, իսկ Մհերը՝ քրիստոնեական հա-
յացքով պիտի նահատակվի:

Աժդանակի և Հրատինի առասպելը Խորենացու մեջ տեսանք: Աժդա-
հակը, Վիշապ Գահակը կամ Ջոհակը, որին լար ոգին ստեղծել է մարդ-
կային ազգը ոչնչացնելու համար, երեք գլխանի մի վիշապ է, երեք
բերանով և վեց աչքով: Գիցազն Զրեդունը (ըստ Խորենացու Հրուզան)
հաղթում է նրան Կամի դարբնի օգնությամբ, և շղթայում Գրեմավենդ
սարի վրա: Նրա աբյունը կաթկթում է գետին. երբ նա ցնցվում է, երկ-
րաշարժ է լինում: Աժդահակն այսպես պիտի մնա մինչև աշխարհի վեր-
ջը, երբ պիտի արձակվի և կես օրվա մեջ շատ շարիք պիտի գործի աշ-
խարհում, մինչև Սամը նրան հաղթի և ստիպի ընդունելու ճշմարիտ հա-
վատը: Պարսից մատենագիրները հիշում են մի տոն, որ կատարվում
էր ի հիշատակ Ջոհակի շղթայվելուն, և մինչև այժմ իսկ Գրեմավենդ քա-

դարւմ, ասում են, կատարվում է այդ տոնը³¹։ Քողնում ենք Համեմատութեան բերելու հունական վիշապ Տիփոնին, որը նույնպէս լեռան վրա կամ տակ շղթայվում է։

Գերման առասպելաբանութեան մեջ որոտմունցի աստված Քոռը թշնամի է առհասարակ հսկաներին և հսկա կոկիին, որ խորամանկ է և Ալֆի պէս արագ կերպարանափոխ է լինում (Լմմտ. մեր վիշապների սկնդծս ի կնդծս լինելը)³²։ Նա խարդավանքով սպանում է Բալդրին, և Քոռ աստվածը շղթայում է նրան ու պինդ կապում ժայռից մի քարայրի մեջ։ Աստվածները նրա գլխին ամրացնում են մի թունավոր որդ։ Նրա որդի Քուլնն ու լորձուները նրա երեսին է կաթում, նա այնպէս ցընցվում է, որ ամբողջ երկիրը դողում է, երկրաշարժ է լինում։ Լուկին այդպէս պիտի մնա մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակվի և վերջ տա աստվածներին և մարդկանց։ Ուստի Սկանդինավիայում վտանգավոր դրուիջան մեջ այժմ էլ ասում են. «Լուկին աղատվի է կապանքից, իսկ գերմանացիների մեջ. «Սասանան արձակվի էս։ Ուրիշ ասանդութեամբ լուկի տեղ աստվածները շղթայել են Յենրիս գայլին, որ աշխարհի կատարածին (Ragnarok) պիտի արձակվի երկինքն ու երկիրն ավերելու³³։

Մեր Արտավազդի առասպելը կապված է մի ժողովրդական համատարիքի և սովորութեան հետ։ Գարրինները բաւուր միաշարաթուղ երիցս կամ շորիցս բախեն զսայան, զի զօրացնեն, ասեն, շղթայն Արտաւազդայն։

Ինչպէս Արտավազդի առասպելը, նույնպէս և առասպելի հետ կապված այս համատն ու սովորութիւնը բնիկ հայկական լէ։ Նույնը գտնում ենք և գերմանացիների և ուրիշների մեջ։ Մանհարդը³⁴ խոսելով Լուկիի շղթայվելու առասպելի մասին՝ գրում է. «Ձայցբուրգում, Տիրուլի շատ հովիտներում դարբինները սովորութիւն ունեն տոն երեկոները, օրվա աշխատանքը վերջացնելուց հետո, երեք հարված տալու մերկ սալին։ Այս անում են, որպէսզի Լուցիֆերի³⁵ շղթաները նորից ամրանան։ Որովհետև եթէ նա զատուի, ամբողջ աշխարհը կավերի։ Տեղ-տեղ, օրինակ՝ Վիրցշոնաուում, այս սովորութիւնը կապված է կատաղի գայլի (Grimmiger Wolf) հիշողութեան հետ։ Նա ինն երկամբա դոների ետևում երեք-տակ շղթայի է զարնված և որովհետև շարունակ ամենայն ուժով չի գ է Քափում ազատվելու, ուստի պետք է նրա շղթան ամրացվի, թէ լէ աշ-

³¹ Spiegel, Eranische Alterthumskunde, I, էք. 522, հւն.։ Mannhardt, Germ.-Myth., էք. 80, հւն.։

³² E. H. Meyer, Germ. Mythologie, էք. 168, հւն.։

³³ Նույն աեղում, էք. 107։

³⁴ Mannhardt, Germ. Mythen, էք. 86, հւն., Laistner, Das Ratsel der Spblux. II, էք. 73, հւն.։

³⁵ Lucifer տեւեից են ձագոծ համարում սմանք Loef, Lokt տեւեը (E. H. Meyer, Germ. Myth., էք. 168)։

խարհն ամբողջ կազմերի վալդիկիտեանում նույնպէս վերջին դարերնը, որ ամենից հետո թողնում է դարբնոցը, կուսում մի անգամ խփում է դատարկ սասցին, որպէսզի Լուցիֆերը չկարողանա շղթան խարտել, կարնչու նա շարունակ խարտում է շղթան, որ քանի դեռում, թարակում է։ Մ. Հակոբի տունին (Տուլխի 25) մազ է մնում որ կտրվի, բայց մի անգամից գարձայլ հաստանում է։ Եթե նույնիակ մի դարբին հին սովորութիւնը չպահէր, Լուցիֆերն ամբողջապէս կխարտի, կպրծնի... Մամլանդում նույն ժողովրդական հավատքը կա միայն այն տարբերութիւնով, որ այստեղ Լուցիֆերը ծանր շղթան ոչ թե խարտում է, այլ իր ճանկերով կտրելի աշխատում։ Նույն հավատքը կա և այլքանացիների մեջ։ Սատանան ամբողջ տարին աշխատում է ազատելի իր շղթաներից։ Ավագ Շարաթ օրը թիւ է մնում, որ պրծնի, բայց զատիկ առավոտյան Փրկիչն երևում է և նորից շղթայի զարնում սատանային։

Հայտնի է, որը Հիմնն արդեն համեմատութիւն է գերել վրաց գոռոզ և հպարտ Ամիրանի առասպելը։ Ամիրանին աստված կապում է Կոզկասյան լեռներից մեկի մեջ երկաթի շղթաներով։ Ամիրանի սուգը մի կողմ է բնկած և միայն նրա հավատարիմ շունն անզարար լիզում է իր տիրոջ շղթաները... Սակայն Ավագ Հինգշաբթի երկրի խորքից մի դարբին է դուրս գալիս և սաստիկ ծեծում է մաշված շղթան, մինչև որ դարձյալ ամբանում է³⁶։

Մեզ հայտնի չէ, թե արդյոք մեր Մհերի առասպելի հետ կապված է դարբինների այս սովորութիւնը, որ ըստ Հիմնի վկայութիւն, մինչև իր ժամանակը պահված է եղել պարսկահայերի մեջ։ Սակայն մեր Մհերի առասպելի մեջ գտնում ենք համեմատն առասպելների մի ուրիշ դիմ, որ չկա Արտավազդի առասպելի մեջ։ Ըստ դերմանական առասպելին, նույն Լուցիֆերը շղթայված, բնկած է մի քարայրի մեջ, ինն դասն ետևում, ճակատագրի երեք աղբիկների մոտ և պահում է մի զանն։ Այսպէս և Մհերը սրակված է վանա քարում։ Այդ դեռով ներքը ճախրի ֆուլակ կը դառնա... Մհերը շարունակ անոր վրա կը նայի. երբ այդ ճակար կը դառարթի, սաք օր Մհեր կ'ազատի, դուրս կ'ելլէ։ ...Ամեն տարի Համբարձման գիշերը... Մհերի դուռը կը բացվի... ով որ ներս մտնէ, որքան ոսկի կ'ուզէ, կ'առնէ, դուրս կ'ելլէ, վասն զի հոն աշխարհի ոսկին կուտված է³⁷։

Ճախրի ֆայտը, իսկապէս շարիի ֆայակը, բախտի, ճակատագրի անիվն է, երկնային անվի (լարն) և մոլորակային երկնքի (ֆայակ) պատկերում։ Մի ըմբռնում, որ պարսիկներից է անցել հայերին։ Բախտի կամ ճակատագրի հետ կապ ունի և Համբարձման տոնի արդի ժողովրդական հավատալիքը³⁸։ Բայց մեզ համար հետաքրքիրն այստեղ այն է,

³⁶ Հիմն, Մովս. Խոր. և հայոց հին վեպերը, Եր. 81։

³⁷ Արվեստաւոց, Գրոց-բրոց, Կր. 124։

³⁸ Ա. Abehlian, Կր. 20, հան. 8), հան. 1

որ Մհերի առասպելի հետ կապված է ճակատագրի ու գանձի այս զրույցը, որ ունի գերման լուցիֆերի առասպելը:

Բերած օրինակներով արդեն պարզված ենք համարում, որ մեր Արասվազդի առասպելը նույնն է, ինչ որ Մհերի առասպելը, և որ այդ երկուսն էլ մեր հին ու նոր պատմագիտության են այն ընդհանուր տարածված առասպելի, որ գտնում ենք շատ ազգերի մեջ: Մենք երկար կանգ չենք առնիլ այս առասպելի ծագման և մեկնություն մասին: Զանազան առասպելաբաններ այս կամ այն տեսակ մեկնություն են արել: Մանհարզն, օրինակ, այդ առասպելը բացատրում է ամպրոպի օդերևույթով: Պարսից Զոհակը կամ Ածի-Գահական նույնն է, ինչ որ վեդայական Ահի (Ahi Dasaka) օձը, ամպրոպի վիշապը: Նրան հաղթողն ու կապողը Ֆրեդուն (Հրուդեն), հին ձևով Քրայիտոտնա, նույնն է, ինչ որ հնդկական Տրիշա սասավածը, որ դեհրի և վիշապների դեմ կովի մեջ Բնդրայի օգնականներից մեկն է: Քարայրը, որի մեջ ճակատագրի կույսերն են բնակում, է ամպը. նրանց գանձն է արեգական սակի՛ն, իսկ այդ պահպանողը սատանան կամ լուցիֆերը նույնն է, ինչ որ ամպն ու արեգակի փայլը փակող վիշապը՝ Վրտրան՝ Ահին, Ածի-Գահական:

Մեր վիշապ կամ դև Արտավազդն ուրեմն միևնույն Աժդահակն է, որով և նրա շար ու նախանձոտ քնավորությունը, որ տալիս է մեզ խորհնացին ռեշմարտեալս պատմության մեջ, վիշապկան դեմ պետք է համարել: Եվ այդ շար ոպին, վիշապը՝ փակվում է սլազաան ի վեր ի Մասիս, որի վրա հին ժամանակ հավատում էին, թե վիշապներն են կենում: Այժմ էլ հավատում են, թե այնտեղ վիշապներ կան և թե գտնի տակից լսվում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրտապատառ կարող է լինել³⁰: Արդյոք այս դիժն Ել մի մութ հիշողություն չէ՞ այն երկրաշարժի, որ առայանում է լոկիթի, Ած-Գահակի (Զոհակի) ցնցումից: Այդ ավելի հավանական է թվում, երբ տեսնում ենք Աժդահակի առասպելի մի ուրիշ դիժն ևս այժմ նույն հրաբխային Մասիսի վրա կապված: Ըստ խորհնացու, ինչպես գիտենք, Հրուդենն Աժդահակին կապելուց հետո՝ իր անդրին հաստատում է նրա դիմաց (սգիւնըն անդրի ընդդէմ նրա հաստատելը): Իսկ միևնույն Մասիսի վրա այժմ առասպել-

30 Արդի զրույցները, որոնք մեզ հայտնի է, Փոքր Մասիսի մասին են: Առասպելը, հարկավ, հեռուցվածը կարող էր մեծն Մասիսից Փոքրին անցնել: Միայն Գրիգոր Կլաբեցու ռեշմարտեալից մեզ Արտավազդի մասին հիշվում է. «Ի Սեա Լեաւն որ է Աւազ Մասիսու: Ավազ Մասիսն ըստ այսմ Սն լնան մեկնութիւնն է միայն զորդի կողմից: Մյուս տեղերում անորոշ է հիշված, կամ միայն Մասիս, կամ Աջատն Մասիս: Աջատ կոչուով Մասիսի համար հայտնի է Անտուռից (Անդուս, հր. 7, Հմմտ. Յեքքիս, Հալի, աշխատ., հր. 141, թան. 1. H. Mapp, O nachalinskoi «История Армении» АНУБУЕ): Արդյոք Աջատ անունը Փոքր Մասիսի համար լի՞ էզել, որով Աջատ Մասիս ևն համապատասխան կը լինի այժմյան ժողովրդական Սիս Մասիս և Փոքր ու Մեծ Մասիսի ձևեր: Հմմտ. Մասիսի դիմաց Երասիի մեջ Քափվոզ Գառնի գետի քարերն հասնելից հետո, Աջատ կոչումը:

չարանում են, թե այնտեղ տուգտերի քարավան կա քարացած և թե ուղ-
տապանն էլ քարացած կանգնած է:

58. Քաջքեր և սնանկավատակամ զրույցներ Երանց Ճապից:—Ի՞նչ
ոգիներ են վիշապ Արտավազդին կապողները: Եզնիկի մեջ Արտավազ-
դին կապողները վիշապներ են: Ըստ «Տասյամատուրքի» և ըստ Վանական
վարդապետի՝ Արտավազդին կապողները «աստուածք» են: Այս աս-
տուածքը կոչումը, եթե մի կողմից ցույց է տալիս, որ հեթանոսության
ժամանակ պաշտված էակներ են եղել Արտավազդին կապողները, մյուս
կողմից՝ ենթադրել է տալիս, որ քրիստոնեություն ժամանակ այս ընդ-
հանուր անունը՝ աստուածք փոխանակել է բուն հեթանոսական մաս-
նավոր անունին: Եվ այդ անունն է «քաջք», որ գտնում ենք Խորենացու
և Վարդան վարդապետի մեջ: Վերջինս գրում է. «Տեսնուի ոմանց քաջաց
և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս և բնակութիւնս, ուր և զԱզոց-
սանգր կապեալ ունին ի Հոռն և զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս.
և զԵրուանդ ի զեռս և ի մոսլլս: Իսկ հետո գրում է. «Բայց մոլորու-
թիւն դիւաց խաբաց զկապաւաշտոսն Հայոց ի ձեռն քրմացն, որք ասէին.
թէ զԱրտաւազդ ոմն Վիշապի արգելեալ են կենդանի ի Մասիս լեռոն. ի
նա (և նա) նլանելոց են (է) և զաշխարհս ունելոց»⁴⁰, Վարդանը Արտա-
վազդին կապողներ վճռում նախ՝ քաջք և վիշապներ, և ապա՝ միայն
վիշապներ: Բայց Վարդանի այս զրկածքի համեմատությունն Եզնիկի
վերևում դրած հատվածի հետ ցույց է տալիս, որ նրա գլխավոր ազդ-
յունն եղել է Եզնիկը: Վիշապները նա վերցրել է Եզնիկից, իսկ քաջքերը
մի ուրիշ ազդյունից:

Ի՞նչ ոգիներ են քաջքերն և ի՞նչպիսի բնավորություն ունեն:

Վարդան վարդապետի վերևում դրած հատվածից իմանում ենք, որ
քաջքերն և վիշապները համազգի էակներ պիտի լինեն, քանի որ նույն
բաներն երկուսի վրա ևս պատմվում են: Քաջքերն, ինչպես և վիշապները,
բնակվում են բարձր լեռների վրա և ունին այնտեղ տաճարներ: «Որք
ի վէմս իշխեն՝ քաջք կոչեցան», գրում է Գրիգոր Տաթևացին: Այնուհետև
քաջքերի մասին պատմում են⁴¹, որ կռիվներ են վարում, որս անում,
կալիքից ցորեն կրում և մառաններից դինի տանում: Նույնը պատմվում
է, ինչպես տեսել ենք, և վիշապների մասին: Այսքան նմանությունը հենց
բավական է ցույց տալու, որ վիշապների և քաջքերի հավատը միևնույն
բնական հրնույթից է ծագած:

Վահագնի կռիվի մասին խոսելիս տեսանք, որ վիշապը մեզնում, ինչ-
պես և ուրիշների մեջ, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավո-
րումն է: Նրա դեմ կռվում է նույն օգերևութի թարի անձնավորումը՝ Ինդ-

40 Այս հատվածները Ալեյանի «Էին հավատքի» մեջ բերված են Վահագմ վարդա-
պետի անունով:

41 Ալեյան, էին հավատք, հր. 193, հտե.:

րան, իր օգնական մարտունների հետ, որոնք հողմերի անձնավորում աստվածներ են: Բացի մարտուններից Խնդրային դորձակցում են նաև ուրհանալը (Rhinus), սրունք տարտունների հետ ակզրնապես ողիների միևնույն խումբն են կազմում, և որոնք համապատասխան են գերմանական էլքերը:

Համեմատենք քաջքերի բնավորությունը մեր հին և արդի ժողովրդական հավատքով մարտունների, ուրհունների, էլքերի բնավորության հետ և կտեսնենք, որ մեր քաջքերը պատկանում են այդ ողիների կարգին: Նրանք հատկապես նույնանում են գերմանական էլքերի հետ: Նկատենք, որ մեր արդի ժողովրդական հավատքի և սնահավատական գրույցների մեջ (տե՛ս հատվ. 8), նախելով գաժառին, այդ ողիները զանազան անուններ են կրում: Սովորական է քաջք անունը, իսկ իզականների համար փարի (հին՝ պարիկ): Սակայն երբեմն քաջք և փարի շփոթում են, այսինքն՝ ինչպես փարին նաև արականների համար վ գործածվում, այդպես և քաջք՝ իզականների համար: Այնուհետև քաջքերը, իրենց բնության շար կողմից առած կամ քրիստոնեության ազդեցության տակ, կոչվում են նաև լարք, լարունք, գրող, դև, նույնիսկ սատանա: Գերմանացիների մեջ ևս էլքերը զանազան անուններ են կրում:

էլքերն, ինչպես և մեր քաջքերը, իշխում են ամբողջ բնության մեջ. ուստի և նրանց մասին թե մեր և թե գերմանական ժողովուրդները պատմում են շատ գրույցներ: էլքերի սկզբնական ծագումը գիտավորապես օղային է: Կան ամպրոպի, հողմի և ամպի էլքեր: Առաջին երկուսը, ամպրոպի և հողմի էլքերը, որոնց համապատասխան են մեր քաջքերը, գրիտավորապես արական են: Իսկ ամպի էլքերը իզական են, կին էլք են (Elbin): Սրանց համապատասխան են մեր փարիները, հին՝ պարիկները, գիտավորապես չրի (սկզբնապես ամպի) հրեղեն աղջիկներ, հավերժահարսներ, պարսից պայրիկաները, հնդկաց ապսարսները, որոնք ուրիշ կարգի ողիներ են:

էլքերը, ինչպես և մեր քաջքերը, նախելով իրենց օղային բնությանը, մերթ փառվար, սուղու, վնասակար, բուռն ու լար են. մերթ լուսավոր, գեղեցիկ, օգտակար, ծառայության պատրաստ և բարի: Ուստի և կոչվում են շար բոնեի (Böse Dinger) և հազիլիներ, բաբիներ (Holden, Gude): Այսպես և մեր քաջքերը կոչվում են լարբ, լարունբ (այլ և գրող, դև, սատանա) և մեզանե լավեր, մեզեն աղեկներ, աղեկ մտեուկ: Իբրև լար ողիներ, թե քաջքերը և թե էլքերը հալածվում են պողպատով ու կայծաքարով:

էլքերին վերագրում են ամեն տեսակ մարդկային րան: Թերեք մի քանի գծեր մեր քաջքերի և գերմանական հողմի էլքերի բնավորությունից: Նրանց շուրջ մարդկանց և անասուններին հիվանդություն է բերում: Մեզնում հատկապես սենյակի մեջ փշոզ քամին և առհասարակ

⁴⁴ M. Abeghian, եր. 103, հա.:

քամու հունը համարվում է քաջքերի շունը։ Քամուց հիվանդացող քաջքերի զարկածն է, էլքերը շրջում են պտուտահողմի մեջ կամ հարուցանում են պտուտահողմ, որ նրանց անունով կոչվում է գրուտների քամի (Drutenwind)։ Այսպես և մեր քաջքերը կապված են պտուտահողմի հետ, որ կոչվում է քաջքամի։ էլքեր և քաջքեր, երկուսն էս մարդկանց դարձում են և մարդու խելք թոցնում, խելագարեցնում։ Այդպիսի կոչում են գերմանացիների մեջ Elbentrötsch, Elbst, Drut և այլն, իսկ մեր մեջ քաջքամի, քաջքակալ։ Արանք Կերկուսն ևս, իբրև քամու ոգիներ, գող ու խաբբա են,— գողանում են վանազան բաներ, մոլորեցնում են մարդկանց, ճանապարհից շեղում, տանում ամալի տեղեր, կամ ժայռերից ներքև գլորում և նմաններ։ Հաճախ մարդկանց երեխաներին ևս գողանում են և տեղն իրենցը գնում։ Իբրև հողմի ոգիներ նրանք երկուսն ևս գրավիչ երաժշտություն ունին, և մեր ու գերմանացիների մեջ ևս նրանց միջտ տեսնում են խմբով պարելիս, երգելիս ու նվագելիս, կամ, ինչպես ասում են, հարասներ անելիս։ Երբեմն տղամարդկանց ու կանանց խաբում են իրենց ամբողջի ժխորի (եղնադի) մեջ ապանելու կամ վնասելու նպատակով։ Բայց միջտ շին վնասում, օգնում էլ են։ Նրանց բնակարանները՝ քաջքամու, քաջքար, քաջքանոթ, գերմանացիների մեջ Alfarholen լեռների վրա է, այրերում, որտեղից լսվում է երգ ու երաժըշտություն։ Այդտեղից ձայն են տալիս մարդկանց, երբեմն իբրև արձագանք, և նրանց ձայնը կոչվում է քաջքաձայն, նույնպես և գերմանացիների մեջ Albleich, նորվեգերեն Huldreslaat, նրանք բնակվում են նաև ալբեր տներում, աշնանն անքնակ թողած տաղավարներում։ Որտեղ ասում են նստում են վանազան ծառերի վրա և այնտեղից զարնում մարդկանց։ Կթում են կամ ծծում կովերի (սկզբնապես ամսերի կովերի) կաթը⁴³։

Թողնում ենք ուրիշ նմանությունները։ Բերենք քաջքերի և էլքերի մասին պատմած երկու գրույց ևս։ Մի գրույցով, որ շատ տարածված է և գերմանացիների մեջ պատմվում է էլքերի մասին, նրանք հրավիրում են մի տատմեք օգնելու մի ծննդկան քաջքի և իբրև վարձ տալիս են սոխի ու սխառի կեճպներ, որ սսկի է դառնում⁴⁴։ Նկատենք, որ նրանց օգային ծագման հիշողությունն է նաև քաջքը տղա է բերում խոտքը, որ ասում են անձրև և արև եղած ժամանակը։ Ավելի հետաքրքիր է մի ուրիշ գրույց, որ նույնպես պատմվում է նաև էլքերի ու հրեղկական լարհունների մասին։ Այդ գրույցով քաջքերը գողանում են մի կով կամ երինջ, մորթում, ուտում են, և հետո կովի ոսկորներն ու մորթին տարեցելով՝ կենդանացնում են։ Բնության մի առասպել է այդ, որ վանազան կերպով են մեկնում։ Քաջքերը հողմի ոգիներ են։ Այնանը քա-

⁴³ Mannhardt, Germ. Myth., եր. 48, 48, 88:

⁴⁴ Տ. Խովատույան, Հայ ժող. հեթաթեքեր, է գերք, եր. 28—31։ Սույն գրքի մեջ էր. 24—29 ակցիներ փերագործ տակ շարունքի մասին, Մ. Արեղյանի ժողովածուից։

մինքրը թվում է թե լափում են ամպերի կովը, որովհետև ձմեռն ալևս անձրև չի գալիս, իսկ գարնանը նույն քամիները նորից բերում են կաթնատու կովը, անձրեաբեր ամպերը⁴⁵։

Այսպես մեր քաջքերը ոչ միայն իրենց բնությամբ, այլ և կրույցներով նույնն են, ինչ որ գերման էրները։ Իսկ էրներին համապատասխան են, ինչպես ասացինք, հնդկական ուրուները, որոնց անուններն անգամ նույնացնում են⁴⁶։ Նկատենք նաև, որ էրների բնության հետ կապման է և դարբնութունը։ Նրանք դարբնում են Alpgeschoss (էրների նետ—կայծակ)։ Գարբնելու ավանդություն մեր քաջքերի մասին հայտնի չէ մեզ։ Բայց եթե Արտավազդին շղթայողները քաջքերն են, ուրեմն և նրանք հմուտ պիտի լինեն դարբնելու արվեստին։ Եվ արդյո՞ք քաջքերի այդ դարբնելու մի նշանակը չե՞ն կատարել մեր դարբինները կռանք սալին փայտելով։

Մի անգամ որ մեր քաջքերը նույն կարգի ոգիներ են, ինչ որ գերման էրները և հնդկական ուրուները, այն ժամանակ հասկանալի է դառնում, թե ինչու քաջքերն են վիշապ Արտավազդին կապողը։ Գրանք նույն հողմի ոգիներն են, մարուտներ, ուրուներ, որոնք գործակցում են Ինդրային, երբ սա վապում է Վիշապին։ Բարձրագույն էակներին, աստվածների անուններն ավելի շուտ են մոռացվում, քան ստորին կարգի ոգիներինը։ Այդպես է եղել և մեզնում։ Արտավազդին կապող աստուծու անունը մոռացված է, իսկ նրա գործակից քաջքերինը պահված է մինչև այսօրվան օրս։

Ե

ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՊԱՍԱՆ

59. ՄԵՃՃ ՏԻՂՐԱՃԻ և Արտաշեսի վեպերի կապակցությունը։— Թե այս երկու վեպերն առնուաթյուն ունեցել են միմյանց հետ, այսինքն՝ թե այդ երկուսը մի ընդհանուր վեպ են կազմել թե չէ, այդ որոշ կերպով չգիտենք Մ. Խորենացուց։ Մակայն երևում է, որ գրանք, ինչպես պահանջում է վիպական ոգին, միացած են եղել, կենտրոն ունենալով մարերի, որ է Վիշապագնների հետ հայերի հարաբերությունը թե ըստ պատմականին և թե ըստ առասպելականին։ Հայաստանի մարերը, որ է Վիշապագները, բոս վեպի, ինչպես ասեանք, սերունդ են մարաց Թագավոր Ածուհակի կամ վիշապ Գահակի, որին հաղթում է Տիգրանը և որի զարմերը գերում է նա և քնակեցնում Մասիսի ստորոտներում։ Վեպի

⁴⁵ Նույն զրույցը պատմում են և գերման. Թոռի մասին. միայն սա ավելի մի ուրիշ կենդանակերպ՝ քաղ է կենդանացնում, ուսելուց հետո ուղարներն ու մորթին սարքելով *Mannhardt*, Germ. Myth., էր. 42, հան., 27, հան.։

⁴⁶ *E. H. Meyer*, Germ. Mythol., էր. 117։ Այս զբոսն ենք մեծ մասամբ վերցրած և զերմանական էրների բնութագրերը։

մեջ, ուրեմն, պատմվում է, թե Մասիսից մինչև Գողթն բնակվող մարերը գերի են բերված Մեծն Տիգրանի ձեռքով: Այնուհետև նույն մարերը, որ է վիշապները կամ վիշապազները, երևան են զալիս և Արտաշեսի վեպի մեջ, Այս գնական հաջորդությանը Տիգրանի վեպի ամփոփական շարունակությունն է զառնում Արտաշեսի վեպը, սկսած նույնիսկ վիշապ նրվանցից, որ թագավորելուց հետո՝ երկրորդական զահը տալիս է մարացոց տիրոջը, որ է վիշապ Արգալանին: Այսպիսով համարանական է զառնում, որ այդ վեպերը թե անշատ և թե կից մտ պատմվելին և կամ համարվելին միևնույն ընդհանուր վեպի մասերու Այդ երևում է և Խորենացու իրեն Պատմության բովանդակությունից:

Մեր Պատմագիրը, ինչպես տեսանք, վիպական Մեծն Տիգրանին դրել է Մարաց Ամոհակ (Աստիադես) թագավորի ժամանակակից և Տիգրանի վեպը չի վերագրել իր Արշակունի Միջին Տիգրանին, որ է իսկապես Մեծն Տիգրանուր: Մյուս կողմից տեսնում ենք, որ Մեծն Տիգրանի (բայտ Խորենացու՝ Միջին Տիգրանի) որդի Արտավազդի պատմությունից հետո (Բ. իդ.) նա մեջ է բերում Արշամի, Արգարի, Անանունի և այլ ասորական պատմությունները (Բ. իդ.—լե.), որոնք, ինչպես հայտնի է, Հայոց պատմությունը շին վերաբերում Արդ, եթե նա այդ ասորական պատմությունները չբերեր, և Մեծն Տիգրանի վեպը պատմեր իր տեղում, Պոմպեոսի ժամանակակից Տիգրանի վրա, այսինքն՝ Խորենացու իրեն Արշակունի Միջին Տիգրանի վրա, այն ժամանակ Մեծն Տիգրանի վեպի անմիջական շարունակությունը կլիներ Արտաշեսի վեպը սկսած Մանասրունից: Այդ ցույց է տալիս, որ այդ երկու վեպերը հետո այդպես միություն են կազմած նշել, այսինքն՝ Տիգրանի վեպից հետո պատմված է եղել Արտաշեսի վեպը, և այդ երկուսը եղել են մի ընդհանուր ամբողջական վեպի երկու մասերու Գրանք իրարուց բաժանվել, հեռացել են միայն Պատմագրի ձեռքով:

60. Արտաշատյան վիպական ցիկլ:—Քե Հայաստանի որ կողմերում է ծագել, զարգացել իբրև մի ամբողջություն և տարածված եղել առաջին հին վեպն, այդ մասին վկայված տեղեկություններ շունենք: Բայց ազգերի վեպերի ծագման և զարգացման մեջ եղած մեծ նմանությունը թույլատրում է մեզ որոշել այն, որի բացատրության համար շունենք բավարար փաստեր:

Պատմական երգն ու զրույցը ծագում են ընդհանրապես այն տեղերում, կամ այն տեղերի մոտերը, ուր կատարվել են վեպի նյութ զարևոց պատմական նշանավոր եղելությունները և ավելի ևս այն տեղերում, ուր իրապես ապրել ու գործել են վեպի պատմական հերոսները, ուր և հետաքրքրվել են նրանց բախտով: Արդ՝ Վիպասանքի մեջ մտնող ամենահին պատմական ավանդությունները վերաբերում են Նրվանդաշատին ու Արտաշատին: Հետևաբար պետք է ընդունել, որ այս քաղաքներում կամ դրանց կողմերում են սկիզբն առել վիպական երգերն ու զրույցները:

Մտանձնապէս Արտաշատ քաղաքի շուրջը պատմվիլ ու երգվիլ են ավանդոթութուններ, որոնք կապված են եղել Արտաշատի իշխողներին, Արտաշես Ա-ի, Մեծն Տիգրանի և իր զարմերի, ինչպէս և ուրիշներին անվան հետ: Գրանք կազմել են երգ ու զրույցներին Արտաշատյան ցիկլը:

Վեպի մեջ հիշված Երվանդ, Երվանդաշատ, Երվանդաշատն ու Երվանդապետն ու Արամիկը անունները, ու նրանց մասին պատմածները ավելի վաղ ժամանակից են գուշիս, քան Արտաշատն ու Արտաշեսյան հարրատութունը: Գրանք մասին եղած հին ավանդութունները, որոնք սկզբնապէս մի առանձին խումբ են կազմած եղել, հետագայում վիպասանները միացրել են Արտաշատյան ցիկլի հետ և այդ երկուսից կազմել մի վեպ: Այդ կապված է եղել քաղաքական իշխանութիւն միացման հետ:

Այդ վաղ դարերում արդեն Արտաշատի տերութիւնը ձգտել և հաջողել է առաջ բերել Հայաստանի զանազան մասերի միացում, և Արտաշատը դարձել է ընդհանուր կենտրոն: Գրա համապատասխան և Արտաշատի շուրջը խմբված պատմական երգերն ու զրույցներն իրենց մեջ ընդունելով և ուրիշ ավանդութիւններ, ձգտել են ճշմարտագոյնն դառնալու, այդպիսով առաջ է եկել մի ընդհանուր վիպասանութիւն: Հայոց հին Վիպասանքը, ուրեմն կազմվիլ ու զարգացել է Հայաստանի կենտրոնական իշխանութիւն հետևանքով, Երկրի իշխանութիւն միացումն առաջ է բերել և վիպական նյութերի միացում: Այդ անհրաժեշտ է եղել Արտաշատի քաղաքներին համար: Նրանց պետք էր իրենց իսկական կամ կարծեցյալ նախնիքների մասին մի վեպ, մի պատմութիւն, որի մեջ փառավորվիլ նրանք: Եվ վիպասանները ընականաբար կատարել են նրանց վիպական պահանջը:

Ձ1. Գողթան երգիչներ:— Մեր հին Վիպասանութիւն մեջ կարեւոր տեղ են բռնում մարերը, ըստ առատպելին Վիշապազները, որոնք ընակվիլ են Արտաշատի մոտերից սկսած, Մասիսից դեպի արևելք մինչև Գողթան: Այս էլ ցույց է տալիս, որ վեպը պիտի ծագեր ու զարգանար և ապրեր հենց այն կողմերում, կամ այն կողմերի մոտիկ տեղերում, ուր բնակվիլ են մարերն ու մարացիները և կամ նրանցով հետաքրքրվիլ են: Մրա համար ունենք մի պատմական վիպասութիւն: Վեպն ըստ խորհնացու պահանջ է եղել Մարքի սահմանակից Գողթն գավառում. զար պահանջին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ դավառին Գողթան (Ա. լ.). թի վիպասանացն, որ պատմին ի Գողթանս (Բ. խթ.), սերգիչքըն Գողթանս (Բ. կա.):

Որ Գողթան գավառում երկար ժամանակ հարատեւել է հին վիպասանքն իբրև երգ ու պատմվածք, այդ բացատրվում է նրանով, որ այդ կողմերում դեռ երկար մնում էր հնթանտութիւնը, այսինքն նախաքրիստոնեական կրոնը: Կորուշը Մեսրոպի համար գրում է. «Գիմեալ իշան էր յանկարս և յանդարման տեղիս Գողթանս և ապա՝ «Գերեալ դամե-

նեսեան ի Հայրենեացն ականդելոց և ի օստանայական դիւապաշտ սպասաւորութիւնէն՝ ի Հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր... Գիւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարացոյ, Բնական է, որ հկեղեցու տեսակնտով այդ քանկարգ ու անդարման տեղերի մարդիկը պահեին իրենց Հայրենական ավանդութիւնները: Եթէ Գողթին բնակիչները Նույնիսկ մարական ծագում ունեցած էլ լլինենին, նրանք կարող էին առնել և յուրացնել և երկար պահել իրենց Հարևանների ոչ միայն ծագման ավանդութիւնը, այլև նրանց առասպելներն ու վեպերը, ինչպես որ մեր նոր վեպը՝ Սասնա Մռերը, մեր օրերում պատմվել է ավելի Մականց և ուրիշ կողմերում: Ինչպես և Հին Հունաստանում Աքայեցոց վեպը պահել ու զարգացրել են Յոնիացիները:

Քի Գողթին սահմաններէջ գուրա ուրիշ որ կողմերում է տարածված ու պահված եղել Վիպասանքը, այդ լզիտենք, Քովմա Արծրունի միայն ունի պատմած մի քանի քան Արտաշատի մասին, որ Խորենացու մեջ չկան, որոնք և քերական ժողովրդական ավանդութիւնից առնված լինեն:

62. Վիպասան և վեպ ավանդելու եղանակները:— Վիպական քանատեղծութիւնը մշակվել է պրոֆեսիոնալ արվեստավարների ձեռով, որոնք կոչվել են՝ երգիչ, վիպասան և գուսան: Նրանք երգել են նվագելով մի գործիքի վրա, որ կոչվում է սփանդիոն: Ձեռագիրների մեջ, սակայն, այդ գործիքի անունն աղճատվելով՝ դարձել է սրամբինա, և այս ձևով դա Հայտնի է դարձել XIX դարում մեր բնասփրօվիան և բնաստեղծութիւն մեջ: Մ. Խորենացին այդ գործիքը հիշատակում է Տիգրանի վեպի և Վահագնի առասպելի մասին գրելիս (Ա. իդ. լա.), այլև Տարբան—Տարանի գրույցը պատմելուց հետո՝ նա ավելացնում է. «Բայց առաւել յաճախագոյն հինքն արամազնեայց ի նուագս փանդոնսն և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակապս (Ա. զ.):»

Որ Խորենացին հաճախ երգիչ, երգել, երգ բառերն է գործածում (Ա. իդ. լ. լա. Բ. խը. խթ. ժ. ժդ. կա.), դրանից եզրակացրել են, թի իբր եղել է միութիւն և ամբողջութիւն կազմող մի մեծ նեղ: Այս տեսակետին հետևելով՝ Նույնիսկ ասելու բառին սովել են սերգելու նշանակութիւնը և ավիպասան» բառը բացատրել իբրև ավեպ երգող: Բայց այդ սխալ է:

Անսելու գրաբարում, ինչպես և աշխարհագրարում, չի նշանակում սերգելու, այլ միայն մի քան ասել, Հայտնել, պատմել: Քերևս որն է մատենագրի մեջ ասուելու ձևավոր առումով, լայնարար ունենա սերգելու իմաստ, բայց այդ դեռ ապացույց չի կարող լինել, որ ինքն իրեն վերցրած էասել առ հինսն մեր նշանակեր երգելու: Եվ իբր այս իմաստը տեղան յաշխարհիկ լեզուի մերում պահպանեալ տեսանի ի սովորական

1 Քովմայի վարդապետի Ահուրեւոյ, Պատմութիւն ասն Արծրունից, էր. 50—54.

2 Էմիւն, Վեպ Դեոյն Հայաստ., էր. 28.

յրանչիս. սխաղ ասել, որ է հրդ երգելը³։ Ենայ ասելուս վրա կ'ալիւնայ-
նենք և Երրդ ասել, շարական ասել, Ետաղ ասել։ Սակայն այդ օրի-
նակներն ևս զեռ շին հաստատում, որ ասեւելը նշանակում է Երրգելը։

Եթէ հրդ ասել, խաղ ասել և այլ լաղաղորյալ ձևերը մի բառով ա-
սում ենք Երրգելը, աղ երգելու իմաստը ոչ թէ ասեւելը բայն իր մեջ ունի,
այլ հրդ, տաղ, խաղ բառերից է ստանում։ Այնպէս, ինչպէս, օրինակ,
Խորենացու մեջ զԵրրգ(ս) տալը նշանակում է զըրուցել, կամ ինչպէս աշ-
խարհարարում՝ զույց տալ նշանակում է զըրուցել, բայց երբեք ստալը
մենակ առած չէ նշանակում զըրուցել, կամ թէ ցուցնել, կամ ինչպէս
ճառ ասել նշանակում է ճարտել, Բարոզ ասել՝ ճարտողել, բայց ոչ երբեք
ասեւելը մենակ առած ճարտողել, Եճարտել նույնպէս և խաղ ասել, Ե-
րրդ ասել կարգապահութիւնների մեջ ասեւելը բառը մենակ վերցրած չի
կարող նշանակել Երրգելը։ Այդ բառն, աշուշտ, կարող է Երրգելը նշա-
նակել, երբ ձեռավոր առումով է գործածված, այսինքն՝ երբ Ետաղը,
Երրգը, Երրգը քառերը զեղջիւած են և քորոթիցս ան հասկացվում։ Օրի-
նակ, Եմասնա Սոսրիս հետևյալ խոսքերի մեջ. Եճոթն օր գիշեր-ցերեկ
ասաց (աղուղը), Խամեղուտ խամեղից ասացա։ Խամեղութի գովքը երգելով
է անում աղուղը, և ասացա՝ բառն այստեղ գործածվում է Երրգելու համար։

Արդարև մի բան կարելի է ասել ոչ միայն պատմելով, այլև երգե-
լով։ Սակայն Խորենացիքն մի բանի երգելով ասվելը, կամ երգի մեջ
պատմելը հայտնելու համար միշտ գրում է. «Ասէին հրգն» (Ա. լս.).
«Ե՛ նուազս փանդան և երգս ցցոց և պարուց դայտոսիկ ասեն յիշատա-
կօք» (Ա. դ.). «Զորմէ ասէին ի հինան մեր, որք փանդամքն հրգէին»
(Ա. իդ.). «Վիպասանքն յերգին իրենանց ասեն»։ «Առասպելեալ հրգն
այսպէս ասելով» (Բ. ծ.). «Զայս կամելով հրգն յառասպելսն, Գոմես
զոմն ասնն եկեալ» (Բ. ծդ.). «Ենուն հրգիչն յառասպելին ասնն» (Բ.
կա.).— նույնիսկ ալս բոլոր օրինակների մեջ, թեպետ և երգի մասին է
խոսքը, ասել բառը երգել չի նշանակում և Երրգելը բառով թարգմանել
չի կարելի, այլ միայն ասեւել, ապատմել, Եհարտնել բառերով։

Այն անգամ որ ասեւելը բայի կարծեցյալ Երրգելը իմաստը զեն ենք
գնում, հասկանալի է լինում վիպասուն բառի իսկական նշանակու-
թիւնը։

«Ասել վիպաս» չի նշանակում Երրգել վիպաս զգալատմական երգս⁴,
այլ միայն ապտմութիւններ ասել, ասնել, քանի որ Եվեպ պատմու-
թիւն, պատմվածք է նշանակում։ Ուստի և Եվեպ ասեւելը նշանակում է
ոչ թէ Եվեպ երգողներ, այլ Եվեպ ասողներ, այսինքն՝ ապտմութիւն
անողներ կամ մի բառով ապատմողներ։ Մյուս կողմից պետք է դի-
տել, որ Եվեպասանք բառը ոչ միայն ապատմողին համար է գործած-
վում, ինչպէս՝ Եվեպասանքն երգելն իրենանց ասեն» (Բ. ծ.), այլ և

3 Եմին, Վեպ հեռն Հայաստ., էր. 98.

4 Եվեպ ասեւել.

սպատմվածքիս համար. սկիւտաշխի վերջնոյ զործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի Վիպասանացն, որ պատմին ի Գողթանա (Ք. խթ.):

Վիպասանքս քարոզ քառի թե սպատմողին և թե սպատմվածքին ալսպիտի երկու նշանակութիւն ունենալը տարօրինակ բան չէ հայոց լեզվի մեջ. որինակ՝ հենց նույն կազմութիւնն ունեցող բառովսանքս բառը նշանակում է թե սգովք ասողները և թե ասած գովքը, զովեօտը: Ինչպես վերջին իմաստով է ասվում սգովասանութիւնն համանիշ սգովասանքս քառին, այսպես և սվիպասանութիւնն համանիշ է սվիպասանքս քառին՝ երկրորդ իմաստով ասած: Ենթոք վիպասանքս կապակցութիւն մեջ սվիպասանքս քառն առաջին (պատմողի) թե երկրորդ (պատմվածքի) իմաստով առնված լինի, նշանակութիւնը նույն է մնում. բայց հավանական է, որ երկրորդ, այսինքն՝ պատմվածքի իմաստով լինի, քանի որ այս երկրորդ իմաստով առնված ժամանակն է համանիշ սվիպասանութիւնն քառին. իսկ սերպք վիպասանքս Փալատտոսի մեջ հիշված է այսպես սգիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն:

Այսպես, հայոց Վիպասանքը (կամ վիպասանութիւնը), ինչպես քառի կազմութիւնը ցոյց է տալիս, և ինչպես Ք. խթ. գլխի մեջ պարզապես վկայում է հորինացին պատմվել է: Բայց քանի որ հաճախ հիշվում են և Ենթոք վիպասանքս (Վիպասանութիւն) և թե վիպասաները (վիպ ասողները) երգում են, ինչպես և Վիպասանքի համար սերպիւքս քառն է գործածվում ուստի պարզ է և այն, որ Վիպասանքը (վիպասանութիւնը) ոչ միայն պատմվել է, այլև մասամբ երգվել: Այսպես նաև մեր արգի ժողովրդական վեպը մանրամասնորեն պատմվում է, բայց և տեղ-տեղ երգվում է: Վեպը պատմելու և մեջնամեջ երգելու նույն ձևն եղել է և ուրիշ շաղերի, օրինակ, գերմանացիների մեջ ևս:

Վիպասաների, գուսաների ու լայնարկուների մասին տեսնել սՊարսից պատերազմս վեպի 4-րդ գլ. սջայնարկուներ, գուսաններ ու վիպասաններ, 95—96:

68. Թուելիք, թուելաց երգը:— Ենթոք վիպասանքս հորինացու մեջ մի տեղ (Ա. 1.) կոչված են սթուելացն երգքս: Այդ տերմինին զանազան մեկնութիւններ են տվել, որ կարևոր չենք համարում այստեղ հիշատակել: Թուելացն և վիպասանաց երգերը հորինացու մեջ բերած քովանդակութիւն մը նույնանում են, որով և ապահովապես կարելի է ասել, որ նույն սվիպասանաց երգերին մի ուրիշ կոչումն է միայն սթուել:

¹ Wilhelm Grimm, Die deutsche Heldensage, Berlin, 1867, էր. 387: Գերմանացիների մեջ նա վեպն ասելու (vortragen) համար գործ են անում singen (երգել) և sagen (ասել) բայերը. իսկ զիջալնական վեպը, նման մեր վիպասանքին, իր կոչումը՝ Sage, Heldensage ասացել է sagen (ասել) բայից, որովհետև նրանց վեպերն է, ինչպես մերը. հանգամանորեն ասվել, պատմվել են և որք մասամբ միայն երգվել:

6 Տես՝ Մ. Արեղյան, Հայ ժող. առասպելները, էր. 56—71:

յնաց երգաց: Քուելիք բառը (որի սեռականն է սթուելիւնաց) կազմված է ոչ թե սթուելիւ (երևալ) բայից, առ թուել բայից, բայց վերջինս ոչ թե սեռամարեւ (համարելու, համբել) իմաստով առած, այլ ալն իմաստով, որ ունի այդ բայի սթիւն արմատը, սթիւ ասելն ձևի մեջ:

Հայոց եկեղեցու մեջ մաղթանքներ, ինչպես և Առաքելոց Գործքի ու թղթերի ընթերցվածները, թիւ են ասվում, իսկ Ավետարան, մարգարեների ընթերցվածները՝ բառային: Սաղմոսները, քարոզները երբեմն երգվում են, երբեմն՝ սեռայնով ասվում, երբեմն էլ՝ սթիւն: Եկեղեցական երգերն ևս որոշ տոներին սթիւն են ասվում, օրինակ՝ սեռայն զուարթըն Մեծ Պատիհ:

Ձայնիւն կամ սի ձայն ասելը, որ երբեմն իրան երգ ասելու հետ շփոթում են, մի տեսակ եղանակավոր ասելն է, որ երգելու և սթիւ ասելու միջին տեղն է բռնում: Իսկ քիւ տակն սովորական ասելն է, առանց որեւէ եղանակի, որքան կարելի է պարզ և հասկանալի, մտտիկ սովորական պատմելու և կարգալու ձևին: Մեր սթիւ ասելը նույնն է, ինչ որ ֆրանսիացիները récitation, réciter բառով արտահայտում են, այսինքն անգիր արած մի ճառ, ոտանավոր կամ արձակ կտոր, իրրե սովորած դաս ասել, արտասանումից (déclamation) ցած, իսկ սովորական խոսակցութիւնից կամ ընթերցումից բարձր ձայնով:

Սթիւ ասելու ասլ նշանակութիւնը, որ այդ ձևն անշուշտ սթիւն բառից է ստանում (հմմտ. վերելում ստաղ ասելը, սերգ ասելը և այլ ձևերի մասին), ինչպես ընթերցողը կտեսնի, նույնն է, ինչ որ սովորաբար ասելն բայով ենք միայն հայտնում: Սովորաբար շնք ատում սեռա թիւ ասելը, սքարող թիւ ասելը, սդաս թիւ ասելը, այլ միայն ճառ ասել, քարող ասել, դաս ասել, ոտանավոր ասել, անգիր ասել և նմանները: Արդ, եթե սասելը և սթիւ ասելը նույն նշանակութիւնն ունին, էլ ինչու՞ է վերջին ձևն ստեղծվել: Մտտ հասկանալի է, թե ինչու սեռայն բայը շատ ընդարձակ զործածութիւնն ունի: Ասել կարելի է երգելով, սեռայնիւ և սովորական ասելու, պատմելու ձևով: Ուստի և սասելն բայով միայն, օրինակ, եթե լինի միայն՝ սեռայն զուարթ ասելը, ստաղմոս ասելը, չի կարելի որոշ իմանալ, թե ինչպես պետք է ասել, սեռայնիւ սի թիւն թե՛ երգելով: Փանի որ սեռայն զուարթըն ու սաղմոսները երգ են և սովորաբար երգվում են, ուստի և այդպիսի դեպքերում սովորաբար երգել էլ կը-

7 Տե՛ս Տոնացոյց և, օրինակ, 1888 թվի օրացոյց էջերիննի դիտար. 27, 28, մարտ 6, 13, 20, 27, և այլն օրերի հրահանգը. սեռայն զուարթ թիւ ասա. «Ասեն թիւ զսաղմոսն Օրէնեա անձն իմ գտէր, սեռակապան թիւ ասասցէ զգարոզն Վասն ի վերտա... Վասն ի գերերեա ևլն. սեռն թիւ զփոխեա ևլն:

8 Ձայնա բառի նշանակութիւններից մեկն է և սերգելու եղանակը, որից և սեռականների ութ ձայններ և այլն ձմտ. նոր բառը Հայկ. լեզվի:

9 Որքանն եկեղեցում սովորական ձայնով կամ սովորականից էլ ցած ձայնով են սթիւ ասում, բայց այդ միայն որոշ դեպքերում, երբ սթիւ ասածը մոզովողն լսելի լինելու համար լի:

Հասկացվի. բայց եթե կամենում ենք, որ սաղմուք շերտվի, այլ բնական, այսինքն՝ որոշ բնականորեն ասվի, բնական կամ քի ձայնն բառն ենք ասվելացնում: Այդպես և Հատկապես ստվորական ասելու, պատճելու ևն Հասկացնելու համար՝ ասվելանում է Համանիշ սթիւ բառը և կազմվում է քի թիւ ասել, որ բառացի նշանակում է սթվիով, թվի ձևով ասել: որ նույն է ստվորական ասելու-պատճելու ձևով ասել:

Թիւ բառը սկզբնապես ասելու, պատճելու իմաստ ունի անշուշտ և քի թիւ ուսանել, գիտնել մասնակցութուններին մեք, որ նշանակում են բարբառն ուսանել, գիտնել¹⁰, Այստեղ սթիւ բառը չի կարող քանակի իմաստով առնված լինել, այլ միայն ասելու, պատճելու իմաստով: Այդ դարձվածները բառացի նշանակում են սթվի համար, այսինքն՝ սթիւ ասելու, պատճելու համար ուսանել, գիտնել: Եվ որովհետև սթիւ ասելիս սովորաբար, սկզբնապես անշուշտ միշտ, ոչ թե կարգացվում է, այլ բնական է ասվում, ուստի և Հասկանալի է, թե ինչպես սթիւ ասելու համար ուսանելը ստացել է արբառն անելու իմաստ:

Թիւ (= ասել, ասել) արձատից կազմվում է թվել բայը, որ կարող է նույն իմաստն ունենալ, ինչ որ քի թիւ ասել: Եվ հորենացին և րեքն տեղ (Ա. հ., Բ. ը. կզ.) այդ բառը գործ է ածող: Համանիշ ասել պատմել բայերի¹¹:

Այդ, լեթե սթիւ ստղմուք և նրանից կազմված սթիւն անշուշտ կամ է ասել, սպասել¹², հեշտ է ասել, թե սթիւնից ինչ է նշանակում: Այդ բառն իր կազմով համար կարող է կրկին նշանակութուն

¹⁰ Տե՛ս նաև բառ. Հալի. լեզվի:

¹¹ Նա Բ. կզ. պում է Ձևը (Տիգրանի Հաստատած կրտսերագույն ազգերը) ոչ տեսարն դատվողով... այլ միայն զոր Հաստատի գիտնել զինիսն. իսկ Բ. Տ. Համանան զեպանու նույն իմաստը նույն բաներով, միայն սպասելու գիտնել սթիւն զորձանելով. Ձևոր (Արտաշեսի սրգիններին) ոչ կարևոր Համարեաց այժմ անուամբ թուել. բայց զինից յորձամ ի գործ ինչ Հասաներենք: Իսկ Ա. հ. ասել և սթիւն բաշտը միևնույն պարբերության մեջ համանան տեղում իրար իտխանակում են. Եթատել մեզ դաշտանի յուով իրա Հաստատիմն Արիզնես, և ասլ այսպիս. Երես Արիզնայ, Քուրգայ, Արիզնայ, Անէրայ, Բարձայ, Թէրայ, Նայնպիս և զմերն... բալ այսպիս. Արայ զինիցն՝ Արմենայ, Լարմայ, Դեղմենայ, Ամանայ և այլն:

¹² Թիւ արձատի և նրանից կազմված սթիւն բայի նշանակութունը ասել, պատճել, մի տարբերակ բան պիտի լինի, քան որ ուրիշ լեզուների մեջ ևս տեսնում ենք նույն ինչպիսի ասոլացած անշուշտ նույն նշանակութունը. կամ թե լեզուներ իրար վրա ունեցած ազդեցութունը: Այսպես Հուներն լեզու ասել, պատճել, կարգուլ, այլն թուել, համարել, խոց խոց, բան(ք), պատճվածք, դրույն, այլն թուել, հաշվել, Համարել, Լատիններն compulere թուել, հաշվել, և ասու ծանր արտասանել, նույն բառը լատիններն զուտ ֆրանսերենում compter թուել հաշվել, և conter (զրուելու ձևով միայն տարբեր, արտասանութունը և computare բառից ծագումը համարել comter բառին) ասել, պատճել. compte հաշիվ, համար, իսկ conle դրույն, գնալ, պատճվածք: Գերմաներն Zahl թիվ, արձատիք zahlen թվել, համարել, և zahlen պատճել: Միևնույն արձատից անգլերն totell թուել, համարել, միևնույն մասն և ասել, պատճել. tale թիվ, հաշիվ, այլ և պատճվածք: դրույն. հեքթաթի մուտերն читать, прочитать կարգուլ. ասել բայից считать թվել, համարել:

ուեննալ, թէ զթուողներս, այսինքն թիւ ասողներ, ասող—պատմողներս, և թիւ թթուածը, այսինքն թիւ ասածը, ասած պատմածը, ինչ որ ասվում—պատմվում է», քանի որ նույն ածանցիկ մասնիկը թիւ ներդրածականի և թիւ կրավորականի իմաստ ունի¹³։ Այլ այսպես, թթուելիքս բառն իր երկու իմաստով ևս համանիշ է պիպասանքս բառին, որը նույնպես նշանակում է, թիւ սպատմութիւն անողներ, ասող—պատմողներս, և թիւ բարած պատմութիւնը, պատմածը, ասած—պատմածըս։

Միևնույն երգերի ա՛լիպասանաց երգքս և թթուելիաց երգքս կոչումները մտածութիւն միևնույն եղանակով են կազմված, միայն տարբեր արմատներից. այսինքն՝ երկու կոչումն էլ վիպն ասելու արտաքին ձևից են վերցրած։ Մտածութիւն նույն եղանակով է կազմված, օրինակ, և ռուսաց СКАЗИТЕЛЬ (ասող) բառը, որով կոչվում է ռուսաց վիպերի, վիպական երգերի (БЫЛИНА) պատմողն ու երգողը¹⁴, և մեր ասացողը բառը, որով կոչվում են Վասնա Մսերս պատմողները։

Եթիւ մեկը լսած լինի, թիւ ինչպես մեզնում ժողովրդի երգիչները, օրինակ մեր աշուղները, կամ Վասնա Մսերս պատմողները, ասում են իրենց վեպերը, մեղեմեղ միայն երգելով, նկատած կլինի, որ նրանք թիւ թիւ ռուսած, այսինքն բերան արած, բարձրածայն արտասանելով ասում, պատմում են լոկ, միատեսակ ուժով, միայն տեղ—տեղ ձայնը միևնույն ուժով քիչ երկարելով։ Ուրիշ խոսքով նրանք թիւվում ենք թիւվ են ասում։ Վեպերն այսպես թիւվելու, թիւ ասելու եղանակը, ինչպես և թիւ բառն այդ իմաստով, նոր չէ հարկավ և միայն հայերի մեջ չէ։ Մեր հին վիպասաններն էլ շատ աղբեր եղանակով լպետք է ասած լինեն իրենց վեպերը։

Զ

ՎԻՊԱՍԱՆՔԻ ՆՑՈՒԹԸ, ՀՈՐԻՆՎԱՍՔԻ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ

84. Մ. Խորենացու քննադատությունը։ Բերանացի երգեր և «երգարանք բանաորք»։— Թիւ ինչպիսիք արվեստով և հորինվածքով են գարգացած եղել մեր հին վեպերը, այդ մասին քիչ բան կարող ենք իմանալ այժմ։ Գրանք միակ աղբյուրները մեր մի քանի հին կենդեցական պատ-

¹³ Հմմտ. ներգործարար ասված, օրինակ, Մ. Գրքի մեջ. «Էլիելիքս առնելիք բանին և մի լսելիք միայն համարալիք։ Զի նթէ ոչ լսելի (լսող) միայն իճէ բանին և ոչ առնելի (անող), նման է մարդոյ...» (Թուղթ Ծակ. մ. 22—23, Հմմտ. Հատ. Բ. 13)։ «Եւ աս հա պատմուեալանն առնողաննելիաց (առնողանողներին) առասպելինա (Գառաւորք. Ժգ. 15 նշ)։ «Եւ նորու զարժաթն ի ձեռս զործելիաց (գործողներին) զգործս կաշի տանն Տեառնա (Չորր. Թագ. Ժք. 11)։ «Եւ գործ կրծկաց (կրողներին) խորանին վկայութիւն» (Թիւք գ. 47. Հմմտ. Յնու. Գ. 15. Ասակց. մէ. 21, և ուրիշ տեղեր)։ Կրավորաբար գործածութիւնը նույնպիսի և ավելի հաճախ է ցան ներգործարարը։ Օրինակ բերելն ավելարդ է։

¹⁴ А. Галахов, История русск. словесности, I, 2, «Слово и Тождомый словарь Дала.

մագիրներն են, որոնք այդ երգերից մի ցանի հատվածներ են միայն
բառացի մեջ բերում: Նրանք պատմում են մեծ մասամբ բովանդակու-
թյունն, այն էլ հաճախ խառնած ուրիշ աղբյուրներից քաղած նյութերի
կամ թե իրենց ենթադրությունների ու մեկնությունների հետ:

Փասվատոս Բուզանդը, քրիստոնեացաբար նայելով, բացարձակ արհա-
մարհում է Վիպասանությունը, որովհետև դա հեթանոսական բնավորու-
թյուն ունենր. դրա մեջ մարդկանց հետ խառն գործող անձեր են եղել ոգի-
ներ և աստվածներ:

Ա, Խորենացին, առաջին և երկրորդ շրջանների վիպական բանա-
հյուսանթյան աղբյուրը, որ արվեստի նկատմամբ ավելի ցնեադատաբար
է վերաբերվում, առանձին գովեստով լի խոսում է այլ նախնիքների բա-
նաստեղծական շնորհքի մասին: Նա իր գրքի հենց սկզբներում (Ա. գ.)
խոսելով ժամագուստ անիմաստասէր բարուց առաջնոց մերոց թագաւո-
րաց և իշխանաց սաստիկ պարսավում է նրանց գրելով՝ «Ամենեցուն
մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն
տխմարութիւն, և անկատարութիւն Թագոյն բանականիւ, և վերջն ալի-
լացնում է. «Ե՛նձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայցս լեալ
անսիրերութիւն իմաստութեան և իրգարանաց քանաւորաց: Վասն որոյ
աւելորդ վճիռ և այլ յաղագս արանց անքանից, թուլամտաց, վայրենաց
ճառելւ:»

Ենթադրանք քանաւորքս կարելի չէ սերբանացի երգարաններ կամ
բերանացի երգեր հասկանալ, սքանաւորս բառի արդի սովորական նշա-
նակութիւնը:

Թե հին հայերի մեջ բերանացի երգեր եղել են և ոչ թե Եանսիրե-
լութիւնս է եղել այդպիսի երգերի, այլ, ընդհակառակն, այդ հեթանոսա-
կան երգերը Նույնիսկ շատ սիրելի են եղել, ժաննապաշտոնացիք և Եղե-
գերեալ մաշելովս երգվել են քրիստոնեութիւն ժամանակ անգամ, սքար-
բարոս խուճաղութ միտ տւելովս (հմտ. Խորենացու Ժամանակ, թուլա-
միտ, վայրենի, և այլն բառերը),—այդ գիտենք Բուզանդից: Նույնը
հիշում է և Նղիշեն, ժաննապաշտոնի առատացոյց (Վասակ) զուճիկսն տա-
ճարին, և յերկարէր զնուագսն ուրախութեան, մաշելով զերկայնութիւն
գիշերացն, երգս արքեպոսեան և ի կարգաւ զկտոսթեան քաղցրացուցա-
նէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս¹:

Խորենացին շէր կարող ասել, թե սերբանացի երգեր չեն սիրել հա-
յերը այն էլ Ե՛նձնքն Հայաստանեայցս, որոնց համար հաճախ ինքը հի-
շում է երգերու նրա գանգատը ոչ թե բերանացի երգեր չլինելու կամ սի-
րած չլինելու մասին է, այլ իմաստաւից, ոչ փժու, մի խոսքով սքանա-
ւորս երգեր չլինելու և սիրած չլինելու մասին, և հասկապեա գրած, գրի
առած, երգեր չլինելու մասին: Այս երևում է թե այդ գլխի ընդհանուր
բովանդակութիւնից և թե սերբարանքս (երգերի մատյան), և ոչ թե

¹ Նղիշէ, Ե. Եղանակ, Տփիս, 1879, էր. 80:

«երգը» բառը գործածելուց, և թե զբանաւորք բառի հին սովորական իմաստից: Այն է՝ բանավոր այտեղ, ինչպես սովորաբար, նշանակում է զբանասիրտն, իմացաւիան, մտաւոր, մտացի, խելացի, աշտինքն՝ քանականութիան, սիմաստութիան վերաբերյալ, ինչպես հաճախ գործ է ածում Ազնիբը², Հիշենք միայն, թե ինչպես խորհնացիս պարսից առասպելները սուտ, փոռն, անճոռնի, անյարմար և անոճ բանք, անմիտ և անհանճար բանից յարմարանք», այլ և երկու անգամ բանաստեղծութիւն և մի անգամ բանաստեղծութիւն է անվանում (Ա գրքի հավելիված) և թարգմանելը (Բ. Գ.) եւ ի՞նչ և ի՞նչ նկատի ունենաց, որ թիրանացած հայերի առասպելները հունական կրթութիւն ստացած խորհնացու համար, իրենց ձեռով եթե ավելի անիմաստ չլինեին, ավելի իմաստուն էլ չէին լինի, և որ հենց խորհնացիին Տուրքի մասին առասպելը նույն ածականներով է կոչում, ինչ որ պարսից առասպելները. Բագրատունիների ծագման մասին գրուցը սլիմար, քայ բանք անոճ, իսկ Աթորունիների մասին առասպելը թարգաղանք (Բ. Լ.) է կոչում,—այն ժամանակ հասկանալի կըլինի, թե զբանաւորք ասելով ինչ է հասկանում նա.— երգեր, որոնք պարսից առասպելների պես անճոռնի, փոռն, անհանճար (անիմաստ), անմիտ, անբան և անոճ չլինեին, այլ բանավոր, աշտինքն իմաստալից, մտացի, ճոռնի սպերճ և ողորկ, մի խոսքով ինչպես հունաց առասպելները, այն էլ գրված:

Այսպես ուրեմն հունական առասպելների հետ համեմատած՝ հայոց ավանդական երգերն ու Վիպասանքն և առասպելները Մ. խորհնացու աչքին շատ ցած են, շատ մոտիկ պարսկական առասպելներին: Նրա այս քննադատութիւնը պետք է իրականութեան մոտ համարել: Բայց և այնպես մեր հին վեպը, հարկավ, քոլորովին բանասիրտն լի նշել: Թեպետ և մեր ձեռք հասածի արվեստը որոշ շահով ծագում է Մ. խորհնացուց կամ իր աղբյուրներից ևս:

65. Վիպասանքի նյութերը:— Վիպասանքը եղել է մի սամբողջութիւն, բայց ոչ այն իմաստով, թե դա, իբրև մի գրական մշակութիւն կրած երկ. ունեցել է իր ընդհանուր թեման, որով միացած կլինեին երկի բոլոր մասերը սկզբից մինչև վերջը: Վիպական մեծ նյութը նրա մեջ մի հեղինակի ձեռքով չի մշակված և միացված եղել: Միացումը կատարված է եղել հետզհետե, ժամանակի ընթացքում, առանց մի ընդհանուր ծրագրի: Ուստի մեր այդ հին վեպը չի կազմել մի սամբողջական գեղարվեստական երկ, որի մեջ մարդիկն ու մարդկանց արարքները միմյանց հետ սերտ կապված լինեին մի ընդհանուր խնդրով ու սյուժետով: Արդարև, մեկ-մեկ իբրև մի ընդհանուր սյուժետային թել երևան է դալիս հայերի հարաբերութիւնը մարերի ու վիշապազների հետ, բայց և

² Վենետիկ տպ., էր. 57, 101, 158, 159, 170 և այլն: Անբանավոր էր. 145: Մանգրամասութիւնները տե՛սե՛ն Մ. Արիզան, 2-րդ տպ. առ., էր. 24—40:

այնպէս այդ ամբողջի մէջ բազմաթիւ և բազմազան նյութերը հարած են եղել միմյանց ոչ ներքին, այլ արտաքին մի լույծ կապակցութեամբ:

Ինչպէս ԵՄասնա Սոսրի՜ մեջ, այնպէս և Վիպասանքի մէջ պատմութիւն են զանազան միջադեպեր նույն հերոսի, կամ իրար հաջորդող հերոսների կյանքից, կազմելով հաճախ, նոր վեպի բառով ասած, առանձին վիպական շրջաններ: Այդ ճշուրներից յուրաքանչյուրն արդեն ունեցել է իր թեման, որով կազմել են մի մի առանձին միութիւն: Դրանց մէջ վիպասանները կարողացել են ժամանակակիցների համար կարևոր և հետաքրքիր այս կամ այն գաղափարի ու խնդրի շուրջ զարգացնել գործողութիւններ ոչ միայն պատմական և առասպելական դիպվածներով, այլև կենցաղային գծերով:

ՅՑ. Տիգրանի ճյուղը:— Վիպական մասնատմանութեամբ առված մի պատմվածք է եղել հիմնված մի խնդրի վրա, որ կազմում է գործողութեան միութեան կենտրոնը: Դա է երկու հարևան ազգերի թագաւորների՝ հայոց Տիգրանի և մարտց Աժդահակի՝ հարաբերութիւնը, այդ երկուսի հակադրութիւնը, Աժդահակի դավադրութիւնը Տիգրանի դեմ և նրանց բախումը:

Սկզբում քաջատրվում է ընդհանուր դրութիւնը, որից ծագում է գործողութիւնը: Տիգրանը հզոր և, լիմաստուն, հաջող, աշխարհակալ, նա տիրել է շատ ազգերի, Աժդահակը վախենալով նրանից դաշնակցում է նրա հետ: Ապա խորամանկ միջոցների դիմելով՝ նա կնութեան է արեւում Հայոց թագաւորի քրոջը՝ Տիգրանուհուն, և ցանկանում է սրա միջոցով դավաճանութեամբ սպանել տալ Տիգրանին: Բայց Տիգրանուհին, իրեն ենթարկելով վտանգի, եղբայրսիրութեան առաքինութեան և ցույց տալիս և եղբորն իմաց է տալիս դավադրութիւնը: Տիգրանը պատերազմով դուրս է գալիս Աժդահակի վրա, հոգալով միաժամանակ իր քրոջ ազատութեան համար: Նա հաղթում, սպանում է Աժդահակին և նրա ընտանիքը, բազմաթիւ գերիներով, բերում ընկնցնում է Հայաստանում:

Ժամանակակիցների համար հետաքրքիր այս պատմվածքը զարգարված է ոչ միայն Տիգրանի արտաքինի ու ներքինի և նրա շրջապատողների նկատարով, այլև ավանդական վեպերի սովորական շտապիներով: Այսպիսիներից է Աժդահակի երազն իր մանրամասնութեամբ: Ապա պատմվում է երազի պատճառով Աժդահակի խորհրդակցութիւնն իր իշխանների հետ, որ նույնպէս վիպական գիծ է, որոշումը կին առնելու Տիգրանուհուն, խնամախոսութիւնը, Աժդահակի շանքը Տիգրանուհուն գործից դարձնել և այլն:

Ինչքան հուժկու, քաջարի, պայծառ ու քացսիրտ է ներկայացված Տիգրանը, նույնքան մոռալ է Աժդահակի դեմքը: Նա վախեցող է, անհանգիստ, շարունակ զգուշացող, խորամանկ ու խարդախ, կեղծող ու շողջորթ և դավաճան: Պարտութիւնը կրում է, հարկավ, շարն և օտարը, ու փառավորվում է Տիգրանը:

87. Երվանդի ճշուդը:— Այս հրուդին պատկանում է և Սանատրուկի գրույթը, որ, ըստ երևույթին, Տիգրանի վեպի շարունակութունն է: Սանատրուկը, ինչպես վիպական ոգին պահանջում է, որևէ պատումով պետք է Տիգրանի գարմ կամ հաջորդ լիներ: Վեպը սկսվում է Սանատրուկի մանկութան մասին առասպելով և ապա անցնում նրա շինարարության ու սպանմանը:

Կար Երվանդ լիշխանը, որ Սանատրուկի հանձնարարութեամբ կատարած գործերով երևելի է դառնում և նախարարների մեջ առաջինը, Իր խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ նա դրավում է ամենքին: Սանատրուկն սպանվում է որսի ժամանակ. շփոթութուն է ընկնում երկրի մեջ: Նախարարները թագավորեցնում են Երվանդին:

Նա օրինական ժառանգ չէ ու դա՛ է փորձրանում ապօրինի կերպով: Այստեղից ծագում է գործողութունը վեպի ծագման ժամանակի տեսակետից, ժամանակակիցների համար հետաքրքիր մի թեմայով: Պե՛տք է նշվանդը մնար թագավոր, թե չէ:—Ոչ, պատահանում է վեպը: Երվանդն իսկական ժառանգ չէ, ազնվականները պարտավոր են հավատարիմ մնալ բնիկ հարստութեանը: Եվ ահա նախարարական տներին մեկը, թագադիր Բագրատունիները, շեն ընդունում Երվանդին: Նրանց տոհմից ոչ ոք չի լինում թագադիր. ուստի և նրա թագավորութունն օրինավոր չի համարվում: Դրութունը բարդանում է, սկսվում է պայքար երկու կողմի մեջ:

Այդ պատճառով հենց սկզբից Երվանդի բուր հոգսը լինում է ապահովել իր թագը: Նա, այդ իր ծնունդով վիշապը, քնականաբար, մարացոց տեր Արգամին, որ նույն է վիշապ կամ վիշապաղն Արգավանին, ռոր ի ծննդոցն Ածգահակայս, դարձնում վճարահան երկրորդական, զոր հաննալ էր ի նոցանէ (այսինքն մարացոց տեր Մուրացաններից) Տիգրանայս: Նա թագավորելուն պես՝ հին թագավորների սովորութեամբ, կասկածելով մանատրուկի որդիներից, կոտորում է նրանց ամենքին: Բայց ազատվում է մի երեխա Արտաշես անունով, որին փախցնում է իր ստնտուն: Երվանդը հետապնդում է բռնելու այդ երեխային, բայց նրա դայակը, Սմրատ Բագրատունին, պահպանում է մանուկին և արկածալից թափառումներից հետո տանում է նրան Պարսկաստան: Պարսից թագավորը աիրով ու պատվով ընդունում է նրանց, ինչպես հաճախ վարվել են հարևան իշխողները իրենց շահի համար: Արտաշեսը մեծանում է այնտեղ: Երվանդն ամեն հնարքների դիմելով, շողքորթութեան ու ֆաղթի խոսքի, ոչ մի կերպ չի կարողանում ոչ Սմրատին համոզել, որ իր կողմն անցնի, ոչ պարսից թագավորին: Պարզեններն ու խոստումները լեն ոգևում: Ուստի նա հոգեկան հանգստութուն լունի, գիշերը քուն լունի, ցերեկը կասկածոտ ու մտահոգ է: Վախենում է գաղտնի գավաղորութուններից: Նախարարներին իր կողմը գրավելու համար՝ առատ պարգևներ է տալիս նրանց: Ամեն տեսակ շինարարութուններ անում: Իր ապահովության համար՝ կռատունը հեռացնում է մայրաքաղաքից. նոր

կոտառուն է շինում և իր նդրայր Երվազին քրժապետ կարգում։ Ապա արքունիքն էլ հեռացնում է մայրաքաղաքից. նոր քաղաքի մեջ ամեն զգուշութիւնն ձեռք է առնում իր կյանքի ապահովութիւն համար։ Բարեկամանում է հոռոմայեցիներին, նրանց սիրելով Միջագետքը և շատ հարկ տալով։ Վարացիներին օգնութիւն է կանչում։ Բայց ոչ մի բան չի օգնում, ոչ նրա այս արարքները, ոչ էլ նրա գերբնական ծագումն և աշքերի ուժը։ Նրա սիրելիներն անգամ նրա տնից քսութիւն են անում, և որքան առատ պարգևներ է տալիս նա, այնքան ավելի ատելի է դառնում։ Եթանդի գիտէին ամենեցեան, ձեռք էլ առ առատութեան տալ, այլ առ երկիրդի վատնէ։ Եւ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առնէր, որոց շատն տալը, քան թէ թշնամի զայնս, որոց ոչն տալը պերճագոյնս (Բ. խն.)։

Հենց որ ընդիկ թագաժառանգը պարտիկների օգնութիւնս և Մմբատի առաջնորդութիւնս երևում է Հայաստանի սահմանների վրա, բուրն անցնում են նրա կողմը։ Հոռոմայեցիները շին դալիս օգնութիւն, վրաց զորքը փախում է։ Հաջողութիւն շին ունենում և բարք քաջ տարացիքս, այսինքն սասունցիք, զորոց զոգիս ի բաց եղեալ, Երուանդայ պայմանեալ սպանանել զԱրտաշէս։ Ստնտուի որդին, Գիսակը, մեջ մտնելով անձնազուրկութիւնս փրկում է Արտաշէսին։ Երվանդին մնում է ճակատամարտի տեղից փախել և ամբանալ իր շինած քաղաքարերով։ Բայց այստեղ էլ ամբողջի մարդիկ անձնատուր են լինում, և Երվանդն սպանվում է մի գինավորից։

Այնուհետև Արտաշէսն իր հոր թագով թագադրվում է Մմբատից, և օրինավոր ժառանգը դառնում է օրինավոր թագավոր։ Նա պարգևներ է տալիս բարեկամներին, իր համար սպանվածներին ժառանգներին ազնվական դարձնում։ Մմբատի ձեռով սպանել է տալիս Երվազին և ընծաներ ուղարկում պարսից թագավորին, իր բարձրարին։

Այս պատմվածքը մի ամբողջական վեպ է, գեղեցիկ զարգացրած, բազմաթիւ մանրամասնութիւններով և միջադեպերով, որոնք միմյանց հետ միանում են մի ընդհանուր սյուժետով, ուստի և քննականորեն հաջորդում են միմյանց։ Ամբողջի մեջ երևում է, թե ինչպես նախարարները, եթե ակզրում մի ժամանակ թուլանում են, սխրով կապված են լինում քնիկ թագավորական տան հետ։

Արքի է ընկնում այս նկատմամբ Մմբատը, որ անձնուրացութիւնս ամեն նեղութիւն կրում է, օտարութիւն մեջ ապրում, միայն իր տիրուչ, իր թագավորի որդուն համատարմութիւնս ժառանգելու համար, նա գեղեցիկ է, բարձրահասակ, քաջ է, լավ կոյուղ, արագաշարժ, զգույշ և հաջողակ։ Նա մի բանի համար է միայն մտածում և աշխատում պահպանել թագաժառանգին և բարձրացնել նրան հայրական զահի վրա, կոչել նրա համար և մինչև վերջը ժառանգել նրան։

Վիպասանը Երվանդին էլ օժտել է բազմակողմանի հարուստ քնվորութիւնս և մարդկային լավ կողմերով, և այստեղ է վեպի գեղեցկութիւնը, նա հաղթանակով է, սրտոտ, խոնարհ, առատաձեռն, շինաբար

խելոց կառավարիչ, աշխարհի համար հոգացողը նա նույնիսկ վեհաճանն
ու պատվավոր է այն աստիճանի, որ իր թղնամի Սմբատի դուստրերին
գերելով սպահէ յամբողջին յԱնի ոչ վատթարապէս: Բայց այս թագա-
վորը, որ պետք է ժողովրդականութուն վայելի, մի պակասութուն ու-
նի. նա օրինական ժառանգը չէ և արքայական տան վերադերմամբ մի
հղեոնով է դահ բարձրացել: Ե՛վ այդ շարունակ հալածում է նրան, և
վերջը նա պատմվում է դրա համար:

68. Արտաշեսի ամուսնությունը — կազմում է մի առանձին ճյուղ:
Ինչպես Մասնա Սոերիս մեջ Դավթի ու Մարամելիքի կովից և Դավթի
հաղթութունից հետո գալիս է Դավթի ամուսնութունը, նույնպես և Վի-
պասանքի մեջ Արտաշեսի հաջողութունից հետո պատմվում է նրա
ամուսնութունը:

Արտաշեսն զբաղված է Արտաշատ քաղաքը շինելով և զարդարելով
(Թ. խթ.) և իր ժամանակ Ալանները մտնում են Հայոց աշխարհն ավա-
րելու, Արտաշես թագավորը դորքով քաղությամբ նկնում է նրանց դեմ.
բռնում են ալանների արքայորդուն. ալանները քշվում են Կուր գետի
մյուս ափը՝ նրանց թագավորը խաղաղութուն և խնդրում, խոստանալով
այլ Արտաշեսին, ինչ որ նա ուզի: Բայց Արտաշեսը լի համաձայնում
արձակել թագավորի որդուն: Այն ժամանակ ալանների արքայադուստրը,
հղորդն ազատելու համար, գալիս է գետափը մի մեծ դարավանդի վրա
և թարգմանների միջոցով ձայնում է դեպի Արտաշեսի բանակը.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,

Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,

Եկ, հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝

Տալ զպատանիդ.

Ձի վասն միոյ քինու ոչ է օրէն դիցազանց՝

Ձայոց դիցազանց զարմից բաճալ զկենդանութիւն,

Սամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,

Եւ թղնամութիւն յաւիտեանկան

Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

Արտաշեսը՝ տեսնելով Սաթենիկին գեղեցիկ ու խելոք՝ հավանում է
նրան, ցանկանում է նրան կնության տունել, և իր միտքը հայտնում
Սմբատին: Սա մարդ է ուղարկում ալանների մտտ հաշտվելու և օրիոր-
դին ուզելու: Ալանների թագավորն ասում է.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս

Հազարս ի հազարաց և քիւրս ի քիւրուց

Ընդ քաջազգույ կոյս օրիորդին Ալանաց:

Աղջկա հայրն, ուրեմն, իր աղջկա համար մեծ գլխագին է պահանջում, Բայց Արտաշէսը ձին հեծած՝ սրաթիւն անցնում է գետով, պարանք ձգում է օրինորդի մեջքը և բերում նրան իր բանակը:

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
նւ հանեալ զտակէտդ շիկափոկ պարանն,
նւ անցնալ որպէս զարծուի սրաթն ընդ գետն,
նւ ձգեալ զտակէտդ շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք օրինորդին Ալանաց,
նւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրինորդին,
Արազ հասուցանելով ի բանակն իւր:

Արտաշէսն, ուրեմն, այն է անում, ինչ որ մինչև վերջերս երբեմն անում էին հայ լեռնցիներն և ավելի ևս քրդերը, իրք իրենց սիրած աղջկանը շէին ուզում տալ ծնողները կամ իրենց հարսնացուի համար մեծ գլխագին էին պահանջում: Նրանք փախցնում էին աղջկան: Արտաշէսը աղջկանը փախցնելուց հետո՝ նրա հորը տալիս է մեծ վարձանք. սժորթ կարմիր, լալցա շատ և ոսկի բազում: Այս ևս մի սովորական կենցաղական գիծ է, որ մինչև վերջերս կատարվում էր հայերի և քրդերի մեջ: Աղջիկը փախցնելուց հետո գլխագին էին տալիս նրա ծնողներին և հաշտվում, ապա հարսանիք անում: Եվ իրավ, Խորենացին անմիջապես անցնում է հարսանքին, բերելով հարսանքի նկարագրից մի փոքրիկ կտոր միայն:

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,

Տեղայր մարդարիտ ի հարսնութեան Սաթիկականն:

Խորենացին այս հատվածը մեկնում է այսպես. «Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս նապաղել... սապէս և թագուհեացն յառազատին՝ մարգարիտ: Այս է ճշմարտութիւն բանիցս:»

Հայոց թագավորների ու թագուհիների այս սովորութիւնը, հայտնի է, մինչև վերջերս պահում էին մեր սթագավորներն աւսթագուհիները, ինչպես կոչվում են հարսն ու փեսան հարսանքի ժամանակ: Այդ սովորութիւն մասին առաջին անգամ էմիլեն³ է նկատել Նոր Աուդայեցիների համար: Սակայն միայն Նոր Աուդայեցիների մեջ չէր, այլ շատ տեղ տարածված էր. եկեղեցուց դուրս գալուց հետո՝ մանր դրամներ էին ցրվում: Գյուղերում, հարկավ, փող ցրվելը շատ չէր պատահում: Բայց փողի փոխանակ չամիչ, մրգեղեն կամ ցորեն և այլն տեղալը շատ սովորական էր⁴: Հարսանքի ժամանակ փող ցրվելու նույն սովորութիւնը գտնում ենք և Շահնամի մեջ⁵:

³ «Վէպ» հեռի Հայաստ.», էր. 111, ծան.

⁴ Գուեղին ս. Հովոնիսի, Փշրանքեր, էր. 81:

⁵ Heldensage v. Firdual, v. Schack, էր. 218:

Ալանդական Երզր ալանների արշավանքի պատմական Հիշողութիւնը պահել է՝ միացրած ալանների արքայորդու գերութիւնը և Սաթն-նիկի հարսնախոսուցիւն միջագնացների հետ: Վերջին երկուսը կարող են և պատմական իրողութիւն վրա հիմնված լինել, և լուր ստեղծագործական երևակայութիւն ծնունդ: Պատմական է ալանների պատերազմը, իսկ պատերազմների մեջ գերի բռնվելը շատ սովորական, — և մնացածը լուր կիեցողական գծեր են, որոնք ամեն վեպերի մեջ էլ կարող են մտնել և մտնում են: Տեսնենք դրանցից մեկը.

«Ոսկէօղ, շիկափոկ պարանը: Պարանի գործածութիւնը շատ հրեւոց է: «Պարանը մարտիկ ցեղերի մեջ միշտ ծառայել է կենդանի որս — գազաններ և մարդիկ բռնելու համար: Գեռ Հերոդոտը (VIII, 85) հիշում է պարան իբրև իրանացոց զենք: Ինչպես Յովսէփոսի Պատմութիւնից տեսանք, մեր թ. I դարում հայերի հետ կռիւղ ալանները պարան իբրև զենք գործ են անում հայոց թագաւոր Պարթև Տրդատի դեմ:

Մի անգամ, որ պարանը կարևոր զենքերից մեկն է եղել այն ժամանակաշրջանում, որի պատմական դեպքերից ի միջի այլոց հենց ալանների այդ արշավանքը իբրև նյութ է ծառայել Վիպասանքի համար, քնակաւարար այդ զենքը կարող էր և հայոց Վիպասանքի մեջ մտնել, ինչպես և Շահնամի մեջ սիրելի զենք է դա: Նույնիսկ միևնույն այժմ էլ մեր Մասնա Մոսկովա մեջ ևս տեսնում ենք պարանը: Ուստանա իշխանը սկսապ իթալ, զՄհեր կապից: Մհեր ձիով ինկալ կապա՞:

Արտաշես թագաւորը պարանով բռնում, սխալեցնում է իր հարսնացու աղջկան:

Թե նախնական ազգերի մեջ կանայք որսի առարկա են եղել և հատկապես արշավանքներ են գործվել բռնի կերպով կին ձեռք բերելու համար՝ այդ հարածանոթ է: Գա հեռավոր հնութիւն վայրենի կենցաղական գծերից մեկն է, որի հետքերը մինչև այժմ դեռ երևում են ոչ միայն մեր հարսնանկան և ուրիշ երգերի մեջ: «Ջիրիկա էնեմ, վերեղ կ'իգամ էլ զարովա՞: Այսպես և դեռ լսում ենք.

Փեսան կու դա սուրով, զարով,

Մարդը շատ է՝ կ'առնեն զոռով՞:

Կամ հարս տանելու ժամանակ.

Աղոթը շողեն կոարտեցին,

Քրոջ վալեն պատուեցին՞:

Հարսի հափշտակութիւնը կամ առնանգումը, հայտնի է, դուրս է գալիս շատ ազգերի վեպերի մեջ՝ սկսած Հոմերոսից մինչև մեր ժամա-

1 Գաեղին ո. Հովսէփոս, Սասնա Մոսկ, էր. 149, Հժժո. էր. 47:

2 Մովսէս Կաթողիկոս, Հոմար-Հոմար, էր. 828. Որոտ երգից:

3 «Տեսար հայկական», էր. 171:

4 Լալալան, Քալալալ բուրմունք, էր. 27:

նակի երգերը: Ռուսաց Վլադիմիրն իր դիցազն Գունային ուղարկելով հարս բերելու, տալիս է նրան զինվորներ ու շատ ոսկի և ասում է. «Գնա այն քաղ լիթվացոց աշխարհը և բարի խոսքերով աղջիկ ուզիր. բայց թե որ խաթրով լտան, կանգնիր, զորով առա:

Ոսկին գլխագինի (բաշլղ) համար է, իսկ զորքը՝ աղջիկը կռվով առնելու համար: «Ո՛ւմ հայտնի չնե հնագույն ժամանակների աղջիկ ուզելու այս երկու եղանակը: Թեպետ և գլխագինը մի փոքր ավելի ուշ է երևան եկել, բայց երկու եղանակն էլ երկար ժամանակ շարունակ միասին գոյություն են ունեցել, և ինչպես ռուսաց մեպերից երևում է գործ են դրվել մերթ մեկ եղանակը, մերթ մյուսը»¹⁰:

Շահնամիի մեջ Սոհրաբը գալիս պաշարում է Սպիդ բերդը, որի պահապանն էր Հեշիրը՝ մի քաջ մարդ, ուժեղ, կտրիճ, Այստեղ էր և Գեստեհեմը, որ Հեշիրից հետո քերդի հրամանատարն է դառնում: Սա մի քույր ունեւր Գուրգաֆրիդ անունով, լլամվ ձիավոր մի աղջիկ, անվանի քաջ մարտիկ: Սոհրաբը կռվի մեջ զեղի է քննում Հեշիրին: Այդ որ լսում է սպարան ցցողա Գուրգաֆրիդը, իսկույն կռվի դաշտն է իջնում մարզանակ հագած ու կապած. բայց Սոհրաբից հաղթահարված հետ է դառնում: Սոհրաբն ընկնում է ետեից: Այդ ժամանակ Գուրգաֆրիդը բաց է թողնում գիսակները. Սոհրաբը տեսնելով որ նա կին է,

Շուտ թամբից հանեց նա գալարած իր պարան,
Գցեց, ընկավ փուկը մեջքին և նա րուհեց աղլկան:
Ծրք աղջիկը պարանի մեջ տեսավ իրեն պարփակած,
Որքան արեց միջից դուրս գալ, նա ազատվել չկարաց.
— Ի՞մ ձեռիցը շեռ ազատվիլ, ասաց Սոհրաբն իր գերուն...
Ի՞մ ցանցիս մեջ շեկավ ընկավ դեռ ևս մի որս քեզ նման:

Աղջիկը ճարը կտրած ասում է.

— Ով դու քաղերի մեջ արի առյուծ քո գործով...
Եկ մենք ու մենք մեր մեջ հաշտվենք, դա ավելի լավ խել է:

Սոհրաբը տեսնելով նրա գեղեցկությունը՝ սիրահարվում է նրան և քաց թողնում: Աղջիկը մտնում է քերդը և պարսպի վրայից հորդորում է սղային ետ դառնալ կռվի դաշտից: Իսկ Սոհրաբը սիրահարված ցամաքում է.

Կարծես այդիս դարմանալի մի զարկ դարավ, մուրացածով,
Որ այնպիսի շքնավ որսը ի՞մ ձեռիցը դուրս պրծավ,
Այն ինչ սիրուն եղնիկ եկավ ընկավ պարանս իր ոտով,
Ի՞մ պարանի կապից փրկվեց և ինձ կապեց իր կապով¹¹:

¹⁰ Օր. Миллер, Илья Муромец и богатырь киевское, стр. 226:

¹¹ Զրդուի, Ռոստամ և Սոհրաբ, թրգմ. Ս. Գյուլզադանց, եր. 64, հան.

Առհրարի և Գորգաֆրիդի այս միջագեպը շատ նման է Արտաշեսի և Սաթենիկի միջագեպին: Ավանդական վեպն է որ շատ ազգերի մեջ այսպիսի նման դժեր, մտտիվեթեր է պարտնակում իր մեջ, շատ անգամ այնքան նման, որ նույնության են հասնում: Եվ շատ բնական է այդ Գրանք զնդհանուր կենցաղական զժեր են միայն:

Այս ճյուղի վերջում ապաված է եղել և Մուսուրը զարմիցնա: Բայց հորենացին այսքան է միայն մեջ բերում, թե Սաթենիկն առաջին եղևալի կանանց Արտաշեսի, ծնանի նմա զԱրտաազգ և զայլս բազումս, զորս ոչ կարևոր համարեցաք այժմ անուամբ թուելա: Արտաշեսի որդիներն են, բայցի Արտավազգից նաև՝ Վրոյր, Մաժան, Տիրան, Զարեհ, այլ և Տիգրան:

69. Վիշապագների պատերազմը:— Այս պատերազմի բովանդակությունն աղոծն բերված է վերևում: Այս ընդհանուր տարածված առասպելը, դառնալով Վիպասանքի մի մաս, բնականաբար հարմարվել է դրա նյութին, որ է հայերի և մարերի, ըստ առասպելին՝ վիշապների կռիվը: Արգավանն ուզում է դավել Արտաշեսին և հետևանքը լինում է սմարտը նրա նստ, և քայքայումն յիշխանութենէն և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցնա:

Դժվար է բան ասել այս ճյուղի արվեստի մասին, քանի որ ամբողջությունը չունենք, բայց երեսմ է, որ այստեղ պատկերացված է եղել իշխանների զավթագրութունն ու տպտամբությունը ինչպիսիքի դժմ և դրա հետևանքով նրանց բնաշնչումն:

Մյուս կողմից՝ դրա հետ միացած է եղել և ընտանեկան խարդավանքը՝ սորփանք Սաթենիկան ընդ վիշապագունանա:

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս,
Զարտախուր խաւարտ և զտից խաւարծի
Ի քարկիցն Արգաւանայ:

Սաթենիկ տիկինը տենչում է Արգամի քարձերից ունենալ հմայքի— բժժանքի բույսերը՝ արտախուր, խավարտ և խավարծի փունջ (տից, տըցակ) ըստ հմայական հավատալիքի, որով մեկին սիրահարեցնելու համար նրա քարձերի, զգեստի մեջ կարում էին բժժանքներ և հետո առնում:

70. Գորգաուրիւն ընդ Սմբատայ գարմիցն Արտաշեսի և ընդ միմեացն:— Այս ճյուղի պատմութեան տկավում է Սմբատի գովքով և թագավորների դժմ ապտամբություններով: Սմբատը զորքով գնում է նախ այնտեղից երկիրը՝ Սաթենիկի եղբորն օգնելու ապստամբների դժմ և այնտեղից գերիներ է բերում, բնակեցնում Արտաշես: Հետո նա գնում է Գեղմանց լեռան և Սոփեղբոնայքի կողմերը, պարսից թագավորին շնթարկվողներին հնազանդեցնում է, ինչպես և զսպում է հայոց թագափորից ապստամբած կուսպիթին ու շատ գերիներ բերում: Եվսան որոշ

արժանի բառ վառաստակոցն պարզով եմք Արտաշէս զմասն արքունի, որ ի շէն Գողթան, և զմիզառու ակունքն, և առ այսօրոց՝ և զուտըն ամենայն նմա թագաւս Ամբաստն, սրբմեծ, փառազորովում է և իր գերիշխանից կառավարեմնով վարձատրով...? իր Հազմաաւարիմ սառայութիւնները համարւ շեռանցքը լինում է այն, որ քրաջ, անձնահաճ և հարարտա Արտավազդը նախանձում է Սմբատի ստացած պարզեակահան-ի վրա և ուզում է սպանել նրան: Սմբատը թողնելով զորքի իշխանութիւնը՝ քաշվում է Տճորիք, և Արտավազդը դառնում է ընդհանուր զորավար:

Այժմ էլ նրան եղբայրներն են նախանձում թի գրգռութենէ կանանց իրենանց: Այդ ժամանակ ակարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հազարայ ի նա զամենայն զործատանն արքունի, և զՄածան կարգէ քրմապետ ի յԱնի քիցն Արամազդայ: Նա զորքի իշխանութիւնը շորսի է բաժանում. արեւլյանը թողնում է Արտավազդին, արեւմտյանը տալիս է Տիրանին, հյուսիսայինը Զարեհին, իսկ հարավայինը հազմատում է Սմբատին: Ապա պատմվում են նախ վրաց արքայի, հետո Գոմեսիանոսի դեմ պատերազմները, որոնց մեջ մեծ հաջողութիւն է ունենում զարծյալ Սմբատը: Եվ վերջապես, Մածանը մատնութիւն է անում Արտավազդի ու Տիրանի մասին՝ իր դայակ Արժատի համար քեն պահած լինելով նրանց դեմ՝ և սպանվում է նրանց ձեռքով:

Այս էջուղին է պատկանում նաև Տիրանի ձիերի մասին պատմվածքը (Բ. կր.), փնչդես և նշքս փիսա Տրդատ Բագրատունու զրույցը (Բ. կգ.):

Պարզ երևում է, որ վրայասանը նպատակ է ունեցել այս էջուղով մի կողմից՝ փառավորել Սմբատին, մյուս կողմից՝ պատկերացնել թագավորական ընտանիքի անդամների մեջ տեղի ունեցող նախանձու գրգռութիւնը, որ արեւլյան հին իշխողների մեջ հաճախ արյունահեղ վախճան է ունեցել:

71. Արտաշէսի մահն ու անեծքն Արտավազդին:—Այս վերջին էջուղի թեման է հոր և որդու հարաբերութիւնը և հոր անեծքի զորութիւնը: Գրա համար նախ պատմվում է Արտաշէսի զինարարութիւնը (Բ. ժգ. ժթ.), որով նա սիրելի է դառնում աշխարհին, և ապա նրա հիվանդանալը, մահն ու փառավոր թաղումը (Բ. կա.): Հոր այս փառքին էլ նախանձել է Արտավազդը, դժվարացել է և տանել է հորը:

Մինչ դու գնացեր,

Եւ դերկիրս ամենայն ընդ քեզ տարար,

Ես ասեցաւկացս տ'ամ թագավորեմ:

Այդ պատճառով հայրն անիծել է նրան ստեղծով.

Եթէ դու յոյս հեծցիս

յԱզատն ի վեր ի Մահս,

Ջրեզ կալցին քաղք, տարցիկ
յնզատն ի վեր ի Մասիս.
Անդ կացցես և զլոյս մի տեսցես:

Եվ անեհքը կատարում է: Այս նյութը, ինչպես երևում է կազմած է հզել մի դեղեցիկ ամբողջություն, որ, սակայն, ետքնացին պատմել է կցկտուր և ոչ ամբողջն ավանդական գուշնով:

Վիպասանքն ևս, ինչպես թմանա Սոսրոս Մհերի համար, ունեցել է իր վերջարանն Արտավազդի մասին: Երուցեն զաման է և պատասանք, եթէ արգելեալ վայ յայլի մկում կայեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ շունայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կոանահարութեան զտրքնաց զօրանան, ասեն, կայանքն...:

72. Վիպասանքի գաղափարական հերոսները:— Թեպետև չենագիրը շունենք, բայց և այնպես վեպի բովանդակությունից բազմական պայծառ հասկացութիւն ենք ասանում վեպի մեջ արծարեված խնդիրների մասին: Բանաստեղծները ձգտել են ասուշ բերել իրականութեան ստիպացրած պատկերները, որ, հարկավ, Պատմագիրն էլ իր կողմից ավելի մը շակել է:

Վեպի մեջ ամենից առաջ աչքի են ընկնում թագավորների ու զորավարի գաղափարական տիպերն ի դեմս Տիգրանի, Արտաշեսի և Երվանդի ու Ամրտաի: Թե այդ նկարագիրներն իսկապես երգիչներին են, այդ պարզվում է Երվանդյան Տիգրանի վիպական դեմքից, որ հակառակ ետրեացու, վեպագրելու է իրապես Մծծն Տիգրանին: Այստեղ տեսնում ենք, թե ինչպես վիպասանները զովել են իրենց թագավորներին և ստեղծել են կատարելատիպեր:

Հակառակ ցրիտոտենական ճգնավորական ոգուն, որով մարմինը ոչինչ էր համարվում մեր առասպելների և Վիպասանքի մեջ, նույնիսկ հին քրիստոսյա պատմագրի բերած բովանդակութեամբ տեսնում ենք, որ ամենից առաջ առանձին ուշագրութեան է դարձրած դիցազների ֆիզիկական առաջինություններին, նրանց մարմնին և նույնիսկ զարդարանքներին: Հերոսներն ընդհանրապես ժամված են արտաքին գեղեցկութեամբ և սուտով, հաջողակ և արագ շարժումներով: Տիգրանն փր մարմնով մի սքանչելի դիցազն է, սխարտեալ և աղերակ ծայրի հերաց... երեսօք գունեան և մեղուարն, անձնեայ և փիկնաւտ, առողարար և գեղեցկառն, քաջահասակ, ամենեւին բոլոր անդամովք համեմատ և ի դեղեցկութիւն աւարտեալ հասակի, առոյգ, ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ և ուժով ոչ զքոս ունելով իւր զոյգս: Մի խոսքով, նա շնասակա և բնութեամբ կատարեալ դիցազն է, որ շնիգակա օրինակ իմն որպէս զլուր հերծեալ զերկաթի ամուր հանդերձն:

Ածղահանգի երազի մեջ Տիպրանին ծնող կիսն է բծիրանազգեստ, երկ-
նագոյն ունեւոյ՛ դիրքեա տեռ, աշեղ, բարձրահասակ և կարմրայտա: Տիգ-
րանուհին է գեղեցիկն ի կանայս, սխորազէտ գեղեցիկն:

Տիգրանին շրջապատողներն ևս գեղեցիկ են, և իրենց պատմական-
զգեստներով ու զարդարանքներով սուգեղագոյնքն իրեն զգեղատար երե-
ւէին սքանչելիք, և գեղատրքն առհասարակ դիցազնացեալքա:

Մարմնի այս արժեքը երեսն է դաւիտ ալիւլի կամ պակաս լափով
նաև ուրիշ հերոսների վրա: Երմանդն է քորտեայ և անդամովք յաղթա-
նրա մայրն ևս ասնձամք հարստի և խոշորագեղ՝ է: Սմբատն ասյր
քաջ է, Եունէր հասակ անգամոց՝ համեմատ քաջութեան... գեղեցկու-
թեան ալեօք վայելչացնալ... ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՛ զգոյշ
յամենայնի, և տուշութիւն յաչողութոց ունէր ի մարտս առանել քան
զամենայն օքս:

Աթն առասպելներին դիմենք, այստեղ վշ շայլը ներկայանում է որ-
պես մի հաղթանգամ մարմնով վիթխարի հսկա, բայց ոչ անհեղեմ, ինչ-
պես ուրիշները, այլ բզեղապատշաճ և անձնեայ, քաջազանգուր, խայ-
տակն և հաստաբազուկ, կորովածիզ և հաստաղեղնա և արագաշարժ մեծ-
զիցազն (ամեծոք ի դիցազանքս): Երա մարդիկն ևս սկրտովիք էին յա-
ղեղն և ի սուսերա: Արան գեղեցիկ է, այնպես որ այս մակդիրն ան-
բաժան է նրա անունից, բայց միանգամայն և քաջամարտիկ է: Ան-
գեղյա Տուրքը սրտայ է, վիթխարի հասակով և ուժով, պղոպառի նման
պինդ մարմնով: Երա սգեղութիւնն, ինչպես տեսանք, ասնգեղեայա քա-
ռի սխալ բացատրութիւն հետեանքով է ծագած: Առնական ուժի և գե-
ղեցկութեան նուրն դազափարն ձնք տեսնում նաև խաբոյաշ պատանալու:
Քաջն Վահագնի մեջ իր հրեղեն մզերով և արեգակնափայլ ալքերով:

Հերոսները մարմնի գեղեցկութեան և ուժի հետ ունին նաև հոգեկան-
ուժ ու գեղեցկութիւն: Նրանք արի ու քաջ են, հաղթող, իմաստուն, ըզ-
գաստ ու պերճախոս, թագավորները նաև արդարադատ ու շինարար:
Արիութիւն տւ քաջութիւն, իմաստութիւն ու զգաստութիւն և պերճա-
խոսութիւն, թագավորի համար նաև արդարադատութիւն—ահա առա-
քինութեան այնպիսի մի ըմբռնում, որ շատ մոտենում է հին հունական
վիպական ըմբռնումին:

Չուցն կարելի լիներ նույնիսկ կարծել, թե պատմագիրը կամ իր-
գրավոր աղբյուրը (որ ունեցել է Տիգրանի համար) քերթողաբար դար-
գացրել է այս հատկութիւնները, հետեւելով հունական հոնորութեանը:
Մասամբ ընդունելով հանդերձ այդ, պետք է ասել, սակայն, որ այդ
հատկութիւնների վիպականութեանը հաստատում է մեր գիցաբանու-
թեամբ, որ մեզ հայտնի է ուրիշ աղբյուրներից: Կարելի չէ ենթադրել-
թե այս վերջինների քրիստոնէյա հեղինակներն աչդ հատկութիւնները
վերաւած լինեն աստվածների, քանի որ նրանք աստվածների այդ
հատկութիւնները մեջ են բերում հենց այն ժամանակ, երբ աստվածնե-
րի վատ ու սնտոի լինելն են ուզում ցույց տալ:

Ագաթանգեղոսի մեջ, վիրապագազ աստուծու մականքին է քաջն (Քաջն Վահագն), որից քաջութիւնն էին հայցում: Եւրոպայումն է մեծ-նամեծ աստուծու, աստվածների հայր և երկնքի ու երկրի ստեղծող Արամազդի հատկանիշը. Եւրոպայի մակդիրն է նրա անվան կից է՝ Եւրոպն Արամազդը: Նրա արութիւնն իր գործունեութեան նպատակ ունի հասարակաց բարօրութիւնը, երկրի շինութիւնը: Արի Արամազդն իր արութիւնը լիութիւնն ու պարարտութիւնն է շնորհում աշխարհին: Այսպէս և վեպի մեջ Երզնկէն է, թէ Տիգրանն իր արութիւնը հարստացրել է երկիրը. Եւրոպանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացուց... միմեքս տակոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեատուց և պէսպէս գունդից և անկուածոց... Գաղմացոյցն (Ա. Վր.)։ Եվ դրա հետևանքն ան է լինում, որ աշխարհը շնն է մնում, սեպագողութեան և շինութեան բերող իւրով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալս:— ասում է Երզնկէն, դրանով արտահայտելով նաև իր խաղաղասեր ու շինարար ոգին: Նույն շինարարութիւնը տեսնում ենք նաև Երվանդի, Արտաշեսի ու Սանատրուպի, այլ և Հայկի ու Շամիրամի համար, որոնք քաղաքներ կամ դաստակերտներ ու ավաններ ան հիմնում, անտաններ տնկում, ինչպէս Նույնն անում են և մեր նոր վեպի մեջ, Արտաշեսը երկիրը քաղմամարդացնում է սեկանտոս բազումս ածելով ազգս և քակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Նա հոգ է տանում երկրագործութեան և արվեստների համար, Եւրոպի՝ ի ժամանակս Արտաշեսի ալ զգտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային, յազգս շինութեան երկիրս:— Եւրոպայումն ամենամեծ զովհատը, որ տրվում է մի թագավորի:

Արութիւնն ու քաջութիւնն հետ հավասար շնշտվում է և զգաստութիւնն ու խոհմութիւնը: Այդ գիծն ևս վիպական պետք է համարել: Մերքի Անահիտ դիցուհին, ինչպէս V դարի քրիստոնյա մատենագրից իմանում ենք, համարվել է սմայր ամենայն զգաստութեանց, բարձրար ամենայն մարդկային բնութեանս, Երզնկէն և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոցս, Եւրոպ է վառք ազգիս մերոյ և կեցուցիչս: Նրանից խնամակալութիւնն են խնդրել աշխարհի համար: Ուստի բնական է, որ մեր վեպի մեջ Տիգրանը ներկայանար Եւրոպային ի կերակուրս և լրմպելիս և ի խրատմանութիւն օրինաւորս: Ավելացրեք վրան և այլն, որ արդարադատ և հավասար աչքով է նայում նա ամենքին. Եւրոպ ընդ լաւագոյնս խանգար, և ոչ զնուստան արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զզգեստս:

Ահա գուսանների գաղափարականացումը: Վիպական Տիգրանը ոչ լավագոյնների, այլ ինքն ինքն բարձր դասի ազնվականներին է նախահանել, և ոչ նախատեսներին, ցածր դասի խեղճ ուսմաններին արհամարհել, այլ ամենքին խնամել է:

Այս հատվածը միակն է, որի մեջ հիշվում են Եւրոպայի բոլոր, ինչպէս կոչվել են մեղնում տառապեալ դասի մարդկիւր: Զնուստների մի

խմբի մեջ այդ պէնտամատան քառի փոխանակ է զգտորակուն: Հիշ-
վում են և ուրիշ երկուքը հասարակ դասից՝ Արտաշեսի ստեղծուի որդի-
Գիսակը և Երվանդի քրնտանիք Տուրքը: Գիսակը մարտի մեջ իրեն զո-
հելով՝ մահից ազատում է Արտաշեսին. իսկ Տուրքը Երվանդի տնից քը-
սություն է անում Սմբատին, որի համար և սպանվում է ինքը: Արտա-
շեսն այդ երկուսի զարմեհիւն էլ ազնվական է դարձնում, սեփուլ ազգ-
կոչում է Գիմարսյան և Տրունի:

78. ՈՃՈ ՈՒ ՌՄԱՆԱՎՈՐՐԸ:— Մեք առաջին հին վիպական քանաստեղ-
ծության ձևի մասին գաղափար ենք կազմում այն փոքրիկ հատվածնե-
րից, որոնք ըստ երևույթին բառացի են մեքքերված: Վահագնի երգը խո-
րիկ հետաքրքիր է դալիս և, թեպետ ուշ մամանակում գրի առնված, ու-
միայն իր բովանդակութիւնով, այլև ձևով կրում է նախնական բանաս-
տեղծութիւնի դրոշմը: Բանաստեղծը Վիշապաքաղի ծնունդը նկարագրում
է դանդաղ, առանց շտապելու նա նյութը զարգացնել ըզիտե. զարգաց-
ման տեղը բռնում են պարզապես կրկնութիւնները, որ առանց ձանձ-
բալի լինելու վախի՝ անում է նա: Բայց արգեն երևում է որոշ արվեստ-
Բանաստեղծը գիտե գեղեցիկ մակդիրները գործածութիւնը, ինչպես՝
Սոսն ծիրանի, որ մինչև մեր օրերն էլ գտնում ենք հետաքրքիր եկող
մի ժողովրդական աղոթքի մեջ սերկիւնքն ծով ծիրանիք. կարմրիկ եղեց-
նիկ, խառնեալ պատանեկիկ, հուր հեր, բոց մորուս: Ապա՝ բանաստեղ-
ծը գիտե մի ուրիշ եղան ևս. նա, ինչպես հատուկ է մեր ժողովրդական
երգին, բանեցնում է նվազական-փաղաքշական բառեր, օրինակ՝ կարմը-
րիկ, եղեցնիկ, պատանեկիկ, աշկուք (աշիկներ): Նա գործ է ածում
հանգիստութիւն, որ հատուկ է ժողովրդական երգին, օրինակ՝ երկնէր-
երկին, երկնէր երկիր Սոսն ծիրանի, հուր հեր, աշկուք-արեգակունք: Եվ
վերջապես այստեղ կրկնութիւնների մեջ գտնում ենք զուգահեռականու-
թիւն ասածը, օրինակ՝

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի:

Այսպես նաև հետևյալը.

Ընդ եղեգան փող ծոփս ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր:

Այսպես դարձյալ հետևյալը.

Նա հուր հեր անէր,
Բոց ունէր մորուս:

Այս միևնույն արվեստն երևում է և Արտաշեսի վեպից ըստ երևույ-
թին բառացի բերված հատվածների մեջ: Օրինակ՝ մակդիրներ, որոնց
գործածութիւնը բոլոր սկզբնական բանաստեղծութիւնների եղանակներից
մեկն է. այդ էալ, (Արտաշես) քաղ ազգին (Ալանաց) աշագնդոյ զըս-
տերս (Ալանաց), ազգաց քաղաց, քաղն Արտաշէս, քաղազայ կոյս օրի-

որդիս, արի արքայն, Սեան զեղեցիկ, սակեօղ շիկափոկ պարան, արծուի սեաթև, փափուկ օրիսորդ, տեղ սակի: Զուգահեռականութիւնները՝

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն:

Կամ հետևյալը՝

Տեղ ոսկի տեղայր ի փնայութեան Արտաշիսի,

Տեղայր մարգարիտ ի հարսնուգթեան Սաթենկանն:

Եթէ դու յորս հեծցիս

ՅԱզատն ի վեր ի Մասիս

Զքեզ կալցիին քաջք, տարցին

ՅԱզատն ի վեր ի Մասիս:

Բացի այդ՝ վիպասանը գիտե՞նք Սաթենկին փախցնելու պատմվածքի մեջ խոսքին տալ բովանդակութեան պահանջած ձևը—կտրուկ արագութեամբ ու լարվածութեամբ, որ առաջանում է խոսքերը դիմադրելի կազմելուց:

Թեպետև բառացի համարված հատվածիկների՝ բնագրի ճշտության համար ապահով չենք, քայքայ և այնպես հնարավոր է լինում որոշել մեր հին վեպի մեջ գործածված շարժը: Կատարյալ երաժշտականություն չունեն այդ երգերը, բայց ունեն որոշ ուրթմ: Այդտեղ գտնում ենք արձակի շատ մոտիկ ազատ ոտանավորի մի ձևը, պարզատեսյա խառն ոտանավորը, որ հասուկ է մեր մի շարք հին հոգևոր երգերին և մի քանի ժողովրդական վիպական երգերին, ինչպես և «Սասնա Մոծերին»¹², վերջինիս թե՛ երգված և թե՛ պատմված մասերի մեջ: Տողերի մեջ վանկերի թվի նույնություն անհրաժեշտ չէ: Բայց վահագնի երգի մեջ առանձնապես գտնում ենք տողերի տաղ չափակցություն, Վնչպես չինում է քարդատեսյա խառն ոտանավորների մեջ: Առաջին երկու տողերը, որոնք իրար զուգահեռական են, կշռվում են 5-րդ և 6-րդ տողերի հետ, որոնք նույնպես իրար զուգահեռական են: Իսկ 3-րդ ու 4-րդ տողերը, որոնք մի ամբողջություն են կազմում, կշռվում են 7-րդ և 8-րդ տողերի հետ, որոնք նույնպես մի ամբողջություն են կազմում: Վերջիններ տողի ասպա թէ՛ քառերը երգելը չեն, որով իրար հանդիպալրվում են համակշիռ կերպով՝ հետևյալ երկու տողերը.

Նա հուր հեր ունէր,

Բոց ունէր մորուս:

Եվ վերջապես վերջին տողն իր ներքին հանգով կազմում է մի առանձին միութիւն.

Եւ աչկունքն էին արեգակունք:

Մյուս կտորները, հարկավ, այսպիսի հորինվածք չունեն ու լոկալարզոտնյա խառն ոտանավորներ են տողերի ազատ դասավորությամբ:

¹² Մ. Աբելյան, Հայոց լեզվի ասղալագություն, Երևան, 1923, նր. 365—377:

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

«ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

Ա

ԵՐԿՐՈՐԴ ՀԻՆ ՎԵՊԻ ԱՂՅՏՈՒՐՆԵՐԸ

74. «Պարսից պատերազմը»։— Հին Հայ ժողովրդական վեպ անվան տակ սովորաբար հայտնի է Մ. Խորենացու Հայոց պատմութիւն մեջ հին ժամանակի հերոսների մասին գրվածքը։ Այդ, ինչպէս տեսանք, իսկապէս առասպելներ են և առասպելախառն վեպ, որի մեջ պատմական հիշողութիւնները հասնում են մինչև մ. թ. II դարը։ Սակայն մի ժողովուրդ, որ գիտեր երգել ու պատմել Երվանդի ու Արտաշեսների, Տիգրանի ու Արտավազդի մասին, նա քնականաբար, անտարբեր չէր կարող մնալ դեպի պատմական ուղիչ նշանավոր անձերն ու դեպքերը, որ I դարից հետո են եղել։ Վիպասանների հետաքրքրութունը պատմական կյանքով և նրանց ստեղծագործական շնորհակալութիւնը լպիտի ապացիւն II և Հայոց դարերում։

Եվ իրոք, հին առասպելներից ու վիպասանքից զատ, որ կան Խորենացու Հայոց պատմութիւն մեջ, նյութով նրանցից հետո, դայց նրանց հետ միամտամանակ ասված ունենք մեր մի ուրիշ հին վեպը կամ վիպասանութիւնը III ու IV դարերի՝ պատմութիւն մասին։ Դա «Պարսից պատերազմն» է։

Այսպէս կոչում ենք մեր երկրորդ հին վեպը, որովհետև դրա մեջ քանաստեղծորեն պատմված է եղել այն մեծ պատերազմը, որ դարեր շարունակ տվել են Հայերը Սասանյան պարսիկների դէմ։ Դա եղել է մի ընդհանուր ավանդական վեպ, որի մեջ իրենց տեղն են ունեցել զլխավորապէս Տարսնի և Սասունի տեր Մամիկոնյանները, որոնք սպարապետ և արքայորդիների դայակ են եղել։ Նրանց մատը խառն է գրեթէ ամեն րանի մեջ, և վեպի պատմութիւնները հաճախ նրանց քարհրացնելու և

նրանց պարծանքի համար են հորինված, այնպես որ այս վեպը դառնում է և Մամիկոնյանների վեպ:

76. Աղբյուրները:— Այդ վեպի հաստատվածները մնում են Ազաթանգեղոսի, Քուչանզի, Խորհնացու, Սերնոսի պատմութիւնների մեջ, այլ և Հովհան Մամիկոնյանի (հետք և Զենոբ Գլակ վերջրած), Մովսէս Կահանկատպացու և Ստեփանոս Օրրեւյանի գրքերի մեջ:

Ազաթանգեղոսի սկզբի մասի պատմութիւնը Ղ. Տաշյանը համեմատելով օտար աղբյուրների հաղորդածների հետ՝ նույն եղութակցութիւնն է գտնիս, ինչ որ Գուլշմիդը, որ քաջակերպեալ պատմութիւնն է անվանում այդ մասը: Այդ պատմվածքները ճիշտ պատմական են, բայց և մթին և հարեանցի. շատ դեպքեր ի մի ձուլված. միով փանիով՝ պատմութիւն, բայց ոչ ակնատեսի և ոչ ժամանակակցի, այլ ի լրս պատմագրող հեղինակի: Լեոտ կտեսնենք, քնն ինչ պատմական անհերի և դեպքերի հիշողութիւններ են մնացած Ազաթանգեղոսի առաջին մասի մեջ, ինչ դեպքեր են այստեղ ի մի ձուլված: Այստեղ ասենք այն, որ այդ գլուխը միայն ժողովրդական վեպ և գրույց կարող էր լինել: Ժողովրդական վեպը կամ գրույցը միայն կարող էր այնքան և այնպես քաջակերպեալ ձևով պահել իր մեջ պատմական հիշողութիւններ 225—160 տարի առաջ կատարված դեպքերի մասին, քանի որ Ազաթանգեղոսի պատմած դեպքերն ընկնում են 225 թվից մինչև III դարի վերջին երկու տասնամյակը, իսկ Ազաթանգեղոսը V դարու կեսերին է գրված, համեմայն դեպս ոչ առաջ քան նույն դարի առաջին քառորդը:

Անշուտ Ազաթանգեղոսը, ինչպես և Քուչանզն ու մյուսները, կօզուվ են և ուրիշ աղբյուրներից: Նա ավանդական վեպից օգտվելիս, ինչպես ազատ վր վեպի մասերը ցրվելու պատմութիւն մեջ այս ու այն տեղերում, նույնպես և պատմութիւն մեջ պիտի շտններ այնպիսի մանրամասնութիւններ, որ նրա աչքին պատմական շէին, — ինչպես են՝ առասպելական հատվածներ, եթէ կային, ընտանեկան հարաբերութիւններ, ամուսնութիւն, խնջույց. — այլ միայն պատերազմները և քաջագործութիւնները պիտի վերցնեն, և այս ամենն իր շնորհով պիտի պատմեր: Բայց և այնպես վիպական հետքերը շատ տեղ պարզ երևում էին: Այսպես՝ Ազաթանգեղոսի մեջ վեպից են ծագում Խոսրովի պատմութիւնը, Տրդատի փախուստն ու քաջագործութիւնները և պարսիկների դեմ պատերազմները, այսինքն՝ Պատմագիրք հայոց հրատարակութիւնմը 18—48 հատված, միջից հանած 38-րդ հատվածը, որ Յր. Լուսավորչի մասին է, Վիպական է 123-րդ հատվածը, որ 48-րդի բնական շարունակութիւնն է. և վերջապես 181 և 202 հատվածների մեջ պատմածները Տրդատի քա-

1 Զարգրու Յայան, Ազաթանգեղոս առ Գլուխը Ազաթանգեղոսին և պատմական ուսումնասիրութիւն Ազաթանգեղոսի գրքը, Վիճէս, 1891, էր. 88, նույն անգամ, էջ 158. Հիշատակված է Գուլշմիդ, Agsib. էջ 60.

քաղաքաբնակիչ մասին², որոնց ընական տեղն ավելի առաջ է: Գրանց վրա պիտի ավելացնել նաև Ազաթանգեղոսի հուշարհն թարգմանութիւն սկզբի մասը՝ Արտավանի, Արտաղուպտի մասին, որ ավանդական վիպական մի պատմվածք է և հավատարմ վեպ է: Հնումը հայ Ազաթանգեղոսի մեջ, քանի որ հուշարհնը հայերենից է թարգմանված: Այդ հատվածը հայերեն ընկերքից պետք է կարծել, թե այն պատճառով է դուրս ձգված, որ հայտնապես վիպական ընկերութիւն ունի և որ գլխավորն է՝ Հայոց պատմութիւնը լի վերաբերում: Եվ վերջապես՝ ընամ անհավանական չէ կարծել, թե Հռիփսիմյանց վիպարանութիւն մեջ նա կա վիպական տարր, և երբեք էլ անտեղի չէ Գութիմիդի կարծիքը, թե սթազատունի Տրդատա և նազիսիկ հարճին վրա պատմվածք հիմն է Հռիփսիմյանց պատմութիւնը³:

70. Փ. Բուզանդ:— Բուզանդի աշակոյց պատմութիւն մեջ ամեն ընթացքով էլ, որ բնութամ է ավանդական պատմվածքի ոգին, միայն աշխատանքն վիպական ու և իրական միջոցներ: Լ. Գեղեցիկ և ավելի Ս. Մալխասյանի աշխատութիւններից հետո՝ այլևս կասկած չկա, որ այդ գրքի գլխավոր աղբյուրները եղել են ավանդական զրուցներ, վիպեր և նույնիսկ երգեր: Լինգերորդ դարի կեսերին, համեմայն դեպք ոչ վաղ քան նույն դարի առաջին քառորդին գրող մի հայ հեղինակ, ինչպիսին է Բուզանդը, հարկավ չէր շատ հիշողութիւններ ժողովել IV դարի քահանայապետների, թագավորների և զորավարների մասին, քայց ավելի շատ օգտվել է նա ավանդական վեպից ու երգերից և զրուցներով, որ այդ շրջանում նույն Բուզանդի վկայութիւնով, խնդրանքով տեսնենք, մեծ թեթևութիւնով և արագութիւնով կազմվում ու տարածվում էին:

² Այս հատվածները Տրդատի քաղաքաբնակիչ մասին՝ ուրիշներն ևս ավանդական զրուցներից քաղած են համարում: Այսպես Տաշանը, Ազաթանգեղոս, եր. 182 գրում է. «Այս և նման նկարագրութիւնը կը ցուցնեն արդեն, թե ինչ մեծածն զրուցներ կազմված էին անկի մը վրա, որ իբրև ճշմարիտ դիւցազն կը ներկայանա ընթերցողաց: Գութիմիդ ավելի հառաչանալով՝ կը համարի, թե այս ամենայն ոչ այլ ինչ են, քայց հայոց դիւցաբանական մեկ տեղին վրա պատմվածքները փոխված և զատական անկի մը վրա անված... Այնչափ մեծ և վսեմ նկարագրութիւն կը գտնենք իր վրա, որ տեղում հայ վիպասանները կը հիշենք,— և նշուշտ հետի լնք ճշմարտութենն, երբ հաստատենք, թե Ազաթանգեղոս այս կտորները (հարկավ ոչ բառ առ բառ) քաղած է հայ վիպասաններն, որոնց երգերը կը կազմեն տեսակ մը հայկական Եմենամն: Կարծենք թե Ազաթանգեղոս քայահայտ ալ նույնը կը խոստովանի, վասն զի կը գրե. «վասն այսորին պատշանցան քանքո այս ի բուն կտորի տունից, թէ իբրև գեղեցի Տրդատ»: Կարծենք թե հոս սխալ կարգի առականք առութիւնը կը նշանակն այն երգերը, զոր մեք նախերջ Լան սխալ տուողելիս, սկստապելս, «վիպասանաց երգը», «վիպասանութիւնս և այլ տեղանկոյութիւնը կը նշանակեն»:

³ Մուլան, քր. 187:

⁴ Լ. Գեղեցիկ, Փ. Բուզանդ, թարգմ. Թորոսյան, Վենետիկ, 1868, եր. 34—36, 38 և այլն: Ստ. Մալխասյան, Աստուծանախքութիւն Փ. Բուզանդի պատմութիւն, Վենետիկ, 1895:

Քացր այդ՝ նրա գրքից պարզ նրևում է, որ ինքը Քուզանցն էլ այդ գրքի հեղինակը, օժտված է հզել վիպասանական շնորհքով, հզել է իսկապես մի վիպասան, որ սովորած է հզել շատ գրույցներ և իմացել է բերանացի վիպել շատ պատումներ սՊարսից պատերազմից (ինչպես մի նախո Քեռի կամ Մոկացի Հովան պատմել են սՍասնա Մոերիցք) և ապա իր այդ խմայածներն ու քերականացի պատմածների և բառների հիման վրա նա հորինել է իր գիրքը:

Գրավոր աղբյուր, ինչ որ բուն նյութին է վերաբերում, դժվար թե գործածած լինի նա. ուստի և ոչ մի թվական չի հիշում, այլ, ինչպես ավանդական վեպի մեջ, միայն զնայքերի հաջորդությունն է պահում, այն էլ ոչ իրովին ստույգ պատմական: Այս հաջորդությունն ուղարկությամբ դիտելով՝ դախս հնք հետևյալ եզրակացություն.

Քուզանցի պատմություն մեջ կան երկու տեսակ պատմվածքներ՝ եկեղեցական և աշխարհական. առաջինը քահանայապետների և ուրիշ եկեղեցականների մասին, իսկ երկրորդը՝ թագավորների ու գրավարների: Քագավորները, հարկավ, իբրև երկրի պետեր, երևան են գալիս երբեմն և եկեղեցական գրույցների մեջ. իսկ կաթողիկոսներից ներսևսր գործող անձ է և վեպի մեջ:

Աշխարհական պատմվածքները կազմում են մի ամբողջություն, մի մեծ ավանդական վեպ. իսկ եկեղեցական պատմվածքներն անկախ գրույցներ և հիշողություններ են, որոնք հեղինակի կեռով մասամբ հագցված են վեպից առած նյութերի մեջ: Այստեղ, այս եկեղեցական գրույցների մեջ է նրևում գլխավորապես Քուզանց հեղինակն իր կրթական շարակներով, իր հարակուսմանով թագավորների վրա և իր քրիստոնեական վարդապետական սրով: Ասել չի ուղիւ, աշխարհական գրույցների մեջ ևս, թեպետ քիչ, կան հեղինակի գրչի արդյունքներ և հայացքներ, մեծ մասամբ կաթողիկոսների համար և նրանց բերանին դրած խոսքեր. ինչպես են Վրթանեսի խոսքը (Գ. մա.), ներսևսի խոսքը և ուղղափառներին աքսորելը, խոսքի մասին պատմածները (Գ. ե. ժք.), Զոնակի ընտրությունը (Գ. մե.) և այլն, որոնք, սակայն, գարծյալ հանախ եկեղեցական գրույցներ և հիշողություններ են: Գրանք կազմում են մի առանձին ցիկլ՝ եկեղեցական վեպ:

Այդ գրույցների և հիշողությունների զետեղումը մեր երկրորդ հին վեպից առած նյութի մեջ այնպես պարզամիտ է արած, որ գրեթե միշտ նրևում է կարկատանի տեղը. ուստի և շատ հեշտությամբ անջատվում

6 Յրինակ՝ Գ., Ե. գլխի մեջ պատմում է, թե Արշակը ներսևսին տան մեծ նախարարների հետ ուղարկում է կայսր մտա, որը ներսևսին աքսորում է, իսկ մյուսներին Արշակունի պատանդների հետ արձակում է Հայաստան: Ծանկց գնում է ամբողջ հինգ գլուխ (գ.—ժ.) ներսևսի աքսորի և զանազան եկեղեցականների մասին, և ապա մա. գլխում երրից դառնում է զնպականության պատմությանն ու կրկնություն մեջ ընկնում: Ետա պարզ է, որ այս մա. գլուխն անմիջական շարունակություն է և. գլխի, և որ կրկնություններն առաքելն են մեջտեղում հագցրած գրույցների պատճառով. որ եկեղեցականներն են վերաբերում:

Քն դրանք: Այգալիսիներն են. Գ. Բ.-գ. Պ. Ժր.-ժէ. ժԲ., Դ. դ. զ.-ժ. խգ. ժգ.-ժէ., Ե. իա.-յա., Զ. Բ.-ժգ.: Դրանց վրա պիտի ավելացնել և Գ. ա. գլուխը, որ առաջարան է, և որից երևում է, թե Բուզանդի պիրքն ամբողջական Հայոց պատմութիւն է հղել, սկզբից հեթանոսական ժամանակներից սկսած:

Պետք է նկատի ունենայ նաև, որ Բուզանդը վեպից օգտվելիս էլ ձգտում է իր գրած պատմութիւնը առլ քրիստոնեական բնավորութիւն ու գուն, հորինել Աստվածաշնչի ռեժով, դարձվածներով ու պատկերներով, և այդ գլխավորն է՝ կրօնական գաղափարախոսութիւններ: Բայց այդ ևս շատ սքայի է, և հնարավոր է այդ ևս անշատել, առանց վեպի ամբողջական բովանդակութիւնն առանձնաւիտ վնասելու: Մի Բուզանդի կամ մի ուրիշ միջնադարյան պատմագրի այրին, որ եկեղեցական վկայարանական գրականութիւնն սեր և հակում ունի, նահատակութիւնը կատարվում էր աստուծու, եկեղեցու և նրա քարոզած գաղափարներով համար. մինչդեռ ըստ վեպի նահատակութիւնը մի փաշազորութիւն, կտրուցութիւն է պատկերազարդ մեջ երկրի և նրա թագաւորի համար:

Ազաթանգեղոսի և Բուզանդի մեջ գտնուում ենք մեր երկրորդ հին վեպի ամբողջութիւնը իհարկեւ ուրվագծով միայն և ոչ անպատեհ աչն կարգով պատմված, որով հետո վիպված է հղել: Խորհնացին ու Սերետոր միայն լրացուցիչ հասվածներ կամ տարբեր պատմվածներ ունին:

77. Մ. Խորհնացի:— Եթե Մ. Խորհնացու օրով պատմվել է Վիպասանքը, որի պատմական հիմքը կատարվել է II դարում մեր թ. ա. և I դարում մեր թ. առաջ ավելի ևս պիտի հարատենք նա մինչև մեր երկրորդ հին վեպը, որ հիմնված է III և IV դարերի պատմութիւն վրա: Բուզանդի ժամանակից մինչև Խորհնացին մնացել է նույնիսկ անարժան կերտի անտառը, այն տնկովի անտառը, որ մեծ ճանապարհով վրա լինելով՝ երկար չպիտի կարողանար ապրել, համենայն դեպս ոչ ավելի երկար, քան ավանդական վեպը:

Մյուս կողմից դժվար է ընդունել, որ նա մինչև Արտավազդն ավանդական երգերից, գրույցներից ու Վիպասանքից օգտվեր, իսկ այնուհետև ընդարձակ անուղադիր թողնել որ այդ աղբյուրը: Նա Տրդատից առաջ զգինի ժահուան Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանս՝ պատմութիւն համար աղբյուր գտնում է Փերմեղիանոս եպիսկոպոսի գիրքը, զպատմութիւն հայտածանաց եկեղեցույն, որի համար ավելացնում է, թե հեղինակը շարահարել է վրան և թագաւորների գործերը (Բ. Գն.): Արգալիսի գիրքը հղել է թե չէ, այդ չէ մեզ հետաքրքրում այստեղ, ինչ որ Խորհնացին այդ գրքից օգտված է դնում. որ հայոց պատմութիւնն է վերաբերում, մասամբ Ազաթանգեղոսի մեջ

© Քրտանաց և Հարութեանց և այլոց որոց պարագնալ, երբև աղագու և անտառ առ Ազաթանգեղոսն տեղէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակին (Խոր. Գ. Բ.):

կա կամ ամբողջապես կամ համառոտ, բայց այնպես որ ինքը **Խորենացին** կարող էր ընդարձակել՝ հիմնվելով Ազաթանգեղոսի վրա. մասամբ նա այնպիսի պատմություններ են, որ Ազաթանգեղոսի մեջ չկան և չէին կարող լինել մի քանի հարյուր տարեկան պատմության մեջ, թեև ուղիղ վրան ավելացրած լինեն թագավորների գործեր ևս. Այսպես են, օրինակ, Արտաշրի արարքները Հայաստանում, Օտայի՝ Խուրովի դիտարկ պահելը, Արշակունի արարքները, Սառնաթաղի մասին, Տրդատի մի քանի քաջագործությունները, Մամիկոնյանների գրույցը և այլն,—գրույցն այնպիսի պատմություններ, որ պետք է վիպական համարել: Այդ ամենն ավանդական ծագում ունեն, թեպետ և Պատմագիրը լուր է այդ մասին: Մամիկոնյանների ծագման մասին գրույցի փոփոխակը կա և Սերբուսի պատմության մեջ, և **Խորենացին** ինքը Մամիկոնյանների ծագման պատմությունը դնում է իրեն ավանդական գրույց: Ինչպես որ ես Երվանդի ծննդյան առասպելի աղբյուրի համար գրում է՝ «Եւ ունին գրույց յաղագս նորա այսպէս» (Ք. լւ.), նման ձևով հարուստ է և Մամիկոնյանների ծագման մասին. «Որ ունին գրույց այսպիսի» (Ք. ձս.), Քացի դրանից կան նաև ուրիշ փոփոխակներ՝ Արշակավանի շինությունն և ավերումը. Գնելի, Տիրիթի և Վարդանի սպանությունները (Պ. իս. ին.). Կամսարականների կոտորածը (Պ. յա.) և ուրիշներն առանձին տեսակի վիպական մասերով են: ու պիտի մեծանայ:

78. Սերբուս:— Սերբուսի երեք դպրությունն ևս նույն հեղինակի գործ պետք է համարել, հակառակ պատճառաբանությունները մեզ համոզել չեն թվում: Ք. դպրության մեջ Մամիկոնյանների ծագման գրույցի սկիզբն աղագավազած է, միջից դուրս ընկած լինելով հայ Արշակունիների ցանկը մինչև Մեծն Նուբարը, Պատմությունն աչտոն գրված է ճննաց դեպպանի բերանին, բայց զարուհակությունն այնպես է տարած, որ չի իմացվում, թե որտեղ է վերջանում դեպպանի, իսկապես ճննաց գուսանների խոսքը, և ուր Պատմագիրն իրենից է խոսում: Վարելի չէ ընդունել, թե ճննաց գուսանները իմանային, այ Հայաստան փախած երկու եղբայրներից են ծագում հայոց սպարապետները: «Ասեն գուսանքն և ի մերում աշխարհիս յերգս իւրեանցս խոսքից երևում է, որ հայերի մեջ ևս գուսաններն ասել են Մամիկոնյանների ծագման պատմությունը: Այ Սերբուսն իսկապես աչտ պատմությունն է արել, միայն մասամբ ճննաց դեպպանի բերանով ասած:

Սերբուսն (եր. 12, հտն.) ու **Խորենացին** (Ք, ձս.) Մամիկոնյանների ծագումը շատ նման, երբեմն և նույն բառերով են պատմում. բայց կան և խոշոր տարբերություններ: Հիշենք միայն, որ ըստ **Խորենացու** Մամիկոնյանների նախնին մի հոգի է՝ Մամգուն, ճեռագիրների մեջ նաև Մամգուն, Մամկուն, իսկ **Սերբուսի** մեջ երկու եղբայր՝ Մամիկ և Կոնուկ,

7 Մտ. Մուլապյան, Սերբուսի պատմություն և Մ. Խորենացի, էր. 102:

որոնք տարզ կերտով նվազական են Մամ և Կոն անուններէ: Իսկ զույգ անուններէ իբրև մի անձի անուն ընդունվելը, ինչպես Մամ-Կոն Խորենացու մեջ, հատուկ է ավանդական վեպին, որի օրինակը գտնում ենք և մեր նոր վեպի մեջ: Պետք է կարծել, որ Խորենացու պատումի մեջ Հենց Մամ-Կոն մի անուն է համարված եղել: Հիշենք երկու պատմագրի և այս էական տարբերությունը. Խորենացու մեջ Մամկոնն ապաստանում է ոչ թե Արտավանի մոտ, այլ Նրա հաջորդ Արտաշէրի մոտ, որ իսկույն մեռնում է, և հաջորդը՝ Շապուհն ուղարկում է Նրան Հայաստան ճիշտ այն ժամանակ, երբ Տրդատը գալիս է թագավորելու Հայոց: Տրդատն ընդունում է Մամկոնին, և երբ ինքը հյուսիսական ազգերի դեմ կռվում է, Մամկոնն սպանում է Օղական ամբոցի տեր Սողոկ Սիկունուն և Տրդատի հրովարտակով տեր և նախարար դառնում Սիկունիների փոխանակ՝ խոչնդով սրանց կալվածներին (Ք. ձգ.): Այս իսկական վիպական միջադեպը միայն Խորենացու մեջ ունենք: Մեզ թվում է թե վեպի պատումների մեջ առկա է և Խոսրովի օրով ևս, որ նույնպես հյուսիսական ազգերի դեմ կռիվ է ունեցել: Այս կարծիքի հիմն այն է, որ Սեբեոսը Սպարապետութեան ազգի ծագումը գնում է Մամիկ-Կոնակից, և Խոսրովի օրով սպարապետ է դնում Կոնակ, իսկապես Կոնակ, Կնշանակի՝ երկու եղբայրները մի նշանավոր գործ պիտի կատարեին, որ Կոնակն արժանանալ սպարապետութեան: Մենք ներքևում մեր կարծած ձևով ենք դնում:

Սեբեոսը, որ իր պատմությունը վերջացնում է Մամիասի միապետելուց (661 թ.) հետո, VI դարի և VII դարի սկզբի պատմությունները վերցնում է մեծ մասամբ ժողովրդական ավանդություններից, որոնց ժողովրդական ծագումը հաճախ շատ պարզ երևում է պատմիկների եզանակից: Այսպիսի պատմվածքներից մեկն է Գ. զևիի պատմությունը, վահրամի ապստամբությունը:

Վեպի հատվածներ ունեն նաև Մովսես Կաղանկատացին, Ստեփանոս Օրբելյանը և Հովհան Մամիկոնյանը:

Սեբեոսի մեջ (եր. 13, հտն.) գրած է. «Մինչ արքայ խոսրով ի Միտղմուս էր. Կարո կայսր գումար է ամբոխ դարաց բազմաց, և դիմ է ի վերայ արքային ևսարվալ. սետի աճապարհալ ընդդիմ նորա հրան է Կոնեակ սպարապետ Մենին Խոսրովու հարև Տրդատայ... Մեռանի Կարո ի պատերազմին հանգնել միով օրում իրով Կարիանտիս: Խորենացին (Ք. հթ.) Սեբեոսից տարեր է դնում. Կարոս և որդին Կոնիմոս ազանում են Արտաշէրի դեմ կռվի մեջ և...սպանաւ Կարոս ի Յոնիոզէն Նոնազէս և Կառինոս, որ ի վերայ Կոնեակայ շուգալ յաւտարտ, ընդ որում և Տրդատ: Այս Կոնեակ զորավարի գոյությունը կասկածելի է համարվում և թերևս սխալ ընթերցումից ժողով (Տոպյուն, Ազաթ., եր. 123): Բայց մի անգամ որ ստեղծվել է պարսից զորավար Կոնեակ, ինչպես Խորենացու մեջ է, և մենք Սեբեոսի մեջ գտնում ենք այդ Կոնեակին դարձրած Հայոց Խոսրով թագավորի զորավար, պատահան այն է միայն, որ Սեբեոսին վեպից ծանոթ է եղել, որ սպարապետները ծագում են Մամիկ-Կոնակից և որ առաջին սպարապետն եղել է Կոնակ: Ուստի և ինչ որ Խորենացին պարսից զորավարի համար է պատմում, Սեբեոսը Հայոց զորավարի համար է դնում, ավելացնելով և նրա ծնրութեան մասին նշած զրույցը. և անունը պահելով Կոնեակ փոխանակ Կոնակի:

Սեբեոսի նպիսկ. Պատմ. ի Հերակլ., Ս. Պետ., 1870, եր. 70, Հան.

70. Հովնան Կամիկոնյանց և Զենոբ Գլակ:— Հովնան Կամիկոնյանի¹⁰ և ասորի Զենոբ Գլակի¹¹ «Տարոնոյ պատմութիւնը» մի կնդոթք է, և երկուսն ևս մի կնդոթք միևնույն հեղինակի, որ իրեն կոչում է Հովհաննես Կամիկոնյան եպիսկոպոս: Կնդոթքն երևում է գրքի «Յիշատակարանից», որի մեջ հեղինակն անում է կնդոթած գրքի համար մի սովորական դուտի պատմութիւն: Հեղինակը շքառն նույնիսկ թե ինքն երբ է ապրում. նա ասում է թե իր գիրքը գրել է «ի ժամանակս թագաւորութեանն Հերակլեայ (610—641 թթ.), և ի մահուն նորարդու (590—628 թթ.), հրամանաւ ներսխի հայոց կաթողիկոսի (կաթողիկոսացած ոչ վաղ քան 642 թ.) և յիշխանութեան Կամիկոնեան վահանայ, զոր մայրենեօք Կամսարական կոչին»: Այս Կամիկոնյան վահան Կամսարականը, սակայն, մի տեղ (եր. 56) արգեն մեռած է և իր որդի Տիրանն է իշխում «յառաջ քան զգնարն Հերակլի ի պարսիկս» և երբ տելան է Հերակլը և ուզանան է զնորարդ (590—628 թթ.), ութ տարի հետո, ուրեմն 636 թվին, սպանվում է նույնիսկ վահանի որդի Տիրանը՝ Մահմեդի քեռորդի Աբդուհախմի դեմ կռիւն: Մի ուրիշ տեղ, սակայն (եր. 56), 681 թվին դեռ իշխում է նույն վահան Կամսարականը՝ ներսես կաթողիկոսի հետ, որը այդ ժամանակ մեռած էր:—Այսպես իր կնդոթած ժամանակի համար նույնիսկ տեղեկութիւն չունի հեղինակը, և շատ պարզ է, որ չի կարող նա VII դարու մարդ համարվել, այլ ամենավաղը, VIII դարում, մեր կարծիքով, ևս ավելի ուշ, IX, գուցե և X դարում:

Ի՞նչ է Հովհ. Կամիկոնյանի գիրքը, «Պատմութիւն Տարոնոյ».— Շատ պարզ կերպով ժողովրդական գրույցների մի ժողովածու, որ իրական պատմութեան հետ զործ չունի, և ընդհանրապէս՝ ունի ժողովրդական գրույցների ամենայն հատկութիւն: Միամիտ ընթերցողն էլ դժվար թե հավատա այդ պատմվածքների եղելութեանը. նույն ինքն հեղինակն այդ զգացել է, որ «Յիշատակարանի» մեջ գրում է. «Ազգայնմ զմանկունս եկեղեցւոյ Աստուծոյ, զի բոլորմ զյարտորութիւնս զայս ընդօրինակէք, մի՛ լինէ թուեալքի ծաղր ունիք, այլ և զիմ պատճենանն անպակաս և չի գրով գրոշմեալք զհետ գրեթեացդ»:

Զենոբ Գլակի մասն ևս պատմական ոչ մի արժեք չունի: Ինչպես Գր. Խալաթյանը¹² ցույց է տվել, դա առ վաղ քան է դարը, մեր կարծիքով՝ VIII դարուց ոչ վաղ,—քանի որ երկու հեղինակն ևս մեկն է,—զանազան աղբյուրներից քաղած սարքած մի պատմութիւն է. միայն, կարծում ենք, աղբյուրների մեջ ավելի տեղ պիտի տալ «ազգային եկեղեցական ետին ավանդութիւններին», և որ զգլխավորն է մեզ համար՝ այդ աղբյուրների մեջ պիտի մտցնել նաև ժողովրդական ավանդութիւնները:

10 Ծովնանու Կամիկոնեի եպիսկոպոսի Պատմութիւն Տարոնոյ, Վենետիկ, 1832:

11 Պատմութիւն Տարոնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի (Զենոբայ Գլակայ ասորայ եպիսկոպոսի Պատմութիւն Տարոնոյ). Վենետիկ, 1832:

12 Զենոբ Գլակ, Վիեննա, 1893, եր. 75:

Այսպիսի ժողովրդական ավանդույթուններինք ենք համարում Գիսանն և Գեմետր աստվածների մասին պատմածները, Տրդատի կոնվը՝ Տարոնում, ալլև Լովհ. Մամիկոնյանի մասում Մուշեղի և Գայլ Վահանի և ուրիշների մասին պատմածները: Կարծում ենք, ժողովրդական հիմքունի և քրմերի պատերազմը, որ մի կողմն ենք թողնում մեր նյութին լվերաբերուն համար:

Ոչ մի հիմք չկա կարծելու, թե Ջենորի ամբողջ պատմությունը Գեմետրի և Գիսաննի մասին սարքված է ամբակելու և ակերպարանափոխելու: Ազաթանգեղոսի պատմածը Աշտիշատի վահճվահյան մեհյանի մասին¹³ և իբրև թե Ջենորը ակերպարելով հուշակվոր Աշտիշատը դիտմամբ յանգետ և անանտա Աշտիշատի աստվածների մասին և իբրև թե հայտնի աստվածների փոխարեն նա Աշտիշատում դնում է Գիսաննի և Գեմետրի կուսքերը¹⁴:

Ջենորն Աշտիշատի մեհյանների մասին երկրորդաբար հիշատակելով՝ խոսում է միայն Գեմետրի և Գիսաննի մեհյանի մասին, որ կործանելով Ս. Գրիգորը՝ տեղը եկեղեցի է շինում, Ս. Կարապետի Աշխաբի մի մասն այստեղ դնելով (եր. 33, 36, հտե.): Դա Ս. Կարապետի վանքն է, Իննակյան տեղիք: Բացի արանից Ջենորը Ս. Լովհաննու մասունքը դնել է տալիս և մի փոքր ևորակի մտա՝ Եփրատից ձիու երկու կամ երեք արշավանքով հետև, որ նույնպես եկեղեցի է շինում Ս. Գրիգորը: Դա Ազաթանգեղոսի պատմածն է, որից անցել է Ջենորին: Ազաթանգեղոսի մեջ երկու տեղ է հիշում, — Աշտիշատ և Աշտիշատից փոշ հետև ասյանդիման՝ մեհյանացն մտա ի պետն Եփրատա, որ չորինեը կանգնում են և ուր վկայարան է շինում Ս. Գրիգորը ամփոփելով Լովհաննու մասունքը. իսկ Ջենորն այս երկու տեղը հիշելով հանդերձ՝ դնում է և մի երրորդ տեղ՝ Գեմետրի և Գիսաննի կամ Իննակյան տեղիքը:

Արդ պիտի կարծել, թե կամ Ազաթանգեղոսի (ինչպես և Թուղանդի, Գ. Կ. ժղ. ժղ.) հիշած Լովհաննու մատուռը նույն է Ջենորի Ս. Կարապետի հետ, կամ տարբեր են այդ երկուսը: Եթե տարբեր են, այն ժա-

¹³ Ջենոր Գլով, եր. 33, հտե.:

¹⁴ Խալաթյանի աշխից փայտած է, որ Ջենորը Աշտիշատը չի նկարագրում և այդ կուսքերն Աշտիշատում չի դնում: Ջենորի համար Աշտիշատի կուսքերը և Գեմետրի ու Գիսաննի կուսքերը շատ որոշ և տարբեր են, և երկուսն ևս հիշում է նա: Աշտիշատի կուսքերը կանգնում են երկու ձորայր Գեմետր և Գիսանն, քնկնու յԱշտիշատ և կանգնեցին զկուսն զայնասիկ յանուն կուսքն, զոր ի Լեդիկա պաշտելին (եր. 33): Եստ տարիննր անցնելուց հետո այս երկու ձորք արգինեը քնկուս ի յանն Քարեհայ... կանգնեցին երկուս կուսու, զմինն յանուն Գիսաննայ, և զմինն յանուն Գեմետրեայ: Ես ևսուն ետցա ի օպաստորութիւն զազգա իւրեանքա: Քրմերի կոնվը արանք են անում, թնկա և Աշտիշատի կուսքերի քրմերն ևս մատակից են (եր. 25, 28): Երբ Գեմետրի կուսքը կործանվում է, պաշտունեայց կուսքն ևլնալ զնային յԱշտիշատի կուսքն (եր. 32): Այնուհետև Աշտիշատի մեհյանին է ակնարկում (եր. 38)՝ «կամէաք անցանել միայն այն և զնալ ի տեղի մեհնեիցն...»: Ենտ իսկ քրջացեալ էր մա՛ յերկուս տեղեսա (եր. 8), որունցն մեկն է Իննակյան տեղիք, իսկ մյուսն՝ Աշտիշատինը:

ձմանակ պիտի կարծել թե հետագա դարերում հին Ս. Ըովհաննու մատուռի մոտիկ տեղերում Քարքե սարի լանջին մի նոր վանք է շինվել Ս. Կարապետի անունով, որի վրա անցել է Ս. Ըովհաննու մատուցը Լուսավորչի ձեռքով թաղելու ավանդությունը և այս ավանդությունը ժողովրդից առնելով հիշում է Ջենորը, ապա բերում է նույն ավանդու-
թյունն Ազաթանգեղոսից: Իոկ հթե նույն են, որ մեզ ավելի հավանական է թվում, այն ժամանակ պետք է ընդունել, որ միևնույն Ըովհաննու մատուռն կամ Ս. Կարապետի վանքի ծագումը երկու անգամ է պատմում Ջենորը, մեկն Ազաթանգեղոսից առնելով, մյուսը ժողովրդական ավանդությունից: Երկու դեպքում էլ Ջենորի բերածը ժողովրդական ավանդությունից է ծագում:

Բ

«ՊԼՐՄԻՆ ՊԼՏԵՐԱԶՄԻ» ԲՈՎԱՆԿԱԿՈՒՅՑՈՒՆԸ

80. Պատմական դարաշրջանը և պատմականությունը:— Մեր այս վեպը ծագել և դարգացել է III—V դարերի թողադասկան և սոցիալական պայմաններում: Դրա հիմնական մասը III և IV դարերի պատմական իրականությունն է: Պատմական են գործող անձերը մեծ մասամբ, և որոշ ծրվածություններ:

Այդ դարերում տնտեսական հասարակական կազմակերպությունը, արտադրական հարաբերությունները Հայաստանում առհասարակ նույն էին մնում, ինչ որ նախորդ շրջանում: Իշխում էր պարթևական ազդեցությամբ համեմատաբար ավելի զարգացած ավատականությունը, որի հիմքը, ինչպես ուրիշ տեղերում, կազմում էին բնական տնտեսությունն ու խոշոր հողատիրությունը: Երկիրը լրամասնված էր մեծ ու փոքր ազնվականների միջև, որոնք իրենց կալվածներում տեր ու տերեն էին, բայց և ենթարկվում էին իրենցից բարձր իշխաններին: Թագավորույ հարստությունը էր Արշակունին, նույն տոհմը, որ Պարսկաստանում ևս իշխում էր մինչև 236 թ.: Ուժեղ հողատերերը, սակայն, հաճախ ընդվզում էին թույլ պետության իշխանության դեմ: Թագավորներն էլ իրենց կողմից մատուցում էին նրանց դեմ՝ ուժեղ կենտրոնական իշխանություն առաջ բերելու համար: Բայց այդ դեպք էր գլխաբերել Հայաստանի պես մի երկրում, որ աշխարհագրորեն կազմված էր տարբեր ու փակ մասերից և ուներ բնական տնտեսություն: Երկրի եզերային մասերը միջոց հանկված էին զեպի դուրս և հեշտությամբ ենթակա հարևան տերությունների ազդեցությանը:

Երբ Պարսկաստանում տեղի է ունենում թագավորող հարստության փոփոխություն, երկու իշխող տները, Արշակունի Հայաստանում և Սասանյանը Պարսկաստանում, անհաշտ կերպով իրար դեմ են ելնում դարավոր թշնամությամբ և պատերազմներով: Բացի այդ՝ Հայաստանն իրենց ազդեցության կամ գերիշխանության տակ տանելու համար՝ եր-

կարատն պատերազմներ են անում երկու հարման մեծ տերութիւնները, պարսկական ու հռոմեական:

Սասանյանների օրով հայ թագավորական տան կողմնորոշումն Արեւելից շուտ է գալիս դեպի Արեւմուտք, իսկ երբ IV դարի սկզբներում հայերը քրիստոնեութիւն են ընդունում, առաջ է գալիս մի նոր ուժեղ հոգատեբ—Եկեղեցիին իր վանքերի կրօնավորներով ու գլուղական քահանաներով, իր նպիսկուպոսներով ու կաթողիկոսով: Եվ այսպէս կազմուցում են Հայաստանում միջնադարյան ֆեոդալիզմի երեք դասերը՝ ազնւականներին, եկեղեցականութիւնն և շինականութիւնն: Գրանցից եկեղեցականութիւնը հետզհետեւ ավելի զորանում է: Նրա տնտեսական, կրօնական և կուլտուրական ուժը հնարավորութիւն է տալիս նրան, հանձին կաթողիկոսների, ազգեցութիւնն րանեցնելու և մեծ դեր խաղալու նաև քաղաքական գործերի մեջ, առանձնապէս քրիստոնեյա Արեւմուտքի հետ բարեկամութիւնն պահելու նկատմամբ:

Այս ընդհանուր դրութիւնն հետեանքով երկրի ներսում մի կողմից՝ կողմներ էին տեղի ունենում կենտրոնական իշխանութիւնն և ապստամբ նախարարների միջև, մյուս կողմից՝ հաճախ նախարարներն էլ միմյանց դեմ կռւում էին ոչ միայն խաղաղականներով, այլ և իսկական պատերազմներով. մի երբորդ կողմից էլ իրար դեմ էին կանգնում պարսկասերների և հունասերների կուսակցութիւնները, որոնց գրգռում և պաշտպանում էին հարեան տերութիւնները: Այս ամենով և վերջապէս հայպարսկական և հռոմ-պարսկական անվերջ պատերազմներով, — որոնք հաճախ Հայաստանում էին տեղի ունենում և մեծ նշանակութիւն են ունեցել բոլոր սոցիալական խավերի համար, — այլև հյուսիսային ազգերի կրկնվող ապստամբութիւններով, այնպէս, ենթարկվում էր հաճախակի ցնցումների ու վայրիվերումների:

Եվ այս ամենը, այս ընդհանուր դրութիւնն առաջ է բերում պատմական ավանդութիւնների՝ երգերի ու վրույցների մի նոր շրջան կատարված դեպքերի ու եղելութիւնների մասին, և կազմվում է երկրորդ հաշկական վեպը: Սրա մեջ, հարկավ, ինչպէս վեպերի մեջ սովորաբար լինում է, նշանավոր պատմական անձերի վրա ասվում են նաև ստեղծական արարքներ և ընդհանուր սփիւյական բնավորութիւնն ունեցող մոտիվներ, բայց բոլորը պատմական իրականութիւնն ֆոնի վրա: Այստեղ հենց սկզբից մեր առաջ պարզվում է ֆեոդալական դրութիւնն իր շատ կողմներով. արտաքին հարձակումներ, ներքին խռովութիւններ, թագավորի դեմ ապստամբութիւնն նախարարների և նույնիսկ թագավորի եզրալրների, ապստամբ առճմերի կատարած խորամանկ ու խարբյական միջոցներով և երզմնազանցութիւններ. արյան վրեժխնայութիւնն. նոր ազնւականութիւնն կարգում թագավորական հրովարտակով՝ գլուղք և այլ կալվածներ տալով նրան ի ժառանգութիւնն. ավարառութիւնն և այլն: Բոլորը ֆեոդալական դարաշրջանին հատուկ իրականութիւնն, որ ներքեվում կտեսնենք մանրամասնորեն:

Մի հատկանիշը, որով այս երկրորդ հին վեպը տարբերվում է առաջինից դա այն է, որ այստեղ պահանջում է հրաշալիք, դերբնականը Գործող անձերը, թեպետ հերոսական բնավորությամբ, բայց մարդիկ են, Չկան հին առասպելները վիշապների մասին, նյութն ընդհանրապես շատ ավելի պատմական գույն ունի, մոտիկ է իրական պատմությանը, քան Վիպասանքի մեջ: Գրա պատեւաւն այն է, որ պատմադիր Բուզանդը, որից գիտենք այդ վեպը մեծ մասամբ, կատարելապես արհամարհում է հեթանոսական առասպելականը: Ուստի եթե եղել են հրաշալի պատմող-վածքներ, նա դրանք չի ասել իր պատմության մեջ: Բայց որ գլխավորն է, այդ պատմական վեպի երգերն ու զրույցները, իրենց գրվելու ժամանակ, երկար դարեր չեն ապրած եղել այն դեպքերից ու անձերից հետո, որոնց վրա հորինված են: Որքան վեպի մեջ հիշված դեպքերն ու անձերը ժամանակով ավելի մոտենում են V դարին, այնքան ավելի իրական, պատմական են: Եվ այս հասկանալի է թե ինչու: Վեպի այդ մասերը պակաս ժամանակ ապրած լինելով, պակաս էլ ենթարկված են ավանդական վեպի համար սովորական փոփոխությունների, անումների ու հարակցությունների: Բայց և այնպես այդպիսի մասերն անզամ ոչ թե պատմություն են, այլ վիպական բանահյուսություն:

81. Ա) Մեծն Խոսրովի և Տրդատի ճյուղը:— Վարսից պատերազմի ինչպես մեր և Ասանա Մոսորի սկիզբը կապված է նոր տոհմերի ծագման հետ, մի կողմից Հայոց Մամիկոնյան սպարապետության, մյուս կողմից Պարսից Մասանյան հարստության: Հայ Արշակունիների և Մասանյանների մեջ սկսվում է մի մեծ կռիվ, որ տևում է մի քանի սերունդներ. լատ վեպի՝ Խոսրով Մեծ, Տրդատ, Խոսրով Կոտակ, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ և Արշակ Կովի ոգին եղել են սպարապետները, որոնց մի քանի սերունդներ երևան են գալիս սկսած Մամիկոնյանների ծագումից, — Մամիկ-Կոնակ, Արտավազդ, Վաչե (Արտավազդ) և Վասակ, Մուշեղ և Մանվել: Վեպը վերջանում է Մամիկոնյանների հաղթանակով և փառքով:

Տեսնենք այդ վեպի սերունդները կամ, մեր այժմյան վեպի բառով ճշգրտորեն ասանձին ասանձին, որով և մոտավորապես կվերականգնվեն վեպի ընդհանուր բովանդակությունը:

Սկզբնական դրությունն այն է, որ միևնույն Պարթևական տոհմը թագավորում է Պարսկաստանում ու Հայաստանում ե այդ երկուսի մեջ խիստում է բարեկամությունը: Այդ ժամանակ տեղի է ունենում Մամիկ-Կոնակի դիպվածը:

Նրկու եղբայրներ ճենական նշանավոր տոհմից, թագավորի երկու որդիները՝ Մամիկ և Կոնակ, գժումվելով ապստամբում են ճենաց թագավորից, որ իրենց համամայր օղբայրն էր, բայց հաղթվելով՝ ապաստանում են Պարթևաց Վաղարշի որդի Արտավան թագավորի մոտ, որ Հայոց Վաղարշի որդի Մեծն Խոսրով թագավորի ազգականն է: Արտավանը,

որպէսզի իր և ճննաց թագաւորի մեջ խաղաղությունը լիբորովի և միտնգամայն իր երդումը պահած լինի, նրանց իրենց աղխով ուղարկում է Խոսրովի մոտ Հայաստան:

Մինչ Հայոց թագաւորը (Տրդատ՝ ըստ Խորենացու պատումի) պատերազմում է Հյուսիսական զգրքի դեմ, այդ ժամանակ նրանից ապրատամքում են Տարունի Օղական ամրոցի տները, Սլկունիների Սղուկ ևահայեալը և Սիմ լեռան բնակիչները: Քագաւորը խոստանում է նրան տալ Սլկունիների իշխանութիւնը, տվ իր մօտ կրօնի Սլկունիների նահայեալին: Մամ-կոնը խաբէութիւնք սպանում է Սղուկին, և թագաւորը նրան է տալիս Սլկունիների կալուածները ու նախարար կարգում նրանց:

Այսպէս երկու եղբայրները Հաստատում են Տարունում և Սիմ լեռան վրա. նրանց ամրոցն է Օղական: Նրանց սերունդը, Մամկոնյանները տղանում են մեծ ազգ, այն է Հայոց սպարապետներ: Առաջին սպարապետն է Կոռնակ, ապարապետ Մեծին Խոսրովուս, որի համար ասում են թե հարյուր տարի է ապրել և թե մեռնելիս ունեցել է սահման և զայն և դշտելիս և զարուսթիւն մանկութեանն:—Իսկական մի ժողովրդական գրույց, որ հիշեցնում է Սիմ լեռան, Մովսեսը զագաթի վրա հովովութիւն անող Մարդարի գրույցը:

Վեպը Հայոց սպարապետութիւնն ծագումը պատմելուց հետո՝ անցնում է սպարապետների վարած Գարսից պատերազմին ծագման պատմութեան, մի իսկական վիպական պատմական ծագումով: Վաղարշի որդի Արտաւազանը գիշերը անկողնում աստղերին նայելով, ինչպէս մեր նոր վեպի մեջ Ձենով Հովանը, իմանում է, որ ով ապստամբի իր տիրոջն՝ կթագաւորի: Արտազոտիտը, Սասանյան Արտաշի սիրելին, որ իբրև նաժիշտ նույն նշարանում էր պատկուտ, լսելով թագաւորի այդ խոսքը՝ իմացնում է Արտաշիին: Սա ապստամբում է Արտաւազանից, կովելով հաղթում, սպանում է նրան, և տեղը թագաւորում ինքը՝ Սասանյան հարստութիւնն հիմնադիրը:

Դրանով փոխվում է ակադեմիական կացութիւնը: Սկսվում է վեպի շարժումը, իրադարձութիւնները, մի կացութիւնից անցումը մյուսին:

Ի՞նչպէս պիտի վերադառնա այդ փոփոխութիւնը և ի՞նչ պիտի անի Հայաստանի Արշակունի թագաւորը:—Ահա մի հարց, որ արդիական մեծ նշանակութիւն է ունեցել ֆեոդալական դարաշրջանում, երբ իշխող տրեների ակադեմիանը առանձին կարևորութիւն է տրեփելիս ունել:

Այդ փոփոխութիւնն անմիջական հետեանքը լինում է այն, որ Հայոց Խոսրովը իր ազգականին օգնել է ուզում, բայց չի կարողանում: Ապա երբ Արտաւազանը սպանվում է, սկսում է իր վրեժխնդրութիւնն տասնամյա կռիվները: Պարսից թագաւորը նեղն է ընկնում և կովի մեջ չկարողանալով բան անել հայերին, խորհրդի է կանչում իր մեծամեծներին:

1 Գ. Արժանեայտեց, Գրոց-բրոց, Եր. 38:

Պարթև Անակը գալիս է Հայաստան, դավաճանութիւմը սպանում է Խոսրովին, քայքայում է իր բոլոր ընտանիքով սպանում է:

Պարսից թագաւորն որ լսում է Խոսրովի մահը ազուարճանայր, դուրսանայր, տոն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն. և բազում ուխտ ատրուցանաց առնէր: Եւ զորք է ժողովում, զալիս Հայաստան, տիրում, գերում, կոտորում է Հայոց թագաւորական տունը: Բայց դրանով ամեն բան չի վերջանում: Խոսրովի որդիներից Տրդատին, ամանկիկ մի փոքրիկ, Հունաստան է փախցնում Արտավազը Մամիկոնեյանը, իսկ Օտա Ամասունին Խոսրովիդիտին պահում է Անի ամրոցում: Արտաշէրն Արտավազդի ցեղը կոտորում է. Արտավազդի փոքրներից մեկին միայն ազատում է Տաճատը (Արցոյան ազգից), որ և ամուսնանում է նրա հետ:

Արտավազը գալով լինելով մեծացնում է մանուկ Տրդատին, որ հազիւ անգամ հսկա դառնալով ժառայում է Հիկիանեսի մտառ յառ քաջագործութիւններ է անում: Վերջը եւ կայսրի փոխանակ մեծամարտելով Գոթաց թագաւորի հետ՝ հռոմայեցիների օգնութիւմը գալիս է, թագաւորում Հայաստանում, կալում պարսից դեմ, և զինդէր զգնես վրիժուց իւրոց հայրենեացն:

Ապա վեպի մէջ պատմւում է եղի Տրդատի ամուսնութիւնը և հետո՝ նրա ու զեղեցիկ Հռիփսիմի դեպքը: Եվ վերջապէս Տրդատի պատերազմը հյուսիսականների և պարսիկների դեմ (Խոր., Բ. ձե.) և վերջը նրա զովաբանութիւն երգը: (Ազաթանգեղոս, Հատված 123, էր. 71, հտե.)

Իսկ թագաւորն Տրդատ

Ջամենայն ժամանակ իւրոյ թագաւորութեանն

Աւերէր, քանզէր զիրկիրն Պարսից թագաւորութեանն

2 Ազոթանգեղոսի մէջ, որ զխաղոր ուշագրութիւնը դորձած է թագաւորի և Ս. Գրիգորի վրա, Տրդատին Հունաստան փախցնողի համար անորոշ ամեն է գրած: Խոսրովին որոշ Արտավազը Մանդակունի է դնում, որ և հետո սպարապետ է զանում (Բ. ձե. Գ. Գ.): Ազոթանգեղոսի մէջ ևս (ԺԳ) Տրդատի օրով հիշվում է Արտավազը սպարապետ ամենայն զօրով Հայոց և սելջուկ սպարապետութեան զօրով Հայոց աշխարհին, սպարապետն մեծն (ՄԺԲ, ձեՂ). Վերջին կտումները պայտանի անունով են գրած, բայց ինչպէս նույն տեղում սելջուկն թագապագ՝ իշխանութեան ասպետութեան, սթագադիր ասպետն ասելով Բագրատունից են հասկացվում, նույնպէս և սպարապետութիւն, սպարապետ ասելով՝ Մամիկոնեյանը: Բողանող մէջ հայտնի կերպով սպարապետութեան իշխանութիւնը ժառանգական է և Մամիկոնեյաններն են սպարապետ: Այստեղ (Գ. Գ.) Տրդատի որդի Խոսրովի օրով հիշվում է Եվանէ որդի Արտաւազդայ, եւհայեան Մամիկոնեան տոհմին, յազգէ սպարապետութեան Հայոց. Եվանէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնեան տոհմին, զօրավոր ամենայն Հայոց Մեծաց: Այս վայնն Խոսրովի ժամանակ արդեն ձերբակ է (Գ. Ե.), Անշուշտ այս վայնի հայր Արտավազը նույն է Ազոթանգեղոսի Արտավազը սպարապետի հետ, ինչպէս և Խոսրովեանը Արտավազը սպարապետ՝ Սուրբ Բայք ինչ՝ է նախնայն մէջ Արտավազը Մանգակունի և ոչ Մամիկոնեյան, այս անհասկանալի է. թերեւ մի պատուի մէջ Մանգակունի է հիշած եղի:

Եւ զաշխարհն Ասորհստանի,
 Աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս:
 Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս
 Ի բանս կարգի առակաց,
 Թէ՛ սիրբն զԱէզն Տրդատ,
 Որ սիգալովն անբհաց զթումբս գետոց,
 Եւ ցամաքեցոյց իսկ ի սիգան իրում զյորձանս ժովուցս:
 Վասն զի սէզ իսկ էր առ հանդերձ
 Եւ այլ ուժով պնդութեան, հարստութեամբ,
 Թունս ոսկերոք և յաղթ մարմնով,
 Քաջ և պատերազմող անհնարին,
 Թարձր և վայն հասակաւ:
 Որ զամենայն ժամանակս կենաց իրոց պատերազմեալ,
 Եւ անէր մարտից յաղթութիւն:
 Ընծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր,
 Եւ սքոյակապ շքեղութիւն յաղթութեան
 Ընդ ամենայն աշխարհ կացուցանէր:
 Հարկանէր ի հարուածս զթշնամիսն,
 Եւ խնդրէր զքէնս վրիժոց իրոց հայրենեացն:
 Առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորոց,
 Եւ թափէր կապուտ սաստիկ անհնարին ի նոցանէն:
 Արկանէր ի սուր զղորս պարսից,
 Եւ թափէր կողոպուտ անհնարին:
 Կինէր արաքնոզդ սունն Էփոյ զօրացն Տունաց,
 Եւ մատնէր նոցա զբանակս նոցա:
 Հանէր զղօրս Հոնաց սաստիկ յոյժ,
 Եւ գերէր զկողմանս Պարսից՞:

Այստեղ վերջանում է վեպի առաջին մասը: Հայրն ընկամ, բայց որդին հաղթեց և վրեժն առավ: Հերոսական պատերազմը վճռվեց հօգուտ Արշակունի տոհմին:

82. Բ) Խոսքով Կոստակի և Վաչեի ճյուղը նախորդի հետ կապվում է միայն հոր և որդու հաջորդութեամբ:

Քաղաքներում է Տրդատի որդի Խոսրովը, սպարապետ է Արտաշազգի որդի Վաչեն, որ հաղթում է հյուսիսային ազգերին Յլու գլոսի լեռան վրա և Օղական բերդի մոտ: Քաղաքները վարձատրում է իր քաջերին: Խաղաղությունը երկար չի տևում, որովհետև հանկարծ հարձակվում են պարսիկները: Վաչեն զբաղված է Խոսրովակերտի անտառը տնկելով: Քաղաքները պարսիկների դեմ ուղարկում է Բզնունի Գատարային, որ գրավեաճանում է անցնելով պարսից կողմը: Ապա գալիս է ժերունի Վա-

3 Աղտրոնգեղոս, Հատված 129, էջ. 71, հտե.

չեն, հաղթում թշնամիներին, պատժում Բզնունի իշխանին, Բայց պարսիկների օգնությամբ ապստամբում է Աղծնիքի Բակուր բզեքիւր. հարզորքերը պատժում են նրան: Նորից հարձակվում են պարսիկները և պատերազմի մեջ ընկնում է ժեբունի Վաչեն: Զորավարության գործը հանձնվում է Մամիկոնյան տան փեսաներին՝ Արշավիր Կամարականին և Անդովկ Սյունուն, որոնք և պիտի կրթեն ապագա սպարապետ մանուկ Արտավազդին: Իր մահով մեռնում է Խոսրովն և թագավորում որդին՝ Տիրանը (Բուզ., Գ. է.—թ. ժա.):

Այս ճյուղի առանձին սյուժետների մեջ կա գլխավորապես ժամանակաբանական կապ. ուստի դրանք միմյանց հաշորդում են այսպիսի բանաձևերով՝ «Եւ զայն ժամանակաւ, այլնմ ժամանակիւ, և և մինչդեռ նա», «Բայց յետ այսորիկ», «սպառ և նմաները: Բայց և աչնպես այս ամբողջի մեջ կա մի ընդհանուր խնդիր: Դա ոչ թե վրեժխնդրության պատերազմն է, այլ այս ճյուղի մեջ հայերն արդեն իրենց երկրի պաշտպանության վրա են մտածում: Այդի է ընկնում իշխանների ապստամբութունն ու դավաճանութունը: Բայց Մամիկոնյան Վաչեն ցաջ կռվում է թշնամիների դեմ և թագավորի հալատարիմ ծառան է:

88. Գ) Տիրանի վեպը:— Տիրանի վեպն ինքն առանձին կազմում է մի գեղեցիկ ամբողջություն, նման հորինվածքով, ինչ որ առաջին ճյուղը: Հայր Մարգարե, հայտնի չէ, թե ինչու կոտորել էր տալիս շատ նախարարների, մանավանդ Ռոստունի և Արծրունի տոհմերը: Մեհենդակ Ռոստունու Տաճատ որդուն և Վաչե Արծրունու Շավասպ որդուն, երկուսն ևս ստնգյա երեխաներ, ճերժում են թագավորի առաջ, որ հրամայում է նրանց սպանել: Բայց Տիրանի որդի Արշակի դայակները՝ Արտավազդն և Վասակը,—վերջինս չի իմացվում, թե ում որդին է,—«որք էին Եօրավարք ամենայն զօրացն Հայոց», վրա հասնելով ուժով ազատում են այդ երեխաներին, և թողնելով իրենց սան Արշակին, առնում, զնում են իրենց աշխարհը՝ Հայոց ամուրները, ուր և մեծացնելով նրանց պսակում են իրենց ազգիկների հետ: «Եւ նստան անդ ամս բազումս, և թողին զայլ տուն իւրեանց», այսինքն Տարոն, և ոչ խառնէին նոցա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս» (Բուզ., Գ. ժը.):

Այսպես երկպառակություն է ընկնում թագավորի և իր զորավարների մեջ: Հյուր եկած Շապուհ Վարազը մի ձևու պատճառով կուրացնում է Տիրանին, այդ միամիտ թագավորին, որ անպաշտպան էր, որովհետև «զօրավարն չէին անդ, այլ սարտուցեալ էին»: Բայց Մամիկոնյանների տեղ գործում են նրանց փեսաները՝ Անդովկ Սյունին և Արշավիր Կամարականը. սրմեք Հունաց կայսրին օգնողիսն են բերում. պարսիկները հաղթվում են. Վարազ Շապուհը պատժվում է, Տիրանն ազատվում է, և թագավորում է Արշակը (Բուզ., Գ. Ի. Իա., Գ. ա.—գ.):

Պատերազմը վճռվում է գարծյալ հոգուտ Արշակունիներին:

84. Դ) Արշակի ու Պապի և Վասակի ու Մուշեղի ճյուղը կազմված է նույն ցեղիկին պատկանող, իրենց մեջ փոքր ամբողջություններ կազմող մի քանի վեպերից: Գրանցից առաջինը կարելի է կոչել «Արշակ ու Նեոսոս», որի մեջ զորեղ կերպով ներում է կրոնական ազդեցություններ Արշակի առաջին գործը լինում է հաշտվել Մամիկոնյաններին հետ: Վարդան Մամիկոնյանը նահապետ է կարգվում, նրա եղբայր Վասակը՝ սպարապետ, իսկ նրանց կրտսեր եղբայր Վահանը նույնպես թի պէտա զորացա: Սրանով Արշակի վեպը կապվում է Տիրանի վեպի հետ, որի սկզբում պատմվում է, թե Մամիկոնյանները խոռվում, հետևում են արքունի բանակից: Կարգավորվում են և մյուս նախարարությունները, և կաթողիկոս է ընտրվում ներսեսը:

Այս Արշակը Ներսեսի զխաղորությունը գնապանություն է ուղարկում Վաղես կայսրի մոտ: Սա Նեոսոսին առեւում. արքայում է և նրա փոխանակ արձակում է Արշակի եղբորորդիներին՝ Գնեյին ու Տիրիթին: Գրա վերա տարկացած՝ Արշակը վեց տարի շարունակ ավերել և ապարել է տալիս հունական սահմանային երկիրները: նույն միջոցներին, ներսեսի բացակայության ժամանակ, նա շինում է Արշակավանք, Հայր Մարգարեի դրամամբ կոտորել է տալիս նախարարներին, որոնց մեջ և Կամսարականներին: Այս պատմվում է, թե ինչպես ներսեսի անեծքով ավերվում է Արշակավանքը, և Եսվասպ Արծրունիին պահում է հայր Մարգարեի (Բուդ., Գ. և. ժա.—ժգ. ժթ.):

Այս վերջին գրվագով ևս այս պատումը կապվում է Տիրանի ճյուղի հետ, որ սկսվում է Բուզանդ Գ. ժր. պիտով. սեաղագս Հայր Մարգարեի, որ տայր կոտորել զազգս նախարարաց, որոնց թվում և Արծրունիներին:

Հետո գալիս է վրեժխնդրության պատերազմը:

Հայոց թագավորության ժառանգը, Պապը, որ հույների մոտ է, Վասակի որդի Մուշեղի շանքով գալիս է իր հոր երկրին թագավորելու հույների օգնությամբ: Երկու հույն զորավար նրա հետ են՝ 680 բյուր որ և վեց միլիոն զորքով: Մուշեղ սպարապետն ևս ժողովում է հայոց զորքը և ինքն առանց հույների կոտորում պարսից երկու զորավարներին (Ջիկ և Կարեն) իրենց զորքերով, սե մինչև ի բուն ի սահմանս ի Գանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ ունէրս: Եսպուհ թագավորն անձամբ գալիս է հայերի վրա և քանակ դնում թավրեզում: Մուշեղն ընկնում է նրա քանակի վրա և կոտորում: Եսպուհը միաձի փախչում է, իր քանակն ու գանձերը և կանանց թողնելով Մուշեղի ձեռին, որ մեծ ազնվությամբ է վարվում գերված կանանց հետ: Մուշեղին ամբաստանում են հայոց թագավորի մոտ, թե արձակեց թշնամի թագավորի կանանց: Պապի սրտի մեջ կատկած է ընկնում գնպի Մուշեղը:

Կրկին անգամ կոխվ է գալիս Եսպուհ արքան, Պապը չի ուզում, որ Մուշեղը կախվ մտնի. սգի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից և այժմ էլ թի պարսիկս խօսի», որովհետև կովի նախընթաց գիշերը Մեհ-

րուժանից, պարսից քանակից, պատգամավորներ էին հկել Մուշեղին: Բայց միշնորգում է ներսեսը, և Մուշեղը երգվելով՝ դնում է կռիվ, հաղթում պարսիկներին, միայն Աղվանքի Ուռնայր թագավորին, թեպետ և կարող էր սպանել, շի սպանում, այլ արձակում է: Գարձյալ ամբաստանում են Մուշեղին, թե նա թշնամի թագավորին արձակում է և թե Հայոց թագավորին սպանել է ողում: Մուշեղն արդարանում է:

Նորից հարձակվում է Եսպուհը. բայց Մուշեղն և Հույները դարձյալ հաղթում են և պատերազմը դադարում է (Ծ. ա. ք. դ.—Ե.):

Այնուհետև դայիս է ապստամբ իշխանների պատիժը, որոնք Արշակի ժամանակ պարսից կողմն էին անցել: Ամենից առաջ պատմվում է, նույն իսկ կռիվների ընթացքում, Հայր Մարգարետը, որ Փառանձեմ թագուհուն անպատվել էր. տեղը նշանակվում է Գղակ անունով մեկը, որ Հայոց թագավորին դավաճանել է ուզում, բայց բռնվում, նույնպես պատմվում է (Ծ. դ. զ.): Ապա կարգով պատմվում են և մյուս ապստամբները, որոնց թվում է Աղձինքի քոջը, որ իշխանների մեջ ամենից առաջ ապշատամբողն է եղել: Եվ այսպես Մուշեղը փառավորված վարում է իր սպարապետությունը (Ծ. ը.—Ի.):

Սակայն երկար չի քաշում Մուշեղի փառքը: Պայ թագավորը դավաճանություն անպատվում է Հույներին. իշխանները ոչինչ չեն անում. թագաւիթում է Վարազդատը, որ ամառուկ բանսերթուկն է: Թառ Ասհառունին, Վարազդատի դայակը, ամբաստանում է Մուշեղին նրա ըզորձած Հին մեղքի համար, դավաճանությունը ընթրիքի ժամանակ սպանել տալիս Մուշեղին և ինքն առնում սպարապետությունը (Ծ. լր.—լզ.): Այսպես շար հատուցումն է լինում Մուշեղին քի վերայ քաղում վաստակոց:

85. Ե) Մահուղի ճյուղը:— Մանուելն իր օգրոր հետ ազատվում է պարսից զերութուկից. Թատից խլում է ապարապետությունը. կռվով հալածում Վարազդատին, սպանում է Թատին՝ իր եղբոր վրեժն առնելով: Որովհետև իր արարքները Հույներին հակառակ էին, ուստի նա սկզբում բարեկամանում է պարսիկների հետ, բայց հետո Մեհրուժանի քսությունը կտտորում է պարսիկ Սուրենի զորքերը, որով և կռիվ է սկսվում հայերի և պարսիկների մեջ: Երեք անգամ հարձակվում են պարսիկները, բայց միշտ հաղթվում են. սպանվում է վերջապես դավաճան Մեհրուժանը: Եվ վերջ է դրվում Պարսից պատերազմին: Մանուելը՝ թագավորեցնելով Պապի որդի Արշակին, յոթ տարի փառքով իշխում է և խաղաղությամբ մեռնում:

Այս է վեպի ընդհանուր բովանդակությունը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԵՐ ԵՎ ԴԵՊՔԵՐ

80. Նոր պատմաբանների թերութունը:— Հայոց հին պատմության միակ աղբյուրները հույն-հռոմեական գրողների սակավաթիվ հիշատակութուններն են, այն էլ սովորաբար Հայաստանում կամ Հայաստանի հետ ունեցած պատերազմների ու քաղաքական հարեբությունների մասին: Այդ պատճառով հնարավոր չէ վեպի մեջ հիշված բոլոր անուններն ու դեպքերը համեմատելով նրանց հաղորդածների հետ՝ որոշել, թե ինչն է պատմական, և թե վեպն ինչպես է օգտվել եղելութուններից: Այդ դժվարանում է և հետևյալ հանգամանքով:

Թեպետ և արդեն բավական թվով հեղինակներ ուսումնասիրել են Հայաստանի հին պատմութունը հույն և հռոմեական աղբյուրների հիման վրա և գրել են Հայոց պատմութուն, բայց և այնպես դեռ չի պարզված Հայաստանի նույնիսկ հին քաղաքական պատմութունը և անգամ հայոց թագավորների հաջորդության կարգը: Այդ հեղինակները ոչ սակավ անգամ հակասում են իրար, թեպետ և նրանք օգտվում են նույն աղբյուրներից:

Մյուս կողմից՝ մեր բանասերներն ու պատմութուն գրողները III և IV դարերի հայոց պատմության համար, օտար աղբյուրների հետ, այն էլ ոչ ներքին կյանքի համար, իբրև աղբյուր բանեցնում են նաև Աղաթանգեղոսի ու Բուզանդի վիպական պատմաները: Այսպիսով պատմագետ ու գրականագետ նույնացվում են և առաջ չ' փչին մի շփոթ դրոշմով: Գրականագետները պատմության օգնութիւնը պիտի պարզեին վեպի պատմականութունը, նրա մեջ եղած անուններն ու դիպվածները, և ալն, ընդհակառակն, պատմագետներն իրենք պատմութուն են գրում՝ վեպից ցաղելով այն:

Մի անգամ որ պարզ է, որ Աղաթանգեղոսն ու Բուզանդը խոշոր շփով իսկական պատմական երկեր չ'են և նրանց մեջ մեծ տեղ է բռնում վիպական տարրը, ապա կարելի չ'է նրանցից, առանց վերապահության, օգտվել պատմության համար: Մոռացվում կամ անգիտակցվում է, որ վեպը երբեք պատմութուն չ'է, այս բառի այժմյան նշանակությամբ: Արդարև վեպն ընդհանուր դեմքով իր մեջ պահում է իր դարաշրջանի սոցիալական բնույթը, բայց դա, երբեք ճշտությամբ չ'ի վերարտադրում պատմական եղելութունները ոչ անձերի, ոչ ժամանակի, ոչ տեղերի և ոչ էլ նույնիսկ իրողութունների վերաբերմամբ: Իսկ առանց դրանց՝ պատմաբանի համար շկա և լայիտի լինի պատմական իրականութուն:

Վեպը բանաստեղծութուն է, պատմական քանաստեղծութուն, որի նախահիմն է միայն պատմական և որի մեջ, ինչպես տեսել ենք, մնում է այլադիտելի պատմութուն: Նրա մեջ շկա ժամանակագրութուն: Կան անաքրոնիզմներ, անձերի շփոթումներ: Ավելացրեք վրան և այլ փոփոխութունները, որ հատուկ են ավանդական բանաստեղծությամբ, իրա-

ձբան եղերություններին հետ խառնուրդը շեղած, շկատաչափած բաշաղանք-ներին, ընդհանուր միապահան մտտիվներին և այլն, և այն որ տարբեր եղելությունները կորցնելով իրենց մանրամասնությունները՝ մի ընդհանուր գույն ու ձև են ստանում:

Արդ՝ մեր բանասերներին ու հայոց պատմություն գրողներին հիշված թերությունը, ինչպես և վեպի այսպիսի հատկությունները նկատի ունենալով՝ հույն-հռոմեական աղբյուրների հաղորդածների հետ միայն համեմատելով՝ պետք է ըստ կարելույն որոշել, թե ինչ պատմական դեպքերի հիշողություն կա Ե֊արսից պատերազմի մեջ և որ անձնանունները պատմական են:

87. Վաղարշ և Տրդատ Բ. ներսեհի պարտությունը 297 թվից. Տրդատ Գ.։—Այս երկրորդ հին վեպի պատմական նյութն սկսվում է Հայաստանի Վաղարշ թագավորի ժամանակից, այս նշանավոր անձի եղերական վախճանից:

Անտանիոս (Կարակալլա 211—217 թթ.) կայսրը, որ նորոգում է պատերազմը Պարթևների հետ, Արևելք գալով՝ նենգությամբ իր մոտ է կանչում Հոմերի քարեկամ Ուռհայի թագավորին և շղթայում նրան: Նույնպես վարվում է նա հայոց Վաղարշի հետ ևս: Երևի դիվագատրն Հայոց որ էր գծտուփեամբ ընդ իւր որդիս՝ կոչէր նոյնպէս առ ինքն գրով քարեկամութեան, պատճառանօք համոզելոյ զնոսա ի հաշտութիւն և գնայր ընդ նմա, որպէս գնացն ընդ Արգարու: Սակայն Հայք փոխանակ յարելոյ ի նա՝ ընթացան ի զէնսս: Վաղարշի որդի Տրդատը թագավոր է հռչակվում (215 թ.), Կարակալլան նրա վրա զորք է ուղարկում. բայց Եթէնկրիտոս զոր առաջէր նա զորօք ի վերայ Հայոց՝ մատնէր շարաշար ի պարտութիւնս¹:

Տրդատն սպասելով որ պատերազմը պիտի շարունակվի, գնում է պարթևների մոտ՝ նրանցից օգնություն խնդրելու: Եվ իսկապես, Անտոնիոսը հետևյալ տարին, պատերազմական մեծամեծ ուժերի զլուխ անցած, նորից գալիս է Արևելք, որպեսզի հայերին նվաճի, և եթե հարկ չիւնի, նաև Պարթևներին². Երբ նա երկրորդ անգամ պահանջում է, որ Պարթևները հայերին չօգնեն և Տրդատին իրեն հանձնեն, ապա Պարթևների թագավորը համաձայնում է դրան: Բայց Տրդատին աջողվում է Հայաստան մտնել և շարունակել թշնամական գործողություններն ընդդեմ հռոմայեցիներին (216 թ.): Հաջորդ տարին Կարակալլան ապանվում է: Նրա հաջորդը՝ Մակրինոս (217—218 թթ.), պարտվելով պարթևներից, հաշտություն է կնքում նրանց հետ:

¹ Գաբուզյան Ա. Մ., Քնն. պատմ. հայոց, Թ, կր. 294, նույն տեղում՝ Գրոն, Հէ. 42, 21.

² Հայոց նախնական պատմությունն ըստ Մոմզեհի, կազմեց Գ. Ալթունյան, Վաղորդագր., 1894, կր. 42.

Նա հաշտվում է և Հայաստանի հետ: Եվ որովհետև այդ ժամանակ գերութիւն մեջ մեռել էր Հայաստանի թագավոր Վաղարշը, կայսրը թագ է ուղարկում նրա որդի Տրդատ Բ-ին, որ արդեն թագավոր էր փաստորեն: Բայց դրանով Տրդատը դառնում էր հռոմայեցիների ավատառու⁵: Կայսրը Հռոմից ետ է դարձնում և Տրդատի մորը, որ տասնութից ամիս բանտարկված էր: Բացի այդ՝ նա Տրդատին վերադարձնում է Հայաստանից տարած ավարը և նրա հայրական կալվածները Կապադովկիայում, որ Կարակալլան արքունիք է գրավել:

Քիչ հետո, 226 թ., Պարսկաստանում տեղի է ունենում քաղաքական մեծ իրողութիւններ: Արտաշիւր Սասանյանը, հաղթելով իր հակառակորդ վերջին Պարթև թագավոր Արտավան Ե-ին, դա՛ է բարձրանում, և այնուհետև պետութիւն գլուխ կանգնում են Սասանյան արքայները, որոնք Կյուրոսի և Քսերքսեսի սերունդ էին համարում իրենց և ձգտում էին աշխարհակալութիւն:

Արտաշիւրն իր իշխանութիւն սկզբում հենց՝ հարձակվում է Հայաստանի վրա, այստեղ ևս Արշակունի իշխանութիւնը վերջ տալու համար: Բայց նա սվանեայ վիճակի ի բնակաց երկրին և ի մարաց ոմանց և յորդոցն Արտասանայ, ելանէր փախստեայ, որպէս ասեն ոմանք, կամ՝ որպէս այլք ասեն, դառնայր յետս՝ զումարել մեծ ևս բազմութիւն: զորացա՞, 228 թ.: Հետո նա 230 թ. հարձակվում է հռոմեական երկրներին, այն է՝ Միշագետքի, Ասորիքի և Կապադովկիայի վրա:

Երկու տարի հետո՝ Ալեքսանդր Սևեր (222—235 թթ.) կայսրը սկսում է իր արշավանքը պարսիկների դեմ: Նրա հլուսիսային բանակը Հայաստանի վրայով շարժվում է դեպի Մարաստան⁶, որ հռոմայեցիները, հայերի օգնութիւնով, սաստիկ նեղում են պարսիկներին: Հայերը, որոնք պահում են իրենց անկախութիւնը, Մաքսիմի (235—236 թթ.) կայսրի ժամանակ, 236 թ., իբրև Հռոմի դաշնակիցներ, օգնական զորք են ուղարկում դերմանների դեմ պատերազմի ժամանակ:

Պարսիկները 241 թ., Արտաշիւրի հայորդ Շապուհ Ա-ի (241—272 թթ.) օրով, տիրում են Միշագետքին, հավանորեն մտնում են և Հայաստան: Գորդիանոս կայսրը (238—244 թթ.) ստիպված է լինում 242 թ. պատերազմ տկան: Կարսիկների դեմ: Նա իսկ առնում Արտաշատը, ապա Անտիոք, Մոփին և այլն⁷, Բայց նա սպանվում է և նրա հաշորդ Փիլիպպոսի ժամանակ հաշտութիւն է կնքվում 244 թ., երբ հռոմայեցիները ձեռնարկ են լինում Հայաստանից: Բայց Շապուհն իսկույն լի մտնում Հայաստան: Սկիւթացի ազգերը հարձակվում են Պոնտոսի, Կապադովկիայի և ընդհանրապէս Փոքր Ասիայի վրա: Նրանց խժրերը երևում են և Հայաստանում:

⁵ Հայոց նախնական պատմ. ըստ Մովսէսի, էր. 54:

⁴ Պարտազոյան, ՔՆՆ. պատմ. հայոց, Բ, 268: Նույն տեղում՝ Գիոն, գիրք 3, 3:

⁵ Հայոց նախնական պատմ. ըստ Մովսէսի, էր. 54 և Asdourian, Die polit. Bez. z. Arm. u. Rom. էր. 124, Կաթ. 1:

⁶ Պարտազոյան, ՔՆՆ. պատմ. հայոց, Բ, էր. 272:

տանի Բասեն դաժառու՜մ Այդ ժամանակ միայն, 252 կամ 253 թ., Եւպոսէը գրաւում է Հայաստանը: Տրդատ Թագաւորը փախչում է հոռոմայեցիներէ մտտ, իսկ Նրա որդիները պարսիկներէ կոզմն են անցնում⁷, Երկրում իշխում է Արտավազդ Թագաւորը, պարսից դաշնակիցը, որի մի նամակը մնում է 260 թվից: Աւլրեւիտանի ժամանակ (270—275 թթ.) Հայաստանը համարվում է անկախ երկիր և ոչ հոռոմեական: Աւլրեւիտոս Վարոս (252—284 թթ.) կայսրը վերսկսում է պատերազմը: Նա 282 թ. մըտնում է Հայաստան և այնտեղ վերականգնում է Նախկին կարգերը: Նրա հաջորդների օրով ևս Հայաստանը մնում է հոռոմայեցիներէ ազդեցութիւն տակ և խաղաղութիւն է լինում մինչև 293 թ.: Թե ով է եղել Հայաստանի Թագաւորը՝ այդ հայտնի չէ:

Պարսից Ներսեհ Թագաւորը (293—303 թթ.) վերակսում է պատերազմը Հռոմի հետ: Նա Նախ հարձակվում է Հայաստանի վրա: Գիողիեւտիանոսը (284—305 թթ.) դիմադրում է նրան պատերազմով: Գալիբրիոս Մաքսիմոս կեսարը, որ զօրավարն էր, սկզբում 296 թ. պարտութիւն է կրում Միգադեոքում: Բայց հետո նա պատերազմը տեղափոխում է Հայաստան, ուր բնակիչներն օգնում են հոռոմայեցիներին: Վալից առաջ Գալիբրիոսն անձամբ, երկու (երեք) ձիավորի հետ, լրտեսում է թշնամու բանակը: Արշունահեղ ճակատամարտի մեջ Ներսեհը, ընայնով իր զօրքի բազմութիւնը, կատարյալ պարտութիւն է կրում և ինքը վիրավորված փախչում է: Նրա ամբողջ ճամբարը, զանձը, ընտանիքը, Թագուհին, որդիներն ու դուստրները և բազմաթիւ նշանավոր պարսիկներ գերի են ընկնում հոռոմայեցիների ձեռքը (297 թ.): Թշնամիները նրա կանանց և դուստրներին պահում են պատվով: Հաշտութիւնից հետո գերիները վերադարձվում են:

Այդ ժամանակից սկսած՝ Հայաստանը մնում է Հռոմի գերիշխանութիւն տակ, և հայոց երկրին այնչափում է Ատրպատականը կամ նրա հյուսիս-արեւելյան մասը: Խաղաղութիւն է լինում ամբողջ քառասուն տարի մինչև Կոստանդիանոս կայսրի մահը 337 թ.: Թե ով է եղել Հայաստանի Թագաւորը՝ այդ հայտնի չէ:

Հիշենք և հետևյալը: Եւսեբիոս Կեսարացի (270—338 թթ.) հայերին քրիստոնէյա է դնում IV դարի սկզբում և գրում է, թե հայերը կրօնի համար Նույնիակ պատերազմ են տվել Մաքսիմի Պալալի (307—313 թթ.) հետ: Եֆրզեմեալ պատերազմ ի բռնաւորէ անտի ընդ Հայոց, որ ի սկզբանէ բարեկամք և նիզակակիցք էին հոռոմէական ժողովրդեան: Եւ Նոցին ևս քրիստոնեայք էին և շերմագոյնք ի բարեպաշտութեան՝ որ առ աստուածութիւնն ջանացաւ աստուածատեացն բռնաւոր՝ բռնու-

⁷ ԷՄՈ սովաւ (Գաղղեաւ) սկսած խրտեւ պարսիկց որ հառին գրաւեցին զՀայաստան, ուստի փախաւ արքայն (Հայոց) Տրդատ, այլ որդիք ետրա անկան առ Պարսիկաւ: Գնոճը, Տարեգրք, ԺԲ. 21. Տալշտե, Ազաթանգեղոս, էր. 166:

⁸ Հայոց Նախ. պատմ. ըստ Մովսէսի, էր. 55, հաւ. Դ. Պալատ. Очерк ист. Армении, էր. 346, հաւ.

թեամբ անի ղնսսա ի պաշտօն կոոց և ղիւաց և յայն սակս զբարեկամսն յատելիս, զգաշնաւորսն ի թշնամիս դարձոյց... այլ ինքն ի պատերազմի անդ Հանդերձ զորու իւրով գունակ գունակ նեղեալ վտանգեցաւ շարաշարս⁹:

Ավաներիսը շի Հիշում Հայոց թագավորի անունը: Միայն Սողոմոն-նոսը եկեղեցական պատմիչ V դարում (ծնված V դարի սկզբում), հիշում է Հայոց Տրդատ թագավորին, որի որով Հայերը քրիստոնեություն են ընդունել: Բայց այդ ժամանակ կար արդեն Հայ գրականությունը ըստ որի նույնպես III դարի վերջում և IV դարի սկզբներում թագավոր է եղել Տրդատ Գ և այս անպայման հավաստի է:

88. Խոսքով Մեծ:— Ըստ վեպի (Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու պատումները)՝ Սասանյան Արտաշրի ժամանակ Հայաստանում թագավորում է և նրա դեմ տաս տարի քաղութամբ պատերազմ է մղում Վաղարշի որդի Արշակունի Խոսրովը: Նրան դավաճանի ձեռով սպանել տալուց հետո՝ Պարսից թագավորը տիրում է Հայաստանին: Խոսրովի որդիներինք բռնակիրկ մի փոքրիկ, Տրդատ անունով, փախցնում են դայակները Հույների (Հռոմայեցիների) կողմերը:

Հիմա հարց է. արդյոք պատմական է այս Խոսրով անունով թագավորը:

Մեր քանասերներն ու պատմաբանները մեծ մասամբ ընդունել են այս Մեծն Խոսրով թագավորի գոյությունը և մինչև անգամ նրա տարիներն են որոշել: Եթե այդ հավաստի լիներ, ապա դժվար չէր լինիլ վիպական Մեծն Խոսրովը նույնացնել այդ պատմական Խոսրովի հետ: Բայց այդ գիտնականների կարծիքներն ընդունելի չեն:

Առենք նրանցից յոթը.

1) Խալաթյան¹⁰.

Տրդատ Բ-ից հետո, որ մեռնում է ասորդիս թագավորում է Արտավան Ե-ի եղբայրն Արշակ Բ, 222—238 թթ., նույնը կոչվում և Խոսրով: Սրա որդին Տրդատ Գ թագավորում է 238 թվից և 252—253 թթ. (ուրեմն ոչ բռնակիրկ մի փոքրիկ) փախչում է Հռոմայեցիների մոտ. 297 թ. թագավորում է դարձյալ մի Տրդատ, թե արդյոք դա Տրդատ Գ-ն է, թե Տրդատ Գ, այդ անորոշ է թողնվում:

2) Սանդալիյան¹¹.

Վաղարշ, Սանատրուկի որդի 194—216 թթ.

Տրդատ Բ (Վաղարշի որդին) 218—222 թթ.

⁹ Եսեյ. Եկեղեց. պատմութիւն. Բ. զլ. Ը. Գաբազալ., ՓՃ. պատմ., Գ. Քրիստ., 1896, էր. 6:

¹⁰ Օգ. Կեր. Արմ., էր. 326, հտե., 334, 338, 348. ըստ Justi.

¹¹ Histoire documentaire de l'Arménie, t. II, Rome, 1917, էր. 860, հտե. 277, հտե., 280:

Արշակ Ա — Խոսրով Ա, Արտավան Գ-ի եղբայրը, մտտ 222—250 թթ.
Տրդատ Գ Մեծն (Խոսրովի որդին), առաջին անգամ մտտ. 250 թ.
Նա պարսիկներից փախչում է:

Արտավազդ Ծ 252 թ.

Տրդատ Գ երկրորդ անգամ 297—մտտ 323 թ.:

3) Աստուրյան¹².

Տրդատ Բ-ից Հետո Խոսրով մտտ. 222—250 թթ. ոթն սա Արտավանի Հարազատ եղբայրն է եղել՝ մենք այդ շղթան ենք: Նույն տեղում ծանոթության մեջ. «միայն Ազաթանգեղոսի հունարեն թարգմանությունը Խոսրովին անվանում է Արտավանի եղբայր (անշուղտ այդ պատճառով Պրոկոպը նույնպես անվանում է նրան (Արշակին) Պարթևաց թագավորի եղբայր)»:

Տրդատ Գ մտտ 287—326 թթ., երեխայության ժամանակ 252 թ. փախել է Հռոմայեցոց երկիրը:

4) Տաշյան¹³.

Տրդատ Բ մահել է 221 թ., Հետո Խոսրով, որի սպանվելը 263 թվից առաջ. Տրդատ Գ թագավորի է 263-ից առաջ մանկական հասակում և այդ հասակում էլ փախել է 253 թ.: Ապա բերում է Տրդատ Գ-ի թագավորի մասին զանազան կարծիքներ և հավանական է համարում, թե նա թագավորել է 266—267 թթ., երբ եղել է Գոթերի արշավանքը Փոքր Ասիա. «Էլիզիա, Փոկիսիա, Գաղատիա, նաև Գամիլոս ողողված էին: Երկրորդ, փակապես երրորդ անգամ թագավորել է 267 թ.:

Առաջին երկու Հեղինակները (համարներ 1 և 2) Խոսրովին համարում են Պարթևների թագավոր վերջին Արտավանի եղբայր, Արշակ, նույն և Խոսրով անունով. միայն առաջինը նրան դնում է 222—236 թթ., իսկ երկրորդը՝ մտտ. 222—250 թթ.: Նրանց այս տեղեկությունները ծագում են Պրոկոպիոսի հետևյալ խոսքերից, որ այստեղ բերում եմ Տաշյանի թարգմանությամբ: «Փագաւոր էր երբեմն Հայոց անդաւտին ի նոցունց ազգէ, որպէս վկայէ Հնոցն պատմութիւն, Քանզի իբրև կործանէ, Աղեքսանդր Մակեդոնացի զթագաւորն Պարսից, կացին մնացին Պարսք ընդ լծով: Այլ Պարթևնք ապստամբեալք ի Մակեդոնացոցոց՝ տարան զյադթութիւնն և վտարեցին զնոսա ի թաց և հասին կալան մինչև ցզետն Տիգրիս: Հանդարտեցին Պարսիկք ընդ իշխանութեամբ սոցա ամս Հինգ Հարիւր, մինչև ցժամանակն՝ յորում Աղեքսանդր որդի Մամեայ թագաւոր եկաց Հռոմայեցոց, Եւ յայնժամ մի ոմն քաղաւտացն Պարթևաց զեղբայր իւր զԱրշակ կարգէր աւույ շայոց, որպէս ասէ քսկ Պատմութիւնն Հայոց: Զի մի ոք կարիցէ զԱրշակունիս ի Հայոց սերեալ, որք (Արշակունիք) զամս Հինգ Հարիւր մնացին իազաղութեամբ եղբայրութեան

¹² Die polit. Bez. 188, 127.

¹³ Տաշյան, Ազաթանգեղոս, եր. 86, 106, 107, 108, 120, 125 և այլու:

ազգատուճմին, Արքայն Հայոց ի Մհծ Հայս նստէր, և անդստին ի կա-
նախ ժամանակաց հնազանդ էր ինքնակային Հոռոմայեցոց և այլն¹⁴։

Ազգաբանոց որդի Մամեայ և Ալեքսանդր Սենր (222---235 թթ.)։
Պարթևների տերութիւնը տեւել է մինչև 226 թ., ուրիմն մինչև այս կայս-
րի ժամանակը, Պրոկոպիոսի այդ հատվածի մէջ ընդգծած խոսքն այն-
պես են հասկացել, թէ Աղեքսանդր Սենրի առաջին տարում (այսին-
ժամա), ուրիմն 222 թ., Պարթևների թագավորն իր եղբայր Արշակին կար-
գել է հայոց թագավոր, Եվ որովհետև այդ ժամանակ Պարթևների թագա-
վորն էր Վաղարշի որդի Արտավան Ե (կամ Գ), ուստի և Արշակը նրա
եղբայրն էր, Եվ որովհետև ըստ Ազաթանգեղոսի այդ ժամանակ հայոց
թագավորը Խոսրով էր կոչվում, ուստի Արշակը նաև Խոսրով է կոչվել։
Հետևաբար Ազաթանգեղոսի հիշած Խոսրովը թագավորել է 222 թ.։ Կնշա-
նակի՝ այդ ժամանակ մեռած պետի լինելը նախորդ թագավորը Տրդատ
Բ. Այս թագավորն, ըստ Խալաթյանի, Եւլյնիսկ Եանորդին է մեռել, երևի,
քաջատրեւու համար, թէ ինչու Տրդատ Բ-ի որդին լի թագավորել, այլ
Արտավանի եղբայրը։

Դրան իբրև ապացույց համարում են այն, որ Ազաթանգեղոսի հու-
շարեն թարգմանութիւնը Խոսրովին անվանում է Արտավանի եղբայրն,¹⁵
Բայց այդ ամենը սխալ հասկացման հետևանք է։

Եղբայրք, Եղբայրութիւնք բառերը Ազաթանգեղոսի և Բուզանդի
մէջ Պարթևական թագավորական տոհմի համար գործածվում է Եազգա-
կիցք, Եազգատուճա քառերի նշանակութիւնը Այսպես, որինակ, Ազա-
թանգեղոսի մէջ հենց Խոսրովի համար գրված է. Եթեպէտ և էր ի մեծի
տրտմութեան վասն գնութեան եղբայրութեան ազգատուճմին, զի հնա-
զանգեղան... թագաւորութեան Ստահրացոյն... Նուաճեալ էին ի տէրու-
թիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատուճմին և եղբայ-
րութեանա։ Այստեղ Եղբայրութիւնք և Եազգատուճա համանիշ են, և
Եղբայրութիւնք-ը վերաբերում է թիւ ներքևում հիշվածներին, որ են՝
Ետուճայինքն, Ետուճքն և ազգայետքն և նախարարքն և նահապետքն
Պարթևացք, որոնք ենթարկվել էին Արտաշրին Այսպես և Բուզանդ (Գ.
Ե.) Մազդեթների թագավորի համար, որ պարթևական տոհմից էր,
գրված է. Եհաս ևա (Գրիգորիս) մինչև ի նամբար քանակին Արշակուն-
ւոց արքային Մազթաց... Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազ-
գաւորութիւն էր տուճին գնութեանք (Բուզ., Գ. պ.)։ Եթադատն Մազթ-
թաց Սանէսան անհնարին նիւթեաց զարտտութիւն յխոսմեան ընդ իւրում
ազգակցին Խոսրովու արքային Հայոցա։ Եւ խոյս ետ թագաւորն Հայոց
Խոսրով յուրմէ եղբայրցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Մազթթացա։
Գարձայլ՝ Եզր Սանէսանի պուխը քերում են Խոսրովին, աս յիբրև Ետուճա.

14 Տոյլան, Ազաթանգեղոս, Եր. 103, հաւ., Պրոկոպիոս, Վասն շինուածոց Յուստի-
նիանու, գիրք Գ, 1։

15 Գաւազաթյան, Քնն. պատմ. հայոց, Բ, Եր. 265, հաւ.։

լալ սկսաւ, ասէ. Եղբայր իմ էր ազգաւ Արշակունիա: Այսպէս ուրեմն
եղբրայրս բարձր զործածվում է արշակունիների համար ոչ իսկական
իմաստով, այլ իբրև սազգակիցս:

Այս խնդիրն սպառված համարելով անցնենք Պրոկոպիոսի հատուկա-
ծին:

Տաշյանն արդեն նկատում է. «Պրոկոպիոսի խոսքերը՝ թեև մթին՝
բոլորովին այլազգ ալ կրնան հասկացվիլ, այսինքն սույն խնդրական
մասն Արշակա՝ Արշակունյաց հիմնադրին վրա առնելովս, աճաւ շրջն-
ծամս պետք ք Պարթևաց պետութեան կանգնվելու ժամանակին վրա առ-
նուլ. և ասոր վր ստիպեն կարծենք նաև հաջորդ խոսքերըս:

Ոչ թե այդպես ալ կրնան հասկացվիլ, այլ հենց այդպես միայն
կարելի է և պիտի հասկանայ, Պրոկոպիոսը խոսում է հայոց երկու թա-
գաւորական տոհմերի ծագման մասին. մեկը, հինը՝ հայերից է սերված,
մյուսը, արշակունին՝ ոչ թե հայերից, այլ պարթևական տոհմից: Արշա-
կունիների ծագումը քացատրելու համար՝ նա խոսում է նախ Պարսկաս-
տանի Պարթև իշխողների մասին, — որոնք թագաւորել են այնտեղ հինգ
հարյուր տարի մինչև Ալեքսանդր Սևերի ժամանակը, — և ապա աւի-
լացնում է. «և այն ժամանակ (այսինքն Պարթևական թագաւորութեան
սկիզբներում) Պարթևաց թագաւորներից մեկն իր եղբրայր Արշակին
կարգեց Հայաստանի թագաւորս: Եվ այս ասում է նա, ինչպես շարու-
նակութունից իմանում ենք, տրպեսզի ոչ ոք չկարծի, թե հայերից են
սերված Արշակունիները, որոնք հինգ հարյուր տարի խաղաղութեամբ
մնացին (Պարսկաստանում իշխող) ազգատոհմի հետս և այլն: Որ Պրո-
կոպիոսը Հայաստանի երկու թագաւորական տոհմերի ծագման մասին
է խոսում, և որ նա ասում է, թե Արշակունիները հինգ հարյուր տարի
խաղաղ ապրել են իրենց ազգատոհմի հետ, այսինքն՝ այնքան տարի,
որքան Պարթևներն, ըստ Պրոկոպիոսի, իշխել են Պարսկաստանում, —
այդ ցույց է տալիս, որ նա Արշակունիների ծագումը դնում է ոչ թե
222 թ., — Ալեքսանդր Սևերի ժամանակի մի Արշակից, Պարթևների վեր-
ջին թագաւոր Արտավանի եղբորից, այլ Պարթևական իշխանութեան
հենց սկզբներից:

Պրոկոպիոսը վերևի մեջքերումի մեջ ընդգծված խոսքը առնում է
աճալոց պատմութեանս մի գրքից, քանի որ նա անմիջապէս ավելացնում
է՝ «որպէս աւել իսկ Պատմութիւնն Հայոցս: Եվ իսկապէս մեր պատմա-
կան գրվածքներում եղել է այդ ավանդութիւնը. թե Պարթևական տե-
րութեան սկիզբներում նրանց թագաւոր Արշակ Մեծը թագաւորեցրել է
Հայաստանի վրա իր որդի Արշակին, որից և սերվել են հայ Արշակու-
նիները: Այդ ավանդութիւնը դտնում ենք Սեբեոսի պատմութեան սկզբի
(«Անանունս կողմ») մասում. «Եւ այն ժամանակ թագաւորեցոյց Արշակ
որդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերա Հայոց ի Մծքին քաղաքիւ, և
այլն. «արդ թագաւորէ Արշակ Փոքր կոչեցեալ յամի հարիւրերորդի քսան
և իններորդի թագաւորութեան՝ Արշակայ հար իւրոյ՝ ի վերայ Հայաստ-

տան երկրի՝ ի Մրժուին քաղաքի հղաբար իւրով Վաղարշակաւ և ալլն¹⁶։
Նույնը նաև Մովսես Խորենացու Հայոց պատմութեան մեջ (Ա. ք. և ալլն),
«Արշակ մեծ, արքայ Պարսից և Պարթևաց... սա թագաւորեցուցանէ զեզ-
բայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոցս և ալլն։ Թերես այդ
միևնույն ավանդութիւնը եղել է նաև Թուղանդի Հայոց պատմութեան
սկզբի մասում, որ չի մնացել, և սրանից է այդ ժանոթ եղել Պրոկոպիոս-
սին, քանի որ ընդունում են, թէ այդ հեղինակն ուրիշ դեպքում օգտվել
է Թուղանդից։

Այսպէս ուրեմն մեջտեղից վերանում է Արտազանի եղբայր Արշակ,
նույն և Խոսրով թագավորի գոյութիւնը, որ սխալ հասկացման արդունք
է։ Հետևաբար նույն սխալի հետևանքով է նաև Արշակ, նույն և Խոսրով
թագավորի իշխանութեան սկզբի տարին զենել 222 թվականը, ուրեմն և
մինչ այդ մեռած համարել Տրդատ Բ-ին։

Այդ կարծեցյալ Արշակի, նույն և Խոսրովի ապանման 238 թվականը
ուրիշ բան չէ, եթէ ոչ Արտազանի սպանման թվականի, 226-ի վրա ավե-
լացրած 12 թիվը։ Իսկ այս 12 թիվը կազմվում է այսպես՝ Խոսրովն ըստ
Ագաթանգեղոսի Արտազանի մահից հետո առաջին տարին բան չի կա-
րողանում անել, ապա տասն տարի արշավանքներ է գործում և վերջին
արշավանքից հետո՝ ձմեռն անց կացնելով գարնանը պատրաստվում է
նորից արշավելու Պարսկաստանի վրա, բայց սպանվում է, որ անում է
12 տարի։

Այժմ տեսնենք, թէ ինչ են ասում երկրորդ երկու հեղինակները։

Տաշյանը (համար 4), շնայելով իր ճիշտ բացատրութեանը կարծեց-
յալ Արշակի մասին, դարձյալ առանց որևէ հիմքի Տրդատ Բ-ին մեռած
է զնում մոտ 221 թվականին, որպէսզի հետո թագավորեցնէ Խոսրովին,
նույնպէս վարվում է և Աստուրյանը (համար 3), Խոսրովի առաջին տա-
րին զնելով 222 թվականը։ Այս երկուսը, ուրեմն, պարզապէս ընդունում
են Խոսրով թագավորի գոյութիւնն այդ շինծու թվականով։ Իսկ նրա
սպանման տարին զնում են դարձյալ մոտ 250 թվականին։ Այս երկ-
րորդ թվականը հարմարեցրած է 252 կամ 253 թվին, երբ Տրդատ թագա-
վորը, ինչպէս վերևում տեսանք, փախել է։ Միայն ըստ արտաքին աղ-
բյուրի, այդ փախելու Տրդատն արդեն տարիքավոր է, զալականեր ունի.
Իսկ սրանց մոտ նա երեխա է, ինչպէս Ագաթանգեղոսի մեջ։ Բացի այդ՝
որովհետև, արտաքին աղբյուրով, այդ փախելու Տրդատն արդեն թագա-
վոր է հիշվում, ուստի սրանք էլ նրա հորը մեռցնել են տալիս 252 թվա-
կանից առաջ, այդ երեխային թագավորեցնում են մոտ 250-ին և նոր
փախցնում։ Ուրեմն իրենց ուղած ձևով, իզր սհավանակաւն ենթադրու-
թյամբ, մի բան Ագաթանգեղոսից են առնում, մի բան էլ այլ աղբյուրից
և իրենցից մի նոր պատմութիւն են հարմարեցնում։

¹⁶ Պատմ. Ենկուսի եպիսկոպոսի ի Հերակլն, Քիֆիս, 1913, էջ. 13, 15։

Այս բանը շատ լավ զգում է Տաշյանը, նա բերելով Զոնարի վերեւիում (ծանոթութեան մեջ) գրված հատվածը, գրում է. «Արդ թէ Զոնար չիշտ պատմած է հոս՝ այս Տրդատը նոյն չէ Ազաթանգեղեայ Տրդատայ հետ. վասն զի այն մանուկ փախած կ'ըսուի, իսկ այս այր կատարեալ է որդի(ք) աւելի Բայց եթէ այս տրպան՝ ապա տւրեմն 253-ին կար բուրովին ուրիշ թագաւոր մը Հայոց. և որովհետև 217-ին ալ ուրիշ Տրդատ մը պտանք, կրնայ հետեցուիլ՝ թէ նոյն անձն է երկու տեղն ալ յիշուածք: Ասով բովանդակ խոսքովու անձին վրայ պատմածներն այս անձին վրայ պետք կ'ըլլա առնուլ, և ըսել թէ կամ խոսքով անուն թագաւոր մը չկայ և կամ բուրովին ուրիշ գրից և ժամանակի մէջ. նաև մեզի ծանոթ Տրդատայ պատմութիւնը շատ ալլակերպ կ'ըլլայ, և այլ նման շատ ենթադրութիւններ պէտք կ'ըլլայ կուտել»¹⁷:

Սլ նա ձգտում է ապացուցել խոսքով անունով թագաւորի գոյութիւն ունեցած լինելը: Որո՞նք են այդ ապացույցները՝

1) Այն որ նդիշեի մեջ կա. «նախնին մեր Տրդատիոս... ի տղայութեան փախուցեալ... սեաւ յերկրից Յունաց, այլ և թե Տրդատ փախած թի հայրասպան մարդակոտորչ Եօրեղարց»։ (Ընդգծումները Տ-ինն են)։ Բայց արդտեղ խոսքով անուն չկա և այդ ամբողջը համապատասխան է Ազաթանգեղոսին և ոչ թե շքստ մասին հակառակը։ Ազաթանգեղոսի մեջ էլ Տրդատը փախած ժամանակ երեխա է եղել. այնտեղ էլ նրան սպանողները Տրդատի հորեղբայրներ կարող էին կոչվել, ինչպես տեսանք վերեւիում սեղարք, սեղարքութիւնէ բառերի գործածութեան մասին։

2) Շէյ Արշակունի թագաւորաց մեջ կը գտնենք օսվորութիւն մ'որով թոռան վրայ կը կրկնուի հատու անունը։ Գիտենք Տրդատայ որդւոյն անունը խոսքով, և այս երաշխաւոր է թէ Տրդատայ հայրն ալ նոյնպէս կ'անուանէր, որուն վկայ է՝ անկախ յԱզաթանգեղեայ՝ նաև Բուդանգը։ Նախ որ Ազաթանգեղոսի և Բուդանգի մեջ Տրդատի հայրը խոսքով է կոչվում, այդ հասկանալի է. որովհետև երկուսն էլ ծագում են նոյն վիպական ավանդութիւնից և բացի այդ՝ Բուդանգը միշտ նկատի ունի Ազաթանգեղայ պատմութիւնը։ Բայց որ պակի անունը թոռան վրա են գտում, այդ անհրաժեշտորեն միշտ չի գործադրվել։ Ուստի՝ որ Տրդատի որդին խոսքով է կոչվել, դրանից կարելի չէ անհրաժեշտորեն եզրակացնել, թե Տրդատի հայրն էլ իրոք խոսքով է կոչվել, ուրեմն և այդ վիպական խոսքով անունով թագաւորն իրոք գոյություն է ունեցել։

3) Եթերէի արքունի շիրմաց արձանագրութեանց մէջ... կը հիշուի նաև (գրեւորած է հունարենը և հայերենը). «Խոսքով հայ՝ տեսեալ զարմացայ»—Տաշյանը ճշտօք հետո արձանագրում է թաղաւա, որ չկա հունարենում։—Այն տողը մեր խնդրոյ տակ գտնուող խոսքովայ վրայ առաւ իրգրոն, որուն համամիտ է և Կոսթանիտ, որ կը կարծէ թէ «Խոսքով իւր Վազարչ հորմէն Անպարմոս Անեւորոսի քով պատանդ ուղար-

17 Տաշյան, Ազաթանգեղոս, էր. 106, հտե.:

կուսած էր, և անոր հետ 202-ին յ. Թ. այցելութեան անաւ Մնատոնի սեան, և Քեքելի ալ հնուիթեանց, և այս առթիւ գրեած քլլայ այս արձանագրութիւնքս:

Այս ամենը լոկ ենթադրութիւնն է: Հիշված արձանագրութիւնը ցույց է տալիս այն միայն, որ եղել է Խոսրով անունը հայերի մեջ և այդ անունով մի հայ այցելել է Քեքելի հնութիւնները: Ապա ընդունելի չէ, որ III դարի սկզբում պարթևազն արքայորդին, ինչքան էլ Հայաստանի թագաւորի որդին լինէր, իրեն այդպէս պարզ կերպով «հայ» կոչեր և ոչ թե «Պարթև» կամ «Արշակունի»: Ազաթանգեղոսի մեջ անգամ այդ թագաւորական տոհմը զեռ միայն այդպէս է անվանում: Այսպէս օրինակ, Տրդատը Հոփիսիմի համար ողբալիս ասում է. «Ձի զՅունաց աշխարհն և զՀռոմաց քայ գիտեմ, և զմեր Պարթևաց կողմանսն, վասն զի բնութեամբ իսկ է մերս: Անակի համար ասվում է. «Պատասխանի ետ Պարթևն». «կազմեցաւ Պարթևն». «իբրև զայն լսէր Պարթևն». «որդի Անակայ Պարթևի»: Նույնպէս Տրդատի հրովարտակի մեջ. «Են ի մեր դիցախաան Պարթևաց հասցէ այցելութիւնս, «Ձեռատունկը և ձեռասունք մեր Արշակունեաց»: Այսպէս և Բուզանդի մեջ:

Այսպէս ուրեմն ոչ մի կերպ չի ապացուցված Խոսրով անունով թագաւորի գոյութիւնը III դարում: Բայց ընայնով դրան՝ գտնում ենք և հետևյալն այդ Խոսրովի մասին:

5) Այլտն Գ.¹⁰

Տրդատ Բ (218—253). Սա պապականեւրոց փախչում է հռոմայեցոց երկիրը: Ապա թագաւորում հավանորեն 261-մտտ 267 թ.: Խոսրովը, «Տրդատ Բ-ի կրտսեր եղբայրը, որ պահած էր հռոմեական երկրումս: Աղբյուրը չի հիշված. քայց անպայման վերևում հիշված արձանագրութեան մասին արված ենթադրութիւնն է, թե «Խոսրով... պատանդ ուղարկված էրս: «Աղգային աղբյուրները նրան այսինքն՝ Խոսրովի դարձնում են Արտաշրի ժամանակակից՝ շփոթելով արան իր եղբայր Տրդատի հետս: Շապուհի խարդախըով սպանվում է Խոսրովը, ազատվում է որդին՝ Տրդատ, որին ազգային ավանդութեամբ փախցնում են հռոմեական երկիրը: Նա թագաւորում է քսան տարեկան հասակում 287 թ.: Ներսէհի հարձակման ժամանակ 295 թ. փախչում է հռոմեական երկիրը և ապա նորից թագաւորում է 297 թ. Գալերիոսի հաղթութիւնից հետո:

Ահա մի պատմութիւն, որի մեջ ամեն ինչ կոկված է: Վիպական Խոսրով Մեծը նույնացրած է մի Խոսրով թագաւորի հետ, որի գոյութիւնը հայտնի չէ ոչ մի տեղից: Այդպէս շեն մտածում ոչ միայն նախորդ, այլև հետևյալ հեղինակները:

6) Մորգան¹⁰. Տրդատ Բ, որ կոչվում է Լաւ Խոսրով Ա Մեծ, 217—238. Տրդատ Գ 250—330:

¹⁰ Kevoork Aslan, Etudes historiques sur le peuple arménien, Paris, 1928, էր. 132, 135, 138, հւն.:

¹⁰ Jacques de Morgan, Histoire du peuple arménien, Paris, M IX C XIX, էր. 98, հւն., 102:

Նմ վերջապետ՝

7) Գարուզաշյանը²⁰, ՎՏրդատ Բ ըստ Հայոց Խոսքով որդի Վազար-
շուռ, թագավորել է մինչև 250-ական թվականները, իսկ Տրդատ Գ 297—
337:

Ինչպես վերևում բացատրածից կարելի է տեսնել, հիշված յոթ հե-
ղինականները յոթը տեսակ պատմություն են գրել, նախ՝ այն պատճառով,
որ լհիմնավորված են թագադրությունները համարում են պատմություն,
այսպիսի աշխատում են պատմությունը հարմարեցնել վիպական ավանդու-
թյանը:

Վեպի մեջ, անշուշտ, կա պատմականություն, թայց կարելի չէ դրա-
նից պատմություն հանել,—այստեղ խոսքը պատմական անձերի և դեպ-
քերի ու թվականների մասին է,—այս կամ այն ենթագրություններն
անհով, ինչքան էլ արտաքին աղբյուրների օգնությունը լինի:

Տրդատ Բ-ին վաղ մեծացնելու ոչ մի հիմք չկա: Արտաքին աղբյու-
րով 253 թվին փախչում է Տրդատ թագավորը, իսկ նրա որդիներն անց-
նում են պարսիկների կողմը: Կնշանակի՝ այդ փախչող թագավորը երե-
խա չի եղել: Կարելի է այդ թվականը նկատի ունենալով՝ առնել 250 կամ
մոտ. 250 թվականը. այդ ժամանակ մեծացնել մի թագավոր, վեպին
հետևելով՝ նրա անունը Խոսքով կոչել, և այս կամ այն կերպ բացատրե-
լով՝ այդ փախչող թագավորին երեխա դարձնել, որպեսզի դառնա Տրդատ
Գ և հարմար դա Աղաթանգեղոսի պատմությունը, թե Խոսքովի որդի
Տրդատին երեխա ժամանակ փախցնում են հոռմեական երկիրը: Թայց
երբ ըստ Աղաթանգեղոսի պատմության՝ հաշիվներ են անում, Խոսքովն
ապանված է լինում 238 թ., ուրեմն և նրա որդի երեխա Տրդատին այդ
ժամանակ են փախցրած: Թայց դրան ուղադրություն չեն դարձնում: Նմ
այդ քավական չէ, այս փախցրած երեխային մոտ 250 թ. արդեն թագա-
վորած են դնում, որովհետև արտաքին աղբյուրի մեջ փախչողը թագա-
վոր է:

Քանի հակառակն ապացուցող աղբյուր երևան չի եկել, այդ 253 թ.
փախչող թագավորը պետք է համարել ոչ թե Տրդատ Գ-ն, այլ Տրդատ
Բ-ն, որ թագավորած է, ուրեմն, մոտ. 216—252 կամ 253 թ.: Կարելի
է Տրդատ Գ-ն էլ 297 թվից առաջ թագավորել և փախել է. մենք այդ
չգիտենք:

Կարո՞ղ վ Տրդատ Բ-ն նաև Խոսքով կոչված լինել, թե՞ չէ, և կամ
արդյոք նա ունեցե՞լ է Խոսքով անունով մի հղբայր, որ թագավորել է
նրանից հետո ու սպանվել է և այդ Խոսքովի որդի մանուկ Տրդատին
փախցրել են,—մենք այդ ասելու համար և ոչ մի հիմք չունենք, ընթե այդ
հավաստի լիներ, այս վիպական Խոսքով անվան պատմականությունը
շատ պարզ կլիներ: Թայց այդ ստեղծված է միայն վեպի հիման վրա:

²⁰ ԵՔՆ. պատմ. հայոց, Գ. հր. 302, 305, Բ, 268:

Մենք այն միայն կարող ենք ասել, որ Արտաշէրի (226—241 թթ.) ժամանակ ըստ վեպի Հայաստանում թագաւոր է խոսքով անունով մեկը՝ Իսկ վեպը պատմութիւնն չէ:

Հիմա հարց է: Եթէ Մեծն խոսքովը հավաստի պատմական չէ, ապա ի՞նչպէս պետք է բացատրել, որ վեպի մեջ Արտաշէրի ժամանակ կա Մեծն խոսքով թագաւորը:

Վեպի մեջ կա նաև խոսքով Կոտակ, Մեծն խոսքովի թոռը: Նրա անունն ևս հայտնի չէ արտաքին աղբյուրներից: Բայց նա կապւած է եկեղեցական անձնքի—Արիստակեսի, Վրթանեսի մասին եղած գրույթների հետ և մոտ հարչուր տարով մոտ է Բուզանդին: Ուստի և պատմական հիշողութիւնը այս թագաւորի անվան մասին թե վեպի և թե այլ անվան-դուրսունների մեջ կարող էր կենդանի պահւած լինել և պետք է ընդու-նել, որ պատմական է եղել այդ մեկ խոսքովը, Տրդատ Գ-ի որդին: Իսկ վիպական առաջին խոսքովը, Մեծ խոսքովը, լոկ մի ստեղծական գործող անձ է:

Վեպերի մեջ պատահում է, որ մեկ գործող անձը երկուսի է բաժան-վում: Գրա համար օրինակներ կան նաև մեր սՄասնա Մոերիս մեջ: Այս-տեղ մի շարք վարիանտների մեջ ունենք երեք սերունդ՝ Սանասար—Գաւիթ—Մհեր: Բայց կան մի շարք վարիանտներ ևս, որոնց մեջ Մհերի համար ստեղծվել է մի պապ, Մեծն Մհեր կամ Առյուծաձև Մհեր անու-նով, իրբև Սանասարի որդի, և այնուհետև Մհերն ինքը կոչվում է Փոքր Մհեր, և այսպիսով կացմվել է շորս սերունդի հաղորդութիւն՝ Սանա-սար—Մեծ Մհեր—Գաւիթ—Փոքր Մհեր:

Գրա համար իրբև պատճառ ծառայում է սովորաբար այն, որ մեկ-մեկ երեխաների վրա պապի անունն են դնում: Թաւական է որ վիպա-սաններից մեկն ասի՝ երեխի անունը դրին պապի անունով Մհեր,—և սՄասնա Մոերիս համար կան պատմամենք, որոնց մեջ Փոքր Մհերը հենց այդպէս պապի անունով է կոչվում, և ահա ստեղծվում է մի նոր գոր-ծող անձ—վիպական պապ Մհերը:

Այսպէս և Մեծ Մհերին մի որդի է լինում. վիպասանն ասում է. «Անուն դրին Գաւիթ, պապի անվան վրա»,—և ահա ստեղծվել է մի երկրորդ Գաւիթ, Քլոթ Գաւիթի պապը, որի որդին է Մեծ Մհեր, թոռը Գաւիթ, որա որդին Փոքր Մհեր, և այսպիսով առաջ է եկել հինգ սե-րունդ՝ Սանասար—Գաւիթ—Մեծ Մհեր—Քլոթ Գաւիթ—Փոքր Մհեր: Քա-նի Մեծն խոսքովի պատմականութիւնը չի հաստատւած, պետք է կար-ծել, որ այսպիսի մի ձևով ծագել է և խոսքով Մեծն իրբև պապ, և այ-նուհետև գործող անձ խոսքովը կոչվել է խոսքով Կոտակ, այսինքն՝ «Փոքրը: Կամ, ընդհակառակն, պատմական խոսքովն իր փոքր մարմնի, կարճ հասակի պատճառով՝ հենց իրոք կոչւած է եղել խոսքով Կոտակ, ըստ խորեմազու (Գ. Ե.)՝ «Փոքր խոսքով, իսկ ախուհետև հայտնապա-տասխան ձևով ստեղծվել է խոսքով Մեծ: Եվ այդպիսով սկզբնական

երեք վիպական սերունդները՝ Վաղարշ—Տրդատ—Խոսրով դարձել են շորս՝ Վաղարշ—Խոսրով Մեծ—Տրդատ—Խոսրով Կոտակ (Փոքր)։

Որք մեկ վիպական գործող անձը երկուսի և՛ բաժանվում, պապ և թոռ (կամ հայր և որդի), նոր ծագած անվանը սակորարար վերագրվում են մյուս հերոսներին մեկի կամ մյուսի այս կամ այն դեպքերը. հասկանալի է, տարբեր պատմամենքի մեջ հաճախ նույն տարբեր ձևերով և տարբեր դեպքերս Այսպես, օրինակ, Վասն Սոսրիս մեջ Մեծ Մհերի վրա պատմում են Սանասարի վեպից զիպվածներ, ինչպես են Սանասարի (կամ իր եղբոր) կենակցութունը Մարա Մելիքի կնոջ հետ և նրանից Մարամելիքի մեկնումը. իր որդիներին՝ Գավթի և մյուսներին հանձնելը Մարամելիքին, որ սա պահի նրանց։

Նման ձևով և այս ստեղծական Խոսրով Մեծի վրա պատմված են այնպիսի դեպքեր, որոնք պատմական Վաղարշին ու իր որդի Տրդատ Բ-ին են, կամ առնում են նույն վիպական Վաղարշի ու վիպական Տրդատի վրա ևս։ Այստեղ էլ կրկնվում է, ուրեմն, միևնույն վիպական երկվույթը, ինչ որ ուրիշ դեպքերում։ Այս կամ այն վիպական հերոսին վերագրվում են ուրիշ վիպական հերոսի կամ պատմական անձի մասին պատմածները. որովհետև Վասն անունի և մոտիվի միջև շատ թույլ է անունները հաճախ փոխվում են, մոտիվներն ավելի կայուն են²¹։ Մոտիվն այս դեպքում պատմականորեն այն է, որ պատմական Տրդատ Բ-ն առնում և՛ մեկ՝ իր հայր Վաղարշի վրեժը, մեկ էլ՝ իր ազգակից Արտավանի վրեժը։ Հիմա այս մոտիվներից վիպական Մեծն Խոսրովին, նախնով պատմումներին, վերագրվել է կամ հոր, Վաղարշի, կամ որդու, Տրդատի դերը, որովհետև նա, անկեղծ Վաղարշ—Տրդատ հաջորդության մեջ, եթե մի կողմից դարձել է Վաղարշի որդին, ուրեմն Տրդատի փոխանակը և՛ Վաղարշի վրեժ առնողը մյուս կողմից դարձել է Տրդատի հայրը, ուրեմն Վաղարշի փոխանակը, սպանվողը, որի վրեժն առնում է Տրդատը։ Այսպես՝ ըստ Խոսրիսացու պատումի (Բ. կե.) Խոսրովը (փոխանակ պատմական Տրդատի) առնում է Վաղարշի վրեժը. իսկ ըստ Ագաթանգեղոսի պատումի Խոսրովը (փոխանակ պատմական Տրդատի) առնում և՛ Արտավանի վրեժը. ըստ միաժամանակ և նա դարձել է Տրդատի հայրը (փոխանակ Վաղարշի) և նրա վրեժն առնում է՝ որդին Տրդատը։ Այլ վերջապես՝ ըստ Սեբեոսի պատումի այդ Մեծն Խոսրովի որով են Հայաստան գալիս Մամիկ-Կոնակը, իսկ ըստ Խոսրիսացու պատումի Մամիկոնը Տրդատի ժամանակ է գալիս Հայաստան։

Այսպես ուրեմն ինչ որ Խոսրովի համար պատմվում է, դա վեպի մի կամ մյուս փոփոխակի մեջ կա կամ Վաղարշի, կամ Տրդատի համար պատմված։

²¹ Сербский эпос, под ред. И. Кравцова, Академия, էջ 122։

89. Տրդատի վնասը:— Այս վնասը կազմված է հետևյալ մասերից.

ա) Հորը, Խոսրովին, դավադրութեամբ սպանում են:

բ) Քշնամին, Պարսից թագավոր Արտաշէրը, տիրում է Հայաստանին. սակն ու մեծ պարծեալ սպրեցուցանելու հինէ անտի յորդոցն Խոսրովու թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ: Գայակները Տրդատին փախցնում են հուլիների (= հոռմայեցոց) կողմերը, կայսեր պալատը (սի դուռն կայսերը):

գ) Տրդատն այնտեղ սնվում, մեծանում է, քաղութայիններ է գործում, և երբ նա կայսրի փոխանակ մեծամարտում, հաղթում է գոթերի թագավորին, այն ժամանակ հոռմայեցոց թագավորը թագադրում է նրան և օգնական զորք տալով, ուղարկում է Հայոց աշխարհը Այստեղից նա կռվով քշում է պարսիկ զորքերը և ինքն իշխում իր հայրենական տեքութեանը:

դ) Նա իր ամբողջ կյանքում շարունակում է կռվել պարսիկների դեմ. սջամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեան աւերէր, քանզէր զերկիրն Պարսից... զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտից յաղթութիւն... և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացնս:

ե) Նրա և Հակոբի խնամքի դեպքը:

զ) Հետ Խոսրենացու պատումի՝ նա կռվում է հյուսիսային ազգերի դեմ: Եվ վերջապես՝

է) Նրա որով Մամիկոնյանների նախնիքն, ըստ Ագաթանի՝ Մամիկոնյանի, ըստ Խոսրենացու՝ Մամիկոն գալիս է Հայաստան:

Ի՞նչ դեպքերի հիման վրա է առաջ եկել այս վնասը Այստեղ գտնում ենք երեք պատմական Տրդատների հիշողութուն հարակցված ի մի: Միջուկը կազմում է Տրդատ Բ-ն:

ա) Տրդատ Բ-ի հորը, Վաղարշին, դավադրութեամբ, ինչպես տեսանք, իր կնոջ հետ դնում են քանտ, ուր և մեռնում է նա:

բ) Ազատվում է Վաղարշի որդին, Տրդատ Բ-ն, որը հետագայում պարսիկներից փախչում է հոռմանական երկիրը, և Հայաստանը ենթարկվում է պարսիկներին:

Տրդատ Բ-ի երկու թշնամիները վնասի մեջ վերածվել են մեկի: Քանի որ նա հոռմայեցիների հետ շատ շուտով հաշտվում է ձեռնառու պայմաններով, և այնուհետև հոռմայեցիները քարեկամ են մնում հայերին, իսկ պարսիկները թշնամական հարաբերութեան մեջ, ուստի վնասը, ըստ Ազատանգեղոսի պատումի, պահել է Տրդատի և իր հոր համար մեկ թշնամի—պարսիկները: Բացի այդ՝ ինչպես որ Վիպասանքի մեջ Մեծն Տիգրանի թոռ Արտաշեսը դարձել է մի երեխա, որին փախցնում են պարսիկների մոտ, նույնպես և այս վնասի մեջ հոռմայեցիների մոտ փախչող Տրդատը դարձել է երեխա: Գա վիպական զիժ է. իզնայական հերոսը չի կարող մեծ հասակում փախչել. նա մանուկ հասակում է փախչում օտար երկիր: Շարունակենք համեմատութունը:

զ) Հոռոմայեցիների օգնությամբ իշխել են Հայաստանում մի քանի Տրդատ անունով թագավորներ: Այսպես՝ Տրդատ Ա-ն Հոռոմում է թագադրվել: Նույնիսկ Տրդատ Բ-ին հոռոմայեցիներն օգնել են Շապուհ Ա-ի դեմ, որ մտել էր Հայաստան. և վերջապես՝ Տրդատ Գ-ն, որ պատմական անձ է, թագավորել է վերջնապես 297 թվականին, օգնությամբ հոռոմայեցիների, որոնք պարսիկներին երկար ժամանակով դուրս են քշել Հաստատակից պարսից Ներսես փառավորի վրա ստարած հաղթությամբ:

դ) Որ վիպական Տրդատն իր մարդը կյանքում եղամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանս պատերազմում է պարսիկների դեմ և ավերում նրանց երկիրը, դա հիշողութունն է անպայման Տրդատ Բ-ի պատերազմների ընդեմ հոռոմայեցիների և պարսիկների՝ մինչ իր փախչելը, վրան կարող են ավելացած լինել նաև Տրդատ Գ-ի ժամանակ մինչև 297 թվականը պարսիկների դեմ տրված պատերազմների հիշողութունները: Բայց այս թագավորը չի կարող լինել վնաս պատմական հերոսը, քանի որ նրա թագավորության ժամանակ՝ սկսած 297 թվից խաղաղութուն է եղել: Հետագայում հոգևորականության ավանդությամբ վիպական Տրդատի դեպքերը համարվել են այդ քրիստոնյա թագավորի արարքների հիշողություն:

ե) Տրդատի և Հռիփսիմիի դեպքը, որ ամուսնության մի թափառական վիպական մոտիվ է, Տրդատ Բագրատունու և Նազենիկի մասին պատմված զրույցի մի փոփոխակը, մասել է Տրդատի վնասի մեջ:

զ) Հյուսիսականների արշավանք և ասպատակությունն եղել է և Տրդատ Բ-ի, և Տրդատ Ա-ի ժամանակ: Ինչպես հայտնի է, այս վերջին թագավորի օրով լայններն արշավում, ասպատակում են Մարաստան և ապա անցնում Հայաստան: Տրդատ Ա-ն նրանց դեմ է դուրս գալիս կրովով: Մարտի ժամանակ նա Եւ փոքր մի ես՝ և անկանէր ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկեց պարան ի պարանոց նորա, և քարշէր զնա՝ եթէ չէր նորա աճապարեալ հատանել զայն սրով²²: Նման բան պատմված է և վիպական Տրդատի մասին: Հյուսիսականների դեմ կովի մեջ Բասիլների թագավորը Բհաննալ յասպաղինէն զներդեալ ճեմիտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ, ճարպ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աշակողմանն. զի էր վերաջայեալ զձեռն ամէն ումեք սուտերու. և ինքն վտանալ վերք պահպանակօք, ուր ոչ գծէին նետք: Ը: քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհրակայն, զլանչիք առ երկվարին. և ոչ այնչափ ինչ շուրթափեաց մտրակել զերթխարն, քան փէ հհնակ ձեռամբն ի ներդեալսն աճապարեալ սկային, և սաստկոթեամբ ուժոյն զիրեալ ցանցեալ, ի ճառ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և ընդ զորք պարանոցին զզուլս երկվարին: Իսկ զօրացն ամենայն տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր քազկէ լեալ, ի փախուստ դառնային:

22 Գործազրյան, ԹԵՆ. պատմ. հայոց, Բ, էջ 242, առելւած է Յովսէփոսից:

գորոց զհետ մտնալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհն շոնացա՞ն, Տրդատ Ա-ի կոնվը հլուսխտականների դեմ, որ մտել է Վիպասանքի մեջ և պատմըվել Արտաշեսի վրա, քնականորեն ավելի մանրամասն հրգովել ու պատմըվել է և իրեն Տրդատի անվան վրա:

է) Վիպական Տրդատի որով Մամիկոնյանների նախնու գալը Հայաստան՝ զժվար է որևէ պատմական Տրդատի հետ կապել. այդ մասին հայտնի չեն պատմական տեղեկութիւնները:

Այսպես ուրեմն, պատմական Վազարշի որդի Տրդատ Բ-ի որով կատարված դեպքերից, — ազգվիլով նաև մյուս Տրդատների նման գծերից, — կազմվել է Տրդատի վեպը, այն էլ բոլորովին նման Արտաշեսի վեպին, ինչ որ արդեն տեսել ենք սվեպի հորինվածքի մասին խոսելիս:

80. Խոսքով Կոտակի վեպը:— Այս թագավորի, ինչպես և Երա Հաշորդ Տիրանի անունը հայտնի չէ արտաքին աղբյուրներից. բայց կարելի չէ ասել, թե դրանք ստեղծական են: Ինչ որ վիպվում է այս խոսքովի մասին ընդհանուր ամամբ պատմական է:

Կոստանդինոսի մահից (337 թ.) հետո վրդովում է քառասնամյա խաղաղութիւնը: Պարսից Շապուհ Բ թագավորը (309—381 թթ.) Միշագեռքում պատերազմ է սկսում Հռոմի դեմ (338 թ.): Այդ ժամանակ Հայաստանում ներքին խռովութիւններ և ապստամբութիւններ են առաջ գալիս: Պարսիկների կողմն անցածները ապաստակութիւններ են անում Եսլյնիսկ հռոմեական սահմանային երկրներում: Լինում են նաև հռոմեական կողմը փախչողներ և այնտեղ ապաստանողներ: Թագավորն էլ ստիպված է լինում փախչել պարսկասերների ձեռից: Բայց Կոստանդ կայսրը (337—361 թթ.) շատով, 339 թ., մտնում է Հայաստան և երկիրը խաղաղացնում ու կարգավորում է հռոմեական զբրիշխանութիւն ներքո՞ն: Այնուհետև մինչև 350 թ. պարսիկներն ամեն գարնան հարձակվում, ավերում մն հռոմեական մարզերը, առանձնապես Միշագեռքը: Կոստանդ կայսրն էլ գրեթե ամեն տարի արշավանք է գործում Պարսկաստանի վրա: Հայաստանում, սակայն, պատերազմ չի հիշվում: Ընդհակառակն, երկու կողմից էլ ամեն միջոցներով ջանում են հարևան ազգերին իրենց կողմը գրավելու: Հայերը Հռոմի կողմն են և 351 թ. Կոստանդ կայսրին հեծկազդրով օգնում են Ալեմուտքում նրա վաղած պատերազմի մեջ: 350—359 թթ. թշնամական հարաբերութիւններ չեն հիշվում պարսիկների ու հռոմայեցիների միջև՞ն:

Խոսքով Կոտակի վեպի մեջ Կոստանդ կայսրի և առհասարակ հռոմայեցիների հիշատակութիւն չի լինում: Մի անգամ միայն Վաչե զորավարի համար ասվում է, թե շերթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ

23 Մ. Խորենցի, Բ, 85:

24 Պարսկալի, Բն. պատմ. Հայոց, 9, նր. 9, հտե. ըստ Հուլիանոսի ճարհ:

Պարսի, 9-րդ դարում, Կաս. Բ, 462, հտե. 1:

25 Anabasis, նր. 148, հտե. 4

գերիւայն ճանապարհս ի կողմանս Յունացո. թե ինչու, այդ հայտնի չէ՝
 Հայերը գործում են Հոռոմից անկախ և ինքնուրույն: Քաղաքները զսպել
 և կոտորել է տալիս իրար դեմ պատերազմող նախարարներին, Պարսիկ-
 ները երեք անգամ հարձակվում են Հայաստանի վրա և երկու նախարար-
 ներ զավաճանելով՝ անցնում են պարսիկների կողմը, բայց Միշտ հազ-
 արում են հայերը և թագավորի կուսակիցները: Արդարև թագավորը փախ-
 լում է, բայց ոչ պարսիկների կողմն անցածների ձեռքից, այլ մազ-
 կութների արշավանքի ժամանակ: Այս ամենով հանդերձ՝ երկիրը ներ-
 սում ընդհանրապես խաղաղ է մնում: Ե՛տազգուցիւն և շինութիւն, մար-
 դաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածշատութիւն
 և շահեկանութիւն... յամս յաւուրս սոցա անհալ քաղցածուս (Թուզ., Գ.
 Գ. Ե.):

91. Տիրացի վեպը:— Այս թագավորի մտաին ուլի՛ն Հարունի չէ՝ ար-
 տաքին աղբյուրներից: Ինչ որ նոր հեղինակները նրա մասին գրում են
 բոլորն առնված է Բուզանդից և Մ. Խորենացուց, վրան ավելացրած
 իրենց ենթադրութիւնները:

Որ Տիրանը, Հայր Մարգարեի գրգռելով, կոտորել է տվել Արծրու-
 նիներին և Ռշտունիներին (Թուզ., III, ժը.), դրա պատմականութիւնը
 որոշելը հնարավոր չէ: Իսկ նրա գերվելու և կուրացվելու պատմութիւնը
 (Թուզ. III, ի.) իսկական վիպական պատմվածք է: Տիրան թագավորի
 ձեռքը հիշվում են և Վիպասանքի մեջ (Խոր., Բ. կք.), Վիպական է և
 Տիրանի գերեմարտութիւն պատճառով պատերազմը Հոռոմի և պարսիկ-
 ների մեջ: Արդարև այդ պատերազմն ունի պատմական հիմք: Բայց դա
 այսպիսի հիշողութիւն է պարսից ներսահ թագավորի և Փայերիսի
 ճակատամարտի, որ կատարվել է Հայաստանում 297 թ.: Վիպական ա-
 նաքրոնիքով այդ պատմվում է ներսահ թագավորի (293—303 թթ.) և
 Վազես կայսրի (364—378 թթ.) համար, որոնց համաձայնութիւնով և
 թագավորել է Տիրանի որդի Արշակը (350—367 թթ. կամ 368 թ.)²⁶:
 Այս անաքրոնիքով հենց պարզ ցույց է տալիս այդ պատմվածքի ավան-
 դական ծագումը:

Բայց ինչպիսի գրան՝ պատմաբաններն այդ այսպիսի պատմութիւն-
 նը համարում են իրական և կատարված 349 կամ 350 թվին: Նրանք
 հետևում են, սակայն, ավելի Մ. Խորենացուն, որ պատմում է, թե Շա-
 պուհի հրավերով Տիրանը գնում է նրա մոտ, ուր և նրա սպքերը կուրաց-
 նում է պարսից թագավորը:

Այդ հեղինակներից մեկը²⁷ փորձում է բացատրել, թե ներսահը
 պարսից թագավորը չի եղել. այլ պարսից զորավարը, ըստ երևույթին

²⁶ Այս թվականներին են Արշակի թագավորած զեւով Ասուրլահը. Գեորգ Աւրանը
 և ուրիշները:

²⁷ Asdourian, էբ. 147, ծան.

Քաղաքացիական ընտանիքի անդամներից մեկը, ուստի և Բուզանդի մեջ կողմում է պարսից Քաղաքացի, և թե Մ. Խորենացին նրան Շապուհի եղբայրն է անվանում (Գ. ժ.)։ Ուշադրութուն պիտի դարձնել, որ ըստ Խորենացու այդ եղբայր ներսեհը Խորովի մահից հետո, Տիրանի Քաղաքացիուց առաջ է Հայաստան մտնում այնտեղ Քաղաքացիու, բայց սքարտվում է հայերից։ Փուցն դա ծագում է վեպի մի փոփոխակից։ Բայց թե Բուզանդի մեջ ներսեհի և Փալիբլիտի ճակատամարտն է պատմված այդ շատ պարզ երևում է մանրամասնութուններից։ Կայսրն անձամբ իր բանակի գլուխ անցած մտնում է Հայաստան ընդդեմ պարսից Քաղաքացի ներսեհի։ Ճակատամարտից առաջ նա երկու մարզով, ծագրված, մտնում է պարսից բանակը, լրտեսում, ներսեհի ահադին բանակը պարտութուն է կրում, նա ինքը մեծակ փախում է. նրա բոլոր ճամբարը, գանձը, կանայք գերի են ընկնում հույների (հռոմայեցիների) ձեռքը։ Ապա հաշտութունից հետո՝ կայսրը ներսեհի կանանցն արձակում է մեծ պատվով, և բոլոր գերիներին ետ է դարձնում։

Այս ամենը Փալիբլիտի և ներսեհի ճակատամարտի հիշողութունն է։ Բայց այս ամենի մասին լռությամբ է անցնում Աստուրյանը։ Նա չի խոսում նաև անձամբ Հայաստան եկող Վաղես կայսրի մասին, նվ վերջապես չէր կարող պատահել, որ 350 թվին Հայաստանում այդպիսի մեծ ճակատամարտ կատարված լիներ պարսիկների ու հռոմայեցիների միջև, և այդպիսի ամոթալի պարտութուն կրեին պարսիկները ու դրա մասին չհիշեին արտաքին հեղինակները։

Չպիտի մոռանալ և այն, որ Բուզանդը միայն երկու անուն գրտե պարսից Քաղաքացիներից—ներսեհ և Շապուհ, և վերջինս առաջին անգամ երևում է միայն Արշակի որով (Գ., ժգ.)։ Ապա առանձնապես նկատի պիտի ունենալ, որ Բուզանդի պատմածը (Գ. ժ. խա.) իր ամբողջությամբ պարզապես մի վիպական պատում է թե իր ձևով և թե իր բովանդակությամբ։

82. Արշակի վեպը։— Այստեղ արդեն կան մի քանի պատմական հիշողութուններ այդ Քաղաքացիից։ Պատմական է նրա ամուսնությունը Ողոմպիի հետ (Բուզ., Գ. ժե.), Կոստանդ կայսրը, Արշակին իր կողմը գրավելու համար, հարկից ազատում է նրա կալվածները, որ նա ուներ Կասպաղովկայում, այլև նրան ամուսին լ է տալիս իր մեղած եղբայր Կոստասի(337—350 թթ.) նշանած Ողոմպիին։ Այս ամուսնությունը հիշվում է 357 թ., ուրեմն կատարվել է 350 և 357 թվերի միջև, խաղաղության ժամանակ։

Պարսից զորավարները 355 թ. սկսում են նեղութուն պատճառել Միշագետքին և Հայաստանին. բայց խաղաղությունը չի խանգարվում։ Պատերազմն սկսվում է 359 թ. Կոստանդ կայսրը 360 թ. մեծ բանակով գալիս է Կեսարիա, կանգում է իր մոտ Արշակին, որ խոստանում է հալատարիմ մնալ հռոմայեցիներին և մեծ ընծաներով վերադառնում է

Հայաստան, Եվ նա հավատարիմ վ՛ մնում Կոստանդ կայսրին, ինչպես և հետո Հուլիանոսին (361—363 թթ.): Այս մասին հիշատակութուն չկա վեպի մեջ: Ընդհակառակն, այնտեղ (Քուզ., Գ. ժգ. ժը.) պատմված է, թե Շապուհի հրաժեհով Արշակը գնացել է նրա մոտ, մեծ պատիվներ ստացել նրանից, երգվել է հավատարիմ մնալ նրան, բայց հետո փախել է նրա մոտից և այլն:

Այս ամենը հարկավ պատմական չէ:

Գուցե պատմական հիմք ունեցած լինին ներքին միջադեպերը, որ են՝ Արշակավանի շինութունը, Հայր Մարգարեի ուսանվելը (Քուզ., Գ. ժգ.), Գնելի սպանութունը և այլն, բայց այդ հնարավոր չէ հավաստել: Պատմական կարող է եղած լինել նաև Վաղեսին ուղարկած պատգամավորութունը, բարեկամության համար (ինչպես որ Արշակը Հուլիանոսին էլ պատգամավորներ է ուղարկել սրա թագավորելու ժամանակ): Բայց որ Արշակը, Վաղեսի վրա բարկացած լինելով, վեց տարի շարունակ ափերել տված լինի հոռմեական երկիրները մինչև Անկյուրիա (Գ., ժա.), այդ չի կարող կատարված լինել և հիշողութուն է թերևս Մացախիների դեմ վարած պատերազմի, որ բերում է նվաճերուսը:

Նույնպես իրողութուն չէ և այն, թե 359—363 թվերին տեղի ունեցած պատերազմի ժամանակ Արշակը Շապուհին օգնելու համար՝ շարդած լիներ հոռմեական բանակը Միջագիտքում (Քուզ., Գ. Կ.): Ամժիան Մարցեղինոսը, որ այդ պատերազմներին մասնակից է եղել և Ամիգի աման կոտորածից ազատված, ոչ միայն այդպիսի բան լի հիշում, այլ ընդհակառակն Արշակին անվանում է հոռմայեցիների մշտական և հավատարիմ բարեկամ: Այդ էլ, ուրեմն, այլափոխ հիշողութուն է անպայման ուրիշ դեպքերի, Միջագետքում Վաղարշի և Տրդատ Բ-ի ընդդեմ հոռմայեցիների վարած հաղող պատերազմների, որ երգվել է Արշակի վրա:

Չնայելով Արշակը հավատարիմ դաշնակից էր հոռմայեցիներին՝ Հուլիանոսի սպանվելուց հետո Հովիանոսը Շապուհի հետ հաշտվելիս ընդունում է այն պայմանը, որով հոռմայեցիները հայերին չպիտի օգնեն, երբ պարսիկները հարձակվեին Հայաստանի վրա: Այսպիսի մի կետ հիշվում է և վեպի մեջ (Քուզ., Գ. Կա.): Եվ պարսիկները 366 թ. սկսում են իրենց հարձակումները: Արշակն ու իր ժողովուրդն, ըստ Ամժիանի, շորտ տարի շարունակ հերոսական գիմադրութուն են ցույց տալիս իրենցից շատ ափելի մեծ ուժերով եկող պարսիկներին:

Այս պատերազմն ըստ վեպի տեսած է տամա ափելի քան զերեսունս (Գ. Կ.): Վճիռեսուն և զչորս ամս ետուն պատերազմ երկիրս Հարց ընդ թագաւորին Պարսիցս (Գ. ծ.): Վախճանը լինում է երկրի քայքայումն և Արշակի կորուստը: Այնուհետև պատմվում է, թե ինչպես Շապուհը փորձում է Արշակին և Անուղ բերդի մեջ բանտարկել տալիս նրան: Եվ հետո Արշակն ինքնասպան է լինում: Ապա պարսիկները աճերում և զերեվաբութուն են անում, առնում Արտագերսը և զերում ու շարամահ անում

Փառանձեմ թագուհուն. հետո ինքը Շապուհն էլ գալիս է Հայաստան և ավերմունքներ գործում, այլ և նույնն անում են Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը (Ռուզ., Գ. ժգ.—ժթ., Ծ. Ե.):

Բերենք Ամմիանից (ի է դպրութեան 12-րդ գլուխ) հետևյալը.

«Սակայն երկայնակեացն Շապուհ արքայ Պարսից, հանապազ մէտ ի յափշտակութիւն զոր սիրէր ի սկզբանէ անտի թագաւորութեանն, յետ մահուանն Յուլիանու և ամոթալի դաշտանցն առ ժամանակ մի պահեալ զմիարանութիւնն ընդ մեզ՝ ապա յանկարծ առ ոտն հարեալ զուխտն որ առ Յովիանու՝ յենէր ձեռնբեց արկանել զՀայս իսպառ ընդ իւրով իշխանութեամբս: Եւ զի հակառակ էր նմա ազգն այն՝ մերթ դաւով և լուսութեամբ նեղէր զերկիրն, և մերթ զնախարարոն և զմեծամեծս շանայր արկանել ի հրապոյրս, և զայս իբրն զհէն յանկարծ ի վերայ հասեալ նուաճէր: Ապա հնարիւք իմն իսբհութեան և սուտ երդամք զինքնին զթագաւորն Արշակ հրապուրեալ ի խնջոյս՝ տայր տանել հեռի ուրեք, հանել զայս նորա, և կապեալ ոսկի շղթայիւք—պատիւ որ ընծայի մեծամեծաց և համարի առ նոսա իբրև մխիթարութիւն ի վիշտս գերութեանն—արգելոյր ի քերզ մի անուանեալ Ագաթանս, ուր շարաշար տանգեալ մեռանէր նա սրով: Ապա զի մի ինչ պակաս իցէ ի նեղութեանն՝ յաւել երկուց փախստէից, Կիւղակայ ոսմեմն ներքինույ, որ մարդպետն լիալ էր, և Արտաւանայ զորապիթի զորաց յանձն առնել զՀայս, պատուէր տուեալ նոցա՝ շունալ առնուլ և կործանել զԱրտագերս քաղաք, ամուր պարսպաք և պահանորոքք, ուր ապաստանեալ էր կիսն Արշակայ հանգերձ որդւովն: Պաշարումն սկսաւ, այլ անատոյց բարձրովիւն տեղւոյն և սաստկաշունչ ձմեռն՝ անհնարին զառն գործէին: Կիւղակ իբրև ներքինի պիտէր վարել ընդ կանայս, յայս իմն ապաստան՝ հանգերձ Արտաւանաւ մատչէր ի պարսիպ անգր, և որպէս թէ պատգամս իւր առ տիկիինն ունիցի՝ անկասկած գտաւէր մուտ: Զառաչին փորձին արքն երկոքեան ահարկանել տիկնոջն և պահանորոգաց: Եւ յարարեալ նոցա զանագորոյն բարս Շապուհոյ՝ խրատ տային փութալ ունել զառաջս շարեացն անձնատուր լինենլով արագ: Այլ յետ քաղով քանից, որ աջապէս սաստկութեամբ պրնդէին տալ ի ձեռս զերկոյն, յանկարծ խանդաղատեալ ընդ արտասուտ տիկնոջն սխան աղեակից առնն, թելուս և քարտոյ իմիւք անն կալեալ՝ գազս ի բանի լինէին ընդ բերդակալսն՝ ի ժամագիր ժամու ելեալ զիշերայն յամբոցէն անկանել ի վերայ բանակին, և տուեալ երդումն՝ թողուին զԱրտագերս, գային այսովն ի բանակն ասել, եթէ ամբականքն խնդրեն աուրս երկուս խորհել զինչ առնելոց իցնն, այնպես վստահացեալ զօրուն անկասկած ի քուն լինէին: Այլ զմէչ զիշերու, մինչ խոր ի քուն էր բանակն՝ յանկարծ բանային դրունք ջազաքին, և զունդ մի ընտիր ընտիր զօրաց մեղով իմն և անգարբառ, սուսեր ի ձեռն, մտեալ ի զակիշն առնէին կոտորած մեծ, ոչ գտեալ ընդդիմութիւն ի Պարսից կուսէ անտի: Այս անակնկալ հարուած և տագնապն որ զհետ այնր եկն՝ զայրացոցին զՇապուհ, որ ընդ այն մանաւանդ բրդեր ի ցասումն, զի լուսա զփա-

խուստ արքայորդուն Պապայ, որոյ զազտ թողնալ զքաղաքն խրատու մօրն՝ եզիտ ընդունելութիւն մեծ ի Վաղեսէ, որ ցուցանէր նմա տեղի բնակութեան զէնդնեարիա քաղաք Պոնտացոց, և Հրաման տայր կարգել նմա ոսճիկս և ունել զնա մեծաւ շքով: Յայնչափ մեծարանաց կայսերն քաջալերեալ Կիւլակն և Արտաւան՝ առաքեցին հրեշտակս առ Վաղէս, խնդրել ի նմանէ՛ զօրս յօգնականութիւն և թագաւորացուցանել շաւրոց զՊապայ: Տալ զօրս յառնայր յանձն Վաղէս, հայեցեալ ի հանգամանս ժամանակին. սակայն տայր պատուէր Տերհետեայ զօրավարի՝ մուծանել զՊապայ ի Հայս վարն: Ղիշխանութիւն, առանց առելոյ զանուն և զպատիւ թագաւորի, և զայս առնէր վասն այնորիկ, զի մի ձգիցէ յանձն մեղադրանս, որպէս թէ հակառակ ինչ զաշանցն գործիցէ: Այս ամենայն անցք շարժէին յանճարին ցասումն զՄապուհ, որ գումարեալ զօր քաղում՝ սկիզբն առնէր արեւելի քանդել զՀայս: Ի մերձեանալ նորա զահի հարեալ Պապայ, և զի լուսէր նա ուստեք ակն օգնութեան՝ խոյս տայր հանգերձ Կիւլակաւ և Արտաւանաւ ի գրտիս լերանց, որ բաժանեն զՀայս ի Կողքացոց: Ամիսս հինգ կացեալ նոցա անդ յանտառախիս ե ի լեռնային վայրս՝ աշխատ արարին զթղնամիսն, որոց տեսեալ, եթէ ի զուր ծախեն զօժամանակն վասն սաստկութեան հմերայնոյն՝ այրեցին զամենայն ծառ պտղատու եզին զօրս յամենայն բերդս զոր առին զօրութեամբ զինու և կամ դատով, և բովանդակ զօրութեամբ իւրեանց անկան ի վերայ Արտագերից, զոր առին յնա երկուստեք ճակատուց որ սպանեցին զոյժ պահանորդացն: Կիկն Արշակայ հանդերձ աժենայն զանձիւքն անկաւ ի ձեռս նոցա: Այս զէպք ստիպեցին զՎաղէս առաքել զունցս զօրավարութեամբ Արիկեանայ՝ օգնել շաւրոց, եթէ Պարսիկք նորոգեցնեն զթշնամութիւնն: Ասկայն Մապուհ, որոյ խորամանկութեանն լզոյր լափ, և որ գիտէր, եթէ օգուտ անձինն այնպէս խն պահանջէր մտանել ի կեղծիս բարեկամութեան՝ ջանայր ի ձեռն արբանեկաց իւրոց աժել զիւրն զՊապայ: Յանդիմանէր զնա պատրուակաւ բարեկամութեան, զի այնչափ ազատութիւն շնորհաց Կիւլակայ և Արտաւանայ, որոց, ասէր, լնալ էր գերի, անձին պահեալ զստուեր միայն թագաւորի: Դիւրահասուն թագաւորն անկեալ ի վաղտնի որոգայթն՝ տայր տպանանել զերկուսին արսն և յէր զզուտն նոցա առ Մապուհ իբրև ի նշան հպատակութեան իւրոյ: Այս անագորոյն մահ հուսկ հարաւ վարդազակի ընդ ամենայն կողմանս Վճարեալ էր վասն Հայոց, եթէ Պարսից երկուցեալ ի վալստենէն Արիկեանայ՝ շէր գաղարեցուցեալ զգործ դաւաճանութեանն: Ուստի հաճեցան խնդրել ի ձեռն հրեշտակաց՝ ըստ պայմանի դաշանցն Յովիանու չինել միջամտութեամբ մերժել զպատգամն, և Տերհետիս առաքել երկուստսն լեզուներ: Մապուհ տրտունջ լինէր զիրացն եղելոց, նախ՝ թէ հակառակ զաշանցն Յովիանու ձեռն արկին շոտմայեցիք օգնական լինել Հայոց, երկրորդ անգամ՝ թէ շախարին երեսս պատգամաւորութեանն զոր առաքեաց կարգել յարդարել զիրսն. ապա համարելով զդաշինսն եղծեալս՝ կոչէր զազգս արուարձանեայս յօգնականութիւն, և պատրաստէր մտանել ի

ճակատ ի հասանել զարնայնոյն, տապալել զամենայն որ ինչ տանց նորա հաւանութեան գործեալ էր»:

Ինչպես կարելի է տեսնել Թուզանդի վիպական պատմվածքն էպոս նույնն է, ինչ որ ժամանակակից Ամմիանի հազորդածը: Սրա ասելով Շապուհն Արշակի աչքերը հանել է տալիս: Արդո՞ք այս չէ՞ վիպի մեջ պատմվել Արշակի հայր Տիրանի մասին:

98. Պապի վեպը:— Վերևում Ամմիանից արդեն տեսանք, որ հայերը Վաղեսից խնդրում են օգնութիւն և Թագավորեցնել Պապին: Եվ կայսրը վերը Տերենտին զորքով ուղարկում է Հայաստան: Պարսիկների և Հռոմի միջև պատերազմը տեղի վ՛ ունենում 371 թ. զարնանը, և պարսիկները պարտվում են: էպոս այս է պատմված, միայն վիպական ձևով, նաև Թագ., Ծ. ա., Բ., Գ., Կ., Ը.-ի. գրութաների մեջ:

Պատմական է նաև Պապի սպանվելը դավադրութիւնով: Ամմիանն այդ պատմում է, միայն սրա գրելով Պապին խնդրելի հրավիրողն ու պատմելով մոլորը Տրալանոսն է²², իսկ Թուզանդի մեջ (Ծ. քր.) Տերենտը: Այս եղծնագործութիւնը տեղի է ունենում 374 թ. աշնանը:

Հաջորդ Վարազդատի մասին, որին դնում են 374—377 թթ., ինչպես և Մանուելի մասին ոչինչ հայտնի չէ արտաքին աղբյուրներից: Անպայման դրանք ևս պատմական են, բայց թե որքան ճշտութիւնով պահված են դրանց մեջ եղելութիւնները, այդ հնարավոր չէ տեսնել:

94. Պատմական եղելություն և վիպական քանակություն:— Երբ ասում ենք, թե այսինչ վիպական դեպքը պատմական է, կամ էպոս պատմական է, այդ լայնոր է հասկանալ այն մտքով, թե վիպի մեջ հարազատ ճշտութիւնով պահված է պատմական եղելութիւնը: Նույնիսկ պատմական համարված մասերի մեջ էլ վիպը պատմական է լոկ այն լափով, որ դա հիմնված է մի կատարված իրողութիւն վրա: Հաճախ մի երկու գիծն են միայն պատմական, մնացածը եղելութիւն բանաստեղծական մշակութիւնն է, վիպասանների մտքի և երևակայութիւն արդյունքը, ոչ միայն վիպական մանրամասնութիւնների, այլև զազափարափոսութիւն նկատմամբ: Զենք կարող ասել, թե պատմական երկեր են անգամ Արշակի և Պապի մասին այն պատմվածքները, որոնց պատմական ծագումը հավաստի է: Բավական է միայն այդպիսի մի հատված համեմատել ժամանակակից Ամմիանի պատմածի հետ, և իսկույն կերևա տարբերութիւնը և հասկանալի կլինի հատվածի պատմականութիւնը: Այստեղ կրեքնեք մեկը միայն:

Վերևում Ամմիանից բերած հատվածից տեսանք, թե ինչ դեր են կատարում Կյուլաք (Cylaces) ներքինին, որ մաղաքած էր եզել, և Արտավան զորավարը: Արշակի բռնվելուց հետո՞ Շապուհը նրանց պատ-

²² Asdourian, էք. 159, 4ևն.1

վիրում է առնել Արտագերար, ուր ամրացած էր Փառանձեմը Պապի հետ: Կյուղակն ու Արտավանը մտածեցին, որ արարապիս, և իրեն պատգամավորներ ներս են մտնում, նրանք սկզբում փորձում են վախեցնել թագուհուն, որպեսզի նա անձնատուր լինի, բայց հետո անցնում են նրա կողմը. և ամեն կերպ օգնում են թագուհուն և Պապին: Նրանք կոտորել են տալիս պաշարող պարսկական զորքերը: Արքայորդին Պապ իր մոր խրատով, բերդից գաղտնի ելնելով փախչում է Վաղես կայսեր մոտ: Կյուղակն և Արտավանը պատգամավորների միջոցով Վաղեսից խնդրում են որ նա թագավորեցնի Պապին և օգնական զորքեր տա: Երբ Պապը վերադառնում է Հայաստան և երթակա է լինում Շապուհի հալածանքին, նրանք օգնում են նրան: Բայց հետո Պապը Շապուհի խորամանկ թելադրանքով սպանել է տալիս նրանց: Իհնչ այդ պարսիկները երկար պաշարումից հետո՝ իրենց բոլոր ուժով ջնկնում են Արտագերարի վրա և, երկուտեք ճակատամարտից հետո, սպառելով բերդազորի ուժը առնում են այդ բերդը և Փառանձեմը, բերդի բոլոր զանձեքով, ընկնում է նրանց ձեռքը: Վեպի մեջ գտնում ենք այս բոլորը պատմված, բայց տարբեր ձևով և վրայական մանրամասնություններով (Բուզ., Գ. Ժե.):

Պարսից թագավորն իր խղիաններին երկուսին մեկի անունը Ջիկ, մյուսինը՝ Կարեն, հինգ հարյուր բյուր (= հինգ միլիոն) զորքով ուղարկում է Հայաստան ավերելու Փառանձեմի ամրանում է Արտագերարում: Պարսիկներն այդ բերդը պաշարում են տասներեք ամիս:

Պապը, հակառակ Ամմիանի պատմածին, հենց պաշարման սկզբից Արտագերարում չէ:

Իսկ Պապ, որդին Արշակայ,
Ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին.
Ձի առ թագաւորն Յունաց դիպեցաւ:

Բուզ., Գ. Ժե.

Այդպես էլ պետք է լիներ ըստ վեպի, քանի որ առաջ պատմված էր Պապի մասին, թե պատանդ էր տրված նա:

Բայց ծնաւ ապա Փառանձեմ
Թագաւորին սւտար մի.
Եւ կոչեցին զանուն նորա Պապ.
Եւ սնուցին զնա, և ի լափ հասուցին:
Եւ իրեն չրթափեաց, և եղև հուժկու,
Նստաւ զնա պատանդ
Ի դուռն կայսեր յերկիրն Յունաց:

Բուզ., Գ. Ժե.

Կյուղակի և Արտավանի ու նրանց մատարած դերի մասին ոչ մի չխոսք:

Հանդես է գալիս Վասակ սպարապետի որդի Մուշեղը, որ զորագլուխ է Մայր Բաղատազունը բանակին: Մուշեղը նրանց հետ գնում է կայսրից խնդրելու, որ թագաժողովին Պապին և օգնի իրենց: Մինչ բանակ-ցումը ինքն է վարում, նրանք և Պապը ամեն շաբաթ դեսպաններ են ուղարկում Փասանաձեմին, որ գիմանա և անձնատուր շինի պարսիկներին: Քայքայաբան տասնուչորսերորդ ամսից հետո մահտարածում է ընկնում տեղի բերողների մեջ և վնասում էն բոլորը մոտ տասնմեկ հազար տղամարդ և մոտ վեց հազար կանայք: Եվ բերում է մնում է միայն Փասանաձեմ տիկինը երկու նախնիներով: Այժմ ահա երևան է գալիս Մարդպետը:

Ապա ինչ անուտ գաղտ չ անաս ի բերող Հայ Մարդպետ
ներքինին

Եւ թշնամանաց զտիկինն մեծապես իբրև սրող մի

Սկսու գնել թշնամանս ազգին Արշակունեաց,

Ճի վատախորհուրդք են, վատանշանք, կորուսին զաշխարհս ևս:

Երբաւի անց ընդ ձեզ այդ, և այլ զի անցցէս:

Ել գաղտուկ, և փախեալ:

Այնուհետև տիկինը տեսնելով, որ ինքը մեն մենակ է մնացել, բերդի դուռ բանում է: Պարսիկները բռնում են նրան և իջնցնում բերդից: Ինչ որ և ինչ գիշեր կրում, իջնցնում են հայոց թագաժողովի գանձերը և թագուհու հետ քշում դեպի Պարսկաստան:

Մի կողմ թողնելով վիպական մանրամասնությունները, տեսնում ենք, որ վեպի մեջ Մամիկոնյաններին մեծ դեր է տված, Արտազեհրսի առումը պատմված է իբրև հետևանք ոչ թե հայերի պարտության, երկուստեք ճակատամարտից հետո, այլ աստվածային պատուհասի, և այն էլ ինչ մեծ շահագրգիռումով: Եվ վերջապես ուղադրություն պիտի առնել ներքինի Հայր Մարդպետի գաղտնի կերպով բերդը մտնելն ու քաղաքում թշնամանելը (= անպատվելը): Դա մի հիշողություն է Կրուշակի և Արտավանի Արտազեհրս մտնելուն:

Պապն, ինչպես Ամմիանը պատմում է, Շապուհի խորամանկ թելադրությամբ ապանել է տալիս Արտազեհրս մտնող Կրուշակին և Արտավանին: Այդ երկու սպանությունն էլ կա վեպի մեջ պատմված ամենայն մանրամասնություններով:

Պապին, երբ նա արդեն թագաժողով էր, պատմում են Հայր Մարդպետի վերահիշյալ արարքը: Նա Մուշեղին հրաման է գրում լարամահ անել Մարդպետին: Եվ Մուշեղը կատարում է թագաժողովի հրամանը: Նա Մարդպետին դավով իր մոտ Ողական բերդն է կանչում, իբրև նրան մեծաբնու համար:

Եւ էին աուրք ձմերայնոյ,

Եւ սաստկացեալ, կցեալ էր գետն նփրատու

Ապա կոշեալ հղև առ նա Հայր Մարդպետն

Իրրև ի պատիւ մեծարանաց.

Եկն հմուտ Մարդպետն ի բերդն յՈղական:
Ետ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն՝
Ունել զնա և մերկանալ իրրև ի մօրէ,
Եւ կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա,
Եւ իշուցանել զնա ի դետն,
Եւ զնել ի վերայ սառինն կցելոյ գետոյն.
Եւ սատակեցաւ անդէն:
Եւ եղև ի վաղիւ անդր շողան, տեսին,
Ջի ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեայ,
Ի քաց իշեալ, թափեալ էր ընդ քիթս նորա:

Բուգ. Ծ. Գ.

Նրա տեղը հայր մարդպետ է կարգովում Գողակ անունով մեկը, որ Արշակ թագավորի կամ նրա հայր Տիրանի օրով մի անգամ կատարել էր Նույն մարդպետութեան գործը: Այս ԵՊողակն անունը, որ հետո երևում է ԵՊողակն Անով, պետք է ուղղել ԵՊողակո: Դա Նույն անունն է, ինչ որ Ամմիանի հիշած Կյուրակ մարդպետը: Սրան էլ Պապ թագավորը ապանել է տալիս:

Երբ հայ և հռոմեական զորքերը Շապուհին վերջնապես շարժում են, Տերենտ և Մուշեղ զորավարները Գողակին երեսուն հազար զորքով սահմանապահ են փողոսում Հայաստանի և Պարսկաստանի սահմանի վրա: Նա կաշառվելով դավաճանություն մտածանում և Շապուհին նրա ձեռք մատնել Պապ թագավորին և Մուշեղ զորավարին: Բայց հավատարիմ նախարարներն այդ իմաց են տալիս թագավորին: Սա իր մոտ է կանչում Գողակին, նրան պարտից թագավորի մոտ դեսպան տղադակելու պատրվակով, և սպանել տալիս նրան:

Եւ հատին զգլուխս նորա,

Եւ հանին հարին ի նիզակի,

Եւ կանգնեցին ի հրապարակին արքունի:

Բուգ. Ծ. Գ.

Այս երկու մահապատիժները, որ կատարել է տալիս Պապը, Նույնն են, ինչ որ գտնում ենք Ամմիանի մոտ: Բայց վերջինիս պատմածի և վեպի պատմվածքի մեջ մեծ տարբերություն կա:

Ինչի՞ց և առաջանում այդ տարբերությունը:—Ամենից առաջ նրանից, որ, ինչպես ասինք, վեպը պատմությունն չէ, այլ քանաստեղծություն. վիպասանը պատմադիր չէ, այլ քանաստեղծ: Նրա նպատակը չէ կատարված եղելությունը ճշտությամբ վերարտադրել: Նրա խնդիրն է հարկավոր ձևով լուսաբանել պատմությունը: Այդ պատճառով նա պատմությունից չի առնում ամբողջը, այլ միայն նրա մեկ մասը: Բացի այդ՝ նա պատմությունը փոփոխության և ենթարկում, և տալիս է կա-

ասարձան իրականութիւնն իր ժախանակի պահանջի համեմատ անցիտու-
կան արժեքաւորում, որոշ անցիտուկան իմաստ Գնչականի վիպա-
սանք պատմութիւնից սանդժում է այն, ինչ որ սպում է ինքը, իր սե-
կրեզիբը:

Պայ թագաւորն զեռ թագաւորան սպանել է տալիս իր երկու վա-
տալիս: Վիպասանը չէր կարող նրանց ժողովարտիք ներկայացնել: Ամ-
ժիւնի պատմութի համեմատ, — եթէ միայն որս պատմածը համապա-
տասխան է իրականութեանը, — թէ ժողով թագաւորն իր քարեկամներին
սպանել է տալիս խարվիւղ խորամանկ Շապուհից, նա այդ սպանու-
թիւնները պատճառարանում է այլ կերպ: Քաղաքը պատժում է նրան-
ցից մեկին իբրև իր մորն անարգողի, իսկ մյուսին՝ իբրև մի դավաճանի:
Քնականաբար այդ ժամանակ պատմութիւնն ամբողջապէս շի առնվում,
և ըստ վիպասանի լուսաբանութեան կրում է փոփոխութիւն:

Իրական պատմութեան այս փոփոխութիւնն էլ կազմում է ավան-
դական բանաստեղծութիւնն ընտրող կողմը:

Մ Ի Զ Ա Վ Ա Յ Բ Ը

84. Երեք դասերը:— Պատմական հիշատակարանները շատ սակաւ
անդեկութիւններ են տալիս մեզ հայոց պատմութեան այն դարաշրջ-
անի ներքին կյանքի մասին, երբ ստեղծվել և ապրել է մեր այս հերո-
սական վեպը մինչև նրա օգտագործումը պատմութեան համար: Բայց
վեպն ինքն իբրև բանաստեղծութիւն, իբրև մի այդպիսի պատմական
հիշատակարան, իր մեջ պահում է փառամարիվ գծեր այդ մասին: Նրա մեջ
քեմ է հանված ռազմիկ ազնվականութիւնն իր պարապմունքներով, որ
է՛ որսորդութիւն, խնջույք, քսութիւններ, խարզավանքներ, պատերազմ
և ավարատութիւն:

Ազնվականութեան հետ հանդես են գալիս եկեղեցական դասից կա-
թողիկոսները: Նրանք հենց սկզբից, իբրև հոգևորականութեան ներկա-
յացուցիչներ, կարևոր դեր են խաղացել, ուստի և մեկ-մեկ մտել են վե-
պի մեջ: Զպետք է մոռանալ, որ կաթողիկոսներն իբրև քաղաքական մեծ
տոհմից էին: Մեծն ներսեսի մայրը, Բամբիշ անունով, Տիրան թագաւորի
քույրն է եղել, ըստ Բուզանդի, և ներսեսն ինքը, կաթողիկոս ընտրվե-
լուց առաջ, զէր ի վարս զինուորութեան ի գործակալութեան, սիրելի սե-
նեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց
կենաց թագաւորութեանն ի ներքու և արտաքուց (Բուզ., Գ. գ.): Եվ
հոգևորականերից այդ ներսեսն Է իսկապէս, որ երևում է վեպի մեջ
իբրև գործող անև: Գրանով վեպն անշուշտ, զեռ շատ չի ստանում բրի-
տանական քննադրութիւն:

Ննդալական հասարակութեան երրորդ դասը, աշխատավոր ռամիկը,
տնտեսապէս, քաղաքականապէս և իրավապէս կախված է եղել կրօնա-

ժատերերի այս երկու անաշխատ վայելող դասերից: Նա միշտ մնացած է եղել անուշադիր: Մեր հին պատմագիրներն էլ մոռացութեան են տվել նրան, զոր առնելով միայն ազնվականների պատերազմներն ու հոգևորականների գործերը: Բայց և այնպես շինականները հիշվում են մեծ կոթերի մեջ (Քուզ., Ծ. փգ.), ինչպես և Երկրի ընդհանուր վիճակը տնօրինելու համար հավաքված ժողովների մեջ: Այսպես, Տիրանի գերվելուց հետո, շինականներ կան այն ժողովի մեջ, որով որոշում են պատգամավորութեան տղարկի ռաւ Թագաւորն Յունաց, զի ի նա ձեռս տուեալ՝ ժառանգեցն նմա հնագանդոթեամբ: Շինականները, իսկս պես թղասապետը շինականաց, մասնակցում են նաև ներսնսի մոտ հավաքված այն ժողովին, որի մեջ ուղում են դադարեցնել երեսնամյա պատերազմը (Քուզ., Գ. իա., Գ. ժա.):

Արշակաւանի դրվագի մեջ երեւում է աշխատավորութեան՝ վերին երկու դասերի դեմ մղած զնվի հետքը: Մեր պատմագրաները դրա մեջ տեսնում են Թազավորի պայքարն ընդդեմ նախարարների: Քուզանդի բերած փոփոխակից, ապաւյն, այդ պարզ լի Երևում: Այստեղ պատմվածքն ունի ուժեղ կրօնական բնույթ. փառավորվում են նաղն և ներսնսր:

Ջախու: ժամանակաւ շինեաց իւր արքարն դաստակերտ մի
 Ի հովիտն անուանեալ ի Կոզ դաւառի:
 Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ,
 Եւ հրամայեաց կարգել քարոզ
 Ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ.
 Եւ ամենայն կողմանս գաւառացն
 Լի առե՛ր հրամանաւն արքունի,
 Զի՛՝ ԵՅՔէ՛ յոք ումեք ինչ պարտիցի,
 Եթէ՛ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ,
 Կամ ոք տանք ինչ դատ պարտիցի,
 Ամենեքեան եկեացն ի դաստակերտն շինեացին:
 Եթէ՛ արիւնաճան ոք իցէ,
 Կամ վնաս ուրուք արարեալ իցէ,
 Կամ զկին ուրուք տարեալ իցէ,
 Կամ պարտապան իցէ,
 Կամ ոք զուրուք կարասի ունիցի,
 Կամ ոք յոռեքէ երկիրդած ինչ իցէ,
 Եւ եկեացէ յայն տեղի,
 Դատ և յրաւանք մի՛ լիցին:
 Իսկ Եթէ՛ ոք ումեք ինչ պարտիցի,
 Եւ որում պարտիցին՝ եկեալ յայն տեղին,
 Առանց դատի և իրաւանց
 Կալցի՛ն և ի սրուքս տարցինէ:

Փրբն ել հրաման յարթայէն,
Ժողովեցան այնուհետև յայն տեղի՝
Ամենայն գուրք և աւաղակք,
Արինահանք, սպանոզք, սուտք և մարդելոյզք,
Վնասակարք, դանձահատք, զրկողք, ստաղատք,
Ջրախօսք, դեղիփողք, յափշտակողք, ժլատք:

Բազում վնասս առնէին,

Եւ անդր անկանէին.

Բազում կանայք զարս թողուին,

Եւ անդր անկանէին.

Բազում արք զիրեանց կանայս թողուին,

Եւ զայլոյ կանայս առնալ՝ անդր անկանէին.

Բազում ծառայք զիրեանց տերանց զգանձս ըմբռնեալ,

Փախուցեալք անդր անկանէին.

Բազում աւանդատուք տրամադա չի,

Ճարահատս բարձեալ՝ անդր անկանէին:

Գերփէին, աւերէին՝ զերկիրն ամենայն:

Ջրփէլպէտ և կարի յոյժ քաղմեցաւ աղաղակն,

Գատ չկայր.

Եւ իրաւունք ումեք յարքունուտ ոչ ելանէին:

Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին,

Եւ ասէին ի հաւանել քանիցն իւրեանց.

Այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին,

Առ հասարակ ամենեցուն ասելով

Քէ՛՝ զիրաւունք մեռան,

Եւ վասնայսորիկ ոչ գտանէին.

Այլ թէ է՛ր և կորուսեալ էին,

Ուր և էր՝ ջանայաք, խնդրէաք, գտանէա՛քս:

Իսկ տեղին աւանանայր, ճաղաքանայր.

Մեծացա՛ւ, բազմացա՛ւ և ելից զճովիտն ամենայն:

Ապա տայր հրաման արքայն Արշակ

Գնել զանուն զաստակերտին,

Յուրակից անուն Արշակաւան:

Եւ շինեցին ձս անդ ապարանս արքունի:

Յուզ. Գ. ժք.

Եւ անդ ոչ մի պայմանով եկեղեցու սեղան չի շինում Արշակաւա-
նում, իսկ Ներսեսը հետաքայլում անիժում և այդ քաղաքը, և նրա անեծ-
քից երեք օրով մեջ կոտորվում են բոլոր շնակիչները:

Նորենացու պատումով, սակայն, Արշակաւանի շինութիւնն ուղ-
ղված է նախարարների շահերի դեմ. զու բազում անգամ բողոքեալ նա-

խարարացն, և ոչինչ լուսա չտոցա Արշակ. մինչև առ Շապուհ ես օւնել նոցա լողոցք: Երբ Շապուհի զորքերը մտնում են Հայաստան, և Արշակը փախում է Կովկասի կողմերը, սեպարարացն Հայոց ժողովն ալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի և ճարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց սստնդիացաց. քանզի դառնացեալաց էին իրագանչիւր ի վերայ ծառայից իւրոց և յանցաւորաց (Խոր., Գ. 145.):

Որ պատմական իրականութիւնն, Արշակաւանի շինութիւնը բնորոշված է իբրև դոզերի, ավադակների, մարդասպանների ժողովարան, Եթովպ մարդկան մեղաւորաց, այդ վերաբերվումնն օւ շոտաւարանութիւնը միայն բավական են ցույց տալու, որ այդ զրույցը ծագել և այդ գոյնով պատմվել է ընդդիմադիր հողերական և նախարարական շրջաններում, բայց օւնեցել է իր ուրույն օոցիաւական իմաստը: Դա զրովվածների, նեղվածների, տառապալինների մասսայական ըմբոստացումն է ճնշողների դեմ: Քապալորն իր կովի մեջ ընդդեմ նախարարների՝ ոգտագործում է այդ ճնշվածներին, թրագում ծառայք զիրեանց տիրանց զգանձա ըմբռնեալ, անդր անկանէինն, թՄառաններն այստեղ վասալները լին, ալլ աղխատաւորները:

85. Ազնվականութիւն:— Ընդ ալլ օւնեցի մեջ բաւական ուժեղ կերպով գծագրված է Ֆեոդալների կենցաղն ու պատկերը: Այնտեղ օմենից առաջ այդք է ընկնում այն, որ թագաւորի հետ կան բազմաթիւ ազնվական տոհմեր, որոնք ունեն հողեր, երգեմն նույնիսկ զգալաւատեքա թաշխարհատերք, զգալաւատկալա են: Նրանց վրա է հենված Ֆագաւորի իշխանութիւնը, և նրանցից քառ բան է կախված: Պետական և հասարակական կազմը հենց այդ տոհմերով է:

Կարեւոր դեպքերում լինում է ժողով, խորհուրդ կամ թագաւորի մոտ, կամ առանց նրան: Բայց դրանով զի օւհմանափակվում թագաւորի իշխանութիւնը: Ալլ, ընդհակառակն, լողոք տոհմերը անբարկիւմ ան թագաւորին: Տոհմի օւհմանապետ լինում էր տոհմի մեջ ավագը, տարիքով մեծը. բայց, ինչպես երևում է, այդ էլ թագաւորի կամքով էր լինում:

Ս: կացոյց արքայ զՎարդան, զերէց հղբայրն,

Ի նահապետութեանն ազգին իւրեանց,

Ս: զՎասակ, զմիջին եղբայրն, զիւր դայեակն,

Ի սպարապետութիւնն զօրավարութեան,

Յիբս պատերազմացն.

Սոյնպէս և զկրտսերն ի պէտս զօրացն կացոյցանէր:

Սոյնպէս և զամենայն ազգս զօրացն,

Մեծամեծացն նահապետացն...

Մեծամեծքն յիւրացանչիւր գահու,

Ս: զործակալքն յիւրացանչիւր շափու...

Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ, որ գործակալս անուն,
Բարձիք առաջի արքային, պատիւ ի դլուխ բազմէին,—
Քող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս,—
Որք գործակալք միայն չին՝ ինն հարնւր բարձ,
Որ մտանէր ի մաս տաճարին ուրախութեանն,
Բուգ., Գ. Բ.

Այս ինն հարյուր թիվն, անշուշտ, վիպական լափազանցութիւնն է,
ազնվականների թվի մեծութիւնը փառավոր ցուց տալու համար ստե-
րութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրինն:

Ինչպես Արշակ թագավորը Մամիկոնեան տոհմի նահապետ կարգում
է Վարդանին, նույնպես և Վարազդատը՝ Մուշեղի մահից հետո, այդ
տոհմի նահապետ է կարգում Վաչեին:

Եւ ազդին Մամիկոնեան տոհմին
Տանուտէր նահապետ կացոյց թագաւորին՝
Վաչէ անուն ի նմին տոհմէ:

Բուգ., Ե. Է.

Բայց երբ Վաչեի եղբայր Մանուելը գերութիւնից վերադառնում է,
նահապետ դառնում է նա:

Փանգի նա էր երէց յազգին...
Եւ Վաչէն լինէր երկրորդ:

Մանուելն սառսոնց հրամանի թագաւորին Վարազդատայ լինցն
յափշտակեաց զգորտվարութեանն զսպարապետութիւնն. զի այն ինչ տր
իւրոց նախնեացն ի բնէն կալեալ վր փ սկզբանէ, զոր սարքայն Վարազդատ
շնորհ առնէր փառամ դայեկին Բատայն:

Ազնվական տոհմերի նշանավորութիւնը, ամեծազգեաց լինելը,
ամենակարեւոր քանն էր համարվում: Գտնն ու բարձր կապված էր դրա
հետ, թագավորի հետ սեղանի նստելիս՝ սնահապետք մեծազգեացքս ավե-
լի բարձր էին նստում: Գրանց պատիւնն ավելի մեծ էր: Այդ պատճառով
վեպի մեջ շեղտվում է գահի աստիճանը: Գրաստամատի համար ասվում է-

Եւ բարձ նորա ի վեր քան զսմենայն նախարարացն:
Բուգ., Ե. Ե.

Իսկ Աղձնիքի քղեշխի համար ասվում է.

Որ էր մի ի շորից.

Գահերէց, բարձերէց տաճարին արքունի:

Բուգ., Գ. Բ.

Պատվի դադափարն այս ֆեոդալական շրջանում կապված էր տոհ-
մի հնութիւն, նշանավոր ծագման հետ: Մանուել Մամիկոնեանն ասում է
Արշակունի Վարազդատ թագավորին.

Նա՛ մեք շեմք իսկ լեալ ձեր ծառայք,

Այլ ընկեր ձեր և ի վերոյ քան զձեզ.

Զի նախնիքն մեր լեալ էին թապաւորք աշխարհին ձեռնաց:
Բուգ., Ե. 12.

Արշակունի հայ թագաւորն իրեն քարկր էր դասում, քան Սասանյաններոյ Գերի Արշակ թագաւորը Հայաստանից բերել տված հող ու չրի վրա՝ ստում է Շապուհին.

Եի բաց կաց յինէն, ծառայ շարագործ,

Տիրացեալ տերանցն քոց.

Այլ ոչ փողից քեզ և որպոց քոց

Զվրժ նախնեաց իմոց.

Եւ դմահն Արտևանայ արքային:

Զի ռայժմիկ ձեր, ծառայից,

Զմեր, տերանց ձերոց, դրարձ կալեալ է.

Բայց ո՛չ թողից,

Ինձ ոչ տեղիդ մեր առ ձեզ եկեսցէ:

Բուգ., Գ. 39.

Ամենամեծ անպատվութիւնն էր ծագումով բարձրին ցած դահի վրա նստեցնելը: Այդպէս վարվում է Շապուհը գերի Արշակի հետ:

86. Ամուսնութիւնը.— Ինչպես վրանքի, նույնպէս և վեպի մեջ անհասարակ սիրված վիպական սյուժետներից մեկն է ամուսնութիւնը, ուստի դա մի քանի ուրիշ փոփոխականերով պատմված է և Օթարից պատերազմից մեջ: Ազնվականի կյանքում կարևոր տեղ էր բռնում նրա ամուսնանալը: Այս խնդրում ևս պահվում էր քաջատիվը: Անպատվութիւնն էր համարվում ավելի ցած ազնվականի հետ ամուսնանալը: Գրահամար մի տիպիկ դրվագ է Տրդատ Բագրատունու ամուսնութիւնը Տիրան թագաւորի Ծրանյակ դասեր հետ: Սա աստում վէ իր մարդուն, — որ սրտոտ և ուժեղ տղամարդ էր, բայց կարճ հասակով և գծած տեսքով. սպըրանոց և պոստելով կայր զօրանանապագ (Ծրանեակ), աւղելով գինքն, իբր թէ լքնաղակերպ ընդ վատակերպոյ և քաշատոհմիկ ընդ վատթարազգոյ բնակէ: Տրդատը մի օր բարկանալով նրա վրա՝ ստատիկ ձեռնում է նրան, դեղձան մազերը կտրում և սենյակից դուրս ձգել տալիս նրան:

Այս գրույթին միացել է մի ուրիշը: Տրդատը թագաւորից ապստամբելով գնում վէ ամուր կողմեր, Հասնում է Սյունիք: Այստեղ Բակուր իշխանը նրան ընթրիքի է հրավիրում.

Եւ եղև յատր միտում կռչել քնա յընթրիս Բակուր ճահապետին Սիւնեաց. և յուրախանալն զինւով՝ տեսնալ Տրդատայ զկին մի, զի յոյժ զգիցցիկ էր, և անգէր ձեռնամբ, տրում արեուն էր Նաղիների, տրիպացաւ և ասէ զԲակուր. «Տո՛ւր ինձ զվարձակս զայս: Եւ ես ասէ. «Ո՛չ տամ, զի հարձ

իմ էա: Իսկ Տրդատայ բուռն հարեալ ի կիսն, յիևքն քարշեալ ի բազմա-
կանն, շամքըցեալ սլաւաշէբ ըստ օրինակի երիտասարդի անարգել տար-
փաւորի: Ընդ որ խանդացեալ թակրոյ, յարեաւ հանել զնա ի նմանէ: Բայց
յստն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղքն իբր զիեռ վարեցաւ, նա
և զբարձակիցսն ի բազմականացն ի բաց պուղեաց: Եւ անզ էր տեսանել
նոր պոմն Ռդիւնա՝ զՊէնկուպայ զսեղեխս սատակելով, և կամ զՂապի-
թեայցն և զյուշկապարկացն կոխս ի վերայ Պերթեայ հարսանեացն: Եւ
այնպէս յիւր վանսն եկեալ, իսկոյն ի ծի ելեալ հանդերձ հարճիւն ի Ապեր
զնաջս (Խոր., Բ. կց.):

Վեպի դարաշրջանում եղել է բազմակնութիւն: Յեռալներն ունե-
ցել են հարճելու: Բացի այդ՝ նրա մեջ գտնոււմ ենք, որ հին փշխողները
իրենց կանանոցը գեղեցիկ ժողջիկ են քաշում, մի սովորութիւն, որ
մինչև մի դար առաջ բանեցնում էին նրանի խաները: Ինչպես երևում
է, եղել է այդ մասին մի զրույց, որ տարբեր փոփոխականորով պատմվել
է մի Տրդատի վրա: Խորենացու պատումով դա կցված է Վիպասանի
ցիկլին և պատմվել է Տիրան թագավորի փեսա Տրդատ Թագարտունու
վրա, որ կռուով ուրիշից խլում է գեղեցիկ նազիկներն: Իսկ Ազաթանգեղոսի
պատումով այդ զրույցը վերագրվել է Տիրան թագավորի պապ Տրդա-
տին:

Թագավորի համար գեղեցիկ աղջիկ են որոնում նրա մարդիկն ամեն
կողմ ման գարով: Եվ ահա Վաղարշապատի հնձաններում գտնոււմ են աղ-
քատ կանաչք և նրանց մեջ սքանչելի գեղեցիկ Հոսիպիմեին: Նրա գեղեց-
կութիւն համարուել շուտով հուշակովում է բազմամբոս հրապարակներում:

Իսկ ի տեսիլ գեղոյ նորա կուտեալ,
Յեղեալ զեղծալ խուռն կաճառացն կուտակէր:
Նաև նախարարք և մեծամեծք աւազնաւոյն
Ընթացեալք ի տեսանել՝ զմիմեամբք ելաւէին:
Նաև ազատակոյտն՝ խառնաճաղանճ ամբոխիւն հանդերձ՝
Զմիտիամբ քիզամեկին, ի միմեանց զեղբայ:

Թագավորը լսելով նրա գեղեցկութիւն մասին՝ հրամայում է նրան
արքունիք բերել: Իսկույն ապաստվորները ոսկիապատ դահավորակներ,
ազնիւմ ու գեղեցիկ հանդերձներ և զարդարանքներ են տանում նրան, որ
զարդարվի և շքով ու պատվով մտնի քաղաք և ներկայանա թագավո-
րին: Եթադիր լինելու համար գնում են նրան բերելու նաև նախարար-
ներն ու ավագանին: Բայց աղջիկը չի ուզում գալ: Այն ժամանակ թա-
գավորն ասում է.

«Փոխանակ զի ոչ կամեցաւ
Գալ պատուով, շքեղութեամբ, կամօք,
Թունարար ածցեն մինչև յապարանս,
Եւ մուծցեն զնա ի սննեակ արքունիս:»

Սպասավորները կատարում են թագավորի հրամանը: Տրդատն էլ
պալիս է նույն սենյակը:

Արդ՝ իբրև եկն եմտտ նա ի ներքս,
Առհասարակ մարդիկն՝
Ոճանք արտաքոյ ապարանիցն,
Կէսքն ի սողոցս ի ներքսադոյնսն,
Առհասարակ երգս առեալ թարբանեցան՝
Կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ մարդկանն.
Կէսքն ի գերդամիջին,
Եւ կէսքն զքաղաքամէջն լցին խնճոյիւրք.
Առհասարակ համարէին
Հարսանեացն զպարսն պարել
Եւ զկաքաւսն յորդորել:

Ազաթ.

Մինչդեռ Տրդատի ու Նազինիկի զրույցին սկզբից միացել է Երան-
յակի մասը, Տրդատի ու Հռիփսիմեի զրույցին հարակցվել է տղայի և
աղջկա մենամարտը: Դա մի հին վիպական գիծ է, անդրադարձումն հին
բարքի, որ մինչև XIX դարի վերջերը զեռ իբրև գերապրուկ մնում էր
Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի լեռնաքնակ այլազգիների մեջ:
Կտրճուհին ամուսնանում է միայն այն կտրիճի հետ, որից կհաղթվի
ինքը մենամարտի մեջ: Այս միենույն մենամարտը զտնում ենք Մու-
շ(եզ)ի ու Եղջիկ Տարունիչ և Դավթի ու Խանդուբի համար պատմված
նուրն և նաև Տրդատի ու Հռիփսիմեի մենամարտը:

Երբ Հռիփսիմեին մտնում են արքունի սենյակը, թագավորն էլ
մտնում և այնտեղ, ռթուռն հարկանէր զնմանէն կատարել զկամս ցան-
կութեանն: Իսկ աղջիկը զորացած.

Գազանարար ոգորեալ, առնարար մարտնչէր.
Իբրև յերեք ժամուց սկսեալ՝
Մարտնչել մինչև ի տասն ժամն,
Պարտեալ լինէր թագաւորն:

Մի անգամ որ մենամարտի մեջ հաղթում է աղջիկը, ամուսնու-
թյունն էլ զլուխ շի զալիս, և նա փողնում է ապարանքը: Նրան սպանում
են իբրև թագավորի հրամանը չկատարողի:

Իսկ թագաւորն թողեալ
Ջիւր ամօթն կտրանաց...
Եւ զայն ոչ էր եղեալ ի մտի
Չամօթն նախատանացն,
Այլ ի տեսիլ պիտոյ նորա ջեռեալ,
Տրումեալ ընդ մահ աղջկան,
Տխրացեալ սզանայր...

Վասն օքանչելոյն Հոփփօսիմեայ,
 Որոյ ոչ գորհ համեմատ յերկրի ի ծնունդս կանանց
 «Վասն զի սիրտ հարեալ զհետ»
 Անժոռաց ի մտացս շանկանի,
 Մինչ կենդանի եմ ես Տրդատ արքայա...
 Իջեալ նստէր ի վերայ գետնոյ,
 Եւ լայր և ի սուգ մտանէր:

Այս վիպական պատմվածքին Ազաթանգեղոսի մեջ տրված է շափազանց կրոնական բնավորութիւն և առաջ է բերված մի քրիստոնեական վկայաբանութիւն: Հոփփօսիմեն իր իր կուսութիւնը պահելու համար՝ լի ուզում ամուսնանալ ոչ Հոռմի կայսրի և ոչ հայոց թագաւորի հետ և որս համար նահատակվում է իր ընկերներով: Վաղարշապատում նստած հոռմեական կայազորի հետ, անշուշտ եղել են հոռմայեցի կանայք, որոնց մեջ կարող էին և քրիստոնյաներ լինել: Այդ կանանցից մեկը կամ մյուսը կարող էր III դարում նահատակված լինել քրիստոնեութան համար: Այդ պետք է ընդունել, քանի որ V դարի ակադեմից արդեն Վաղարշապատում հայտնի են եղել նրանց վկայաբանները: Այդ քրիստոնեական սովորութիւնը հարակցելի է Տրդատի համար ասվող գրույցին և զարդարված է վկայաբանական ձևերով: Թայց երբ կրոնական միտումները դուրս են ձգվում, մնում է միայն մի վիպական քանահայտութիւն ամուսնութեան մասին:

Մի առանձին պատում է եղել Գնեյի ամուսնութիւնն ու սպանվելն իր ւկին Փառանձեմի պատճառով, և սպա Արշակի ամուսնանալն այդ կնոջ հետ: Այս Փառանձեմի վեպի մեջ երևան են զայլս ներքին պալատական խարդախանքներ կանանց և սոցալականների մեջ: Հիշվում են և, արայես ասած, քաղաքական ամուսնութիւններ, որոնք կատարվում են որևէ քաղաքական հաշվով: Եսպոհե՛ն ուզում է իր դուստրը տալ Արշակին կնութիւն, և այդ առիթ է դառնում պալատական ինտրիգների: Փառանձեմի հայր Անդրովիլն, Փառանձեմի պատճառով արայես է անում, որ Արշակն իր քանակով փախչում ք Մապուհի մտայից (Թագ., Գ. ի.) և Թևսպես քաղաքական ամուսնութիւն է եղել Արշակի առեւել Ալիմպիային: Թայց վեպի մեջ դրան տրված է ներքին կանախտացիւն բնութի Փառանձեմի խարդախանքով: Կանանց մատը խառն է և ուրիշ դեպքերում: Վասակի եղբայր Վարդանի սպանման պատճառն է նաև միևնույն Փառանձեմը. որ Գնեյի անհավան վրեժն է ստնում նրանից:

97. Որսորդութիւն և ձի:— Մեծ տեղ է տրեւել աշնվարկանի կենցաղի մեջ որսորդութիւնը, որի մասին և հաճախ պատմվում է վեպի մեջ հենց սկզբից: Մամկոնը որսի ժամանակ սպանում է Ալկունիների նահապետին և տիրանում նրա ամբողջին: Վիպասանքի մեջ Սանատրուկն սպանվում է որսի ժամանակ (Խոր., Բ. ձգ. 15.): Տրդատը Հոփփօսիմեի սպանվելուց:

Հետո որսի է ելնում: Սիրված մտտիմ է որսի անտառ տնկելը: Վիպա-
սանքի մեջ նրվանոց տնկել է տալիս Մինոզոց անտառը (Խոր., Բ. Խա.),
ԵՊարսից պատերազմի մեջ Խոսրով Կոտակը՝ Խոսրովակերտ անտառը
(Բուզ., Գ. Բ.), և վերջապես Եռչնը գտնում ենք և Վապսա Մոսրի մեջ:
Նման անտառ: Ինչ է նաև Եսհապիլանի և Բազարանի մոտ: Գնեիին Ար-
շակի Հրամանով զիտարում են արևոն, բայց յարմաձա արգելոցացն
որսոյն էրիոցն (Բուզ., Գ. Ժն.): Խոսրենացու մեջ (Գ. 23) մի տարբեր վո-
վոսիակ է պատմված Գնեիի պատման մասին, որ վապսով է զարձայ
որսի սարի և որսորդութեան Հետ:

Հյուրերին որսով և խնջութեամբ (որովանական) պատմելն ազնվա-
կանի կենցաղաբն գծերից մեկն է: Տիրան Թադավորն այդպիս պատմում
է իր մոտ: Ինչո՞ւ պարսիկ Վարազ Եսպուհին:

Եւ միեւն իս անկաւ էր,

Խորհէր արքայն ընդ իւր ծառայսն ներքինիսն,

Սպասարարն իւրում սենեկի, առջ.

«Արժան է մեզ, այր որ պա առ մեզ»

Ջրօտացանն է ուրախ առնել որսովք և քաղմականօք,

Եւ ամենայն պէս պէս վայելչութեամբք:

Այլ ոչ հիմ է այնպիսի ինչ արժան է գծած ինչ որսոյ տեղիս

Ի մերում երկրի աստ նմա տեսանել

Վասն լաքակտութեան, յաղաղանաց շարարարութեան

Նենգութեանն ազգին պարսկաց.

Այլ նմանեցուցէք տեղիս դորդնագիւտ որսոց ինչ,

Որով լոկ զքօտուցուք զնա,

Եւ մի՛ որսասցուք պառատ ինչ որսոց զտեղիս,

Եւ զի մի՛ մեծ ինչ նախնիս տրսոց

Կոտորեալ առ ի ցոյց առնելոյն...

Բուզ., Գ. Ի.

Որսի և պատերազմի Հետ կապված էր լավ ձի և լավ զենքեր ունե-
նալու փափագը: ԵՊարսից պատերազմի մեջ առանձնապէս երևում է
ձիւն իբրև պարզիկ առարկա: Գովում են Տիրան Թադավորի ձիերը, որ
Խոսրենացին (Բ. կր.) գնում է Վիպասանքի ցիկլի մեջ, Համարելով Տի-
րանին վիպական Արտաշեսի որդին. Երսոց և զքօտուցու պարապեալ,
որպէս ասեն: Եւ ձիոց երկուց լեալ՝ թիթն առաւել քան զՊիպասոս, երա-
զութեամբ անբաւ. զորս ոչ երկրակոխս, այլ օղազնացս Համարէին. լոր
խնդրեալ Հեծանել Գատաթէի ուրուսն իշխանի Բզնունեաց, պարժէր քն-
չեղագոյն գոլ քան զարքայս: ԵՊարսից պատերազմի մեջ Տիրան Թադա-
վորի ձիւն այսպէս է գովվում.

Ջայնու ժամանակաւ ձի մի էր,

Երիվար արքային Տիրանայ,

Զորմէ կարի դարձանային,
 Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն,
 Սա լի էր քաջութեամբ,
 Անուանի և հռչակապ,
 Մեծ և բարձր և երկայն քան դամենայն ձիս,
 Եւ տեսանելով քան զայլս զեղեցիկ, զանազան,
 Որ համեմատ նմա ալլ ոչ գտանէր:
 Զորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝
 Մենեկապետն արքային Փիսակ մատենաց զձին Վարազայ,
 Վասն զի քարեկամացնալ էր ընդ նմա:
 Եւ ի նմանէն ինքն թուղթ առեալ,
 Բերեալ մատուցանէր արքային Հայոց:
 Զորմէ շահանեալ, տալ ոչ առնոյր յանձն,
 Ալլ վասն զի կասկածէր յանձնէ,
 Զի գոյժ խոտվութիւն ինչ
 Ի մէջ երկուց թաղաւորացն արացէ,
 Ի խնդիր անկանէր՝ զնոյն գոյն ձի,
 Զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ,
 Զի այնչափ ուրեք տչ գտանէր, —
 Զնոյն նման, զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ,
 Եւ հանգերձ հրովարտակօք և պատարագօք
 Ի ձեռն մուկեկան Փխակայն
 Առ իշխան յԱտրպատական առ Վարազն արձակէր:
 Եւ միտս զնեկով խորհուրդ առնէր,
 Զի՛ ժԱսացես, առէ,
 Եթէ այս ինքն է զոր խնդրեցերն.
 Զի առ սէր ոչ խնայեաց ի քէնս:

Քուր. Գ. Ի.

98. Զիմվորական ճառայություն:— Զինն կարեւոր անդ էր: քոնում,
 զի զորքը Նիավոր էր, հեծելազոր:

Հանդէս առնէր Վասակ,
 Սպարապետն ամենայն զօրաց: Հայոց,
 Եւ գտան հեծելազօր սպասազէնք,
 Կուռ վառեալք, նիզակաւորք,
 Համակ վաթսուն բեր,
 Միասիրտք, միաբան, միամիտք:

Քուր. Գ. իս.

Ապա Մուշեղ, որդի Վասակայն,
 Ստրատելատն Հայոց Մեծաց,
 Ընտրեաց իւր արս ընտիրս, միամիտս.

Ազատս, ազգայինս քառասուն հազար,
Միաբանս միակամս,

Եւ կազմեաց զնոսս ձիով և թռչակաւ և դինու:

Քուգ., Ե. Բ.

Թուր ազնվականներն անխտիր կատարում էին զինվորական ծառայութիւն և կազմում էին երկրի սղորքը: Ուստի սեծածամեծք, նահապետք ազգաց, ազգաց, տոհմաց տոհմաց, զնդից և դրօշուց տեւարք, ամենայն աստուայք, նախարարք և ազատք, պետք և խշխանք, զօրավարք և սահմանապահք, որոնք թագաւորի մոտ ժողովված են խորհրդի համար, բոլորը միասին մի բառով կոչվում են զօրքը (Քուգ., Գ. Կ., Գ. Ժա. զգինքնին թագաւորն զեռսրով և զօրսն ամենայն):

Վեպի զարգացման դարաշրջանում Հայաստանում մնում էին և այլ-տազդի տրքեր, հռոմեական վայապար, օգնական զնդեր, ուստի և վերջավում բերած կտորի մեջ ասված է սազատս ազգայինսս: Խոսքով Մեծի վեպի մեջ ևս ասվում է սնախարարք հայակոյտ զօրացնս, որ վ հայերից հավաքված զօրքը (Ազաթ.): Հիշվում է սազատսխումք բանակ նախարարակոյտ զօրացնս (Քուգ., Գ. Ժա.), որ լպիտի հասկանալ սնախարարներից ժողովվածս, այլ սնախարարների ժողոված ազատսխումք բանակը:

Ինչպես երևում է, ռամիկներն ևս կատարել են զինվորական ծառայութիւն: Տիրանի վերավելու դրավադի մեջ ասվում է, զի նրա մոտ շեն եղել զօրավարքն... մեծամեծք նախարարացն, և աւագ տանուտէրք, ապատանին, սոյնպէս և զօրքն արքունի... և ոչ գունդ և այրեկի: Թագավոր մնացած է եղել սսակաւաթիւ սպասաւորք հանդերձ և խառնալուսն խորանապահ զօրուն, և ռամիկոպոս զօրօհն: Գրանք այդ սխառնադանքս, այսինքն՝ ռամիկական, ռամիկսպաս զօրքնս, ռամիկներից, այսինքն՝ շինականներից են կազմված եղել (Համտ. Քուգ., Գ. Իա., սայլ և ի շինականացն անդամ ռամիկ մարդկունս) և, ինչպես երևում է վեպից, կովոչներ շեն եղել, այլ լոկ սպասավորներ:

88. Ավարառութիւն:— ԶՁորքնս, այսինքն զինված սպանականութիւնը, իր սենքը գործադրում է պատերազմի մեջ արտաքին թշնամիների դեմ: Իսկ արդ պատերազմը լինում է կամ երկրի պաշտպանութիւն համար կամ ավարառութիւն համար: Ամեն հաղթական արշավանքից հետո ևս հիշվում է սովաքն ու սովարի շատութիւնը. բայց վան հատուկ ասպատակութիւն դրվազներ ևս:

Ավարառութիւն սկզբունքը, ըստ ժամանակի աշխարհայացքի, քացատրված է մի դրվազի մեջ, որ ուժեղ նկարագիր է հյուսիսային ազգերի հաճախակի ասպատակութիւնների: Այդ քացատրութիւնն, արդարն, կապված է Վրթանեսի որդի Գրիգորի զրույցի հետ և Քուզանդի կողմից ևս թանձրացրած կրօնական գույնով վ բերված, բայց դրա վութիւնն ամ-

քողջապահս այն ժամանակի ֆեոդալական սազատախումբս զորքի կյանքի խղճանքն է եղին—կողբալովս, ուրիշնեկին և դրանով հարստանալ, հզորանալ, շիրջալ Գրիգորը քարոզչութիւնն է անում հյուսիսային կողմերում:

Եհաս նա մինչև ի նամբար բանակին
Արշակունւոց արքային Մազքթաց,
Որոյ անուն իւր Սանէսան կոչէր:
Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն
Մի ազգաւորութիւն էր ստոհմին քնոթեան,
Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց,
Խշխանին բազմութեան զորացն Հոնաց:

Նրանք սկզբում ընդունում են Գրիգորի քարոզչները, բայց հետո մերժում են նրան, երբ իմանում են, որ նոր կրօնի աստուծու համար ատելի է սաաբառութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ազահութիւն, ալլա-գրկութիւն, զալլըցկեթութիւն, ցանկութիւն ալլոց ստացուածոց:

Ապա այսպիսի իմն իրօք իբրև լուան,
Ձայրացան ընդ բանս նորա և անն.
Ե՛րբ ոչ յափշտակեցուք,
Ձի ոչ աւարեացուք,
Ձի ոչ առցուք զալլոց,
Ի՛նչ կեցցուք ալաչափ անչափ զօրաց բազմութիւնքս:
Եւ թէպէտ քիրաւոր բանիւք քարեօք
Կամէր հաճել զսիրտս նոցա,
Ոչինչ կամէին ունկնդիր լինել:
Ալլ ասէին ցմիմեանս.
Ե՛նկեալ այսպիսի բանիւք կամի
Ի քաջութեանէ որսոյն կենաց մերոց խափանել զմեզ:
Իսկ եթէ սմա լուիցուք... ի՛նչ կեցցուք.
Ձի ոչ յերիվար հեծցուք
Ըստ քնութեան օրինաց սովորութեանց մերոց:
Ալլ, ասնին, առ խորհուրդ Հայոց թագաւորին է,
Ձսա լղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեացէ
Ձմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն
Իհրմէ:

Ալլ եկա՛լք զաս պակասեցուք ի միջոյ,
Եւ մեք ի Հայս արշաւեցուք,
Աւարաւ զմեր աշխարհս լցցուքս:
Ապա շրջեցաւ թագաւորն,
Եւ լուաւ թանից զօրացն իւրոց:
Եւ կալան ձի մի ամեհի,
Կապեցին, կախեցին զմանուկն Գրիգորիս զագոյն ձիոյն:

Եւ արձակեցին

Ընդ ծովեզեր դաշտին Հիւսիսական ծովուն մեծի,

Արտաքոյ իւրեանց բանակին, ի դաշտին Վատնեայ:

Քուգ., Գ. Գ.

Եվ ապա պատմվում է նրանց ահա՛վոր ասպատակութիւնը Հայաստանում և շորալուր շարդվելը (Պ. է.):

Ե

Տ Ի Ր Ե Վ Ծ Ա Ռ Ա

100. Հավատարմութիւն և դավաճանութիւն:— Մեր երկրորդ հին վեպն իր վրա կրում է ֆեոդալական միջավայրի մի քանի ուրիշ կողմերի դրոշմն եւ: Նրա մեջ գորեղ կերպով շեշտված է իշխող դասակարգի վերին խավի գաղափարախոսութիւնը:

Ֆեոդալական շրջանում, ինչպես հայտնի է, թագավորը ստերո էր, իսկ ազնվականները՝ սծառաս: Վերջիններս պարտավոր էին թագավորի համար զանազան պարտքեր կատարել, առանձնապես դինվորական ծառայութիւն: Ամենամեծ առաքինութիւնն էր ծառաների անձնական հավատարմութիւնն իրենց տիրոջը: Դավաճանութիւնը ենթակա էր անարգանքի ու պատժի: Քաղաքներն ամեն կերպ աշխատում էին այդ գաղափարը զարգացնել իրենց վասալների մեջ. և հենց սրանք իրենք էլ շահագրգռված էին դրանով. պի ազնվականութիւն հիերարքիայի մեջ նրանցից էլ կախված կային ուրիշները:

Քրիստոնեական եկեղեցին էլ սրբազործել էր այդ դրութիւնն իբրև աստվածային պատվիրան. «Մատայից՝ հնազանդ մալ տերանց իւրանց», որովհետև եկեղեցականներն էլ, նույնիսկ գյուղական քահանաները, մի մի ստերերձ էին: Նրանց էլ օգտվում էին դավաճանների պատժվելուց: Այգպիսիներին հողերը, եթէ արքունիք չէին գրավում, տրվում էին հավատարմներին, որոնց թվում և եկեղեցուն (Քուգ., Գ. Գ.):

Վեպի մեջ հենց սկզբից կան հավատարիմ ու դավաճան ծառաների տիպիկ արտահայտութիւն շատ դրվագներ, որոնց մեջ պատմվում են տվյալ ֆեոդալական շրջանի համար հատուկ խորհրդաբանութիւններ:

Ազնվականները հավատարմութիւնը և քաջութիւնը ծառայում են թագավորներին, որովհետև սրանք իրենց համար աշխատողներին վարձատրում են հողերով: Այսպես, օրինակ, վերեւում հիշված Մազգութներին շարդող և երկիրն այդ ասպատակավորներինց մաքրող իշխաններին թագավորը տալիս է կառվածներ:

Ապա ետ հրաման թագատրն Հայոց Խոսրով՝

Տալ պարգևս արանց քաջացն, որ վաստակեցին Նմա,

Եւ փոխանակեցին զանձինս իւրեանց:

Փոխանակ աշխարհին Հայոց Մեծաց,
Յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց,
Եւ ետ Վալէի զօրավարի զականս Ջանջանակին,
Եւ զՋրաբաշխիս, և զԵլու գլուխ,
Ամենայն դաւառակօքն հանդերձ,
Նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարզնս:

Բուգ., 9. Ը.

Պայ թագավորն վէ Մուշեղին է նույնպէս վարձատրում իր ուզման-
կան քաղաքործութիւններն համար.

Բազում պարզնս և պատիւս և բազում զեւդեան.
Զօրավարին Մուշեղի Պայն շնորհէր:

Բուգ., Ծ. Դ.

Երբ հրճանամյա պատերազմից հոգնած նախարարները լքում են
Արշակին, խորհուրդի ժամանակ ներսնսն ասում է նրանց, որ նրանք
իրեն ծառաներ հնազանդ ամեան թագավորին.

Ե՞րբ ամենեքեան դուք աւագիկ կայք և վկայէք,
Մանաւանդ զի ամենեքեան դուք
Կեցեալ էք յազգէդ Արշակունսյ.
Ոմանք ի ձէնք քաւառատեարք զեւլք ի նոցանէն,
Եւ ոմանք մեծամեծք աշխարհաց,
Ոմանք աւագ աւագ աւանաց.

Գեղից և զանձուց տեարք լեալ էք,
Եւ պէս պէս դաստակերտացն...
Մակայն զձեզ կեցուցեալ զամենեանս,
Եւ յադրոյ թաթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով,
Զոմն ի շխանոթեամբ, զոմն գործակալութեամբ:

Բուգ., 9. Ծա.

Մամիկոնյան հերոսները վեպի իդեալական անձերն են, թագավորի
և առհասարակ Արշակունիների հավատարիմ ծառաները: Բայց դրանց
մեջ ևս վիպասաններն անդրադարձրել են իրական կյանքի պատկերը:
Նրանք վէ թագավորին ծառայում են իրենց շահերի համար: Թագավոր-
ները պարտական են նրանց սկեանս առնել ընդ վաստակոցն (Բուգ.,
Ծ. ԸԷ.): Բազական է, որ հակառակը լինի. թագավորը նրանց շահերի դեմ
գնա, ալն ժամանակ հար Մամիկոնյանը պատրաստ է հեռանալու թա-
գավորից և նույնիսկ թույլ Արշակունի թագավորին պատերազմով դուրս
քշելու երկրից: Բայց և այնպէս, քանի որ սպարապետները վեպի իդեա-
լական անձերն են հավատարմության նկատմամբ, այդպիսի արարքը
արդարացւում է այնպէս.

Ձեա՛ դու շու շուս Վսկ Արշակունի,
Այլ ի պոռնկութեանէ եզեալ եօ որդի-

Վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակատրսն Արշակունեաց...
Այլ դու քանզի ընս Արշակունի,
Գնայ յաշխարհէս,
Եւ մի՛ մեռանկիբ լի ձեռաց իմոցս:

Բուգ., Ե. 18.

Այսպիսի պատգամ է ուղարկում Մանուել սպարապետը Վարազդատ Թագաւորին, որ սպանել էր տղի Անանիի եղբայր Մուշեղին: Բայց նույնիսկ այսպիսի դեպքում վլ, երբ Մամիկոնյանի շահն ընդհարվում է Թագաւորի ջահի հետ, նա անարգում է միայն այն անձին, որի հետ պատերազմում է, և ոչ ընդհանրապես Արշակունիներին, որոնց նա հավատարիմ ծառայ է:

Ընթն մի կողմից տեսնում ենք, որ Թագաւորները վարձատրում են իրենց հավատարիմ վասալներին, մյուս կողմից՝ կան դրավազներ, որոնց մեջ պարզ երևում է Արշակունի Թագաւորների արսուլուտիստական միտումը և ընդհանրապես ձգտումն իրենց ամբարձրելու: Վախենալով դավաճանոթյունից՝ Խոսրով Կոտակն օրենք է դնում, որ թմծածած ավագանին, նախարարքն, աշխարհակալքն, աշխարհատեսարքն, որ էին քիւրաւորքն և հսպարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունիս (Բուգ., Գ. Բ.):

Բայց Թագաւորները գործադրում են և կտրուկ միջոցներ: Նրանք սպաստամբներին և սուհասարակ մեծերին, տման առիթից օգտվելով, անխնայ կոտորել են տալիս և այդպիսի տոհմերը նույնիսկ բնաջինջ անում: Եվ այդ երևում է վիպի թուր ճյուղերում մաս Այսպես, վիպական Տրդատը ճենաց Մամկոնի ձեռով վտարել է տալիս իրենից պատամբութեան Ալեհոնիկներին և նրանց վարվածը տակիս է իր հավատարիմ Մամկոնին: Նույնը մի քանի փոփոխակներով հարակցված է և Խոսրով Կոտակին:

Ջայնու ժամանակաւ

Ապստամբեաց յարքայէն Հայոց

Մի ի ծառայից նորա,

Մեծ իշխանն Աղձնեաց,

Որ անուանեալ կոչէր թղեաշխն.

Որ էր մի ի շորից,

Գահերէց, բարձերէց տաճարին արքունի:

Ետ ձեռս յարքայն Պարսից,

Եւ մատնեաց զարքունի տունն, որ լեց յինքն էր:

Եւ կած զօրս արքային Պարսից ի թիկունս իւր,

Եւ հատաւ յերկրէն ի իշխանութենէն Հայոց,

Եւ տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝

Ուժով Պարսից Թագաւորութեանն,

Եւ սաստկանայր մարտ պատերազմին:

Քաղաքներն ուղարկում է նրանց դեմ մի քանի իշխաններին, իր հավատարիմ, վեպի բառերով՝ քրարեկիր ժառանգրինս, որոնք հաղթում և կոտորում են թուր պարսիկներինս։ Նրանք սպանում են և ապստամբին իր եղբայրներով ու որդիներով հանդերձ, բացի մի նորածին աղջկանից, որին Քաղաքը կնուխան է տալիս իր սիրելի Վաղինակ Սյունի իշխանին, սրան պարզեցրել է և Աղձնեաց տունը։

Եւ արար զնա յգեաշխ
Եւ պայազատ տան նորունս
Ժառանգն բազմացաւ
Եւ հանդերձ աշխարհանս,
Եւ ամենայն ուժովն,
Կայր բզեաշխն Վաղինակ
Ի ծառայութեան արքային հանապազ։

Բուգ., Գ. Բ.

Մի ուրիշ դրվագի մեջ (Բուգ., Գ. Ը.) Բզնունի իշխանը, որին Քաղաքը զորքով ուղարկում է պարսիկներին հարձակման դեմն առնելու, դավաճանում, անցնում վճռամու կողմը։ Նա իր զորքերը կոտորել է տալիս և պատրաստվում հարձակվելու Քաղաքի վրա։ Բայց սրա հավատարիմները հաղթում են նրան և բռնում, սերում, Քաղաքի առաջ քարկոծում Երբրե զայր, որ աշխարհի ե զնդի և զօրաց տեան իւրոյ դաւանան լեալ իջէս։ Կոտորում բնաշինը ին անում և նրա տոհմը։

Երկու տոհմեր, մեծ նախարարներ, պատերազմում են միմյանց հետ Եսաանց իրաւանցս։ Քաղաքը նրանց հաշտեցնել է ուղում, յայց նրանք անարգում են Քաղաքին։

Եւ առնուին, աւերէին զտունն արքունիս
Եւ զայրացեալք խոտութեամբ,
Հապճեայ տային ընդ միմեանս մարտ պատերազմի
Ապա մեծ ցատամաճք և քաղում սրտմտութեամբ,
Արձակեաց թագաւորն ի վերայ նոցա
Զվաչէ որդի Արտաւազդայ,
Զնահապետ Մամիկոնեան տոհմին,
Տաղզէ սպարապետութեան Հայոց,
Զմեծ զօրավար զօրաց իւրոց,
Սատակել, կորուսանել զազգն երկոսեանս։

Բուգ., Գ. Գ.

Վաչեն երկու տոհմն էլ կոտորում է.

Եւ ոչ թողոյր զերկոցունց տոհմացն
Զորձ կորիւն և ոչ զմիս

Իսկ նրանց կալվածները տրվում են եկեղեցուն։

Այս միևնույն ձգտումը թագավորների կողմից՝ գտնում ենք և Տիրանի և Արշակի վեպերի մեջ: Տիրանը Հայր Մարգարեի գրգռելով, ըրտուրթյամբ, կոտորել է տալիս Ռչտունի և Արծրունի առհմեքը: Արշակը նույնն անում է Կամսարականների վերաբերմամբ: Պապ թագավորն էլ ապանել է տալիս Հայր Մարգարետներին:

Այդ բազմաթիվ դավադները միևնույն պատմական սյուժետի բանաստեղծական դարգացումն են: Գրանց մեջ կա այն ընդհանուրը, որ ֆեոդալը որևէ պատճառով ոչնչացնում է իր վասալին և նրա կալվածների համար այս կամ այն կարգադրությունն է անում: Որ այդպիսի դավադների շատ կան, պատճառն այն է, որ կյանքի մեջ հաճախ կատարված են եղել նման հզելութուններ, որոնց մասին և հորինված են եղել զանազան երգեր ու զրույցներ: Սրանք և զատագործվել են վեպի մեջ: Այդ փոփոխականներից մի քանիսը լուրջ վիպական բեկորներ են մեզ հասած. բայց այդպիսիների մեջ անգամ պարզվում է ֆեոդալիզմին հատուկ որևէ ըրտորոշ գիծ:

Այդպիսի երգ ու զրույցները հորինված են Արշակունիների կամ այն ազնվական տոհմերի շրջանում, որոնք հավատարիմ կուսակից վին Արշակունի թագավորներին: Գրանցով պրոպագանդա էր մղվում հոգուտ թագավորների: Ուտի և վեպի մեջ կարևոր տեղ է բռնում թագավորի և իր հպատակ նախարարների կամ տիրոջ և ծառայի հարաբերությունը: Վեպն սկսվում է հենց Մամիկ-Կոնակի ապստամբությամբ իրենց թագավորից: Ապա ապստամբում է Ալիունի Սղուկը: Նույն կարգին պատկանում է և Արտաշրի ապստամբությունն Արտավանից: Հիշենք նաև Մերուստանի Արշակի ժամանակ և ուրիշներին:

Առաջին հին վեպի մեջ ևս, վեպի տեսանք, հավատարիմ ծառայի տիպը զորեղ կերպով պատկերացրած է հանձին Արտաշեսի Դայակ Սլամատ Բագրատունու:

101. Բճակ (բնիկ) տեր և աշխարհ:—Արջակունիներին բավական չէր տիրոջ և ծառայի, տիրոջը հավատարիմ մնալու գազափարախոսությունը միայն: Այդ վիպական դարաշրջանում կար և ռթագաւորն Յունացք, այսինքն հոռոմայնցոց վայսրը: Վեպի մեջ, Տիրանի գերվելուց հետո, հայ ավագանին պատգամավորություն է ուղարկում կայսրին,

Ջի ի նա ձեռս տունալ՝
Մառայիսցեն նմա հնազանդութեամբ,
Ու լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝
Խնորի վրէժս ի թշնամեաց նոցա:

Բուզ. Գ. Իս.

Թշնամիները պարսիկներն վին, որոնց հետ և կռի մեջ էին հայերը: Պարսից թագավորն էլ իր փոքրից ամեն կերպ, և՛ խոստումներով և՛ կարգումով, ջանում էր հայոց նախարարներին իր կողմը գրավել և դարձ-

ենի իր ծառաները: Եվ կային այնպիսիները, որոնք ենթարկվում էին նրա հրապույրներին:

Եայնժմ ժամանակի ապստամբեաց յարգայէն Հայոց
Մի ոմն ի նախարարաց մեծամեծացն,
Մերուծան անուն Արծրունի:
Եւ շողաւ, եկաց առաջի թագաւորին Պարսից Շապուր,
Եւ դնէր ընդ նմա ուխտ երդմամբ,
Զի յաւիտեան ծառայ լիցի նմա:

Քաղ., Գ. իգ.

Այսպիսի իշխաններն էլ աշխատում էին, որ Հայոց թագավորն էլ ենթարկվի Պարսից թագավորին, այսինքն՝ ընդունի նրա սծառայությունը: Այսպէս, օրինակ, Պապ թագավորը դավաճան Մարդպետ Պղակին իր մոտ քաշելու համար՝ նրան ասել է տալիս, որ շուտ գա, ներկայանա իրեն, որպէսզի նրան պատգամավոր ուղարկի Պարսկաստան՝

Զի մա մարից նմա քի ծառայութիւն:

Քաղ., Ե. Ե.

Այսպիսի դրուժնայն ժամանակ բազմական շէր հազմատարիմ ծառայի գաղափարը, այլ հարկավոր էր և այն, որ ծառան հազմատարիմ լինելու իր բնիկ տիրոջը, սքանչելի տերանց, Արշակունեաց քաղ արանց և տան և կենացը (Քաղ., Գ. ժա.):

Դա թագավորող հայաստանիւն հայացքն է եղել: Բայց դա միանգամայն և հոգեկորականի կարծիքն էր, որ երևում է վեպի մեջ: Նույնը հոգեվորականների ձեռով քարոզել է և եկեղեցին, որի շահերն այս դեպքում համապատասխան են եղել թագավորների շահերին: Եթէ լինեք բնիկ տերը, այն ժամանակ պարսիկները պիտի տիրեն իրենց մոզական կրոնով: Այդ հանգամանքը շատ լավ գիտակցել են կաթողիկոսները ոչ միայն V, այլ նաև IV դարում: Եվ այդ հարցքն ևս մտել է վեպի մեջ, միայն Թուզանդի գրչի տակ շահագանց ընդարձակված և թանձրացած գույնով: «Մերժել զբնակ տեարսն ձեր... և օտար տերանց ծառայել», — ասում է ներսեւը նախարարներին, — այդ նույն է, թե՛ սե նոցին անաստուած կրօնիցն ցանկալ... ծառայել անաստուածն մոգութեան անօրինացն և նոցուն պաշտոնէիցն» (Քաղ., Գ. ժա., այլ և Գ. ժա.): Մյուս կողմից՝ աշխարհի և աշխարհի քնիկ տիրոջ համար մեռնելը՝ նույնն է և եկեղեցու համար մեռնելը: Հակառակ վարվողները դավաճան են և մեծ են անարգանքի արժանի: Ահա թե՛ վիպասանն ինչպիսի լիզվով է բնորոշում դավաճան Փիսակին:

Արդ մինչ դեռ ևս յոյժ փառադուքիւն էր
Ի մէջ թագաւորացն երկոցունց,
Անկաւ քի տեառնէ խոտմութիւն
Ոչինչ բանից, արամբ միով անարգաւ,

Որ ոչինչ պակաս քան զզն էր մուրումնամբ...
 Ի ձեռն մոլեկան Փիսակայն...
 Եւ այսչափ և այսպիսի բանիք
 Գրգռէր զնա Փիսակն անօրէն
 Ի վերայ տեան իրոյ բնակի...
 Ի կատաղախօս, ք շնաքերանն Փիսակայ...
 Ի բերանոյ շորիկն շագմօզն,
 Տիրանենզն և տիրադրումն,
 Տիրապանուն, տիրամատենիշն Փիսակայ,
 Յայն աշխարհակորոյս յառնէ անտի:

Քաղ., 9. Ի.

Զպիտի կարծել, թե իր ախրոջը՝ Տիրան թագավորին մատնող սննե-
 վապետին տրված պարսպվանքի վերոհիշյալ մակդիրները վեպից լին
 ծագում, ալլ Քուզանզ Հեղինակից: Վերջինս բնավ չի սիրում Տիրանին
 և հենց նույն դրվագի մեջ իրենից ավելացրած մասում գրում է. «...յան-
 օրէնն Տիրանայ, միևնդեռ վիպասանի համար Տիրանը մի բրնակ տէրք,
 մի սիրելի անձ է: Ինչպես տեսանք, նախարարները և ասմենայն աշ-
 խարհածողովք քաղմութեանն»

Կոժ հզեայ աշխարանօք լային
 Զիւրեանց բնակ(ան) տէրն, զսորքայն Հայոց
 Սոյնպէս և զկորուստ աշխարհին,
 Եւ զանձանց անտէրչութիւն կործանմանն,
 Վարանացն, աղիողորմ գործէին:

Քաղ., 9. Ի.

Անձանց և աշխարհի պահ կայքոք,
 Եւ զտեսան բնակի մրէժ խնդրեսցուք:

Քաղ., 9. Իա.

«Բնակ տիրոջ հետ հիշվում է և սաշխարհը, որ է Հայոց աշխարհը,
 յայն հայրենասիրութեան գաղափարը բնականաբար դեռ զարգացած չէ:
 Երևում են դրա սաղմերը միայն: Անփական երկրի գաղափարը, սակայն,
 որի հետ կապված է հայրենասիրութունը, բավական ուժեղ կերպով
 շեղտված է մեպի մեջ անշուշտ այն պատճառով, որ օրնակ տերերին,
 Արշակունի հարստութեան տիրապետութունը պայմանավորված էր որոշ
 երկրով: Ձեր կարող լինել տեղութունն—իշխանութուն ատանց ստե-
 յութեանն—իշխանութեան երկրի:

«Հայրենիքն բառն ևս մի երկու անգամ գործածված է: Տրդատ թա-
 գավորի համար ասված».

Եւ զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց:
 Եւ խնդրէր զքէն վրիժուց իւրոց հայրենեացն:

Ազոթ., 28, 83.

Այդ «հայրենիք» բառը, սակայն, երկդիմի է. կարող է նշանակել նաև «հայրեր», «պապեր», «նախնիք»։ «Հայրենեաց տերութիւն», ուրեմն՝ «հայրենական», «հորձնական» տերութիւն։ Իսկ վրեժ «խլորոց հայրենեաց» կարելի է հասկանալ և թիւ հայրերի «վրեժը», և իր «հայրենիքի» վրեժը. «հայրենիք» բառն, ուրեմն, առնելով իբրև «հայրենի երկիր», «հայրենեաց տերութիւն», վերջին իմաստով Հայաստանը դառնում է Արշակունիների «հայրենիքը», այսինքն ժառանգաբար ստացած երկիրը. ինչպես ար նախարարներն էլ ունենին «հայրենի երկիրներ», որ ժառանգական տոհմաբն կալվածներն էին։

Հետաքրքիր է Հայաստանի «հայրենի հող ու ջրի» մասին ունեցած հավատը, որ երևում և՛ «Պարսից պատերազմի» զեղեցիկ դրվագներից մեկում (Թուր., Գ. ձյ.) Իր ընդ կ երկրի հող ու ջրի վրա՝ մարդ իրեն զգում և՛ ազատ ու զորեղ ու հպարտ։ Այսպես, գերի Արշակը անընկճելի է Պարսկաստանում հայ հող ու ջրի վրա, որով Շապուհը փորձում է նրան։

Զ

ՆԵՐՈՍԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆ

102. Գաղափարականացրած տոհմային պատմություն։— «Պարսից պատերազմը» ծագել և զարգացել է զլիսավորապես Արշակունի թագավորների ու Մամիկոնյան զորավարների միջավայրում։ Դրա անմիջական հետևանքն այն է եղել, որ մեր այդ էպոսը դարձել է իսկապես այդ երկու տոհմերի վեպը, այս բառն իր հին նշանակությամբ առած, իբրև պատմություն, բանաստեղծական պատմություն կամ պատմական բանաստեղծություն։ Հին հայ ուղմիկ աղնվականության այդ հերոսական բանաստեղծության նյութն է զլիսավորապես պատերազմը, իսկ էական հատկանիշն է իդեալականացումը— գաղափարականացումը Արշակունի թագավորների և Մամիկոնյան ապարապետների ու նրանց վարած պատերազմների, արշավանքների ու ասպատակողությունների։

Վիսպկան գաղափարականացումը կատարված և՛ երկու կողմով և բովանդակության և ձևի։ Վեպի բովանդակության կենտրոնական գաղափարն է երկրի շահագանց անձնվեր պաշտպանությունն ի դեմս բնիկ թագավորական տոհմի Իսկ աղվեստի, ձևի տեսակետով գաղափարականացումն առաջ է եկել պատերազմական հաղողությունների շահագանցումով, որ հատուկ է ընդհանրապես բոլոր էպոսներին։

103. Լերոսների տիրափրությունը։— Իրենց քաղաքական գաղափարները տարածելու և կուսակիցներ գրավելու նկատմամբ Արշակունիների համար բավական շէին բնիկ տիրոջ դրժող դավաճաններին պարսավելու և պատժելու դրվագները։ Դա բացասական կողմն էր Պետք էր

զարգացնել նաև դրական կողմը: ԸՎ վեպի մեջ տիրադրուծների դրվագ-
ներից ավելի շատ կան տիրասիրութիւնի դրվագներ ու ֆեոդալական տե-
սակետով խղճալական հերոսների ուժեղ պծագրված դեմքեր, որոնք շա-
փազանց նախանձախնդիր են իրենց տիրույթի պատվի ու շահի համար:

Արշակ թագավորը հրավիրված է Շապուհի մոտ և նրանից մեծ պա-
տիվներ է ստանում, բայց պարսից թագավորի ախոռապետը չի մեծա-
րում Արշակին և նույնիսկ անարդում է նրան: Վասակ զորավարն այդ չի
տանում և տեղն քա տեղը սպանում է պարսից արքայի ախոռապետին:

Ապա եղև զեպ օր մի յաւուրց,
Եկն, եմուտ թագաւորն Հայոց Արշակ՝
Շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից.
Իսկ ախոռապետն արքային Պարսից
Նստէր ի ներքս ի տան ասպաստանին:
Իրև տեսանէր զթագաւորն,
Ոչ ինչ առ լուս կայնայ մեծարեաց զնա,
Եւ ոչ ինչ շուքս զնէր նմա.
Այլ և անարգանս ևս զնէր թշնամանաց,
Անելով ի պարսկերէն լեզու,
Թէ՛ սԱլծից Հայոց արքայ,
Եկ նի՛ստ ի խրճան խոստոյ ի պճույս:
Ղոր բանս իրրն լաէր սպարապետն զօրավարն Հայոց
մեծաց.

Որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն,
Մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բար-
կանայր.

Ի վեր առնալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր,
Հարեալ անդէն ի տեղուշն զախոռապետն արքային
Պարսից.

Գլխատէր ի ներքս յասպաստանի անդ:
Ղի ոչ կարաց լսել և ժոյժ ունել
Ղիւրոյ թագաւորին զանարգանս.
Ղիւր մահն առաջի եղեալ
Լաւ հաշուէր բազում անդամ,
Քան զտեսան իւրոյ լսել
Ղվատթարութեան թշնամանս:
Իրրն ի Պարսից աշխարհի էին,
Յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի,
Աներկիւղ և անկապկած յանկարծօրէն
Ղայսպիսի զգործ կարաց գործել:
Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լաէր,
Բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ,

Ընդ քաջասրտութեանն զարմացեալ,
Եւ ընդ քաղում անհրկիւղութիւնն:
Եւ քաղում պարգեաց և պատուոյ արժանի առնէր,
Ջքաչութիւն և զտիրասիրութիւնն զտվեալ:
Վասն այնք իրաց մեծաւ սիրով օխրէր զնա,
Եւ ըստ արժանի իւրում պատուէր զնա.
Մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան
Եւ խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր:

Բուլ. 9. ժգ.

Այսպիսի տիրասիրութեան մի հուպիլ պատմվածք է Արշակի ինքնասպանութեան զրվագրւ Վրաստամատը, հայոց թագաւորի սենթրոնինս քոստիկան հաւատարիմս—որ Անգեղ տան իշխանն է, ևս բարձ նորս ի վեր քան զամենայն նախարարացնս,—Արշակի անկումից հետո գերի է Պարսկաստանում: Եւ քուշանների դեմ պատերազմի մեջ մեծ քաջութունն զորձնով մահից ազատում է Շապուհին: Երբ սա վերադառնում է պատերազմից, մեծ շնորհակալութունն է անում Վրաստամատին և ասում ի նրան.

Եւ ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից,
Եւնդրեա դու ինչ յինչէն.
Ջինչ և խնդրեսցես,
Տաց քեզ և ոչ արգելիցս:
Եւ ասէ Վրաստամատ ցթագաւորն.
Ենձ ի քէն այլ ինչ ոչ պիտի,
Բայց տուր ինձ հրաման,
Ջի երթայց, տեսից զքնակ տէրն իմ,
ՋԱրշակ արքայ Հայոց:
Եւ առ մի օր,
Իբրն աս երթայց առ նա,
Հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն,
Եւ աս իշխեցից լուանալ զգլուխ նորա և սծանել,
Եւ ազուցանել նմա պատմութեանս,
Եւ արկանել նման քաղմականս,
Եւ զննել առաջի նորա խորտիկս,
Եւ տալ նման գինի,
Եւ ուրախ առնել զնա արուսեաականօցն,
Մի օր ճիշդս:
Եւ ասէ թագաւորն Շապուհ.
Ետիստ են խնդրեա՞ծքդ, զոր խնդրեսցերդ.
Ջի յաւուրց ժամանակաց,
Յորմէ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է,
Եւ բերցն այն Անյուշ բերդ կոչեցեալ է,
Ջիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ.

Որ իշխեցեալ է իշխեցուցանել թագաւորաց,
 Զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց,
 Յիշելով զայն սեարգ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է,
 Թող թէ զնա, զայր թագաւոր և զիմ բնկեր,
 Կապեալ, եղեալ յայնմ բերդի զհակառակորդն:
 Քան մինչ աշխատ արարեր զմեզ,
 Եւ դու աւագիկ զանձն ի մահ եղիր
 Եւ իշխեցուցեր զԱնյուշն,
 Որ ոչ էին լեալ երբեք օրէնք
 Թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ:
 Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս,
 Զոր ինչ խնդրեցերն՝
 Ե՛րթ, տունալ լիցի քեզ,
 Բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինզ խնդրել,
 Կամ աշխարհս, կամ դաւառս, կամ պանծս:
 Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր,
 Անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս.
 Ե՛րթ, տունալ լիցի քեզ,
 Որ ինչ յինենս խնդրեցեր փոխանակաց քոցս:
 Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ,
 Եւ հրովարտակ՝ արքունի ժատանեան,
 Զի զնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդժըշն,
 Եւ զիարդ և կամք իցէ նորա,
 Զոր օրինակ և խնդրեացն՝
 Արասցէ կարգելոյն Արշակայ,
 Որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս:

Եւ շողաւ Գրաստամատն հանդերձ փշտիպանաւն
 Եւ հրովարտական արքունի յԱնուշ բերդն,
 Եւ ետես զտէրն բնակ,
 Եւ արձակեաց զԱրշակ
 Ի կապանացն երկաթեաց,
 Ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց,
 Եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն:
 Եւ յուաց զպլուխ նորա,
 Եւ յոգացոյց զանձն նորա:
 Եւ ազոյց նմա պատմունան ազնիւ:
 Եւ էարկ նմա փաղմականս, և ըսզմեցոյց զնա.
 Եւ եդ առաջի նորա բնթրիս
 Ըստ օրինաց թագաւորաց.
 Եւ եդ առաջի նորա գինի,
 Որպէս օրէն էր թագաւորացն:

Մթափեաց զնա և մխիթարեաց,
Եւ ուրախ առնէր զնա գուսանօքս:

Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝
Նդին առաջի նորա միրօ,
Խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ.
Եւ Եդին դանակ նմա,
Որպէս զի հատցէ և կերիցէ զհարգ և կամեսցի:
Եւ Գրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա.
Կայր յօտն, և մխիթարէր զնա:
Իսկ յորժամ արրեցաւ,
Եւ գինին և կն զակամք նորա,
Արքեցաւ, հպարտացաւ և ասէ.
«Վա՛յ ինձ, Արշակայ.
Այս ես և այս, և յայսմ շափաւ,
Եւ այս անցք անցին ընդ իսա:
Եւ զաբա ասացեալ, զդանակն՝ դոր ունէր լի ձեռիմն,
Որով զմիրքն կամ զամիճն կամէր ուտել,
Եհար ի սրտի իւրում:
Եւ անդէն սատակեցաւ,
Եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն,
Մինչ դեռ կայր ի բազմականին:
Իսկ յորժամ զայն ետես Գրաստամատն,
Յարձակեցաւ, Եհան ի նմանէ զնոյն դանակ,
Եւ Եհար լիւրում կշտին:
Եւ անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ:
Բուք., Ե. է.

Բերենք մի հասկած ևս մի գեղեցիկ գրվագից, որի մեջ փառարան-
վում է բուրբ հայ զգործիք քաջութունն ու տիրասիրութունը: Արշակը
շղթայված, բանտարկված է Անհուշ քերդում: Պապը հստայեցիների օգ-
նությամբ մտնւ է Հայաստան: Այնտեղից քշել են պարսիկներին: Բայց
Շապուհը նորից հարձակվում է Հայաստանի վրա: Հռոմեական և հայ-
կական զորքերը պատրաստ են մարտի համար:

Եւ լինէին խառնուրդք ճակատուն.
Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից:
Մանաւանդ գունդք նիդակաւորացն
Յարձակեալք, մոլեպնեալք, քաջութեամբ
Ջախոյանս ի վերուստ յերխալացն յերկիր կործանէին
Ցանդիտան վազաւորին Պարսից Շապուհ:
Եւ ընդ ընկենուլն խրախոյս բառնային,
Աղաղակելով ամենայն զօրքն.

Պատերազմիկը Հայոց համակ,
Զայս բանս ասելով, եթէ՝ «Ան Արշակ քաչ»,
Զի զամենայն ախոյեանս,
Զոր ի ճակատուն յայն սպանանէին,
Նմա՝ նուիրէին,
Իւրեանց առաջին թաղաւորին մարշակայ,
Զի դամենայն զոր սպանանէին, ասէին.
«Արշակայ թագաւորին մերոյ զո՜ւ լիջիր»:

Եսպուհը պարտուում է և փախչում: Երբ նա հասնում է իր աշխարհը, ասում է.

«Զարմացեալ եմ ես, զոր ինչ տեսի.
Զի իմ ի մանկութենէ իմէէ,
Համակ ի ճակատուն և ի կոխի մտեալ եմ,
Եւ բազում ամբ են՝ զի հասի ի թագաւորութիւն,
Եւ առանց կոտոյ ամ շեմ լինալ.
Բայց իմ քերթ կոխի զայս էր տեսնալ,
Որ այս անգամս դիպնցաւ ինձ:
Զի յորժամ Հայոց նիւակաւորքն առաջի կարգէին,
Այսպէս յարձակէին որպէս զլեւոտն մի քարձր
Եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաքնատ, հզոր նաեղարօ,
Եւ յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք,
Նոքա ի շեղէն Հոռոմոց ապաստան լինէին.
Եւ նոքա զվահանափական թացեալ,
Զնոսա փրգն ի քաղաքորմ:
Պարսպաւոր ամրացեալ ընդունէին:
Եւ տնտի սակաւիկ մի ոգի առեալ,
Գարձեալ ելեալք մարտնչէին,
Մինչև անմի զզօրուն Արեաց առնէին:
Եւ միւս նա՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես,
Ընդ մտերմութիւն միամտութեանն Հայաստան զնդին,
Ընդ տիրասիրութեանն:
Զի այնչափ ամբ են՝ զի տէրն նոցա Արշակ
Կորոստեալ է ի նոցանէն,
Եւ նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին:
Եւ յորժամ զախոյանսն ընկնուին,
Համակ ասէին, թէ՛ «Ան Արշակ»,
Եւ նա շէր ի մէջ նոցա:
Եւ նոքա առ զուր տիրասիրութեանն,
Զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին,
Զամենայն ախոյանսն՝ զոր սպանանէին՝
Նմա՝ նուիրէին:

Եւ կամ մոլեկան գունդն Մուշեղեան,
 Զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր, բոց,
 Ի գնդէն ելանիցէր ե ի նշանացն,
 Իբրև ի հուր հրդեհի,
 Այնպէս անցանէր ընդ գունդն,
 Որպէս բոց ընդ հզէգն:
 Եւ այսպա՛փ ժամանակք են՝ զի Արշակ տէրն նոցա
 Ի նոցանէն կորուսեալ է,
 Զի յԱնգամըն բերդի կայ չերկրին հուժաստանի,
 Եւ նոքա առ գուժն համարէին՝
 Թէ՛ ի գլուխ նոցա նա իբրև թագաւոր կայցէ.
 Եւ կամ ընդ նոսա արդեւք ի մէջ գնդին կայցէ,
 Ի գլուխ ճակատուն պատերազմին,
 Եւ նոքա առ նմա աննիցեն պաշտուն յանդիման նորա:
 Այլ, ասէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ,
 Եւնպիսի տիրաւէր և միաբան, միամիտ զօրացն:

Բուլ. Ե. 6.

Թուր սգորքի՞ս գաղափարական հերոսութեան և տիրաւորութեան
 այսպիսի դրվագները հորինված են, անընդատ, Արշակունիներէն և Մամի-
 կունյաններէն շրջաններում: Այսպիսի գովադրական և դրվագներով նորանք
 պրոպագանդա են արել և զնվականութեան մեջ՝ զորացնելու համար նը-
 րանց համատարմութեանն առ Արշակունի թագաւորները:

104. Թագաւորի անձի անձեռնմխելիությունը և ազգային պատ-
 վասիրությունը:— Այն դարաշրջանում տղ միայն Հայաստանի թագաւոր-
 ները, այլ և հոռմայեցոց կայսրները շարունակ ենթակա էին մահաց-
 ման իրենցայինների ձեռով, հայոց թագաւորներն ավելի հարևան իշ-
 խողների կողմից: Ուստի մի ուրիշ գաղափար էլ, որ անհրաժեշտորեն
 զարգացրել են, է թագաւորի անձի անձեռնմխելիութեանը և բացի այդ՝
 նաև թագաւորի անվտանգութեան համար հոգալը: Այս մտտիվը հատուկ
 է ընդհանրապէս ուրիշ հերոսական վեպերին ևս: Թագարանի ճակատա-
 մարտի գեղեցիկ դրվագը (Բուլ., Ե. դ.) հորինված է, ի միջի այլոց, այս
 գաղափարների ծանլաման համար: Թագաւորին շեն թողնում որ ճակատ
 մտնի, որպեսզի նա վտանգի շենթարկվի: Նա նստում է նպատ շեան
 գլխին և այնտեղից դիտում է ճակատամարտը:

Այդ դրվագի մեջ մի առանձին վերաբրով երևան է գալիս նաև ազ-
 գային պատվասիրութեան գաղափարը, որով նույն ազգին պատկանող-
 ները նախանձախնդիք են վերենց ազգային պատվին, հարկավ, ըստ
 ազնվականի հասկացողութեան: Պատրից քանակը մի կողմից և հոռմեա-
 վան ու հայկական զորքերը մյուս կողմից՝ արտոքստապիտում են ճակատա-
 մարտելու: Ազնվանքի թագաւոր Ուսնայրն ասում է Շապուհին.

սկա՛մ լիցի գեղ, արանց քա՛չ,
 Զի և ինձ պարգև հրաման տացնս,
 Զի Հայոց գեղին Պապայ արքային
 Ես ինձին ելից իմով գեղովս նահատակ,
 Զի Արհաց գեղին պատե՛հ է՝
 Գիպան ելանել զօրացն Յունաց,
 Իսկ ես իմով գեղաւս՝ Հայոց իշխանացն ելիցնս,
 Եւ Եսպոս թագաւորն հանեցաւ,
 Եւ շնորհ կալաւ, և հրամայեացի
 Քայց Մերութանայ Արծրունույ
 Պատասխանի տունայ Ուռնայրի, ասաց.
 սկսս արկեր զգաղի գիրկս,
 Քայց թէ՛ ժողովն կարիցնս, մեծ զարմանք իցինս:

Նույնիսկ Մերութան սպատանշանքն, պարագործքն, իր, իբրև հայ
 ազնվականի, պատիվը վիրավորված է համարում, որ այդ թագավորը
 հայոց փոքրն համարտարեցնում է աղվանական դռնդր: Դա նվաստացում
 էր հայ զորականության համար: Ուստի Մերութանը ծածոկ մարդ է
 ուղարկում, Մոռեղի իմաց տայիս այդ մասին, ավելացնելով՝

սկրդ գիտես՝ զինչ զործիցեսս:

Մուռեղը հաղթում է ճակատամարտի մեջ և վրա է հասնում Ուռ-
 նայրին: Պատմվածքն այնպես է առաջ տարված, որ պատում ենք. թե
 նա պիտի ազաներ նրան այն վիրավորանքի համար, որ անգամ Մերու-
 ժանը լի տարել: Քայց վիպասանի վերջնական նպատակն այդ չէ, այլ
 ցույց տալ Մոռեղի տիրասիրութունը: Նա պատում է հանդուգն թագա-
 վորին իր ասած խոսքի համար, բայց ահա թե ինչպես:

Եւ Մուռեղ սպարապետն Հայոց...
 Սպաս արարեալ և գիպէր գեղին Աղուանից,
 Եւ առ հասարակ դամենայն զօրան սատակէր:
 Եւ հասանէր Ուռնայրի արքային Աղուանից ի փոխտտանն.
 Եւ նիզակարնաւն ի կառափն մատուցեալ ձեռէր քաղում,
 Աածչով, թէ՛՜ ԵԱրթը շնորհս կալ,
 Զի այր թագաւոր ես, և թագ ունիս.
 Ես ոչ սպանից զայր թագաւոր,
 Թէ կարի նեղ հասցէ ինձս:
 Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա
 Փախել, երթալ, գնալ յարշարհն Աղուանից:

Ըսկատամարտի հաղթութիւնից հետո՝ քսուները Պապի մոտ ամ-
 րաստանում են Մուռեղին, որ նա թշնամուն լի սպանել և իբր նույնիսկ

Հայոց թագաւորին էլ նա սպանել է ուղում: Թագաւորը Մուշեղին հան—
դիմանում է, և նա պատասխանում է.

«Ձիւմ պընկերուն դամենեան ևս կոտորեցի.
Իսկ որ թագս ունէին, նոքա իմ ընկերք չէին, այլ քո.
Եկեացես, որպէս ևս զիման սպանի, որւ գոյսն.
Այլ իմ յայր թագաւոր
Ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի,
Եւ ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի:
Եթէ կամիս սպանաննոյ զիս, այսմն:
Այլ ևս, եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր,
Որպէս եկն բազում անգամ,
Ես ոչ սպանանեմ զայր թագաւոր՝
Որ գամ մի թագ ունի,
Եթէ ոք իսկ զիս սպանցէ»:

Ահա թե ինչ գաղափարախոսութիւն է քարոզում վիպասանը: Բայց,
մի կտոր էլ բերենք շարունակութիւնից:

Թագաւորն Պապ իբրև լսէր դրանս զայս,
Տարսաստուս հարեալ, և յարուցեալ քի գահոյիցն,
Բուռն հարկանէր զՄուշեղէ,
Արկանէր զնովաւ գիրկս,
Եւ լայր ի վերայ պարանոցին Մուշեղի,
Եւ ասէ. «Մահապարտ են այնոցիկ,
Որ իշխեն խօսել շարութիւն զՄուշեղէ,
Ձանձէ քաջէ և զպատուականէ:
Ձիւ այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ,
Եւ նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր,
Եւ թողեալ նախնեացն դորա
Չթագաւորութիւնն շենաց աշխարհին,
Եկեալք առ մեզ նախնիքն՝
Ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են,
Եւ հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ,
Եւ սա միամտութեամբ միևնա ի մահ վաստակեալ է.
Եւ բազում անգամ Աստուած ետ մեզ յաղթութիւն...
Ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն,—
Ձիւ՞րդ ասեն ցիս զայս բանս,
Եթէ՞ զՄուշեղ քեզ մահու սպասէ:
Սա աւասիկ այր իրաւախորհ է.
Ձիւ յօտար տեարսն վասն բարեկամութեան խնայեաց,
Ձիւ՞րդ դա ի բնակ տեարս ձեռն ձգէր»:

Քաղաքների անձի անձեռնմխելիության այս գաղափարը դարգացրած է և ուրիշ գրվածքների մեջ: Մանուել Մամիկոնյանը իր եղբայր Մուշեղի սպանվելու վրեժն առնում է Վարազդատ Քաղաքից: Նրանց գընդերը մարտնչում են միմյանց հետ: Իրար վրա են հարձակվում և մենամարտում նաև Վարազդատն ու Մանուել սպարապետը: Քաղաքը պարտվում է և փախչում:

Եւ անպին Մանուէլ,
Ջտէզ նիզակին ի ձեռին կալնալ,
Եւ նիզական ի կառափն մատուցեալ,
Մեծէր զարքայն Վարազդատ.
Այնպէս տանէր իբրև ասպարէզս լորս:
Եւ անդէն որդիքն Մանուէլի
Յարձակեցան մէն մի նիզակ ի ձեռն,
Հմայեակն և Արտաշէսն, սպանանել զարքայն:
Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդեցն իրոց,
Եւ ասէր. «Ա՛յ, մի՛ լինիք տիրասպանուքս:
Եւ նոցա լուեալ զձայն հօրն,
Վազլաղակի արագ արագ դառնային ի նմանէ:

Քուգ., Ե. 14.

Այսպես ուրեմն կյանքի՞ ու մահվան կռիվ մեջ անգամ Մամիկոնյան սպարապետը քայքայում է տիրասպան լլիկեղև:

105. Կերտը:— Հաւատարմութիւնն ու տիրատիրութիւնն և տիրասպան լլիկեղև, դրանք դեռ ի հերոսութիւնն զեն տանում մարտիկներին: Քաղաքներն իրանցից պահանջում են ավելին: Ահա թե ինչպես է Պապ Քաղաքի ձեռք բռնելով՝ երզվում Մուշեղ սպարապետը.

«Կեցից և մեռայց ի վերայ քո.
Որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քոց,
Որպէս և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ,
Սոյնպէս և ես ի վերայ քոս:

Քուգ., Ե. 7.

Պարսիկները Մերուսանի առաջնորդութիւնմբ հարձակվում, ավերում են Հայաստանը:

Ապա իբրև զայս լսէին՝
Քաղաւորն Հայոց Արշակ
Եւ զօրավարն անորն Վասակ,
Հանգէս առնէին զօրացն իրեանց:
Եւ դուան ի ժամանակին անդ,
Ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ,
Արք գործոց իբրև վաթսուն հազար,

Ընտիրք և պատերազմողք:
Որ միամիտք և միասիրտք էին
Միարանութեան գործոցն պատերազմին,
Հասանել, մարտնչել
Ի վերայ որդւոց և կանանց իւրեանց,
Ս: Ի վերայ աշխարհին.
Գնել զանձինս իւրեանց մինչև ի մահ,
Ս: Ի վերայ աշխարհին գաւառացն քնակութեան...
Փոխանակ քնակ տերանց իւրեանց Արշակունւոց:

Բուգ., Գ. Իդ.

Մանուել. Մամիկոնյանն այսպիսի պատգամ է հղում Վարազդատ թագաւորին.

Փոխանակ ամենայն ազգին մերոյ վատտակոցն,
Ջոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ
Միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք,
Ս: Կրեալ զանձինս մեր ք Վերայ ձեր,
Կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր,
Ամենայն նախնիքն մեր առաջինքն
Անկտն ի պատերազմունս ի վերայ ձեր,
Վասակ հայր Մուշեղի կորեալ
Ի վերայ Արշակայ արքայի,
Ս: Մեք հանապազ վաստակեալ և աշխատեալ եմք
Ի վերայ քաղաքութեան ազգիդ ձերոյս:

Բուգ., Ե. ԼԷ.

Մանուելը հիվանդանում է և, զգալով որ պիտի մեռնի, նա իր տե-
րութիւնն ու սպարապետութիւնն իր սրդուն տալով՝ պատվիրում է.
նրան.

Ս: պատուիրէր նմա.
«Հնազանդ, հագատակ կալ
Արքային Արշակայ, և լինել միամիտ,
Ջանալ և վաստակել, և տալ պատերազմ,
Փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո (տալ),
Որպէս քաջ նախնիքն
Ի վերայ աշխարհին մտադիւր մեռանելի...
Անուն քաղութեան յերկրի թողցուք...
Ս: ամենեկն ի մատուանէ մի՛ սքովելիք...
Ս: Ի վերայ... աշխարհի Վամարձակութեամբ մեռարուք...
Ս: Ի վերայ քնակ տէրանց աշխարհիս Արշակունւոյս:

Նա հիվանդ պառկած է մահճում, նրա շուրջը ժողոված են Հայաս-
տանի բոլոր մեծամեծները և ինքը թագաւորն ու թագուհին: Այդ ժա-

Մանակ նա իր մարմինը բաց է անում և ամենքի առաջ ցույց տալիս՝
Բայց բերենք բառացի.

Ապա երաց Մանուէլ զամենայն զանդամս իւր
Առ հասարակ առաջի ամենեցոսն.
Մերկացաւ և եցոյց, զի քան զզրամ խայծ՝
Ոչ գտանէր ողջ ի մարմնի նորս,
Զոր (ոչ) խոցեալ էր ի պատերազմի...
Սկսաւ լալ և ասել,
Թէ. «Ես ի մանկութենէ
Համակ սնայ ի պատերազմոցնս,
Եւ մեծաւ քաշութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի.
Եւ ընդէ՛ր ոչ եհաս ինձ մեռանիլ ի պատերազմի,
Քան զօրէն անամուս մեռնոյն եղէ:
Զի լաւ էր ինձ, եթէ ի պատերազմի
Մեռնալ վի ի վերայ աշխարհի...
Եւ ի վերայ Արշակունեաց,
Բնիկ տէրանց աշխարհիս,
Եւ ի վերայ կանանց,
Եւ ի վերայ սրբոց մերոց,
Եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս,
Եւ ի վերայ եղբայրութեան, բնկերութեան,
Եւ մտերիմ բարեկամութեանն,
Զի՛ էր թէ հասեալ էր ինձ մեռանել:
Թէպէտ շատ զանձնս յանդուզն վարեցի,
Զվատաթար մաշու մահացս եհաս ինձ մեռանելս:

Բուշ., 69.

Ահա վեպի հերոսական տիպը, վիպական արժանիքներով, որոնք
հանելի և հարկավոր են եղել ոչ միայն Արշակունի թագավորին, այլ և
անկեղեցուն: Հիշենք նույնպիսի հերոսի, բայց խնշուցի ժամանակ դա-
վադրութեամբ սպանված Մուշեղի վերջին խոսքը:

«Բայց իրան եհաս ինձ մահս,
Թէ ի վերայ հիս ղիպեալ էր...»:

Հերոսն ուրեմն դարձաւ մեռնելու համար լի ցավում, այլ որ նա
միտ վրա, ճակատամարտի մեջ լի մեռնում մի մահով, որ մարտիկի
համար տիպիկ և պատվավոր էր: Թշնամիներից մարտի մեջ շվախենալ
մինչև վերջը, մինչև անգամ դատան մահն աշքի տառաչ ունենալով, ինչ-
պես Վասակը Շապուհի դիմաց, — ահա անվեհեր հերոսը:

Աղջկայի և բնիկ տիրող վրա մեռնելը տաշխ վճարման հերոս-
անկըի գաղափարականացման համար սոցիալական իմաստ, հարկավ, ա-

վատական ժամանակի հասկացութեամբ, Գրանդվ Մամիկոնյան սպարապետները դառնում են վեպի գլխավոր հերոսները:

Թե իրոք մի ժամանակ ապրել են Վաչե, Վասակ, Մուշեղ ու Մանուել և կյանքի մեջ ինչպիսի մարդիկ են եղել Նրանք, մենք այդ շղիտենք: Թերևս այդ վիպական անձերը պատմական են: Բայց վեպի մեջ պահվում է պատմական անձի այս կամ այն գիծը միայն և շի տրվում ամբողջական պատկերացում նրա մասին: Ինչպես Արշակը, մի պատմական անձ, վեպի մեջ կորցրել է իր իրական գծերը և իր կյանքի իրական եղելութունները, նույնպես և սպարապետները: Վեպի մեջ նրանց կենդանի անձերից ևս,—եթե նրանք պատմական են,—անշուշտ շատ քիչ քան է մնացել: Նրանք նկարված են ընդհանուր հերոսական գծերով, ընդհանուր առաքինութուններով: Նրանց վերագրված են փառավոր սխրագործություններ, փառավոր նախնիք և քաջարի ոգի ըստ վիպական պահանջի:

Այդ հերոսները մեր այս վեպի սոցիալական անձերն են և իրրև այրպիսիներ, անշուշտ, պատմական են: Նրանք իրականութեան իդեալական պատկերացումներն են և տեղիված են III—V դարերի սոցիալական պայմաններում, որոնք հերոսական քանստեղծությունն էին պահանջում պարսիկների դեմ պատերազմները վարելու համար: Հարկավոր էր պաշտպանել զրեանկ տիրոջը, որի մեջ, ըստ այն ժամանակի հասկացության, մարմնացած էր երկրի անկախութեան զաղափարը և նույնիսկ աշխարհն ինքը: Հիշենք Տիրանին մատուղ և կորցնել տվող Փոսակին տրված տիրաննեզ և այլ մականունների հետ և սաշխարհակորոյսս մակդիրը:

Կարգանք և այն դրվագը (Քուզ., Ե. ի.), որի մեջ,—ինչպես հաճախ լինում է հերոսական վեպերի մեջ հերոսների սխրագործությունների պատմվածքի վերջում,—բերվում է Մուշեղի գովաբանությունը:

Այլ ցաջն զօրավարն, սարապետն Հայոց
Լի էր քինի մեծաւ և բազում նախանձու
Ջամենայն աուրս կենաց իւրոց,
Եւ միամտութեամբ և արդար վաստակով
Ջանայր հանապազ և վաստակէր
Ի վերայ քազաւորութեանն Հայոց աշխարհին:
Ձտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն.
Ջանայր և ճգնէր կսու ի հակառու պատերազմին,
Եւ ոչ թողոյր քնաւ ամենեւին
Եւ տչ քան զկտրի մի սետին
Ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել:
Ի վերայ աշխարհին կեալ և ի մեռանել,
Ի վերայ անուանն քաջութեան,
Ի վերայ քնակ տերանց,
Եւ ի վերայ քնակչաց աշխարհին...

Ի վերայ քերց և եղբարց,
 Ի վերայ մերձաւորաց տոհմին,
 Ի վերայ քարեկաց, քարհկիր քարեկամաց,
 Հանապազ կայր զօրավարն Մուշեղ
 Ի նահատակութեան պատերազմին...

Այս հերոսք, որ սպարում է իր տիրոջ և աշխարհի համար, և լի քաղ-
 նում անգամ մի կորու շափ զնտին հայոց երկրից վտարել, այսինքն օտա-
 րացնել: Պա արդեն հայրենասիրութունն է, վիպական հերոսական անձ-
 նրվիրութիւնն ազդուրբ:

Հիշենք ինչ որ Մ. Խորենացին գրում է վիպական Արամի համար.
 «Սա այր աշխատաւէր և հայրենասէր եղեալ... լաւ համարէր զմեռա-
 նիւն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդին օտարածնաց կո-
 խելով զաւճմանս հայրենեացն և հարստատից արեան նորա տիրել ա-
 րանց օտարածնաց» (Մ. ծգ.):

**106. Վիպական գաղափարականացումը չափազանցումով և պար-
 տույունների արդարացումը:**— Եթաւորից պատերազմին անջ հայ թագա-
 վորներն ու սպարապետները վարում են շատ ու շատ պատերազմներ,
 շարունակ պատերազմ ու պատերազմ, և միշտ կոտորում են թշնամու
 երբեմնի փոխիրոններին հասնող քանակները: Պատերազմական հարողո-
 թյունների այդպիսի վիպական շափազանցումով առաջ է բերվում իդեա-
 լականացում:

Մեծն Խոսրովը Արտավանի մահվան վերժն անեկու համար՝ արշա-
 վում, հանում վճ մինչև Տիգրոնի դռները.

Ասար առեալ զերկիրն ամենայն՝
 Տապականութիւն դարձուցանէր
 Զշինանիստ քաղաքացն
 Եւ աւանացն ցանկալեաց.
 Զղէն երկիրն ամենայն
 Թափուր և աւերակ թողոյր:

Ազաթ.

Պարսից թագավորը լի կարողանում նրան դիմադրել և պարտվելով՝
 փախչում է:

Փախտեսայ լինէր առաջի նոցա:
 Զհետ մտեալ կոտորէին
 Զամենայն զօրսն Պարսից,
 Եւ դաշտացն և ճանապարհացն
 Ժիր դիաթաւալ կացուցանէին,
 Եւ շարավտաւար վատնէին,
 Եւ անհնարին հարուածս
 Ի վեցալ հասուցանէին:

Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածին.
Մեծաւ յաղթութեամբ
Եւ բազում աւարաւ,
Եւ ցնծայից ուրախութեամբ.
Ի կողմանսն Հայոց յԱլլարատ գաւառ,
Ի Վաղարշապատ քաղաք,
Մեծաւ ուրախութեամբ,
Եւ բարի անուամբ,
Ու բազում աւարաւ:

Ագաթ.

Եվ այսպես, տասը տարի ստեպ ստեպ թաւար առեալ աւերէին զա-
մենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբ և իշ-
խանութեամբ էր:

Տրդատն իր հայրենի դահն ատանում է ռազմական հարողութուննե-
րով և մեհամարտի մեջ հաղթելով գոթերի թագաւորին:

Նաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց.
Նկն, հզիտ անդ զօրս քաղուսն Պարսից,
Ձի զաշխարհն յինքնանս գրտեալ էին ի ծառայութիւն:
Ջրազում կոտորէր,
Եւ գրազում փախստականս արարեալ՝
Ի կողմանս Պարսից արկանէր:
Եւ զհայրենեաց տէրոթիւնն յինքն նուանեաց,
Եւ զօրացաւ ի վերայ սահմանաց նորա:

Ագաթ.

Հայաստանին տիրելուց հետո էլ նա միշտ պատերազմում և միշտ
հաղթում է պարսիկներին.

Ջամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն
Աւերէր, քանդէր գերկիրն Պարսից թագաւորութեանն.
Ջաշխարհն Ասորեստանի աւերէր,
Եւ հարկանէր ի հարուած անհնարինս...
Որ զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ՝
Եւ առնէր մարտից յաղթութիւն...

Ագաթ.

Խոսքով Կոտակի օրով պարսիկները երեք անգամ հարձակվում են
Հայաստանի վրա և ամեն անգամ սոսկալի պարտութուն կրում: Հայերը
չստորում են բռնորին:

Եւ տեսին զզօրսն Պարսից,
Ձի ոչ գոյր թիւ բազմութեանն.
Ձի էին իբրն զաստեղս երկնից,
Եւ իբրն զաւազ առ ափն ծովու.

Զի եկեալ էին անթիւ փղօց և անլափ զօրօք:
 Եւ սոքա (հայք) հասին, անկան ի վերայ բանակին...
 Հարին, սատակեցին, կոտորեցին,
 Եւ ոչ թողին ի նոցանէ և ոչ մի:
 Եւ թափէին աւար բազում և զփիզսն,
 Եւ դամենայն ոչժ զօրոթեան նոցա:

Յուզ., 9. ք.

Սրանից հետո էլ պարսիկները շին դատարոճ հայոց թագաւորի դեմ
 պատերազմելուց: Հայոց արքունի զորքն էլ միշտ դիմադրում է նրանց
 հենց սահմանի վրա:

Եւ հանապազ կային ի քաղութեան,
 Ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից.
 Եւ ոչ տային անխտիր արշաւել,
 Աւերել զերկիրն Հայոց, և ոչ նայել:
 Եւ կայր արքայ ի հանգստի,
 Եւ արշիարհ ի շինութեան և ի խաղաղութեան
 Զամենայն աւուրս կենաց նոցա:

Յուզ., 9. ք.

Իրապես, հարկաւ, եղել են և պարտութիւններ Վեպի մեջ, սա-
 կայն, հայերը միայն ռազմական գործողութիւններ չկատարում ժամա-
 նակաւոր անաղողութիւն են հանդիպում, այդ էլ լինում է միշտ կամ
 դաւադրութիւն կամ դավաճանութիւն հետեւեցում, կամ մի այլ անխու-
 սափելի պատճառով: Այսպես, որինակ, այս հոտորովի վեպի մեջ դաւա-
 ճանում են Գատարեն Բզնունփն և Աղծնիքի բղեշիքը, որոնք անցնում են
 պարսիկների կողմը և վնասում հայերին: Թայք վերջը հաղթում է թա-
 դաւորն իր հաւատարիմների ձեռքով, առանձնապես Մամիկոնյան Վա-
 չիի, և պատժել տայիս դավաճաններին: Նույնպես մաղթութիւններ արշա-
 վանքի սկզբում անհաջողութիւն է լինում. զի զորքերը ժողոված շին
 և Վաչն զորավարը Հայաստանում չէ: Թայք երբ նա զայլս է և հաւա-
 քում քաջ նախարարներին, այն ժամանակ մաղթութիւններին բոլորին կո-
 տորում են, նախ մըտ զլուխ չեռան վրա, հետո Այրարատյան զաւա-
 ռում:

Եւ հասանէր, անկտնէր ի վերայ բանակին...
 Եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենհոտան,
 Եւ ոչ մի ոչ ապրեցուցանէր,
 Եւ դարձուցանէր զբազմութիւն զերեացն:
 Եւ յետ այսորիկ ոտնոյք դաւարսն,
 Խաղայր, զնայր, երթայր, ի իջանէր,
 Ի դաշտն Այրարատեան զաւառին:
 Հասանէին, հարկանէին, սատակէին

Զգորսն Ալանացն և Մազթացն,
Եւ Ղոնացն և զայլոց ազգացն.
Եւ լնուին զդաշտն առապարացն
Առ հասարակ դիակամբք մեռելոց
Մինչ զի իբրև զգետ յարուցեալ
Երթայր արիւնն անհնարին,
Եւ ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց:

Բուգ., 9. է.

Տիրան թագաւորին արդարև բռնում, կուրացնում ու գերի են տա-
նում. բայց այդ կատարւում է դավադրութիւնով: Ենեզավոր թշնամիներ-
ը խաղաղութիան ժամանակ Հայաստան գալով իբրև բարեկամ, հյուրա-
սիրում են թագաւորին և նրան, սաստիկ հաջրած ժամանակ, բռնում:
Բայց որ գլխաւորն է՝ թագաւորի մոտ շեն զորավարները, նախարար-
ներն ու զորքը:

Եւ ի ժամանակին յայնմիկ,
Այնպէս դիպեցաւ յայնմ ժամանակի,
Զօրավարքն շիէն անդ,
Այլ սարտուցեալ էին.
Եւ այլ մեծամեծ նախարարացն,
Եւ աւագ տանուտէրք ազատանին.
Սոյնպէս և զօրքն արքունի
Յիրաքանչիւր տունս, յիրաքանչիւր կայնանս,
Յիրաքանչիւր դադարս դադարեալ էին:
Եւ ոչ ոք էր որ մնացեալ էր առ թագաւորին,
Եւ ոչ տունդ և այրուծի.
Բայց միայն սակաւ սպասաւորք հանդերձ,
Եւ որոցն պառականօք,
Եւ ռաճվիրայ ժարդկաւն
Եւ խառնադանջ խորանապահ զօրուն,
Եւ ռամիկսպաս զօրօքն,
Եւ տիկնաւն հանդերձ,
Եւ արքայորդին մանուկն Արշակ:

Բայց երբ նախարարները, իշխանները և գործակալներն իմանում են
թագաւորի գերվելու եղելութիւնը, ժողովում են, պատրաստվում, ընկ-
նում են թշնամու ետեւից: Թեպետ շեն համուած նրան,

Սակայն հասնէին, առեռին
Զկողմ ի Պարսից աշխարհէն.
Առհասարակ մարդակոտոր առնէին,
Եւ զաշխարհն յայրեաց և յաւար դարձուցանէին:

Բուգ., 9. ի.

Ապա Տիրանի գերութիւնն զրեմն արեւմտն են պարսիկներին հոռմայե-
ցոց կայսրի միշոցով, այն էլ սոսկալի պարտութիւնն հասցնելով պար-
սիկներին.

Ապա հասեալ ի տունիւն ժամուն,
Անկանէին ի վերայ թագաւորին Պարսից,
Ընդ սուր զամենայն բանակն հանէին,
Եւ ոչ զմի ոչ ասպրեցուցանէին,
Եւ առին զկապուտ, զաւար քանակին,
Եւ վկանայս թագաւորին և զքամբիչն,
Եւ զքանոսկան՝ զնդ նարին,
Եւ զինչա և զստացուածս նոցին
Ընդ նմին ի գերութիւն վարէին,
Ջկանայս նոցա և զզանծս,
Եւ վկեանս և զկազմած նոցա:
Բայց միայն թագաւորն պրծեալ մազապուր,
Պէշասպիկ մի սուրհանդակ առաջի,
Պրծեալ ելանէր փախստական.
Հազիւ ուրեմն կարէր
Անկանել, հասանել յաշխարհ իւր:

Յուգ, Գ. իա.

Արշակ թագաւորը Վասակ զորավարի ձեռով մտաւ 260.000 զորքով
վեց տարի շարունակ ավերում է հոռմեական կողմերն առանց որեւէ դի-
մադրութիան.

Հարկանէր, սաւար աստուղը զկողմանս Գամրաց,
Միջև ի քաղաքն Անկուրացուց.
Զվեց ամ զմիմեանց զհետ
Աւերէր զայխարհ սահմանացն Յունաց:
Լցան արարաւ փազմաւ և ոչէսպէս մեծութեամբս:

Յուգ, Գ. ժա.

Ապա դարձայ Արշակը, պարսիկներին օգնելով, Վասակ զորավարի
ձեռով Միջագետքում կոտորում է հոռմայեցոց բանակը.

Մածեալք, բանակեալք էին
Իբրև զաւագ առ ափն ծովու բազմութեամբս:

Վասակն ալրարատյան զեզով ընկնում է նրանց վրա և

Առհասարակ զնդ սուր հանեալ կոտորէին,
Այնպէս զի ոչ ասպրեցուցանէին
Ի նոցանէ և ոչ զմի:

1 Տղվամ է՝ քրեանկանա, ուղղում է ըստ Ն. Մարի և Հ. Մանանդյանի՝ քրեանկանա:

Եւ առնուին զկայսուս,
Զաւար յունական զօրուցն,
Զի ոչ գոյր լափ կամ թիւ,
Որչափ լցան դանձօք.
Եւ անհամար կարասեալ,
Մեծաւ աստրան լղփացան:

Բար. Գ. Ի.

Երևանամյա պատերազմի ժամանակ քանի՞ քանի անգամ հայերը, վասակ սպարապետի զորավարութեամբ, շարդում են պարսիկներին: Հենց սկզբից Շապուհն անձամբ զորքով գալիս է Արշակի վրաս: Վասակն Արշակի հրամանով վաթսուհի բյուզր (≈ 600.000) հեծելազորով դուրս է գալիս նրա դեմ:

Առ հասարակ զօրան զամենայն
Հարկանէին ի սուր սուսերի իւրեանց.
Եւ միաձի ճողպարեալ՝
Արքայն Պարսից Շապուհ փախչէր:
Սոքա հասանէին, գերէին,
Այրացաւոր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից.
Եւ ինքեանք կային, ունէին զճակատուն տեղի,
Այսինքն զսահմանս Պարսից պահէին:

Բար. Գ. Ի.

Այս առաջին հարձակումն է: Երկրորդ անգամ ալեւի մեծ ուժով է գալիս Շապուհը:

Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ
Ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար,
Իբրև գաւազ առ ամեն ծովու.
Եւ փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ:

Ինչքան էլ հայերն շտապում են դորք ժողովելու, սակայն պարսիկներն իրենց վորքը երեք մասի բաժանելով՝ երեք տեղով մտնում են հայոց Երկիրն և ասպատակում: Հայերն էլ ժողովում են իրենց զորքը, այնքան շատ,

Զի ոչ գոյր համար բազմութեանն:

Միևնույն տարում, միևնույն ամսի միևնույն օրը ճակատամարտ է լինում երեք տարբեր տեղերում՝ Վասակի, իր եղբայր Բազտուի և Արշակի զորավարութեամբ: Երեք տեղում էլ հայերը հաղթում, կոտորում են պարսիկներին:

Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից,
Դարձան ի փախուստ, ցրուեցան, սփռեցան:

Հասանէր զօրավարն Վասակ,
Արկանէր զգօրսն ամենայն փախստէիցն Պարսից,
Ոչ ասրեցուցանէին և ոչ զմի.
Եւ քափնջին տար քազում և զփիղսն:

Շապուհի բանակի դեմ դուրս է գալիս Արշակ թագավորը:

Ապա անկանէր գիշերի արջայն Արշակ
Ի վերայ բանակին Պարսից,
Եւ անդէն ջնդ սուր հանէր զամենեանն,
Բայց միայն միաձի մազսպուր՝
Ճողողէր թաղաւորն Շապուհ,
Փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից...
Եւ սօքա (հայր) ի կողմանս Պարսից ասպատակէին...
Եւ յցան գանձիսք քաղմօք, և զինու և զարդու,
Եւ քաղում ատարաւ և անշափ մեծութեամբ,
Եւ հարստացան, անցին ըստ շափ:

Յուզ., Գ. Իր.

Հայերից ոչ ոք չի սպանւում թացի Բագսից, այն էլ ոչ թե պարսկի
ձեռով, այլ իր անխելքութիւններով:

Արապես պարսիկներն իրենք ոչինչ չեն կարողանում անել: Բայց
ուհա գալիս է դարձալ սպառնալու թյուրումն: Հայոց թագավորից ասպատակ-
բում է նախարարներից մեկը—Մերուծան Արծրունին: Նա առաջնորդ է
դառնում պարսիկների առաջվանից սպիւի շատ զորքերին, և մինչ հա-
յոց թագավորն երկրի արեւուտայումն էր գտնւում, հայերի շապաստ
կողմից պարսիկները մտնում են Միջնադարհը:

Եւ զգօրսն Պարսից պատրաստէին
Առաւել ևս քան գառաջինն.
Եւ առաջնորդ ունէին
Ղարազորն Մերուծանն,
Ասպատակել յաշխարհն Հայոց:
Յանկարծաբէն այրացաւեր
Ղերկերն Հայոց առնէին
Առաջնորդ Մերուծանաւ.
Ղորս ստային ի կտիտամն փղաց,
Եւ զկանայս ընդ ցից սալլից հանէին.
Առնուին, կտորէին
Ձամենայն բնակիչսն վերնազատացն Հայոց:

Բայց երբ պարսիկ զորքերն իմանում են, որ Վասակ զորավարը գա-
լիս է իրենց վրա, շտապով փախչում են դեպի իրենց աշխարհը:

Ապա զհետ կրթէր Վասակ Մամիկոնեան,
Եւ երթայր հասանէր նոցա,
Զուէին ի սահմանս Ատրպատականին,
Իսկ զորքն թագաւորին Պարսից թողին զգերին,
Եւ փախստական լինէին հանդերձ Մերութանանս,
Եւ թափէր անշափ և անթիւ
Ջամենայն զառեալ դերութիւնն:

Բար., Գ. Իգ.

Նորից Մերութանն առաջնորդ է դառնում, և այս անգամ Եսպուհ թագաւորն անձամբ՝ իր զորքին զուլս անցած՝ Հայաստանի արեւմտյան կողմից հարձակումն է և ավերում երկիրն այն ժամանակ, երբ Արշակն իր զորքով Ատրպատականի սահմանների վրա զգուշութեամբ սպասում էր պարսիկներին: Բայց դարձյալ Վասակը վրա է հասնում, կոտորում բոլորին, և միայն Եսպուհն ու Մերութանն են ազատվում.

Բայց միայն թագաւորն միաձի
Ճողպարնալ մազապուր փախչէր...
Բայց յայնմ նուագի ևս
Ապրէր Մերութանն շարագործն,
Փախուցնալ ընդ արքային Պարսից:

Այնուհետև հայերն իրենց երկիրը պահպանում են սգրկոսին դուրս սահմանացնա: Այս անգամ Արշակն և Հայրակման դիմում հոների օգնութեամբ: Եսպուհն էլ իր կողմից զալիս փանակ է դնում Քալիբզում: Հաղթում են հայերը և կոտորում ամենքին: Միայն պարսից թագաւորը դարձյալ ամիաձի ճողպարեալս փախչում է:

Հաջորդ հարձակումներն այլևս Եսպուհն անձամբ չի կատարում, այլ անապան իշխանների ձեռքով 23 անգամ մեծամեծ բանակներ է ուղարկում Հայաստան՝ Արշակ թագաւորի վրա: Բայց ամեն անգամ էլ Վասակ սարսափեալ, համեմատաբար սակալակեալ քաղցում, կոտորում է, նրանց թողնելով սեմիս անում: Հայոց բանակների համար հիշվում են 120 հազար, 11 հազար, 40 հազար, 70 հազար և 30 հազար թվով զորքեր. իսկ պարսիկները երեք անգամ հարձակվում են Եսպուհի վրա՝ շատ զորքերով, իսկ մնացած հարձակումները նրանք կատարում են 2 անգամ 180 հազար զորքերով, 1 անգամ՝ 350 հազար, 5 անգամ՝ 400 հազար, 2 անգամ՝ 600 հազար, 1 անգամ՝ 800 հազար, 5 անգամ՝ 900 հազար, 3 անգամ՝ 4 միլիոն, 1 անգամ՝ 5 միլիոն զորքերով: Ընդամենը 26 միլիոն 210 հազար զորքերով, չհաշված երեք անգամի անորոշ բազմութիւնը, ինչպես և առաջին հինգ հարձակումները:

Այս փոլոր 26 հարձակումների ժամանակ ահա, ըստ վկայի, հայերը կոտորում են միլիոնավոր պարսիկներին, քեծ մասամբ և նրանց զորավարներին, և փախչում ազատվում է Եսպուհը. ի՞նչ ևս զալիս է ինչպես և Մերութանը: Ընդ հետևանքն ի՛նչ է լինումս

Զերհասուն և զշորս ամս ետուն պատերազմ
երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից,
Եւ յետ այնորիկ ձանձրացան, պարտեցան,
լքան, աշխատեցան երկոցին կողմանքն:
Եւ սկսան սորոտել, զնալ
Ի բանակէն Հայոց թագաւորին.
Քողին զհերհանց արքայն Արշակ:

Քաղ. Գ. Բ.

Եւ զվնայր մի աստ մի թմբում է, թի ուլքեր, ո՛ր իշխանները զավանա-
նությամբ անցնում են պարսիկների կողմը, մի երկուսը հեռանում են
հունական երկիրը: Նրանք բռնորը Հայաստանի հզերային նահանգների
իշխաններն են: Մնում է միայն Միջնաշխարհը. քայք սա էլ անհնա-
զանց է զտնվում:

Միջնաշխարհն, մնացեալքն յերկուացան յարքայէն,
Եւ ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց,
Ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր:
Եւ զձձեցաւ թագաւորութիւնն մեծապէս:

Հայոց թագաւորից աստատմբում և Շապուհի կողմն է անցնում
նույնիսկ Վասակ սպարապետի եղբայրը՝ Վահան Մամիկոնյանը:

Իսկ թիւն Հայոց պտկասեաց,
Յայսմ հետէ և յայսա:

Արշակը չի պարտված: Քայք նախարարները շեն ուզում պատերազ-
մել: Ահա թի վ'նչ են ասում նրանք ներսեային.

«Դու, տէր, ջեզէն զիտես,
Զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ,
Զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղև ի պատերազմէ.
Եւ համակ սրով և սուտերոց
Եւ ի սլաքս և ի տէգս նիզակաց,
Զքրտունս երեսաց մերոց շնչեցաց:
Եւ արդ ոչ կարեմք այսմ զմոյժ ունել,
Եւ ոչ այլ կարեմք տայ ճակատս.
Զի լաւ է մեզ, քէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից,
Որպէս ընկերքն մեր արարին,
Զի թողին զնա և գնացին աստ թագաւորն Պարսից.
Եւ մեք սոյնպէս ամենլոց հմք,
Քի ոչ այլ ևս կարեմք կուուել.
Քէ պէտ իցէ թագաւորին Արշակայ կուուել ընդ Շապուհոյ,
Վասակաւ և Անդուկաւ աներաւ իրով տացէ պատերազմ.
Այլ յայսմիկ Հայոց աշխարհես

Եւ ոչ մի այր ոչ ոք է երթալոց
Ի թիկունս օղնականոթեան նորա
Նմա թէ պէտ իցէ, տաքէ պատերազմ, թէ պէտ մի',—
Մեր թողեալ զնա, մեզ չէ սիրիթա:

Բուս, Գ. ԺԹ.

Նրանք շին լսում Ներսեսի խրատին և ազմկելով ցրվում են իրենց տները:

Ջաղաղակ հարկանէին,
Քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն անէին,
Շփոթէին, ամբոխէիս և ասէին,
«Հա՛ պա, դնասցո՛ւք, ասեն,
Սիրեցարուք յիւրաքանչիւր տեղիս,
Ջի այդմ բանից մեք ինչ ոչ կամեմք լսելու:
Սիրեցան յիւրաքանչիւր տունս իրեանց:

Շատ էլ հերոս Արշակը, «Արշակ Քաշը», ցանկանում է պատերազմը շարունակել, բայց սգօրքօք համաձայն չէ դրան: Մյուս կողմից Շապուհը նախընտրու ազարկելով՝ թուղթ է գրում և սիրով խնդրում Արշակին, որ գնա նրա մոտ,

Ջի յայնմ հետէ արասցեն յի մէջ իւրեանց
Մէք և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ:

Արշակն ստիպւած համաձայնում է հաշտվել: Շապուհը դարձեալ կանչում Վ նրան իր մոտ, ասելով.

Ե՛տկ եթէ հաճ եմք ևս և դու ընդ միմեանս,
Ծ'ի, տեսցուք զմիմեանս.
Եւ յարմ հետէ իբրև զհայր և զորդի յիցոքք ընդ միմեանս,
Ապա թէ ոչ տեսանես դու զիս,
Խնդրես զպատերազմ քի սնէջ իմ և ի մէջ քոս:

Արշակը պահանջում է նրանից հալատարիմ երդում, և Շապուհն ուղարկում է զրատ օրինացն հաւատարիմ երգմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ կնքեալ վարազ նկարագիր մատանեալ: Այդ էլ որ տեսնում են, Հայրց երկրի րոշոր մարդիկը ստիպում են թագաւորին գնալ Շապուհի մոտ:

Յայնմ հետէ թէ կամաւ և լի է ոչ կուտու,
Յարեաւ թագաւորն Հայոց Արշակ,
Ան ընդ իւր զգօրաւարն,
Սպարապետն Հայոց, զդայակն իւր,
Խաղաց, գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից:

Բուս, Գ. ԺԳ.

Գնում են Շապուհի մոտ և այլևս չեն վերադառնում, իսկ երկիրն
անզուտա մնալով՝ ավերվում է և՛ պարսիկների, և՛ դավաճանների ձեռով:
Հերոսներին դավաճանում են: Նրանք մենակ են մնում, խաբվում
են և այնպես կործանվում: Բայց և այնպես գերության մեջ անգամ Նը-
րանք իրենց պահում են հերոսական հպարտությամբ: Արշակը Հայաս-
տանից բերել տված հողի վրա Շապուհի հետ խոսում է իրեն իր ծառու-
ներից մեկի հետ. իսկ Վասակ սպարապետը ինչպես մի անվեհեր առյուծ:
Կարդանք հետևյալը:

ԵՑադազս թէ որպէս զգիւթսն եւ զքաւղեայսն հարցեալ Շապուհ
փորձէր զմիտս Արշակայ, եւ տայր զնա թէնուշ բերդն, եւ կամ զՎա-
սակ սպարապետն Հայոց շարամտո՛ հրամայէր առնել:

Այս կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ
Ջղիթսն և զաստեղազէտսն և զքաղեայսն,
Խուֆէր ընդ նոսա և աւէր՝
Ենթէ մա բազում անգամ:
Կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց,
Եւ նա համակ անարգեաց զիս:
Եւ եզի ընդ նմա ուխտ խաղաղութեան,
Եւ երզուաւ ինձ յիւրեանց որէնս քրիստոնէութեանն,
Ի զիխտորութիւն այնմ, զոր աւետարանն կոչեն.
Նախ այն երդմանն ստեաց:
Ծա նմա թիւր բարիս խորհեցայ
Որպէս հայր որդույ կատարել նմա,
Եւ նա ինձ զար ընդ բարոյ հատոյց...
Բայց Արշակ արքայ Հայոց՝
Այս երեսուն ամ է Արեաց՝
Ջի հտուն ընդ նմա ճակատս,
Եւ յազթել և ոչ մի ամ ոչ կարացաք.
Եւ ելեալ է եկեալ ոտիւք իւրովք:
Բայց թէ զիտէի՝ թէ յայմհետէ
Կայցէ յովստին իմում և ի հնազանդութեան,
Բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք,
Արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհնս:

Իսկ քաղեայքն հտուն նմա պատասխանի և ասեն.

— Թող մեզ այսօր, և փաղիւն պատասխանի արասցուք ջեզ,
Իսկ ի վազիւ անդր ժողովեցան եկին
Ամենայն քաղեայքն և աստեղազէտքն,
Եւ ասեն ցարքայն.
Այժմ զի եկեալ է առ ջեզ
Թագաւորն Հայոց Արշակ,

Ջիւա՞րդ խօսի ընդ քեզ.

Կամ զինչ ձայն ածէ,

Կամ զիւ՞րդ ունի զանձնս

Ասէ արթայն.

— Իբրևս զմի ի ծառայիցն իմոց համարի զինքն,

Հող ոտից իմոց ջանայ լինելու

Ասեն նորա.— Ա՛ռ արա զոր ասեմքս քեզ.

Պահեա զու զնոսա աստէն,

Ու առաքեա զու զհսպանս յերկիրն Հայոց,

Ու տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց,

Իբրևս բեռնս երկուս, և կահոյր մի ջուրու

Ու հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ

ի բերեալ հողոյն Հայոց.

Ու առցես քեզէն զձեռանէ արթային Հայոց Արշակայ,

Ու տարցես նախ յայն տեղ, որ բնակ իսկ իցէ հողն,

Ու հարցցես ցնա բանս:

Ու քորձեալ առցես զու զձեռանէ նորա,

Ու տարցես ի հայատակսն ի հարեալ հողոյն.

Ու լուիցես զու բանս ի նմանէ,

Ու ապա զիտապցես զու՝

Եթէ կա՞յ յուխտի քո,

Ու պահէ՞ զգաշինս քո թէ ոչ,

Յետ արձակելոյ քո զնա ի Հայս:

Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի,

Պիտասաշիր՝ զի ո՞ր օր հասանէ յերկիրն Հայոց,

Ջնոյն ձայն ածէ ընդ քեզ.

Ու զնոյն պատերազմ նորողէ ընդ քեզ,

Ջնոյն ճակատս և զնոյն թշնամութիւնն յուզէ:

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաղէիցն,

Տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և զչրոյ,

Զի եկեսցեն, բարձցեն նմա զհմայսն:

Ու ընդ սակաւ աւուրս եկին, բերին զայն ինչ, զորմէ

յգեացն:

Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ,

Զկէս յատակին իւրոյ խորանին

Հարկանել ի բերեալ հողոյն Հայոց,

Ու զչուրն ցանել ի վերայ նորա.

Ու զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ

Ու ետ ածել զԱրշակ արթայ Հայոց զառաջել իւրով,

Ու զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացոցանել.

Ու զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով:

Եւ երթնենկա առեալ ընդ խորանն, ասէ ցնա,
Յորժամ ի պարսիկ ի Հողոյն ի վերայ ճեմէին՝
Քէ.— Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց—
Ձի ես որպէս զորդի սիրեցի զքեզ,
Եւ կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի վնասօրին
Եւ որդի ինձ առնել զքեզ,
Իսկ դու խոտացար ընդ իս,
Եւ քովք կամօք՝ առանց վնասց կամաց՝
Եղեր ընդ իս թշնամի.
Եւ այս լի երեսուն ամէ,
Ձի պատճարազմեցար ընդ իս
Ասէ Արշակ արքայ,
Քէ.— Մեղայ քեզ և յանցնայ.
Ձի ես եկի և վստորեցի,
Եւ յաղթեցի թշնամեաց քոց.
Եւ ակն ունէի ի քէն պարզ և կենաց,
Եւ թշնամիք իմ հրապարեցին զիս,
Եւ արկին երկիւղուկս ի քէն.
Եւ փախուցին ի քէն.
Եւ երգումն իմ, զոր երգումայ քեզ,
Յառաջ ամին զիս, և եկի աւասիկ արաչի քո
Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ,
Ձինչ և պէտք է քեզ, արա՛ զիս,
Ձինչ և կամ իցէ, սպան զիս,
Ձի ես ձառայ քո առ քեզ
Կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորս,
Շրջէր ճեմելով, ի շքմեղս առեալ զնա,
Ածէր ի Հայակողմն ի Հողն հարնայ յատակն,
Իսկ իորն յայն տեղի Հասանէր, և զհայ զհողն կոխէր,
Մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝
Այլ ձայն շրջէր, սկսանէր խօսել և ասել.
— Ի բաց կաց յինէն,
Մտայ շարազործ, տիրացեալ տէրանցն քոց—
Այլ ոչ թողից զքեզ և որդոց քոց
Ձվրէժ նախնեաց իմոց,
Եւ զմահն Արտեանայ արքայի
Ձի այժմիկ ձեր ծառայից
Ձմեր տէրանց ձերոց զքարձ կալեալ է.
Բայց ո՛չ թողից,
Եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ,
Դարձեալ տանէր յայն հոյ Պարսից.
Ապա աշխարէր զասացեալսն,
ձոնարհէր, բուռն հարկանէր զտօից նորա,
Մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն
Իսկ յորժամ առեալ զձեռանէ
Ձեա տանել ի հայ հողն,
Եւ խստագոյն քան զառաջինսն բարբառէր.
Իսկ զարձեալ միտանդամ հանէր յայնմ հողոյն,
Բանիք յապաշխարոթիւն դառնայր
Յայգոթէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա.
Ձի իբրն ի վերայ հարեալ հողոյն տանէր,
Քստացեալ ամբարտաւանէր.
Իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝
Եւ կայր, ի զղջումն դառնայր:

Իսկ իբրն երեկոյ եղև
Ժամ քնթրեաց թագաւորին Պարսից,
Քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին
Բազմական անդէն ընդ նմին, առ նմա,
Ի նորին տախտին արկանել քաղմական,
Օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց
Ի միում տախտի բազմէին, ի միում դահոյս:
Իսկ այն օր նախ զտող բազմականացն,
Քագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին.
Հուսկ յետոյ զկնի ամենեցունց, ի ներքոյ բուրբին,
ՁԱրշակայ քաղմականն առնէին,
Ուր զհայ հողն յատակն հարեալ էր
Նախ ամենեքեան իբրն քաղմեցան յիրաքանչիւր շափու,
Յետոյ ամէին, բազմեցուցանէին զարքայն Արշակոյ
Արդ եկաց բազմեալ ուտուցեալ վայր մի.
Իսկ յոտն եկաց, ասէ զթագաւորն Շապուհ.
— Ի՛մ այդ տեղի, ուր դուք ես բազմեալ.
Յո՛ւն կաց այդի, թող ն'ս այդր բազմեցայց,
Ձի տեղի ազգի մերոյ այդ լեալ է.
Ապա նիջէ յաշխարհն իմ հասից,
Մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն:

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից,
Բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ,
Եւ յոտս և ի ձեռս նորա երկաթս,
Տա խաղացուցանել զնա ի յԱնթմըշն՝

Զոր Անուշ բերդն կոչեն,
Եւ պնդեալ զԼոս մինչև անդէն մեացի:

Եւ եղև ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ,
Ածել զառաջեալ իւր զՎասակ Մամիկոնեան,
Զգորովարն, սպարապետն Հայոց Մեծաց.
Սկսաւ պատուհասել զնաւ
Քանզի էր Վասակ անձամբ փոքրիկ,
Անէ ցնա արքայն Պարսից Շապուհ:

«Ազոսէ՛ս, որ՞ է էիր խանդարիչ,
Որ այսչափ աշխատ արարեր զձեզ:
Պո՞ւ ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամսս.
Եւ այժմ դիա՞րդ կարես սպրեչ ի ձեռաց իմոց:
Զմահ աղոսէսու սպանից զքեզս:
Իսկ Վասակ տուեալ պատասխանի, սսէ.
«Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ,
Եւ սուրն իմ ոչ է ընդ իս,
Ոչ առեր զչափ մեծոթեան իմոյ,
Զի ցայժմ ես քեզ առեւծ էի և արդ աղոսէ՞ս:
Քայց մինչ ես Վասակն էի, ես ձեզ սկայ էի.
Մի ոտնս ի միոյ լերին կայր,
Եւ միս ոտնս իմ ի միոյ լերին կայր.
Յորժամ յաչ ոտնս յենուի,
Զաչ լեանն զնդ գետին տանէի.
Յորժամ ի ձախ ոտնս յենուի,
Զձախ լեանն ընդ գետին տանէիս:
Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և սսէ.
«Ազէ՛, տուր քնձ դիտել,
Ո՞վ են լերինքն այնոքիկ,
Զորս դուն ընդ ունչ տանէիցս:
Եւ սսէ Վասակ.
«Լերինքն Երկուց, մի դո՞ւ էիր,
Եւ մի թագաւորն Յունաց:
Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ...
Պիտեցաք տալ քեզ խրատ,
Մինչև մեզէն աչօք քացօք անկաք ի խորխորատս:
Արդ զինչ և կամ իս, արտ՛ս:
Ապա ետ հրաման թագաւորն Պարսից
Մորթել զգորուփարն Հայոց Վասակ,
Եւ զմորթն հանել և շնուլ խոտով,
Եւ տանել ընդ նոյն բերդ յԸնդմըշքն, որ Անյուշ կոչեն,
Ուր արգելին իսկ թագաւորն Արշակ:

Այս միեւնույն հերոսական զաղափարականացումը Մամիկոնյան զո-
րավարի համար տեսնում ենք և Պապի ժամանակ, Քեպետ շոտմայեցոց-
կայսրը պարսիկների դեմ ուզարկում է վեցհարյուր բյուր (= վեց մի-
լիոն) զորք, քայքայ կոմոզը միայն Մուշեղ սպարապետն է իր տասն հա-
զար զորքով: Նա իրեն առաջապահ մտնում է Հայաստան և կոտորում
բոլոր պարսիկներին իրենց զորագլուխներին հետ:

Ս: ոչ մի զորք ոչ ապրեցուցանէր...
Ս: զքաղում պատուաւոր տեարս,
Որ պատուականք էին առաջի թագաւորին Պարսից,
Ունէր ձերբակալս Մուշեղ,
Ս: տայր մորթիւ և լնուլ խոտով,
Ս: կանգնել ի վերայ պարսպացն:
Ընդ բազում տեղիս զայս առնէր
Ի վրէժս հօրն իւրոյ վասակայ:

Քաղ., Ծ. 3.

Շապուհը, Մերուծանի առաջնորդութիւնով, դալիս է Հայաստանի
վրայ: Նրա բանակը Քավրիզում է: Մուշեղը հարձակվում, կոտորում է:
ամենքին: Շապուհը դարձյալ ամիսնի մագապուրծ... ճողպրեալ փախ-
չէր: Նրա կանայքը քտիկնանց տիկինն հանդերձ ալլովք կանամբքն
դերի են ընկնում Մուշեղի ձեռքը: Նորից հարձակվում են պարսիկ-
ները: Այս անգամ հունական և հայկական զորքերը միասին մարտնչում
են նրանց դեմ. բայց գլխավոր դործը Մուշեղն է կատարում իր 90 հա-
զարից ավելի զորքերով: Պարսիկները ջախջախվում են: Մի վերջին ան-
գամ էլ Շապուհը հարձակում է դործում: Կովում են հունական զորքերն:
ևս, բայց դարձյալ գլխավոր դերը Մուշեղն է կատարում:

Ս: լինին խառնուրդք ճակատուն.
Ի պարտոզթին մատնեցան զօրքն Պարսից:
Մանաւանդ գունդք նիզակաւորացն
Յարձակեալք, մոլեգնեալք, քաղութեամբ զախոյեանս
Ի վերուստ յերիւմարացն յերկիր կործանէին
Յանգիման թագաւորին Պարսից Շապուհոյ:
Ս: ընդ ընկնելուն խրախոյս բառնային աղաղակելով
Ամենայն օրքքն պատերազմիկը Հայոց համակ,
Զայս քանս ասելով, եթե. «Առ Արշակ Փայշ:
Զի դամենաքն ախոյեանսն, զորք ի նակատուն յայն սպանանէին.
Նմա նուիրէին, իւրեանց առաջի թագաւորին Առշակայ:
Զի զամենայն զոր սպանանէին, ասէին.
«Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիչիքս:
Ս: յորժամ Հայոց ազատանայն ախոյեանացն,
Նիզակաւորացն ուզմ արաբեակ յարձակեալ:

Զգօրսն Պարսից նիգակաւորքն առեալ բնկենուին,
Աւէին ի խրատուսնն. սևև Արշակ Քաջս:
Իսկ յորժամ զննեալ գլխատէին զախոյնանսն,
Աւէին. «Արշակայ գո՛հ լիջիրս!»

Բուգ., Ե. Ե.

Այնուհետև դադարում է Հարձակումը պարսիկների կողմից Պապի ժամանակ, և Մուշեղը Հաջողութեամբ կոտորում, սպանւմ է բոլոր ապրտառամբներին ու զաւանճաններին (Ե., Ը.—ՃԹ.): Եվ վերջը բոլոր Հազթութեաններից հետո, իբրև մի տարածված վիպական մոտիվ, լինում է Մուշեղի գովարանութեանը (Ե. Ի.):

Պարսից պատերազմը, սակայն, դեռ չի վերջանում: Մուշեղի եղբայր Մանուէր Հայաստան գալով՝ դառնում է սպարապետ, կոտորում է Սուրեն ժարգպանի 10 հազար զորքը: Ապա Մանուէր յորս անգամ նրա վրա մեծամեծ բանակներ է ուղարկում, և Մանուէր բոլորին կոտորում է.

Եւ ճեպեաց Մանուէլ և Եհաս բեղղէմ զնդին.

Եւ արկանէր ի սուր զգօրսն Պարսից.

Եւ զՊումանց Եսպետէն սպանանէր:

Եւ դարձեալ Էլանէր մեծաւ յաղթութեամբս:

Բուգ., Ե. ԸԹ.

Հարկանէր և սատակէր,

Ջնջէր զնոսա ի միջոյ.

Եւ զլխովին զՎարազն սպանանէր,

Քափէր զկապուտ սաստիկ,

Զգարդ և զզէն զօրացն,

Եւ դառնայր մեծաւ խաղաղութեամբս:

Բուգ., Ե. Ի.

Եւ անդէն առհասարակ

Ընդ սուր Հանէր զամենեւեան ի դակիրն,

Եւ զՄըռկանն սպանանէր

Եւ թափէր աւար բազում,

Եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէր ի նոցանէն:

Բուգ., Ե. Խ.

Վերջին անգամ պարսից թագավորը զաւանան Մերուժանի գլխավորութեամբ զորք է ուղարկում հայերի վրա: Մերուժանն սպանվում է մարտի ժամանակ, նորա դուստրն ամբողջ կոտորվում է.

Հարկանէին, սատակէին զնոսա,

Եւ զմի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին...

Այլ իբրև լուսն զօրքն Պարսից,

Ձոր թողեալ էր Մերուժանայ
Ի գաղաւն Կորճէից,
Թէ սատակեցաւ Մերուժանն
Նւ կորաւ գունդն որ ընդ նմա,
Նւ ինքեանք ի Պարսից երկիրն
Փախստական զնացին:
Նւ Հայոց երկրին լինէր
Խաղաղութիւն բազում:
Բուգ., Ծ. Իգ.

Եվ հայերի այս հաղթութեամբ վերջանում է Պարսից պատերազմը՝ Ապա իբրև վերջարան, ինչպես շատ հերոսական սխրագործութիւններից հետո լինում է, ամուսնանում են Արշակունի եղբայրներն Արշակն ու Վաղարշակը, և հարսանքի ուրախութիւնն են անում.

Նւ մեծապէս արարեալ զՎարսանիսն
Ամենայն երկիրն Հայոց,
Ճնծացեալք, խնդացեալք էին
Ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեանն:
Բուգ., Ծ. Իգ.

Հետո թագավորում է Արշակը, և զրա համար դարձաւ մեծ ուրախութիւն ու ցնծութիւն են անում ամենայն երկիրն Հայոցս:

Այսպես՝ տեսնում ենք, որ այս հերոսական բանաստեղծութեան մեջ հայ մարտիկները ճակատ առ ճակատ կռիւնքով ոչ մի անգամ չեն պարտւում: Նույնիսկ քույրանների դեմ պատերազմելիս գերի հայերը քաղութեան հրաշքներ են զործոծ, ինչպիսի, որինակ, Դրաստամատը, որ մահից ազատում է Շապուհին (Բուգ., Ծ. է.): Քույրանները կոտորում են պարսից զորքերին:

Ձի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին,
Ի զօրացն Պարսից քանրեր անգամ ոչ ապրէր:
Բուգ., Ծ. ԻԶ.

Քայց ազատվում են Մանուելն ու իր եղբայրը մեծ քաղութիւններ անելով:

Հայերը միշտ շարդում են իրենցից տասնապատիկ և նույնիսկ հարյուրապատիկ ավելի մեծ թվով թշնամիներին, նրանց երբեմն միլիոնների հասնող մարդկանց թուրքին: Դա հատկանիշ է հերոսական վեպի, որի մեջ մարտը վերջանում է միշտ հերոսների հաղթութեամբ: Դրանով, այդ յափառանքովով, լինում է հերոսի միակական զաղափարականացումը:

Վեպի այսպիսի նկարագիրը, հարկավ, համազատասխան չէ իրական պատմական դրուվյալներ: Թշնամիները հաճախ արշավել, մտել են Հաստատան, կոտորածներ արել, առ ու ավար տարել: Նույնիսկ հյուսիսա-

կանները ոչ սակաւ անգամ ծայր ծայր սղոզի, ասպատակի են հայոց
-երկիրը:

Վեպի մեջ էլ գտնում ենք այդպիսի դրութիւնների պատկերներ
ու պատմվածքներ: Բայց նման դեպքերը, վիպական հատկութեամբ,
միշտ արգարացմամբ են որով պատճառով. կամ թագավոր ու զորավար
չկա, կամ դավաճանութիւն ու դավադրութիւն կա մեշտեղով, կամ զո-
րավարը բացակա է, կամ գեո զորք չկա ժողոված, կամ սահմանապահ-
ները զեղծ են (Գ. յա.), կամ թագավորն ու իր սարաբապետը երկրի ուրիշ
կողմում են, իսկ թշնամին դավաճանի առաջնորդութեամբ հակառակ
կողմից է մտնում Հայաստան: Բայց վերջ ի վերջո հակառակմանը
մեջ հաղթողը հայ թագավորն ու սպարապետն են: Եւ եթէ հերոսները՝
Արշակն ու Վասակը պարտվում են, այդ լինում է միայն այն պատ-
ճառով, որ ամենքը լքում են նրանց: Եւ եթէ հերոսներն ընկնում են,
նրանք ընկնում են միայն նենգութեան ու խաբեութեան զոհ դառնալով:
Այդպէս կործանվում են Խոսրով Մեծը, Տիրանն ու Արշակը, աշապես և
Պապն ու Մուշեղը, որոնց սպանում են դավադրութեամբ ուրախութեան
խնջուլի մամանակ: Այսպէս նրանք անպարտելի են:

Դա վիպական դադափարականացումն է:

Ետո հերոսական վեպերի մեջ կգտնենք ոչ միայն այդպիսի լակ-
զանց կոտորածներ, այլև անհաղթ հերոսի կողքին մի դավաճան: Գրա-
նով բացատրվում է հերոսի պարտութիւնը, և հերոսն ավելի քարժա-
նում է, թողնելով այն տպավորութեանը, լին նա չէր հաղթելի, եթէ շի-
ներ դավաճանութիւնը: Իսկ երբ դավաճանութեան պատճառով սկզբում
միայն անհաղթութիւն է լինում, սրանով հետո ավելի ևս տպավորել է
դառնում հերոսի հետագա հաղթութիւնը և նա ավելի ևս զազափարա-
կան է պատկերացվում: Եւ վերջապէս, երբ հերոսը խաբեութեան ու նեն-
գութեան զոհ դառնալով՝ խորտակվում է, այդ բացասական կողմով նը-
վաստացվում է հակառակորդը, և հերոսը նրա մոտ քարժրանում է բա-
րոյապէս, որով և նա դարձյալ ավելի ևս զազափարական է դառնում:

Կարևոր չէ այստեղ նմանութիւններ քերել ուրիշ հերոսական վե-
պերից: Այդ նենգավոր ու խաբեական վարմունքը հակառակորդի կող-
մից, զա շատ տարածված մի վիպական մոտիվ է, որ կա նաև մեր ժնաս-
նա Մոերիս մեջ:

Անշուշտ, Արշակի ու Պապի մահվան վեպերը հիմնված են իրական
եղելուցիան վրա: Քերես պատմական հիմք կարող է ունենալ և մյուս-
ներից սրա կամ նրա անկման պատմվածքը: Բայց այդ դեպքերը, ինչպէս
և առհասարակ պատմականորեն ամոթալի իրականութիւնները, տրված
են այնպիսի բազմաթիվ հերոսական հաջողութիւններից հետո, կամ թե
դրանցից հետո գալիս են այնպիսի վրժեթխնդրութիւններ, այն էլ այն-
պիսի մշակումով, որ հանձինս վիպական իրեալական հերոսների երևան
լի գալիս պատմական անձերի—թագավորների ու զորավարների և նույն-
իսկ տերութեան իրապէս գոյութիւն ունեցած թուլութիւնը:

107. **Պատարարականացման նպատակը:**— Պատարարովք պարտիկներին դժմ վարելու համար անհրաժեշտ էր ռազմիկներին ողորկել: Իսկ զրա համար հարկավոր էին անպարտելի թաշուփյան ու հաղթութիան երգեր, իրենալական հերոսութիան օրինակներ, նույնպես պետք էր և պարտութիան արդարացումը՝ զորքին լքում և հուսաբեկութիուն շպատճառելու համար: Ահա թե ինչ է եղել զուսանի նպատակը՝ պատմական երգն ու վեպը հորինելու և թե ինչու նա այնպես լափառանցել ու զունավորել է պատմական եղելութիւնները:

Մի հոգեորական պատմագիր Մովսէս Խորենացի, պատմական հայացքով նայելով իրերին և Արշակի վախճանը նկատի ունենալով, կարող էր հոգեորականներին շփոթող Արշակին թինքնահաճ և ամբարտաւան համարել, ծագրել նրան, զրելով, թե քնա պարծենում էր զինարքուկներում և թե նա միայն սվարձակներին երգերի մեջ քայլ և արի էր երեւում: Բայց այդ երգերի մասին այդպես չէր կարող մտածել ինքն Արշակը: Նա լքված էր հոռմայեցիներին (և ոչ թե, ինչպես Խորենացին զբրում է, իբր Արշակն ինքը թնշկահեալ արհամարհեաց զնոսա), նա միամտանակ և ստիպված էր երկարամյա ծանր պատերազմ վարել իրենից շատ ու շատ ավելի զորեղ Մապուհի դեմ, որ ձգտում էր ոչնչացնել նրան և նրա տներովը: Արշակին և նրա նախորդներին ու հաջորդներին հենց այդպիսի թաշուփյան և արիութիան մասին երգեր ու վեպեր էին սրտք, հենց հերոսական թանաստեղծութիւն և հերոսները քաղափարականացում էր հարկավոր իբրև պրոպագանդայի միջոց:

Վիպասանի հայացքը եղելութիւնների պատմութիան վրա՝ այնպիսի էր, որ նրանց համար միևնույն էր, թե այդ երգ ու վեպի մեջ իրական իսկապես կատարված եղելութիւններ և իրոք ապրած անձեր են հանդես գալիս, թե չէ: Բավական էր, որ զբանք կարող էին ունկնդիրներին երագել տալ նույնպիսի սխրագործութիւնների մասին: Թագավորին ու իր ապարասպետին անհրաժեշտ էր այդ ծանր պատերազմի ժամանակ ամբարցնել իրենց դիրքերը: Գրա համար նրանց պետք էր պարծենալ իրենց գործերով, իրենց ծագումով փառավոր նախնիքներին: Նրանց հարկավոր չէր եղելութիւնների իսկական պատմութիւնը, և վեպի նպատակը չի եղել վերարտադրել պատմութիւնը: Գուտանք վիպում է այնպիսի պատմութիւններ, պատմական իրականութիւններն այնպես փոփոխում վէ և այնպես է սրտամում, որ հնարավոր լինի ազգել ունկնդիրներին վրա հերոսականում, անպարտելի մարտիկների սխրագործութիւններով, որպեսզի ունկնդիրներն իրենք վէ ցանկանան նույն անել:

Սվ նույնիսկ ինքը Մովսէս Խորենացին, Սղիշին կամ մի այլ հին պատմագիր, իրենց հայացքով պատմութիւն վրա, պատմութիւն օգտագործումով իրենց նպատակների համար, վիպասաններին շատ էլ հեռու շեն կանգնած: Ինչպես որ նրանք իրենց զրած պատմութիւնների մեջ զովում են իրենց օրինակելի համարած պատմական անձերին, նույնպես

և դուստանները փառաբանում են իրենց հերոսներին, անվանելով նրանց
ամեն, թքաչա, թքաբարանքս:

Այդտեղ, դրա մեջ չ' հերոսական բանաստեղծութիան սոցիալական
նպատակը: Այդ բանը շատ չափ գիտեն իրենք կոմպոզիտորը:

Ուայլը Ղազար Փարպեցին, անշուշտ, ճշգրտաբանութիւնը չի հա-
մարում և չէր էլ կարող այդպես համարել Բուզանդի թուրք լափազան-
ցումները: Նա, Վահան Մամիկոնյանից քաշվելով՝ մեղմորեն նկատում
է, թե այդ պատմութիւն մեջ կան թի տեղիս ուրեք բանք ինչ որ յարմարք
և դիպողքս, ասնպատշաճ կարգումնա: Նա այդ պատմութիւնը անվա-
նում է նույնիսկ ոչ սգիտնոց բանքս, այլ ասնմտացն շարժապահանքս, իսկ
նրա դրոշին սյանդոսն և անհրահանգ բանիս: Նորերը XIX դարի վեր-
ջերում՝ Բուզանդին անվանել են նույնիսկ սխառտ անպարկեշտա և սլոկ-
տիարանա: Բայց այդպես՝ նորերից միայն նրանք, ովքեր չգիտեն, թե
ինչ է ավանդական վեպը, ժողովրդական վեպ ասածը. իսկ հենրից միայն
Ղազար Փարպեցին և նրա բնկեր գիտունները: Այդպես լին մտածել,
ասկան Ղազարի ժամանակակից կոմպոզիտորն իրենք:

Երայց մտաւոր և քաջ այրն վահան, տէրն Մամիկոնէից, զօրավարն
Հայոցս, որ շատ մարտիք էր վարել պարսիկների դեմ, քարթնամիտ
խորհրդականութեամբ ուշադրեալ այսմ ամենայնիս, այսինքն Բուզան-
դի մասին եղած կարծիքներին, ասուելը ևս դայս ի ղէպ և պատշաճ հա-
մարեցաւ. ի մեացեալ տեղոյ պատմութեան նրկրող դրոցնա, այսինքն
Բուզանդի Հայոց պատմութիւն, ասեցուցանել յառաջ և գրել յայնմհետէ
զեզեայս յարիարիւրն Հայոց: Բազում զգուշութեամբ գրել և կարգել մի
քառ միորէ... զարտոնց քաջաց զյաւութիւնն: Որպէս պի... քաջքն լսելով
բայոց զգործն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջու-
թիւն՝ անուանի յիշատակ թողցին զկնի իւրեանք՝ անձանց և ազգի: Իսկ
ծոյլքն և զմտքն հայնելով յանձինս և լսելով զայլոց զպարսաւանս՝ ի քա-
րի նախանձ կրթեալք ջանասցին յաւանալ: Ըստ այսմ օրինակի զգուշա-
ցեալ ստիպեցուցանել զմեզ տէրն Մամիկոնէից վահան, զօրավարն Հա-
յոց և մարզպանս:

Վահանն, տէրնն, այնպես չի մտածել Բուզանդի պատմածների մաս-
ին, ինչպես ռոմանքս և ինքը Ղազար Փարպեցին: Մեք օրերում նույն-
իսկ, իմպերիալիստական պատերազմի ժամանակ, միամիտ հայ կամա-
վորները ճակատի դիրքերում գիշերները լսելով Մասունցի Դավթի վեպը՝
ոգևորվում էին, ասանց հաշիվ տալու իրենց, որ ճշգրտապատմութիւնը
չէ այդ Դավթի արարքը:

Այս է եղել հերոսական վեպի էությունն ու նպատակը. ոգևորել
ուզմիկներին քաջերի ու արիների օրինակով, թեկուզ նրանց մտացա-
ծին գործերով, և զգուշացնել անարիներին և վատերին դավաճաններին
օրինակով՝ պարսաւելելով նրանց արարքները և պատժել տալով նրանց:

2 Ղազարայ Պարպեցայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1867, եր. 12:

Տպետք է կարծել, թե այն ինչ որ պատմագիր Ղազար ու զորավար Վահանը մտածել և զործադրել են գրավոր կերպով, նույնը չեն արել առաջ, գիր չեղած ժամանակ, ուրիշ զորավարներ ու թագավորներ և գուսանները: Միայն վեպի մեջ այդ ամենն առանց որևէ ժամանակաբանոթյան և աճելի շափազանցած և ընդհանուր վիպական մոտիվների հետ ավելի յառն:

Է

ՎԵՊԻ ՀՈՐԻՆՎԱՆՔԸ

108. Սյուժետները:— Մեր այս վեպը բավական հարուստ է դանազան սյուժետներով, Բայց կան նաև նույն սյուժետների փոփոխականք: Ինչպես երևում է, հին ժամանակներից կազմվել են պատմական վեպի սյուժետների մի քանի տիպեր, որոնք այլ և այլ պատմական վեպերով ու մոտիվներով կրկնվում են: Դրանից է առաջանում այն, որ մեր հին վեպի, ինչպես և նորի մեջ կան բազմաթիվ կրկին պատմվածվե՞ր, կամ ինչպես Ֆրանսացիք ասում են՝ double emploi-ներ, այսինքն, մինևուսյն դեպքը, փոքր ինչ փոփոխված ձևով, պատմվում է մի քանի պոթոզ անձերի վրա, մտած թե մինևուսյն դիպվածը փոխանակ մի անգամ պատմել պրծնելու՝ կրկնված ձևով փոքր տարբերություններով մի քանի անգամ պատմվում է նույնիսկ մի հեղուսի համար: Ժողովրդական վեպի էական հատկություններից մեկն է այս, որ գտնում ենք մեր հին վեպի մեջ: Այսպիսի կրկին պատմվածքներ են անպայման հյուսիսական ազգերի արքայամեծները Խոսրով Կոստակի, սրա հոր Տրդատի, սրա հոր Մեծն Խոսրովի օրով, և եթե ավելի բարձր դասնք ըստ Խորենացու, Մեծն Խոսրովի հոր Վաղարշի օրով ևս, որ թուև է փիպական Արտաշեսի, որի օրով դարձյալ արշավում են հյուսիսային ազգերը: Այսպիսի կրկին պատմվածքներ են Արշակի երկու անգամ փախելը Պարսից Եսպուհի մոտից (Թուզ., Գ. ժգ. Ի.), և պարսիկների բազմաթիվ հարձակումները մինևուսյն թագավորի կամ զորավարի օրով, ինչպես Խոսրով Կոստակի, Արշակի ու Պապի և Վասակի ու Մուշեղի Խորենացիին, օրինակ, մի Զիրազի ճակատամարտով վերջացնում է պարսիկների դեմ կռիվը Պապի ժամանակ. իսկ Թուզանդը, որ հավատարիմ է մնում ժողովրդական պատմվածքին, երեք անգամ Եսպուհին հարձակվել է տալիս հայերի վրա:

Հին վեպի կրկին պատմվածքներից հիշենք նաև Ազձնեաց բղձըլի ապստամբությունը և պատմվելը մեկ՝ Խոսրովի օրով, երբ Բակուր բրդեղեխի որդիներից մեկն ազատվում է, մեկ էլ՝ Արշակ թագավորի օրով, երբ ամենից առաջ Ազձնեաց բղձըլին է անցնում Եսպուհի կողմը, և պարիսպ օձէին ի Հայոց կուսէ, որ Զորայն կոչեն, զրուսն դեձին և դատուցին զիրեանց աշխարհն ի Հայոցս: Պապի ժամանակ Մուշեղը բուր ապստամբ իշխանների հետ պատմում է և Ազձնեաց իշխաններին. Երբ բակալ առարեսալ զբրնաշխն Ազձնեաց, տո նմին կատուրեցին զկամայս, և պորդիս նոցա ի գերութիւն վարեցինք (Թուզ., Ե. ժգ.):

Այսպիսի կրկին պատմվածքներ կարելի է համարել իսկապես նաև աքն չկաղզոզները, որոնք կազմված են միևնույն թեմայով, որ է անհավատարիմ և անհյու իշխաններին պատժելը Դրանք ևս միևնույն սյուժեակի վարիանտներ են:

Եստ վիպական երգերի ու վեպերի մեջ տարածված մի մոտիվ է նաև տիրոջ ու հավատարիմ ծառայի ընդհարումը: Տերը կասկածում է իր վասալի հավատարմության մասին, թշնամի է դառնում նրան. թայց հետո բացվում է ծառայի անմեղությունը: Անարդար ամբաստանության պատճառով՝ ունկնդրի համակրությունն ուղղվում է հերոսի կողմը. և ավելի ևս զգալի է դառնում նրա հավատարմությունն ու իդեալացումը: Որովհետև հերոսն իր անմեղությունը ցույց տալու համար ավելի մեծ քաղաքործություններ է անում: Այսպես և մեր վեպի մեջ Մուշեղը Պապի օրով:

Միրված սյուժետներ ու մոտիվներ են, ինչպես տեսնել ենք, ամուսնությունը, որսորդությունը, ավարառությունը, տիրասիրությունը և թագավորի անձի անձնանմանիությունը համար հորինված պատմվածքները, հերոսի մահը, մահվան վրեժխնդրությունը և ուրիշները:

Առաջին մեծ ու կարևոր պատմական սյուժետը, որ նույնպես մի քանի անգամ կրկնված է, դա թշնամիների ժամանակավոր հաշտությունն է: Հայ փառավորը կամ հերոսը, իտալիական նենգության զոհ դառնալով՝ ընկնում է դավաճանի ձեռքով: Թշնամին կամ պարսից թագավորը տիրում է Հայաստանին, ասպատակում է և ավերում: Ապա հայերը հույների օգնությամբ վրեժ առնելով, կոտորում, քշում են պարսիկներին, և թագավորում է ընկած թագավորի որդին: Այս է Խոսրով Մեծի ու Տրդատի, Տիրանի ու Արշակի, Արշակի ու Պապի վեպերի ֆարսիան սքեմատիկ ձևով: Նույնն է և Մուշեղի ու Մանուելի վեպը: Մուշեղն սպանվում է դավադրությամբ: Մանուելն առնում է իր ձեռքը վրեժը, թշնամուն քշում է երկրից և ինքն իշխում: Այդ վեպերից յուրաքանչյուրն, ընդհանուր տիպական կողմով, կարծես, մի փոփոխակ է միայն: Դրանց հետ սքեմապես նույնանում է նաև Նրվանդի ու Արտաշեսի վեպը:

Ինչի՞ց է առաջանում այս նմանությունը:

Հին վրպական սյուժետները բոլորը հիմնված են որոշ՝ դարաշրջանի պատմության ու կենցաղի վրա:

Կյանքի մեջ հաճախ նման բաներ կրկնվել են. ուստի վիպական սյուժետները նորագվել են նման նոր եղելությունների ազդեցությամբ: Այդ դեպքում հին սյուժետների գործողությունն ընդհանրապես ավելի կայուն է լինում, քան անունները: Ուստի հին սյուժետներին կցվում են նոր հերոսներ, նոր անուններ հենքի փոխանակ. թայց մարդկանց հարաբերություններն ու իդեալություններն էապես մնում են նույն հերոսը: Այսպիսով առաջ են գալիս նոր պատմաներ նույնանման նյութով, թայց տարբեր անուններով, բնականորապես նաև մանրամասնությունների և

պատմվածքի մեջ մտած էպիզոդներն և երկրորդական սյուժետներն ու մտախմբներն տարբերութեամբ:

108. Սյուժետների հաջորդությունը:—Քանի որ իսկական ընագիբը յունենք, զովար է կատարելապես ճիշտ գաղափար կազմել այս մասին: Բայց և այնպես Ագասթանգեղոսի և Բուզանդի պատմվածքներից բավականապես երևում է, որ մեր այս երկրորդ վեպի մեջ ևս պատմվածքները կենտրոնացած են աչքի դիպվածի, մի գլխավոր գործողության շուրջ, այլ պատմվում են իրար հաջորդող անձերի վրա:

Առանձին մեծ սյուժետներն այս ամբողջի մեջ, ինչպես և սյուժետների տարբերը միևնույն սյուժետի մեջ, դասավորվում են զլիտավորապես ժամանակի հաջորդությամբ, բայց սովորաբար ոչ առանց պատճառական կապակցությամբ: Այդ էլ այս վեպի, ինչպես և մեր մյուս ավանդական վեպերի մեջ եղելովսյունների զարգացման էական սկզբունքը: Կան, հարկավ, նաև առանձին էպիզոդներ, որոնք միմյանցից անկախ են և որոնց կապակցությունն ամբողջի նկատմամբ՝ կամ անորոշ է մընում կամ լինում է գործող անձերի նույնությամբ: Բացի այդ՝ ներքին պատճառական կապը տարբեր սյուժետներին մեջ՝ երբեմն թույլ է կամ պատմվածքի մեջ ուղ է զգացվում: Այդպիսի դեպքերում սյուժետների հաջորդությունը լինում է սովորական ժամանակերով՝ այսինքն ժամանակիչ, ժապառ, զգայնու ժամանակապես և այլն:

Երբ պատմված է ճիշտությունների ընկան պատճառա-ժամանակական հաջորդությունը, այն ժամանակ առաջ են գալիս ամբողջի մեջ նորանոր կացություններ, սովորաբար գործող անձերի հակադիր միտումներով: Դրանով գործողության պատմվածքի մեջ շարժում է առաջ գալիս, որ և գրավում է ունկնդիրների ուշադրությունը:

Վիպասանների վիպական շարժումն առանձին առաջ են բերում մի սովորական եղանակով: Նրանք գործողությունը հասցնում են մի կետի, երբ, կարծես, ամեն ինչ վերջանում է և նրք ունկնդրի կարեկցական համակրողությունն ուղղվում է Հայաստանի թագապետի կամ հերոսի կողմը, որ բաց սրտով, սմիամտությամբ, հյուրընկալում է դավադիր մարդասպանին (Խոսրով Մեծ, Տիրան), կամ սմիամտությամբ հավաստում է թշնամուն (Արշակ) և հենց դրա համար զոհ է գնում:

Ընտր, — հարց է տալիս ունկնդիրը գործողության ընթացքով հետաքրքրված: Մի՞թե ամեն բան վերջացավ: Բայց ահա հենց այդ ժամանակ գործողության մեջ բերվում է մի նոր հանգամանք (Տրդատի ազատվելը. նախարարների կողմից Անդովկի և Արշավրի դիմելը՝ հունական կայսրին. նույնպես և Մուշեղի դիմումը): Դրանով գործողությունը նոր ընթացք է ստանում և ունկնդիրները սպասում են վրեժխնդրության, որ և վրա է հասնում:

Վեպի գործողության այսպիսի զարգացումը, հարկավ, անդրադարձնում է այն, ինչ որ իրականության մեջ տեղի է ունեցել: Ինչպես կյան-

քի եղելութիւններէ, նույնպէս և վեպի եղելութիւններէ զարգացումը ուրեմն, նույնն է. դրանց ամեն մի հայրող փուլը հետևանք է նախորդին: Եվ այս է հենց, որ վեպի պատմութիւնը մեզ բնականութեամբ և հետաքրքրութեամբ և ծննցնում:

110. Վեպի միտքումը:— Ինչպէս տեսել ենք, մեր հրկրորդ հին վեպն էլ, ինչպէս և «Ասանա Մտերը», կազմված է մի շարք նույն ցիկլին պատկանող փոքրիկ վեպերից, որոնք իրենց հերթին վերածվում են միջադեպերի: Սրանց կապակցութիւնը կատարված է շատ նախնական ու պարզ ձևով, որ հատուկ է քնական տնտեսութիւնի դարաշրջանի մտքին: Բայց և այնպէս իրարուց հեշտ անջատվող միջադեպերը միանում, իրողութիւնները մի շղթա են կազմում, մի մեծ ամբողջութիւն են առաջ բերում, թեպետ ոչ գեղարվեստական և ոչ այն մտքով, թե այդ ամբողջը ծայրածայր մի վիպասանից պատմված լինի, թեկուզ մի քանի նիստում, իբրև մեկ պատում:

Այս երկրորդ վեպն էլ, որ իր ծավալով ավելի մեծ է, քան «Ասանա Մտերը», անպայման կազմված է երեւ տարբեր պատումներից: Դրա հետքերը շատ պարզ երևում են Բուզանդի պատմութեան մեջ:

Ինքենց դրանցից երկուսը:

Թե Տիրանի և Արշակի վեպերն առանձին պատումներ են եղել, այդ պարզ երևում է այն տարբերութիւնից, որ կա Տիրանի վեպի վերջի և Արշակի վեպի սկզբի մեջ (Բուզ., Գ. Խ., Գ. ա.): Տիրանի վեպի մեջ պատմվում է, թե Ներսէսը խնդրում է, որ Վազն կայսրն իր, Ներսէսի, քերի կանանցն արձակի, քայքայ կատարը լծուղի է գրում պատից թագաւորին, թե՛ սնտա դու, առէ, դարձուցնես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան ինքնին զլիովին, և զամենայն ինչ, զոյր առեալ իցէ անտի. ապա յորժում զայդ արասցես, և ես զինս դարձուցից, զոր առեալ եմ. զի եթէ ոչ՝ նախ դու զնոցա զաւարն դարձուցնես և (ոչ) ես ապա զքոյդ դարձուցիցա: Պարսից թագաւորը կատարում է կայսրի պայմանը: Տիրանը կուրսութիւն պատճառով հրաժարվում է թագաւորութիւնից. Ներսէսը նրա փոխունակ թագաւորեցնում է Արշակին և իր հօր ու կանանց հետ մեծ պատրաստութիւնով ուղարկում է Հայաստան: Ապա նա կայսրի ղեկավարներին էլ ետ է ուղարկում, որ գնան կայսրին պատմեն, թե ինչպէս ինքը նրա պայմանը կատարել է: Այդ ժամանակ կայսրն էլ Ներսէսի քերի կանանց է արձակում:

Արշակի վեպի սկզբում, սակայն, այս պատմութեանը տարբեր ձևով էլ, նախ կայսրն է արարից գերիներին արձակում, ապա պարսից թագաւորն արձակում է Արշակին և հորը. սեւ դարձուցանէր կայսրն Յունաց զգերութիւն արքային Պարսից, Ապա և թագաւորն Պարսից Ներսէս թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և հարը նորին և հանգիւրձ կանամք իւրեանց և ամենայն ցերեթեւեմք հանգիւրձ... Խաղաց, զնաց Արշակ արքայ Հայոց Մեծաց. թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց

հանդերձ հարբն իւրով և ամենայն ընտանեօցն իւրովք. եկն, եհաս յերկիրն Հայոց և ժողովեաց զցրտեայս երկրին, և թագաւորեաց ի վերայ նոցա» (Բուգ., Գ. ա.): Այս տարբերութիւնը ցույց է տալիս, որ Տիրանի և Արշակի վեպերն իրարուց անկախ պատումներ են եղել:

Երբ նստրով Կոտակի օբով Վաչե Մամիկոնյանն ընկնում է մարտի մեջ, նրա որդի՝ Եփրատիկ մանկիկն Արտաշատիցն քարձրացնում են իր հոր իշխանութիւնն ու գահը.

Եւ զզօրաւարութեան զգործ

Ծանծն առնէին Արշաւրայ Կամսարականի,

Իշխանին Շիրակայ և Արշաբունեաց գաւառին,

Եւ Անդովկայ իշխանին Սիւնեաց.

Ձի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեանն տոհմին:

Բուգ., Գ. թ.

Հետագայում, Տիրանի գերտոթիան վրեժն առնելու համար, հայոց ավազանին հենց այդ երկուսին, Անդովկին, անհապատն Սիւնեացն և Արշավրին, անհապատն Արշաբունեացն, պատգամաւոր են ուղարկում հունական թագաւորի մոտ, և սա հենց այդ երկուսի հետ լրտեսում է պարսկական քանակը, և հաղթութիւնից հետո նրանց վերակացու է կարգում Հայաստանի վրա (Բուգ., Գ. իա.): Ուղեմն՝ Անդովկը առաջուց արդեն հայտնի է: Բայց և այնպէս Արշակի վեպի մեջ տղնել և Փառան-Աննա մասն սկսւում է այնպէս, որ Անդովկը նոր է հանդես դալիս.

Ջայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ՝

Անդովկայ ուրումն,

Մի ի նախարարացն, նահապետին Սիւնեաց,

Որում անուն Փառաննեմ կոչէր:

Բուգ., Գ. թ.

Այստեղ սուրումն, ամի ի նախարարացն որոշումները հենց ցույց ան տալիս, որ մի առանձին պատում է սկսւում: Վիպասանը նկատի չունի նախորդ մասը, որ նա կարող էր նույնիսկ իմացած լլիենել, ինչպէս նուէր տեսնում ենք նաև Մասնա Սոնրիս պատումների վերաբերմամբ: Բուզանդն ինչպէս լսել է այդ պատումները, այնպէս և սկսել է պատմել:

Մի ընդհանուր գործողութեան կապ, մի բարոյական դրութիւն տեսնել այս հին վեպի քոյր պատումների մեջ՝ իբրև միութեան կենտրոն, իհարկե կարելի է: Բայց և այնպէս՝ դա մի վեպ է և ունի իր միութեան կենտրոնը այն ձևով, ինչ ձևով որ Ֆիրդուսու Եասնամեն ունի: Այստեղ միութիւնը կազմում է Իրանի և Թուրանի կռիւը, որ իրար հետ կապում է բազմաթիւ իրար հաջորդող սերունդների մասին պատմված տարբեր վեպեր. իսկ մեր այս մեծ վեպի միութիւնն է հայոց և պարսից պատերազմը:

Առաջին էյուզի մեջ հենց սկզբից, ինչպես պետք էր, դրվում է այդ ընդհանուր դրույթը, թեման, որից իբրև հիմնական պատճառից ծագում է գործողությունը, որով և ամբողջ վեպը միական երկ է ստանում: Դա է երկու երկրի հարստությունների հակամարտությունը, Հայաստանում Արշակունի տոհմի, որի կողքին կա պատերազմ վարող սպարապետությունը, իսկ Պարսկաստանում Սասանյան տոհմը, այդ տոհմի թագավորն էր մեծամեծների խորհրդով: Մի քախում, որ կարևոր արդիական իրականություն, քաղաքական խնդիր է եղել Հայաստանի համար ոչ միայն ներկայի, այլև սպառաշի նկատմամբ:

Այն թողից դեռ և աչ որդոց քոց զվրժ մախնեաց լիսոց և զմահն Արտեմանայ արքայիս,— Արշակ թագավորի այս խոսքն առաջնորդ է վեպի սկզբի մասում հայերի համար կռվի մեջ, Ռայց շուտով դրույթունը փոխվում է. պարսիկներն ուղում են հայերին հնազանդանել իրենց և հայերը կռվում են ալիքի իրենց անկախության համար: Ինչպես վերջում ասվեց, այս վեպի կենտրոնական գաղափարն է՝ երկրի պաշտպանությունն ի դեմս Արշակունի փնիկ թագավորական տոհմի: Այս է հիմնական ընդհանուր գաղափարը և ընդհանուր դրույթունը, որ անցնում է ամբողջ վեպի միջով, որի մեջ և կատարվում են սերունդների հաջորդությունը քաղաքացիական վեպեր: Գրանով և միանում են վեպի առանձին մասերը:

Ինչ ընդհանուր միություն կարելի է տեսնել, օրինակ, մեր Սասանա Մոնրիս լորս սերունդների մեջ: Դա մի տոհմային պատմություն է, որի մեջ դիպվածները, յուրմեծներն ու մտտիվները, լիարժեք են ոչ թե մի կարևոր եղևությունը, այլ մի տոհմի, ալի տեղական կենտրոնի, Միոզիան տեսակետից մեր այս հին վեպը նույնիսկ ալիքի բարձր է նորից, քանի որ նորի մեջ զկա միևնույն անգամ այն ընդհանուր դրույթունը, ընդհանուր շահն ու խնդիրը, պարսիկների և հայերի դարավոր ձգտումներն իրար վերաբերմամբ, որ տեղի հին վեպը իբրև մի ընդհանուր ֆոն, որի մեջ զետեղված են գործող անձերը: Սասանացի և իր եղբոր, Առյուծաձև Մհերի, Գալթի ու Պզտիկ Մհերի վեպերն իրարուց անքսա՝ քաներ են և կապված են գրեթե միայն հոր և որդու կապով: Այդ էյուզիբից յուրաքանչյուրը նույնպես մի քանի անկախ վեպերից ու գրություններից են կազմված, քայց և այնպես միասին մի վեպ են, որովհետև մի մարդու զվրժ եկած բաներ են. և բոլոր սերունդների էյուզիբն ևս միասին մի ընդհանուր վեպ են, որովհետև հերոսները հայր ու որդի են: Մասնա մոնրիս կենդանի օրինակը քաջատրում է մեզ մեր այս հին վեպի ընդհանուր հասկացությունը. այն է՝ Մամ-կոնից միևնույն Մասնայ պատմվածները նույնպես մի վեպ են կապված և ալիքի ևս հեշտոթյամբ, քանի որ մի ընդհանուր դրույթուն, մի ընդհանուր թեմա գտն, եղել է, որով հորինվել է մի շղթա, որի օղակները թեպետ և մեկը մյուսից անկախ՝ քայց և իրար հետ կապված են եղել:

Այդ շղթայի ամեն մի օղակը, սակայն, որ մի անկախ վեպ կամ գրույց է և մյուսներին անջատ ևս կարող է պատմված լինել, ունի թե հին և թե նոր վեպերի մեջ, յուրաքանչյուրն իր ընդհանուր դրուժյունը, թեման, որին ծագում է և լուծում է ստանում իր գործողութունը, որ և շատ անգամ ազդում է նաև հարջորդ պատումի վրա: Ոտտի և Երքեմն անկախ գրույցները համեմատաբար ավելի անբոտ են կապվում իրար հետ:

Մի առ մի վերլուծել այս հին վեպի (ինչպես և սխանա Մոսկիտ) ամեն մի օղակը և ցույց տալ, թե ինչ է կազմում դրա գործողութիւնը հիմունքը, այդ մեզ շատ հետոն կտաներ: Միայն նկատենք, որ մի քանի անկախ մասերը միութուն չունեն, կամ այն պատճառով, որ պատմագիրները չեն պահել, կամ որ ավանդականի մեջ ևս չի ներսծ, ինչպես նույնը տեսնում ենք և մեր նոր վեպի մեջ:

111. Վիպատում:— Վեպն ասելու գլխավոր եղանակը, բնականաբար է վիպերը, իվելը, պատմելը, որով ծավալվում և առայ է ընթանում գործողութիւնը: Բայց ինչպես ամեն ավանդական վեպերի մեջ, այստեղ էլ նյութի քացատրութիւն համար տեղ տւեն նաև նկարագիրն ու տրամադրութիւնը: Նկարագիրն առհասարակ անմշակ վիպական լատենագրութիւնների, ինչպես և մեր նոր վեպի մեջ, փոքր տեղ է բռնում. սակայն այս պատերազմի մեջ, անշուշտ, նաև այն պատճառով, որ պատմագիրները կարևորութիւն չեն տվել դրան: Տրամախտութիւնը, և ավելի ևս ուղղակի խոսքն, ընդհանրապես մեծ տեղ է բռնում ավանդական վեպերում, և բազմակերպ պահպանում են մեր այս հին վեպի նույնիսկ այն մեջ մեջ, որ տվել են մեզ Ազաթանգեղոսն ու Բուպանգը: Այդ արվում է սովորական կարճ սառն և նման բառերով: Պրա համար օրինակներ կարելի է տեսնել վերևում բերված հատվածներին, այլև Տիրանի դրվագի (Բողո. Գ. ի.), Արշակի երկրորդ փախուստի դրվագի (Պ. ի.), Մուշեղի (Ծ. դ.), Մանուկի (Ծ., լէ. խգ.) և շատ ուրիշ դրվագների մեջ, ինչպես նաև վերևում բերված Պրատաստատի պրովագի մեջ:

Արտաքինի՝ հագուստի, մարմնի, դեմքի, շարժվածքի, կովի և այլն նկարագիրներ, ընդհանրապես սակավ են. բայց և այնպես մեր այս հին վեպի մեջ այդպիսի նկարագիրները համեմատաբար շատ ավելի են, քան սխանա Մոսկիտ այս կամ այն պատումի մեջ: Բերենք մի երկու օրինակ՝

Վասն զի սէզ իսկ էր (Տրդատ) առ հանդերձ,
Ծւ այլ ուժով պնդութեան, հաստատութեամբ,
Բուռն ոսկերօք և յազթ մարմնով,
Քաջ և պատերազմող անհնարին,
Բարձր և լայն հասակաւ:

(Ազաթ.)

Ահա և Մանուկի և իր եղբայր Կոնի (Կոմսի) նկարագիրը, երբ նոր րանք Պարսկաստանից Հայաստան են գալիս.

Եւ էին հետիոտք երկոցին հըրարքն.
 Եւ էին երկոցեան մեծք, անհեղեղք.
 Երկոցեան անձնեայք որպէս սկայազունք:
 Մինչդեռ զային ի ճանապարհի,
 Ոչ կարէր Մանուէլն գնալ,
 Զի ոտիւքն ցաւած էր.
 Ապա կոմս հըրայր իւր ըստանձնեալ, առեալ, բառեայր,
 Եւ տասն տասն խրատախ բերէր ըստ անձին՝
 Զայնչափ այրն զանհեղեղ, զանարի:

Բուգ. Ե. 16.

Վարազդատի և Մանուելի մարտից.

Իբրև զայս ի վեր ամբարձնայր արքայն Վարազդատ
 Եւ նաչէր քնդ գայն իւր,
 Եւ տեսանէր զսպարապետն Մանուէլն,
 Ի մեծութենէն հաստկին,
 Եւ ի շքեղութենէ անձինն,
 Եւ յամբարկուտ, յերկաթապատ,
 Յոտիցն մինչև ցզլուխն,
 Առ հասարակ յանվթար դինէն,
 Ի հաստամեստ յանձնէն,
 Եւ ի հաստատուն երիվարէն,
 Եւ յասպազէն վառելոյն,
 Եւ անշարժ սպառազիեօն՝
 Լամարեցաւ, կշռեաց զնա ի միտս իւր
 Իբրև պեւտն մի բարձր զանմատոյց:

Բուգ. Ե. 17.

Բերենք մի հատուած ևս Մարդպետ Գղակի սպանութեան գրվագից՝
 Պապ Թագավորը հրամայում է ընթրիքի ժամին պատմուճան հագցնել
 նրան:

Եւ ազուցին նմա գրատաւ և վարտիս:
 Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն.
 Զի խորշ զխորշիւ իշամէր,
 Մինչ զի ոչ կարէր հանդերձն զանձն իւր,
 Զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն:
 Եւ ազուցեալ զպատմուճանն մեծ,
 Էստ զգտտին ընդ մեջ իւր՝ զորմէ քուրն կախէր.
 Եւ սուտեր ընդ մէջ ածեալ,
 Եւ խորշ ի գտուոյ գրատիցն իշեալ,
 Զթուրն և զսուտերն ծածկէր:
 Իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ազուցեալ,

Եւ զներանն յազդեր կապեալ,
 Եւ ի վերայ նրանին՝
 Խորշն ի վարտեացն իջեալ,
 Անկեալ ի վերայ նրանին,
 Ծածկեալ մինչև ի սրունսն,
 Եւ ոչ ինչ իմացաւ Գղակ,
 Թէ այն մեծութիւն հանդերձոյն
 Չարոյ նորա իցէ այն:
 Իսկ շինն ժամ աւուրն կոչեցին զՔղակն, և ասեն.
 Եկոյնն զքեզ լընթրիս ի ներքս յարքունիսս:
 Իսկ յորժամ մուտին ի փող տանցն՝ յորում արքայն էր,
 Եւ վր փողն ընդ երկար,
 Բազում սրգս լորսիւղլցս էր թողեալ,
 Եւ տանէին զնա ընդ աքն.
 Կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն,
 Եւ զերգս ամենայն լուսոյն ծածկէին:
 Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղոցն՝
 Չգծգէին զնա սպարակիրքն:
 Իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի դէն,
 Ի խորշխորջան համարեմիցն, պատատեւոցն՝ զոր էր զգեցեալ,
 Ոչ մի զէն աչ վարաց գասանել:
 Ապա զի վր ինքն Գղակն
 Այր մեծ և անձնեայ, թաչ հարուստ ոսկերօք,
 Մակարն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ,
 Եւ բարձին զնա վերբարարձ.
 Եւ տանէին զնա մինչև ի դուրս տաճարին արքունի:

Տիրանի Ճարտուկ Ճանճկենն ձիու նկարագիրը բերված է վերևում:

112. ԲՃԱՎՊՐՈՒՅՈՒՆՆԵՐը:— Գործող անձերի ներքին հատկութիւնն-
 ների նկարագիրը լինում է սովորաբար մակդիրներով: Գրանցով միա-
 ժամանակ երևում է նաև վիպասանի արժեքավորումն ու վերաբերմունքը
 դեպի գործող անձը և նրա արաքը: Այսպես՝ սլաւագործն Մերուժանն,
 ԵՄբրուժան վատանշանն, կամ Տիրանի մատենոջ Փիսակին տրված մակա-
 նունները՝ ամոլեկան, անօրէն, կատաղախօս, շնաբերան, շորիկ, շոգ-
 մոգ, տիրանենոգ, տիրադրութ, տիրասպանու, տիրամատնիչ, կամ՝ Եսէզն
 Տրդատտ, քառչ արանցն աշխարհաշէնն խոսքովը, ԵՄրշակ քաչը, Եմա-
 նուկ բանսերթուիչ:

Եւ վր նա (Վարազդատ) մանուկ քաւորց,
 Լի արութեամբ, կորովի ձեռօք,
 Քաչ սրտիւ, և ի մտաց թեթեւ,
 Մանկաբարոյ, տղայահանճօր, մանկամիտ:

Բուգ., Ծ. 14.

Գործող անձերի բնավորութունն և նրանց հոգեկան վիճակը պարզ-
վում է գիտավորապես նրանց արարքներով և խոսքերով: Այս նկատմամբ
նրանք, — ինչպես վեպերի մեջ սովորաբար և ինչպես նյութից հենց բը-
խում է, — բաժանվում են երկու խմբի՝ հայեր և պարսիկներ, որոնք
խոսք հակառակ են: Պարսիկներն անբողոքում են իրեն շարակն, հաշտ-
կոտ, շարաբարո, նենգ, դառնացող, շար ազգ:

...Վասն շարակնութեան, յաշտանաց,
Չարաբարոթեան, նենգութեանն ազգին պարակաց.
Վասն դառնացող շար ազգին,
Չարութեանն դառնացող ազգին:

Թուզ, Գ. ի.

Նրանց սոցալալարները, որ հարձակվում են Հայաստանի վրա կատո-
նելու համար, բուլղոն անգեմ մարդիկ են: Երևում են միայն թագավոր-
ները՝ Արտաշէս, Ներսէս, Շապուհ, խոկ իշխաններից՝ Անակ, Շապուհ,
Վարազ: Այդ մարդիկը բոլորը դավադիր են. սնր ու բարեկամութեան
պատրվակի տակ աշխատում են.

Հնար գտանել, մարթեւ ճանապարհո,
Մեքենայիւք գայթակղութիւնս դնել՝
Որսալ, քմբունել դարձայն Հայոցս:

Եվ այդպես էլ վարվում են. Արտաշէսն Անակի ձեռով դավադրու-
թեամբ սպանելի տալիս խոստովին. Ներսէսը Վարազ Շապուհի ձեռով գե-
րում է Տիրանին, և Շապուհն Արշակին է խտրելութեամբ բռնում: Նրանց
միշտ այք են տնկել Հայաստանին, ավերելու և կողոպտելու Հայոց աշ-
խարհը:

Հայերն, ընդհակառակն, — եթե դավաճաններ չեն և պարսիկներին
կողմն անցնող, — միամիտ են, պարզամիտ, նույնիսկ թեթևամիտ, սրտա-
բաց ու հյուրընկալող են, պարսիկներից կասկածոտ, քայք և խարսխող
ու վնասավող: Նրանք օտար երկրի այք դնող չեն, քայք և իրենց երկրի
քայք պաշտպան են: Հայ գործը դժվարանում է նույնիսկ մի փոքր երկար
մնալ օտար աշխարհում.

Ձի լաւ հաշուէին զմեռանելն՝
Առանել քան զլամելն յօտար աշխարհին.
Իսկ Արշակ և ամենայն գորք իւր
Տաղտապէի՛ն երթայ զհեռի ճանապարհն.
Ձի ամենայն ոք բանձնիւր ստուն,
Տիրաքանչիւր տեղի,
Զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին:

Թուզ, Գ. ի.

Հայերի կողմից որոշ գծազրված դեմքեր են Տրդատը, Արշակը, Վա-
սակը, Մուշեղն ու Մանուելը, Փառանձեմն և ուրիշները: Ե՛նչտենք մի-

այն մի գիծ, որի մեջ վիպասանն ուժեղ կերպով հակադրում է հայ և
պարսիկ հերոսներին: Մինչ Շապուհը կամենալով ռթնամանս առնել
(— անարդանք հասցնել) ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն
անասելի կերպով անպատգամ է Հայաստանի թագուհի Փառանձեմին և
անարգ կերպով է վարվում հայ ազատների կանանց հետ (Բուզ., Գ. ժե.
ժր.), Մուշեղն, ընդհակառակն, գերելով պարսից տիկնանց տիկնոջը
և Շապուհի բոլոր կանանց, պատվավոր կերպով հտ է ուղարկում նրանց
իրենց ամուսնուն (Բուզ., Ե. ք.), որ և հետագայում առիթ է դառնում
Նրա սպանվելուն:

Ապա միաձի մազապուր՝
Թագաւորն Պարսից Շապուհ ճողօպրեալ տախէշը.
Եւ զամենայն կարաւան քանակին
Առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ
Հանդերձ զօրօքն Հայոց,
Զի բազումս կոտորէին,
Եւ զբազումս յաւազանոյն Պարսից ձերբակալս առնէին,
Եւ առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի.
Եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն
Հանդերձ սլլովք կանամքքն:
Եւ զամենայն մաշկաւարզան
Ի քուռն արկանէր Մուշեղ սպարապետն:
Եւ զամենայն սաւազանին՝
Արս իրքն վից հարիր՝ հրամայէր մորթել
Զորսպարն Հայոց Մուշեղ,
Եւ լնուլ խոտով.
Եւ տալր քերել առ Պապ արքայն Հայոց:
Առնէր զայս ի վրէժ հօրն իւրոյ վասակայ:

Բայց զկանայսն Շապուհ թագաւորին Պարսից
Ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրաւարն Հայոց
Անարգել ինչ զեռսս ումեք:
Պլլ ժանուարս տալր նոցա կազմել ամենեցուն,
Եւ հանեալ արծակէր զամենեան
Զհետ ասն նոցա Շապուհ արքայի:
Եւ ի պարսկացն ընդ նոսա արծակէր,
Զի երթիցին առ Շապուհ
Թագաւորն Պարսից ողջս և անարատս:
Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ
Ընդ տարերարութիւնն Մուշեղի
Եւ ընդ քաղութիւնն և քնդ ազատութիւնն,
Զի ոչ արար ինչ նմա յազազս կանանցն թշնամանս:

Եւ էր ի ժամանակին յայնմիկ
 Երկվարն Մուշեղի, ճերմակ ձի մի.
 Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ
 Յորժամ աւնոյր գինի ի մատուսն ըմպել,
 Յորժամ ուրախութեանն իւրոյ
 Խրախուժիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր.
 «Ճերմակաձին գինի արքցէ՛ս:
 Եւ ետ նկարել զտաշտ,
 Ի պատկեր զՄուշեղ ճերմական,
 Եւ ի ժամ ուրախութեանն իւրոյ
 Գնէր զտաշտն առաջի իւր,
 Եւ յիշէր Հանապաղ զնոյն բանս ասելով,
 Թե՛ «Ճերմակաձին գինի արքցէ՛ս:

118. Ոճը:—Մեր երկրորդ հին վեպի պոետիկայի մասին եւ վատա-
 բնւայես ճիշտ գաղափար ըննք կարող կտգմել, քանի որ ամբողջական
 իսկական փնտջիչը լուսննք և շենք էլ կարող ասել, թէ Ազաթանզեղոսն
 ու Բուզանդը որչափով բառացի են օգտված իրենց իմացած և ուրիշնե-
 րից լսած գուսանական արգերից ու պատմվածքներից, Բայց և այնպես
 Հազաւատութեամբ կարող ենք ասել, որ Բուզանդի սշալոց պատմութեան
 մեջ շատ բան փոստոցի է թերված այնպես, ինչպես փերսեանցի կպատմե-
 ինքը գուսան-վիպասան Բուզանդը: Այդ պատճառով քանահայրական
 տարբերք, ինչ որ ոճին և ստանվածքին է վերաբերում, մեծ տեղ ունին
 նրա դրքի մեջ: Նույնը պակաս շափով նաև Ազաթանզեղոսի վիպական
 մասի մեջ: Հենց որանից է առաջանում Բուզանդի գրքի ոչ միայն բովան-
 դակութեան, այլև ոճի առանձնահատկութիւնը մեր հին մատենագրու-
 թյան մեջ:

Ամեն քիչ ու շատ հմուտ ընթերցողի համար զգալի է, որ Բուզանդի
 լեզուն սովորական հին գրական հայերենը, զրաքարը չէ: Դա ունի սժո-
 ղովորական տգիտք. թիպիտ արագմարտուք է և անկանոն, քայլք բնա-
 կան է, հեշտ հասկանալի և հարազատ: Եկանեալն ինչ բնական է, ա-
 ոսանց արվեստի և արվեստականութեան և հարկ է ըսել՝ հոն լուկ բնու-
 թյունն է խոսողը: Վերջապես լեզվովը փոքրին հայկարան, քերականա-
 կան արամաքանութեամբը՝ ճշտիվ սամիկ, սճովն՝ արևելյան՝: Աճի այս
 հատկութիւնը ծաղում է, բնականաբար, արվանդական քանահայրաու-
 թրունից, որ Բուզանդի համար ծառայել է իրրև աղբուր:

Փալատոս Բուզանդ հնդինակի կարծեցյալ օտարազգիութեան մի նը-
 շան համարել են այն, որ նա իր գրած պատմութեան մեջ իրր երեք չի

1 Ա. Ալտեյան, Փնական քերականութեան, ներածութեան, էր. 59, այլև էր. 63—
 118, ժողովրդական ձևերի ու դարձվածքների մասին: Տե՛ս նաև՝ Ա. Մալխասյանց, Ուսում-
 նասիր. Փ. Բուզանդի պատմութեան, էր. 20, հոմ.

գրում «աշխարհւո շալոց»², նախ՝ սխալ է այդ. Բուզանդի գրքի մեջ թիւսն սակաւագին, բայց կան գործածւած՝ «աշխարհւո շալոց», «երկիրս շալոց»: Անպահաւոր է, որ ավանդական վեպը հենց՝ համարվում է ամենից ավելի օրինակելի կամ ինչպես ասում են, անանձն, անդեմ ձեռնեցող երկ, այսինքն՝ դրա մեջ հանդես չի դալիս կամ հաղվադեպ է երևում վիպասանի դեմքը: Պատմվածքը չի արվում առաջին դեմքով: Ուստի եթե Բուզանդի «Շալոց» պատմութեան մեջ առաջին դեմքով գործածութունները սակաւաթիւվ են և որ այդ գրվածքում չի երևում հեղինակի դեմքը կամ շատ քիչ է երևում, այդ հենց ցույց է տալիս, որ բավական հարազատութեամբ օգտագործվել են վիպական աղբյուրները, լինին սրանց հեղուական վեպը, թե եկեղեցական պոետները:

Վիպական ոճի վեպան հատկութուններից մեկն էլ այն է, որ վիպասանները հաջորդաբար ստեղծում են և սիրով ու դանդաղ պատմում են մանրամասնութուններ և այնպիսի հանգամանքներ, որ մեզ համար երկար ու ձիգ են, բայց վիպական ժամանակի պարզամիտ ունկնդիրների համար գրավիչ են եղել: Այսպիսի վիպական կենդանի պատկերներով պարզարկած են վեպի գրեթե բոլոր գրվածքները, ինչպես օրինակ՝ Մերութանի «պանվելու պատմութունը» (Բուզ., Ե. Իդ.), Շապուհի փորձերն Արշակին (Գ. Ժդ.) և այլն:

Մանրամասնութունների մեջ մեկ-մեկ նկատվում են, ինչպես ասել են, սխալ տեսարաններ, որ նույնիսկ արվեստագետներ են համարել: Այսպես է, օրինակ, Մերութանի խոսքը:

Ու խնդարից եղեալ՝ աւեր,
 Պարծելով առաջի իւրոց զօրացն,
 Թի՛՛լ՝ ս՛վադիւ յայս ժամ
 Իմ կալեալ կայեալ ընկեցեալ զՄանուէլն,
 Ու յանդիման նմին
 Զկին նորա Վարդանիչ խայտասեկեալ իցէ:»
 Բուզ., Ե. Իդ.

Այսպես են նաև այն տեսարանները, որոնցով Շապուհն անպատվում է Փառսնձնմին և ազնվականների կանանց: Այն դարաշրջանում, երբ ապրել են վիպասանները, ամեն մի, այժմ անպարկեշտ համարված բան ասում, պատմում էին առանց դրա մեջ որևէ անթույլատրելի բան տես-

² Զարմանալի է, որ այդպես գրողները նույնիսկ սուղորոթածը չեն կարգացել Բուզանդի գիրքը: Անգամ Ս. Մայրոսյանցը, որ հիմնովին հնրում է Բուզանդի իր ստորագրի լինելու մասին եղած կարծիքները, գրում է. «որ հեղինակը չի գրում աշխարհւո շալոց, Թագաւորն մեր՝ այդ ճիշտ է» (Ս. Մ., Ու. Փ. Բուզ. պատմ., եր. 18): Ահա վասիլի մի քանի գործածութուններ. «Ե. Իդրն առժամանակ մի խաղաղացու երկիրս շալոց» (Գ., Ե.), «Անառաջնորդ լինէր երկիրս շալոց» (Գ., Ժդ.), «Սուտն պատերազմ երկիրս շալոց» (Գ., Ե.), «Ենկին լցին զաշխարհւո շալոց» (Գ., ԺԵ.), «Եւ տայցն եմ զաշխարհւո շալոց» (Ե., 12.), «Եւ զայս յերկիրս շալոց» (Ե., Իգ.), «Եւ նմա յանձն արար զաշխարհւո շալոց» (Ե., Իգ.):

նելու, ինչպես որ այժմ էլ մեր պարզամիտ գյուղացիների մեջ, նույն-
 խակ կանանց մոտ, ամեն ինչ պատմվում է: Այսպես և Մանուելը բազմու-
 թյան առաջ, թագուհու ներկայութեամբ, մեքականում է և իր մարմնի
 ապինքը ցույց տալիս. «զի յառնի յանդամն աւելի քան զյիսուն սպի
 կայր վիրաց, և զայն անգամ բացեալ՝ առաջի ամենեցուն ցուցանէր»
 (Թուզ., Ծ. խդ.): Այսպիսի մի քանի հատվածներ կան նաև «Ամանա
 Մոհրի» մեջ:

Ապա վիպական ոճին հատուկ են կրկնութիւնն և յափազանցութիւ-
 նը: Վիպական կրկնութիւնը կամ կրկնութեան ոճն ասածը առաջ է դալիս՝
 նույնաբանութեամբ, նույն կամ համանիշ բառերի ու մակդիրների, եր-
 բման նաև նույն հատվածների ու քանաձևերի կամ արտահայտութեան
 ձևերի կուտակումով, կամ թե միևնույն միտքը հեղհեղվում է զանա-
 զան խոսքերով: «Պարսից պատերազմը», մանավանդ Բուզանդի մեջ, լի
 է հիշված ոճական հատկութիւնների օրինակներով: Բերենք այստեղ մի
 քանիսը միայն:

Եւ շղոյր թիւ բազմութեան հեծելագօր զնդացն,
 Եւ ոչ համար շերտաւոր հետեակ զօրուն,
 Զի և ինքեանք զինքեանս, զիրեանց զօրսն թուել ոչ կարէին...
 Եւ ձիին, լջին, ծածկեցին զամենայն երկիրն Հայոց,
 Քանդեցին, գերեցին, առհասարակ աւերեցին.
 Սիրոցան, տարածեցան զսարձանօքն...
 Հասանէին, հարկանէին, սատակէին...
 Եւ ինուին զդաշտն առաքարացն
 Առ հասարակ դիտկամք մեռելոց-
 Մինչ զի իբրև զգնտ յարուցեալ երթայր
 Արիւնն անհնարին...

Բուզ., Գ. Է.

(Հմմտ. «Ամանա Մոհր».)

Արնի խեղճ էլաւ, էնոնց լնշեր տարուէ:

Եւ տեսին զօրսն Պարսից,
 Զի ոչ գոյր թիւ բազմութեանն.
 Զի էին իբրև զաստեղս երկնից,
 Եւ իբրև զաւազ առ ասին ծովու.
 Զի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք:

Բուզ., Գ. Ը.

(Հմմտ. «Ամանա Մոհր».)

Քանի մ'աստղ երկինք կա,
 Մտրամելիք ընկցուն շաղըր-խեղճաթ ածի մընչ զաշտին):

Միևնույն կրկնութեան ոճը գտնում ենք նաև Ազաթանգեղոսի հատ-
 վածների մեջ:

Ինչպես տեսանք «Պարտից պատերազմի» մեջ հերոսների գաղափարականացումը կատարվում է նրանց արարքների շահազանցումով և նույնի կրկնությունը. մեր վեպի մեջ կրկնվում են նաև նույն սյուժետներն ու մոտիվները զանազան ձևերով: Ո՛ճի նկատմամբ՝ դրան համապատասխան են շահազանցությունն ու կրկնությունը: Այսպե՛ս որ պատմվածքի մեջ չի երևում վիպասանի դեմքը, այդ, հասկանալի է, այդպես էլ պետք է լիներ. վեպը ոչ թե նրա անձնականի արտահայտությունն է, այլ իր ժամանակի իշխող տրամադրություն:

Այս ոճական հատկությունները գտնում ենք ընդհանրապես ժողովրդրական վեպերի մեջ իբրև մնայուն ձևեր: Այդպես է լինում սովորաբար գրականության մեջ, Սրբ որևէ գրական տեսակի համար մի քանի բանաստեղծների ձևով առաջ են գալիս որոշ բանաստեղծական ձևեր, որոնք քաղաքարում են համապատասխան գրական տեսակը մշակող հանրային հատվածին, այդ ձևերը, մնայուն են դառնում, քանի նույն հանրային հատվածը ապրում է իր կենցաղով և հասկացություններ: Հետագայում բանաստեղծները նույնը բանեցնում են աննշան փոփոխություններով նույնիսկ մինչև մեր օրերը: Այս ոճական ձևերն և ընդհանրապես վիպական արվեստը գտնում ենք նաև «Մասնա Մտերի» մեջ:

114. Ոտանավորը:— Թեպետ պատմագիրները մեր երկր լող հին վեպի իսկական քննադիրը ղեն բերել, տայց ինչպես վերևում ասվեց, ոտանավորը ղեռ անծ տեղ ունի նրանց գրքերի մեջ, կամ ճիշտ ասած, վեպի ոտանավորն ամբողջությամբ չի վերածված արձակի: Գափածոյությունը շատ պարզ երևում է նրանց շատ տողերի մեջ: Այդ վեպի ոտանավորի շահը նույնն է, ինչ որ վիպասանքի և «Մասնա Մտերի» մի շարք պատումների, ինչպես նաև բազմաթիվ հոգևոր երգերի մեջ: Կնշանակի՞ անգիր բանաստեղծությունն այս շահածո ձևն էլ մնայուն է դարձել: Մանրամասնությունները կարելի է տեսնել երբ վեպի ուսումնասիրության մեջ: Այստեղ պետք է նկատել միայն, որ, ինչպես մեր հին բանաստեղծությունների մեջ ընդհանրապես, նույնպես և հին վեպերի մեջ Զ նախդիրը բաղաձայնից առաջ և ն հոգը բաղաձայնից հետո և հաջորդ բաղաձայնից առաջ, և Ք, Ս հոգնակի վերջավորությունները կարող ձև և վանկ համարվել և չհամարվել:

Ը

ԵՐԿՐՈՐԳ ՀԻՆ ՎԵՊԻ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ

115. Վեպի կյանքն ու զարգացումը V դարից առաջ և հետո:— Ազաթանգեղոսի և Բողանայի բերածով շատ քիչ գաղափար ենք կազմում այն մասին, թե ի՞նչպիսի կյանք է ունեցել «Պարտից պատերազմը» մինչև V դարը: Այսքանը, սակայն, կարող ենք ասել պատմության օգ-

նությամբ, որ այդ վեպի առանձին դրվագները կազմվել են հետզհետե, կատարված իրողութիւններին զուգրեթաց, Ուրիշ խոսքով՝ իրական եղելութիւնների պատմութեան հետ համեմատելով՝ կարող ենք մոտավորապէս որոշել, թե որ դրվագները համեմատաբար ավելի հին են, Այս՝ Թուզանդի բերածից տեսանք, որ վեպն ասված է եղել առանձին պատումներով, այսինքն՝ վիպասաններից մեկը կամ մյուսը պատմել են վեպի այս կամ այն էլուղը:

Մյուս կողմից՝ ավանդական վեպը պահվում է ընդամենը. նրա այդ պիսի պահպանման հետեանքով առաջանում են փոփոխակներ, Այստեղ, զրանց մեջ է վեպի զարգացման, նրա կայնքի էական կողմը, նվ Թուզանդի բերածից արդեն իմանում ենք, որ Վարսից պատերազմի մի քանի զրվագներն ունեն իրենց վարիանտները: Գրանք այն կրկին պատմվածքներն են, որոնք նշված են վերստի և որ Թուզանդն առել է իր Պատմութեան մեջ, Բայց նույնն անում են նաև վիպասանները. նրանք էլ նույն սյուժետի տարբեր վարիանտները երբեմն առնում են վեպի մեջ իբրև կրկին պատմվածքներ, Այդպիսի փոփոխակները հենց վկայում են, որ մեր այս վեպը բերանացի ապրել և զարգացել է մինչև V դարի կեսերն, ինչպես ասեն ավանդական քանակութիւնները:

Գրածայլ Խորենացոց և Սերեոսից իմանում ենք, որ այս վեպը փոփոխակներով ապրել է նաև V դարից հետո: նվ այդ բնական է:

Ըին երգերն ու դրույցները հեշտութեամբ շեն մոռացվում: Մի վեպ, ինչպիսին է Վարսից պատերազմը», թուրքիին անհետ կորչել ջեր կարող: Գրանից այս կամ այն միջադեպը, այս կամ այն հերոսի անունն ու արարքը երկար դարեր ապրել են գուսանների և նույնիսկ ժողովրդի բերանին իբրև հին գրույցներ, իհարկն կրելով դարերի ազդեցութեանը և կերպարանափոխ լինելով: Ասել յի ուղի, հին վեպի միջադեպերից մեկը կամ մյուսն ավելի այն կողմերում են ապրել, որոնց վերաբերում են. օրինակ՝ Սյունիքի մեջ պահվել են Սյունյաց իշխանների վերաբերյալ գրույցները, Տարսնի և Սասունի կողմը՝ Մամիկոնյանների վերաբերյալ:

Բայց մեր պատմագիրների մեջ գտնում ենք մեր այդ հին վեպից շատ քիչ հատվածներ կենդանի մնացած V դարուց հետո: Եթե քիչ է, պատճառն այն չէ, որ շատ քան մնացած յի եղել, այլ շատ մատենագիրներ շենք ունեցել, որ հին վեպի մնացորդները վրա ուշադրութիւն դարձնեին: Այդպիսի միջադեպերից են Սյունյաց Անզոկի և Բարիկի և զլխավորապէս Մամիկոնյան Մուշեղի գրույցները և մի երկու ուրիշները:

116. ԱՅՈՒՆԻ և Բարիկի գրույցը:— Սյունյաց Անզոկը, Փառանձեմ Քազուհու հայրը, որ Մամիկոնյան տան փեսան է, Տիրանի և Արշակի վեպի մեջ դուրս է գալիս իբրև կարևոր գործող անձն: Արշակի գերութիւնից հետո Պարսից Շապուհն առանձնապէս ավերում է Սյունյաց աշխարհը. սեւ զագզն Սինեաց տոհմին զամենայն այր ի յափ հասակի կո-

տորեցին, և զկանայս սպանին և զամենայն մանր մանկտիս ներքինիս՝ հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից: Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղև պատերազմ ընդ Ներսէզ արքայ Պարսիցս (Քուզ., Գ. ժը.): Մանուելի ժամանակ Սյունյաց տան մնացորդներից առաջ են դալիս Բարիկ, Սամ և Վաղինակ. Բարիկը դառնում է Սյունյաց նահապետ և Մանգելի նիպակակիցն և վրիժվեցի մեջ:

Սյունյաց աշխարհի այս ավերման զրույցն ահա տարիչ ձևով պատմելոված գտնում ենք Մովսես Կաղանկատուացու՝ (XI դար) և Ստեփանոս Օրբելյանի՝ (XIII դար) մեջ: Օրբելյանն այդ զրույցն առնում է շլատակ սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, որին անվանում է Քերթողաճօրն Մովսիսի աշակերտ: Ըստ Կաղանկատուացու՝ զրույցը ժողովրդական ծագում ունի և առաջին անգամն է գրի առնված: Նա այսպիսի առաջարկում է սկսում. «Գտանին զրույցք արևելից կողմից (հասկանալի է՝ Հայոց աշխարհի), որք ոչ են անկեան փ զիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաց մակագրել ի տառն տողայնափութեան մերում: Երկուսի մեջ նս կատարելապես նույն զրույցն է, մեծ մասամբ բառացի նույն, միայն Կաղանկատուացին փոքր ինչ համառոտ է պատմում: Հավանորեն Կաղանկատուացին նս առել է Պետրոս եպիսկոպոսի թեառից՝ կամ սենթրոլումից, վերջինիս առաջարկում միասին. որով Կաղանկատուացու առաջարանի դեմքը Պետրոսինն է, այսինքն՝ Պետրոսն է այդ զրույցն առաջին անգամ գրի առնողը:

Ահա այդ զրույցը համառոտ: Պարսից Շապուհի իշխանության տակ՝ Անդոկ Սյունիս իրեն անպատված է զգում պարսից արքունիքում, արևստամբում է Շապուհից, ավերում Տիգրանը, դալիս Սյունիք, ամբարնում Բազա բերդում: Շապուհը հրամայում է սելանել ի Սիւնիս և զերել զխոսուն և զանասունս: Պարսիկները մի քանի անգամ կովում են Անդոկի դեմ, բայց քան անել չեն կարողանում: Երկիրը քսան և հինգ տարի ավեր է մնում: Անդոկը հոռմարեցիների վտղմն է անցնում: Շապուհը մի պղնձի սանդ է դնում, լի մոխրով, իր դռանը, որ ով դա՝ օգտփէին ի նմա և ասէին, «Սիւնեաց տէրութեանն ընդ այս մոխիր ի վայր լիցի, և նոցա կենանք և խորհուրդնս: Բայց Անդոկի որդի Բաբելը ծպտալ անցնում է պարսիկների մոտ, ծառայում է քանակում, և մեծ քաջութուն անելով՝ նախատինքի սանդը վերացնել է տալիս ու տեր դառնում Սյունիքին:

117. Մուշեղի զրույցները:— Վիպական որու ընդհանուր հաստիություններից մեկն էլ այն է, որ պատմական պայմանների և դիպվածների նմանության պատճառով նոր դիպվածների զրույցները հորինվում կամ

1 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, Մոսկվա, 1860, Բ. հատ. II գլխ., էր. 81, հտն.:

2 Ստեփանոս Օրբելյանի, Պատմութիւն Սիւնեաց, Մոսկվա, 1861, գլխ. Ը—ժ. էր. 18, հտն.:

3 Անդ. էր. 19, 25, 36, 32, 39, 64, 87:

պատմվում են Հին դրույցները և նույն ժամանակահատվածում հին առասպելները նոր կատարված նման դեպքերի ազդեցության տակ միջոտ նորոգվելով և հարմարվելով մեր կյանքին՝ ժողովրդի մեջ պատմությունում են իբրև նոր քաներ, հաճախ բուրրովի նոր անուններով: Ժողովուրդն այնքան հաղատում է աշխարհի պատմվածքներին, որ հաճախ ականատեսներ վէ են երևան գալիս, նույնիսկ այնպիսի Հին առասպելները համար, որ հեթանոսական աստվածներին են վերաբերում և գտնվում են, օրինակ, հնդկների սրբազան դրքերի մեջ:

Այսպիսի վիպական նորագոթյան մի շատ հետաքրքիր օրինակ է մեր Մոռեդի, հետք և Մանվելի վեպը, որի մեջ տեսնում ենք, թե ինչպես դարերի ընթացքում քաղաքական կյանքի ազդեցության տակ վեպը կորցնում է ընդհանուր ազգային ընկալությունը և գտնում տեղական վեպ: Պարսից պատերազմը գտնում է Պատերազմ Տարոնոյ, որից անբաժան է և Սասունը. և վերջը նոր դեպքերի ազդեցությամբ ավելի ևս փոփոխվելով, կամ ավելի ճիշտ՝ Հին վեպը նոր Հորինվելով՝ Հին Պարսից պատերազմը գտնում է Սասուն կոչվ նախ արարների, Բաղդաստի խալիֆայի, և այսպե՛ս Մերա Մեծիքի դեմ:

118. Մուշեղի վեպն ըստ Սեբեոսի:— Վահրամ Մերհեմանդակ (= Վահրամ Զորին) այստեղում է Սասանյան Որմիգը թագավորից (579—590 թ.) աշխատելով վերացնել Սասանյան տոհմը: Որմիգը սպասվում է և տեղը թագավորեցնում են որդուն, սմանուկ տղան Խոսրովին (590—628 թ.), որին քեռիները փախցնում են հույների մոտ, Վահրամը թագավորում է ամբողջ Պարսկաստանում: Խոսրովը հունաց Մորիկ կայսրի (582—602 թ.) կողմից օգնություն է գտնում. երկու հույն զորավարներ գալիս են զորքով կալվելու Վահրամի դեմ և Խոսրովին իր հոր գահի վրա նստեցնելու:

4 Ձիրգուօրի Նահաճի մեջ այս պատմված է քրեանտեղծական զարգարաններով և բուն պարսկական յափազանցություններով, թե ինչպես քրեանտեղծներն են եղել կայսրի ու թագավորի միջև, թե կայսրն աստղերին է նայել: Մանրամասն նկարագրված են նաև արշավանքներն ու ճակատամարտերը, և թե կայսրը Խոսրովա հետ կառած զաշինքը հաստատուն գործելու համար՝ իր Մարիամ զուտը կնուխան աված ըլլառ կրտն: Սույն կայսրիցան գտտեր պատմությունը թագավորաց Գրոց (= Նահաճի) մեջ վիպական կտոր մը կը կացուցանէ: Կայսրն Իրանի և Թումի թշնամությունը վերացնելու համար՝ որոշում է թիր զուտը Խոսրովին կնուխան առաջարկել: Թագավորն իր դեպքաներուն ձեռքով զանկա կերպագես խնդրելն վերջը՝ աղչիկը հարուստ օժիտով մը հոսմեական օժանդակ բանակին հետ թագավորին կը բերվի. կայսրը զուտը այնուհետև թագավորին կ'ընկերանա անոր արշավանքներուն ատեն, իր հաղողակ ճարտարությանը հռամայնքի և պարսիկ զորավարներուն մեջ ծագած զտություն մը կը բառնա, հնգամյա ամուսնութենն մը վերջը որդի մը կը ծնանի, զՆերայն, և ի վախճանի ղեղով կը սպանվի Խոսրովի օրբահիներեն մեկնն, որ նախանձարեկ էր:—Այս պատմությունը սոսկ առասպել է համարվում:—Քրիզանդիան և Պարսկաստան, գրք 4, Գիւտերթը, դերմ, թարգմ. Հ. Համբարյան, Վիեննա, 1911, էր. 45, հտն.:

ժողովում են Խոսրովին օգնելու և հայոց աշխարհի զորքերը, որոնց պիտի է Մուշեղ Մամիկոնյանը, Պատերազմը խմբում է Ատրպատականում, Վահրամը կովից առաջ բանագնացութիւնով փորձում է Մուշեղին իր կողմը գրավել խոստովանելով, բայց չի հաջողում, և սաստիկ պարտութուն կրելով՝ վախւում է:

Խոսրովն ուրախ է, բայց նրա ուրախութունը թիրի է. զգի սպրնցաւ տիրատեացն այն (Վահրամ) և գնացա: Մոտի մարդիկը պատասխանում են. «Ձեռիրատեացն զայն նոքա (հայր) զերծուցին, քանզի մերով աշաք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և զէն, և արձակեացա»:

Խոսրովը հավատում է և ուզում է Մուշեղին նենգութիւնով իր մոտ հրավիրել և սպանել. բայց չի հաջողում: Ապա Խոսրովի բարեկամ Մորիկը Մուշեղին կանչում է պալատը, «և ալ ոչ ետես զերկիրնա.— ալի-լացնում է պատմագիրը: Նրան ուղարկում են Քրակիա, ուր բռնվում է և մի բարձր ծառից կապվելով սպանվում (եր. 52):

Այս իսկ վիպական պատմվածքը, որ Մերեսի մեջ դեռ շատ տեղ բուն ժողովրդական գույն ունի, որի հիմքը, սակայն, անպայման պատմական է, Բուզանդի Մուշեղի վեպի մի նորոգված պատմվածք է: Նույնութունն ակնհայտնի է: Այդ երկուսի միակ էական տարբերութունն այն է, որ Քրակեղիոնից հունաց զորքերով իր սպանված հոր զահը ժառանգելու համար երկու թագավորը ոչ թե հայոց Պապն է, այլ Սասանյան Խոսրովը, նմանութիւն մեջ առանձնապես աչքի է ընկնում այն, որ երկուսի մեջ ևս Մուշեղը թշնամի բանակի հետ հաղորդակցութուն ունի և մեղադրվում է, թե կարող էր թշնամի թագավորին սպանել, բայց չի սպանում, և հոր դահը ժառանգող թագավորը թշնամեանում է Մուշեղին և սպաննել է ուզում նրան:

Անշուշտ Բուզանդի մեջ Մուշեղի վեպը, իբրև V դարու, ունի իր խմբանակի դրոշմը. իսկ Մերեսի մեջ՝ իր դարինը: VII դարում հայ թագավոր լկար. արաբներից առաջ հայ զորքը ծառայում էր պարսից և հունաց թագավորներին, և այս՝ երկու հարյուր տարուց ի վեր: Բնականաբար Մուշեղի վեպն ևս իր նոր ձևի մեջ, հին էութունը պահելով, կրել է ժամանակի կնիքը: Մուշեղը դարձյալ հայ զորքի գլուխն անցած կռվում է հունաց զորքի հետ միասին պարսիկների դեմ, բայց ոչ հայոց թագավորի որդուն իր հոր փահի վրա հաստատելու համար և ոչ սպատամբ հայ իշխանների դեմ, այլ պարսիկների: Այն նա իր վախճանը գտնում է ոչ թե ընթրիքի ժամանակ, այլ Քրակիայում, ինչպես ժամանակի շատ հայ իշխաններ:

Մուշեղի վեպի մի ուրիշ պատմվածքը պահել է մեզ և Հովհան Մամիկոնյանը: Մրա գրքի մեջ, Ձեներ Գլակի մասում, կան մեր հին վեպի և ուրիշ արձագանքներ ևս, որոնցից է երկու եղբայր Գեմետր և Գիսանի: պատմութունը և Տրդատի պատերազմը հյուսիսայինների դեմ:

118. Դեմետր և Գիսանց — Մամիկ և Կոռակ:— Գեմետրն և Գիսանցն ցեղով հնգիկ իշխաններ էին և հզրայր, դավազորութուն են տարքում իրենց արքայի դեմ, որն իմանալով այդ պոքք է ուղարկում նրանց սպանելու կամ երկրից հալածելու նրանք փախչում, ապաստանում են Վաղարշակ Թադավորի մոտ, որ և նրանց տալիս է սղեղիկին Տարսնոյ իշխանութեամբ: Այստեղ նրանք շինում են Վիշապ քաղաքը, Աշտիշատում էլ կանգնում են այնտեղի կուրծիքը: Տառնուհինգ տարի հետո Թադավորն սպանում է այդ քրկու եղբորը, քայք իշխանութունը տալիս է նրանց երեք որդիներին, որոնք շինում են Կուռու, Մեղտի և Հոռոան ավաններն իրենց անուններով:

Այս պատմություն մեջ պարզ երևում է Մամիկոնյան նախնիքների՝ Մամ-Կոնի գրույցի մի մթնացած արձագանք հետին դարերի: Ա՛րշտ է այստեղ անունները տարբեր են, քայք այդ նշանակութուն շունի. սկսապն անունի և մոտիվի միջև շատ թույլ է. անունները հաճախ փոխվում են, մոտիվներն ավելի կայուն են: Անունները միշտ կարող են փոխվել, և մեր նոր վեպի մեջ էլ այդ տեսնում ենք լի ու լի Մամիկոնյանների ծագումն ըստ Բուզանդի, Խորենացու և Սեբեոսի յիսական է, քայք այստեղ երկու եղբայրը Հնդկաստանից են: Երկու դեպքում ևս այդ պատք է առնվի ոչ իսկական մտքով: Հնդկաստան ու Գինաստան իբրև պոնելյան հեռավոր ևրկիրներ: միշտ իրար տեղ դուրս են գալիս թե՛ մեր հեթախներին և թե՛ խառու պրոպյի մեջ: Մեր նոր վեպի մեջ հենց, ռդինակ, ևրկու եղբայրը՝ Սանասար և Բաղդասար (այլև Արամելիք, Ասլիմելիք) կամ մի կոսպայտ Թադավորի որդիներն են, կամ Բաղդասար խալիֆայի, կամ Հնդկաց մելիքի որդիները և կալվում են նաև Ապտըլ-Փեռլիմ և Մինամ-Փեռլիմ: Թե Ջենուքի պատմածը Մամիկոնյան նախնիքների մասին է, երևում է նրանից, որ նա Տարսնի երկիրն այս երկու եղբոր սերունդներին կալված է դնում իշխանութեամբ, միաժամանակ և կոռում վ՛ սերկիրն Մամիկոնելից, ս՛ Մամիկոնելից տունն:

Կուռու, Մեղտես և Հոռոան, շարունակում վ՛ աքնուհետև Ջենոքը, ելնում են Քարքե լճը և այնտեղ երկու կուրք են կանգնում, մեկը Գիսանցի անունով, մյուսը Գեմետրի և նրանց ապաստարութեան են տալիս իրենց ազգը. «Գիսանէս պի գիսաւոր էք, և վասն այնորիկ նորա պաշտօնեայքն քէսք էին թողեալս: սԱյլ յոյժ պարմանալի էք տեսիլ նոցա. քանզի սնք էին և դիսաւոյքք և զաղդարտեաակք, քի ցեղով ի Հնդկաց էին: Քրիստոնէյա դառնալուց հետո էլ, ավելացնում է Ջենոքը, որպեսզի իրենց հին հավատը հիշեն՝ ահարեցան ծամ միայն փողով ի գլուխ մանկանցն:»

Հայտնի է որ հին եկեղեցիներն ու վանքերը ընդհանրապես որն է հեթանոսական արքայալիքի տեղում են շինված. Հովհաննես մատուռի կամ Ս. Կարապետի տեղում ևս, որի շենքը նույնիսկ կուսավորլին է

Ը Ջենոք Գլակ, Պատմութ. Տարսնոյ, էր. 26, հան.

Ֆ Անգ, էր. 8, 9, 13, 15, 37:

վերագրվում, մի հեթանոսական սրբազայր պիտի ենթադրել: Այդտեղ կամ մոտիկ տեղում եղել է հին պաշտամունքի վայր, Գիսանեի և Գեմետրի սասանարները:

Ի՞նչ են այս անունները:—Գիսանէ, Գիսանէս, անպայման բզէս՝ ագիսանէ քառերից է, միայն հունական վերջավորութիւնն տված, որպէս-զի անձի անուն երևա: Եունյն ինքը Զինոքն այդ անունը կապում է «զէս» քառի հետ: «Գիսանեայ տեղիք», այժնեակնեան տեղիսն Գիսանեայ կոչոցն»⁷ Փարթն սարի վրա է, ուր և Ս. Կարապետն է: Արդ մինչև մեր օրերն ևս այդ լեռը, որի վրա շինված է Ս. Կարապետը, կոչվում էր Մշո ծամ, որ եունյն է բզէս: Պարզ է, որ ստեղծիք Գիսանեայ լեռան անունն է, թերևս պաշտելի լեռան:

Իսկ Գեմետր անունը պարզաբար հունական դիցուհու, մայր երկիր Գեմետրի անունն է, որ երկրագործութեան, մշակութեան աստվածուհի է, և վիշապ լծած կառք է նստում: Սրա դուստր Պերսեփոնեն, որի պաշտամունքը եունյն է, ինչ որ իր մորը, կին է Հագեսի, որ Ստորերկրայքի կամ Սանդարամետքի աստվածն է, միանգամայն նշանակում է և լեռն: Ինքը Գեմետր աստվածուհին հայերի մեջ թարգմանված է Սանդարամետապետ կամ Սանդարամետ⁸: Խորենացու մեջ կա «խնդրել հրաման պատասխանույ լի Սանդարամետապետէն (կամ Սանդարամետէն) Պրոդէիադայս ուր այս քաղը գործածված է Եղիպտացոց Սերապիս աստուծու համար, որ դժոխքի, ստորերկրայքի աստվածն էր, և որին պատկերացնում էին օձերով շրջապատված: Սանդարամետ քաղը քաջական գործածական է և նշանակում է՝ ձրկիր, խոզք երկրի, դժոխք, գործ է անվում և սանդարամետք անդնդոց: Արդ՝ Ինեակնյան տեղիքը, ուր Գիսանե-Գեմետրի կուղծերն են եղել, կոչվում է «դուրեմ դժոխոց», «չուրմ մանու»: ՁՁոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք մտանեն, եունյն և այս տեղիս դուռն էր դիւսց. զի այնչափ էին դեքն ի տեղուրն Գիսանէ, որչափ ի Սանդարամետս անդնոց: Այս ի նկատի ունենալով, ինչպես և այն, որ մեր Գեմետրի հետ ևս կապված գտնում ենք օձ ու վիշապ, այն որ նա շինում է Օձ կամ Վիշապ քաղաքը, կարծում ենք, որ Ինեակնյան տեղերում եղել է Սանդարամետ-Գեմետր աստվածութեան պաշտամունքը, և որ այդ տեղը համարվել է Սանդարամետի դուռ: Զպետք է մտանալ, որ մեր հին աստվածները, ոչ միայն մատենագիրների, այլև հենց ժողովրդի մեջ հունական նույն կամ մոտիկ աստվածների անուններով են կոչվել: Այսպես և Սանդարամետապետ կամ Սանդարապետ անվան տեղ-գործ է անվել և Գեմետր: Իսկ Գիսանե, Գիսանեայ անունը, կարծում ենք, Գեմետրի մի մկղդիր եղած պիտի լինի, որի հաջորդ Ս. Կարապետն ևս իբրև Ինեակնյան տեղի կամ Մշո Մամի անուն, և վերջը իբրև առանձին անձնավորութիւն և եղբայր Գեմետրի:

⁷ Անդ, 16, հտն., 82, 86:

⁸ Տե՛ս նոր բառերք Հայկ. լեզվի, ուր բերված է վկայութեան նաև «Կոչումն ընծայութեան սրբուն Կիւրդի Ծրասագեմաթոյս թարգմանութեանի»:

Այս հին աստվածութեան կամ աստվածութեաններէ անուններն այնուհետեւ յետեանակել են Մամիկոնեան ճակատներէ անուններէն: Երկու տարբեր անասակները շփոթվել են, և Գիսանեայ-Գեթեորի անունով պատմվել է Մամ-Կոնի գրույցը:

120. Հլուսիսային ազգերի դեմ կոխվի:— Հին վեպից Զենորի մեջ գրուեում ենք և Տրդատի կոխվը Հլուսիսային ազգերի դեմ, որը սակայն կրած է գրական ազդեցութիւն: Դա նույն կոխվն է, որ Խորենացին (Ք., ձգ. ձե.) Աղվանքում է դնում: Զենորի մեջ այդ կոխվը լինում է Վրաստանում, ուր կոչում են միայն Տրդատի զորքերը, և Տարոնում: Այստեղ կոխվ վարողն է ինքը Տրդատը Հռոմից վերադառնալուց հետո: Բուզանդի մեջ Տարոնում Հլուսիսային ազգերի դեմ մի կոխվ կա հիշված՝ միայն Տրդատի որդի Խարովի օրով: Սանեանի զորքերը տարածվում են ամբողջ երկիրը, և նրանց մի մասը բանակ է դնում թի լերինն որ կոչի Յուս գլուխա: Վաչն զորավարը, որ այդ ժամանակ գնացել էր Եգերկայն ճանապարհ ի կողմանս Յունացո, վերադառնում, գալիս, հարձակվում է Հլուսիսականներէ դեմ և ամենքին կոտորում: Այս կոխի տեղը, Յուս գլուխ, որ թագավորը քաշխում է Վաչին իրեւ քաշուցիւն պարզմ (Քուգ., Գ. է. ք.), նույնն է, ինչ որ ուրիշ տեղ (Գ. ժգ.) հիշված Յուս լեռը, որ է Տարոնի Տալրոս լեռը: Վեջանակն Բուզանդի մեջ Հլուսիսականներէ դեմ կոխվ կատարվում է Տարոնով Հունաստանի (Հռոմի) հետավոր ճանապարհից դարձող Վաչի ձեռով, իսկ Խորենացու և Զենորի մեջ նույն կոխվը նույն հանգամանքներով պատմվում վ՛ Տրդատի համար: Ըստ առաջին կոխվը լինում է Աղվանքում, իսկ ըստ երկրորդի՝ Տարոնում: Գրանք ժողովրդական վեպի նույն միջազգայի արձագանքներն են՝ տարբեր ձեռով պատմված: Զենորի մեջ գտնում ենք նույնիսկ հին վեպի մի գիծ այս կոչի մեջ. այն է Աղձնայց իշխանի դավաճանելն իր թագավորին և պատմվելը:

Տրդատ թագավորը ճանապարհ է ընկնում Եգեայ ի դուռն կայսեր վասն դնելոյ դաշինս խաղաղութեան ի միջի իւրեանցո: Նա գալիս, հասնում է Ապահունիք գավառի Մանձկեքտ քաղաքագեղը: Այդ ժամանակները տարթայն Հիւսիսոյց զորքով հարձակվել էր վրաց իշխանի վրա, նրան փախցրել մինչև Կարնո քաղաքը, իսկ նրա երկիրը գերեւարութեան մատնել: Վրաց իշխանը Տրդատից օգնութիւն է խնդրում: Նա Ապահունի իշխանի ձեռով երեսուն հազար մարդով օգնում է վրացիներին: Հայ զորքերը զնում են Վրաստան, մի ամիս մնալով այնտեղ, գերիներին ետ են դարձնում, երեք իշխան և շորս հարյուր մարդ բռնում, բերում են թագավորի մաս: Սա հրամայում է գերիներին զնել Ողականում և ինքը զնում է Հռոմ:

Հայ զորքերը Վրաստանից վերադառնալու ժամանակ՝ այնտեղ կողմնապահ վին թողել Աղձնիքի իշխանին շորս հազար մարդով: Բայց սա կաշառվում է Հլուսիսի թագավորից և նրան բերում է Հայաստանի վրա: Մինչ այդ Տրդատը վերադառնում է և անտեղյակ լինելով իրերի գրու-

Քյանը, պաշարվում է Կուսուսում, Հյուսիսականների թագավորի նպատակն է բռնել Տրդատին. սքանզի Տրդատ քաղում գաւառս և քաղաքս էր զնոցա քանդեալ և վաթսուն հազար արս ի գերութիւն իջուցեալ ի Գուինա: Բայց Տրդատն առանց շփոթվելու՝ դասավորում է իր զորքերը և առավոտյան իրեն պաշարողներին, վեց հազար հոգու, սորպէս ի թակարթ արկեալ, սուր ի վերայ եղեալ կոտորեցին, և անուանեցաւ տեղին այն Քակարթաւ Կոտորում են և գյուղի վրա հարձակվողներին:

Իսկ թագաւորն Հիւսիսոյ առեալ զզօրսն իւր,
Փնաց ի Հաշտենից տափարակն:
Եւ առաքեաց թուղթ առ Տրդատ,
Քէ՛ սեկ ի վաղիւն տացուք պատե՛րսզս՝
Եւ եղիցի օր յաւիտենական ի մէջ երկոցսնցս.
Կամ տացնս զիշխանսն իմ յիս,
Եւ հարկս հնգետասան տարւոյ.
Ապա թէ ոչ՝ քանզեմ զերկիրդ քո
Մրով և գերութեամբ և մահուամբ,
Որպէս զի ծանիցես զդէմս խոզութեան քո,
Որ եղեր առաջի զօրաց քոց:
Արդ ըստ այդմ արա զպատասխանիսդ:

Թագավորը պատասխան չի տալիս, այլ իր զորքերով գնում է հյուսիսականների վրա: Մարտն սկսվում է:

Ձայն բարձեալ արքայն Հիւսիսոյ առէր.
Տէրքա՛յ Հայոց, ինձ մատիրա:
Եւ իբրև եկին ընդդէմ իրերաց,
Սկսան իբրև զմբճաւորս քարահատաց,
Կամ իբրև զուռնաւորս որք պատեն զշանթս հրայրեացս,
Մինն առնոյր և միւսն իջուցանէր
Քանզի արքայն Հիւսիսոյ մեծահասակ էր
Եւ կորովի իբրև զՏրդատ:
Եւ թաղում կոփեալ միմեանց, ոչինչ եղև:
Բայց սկսաւ պակասիլ արքայն Հիւսիսոյ.
Եւ զիտացեալ եթէ՛ վնասելոց եմ,
Եւ քանզի ճօլպանաւոր էր՝
Անապարհաց և ձգեաց զնոզտեն,
Եւ արգել զաչ թեկն ընդ պարանոցն.
Եւ փութանալի դարձաւ և կղթեաց զճօլպանն,
Մինչ զի մ չկարաց թնաւ շարժել զձեռն Տրդատ:
Եւ մտրակեալ զկոշտ երխվարին՝
Զինի Փեզոեհունին այնպէս փութացեալ,
Մինչ զի ոչ ետ քայլել նմա առաջի իւր տասն քայլ:

Իբրև հհաս նմա, ասէ.

«Կատարի շուն, խառաննցեր զկնի քո շլացդ»:

Տրդասուն սպանում է Հյուսիսակամների թագավոր Գեղոհոտնին: Եվ այնուհետև վիսպկան ժանրամասնությամբ պատմվում է, թե ինչպես այս և այն իշխանները մտրտնդում ու հաղթում են Հյուսիսակամներին: Նրանց մնացորդները միայն հասնիվ հասնում են իրենց երկիրը: Այս պատմվում է, թե ինչպես քանում են Աղձնիքի իշխանին և բերում են թագավորի առաջ: Նա ուղում է սծայրատնի գոտս և զձնոս նորաս, բայց Ա. Գրիգորն արգելք է լինում, և միայն զի պատուոյն մերժնի հրամայնաց, և վարել ի դաւառնն Հայոցս:

ՉՈՐՐՈՐԳԻ ՇՐՋԱՆ

ՏԱՐՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

121. Բովանդակությունը:— Հովհան Մամիկոնյանի մասի մեջ ևս հին վեպից մնում է Մուշեղի գրույցը, որ քնդարձակված է Գալլ Վաճանի և Հաջորդների գրույցներով իբրև «Պատերազմ Տարսնոյ: Բովանդակութունը հետևյալն է:

Նիխորենն սպանում է պարսից Ումիդը թագավորին. սրա տրդին՝ Ջամբ խորովը փախչում է հունական նրկիրը և Մորիկ կայսրից զորք առնելով՝ գալիս վնվանելու իր նրկիրը: Մշո ու խութա տեր և Տարոնի ու Աստանի իշխան Մամիկոնյան Մուշեղին Գվինում հայոց մարզպան է կարգում խորովը և ինքը հունական զորքերով գնում դեպի Քահլ Եա-հաստան: Հույները հպարտությամբ շեն ուզում հայոց զորքի հետ մի տեղ քանակել, այլ մի օրվա ճանապարհ հետո են քանակ դնում: Այդ ժամանակ նիխորենն փազավորը սպանել հազար զորքով հարձակվում է Մուշեղի նրեսուն հազար զորքի վրա: Մուշեղը քաղալերելով վեր զորքին և Ս. Կարապետին օգնական կանչելով՝ հաղթում է նիխորենին և նրա զլուխը մուրճով շարդելուց հետո՝ կտրում ձգում իր մաղախը: Կտտորում են նրա քանակի մարդկանց և քառասուն և ութ իշխան ու հազար մարդ կենդանի բռնում:

Խոսքովն ուրտխ վն ուզում է պարգև տալ հայերին, բայց հույներն ամոթով մնալով, որ հաղթությունը հայերն են տարել, նախանձում են Մուշեղին, և Մորիկը ուղարկում է խոսքովին ասելու. «Գիտե՞ս դու զայդ, որ արքայի մահու սպաննայ Մուշեղու խոսքովը մտածում է դարան մահու գործել Մուշեղին, կանչելով նրան իր մոտ. բայց խոսքովի ցույրը իմանալով եղոր նենգությունը՝ իմաց է տալիս Մուշեղին, և սա քառասուն իշխանի հետ զինված ու ձի նստած գալիս է թագավորի վրանի դուռը, սև ամենայն խստություններ տուեալ պատասխանի և ի լոյս ատենալ զմահու դարանն, թքակոծեցին զնա... Իբրև լուսա զայն թագաւորն՝ նրկեաւ, քանզի մանուկ էր:»

սիակ իշխանն Մուշեղ արձայնաց առ Յունաց զօրավարն. և ասէ-
սկամեցայց դուք ապանանել զիս նենգութեամբ. արդ մի զարթուցանէք
զառնե՞ որ ի քուն է, և մի զգայլ՝ զիւր բարսն մոռացեալ է. ապա թէ ոչ,
այն որ զուստուն հազարսն յազթահարեաց, կարող է և զեթանասուն
հազարսն սատակել: Եւ ինքն թողեալ զզօրսն ի Դուին, ի բաց եկաց ի
մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր, որ ի Մամիկոնեան տանէն էին,
եկն ի գաւառ իւրս:

Մինչև այստեղ Մուշեղի այս վեպը միննույն գրուցն է, ինչ որ Սե-
բեոսի պատմածը, միայն ավելի մանրամասն և վիպական նետով: Նույն-
պիսի բնավորութիւն ունի և շարունակութիւնը, որ չկա Սեբեոսի մեջ:

Ապանվում է Մորիկը և Խոսրովը զնում է Մորիկի մահվան վրեժն
առնելու նա մարդ է ուղարկում Մուշեղին, որ իր հետ գա. բայց Մու-
շեղը պատասխան չի տալիս: Խոսրովը վերադարձին իր ջոկողի Միհ-
րանին երեսուն հազար զորքով ուղարկում է Տարոն Մուշեղի վրա՝ հրա-
մայելով բռնել նրան և Պարսկաստան տանել, և զտեղիսն, յորս նա
զհաւատն ունէր, կործանել և զկրօնաւորսն սպանանել: Ս. Վարապե-
տի կրօնավորները փախչում են Ողական, ուր ամրանում է և Մուշեղը:
Պարսիկները քալիս են յոթն խոտաճարակներին կոտորում: Մուշեղ իշ-
խանը, որ հարյուր քսան տարեկան ծերունի է, այդ լսելով՝ զգաւորս երիւ
իջըն զմեռեալս դե՛ր անխօսաւ: Զորքը նրան խնդրում է Միհրանին ճա-
նապարհ դնել, և նա կանչում է իր մոտ Վահանին, որին Տարոնի իշ-
խան էր կարգել, երբ ինքը Դիլինում հայոց մարզպան էր, և նրան ուղար-
կում է Միհրանի դեմ:

Վահանը, որ նույնպես ծեր է, ութսունութը տարեկան, խորամանկու-
թյամբ դարաններ գնելով, կոտորում վ Միհրանի բոլոր զորքերին Օձ
քաղցրում և ուրիշ տեղերում, սպանում է Միհրանին և բառասուն հոգի
միայն զրուցատար թողնում պարսից թագավորի համար: Իր երկրում
խաղաղությամբ մեռնում է Մուշեղը, և նրա տեղը Մամիկոնյան տան
իշխան նստում է Վահանը:

Խոսրովը երկրորդ անգամ Վահանի վրա ուղարկում է Միհրանի հոր-
եղբայր Վախտանգին երեսուն հազար զորքով: Վահանից հարկ և հնա-
զանդութիւն են պահանջում, բայց նա մերժում է, և դարձեալ հաղթում
պարսիկներին: Նույն տարին մեռնում է Վահանը և տեղն՝ անցնում իր
որդին՝ Սմբատը, որ կովի մեջ զգնական էր իր հորը:

Մյուս տարին Վախտանգը դարձեալ համարում է քսան հազար զորք
և գալիս Սմբատի վրա՝ հարկ և հնազանդութիւն ուղղուս Բայց Սմբա-
տը հաղթում է Վախտանգին և մինչև սոճամ նրա կնոջն ու որդուն զե-
րում է և Այծից բերող զնում: Վախտանգի եղբայր՝ Սուրենն ինն հա-
զար մարդով գալիս է զնելու իր եղբոր կնոջն ու որդան, բայց սրան
էլ Սմբատը ճանապարհ է դնում: Խոսրովը դարձեալ ուղարկում է Տիգ-
րան անունով մեկին քսան հազարով, որ պահանջում է Մուշեղի և Գայլ
Վահանի սակորները: Սմբատը սրան հաղթում է և ապա մեռնում: Տեղն

անցնում է որդին՝ Վահան Կամսարակաւը, որ հոր օգնականն էր նրա կոնվենտի մեջ:

Տասնութ տարի հետո Խոսրովը հիսուն հազար զորք է ուղարկում Տարոն Վարդուհրի անունով մեկի ձեռով. բայց Վահան Կամսարականն իր որդի Տիրանի հետ հաղթում է պարսիկներին և վերջանում է Տարոնի պատերազմը. «Վճար եղեւ պատերազմին Տարօնոյ»:

122. Ժողովրդական ծագումն ու խմբագրումը:—Այս վեպն իսկական ժողովրդական մի պատմվածք է, իսկապես պատմվածքներ, որոնք գրեթե ամբողջապես ավանդական բանահյուսութիւնից են ծագում:

Ժողովրդական գրույցն ու երգն իրրև աղբյուր հիշվում է մութը կերպով գոնե պատմվածքներից մեկի համար: Դա է Ամբաստի կոնվը պարսիկ Սուրենի զորքերի հետ (Եր. 37—42): Մմբատի նիզակակիցն է այդ մարտի մեջ Վարազ Պալունի իշխանը, «զի այնչափ հզօր էր, որ մարդուն քան զիմինն այլ ոչ կրկնէրս: Երկուսն էլ քաջ մարտնչում են: Կովից հետո Ամբատը հրամայում է պարսիկների դիակներն իրար վրա կուտել: մարտի տեղում ըլրի վրա, որ և Վարազի արած կտորոտի համար կոչվում է Վարազարուր: Ապա իրենք գալիս, իշխանում են Կենաց Վայրձ կոչված գյուղում: Այդ ժամանակ դքսուացիները երգ ու պարով դիմավորում են հաղթական մարտիկներին:

Եւ իբրև մտին ի դէիւղն,

Հնդ առաջ եղին նոցա պարաւորքն,

Եւ երգս առեալ բազում ինչ իրաց՝ գովէին,

Որ և յետոյ ի հօտել դիականցն և յորդնել,

Շէր հանեալ ասէին.

«Կերան գազանք զմարմինս դիականցն Վարազայ,

Եւ զերացան:

Կուզ կերեալ՝ ուրաւ որպէս զարչ.

Եւ աղուէս հպարտ եղեւ քան զառիւծ.

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց,

Եւ արջ, քանզի զօր ուտէն՝ շմնայ ար ինօքն,

Ի սովօյ մեռաւ.

Անպեղք, քանզի ասաւհք էին,

Նստան և այլ ոչ կարօցին վերանալ.

Մկուսք, քանզի շատ կրեցին ի ծակսն,

Ոտքն մաշեցանս:

Ջայս ամենայն ասացին,

Եւ ի դէպ էր վասն իրացն.

Որ և կոչեցաւ անուն դեղջն Շիրականիք:

Եր. 42.

Մի կողմ թողնելով Վարդ Պատրիկի կնոյ մասին պատմածը (եր. 9—12) և վերջին երկու հատվածները՝ Միծառնա խաչի և Տիրանի մասին, որոնք տասնինը զրույցներ են, մնացածն, ինչ որ պատմում է Նովհան Մամիկոնյանն իրրև յՏարոնի պատերազմա, կամ առաջին հին վեպի մաս-ցորդներն են, վրամ տեղական զրույցներ, որոնք խմբված են եղել Վար-սից պատերազմիչ շուրջը և կապված են այդ պատերազմը վարող հերոս-ներին որևէ մեկի անվան հետ: Անշուշտ, որոշ տեղերում երևում են նաև խմբագրողի հավելումները, ինչպես են՝ խոտաճարակների աղոթքը (եր. 16), գլուխների վերջում (եր. 28, 29, 43, 49) դրված տեղեկությունները, այլև շատ տեղերում ավելացրած կրոնական քովանդակութայնաք կտորներ: Բայց ամբողջն ընդհանրապես ժողովրդական է:

Առանձնապես այժի է ընկնում այն, որ Տարոնի մնակիչների մեջ եղել են քաղմաթիվ զրույցներ, որոնցով ըացատրված են տեղանունները: Այդ զրույցներն ա հարած են եղել Վարսից պատերազմին: Ըվ այդ բնական է. միևնույնը գտնում ենք և մեր նոր վեպի մեջ: Գալթի մահացու վերքը է հասցնում իր զարմի մի աղջիկ, Գալթի բռնում է նրան.

Ձուք որեց վըր մեկ սովուն,

Ու քաշեց նըվանց, թալեց սարու տկու գեղ.

Ու զըդ գեղի անուն գրեց Ճըվտիս—Ճապկիս:

Ու էգ գեղ էլ հար հըմկա

Հանդ է Ձրդուրս Ռերան,

Ու անուն լե՛ Ճապկիս՝

Այդպիսի զրույցները, ուսկայն յՏարոնի պատերազմիչ մեջ այնքան շատ են, մասնավանդ վեպի վերջի մասում, և մի քանիսն այնպես անկառու են մեջ քերված, որ դժվար է կարծել, թե ժողովրդի մեջ հենց այդպես պատմված լինեին ժողովրդը:

Որոցցորդի հաջորդութունը (Մուշեղ, Գայլ Վահան, Սմբատ, Վահան Կամսարական և Տիրան), ինչպես տեսել ենք, հատուկ է մեր հին ու նոր ավանդական վեպերին: Բայց ընդհանուր խմբագրութայնը, երևում է, պատարված է Նովհան Մամիկոնյանի ձեռով, այն էլ քավական պարզամիտ կերպով, առանց ուշ դարձնելու մշակութայնը: Ուստի կան մեջը նաև անհարթ բաներ: Այսպես, օրինակ, Սմբատը պատանի է (եր. 23)

1 Սովանայանց Գ., Գրոց ու բրոց, 4. Պոլիս, 1874, եր. 176:

2 Զեպված Պարզես, Քարհար, Գրգուտ անունների համար դրածները, աղտոն զու-նում ենք հետևյալ անուններն ու ցրանց զրույցները. Ասիլ (եր. 32), Մահու Աղարակ. թիլ (եր. 34), Մահու Բուր (38), Սրեմածոր, Գողոց աղբուր (39), Ժողով (40), Քոմ-բածոր, Վարզաբուր, Միրականիք (42), Հոնընկեց (47), Մողուց գեքեզան (45), Հոնգիսանց (47), Տնառանկ (48), Մահու առիթ (48), Կուրալ (48), Կերքին Անկնիս, Վայր Անկնիս, Պաղակ, Փանցիկ (52), Հալկերս (53):

և կարճ ժամանակից հետո նա արդեն ձերուներ է (եր. 41, 47): Այդ տարբերութիւնը ծագում է, անշուշտ, տարբեր պատմաներից:

128. Պատմականը:—Կարելի չէ ասել, թե այդ բոլոր դրույցները միայն Մամիկոնյանների վրա են պատմված եղել: Գայլ Վահանի թոռ Վահան Կամարականը հաճատույով մասամբ նույն Գայլ Վահանն է, կրկին պատմված. բայց նրա Կամարական մականունը ցույց է տալիս, թե նա Մամիկոնյան չի եղել, ինչքան էլ խմբագրողը բացատրեր, թե նա ռեալիստիկ էր այդպես է կոչվել: Վահանի որդի Սմբատի անունը հիշեցնում է Սմբատ Բագրատունուն: Նրա վրա էլ պատմված կա (եր. 44) Սըմբատ Բագրատունու Մեհրուժանին պակեհու պատմութիւն նման մի բան: Պարսից զորավարը մարդ է ուղարկում Սմբատին խոստանալով մեծութուն, միայն թե Մուշեղի և Գայլ Վահանի ոսկորները տա իրեն: Եթե նորա կալեալ պայտոզամարտն, հրացոյց շամփուր մի երկաթի, և եղ պակե շուրջ զնակատովն և ասէ. Կաց տեսանեմ, թէ վասն քո զինչ պարզես դայցէ ինձ, որ ես քեզ պակե եղիս: Այս Սմբատի անունը հին վեպի Սմբատի մի արձագանք է լոկ, ինչպես և Մուշեղը հին վեպի Մուշեղն է:

Իսկ ո՞վ են Գայլ Վահանն և Վահան Կամարականը, որոնց վրա դալիս են պարսից զորավարները, և որոնց անդ կապասեինք, որ հին վեպի Մանուել Մամիկոնյանը գուրս գար:

Գայլ Վահանի անունը, կարծում ենք, փոխանակած է Մանուելին V դարու հերոս Վահան Մամիկոնյանի պարսիկների դեմ վարած կռիւներին ազդեցութիւնը. իսկ Վահան Կամարականի անվան մեջ մտնում է հիշողութիւն Արշավիր Կամարականի որդիներից՝ Վահանի, որոնք գործակից վիճ Վահան Մամիկոնյանին՝ սրա վարած կռիւներում ընդդեմ պարսից Սուրեն, Միհրան և ուրիշ զորավարների: Թե Վահան Մամիկոնյանի մասին դրույցներ են եղել, երևում է Սեբեոսից, որին ծանոթ չէ Ղազար Փարպեցու պատմութիւնը, որ և հաճատույով ժողովրդական ավանզութիւններից առնելով՝ Փարպեցուց տարբեր պատմում է Վահանի ակառամբութիւնը, պարսիկներին հաշտելը և Գերասայ դաշտում պարսիկների հաղթելը: Արդ՝ Սեբեոսը պատմում է նաև, թե ինչպես Վարդան Մամիկոնյանն ապստամբում է խոսրով Անուշ Ըռուան թագավորից, սպանում է Սուրեն մարզպանին. թագավորն ուղարկում է Վարդանի վրա Միհրան անունով մեկին, քան հազար զորքով, ասպա և ուրիշներով. և նույնիսկ ինքը թագավորն է գալիս Վարդանի վրա, բայց նա էլ հաղթում է և իր կնոջը գերի թողնելով հայերի ձեռին՝ փախչում է: Այս Վարդանի հիշողութիւններն ան, անշուշտ, որ մնացել են ճարտերի պատերազմի մեջ, միայն Վահան ու Սմբատ անունների հետ կապված:

Վարդան Մամիկոնյանի մասին շատ քան յգիտենք. իսկ Վահանի քննադրութիւնը հայտնի է Փարպեցուց, որը շատ լավ փնորդում է Վահանին Վաղարշ թագավորի բերանով. Մի գուցէ, ասում է Վաղարշը,

զգնալ քո առ Վահան, և նա պատճառաւոր քաղցր խօսելով ընդ քեզ՝ խարիցէ զքեզ և վնաս ինչ առնիցէ: Վասն զի այլն ինքն քաջ է և քաղվածիտ է. քանզի և ցայժմ ոչ այնքան դայնպիտի գործեան վճարեաց նա և որք ընդ նման էին՝ լոկ քաջութեամբա: Եւ այդ բնավորութիւնը երևում է Վահանի բոլոր արարքների մեջ, երբ նա կոտորում է պարսիկներին, նույնպիտի բնավորութիւն զտեսում ենք և Շարունի պատերազմի մէջ Գայլ Վահանի համար: Եթիբաւի է ինձ անունդ (Գայլ), ասում է ինքը հերոսը. քանզի դամ կոտորեմ, երթամ և այլ դամա (եր. 33): Բայց այդ գայլի նման կոտորող Վահանը ոչ արքան քաջութեամբ, ճակատ առ ճակատ կռւելով է հաղթում թշնամիներին, որքան խարժութեամբ ու խորամանկութեամբ: Նա սիմաստութեամբն որսում է պարսիկներին և թակարդի մէջ ձգելով՝ շարդում է նրանց: Ժողովուրդը սովորաբար, և ոչ միայն մեր մեջ, խորամանկութիւնը խելք է համարում, իսկ ռազմական խորամանկութիւնը սիմաստութիւնն, ինչպես և է մեր Շարունի պատերազմում:

124. Վիպական մոտիվներ և զաղափարականացում չափազանցումով:— Շարունի պատերազմի մէջ ընդհանրապես նույն վիպական ոգին է երևան գալիս, ինչ որ «Պարսից պատերազմի մէջ. բայց կան և նոր մոտիվներ և մեծից առաջ հենց այդ ռազմական խորամանկութիւնը: Մինչ հայ իշխանները, պիտավորապես Գայլ Վահանը, այնպես սիմաստունն են հանդիսանում, պարսիկներն, ընդհակառակն, անմիտ ու միամիտ են և խարվում են: Շատ պարզ երևում է, որ այդ զրույցների մի մասն պատմելի են ոչ միայն Մամիկոնյան իշխանների և նրանց զինակիցների քաջութիւնը գովելու համար, այլև պարսիկներին ծաղրելու: Հակառակորդների այդ խարվածութեամբ էլ բարձրանում են Մամիկոնյանները: Զվարճալի է նույնիսկ այն երգը, որ հորինված է Վարազաքորի վրա, որ և բերված է վերնում: Հարաններին ծաղրը զրույցների մէջ, — լինի հարևան գլուզերի կամ գավառների, թե հարևան ազգերի, — մի սովորական երևույթ է բանահյուսութեան մէջ:

Երևում է, թե ինչպես միամտաբար զվարճացել են այդ վնասի ունկնդիրները լսելով, թե ինչպես Գայլ Վահանը, Մուշեղից ապստամբ ձեռնալով, գնում է պարսից զորավար Միհրանի մոտ և, իբր այս վերջինիս հավատարիմը, չորս-հինգ անգամ խաբում է նրան, նրա զորքերը մասմաս անելով կոտորում և վերջն անագորոյն կերպով սպանում նրան: Շարունակ խարում է և նրա լռազմաթիվ իշխաններին ու բոլորին մեկմեկ կոտորում և նույնիսկ մերկացնելով ու ծաղրելով նրանց կենդանիկենդանի այրել տալիս ուրախութեան մամանակ: Միհրանի երեսուն հազարանոց թանակից ազատվում են միայն քառասուն մարդ, այն էլ լնչի՝ համար:

Եւ հրամայեաց արք քառասուն
Թողուլ զրուզատարս Պարսից արքային:

Եւ ետ տանել զգլուխն Միհրանայ
 Առ քայաւորն Պարսից, ասելով.
 «Այս մարդպանս Հայոց յորժամ եկն յերկիրս մեր,
 Եւ զօրս հակառակեալ ընդ իրեարս՝
 Գունդ խնդրեցին և ոչ կարացին գտանելի
 Եւ յոյնք մեր թշնամիք էին,
 Ի նոսա ոչ փշխեցաք զնալ,
 Եւ ձեզ ընդ ակամք էաք,
 Եւ ձեր զօրացն գունդ տլ կայր.
 Ապա կարեցաք զգլուխդ զայդ, և խաղացաք
 Այլ յուայք, եթէ ի Շահաստանէ
 Ելեալ էք ի Բուսր քաղաք,
 Տերկիր տասիրակ և դաշտանն
 Եւ գիտեմ, որ զնդի խաղայք.
 Առն՝ք զգլուխ քո զորդոյդ ձերոյ,
 Եւ եղիցի դա ձեր գունդ ազգաց յազգաս:

Եւ իբրն զնացին արքն քառասուն,
 Եւ տարան զգլուխն Միհրանայ առ արքայ Խոսրով,
 Եւ նա խոռվեցաւ, պղտորեցաւ,
 Ամայեաց զամռաթն յաւիտենից:

Եր. 28.

Վեպի մեջ շահապաշտնց մեծ տեղ էր ունում մարտը: Փոխադարձ ծաղրը,
 անարգանքն և արհամարհանքն մարտի ժամանակ սովորական է այս վե-
 պի մեջ եւս: Վահանը ջարդում է իր վրա եկած պարսկական զորքերը:
 Վախտանգ զորայնարը սաստիկ բարկանում է նրա վրա:

Առաքեաց դարձեալ զԱսուր ի վերայ ութ հազարս
 Որք եկեալ բաւակեցան յեզերս Մեղտայ,
 Եւ արձակեցին առ Վահան այսպէս.
 «Ա՛յ յարարարոյ Գայլ Վահան,
 Մինչ գիտես, եթէ Եսասյունց ես Արիաց արքային,
 Ընդէ՛ր այդպէս յանգնեալ անամօթիս:
 Արդ՝ արի եկ առ մեզ, և լեր հարկատու.
 Ապա թէ ոչ, մեռանիս որպէս զշունչ:
 Եւ նորա յունեալ զայն, առեալ վից հազար այր՝
 Գնաց ի վերայ նոցա ինքն և որդին իւր Սմբատ:
 Իբրն կացին հանդէպ իրերաց,
 Մկսաւ Ասուր թշնամանել զՎահան,
 Եւ զայլ կոչէր նմա:
 Եւ նա ասէ. «Յիրարի է անունդ ինձ.
 Քանզի դամ կոտորեմ, երթամ և այլ դամս:
 Եւ սկսան մարտելիլ ընդ միմեանս:

Իրրն խմբեցաւ պատերազմն,
 Անն կալաւ Սմբատ որդին Վահանայ՝
 Ի վերայ Ասորայ, և պատահեցաւ նմա:
 Իսկ Ասոր տեսալ, եթէ պատանի է,
 Քամահետք դնաւ և սսէ.
 Եթարապաշտ հարճորդի, ի բաց կաց,
 Ջի ի պատերազմօղ արսնն հլաննմ անցանեմա:
 Եւ նա սսէ. զՍրդի սատանայի,
 Յիրաւի է անուն քո Ասոր,
 Ջի սոր քո ըէ փնչ.
 Եւ ի յարտնչել ընդ կտրճին՝
 Մանիցես զպարտութիւն քոս:

Եր. 22.

**Սմբատն ու պարսից զորավար Վախտանգը ճակատամարտի մէջ մե-
 քամարտում են.**

Եւ յամենայն կողմանց ի վերայ բարձակեցան,
 Եւ ի մէջ առին զզօրսն Պարսից.
 Եւ խմբեցաւ պատերազմն ընդ իրարս,
 Մինչ զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս,
 Քայց միայն ի ձայն փոհոցն և ի տեսս զրօշացն:
 Իրրն ի դիմի հարսն Վախտանգ և Սմբատ,
 Ասէ Վախտանգ. «Կա՛ց, հա՛րճորդի,
 Քէպէտ և զբազումս շնչեցեր,
 Մակայն այսօր շարժնուա ի ձեռաց քաշ արանցս,
 Որ քէշ-գէշ պատահեն զձեզ սուտերք մերս:

Ծրկուտով հարվածում են միմյանցի շաղթում է Սմբատը:

Եւ հաննալ զսուրն՝
 Կտրեաց զգլուխ նորա,
 Եւ ոչ կարաց ունել.
 Ջի բազում մարդկանն
 Վազեաց գլուխն Վախտանգայ:
 Իսկ մի ոմն ի ծառայիցն նորա
 Էսո զգլուխն նորա և փախեաւ:
 Եւ հասնալ Սմբատայ՝
 Իհար մրճովն ի վերայ գազաթանն,
 Եւ զոգեաց զսաղաւարտն,
 Եւ գլխոյն սկրնն փոսեալ՝
 Տեղի տայր սաղաւարտն մրճին Սմբատայ,
 Եւ հազիւ կարաց հանել:
 Եւ նորա հաննալ ընկէց զգլուխն, և թեցն մեռաւ:

Եւ ծիւս ալլ ծառայի առեալ զգլուխն՝ փախեաւ:
 Եւ Սմբատ զհետ մտեալ՝ ասէ.
 «Պարսիկք, ձի՛ անմատանայք.
 Զի ծինչև յայս անկաւ Վախտանգ,
 Որ սրտացաւ ծառայքդ զգլուխդ առեալ փախիք:
 Ապա զիտասչիք, թէ՛ ձեզ այդպէս պարտ է լինելու:
 Եւ ձգեալ ծառային զգլուխն ի կործան Սմբատայ,
 Եւ ասէ. «Տա՛ր, խորովես և կեր զդա.
 Վա՛յ ձեզ, որ ալլ վաղ տշ սրանէք:
 Եւ Սմբատայ առեալ զգլուխն,
 Եւ զհետ մտեալ ծառային, ասէ.
 «Ա՛յ տիրատեաց պարսիկ,
 Զգլուխդ քո ընդէ՛ք ոչ փոխանակեցեր տեան քո:
 Արդ որովհետև տիրատեաց էք,
 Ին քանամ զգլուխ քո ի քէնս:
 Եւ եհար զնա տիգաւն ի սիրտն,
 Եւ անցոյց զտէգն յայնկոյս,
 Եւ ընկեցեալ յերիվարէն,
 Կտրեաց զգլուխ նորս:
 Եւ դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի թլուրն...
 Եւ իբրև վճարեցաւ պատերազմն,
 Հրամայեաց ծածկել զնոսս ի ձորս և ի հեղեղատս:
 Եւ կոչեցաւ թլուրն այն Մահու թլուր:

Եր. 85, Հտն.

Երբ Սմբատը Վախտանգի ամբողջ բանակը ոչնչացնում է, նրա որ-
 դումն ու կնոզն առնում, տանում են Այծից բերդը:

Եւ յղեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ.
 «Տո՛ւր ինձ երկրտասան տարույ հարկ,
 Որ զօրքդ քո զիմ երկրիս զխոտն և զհացն կերան,
 Եւ զփայտն այրեցին.
 Եւ զչրոյ՝ զոր արբին՝ զգինն,
 Եւ զտաճարացն զգինն,
 Զոր իմ հայրն այրեաց վասն քո, Քալլ Վահան.
 Եւ դարձեալ զսապոնի գինսն,
 Վաթսուն հազար դահեկան,
 Որ զքո զօրացն զգիշտհոտ հայաւն
 Եւ զարինաթաթախ հանդերձան
 Լուսնաւ տուաք և ագաք:
 Ապա թէ՛ ոչ, գամ հարեւր մարդով ի վերայ քո:
 Եւ զամենայն պարսիկս զերեալ՝ ի Տարօն արծեմ,
 Եւ ի քո աստուածքդ շուն խառանեմ,

Որ փոխանակ դոցա հաշնն ի ձեզ
Արդ փութով, զոր ինչ ասացի թեզ, արձակեալ
Ապա թէ ոչ, տեսանես,
Թէ զիսն անցք անցանեն ընդ ձեզս:

Եր. Թ. Կեանք

Ահա թե ինչ պատգամ է ուղարկում Տարոնի, Խոյթի, Շատախի ու Սասունի տեր Մամիկոնեան իշխանը Իրանի աշխարհակալ Խոսրով Թադալորին: Տնտղայական շրջանի սնապարծ հերոսական դադափարականացումն է այդ, որով լի է այս վեպը: Լավ է, որ վիպասանն ավելացնում է, թե թագավորն այդ սլուեալ, ծաղր առնէր զՄամատ. և ոչ զրեաց պատախանի թղթոցն Սմբատաւ:

Դուչն ողին հրնում է ամեն միլադեպերի մեջ: Ահա փրկանքի մասին սրատմոված այս թեանք:

Բայց եղբայրն Վախտանգայ Սուրէն
Առեալ հարեւր հազար դահեկան,
Եւ ինն հազար այր, եկն ի Տարոն
Գնել զվինն և զորդին Վախտանգայ:

Սմբատը դիմավարելով նրան՝ ընդունում է սիրով ու քերում Սուչ Տասն օրից հետո Սուրենն ուղում է իմանալ, թե ո՛ր է իր եղբորորդին:

Իսկ նոքա ցուցին զքերզն (Այծից),
Թէ անդ է: Եւ ես ասէլ,
«Անդ այժարած է, թէ դիտարածս
Եւ ծիծաղեալ Սմբատայ,
Ընդ աղի բանն Սուրենայ,
Առաքեաց և ետ բերել
Ղկինն և զորդին առաջի իւր:
Եւ իբրն ածին, ասէ Սուրէն,
«Իշխան հզօր ի վերայ աշխարհիս Հայոց,
Տա՛ս զսոսա Պարսից արքային տուրսս:
Իշխանն ասէ. «Պարսից արքային
Եւ մեռեալ շուն մի ոչ տամ,
Որ ճաշ ուտէ առանց զնոյ, թող թէ զդոսս:
Բայց դու գնիլ թէ վամիս, քաշ տամ.
Ապա թէ ոչ, զնացէք դուք երեքեանդ՝
Տերօրունիս այժ արածեցէք,
Եւ քերզին ծառայութիւն արարէք,
Եւ դիմ հացս վերայք անեքախտիսս:

Իսկ Սուրէն քանդի իմաստուն այր էր, ասէ.
«Ո՛վ քարեպաշտ և հզօր իշխանս:

Քղ և զշուն դարապատիւք թո արածել տալիք,
 Դեռ պարծանա է մեզ՝ որ ի դրան թում կայաք,
 Քող թէ՛ այժ արածել,
 Քայց թէ լսէք մեզ,
 Առէ՛ք ի մէջը հարեւր հազար դահեկան,
 Եւ հրկու հազար ուղտ և վեց (հազար) պարսիկ ձի,
 Եւ մեզ տուրս տուք զայս կինս և մանուկսս,
 Իշխանն ասէ. «Ջալիք որ բերեալ ես, այդ մեր է.
 Ձի զթո գլուխդ կտրեմ,
 Եւ զոր ունիս՝ լիս առնում:
 Քայց թէ դոքա քեզ պիտոյ են,
 Դու քրիստոնեայ լեր և կնքեաց,
 Եւ զիս առ և ի պարսիկս զնա, և դոքա քեզ.
 Ապա թէ ո՛չ, ձեզ ա՛յլ հնար իմացէք»:

Սուրենը բերում է փրկանքները ներկայացնում է Մամիկոնյանին.

Իսկ նա ասէ. «Հաւանիմ տրոցդ,
 Բայց հարեւր ե ութսուն հազար՝
 Փայտ են տարեալ ի Քարբէոյ.
 Եւ շորեք հարեւր հազար դահեկանի
 Խոտ սնն կերեալ ի դաշտէդ.
 Եւ վաթսուն հազար դահեկանի
 Որ զեղն և զեղջերու և զնապատուակ երկրիս
 Որսացեալ են և կերեալ:
 Զյրոյ և զհացի գինն թողում,
 Բայց դանտըլ գինին Ասորոց և Սաււնայ և զՄոխրայ՝
 Այս երկու տարի է՝ որ յինէն կտրեալ էին,
 Եւ ինքեանք արբին, զայն թող տան:
 Եւ զվեց քաւառին հարկն, զոր առեալ են,
 Եւ զքաղաքին մուտան, զոր կերեալ են,
 Զորեք հարեւր (հազար) դահեկան,
 Զայդ ամենայն թող քերեն,
 Եւ դու քրիստոնեայ լեր,
 Եւ զիս ի պարսիկս տար, և դոքա քեզ»:

Եր. 37, հաւ. 1

Ապա պատմվում է, թե ինչպե՛ս Սևգատը Սուրենին ուխտի է տանում
 իր վանքը, ճանապարհովն նենգութեամբ ուղանում են նրան ու պարսիկ
 իշխաններին, և հետո մարտնչելով նրա զորքի դեմ կոտորում են նրանց:
 Մակաւաթիւ մարդկանց միայն սողատում են.

Իսկ զարսն որ Մեղտի տարան,
 Բժշկեալ ի ցաւոց վերացն,

Եւ ետ նոցա դանձս եւ երիվարս եւ զէնս,
Եւ յգեաց զնսսս ի պարսիկս:

Ծր. 42.

Մամիկոնյանները միշտ հաղթող են, ինչպես թագաւորից պատերազմիս, նույնպես և Վարդանի պատերազմիս մեջ: Այս երկրորդի մեջ նրանք նույնիսկ ժամանակավոր անհաջողութիւններ չեն ունենում: Այստեղ էլ նրանք կոտորում են Տարսնի վրա հարձակվող բոլոր պարսիկներին, իսկ իրենցից ոչ ոք չի սպանվում, բացի մի քանի անզին ու ծեր կրօնավորներից: Չկան այն դավաճաններն անգամ, որոնք երևան են դալիս մեր երկրորդ հին վնասի մեջ: Հայ իշխանները բոլորը ոչ միայն քաջ կովող են, այլ միշտ փրար պատում են և նեղութիւն ժամանակ օգնութիւն հասնում: Ո՛չ մի մատնիչ: Փառաքանքիներն էլ մատնակցում են կռիւն: Փարսականացումն, ուրեմն, կատարյալ է և մինչև վերջը տարած, ավելի ևս պարզամիտ կերպով, քան թագաւորից պատերազմիս մեջ:

Եւ փողոց տուեալ ի վերայ բլերն,
Մմբատայ յաջ. քինն, և Վարադայ յահեակն,
Եւ սկսան արեամբ թաթաւել,
Ինքեանք և երիվարք փրեանց
Եւ մածաւ սուրն ի ձեռին Մմբատայ
Եւ ոչ կարաց հանել:
Քանզի մածեաւ արիւնն
Շնդ սուրն և ընդ ձեռնատեղին,
Եւ կոտորեցաւ:
Եւ իրբն տեպն պարսիկն,
Եթէ ոչ կարաց առնուլ այլ սուր,
Ձայն տուեալ ասէին ցմիմեանս.
Թաթաւաչիք, զի մածեալ է ձեռն քաջին,
Եւ կապեաց զնա Աստուածն իւր,
Եւ սուրն ի ձեռին կոտորեալ վն:
Եւ պատեցին զնա թազումք,
Եւ իրբն զփայտ շոր, որ ի հեղթիլն ճարճատէ.
Այնպէս ճարճատէին ի վերայ գլխոյն Մմբատայ զէնք
Իսկ նա բարձր ձայնիւ ասէր.
«Վա՛յ քաղութեանդ ձերոյ,
Ձի ոչ կարացիք հերձուլ զգրուի իմս:
Ձայն սասց, զի յիշելիք լիցի բանն:
Բայց փրբն գիտաց,
Եթէ կարի սասուկացան ի վերայ նորա,
Ձայն բարձեալ ասէ. «Ո՛ր նս, բազուկ քաջ,
Եւ մորճ հզօր ընդդէմ թշնամեաց,
Չաւազան իմոյ ձերութեան, իշխան Պալուեանց.

Յառաջ մատիւր որպէս քաղ արծուի,
 Զի անգեղք և բուէճք պատեցին զիսս:
 Եւ նորա թողեալ զահեակ թէն յորդին իւր Վահան,
 Որ զՎահանովիտն շինեաց,
 Եւ ինքն քաջաբար որպէս զարծուի՝
 Կանչեալ զիմեաց ի վերայ:
 Որ և ի դողման հարեալ ամենայն երիվարացն,
 Եւ հասեալ ի թիկունս Սմբատայ,
 Եւ քախեալ զտէպն ի վերայ պարակին թիկանն,
 Եւ անդէն հհան ընդ ողն երիվարին.
 Եւ առ ո՛չ ժամանեաց հանել զտէպն.
 Զոր ծաղր արարեալ ասէր.
 Են ըթ շափեա զտէգո, թէ քանի ժանդուն է.
 Մի ոք սուտ ասէ, թէ երեք գիրկ է, և խարէ դրեգա:
 Եւ անդէն մեռաւ:
 Իսկ Սմբատայ ելեալ յեզր պատերազմին,
 Եւ ևսխ ձեռամբ պրկեաց պարսիկ մի,
 Եւ ետ զձեռու ի վերայ ձեռինն և սրուն,
 Զի իջցէ քերձ սարիւնն և թուլացուցէ զրոնատեղն:
 Եւ փոխեալ այլ սուր և ելեալ յերիվարն:

Հետո Վարազ Պաշունուն օգնում է ինքը Սմբատը: Լսյա այդ երկու-
 սին օգնության են հասնում Հաշտենից իշխանն և Սմբատի որդի Վահանը:
 Մինչ և Պարսից պատերազմիս մեջ կան բազմաթիվ ճակատամարտեր,
 որոնց համար շունենք մարտական մասեր նկարագիրներ,— անշուշտ եղծի
 են, բայց Բուզանդը համառոտել է,— այտեղ քարոզի պատերազմիս
 մեջ միշտ սիրով հիշված են մարտի վայրերը՝ մարոցներ, քաղաքներ,
 մորեկ, ավաններ, անցքեր, լեռներ, գետեր, գավառներ, գյուղեր, վանք,
 բլուր, դաշտ, մայրի, ձոր, քարապուխ և այլն: Միշտ սիրով պատմված
 են մարտական մանրամասնութիւններ, ինչպես դարանակալություններ
 (եր. 22, 26, հտն.), թշնամիների ձիերը զշէլ հեռացնելը և պարսիկներին
 կոխվը ձիագողերի հետ (եր. 31, 39), հսկա Տրքատի պես գետն անցնելը
 (եր. 51):

Երբեմն նկարագիրն ու պատմվածքը շատ ընդարձակված են, փնյ-
 անս հետևյալի մեջ Սմբատի որդի Վահանի մասին.

Իսկ Վահանայ լցեալ փմաստութեամբ,
 Անեալ երկերեւր կաշեայ ասպար,
 Եւ արկ զհարեւր չորեօք ամեհեօք,
 Երկաթ մի յայս կոյս ասպարին և երկաթ մի յայն:
 Եւ վնաց մերձ ի բանակն լոնին,
 Որ փոխանակ էր Տփղրանայ,
 Եւ ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հազար այր,

Եւ բանակեալ էր մերձ ի քարագլուխն,
 Որ հաքի հանդէպ Տարսուռ լճրինն,
 Եւ էր սա զատակաց յայլոց բանակացն,
 Արդ առեալ վահանայ զհարեւր ամեհի շորիսն
 Եւ տարաւ զնոսա յեզր տանակին,
 Եւ ի տան շորիսն այլ մի որ զհետ երթայր
 Եւ խորև խթեցին զշորիսն սրով
 Եւ արկին ի բանակն,
 Եւ փնջնանք զհետ մտեալ՝
 Զփող պատերազմին հնչեցուցին,
 Եւ ատճեռն սկսան կոտորեն,
 Եւ կանչեալ՝ զարհուրեցան,
 Ժպրհեցան՝ և աղմկեցան յոյժ:
 Քանզի և շորիքն զնոյ ծայն ասպարացն
 Եւ ընդ զօրացն աղմկել,
 Եւ ընդ փողոցն թախելն վորտուցեալ,
 Յամենայն կողմանց լոկ արշաւէին ի բանակն,
 Եւ զօրքն մարծէին, ևթէ հեծեալ մ,
 Եւ ծայն սուսեցացն փ կոտորելոցն է.
 Իսքաքանչիւր ոք լակ սիւ՛լ էլէին,
 Ոչ գիտելով զհետս անհանց...
 Արդ քանզի այլ զօրքն ոչ կարէին անցանել,
 Զի էր մուրն, և մեր զօրքն լոկ սատակելով նեղէին.
 Եւ զքարագլուխն բնաւ շկարացին յիշել...
 Ապա թողեալ զկարասին,
 Դէմ սիսկստի փ քարագլուխն արարին,
 Եւ սկսան ի վայր հոսել
 Ահաւոր վիճացն զնոյ բարձրութեանն
 Եւ ոչ սք կարաց գիտել զիրան,
 Մինչև պակասեցաւ ճիշ ազազակին,
 Եւ ասպա գիտացին զօրքն Հարոց,
 Թէ ընկղմեցան պարսիկքն,
 Գարձան ինքեանք ի բանակտեղ,
 Եւ զկարասին և զգանձն ժողովեցին,
 Եւ զբիւլարան և զուղտան,
 Եւ արծակեցին փ գաւառն Պալունեաց:
 Եւ լնդ ձի և ընդ շորի և ընդ ուղտ և ընդ էջ՝
 Գտաւ ութ և տասն հազար,
 Որ ծածկէր զբռնս գաւառին:
Եր. 46, հտն. 1

Հետո Ստգատը հարձակվում է մյուս բանակի վրա, և դարանակար-
 ների օգնությամբ մեծ կորուստ են պատճառում պարսիկներին.

Եւ շորեք հազար զլուխ համարով
Ընկեցին ընդ քարն, որ կտեցցաւ Հոնրնկէց:

Մարտի մեջ մենամարտները սովորական են և այդ անում են իրար
ձաղրելով: Հաղթողները սովորաբար կտրում են հաղթված թշնամիներին
զլուխներն ու պահում:

Եւ հասնալ ի դաշտն, որ ի վերայ Մատրավանիցն,
Եւ բոլորեալ ռազմ կանգնեցին:
Եւ եկեալ առ միմեանս Վարդուհրի
Եւ Տիրան որդին Վահանայ,
Ասէ Վարդուհրի. «Կախարդասարք,
Գուց ի կախարդան էք պարծացեալ,
Եւ կախարդութենամբ կամիք յաղթել Պարսից քաջացա:
Ասէ Տիրան. «Եթէ կախարդ եմք, դու վայր մի անսա,
Ձի ես զքո ձիոյ ազիդ քեզ տեսանել տամա:
Եւ անսպարեալ քի բաց ձգեաց
Ջաշոյ տոնն սոնապանօքն հանդերձ.
Եւ նորա հակեալ յայնկոյս ամկաւ:
Ասէ Տիրան. «Վարդուհրի՛, մի՛ մեղադրեր,
Գլուխդ հակեաց և ընկէց զքեզ.
Արդ ուղղեմ գրեռնդ:
Եւ ապա բառնայ:
Եւ կտրեալ զգրութիսն՝ ձեռ ջծառայ մի և ասէ.
«Պահեա՛ զգա, որ իջանեմք ի Մատրավանս
Եւ քնդի խազամք առաջի Աուրբ Կարապետինա:
Եր. 51, հտե.1

Մի տարօրինակ սովորութիւամբ հաղթողները կտրում են իրենց՝
սպանված հակառակորդներին ոչ միայն զլուխները, այլև թթերը կամ
թլիփատները ու մախաղ ձին անում և դրանով անքանակ թշնամիների հաշիվն են
պահում (Եր. 23, 24, 36):

Եւ զայլսն ի քաղաքն արգելեալ,
Կտրել տայր զզլուխսն՝
Եւ ի պարխապն հանէին:
Եւ արարեալ համար յատուր յայնմիկ,
Գտին զզլուխս վեց հազար, պսակս երկու:
Եր. 33

Եւ մտեալ զօրացն ի տունն,
Ջորս և գտին պարսիկս լեզուաւ՝ սատակէին.
Եւ զթիթսն կտրեալ ի շարի արկանէին,
Եւ քերէին առ Սմբատ:

Եւ համարեալ զքիթան,
Փասնէին սպանեալ պարտիկք՝
Ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի՝ շորեք հազար:

Եր. 36.

«Պարսից պատերազմին մեջ կին ու երեխայի սպանութիւն չկաւ:
Ընդհակառակն, Մուշեղը Շապուհի կանանցը պատվաւոր կերպով ետ է
ուղարկում: Ապա Սասնա Մոհրի մեջ Դավիթը, մեծակ մի մարդ, շի
ուղում հանկարծակի հարձակվել: Թշնամիները քանակի վրա, որպեսզի՝
«Ձաւսեն՝ Դավիթ գող էկավ, գող զնացա:

Այստեղ հակասակն է: Այդպիսի հերոսութիւն չկաւ Կոտորիք, որ-
քան կարող ես և ինչպէս կուզես: Պարտված պարտիկները մնացորդները
փախչում, ժողովովում են մի տեղ և իշխում, ճաշում են: Այդ ժամանակ
Ողակաւից քրկու հարյուր հիսուն այր դուրս են գալիս որս անելու: Երբ
երանք տեսում են՝

Ձի բանհոգս էին իջեալ պարտիկքն,
Փողտորար յարձակեցան ի վերայ,
Եւ ոչ ոք կարաց յերիվարն ելանել:
Այլ ի շուրջ եկեալ և ի սեղան անդր
Սպանին հինգ հարեւր և ութ այր:
Եւ վասն որ անդ ժողովեալ սպանին,
Կոշեցաւ անուն տեղւոյն ժողովա:

Եր. 40.

125. Կրոնական տարրը:— «Տարանի պատերազմին մեջ ստանձնա-
պետ աքքի է ընկնում և Ս. Կարապետի դերը: Ե՛րբ է, հեղինակն իր կող-
մից աշխատել է բարձրացնել տեղական կրոնական սրբապայրի նշանա-
կութիւնը, թայց նրա ավերացրածն ու ժողովրդականը տարբերվում են:
Վեպի ու զորույցների մեջ հենց Ս. Կարապետը մեծ տեղ է բռնել: Թշնամի-
ների հարձակման նպատակն է սկզբում՝ արպտամբ Մուշեղին բռնել,
տանել Պարսկաստան, նրա զգալատի տեղերը կործանել ու կրոնաւոր-
ներին սպանել (Եր. 15): Մուշեղին նրանք բռնել չեն կարողանում. բայց
հետագայում պատանդում են նրա և Փայլ Վահանի ոսկորները, և ավե-
րում են իշխանների պերեզմանները. «Թայց ինդդէ՛ զնշխարս Մուշեղայ
իշխանին և զքո հօրն՝ Վահանայ» (Եր. 43, 45):

Եւ կամէին անցանել ի վանսն Գլակայ,
Ձի հանցեն զոսկերս թշնամեացն:

Եր. 49.

Նույնն անում են պարտիկները և երկրորդ հին վեպի մեջ. նրանք
քանդում են Արշակունցի քաղաքները գերեզմանները:

Ձի ասէին ըստ իւրեանց... ըստ օրինացն,
Քէ. Վասն այսորիկ բարձեալ տանեմք
Ձսկերս թաքատրացն Հայոց յաշխարհն մեր,
Ձի փառք թապաւորացն և բախտքն
Եւ քաջութիւն աշխարհիս,
Յաշխարհն մեր եկեացենա:

Քուզ, Գ. Իդ. 1

«Պարսից պատերազմի» մեջ կրօնական կոնֆլիք երևան է գալիս Արշակի անկումից հետո, առանձնապէս Վահան Մամիկոնյանի և Մերութան Արծրունու ձեռքով, որոնք ավերում են եկեղեցիները և մարդկանց ստիպում թի պաշտօնն դառնալ Մազդեզանցնա. Եռչնիսկ նախարարների կանանց սպանել են տալիս, երբ նրանք հանձն շեն առնում ուրանալ քրիստոնեութիւնը, ատորուջաններ են շինում շատ տեղերում և այլն (Քուզ., Ե. ԺԲ.): Հետո ՎՄուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն և աւերէր պատրուշանսն Մազդեզանցն, Իսկ զՄազդեզանսն, որ մի անգամ ի բուռն արկին, զամենեսեան տայր հրաման սպարաբատն Մուշեղ ունել և հրով խորովելս (Քուզ., Ե. ա.): Այս միևնույն կրօնական կոնֆլիք, ինչպէս ասացինք, երևում է և «Տարունի պատերազմի» մեջ: Վահանը Միհրանի գլուխը կտնտնելով երդից՝ ասում է տան մեջ զտնված պարսիկներին. «Այս այլն գլուխն է, որ խորհէր զՄուրք Կարապետն հիմն ի վեր առնել և զկրօնաւորսն հրով այրելս» (եր. 26): Վարտանգ զօրավարը սփռե՛լ զպատրուշան ի դուռն Կաթուղիկէինն» (եր. 30): Պարսիկներն սպառնում են զգտեղիսն յորս նա (Մուշեղ) զհամատան ունէր՝ կործանելս:

«Ապա թէ տշ, դամ ի տեղին,
Ասէ, ուր հաւատք ձեր մն,
Ձայն բերեմ և աւերեմ,
Եւ կրակատուն առնեմ զեկեղեցիս ձեր,
Եւ զձեզ ի դուռն արքունի իսաղացուցանեմս:

Եր. 14.

Եթե նրանք այս սպառնալիքները շնն կատարում, պատճառն այն է, որ շեն կարողանում: Ահա թե ի՞նչ է ասում Գայլ Վահանը պարսիկներին հաղթելուց հետո.

«Վաշիթ, դի՛նչ եղից ի մտի,
Ի պարսի՛կ հաւատ կամէիք
Դարձուցանել զերկիրս Հայոցս:

Եր. 27.

Պարսիկները կրօնավորներին կոտորում են, բայց միայն ձերերին (եր. 51), որովհետեւ մյուսներին շեն կարողանում: Նրանք կամ փախչում, ամառնում են Ողական ամրոցում, կամ իրենք էլ մասնակցում են մարտին, բայց իրենց կրօնավորական տարազով ու եղանակով:

Եւ գնացին ի պատերազմ.
 Եւ արձակեցին առ հայրն՝ Գրիգոր...
 Եւ տարան ի պատերազմ
 Երեք հարեւր ութսուն և հինգ կրօնաւոր կնկողմ:
 Իբրև խմբեցաւ պատերազմն
 Յեզեքս Արամանոյ, առ անտոռովն,
 Որ կոչի Կաղամախեաց բլուր,
 Կրօնատորքն սնազգեաւոց էին,
 Մազեղիւնք և կնկղաւորք,
 Եւ ընդ տասն ատեն ժամահար՝ մի,
 Եւ ընդ երկուսն խաչադրօջ բարձրաբուն:
 Եւ հակատեցան նոցա
 Ընդդէմ իբրեաց ի պատերազմ,
 Յաբնկոյս գեառոյն, որ ի դաշտին:
 Զոր տեսեալ թշնամիքն զարմանալին:
 Եւ Վարդուհի՞ ոչ եմուտ ի պատերազմ,
 Այլ, սճեսից, ստէ, թէ նոքա գինչ գործեն:

Այլ ի՞նչ պիտի անեին այդ կրօնավորները:
 Զպիտի կարծել, թե նրանց արյուն պիտի թափեն: Նոր վեպի մեջ
 էլ կրօնավոր իսկապէս ճգնափոր դարձած Իշխանը փրկամիտերի դեմ
 կռուին մասնակցում է, քայք ատանց արյունի, այլ նա թշնամիներին հա-
 վաքում, քերում է Դավթի առաջ և տա կոտորում վ նրանց: Իսկ այստեղ,
 սճարոնի պատերազմի մեջ կրօնավորները անուժ են ըստ միջնադարի
 զազափարախոսութեան ամբի մեծ բան:

Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս,
 Եւ կամէին փախել Վահանեանքն,
 Յայնժամ նոցա ժուր կըկնեալ,
 Միաբան ազաղակեցին առ Աստուած՝
 Առօթիւք և չի աքտասոսց.
 Եմ'մ տէր, հա՞ր դմեր պատերազմն.
 Ո՛վ Կարապետ, զարթի՛ր ի ձայն պաշտօնէւցս:
 Եւ զայս ասացեալ միաբան՝ յոտն կացին,
 Եւ զնշան խաչին զարձուցանէին ի վերայ թշնամեացն,
 Եւ հարին դժամահարսն շանդուզն:
 Եւ հանցեալ Վահանայ ի գունդ կրօնաւորացն,
 Ստես յաջ թևս նոցա երխտաւոր մի ահագին տեսիլամբ,
 Եւ թաղ ժիրանի ի գողմս նորա, և վառ,
 Եւ ի հանգերնից նորա հուր փայլատակեալ...

3 Հայր—վանահայր:

4 Ժամահար—կռուակ, ժամ կանչելու տեստակը, որ զարնում էին:

5 Պարօն զորավորը:

Թշնամիներն էլ այդ տեսնում են, խեղճները թոցնում են, լծվում գետը, սկսում են փախչել, Վահանյանները հալածում ու կոտորում են նրանց:

Ուրիշ անգամ էլ Ս. Կարապետն օգնութիւն է հասնում Մամիկոնյան իշխաններին: Պարսիկները կրկնապատիկ թվով դալիս են, գիշերով շըրջապատում Սմբատին: Սա, վատահելով Ս. Կարապետին, գիշերով դուրս է դալիս թշնամիների դեմ:

Եւ ել ջահիւք ի վերայ զօրացն Պարսից.

Եւ յանկարծակի տեսին այր մի գիսաւոր,

Որ լոյս փայլէր ի հեռաց նորա,

Եւ զայս թշնամեացն կուրացուցանէր:

Եր. 34.

Թշնամիներն սկսում են միմյանց դեմ կռվել և իրար կոտորել, հայերն էլ մյուս կողմից են ջարդում:

Եւ այնչափ կոտորեցին զնոսա,

Մինչև հեղեղատք արեանց ելանէին:

Եր. 34.

Այսպես և մի անգամ պարսիկները, թվով քաղամարդ լինելով, հետապնդում են հայոց զորքերին.

Եւ տունալ գետոյն՝ նեղէին զնոսա...

Զի աստի թշնամիքն, և անտի գետն:

Թայց Սմբատն ու իր մարդիկը դարձյալ հաղթում են.

Եւ կնքնալ զանձինս իւրեանց,

Գիմեցին ի վերայ Պարսիցն:

Եւ երեւցաւ նոցա ի պատերազմին

Այր մի ահեղ և լուսաւոր,

Եւ հետ նորա լոյս փայլատակէր:

Եր. 47. հոն.

Հայերն այդ տեսնելով իմանում են, որ Ս. Կարապետն է, ուրախանում են և հարձակվելով թշնամիների վրա ջարդում նրանց:

Այդ զրույցները, թեպետ կրոնական և կրոնավորներից հորինված, իսկապես ժողովրդական, այսինքն ժողովրդականացած են: Ս. Կարապետն, ինչպես ուրիշ զեպեքերում, այստեղ էլ փոխանակած է հին Վահագն աստծուն: Ժողովրդական է նաև կռվից առաջ ուխտ դնելը Ս. Կարապետի վանքը, որ Մամիկոնյանների սհայրենական տունն է, նրանց վանքը, որ իրենք են շինել (Եր. 31, 38): Ժողովրդական է և այն, որ կրոնավորներին աղաչում են, որ աղոթք անեն, պատարագ անեն, որպեսզի նրանց

ազոթքի զորութիւնս կարողանան հաղթել թշնամիներին (եր. 44), նույնը գտնում ենք և նոր ժողովրդական վեպի մէջ: Դա միջնադարյան կրօնական աշխարհայեցողութեան արտահայտութիւնն է: Երբ ծերունի Մաքարը մենակ վճ մնում և թշնամիներին շքապատված նեղն է ընկնում.

Ձայն արկեալ ի Ս. Կարապետն, առէր,
ե՛կհա ժամ, ով՛ Մկրտիչ Կարապետ...
Ո՛ւր են իմ սուրբ կրօնաւորացն ազոթքնս:

Նույն կրօնական ոգու արդյունք է և այն, որ Մաքար Մամիկոնյանը Ս. Կարապետի վանքում աղոթում է, և սապ՝

Ետ բերել երկոտասան թուր
Եւ դնել առաջի բնմին,
Մինչեւ պատարագ մատուցանէին:
Եւ սպա առնալ առէ. «Տէ՛ր, հաւատամք ի քեզ,
Թէ և այս սուրբս եղիցին իմոր այլ սուտերաց,
Եւ հրամանաւ քոյ՛ յաղթեացոց նոցանս:

Եր. 44.

Դա ֆեոդալական կյանքի մի զիծ է, որ միայն մեր մեջ չի կատարվել: «Պարսից պատերազմի» մեջ էլ Մուշեղի համար ասվում է, թէ նա սգիւր նշանն և զզգնն մատուցանէր առ ներսէս, զի օրհնեացէա (Թուղ., Ծ. դ.):

126. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱՎՈՐՈՒՄՈՒՆ:—Ինչքան էլ կրօնական տարրը բազմակամի շեշտված է այս վեպի մէջ, բայց և այնպէս էականը ոչ թէ այդ է, այլ քաղաքական ու տնտեսական կողմը և պատերազմը դրա համար: Դա մեր երկրորդ հին վեպի մի մնացորդն է, որ ձևափոխվում է հետագա դարերի պատմական ազդեցութեամբ:

«Պարսից պատերազմը» սրա մեջ կորցրել է իր ընդհանուր ազգային փնտրութիւնը և դարձել է Տարոնի տեղական վեպ: Այստեղ իշխող են Մամիկոնյանները, որոնց ենթարկվում են տեղական երկրորդական իշխանները՝ սէշտեճից, Պալուսեաց, Արշուից, Եղնուտայս: Մամիկոնյանները Տարոնի տերն են, բայց նրանց իշխանութեան տակ են ետև ետք, Մատախ ու Մասուն, այլ և շարք, շարտեանը և Ապահունից գավառները: Մասունցիներն արդեն, իբրև սմանասարի ցեղը, մասնակից են կռիվներին. սերկու հարեր այր աշտենաւորս ի Սանասարայ՛ ցեղէն թողոյր (Վահան) ի Սժմակնս:

Գերիշխան տերը պարսից թագավորն է: Նրանից ասպատակում են Մամիկոնյանները և պարսիկների դեմ պատերազմում ոչ թէ, ինչպէս «Պարսից պատերազմի» մեջ է, Հայաստանի և Արշակունի թագավորներին:

Յ 80ԳԵ. Մամիկոնեաւ, եր. 22. Նույն տեղում ժանթութեան մէջ տպված է սմանասարայ, ուղղում ենք սմանասարայ:

իրենց «տերերի» համար, այլ հենց իրենց տեղական անկախութեան համար: Նրանց վրա դալիս են պարսկական բանակները, տեղի են ունենում բազմաթիվ մարտեր ու մենամարտեր, բայց պարսիկները չեն կարողանում ենթարկել նրանց: Մամիկոնյանները նույնիսկ խրոխտալով են խոստում Սասանյան հզոր արքայի և նրա զորավարների հետ: Նրանք ոչ մի կերպ չեն համաձայնում հնազանդիլ պարսիկներին:

Հնազանդութեան պայմանն է հարկատվութուն: Վախտանքը զորքով փախով Ապահունիք՝

Արձակէր հարկապահանքս ի Հարք

Եւ ի Հաշտենաք և ի Տարօն:

Ան որ գրեն գաւառապետքն.

«Եթէ՛ Վահան տայ, և մեք.

Ապա թէ՛ ո՛չ, ունայն գնայք ի մէնքս:

Եր. 80.

Հետո նա Վահանին է գրում ախրով. «Դու արի ե՛կ առ իս և երդուիր տայ դժարի արքունի և փալ հնազանդ, և յաւային պատիւն ձեր մնայս: Վահանը նրան շափազանց վիրավորական պատասխան է տալիս (եր. 81): Վահանի մահից հետո՝ նա նույնը Սմբատին է ասում.

Եւ առաքեաց առ Սմբատ,

Եթէ՛ ս՛կամ ե՛կ որ պատերազմիմք,

Եւ կամ հնազանդեաց և տուր հարկս:

Եր. 84.

Սմբատը նույնիսկ պատասխան չի տալիս: Մամիկոնյան իշխանների գժտութիւնը պարսիկների հետ և նրանց ապստամբութիւնը պարսիկներից պատճառ ունեն սկզբում այն, որ խոսքովը, հին վիպական մտտիովով, ուզում էր դավադրութեամբ սպանել Մուշեղին: Բայց հետո զըլխավոր խնդիրը լինում է հարկատվութիւնը և հարկի պատճառով ապրտամբելն ու շենթարկելը պարսիկներին: Արտեղ ազդել են ոչ միայն Վահան ու Վարդան Մամիկոնյանների օրով և նրանց ձեռով վատարված եղելութիւններն, այլև հետադաշի դեպքերն արաբացիների իշխանութեան ժամանակ, այն է՝ Մամիկոնյանների ապստամբութիւնները ժանր հարկապահանդութեան պատճառով, ինչպես է Հրահատի որդի Մուշեղ Մամիկոնյանի հայտնի ապստամբութիւնը:

Այսպես տարեմէ, այս է ճճարոնի պատերազմի» ընդհանուր բնավորութեանը: Պարսիկների զլխավոր ձգտումն է հպատակեցնել Մամիկոնյաններին և հարկի տակ դնել նրանց՝ թանդրով նրանց կրօնական սքրավայրը: Բայց հայերը միշտ հաղթող են դուրս գալիս, որով և փառաբանվում են Մամիկոնյան հերոսները:

7 «Պատմութիւն Ղևոնդեայ, Ա. Պետերբուրգ, 1887, էր. 129, հտն.:

Կնշանակի՝ վեպն իր զարգացման այս ձևի մեջ, ըստ էական խնդրի
ևս նույն գաղափարախոսութիւնն արտահայտութիւնն է կրում իր մեջ, ինչ
որ «Պարսից պատերազմը»:

«Տարոնի պատերազմի» այդ ընդհանուր բնավորութիւնն այնուհետև
իւր սյուսնետի էական գծերով, մնում է «Սասնա Սոհր» նոր վեպի մեջ:
Քաջի այդ՝ այդ հին վեպը կերպարանափոխված է նաև նոր պատմական
գեպերի ու անձերի ազդեցութիւն տակ, այն է՝ պարսիկների տեղ ան-
ցել են արարները և ապա՝ Մարա մելիքները. Տարոնի տեղ՝ նրա կից
Սասունը, որ հետագա դարերում ավելի նշանավոր քաղաքական դեր է
խաղացել, քան Տարոնը:

Այդ անցման շրջանի մի պատում ունենք Աղբիկ Տարունի և Սասնա-
սարի որդի Մուշ(եղ)ի վեպի մեջ:

ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ՇՐՋԱՆ

«ՍԱՍՆԱ ՆՈՒՆԲ»

Ա

ՎԵՊԻ ԳՐԻ ԱՌՈՒՄԸ

127. Պատումներ:— Այս վեպը կազմված է հին ժամանակներում, բայց գյուղացիների մեջ պատմվել և երգվել է մինչև մեր օրերը, մինչև 1930-ական թվականները: Այդ պատճառով դա կոչվում է նաև ետ ժողովրդական վեպ: Մեր հին վեպերից ավելի բախտավոր է եղել դա. ունենք դրա բազմաթիվ պատումները, որոնք թեպետ վեպի քայքայման ու ձևատման շրջանում, բայց գրի են առնված ասացողների բերանից բառացի կամ գրեթե բառացի:

Վեպի այդ պատումները վեպի բնագիրներն— աղբյուրներն են. ուստի բնական է, որ ամենից առաջ այդ բնագիրներն ու իրենց պատմությունը տեսնենք:

Մեր նոր վեպի մասին, որքան մեզ հայտնի է, ամենից ստաչ հիշատակություն տեսնում է Ղ. Ինճիճյանն իր «Նոր Հայաստան գրքի մեջ»: Նա կազգվան գաղափար մեջ դնելով «Սասնա ձոր» և «Սասնա ձորի բերդ»՝ ավելացնում է. «Ե բերդ ի համանուն ձորավայրի, զոր այսպէս կոչեցեալ ասն յանուն քեռ թագաւորի ուրոպ ի մերոց՝ որ քնակեցաւ աստէն. զորոյ զպատմութիւն նման պատմութեան Տիգրանուհւոյ յօղեաւ: Ինճիճյանից ավելի բան չենք իմանում. գու՞ն համարոտ քովանդակութուն բերած լիներ: Բայց այդ շէր կարելի սպասել մի ժամանակ, երբ դեռ ոչ միայն մեզնում, այլև Եվրոպայում չկար ժողովրդական բանահյուսության արժանավոր գնահատություն: Մտտ յթանասուն տարի պիտի անցնէր Ինճիճյանից, որ նոր՝ ուշադրության առնվեր մեր վեպը:

Առաջին գրի առնողն է Գարեգին Արվանճաթյանը, մեր քառահազարների ռազմիկը: Նա 1874 թվին Կ. Պոլսում հրատարակում է մեր վեպի մի պատում մի գրքուկի մեջ, որի վերնագիրն է «Գրոց ու բրոց և Սասուն»-ի Գավթի կամ Մհերի դուռ:

! «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», Մասն առաջին, Ասիա, հատ. Ա. Վենետիկ, 1808, հր. 131:

Սրվանձառանցն ինքը ըսով զնահատեմով ազգագրական նյութերը՝ գրում է. «Այս գործին հրատարակութունը հասկացողին համար արժեք կ'ունենա. բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այսպեսողներ, ոչ միայն այս գրվածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդ որ և իմ անձը: Ասոնք չհասկացողներն են: Բարեբախտաբար Սրվանձառանցը սխալ չըր: Ոչ թե սհամբառով քան հոգի և եթե հավանեցին նրա գործին, այլ նույնիսկ չհասկացողները հրապուրվեցին նրա ճարտար լեզվից և նրա բերած պատումի գեղեցկութունից: Ամեն կողմից հավանութուն ու քաջաչքութուն ստացավ նա, մինչև անգամ դրամական նպաստ: Ժողովրդական նյութով զբաղվողի և բարբառներ ուսումնասիրողի համար պարզ պիտի լինեն այդ հրատարակության մեծ արժեքը և պիտի օգտվեին դրանից»:

Ինչքան էլ վեպը զնահատեմներ կային, սակայն երկար տարիներ նոր պատումներ չհրատարակվեցին: Կ. Պալանցիները և բուն ներկայացիները, որոնց մեջ հայտնի էր եղել վեպը, չէին տալիս վեպի նոր պատումներ: Իսկ արևելյան հայերի մեջ՝ կարծում էին թե անպատճառ պետք է Մտչ զնալ և տեղում լինել վեպը լսելու համար: Մոռացվում էր, որ մշեցիները և առհասարակ այն կողմերի հայերը շարժական էին և բազմաթիվ խմբերով ապրում էին նույնիսկ մեր կողմերում, և թե նրանցից կարելի էր գրի առնել վեպի նոր պատումներ: Տողբերս գրողը՝ Մ. Աբեղյանը 1886 թվին էլքիածնում իմանալով որ ձեմարանի ծառաներից մի Մոկացի հայ, Գինեկանց գյուղից, գիտե վեպը, գրի առավ այդ որ և հետո 1889 թվին հրատարակեց Շուշում: Երևան եկավ, որ վեպը տարածված է ոչ միայն Մշո և Բաղեջի կողմերում, այլև Մոկացի:

Այնուհետև մի շարք բանահավաքներ՝ Գարեգին Շովսեփյան, Սարգիս Հայկունի, Խաչիկ Գաղյան, Բազրատ Խալաթյան, Երվանդ Լալայան և ուրիշները Հայաստանի զանազան կողմերում գրի են առել նորանոր պատումներ: Ենթ այս վեպի հրատարակված, ինչպես և բազմաթիվ անտիպ պատումներն ի մի են ամփոփված՝ ՀՍԽՀ Պետհրատի կողմից տպագրված «Սասնա Մերե» հայ ժողովրդական վեպի հատորների մեջ»:

128. Գրի ամսան թերթությունները:— Ինչքան էլ վերջին տարիները ընթացքում համեմատաբար մեծ գործ է կատարված մեր այս վեպի համար, բայց և այնպես, ինչպես ըստ քանակական երկնորի, նույնպես և վեպի գրի առնվելն ու տպագրվելը բացի «Սասնա Մերե» հրատարա-

2 #. Պատկանյանն այս պատմվածքն ուրիշ նյութերի հետ արտատպում է իր «Սոցիալական» մեջ. «Материалы для изучения армянских повестей», СПб, 1875, II, Мусскій дивлект, 1875. Ս. Մանգինյանը ետիքը հարմարեցնում է իրեն դասագիրք «Ազգային դպրոցական տղարեւ իսկ Գ. Խալաթյանը թարգմանում է ուսերին:

3 Տե՛ս «Սասնա Մերե», հատ. Ա, խմբագրեց պրոֆ. Գ. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Գարսպիտ Մելիք-Յուսեփյանի, Երևան, 1936, հատ. Բ, 1944 (մասնատաշի), 1951 (մասն երկրորդ):

կությունից, մեծ մասամբ պատահական է եղել: Բացի այդ, բանահավաք-
ները բնագնահարպես գրել են լսելով պանդոսիտներից. իսկ պանդոսիտու-
թյունը, ինչքան էլ կարճատև լինի, շատ զորեղ ազդեցութիւն է անում
պանդոսիտի հոգեկան վիճակի, հետևաբար և վեպի վրա: Մյուս կողմից
մենք շնք կարող ասել, թե գրի առնողները հարազատութեամբ են գրել
պատմանները: Բացի այդ՝ նրանցից մի քանիսը մանրամասն տեղեկու-
թյուն չեն տվել, թե երբ, որտեղ, ումնից են գրի առնված. թե պատմողը
որտեղացի է, որտեղ է ապրել, ինչպիսի մարդ է: Չեն հիշել պատմողի
տարիքը, բնավորութիւնը, հակումները, ճաշակը, սովորութիւնները,
պարապմունքը. մի խոսքով, նրա համառոտ կյանքը, և թե նա որքան լավ
է իմացել վեպը, երգել է, անգի՞ր ասել և այլն. և թե վեպի հերոսների
մասին ինչ կարծիք է ունեցել, ինչ ժանոթութիւն է ունեցել վեպի մեջ
հիշված աշխարհագրական տեղերի մասին: Չեն հարցրել, թե ինչ տեղեր
են կապված վեպի այս կամ այն հերոսի անվան, կամ որն է դիպվածի
հետ: Եվ վերջապես, թե պատմողն ումնի՞ց է սովորել և ե՞րբ. նրա վար-
պետը որտեղացի է եղել, որտեղ է ապրել, ինչպիսի մարդ է եղել.— որիչ
խոսքով, ըստ հնարավորին, պատմողի վարպետների մասին լրիվ տեղե-
կութիւններ չեն հաղորդել:

Այս ամենն անհրաժեշտ է, նախ՝ վեպի տարածման ճանապարհներն
իմանալու համար և ապա այն պատճառով, որ ամեն պատմող ևս, ինչքան
էլ աշխատի փոփոխութիւններ շմտցնել, դարձյալ իր ճաշակի, պարապ-
մունքի և այլի համեմատ իր միջավայրի, իր դասակարգի որոշմը կդնի
վեպի վրա և իր ժամանակի ու շրջանի ոգին կտա նրան: Թեպետև կամաց-
կամաց և անզգալի կերպով, բայց ամեն պատմող մի բան ավելացնում
կամ պակասեցնում է և ապա ժամանակի ընթացքում վեպի փոփոխու-
թիւնն արդեն մեծ է լինում: Եվ վեպի ներքինը, նրա կենցաղական, բա-
րոյական ու հասարակական կողմերն, իսկապես այսպիսի անձնական
ազդեցութեանն են տակ է փոփոխութեան կրում: Ապա մյուս կողմից աշ-
խարհագրական անուններն ևս փոխվում են պատմողների բերանին, ան-
ծանոթ օտար անունները մոռացվում են և վեպն առանց անունների
պատմվում, կամ թե պատմողը հին անունների տեղ մտցնում է իրեն ծա-
նոթ նոր անուններ. օրինակ՝ մշեցին ավելի Մշու կողմերի անուններ է
մեջ բերում, մինչ պարսկահայը Խոյի և Մակվա կողմերի: Անունը մի
օրինակ միայն: Մի պատմվածքում Դավթի և Մարամելիքի կովի նկարա-
գրի մեջ ասված է. «Դավթի ձինը խրեղեն էր. ըստից վերուց դրեց Այի-
րեկու: Եթե մենք լիմանայինք այդ պատմողի հատկութիւնը և թե նա
որտեղ է պատմել, կկարծիինք, թե Ալիբեկու գյուղը, որ Վաղարշապատի
մոտ է, մտնում է վեպի մեջ իբրև գործողութեան տեղ: Մինչդեռ այդ անու-
նը հավաստյալ ոճի կենդանութեան համար է ասված, ճիշտ ինչպես նույն
կովի նկարագրի մեջ մի քիչ առաջ ասված է, թե Մարա Մելիքը Դավթին
զարկում արքրմ խասցնում էր շուր էջմիածին և ապա ետևից ավելաց-
նում է պատմողը. «Ետքի խասկանալու խամար». այսինքն թե մինչև

Քչմիածին չէր հասցնում, այլ պատմողն իրենից է ավելացնում խոսքը բացառապես անելու համար:

Այսպիսի նմանութիւններ ասված անուններն անշուշտ շատ անդամ լսողների կողմից իրական են ընդունվում, և ահա Ալիքեկլու և ուրիշ տեղեր դառնում են վեպի գործողութիւն վայրեր և վեպը կապվում է մի նոր տեղի հետ: Ասել չի ուզիլ, որ ուսումնասիրողն այդպիսի նորամուտ բաները պիտի աշխատի որոշել, իսկ դրա համար հարկավոր էին մանրամասն տեղեկութիւններ պատմողների և այլի մասին:

Բ

ՎԵՊԻ ԾԱԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

129. Տեղական ցիկլ:— Ինչպես տեսել ենք, նշանավոր պատմական դիպվածներն առաջ են բերում պատմական-վիպական բանաստեղծութիւններ և այս կամ այն վեպը ծնունդ է առնում մի որոշ երկրում, մի որոշ տեղում այն միջավայրի մեջ, որ ավելի շահագրգռված է պատահած դեպքով և դրա հիշատակումով և ապա դա—վեպը, եթե իր մեջ ունի ընդհանրական տարրեր, տարածվում է նույն երկրի ուրիշ կողմերը:

Մեր այս նոր վեպը ծնունդ է Սասունի, Դրա մեջ թողարտից պատերազմի մի երկու հատվածները, զարգանալով իբրև տեղական վեպ՝ «Տարոնի պատերազմ» և հետագայում կրելով նոր պատմական ազդեցութիւններ, դարձել են Սասնոս վեպ հիմնված և՛ իրական և՛ կեղծ պատմութիւն վրա: Դա զարգացել է այդ տեղի միջնադարյան IX—XIII դարերի պատմութիւն հիման վրա:

180. Վեպի տարածված լինելը:— Գործողութիւն վայրը ժնականաբար գլխավորապես Սասունն է իր շրջակա գեմվառներով, որոնց աշխարհագրական անունների հետ և կապված են եղելութիւնները: Պատումների մեջ հիշվում են, սակայն, վեպի գործողութիւն վայրեր և գործող անձերի անունների հետ կապված տեղեր նաև Սասունից և իր շրջակայքից դուրս: Թացի այդ, մեր այս վեպը պատմել են ոչ միայն Սասունում, այլև ուրիշ գավառներում, որ ցույց է տալիս, թե այս տեղական հերոսական վեպը ձգտել է «համազգային» դառնալու:

Գիտենք, որ վեպն սկիզբն առնելով Սասունում պատմվում էր Բաղնիքի և Մշու կողմերում, Խլաթում, և ապա Բուլանքում, որտեղից անցել էր դեպի Հյուսիս՝ Արճեշ և Կաղզվան, ուր XVIII դարում արդեն կապված է եղել որոշ տեղի հետ: Այնուհետև դա մտել է Ալաշկերտ և Ալլարատ, էջմիածնի գավառը, ուր տեղացիներն արդեն յուրացրել են և արեւելիւյան բարբառով են պատմում: Վեպը ընթանի է և Արաղածի լանջերում, Աբարանում և Քավառում: Մյուս կողմից Շատախի, Ռշտունիքի ու Մոկաց կողմերում վեպն ավելի վեճիղանի է եղել և անցել է Վան՝ կապվելով

Մհերի զուան հետ, և այնտեղից Աբաղայի դաշտով մտել է Պարսկահայք, հատկապես հոռի, Սալմաստի և Մակվա կողմերը, ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողութիւնն տեղերը:

Հետաքրքիր կլինենք մանավանդ լոռվա պատում ունենալ, քանի որ լոռին իր փահլեփաններով դուրս է գալիս վեպի պատումների մեջ: Ըստ մի պատումի ասացողի Աբարանի և լոռվա մեջ ցույց են տալիս մի սարահարթ զՉանդովա դուրան, իբրև այն տեղը, ուր Գավիթը լոռվա Համդա փահլեփանի դեմ կոխվ գնալիս հանդիպում է Սուրբ Սարգսին, ուր և հանդուժեն ու Գավիթը մենամարտում են: Վեպի հետ կապված տեղեր հիշատակվում են և Ոստանա կապանում, Ջիզիրա քաղաքում, Բաղդադում և այլուր:

Այսքան միայն հայտնի է վեպի տարածված լինելու մասին: Այսքանն էլ արդեն ցույց է տալիս, որ վեպը բավական տարածված է եղել Սասունից և Տարոնից դուրս մյուս կողմերի հայերի մեջ և հատկապես բունած է եղել մի գոտի միջին Հայաստանում հարավից դեպի հյուսիս: Բայց որ կարևորն է՝ վեպը տարածվելով ենթարկվել է փոփոխութիւն, պատմվածքը վերամշակված է նոր ձևերով և նոր մոտիվներով ու նույնիսկ նոր հերոսներով: Այս ձևափոխումը, որով առաջ են եկել մի քանի տիպերի պատումներ, ինչպես և այն, որ Սասունից ու Տարոնից դուրս կան տեղեր, որոնք կապված են վեպի հերոսների անվան և նրանց արարքների հետ, — ցույց է տալիս, որ վեպը թողած է եղել իր տեղական բնավորութունը: Պետք է ասել, սակայն, որ ընդհանուր կենդանի հետաքրքրութուն մեր այս վեպով, ինչպես և հերոսների անվան հետ կապված շատ տեղեր չենք գտել, այն պարզ պատճառով, որ վեպը հնացած է: Դիցազնական վիպական շրջանը վաղուց անցել զնացել է մեզ համար:

Այդ ընդհանուր հետաքրքրութունը դարձր առաջ էր ընկնում և կարծում ենք, մինչև XVI և XVII դարի մեջ, երբ իրոք մի հերոսական վիպական շրջան է եղել մեզ համար, երբ կազմվել են նոր հերոսական վեպեր, երբ մեր ժողովրդի զարգացած մարդն էլ հավատում էր դրանց, այդ վեպերի մեջ կատարված հրաշալիքներին: Իսկ XIX դարի վերջերում և XX դարի առաջին երեսնամյակում այլևս այնպիսի վիպանքով չէին ապրում, որ հավատալին օրինակ, թե Ալգետի վրա կուվեն և կուվի շունդից փախած ուղտերը մի դիշերվա մեջ Ալգետից հասնեն մինչև Շիրազ: Վեպն, ուրեմն, հնացել է ու մեռնում է, և եթե բուրբուլին անհետ չի կորել, միայն շնորհիվ այն հանգամանքի, որ XIX դարում և այժմ դրա մնացորդները ժողովում ենք:

Բայց ի՞նչ են այդ մնացորդները, վեպի վեպ հեքիաթ, դի վեպը եթե չի մոռացվում, հաճախ վերջիվերջո դառնում է հեքիաթ: Այս է նրա զարգացման վերջին էտապը:

181. Հեքիաթ և վեպ:— Ի՞նչ է մեր վեպ սասածը, վեպի վեպ հեքիաթ: Այս հարցը և նրա պատասխանը պետք է այստեղ սկզբում. դեն, որով

հետև կան զբակնանագնտներ, որոնք մեր այս վեպը հեքիաթ են անվանում:

ժողովրդական վեպ և հեքիաթ այն միայն ընդհանուրն ունեն, որ երկուսն ևս ժողովրդական պատմվածք են և ստեղծագործություն. այսինքն իրականության բանաստեղծական ըմբռնումն ու արտահայտություն: Ռայց այստեղ ևս էապես վերջանում է այդ երկուսի նմանությունը: Մնացածով նրանք տարբերվում են իրարուց:

Մինչ հեքիաթները, ինչպես և առասպելները, սակավ քաջատուժյամբ, տեղական ազգային ստեղծագործություն են, ժողովրդական վեպն ընդհակառակն ընդ է թե՛ իր ընավորությամբ և թե՛ իր ծագումով: Արդարև հեքիաթներին մեջ ևս հաճախ երևում են ժողովրդական բարքեր ու սովորություններ, բարոյական կանոններ և աշխարհայեցություն, մինչև անգամ հավատարիքներ, բայց այդ ամենն անպատճառ պատմող ազգինը չեն, ինչպես և շատ սակավ անգամ է պատմող ազգն ինքն ստեղծում հեքիաթների նյութը: Հեքիաթները փոխառություն են այս կամ այն ազգից, և ամենամեծ մասամբ նույնիսկ անհնարին է, որքան էլ հետազոտություններ լինեն, որոշել, թե ո՞րից որին է անցել այս կամ այն հեքիաթը, էլ շենք ասում, թե ո՞ր ժողովրդի մեջ ծնվել են: Այսպիսի գրություն ժամանակ մի ժողովուրդ մի հեքիաթ փոխ առնելով՝ շատ-շատ երբ սիրելի է դառնում իրեն, յուրացնում է և տալիս նրան իր տեղական գույնը:

Հեքիաթի բնորոշ գիծն է հրաշալիք, անիրականը: Այնտեղ բնության և բնկերական կյանքի բազմազան երևույթները պատկերանում են մտացածին, հաճախ ֆանտաստիկական կերպարանքով՝ զարդարված ամեն տեսակ հրաշալիքներով: Ոչ պատմողը և ոչ լսողը չեն հավատում հեքիաթի գործողության իրեն իրականության: Եվ շատ գեղեցիկ կերպով այդ հավատքը բնորոշվում է հեքիաթի այն երկբայական բանաձևով, որով սկսում են հեքիաթները. «Եղել է, չի եղել», «Կար, չկար»: Հեքիաթներին չի հավատում պատմողը, որովհետև նրանց մեջ պատմված հրաշալիք այլևս ժողովրդի ժամանակակից հայացքի հետ չի կապվում: Նրանց մի մասը հին հեթանոսական առասպելներից են գալիս, ուստի և հնացած են ու անհասկանալի. մի ուրիշ մասը դրսից եկած լինելով խորթ և օտար են. կան և հեքիաթներ, որոնք հին առասպելների շենքի բեկորներից, իրեն պատրաստի ատաղձից, կարկատած բաներ են, ուստի և հաճախ անհեթանոսություն:

Այդպես չէ սակայն ժողովրդական վեպը: Նրա մեջ ևս կան հրաշալիքներ, բայց դրանք քաջատրվում են ժամանակակից հավատքով: Երիտակ եթե Գավիթը հաշ Պատարագի զորությամբ ամեն տեսակ հրաշքներ անում է, այդ հնարավոր է համարվում, որովհետև ինչպես ասում է մի ասացող. «Ըն ժամանակ արդար մարդ էին, ինչ մուրազ անեին աստված կը կատարեր»: Հենց այդ պատճառով ըլոր ասացողները հաստատ հավատում են, որ Գավիթ, Մհեր և ուրիշները իրոք եղել են և կատարել այն գործերը, որ պատմում են նրանց մասին: Ինչպես հեքիաթը,

նույնպես և վեպը կամ նազը (պատմվածքը) սկսվում է իր որոշ բանա-
ձևով, անցյալ հերոսներին սողորմի տալով: Թացի այդ՝ հերոսների իրա-
կանութիւնն ապացույց, համարվում են և նրանց անունով կոչված տեղե-
րը, որ այս ու այնտեղ ցույց են տալիս:

Բովանկան չէ որ պատմողը վեպին հավատում է իբրև եղմարիտ եղե-
լութիւն, այլ և հայ ազգի պատմութիւնն է համարում այն: Ըվ իսկապես
վեպն իրական պատմութիւն հետ շատ ընդհանուր տարրեր ունի: Մինչ
հեքիաթը, ոչ միայն ժամանակից, այլ և տեղից և անուններից կտրված է,
սակալ մացառութիւն, պատմվում է ընդհանուր անորոշ ձևով,—վեպն
իրական պատմութիւն հետ ընդհանուր ունի այն, որ նրա գործողութիւն-
ները կապված են որոշ աշխարհագրական տեղերի հետ, և հատկապես
այն տեղերի հետ, որոնք վեպի սկզբնավորութիւնն ու զարգացման շրջա-
նում մեծ դեր են կատարել վեպի հիմքը կազմող պատմութիւն մեջ: Այդ
կտեսները ներքնում: Վեպի մեջ պատմվածքները, որմն իրական կյան-
քից առած պատմական նշանավոր դիպվածները՝ հիշողութիւններ են,
միայն քանազանից են պատմված և այլափոխված: Արդեն տեսնել ենք,
թե ինչպես և առաջանում այդ այլափոխութիւնը:

Թացի այդ հաճախ պատմական կյանքից կազմված վեպի վրա հին
պատրաստի առասպելաբանութիւնից ավելանում են և ընդհանուր ա-
ռասպելներ, որոնք մի ազգի շին միայն հատուկ, և որոնք մեջ, ինչպես
ընդհանրապես ամեն առասպելի, քնութիւնն բանաստեղծական ըմբռնումն
է արտահայտվում: Ավելանում են նաև թափառական զրույցներ և հե-
քիաթային տարրեր, մանավանդ երբ վեպը խանգարվում է, այլ և ուրիշ
ազգերից փոխառած բանավոր և գրավոր զրույցներ: Թաց և այնպես վե-
պի հերոսներն, ինչքան էլ առասպելական-գիցարական կերպարանք են
ստացել, դարձյալ մարդկային ու պատմական են: Այս մեծեր՝ առասպել-
հեքիաթ, այլազգի զրույցներ, մտնելով վեպի մեջ, որի սաղմն ու միջուկը
քնիկ պատմական է, նրա հետ մի քովից անցնելով ի մի են ձուլվում և
հետզհետե ազգայնանում, ստանալով ժողովրդի պատմական կյանքի
պատկերը և դատնալով նրա մտքի և հոգու արտահայտութիւնը:

Այսպես պետք է տարբերել հեքիաթ և ժողովրդական վեպ: Եվ հենց
այս մեծ տարբերութիւնն է պատճառ, որ մինչ հեքիաթի դնահատու-
թիւնը համեմատաբար փոքր է գրականութիւն մեջ, ժողովրդական վեպն
ընդհանրապես շատ ավելի մեծ արժեք ունի: Դա ժողովրդի կյանքի պատ-
կերն է, նրա ձգտումների ու իգեպանքի մարմնացումը:

Տեսնենք մեր նոր վեպի մի քանի էական կողմերը: Որոշ ենք, որքան,
կարելի է, պատմութիւնն օգնութիւն, թե ինչպես է զարգացել այդ վեպը.
այսինքն, թե Սասունի ո՞ր մեծ պատմական դիպվածներից ազդել է՝
վիպասանների հրեակայութիւնը, թե ինչպես հետագա դարերում ուրիշ
պատմական դեպքերից նոր տարրեր են մտել մեջը և դրանց ազդեցու-
թիւնը կերպարանափոխ է եղել հին վեպը, թե ինչ առասպելական ու վի-
պական գծեր ու զրույցներ են ընդունվել վեպի մեջ, և թե վերջապես մեր:

ժողովրդական կյանքն իր ակի քանի կողմերով տ'ըջափ է երևում նրա մեջ: Մի քանի կողմերով ենք ասում, որովհետև ամեն ընթերցող էլ պարզ տեսնում է, որ մեր այդ վեպի մեջ ընդարձակ կերպով ցույցանում է մեր համկի կյանքը, թե տանը և թե դուրսը, ուստի և կարևոր շենք համարում այս նկատմամբ մանրամասնություններ մեջ բերել:

Ամենից առաջ տեսնենք, թե ինչ աշխարհագրական տեղերի հետ է կապված վեպի գործողությունը:

Գ

ՎԵՊԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

182. Սասունը ըստ վեպի:— Տեսանք՝ վեպի մեջ աշխարհագրական անունները հեշտությամբ շփոթվում են, կամ մոռացվում, տեղը նորերն անցնում, որոնք ավելի ծանոթ են, այս կամ այն ստացողին, կամ թե գործողության տեղերը մոտեցվում են պատմողի բնակության վայրին: Երբեմն նույնիսկ մոռացվում են տեղի անունները և վեպն ստանում է զրուցային—հեթիաթային բնավորություն: Այս ամենից հետևանքը լինում է այն, որ բոլոր պատումների մեջ աշխարհագրությունը միատեսակ նույնը չէ: Բայց շնայելով այս ամենին աշխարհագրական անունները որոշ շափով կայուն են: Վեպի մեջ տեսնում ենք իսկապես մեր երկիրը՝ ինչպես որ կա, և ոչ թե մի հեթիաթային—ֆանտաստիկական աշխարհ: Մենք կվերցնենք ընդհանրապես, նախ Սասունի իշխանությունը, ապա մյուս երկիրները:

{ Սասունը վեպի հերոսների հայրենիքն է: Դա Սանասարի և Քաղապարի մոտ, ուստի և նրանց հայրական երկիրն է, Դավթի սխերանց խեղճին: Կամ սխերանական երկիրը: Այստեղ են կատարվում վիպական եղելությունները մեծ մասամբ և այստեղ են հորինվել սկզբնապես զրուցաներն ու նրբերը: Այստեղ ծնվում, իշխում ու գործում են գրեթե բոլոր զվարվոր հերոսները }

Այժմ արդեն ունենք Սասունի երկու պատում, [որոնց մեջ տեղագրությունն ավելի ճիշտ է, քանի որ Սասուն բնությունը, լեռն ու գետը, զյուզն ու վանքն ավելի ծանոթ են ամեն մի սասունցու, քան թե մի մշեցու և մոկացու, էլ շենք ասում մահվեցու, այրարատցու կամ ապարանցու Սասունը լինելով վեպի կենտրոն, նրա տեղագրության մասին ավելի մանրամասն, ավելի ճիշտ և տեղիտեղ տեղեկություններ կան ընդհանրապես բոլոր պատումների մեջ, քան թե մյուս տեղերի համար, որոնց մասին հարևանցի է անցնում վեպը:]

[Վեպի մեջ Սասունը սովորաբար հիշվում է իբրև բերդ և քաղաք, գավառը քիչ անգամ է երևան գալիս՝ կոչվելով Սասնա կամ Սասնա թագավորություն կամ Սասնա տեղ, ավելի ճիշտ սգեխա այսինքն դեհ, կողմ:]

Լիս մի լեռնային բարձր երկիր է, սար ու ձորերով, կապաններով հարուստ. կան և անտառներ, բայց ընդհանրապես արոտներով ծածկված սարավանդներ են և ավելի՛ քարքարոտ ու ամուր տեղեր, ուր դժվարութեամբ ներս մտնել կարող է թշնամին:

Ես դիտցա, թե Սասուն դաշտ ու դուրան էր,

Զգիտցա, թե քար ու կապան էր:

Մենք կարող չենք մտնել Սասուն.

Սասուն քար ու կապան է:

Այսպես է ասում պարաված ու սարսափահար թշնամին:

Այս լեռնային բարձրություններից վեպի մեջ հատկապես հիշվում է Աև սար, որ ըստ Սրվանձառյանցի (Գրոց ու բրոց, եր. 99), Սիմ սարն է, «այն է՝ Տորսը, որ Մշո սար ալ կ'ըսվի. զանազան գլուխների բաժանված, բայց իրև մեկ տան մեջ մեկ գերդաստանի անդամ»՝ իրարու մոտ ժուկն ծնկի, դեմ դեմի պուպուզած, ձորերով, վտակներով, գեղերով լիս: Եվ այդ գեղաների մեջ թվում է Սրվանձառյանցը՝ Անդովք, Մարուփա կամ Մարտթու լեռ, Սասունք կամ՝ Սասնո լեռ, Մովսեսար և սպա Խույթ, որը թեպետ անոնց մեկ կտորն է, բայց խորթ: Աև սար կոչումն, ուրեմն, ամբողջ լեռնահանգույցի անունն է: Վեպի մեջ ևս Սև սարը մի սար չէ, այլ մի քանի սարեր: Բայց Սև սարը՝ և մի առանձին սար է՝ դուրս գալիս վեպի մեջ. և իսկապես այդպես կոչվում է Սասունի քարձրավանդակի հյուսիսային կողմը գտնված լեռը, լեռն ու մշուշապատ կատարներով (Վերձագանք, 1894, № № 144, 147):

(Սասունի լեռների մեջ է ըստ վեպի և Մովսեսար եր Առաքելոց վանքին մոտ է, և պատիկ ծով մը ունենալով իր գագաթը՝ այս անոճով կոչված է: Այս ծովակին շուրջ բուսած մանիշակները երկնագույն մարգեր վր ցուցանեն. և անթիվ են տեսակ ու գույն զանազան ծաղկանց, որ կը դմայլենցեն արարածներն իրենց տեսքով ու գույնով: Իսկ խավարժիլն անեման և հույժ պատվական և այս սարինս (Վերոց ու բրոց, եր. 100, Տե՛ս և Վերձագանք, 1894, № 147): Այս գալարագեղ ու ծաղկավետ սարն առանձնապես հիշվում է իբրև վեպի հերոսների սեճը անելու տեղը, սեճրանատեղը, կամ որսի սար: Բայց դա՛ միայն արոտներ ու ծաղիկներ չէ որ ունի, ինչպես նկարագրում են այժմ և կամ դուրս է գալիս մի քանի պատումների մեջ. այլ ըստ մի քանի պատումների ծածկված է և անտառներով, որ անշուշտ հին անտառների հիշողություն է:

Մհերի և Գալթի ու Ձենով շովանի գրոսավայր ու տրսորդութեան տեղ դուրս է գալիս և Ավագ սարը, որի տեղը մեզ ծանոթ չէ:

Մև սարի մեջ է Մարութ կամ Մարտրու լեռ կամ Մարտրուկ, որ Սասունի նարզանք գավառում է: Այս լեռը, որ Սրվանձառյանցը անվանում է սուրբ և բարեպաշտ, Սասունի բոլոր ժողովրդի համար օտաչին և վերջին ամենահավաստի և ծանր երգմնարան կարող է համարվել. սէջրն՝ Մարտթուկ վկա. շրնր՝ սուրբ Մարտթուկ գինա: Մարտթուկն ըստ

վեպի շատ հետու չէ Սովսասրից և սովորաբար կուլում է բանձրիկ Մարաթուկս կամ ՎՍԿԻՐ Կանձրիկ Մարաթուկս։ Լեռան վրայ վա շինած ՎՄարուժա Բանձր Աստվարածին կամ Աստվածածինն կողմած վանքը։ Այստեղ գալիս և Քեռի Քորոսիկն աղոթելու, որ թշնամիներէց ազատ մնան, կամ Հաղթակվոյ շնորհի Աստված։ Այստեղ կա մի սուրբ նշան, որ Քեռի Քորոսիկը բերում է Դալիթին, որ նրան ուժ տա վնաս ինքը Դալիթը կոնվ վնասուց առաջ գալիս է այս վանքում ուխտ ու մատաղ անում։ Սասնու վրա Հարձակվող թշնամիներէ կատարականտն է պիտավորապէս Մարաթուկը։ Նրանք աշխատում են աճերել վանքը. և Դալիթի հոր մահից հետո հենց աճերում են։ Բայց Դալիթը նորոգում է լայնագրած վանքը և բազմաթիւ միադրամուքով ճարտարագիտութեամբ միջին։ Այս վանքն այնքան Հարգանք ունի, որ նույնիսկ Կողբադէրը, որ նույն վանքը քանդել էր, երբ Դալիթը Հասնում, բռնում է իրեն, ասում է. «Ես քու ժամու բայտ, ինձի յապանեսու։ Ե՛վ Դալիթը չի սարանում նրան։

[Մարութա Ս. Աստվածածին վանքը մի քանի պատումներով դրվում է Սասնու սարի կամ Սասնա սարի գլուխ, որից երևում է, որ Սասնա սար առեւտրով ընդհանրապէս Սև սարն է Հասկացվում, որի մեջ է և Մարաթուկ։ Բայց վստ Սրվանձույանցի Սև սարի մեջ կա և սին ստանձին լեռ ՎՍասնուց կամ Սասնո լեռան, որ չեղբարց մեջ ամենեն զորեղն է և անպարտելի՝ երկաթն կողերով և քարոտ զլիտվն, և որ սասնուական եղած է Ասորոց Սենձրբրիմ արքայի որդոց՝ Աղբամբիցին և Սասնասրին։ Սասնա սարն իբրև առանձին լեռ դուրս է գալիս վեպի մեջ, Սասնո քաղաքին մտնիկ, որ շինում են Սասնասարն և իր եղբարը։ Այստեղ այս լեռան հետեն է Հանում Դալիթը Սասնու քաղաքի նախիրը։

Այնտեղն է վեպի մեջ Սասնուում հիշվում է Լեռն սար, Լոռայ դաշտ, Լուրս դաշտ, Լյուսա դաշտ, Թուրս դաշտ ու պլադուկ, որի տեղադրութիւնը մեզ Հայտնի չէ։ Լեռն սարի գլուխն է քարձրանում Դալիթն ու տեսնում Մարաթուկի պոքը բունակած ներքևում, Լոռա դաշտի մեջ, ուր և երկուսը կուլում են։ Այս դաշտի վրայով է Կողբադէրը Մարից Մարաթուկի վրա գալիս և աշտեղ Դալիթը վրա է Հասնում, կտորում նրա զորքերը, երբ նա Մարաթուկն աճերելուց հետո աւարը Մարը է տանում։ Ուրիշ պատումով այս կտորածը լինում է Սենիլ կազանում, որ ըստ վեպի լեռնի մեջ է, տեղ չկա որ փակնեն։ Տեղը դարձյալ մեզ Հայտնի չէ։ Լոռա դաշտում է և Մհերը կտորում Կողբադէրի թոններին, որ նեղութիւն են պատճառում Աստուին։ Այստեղ այս դաշտում է Մարաթուկը իր զֆերիզներին հետ Հոյ վազում և մանուկ Դալիթը բռնում է նրա Հոլը։ Ուրիշ պատումով Դալիթը Կողբադէրի զորքերը կտորում է Բաթմանա գետի վրա, և Մարաթուկը զորքով Դալիթի վրա է գալիս, բանակ դնում Լուրս դաշտում, Բաթմանա ջրի վրեն։ Վեպի նկարագրից պարզ երևում է, որ այս լեռն ու դաշտը Սասնա և Մարա մեջ է դրվում և Հասկացպես Բաթմանա գետի վրա։ Դա Սասնուի Հարաւային սահմանում է, ըստ վեպի՝ Սասնու քաղաքից բաժանան հետու Բայց այդ լեռն ու դաշտը եր-

քեմն և մտ է դրվում Սասուն քաղաքին: Այս դաշտում է մի պատումով
Դավիթին ունի արածացնում:

Ի Բարմաևա գետ և հատկապես Բարմաևա կամուրջ հաճախ հիշվում
է վեպի մեջ: Այս կամուրջը սահման է Մարա և Սասունի: Դավթին Մարից
Սասուն բերող փահլեվանները Բարմաևա կամուրջի վրա կանգնած ա-
սում են. «Զուր մկա մենք մեր երկիր ենք. մկա եկիր ենք ևեր երկիրք:
Ուրիշ պատումով փեպետ տնուն չի հիշվում, բայց Մարամեթի և Դավթի
հոր երկիրները սահմարա դրվում է դարձյալ մի կամուրջ: [Բարմաևա
գետը, հայտնի է, Սասնա գետն է, որ Տիգրիսի մեջ է թափվում: Այս գե-
տի վրա կա մի պատմական սհրաշակերտ կամուրջ, սժառասուն հոյա-
կապ քար ու կիր սենյակներով: Աս դիտողի մը հիշեցնել կու տա հին
արարական գեղարվեստի ճարտարապետական ճաշակն... Խայիֆայա-
կան աշխարհի զավակներն այդ կամուրջին առասպելական զրույցների,
երգի ու գովքի շարքեր են հատկացրեր: Հայերի կողմեն ևս նույն
կամուրջի մասին առակի կարգն անցած կը պատմվի, թե երբ Լուսավո-
րին Աշտիշատում մեհեանները կործանելով հալածական է անում դե-
րին, արանցից մեկը՝ կադ դեր յամանի գալով հնազանդում է Լուսավո-
րին և խնդրում ներել իրեն.

Զիս մի հանի հախ դիվան,
Սս կամքովս կը գամ յաման,
Կ'եղնեմ քեզի փոշահան,
Տանեմ թափեմ Փռէ Բարման:

Հավատացվում է, որ իբր այժմ էլ այս դեր աներևութաբար Ս. Կա-
րապետի վանքի մոխիրը տանում, թափում է Փրե Բարման գետի մեջ
(«Արևագանք», 1894, № 144): Փրե Բարման նշանակում է Բարմաևա կա-
մուրջ: Սրվանեստյանցը նույնպես գրույ է գնում. «կադ դեր մոխիրը մը
շաշակն, գետնի տակով կը տանե երկու ավուր ճանապարհ դեպի Տիգ-
րանակերտ՝ Փրե Բարման գրուդի մոտ կը թափե, որմե քուր մը ևևա-
ցեր է»:

Փրե Բարմանը կամ Բարմաևա կամուրջը Սասունի հարավային
կողմում է, որից անցնելով հարավային դաշտերից մտնում են Սասնա
լեռնահանգույցը: Դա ըստ վեպի Սասնա և Մարա սահմանն էլ Մի պա-
տումի մեջ, սակայն, Բարմաևա գետի ու կամուրջի փոխանակ հիշվում է
Անդղա գետ ու կամուրջ նույն պարագաներով: Այստեղ հիշվում է և Անգ-
ղա ձուր, որ և Դավիթը սպանում է Կողբազնի մարդկանց: Այս գետն ևս,
որ Բարմաևա գետից արեւմուտք է ընկնում, սկիզբն է առնում Տորոսից
ու Տիգրիսի մեջ թափվում: Խառնարանի վրա է Անգղ գլուղը, որ այժմ
Աղզ կամ էպի է ասվում. մոտին շի գրուխ լեռին է բերդ ըստ մասին

1 «Գրոց-բոց», եր. 105, նույն տեղում և հրզը, որի վարիանք տե՛ս Սեդրակյան,
Փնար Աշեցոց և Վանեցոց:

քնական և ըստ մասին ձեռագործ պատեալ պարսպաւ և ստորև բերգին յարեւելակողմն է Զոր լայն...» (Ընճիճյան, Նոր Հայ., եր. 223—224)։ Դա Անգղա ձորն է, և հին Եկեզեզ ամուր բերգն է, որ հիշում է Փ. Բուզանզը (Գ., իգ.)։ Այստեղ Տորոսյան լեռներում է հին Անգեզ տան գավառը, որից հյուսիս Բալուն ու Ճապաղչուրն (հին Հաշտեանք) են։ Վեպն ուրեմն Անգղա գետով ու կամուրջով որոշում է Սասնա իշխանութիւնն Կարաձախին—արեւմտյան սահմանը։ Այն կողմը Մարրն է. և գարնան Սասնա հեղեղն ինչպես Բաթմանա, նույնպես և Անգղա գետով Մարր է իջնում։

Վեպը որոշում է Սասնա հյուսիսային սահմանն ևս, «Մուրադ ջրի բերան», որից հարավ Դավթի սխերանական երկիրն է։ Բայց պատմող ապարանցիկ հարաւային սահմանի հետ շփոթելով հյուսիսայինը՝ Բաթմանա կամուրջը դնում է Մուրադ ջրի վրա, որ է մփրատը կամ Արածանին։ Այստեղ Մուրադ ջրի վրա Գուռգուռի մտտ հնումը եղել է (չուցն և այժմ կա) իրոք մի ամեծագործ կամուրջը, որի հետ շփոթվում է Բաթմանա կամուրջը։ Իսկ Գուռգուռ կոչվում է մփրատի այն տեղը, Մըտ գաւաթի արեւմտյան ծայրում, ուր գետը կիսնի սարերում անցնում է մի խորանդունդ ապարուծոտ ձորից և աղարեւելով քարերուն ենը կիրճով մը սղմվելով գուռգուռ ձայն մը կ'արձակեն։ մփրատն այստեղ ասկանանի ի փարձանց իբրև վեց գրկաշափ և գործէ սահան կամ կարկաջաճոտան մեծ, յորոյ ձայնէն կոչն զնոյն սահան և զգիւղն Գուռգուռ։ Այս Գուռգուռ քրտական գուռը, որ Մըտ գաւաթի վերջին գլուղն է, Ս. Կարապետի հարաւային արեւմտակողմն են զնոսմ, Ս. Կարապետից քրկու ժամ հեռու։ Այստեղից մփրատն անցնելով՝ մտնում է Ճապաղչրի սահմանները, ուր սիսկ և իսկ լաքնանա ձորուոր գետոյն, և ջուր նորա ճապաղի, լայն սակա կոյի Ճապաղչուր կամ Ճապաղչուրք։

Սասնա իշխանութիւն հյուսիսային սահմանը, սակայն, տատանվում է վեպի մեջ, ճիշտ է, Դավթի հայրենական երկիրը «Մուրադ ջրի բերանին կամրջից այն կողմն է համարվում, բայց այդ այն ժամանակ, երբ Մարտելիքը Սասունից հսկիչտակել է հյուսիսային սահմաններից կալվածներ։ Գրքին բոլոր պատումների մեջ Ճապաղչուրն ու Մուրը, այսինքն Տարունը, Սասունի են։ Եվ սարի բոլոր՝ ու շուր Սեմակա քիթ՝ Մըտ վերնում... ջուրի Սեղանարու գոտնն ը վի Ճապաղչուրու Դուրանն» հիշվում են իբրև Սասունի տերերի կալված։

Ճապաղչուրն ուրեմն վեպի մեջ Սասնա իշխանութիւն վերջին ծայրն է հյուսիս-արեւմուտքում. նրանից այն կողմը, որ Բալուն է, Մարր է համարվում. Ճապաղչուրը կոչվում է Ճապաղչուրն ու Քոզն, կամ Ճապաղչուր—Քոզն, կամ լոկ Ճապաղչուր և լոկ Քոզն անանձին-անանձին։ Քոզն մեզ համար անհասկանալի է, եթե միայն գոտի, գոտին բառը չէ քոզն արտասանութիւնք, ինչպես գտնվում են Սրվանձտյանի պատումի մեջ «Սեղանարու գոտնն ը վի...» Դավթը Ճապաղչուրը կամ

* Պրոց ու յրոց, եր. 97, 166ԻԵ., Նոր Հայ., եր. 181, 194.

Ճապաղջուրն ու Փողին իր սէրը մուգնա է անվանում, որ Մարամեջիքը՝ Տարոնի հետ մինչև Սոփասար խում է Դամիթի հոր մահից հետո, բայց և աքնպետ աղքատի դնակիչները Դամիթին պատմում են սիրուն իրենց հին աղի տղան: Ճապաղջուր գնալը, որ է՝ նփրատը, որի մեջ լողանալիս Դամիթին սպանվում է իր ցնդի աղքատները:

Ճապաղջուր գետին ուրիշ պատումի մեջ փոխանակում է Մեղրագետ, որի կամրջի վրայով անցնելիս սպանվում է Դամիթը: Մեղրագետը, որ վրան ունեցել է երեք կամուրջ, նփրատի մի վտակն է ձախ կողմից. բխում է Գրգուռ և ներքույթ լեռներին, Մշու դաշտի արևելյան կողմում, որ կոչվում է Զուլտուր: Այստեղ Մեղրագետը բխելուց և երեք ժամվա ճապաղջուր ըստ հոսելուց հետո՝ լճանում է և կազմում շամբ, որ հնումը կոչվում էր Մեծամոր, իսկ հետագայում՝ Զուլտուրա շամբ: Դրա մտակին վեպի մեջ հիշված լոխոր, Ճապկիս, ալի և Ավզուկ գյուղերը՝ Զուլտուրա դաշտից, ուրեմն Տարոնից գեպի արևելք հաթը կամ իւրթա երկիրն է, որ գեպի մեջ, ինչպես կտեսնենք, առանձին իշխանություն է: Դամիթ գնում է իւրթա տիրուհու հետ կոչվելու, կոչի մեջ Դամիթի ձին թաղվում է սի Զրգուրա շամբ մեջ տլինա, որից ազատվում է գիցազնը և գալիս սևոխորա ջրի վրենա, որ նույն Մեղրագետն է: Բայց այստեղ Շմշըմ խանումի աղբիկը ապանում է Դամիթին, երբ Աս լոխորա ջրի մեջ լողանում էր: Այդ աղբիկանը՝ մահացու վերք ստացած հսկան պատում, սնըվումա ձգում է սաթու տկու գեղ, ու զրդ գեղու անուն դրեց. Երվանդ-Ճապկիս: Ու էդ գեղ հար հըմկա հանդ է Զրգուրա բերան, ու անուն Ճապկիսա:

Զուլտուրա դաշտի գլխին՝ վեպի մեջ հիշված սարն է Սծմակա փք, որ Սիմ կամ Սև սարի հյուսիսային մի ապառաժ քաղուկն է, քարաքար կարկատեալ ի դաշտինա, մտտ երեք ժամ հեռու Մուշ քաղաքից՝ գեպի արևելք: Այս Սծմակ կամ Սծմական քիթ սարի ստորոտում է Ավզուտ գյուղն ու Ավզուտա դաշտը, ուր Դամիթը հանդիպում է զուլտանին և լծված սկը քաշեր հաներ սարու (Սծմակալ) գլուխ, ու քնդին քաշեր բերեր ցած. ու ըդ հմալ Սև սարու գլուխն ը վի գլխըրալ, եկալ վրը Մտոնիկ գեղի հինն: Այս գյուղը Սիմ սարի ստորոտում է, հարազ-արևելյան կողմը:

Մշու դաշտի մեջ հիշվում է Մուշ փաղաքը, որտեղ նստում է Մուշեղ թագավորը, ժամանակակից՝ Քաղաքի խալիֆային, որ Ս. Կարապետի վրա կոչվ է քալիս. իսկ արեմտյան կողմը՝ Սեղախար, որի վրա քանակ է դնում Մարամեջիցը Դամիթի վրա կոչվ գալիս: Այս շեռք գտնվում է Արածանու ալ կողմը. սՊուռզուրին մեկ քովն է Սեղանսար, որու գագաթը ուղիղ տափարակ է ճիշտ սեղանաձև, իսկ Պուռզուրին մյուս ափն է Սև սարը (սՊուռզ ու բրոցա, եր. 99): Սեղանսարից հյուսիս արևելակողմն է Ս. Կարապետի վանքը, սդաշտի վերին գլուխը Քաղքն լեռանց վրա:

3 Քճառով-հոտով, եր. 115, սնոր հայտ, եր. 181, հտն. 191:

4 սնոր հայտ, եր. 182, Ստրգուտե, Տեղագրութիւն ի Փ. և ի Ս. Հայտ, եր. 227

Իսկ Գուռգուրից գեպի արեմուտք, տեսանք, Եփրատը Կինճի լեռներից անցնելով՝ մտնում է Ճապաղչուր:

Այսպես վեպը Սասնու իշխանությունից մեջ դնելով Ճապաղչուրի հետ և Տարոնը, որոշում է և վերջինիս արևելյան և արևմտյան ծայրերը՝ Մծմակա թթից ու Չուխուրա դաշտից մինչև Անգղանասար ու Ս. Կարապետ: Բայց կա և մի ուրիշ ծայր. սՄշո դաշտի բուն ծայրը Չարբաճար ձորն է, ուստի կը մտնեն Եփրատն ի դաշտա: Այս ծայրը չի հիշվում վեպի մեջ. բայց մեզ թվում է թե դրա համար մի անկնարկություն կա: Գավթի հայրն ունի երկու փառելիքան՝ Քաթմանա բուլա և Չարբաճար քամի: Կարծում ենք զրանք Սասնու իշխանությունից հյուսիսային և հարավային սահմանների՝ Քաթմանա և Չարբաճարի՝ պահապաններն են: Երկուսն ևս Գավթի հոր մահից հետո դավաճանում և Մարամեջի կողմն են անցնում, երբ սա Ասսուրները խլում է Ճապաղչուրն ու Մուշ՝ մինչև Սոլվասար: Մարամեջիքը նրանց է Հասնաում մանուկ Գավթին, որ տանեն մինչև Քաթմանա կամուրջը կամ Մուրազ ջրի փերանն ու սպանեն: Բայց Գավթի չաղթում է նրանց և ըստ մի քանի պատումների ներելով՝ Մարութա վանքի պահապան է կարգում: Երկու ծայրերի, Քաթմանա և Չարբաճարի պահապաններն ահա դարձած են՝ Մարութա վանքի պահապանները:

Այս ևս բոլոր աշխարհագրական անունները, որ հիշվում են Սասնու իշխանությունից մեջ, ըստ նախախորհրդային շրջանում հրատարակված պատումների: Երկու անվան (Ավազ սար և Լուսա դաշտ ու սար) տեղագրությունը որոշել չկարողացանք: Բայց կարծում ենք՝ դրանք ևս շինծու չեն, այլ իրոք տեղի անուններ են, ինչպես մյուսները⁶:

Վեպը բուն Սասունի հետ Սասնա իշխանների ձեռին դնում է Ճապաղչուր ու Մշու պաշտը, թեպետ և ոչ միշտ, որովհետև Մարամեջիքը կամ Բաղդադու խալիֆան այդ երկու դավառը երգածն խլում են Սասնու իշխաններից: Վեպի այս հիշատակությունն ևս իրական է, որովհետև ինչքան էլ հին ժամանակներից փ վեր այս երեք դավաճանները միացած են եղել, միջին դարերում Տարոնն ու Ճապաղչուրը՝ իրրև դաշտալին երկիր՝ հաճախ փակել են այլազգիների ձեռը: Սասնա տերերը, սակայն, Ճապաղչուրի և Տարոնի վրա նախ ձև իրրև իրենց հայրենական պալլածի վրա:

Տեսնենք այդ պատմականը:

189. Սասուն, Տարոն և Ճապաղչուր:— Մեր պատմագիրներից Հովհաննես կաթողիկոս (Մոսկվա, 1853, եր. 66) և Վարդան Բարձրաբերդի (Մոսկվա, 1861, եր. 110) սասունցիներին անվանում են առաջինը՝ արևելիք լեռինն Տարոսիս, իսկ երկրորդը՝ ամբոխն Տարոսիս: Բայց ու-

⁶ Այս և բոլոր մնացած աշխարհագրական անունների մասին լրակատար տեղեկություններ կրելի է ստանալ սասնա Մոսկա հրատարակության Գ հատորի Սասնա-գրությունների և Հատուկ անունների ցանկի, ինչպես և Փարսեզների մեջ:

րիշներն այս Տաճրոս լեռան մէջ ղեռւմ են Սանասունը, Սիւմ լեռ, Խոյթ-
լեռ և Շատախ:

Սանասունք և Խոյթ իբրև առանձին գավառներ հիշված են Խորե-
նացու աշխարհագրութիւն մեջ: Ասանասունքն Աղձնեաց աշխարհի վերջին
գավառն է Սալնո ձոր (Քաղիշու) գավառից հետո, իսկ Խոյթը Տուրու-
րեղանի առաջին գավառն է, որից հետո գալիս են Ասպակունիք, որի
տեղն անժամոթ է, և Տարոն: Սանասնայք (Սանասունիղայ) և Խուֆեցիք
(Խոթայայայ) իբրև տեղու ժողովուրդս Տաճրոս լեռան՝ հիշում է և Գևորգ
Կիպրացի հույնը իբր 600 թ. Ք. հ. (Վ. Տոմարեկ, Սասուն, եր. 10, Ին-
ճիհչյան, Ասորագրութիւն հին Հայաստանի, եր. 70):

Եթէ հետմը Խուֆ և Սանասունք տարբեր գավառներ են եղել, գուցե
և տարբեր ժողովուրդներ, Քովմա Արծրունու ժամանակ, սակայն, դասը
կազմել են մի ժողովուրդ Խուֆ կամ Սանասնայք անունով, Քովմաս:
Սասնա ամբողջ լեռնահանգույցին տալիս է Խոյթ անունը (Ս. Պետեր-
բուրգ, 1887, Բ. դպր. 2., է. գլուխներ): Նա սասունցիներին անվանում է.
սլեռնայիներ... ի լերինն Խոյթ անուանեալք. սքնակիչք լերինք (Խոյթ).
սքնակեալք ի լերինն որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարոն: Եւ յաղագս
Խըրթնի և անհետազօտի խուֆից և բարուցն կոչին Խոյթ, յորոց անուն
լեռան Խոյթ անուանի... Առջա են դոեաճք ասորոսց, որ շուեցին զկնի
Աղբամեղիայ և Սանասարայ... յորոց անուն ինքնեանք Սանասնայք զին-
քեանս անուանենք: Կիրակոս Գանձակեցի (Մտակվա, 1858, եր. 43)
գրում է. սքնակիչք լերինն Խոյթայ, որ Սասունք անուանէինք: Քովմա
Արծրունին այնքան քաջ տեղյակ է սասունցիներին կյանքին, որ չի կար-
ող սխալված ինեել: Կնշանակի Խոյթ կամ Խուֆ անունը հյուսիսից դե-
պի հարավ է անցել և այդ անունով կոչվել է Տարոնի և Աղձնիքի մեջ
եղած ամբողջ Տաճրոս լեռը. գրեցիները այդ լեռան բնակիչներին Խուֆ
կամ Խուֆեցիք են անվանել, իսկ բնակիչներն իրենք իրենց կոչել են Սա-
նասնայք: Երկու տարբեր գավառ միացել են և մի միութիւն կազմել:

Քնշպես որ Խոյթ անունը տարածվել է դեպի հարավ, այնպես և Սա-
նասունք անունը հարավից անցել է հյուսիս՝ իր մէջ ընդունելով և Խոյթը.
և Սասուն ու Տարոն երկու սահմանակից գավառներ են դարձած: Այսպես
Ղազարու կամ Առաքելոց վանքը, որ Տարոնում է, Քովմա Մեծորեցի
(եր. 22, հտն.) գրեում է Մովսէսարի և Խուֆա լեռան մաս, ըստ Մատթեոս
Ուրհայեցու (Երուսաղեմ, 1869, եր. 446) և ամերձ ի Սասուն: Կնշանակի՝
Մատթ. Ուրհայեցու ժամանակ Խոյթը մտնում է Սասունի մեջ: Այս տա-
րեպիս ուրիշ տեղ ևս (եր. 155) Տարոնն և Սասունը սահմանակից է.
ղնում. սղնաց զօրքն այլազգեաց ի գաւառն Տարոն. որ և բռնակալեալ
առ ստորոտ լերինն Տարուսի մերձ ի Սասուն:

Տարոնի և Սասունի այս սահմանակցութիւնը գտնում ենք և ուրիշ-
ների մեջ: Արիստակես խասոխվերտցի (պ. ԻԱ) գրում է. սի մասնել
նորա ի Տարոն իշին զօրք ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան տովո-
րութիւն Սանասուն ասեն լուս անուան նախնայն իւրեանց: Սույնը գրտ--

նում ենք և հորինացու Հայոց պատմութիւն մեջ, որ սասունցիք անվանվում են քրեակիրք Սիմ կոչեցեալ լերին» (Ք. ևդ.) Դրանք Սանասարի սերունդներն են, որ բազմանալով շլոթին դՄիմ կոչեցեալ լեռան» (Ա. իս.) Իսկ այս տերկայանիստ Սիմ լեռան ստորոտում է Տարոնի քաղաք (Ա. դ. ժ., Բ. հդ.):

Թերած հատվածներինց պարզ կրնում է, որ Տավրոս, Սիմ, Խոյթ միեմույն լեռան անուններն են և բնակիրք Տավրոս լերին, բնակիրք Սիմ լերին, բնակիրք Խոյթ լերին (Խույթցիք) և Սանասունց կամ Սանասոնայք միեմույն ժողովուրդն են: Մի տեղ Խորենացու պատմութիւն մեջ (Ք. ք.) Տավրոս և Սիմ նույնիսկ նույնացած են. սղլեանն Տավրոս, որ և Սիմա:

Այս անուններից հետզհետե ավելի տարածվել է Սանասունց կամ Սասուն անունը, ինչպես կա և մեր վեպի մեջ: Տավրոս և Սիմ, որքան զիտենք, մոտացութիւնն են տրված, փոխանակվելով նոր Սև սար անունով. իսկ Խոյթ անունը, թեպետև ըստ Քովմա Արծրունու և Կիրակոս Գանձակեցու ամբողջ Տավրոս լեռան է անցած, այնուհետև նա և մինչև այժմ պահպան է՝ միայն իբրև Տավրոսի կամ Սիմ լեռան (Սև սարի) մի գագաթի անուն Սասուն հրախուս-արևելյան կողմում, Մշու դաշտի արեւմտյան մասից հարավ, որտեղից սԿիչնայ Սալնո Ձոր, որ Բաղեջն է» (Գրոց ու բրոց», էր. 100): Կնշանակի Խոյթն այժմ մնում է նույն տեղի համար, որ կա Խորենացու աշխարհագրութիւն մեջ: Բայց և այնպես Խոյթը դարձյալ Սասունին կից ու միացած է հիշվում. այսպես Քովմա Մեծորեցին (էր. 22, 27) դնում է եզակի ձևով. սլեանն Խույթայ և Սասոնայ, քարք դաստին Խույթայ և Սասոնայ:

Անշուշտ Տավրոսի այս բարձրութիւն, որ է Սասուն, հրախուս-արևելյան մասը սկզբնապես հակված է եղել դեպի Տարոն, որ Խոյթը զբովում է Տուրուբերանի մեջ, իսկ հարավային մասը, որ բուն Սասունն է, ընդհակառակն դեպի Աղձնիք է հակված եղել, որ Խորենացու Աշխարհագրութիւն մեջ Սանասունքը զբոված է իբրև Աղձնեաց գաղաւ նույնը գտնում ենք և Խորենացու պատմութիւն մեջ, որ (Ա. իգ. Բ. ք.) Սանասարի սերունդներինց, որ Այմ լեռան վրա են բնակվում, ծագում են Աղձնեաց բրդնշխները, և այս վերջինների կալված զբովում է ի միջի ալլոց սլեանն Տավրոս, որ և Սիմա: Սակայն նույն տեղում Սլկունայց Սղուկ նահապետին Վաղարշակը կարգում է սպահել զլեռան (Սիմ), որսալ զքոջան: Ընտաքալում այս ամբողջ Տավրոսի բնակիրները, երբ իրենց մեջ՝ մի միութիւն են կազմել Սանասոնայք անունով, հակված են եղել ավելի դեպի Տարոնի կողմը և նույնիսկ միացած նրա հետ: Խորենացու պատմութիւն մեջ տրդին Սիմ լեռան բնակիրներն Ողական բերդի տեր Սլկունայց Սղուկ նահապետի հետ են, որին սպանելով ճենացի Մամիկոնը՝ տեր է դառնում Ողական ամբողջին և Սլկունայց կալվածներին: Փավստոս Բուզանդի մեջ (Ն. դ.) Ողականի տերն է Մուշեղ Մամիկոնյան:

Այնուհետև ևս Սիմ լեռան բնակիրները կապված են Մամիկոնյանների հետ, և Սասունը, հետը և Խույթ վերցրած, Տարոնի հետ ենք տես-

նում, Ձեռնոր Գլանի մեջ, թեպետ և մութը կերպով, Տալիստ լեռը գրված է Մամիկոնեից երկրի մեջ, ինչպես կոչվում է Տարոնն այդ գրքի մեջ (Վենետիկ, 1832, եր. 31, 33): Իսկ Քալվա Արծրունի (եր. 51), որ Սասնարեն, Սասունցիների նախնուն, Սիմ լեռան վրա է բնակեցնում, այս Սիմ լեռը պարզապես դնում է Տարոնում—ասիլով, թե մասնով Աշոտ Արծրունուն իր դայակը ստեղծ ասնի լեռանն Սիմ, ի տեղի Հայրենեաց քնակութեան աշխարհին Տարոնոյս:

Հովհան Մամիկոնեյանի մեջ (Վենետիկ, 1832, եր. 45) այս լեռան Տարոսիս ձևադրված մեջ ընթերցված տեղի սլեռան Տարոնոյս, որ պատահական սխալ չէ, այլ լեռան հին անվան տեղ նորն է գրված: Տարոնը հետագայում Մշու նրկիր է կոչվում, ինչպես Քալվա Մեծորացու մեջ (եր. 82) սերկիրն Տարոնոյ Մուշ կոչեցեալս, ուստի և Տարոն լեռը, որ է Սիմ կամ Տալիստ, այժմ, ինչպես տեսանք, Մշու լեռ էլ է անվանում:

Հովհան Մամիկոնեյանի մեջ (եր. 12) Մուշեղ Մամիկոնեյանը հիշվում է իբրև ստէր Մշոյ և Խութայ, Տարոնոյ իշխանն և Սասնոյս: Մուշ այստեղ հարկավ թողաքն է հասկացվում: Ուրեմն Խութ, Տարոն և Սասուն միացած են մի փշխանի ձեռք տակ: Մուշն առանձնապես հիշվում է, որովհետև մայրաքաղաքն է: Նույն գրքի մեջ (եր. 15) Գայլ վահանը կոչվում է ստէր Մշոյ, Գալհարայ, Խութայ, Շատխայ և Սասնոյս: Գալհար ուրիշ տեղ (եր. 30) գրվում է Գահար, Գարհար: Ինճիկյանը (սնոր հայս, եր. 199) Մուշ քաղաքից 2 ժամ հեռու դեպի Հարավ դնում է Քարհան կամ Քարհար, ավելացնելով, սկսապես կոչեցաւ ասակս լինելոյ անդէն հանք երկանքարի: Յայս կողմն հասօրէն դաւառին (Մշոյ) ոչ պէս գիւղօրէք, այլ անկանին լեւրինէ Մշոյ, որ ի հետուն կոչէին Տարոս կամ Տորոս: Ի Քարհարն անդ է բերդ աւերակ, որ առ Յովհաննու Մամիկոնեի դրեալ կայ Գարհարս: Ըստ Յովհան Մամիկոնեանի պարսից զորավար Վախտանգն է շինում այս բերդը. «Ի վերայ լեռինն Տարոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար, քանզի անդ ոմանք զահալէժ եղեն ի վերայ անասնոց՝ կարծելով թէ հեծեալ իցենս: Այս ժողովրդական ստուգարանութեամբ պարզ ցույց է տալիս, որ բերդի անունը Քարհար է եղել և թե Գարհար, Գահար, Գալհար աղավաղված ձևեր են:

Այս Քարհար բերդից, տրի տեղն է վահան Մամիկոնեյանը, դեպի Հարավ ընկնում է Շատախ, ավիճակ քարերեր. տեղի անտառ և ջուր քաղում, ի հարաւոյ Մշոյ, իբր 6 ժամու հեռի ի նմանէ, և ի Հլախայ Սասնոյ, ի վերայ բարձրագագաթ լեռանց, որք կոչին Սև սար: Երբեմն անկանի ասունց տերութեամբ պեյլին Մշոյ և քաղում անգամ ընդ տերութեամբ պէլին Սասնոյս (Ինճ. Նոր հայս, եր. 200): Շատախը Հովհան Մամիկոնեյանի մեջ (եր. 31, 54—56) կոչվում է և Արշք, որ տեղի իր առանձին իշխանը, բայց սա ևնթարկվում է վահան Մամիկոնեյանին, որ է, ինչպես տեսանք. Մշո, Քարհարի, Խութայ, Շատախի և Սասնո տեղը: Սասունն ուրեմն միացած է Տարոնին և զանվում է Մամիկոնեյանների ձեռքին: Եվ քնականաբար սասունցիները մասնակից պետք է լինեին պարսիկների դեմ Մամի-

կոնյանների տված կոփվեցրին, Յովհ. Մամիկոնյանի մեջ (եր. 23) գրու-
նում ենք. «Երկու հարիւր ար աշտենաւոր թողնալ ի Սանասայ ի Սծմակն»,
որ ձեռագիրների մեջ ընթերցված ունի. «...ի Սասնայ ցնդէն ի Սծմակն
թողոյր»: Աղալաղված քնազիրը պիտի վերականգնել, «...ի Սանասարայ
ցնդէն», որով սասունցիներն են հասկացվում: Այստեղ հիշված Սծմակն
անշուշտ մեր վեպի մեջ եղած Սծմակա քիթն է:

IX դարու կեսերին Մամիկոնյանների տեղ Տարսնում Բագրատունի-
ներն են իշխում և Տավրոսի բնակիչները, ինչպես հետո կտեսնենք, են-
թարկվում են նրանց և իրենց տեր ճանաչում: Սասունի և Տարսնի այս
հարաբերությունը հրեում է և հետագա դարերում, նույնիսկ մինչև XIX
դարը՝ քրդական տիրապետութեան ժամանակ: Ասել չի տպել, որ Տա-
րսնը փոքր գաղտային երկիր՝ ավելի հաճախ է ենթարկվել օտարագոյի-
ների, մինչ ամուր Սասունը երկար պահել է իր հայկական անկախու-
թյունը, թայց այսպիսի դեպքերում էլ անկախ Սասունի իշխանները, ինչ-
պես հետո կտեսնենք, Տարսնի վրա նայել են իբրև իրենց երկրին: Տա-
րսնի և Սասունի միացյալ իշխանութիւն ժամանակ, հարկավ, առաջա-
կարգ դեր խաղացել է Տարսնի իր Մուշ մայրաքաղաքով: Սասունն եղել
է միայն Տարսնի գավառներից մեկը: Սասունի այսպիսի միացումը Տա-
րսնի հետ ցույց է տալիս Սասունի Գավառ կոչումն մշեցիների մեջ. «Մշե-
ցիք զտանիկ քուրդս Սասնոյ կոչեն սասնցիք, իսկ զհայս Սասնոյ կոչեն
գաւառցիք» (սեւր հայ. 3, եր. 200, 205.): Այս Գավառ կոչումը Սասունի
համար գտնում ենք և մեր վեպի մեջ. Սրբանեստյանցի պատումի սասցողը
Գավաթի Ս. Նշանի համար պատմելիս՝ ավելացնում է. «Ե՛մկա լէ ըն սուրբ
Նշան՝ հանդ է ի Գաւառ՝ Զորկա տուն»: Կարծում ենք՝ Սասունի այս Գա-
վառ կոչվելը պետք է հասկանալ մտևե Լովհաննես վաթողիկոսի մեջ (եր.
67) «Գավառս զործածութեանը Սասունի համար: Բուդան սասպատակ
զգօրս իւր սիտէ ընդ ծործորս ի լերինն Տարսոսի և ընդ երեսս Գաւառին»:

Ինչպես էլ ընի, պարզ է, որ Տարսնն ու Սասունը, վերջինիս հետ
վերջրած և իոյթ ու Ետտախ, անբաժան գավառներ են և պատմութեան
ընթացքում հաճախ միացած միևնույն իշխանների ձեռի տակ: Սկզբում
արդ միացյալ գավառներից Տարսնն է գլխավոր դեր կատարել, փակ հետո
Սասունն ավելի երկար է պահել իր հայ անկախութեանը, փակ Տարսնն
ենթարկվել է այլազգիներին: Հետևաբար մեծ ճշտութեամբ պատմական
հիշողութեան է պահել մեր վեպը, որ Սասունի տերերի կալված է դնում
Սասունի հետ և Տարսնը, որը, սակայն, Սասունի իշխանութեանից խլում
է Մարամիկիցը կամ Բագրատու խաչիֆան:

Նույնպիսի հին հիշողութեան պահել է վեպը նաև Ճաղաղըրի համար,
որ հետքը կուլվում էր Հաղալանք: Այս գավառը Զորբորդ Հայթի մեջ է
և ըստ խորհնացուցու Պատմութեան (Բ. ը., Գ. լս.) սահմանակից է Տարո-
նի արևմուտքից: Ըստ Լովհան Մամիկոնյանի պարտիկներն արևմուտքից
գալով Մուշեղ Մամիկոնյանի վրա՝ Հաղալանքով մտնում են Տարսն (եր.
15): Տարսն ու Հաղալանք, ինչպես և Սասուն ու Ետտախ, միարանում են

պարսիկների դեմ և հնազանդում Վահան Մամիկոնյանին (եր. 30), Վահանի կոխմանը մասնակից է Հաշտենից իշխանը, և կոխմը մասամբ Հաշտենյանքում է լինում (եր. 44, 46, հտն., 52, հտն.)։ Ըստ Մատթեոս Ուռուսեացու (հատ. ԶԶ, ԺԷ) XI դարում այս Հաշտենյանքը կամ Ճապաղաչուրը ենթարկվում է Սասունի իշխան Քոռնիկ Մամիկոնյանին, որ ամբողջ Սասունից դորք ժողովելով գալիս է Ճապաղաչուր, կարծելով թե Փիլարտոս բռնակալը պիտի հարձակվի իր վրա։ Քոռնիկի ձեռին է Աշմուշատ քաղաքը Արածանու վրա, և նա պաշտպանում է այլազգիների դեմ Տարոնի գաղտարանակ հայ ժողովրդին։

Ճապաղաչուրն ևս, անշուշտ, ինչպես և Տարոնը, միշտ չի մնում Սասունի իշխանների ձեռին, և վեպը հշտումյամբ այս հիշողությունն է պահում Սասունի իշխանություն հյուսիսային սահմաններ դնելով Ճապաղաչուր, Մորադ քրի բերան և Մովսասար, իսկ հարավից և հարավ-արևմուտքից Բաթման կամ Մուրադ և Անդղա ձոր ու դեռ։ Գրանք այդ երեք ծայրերը, որ վեպի մեջ վեճի առարկա են Սասունի իշխանների և Մարամիկի միջև կազմում են Սասունի բնական ծայրերը։ Վերջենք, օրինակ, Հանքթամուրի հարձակումը Սասունի վրա 1394 թ., և նույն սահմանները կգտնենք։

Ըստ Քովմա Մեծորեցու, այդ ժամանակ թուրքմաններն էին տիրում Տարոնին ու Ճապաղաչին. նրանց սնեթարկվում է և Սասունը իոյթի հետ։ Լանքթամուրն Ամիդից հանապարհ ընկնելով՝ անցնում է Բաթման կամ Մուրադ և ապա Սասունի հարավում դորքը երեք մասի բաժանելով՝ ձախ թևը Սասունի արևմտյան կողմով դեպի Ճապաղաչուր է ուղարկում՝ այնտեղից հարձակում գործելու, աջ թևը Մալնո ձորով դեպի Տարոն է անցնում՝ իոյթից հարձակվելու. իսկ ինքն ուղղակի հարավից է սկսում բարձրանալ (Տումաշեկ, Սասուն, եր. 50)։ Նա ինքը աստիկ ջարդ է կրում, գլխավորապես տեղի ամբողջունից տուցտից, և ինչու՞մ Բաղեշով դեպի Տարոն անցնելու։ Սասունի ջարդվում է Ճապաղաչում և ձախ թևը թուրքման Ղարա Մահմադից, Այդ ժամանակ Վանա լճի հյուսիս-արևմտյան կողմի ըլուտը հայերն փախելով հավաքվում են Սուրբ Կարապետ։ Քուրքմանները հայերին կողոպտելուց հետո՝ մնացած բաներն ու բազմությունը, իբրև իրենց սեփականությունը, սեռտան յերաշխի յամիրայն իսթիայ Նեխ Նարաֆ անունա։ Սա ժողովրդին անց է կացնում նկիրատ գետը ու բերում է Հասգեղ գյուղի մոտ, որ հանի սի լեռան իսթիայ և Սասունյ իբրև մի ամուր տեղի ժողովուրդը չի ուզում գնալ, թայց բռնությունը հասնում են շրեղ զուռիտը լեզվին իսթիայու Իսկ թուրքման Փիր Հատաթայն, այսինքն կանքթամուրի տորքերը վրա են առախա, թուրքմաններն ուղղում են առանց կովի սելանել ի Մովսասար՝ և զնալ ի լեռան Մարաթուա։ Այս

6 Անապիներն ունին ժողովարան կամ ժողովարար. Արվանդությունը (Գործ-Քրոջ, էր. 13., Ման.) հաջողությամբ ուղղում է Մովսասար, որ Անաթից կամ Ղազարու վանքի վերև է և Մարաթու լեռան իրթալու հանապարհեա։

լի Հաղորդում ներսնց, և ստիպված ընդունում են մարտը ՍՄարայից առաջ մի եղ մատաղ են անում հանուն Ս. Առաքելոց և ապավինելով թի սուրբ ուխտն Ղազարու, ատում է սականստեօ Մեծսրեցին, Հաղթում են Չաղաթային, որի զորքերը սյանթիւ և յանհամար վախից ի վայր մղեալ զահաւիժ եղեալ սատակեցան: Իսկ քարք զաւառին Սասնոյ և Խութայ հաւատացեալք և անհաւատք յաղզին Մարտցո աչինքն քրդաց, կողուպտում են Չաղաթայի զորքերին: Լանթթամուրի աջ թևն աւրեմն շարղում է Մովսասարի և Խոյթ շեռան վրա: Մի օր հետո դալիօ է Մուշ և ամոթապարտ Լանթթամուրն աւ թաղաքի ամիրայից պահանջում, որ իրեն տանի թուրքմանի վրա, որպեսզի վրեժ առնի: Բայց ամիրան պատասխանում է. «Ոչ է կարողութիւն ընթանալ մարդոյ դհետ նորա, զի նշեալ է ի յետն Մարաթու, և եթէ երթայցե՞ս՝ մեծ և անպատմելի վնաս դործէ քեզս: Եվ Լանթթամուրը համողվելով վերադասունում է Բաղեշ:

Այս անառիկ Մարաթու շեռք վեպի թեաներիկ Մարաթուկն է, որի վրա եկող Կողրադինն ասում է. «Մենք շնք կարող մտնել Սասուն. Սասունն քար ու կապան է», և այս Հարձակման կեանքը՝ Բաթմանա կամուրջ, Ճարպաղչուր ու Մովսասար՝ նույն վիպական ծայրերն են Սասունի:

184. Սասուն քաղաք և բերդ:— Սասունի իշխանության կենտրոնը վեպի մեջ՝ է Սասուն քաղաքն ու բերդը, որ հաճախ հիշվում են իբրև գործողության վայր: Սասուն քաղաքի նկարագիր լկա վեպի մեջ, Միայն գիտենք, որ այդ քաղաքի առջինց մի մեծ գետ է անցնում, որի վրա Մըհեբը կամուրջ է կապում: Քաղաքը շրջապատված է պարիսպներով, շորս հատ էլ գունն (դարգահ) տւնի, ինչպես միջնադարյան ֆեոդալական քաղաքները: Հարկավոր ժամանակ երբ թշնամին վրա է տալիս, կամ քաղաքին մի վտանգ է սպառնում, դարգահները հողում են իշխանի հրամանով, որպեսզի դրսից ներս մտնել շարողանան: Քաղաքի մոտ շինված է մեծ ամուր բերդը՝ իշխանների փնակության տեղը:

Սասուն բերդ և քաղաք իրոք եղել է: Սասուն գավառը, գրում է Ինճիւրանը (սնոր հայ.», իր. 201), ժուճի բերդ գորատը նայնպէս Սասուն կոչեցեալ ի վերայ բարձր լեռին: Այժմ դեռ մնում են Սասուն բերդի ավերակներն բուն Սասուն կողմած գագաւառկում, որ Մշո արևելյան կողմում է, ութ ժամ հեռավորոթյամբ, սցից-ցից, սրածայր և տաշլամա քարերով պատածն մի տեղ: Դեռևս տեղ-տեղ կան կիսախարխուլ պարիսպները: Դա ԵՊայիթ Մհերի բերդն է, որ գտնվում է երկու կողմից մի խրամատ լանճեղղ սգեղածիժաղ ըլլալի քագաթի վրա, որի շուրջն ու ստորոտը խառնիխուռն թափթփած կան այդ գավառի գլուղորայքը: Բերդի ստորոտն աչ ու ձախ քերթով վ՛անցնին երկու գետակներ, որոնք կը սկզբնավորին Մովսասարի փեշերեն և բյուրավոր գալարումներով շուրջառնեալ մտրան՝ կը շտապեն դեպի Փրե Բաթմանա (Արձագանք, 1894, № 147):

Դա հայ դուրացազունների բնակավայրն է եղել ըստ ավանդության, Սասնա բերդը: Դա վեպի Սասնա տունն է, Զոչանց տունը, կամ Զոչ տունը:

Բերդի հարավ-արևելյան կողմում կար Փաղկիկ գյուղը, վիպական Սասնա քաղաքը: Բերդից դեպի Փաղկիկ տանում է մի սալահատակ դեղեցիկ ուղի: Ելնա սալահատակից, երկիրն անկարող էր իր հողն մակարդակի վրա անվնաս ընդունել ու պահել՝ քան զփիղ հաղթանդամ, քան զգոմեշ սեծիլ և քան զառուծ արի ու կատաղի Դավիթ ու Մհերին այլև ճոան Վեգոյի, երբ Նոքա իրանց հրեշտականեան զողտղիկ ու շքնաղ, քայց քան զլեռան մի հսկա, սիրուհու հետ զբռնելու կ'ելնեին: Վերջապես երբ ոչ մի քար չեն կարողանա գտնել, որ երկրի մեջ լիարվի իրենց ստաբր, կը վեճեն այլևս չարդու (երկանքար) և լախմախ (որձաքար), դիլու քարերեն (զայլախազ) մի լայն ու գեղեցիկ սալահատակ ուղի շինելու: Այս ուղիով նրանք օրը երկու անգամ, առաջոտ և երկու՝ զնացել են իրենց զովասուն զրոսավայրը, որ եղեմյան դրախտի պատկերատիպն է եղել և ուր պակասել է միայն զհավու կաթն, սերկնուց սինա և սոճի փարդառ (սԱրծաղանք, նույն տեղում):

Սասնա բերդի և քաղաքի հիմը դնում են ըստ վեպի մի սվերունի սարյա մեջ կամ շուր յարանի տեղում: Ազնանց տոհմի նախնիները՝ երկու եղբայր՝ Սանասար և Բաղդասարը (Ասլիմելիք, Արամելիք), Քաղաքի մեջ, որ առաջ են շինում, բնակեցնում են իրենց ուսմիկ ժողովուրդը, ապա մեծ-մեծ քարեր են կրում, ավարտում են բերդը: Եթարի սան քարի առն զարկեցին, ձագ ֆալեցին ու ֆամամելին զբերդու: Բայց այդ բերդը կամ Զոչանց տունն այնքան մեծ է, որ առավոտը դռնից դուրս եկողը մինչև երեկո հազիվ պտտում է շրա քուրդը: Բերդի մեջ շինում են և մի փոքր եկեղեցի:

Բերդի Աստուս անունը վեպի մեջ այլևս Սանասար անունով չի բացատրվում, ինչպես Թովմա Արծրունու ժամանակ, այլ բերդի շինության հատկությունով: Եթարի սան սուն էք պարկել, լորտա անուն տ'եղնի Սանասուն, Սասուն: Պարզ է, որ այս ժողովրդական ստուգարանություն այն ժամանակից է գալիս, երբ հին Սանասուն(ք) անունը դարձել էր Սանասուն, որից նոր առաջացել է այժմյան Սասուն ձևը: Դա մի անցման ձև է, հավանորեն XII—XIV դարերում գործածված:

185. Բնակիչները:— Բերդի անվան բացատրության համար վեպի մեջ կա և մի ուրիշ ստուգարանություն, որ ավելի նոր է: Անուն դեռ չի քերդի մեծությունն առաջ սարսելով, ասում է. սէս տուն չի, սասում իս: ԵՏեսավ տը մեծ-մեծ վարեր են բերն ասավ. սէս սասուն ա. էս ինչ քարեր եք դիր. սասուն (ասլանելի) քարեր առ. կամ սթանի՝ սասուն բերդ միս, քացականդում է անուն դեռ: Այս ստուգարանությունը ուրեմն քերդի Սասուն անունը կապվում է քարսեչա քարի հետ, իսկ Սասուն ձևը որ գործածական է շատ կողմերում Սասունի համար, նույնանում է

ասասում—ցասումն բարի հետ, որով և ցույց է տրվում բերդի մեծութունն ու առհասարակ աստուծոցիննի ահ ու ցասում լինելը շրջապատի բնակիչներին համար իմ խնայական պատմութեան ընթացքում աստուծոցիննի շատ անգամ են ահ ու ասբասախ, ցասում-պատուհաս դարձել:

Իրենց այս հատկութիւնը պահում են աստուծոցիննի մինչև XIX դարը, երբ, գրում է Ինճիկյանը. «Բնակիչք Սասնոյ էն քուրդ և հայք, որոց երկուքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, առ յաղթանդաւթ և քաջափրօք, ձրենչիք ի կորսովոթիւն մարմնոյ, ահեղք ի պատերազմի. Դրոց միայն ատուարութիւն հերաց՝ մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցանէ զտեսողսն, որք ի ակզբանէ անտի եղնի ինքնագլուխ, ոյ տմեք ծառայելով. և տլ քք ի փաշայից կամ բելից կարող պտաւ զնոսա նուանի սակս զօրութեան ուժոյ սոցա և սակս ամուր վայրացնս (սնոր հայ. ք, եր. 200):

Վեպի մեջ աստուծոցիք միայն հայ են, և նրանց ահարկու լինելն երեւում է շատ գորեղ կերպով: Թշնամիները նրանց հոտն աննելով սարսափում են: Եվ այ՛, էսի Բաղդասարի խուտն ի ճկով, կը սպանի. Սասումս տան խուտն իք, ասում է Կուպ զեր հանդիպելով Մհերին և ահից հիվանդանում է, Ոս տր այնքան տե՛ժ ուներ, որ մի ձեռով սղաղցի քար կը թալէր, մեկ սովուր ճամբախ կ'երթար: Եվ ի՞նչպէս շարսափեն Թշնամիները, քանի որ դիտեն, թե այդ քար ու կապան տեղում խնչպիսի մարդիկ են ապրում:

Մարդ կա էն երկիր՝ քաղանական...

էն ճժեր, որ նոր էլած՝ դիվանական...

էնոնց խոտերն էն կծան...

Իրանց նետ կա քանց ձիթիցի գերան...

Ինչ կը զարնեն մարդու լան,

Բերան կը բացվի քանց պատուհան:

Այս լեռնականներին իրենց երկրի բնութիւնն և վարած կյանքն ու պարսպմունքն է դարձրել գործը:

186. Ուրիշ վիպական տեղեր:— Սասունից հետո վեպի մեջ գլխավոր տեղը բռնում է Մըսրը կամ Մսրտեղ (դեխ, դեհ, կողմ), Մսրա ֆաղափ: Ո՞րտեղ է այս երկիրը և ի՞նչ է հասկացվում այս անվան տակ: Վեպը քաղական անորոշ տեղեկութիւն վ տալիս այս մասին, իսկ վիպասաններն իրենք, քացի մի երկու վերջին ասացողներին, ոչինչ չգիտեն:

Մովանձտյանցը գրում է. «Մըսրը գուցե Մոսու կամ Մոսուլ լինի, որ հավանականութիւն կը վերցնե, և Սասնա տիրապետութեան սահմանն շատ հեռու չէ» (Գրոց ու բրոց, 129): Սակայն, խնչպէս կտեսնենք, վեպի մեջ աստանձնապէս հիշվում է Մուսուլ՝ աստանց շփոթվելու Մսրա հետ, և այդ ննթաղութիւնը համապատասխան չէ նույնիսկ իր՝ Մովանձտյանցի պատմիկ նկարագրին, որից պարզ երևում է, որ Մսրըր Հայաս-

տանումն է և սահմանակից է Սասնո տերութիանը, հասկապես վերջի-
նիս հյուսիս-արևմտյան կողմում։ Մտրամելիքը գրավում է Գավթի հոր
մուկը, որ Սծնակա գլխնն կ'իրթար հար քի Սեղանարու գոտինն և երբ
ևս Գավթի վրա է գալիս, բանակ է դնում Անդանսարու գոտինն։ Մտրն
ուրեմն ճապաղչրից արևմուտք է ընկնում։

Բուրո պատմվածքների մեջ ևս Մալքը սահմանակից է Սասունին.
սն ու էդիք հող ու ջրի շիրիզ ենք,—ասում է Գավթի Մտրամելիքի հա-
մար, մեք մեջ վեճ բացվավ ու կոխվ էրեցինք, էդ ինձի թրով զարկեց,
հպա ես լզարկե՞մա։ Եվ Գավթի վեպի առաջին ճյուղը ամբողջ այդ հող
ու ջրի վեճն է։ Մտրամելիքը Մհերի որդիներին պահելու վարձ է առնում
Ճապաղչուրն ու Մովսասարը, կամ հասնչտակում է սասունցիներին։ Այս
տեղերում իրենց հասերն են արածեցնում Մտրամելիքի (էլը), որ Գավթին
Շանալում ու պատվում են իրեն իրենց հին աղաքի տղոտն։ Ուրիշ պա-
տումով Մտրամելիքի (էլն) արածացնում է հոտերը Մովսասարի մյուս երե-
սին, այսինքն հրոսիսային լանջերին, ուր առաջ սասունցիք էին յայլազ
գնում։

Այսպես տրեմն Մտրամելիքի քուն երկիրն ընկնում է Տավրոսի հյու-
սիսային կողմը՝ Սծնակա քթից, Մովսասարից, Անդանսարից ու Ճապաղ-
չրից գեներ։ Բայց նա իրեն տեր Բալուս գաշտի և Տարունի մի մասի՝ զրա-
վում է Ճապաղչուրը, Անդանսարն ու Մովսասարը։ Մի քանի պատումնե-
րի մեջ Մտրամելիքն այս կողմերից էլ հենց հարձակում է դործում և
Մուրազ գեանն անցնելով գալիս Ասանտ վրա։ Հյուսիսային-արևելյան կող-
մում Մտրամելիքին ներթարկվում է և Տարունի սահմանակից իշաթը։

Մյուս կողմից Սասնու մասին գրեթե տեսանք, որ Մտրն ընկնում
է Սասունից հարավ, և լեզվի սահմանն է Բաթմանա կամուրջն ու գեպի
արևմուտքն՝ Անգղա ձորը, հին Անգեղ տան գավառը, ուր և Անգեղ բերդը,
այժմյան Ազո կամ էգիլ կոչված գավառակը, որից գեպի հյուսիս Բալուս
գաշտն է ընկնում։ Կենշանակի՝ Մտրն ըստ վեպի մի իշխանություն է, որ
չբազմատում է Սասունի յարձրությունը լորս բալտրից, և նրա մեջ են
Բալուն ու երբեմն Ճապաղչուրը, Տարուն ու իշաթ, Սասնու հարավում
Արզնի գաշտը և այլա էգիլ գավառակը։

Մտրա իշխանությունը սակայն միայն այդքանը չէ՝ նրա մեջ են ըստ
վեպի՝ Գիարրեքի, Հարուրա քաղաք և Հալեքից գեներ՝ Մտրա քաղաք։ Այս
իշխանությունն մեջ է և Մաքսամադին, այսինքն Մեքքա, Մեդիանն և վ
վերջապես Մտրամելիքի համար գտնում ենք. ս էդի Մտրա մեղիքն է, Հնդա
սահիրեն է, ու Բաղդադու խաչիքնն է։

Այսպիսի մի ընդարձակ սահմանով տերությունն, որ շրջապատում է
Ասասունը և որի մեջ են՝ Գիարրեքի, Բաղդադ, Հալեք և Մեքքա, Մեդիանն
և նույն ինքն Մտրա քաղաք, շատ պարզ է, որ խախտյա Մտրա, այսինքն՝
Եգիպտոսի տերությունն է՝ էյուպյան կամ, մեք պատմագիրներով, էյուպյան
հարստության ժամանակ (1169—1250 թթ.), և Մտրա մելիքները եգիպ-
տոսի մելիքներն են, ինչպես կոչվում են այդ թագավորները։ Հետո կը-

տեսնենք այդ հարստութեան մասին, երբ կգրենք պատմական հիշողութեան մասին:

Բայց ի՞նչ է Մարա քաղաքը, Դա երբեմն Հալիբից դենը, ուրեմն դեպի Եգիպտոս է երևակայվում, յերբեմն Սասունին մոտիկ: Պատումներից չի երևում թե դա մի որոշ քաղաք լինի: Եվ իսկապես էլ ուրիշ մասնաճիւղի մի հատ քաղաք չկա իբրև ամբողջ պետութեան մայրաքաղաք: Եգիպտոսում Վահրբեն է կենտրոն, Ասորքում՝ Դամասկոսն ու Հալիբը, — վերջինիս ենթարկվում է հարավ-արևմտյան Հայաստանը, — Միջագետքում Գիարբիբը, և բացի դրանից Հեջազում՝ սրբազան քաղաքներ՝ Մեքքա ու Մեդինն: Մարա քաղաք անունը թվում է թէ մի ժողովրդական ընդհանուր կոչում է Մարա իշխանութեան մեջ եղած այս կամ այն գլխավոր քաղաքներին, որոնց հետ գործ են ունեցել սասունցիք: Այստեղ այսօր միայն հիշենք, որ Մարա մելիքներն այլազգ են ու տաճիկ, այսինքն մահմեդական. Մարա քաղաքում կան մոլլա ու մզկիթ:

Բաղդադի խալիֆայութեան ատանկին տեղ է բռնում վեպի մեջ: Վերևում տեսանք, որ Մարա մելիքը Բաղդադու խալիֆա է համարվում. բայց դա վիպական շփոթութուն է միայն, հիշողութեան այն քանի, որ Բաղդադու խալիֆաներն իբրք ենթարկվել են Մարա մելիքներին: Մարա մելիքն ուրեմն, որ ժամանակով ավելի նոր է, բռնել է Բաղդադի խալիֆայի տեղը: Եստ պատմականները մեջ, սակայն, Բաղդադու խալիֆա և Մըսրա մելիք դեռ տարբեր են: Բաղդադու խալիֆան ներկայանում է իբրև շատ սղոր ու զորք ունեցող թագավոր, որ մի քանի անգամ գործ է ժողովում, գալիս մեր ազգի վրա կռիվ և հատկապես Մշո Սուրբ Կարապետի վրա, ու շատ առ առ գերի տանում: Նա տիրում է Սովասարին, որ Սասունի տերերը խում են նրանից, և նա Սասունի վրա է գալիս և ավերում: Բաղդադում թագավոր նստում են այս հզոր խալիֆայի թոռները, որոնք սակայն հետագայում վեպի մեջ թույլ ու վախկոտ են պատկերանում: Ուրիշ պատումներով այս խալիֆայի տեղ նստում է Բաղդասարը կամ իր եղբայրը, որ և իբր թէ ջինում է Բաղդադ քաղաքն իր անունով. իսկ փոքր Մհերն այդտեղ Բաղդասարի գերեզմանի վրա շքառասուն խոբան ժամ է շինում Սուրբ Սարգիս անունով (որ մինչև այժմ կա բառ վեպի): Վերջին պատմվածքները ուրիշ ավանդութունների հիշողութեան են, եկած կցված Բաղդադու անվանը, բայց Բաղդադու խալիֆան իր արարքներով, — ասել չի ուզել, արարածն արքայպետութեան և հատկապես Բաղդադի խալիֆայութեան (750—1258 թթ.) հիշողութեան է: Այս խալիֆայութեան սահմանները մեծ են: Բաղդադու անունով մեծ են կոչվել, որ սկզբում պատմված է եղել Բաղդադի խալիֆայի համար, մեծ մասամբ շուր է եկել Մարա մելիքի վրա: Մի քանի պատումների մեջ դեռ, սակայն, Մարա մելիքի այս կոչվել կրկին պատմվածքներ ունի, թե Բաղդադի խալիֆայի և թե Մարա մելիքի համար, և այս երկուսը վեպի մեջ ևս ժամանակով մեկը մյուսից հետո են գալիս: Երանելի տրեխը, որ Բաղդադու խալիֆին սպանեց, ընտու թագավորու-

թյունը վերջացրեց, Մարը մեկիք կար, Մարա քաղաքին էր նստում, էդ Մարա մեկիքը որ լսում ա, թե Բազազա խաչիֆը վերջացեր է, Գառնիկ որբիկը մեռեր է, եկավ, Մովսսար տիրեցա:

Մեջագիտքի քաղաքներից վեպի մեջ հիշվում են և Մուսուլ ու Ջրի-րու ֆաղաֆը ՎՋիրու Շառիչ, այսինքն Տիգրիսի վրա: Այս քաղաքի հետ, որ հարևանցի է հիշվում, կապված է Մհերի մի սիրապարծությունը: Գետը մի քանի անգամ հիշում, ավերում է քաղաքը, բայց Մհերը մի ահագին քար շալակում, բերում, ձգում է քաղաքի քամակը գետի մեջ, որ երկու էյուղի է բաժանում, և այլևս չի ավերում քաղաքը: Բայց ասում են. «մեկ ժամանակ տ'էլնի Ակն Անանին, տ'ավերի քաղաք Ջջիրին: Գետի մեջ իր ձրած քարի վրա Մհերը շինում է թերջա բալաքը: Իսկ Մուսուլ քաղաքը իր թագավորով մասնակից է վեպի բուն գործողությանը: Երբ Գավիթը Գյուլջիստանից վերադառնում է, Մուսուլա թագավորը մարդ է ուղարկում և կոխով պահանջում Դավթից: Կովի մեջ Չմշկիկ Սուլթանն սպանում է Գավթին, իսկ Մհերը հոր մահվան վրեժն առնում է Մուսուլա թագավորից և սպանում Չմշկիկին: Մուսուլի այս թագավորութունը հիշողություն է հավաստյալ Մուսուլի Մելլունի Ջանգանների ամբարկու-թյան (1127—1234 թթ.), որոնց մի էյուղն առանձնացած կազմում է Ջջիրինի ամբարկուցիությունը (1180—1250 թթ.), որ և ոչնչանում է թագա-րաների արշավանքների ժամանակ՝ ինչպես և Բազազի խաչիֆայությունն ու Մարա մեկիքների էսլյան հարստությունը Միադեպոսում և Ասորիքում: Մուսուլի թագավորությունը, վեպի մեջ շփոթվում է իլյաթի հետ:

Խլաքա երկիր, Խլաքա քաղաքություն, Խլաթ քաղաքը Նեմրուժ օտարի ստորոտում բավական հաճախ հիշվում է վեպի մեջ, Խլաթն մի թագավորը, Մեթուն անունով, ժամանակակից է դուրս գալիս Բազազի հզոր խաչիֆային: Նրա մոտ են սպաստանում Մանասարը և իր եղբայրը: Այս քաղաքի վրա է հարձակվում Մարա մեկիքը և հպատակեցնում է իրեն: Այս քաղաքի խշանի աղլիկն է Խանդութ խանում, որ Մարա մեկիքի նշանածն է, որին և առնում է Գավթիթը: Ուրիշ պատմենքով Խլաթի իշխանի աղլի կնոջ հետ սիրաբան հարաբերություն է ունենում Գավթիթը, և երբ սա Խանդութին առնելուց հետո անցնում է Խլաթի մոտով՝ խլաթցիները գնան ան դուրս գալիս ու կոխով պահանջում և ապստովում է Գավթիթը մի աղլիկանից կամ իր սիրականից, Չմշկիկ Սուլթանից: Մհերը հոր վրեժն առնելով՝ ավերում է Խլաթը: Մի պատմով իրրե Խլաթի տեր հիշվում է Ջենով շոխանը, Գավթի քեռին. և Մհերն հորից խուղելով գնում է Խլաթ:

Խլաթը մեր պատմության մեջ արաբական շրջանում մեծ դեր է խաղացել, առանձնապես XII դարում, երբ սուլթանին թագավորութուն ունեցր Շահի Ալմեն կոչված հարստության ժամանակ (1100—1207 թթ.), որ նվաճում են Եգիպտոսի կամ Մարա էսլյան մեծքցները և դրա հիշողությունը պահել է վեպը:

Խալթի Եահի Արձնեների իշխանութիւն մեջ է եղել և Մանազկերտը, որ վեպի մեջ հիշվում է Մանկիւրտու բերդ անունով, որտեղ նստում է հայ իշխան Քաթողոս անունով, որի ազդիկն անունով է Մանասարի որդի Մհերը, և աղչիս հետ հարսնադրեր գնում Քեռի Քորոսը, Գալթի քեռին: Հետո կտեսնենք, որ Քեռի Քորոս և Ձենով Հովհանն իրար փոխանակում են. իսկ Ձենով Հովհանն իբրև Գալթի քեռի Խալթի տներն է: Այս երկուսն ևս, սակայն, չգիտեմք են Կապուտկողա թագավորութիւն հետ:

Կապուտկող, հին անով Կապուտողն, կամ Անձաքիտը կամ Անձաքիտը ար գտնվում է Վանա ծովի հարավային ձգերքում, Ռշտունիքի մեջ: Կապուտկողի թագավորն ըստ վեպի հայ է. նրա մտտ ապաստանում են Սանասարն և իր եղբայրը, որոնք և նրանից ստանում են քառասուն տուն ու գալիս, շինում Սասունը: Արամեյիքն անունով է Կապուտկողի թագավորի աղջիկը, որի հետ Քեռի Քորոսը գնում է Սասուն: Ուրիշ պատումնեղով Կապուտկողի թագավորի աղջիկն է Խանդուբը: Մի պատումի մեջ, սակայն, Խանդուբը խալթի է, իսկ Կապուտկողի է Խանդուբի ուսիքը (Չժշկիկ Սուրբանը), որ ապանում է Գալթին:

Կապուտկողա թագավորութիւնը, ինչպես կարծում ենք, հին Ռշտունիքի իշխանութիւնն և Վասպուրականի հայոց Արծրունյաց թագավորութիւն հիշողութիւնն է, որ մտել է վեպի մեջ: Այս ժամանակի հիշողութիւնից են մնում վեպի մեջ և Ոստանն ու Վանա բերդը:

Ոստան գոյուքը Վանա ծովի հարավային սահին է, Ռշտունիքի մեջ, Վան քաղաքից հարավ-արևմուտք: Մտի քաղաքուան գլխին շինված է հին Ոստանա բերդը, որից դեպի ծովը հանում է Վաղարշ փոքրալ ի նախնեաց ընդ քաղաքայն վիճ լեռին անհնարին աշխատութեամբ՝ շրջապտոյտ և անձուկ քոթ, մանասանդ ի վերին կողմն. ընդ որ մի միայն հեծեալ կարէ անցանել, և այն ի տեղիս-տեղիս հետակ դնալով, այս անձկադոյն վայր կապանին տեղ իբրև մի ժամ, իսկ արտուն սակաւ առ սակաւ լայնանայ միջնել ի ծովն. և այսպէս անհնարին է յալամ կողմանէ ունել թշնամոյն մուտ ի նախնի բերդն, զի մին կարող է ընդդէմ կալ հազարաց յ (ստոր հայ. ք, եր. 159): Ռշտունյաց Ռատանը հանախ կարեւոր դեր է խաղացել հատկապես Արծրունյաց թագավորութիւն ժամանակ և հետո: Բերդը շինելով Գալթի Արծրունին, Վեպի մեջ հիշվում է Ոստանա կապանը, երբ Մհերն տալում է Վան դնալ, Ոստանա իշխանը սկսալ է թալ զՄհեր կապեց: Մհերն ազատվում է, իսկ ձին մնում. քայց հետո գալիս, ձին ուլ ազատում է:

Ոստանի հարավ-արևմտյան կողմում, լեռան զառիվայրի վրա, Ոստանին մտտիկ է և Փաբաղաշտ գոյուքը: Երբ Գալթի թագաւորի մտտից գնում է փահլիճանների վրա, Խանդուբը պարսկերում է Փաբաղաշտ լեռնալ կալիւու. Գալթիքը յի կատարում այս հրամանը և վառանգից ազատվում է Ձենով Հովհանի ազդարարութեամբ:

Վեպի մեջ ավելի կարևոր դեր ունի Վան քաղաքը, որի բերդի հիմք ձգում է Քաթողոս: Մհերն աշխարհից Լանձրացած գալիս է Ոստան և

այս ֎անա քաղաքը ֎անա քարի տերն ևս թշնամությամբ է վարվում և շի թողնում Մհերին այդտեղ մնալ: Եվանա քար մկա էրկու թարանչա (սանդուխ) կա, կ'ասեն Քյուրիկ Զարուու ուայց տեղն ին: Մհերը ետ է դառնում և մոր գերեզմանից հրաման ատանալով՝ նորից փաշիս է վանա քաղաքը: Երբ հասնում է վանա դաշտը տեսնում է սմեկ ագոավ կեր, կը խոսեր: Տեսով վերադորում է ագոավին, որ թռչում, մտնում է մի քարայր: Մհերը ձին քշում է անտից, մտնում է այլը և էլ ետ շի դա- նում: Ընտ ոտը թաղվում է հողի մեջ, դուռը փակվում է, և անտեղ մնում է մինչև աշխարհի վերջը: Են դիմաց կ'ասեն Ագոավու քար: Դա կոչվում է և վանա քար, Աքրփու քար, Ակոսփու քար, Շադրազու քար, այլ և Տոսպան Բլուր, որ է Մհերի այլը կամ Մհերի դուռը և այլն:

Ակորին վանից հարավ-արեևց մի լեռ է, որի դիրին կա ավերամ- րարձ քար մեծ, զոր կոչեն Ակորի քար, որոյ մէջն է դադարկ քարայր: ունի և քարեղէն դուռն փակեալ մեծ յոյժ, առ որով երբեմն երբեմն հո- սի շուրճ (սնոր հայւ, 143), իսկ Արմանտայանցը նկարագրում է. Եվանա- րեքոցն դեպ յարեևչս հայկելով Այգեստանեայց հրաբխակողմը փոք- րիկ լեռնապատի մը կա, տրո արևելյան զուխը կ'ըսվի Ջրմփզըմփի մա- դարա, արևմտյան ժայրը Ագրփի, և մեջտեղը Մհերի դուռը... Զրմփզըմփ մադարան քարայր մի է ընդարձակ... Մհերի դուռը ամենաչեղջ քար է, զոր տաշն և կոկեր են մեծ դուռն ձևով և վրան քեծոագորքը դրած են... Մհերի դուռն վերին սեղուր մը կաթ-կաթ կը ծորի: Ըվ կ'ըսեն. Եվանա քար և իր ձին Աստուծո հրամանով փակվեր են այն տեղը: Այս սև քարը Մհերի ձին շեռն է (Մթոց տւ բրոց, 132, հտն.), իսկ Շահրադին անգր- փիի դեմ է, ուր և այգիները (Սրճտ., Մանանա, եր. 82):

Ըստ մի պատումի վանա քաղաքի փաշայի մոտ են ապաստանում իրենց հորից փակած երկու եղբայրները: Արմանտայանցը (Մթոց տւ բրոց, եր. 111) վարադա դաշտի մեջ դնում է Պղնձն քաղաք, երևի ավե- րակի անուն: Անշուշտ այս է վեպի մեջ հիշված Պղնձն քաղաքը, որի թա- գավորի աղջկան առնում է Մանասարը կամ իր եղբայրը: Մի պատու- մով, սակայն, հանդուժի հայրենիքն է Պղնձն քաղաքը:

Վեպի մեջ արևոհնես հիշվում է Կաղզվան, որի ամիրայի աղջիկն է հանդուժ խանումը: Այստեղ տեսանք, կա հանդուժի բերդ և Լոր: Կաղզվանի մոտ է եղել Հին Կապուտա կամ Կապույտ բերդը, որ նույնաց- նում են ավելի Հին Արտագերս բերդի հետ, և որ առանձին դեր կատարել է Բագրատունյաց սուղանի թագավորի օրով: Մի պատմվածքի մեջ հան- դուժի հայրենիքն է Երեղ Կապուտին, որ պետք է վարձել թե այս Կա- պույտ բերդն է Կաղզվանի մոտ: Կապուտկող և Կապուտա բերդ անուն- ների նմանութունը համարեն պատճառ է գարձել գործողութունը մե- կից մյուս տեղ փոխադրելու:

Կաղզվանից արևմուտք հիշվում է Արգում, իսկ հրախ՝ Կաքս, որոնք ունեն ատանձին ամիրաներ, որոնց մոտ ապաստանել են ուզում:

Սանասարն ու իր եղբայրը, քայքայ լին ընդունվում: Արզրուսի և Կարոյի քերդերի հիմն ևս դնում է Քանաթորոսը: Հայաստանի Հյուսիսարևոտում հիշատակվում է Ջանգոտոս որդւոյն, և սպա Լոռի, իր փառչեմվանով, ար-Գալթի ոստիան է իբրև Խանդուլթին ուզող: Լոռին, ինչպես կտեսնենք, առանձին դեր է կատարել XI և հետագա դարերում թե հայոց Լոռվա թագավորութան և թե վրաց տիրապետութան ժամանակ:

Նույն տարերի հիշողութունն է վեպի մեջ և Գյուրջիստանի, այսինքն Վրաստանի հիշատակութունը. այստեղ է գնում Գալթիը Խանդուլթի համար աղախին քերելու, Խանանպես փր համար կին առնելու, կամ իր փառչեմաներին պատկելու: Այստեղ է գնում և Մհերը, որի կինը Գալթի բերած գյուրջու աղբիկն է: Նա նվաճում է և Քուրխստանը, այսինքն լեզ-դիներին, կովկասյան լեռներնակներին, ինչպես հասկանում է վիպա-սանը:

Մի պատումով Գալթին ուզում է Գյուրջիստան ղեկ աղբիկ բերելու, քայքայ ճանապարհին միտքը փոխելով՝ գնում է Հաղբեջան, այսինքն՝ Ատրպատական, որի թագավորի աղջկա նաժիշտներին առնում է իր փառչեմաներին, իսկ իրեն՝ թագավորի աղջկան բերում Սասուն, պատկում Մհերի հետ և ուղարկում Հաղբեջան թագավոր: Այստեղից հետո Մհերը գնում է Գյուրջիստան: Թայց շարունակութան մեջ կինը մեկ Հաղբե-րեճանում է հիշվում, մեկ Գյուրջիստանում: Պարզ կերպով երևում է, որ Հաղբեջանը մոր է փոխանակել Գյուրջիստանին, որովհետև Մհերի կինը ՚իշտ գրեթե աղբիկ է հիշվում: Սակայն Իրան, Իրանա քաղաք և Քավ-րիզ մի քանի պատումների մեջ հաստատուն կերպով դրվում են իբրև Խանդուլթի հայրենիք: Սասունից Իրան Գալթի ճանապարհն է Ճածուան, Բանդումաճի, Գործուլթա դաշտ. «Ճաշն կերով Ճածուան, խրամենց գը-նաց Բանդումաճին, Բանդումաճին անցավ, եկավ Գործուլթա դաշտ, իսկ երեկոյան հասնում է Իրան, Իրանա քաղաք կամ Քավրիզ: Ճածուան ըստ ասացողին Սոկաց երկրի արևմտյան կողմն է, տեղը մեզ հայտնի չէ: Ճածուան հիշվում է միշտ Գալթի ճանապարհին ինչպես. «Ճաշ ուտեմ Ճածուան, ընթրիս ուտեմ Բանդումաճու կամուրջ, հրածեց ուտեմ Կապուտկոզ քաղաք, որի թագավորի աղբիկն է Խանդուլթ: Սակայն այստեղ պատմողն անշուշտ շփոթել է, որովհետև Բանդումաճու գետը Բերկրի գավառումն է, Վանա ժովի Հյուսիս-արևելյան կողմում, և Սասունից Կապուտկոզ գնալու համար այդ ճանապարհը ընն թնիլ: Նույն գավառում է Գործոթ կամ Գուրծոթ գյուղը, որի սեսի աղբիկ Բանա խանուսը (— Չմշկիկ Սուլթան) ուզում է առնել Գալթին: Երբ Գալթին առնում է Իրանա թագավորի աղբիկան, Խանդուլթին, իրանից մինչև Բանդումաճին օժիտ են տալիս Խանդուլթին, որից երևում է, որ այդ կողմերը Իրանա թագավորի կալ-ված է, քայքայ Երբ Գալթին սպանվում է Գործուլթա Բանա խանուսից, Մհերն ու Ջենով Հովանը «Բանդումաճու կամրջից շուր Իրան, ինչ որ կեր, բիրադի կոտորեցին»:

Մի քանի պատումներով հանդուժի հայրենիքն է՛ իտյ, իտյա քաղաք,
որի ճանապարհն անցնում է Ճաժուանի, Կապուտկոդի և Բանդումահիի
վրայով: Այստեղ վեպն, ինչպես տեսանք, բնիկ է և պարսկահայ պա-
տումներին մեջ գործողութիւն տեղերը իտյի և Մակիւս շուրջն են գրվում:
հանդուժի հայրենիքն է՛ Քիլիսի, որ ըստ բանահավատքի հին Շապուրյան
կամ Արտազ գաւառի մի մասի անունն է և հետո փոխարկվի է՛ Սոքման
ավան (ճեղքված, քանդված երկիր) կոչումով: Ըստ վեպի և ըստ ավան-
դութիւն, Դավթի գուրդը գետին պատռելով գնացի է և շին օրն էս որ
Նանդուժ խանըմի երկրի անուն փոխեց Սորման ավան: Այս գաւա-
ռում են Քիլիսի գուրդը, որի մոտ է Խանդուքի բերդը, և վեպի մեջ հիշ-
ված նայրալման գետնուր, Դաստակյաւրի (բնագրի մեջ Դաստարարի)
գլազուր, Կոնս և Կոնստ ձոր, որ տեղերով անցնում է Դավթի՛ր Փերս
գնալու, որ պիտի կալիք հանդուժին ուզելու համար եկած Լանդետազ թա-
քավորի դեմ: Փերս գուրդը իտյ, հին շեր գաւառում է, իտյից արկուս ու
կնս ժամ հետո գնացի հյուսիս:

Հագործչական կամ Իրանի, հետը և իտյ վերջրած, այս անունին իշ-
խանութիւնը հիշողութիւն է՛ վեպի մեջ Ատրաքսասիական Աթաբեկութիւն
(1136—1225 թթ.), որոնց տիրապետութիւն սահմանները երբեմն գնացի
արևմուտք մինչև Վանս լիճն էին ստալածվում, իսկ հյուսիսից մինչև
Սլունիք ու Այրարատ:

Վեպի մեջ հիշված տեղերի կամ փշխանութիւնների անունները լրաց-
նելու համար բերենք և հետևյալները: Իբրև Մարամիլիքի օղտական մի
երդի մեջ դուրս են գալիս Անմու շահն իր Քեհրան քաղաքով, այլև Աուլ-
թան Մուրադն ու Ֆրանկի պապը: Այսամի այն կողմում գրվում են Օղա-
նա և Տոդանա թաքավորները. մի պատումով Բաղդադու խալիֆայի տեղ
մտնում է Հնդա մելիքը. մեջ են գալիս նույնիսկ Չրեմալընի քաղաք, Զի-
նամայնա կամ Զնա թագավոր, որ ժողում է՛ Գլուրդիստանի ֆողադորի
աղբիւն, որին բերում է՛ Դավթի՛րը Մինչև անգամ Ռուսաստանն էլ անմասն
չի մնում մեր վեպի մեջ: Արպնագի ոչ մի բան պակաս թողած լինենք,
ավելացնենք, որ ակզքում հիշված պատումների մեջ կան և Ախմաթու
սար և Զիմանին, որոնք հավանորեն հեքիաթային ձևով կոչումներ են,
Պող բլուր, որ Տարնում պիտի լինի, այլև Օրուսադն և Գիլ գետն վեր-
ջինս հիշվում է՛ միայն մի պատումի մեջ. Դավթի՛րը Մարամիլիքին հաղթե-
լուց և ներելուց հետո գնում է՛ Վիլ գետաց ջրի վրենա շողանալու և զրո-
նըվում Մարամիլիքի մարդկանցից: Գիլ գետը թերևս Գալլ գետը լինի, որ
Օրդակայի մոտ է և թափվում է Արևելյան Եփրատի մեջ: Մովանձալանցը
(Վերաց ու բրոց, եր. 112) Գալլ գետ է՛ կոչում Վարագա սարի տակից
բխած ջրերը, որ վեր թե գետին տակով անցնելով ծովի մեջ ան դուրս
գալիս և որոնց վրա առասպելներ են պատում:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

187. Ժամանակարանական վերջնակետ:—Մենք բերցնինք աշխարհազարակրան անունները: Գրանք արարզ ցույց են տալիս, որ վեպի ամեն մի գործողություն կապված է տրեւէ տեղի հետ, որ իրապէս կա և մեր երկրի պատմութիւն մեջ մի դեր է կատարել, հատկապէս, ինչպէս կըրտեսենք, ալն շրջանում, իբր Սասունը նշանավոր է հանդիսացել: Այդ տեղանունները պարզ ցույց են տալիս նաև վեպի ժամանակարանությունը: Վերևում դրած քվակականները՝ Բաղդադի խալիֆայություն (750—1258 թթ.), էլուրլան կամ էտլլանց Մսրա մելիքներ (1169—1250 թթ.), Կըսթի Շահի Արմեններ (1100—1207 թթ.), Մուսուլի (1127—1284 թթ.) և Ջոխրեյի (1180—1250 թթ.) արարեկությունները, լոռվա իշխանություն (XI—XIII դար), Վրաստանի տիրապետություն (նույն դարերում) և Ատրպատականի արարեկություն (1136—1225 թթ.)—մեզ տանում են մինչև XIII դարի կեսը, քաթարների արշավանքների ժամանակները: Այդ ժամանակից հետո ինչպէս իշխանություններ չկարողություն գրեթէ չկար վեպի մեջ հղածներն էլ, ինչպէս Սուլթան Մուրադ, և կան նշանակություն չունին: Վեպն իսկապէս իր հաստատուն կերպարանքն ստացել է մինչև XIII դարու կեսը և այնուհետև խոշոր և զանազան փոփոխութեան չի ենթարկվել:

Բայց ե՞րբ և ի՞նչ դեպքերի ազդեցութեան տակ, ի՞նչպիսի փոփոխություն է կրել դարերի ընթացքում:

188. Քննողորոս Ռշտունի:— Հնագույն պատմական հիշողությունները, որ պարզ երևում են վեպի մեջ, վերաբերում են Բաղդադի խալիֆայությունը կամ, ալեքի ճիշտ, արաքացոց տիրապետության ժամանակին: Ուստի և այդ ժամանակից սկսած տեսենք մի քանի նշանավոր պատմական անձների և դեպքերի մասին, որոնք նույն են դարձել մեր վեպի համար:

Արաքացոց արշավանքների սկզբում, VII դարում, նշանավոր է հանդիսանում Ռշտունյաց իշխաններից մեկը, Քննողորոս Ռշտունի, սերնդակից Սմբատ Բագրատունու որդի Վարազտիրոցին, որ և Ասպետ, որի հետ և մեծացել էր նա սի դրանն Խոսրով արքային Պարսից (Սերբոս, եր. 115): Վարազտիրոցի մարդպանութեան զորով արդեն նա ազդեցիկ մարդ էր ամբողջ Երկրում: Արաքացոց Հայաստան մտնելուց քիչ առաջ՝ հայերը հալածում են իրենց զորավար Դալիթ Սահառունուն և սանձարան ընել ազատացն հայոց,—գրում է Սերբոսը (եր. 103), կարուսին գերկիրս Հայոց: Բայց միայն աստիճանաբար իշխան Ռշտունեաց դաւաճին Քէղողորոս կազմէր զգալս իւրոյ կողման հանուպազ և զգուշանայր զսիւ և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեան, ոչ սակաւ աւիրս գործէր

ի թշնամեաց, Եւ շինեալ զԱղթամար կղզի անդ ապրեցուցանէր զբազում գաւառսս: Այս պատրաստութեան հետեանքն այն է լինում, որ երբ արաբացիները հունաց կողմից անպաշտպան երկիրն ալիքում ու գերում են, Քեոզորոսն է միայն կարողանում ասպատակութիւններէ առաջն առնել: Ուստի և հունաց կայսրի կողմից հարց զորավար է կարգւում և պատրուկութեան ստանում, ապա և հայաց աշխարհի իշխան դառնում: Այնուհետև շնայելով տեղի հույների հանած ամեն տեսակ ուրբելքներին, Նա Հայաստանում ժամանակի միակ կառավարիչն է մնում և հարթութիւններ տանելով արաբացիներէ վրա՝ շատ դերի և ավարներ է ազատում: (Սեր, 114, 117, հտն.):

Բայց շուտով Քեոզորոսը տեսնում է, որ Կ. Պոլսում ներքին խռովութիւնները շին պահապում, որ նրանք մեր երկիրն անպաշտպան են թողնում ու միայն կրօնական հալածանքներ հանում հայերի և հայ եկեղեցու դեմ. և վերջապէս Ասասերան պետութեան ընկնում է արաբացիներէ ամբողջ զորութեան առաջ, ուստի և Նա, երբ արաբացիները Նորից հարձակւում են հայերի վրայ, իր հետ միաբանեցնում է բոլոր հայ իշխաններին ու ձեթարկվում արաբացիներին: Հույները կատաղում Նն, և անձամբ գալիս է Կոստանդին կայսրը հարչուր հազար զորքով՝ պատժելու Քեոզորոսին և հայ իշխաններին: Վերջիններս բոլոր հպատակում են նրան, զորավար կամ սիշխան հեծելուց կարգում է Մուշի Մամիկոնյանը: Բայց Քեոզորոսն իր փեսաների հետ հաստատ է մնում իր որոշմանը. Նա իր մի փեսա՝ Մամիկոնիից տեղ Համազասպի հետ ամրանում է իր կղզում ու փախում. իսկ նրա մյուս փեսա Գրիգորը՝ իր հայր Քեոզորոս վահեռունու հետ ամրանում է Արփա բերդում: Կոստանդին կայսրը բան անել չի կարողանում և միայն կրօնական վեճ ու խնդիր հանելով ու Քեոզորոս Ռշտունուն նշույց վարդաւով՝ հաղ դառնում: Իսկ Քեոզորոսն արաբացիների օգնութեամբ երկրից հալածում է հույներին և ապա գալով Պամակոս Մամիստի մոտ (661—680 թթ.) իշխան է կարգւում Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի և Մլունիքի վրա մինչև Կովկաս ընդն ու Ճորա պահակը և մեծ ընծաներ ստանալով, շահեղծած ոսկեղէնս և ոսկեթելս և վատ մի նորին օրինակաւս վերադարձնում է:

189. Մամիկոնյացեցիք:— Քեոզորոսի մահից հետո հայոց աշխարհի իշխանութիւնը վարում է նրա փեսան, Դավթի օրդի Մամիկոնիից տեղ Համազասպը, որը, ասկայն, շուտով հռոմայեցիների վնասն է անցնում: Ռշտունիքը, որ քարէրացած էր, Քեոզորոսից հետո դարձաւ երկրորդական դեր է կատարում: Երկրի մեջ ազդեցիկ ու կարեւոր տեղ են բռնում հրկու հին մրցակից իշխանական տոհմերը, Մամիկոնյան և Քաղաստունի: Տարանի և Սասունի տեղ Մամիկոնյանները, որ միշտ անկախութեան դրոշակ էին պարգել: Հայաստանին տիրող պարսիկների դեմ, իրենց այդ դերը հին ավանդութեամբ շարունակում են կատարել և արաբացիների օրով թե Եմարյան (661—750 թթ.) և թե Արասյան (750—1258 թթ.) հա-

ըրտութիւններն ժամանակ Այսպիսի մեծ ապստամբութիւններէց են VIII դարում Համայակի տրդի Արտավազդիներ, որ ապանում է սզհրամանասար հարկին (Ղևոնդ, եր. 138, հտն.) և ավելի ևս Հրաբատի որդի Մուշեղ Մամիկոնյանինը, որ ընդարձակ ծավալ է աստանում և մինչև անգամ կարծում են, թէ պիտի հայոց թագադրութիւնը վերականգնէր Ապստամբութեան պատճառ լինում են միշտ ծանր հարկերը:

140. Բագրատունիները Տարոնում:— Եւստով Մամիկոնյանները տեղի են տալիս Բագրատունիների աւազ, և IX դարի մեքերին Տարոնի և Աստուծի տեր տեսնում ենք Բագրատունի իշխաններին: Տարոնն այդ ժամանակ կատարում է կարևոր դեր. ևս կոչում է բոլորն Հայոց, իսկ նրա իշխանը՝ յոշխան Հայոց: Տիրասեր սասունքիները սիրով կապվում են այժմ իրենց նոր իշխաններին: Զգույշ և արարացիների կուսակից Բագրատունիները, սակայն, Տարոնում հաստատվելով՝ կարծես կնխարկվում են այս պաշտոնի հին փոխակառն ոգուն և խաղում են նույն դերը, ինչ որ Մամիկոնյանները: Նրանց որով ահա IX դարու կեսին կատարվում էր Աստուծի պատմութեան մեջ ամենից հայտնի և եղբրական դեպքը, որով Սասունն արժանանում է մեր պատմագիրների ուշադրութեանը և որի հիշողութիւնները գտնում ենք մեր վեպի մեջ:

Տարոնի և Տարոս լեռան, այսինքն Ասսունի (Վարդանայ Պատմ. տեղեղ, Մոսկվա, 1861, թր. 110) իշխանն է Բագրատունի Բագրատունին, որը նստում է Մուշ քաղաքում, և, ինչպես գրում է Քովմա Արծրունին (եր. 107, հտն.) յնեւէր յայնժամ տգլխառարութիւն թարծրակցութեան իշխանաց Հայոց կամ, փոխպես Յովհաննէս կաթողիկոսն (եր. 65) գրում էր. յՀրամանատար և իշխան իշխանաց Հայոց: Զամր (Մտւոնվաքի 847—861 թթ.) ամիլապետն ուղարկում է Ապուսթ անուհով մեկին հայոց տշխարհը վերականգու և սհաստարիմ ի վերայ հարկաց արքունի: Սա թան անել լի կարողանում և շուտով ևս է դանտում Բաղդադ՝ հսվատալով զվերականգութիւն տշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդոյ Զարահայի հազարացոյ, որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարոնոյ: Մուսնն, որ, ըստ արարական աղբուրների¹ (Տումաշեկ, եր. 27) և ըստ Քովմա Արծրունու, Բագրատի փեսան էր, տնննելով նրա քրոջը, գորք է ժողովում և մտնում Տարոն, որովհետև հարկի պատճառով մեծ խռովութիւն է ընկնում իր և Բագրատի մեջ: Բագրատը, միացած Աշոտ Արծրունու և ուրիշ իշխանների հետ, կովի մեջ հաղթում է Մուսնին, որ փախչում, տարանում է Բաղդադ: Այստեղ հայերը պաշարելով նրան նեղն են ձգում, ամինչ ելնալ արտաքս տնկինն ի հետիոտս ի հառաչանօք՝ բաւա-

¹ J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, եր. 327. Արզի կմիրը, Մուսա Զարարայի որդին Տարոնի իշխան Բագրատի փեսան է, ըստ մթ ջունի արար գրողների:

կան համարել զգործ նահատակութեանն... և համոզեալ ի միջի նոցա յուղարկել զնոսա, զի էր քոյր Քաղաքատայն (Քովմա, հր. 110): Այս ժամանակից սկսած Մուսն բարեկամ է մնում հայերին, ինչպես հետագայում նրա որդին Աբդուլ Մակրա:

Ամիրապետը զայրացած ուղարկում է Ապուսեթի որդի Յուսուփին, որ Ատրպատականից Աղքակ մտնելով և այնտեղից Քչունիք անցնելով՝ դալիս մտնում է հյաթ, ավերում է ամբողջ աշխարհը բացի լեռնային հոռիքից, որ է Ասսուճը: Բագարատը խաբվելով բռնվում է և շղթայի զարնված ուղարկվում ամիրապետի մոտ: Այնուհետև Յուսուփը 851—852 թվի ամիսն անց է կացնում Մուշ քաղաքում: Բագարատի որդիներն Աշոտն ու Դավիթն ազատվում են փախչելով Խոթի լեռնակամենների մոտ:

Սասունցիները, որոնց համար Քովման ասում է թե արիասեր են և թի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իրեանց՝ դան մխարան յաղնութիւն իշխանացն, այս անգամ կատարում են իրենց անունն անմահացնող գործը: Տեսնելով, որ իրենց իշխանը գերի տարվեց և որ իրենց ևս փարնանը նույնը պիտի վիճակվի, ինչ որ քաջանցիներին, սհամագունդ ի մի վայր հաւաքեալ և զմի գերեւորութիւն զխնորեալ և յանկարծակի ի վերայ տարմաբար յարծակեալս (Յովհ. կաթ., հր. 66) կոտորում են արքայցիների զորքերը Մուշ քաղաքում, սպանում են և ուտիկան Յուսուփին և ազատում գերին ու ավարը: Նրանք ասում են իրենց Բագարատ իշխանի վրեժքը: Այս գործի մեջ, բացի Դավթից և Աշոտից, սասունցիների գլուխ է անցնում ասանձևապետ Հովնանը թի լեռնէն Խոթայն (Քովմա Արծր., հր. 188), որ ըստ Քովմայի և արաբ պատմագիրների, Բագարատ Բագարատնու Քոնեթկ եղբոր որդին էր և Խույթի տերը²:

141. Սասունի ավերումը Բուղայի ձևոցով և Դավիթի ու Հովթանի զերջնությունը:— Գուժկանն փակույն շտապում, հասնում է ամիրապետին, թե՛ քո զորավարն սպանվեց և Հալոց աշխարհն ապստամբել է քո իշխանութիւնից: Կատաղում է Բաղդադի փալիֆան և խորհուրդ անելով իր մեծամեծների հետ՝ իր երկրի քոյր սահմաններից ու հպատակ ազգերից հրովարտակ ուղարկելով զորք է ժողովում և երկու հարյուր հազար զորքի բանակ կազմելով՝ զորավար վէ կարգում մի թուրք, Բուղա անունով, որ քա պատժի հայերին: Այս զարհուրեցի ու նենգավոր, փարդախ ու փառնայ մարդու զործած ավերումները գրեթե ամբողջ Հայաստանում հայտնի վէ նրա առաջին գործն էր զնալ Տարուն և Տավրոսի բնակիչներին պատժել: Բագարատի որդին իրենց սասունցիների հետ քրկար դիմադրել

² Քովմա Արծրունի հիշատակում է թի տակէն Բագարատնեաց Քոնեթկ որդի (հր. 186), որքը հատվածում թի լեռնէն Խոթայն Յովնան որ Յուսուփի սպանողն է (հր. 308): Ըստ արքայական մատենագիր ալ-Յակուբիի՝ Հովնանը Քոնեթկ որդին է. իսկ ըստ Տարսիի՝ Հովնանը Բագարատ Բագարատնու եղբորորդին է. Յե՛ս Prof. Jos-Markwart, Suda-menten und die Tigrisquellen, Wien, 1930, հր. 268, 269—270 և այլուր: Վասն Մեթր, հ. 1, 1888, ներածութուն, հր. ԺԵ—18, հտե.:

չեն կարողանում. Աշոտը և Գալիթն փրենց ազգակիցների հետ շուտով բռնվում ու Քաղաղ են ուղարկվում³: Բուզան, ասում է. Հովհ. կաթողիկոսը (հր. 67), սիրուն զինվածակն փայլակնահար զաշխարհն արարեալ ... ասպատակ զգորս իւր սիսէ ընդ ժարծորս փ շերինն Տարտուն և երեսա Գասառին (Սասնոյ)։ Եւ նախ քրեակեալսն ի խոխովն լերինն՝ զորս ըմբռնէինն՝ տապաստ ևրկրի տալին անողորմ որով. իսկ զԳաւառին հեծեալազոտնրն զգոհհիսս զովանս սրոյ նարակ տալին, և զայս ձերբակալս արարեալ առ փոնաւորն հասուցանելին տոսամբք զնոսա քարշնալ, իսկ զանձնագեղս և զերեսատրս և զզոննանս արտաքոյ ալլոցն տրոհեալ վասն անորէն յօրէնս իւրեանց զարձուցանելոյ ըստ ամիրապետին հրամանի. և զայս ևս մնացականս առ ի նոցանէ հրամայէր սրով վասնելլ։ Ու ճանապարհ է ընկնում Բուզան Եսլյը և ուղիշ գավառներում զործելու Իգուր այդ ժամանակի խուլիցի Հովնանն աշխատում է լեռնականների հետ դիմադրել Բուղային և ազատել զերիններին։ Նա մեծամեծ վնասներ է հասցնում արքունի զորքին, թալց արաքական զնդիրը հաղթում են և իրեն՝ Հովնանին էլ բռնում են ու շղթայած ուղարկում Քաղաղու. Այստեղ նա թերվում և Հալաստանի մշտա գավառներից գերված իշխանները։ Բերենք և հետևյալը⁴։

«ԻՄ դարի կեսերին Հայաստանում տեղի ունեցած այս քաղաքական դեպքերը ըսվական մանրամասն նկարագրված են նաև արաքական մատենագրության մեջ. Եթե նկատի չառնենք հայ և արաք աղբյուրների ազգայնական-կրոնական միտումներն ու երևույթների մեկնարկաբանությունները, ապա քաղաքական, ռազմական, սոցիալական ու տնտեսական միջադեպերն ու հանգամանքները զուգարդիվում են իրար։

Մեջ ենք բերում միայն դեպքերին ժամանակակից և մատենակից մատենագիր Ահմեդ Բալասորիի՝ վկայությունները։

Հայաստանի պատմության համար հետաքրքրական է նախ հետևյալը. «Երբ փոխարքայի կողմից այս երկիրն (Հայաստան) էր գալիս որևէ

³ Ստեփանոս Տարսեղոցի (հր. 107) Քաղաքալի երեք որդին է ըսված զնու. «Կալա զերեսին որդեան Քաղաքատայ և կոտորեաց զխուլիցիսն առ հասարակ ի վերայ լերինն, որ կոչի Վաչգինակ»։

⁴ «Սասնա Մոնր», Երևան, 1935, հր. ԺԳ-18, հտն.

⁵ Արու-Արրաս Մեծեղ իրն Յակոբ իրն Ջարիր ալ-Քալանթարի, ձե, Եգիպտոսում, եսխեները պարսից ծագումով. մեռել է 692 թ.։ Նա զատիկարակի պաշտոն է վարել խալիֆաների պալատում։ Ունի մի շարք աշխատություններ. Լեթագրում են, որ իր հիմնական գրական գործը՝ «Քիթաբ ֆուտուհ ուլ-բուզան» («Քիթք երկիրների նվաճման») գրել է իրոք դասագիրք իր սաների համար։ Գրա մեջ հաջորդաբար նկարագրված են խալիֆայություններ նվաճումները Մուսուլիցից սկսած մինչև 890-ական թվակ.։ Համարվում է մուսուլմանական աշխարհի պատմագրության առաջնակարգ և նշանավոր ակնարկը մեկը. Թարգում են՝ «Валадарски «Книга завоевания стран», текст и перевод с арабского, проф. П. К. Жузе, Баку, 1927 г. Քալանթարի երկ որոշ հատվածները թարգմանված են հայերեն. տե՛ս «Հատուկ» պատմության Հայաստանի ցարգու յարաբայի պատմագրաց ի ձեռն Տոչտոր Մորթմանայ Արենյանցեոխա թարգմանեց ի Հայ կարագեոս Ա. Խիթանեան, Տնտր Ա. Կ. Պոլսա, 1874.։

ոստիկան, նրան պատրիկները (նախարարները) աշխատում էին անտեսել, եթե նրանց նկատում էին, որ ոստիկանն անկարգ է ու խիստ և իր տրամադրությունների տակ ունի թաղման և ուսուցանողի և հանդերձանք, նրանք մուծում էին հարկերն ու հայտնում իրենց հնազանդությունը. հակառակ դեպքում նրանց աշխատում էին զրպարտել նրան և արհամարհանքով վերաբերվել նրան⁶:

Արաբները նվաճված երկրներից հարկ էին պահանջում բացի նյութական բարեփոխներից՝ նաև որոշ թվով սուսահեր, սևահոնի երկար արտանետնեղներով և բարձրահասակ աղջիկներ ու պատանիներ (հմմտ. Մարտ Մելիքի կամ Բաղդադա խալիֆայի հարկահանությունը «Մասնա Մոնրի» մեջ)⁷:

«...Մուսուլմանները՝ հավատացյալների տերը (847—861 թթ.) իր խալիֆայության երկրորդ տարին նշանակեց Հայաստանի փաստացիորէ Յուսուֆ իրն Մուհամեդ իրն Յուսուֆ ալ-Մերվադիին (մերվեցի), որը գալով հալաթ՝ ձերբակալեց նրա պատրիկ Բագրատին, Աշոտի որդուն, և ուղարկեց նրան Սուրբ-Միհրայ (-Մամաս, ամիրապետի նիստը):

Դրանով նա դժգոհություն առաջացրեց պատրիկների, ազատների և ապստամբների (խոռվարդների) շրջանում: (Այդ դեռ քիչ էր). նրա գավառական կառավարիչներից մեկը՝ ալ—Ալյա իրն Ահմադ անունով՝ զնաց մի վանք Մանասունում⁸, որ հայտնի էր Աքթաւ վանք անունով, որը Հայաստանի քրիստոնյաները մեծապես հարգում էին և ուղիք բերում էին շատ նվերներ. գրավեց այն ամենը, ինչ որ այնտեղ կար, և փրավորանքներ հասցրին նրա ընակիչներին (միաբաններին): Դրանով նա պատրիկների մեջ առաջ բերեց ծայր աստիճան զայրույթ և գրգռություն, և նրանք սկսեցին թղթակցել Վրաց հետ և հրահրել իրար ապստամբելու և անկախանալու Հենց նրանք էլ գրգռեցին խոթեցիներին, — գրանք (այրուցի) մշակներ ան, որոնք հայտնի են Արթան⁹ անունով, — ապստամբեցու Յուսուֆ:

⁶ Անդ, հր. 15 (րեզ.) — 21 (թրգմ.):

⁷ Անդ, հր. 14 (րեզ.) — 16 (թրգմ.):

⁸ Բայտորիի արտ. քննարում (հր. 15 րեզ.)՝ Սիսաշան, որ համարում ենք սխալ գրություն և թյուր ընթերցանություն հետևեց, մեքենայաբար առաջացած շեղումով այն հանգամանքի, որ այդ սփռությունն մեջ մի քանի անգամ հիշվում է Սիսական նահանգ Ուղղում ենք՝ Մանասուն: Պատմական զեպը տեղի է ունենում Խուլթում, Մասունում (Մանասունում) և Տարսունում: Հավանական չէ, որ արաբները կողպույնով Սիսականի վանքը՝ այնպիսի զժգոհություն առաջացնեին խոթեցիների մեջ, որ վերջիններս հարձակվեին և ուղեւորների արարական ցորեն ու սպանին Յուսուֆին: Պարզ է, վանքի զեպը տեղի է ունեցել Մասունում և խոթեցիները — սասունցիներն էլ իրել են լծաներից և կատորել թշնամիներին:

⁹ Աքթա (Աքթաւ) վանք (զնյր ու Աքթաւ) հասկանում են իրեն քաղեհ-սկիւր բուրից առաջացած, և հայ թարգմանիչ Ու, Ս. Իսթիւյանը թարգմանում է «Սկիւրեաց վանք», բայց պետք է կարծել, որ այդ անունն արձատված և նույն է, ինչ որ ներքևում հիշված Աքթանը: Նեթապրում ենք, որ այդ երկու անվան մեջ պետք է տեսնել Մարաթա (ն) անունը, որ է Մասունի Մարաթա կամ Մարաթա-Մարաթուն անունով հայտնի լինելու Արտեզ միջև վերջերս գոյություն ունեցող Մարաթա կամ Մարաթա Արտեզանի վանքը իրեն մեծ ու

սուֆի դեմ և զրգոնցին նրանց նրա դեմ այն բանի համար, որ նա (Յուսուֆը) ուղարկեց նրանց պատրիկին (Սամառա) :

Անչպես պատրիկները, աշնպես էլ թուր խոսվարարները խուժեցի-
նեթին ոգնեցին համար ձիավոր և հետևակ մարդիկ ուղարկեցին. և նրանք
հարձակվեցին նրա (Յուսուֆ) վրա Տարոնում այն ժամանակ, երբ նա իր
մարդկանց ցրել էր գյուղերում, սպանեցին նրան և զրավեցին այն ամե-
նը, ինչ որ կար նրա նամքարում : Այն ժամանակ հաժառայալնեթի տեր
Մուսաւաբիւ ալ-ալլահը Հայաստան ուղարկեց իբրև կառավարիչ ալազ
Քուզային, որը գալով Քիթլիս՝ ձերբակալեց Մուսա իբն-Ջուրարին, մեկը
նրանցից, որոնք համակիր էին Յուսուֆի մահվան և նպաստում էին դրան
(այդ գործին), համակրանք տածելով դեպի Բաղդատը : Ապա նա հար-
ձակվեց խուժեցիներին վրա, նրանց մեջ մեծ ավերածություն գործեց և
նրանցից շատերին գերի վերցրեց : Դրանից հետո նա պաշարեց Ալրա-
կում (= Ադրակում), Աշուտ իբն-Համալ իբն-Ջաշիք, Բուսիդաշանի պատ-
րիկին¹⁰, ստիպեց նրան դուրս գալու իր բերդից և ուղարկեց նրան Սա-
մառա... Այսպիսով հաստատելով Երկյում մի այնպիսի կարգ, որպիսին
չի եղել առաջ, Քուզան վերադարձավ 241 թ. (855—6) Սամառա¹¹ :

142. Գավթի ուրացությունը և իշխանությունը:— Ամիրապետի ցան-
կությունն էր հայերին ստրասպիտով պահել իր հարկի տակ և երկրի իշ-
խաններին քրիստոնեութունն ուրանալ տալով՝ աշխարհը սերտ կապել իր
տերության հետ : Ուստի քանտում երկար տանջվելուց հետո՝ գրեթե բո-
լոր գերի հալ լիշխաններն երձանց ուրանում են իրենց հայրադարը Սա-
կավները միայն, սրտնց թվում և Հովնանը, նահատակվում են՝ հաստատ
մեալով իրենց հավատին : Ուրացողների պարագլուխ հանդիսանում է
Բագարատը (Թովմա Արծր., 158), որին հետևում են և մյուսները : Բայց
ուրանալուց հետո էլ անմիջապես բոլորը ետ չեն ուղարկվում իրենց եր-
կիրն, այլ գեռ պահվում են խալիֆայի բանակի մեջ և հետզհետե են վե-
րադառնում :

Մեր պատմագիրները մանրամասնություններ չեն տալիս մասիտար-
ների վերադարձի մասին : Հովհաննես կաթողիկոսը (եր. 73) հայտնում
է, թե Եսպոս՝ Բագարատունին մանրամասն պրել է այդ մասին և թե սուր
ի նոցան է հոյակապք և հարուստք և ուժեղակց ընդդէմ հակառակորդաց
հինից պատն և կամ ոչք յումեք է եղևն հարստահարեալք և կամ զվախ-
ճան նոցա չիրաքսեյիրումն տեղոջք, ուստի և ինքը չի երկրորդում :

Հայտնի ուխտառեղի, որ և ըստ մեր ժողովրդական վեպի ավերում է Կուզագիթը, և Գա-
վթը պատահաբար է նրան : Արթուր Մարտիանի հետ նույնացրել է պրոֆ. Լ. Մարքվար-
տը, հիշ. աշխ., երես, 221—222, հտվ. :

¹⁰ Աշուտ իբն Համալ իբն Ջաշիք Բուսիդաշանի պատրիկ -- Վասպուրականի իշ-
խան Աշուտ ի տանն Արծրունեաց, որդի Համազասպայ, որդի Գաղկալու, նա Բագարատ
Բագարատունու զինակիցն ու քնարդին (Հեթումիսի սրգին) է :

¹¹ Անգ, երես 18 (բեք.) — 22 (թրգմ.) :

Իսկ Քովմա Արծրունին գլխավորապես Արծրունյաց ազատների մասին է գրում, և պատահաբար միայն ուրիշների մասին, որոնց թվում և Տարոնի ու Սասունի տերերի համար:

Գերութունից հավասար ուրանալով վերագանում են և Բաղարատի որդիները, Աշոտն ու Դավիթը: Աշոտը հիշվում է իրրև Եկորապաղատ հայոց իշխանս, այլև սիշխան Տարոնոյս (Քովմա, եր. 218 հտ.): Իսկ թե փոքր եղբայրը՝ Դավիթն այդ ժամանակ ինչ վիճակ է ունեցել և ինչ գործեր է կատարել՝ չգիտենք: Իմանում ենք միայն, որ նա Արքա մականունն է կրել և հղել է Արծրունյաց Գրիգոր Գերանիկ փշխանի փեսան, ունենալով նրա քույր Սարգիսմին: Բռնութան, ուժի և հարստահարութան ժամանակ էր: Քսութունը մեծ գործեր էր կատարում: Գերանիկի մոտ ամբաստանում են Աշոտի համար, որպես թե նա Գերանիկին իշխանութունից ձգել է ուղղում. տաստի և աստանաց ալևալուսթյան հանկարծակի բռնել է տալիս իր խնամուն ու ղենում Վասպուրահանի Սևան ամրոցում: Ապա հրամայում է իր ազատագունդ զորքին, որ իր փեսա Դավիթ Արքայի ետևից գնան տիրելու քույր աշխարհին, այսինքն Տարոնին ու Սասունին և նրա ամրոցներին: Եվ այսպես Դավիթը դառնում է հայոց իշխան (887—894): Աշոտն այնուհետև ազատվում է քանդակից, քայքայ իշխանութունից զրկված է մնում: Եհիշտ այն միջոցին, երբ ԵԴավիթ Արքան էր եղբոր տեղ տեր է դառնում «Հայոց տանը», այսինքն՝ Տարոնին ու Սասունին, հայերի վրա թագավորում է իշխանաց իշխան Աշոտը, հայոց առաջին Բագրատունի թագավորը: Սա, ինչպես հայտնի է, խնամութան կապերով բարեկամութուն է անում հզոր իշխանների հետ, որոնց թվում և Դավիթ Արքայի հետ, վերջինիս որդի Աշոտին տալով իր Եսպուհ եղբոր աղջկան:

148. Դավթյան Աշոտի անկումն իշխանությունից:— Դավիթը յոթը տարի իշխանութուն վարելուց հետո մեռնում է Ամբատի թագավորության օրով (894 թ.): Տարոնն ու Սասունն այնուհետև այլևս երկար չեն կարողանում իրենց անկախությունը պահել և մնալ հայոց թագավորության մեջ: ԵՄեծ իշխանն Իսմայելիան՝ Ահմադը, որ տիրելու անէր զՄիջագետս Ասորոց մինչև Գողգեստին, տիրում է և Աղձնիքին և Բոր մեռնում է Դավիթը, կամաց-կամաց սկսում է իր ձեռքի տակն անել և Սիմլունն ու Տարոնը: Դավիթի եղբորորդին՝ Գուրպեն սպանվում է հովի մեռյալսկ որդին՝ Աշոտը բան անել չի կարողանում: Այս Ահմադը, որ նստում էր Ամիդում, ու միայն Տարոն է իր ձեռքը ձգում, այլև թեկնածու է ամբարտապետելու ամբողջ Հայաստանի վրա: Եվ կային հայ նախարարների մեծ այնպիսիները, որ գնում էին Ահմադին. այսպիսիներից էին Վասպուրահանի ազատները, որոնք շնչին քաշվում և ուղնիսկ Ամիդ քաղաքը գնալ և Ահմադին իրենց ծառայությունը խոստանալ:

Հայոց Ամբատ թագավորը մի քանի անգամ գրում է Ահմադին նու քաշվել Տարոնից և այդ աշխարհը հոտ տալ իր Եսպուհ եղբոր փեսա Աշո-

տին, Բայց Ահմադն տաշահութիւն չի դարձնում նրան: Քազավորը զենքի է դիմում Ահմադին դեմ, բայց պատերազմը ղժժախտ է լինում Սմբատ քազավորի համար, որովհետեւ Վասպուրականի Արծրունի իշխանները, որոնք քազավորութեան էին ձգտում, կռվի մեջ դավաճանում են Հայոց քազավորին: Այնուհետեւ Տարոնն ու Սասունը կտրւում են Հայոց պետութեանից և Գալթի որդի Աշոտը զբնակում է իր հայրենի աշխարհից: Բայց Հայաստանի այս մասը փրկար չի մնում Միջագետքի արաբացի իշխանների ձեռքն. այլ շուտով X դարում անթարկվում է Բյուզանդական իշխանութեանը Կոր ճիշվում ան մի քանի հայ իշխաններ Տարոնում:

144. Բաղ ամիրա և Մրվանյաններ:—Տասներորդ դարի վերջին քառորդին Ամիրի Բաղ էլ Կուրդի ամիրան օգտվելով Բյուզանդական կայսրութեան շփոթութեանից փր իշխանութեան տակ է ձգում Տարոն, Խլաթ, Հարք, Արճնչ և Ապահունիք և կազմում մի իշխանութիւն, որ գրեթե անկախ էր Բաղդադի խալիֆայից: Նրա համար դրում է Ստեփանոս Տարոնացին (Գ. ժա. 192). «Եւ մինչ զայսու շփոթմամբ էր քաջատրուփիւնն Յունաց՝ Խլաթիայ և Նփրկերտոյ (Մուֆարդին) ամիրայն Բաղն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ, և սրով և գերութեամբ անմարդացոյց զգաստն Տարոնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ, խողխողեալ զքահանայս յեկեղեցւոցն, որ Սուրբ Փրկիչ անուանի, ողորմեցի տեսակաւ, յորում արեան ներկուածք ցարդ ևս ցուցամեին ի նոյն եկեղեցւոցո: Բաղի մահից հետո (990 թ.) նրան հաջորդում է իր քրոջ տղային Աբու Ալի բնն Մրոսան, որ քրդական ծագում տներ, և հետզհետեւ այդ իշխանութիւնն ընդարձակվում է իր մեջ ընդունելով մուլանիսկ Հալեբը: Այս Մրոսանյան հարստութիւնը տեսում է մինչև սելջուկյան տիրապետութեանը (990—1096 թթ.): Այս հարստութեան ժամանակից սկսած քրդերը Միջագետքից բարձրանում են դեպի Հայաստանի լեռները. բայց մինչև XIII դարի վերջերը Սասունում դեռ քրդեր չեն հիշվում:

145. Սելջուկներ և Լոռվա քազավորություն:— Հաջորդ XI դարում Հայաստան են մտնում արևելյան մի նոր ժողովուրդ, սելջուկյան թուրքերը: Սկզբում դրանց հարձակումներին դիմադրում են հայերը, բայց շուտով հայ իշխանութիւնները քայքայվում են և Հայաստանի մեծ մասին տիրում են հույները: Շատ չի անցնում և մեր երկիրն ողողվում է սելջուկյան սապատակավոր խմբերով. իրար հետևից ընկնում են հայերի մասնը իշխանութիւնները և տկավում է հայ իշխանների և ժողովրդի մի մեծ սաղթ դեպի արևմուտք: Հույն զորավարները երկիրը պաշտպանել չեն կարողանում, և Տուղրիչի հաղթական զորքերը մինչև Փոքր Ասիա ան հասնում և առ ու գերի առած դառնում: Միջագետքի և Հայաստանի գրեթե ուրոր իշխանութիւնները կեթարկվում են այս նոր մահմեդական սազդին: Հայաստանի հրապարակին կողմում Բագրատունյաց քազավորութեան վերջերում հիմնված էր Աշոտ Ողորմածի որդի Գագիկի որդի Կալվիթ Ան-

հողի՛նք ձեռով մի նոր հայ թագավորութիւնսն, որ հայտնի է Լոռվա կամ Աղբա՛նից անունով, մայրաքաղաք ունենալով Լոռին: Այս իշխանութիւնը, որ բա՛վական ընդարձակվում է, սկզբում դիմադրում է թուրքերին, և ապա Գալթի սորոին ու հաջորդը՝ Կորիկնն իր աղջկան տալով Տուզդիլի հաջորդ Ալիսալանին, բարեկամանում է սրան և առժամանակ ապահովում իր երկիրը (1064 թ.): Բայց այս հայ իշխանութիւնը, ինչպէս և Սյունիքի թագավորութիւնը, երկար չի դիմանում: Վերջը սելջուկներն այս իշխանութիւնն էլ գրավում են: Ըստ Կիլիկոս Գանձակեցու Լոռիեանում է Խզըն, որ հաջորդում է Թեկիարուխին (1094—1103 թթ.): (Մատթեոս Ուռ., եր. 174, 265, 278, Կիրակոս Գանձ., եր. 59, 89):

Բայց շուտով հյուսիսային կողմերում զորանում են վրացիները և Օրբելյան իշխանները, որ խնամաքած էին Լոռվա Կյուրիկյան թագաւորանի թագավորների հետ, ընդարձակվում են վրաց թագավորութիւն սահմանները և իրենց քաղութիւնների համար կառված են ստանում իրենց ազգականների աշխարհը՝ Լոռին իր գալառով: Այնտե՛հտե՛ս այդ երկիրն անցնում է վրաց զորավար հայազգի իշխան Ջաքարեիին և իր որդիներին (Ստեփանոս Օրբելեան, լեր. 277, 282, 287):

146. Մամիկոնյան իշխանություն Աստուճում և Թոռնիկ Մամիկոնյան:— Սելջուկների աղշալուսքների ժամանակ Աստուճը վատաւարվում էր անկախ հայ իշխաններով և շեղմով ւերկրի ամօր դիրքին ու բնակիչների քաջութիւնը՝ ապահով էր մնում ասպատակութիւններից, և սատանցիները նույնիսկ օգնութիւն էին հասնում դաշտնցի հայերին: Այսպէս 1036 թվին, արաբացի մատնիագիւններից մեկի ասիլով, նրանք իրենց լեռնիւրից ներքև իջնելով՝ օգնում են դաշտնցիներին և նրանց հետ միացած կողոպտում են Խլաթի Մրտանյան իշխանութիւն մեջ մահճեղական ուխտագործներին ու շատ գերիներ տանում, որոնք անշուշտ հարստահարում էին հայերին (Տամաշեկ, եր. 37, հտն.): Արաբացի հեղինակը Աստուճի այս ժամանակի իշխանի անունը չի տալիս. հավանորեն Մուշեղ Մամիկոնյանն է, որովհետև շուտով մեր պատմագիրները հիշում են Սասունի իշխան Թոռնիկ՝ Մուշեղի որդի, որ Մամիկոնյան է համարվում: Մամիկոնյաններն սրբամն օգնվելով սելջուկյան աղշալուսքների ժամանակի խռովութիւններից՝ նորից հաստատվում են իրենց բնիկ երկրում և զինվում մեկ նոր իշխանութիւն, որ շատ ակնյի երկարատե է զինում, քան հյուսիսային կողմի Լոռվա թագավորութիւնը: Այս հայ իշխանութիւնը դիմանում է մինչև XII դարու վերջերը:

Թոռնիկ Մամիկոնյանը XI դարու հայոց նշանավոր իշխաններից մեկն է: Նրա ձեռին է Աշմոջատ գերդը Արածանու վրաս և իշխում է, փերպեո տեաւեք, Տարոնի մի մասին և Եսաղաղցրին: Նրա որով 1054—1058 թվերին թուրքերը պարբերաբար ավերում են մեր երկիրը, պիսավորապէս հարաւալին Հայաստանն արեւելից արևուճտը: Ավերիչ բանակներից մեկը Մելիտոնն քաղաքի մեծ գերութիւնն առած մտնում է Տարոն, ուր

և նստում են Երևանկայան, առ ստորոտ լեռին՝ Տարասի մերձ ի Սասուն, Ավարի և ավերի ենթարկվում է Սուրբ Կարապետի վանքը, Մուշեղի քաչ տորդի Քոռնիկն այս լեռնով՝ Եթողով սրբաբայ զամենայն Սասուն և հասանէր ի վերայ զօրաց այլազգեաց: Յայնժամ զօրք այլազգեացըն հնչեցուցին զփոքս արատեղազմին և միաբան ելին ի պատերազմ: Եւ եղև օրն այն մեծ և ահաւոր վտան զի որպէս զընկա առիւծոց զմիմեանս քայտէին լեռկոցունց կողմանցն և յայնժամ զոչեաց քաջն Քոռնիկ և ձայն տվեալ արդ թևին յւրայ՝ և հասանէր ի վերայ ձախոյ թևին այլազգեացն և արատաւէր զնոսա մեծաւ յաղթութեամբ, և դարձաւ հաջեալ ի վանքն Սրբոյ Կարապետին, և ուժգինս ձայն արձակեալ տաւր. «Փրակայ վանք, հասիր մեզ յօքնութիւն, և արա զօրս զայս երևելի ի վերայ Գասատացի լոցս: Եւ միաբան ձայն տուեալ միմեանց և յարձակեցան ի վերայ այլազգեացն և արդն զստն, զամենայն զաւարն, և դարձուցին զամենայն զերթութիւնն, և մնացեալքն այլազգեաց մազապործ զերծեալք ամօթով զեացին յաղխարհն Պարսիցս (Մատթ. Ուռ, հաստ. ԶԱ, Արիս. Կաստ., իս):

Քոռնիկը 1072 թվին տննեում է մի կոչով և Փիլարտոսի դեմ, որ ազգով հայ, կրօնով հոռոմ դարձած և վերջը հուլյնիակ մահմեդական, զորավար էր նախ հուլյնիակ և հետո հուլյնիակից ապստամբելով՝ մի անկախ իշխանութիւն էր կազմել Սասունի և Տարսնի արևմտյան կողմերում, կենտրոն ունենալով Խարբերդը: Նա ձգտում էր և Տարսնն իր ձեռքի տակ ձգելու և Քոռնիկին ենթարկելու իրեն. ուստի գալիս քանակում է Մշարում (այժմյան Մուշուր շենքերը) և մարդ է ուղարկում Քոռնիկին, որ իրեն հնազանդի: Քոռնիկը ծիծաղում, ասում է. «Ահաւոր քնա ծա ոչ տեսանեմ զերեսս նորա: Եւ ասեն ցՊոռնիկ կոչնականքն Փիլարտոսին թե. «Ահա գայ քաղոմ զօրօք ի վերայ քո և տապալիս աւերեաց է զամենայն գաւառս քո: Ասէ Քոռնիկ. «Եւ քանի՞ ան զօրք Փիլարտոսին: Ասեն արդն. «Իբր քան հազար: Ասէ Քոռնիկ. «Են իմ հազար ձիաւորաց... Եւ գեացին զայս ամենայն պատմեցին Փիլարտոսին: Քոռնիկը լսելով Փիլարտոսի գալը՝ սձայն տուեալ զօրաց իւրոց, և արար ժողով զամենայն Սասուն յիսուն հազար հետևակաց և վեց հազար ձիաւորաց, և զայր ի Ճսպաղջուր և ոչ հասարայր գալոյ Փիլարտոսին, դարձոյց զամենայն հետևակազօրան և փնքն հազար ձիաւորով փ լճաւտաւ քաղաքն Լարոյ (չոքաւ): Ընտո շանձիթ գալառի Ալիլուա դաշտում (կոչվա) հանդիպում է Փիլարտոսին, և Քոռնիկը, թեպետ քիչ մարդկանցով, կոր ի գլուխ հաղթում և նրան, որ փախչում է Խարբերդ:

Շատ ցավալի է լինում այս քաջ մարդու փախճանը: Դեռ նոր էր կռիւից դարձել իր Աջմուշատ քերդը, որ Ամիր Զափր անտեսով մի ամիրա զօրքով մտնում է Տարսն և իմանալով, որ Քոռնիկն սասանց զօրքի է, Փիլարտոսի թիչադրությամբ հանկարծ գալիս և նրա վրա և խարեությամբ ու սուտ երդումով հրախիտում է նրան իր մտա, որ անբ սո միաբանութիւն հաստատեն իրար մեջ: Քոռնիկը միամտությամբ զնում է նրա հրավերին

ծրնք մարդով՝ շու մինչդեռ կային ի պինարքուն, վաղեաց ամիրայն զազանարար ի վերայ Քոռնկայ և կամէր սպանանել զնա, և ոչ ունելով Քոռնիկ առ փոք, բայց փոքրիկ դանակով հարեալ զամիրայն՝ ի վայր հեղոր զփոք նորա և զայլոց ամիրայցն բռնեաց զգլուխն՝ ընդ իրար ծածեալ սատակեաց և ինքն ձլեալ անվնաս զնայր ի բերդն, վասն զի մօտ էր բերդն, և ամենայն թուրքն փախստական լինելին առաջի նորա։ Եւ յորժամ զնաց մօտ ի բերդն, մի ոմն ի յայլազգեաց ի թագստեան կայր, հարեալ զՔոռնիկ ռբրովն ի սխտն զաղտարար, և անդէն մեռանէր քաջն Քոռնիկ, և տարան զգլուխ նորա առ Փիլաուստան։ Եւ անօրէն Փիլաուստոն հանեալ զսկաստակ գլխոյն և արար քաւաթ և նովաւ ըմպէր դիկի, և զմնացեայն զլխոյն առաքէր ամիրային Մուֆարկանայ (Մրուանյան հարստութեան իշխող նիզմ այդ Դատուրիա Նասր, 1061—1079 թթ.), և զամենայն մարմինն այրեցին հրով. զորս յետոյ ժողովնցին զայլեցեա՞ զսակերս նորա զառն քաջի և աստվածապաշտի և տարան թաղեցին ի դուռն Սրբոյ կարապետին։ Եւ մնաց փոք երկու որդի. Զորտուանէլն և Վասակ ի տղայական հասակիս (Մատթ. Ուռ., ԸԶ—ԸԷ)։ Այս Քոռնիկը կարծում են, թէ վրացի կինն է առած, որովհետեւ տրդու և հաջորդի անունը Զորտվանէրի է (Տանաշեկ, ԿԵ. 43)։

147. Արարեկներ.— Ստուռնի հայ իշխանները XI դարում իրենց անկախությունը պաշտպանում էին գլխավորապես իրենց դրացի մրուանյան իշխողների և սելջուկյան թագավորների ապառտակաւորների դեմ կռիւնով։ Մելիք Եսէի մահից հետո (1092 թ.), տր անձ անլջուկներից երրորդ թագավորն էր, նրա ընդարձակ տերությունը բաժանվում է մի քանի գրեթե անկախ իշխանությունների։ Անլջուկյան կուսակալները, ինչպես առաջ արարացիները, կազմում են XII դարուց սկսած անկախ տերությաններ, որոնք մեծ մասամբ հայտնի են արարեկություն անունով։ Երկրի այս կամ այն մասն և այս կամ այն քաղաքները հաճախ մի հարստութեան իշխանի ձեռից մյուսին էր անցնում։ Մահմանները հաստատուն չեին։ Դրանց մեջ Աստուրի դրացի իշխանություններն են.

- 1) Որդուկյաններ, որոնց ձեռին եղել ան՝ Դիարբեցիք, Մուֆարկին, Հալիք քաղաքները, և որոնք երկու ճյուղի են բաժանված եղել՝ Կալֆայի, Ամիդի հարստություն (1101—1231 թթ.) և Մարդինի (1108—1312 թթ.)
- 2) Զանգյաններ, Միջագետքում և Ասորիքում, որոնք ձեռին եղել են՝ Բաղդադ, Մուսուլ, Հալեք, Զեյթրն և այլ քաղաքներ։ Սրանք ևս քաժանվել են երկու ճյուղի՝ Մուսուլի հարստություն (1127—1234 թթ.) և Զեյթրիի հարստություն (1180—1250 թթ.)։
- 3) Եանի Արմենների հարստութեան (1100—1207 թթ.), որի հիմնադիրն է Սուքման այլ Կուտրի։ Աս Մովսէսյանների ձեռքից առնում է Խլաթ քաղաքը և կազմում մի նոր թագավորութեան, որ հետագետե մեծանում է տարածվելով դեպի Բագրևանդ և Վանա լճի շրջակայքը։

4) Առողջապահանի քարտեզագրումն (1136—1225 թթ.)։ որ հիմնորում է էլտկուզ Աթաբեգի ձեռագրի և որի սահմանները հասնում էին մինչև Վանա լճի շրջակայքը։

Սասունի իշխանությունը XII դարում կոնիստանդուպոլիսի և բարեկամական հարաբերություններ է ունեցել այս տիրությունների հետ։ Պատմությունը շատ քիչ բան է պահել, բայց ժողովրդական վեպը, փնջպեա տեսանք, դեռ մոռացություն չի սղլած Հաղթեղանի, Խրաթի քաղաքորենին, Մտաուլն ու Ջգիրա քաղաքը։

146. Վիգեն իշխանը և Ռաջորդները։— Քոնստանդուպոլիսի հաջորդ Ճորալանինի մասին ոչինչ հայտնի չէ։ Իսկ Ճորալանինի հաջորդն ու որդին է Վիգեն կամ Վիրգեն կամ Վեգն, որի օրով ելաթի թագավորն է Սուլթան Ռ կամ Միրան Շահ (1128—1185 թթ.), Խլաթի երկրորդ թագավոր Իրահիմ շահի (1112—1127 թթ.) որդին։ Անշուշտ այս Իրահիմ Շահի հիշողությունն է պահած վեպը իբրև Խլաթի տեր Իրահիմ աղա, որի տունն է գալիս Արասեղիքը։ Իսկ Միհրան Շահի օրով Առաջապահանում նստում է էլտկուզ Աթաբեգը։ Իրկուսն ևս Վարդան պատմագրի ասելով քրիստոսասէրք և աշխարհաշինք ան։

Այս Շահի Արմեն, — գրում է Վարդանը, իր 162, — փնայնայ ի Սասունա՝ յորանայր ի գեղի միտում։ Եւ լուծայ Վիգենայ տեսն երկրին՝ Խրաթնայ ի գեղերի միտում պատէր զտունն, յորում կայր, և յասնն ուժման ընդ կատակն. և Այ Վիգեն, ո՛ւր եաւ. ետ պատասխանի ընդ իրն և ասէ. սկսած ասասիկ շնորհապան Աստուծոյ, և կայնայ տանի զնա յամուրն իր և զկնի ասուրց արծաթէ ուխտի և երգմամբ սիրոյ, Պարզ երևում է, որ Միրան Շահը Սասունը նվաճելու է ձկնը, բայց հաջողություն չի տեսնել։ Իսկ Վիգեն իշխանն իր թշնամուն ձեռք ձգելով՝ սպանելուց ախելի լավ է համարել արծաթել նրան և հետը փայրկամություն ու դաշնակցություն անել, նկատի ունենալով, անշուշտ, քաղաքական վիճակը, իր երկրի, որ ջրբապատված էր մահմեդական տերություններով։

Վարդանը վերևի հասովածին իբրև շարունակություն գրում է. «Ճորալան ասուր նլ ի վերայ նորա զօրավարն Պարսից նլտկուզ, և հարեայ փնայ ամթով, սա վառ գնձուկ ի շեանկայ և Սասունք ի Վիգենայ. ամենայն վանորինքն պահէր ի խոր խաղաղութեան դամս վաթսուն։ Այս հասովածը մուքն է։ Արդոք էլտկուզը Շահի Արմենի վրա՝ է հարձակվել ու հաղթվել, թե՛ Վիգենի վրա. արդոք Շահի Արմենն է տիրել Սասունին, թե՛ էլտկուզը։ Մենք հասկանում անք, փե էլտկուզը հարձակվել է Շահի Արմենի վրա, որի հետ դաշնակից էր Վիգենը. բայց հաղթվել է. ուստի և շէր կարող նա Աստուսին տիրել։ Իսկ սպա Շահի Արմենը Սասունն առել է Վիգենից¹²։ Այսպես հասկացածը համեմատ է լինում և Միքայել

¹² Մխիթար Այրվանեսցին 1151 թվի համար գրում է, թե էլտկուզ աթապակն էա զԱմուկ ի Խալդենկայ և զՍասունք ի Վիրգենայ։ Այրվանեսցին բառացի օգտված 8 Վարդանի, որի սուս գերանվան համար հասկացել է էլտկուզ, բայց սխալմամբ։

Ասորու և Բար-էրբոսի պատմածին, թե «Սասունցի հայ իշխանները նփրկերտի տիրողմեն սաստիկ նեղված՝ Խլաթա տիրոջ Եահի Արմենին գնսպան զրկեցին ու տնոր հետ միացան, հանձնելով իրենց ամուրներն ի Սասուն» (Տոմարեկ, էր. 45, հտն.)։ Կեշանակի՝ Վիգեն իշխանը լկարողանալով զիմադրել Մուֆարկնի Օրդուկյաններին՝ ավելի բավ է համարում 1151 թվին իր գաղնակից Միրան Եահի գերիշխանության տակ մտնել, որ ավելի զորավոր էր և որի կողմից ֆր երկիրն ավելի լաց էր։ Սասունն ֆր անկախութեանը կորցնում է։ Բայց պահում է իր բնիկ իշխանութունը և խաղաղութունն է վայելում, մասնավաճող որ Սուրման Բ զորանալով Խուլնիակ նփրկերտի վիճակին է տիրում։

Թե ինչ հարաբերությունն է տնենում Սասունը Խլաթի հետ Վիգենից հետո՝ այդ շփոտնեց։ Միտն հայտնի է, որ Միրան Եահի մեռնելիս (1185 թ.) Վիգենի թող՝ Եահնշահ՝ նրա մտտ արգելված էր Մանազկերտում. իսկ Սասունում գոնացած էր Բեկթամուր ամիրան, որ Միրան Եահի ստրուկն էր ու վերակացուն։ Պետք է կարծել, որ Վիգենից հետո Եահնշահը կամ իր հայրը (որի անունն անհայտ է) ապստամբել են Խլաթա թագավորների գերիշխանությունից, բայց հաղթվել են և Եահնշահը ֆրբն գերի կամ արտանդ է տարվել Խլաթա թագավորի մտտ։ Այս համեմատն է արարացի Իրն էլ Աղիդի հաղորդածին, թե սասունցիները ռթեման Խլաթի տիրոջ հետ խաղաղության կամ հավատարմության զարչինք կրած էին, սակայն իրենց ամուրներն ու անկախությունն ալ պահում էին։ Հաղթվ 1184 թվականին տանկաց ձեռքն անցնց ամեն ամուր տեղերը» (Տոմարեկ, էր. 38, 46)։

Միրան Եահի մահից հետո նրա տեղութունը շփոթվում է և Եահնշահն արաստվելով արգելարանից՝ իրաչիննելով վերադառնում է Սասուն. թործան քերդում ընկելով Բեկթամուրին կտրած վր քաղաքն է տանում և երգում առնելով նրանից արծակում է նրան։ Բայց շուտով Բեկթամուր ընկավորը զորանալով դառնում է Եահի Արմեն (1185—1193 թթ.), տիրում է Մանազկերտին ու Խլաթին և զորք ժողվելով, ընդդեմ երգման զայն է Եահնշահի վրա. տիրում է թուրք Սասունին ու Տարունին. խատությամբ հարկեր է հավաքում և նույնիսկ եկեղեցիներն ու վանքերը սաստիկ նեղում, կողոպտում է Եահնշահի բոլոր ինչքը։ Եահնշահը ընկնում է վարձատե իֆխանութունից (Վարդան, էր. 174, Չամչյան, Հայոց պատմ. 9, էր. 150)։

Անշուշտ Սասունի իֆխանական տոհմը չի վերջանում այդպիսով. նրանք ձգտած պիտի լինեն դարձյալ իրենց նրկրին տեղ դառնալու, գուցե և հաջողել են բայց պատմութեանը մեզ տչինչ չի տալու։ Արարացի Արու Յեզա հիշում է, օրինակ, որ 1197 թ. Եահի Արմենի մահից հետո (Բեդր աղղին Ակ-Սառնկար 1193 թ.) սասունցոց տոհմից Վուֆու (պախտավոր) անունով հայը տիրում է այդ իշխանությանը, սակայն շատ շուտով ընկնում է և տեղը զրվում է Բեկթամուրի որդին (Մանազ Մուհամեդ 1198—1206 թթ.)։ Բայց ինչպես էլ լինի, Սասունը հետզհետ

ընկնում է. որովհետև այդ ժամանակ զորանում են Եգիպտոսի էյուպյան մեկիքները, որոնք տիրում են Ասասենը շրջապատող երկիրներին:

148. Եգիպտոսի (Մարի) էյուպյացի հարստությունը:—(1169—1250 թթ.)
Հիմնադիրն է Սալահադդին (1169—1193 թթ.), ազգով քուրդ, զի Մասեսցուտե՛, ժառանգ, լեպ սուլտանին Մեքսինայ և Հալբայա (Կիրակոս Փանձ., եր. 88), որին հաջողում է տիրել Եգիպտոսին, Եմենին, Դամասկոսին, Հալեքին, Մասուլին և վերջապես Երուսաղեմի քրիստոնյա տերությանը (1187 թ.), Նրան ենթարկվում են և Կայֆայի Օրդուկյանները: Եվ այսպես Եգիպտոսի Մալահապանց Պադիսադինի և Եգիպտոսի և Միջագետաց և մեծ մասին Հայոց աշխարհիս, ինքնանք և թոռուք իրենաց. որ կոչիւր Եստանքա: Այսպես կոչվում է այդ հարստությանը Սալահադդինի էգիլ Սելիմադդին եղբոր անունով, որ Սալահադդինի մահից հետո նրա որդիների փոխանակ տեր է դառնում Եգիպտոսին, Ասորիքին և Միջագետքին: Հալեքը միայն մնում է Մալահադդինի ուղիղ հաջորդների ձեռին մինչև 1260 թ., փակ ձեռնի կառավարիչները ծագում են Սալահադդինի ուրիշ եղբայրներից: էգիլը էյուպյան պետության գրուխ է մնում մինչև իր մահը (1218 թ.), որից հետո Եգիպտոսին, Ասորիքին ու Միջագետքին իշխում են իր որդիները: 1200 թ. արդեն նա Միջագետքի կառավարիչ նշանակում է իր որդիներից մեկին, Ավհադ մելիք անունով, որ 1207 թ. Շահի Արմենների ձեռից անում է նրանից թագավորութունը: Նրան հաջողում է եղբայրը Մեհիք Աշրափ (1210—1230 թթ.), որ 1228 թ. միաժամանակ և Դամասկոսի տեղն է դառնում: Ապա Միջագետքի ու նրանի վրա իշխում է Եգիպտոսի Եգիլը՝ Մուղաֆար Ղազի (1230—1245 թթ.):

Անըուշտ նաթի թագավորության հետ և Սասունն էլ անցնում Եգիպտոսի մեկիքներին, ճանի տր քիլ առաջ նաթի թագավորները նվաճել էին Սասունը: Այց Սասունի ընկել տերերը, Բնչպես Երևում է, Եգիպտոսի թագավորների դեմ կռիվներ պիտի մղած լինին իրենց անկախության համար: Մեր պատմագիրներն այդ մասին բան չեն հաղորդում: Ապագայում արաբացի պատմագիրները գուցե շատ բան պահպան: Միայն՝ թե Ասսունն հեշտով Սասունը չի անցել Եգիպտոսի թագավորների ձեռքը, դրան ապացույց է աքն, որ մեր վեպի մեջ սասունցիները գլխավոր տե սասունակից թշնամին Մարա (Եգիպտոսի) մեկիքներն են, որոնց հետ կովում են Սասունի հերոսները: Եթե Սասունցիք Մարա մեկիքների դեմ զորեղ կռիվներ մղած լինեին վերենց անկախության համար, վեպի մեջ հին Ռադդադի խալիֆայի դեմ վարած կռիվը չէր դառնալ, ինչպես պատմների մեծ մասի մեջ էլ, կռիվ Մարա Մեկիքի դեմ:

150. Վրացիներ և թաթարներ:—Միշտ այն միջոցին երբ էյուպյանները զորացած տիրում էին հարավային արևմտյան Հարաստանին: կամ ինչպես Փանձակեցին (եր. 88, 111) դնում է Եմեն մասին Հույոց աշխարհիս, Հայաստանի հյուսիսային կողմում դորանում են վրացիները:

Գեորգի թագավորի դուստր Քամար թագուհու արտվ երկու հայազգի եղ-
բայրներ Զաքարեի և Իվանի ձեռով շատ բնորոշակիւմ են Վրաց տե-
րութեան սահմանները: Նրանց տրադում ջանի թափեցին զաշխարհս Հա-
յոց ի Պարսից և առին լիևանայ մինչև ցեհրքին Քասեն և ի Քարկուշատայ
մինչև ի Մմեկերտ, առին զԿարա, զՎաղարշահերտ, զԿաղզվան, զՍուրբ
Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲշնի և զԳաննի, զԳուին մայրաքաղաք, զԳարտ-
ման, զԳարեք, զՀերթ, զՏամաք, զՏաքի, զՊարտաւ, զԳարաբերդ, առին ի
660 (1211 թ.) թվին զԱրմենիս, զՈրոտն, զՔորդան, զԲոնն, զՔարկուշատս
(Ստեփ. Օրբելեան, եր. 287): Իսկ Արակուան (եր. 95) ավելացնում է
նաև, թէ սհարկատուք արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին, աւերե-
ցին և զքաղում գառառ և զԱրայատականս:

Վրացիները հաճախ հարձակվում են և Տառի Արմենիների վրա, որոն-
ցից խուճում են և Քաղաքները: Նրանք մինչև Խաթի վրա են հասնում, բայց:
այդ սյն ժամանակ էր, երբ այդ քաղաքն անցել էր Աղայատոսի էլուրյան-
ների ձեռքը: Զաքարե զորավարը պաշարում է Խաթի և այս քաղաքի
քախտը պիտի վճռվեր, թե արդոք հարավային Հայաստանի՞ն էլ տե-
պիտի դառնային վրացիները, որոնց տիրապետութեան ժամանակ հայ
ժողովուրդը փոքր ինչ ազատ շունչ էր քաշում, թե՞ դարձյալ այստեղ
իշխող պիտի մնային մահմեդականները: Դժբախտաբար Խաթի քաղաքի
պաշարումն անհաջող է լինում. Իվանեն գերի է բռնվում, և Զաքարեն
ստիպվում է պաշարումը վերցնել և խաղաղութիւն անել: Թարեհամու-
թյունը հաստատ դարձնելու համար Խաթի տիրոջը կնութեան է տրվում
Իվանեի աղջիկը, որը եղև կին Կոռյն և յետ նորայ Աշրափինս:

Այսպես վրաց առաջխաղացութեանը կանգ է առնում, և նրանք
մինչև Տարոն ու Սասուն չեն հասնում, և սատուները, որ այժմերը
դարձրել էին դեպի քրիստոնյա վրացիները, իսկոյն դարձի մեղ գործում
էին շատ հայ իշխաններ և մարտիկներ, մեծակ են մտնում Մարա մելիքնե-
րի առջև: Հայաստանը բաժանվում է երկու մեծ մասի՝ վրաց և եգիպ-
տացոյ:

Իվանեի դուստր Քամար տիկինը ըսվածսն բայութիւններ վստում
և դյուրութիւններ պատճառում քրիստոնյաներին եգիպտացիներէ տե-
րութեան մեղ, որոնց վշտողներն ընդհանրապես շատ վրայատ շէին վար-
վում հայերի հետ: Բայց խաղաղութեան երկար չի տևում:

Արմենիցի երևան են գալիս մտնողները: Խուարեզմի շահ Ջալալեդդի-
նը թաթարներին հալածված՝ 1230 թ. մտնում է Հայաստան և առնում
Խաթի¹³, Մելիք Աշրափի կին Քամարն դառնում է այժմ Ջալալեդդինի
կինը, բայց Մելիք Աշրափն ու իր եղբայրը՝ Եգիպտոսի մելիք Քեմիլը ոգ-
նութիւն ստանալով Արիկիայի հայերից և ուրիշներին՝ հաղթում են
Ջալալեդդինին: 1231 թ. թաթարները Ատրպատականից հալածում են:

13 Կրեմլոս Գեմն., եր. 183. «Գեաց եւ ի գաղաքն Խաթր պիարհին Բզնուկացո-
պետք է սղղել զի գաղաքն Խաթ, որ յաշխարհին Բզնուկացո»:

Ջալաբեղիներն, նվաճում են Ատրպատականը և փրկեց խմբորով հեղեղում Հայաստան, Վրաստան, մինչև 1245 թ. տիրում են ամբողջ Հայաստանին ու Միջագետքին, առևտւմ են և իյաթ քաղաքը, որ իր շքակայքով հանձնում են Քամիթա իշխանուհուն: Ետևով անկում է և Բաղդադն և ընկնում է Բաղդադի խալիֆարությունը (1258 թ.): Եվ այսպես թաթարները տեր են դառնում Հայաստանին, Միջագետքին և Անտրիքին:

Հայ իշխանները, որ առաջ ծառայում էին Վրաց զորքի մեջ, այժմ շատերը կամա թե ակամա մտնում են թաթարների բանակի մեջ և մասնակցում նրանց կռիվներին: Գրանցից մեկն է և Սաղոս իշխանը, որին հանձնվում է Սասունը, որովհետև Բաղդադի առումից հետո, երբ թաթարները հայ իշխանների օգնությամբ երկու տարի պաշարում են Մուֆարդիքը, այդ ժամանակ ալլ և ամբապոյն երկիրն Սասնոյ նկին ի հնազանդութիւն ծառայութեան թաթարին, ապախնակայք իշխանն Սաղոսն՝ յորդի Ենթարայութին փ թոռն Սաղոսնին, քրիստոնեայ Հուստով և բարի գործով, և մեծ պատասով առ Հուլատուն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր մինչ զի ընդառաջին ախոյններից կարգեայ էր զնա Հուլատուն. սմա ետ զգաւառն Սասնոյ (Կիրակոս Փանձ., էր. 232):

Ո՞վ էր այս Սաղոսն իշխանը, որին թաթարները հանձնում են Սասունը: Փանձակեցու մեջ (էր. 121, հոն.) կա Քուրթ անվանեալ մի շրաքնակապետ իշխան, որ սատարեցեալ փ թաթարութեանն վրաց մեռւմ է Կարնո քաղաքում: Թամար թագուհու օրով այս Քուրթ իշխանը դառնում է զգալ ի հայրենեան իւր յաշխարհն Կայնոյ և Մազկանարեքոյ, և բազում մեծաբանս եղ նմա թագուհին վրաց, որ թամարն կոչէր, զարծուցանելով ի նա զհայրենի տեղիս և այլս յուրովս Սա է հայր Սաղոսնին և Գալթի, պապ Ենթարայութին¹⁴ հօր Սաղոսնին: Այս վերջին Սաղոսն է և այն իշխանը, որին թաթարները հանձնում են Սասունը, նրա նախնու Քուրթ անունը, իսկապես մակամուն է, ցույց է տալիս, որ նրանք Հայաստանի հարաւային կողմերից են պաղթած. որովհետև այդ ժամանակները քրդերն արգեն հոռատոված վին հարաւային Հայաստանում: Արդոյց Քուրթ իշխանի տոհմն իսկապես Սասունի իշխանական տոհմից չէ. հուսիս գաղթած և կալվածների տեր դարձած, և որոնց սերունդ Սաղոսնը դարձայ տեր է դառնում Սասունին: Սասունցոց ցեղից զեպի արեմոտս՝ Կիլիկիա էլ կան գաղթաձեներ. անհավանական չէ, որ Հուսիսային Հայաստանն ևս գաղթած լինեն: Փանձակեցին սհատաձեայ ի քրթաց զնում վ նշանաւոր Ջաջարեի և Իվանեի նախնուն, որոնք և վերոհիշյալ Քուրթ իշխանի քրոջ որդիքն են: Ինչպես էլ լինի, պետք է ընդունել, որ Սասունի իշխանները վրաց տիրապետության ժամանակ այդպիսի մի դեր կատարել են, քանի որ մեր վեպի մեջ Գալթիքը գնում է Գյուրջիստան տիրում: Մհերն իշխում է Գյուրջիստանում և այնտեղից գալիս

¹⁴ Տպագրված է. սևս է հայր Սաղոսնին Գալթի Գալթեր Բարեցին հօր Սաղոսնին. պետք է սղղել, ինչպես վերում գրեցք:

է Մասուն և կոչում կողքադէի կամ Մարա Մելիքի թոռների դեմ և մինչև-
խակ Հաշեր ու Բաղդադ գնում, — որ անդուշտ հիշողութուն է հայ իշխան-
ների և Մասունի Մարուն իշխանի ծառայելու թափարների բանակի մեջ
Բաղդադի խալիֆայի և էտլյան հարստության դեմ վարած կռիվների
ժամանակ:

Քե ինչ վիճակ է ունենում Մասունը թափարների տիրապետության
օրով և դրանից հետո, քաջական մտքն է. բայց այդ շրջանը շատ էլ
կարևոր չէ մեր վեպի ուսումնասիրութեան համար: Վեպի էական կող-
մերն արդէն մեծ մասամբ պարզվում են Մասունի պատմության մինչև
XIII դարի կեսերը, երբ Մասունում դեռ շին հաստատված քրդերը, կամ
նոր են մտաք գործում: Հաջորդ XIV դարում քրդերն արդէն հաստատ-
ված են Մասունի լեռներում, և Մասունը, ինչպէս տեսանք, ենթարկված
է թուրքմեններին: Մեր վեպի մեջ սակայն Մասունի քնակիչները միայն
հայեր են, և սասոնցիները կոչում են Բաղդադի խալիֆայի և Մարա
Մելիքի դեմ: Մի երկու պատումում միայն հիշվում են քրդեր, և նույնիսկ
Մարա Մելիքը քուրդ է անվանվում, ինչպէս որ էին իրոք իրին և իր ժ-
ռանդները: Վեպն ուրեմն էական մնում է իբրև հիշողութուն մինչև XIII
դարը կատարված դեպքերի:

Տեսնենք ինչ ձևով է պահպանել վեպն այս պատմական հիշողու-
թունները:

Ե

ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

151. Վեպի և պատմության համեմատությունը:— Անշուշտ կարելի
չէ մի ժողովրդական վեպից, որ դեպքերի կատարվելուց մոտ 500—1000
տարի հետո է գրի առնված, կատարյալ պատմական ճշմարտութուն
պահանջել: Նույնիսկ դեպքին ժամանակակիցները, մանավանդ ժողովրդի
մարդիկ, հայտնի է, թե որքան հեղաշրջված են պատմում դեպքը. իսկ
ժողովրդական վեպի մեջ այդ հեղաշրջումների վրա ավելանում են նաև
գարերի զերտախորամուկներն ու այլապիտակությունները: Ե՛րբան
երկար է սուրում երգը, այնքան արտասա պատմական է գտնում. որով-
հետև փոխվում է արտասուղների հայացքը պատմության վրա, երգի առաջ-
դրվում մե նոր խնդիրներ, երևան են գալիս նոր պատմական սյուսետ-
ներ և հերոսներ: Պատմականորեն և տեղականորեն քնորոշը, հինը ետ-
է մղվում նորով. նորագույն վերամշակումներն ու խմբագրումները փո-
խում են սկզբնականը, որ ավելի մոտ է պատմությանը... Որքան
ավելի ժողովրդական է դառնում հերոսը, այնքան պակաս պատմական-
նորեն հավաստի քան կա նրա մեջ: Այս ամենն առաջ է բերում մեծ թվով
անաքրոնիզմներ և հակասություններ երգի մեջ: Գրանց մի մասը հին
ժառանգական նշույթի մնացորդներն են, մնացած մասը հնի և նորի հա-
կասական միացումը: Հակասությունները երգերի ըուցմանըների մեջ:

ժազում են, ներք մի հեքոսի տեղ անցնում է մի ուրիշ. երբ երգերը հարակցվում են, կամ երբ հեքոսները մի ժամանակինք և տեղից փոխադրվում են մի ուրիշը¹:

Ձևայնով այս ամենին, մեր վեպը մինչև այժմ արնքան շատ պատմական տունի իր մեջ, որ հեշտությամբ կարողանում ենք տեսնել նրա մեջ մնացորդներ Սասունի պատմության, որ վերնում դրինք: Այդ մնացորդներն այսօր ևս երկար փորձեր ընթացքում պահվում են միայն այն պատճառով, որ մի անգամ որ հաստատուն կերպարանք վ ստանում վեպը, այնուհետև մի տեսակ քարոսցած է մնում և դժվար է փոփոխություն ենթարկվում:

Մեր վեպի էական միջուկը կազմում է IX դարի Սասունի պատմությունը: Հարող դարերը ազդել են միայն այդ միջուկի կերպարանափոխության վրա, իսկ նախորդ դարերը արարացող տիրապետության ժամանակ, համեմատաբար սակավ նյութ են տվել վեպի համար, չնայած այն՝ որ այդ միջուկն ևս, ինչպես կարծում ենք և հետո կտեսնենք, դալիս է ավելի հին ժամանակից և IX դարու գեպերի ազդեցությամբ տակ միայն շատ զորեղ կերպարանափոխություն է ենթարկված:

Վեպի զլիսավոր հերոսը Դավիթ Բագրատունին է, Բագրատի որդին: Ժամանակն այնպիսի էր, որ քաջազեն մարդիկ ամեն տեսակ ախարարածություններ կարող էին կատարել, և մեծ անուն ու համբավ հասնել նման, օրինակ, Ասուրկելի յորդի Գուրգենին, որի մասին պատմում է Քովմա Արծրունին: Հավաստյով Սասունի և Տաշտանի տեր Դավիթ Բագրատունին ևս շատ այդպիսի գործեր արած պիտի լինի և նույնիսկ իր կենդանության օրով ժողովրդական զորյունների նյութ դարձած, որ նա Դավիթ Արբա է կոչվել կամ լուկ Արբա և այդ այն ժամանակ, երբ իշխանաց իշխան Աշոտը դեռ Բագրատը չէր դարձած (Քովմա Արծր., եր. 218, 220, 231):

Խալսեցի Հովնանե էլ Դավթի հետ ժողովրդականություն է վայելել: Վեպի մեջ նա դարձել է Դավթի մեծ նորալը, հորեղբայր կամ քեռի: Նա մի հասարակ մարդ չի եղել, այլ Բագրատ Բագրատունու Քունիկ եղբոր որդին, որ աստիճանորդել է աստուցիներին հարձակվել Յուսուպի վրա, և դիմադրություն ցույց տվել Բուդալին: Նա ազդեցիկ մարդ է եղել, ծայրով, այսինքն ձայն ունեցող է եղել, նրա ծայն անց է կացել: Այս իմաստով է, հարկապ, գործածված սկզբնապես Ձեռով Հովնանի մակդիրը, որ հետո ժողովրդական վեպի ոգով ըմբռնվել է Քիզիկական իմաստով՝ իբրև գոռացող: Ձեռով Հովնանին, ինչպես կտեսնենք, փոխանակում են Քեռի Քորոսը և իշխանը:

Դավթին իբրև մեծ եղբայրներ կամ հորեղբայրներ դրվում են վեպի մեջ նաև Յուսու Վեգի կամ Վեգո, հոր Մաուկ, Փոբրիկ Ճեճղիկ կամ Ճեճղախոբիկ, հոր Գուսան: Վերջին ներկուսն իբրև գործող անձ

¹ «Сербский эпос», ер. 117.

բնակ առաջ շին գալիս²։ Առաջինը պատմական Վիգեն կամ Վիրգեն իշխանի հիշողութիւնն է, որ անաքրոնիզմով դարձել է Գավթի մեծ հզարայր կամ հորհրդայր, բունեով պատմական Աշուտի տեղը։ Ժողովուրդը չկարողանալով մոռանալ, որ Վիրգենի օրով Սասունն անթարկվում է ալլազգիներին, շատ ճիշտ պատկերացրել է նրան տալով իր անվանի մակդիրը։ Մարմնական մեծ ուժի հետ նա քաջութիւն շունի. վախկատ, թուլափրոտ ու անարի է։

Բաղդադու խալիֆան վեպի մեջ իհարկն նորյն գերն է կատարում, ինչ որ պատմութիւն մեջ. միայն պատումների մեծ մասի մեջ նա փոխված է Մարա Մելիքի։ Նորը նա է մղել հին անունը։ Երկիրն ավերող Քուղայի անունն նս դռնում ենք վեպի մեջ Բաթմանա Բուլա անով, միայն դարձալ նս մղված է ուրիշ գերի մեջ, Պատմական Բուրաջի հիշատակը սակայն դեռ մնում է մասամբ. Բուլան Մարա Մելիքի—Բաղդադու խալիֆայի իրկու փահլեաններից մեկն է, տրոնց հանձնում է Մարա Մելիքը Գավթին ապանել, բայց շին կարողանում։ Բուլայի դերը վեպի մեջ կատարում է ինքը Բաղդադու խալիֆան—Մարա Մելիքը։

Հարկանանութեան կովիլը վեպի մեջ նս, ինչպես պատմութեամբ, քրոնում է առաջին տեղը ասսուրացիների ու Բաղդադու խալիֆայի (Մարա Մելիքի) հարաբերութեան մեջ, Վեպի հինց սկզբից տեսնում ենք, որ Բաղդադու խալիֆան, տր շատ զորեղ է, հարձակվում է մեր ազգի վրա, շատ նվազեցնում մեր ազգը, Հայերը ենթարկվում են նրան և հարկ են տալիս. բայց ոչ հեշտութեամբ, որովհետև դրա համար հարկաւոր է լինում կրկին ու կրկին անգամ հարձակում դործել հայերի վրա, որոնք երբեմն նույնիսկ տեղն են լծում այդ հզոր խալիֆային, որի անունը լրսեւրով անպատիւմ են շատերը։ Նույն հարկահանութեան կղիվը պատմութեան է կրկնված ևնում և Մարա Մելիքի վրա։ Պատմական Ապուսեա, Մուսն, Յուսուփ անուններից ոչ մեկը չկա վեպի մեջ. այլ դրանց փոխանակ կամ անանուն անով ստաք յասարուք, սյոթը մարդք, սմի փաշաք, սխուրաշիք, կամ թե Բադին, Կոլ Բադին, Կուլ Բադին, Ղուլբադին, խոր Բադին, Պիրարադին, Կուլ Բահդին, Կուլիկ Բադիկ, Բադիկ, որին քնկերակցում են երբեմն Սյուդին ու Չարխադին։ Գրեթե բոլոր պատումների մեջ Բադին, Բադիկ անունն սկուլք, սխուք և այլ մականուններով է։ Վեպն այդ անվան մեջ միացրել է բոլոր հարկահաններին և վանքն ավերողներին։ Գա հազաստայով Մրուանյան հարստութեան հիմնադիր Բադ ամիրայի հիշողութիւնն է վեպի մեջ և փոխանակած է Մուսնյին և տարիներին։ Ով այս շատ բնական է, և թե ի նկատի տանենանք, որ Բադի տեղութեանը նույն տեղն է քրոնում, ինչ որ մի դար առաջ Մուսնյինը, և որ երկուսն ևս նուրբպիսի հարաբերութիւնն են ունեցել Տարոնի ու Սասունի հետ։

2 Մեծուզ, Հասն և Իշխան անուններով իշխաններ հիշվում են Մուսթ. Ուսանցու մեջ, էր. 106, հուն., որոնք վրա մի իսկական ժողովրդական գրույց կա պատմված։ Իշխան և Մեհրդակ անունները միասին մի գրույցի մեջ հիշեցնում են մեր վեպի Իշխանն ու մեհրդակը։

Վեպի մեջ ևս Հարկ տուեելու համար երկու և ավելի անգամ ուղարկվում են Հարկահաններ, որոնց սկզբում բան անել չեն կարողանում, ինչպես է և պատմութիւն մեջ: Բայց հետո Բաղիկն ավերում է Մարութա վանքը, կտորում է միաբաններին, քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ և այլն: Անշուշտ Բաղամիրայի ձեռով Տարուում, Մուշ քաղաքում կատարած քահանաների կոտորածի հիշողութիւնն է, որ մեռում է վեպի մեջ. բայց ինչպես տեսանք, վանքն ավերելու և վանականներին վերադարձնելու արայիսի գեպք սկզբնապես կատարվել է Կան Դավիթ Եար-քայիչ արով, և այդ գեպքի պատճառով սաստիցիները սպանել են Հարկահանին: Այսպես վիպական Դավիթն ավարատներին հետևից է ընկնում, ավարն ու գեղին են առնում և բռնելով Կողբարդին սաստիկ սրտածում:

Դրա համար դորածողով է անում Մարա Մեղիքը, Հրովարտակ գրելով իր ձեռքի տակ եզած թորք իշխաններին, հավաքում է քուրք զորքերը նորելուկ մանուկից սկսած մինչև սպիտակամորուք ծերունին և գալիս է Սասունի վրա փր անպատվութեան վրեժն առնելու: Պատմութիւն և վեպի եռյանութիւնը կատարյալ է: Տարբերութիւնը միայն այն վէ, որ Բաղդադի խալիֆայի գործակար Բուղդայի փոխանակ Մարա Մեղիքն անձամբ գալիս է Սասունի վրա, և նա է ազատելու փոխանակ պատմական Յուսուփի: Մարա Մեղիքի մեջ կնշտակի միացած են գծեր Բաղդադի խալիֆայից, Բուղդայից և Հարկահան Մուսիից ու Յուսուփից: Կան պատուաններ որոնց մեջ հին ձևով Բաղդադու խալիֆան է գալիս Սասունի վրա, ավերում երկիրը. այդով դռնը Յամա մեջ. ինչքան էք ու որք կար՝ ամեն բան առ ու եսիր արամ, զնացա:

Բուրք պատուաններ Դավթի և Մարա Մեղիքի մեջ մի ազգակցութիւնն են դնում: Մարա Մեղիքը Դավթի մեծ ու խորթ եղբայրն է՝ ապօրինի ծնված Դավթի հորից կամ Դավթի մայրն փր ամուսնու մահից հետո մարդու է գնում Մարա Մեղիքին, կամ Դառնիկ Որբիկի—Դավթի մայրը սկզբում Բաղդադու խալիֆայի նշանածն է և այլն: Այս կինը՝ Դավթի մայրը կամ խորթ մայրը՝ Դավթին Մարա Մեղիքի մոտ եղած ժամանակ, պահպանում ու հովանավորում է, շնորհելով օր Մարա Մեղիքն սպանել սա նրան, իսկ Դավթի ու Մարա Մեղիքի կովի ժամանակ նա աշխատում է մահից ազատել Մարա Մեղիքին: Առաջին Հայացքից շատ տարօրինակ է թվում այդ ազգակցութիւնը, բայց դա պատմական հիշողութեանն է: Այդ շրջանում տարակրանքն իր քաղաքական նպատակներով աղքիկ տալ այլազգիներին: Մուսիի կինը, ինչպես տեսանք, Բաղդադուի քուրքն էր, Դավթի հորաքույրը, և նա պաշտպանում էր իր ամուսնուն Բաղդադի պաշարման ժամանակ: Նա իր քարծր դիրքով, անշուշտ, ազգած պիտի վնի թե իր եղբոր և թե նրա տրդիներ զիճակի համար՝ նրանց զերուքիւմ ժամանակ:

Այս պատմական ազգակցութիւնը, սակայն, վեպի մեջ մեծ մասամբ շուտ վ՛ աբված, որովհետև նոր հասկացութիւնս հայ քրիստոնյա կինն իր կամքով մարդու շէր գնալ մահմեդականի: Ուստի փոխանակ Դավթի հոր, Մեղիքի կամ Սանաաւրի քրոջը մարդու տարու այլազգուն, ինքը

ՄՀՆԵՐը կամ Մանասարն է գնում, վեպի խոսքով, սխառնակվում քաջ-
ազգու կնոջ հետ, որից ծնվում է Մարա Մեկիքը։ Այս փոփոխութիւնը կա-
տարված է և այն պատճառով, որ մեր վեպի մեջ ևս պատմվում է շատ
ազգային հատուկ մի գրույց, որով հերոսն ապօրինի հարաբերութիւնն է
ունենում մի կնոջ հետ, և դրանից ծնված զավակն իր հոր հետ կովում
է։ Այս միջադեպը կտեսնենք Դավթի համար։ Նույնը կրկնված պատմված
է և Դավթի հոր համար։ Որպեսզի այս միջադեպը հարմարվեր պատմը-
վածքին, հարկավոր էր, որ Դավթի և Մուսեյի պատմական ազգականու-
թիւնը վերածվեր ապօրինի կենակցութիւն։ Կնշանակի՝ վեպի հին ձևին
ավելի մոտ է այն պատմվածքը, որի մեջ այլազգուն գնում է Դավթի
մայրը, փոխանակ հորաբորոքի։ Իսկ Դավթի մոր Բաղդաստի խալիֆային
նշանած լինելը վերջին մի շուտ տված ձևն է։

Բագրատունի Դավթի գերութիւնն ևս հիշատակվում է վեպի մեջ,
միայն փոքր ինչ միջնացած ու փոփոխված։ Պատմաճեղքի մեծ մասի մեջ
Դավթիքը Մարա Մեկիքի հետ կռվելու քննվում ու հուրի, այսինքն քանտի
մեջ է նշվում շղթայված և Զենով Զովանի օրնաթիւմը ազատվում է քան-
տից։ Այս միջադեպը ուրիշ անգամ ևս պատմվում է կրկնված ձևով Դավ-
թի և Նուշեիսկ նրա որդի ՄՀՆԵՐի վրայ։

Դավթի համար վեպի մեջ կա և մի ուրիշ գերութիւն պատմութիւնն։
Վեպը սիրում է միշտ իր հերոսին փոքր հասակում գնել օտարութիւն
մեջ, ինչպես հին Վիպասանքի մեջ Արտաշեսը սմանուկ հասակում է ա-
պաստանում պարսից երկիրը. «Պարսից պատերազմին մեջ Տրդատին
երեխա ժամանակ են հունակաւ երկիրը տանում, թեպետ և ըստ պատ-
մութիւն Արտաշեսն ու Տրդատը տարիքավոր ժամանակներն են Պարսից
կամ Զունաց երկիրն ապաստանում։ Նույնպես և մեր նոր վեպը Դավթին
իր հորալիքների հետ մանուկ հասակում է դնում Մարա Մեկիքի մոտ գերի։
Այս գերութիւնը պատմված է պանախան վիպական և հեքիաթային հզա-
նակներով. օրինակ՝ մանուկ Դավթիքը Մարտն է. նա մեծակ վրակված է
մութ տան շորս պատի մեջ, ուր արևի շողք լի ընկնում։ Վրան կարգված
է մի պահապան, որին վեպը բնութագրած է անվանում։ Մարա Մեկիքը
հրամայել է թէ Դավթին օտր հաց տանեք, միս կ'ըլնի՝ տակոր հանեք, լիւր
կ'ըլնի, կոճ հանեք։ Ուրիշ խոսքով՝ այ մի գնեք յպիտի տրվի Դավթին,
որովհետև վիպական եղանակով սեկորն ու լրի կոճն գնեք են ծառայում։
Բայց մի անգամ տակորով միս են տանում, Դավթիքը միտն ուտում է, ոս-
կորը խփում լուսամտային. սփռեց, շող ընկալ գնտին։ Դավթիքը, որ
արևի լույս շէր տեսել, շողի հետ կովում է, նրան դուրս հանել լի կարո-
ղանում, — մի հեքիաթային գիծ, — վարպետը շողի ծակը կարնում է և
պապ Մարա Մեկիքի թուլութեթիւմը քանտից լույս աշխարհ հանում
Դավթին, բայց նրա կյանքը դարձնալ դեռ միշտ վտանգի մեջ է. Մարա

3 Ոսկորն ու լրի կորիզն իբրև գնեք դուրս են գալիս հնեց մեր վեպի մեջ ուրիշ տե-
ղերում։ Հմտ. Իշի մետքը Սամսոնի ձեռքին։

Մենիքը շարունակ ուղղում է ապահել Դավթին, և հիմն չի սպանում՝ միայն մոր պատահառով, մինչև տը վերջապահ թնախ թողուց զնում, դասաստանով ազատում է Դավթին, որովհետև պզտիս գին է զնի, տիրուն կը հասնիս:

Պատմական Դավթի տրացուսթյունը չի հիշվում վեպի մեջ. բայց Մորա Մենիքը նախքան Դավթին և իր եղբայրներին ազատելը՝ պահանջում է, որ նրանք իր թրի տակով անցնեն, այսինքն՝ հպատակության երթալուներն անցնում են Մորա Մենիքի թրի տակով. իսկ Դավթիքը, ինչպես վայել էր նրա պես գաղափարական քննադրությանը, չի կատարում այդ: Թրի տակով անցնելը մի պատկերավոր արտահայտություն է գերված հայ իշխանների ուրացության և հպատակությանը Բաղդադու խալիֆային:

Գերությունների վերադառնալուց հետո մեծ եղբայրը, Յ. Վերգոն, ինչպես պատմության մեջ Աշոտն, իր հոր տեղը նստում է Բերդում Թագավոր, Երկու եղբոր, Դավթի և Աշոտի պատմական հարաբերության մի մութ հիշողություն ևս կա վեպի մեջ: Վերգոն, որ ասացիք, թե Աշոտի տեղն է բունը, միշտ թշնամական աչքով է վերաբերվում Դավթին, մինչդեռ Ձենով Հովանք, պատմական խուժժցի Ծոփանք (ձովնանը) պատմական Դավթի հոգի, վիպական Դավթի պահպանողը, հովանավորողն և օգնողն է ամեն տեղ և ամեն անգամ: Երկու Աշոտի, Դավթի եղբոր և որդու, դեպքերի հիշողությունները, սակայն, խանձված են իրար: Մհերը, Դավթի որդին, զրկվում է իր հայրական կալվածքից, ինչպես որ պատմական Դավթի որդի Աշոտը, որից Միշակագի տեր Ահմադ Ամրացին խոսել է Սասունն ու Տարսնը, ինչպես և պատմության կրկնությանը՝ Վերգոնի թոռ Եահնազը զրկվում է Բեթթամուրի ձեռով: Բայց պատմականների մեծ մասի մեջ Մհերին իր կալվածքից զրկում է և տեղի դուրս է հանում իր հորեղբայրը, և Մհերը քանտարկված է ներկայանում իր մայրական պապի և կամ քոթնիների տանը. սըՄհեր մաղաղա է շինած ի գետնի տակ. պահպանել է զրած վրտ ուրան, ու զընի դրած ի ներսս: Հայրական ժառանգությունից իր մոտիկ ազգականի ձեռով զրկվող Մհերի այս քանտարկությունն իր մայրական պապի տանը՝ ոչ թե Դավթի որդի Աշոտին է, այլ Դավթի եղբայր Աշոտինը, որին Դավթի աները՝ Գերանիկ Արծրունին բռնում քանտարկում է: Այս կալանավորության մի կրկնված հիշողությունն է նաև Մհերի քոնվելն Ոստանա կապանում և ազատվելը: Մհերի անձի մեջ, ուրեմն, միացած են անբու Աշոտի գլխին եկածները: Բայց ազգի է, անշուշտ, նաև Սասունի վերջին հայտնի իշխանի՝ Եահնազաի պատմությունը հետագա դարերում: Պատմական դեպքերի հիշողությունը պարզ սերում է, բայց թե ինչու տը թե Աշոտ կամ Եահնազ անունն է պահված, այլ Մհեր, այդ բացատրել չենք կարողանում: Հարկավ դրա համար ազգի է Սասունի պատմության որևէ մեզ անծանոթ նշանավոր անձ ու դեպք:

Տարոնի Առաքելոց վանքի մի ճառընախիբ գրքի մեջ գրված է Զորտ-վանեի Մամիկոնյանի եպիրագիրը, որով նա նույն վանքին նվիրում է իր ծննդավայր գյուղը՝ Քերդակ. սի յիշատակ ինձ և ձեռողաց իմոց Տաճատ Մամիկոնեո և մոր իմոյ Զարմանդիստոյ և նախնեաց իմոց ցայ արանցն վեգեհնս և Մեհերա, որք յառաջ ցան զմեզ տիրէին այամ աշխարհիս: Այս հիշատակագրի մեջ Զորթվանեիս իրեն անվանում է յիշխան տարևս Տարաւեոյ և ամենայն Հայոցս, յտիրեալ աշխարհիս մերում Տարաւեոյ, և այլ ըստում աշխարհացս: Գրվածքի միջին մասը և գերության թվականը պակասում է, բայց նույն ճառընախիբի մեջ այս Զորտվանեիս գրվում է ի թուին ՇՄԳ (1104): Հավանորեն դա Տարոնի և Սասունի երկրորդ Մամիկոնյան իշխաններից է, եթե միայն եպիրագիրը հետագայում շինված լինի: Բայց մեզ համար կարևորն այն է, որ Տարոնի (և Սասունի) տեր հիշվում է Մեհեր անունով մեկը, որ հավասարապէս պատմական անձ է: Ով գիտե՞, զուցն այս դեռ անծանօթ Մեհերի գործերն ազդել են վեպի վրա և Մհեր անունն անցել է վեպի մեջ:

Նույնպէս չնքն կարողանում բացատրել խանդութ կամ խանդուք կամ խանդուտ անունը, որ կարող է մեզ անհասկանալի մի ոտարագրի հասարակ բառ ևս լինել, եթե ոչ հայերեն խանդութ բառը՝ սխալագո ըստից: Խանդութի հայրենիքը, նախելով պատմաճեւերին զըլում է Կաղզվան, որս մտաւ և խանդութի քերզ, որ հին Կասպուստ կամ Կասպուտա քերզն է, որ վեպի մեջ ասվում է Բերդ Կասպուսին: Իբրև նրա հայրենիք տրվում է նաև Խոյս քաղաք, Քիլիսիս (Սոքման ավան, խանդութի քերզ), Իրանս քաղաք, Քավրիք, Պղնձե քաղաք, Կասպուտկող, Խլաթ և վերջացան խանդութը համարվում է Օղան-Դաղան փազաւորի աղջիկը՝ առանց տելը հիշելու: Այսպէս լատմարդան կերպով տարրերվում է վիպական Դավթի կնոջ հայրենիքը: Այս ըստճառանոթյանն տմի անշուշտ իր պատմական պատճառները, որ դժվար են ենթարկվում մեր բացատրությանը: Բայց հավանական է և այն, որ տեղական ժողովուրդը սիրելի դիցազնուհուն իր երկրից համարելով՝ որևէ տեղ կոչել է նրա անունով. Խոտաի և Նայելով պատմութի՝ խանդութը այս կամ այն տեղացի է դարձած: Պատմական Դավթի կինը եղել է Արծրունյաց Գրիգոր Գերանիկ իշխանի քույրը, Մարիամ: Իսկ Կասպուտականի իշխանության մեջ են Կասպուտկող, Պըղնձե քաղաք, նրա սահմանների մոտիկ է և Խոյս քաղաքը, ուր և հենց Գերանիկը գտնում է իր մահը: Սակայն Սասնասարի կամ իր եղբոր կինը ևս, այսինքն Դավթի մայրը զըլում է իբրև Կասպուտկողի, Պղնձե քաղաքի և Խլաթա թագաւորների աղջիկ, մինչդեռ ուրիշ պատմաճեւերով նա սասունցի է կամ Զինամանս թագաւորի աղջիկը: Դավթի մայրն ու կինը, ուրեմն շփոթվում են իրար հետ, և իսկայնքն Սասնասարի կամ իր եղբոր և Դավթի ամուսնության մտախն պատմվածքները միեւնույն միջադեպի կրկին պատմվածքներ են:

4 Զորթվանեի եպիրագիրը ԹԵՍ Ալլիզե. Հայտնասում, հր. 398:

Այս շփոթութիւնն ու կրկին պատմվածքը երևում է նաև հանձին Քեռի Քորոսի, որ նախելով պատումներին՝ թէ Սանասարի և իր նղբոր, և թէ Դավթի և արա որդի Մհերի քեռին է հանդիսանում: Նա իբրև Դավթի քեռի՝ կապուտկողից Դավթի մոր հետ գնում է Սասուն և այնտեղ մնում, կամ նաև արաթի տղայուն է ու իր շորս եղբայրներին հետ մնում է նոյում ն այլև:

Ինչ պատմական անվան հիշողութիւն է այս Քեռի Քորոսը: Վերնում դիտմամբ այնքան երկար գրեցինք Քեռողոսու Ռշտունու մասին, որպեսզի ընթերցողին փոքր ինչ պարզ լինի նրա խաղացած մեծ գերը արաթական շրջանի տկարում: Արդ՝ մի արնպիսի իշխան, որ ժողովրդի բախտի ու վիճակի համար կարևոր շրջանում մեծ գործեր է կատարել, բնականաբար սիրելի է եղել ժողովրդին, և նրա արարքները նյութ են դարձել պատմական երգերի ու զրույցների: Ապա նրա անունն առնվել է վեպի մեջ էլ: Կարծում ենք, թէ Ռշտաձայաց գավառի տեղի Քեռողոսու հիշատակն է ահա, որ գտնում ենք վեպի Կապուտկողի Քեռի Քորոսի մեջ: Քեռողոսուի հիշատակը մնում է նաև Քեմաթորոս անվան մեջ: Սա Մանձկերտու ընդդի իշխանն է: Մանձկերտը, երևի, ներս է մտած Շահի Արմեններին որով և մի դար առաջ կատարած դերի պատճառով, կամ թէ ասացող Բուբանդցին (նա ապարանցի է, իսկ ապարանցիք Բուբանդից ան գաղթած) իր հայրենիքին է մտնեցրել Քեռողոսի բերդը: Ըստ վեպի Քեմաթորոսը կատարում է մի դեր, որ հարմար է Քեռողոսու Ռշտունու համար: Նա Հայոց աշխարհն ամբացնողն է, հիմնադիրը երկրի բերդերի: Մի օրվա մեջ Մանձկերտից գնում է Վան, այստեղ բերդի հիմը ձգում, ակրաստ ուտում է, գնում Արզրում. բառեղ էլ փերդի հիմը դնում է, կեսօրն ուտում, դնում է Կարս, ուր նույնպես հիմնում է բերդը և հրամանն ուտում, դառնում է Մանձկերտի բերդը: Այս վիպական արագութիւնն առաջացել է Քեռողոսու անվան Քեմաթորոս արտասանութիւնից. վիպասանները հերոսին երևակայել են թեւովոր Սանասարի որդի Մհերն առնում է այս Քեմաթորոսի արդևան, որի հետ հարանազար գնում է Քեռի Քորոսիկ: Քեմաթորոս և Քեռի Քորոս նույն անուններն են և նույն անձի կրկնութիւնը: Տեսանք, որ Ռշտունի Քեռողոսից հետո Հայոց աշխարհի իշխանութիւնը վարում է Դավթի որդի Համազասպ Մամիկոնյանը, որ Քեռողոսու Ռշտունու փեսան էր: Տարոնի և Սասունի ժողովուրդն իր տիրոջ և նրա աներոջ պատմութիւն հիշողութիւնը պահել է և առել վեպի մեջ, մանավանդ որ պատմութիւն կրկնութիւնը Դավթի Արքան ևս Գերանիկ Արծրունու փեսան է, որ իշխում էր Ռշտունիքին, Աղթամարին, Ոստանին և այլն, այսինքն այն բարդ երկրներին, որոնց տերն էր Քեռողոսը: Կապուտկողի հայ Քարապետն, ուրեմն, որի ազգիկն է Դավթի կամ Մհերի մայրը, որտեղից է և Քեռի Քորոսը, հիշողութիւնն է, թէ Քեռողոսու Ռշտունու և թէ Արծրունյաց իշխանութիւն, հատկապես Գրիգոր Գերանիկի: Անտանը պահված է առաջինինը: Վեպի մի քանի պատումների մեջ

շեշտված է Քնդի Քորոսի իմաստութունը, նա կենդանի է մնում շատ երկար, քանի կան Ազնանց որդիքը, և միշտ նրանց խորհրդատուն է:

Վերջերս զրի առած պատմաների մեջ հիշվում են որպես գործող անձեր Արծրունի Գաղիկ Թագավորը (X դար) և Վարդ պատրիկ հպիսկոպոսը, որ հավանորեն պատմական հիշողություն է Վարդ Պատրիկ իշխանի (VII դար):

Վնայի կերպարանքի վրա ազդել է նաև Մասունի ուրիշ նշանավոր տեր Մամիկոնյան Քոռնիկի կյանքը, որի մասին, ինչպես պարզապես երևում է Մատթևոս Ուսույնցու պատմելու եղանակից, ժողովրդի մեջ գրույցներ են հղել: Մի կողմ թողնելով երկրորդական գծերը՝ փնջված և Դավթի և Քոռնիկի գերիններ ազատելը, ճապաղքի կողմերում կռվելը և այլն, հիշենք միայն Քոռնիկի և Դավթի ամուսնությունն ու մահը:

Ոնչպես տեսանք, կարծում են, թե Քոռնիկը վրացի կին է առել: Ընդհանրապես, մեր վնայի մեջ հասնողները վրացի չի հիշվում, բայց կա մի հիշատակություն, թե Դավթի վրացի կին է առնում: Նա հասնողների հետ ամուսնանալուց հետո գնում է Վրաստան մի սխորտո, նազանի, հուրի փարի աղբիկս բերելու, որ հանդուրժեցին ժառանգի Արիշ պատանդով Դավթի գնում է Գյուրջխատան սաղեկ աղբիկս, իր ձեռքի տակ ժառանգ փահրելովաններին ամուսնացնելու համար: Նրանց պատկան է, երկիրները կիսում, ամեն մեկին իր քաղաքը տալիս և ապա ամենից սիրուն աղբիկան առնում է գավակն ու Մասուն գալիս: Այս սցյուրը աղբիկը դառնում է Դավթի տղայի Մհերի կինը, և Մհերը Թագավորում է Գյուրջխատանում ու Հաղորդանում: Վրաստանից աղբիկ տանելու հիշատակը գտնում ենք նաև Քավոր Գորգի կամ Քավոր Գորգիղ անվան մեջ, որ հանդուրժի դոնապանն է և Դավթի քավորն է դառնում: Արաբիին կամ Մհերին կին բերելը մի ազնվացրած ձև է միայն. իսկապես այդ վրացուհին Դավթի կինն է, երկրորդ կինը, ուստի և Մհերը կռվում է Դավթի հետ, իր սոր առկատությունը մրեծն առնելու համար: Երկրորդ կին առնելը հակասակ չէ մեր այն ժամանակի քաղաքներին և մեր վիպական սցյուրին:

Քոռնիկի կյանքից վնայի վրա ազդել է նաև այդ քաղի եղբուական մահը: Գրեթե յուր պատմաների մեջ Դավթին սպանվում է ետեից Թառուն հասցրած մի հայրվածից, փնջված որ ընտան է Քոռնիկի մահը: Պատմաների մի մասով Դավթի սպանվում է իսկապես ինքից քեռ վրած կռվի մեջ, նրանց ձեռքով և Մհերը իր հար մահվան վրեժն առնելու համար՝ սպանում է իսկապես քաղաքը: Պա պատմական հիշողությունն է Մահի Արաբիաների ձեռով Մասունի իշխանության ընկնելուն, թեպետ և վնայը հերոսի մահը քաղաքում և ուղի տեսիկական ձեռով:

6 Վիպասանը պատմվածքի շարունակություն մեջ անպատկեր կերպով Գյուրջխատան տեղ Հաղորդան է գնում և այնուհետև այդ երկու անունը խառն գործածում: Մհերի կնոջ մեջ Գյուրջխատան, մերթ Հաղորդան վնայով, Երգի մեջ, որ ավելի հին է, հիշվում է Գյուրջու աղբիկս:

Ամփոփենց մեր հզրակացութունը: Այս և Նախորդ գլխի մեջ դրված պատմական նյութից, որ կա վեպի մեջ, տեսնում ենք, որ մեր այս ժողովրդական վեպն իր մեջ պահում է պատմական Հիշողություններ մեծ մասամբ IX դարի կեսից մինչև XIII դարի կեսը: Վեպն իր էությունը պարունակում է IX դարի անկրորդ կեսի պատմական դեպքեր, որոնց վերաբերում են Սասունի և Տարոնի աներբի՝ Քաղաքատ Քաղաքատունու և իր որդիների գործերին, Քուզայի արջավանջին և Գավիթ Արքայի ու իր որդու կյանքին: Հաջորդ դարերը միայն անոմների և մասամբ դեպքերի ժողովրդություն են մտցրել վեպի էական կազմի մեջ, պատմական խավափրումներով մեղքերով Սասունի և Տարոնի երկրորդ Մամիկոնյան իշխանությունը ժամանակի Հիշողությունները Քոռնիկից մինչև Եսհեշահ և հետո:

Բայց այժմ հարց է. արդյոք մեր վեպը բոլորովին նոր է կազմվել IX դարի երկրորդ կեսի, Գավիթ Արքայի ժամանակի դեպքերի ազդեցության տակ, թե՛ IX դարից էլ առաջ գոյություն է ունեցել և միայն այդ դարի նշանավոր սեպերի ազդեցության տակ, ինչպես վերևում դրեցինք, շատ զորեղ կերպարանավորություն է ենթարկված, աճպես որ թվում է, թե այդ ժամանակ է կազմված:

Կարծում ենք, որ մեր վեպն ավելի հին է իր թաղաքիչ տարրքներով և լինողհանուր տղով: Դրա մեջ ապրում են դեռ մեր երկրորդ հին վեպի մի քանի դրվագները, ինչպես և մի քանի օրիշ հին գրույցներ և առասպելներ:

2

Վեպի Հնագուհին ՏԱՐՈՆԸ

152. Սասնա Սանասարի գրույցը:—Աստվածաշնչի մեջ, Զորք. թագ. ԺԸ. ԺԹ պատմված Վ հետևյալը: Հուդայի վրա թագապետում է Եզեկիան, որին հարկատու է դարձնում Նինուեի Սենեքերիմ արքան և զայիս պաշարում Վ Երուսաղեմը: Եզեկիան մտնում է տաճարը, աղոթում: Եվ երբ գիշերը վրա է հասնում, թե՛ Հրեշտակ տեսնու և եհար ի քառակն Ասորեստանեայց հարիր և ութսուն և հինգ հազար. և կանխեցին ընդ առաւօտն և ահա ամենայն մարմինք մեռեալ: Եւ շուեաց զնաց, և դարձաւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց և քնակեաց ի Նինուե: Եւ եղև մինչդեռ երկիր պառզանէր ի տան Նեսրաքայ աստուածոյ իւրում, Աղղամեղեր և Սարասար օրորք նորա հարին զնա սրով, և ինքեան զերծան յերկիրն Արարտայ, և թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորառ (նույնը և Մնացորդ. երկրորդ ԸԲ.):

Աստվածաշնչի այս պատմութունն է ահա և մեր վեպի առաջին նրդի քովանդակությունը: Սենեքերիմ թագավորը անկու տրդի տեմի, Ասնասար և Քաղաքատար (Աղղամեղիք Արամիից, Ասլիմիլիք), նրան հարկատու է Երուսաղեմի աստվածապաշտ թագավորը: Սենեքերիմը պաշարում

է նրուսազեմք, որի թագավորը ստվի մի տեսարանից սարսափած սկսում է շփեր ու խեղամ անել ու պատարագ անել: Պատարագն որ արեցին, պրծան, հրեշտակների թրով սրով իշան Սեննեքարի մի ասքյարի մեջ, ու ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին: Սեննեքերիմը փախչում է. նա ուզում է իր երկու որդիներէն զոհել իր բանել կոթին, բայց որդիները փախչում են Հայաստան, հիմնում են Սասուն: Եղբայրներից մեկը հետո վերագտնում, հորն սպանում է, ու տեղը թագավորում: Ուրիշ պատում-նեքով, սակայն, Եղբայրներն իրենց հորն սպանելուց հետո են փախչում Հայաստան:

Այս երկու պատմությունն նույնությամբ շատ բացահայտ է. և սրբոզ է, որ մեր վեպի առաջին էջուղը կազմված է Աստվածաշնչի ազդեցությամբ տակ: Բայց նույնությամբ միայն այս էական մասում է, սակ էլ ոչ թուր պատմականներ մեջ: Առասպելաշեն ժողովուրդը Ս. Գրքի այս միջադեպն առել, իր հետ մշակել, հայացրել է՝ մեջը խառնելով հայոց պատմական կյանքի դեպքեր, փնջպես և շատ փնեցազական, վիպական, դիցաբանական դեքեր, այնպես որ եթե լլինեին Աննեքերիմ և Երուսաղեմ՝ անունները, ինչպես և երկու եղբայրների՝ իրենց հորը կոտարան մեջ սպանելը, զմայար կլիներ այս երկու պատմությունը նույնացնել:

Ե՛րբ է այս պատմությունն առնված Ս. Գրքից և կազմած Սասուն հետ:

«Տարտի պատերազմի» մեջ կոխվեցին մասնակցում են նաև աստույցները, որոնք հիշվում են փրկել Սանասարի ցեղ:

Մ. Խորենացին գրում է, թե՛ երբ Սեննեքերիմ փախավորի Աղբամասից և Սանասար որդիներն իրենց հորն սպանելով փախչում են Հայաստան, Սանասարին բեր քաջ նախնիս Սկայորդին բնակեցնում է մեր աշխարհի հարավ-արևմտյան կողմում, և թե նրա սերունդները լցնում են Սիմլիսը, որոնց առաջավորներից այնուհետև ծագում են Աղանաջ քոչելիները: Իսկ մյուս Եղբայրը բնակվում է նույն լեռան հարավ-արևելյան կողմում, և թե նրանցից ծագում են, ըստ պատմագրի (Մար-Աբաս), Արծրունիք և Գուրնիք (Խորենացի, Ա. փգ. Բը. Գ. Ժ): Այս ծագման ավանդությունն, այնուհետև ընդհանրացած մեջ գտնում հետագա մատենագիրների մեջ: Առաջին անգամ հիշողը Խորենացին է, կամ իր աղբյուրը՝ Մար-Աբաս:

Զհեթեղով որ մի դիտական մարզու հարմարեցրած դրույց ևս կարող է անցնել ժողովրդին, մենք ոչ մի հիմք չունենք, սակայն, ասելու թե Խորենացին կամ Մար-Աբասն են այս դրույցը կապել Սասունին, և ոչ թե հիշված տոհմերը և իրենք Սիմլիսը բնակիչներն են երկու եղբորը Սասունում բնակեցրել և իրենց համարել Սանասարի սերունդ:

Աստվածաշունչը քրիստոնյա աշխարհներում ընդհանրապես դառնում է աշխարհի ավանդությունների աղբյուր: Այս նկատմամբ Աստվածաշունչի, հատկապես հին կտակարանի ազդեցությունը մեր նախնիների վրա մեծ է եղել: Ս. Գրքի շատ անգի սղոթյուններ թե՛ հույց հայերն առել:

յուրացրծլ են կապելով իրենց երկրի այս կամ այն տեղերի հետ: Քովմա Արծրունին սասունցիների մասին խոսելիս՝ հայտնում է թե՛ բարձր են զազմուսն զճի՛ն քարզմաննայսն վարդապետացն հայոց, զոր հանապազ ի բերան ունինն:

Այս վկայութիւնք յոմանում ենք, որ խաթա լեռնցիներն անգամ վարդուց ծանոթ են տղել Ս. Գրքին: Բայց մի ժողովուրդ, լեռնական, կիսավայրենի, ինչպիսին եղել են խոյնոս քնակիչները Քովմայի ժամանակ, եթե սաղմառներն անզիր գիտեր, նա ավելի վաղ կարող էր այդ գրքի վկայական պատմվածքներին ծանոթ լինել: Եվ նա, առանց խորհնացու կամ Մար Աբասի ևս կարող էր ժողովրդական ստուգաբանութիւն անել և իր երկրի այս կամ այն աղխարհագրական անունը մտտեցնել Ս. Գրքի անուններին, մանապէսեղ տր հստակագծս այս կողմերի հայ ժողովրդի մեջ գրտնում ենք հնում մի աստիճին սեր տեղական անունների ծագումը որևէ դրույցով քայքայտրելու:

Ասել չի ուզիլ, ժողովարի մեջ ևս նախ մի կարգացվոր կամ գազա-ուսդիտուն է այդպիսի ստուգաբանութիւն անում, որ հետո յուրացնում է ուսմիկը: Այդպիսի մեկը կարող էր Սարասար անունը Սանասար ընդունել և մտտեցնել Սանասունքին, և ահա պատրաստ էր Սասունցոց և մյուսների ծագման գրույցը որ հեշտայնամբ կընդուներ տեղական ժողովուրդը, քանի որ Հայաստանի այդ կողմերի քնակիչները, ինչպէս հայտնի է, ասորական ծագում տնեկին: Այդ գրույցն այնուհետև ժողովրդից է անցած խորհնացու պատմութեանը:

Խորհնացու ժամանակ Սանասարի գրույցն պղծն ընդունված և տառածված է եղել: Արծրունիներն իրենք իրենց սերած են համարում Սանասարից, Շավասպ Արծրունիին պատասխանելով Շապուհ թագաւորին, աւետ է. «Ճանաչեմ և քիս արցալորդի ի սերմանէ Սանասարայ: Այս պատասխանը պատմագրի հորինածը կարելի չէ համարել. ժողովրդական գրույցի քնակութիւնը շատ պարզ երևում է թե՛ գրա և թե՛ Ատոմ Մուկացու և Խոսրով Գարդմանացու մասին պատմվածքների մեջ:

Այս ավանդութիւնն այնուհետև բերում է Քովմա Արծրունի մի քան միայն ավելի տեղեկութիւն տալով: Նա սասունցիների համար գրում է. «ՍՈճս են գոնախ ասորոց, որ շուեցին զկնի Աղբամալայ և Սանասարայ, յորոց անուն ինքեանք Սանասայք զիւրեանս արտունենն»: Այս պատմագրի ժամանակ տրեմն, հարկավ և առաջ, ոչ միայն հայ իշխաններ, այլև Սասունի հասարակ ժողովուրդն իր անունը Սանասարից են հանել և պատմել են երկու եղբոր Սասուն գայը իրենց մարդկանցով կամ աղխով և թե՛ ազնվականները ծագում են Սանասարից ու քր եղբորից, իսկ գոնեի ժողովուրդը տեղի է սրանց հետ եկած ուսմիկներից: Եվ մեր Վեպի մել ևս տեսնում ենք, որ Սասնա Զոդանց կամ Ազնանց տուեր ծագում են Սանասարից կամ քր եղբորից, իսկ Սասնա քաղաքացիք՝ այսինքն հասարակ ժողովուրդը, առաջ են գալիս այն քառասուն տուն ուսմիկ մարդկանցից, որ երկու եղբայրները հետները բերում, քնակեցնում են Սասունում:

Այսպես մեր վեպի առաջին ճյուղի հետևյալներ հասնում է մինչև
կործանացու ժամանակը: Եվ իսկապես, այս ճյուղի բովանդակությունն
էսպես ուրիշ քան չէ, քան ինչ որ կործանացին և Քովմա Արծրունին բե-
րում են: Վիպական ընդարձակումն ու վնասվածությունները հարկավ միշտ
էլ կարող են առաջ գալ և ամեն մի պատմողի բերանին, բայց դրանք
երկրորդական մանրամասնություններ են: Հիշենք հետևյալը:

158. Սանասարի կոիվը վիշապի դեմ:— Արգեն կործանացու ժամա-
նակ Սանասարի պարզ գրույցը մշակված և ընդարձակված է եղել: Մեր
պատմապիտրը (Բ. է.) Արծրունի անունը բարձիվ տունիս ձևից բացատրի-
լով՝ հիշում է և Արծրունի անունը բացատրող մի առասպել, որ պատմում
են Հաղաժանկերտում. «Քողում գառասպելացի Բաղադանս, որ ի Հաղա-
ժակերտին պատմին մանկան Նիրհնիոյ անձրն և արև հակառակեալ, և
հովանի թոյլալ պատասխան թայկեցեղոյ: կործանացին արհամարհելով
առասպելը՝ դրանից շատ քիչ բան և շատ սեղմ ոճով է մեջ բերում, բայց
երևում է, որ Արծրունի անունը բացատրելի են Արծրունյաց նախնուն.
Սանասարին կամ իր եղբորը, հովանի անող արժվից: Կնշանակի՝ Սանա-
սարի գրույցն արգեն նյութից է դարձած եղել ժողովրդական բանաստեղ-
ծութեան:

Վեպի երկու պատումի մեջ Սանասարի մասին, պատմվում է նաև
նրա մի կոիվը Վիշապի դեմ: Սանասարն ու Բաղդասարը գնում են մի
թագավորի քաղաքը, ուր շուր չկա: Վիշապը ջրի առաջը գտնել է. նրա
աճու չին կարողանում զնալ ջրի: «Ամեն տարի մի աղջիկ կը տանք, էդ
վիշապ ուտի, որ մեր քաղաք շավերիս,—ասում է թագավորը: Այս Սա-
նասարին առում են. սէս աղջիկ առեք, տարեք, ասվեք վիշապին՝ ուտի-
լետր հետ կուվեք»: Եղբայրներն աղջկան առնում, տանում են ասարի դը-
լուխը, սենտեղ որ աղջկան կկապեն, մեկ էլ տեսան, որ գոռոց ընկալ
սարը. իրիչկացին, տեսան՝ մեկ ճոճ ջանալար էլալ մեկ գոմշի շափ
բանձր, հինգ գոմշի շափ էրկեն: Եղբայրները հիթխցի քարերով ջար-
դում են Վիշապին, վերադառնում թագավորի մոտ: Սա ուզում է Սանա-
սարին տալ իր ազատած աղջիկը, բայց Սանասարը հրաժարվում է տա-
նել նրան:

Վիշապի դեմ այս կոիվը պատմվում է և մի նշանավոր ժողովրդ-
դական հեքիաթի մեջ: Թագավորի փոքր տղային սպանում է թագավորի-
անմահական խնձորները շարունակ գողացող երեք մղրայր դևերին իրենց
բնակարանում դետնի տակ. ազատում նրանց փախցրած երեք քույրե-
րին. ձեռք է բերում այնտեղ դևերի բնակարանում, մեծ գանձ, թիլումի-
մասնիկ հրեղեն ձիեր և կեծակի բուր: (Հմմտ. Դավթի ձեռք բերածները
դևերի քարայրում): Եղբայրները նախանկում են, քաջ եղբորը հորից,

1 Գ. Սովետյանց, Մանեա, էր. 171 և 8. Սովետյանց, Հայ ժող. հեքիաթներ, Բ գրք, Երևան, 1883, էր. 17, հտե.:

դեերի բնակարանից, ընն քաշուս հանում: Եւ ընկնում է ՎՄուք աշխարհքը ուր ջուր լկա: Տղան հյուր է դնում մի պտտալի մտտ, որ պտտմում է. ՎՄեր աղբրի ակումբը մի օխտը գլխանի Վիշապ ա էկե, նստե, լի թողնում, որ ջուր գա: Ետքաքը մի երեխա ենք տանում տալիս Վիշապին, ուտում ա՛ նոր մի պուճուր ջուր ա թողնում, որ ինչ ա խալիք ծարաւ շկատորվեն: Էգուց էլ թողաւորի աղչկա մոքաթն ա, պտի տանեն Վիշապին տան ուտի, որ ջուր բաց թողնի... Առաւիտը լիտանում ա, տղեն տնում ա, որ հրեն թագաւորի աղչկանը (քումներկի պեա աղչիկ մը) սե շորեր հագցրած տանում են՝ Վիշապին տան: Ինքն էլ թագուն աղչկա յեննուցն էթում ա... Տղեն վիշապին մտտանում ա թէ չէ՝ (սկեծակեծ) թուրը հանում ա, որ լի տալիս օխտը գըտին էլ մի հանքի յա թունում, էն դիհն ընկնում: Թագաւորն ուղում է իր աղչիկը տալ ալը քաշ տղային, բայց սա հրածարվում է առնել նրան (Սրվանձուլանց):

Լեքիաթի այս մասը քոքորովին մուշն է ինչ տը ՍՄանա Մոքից փերանում քերվածը: Դա Մանասարի առասպելի մի ուրիշ վարիանտ է միայն, կայծակի հերոսի կոիվը ջրերի առաջը կտրող վիշապի դեմ, որ միասնականակ համիշտակում է արեգակ աղբիկը. ուտի և աշխարհը մտնի է:

Բայց հետաքրքիրն այն է, որ այս առասպելի շարունակութիան մեջ պատմված ի՛նչ քաշ աղայի մի ուրիշ կոիվը վիշապի դեմ: Տղան տղում էր յուս աշխարհք արնել: Զմուտ հավքը (վարիանտ՝ Արծիվը) բույն է դրել ծառի գլխին: Ամեն տարի նա ձագեր է հանում, բայց վիշապը նրա ձագերն ուտում է: Այդ հավքը միայն վարող է յուս աշխարհ հանել: Տղան թագաւորի խորհուրդով ման է գալիս, գտնում է արծիվ ծառը, ընտրում ա եղ ծառի տակին, Վիշապի նամփեն պահում: Մի քիչ կենում ա, տնում ա՛ մի եքա վիշապ հրեն էկավ, շուշալից ծառը, տը Զմուտ ողի ճուտերն տուրի. էն աճաթին հանում ա (սկեծակեծ) թուրը, տալի, սրպանում, դիմա-դիմա անում, դցում ճուտերի աղաքը, տը ուտեն: Ինքն էլ շունի բեգարել էր, պտկում ա եղ ծառի տակին, բնում: Էն դից, Զմուտ դուրը գալիս ա, տնում՝ մի մարդ հրեն ծառի տակին քնած. — Այ-հարայ, տու՛մ ա, կա շկա՛ տա յա խ՛ ճուտերի յուրում տվողը: — Վրա յա պրծնում, տը ձվիկ ձվիկ անի, ճուտերը ընն թողնում: Ասում են, որ՝ սա յա խրանց պրծացրե Վիշապի ձեռքը: Նոր Զմուտ դուշն էլ ձեռք լի տալի, դեռ հլա թեւը փում ա վրեն, շվա՛մ անում, տը դինջ փնի Միքի կենում ա, տղեն դարթնում ա, տնում՝ Զմուտ դուրը թները վրեն շվաք ա արել: Զմուտ հավքը երախտահատուց լինելու համար, տղայի խնդրով՝ նրան հանում է յուս աշխարհ:

Մի անգամ, տը այս հեքիաթի առաջին մասը, Մուք աշխարհքում ջրի առաջը կտրող վիշապին սպանելը, Սանասարի մասին պատմված առասպելն է, պետք ի՛նչ կարծել, որ Անասարիին է վերադրել նաև դրա բնական շարունակութիւնը, Զմուտ հավքի (արծիվ) ձագերն ուտող վիշապին սպանելն և Մուք աշխարհքից լուս աշխարհ եկնելը: Ժիշտ է, վեպի

մեջ պատմված չկա հեքիաթի այս մասը: Բայց հիշենք Մ. Խորենացոս սնդմ ոճով բերած առասպելը Սանասարի մասին. «Մանկան ներհնույ տնձրն և արև հակառակեալ և հովանի թռչնոյ պատանույն թալկացելուչ: Այդ թռչունն արծիվ է հասկացվում: Խորենացին, ուրեմն, հիշում է վերևի առասպելի մի կտորը, թե հոգնած ու քնած տղայի, որ է Սանասարի վրա արծիվը հովանի է արել: Հնումն անպայման ամբողջ առասպելն, ինչ որ վեպի և հեքիաթի մեջ կա, պատմված է եղել Սանասարի կամ իր եղբոր մասին: Բայց պատմագիրն արհամարհելով այդ առասպելը, դրա մի մտտիվն է միայն մեջ բերում և այդ էլ միայն նրա համար, որ հայտնի, թե Արծրունիներն իրենց անունը ծագած են համարում իրենց Խախտուն հովանի անուղ արծիվից: Թեքնա այդ արծիվը նրանց տոտեմն է եղել»:

Ծրկու եղբայրներին այս գրույցը պարագայի է նորանոր միջադեպեր ընդունելով իր մեջ թե՛ առասպելներից և թե՛ պատմություններից:

157. «Աղջիկ Տարուճի» վեպը:—Թե ինչ դրուժյան մեջ է եղել վեպը IX դարու կեսից առաջ, այսինքն նախքան Դավիթ Արքայի ժամանակն ու դեպքը, արդյոք ուրիշ շքուղեր էլ միացած են եղել առաջին ճյուղին, և Սանասարին մի որդի էլ տրված է եղել և նրա մասին ևս քանի որ պատմված, թե չէ,—այդ չգիտենք մեր մատենագիրներից: Այս մասին երկու ենթադրություն կարելի է անել: Կամ պետք մի զնդոսնել, որ Սասունի և Սանասարի գրույցն, այսինքն մեր վեպի առաջին ճյուղն իբրև անկախ ու անջատ գրույց պատմվել է մինչև IX դարու ներկրորդ կեսը. այդ ժամանակ կատարվել է Դավիթ Արքայի դեպքը և կազմվել մի ուրիշ անկախ գրույց Դավթի, Ձենով Լուվանի և տրիշների մասին, և ապա X դարում և հետո այս նոր անջատ գրույցը միացել է Սանասարի հին գրույցին, և Դավիթը դարձել է Սանասարի որդի,—կամ թե պիտի կարծել, թե Դավիթ Արքայի դեպքից առաջ վիպասանները Սանասարին մի որդի են վերապատեցնել, որի վրա պատմվել մի Դավթի գրույցի նման մի բան, և ապա երբ Դավիթ Արքայի դեպքը վատարվել է, այս նոր դեպքի ազդեցությամբ սակ կերպարանադրվել է վեպի երկրորդ ճյուղը և Սանասարի որդու հին անվանը փոխանակել է Դավիթ անունը:

Ամենապարզ բացատրությունը պիտի լիներ այս ենթադրություններից առաջինը, եթե լինե՞ին արարացի պատմագիր էլ-Վակիդի պատմած Տարուն դյուցազնուհու վեպը և «Սասնա Մսերի» մեջ հետքեր մեր հին վեպից:

Տարուն ու Սասունը, տեսանք, նրբու անբաժան գաղառներ են հաճախ միմեռան իշխանների ձեռքի սակ՝ թե պատմություն և թե վեպի

Ե «Սասնա Մսերի» պատմության մի քանի մեջ պատմվում է, որ Սանասար եղբայր Բաղդասարը, Սասունի հիմնադրությունից հետո գնում է Պարզաստան: Այստեղ երակից ծագում է պարզական փանջվածների, Ռասամ-Յուլի անվան Թուրք, որ, ըստ մեր վեպի, Բաղդասարի որդին է, ըստ Եսեանի սեվում է Սիմուրգ թռչունի («Ջրմբուտ հովիթ») զնուս. Տե՛ս «Սասնա Մսեր», Ա հատ., եր. Ժ—10:

մեջ: Անպես Աստուծո՛ր Տարոնն ևս ունեցել է իր անվան ծագման գրույցը, այն ևս կապված Միմ լեռան անվան հետ: Տարոնի գրույցն ևս առաջին անգամ տուրխ է մեզ խորենացին, և դա ևս դարձյալ կապված է Աստվածաշնչի մի անվան հետ, կամ լավ ևս՝ քացատրված է այդ անունով: Հին գրույցներով, գրում է խորենացին (Ա. դ.), Միմը, որ և Ջրուան, առժամանակ քնակվել է Տարոնի դաշտում և նրա անունով կոչվել է: Ստանու Միմ լեռը, իսկ նրա որդի Տարրանն իր սփրոնդներով մշտապես ապրել է սրտեղ Միմ լեռան աստրոտում և դավառը նրա անունով կոչվել է Տարան: Ապա նույն հին գրույցներով այս Միմ-Ջրուանի անունով կոչվել է, այնտեղ բնակելու պատճառով, և Հայաստանի Ջարուանդ (նույն և Ջարաւանդ, Ջարեհաւանդ) գավառը, բառ եղերը սահմանացն քակտրիացոց», որ է Մարքի:

Արա առինը խորենացու հերյուրում մշամարիներ, եթե պատմագիրը հաճախ և տասնձին նշանակութուն տալով հիշած լլիններ այս հին գրույցները և վկայութիան բերած լլիներ հայոց սփրք ցցոց և պարուցա: Գրանք խորենացու ժամանակ ժողովրդական ավանդութիւններ են եղել, բոլորն իհարկե ստղական անունների քոչստրութիւն համար սարքված: Միմ անվան համար մեղ է քերված Աստվածաշնչի Միմը, իսկ Տարան անվան համար ստեղծված է Միմի որդի՝ Տարրան-Տարան. և վերջապես, լգիտեաք ինչպես, Միմ լեռան ա Տարանին հետևում է Ջարուանդ, ժբանդի կողմանք արևելից Ջրուան գլխի կոչնա, քացատրում է ինքը պատմագիրը:

Խորենացուց հետո Տարոն և Ջարուանդ անունները իբրև անձերի անուն, և Սասնու լեռան սՏարոնի լեռ կոչումը մի անձի անունից՝ գրտնում ենք արաքացի պատմագիր էլ -Վակիդիի Միշագետքի և Հայաստանի նվաճման պատմութիւնն մեջ: Այս գրվածքը, որ փնչպես մի ժողովրդական վեպ դարերի ընթացքում փոփոխութիւններ է ենթարկված, ամբողջ առասպելախառն է, իսկապես մի վեպ է, կազմված մի շարք գրույցներից, այնպես փոփոխված աս պատմված, որ իսլամը փաստավոր-

³ Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien von Mohammed ben Omar el Wakidi, aus dem arab. übers. von B. G. Niebur, herausg. von A. D. Mordmann, Hamburg, 1847.

Հեղինակը ծնվել է 748 թ. մեռել՝ 823-ին իբրև դադի Բաղդադի արևմտյան մասին նրան վերադրված երկերը կրում են ընկառնմանք տնունը և քովեղակում են արաքացու առաջին արքայանքները Մամեդից հետո Բայց Վակիդի երկերը սկզբնական կերպարանքով չեն հասել մեզ՝ այլ շատ հավելումների ու փոփոխութիւնների կեթարկված, որովհետև նրա երկերը արևելյան վրթասունների համար սիրելի են եղել և պատմվել են ինչպես ժառար ու մի գիշերք և ուրիշներ: Հավելումները շատ ուշ ժամանակի կերպարանք ունեն և հասնում են նույնիսկ մինչև XVI դար, իսկ մեզ հետաքրքրող մասը XII դարից առաջ չեն ընդունում: Սրա մեջ կան և պատմական և հեքիաթային ժառարամբողջ գրվածք լի է հակասութիւններով, երկրի անձանքութիւններով, շփոթութիւններով, հաճախ նույնիսկ գործող անձերի անունների փոփոխութիւններով և այլն, չհաշված ևնասպիտակի տարբեր ընթացվածները:

վի և իրլամական կրոն ու բարոյականութիւն քարոզվի: Մինչ արարների մեջ չկա ոչ մի վախկոտ ու հալածատուրաց, ոչ մի մատնիչ ու նույնիսկ բերնից խոսք թոցնող, քրիստոնյանների մեջ ընդհակառակն ըի են դալաճաններ տւ հալածատուրացներ, որոնք արարների կողմն են անցնում և ամեն խորամանկութիւններով աշխատում իրենց առաջվա հալածակիցների բնրդերն ու քաղաքները մահմեդականների ձեռքը մատնել: Վանկիդիի սիրած եղանակներից մեկն է մանազանդ ամենայն թեթևությամբ իսլամ ընդունող քրիստոնյա կանայք մեջ բերել, որոնք դալաճանում են մինչև անգամ փրենց հոր և ամուսնու տանը:

Գրւածքն անշուշտ իր մեջ ունի պատմական նյութ, քայքայ արվելի շատ ասուսպելական և շինծու հեքիաթային: Միջազգայնում արարների դեմ հոռոմայեցիների հետ կռում են և հայ իշխաններ ու զորքեր. հիշվում է օրինակ մի հայ իշխան Վարդաբեկ, (թերևս Վարդ-պատրիկ), և մի հայ իշխանուհի Հադա տիկին անունով, և իր որդին՝ Արքուն: Մեզ հետաքրքրողը, սակայն, է Տարոնի վեպը, որ մեծ սիրով և մանրամասն պատմում է հեղինակը, որ և մի քիչ մանրամասն կերերնք այստեղ: Այս ասուսպելն անշուշտ արարական դրլի, այն էլ շատ դրլիների տակ մշակված ու փոփոխված է արարական ճաշակով ու միտումներով, քայքայ այնպես՝ որ Տարոնը ազարծել է մի այնպիսի դիվական ճիւղազ, որի նմանք երբեք չի եղել: Տարոնի առասպելը, սակայն, հնարովի բան չէ և շատ պարզ մի պատմութիւն է եղել, որ հայ ժողովրդից անցել է արարների: Այդ պարզ պատմութիւնը հեշտությամբ ու պայծառ կերպով երեւում է հալվումների միջից, որոնք փրար հակառակ են:

Պատմութիւնը հետևյալն է.

Միջազգայնի հոռոմայեցի իշխան Պերուզի որդի Նահրիամը⁴ արարների դեմ օգնութիւն վճարում՝ նամակներ գրելով հզոր իշխաններին, ի միջի այլոց իւրաթի, Արճեշի, Խոշի և Սալմաստի իշխան Ջարուանդի, և Սանասունի իշխան Սանասարին⁵: իւրաթի իշխանը պատմութիւն շարունակութիւն մեջ, սակայն, փնչպես համարս ուրիշ անձների համար ևս լինում է այս պատմութիւն մեջ, շուտ է գալիս և կռւում է Նուստիտոս, տեր իւրաթի և Հայաստանի, այլ և թագաւոր (եր. 123, 131, 136). մինչդեռ Ջարուանդ (Servend) անունով այնուհետև կռւում է թիթիսի, Կաֆոնդորի և ուրիշ բնրդերի տերը, որ իւրաթի տիրոջ եղբայրն է, իւրաթի իշխանը կամ թագաւորն ունի մի աղջիկ Տարուն անունով, Սասունի իշ-

⁴ էլ-Վանկիցի գրվածքից պարզ չի իմացվում, թե արարները Միջազգայն ումից են առել, հունաց կայսրերից՝ պարսիկներից. թե անկախ իշխաններից: Եւ հակառակ պատմական տեղեկութիւններին, այնտեղ դեռում է անկախ հոռոմայեցի իշխան, կամ թագաւոր Նահրիամ, որ արքայ է և պարսկական անուն է, ինչպես և Պերուզ:

⁵ Նիրուզը թարգմանութիւն մեջ Servend Սերուրից, Ջարուրից է դեռ, իսկ Տոմաշեկը (եր. 21, 22) Սարուանց, Ջարուանց է դեռ: Իսկ Սասունի իշխանի անունը Նիրուզը Seleuter (Սելենտեր) է կարդում, ճեղագիրների մեջ կա և Սանանիը ընթերցվածը, որ Տոմաշեկն (եր. 22) ուզում է Սանասար:

խանն ուճի մի որդի Մուշ անունով. իսկ Տարունի հորեղբոր որդին է Բակուր (Նիրուր՝ Bugur Sotkuzik՝ Բակուր), որ մեկ՝ երկուսի, Մադենի, Կաֆոնդորի (Նիրուր՝ Kai Anther), Բիթլիսի և Արզնի տեր է հիշվում, մեկ՝ միայն Արզնի տեր, մինչ մյուս բերդերի տերն է Զարուսանը:

Ըրբ հոսմայեցիկների այս դաշնակից իշխանները Մահրամի նամակն ասանում են, պատրաստվում են նրան օգնության գնալու: Խլաթի տերը կազմում է շորս հազար այր և իր զինների զորավարութունը հանձնում է իր դուստր Տարունին, հավատացած լինելով՝ որ աս արարների դեմ կովելով մեծ անուս պիտի հաներ և ինքը հայրը աղչկա ձեռով մեծանար: Տարունը խիստ աիրան և հրասպարիչ էր, տղամարդու պես արի, համարձակ ու քաշ, մի նարտար հեծվոր. և համարվում էր ի շարս մարտիկների, ձիավարողների և պիշերը կովի զնթացողների: Նա քնակվում էր մի լեռան վրա, որ Զարալ-Մարաղ (= սար Մարաթ, Մարաթուկի լեռ) էր կոչվում, քայց նրա անունով կոչվեցավ Զարալ Տարուն (= սար Տարուն, Տարուն լեռ): Մաստ փշխաններ էին նրա ձեռն ուղում, քայց նա մերժում էր ամենքին, որ մրցաբանդեաի մեջ իրեն չէին հաղթահարում: Մրցման պայմանն այն էր, որ նրան ինքը հաղթվեր, հաղթողին պիտի պատկաներ. իսկ նրան ինքը հաղթեք, հաղթվածի խոսրուպիքը պիտի կրտրերս: Եվ նա ինքը հաղթում էր բոլոր փշխանորդիներին, որ նրան ուղում էին: Ուղողների մեջ էր և Սասունի Ասնասար փշխանի որդին՝ Մուշ, որ մի անգամ փր հոր կողմից պատվո նվեղներ էր ստարել Տարունի հորը, տեսել էր աղչկան, սիրել և տղել: Բայց նա էլ հաղթվել էր Տարունից:

Տարունի գնդերն արդեն պատրաստ էին մեկնելու, որ Մուշն էլ հազար ձիավոր էր քերում իր հոր կողմից, և երկուսը միասին իսկույն հանապարձ են լոնկնում դեպի Միջագետք: Այդ միջոցին պատմակին Մուշ, որի փայտպիքն էլ կտրել էր Տարունը, ծաղկել, հասակն անել էր, և իր մամանակի տղամարդկանցից քերազանցում էր դեղեցկութամբ: Տարունը սերում է այժմ նրան մի տարիչ աղջով նայել քան տառչ, և նրա սրտում բորբոքվում է առ պատանին մի սեր, որ հավասար էր պատանու սիրուն:

Տարունի հորեղբորորդի Բակուրը նույնպես սիրում էր նրան. քայց աղչիկը նրա երեսին նայել անգամ չէր տղում: Բակուրն ևս քաշ ու կրտվող էր. նա ևս Բիթլիսում, Տարունին ընծաներ և մեծ պատիվներ տալով, իր զորքով միանում է նրանց, և միասին շտապով առաջ անցնելով՝ հասնում բանակում են Հետախ (Hetach) բերդի մոտ: Ըրբ այստեղ հանգստանում էին, Տարունը Մուշին մարդ է ուղարկում տանու. շիմացիր. հզոր սերն այն է, որ առաջվա ատելությունն է հաղորդում. փռշմանել նմ արածիս, որ երբ դու հաղթվեցիր, քո քաքուլը կտրեցի: Ըրբ այս կովից ետ գառնանք, մարդ ուղարկիր հորս և ինձ ուղիր: Իսկ այժմ եկ պիշերս ինձ մտա, և ես քեզ կերդվեմ, որ ոչ մի տարիչինը չլինեմ:

Քնայելով աղչկա բռնոր զգուշութուններին, որ մարդ լիմանա իր գաղտնիքը, Բակուրը, որ միշտ լրտեսել էր տալիս Տարունի երամուտը դավաճան ծառայից իմանում է բանը և տեսնելով, որ Տարունը Սասունցի

Մուշին է սիրում՝ վճռում է իր մարդկանցով փախցնել նրան: Եվ մինչ գիշերը Տարունն իր սիրելի Մուշին էր սպասում վրանում՝ իր բոլոր ծառաներին և պահակներին հեռացրած, աննկատելի կերպով ներս է մտնում Բակուրը: Աղչիկը իր Մուշը կարծելով՝ սիրով գիմավորում է, քայքայ էր տեսնում է՝ Բակուրն է, ամառած ու վախեցած ետ է քաշվում: Բակուրը ուժով բռնում է նրան, բերանը փակում և ուսին դրած՝ տանում իր Տամարը և անմիջապես իր զեղի հետ միասին նանապարհ ընկնում դեպի արարները՝ անցնելու նրանց կողմն և հավատն ուրանալու: Առավոտը միայն իմանում են եղելությունը Տարունի մարդիկն և Մուշը, որոնք զորքով հասնում են Բակուրի ետևից: Մաստիկ կոչում են, և արդեն պիտի հաղթեին արաքյալներին, որ արարներն Արարների որդի Արդուհմանի առաջնորդությամբ օգնության են քայլա Բակուրին և հաղթում են հայերին, որոնց մնացորդները Մուշի և ուրիշներին առաջնորդությամբ զենում են հոռավացեց քանակը:

Հավատարաց և դավաճան Բակուրը արարների համար կոչում է քրիստոնյաների դեմ, խարեությունք առնում է Կաֆր Տոթա քերդը, ուր ասուումանում է Տարունի հետ, որ իսլամ էր ընդունել» (եր. 80):

Արարները Մծքին ու Ամիդ, էդիլ, Հնտախ, Մուֆարդին, Արզն, Սղերդ, Խիզան և Մադեն նվաճելուց հետո, պատրաստվում են Բիթլիսի և Խրոթի վրա արշավելու: Բայց քաղզ ժամանակ ահա լսեցին, որ Տարունը... փախել է իր հոր մոտ և Նորից դարձել է քրիստոնեական հավատին, Կրի վրա շատ տխրեցին Իլադն ու մուսուլմանները: Մակայն անմիջապես ավելացնում է պատմագիրը, թե «Մուհամեդ Բեն Յոսեֆ Կորեյլիար պատմում է ըստ Արդլու Բեն Մուշայի, և սա ըստ Իսմայիլ Բեն Կայխի, որ Ջերիք Բեն Մուհամեդից է լսել,— թե Տարունն իսկապես իսլամը լի ուրացել և իր առաջիկա հավատին դարձել, այլ այդ միայն նրա համար է արել, որ իր հորը խարի և նրա Երկիրը մուսուլմանների ձեռք մատնել, մտածելով այնպես անել, ինչպես փր ամուսին Բակուրը Կաֆր Տոթա քում»:

Այստեղից ակասծ ժողովրդական պատմվածքը միտումնափոր մշակություն է կրած, և զիցազնուհի Տարունը դարձած է մի խարեքա ու խորդախ հրեղ: Մակայն արարացի պատմողների հավելումները և փոփոխությունները շատ պարզ երևում են: Մենք այդպիսի կտորները կրնդգծենք:

Տարունը Եսթեթան իր հոր մոտ փախելով՝ խորհուրդ է անում իր ամուսնու հետ և հայտնում նրան իր նպատակը, այն է՝ խարեությունք իր երկիրը հանձնել արարներին: Բակուրն ասում է. «Ես քեզ հետ չեմ գալ, որովհետև վախենում եմ, հայրդ ինձ իմ ժողովրդի ձեռք մատնի»: Տարունի ազգան էլ հենց այդ էր, որ իր մարդը իր հետ չգա, որովհետև նա իրեն պետք չէր: Պատվիրելով մարդուն քանը գաղտնի պահել՝ Տարունը կանչում է իր 212 հայ ծառաներին և հայտնում նրանց, թե զգվել է արարներից, թե կարտես է իր ժողովրդին և հայրենիքին և թե ուզում է փախչել հոր մոտ: Մասունները բոլորը պատրաստ են Տարունի հետ զենալու,

քայլը Տարուն երկու հարյուրից, որ սրտանց իսլամ էին դարձած, հետը չի վերցնում, այլ միայն տասներկու հառաներով, որոնք իսլամ չէին սիրում և նույնպես կարոտել էին իրենց ազգականներին և հայրենիքին, որտեղ անպու ու պատրվակով դիշերը փախչում, անցնում են Արզն և այնտեղից մտնում Բիթլիս, ուր մնում է մի օր։ Շիրտ այդ ժամանակ արարների պատգամավորները փնչ էին Բիթլիսի իշխանից հպատակություն պահանջելու։ Տարունը տեսնելու է պատգամավորներին գլխավորի հետ, որի անունն է Յուկիննա, Հալեբի նախկին տեղը, որ Հալեբն արարների ձեռն անցնելուց հետո՝ ուրանում է քրիստոնեական հավատը և ծառայում արարական քանակի մեջ։ Տարունն այս հավատարացին հայտնում է, թե իսկապես իր հին հավատին չի դարձել, այլ փնտմ է իր հորը դավելու և ապանելու և նրա ամբողջներն ու բերդերն արարների ձեռը մատնելու։ Եվ ապա ուրացյալ Յուկիննայի հետ պայմանավորվում է տեսնվել իսլամում, երբ նա արարացոց կողմից վերջն պատգամավոր կզա իր հոր մոտ։

Տարունը Բիթլիսից անցնում է իլաթ, ուր հանդեսով բնորոշում են նրան. պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես է վարվել Բակուրն իր հետ և ստիպել իրեն քրիստոնեական հավատն ուրանալ։ Ամենքն ուրախ են, քայլ նա հայտնում է, թե տխուր է արել տարացության համար երկու օր սպառչխարել փկեղեցում՝ առանց միս ուտելու և գինի խմելու և ապա նոր հաղորդվել։ «Տարունն, ավելացնում է հեղինակը, այդ պահեք նրա համար է պահում, որ խոզի միս չուտեր և գինի չխմեր... և այսպես իսկական մանկեղական սպասում էր Յուկիննայի գալուին»։

Շուտով Բիթլիսն անթարկվում է արարներին, և նրանց պատգամավորները Յուկիննայի գլխավորությամբ գալիս են իլաթ հպատակություն պահանջելու, այն է՝ կամ ուրիշ քրիստոնեական պես փրկում ընդունել և իրենց հավասար լինել, կամ գլխահարկ վճարել։ Այս խոսքի վրա թագավորը բարկանում և ասում է. «Ավետարանը վկայ, որ մենք ձեզ երեսը ոչինչ չենք տալ, և այլ էլ ձեր հավատը կ'ընդունենք, այլ ավելի սխրով մինչև վերջին մարդը կը կռվենք։ Նրանք, որոնք հետ դուք մինչև այժմ գործ եք ունեցել, սղամարդ չեն եղել։ Մենք հո հոռոմայեցոց զորքը չենք։ Մենք աղիություն ու քաղություն, ուժ ու զորություն ունենք և ըսվ գիտենք մեր ազնվները լարել և նետերն արձակել։ Ու կ'ուղարկեմ խորհրդի և Սալմաստի իշխանի մոտ, և վրաստանի թագավորից օգնություն կ'ուզեմ, արարներին կը հալածեմ և երկիրը կ'ազատեմ նրանց ձեռից։ Այս է մեզ պատասխանը»։

Պատգամավորները, սակայն, իսկույն չեն արձակվում, այլ առ ժամանակ պատմով մնում են իլաթում։ Թագավորը խորհրդակցում է իր խմաստուն աղջկա հետ, թե ինչպես վարվի։ Տարունը մի քանի խորհուրդներ է տալիս՝ արարներին մնասելու համար. և վերջապես թագավորը վճռում է կռվել արարացիների դեմ։ Բայց գահի սպահնավորյան համար որոշում է կռվից առաջ թագավորությունը հանձնել Տարունին և պսակել Տարունի քրոջը՝ Կալունին։ Շուտով մարդիկ է ուղարկում իր

երկրի բոլոր կողմնակալներին ու բերդերի հրամանատարներին, որ հա-
վաքվեն իր մտաւ Դրանց թվում առանձնապէս կանչվում է իր բոլոր զորքով
Աբգարովի Լավի իշխանի որդին՝ Գերեֆզիլ, որին ուզում է բազմալոր
մտրդու տալ Կալունին: Ամեն կողմից գալիս են և քահանաներն աւ վար-
դապետները. ամենքը ժողովում են եկեղեցին, Քաղաքը հայտնում է,
որ ինքը վճռել է վնասել արարների դեմ և թն առաջուց Տարունին իր տեղը
թափուհի է կարգում, որի նա քաչ, խելոք և իմաստուն է: Ամենքն ընդու-
նում են այդ սէլն ժամանակ Քաղաքը բարձրացավ տեղից, գլխիցը
առամ թափը և դրավ դուստրի գլխին, ապա նրա հետից բռնեց ու նստեց-
րեց գահի վրա՝ աչ կողմը, մինչ Գերեֆզիլը ձալ կողմում էր կանգնած: Բոլորը
հավատարմութուն են երդում Տարունին, Ապա նրբ Տարունի
բայր Կալունը Գերեֆզիլ իշխանի որդու հետ պատկվում է, ամենքը զը-
նում են Քաղաքական քերդը ու սեղանի նստում: Քաղաքը լուսավա-
ռում են: Եվ վերջն իշխաններն իրենց վրանները զարկում են քաղաքի
դիմաց ու կռի պատրաստվում մտաուլմանների դեմ: Բայց հենց որ Տա-
րունը, որ գաղտնի հաբարեութուն միչ էր աբարացոց պատգամավոր-
ների հետ, բազումի է հռչակվում, շտապում է հոր մտ և սպանում է
հրան, ուզում է և իշխաններին սպանել, քայց բանն խնայվում է և հա-
յերը շրջապատում են ապաբացոց պատգամավորներին: Տարունի կողմը
մնում են իր հոր ժառանգրից քերքը միայն, որոնց բոլորին պաշարում են
մնացած մարդիկն ու ժողովուրդը: Մարտիկի վրիվ է լինում: Բայց այդ
միջոցին արարացիների զոհավորը՝ Իյազը Բիթլիսից գալիս, բանակ է
գնում Վաստանի (Ոստանի) մարգերում և լսելով կռի մասին՝ հար-
ձակվում է հայերի վրա: Կռիվը շարունակվում է մինչև մութն ընկնելը, երբ
դադարում է: Ամենից քաչ կռիվում է Արզրումի իշխանը: Գիշերը մինչև
լույս պատրաստվում են առավոտյան կռիվը շարունակելու, քայց գիշերը
Քրիստոս, որ մի գեղեցիկ ծերունի է, երևում է Արզրումի փջիտանին և
հայտնում է, որ Մահմեդին հախտաւ, և նա հավատում է ու մտաուլման
դառնում, ենթարկվելով արարների: Մյուսաներն էլ նրան են հետևում:
Եվ այսպէս արարները իշաթին ու սազողը Հարստանին և Արզրումի
տեղ են դառնում և իրենց իսլամը տարածում հայերի մեջ: Արզրումի իշ-
խանն էլ Արզրում է ուղարկվում և այնտեղի հայերին մահմեդական է
դարձնում: Իշաթը հանձնվում է Տարունին, որի ամուսին Բակուրին էլ
քերում են և երկուսին դարձնում իշաթի և ամբողջ Հայաստանի տեր:
Բայց վերջն ինքը Տարունը իշաթին ու երկրի բոլոր ամբարտանները հանձ-
նում է արարների:

Այս պատմութեան վերջին մասը, ընդգծած կտորից սկսած, գրեթե
ամբողջ պարզ վերագով ասրած է իսլամը փառավորելու համար: Արզրու-
մի իշխանն ու Տարունի քույր Կալունն ևս միայն նրա համար են մեջ բեր-
ված, որ Տարունն իսկապէս մտաուլման մեա և Բակուրին հախտարիմ:
Բայց քանի որ հայրն իր իշխանութունը հանձնում է Տարունին, նրան
պատկելու վրա էլ պետք է մտածելու: Եվ իրերի բնական ընթացքը պա-

հանքում է, որ գոտով իսլամոթքյան դարձած և իր աստիճի մարդու հետով րոնեթյամբ առևանգված ու ամուսնացած Տարուեր, որ ծածուկ ետ է դառնում իր երկիրը, պիտի ամուսնանար իր ախրած մարդու Սասնա Մուշի հետ: Բայց այդ որ լինեք, Տարուան իսկապես իսլամոթքյան դարձած չէր լինի, և նրա փախուստը հորը դավաճանելու նպատակով չէր լինել: Քն իրոք սկզբնապես Տարուան և ամուսնացել Սասնա Մուշի հետ և ոչ թե Կարուեր Արզրոտի իշխանի հետ, այդ շատ պարզ հրևում է նրանից, որ ասասպելի մեջ նա թնակվում է Զարալ Մարադի, այսինքն Մարաթու լեռան վրա, որ նրա ամուսնով այնուհետև կոչվում է Զարալ Տարուն, որ է Տարուն լեռ: Արզ Տարունը ե՞րբ է Սասնա Մարաթու լեռան վրա թնակվել, հիմ ոչ Սասնա իշխան Մուշի հետ սրակվելուց հետո:

Մի անգամ որ Կարունի ամուսնոթքյան տեղ Տարունի ամուսնոթքունն է մտնում Մուշի հետ, այն ժամանակ ըստ ինքեան ոչնչանում են Տարունի դավաճանութունը, հորն սպանելը և նրա անմիտ վարածանքը արարացի դեպպանների հետ, որ չքերեցինք և մնում է այն, որ Տարուեր Բակուրին փառելով իրը թե հորը կսպանի և քերեցրը կհաննի արարենքին, փախչում է հոր մոտ, թագուհի դառնում, ամուսնանում Մուշի հետ: Ապա արարենքը հարձակվում են իշխանի վրա, հայերը հաղթում են կամ հաղթվում և Տարունն իր ամուսնու հետ Սասուն է գնում և թնակվում Մարաթու լեռան վրա:

Տարունի այս վեպը հին հայ ժողովրդական առասպելի ծագում ունի և հայերից անցել է արարենքին Այստեղ գտնում ենք երթնացու հիշատակած գրույթների տարբերք՝ Սիմ-Զարուանդ, Տարաւն-Տարուն: Տարուներն այս վեպի մեջ դաստը է Զարուանդի, ինչպես երթնացու մեջ Տարաւն-Տարունը Սիմ-Զարուանդի որդին մ: Եիջտ է, Զարուանդ անունը հին Զարուանդ գավառից փոխված է իշխան կամ Թիթիս, որ ամելի մոտ են Տարունին ու Սասունին, բայց իշխանի տիրոջ ձեռին հիշվում են դեռ երջ և Սալմաստ, հին Հեր և Զարուանդ գավառները: Սասնա լեռան նոր կոչումը՝ Տարուն լեռ՝ քացատրվում է Տարունի անունով, մինչ հին գրույթներիով նույն լեռան հին անունը՝ Սիմ՝ քացատրվում է Տարաւն-Տարունի հոր անունով: Տարուն գավառը հին գրույթներով, ազգակցական հարաբերությամբ ըմբռնված, դարձած է Սիմ լեռան, որ է Սասնո լեռան, որդի. իսկ նույն Տարուն գավառի նոր կոչումն մէ Մուշ, որ դարձել է Սասնա իշխանի որդի, մինչ հին Տարունը շուտ գառով իրեն աղջիկ է ըմբռնված և դարձել է Սասունի հայր: Այս առասպելական անների հարաբերության մեջ տեսնում ենք կից գավառների միջնագաղթյան հարաբերության հիշատակութուն, այն է Մուշը, որ է քաղաքն ու գավառը, Սասունի իշխանի որդի դառնալով՝ հակված է ամելի դեպի Սասունի իշխանութունը: Նույն հակումը երևում է և այն հանգամանքի մեջ, որ Տարունը աստվելուց լեռան է տալիս Սասունի իշխանի որդուն, բայց իսլամոթքյան դարձած Արզելի իշխանները հանձին Բակուրի՝ ձգտում են հակառակել Տարունը Սասունի իշխանների ձեռից: Մյուս կողմից՝ այն որ Տարունը դարձել է

եղաթի իշխանի դուստր, ցույց է տալիս Տարուն գավառի ենթարկվելը եղաթի իշխանութիւնը:

Արգշոք Տարունի այս վեպի մեջ կարելի՞ է տեսնել մեր նոր վեպի մի հին պատում:

Արդարև անունները մեծ մասամբ նույնը շին այս վեպի և մեր վեպի մեջ, բայց այդ առանձին նշանակութիւն չունի, որովհետև հայտնի է թե, օրինակ, 'ենց մեր վեպի իրար ժամանակակից պատումների մեջ անունները տրբան փոփոխվում են. էլ ո՞ր մնաց զարք առաջ գրի առնված և արարացիների ձեռքով մշակութիւն ենթարկված նույն վեպի մեջ, թե Տարունի վեպը մեր վեպի մի հնագույն պատումն է, հասկապես իսկ— գուցէ հրեղի, ալը երևում է, թեպետ և մի քիչ մութը կերպով, երկուսի համեմատութիւնից: Ամենահին տեղեկութիւնն որ տեսնեք մեր վեպի հանգուցի ճշուղի մասին, դա Ինճիճյանի հաղորդածն է, թե նանգուցը հայ թագաւորի քույր է և թե նրա պատմութիւնը նման է Տիգրանուհու պատմութիւնը: Եվ իսկապես Տարունի վեպի, Տիգրանուհու պատմութիւն և մեր վեպի հանգուցի հրեղի մեջ բավական նմանութիւն ենք գտնում: Տիգրանուհու ամուսնութիւնը դաշնակից, բայց թշնամի Աժդահակի հետ. Աժդահակի խորհուրդը Տիգրանուհու ձեռքով հայոց թագաւորին սպանելու համար. գեղեցիկ և խորագետ Տիգրանուհու առերես համաձայնելը եւ ապա պատերազմի սկզբում Աժդահակի ձեռից հայոց բանակը փախչելը և վերջը պատերազմը Տիգրանի և Աժդահակի, — այս ամենը ըստ էութեան նույն են, ինչ որ եղաթի և Հայաստանի թագաւորի գեղեցիկ և իմաստուն դուստրի՝ Տարունի ամուսնութիւնն փր հոր դաշնակից, բայց թշնամի դարձած Բակուրի հետ. Բակուրի և Տարունի խորհուրդը դավաճանութեամբ սպանել Հայաստանի թագաւորին, Տարունի խոր համաձայնութիւնն այդ բանին, և Հայաստանի վրա արարների հարձակվելու սկզբում՝ իր հոր հայոց թագաւորի մոտ փախչելը և ապա արարների և հայերի պատերազմը:

Մեր սենցած պատումներով՝ հանգուցի հրեղի և Տիգրանուհու վեպի մեջ այսպիսի նմանութիւն շենք գտնում. բայց մենք խրաւունք չունենք չհամարալու Ինճիճյանին, թե հարյուր տարի առաջ հանգուցի վեպը նման է եղել Տիգրանուհու պատմութիւնը: Բայց կան նմանութիւններ հանգուցի և Տարունի մեջ ևս:

Տարունը խաթա թագաւորի, Խոյի ու Սալմաստի տիրոջ դուստրն է. ինչպես և հանգուցը Խաթա կամ Խոյի իշխանի դուստրն է: Տարուն ու հանգուց, երկուսն ևս պատկանում են վիպարիան կանանց այն տիպին, որ մարտիկ դիցապետուհի են, զինվում են հաճախ փրքը տղամարդ. ձիով շրջում, կոպում են. սեննե ֆիզիկական ուժ, բայց միանգամայն և իմաստուն ու խորագետ են: Դրանք իրենց հպարտութիւն մեջ երդվում են միայն նրա հետ ամուսնանալ, որ մրցութիւն մեջ կհաղթի իրենց: Նրանց գեղեցկութիւն և անվան համբավի վրա, գալիս են բողոքաւթիվ փեսացուներ, թագաւորի կամ իշխանի որդիներ, բայց դիցապետուհիները նրանցից:

ուղ զքն շնն ուղում, որովհետև ոչ տք իրենցից բարձր չէ: Բայց ահա գալիս է Խանդուբի համար Սասունի տեր Սանասարի որդի Դավիթը, իսկ Տարունի համար՝ Սասունի տեր Սանասարի որդի Մուշը: Երկուսն ևս սկզբում հաղթվում են զիցազնուհիներից, բայց հետո զիցազնուհիները սիրում են նրանց: Դավիթը նախքան ամուսնանալը պարտավոր է Խանդուբի մշուս ուզողներին հաղթել և Խանդուբի հոր քաղաքը պաշտպանել հարձակվող թշնամիներին դեմ, որոնք այլակրոն են: Եվ Դավիթը հաղթում է այդ դաժան ուտոմաներին և թշնամիներին, որոնք բազմադարև անուններով են դուրս գալիս, որոնց մեջ ամենից շատ հիշվում է Օղան-Տողան անունը: Ապա նոր Սասունցի զիցազնու անունով է Խանդուբին և հարս բերում Սասուն: Եվ ինչ է Տարունի մերժելն իր բուր ուզողներին, որոնց թվում և Բակուրին, որ սղաժան և խառնության դարձած մեկն էր և տեր Բիթլիսի և Արզնա, ինչպես ետքն ալ ամիր Տողան Արսլան քան էլ-Տեպիկն (Տոմաշեկ, եր. 23): Նրա հավանելը սասունցի Մուշին, վերջինիս հաղթելը Բակուրին: Սասնա Մարաթու լեռան վրա Տարունի բնակվելը չերև հարս, բայց նախքան այդ թշնամի արարացիներին պաշարելը նրա հոր քաղաքն ու մեծ վոլվը և այլն,— ձբն ոչ նույն Դավիթի և Խանդուբի վեպը:

Տարունի պատմության մեջ դաժան ևնք մեր Խանդուբի մի հնագույն պատում: Սասնա Սանասարի որդի Մուշի անվանը, Սասունի IX դարի երկրորդ կեսից հետո, Դավիթ Արքայի դեպքի ազդեցության առկ, փոխանակել է Դավիթ անունը: Բայց թե ինչպես Տարուն անվանը փոխանակել է Խանդուբ, այդ, ինչպես վերևում գրինք, բացատրել չենք կարողանում:

Ո՞ր դարու պատմվածք է Տարունի վեպը— Անպատեճառ ոչ առաջ գրի ամսված կարող է լինել քան IX դարու սկզբները, եթե ընդունելու լինենք, որ այդ վեպն իր էական մասով հղել է Վակիդիի գրվածքի սկզբնական ձևի մեջ: Բայց վեպն այնուհետև փոփոխության է ենթարկված. գոնե XII դարու ազդեցությունը երևում է նրանով, որ Խալթում է գրվում հայոց թագավորությունը: Արարացի պատմողները կարծել են, թե Խալթի մահմեդական Շահի Արամաների թագավորությունից առաջ Խալթում է եղել հայոց թագավորությունը: Հաջորդ դարերի ազդեցությունն ընդունելով հանդերձ, պետք է կարծել, սակայն, որ այդ վեպը X դարուց ավելի ուշ չի կարող գրի անված լինել, քանի որ այդ ժամանակ Դավիթ Արքայի վեպն անպայման կազմված պիտի լիներ և հավանական է կարծել, որ Դավիթն արդեն անցած պիտի լիներ հին Մուշի տեղը:

Բայց ո՞վ է այդ Մուշը. ո՞վ է նրա ուսոխ Բակուրը— Գրանք կարծում ենք մեր հին վեպի հերոսներն ձև, հին Մուշեզը ու Բակուրը:

165. Սասնա Սանասարի որդի Մուշը:— Տարունի վեպից իմանում ենք, որ Եղարայից պատերազմիչ և ԵՏարունի պատերազմիչ հերոսը Տարունի և Սասնա տեր Մուշեզը Ազյիկ Տարունի վեպի մեջ դարձած է Սա-

սունցոց նախնի Մանասարի որդի՝ Մուշ անոռնով նա Սասնա տերն է, իսկ Տարունը հետ է մղված՝ գառնալով նրա նշանածը կամ կինը, Ուրիշ խոսքով վեպի գլխավոր կենտրոնը Տարունից արդեն փոխադրված է Սասնա, և Մուշեղի հին վեպը միացած է Սասունի ավանդությունը Այս տեղափոխությունն ու փոփոխությունը շատ հեշտությամբ պիտի կատարվեր, քանի որ Սասունը միջին դարերում ավելի նշանավոր պատմական դեր է խաղացել, քան Տարունը, Քացի այդ՝ հին Մուշեղը միանգամայն և Սասունի տերն է, և նրա նախնի երկու եղբայրների Հայաստան գալու և Միմ լեռան ստորոտում՝ Տարունում բնակվելու ավանդությունն ըստ էության միևնույն է, ինչ որ Մանասարի և իր եղբոր ավանդությունը, Հովհան Մամիկոնյանի մեջ արդեն, ինչպես տեսանք, Մամիկոնյանների ծագման ավանդությունը միևնույն է, շփոթված էր տարիշ ավանդությունների հետ, ուստի և հեշտությամբ նրա տեղը կարող էր անցնել Մանասարի և իր եղբոր ավանդությունը:

Մի տարիշ էական փոփոխություն էլ, որ առաջ է ձևել հետագա դարերի պատմական դեպքերի ազդեցությամբ, այն է, որ Սասնա Մուշեղը կոչում է ոչ թե պարսիկների դեմ, այլ արաբացիների, — և վեպն ունի արաբական շրջանի բնավորություն, մինչ Հովհան Մամիկոնյանի մեջ այդ ազդեցությունը չի երևում: Արդարև, այստեղ ևս Մուշեղի հաջորդներից Տիրան Մամիկոնյանը կոչում է արաբների դեմ. բայց դա մի անկտրա գրույց է, որը կարող է և իր պատմական հիմքն ունենալ, քանի որ արաբները հայերի վրա Տարունի կողմից ևս հարձակում են գործել: Այս պատմական հիշողություն և գրույցի ազդեցության տակ հենց՝ Մուշեղի վեպի մեջ հին պարսիկներին կարող էին փոխանակել արաբները:

Այսպիսի փոփոխությունների հետ Տարունի վեպը պահում է դեռ հին վեպի մի փակի էական գծեր: Մուշեղն իր հոր հետ կուսակից է հույներին և կոչում է նրանց հետ միասին, ճիշտ է՝ ոչ հայոց թագավորի որդու համար, ինչպես Բողոքանդի մեջ, և ոչ պարսից թագավորի որդու համար, ինչպես Անբոսի և Հովհան Մամիկոնյանի մեջ, այլ միջագետքի մի թագավորի, Պենդոյի որդի Եսեբիամի համար, որ թեպետև հոռույցի է կոչվում, բայց իր և իր հոր տեսնող պահում է դեռ պարսկականի հիշողությունը:

Հին վեպից է անշուշտ և Արզնի տե՛ր Բակուրի գավաճաններ հայերին և հավատոս տուրանալով արաբների կողմն անցնելը: Պա Աղծնյաց Բակուրեղելիսի գավաճանությունն է և պարսիկների կողմն անցնելը:

✓ 156. Հի՞ց վեպի ուրիշ մնացորդներ մտրի մեջ:— Թավոք, մենք լուսնենք մեր վեպի բազմաթիվ հին և անթերի պատումներ և Տարունի վեպից հետո անմիջապես աստիպված ենք մեր վեպի պատումների անցնելը որով վեպի զարգացման շրջանները մոթն և անտրոշ են մտում: Բայց և այնպես ունեցած մի քանի հին պատումներից, թեպետ և թերի, կարողանում ենք ըմբռնել հին վեպի կերպարանափոփոխությունը, որով նոր:

վեպն է կազմում: Մյուս կողմից՝ նոր վեպի մի քանի կենդանի, մեր աշ-
քի առաջ ունեցած, հատկութուններից հասկանալի է լինում մեզ հա-
մար այն փոփոխությունը, որ Բուզանդի և Մուշեղի վեպը կրել է Ան-
բոտի, Հովհան Մամիկոնյանի և Վահիդիի մեջ:

Տարունի վեպի մեջ պարսիկներին փոխանակել են արարները, որոնք
և մեռած են նոր վեպի մեջ, միայն քննակոնորեն VII դարու արարների
փոխանակ հանդես է գալիս Բաղդադու խալիֆաութիցուներ, որն ավելի
նոր ժամանակի հիշողությունն է, և որի հետ ալիլի շատ հարսերու-
թյուն են ռեւեցել Տարունի և Սասունի իշխանները: Մյուս կողմից՝ մեր
վեպի մեջ կենդանի կերպով տեսնում ենք, թե ինչպե՞ս Բաղդադի խալի-
ֆաներն, իբրև ավելի հին ժամանակի հիշողություն, տեղի են տալիս
Դեղիպոսի, ժամանակով նորագույն Մար մելիքներին, և մի քանի պա-
տումների մեջ մինչև անգամ շին հիշատակում: Հին թշնամի ազգի տեղը
նորի անցնելը կատարվում է ուրեմն ժամանակագրական կարգով: Բայց
ինչքան էլ հին հերոսին կամ ազգին փոխանակում են նորերը, հինը եր-
կար ժամանակ զեռ մեռած է այս կամ այն պատումի մեջ կամ մեռակ, կամ
նորի հետ միասին, մինչև հետզհետե ետ մղվելով՝ միջանում է և վերջը
նույնիսկ մոռացության տրվում: Այս տեսնում ենք նոր վեպի մեջ Բաղ-
դադի խալիֆաների վերաբերմամբ: նույնը պետք է ընդունենք և պար-
սիկների համար:

Պարսիկների անունը երևում է մի քանի պատումների մեջ. բայց
հին վեպի Պարսից Շապուհ աբ-Բայի անունը մեռած է դեռ իբրև Շապի աբ-
Բան, կամ ավելի աղավաղված՝ Երպրան հորասական, կամ Շապու հր-
Կան, կամ նույնիսկ ուղղակի՝ Շապուհ աբ-Բա: Դա Դավթի, հին Մուշեղի
փոխանակի, ուտին է, որ իբրև փահլեսան կամ Խանզութի սուլկան է
հանդես գալիս: Ուրիշ պատումի մեջ Շապի արքան փահլեսանի դերը կա-
տարում է Բաղդադու խալիֆուն, և նույնիսկ Մար Մելիքը, որոնց նշա-
նածին առնում է Դավիթը կամ Աբլաղը (որը իր որդի Դառնիկ Որբիկի հետ
Դավթի և Սանասարի փոխանակ է), ուստի և կոխվ. հն գալիս Դավթի կամ
Աբլաղի ու արա որդի Դառնիկ Որբիկի վրա: Այս միևնույն սփռագեպը
կրկնված պատմվում է և Մհերի համար, որն տոնում է Հալաթա թագա-
վորի նշանածին, և թուգափորը խորամանկությունը բռնում և հորի մեջ է
ձգում Մհերին, քայց սա հորից պատվում է մի պատմվի օգնությամբ:
Հալաթա այս թագափորին փոխանակում է Շապի արքան, միայն ոչ ին-
չասական կամ Խորասանու, այլ Լոռվա:

Այսպես տեսնում ենք՝ հին վեպի պարսից Շապուհ արքան, Մուշեղի
ստիխը, նոր վեպի մեջ դեռ մեռած է իբրև ստիխ Դավթի կամ, նույն պա-
քահաներով, նրա որդի Մհերին: Բայց նրան փոխանակել են հարորդա-
բար՝ պատմական ղեպերի ազդեցությամբ սակ՝ ի միջի ալլոց Բաղդադու
խալիֆան և Մարա Մելիքը: Հին ժամանակ անշուշտ դեռ երկար աչա կամ
այն պատումների մեջ՝ Շապի արքան գլխավոր դերն էր կատարում, մինչև
որ ետ մղվելով Բաղդադու խալիֆայի և ապա Մարա Մելիքի առաջ, հա-

մեծատարար երկրորդական դեր է առնել, այն է՝ պարսիկների դաշնակից Բակուրիներ:

Այսպիսի փոփոխությունը նսեմացել և ավելի ևս աննշան են դարձնել և Հին Մուշեղն ու Պապ թագավորը:

Հին վեպի հայոց թագավոր Պապի անունը նոր վեպի մի պատումի մեջ ենք միայն գտնում: Պապի անունը հաստատում է մեր կարծիքները:

Պապն ինչպես անվան առուգարանությունը պահանջում է, դարձել է դիցազոների պապը, այսինքն Մովսիս կամ Փիրզատ խանումի և Քեոի թորոսի հայրը, որ ուրիշ պատումներով ընդ խաչապաշտ հայոց թագավոր է կոչվում, կամ խաչապաշտ Ղումրիկ թագավոր, այլ և Գագիկ թագավոր, որ նստում է Աղթամարում: Պապը հայոց թագավոր է ըստ վեպի և նստում է Կապուտկողում. իսկ Կապուտկող անունը, ինչպես սկզբում ևս նկատել ենք շփոթված կարող է լինել Ջին Կապուտա (տուն և Խանդուբի բերդ) Արտագերից բերդի հետ, որը Հին Պապի և Մուշեղի վեպի մեջ մեծ դեր է կատարում: Այստեղ ամրանում է Փառանձիմ թագուհին, որը գերվում է Շապուհ արքայից: Նոր վեպի մեջ հայոց Պապ թագավորի (խաչապաշտ Ղումրիկ) թշնամին է փոխանակ Շապուհի Սենեքերիմը, կամ Բաղդասար խաչիֆան, Մարա Մելիքը կամ ընդ Կապուտա թագավորը, որ հարձակվում, ավերում է Հայաստանը ու հայ ազգը փշաքնում և գերի առնում կամ ընկն կին առնում հայոց Պապ թագավորի աղջկան:

Հին վեպի սարսուղի պատերազմիչ հերոսը՝ Ողական և Մշո տեր Մուշեղը նոր վեպի մեջ դեռ Մշու թագավոր է, ըսյց դարձյալ ոչ ժամանակակից պարսից թագավորների, այլ նրանց հաջորդ Բաղդասարի խաչիֆայի, (ինչպես Աղջիկ Տարունի վեպի մեջ Մուշ(եղ)ը արարների ժամանակակիցն է), որ մի քանի անգամ արշավում է հայերի վրա, հատկապես Մշո Ս. Կարապետի վրա: Հայերը սկզբում հաղթվում են և հետո հաղթում են նրան: Մուշեղն այնքան ետ է մղվել, որ մինչև անգամ իր քաչ բնավորությունը կորցրել է. նա վախենում է Բաղդասարի խաչիֆայից. «էնի դորընդեղ թագատրա, կը գայմեր առ ու հետի կը տանայս: Մուշեղն էլ ուրիշ դեր շունի մեզ ձանթի պատումների մեջ, որովհետև նրա դերն ամբողջապես ասանձանել է Գալիթի Բազրատունին, որը և դարձել է Լեանասարի որդի կամ թու:

Գալիթի Բազրատունու ժամանակակից է և Ձենով Հովանը: Մեր վեպի պատումներից երևում է, որ այս հերոսի տիպն ևս IX դարու դեպքերի ազդեցությունն ստեղծել է մեր վեպի մեջ այլ միայն խուճեցի Հովանի անունը փոխանակել է մի ավելի հին անվան՝ Քեոի թորոսին. միայն դա արև աստիճանի դեռ ձու չի մղել Քեոի թորոսին, ինչպես Գալիթի Մուշեղին, Քեոի թորոսը և Ձենով Հովանն իրոք նույն դործող անձն են: Մի քանի պատումների մեջ Քեոի թորոսն՝ իբրև ավելի հին ժամանակի անուն՝ բորոսիին դուրս է ընկնլ տեղի տալով նորագույն Ձենով Հովանի, մինչ արդ պատումների մեջ Ձենով Հովանի անունը ըկա և միայն Քեոի թորոսն է Գալիթի հովանավորողն և նեղուճյան մեջ օգնողը:

Կան պատումներ ևս, որոնց մեջ Քեոի Քորոսն ու Ջենով Հովանք միաժամանակ են դուրս գալիս՝ կիսանով մուշն գեղը կամ թն դերը կատարում է միայն Քեոի Քորոսը, փակ Ջենով Հովանք հիշվում է անունով միայն առանց դերի: Ջենով Հովանք սովորաբար Դավթի նըրայրը կամ հորհըրայրն է. բայց և Տա Դավթի քոսին է դուրս գալիս և նույնիսկ Քեոի Քորոսի որդի: Մի պատումով Ջենով Հովանի փոխանակ Քեոի Քորոսի գեղը կիսել է Իշխանը, որը կարող է և հասարակ անուն լինել իրքև հատուկ անված:

Քեոի Քորոսի վրա Քեվաթորոսի անվան մեջ պահված է Քեոորոս Ռշտունու հիշատակը: Այն հանգամանքը, որ Ջենով Հովանի անունը փոխանակում է Քեոի Քորոսին, ցույց է տալիս, որ վերջինս անունը IX դարու երկրորդ կեսից առաջ արդեն մտած է նշել վեպի մեջ, հավանորեն մուշնիսկ VII դարի վերջում, կամ VIII, երբ պարսիկների տեղ սկսել են մտնել արաբները: Անշուշտ շնք կարող ասել, որ Քեոի Քորոսն կամ Քեվաթորոսն ևս իր կողմից կարող չէ փոխանակած լինել մի ավելի հին անվան՝ Զարուանդին (կամ սրա որդուն), որ վա Տարունի վեպի մեջ, որը քննարկ IX—XII դարում միայն կարող է պրի անված լինել, բայց իր մեջ պահում է վեպի հնագույն ձևեր: Այդտեղ գործադրվումը դիտվում է արաբների տիրապետության սկզբում, VII դարում, Քեոորոս Ռշտունու ժամանակը: Տարունի հոր գլխավոր քաղաքը Խլաթն է, որ ավելի նոր ժամանակի հիշատակում է, բայց և հիշվում է Ռշտունաց Ոստանը, որ ավելի հին է:

Այսպես տեսնում ենք, թե ինչպես վեպի մեջ հետզհետե մտնում են նոր տարրեր, և նորը կամայց կամայց ձու է մղում հինը, — Դավթի՞ր՝ Մուշնդին, Ջենով Հովանը՝ Քեոի Քորոսին կամ Քեվաթորոսին, Մարա Մեյիքը՝ Բաղդասրու փախիֆային, Բաղդասրու փախիֆան՝ հին Շապուհ արքային, Ղուվրիկ կամ լուկ Խաչապաշտ Հայոց թագավորը՝ Պապին, — բայց մինչև այժմ այս կամ այն պատմի մեջ մտնում են դեռ հին անունները: Մյուս կողմից՝ տեսանք, որ հին վեպից Մուշնդի էլուդը դառնում է նախ Տարունի վեպ, որի հետ է և Սասունը. ապա վեպի գործողության տեղը փոխադրվում է Սասուն, և Տարունը միայն երկրորդաբար դրվում է իրրե կաշված Սասունի իշխաններին: Վեպն ավելի հինն է, քան IX դարու երկրորդ կեսի Սասունի դեպքերը, որոնց սաղոնցության տակ, ինչպես վերջվում գրեցինք, շատ զորեղ կերպարանափոխումքան է անթարկվել վեպը, այնպես որ, թվում է, թե այդ ժամանակ է կազմվել և միայն հին վեպից տարրեր վերցրել իր մեջ:

Բայց եթե լավ քննենք, կտեսնենք, որ մեր նոր վեպն իր ողով ու մեղադեպերով ևս հնի արժագանքներն է կրում իր մեջ: Այսպես Սասնաարի և իր հղորդ հաստատվելը Տավրոսի վրա նույնն է, ինչ որ Մամիկ-Վանակի պատմությունը: Իսկ Դավթի վեպն իր կոթիցովը նաև է Մուշնդի վեպին: Հին վեպի մեջ պարսիկներն են հարձակում գործում հայերին ձավանելու և հարկի տուկ գնելու համար. իսկ ժճարունի պատերազմի մեջ

հայերին հնազանդեցնելու՝ պարսից նպատակն է նաև ավերել հայոց հովանոցի տեղը՝ Ս. Կարապետը և կոտորել կրոնավորներին: Այս միևնույնն անում են Դավթի վեպի մեջ պարսիկների հաջորդ Բաղդադու խաչիֆան կամ Մարա Մեչիքը, հարձակվելով Ս. Կարապետի և ավելի Մարութա Քանձր Աստվածածնի վանքի վրա, որի կրոնավորները կոտորվում են Կուլքապաղիկի ձեռքով, ինչպես Ս. Կարապետի կրոնավորները Մուշեղի վեպի մեջ պարսիկների ձեռով: Կարապետին Քաղը կամ Բաղիկը Մըրվանյան հարստության հիմնադիր Քաղ Ամիրայի անունը, փոխանակել է պարսիկ Միհրանին: Դեպքը Ս. Կարապետից դարձյալ Սասուն է փոխադրվել. իսկ Ս. Կարապետի վրա հարձակումը Քաղդադի խաչիֆայի կողմից, որ դեռ հիշվում է վեպի մեջ, իսկ է մոլվել: Հաղթողը նոր վեպի մեջ ևս հայերն են, և Մարա Մեչիքի կինն ու քույրը և ամբողջ վրանը, բանակով հանդերձ, լքվելու է Դավթի ձեռքը, որ նույնպեսի մեծահարգությամբ է վարվում դերիներին հետ, ինչպես հին Մուշեղը Շապուհի կանանց հետ:

Մուշեղի վեպի մեջ հայերը ենթարկվում են պարսիկներին և արքայորդին՝ Պապը պատանդութունից հետ է դառնում Մուշեղի հետ՝ նըստելու իր հոր տեղը: Նոր վեպի մեջ Սասունն ենթարկվում է Մարա Մեչիքին, և Յ. Վերթման է Դավթի հետ դերակազմության հետ դառնում՝ նստելու հոր բերդում: Կոնվանդը աստիճանով Մուշեղն է, այստեղի Դավթի Մուշեղի մահն աստիճանում է նոր և քաղաքների փշխման հարստություններից, միայն ոչ Պապի, այլ Վարազդատի օրով, իսկ Դավթի մահը բոլորովին ուրիշ պատճառից է աստիճանում. ինչպես կտեսնենք, այդ մահն ընդհանուր առաջադիական գծով է պատմված: Միայն՝ թե Դավթի Մուշեղը և թե Մուշեղը երես աստիճանով կոնվանդը լինում է մեջ չեն սպասվում. երկուսն ևս անգին փամփուսակ անակնկալ հարձակումով են մահանում:

Մուշեղի մահվան վրեժն անում է եղբայրը Մանուկը, որ գերություններից ազատվելով՝ գալիս, Մուշեղին սպանողին սաստիկ պատժում է և սպա շարժանակելով կոնվանդը պարսիկների դեմ՝ հաղթություններ է տանում և երկիրն սպառնում: Իսկ Դավթի մահվան վրեժն անում է նրա որդին՝ Մհերը, որը նույնպես գերություններից անսաստիկություններից հետո՝ գալիս հորը սպանողին սաստիկ պատժում է տալիս և կոնվանդը Կուլքապաղի քաղաքի հետ, որոնք շփոթվում են Բաղդադու խաչիֆայի քաղաքի հետ սպառնում է Սասունը:

Այսպես նոր վեպը իր խոշոր էական գծերով շատ նման է հին վեպին և մտածավորապես նրա Մուշեղի էությունը, այնպես որ մինչև նոր վեպի մի քանի անունների տեղ դնենք հին անունները, որոնք իսկ են մոլորված նոր վեպի մեջ, անկող վեպի նմանությունը նույնություն կրթական և կամային արարիտի տարբերություններ, որոնք անհրաժեշտ են, այդ տարբերությունների մեջ պետք է շեղանք այն, որ հին վեպի շատ էությունը և միջադեպերը չկան նորի մեջ, — դրանք, հասկանալի է, մտածողության են տված, — և սպա այն, որ նոր վեպի մեջ ևս կան միջադեպեր, որ հին մեջ չկան: Այս երկրորդ տեսակի միջադեպերը, սակայն, գրեթե բոլորը դի-

ցազնակամ առասպելներ և կենցաղական գծեր են, որոնք նոր կարող էին մտնել վեպի մեջ և ճթն հնի մեջ հղած էլ լինեին, մեր մատենագիրները չպիտի հիշեն, ներքևում կտեսանենք այդ դիցազնական մասը: Այսանոց ամփոփենք մեր ձյունկացութիւնը:

Մենք ունեցել ենք մի հին մեծ վեպ, որ արդեն պատրաստ է եղել V դարում. պատրաստ ոչ այն մտքով, թե գեղարվեստորեն մշակված, միակերպութիւնն ստացած մի որոշ հաստատուն պատմվածք է եղել. այլ բազմաթիւ ու բազմազան զրույցներ, մեծ մասամբ իրարուց անկախ, խմբված են եղել «Պարսից պատերազմին շուրջը և պատմվել մի քանի սերունդների վրա, հաճախ միևնույն միջադեպը մի հերոսից մյուսին տրվելով կամ երկուսի, երեքի վրա ևս պատմվելով: «Պարսից պատերազմը» նույն վիճակի մեջ է եղել, ինչ որ այժմ «Սասնա Մոկրն» ունի:

Այդ հին վեպի, «Պարսից պատերազմի», մի քանի հատվածներ երկար ապրել են, դարերի ազդեցութեանց կերպարանափոխվելով: Մուշեղի ճյուղը հատկապես ապրել է Տարունում և ստացել տեղական ընտելորութիւն: Կազմվել է մի նոր վեպ՝ «Տարունի պատերազմը»: Ահուհեան և այս վեպն արաքների ժամանակի ազդեցութեամբ փոփոխութիւն է կրել, արաքիկների դեմ կռիւր դարձել է արաքների դեմ:

Վեպն այնուհետև IX դարի երկրորդ կեսին Սասունում և Տարունում սեղի ունեցած գեպքերի ազդեցութեան տակ բուրբուրվել կերպարանափոխ է եղել և այսպէս հարորդ դարերի ազդեցութեւնը ևս կրելով, զըլխավորապես մինչև XIII դարը, կազմվել է մեր նոր վեպը: Տարունի պատերազմը պարսիկների դեմ դարձել է Սասունի կռիւ մարտ Մելիքի դեմ: Հին ամուսնները կամ մոտացութեան են տրված շատ հին միջադեպերի հետ, կամ թե, ինչպես Մուշեղ, Պասպ և Շապուհ արքան, ետ են մղված նորերի առաջ: Այս կերպարանափոխութեւնը կատարվել է մեկ՝ այն պատճառով, որ Սասունն անբաժան է եղել Տարունից, մեկ էլ՝ որ Սասունի IX—XIII դարերի գեպքերը նման են եղել հին վեպի պատմվածքներին: Նոր վեպի մեջ դրեթե չկա մի միջադեպ, որ հնի մեջ չլինի: Կենցաղական գծերը մի կողմ թողած՝ նորի դիցազնական առասպելները միայն չենք գտնում հին վեպի մեջ, նոր վեպի մեջ ապրում են, ուրեմն, հին վեպի տարրերն և ընդհանուր ոգին: Նույն ձևով, ինչպես կտեսանենք, նոր վեպի մի քանի առասպելներն մեջ դեռ կենդանի մնում են հատվածներ վիպասաների:

Է

ԴԻՏԱՋՆԱԿԱՆ-ԱՌՈՍԱԳԵԼԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԵՎ ԸՆԿՆԱՆՈՒՐ ՎԻՊԱԿԱՆ ԳՆԵՐ

187. Ավանդության ազդեցությունը:— Մինչև XIX դարի վերջերը մեր ժողովրդի մի մասն իր հավատքով, հայացքներով ու բարքերով դեռ էպոսն միջնադարյան վիճակի մեջ էր: Իսկ Միջին դարերում, երբ մեր

վեպն իր հաստատուն կերպարանքն է ատացել, մեր ֆեոդալն ու ռամիկը-
անունով միայն քրիստոնեյա են հղել: Նրանք կյանքի ու զրույցի մեջ շա-
րունակել են պահել Հին առասպելները, հեթանոսական հավատադի-
ւանքն և աշխարհայեցողությունը, որոնք զայիս էին շատ հին ժամանակնե-
րից և մնում էին իրրև գերասպրուկներ, իբրև ժողովրդական հավատ: Ա-
վանդութունն է հղել մեր ռամիկ համար գիտավոր հոգևոր սնունդը. իսկ-
ավանդութունը, հայտնի է, մեծ դժվարությամբ է փոփոխություն են-
թարվելում և նրա միջոցով Հին ժառանգությունը բավական նշտությամբ
անցնում է նոր սերնդին:

Այդ ավանդական-առասպելական տիր հետ բերում էր բունաստեղ-
յակաճանաչման մոժեհետք, գեղարվեստական պատրաստի սյուժեներ ու մո-
տիվներ, որոնցով իդեալականացվում էին հերոսական տիպերը: Իսկ
այդ հարկավոր էր հերոսական վեպին, քանի որ պոեզայիկ կյանքը վե-
պի մեջ դրանցով բնականորեն դասվել և ազդու էր դառնում: Քանի-
որ կյանքի մեջ ամեն կողմ թափանցած էր հին ավանդությունը, հեթա-
նոսականը, նույնը պիտի անդրադառնար և մեր ժողովրդական վեպի-
մեջ: Ըմ վեպապես այստեղ ևս ավանդության նույն սաղոցությունն ենք
տեսնում: Ինչպես վէ նոր պատմական դեպքերի հիմքի վրա վեպ ու զը-
րույցներ ատեղծվեին, այդ նորի մեջ, անհրաժեշտորեն պիտի մտնեի Հին
ավանդությունից ստացածը, թե մեր Հին վեպի սյուժեներն ու հատ-
վածները և թե առհասարակ հին վիպական գծեր և առասպելներ: Նոր-
պատմական դեպքերի հետ, ուրեմն, կողք կողք պետք է ապրեին հին
առասպելները, կամ թե սկզբնապես բուն պատմական զրույցը հետզհե-
տե պիտի ստանար հին առասպելի կերպարանք, իրեն քաջերով և միաց-
նելով բուն առասպելական գծեր և նույնիսկ ամբողջ պատմվածքներ,
որոնք իսկապես առասպելներ են:

Այսպես էլ կազմված է մեր վեպը, որ ժուև պատմական հիմք տունի,
սակայն ամբողջապես դիցազնական վեպի կամ առասպելի կերպարան-
քով:

158. Գիցազնական վեպ:— Թե ինչ է հասկացվում այս անվան տակ,
այդ շատ բավ քաջատրոս է մեր դիցազն բառը, որ նշանակում է սրից-
ազգ, դից սերունդ: Գիցազներն, ուրեմն հասարակ մաճկանազու, կամ
վիպական բառով ասած՝ հողածին շեն, այլ ունեն տրե՛կ աստվածային
ժազում: Այսպես են գրեթե բոլոր ազգերի դիցազները, լինպես հունա-
կան դիցազները, գերմանների մեծ դիցազն Ջիգուրդ կամ Ջիգֆրիդը,
որ Օդհին աստուծու թոռան որդին է:

Գիցազներն ոճաված են հսկայական մարմնով և գերբնական ուժով,
որ ժառանգաբար ատանում են իրենց նախնուց կամ նրանց՝ փրենց շը-
նորհած գերմարդկային սուլքից: Նրանք կռվում են սղ թե հասարակ
մաճկանացուների, այլ իրենց նման հսկաների, գերբնական արարածնե-
րի՝ վիշապների, դևերի ու շար ոգիների հետ: Հին դիցազները, ինչպես

՛ի իրենց նախնի աստվածները, մեծ մասամբ բնության անձնավորումն են, բնության աստիքային ուժի անձնավորված պատկերացումները. ուստի և նրանց աւանդելները մեծ մասամբ ակզքնապէս ֆիզիկական ծագում ունեն, այսինքն՝ նրանց արարքներով նախնական մարդկը բանաստեղծութեն բացատրելի են բնության երևույթները: Այս է դիցազնական առասպելի էական հատկանիշը: Բայց միջին դարերում կազմված և պատմված վեպը, ինչպիսին է Վեսանա Մոերը, այդ մոտիվն աւնում է հնից, միայն իր հերոսներին փարավորելու համար: Ժողովուրդը չի բավականացել, որ իր հերոսները փարավոր ստեղծից ծագած լինեն, այլն իր նախնի հերոսին վերագրել է հրաշքի ծնունդ և արարքներ, որոնք հին աստվածներինն են: Նույնը գտնում ենք և մեր «Վիպասանքի» մեջ, ինչպես Երվանդի ծննդյան և Սանատրուկի երեխայության մասին կազմված են առասպելներ:

180. Ազգանց տոհմ և մարդ:— Վեպն ինքը որոշում է, թե Սասնա ժոերը հասարակ մարդիկ չեն, այլ «Ազնանց ջնաից», այսինքն՝ դիցազն են: Ազնանքս բառն ազնազ բառից, իբրև ազնյանք, ազգ օւնեցողներն, ազնիվներն ստեղծ: Ուրիշ պատումների մեջ մեր հերոսները կոչվում են «Ֆերդի» ազգ կամ փառչեան, կամ անձնաճուր: Վերջին բառը, որ նշանակում է դարձյալ աչնալուր, կազմված է անձն և ճուր լաւերից, իբրև անձամբ ներդին, ինչպես պատկերացվում են բոլոր գերլեանկան էակները մեր հին և նոր ժողովրդական հավատքով:

Վեպը շատ լավ ցնորոշում է իր հերոսներին և մարդան հետևյալ միջադեպով, որ մի ասանձին գրույց է և տարածված է զանազան ժողովուրդների մեջ:

Երբ Սանատրան աւ Բազդասարն իրենց ստանը շինում են, Քաղաքասարն ամեն որ կ'ներթար ավղուշ: Մեկ որ գնաց, մեզի նման մեկ մարդ տեսավ անտառի մեջ. էդ մարդին վերցրեց, դրեց իր շերը, բերեց. որ որսն արավ պրծալ, օհալ տոսն: Երկու եղբայրով, մեկել մայրն ու տերտեղը հաց էին ուտում, բաժակը դինի լցնում, խմում քեֆ էին անում: Իրար ասին, «Անուշ լինի»: էն՝ էնոր, էն՝ էնոր, էդ մարդը Բազդասարի շերի մեջ իրար եկավ, Բազդասարն իմացավ: Սէրս, ընկավ միտքը, ասավ. «Եմ մերս, էտոր մեկ բան եմ գտել, դրել իմ շերս: Ասավ, սէւն, տեսնեմ ինչ բան է, որդիս: Համեց, տեսավ՝ մեկ բան ա մեզ նման: օհ էլ էլ աստօու ստեղծածն ա, հաց սվեք, թող ուտիս:

Այս գրույցին անմիջապէս օրինում է մի ուրիշ անկախ գրույց, որ նույնպէս կա տրիշ ժողովուրդների մեջ ևս:

Ասավ. սՄերս, էս (մարդը) տ'նց գլուխ պիտի պահիս: Ասավ. սՄրդի, դուք շրից էք բահում եկել, դուք ֆերդի ազգ էք. մեր բանը զոռով է. ըրոնք խելքով կ'ապրենք:— Այս մարդու խելքը փորձելու համար՝ հակառակ ասում է նրան, որ վեր կենա քը ձիու գլուխը սա ձիու տապալակը, տրի մեջ քարասուն լիտր գորի էին լցնում: Մարդը տուպանը բարձրացնել չէր

կարող. բայց նա բաց է անում տոպրակի բերանը, ձին գարին տեսնում է, մտաթր մտցնում տոպրակի մեջ. մարդը տոպրակի պարանը ձգում է. ձիու ականջների ետևը, ձին տը գլուխը բարձրացնում է, տոպրակն էլ հետև է բարձրացնում: Բազդաւարը զարմանում է. «Եմ մերս, քո խոսքն է. ես զոտով էի բարձրացնում, սա խելքով բարձրացրեց: Սրանք քանց մեզ շատ իմաստուն են»:

Ահա հսկայի ե մարդու էական տարբերութիւնը: Հսկան հաղթանդամ էր այն աստիճանի, որ մարդը նրա գրպանում տեղափոխւում էր: Նա ուժով է և ամեն քան ուժով է անում և ուժով ապրում: Մարդը փոքր է, բայց հսկայից շատ ավելի իմաստուն է. և ինչ որ հսկան ուժով է անում, մարդը՝ խելքով: Մարդու ուժը նրա խելքի մեջ է: Ընդ այս էական գիծը անցնում է գրեթե ամբողջ վեպի մեջ: Հերոսները բարձրահասակ են, ուժեղ ու հաղթ, արագուս, պնդակազմ, ինչպես Դավիթը, բայց և երեխայի պես միտմիտ ու անդետ, պարզասիրտ: Երբ Դավիթը խանդութի հոր առաջ կանգնում է, սթաղախոր, իր վաթիւ, վազիւ, շիվարան, թե իզամ լե մարդ կ'եղի՛ւ:

Վիթխարի հաղթանդամութիւնը դիցաբնական վիպական սրտ պահանջ է: Մեծ հերոսները պետք է ընեն և լեռնադեզ հսկաներու նույնպիսի հսկաներ են վեպի մեջ և կանայք, ինչպես մերի մեջ՝ Խանդութի խանութը: Գերբնական մեծութիւնը, սակայն, որ մեր այդին տղազացնում է. հերոսին, վեպի մեջ չի խանգարում գեղեցկութիւնը: Դավիթն ու Խանդութը, ինչպես Սանասարն և ուրիշները, աշխարհի գեղեցիկներն են: էականն է անդամների համեմատութիւնը կամ շարժակցութիւնը, որ եթե պահանջ է, լեռնայապի հսկան էլ գեղեցիկ է:

Վիթխարի հսկաներ են և Դավիթի ոտոխ փահլեւանները, որոնք նույնիսկ Դավիթից ավելի քարձր ու հաստ են. Համբա փահլեւանի ճկունքի մատանին, օրինակ, դառնում է Դավիթի սձեռաց բլազուկը. և երբ Դավիթը այդ մատանին մատին է ուզում դնել, դալիս, հասնում է անթի տակ: Բայց, փնչպես ստփորական մ տարիչ ազգերի վեպերին ևս, այդ ոտոխ փահլեւանները անձո՞ւնք են կերպարանքով. որովհետև մտանքի զանալուփութիւն չկա: Ե՛րբ Շրբբզան Խորասականի վերին ունք էնքան էր կարգի, տը եկեր էր, հասեւ մըր արտին. տա շանգալով կապեր էր տա գարկի հետևանց վըր պատեկին: Ըն մեկն էր Լոռա Հրովա փահլեւանի ներքեի մտով զգետին մ'աւելեր ու կ'երթեր: Նույնպես Խանդութի դոնապան Համտոյի սեեկ պտուկ կախվեր էր արտին:

Հաղթ մայրնին հասուն է և մեծ ուժն ու զորութիւնը, որի համար օրինակներ շատ փան մեր վեպի մեջ: Հիշենք միայն Մհերի պարտքը, որով նա, նման հին Անգեղ Տուքին, շարակում է ահագին ժայռն ու ձգում Ջգիսն գետի մեջ ու ժայռի վրա շինում է սիրբա քալակը: Մհերի ուժը հին վեպի Տրդատի ուժից մեծ է, որի վրա նույնպես պատմում են, թե հայկարար բերել է քարեր Մամիսից:

Մեծ ուժի հետ տնտեսում ենք, որ հսկանքներ ունենն և մարմնի պողպատյա կարծրութիւնն: Երազմի անդամքն առաջ քարին տւ կրակ տվեցաւ: Երազմ անքերի տւ ոտքերի, ինչպես և նրանց ձիերի հետքերը, ցույց են տալիս քարերի վրայ: Խանդութի գլուխը, ինչ նա բերդի գլխից ներքև էր գլորում փրեն, դիպչում է քարին ու քարը փոս է ընկնում: Փոսը սանդի տեղ են բանեցնում: Վանա քաղաքում ցույց էին տալիս Քուրդի Զալչալու ոտքի տեղը: Դավիթը երկու տարի փահչլանների գլուխը կտրում է, աս դերկուտի քրջամն էլ կապեց իրաւ ու խուրջիկի ալա թաւնց վըր թարքին: ու ըզունց լեզուն կախված՝ զգեստն դոթնի ախտի ալա կը վարերա:

Այսպիսի մեծամարմին ոսնող հսկանքը ընականարար և մեծ ծանրութիւն ունեն, Վեպի մեջ առանձնապես հիշվում է ՄՀերի ծանրութիւնը, որի առաջ հողը թուլանում է ու գետինը լի կարողանում վերցնել նրան: ոտները թաղվում են հողի մեջ, ինչպես պարսից Ռուստամի, որուաց Սվյատագորի և ուրիշների համար է պատմվում:

Երբ մի անգամ մարդկային մարմնի շարքը խոշորացված է, ընականերն նաև ամեն հատկութիւններ մեծացրած ու շարժանքն ունեն հրականքը: Առնենց մի քանի կարևոր և շատ տարածված գծեր: Դիցազների ձայնը շատ բարձր է ու ամպի նման զուտացող և սար ու ձոր թնդացնող: Այսպիսի ձայնով առանձնապես օժտված է Զենով Լուվանը: Դավիթը նույնպես պակաս ձայն չունի. երբ նա մահացու վերք է ստանում, բռնում է, և նրա ձայնը Մեղրագետից հասնում է մինչև Սասնա բերդը, որտեղից իսկույն բռնում է Զենով Լուվանը և սրա ձայնը Սասունից հասնում է Ատրպատական, ՄՀերին: Մահածեթմ Դավիթի գոտցը հիշեցնում է Ֆրանսիական վեպի Ռոբանդի փողի ձայնը: Դավիթը նույնպես Պղտրի փռը (բյուրեղյա փող) տնի, բայց գործածութիւնը լկա վեպի մեջ: ՄՀերը երբ հոր մոտը լսում է, ուշաթափ ընկնում է ամ քանի որ. նա արտասովում է, և նրա արտասուքից, ինչպես ուրիշ ազգերի վեպերի մեջ կա, գետ է կազմվում:

Եւալրաթ գութան քաշողը շատ հաց կ'ուտեա, — ասում է Դավիթը, երբ զարմանում են իր շատակերութիւն վրայ: Այսպես շատակեր և շատ խմող են գրեթե բոլոր գիցազները: Դա ընդհանուր վիպական գիծ է: Փառասուն գամաթ, սթյասա, գինի խմելուց հետո Դավիթն ասում է. «Ուղտը դգալով լեն ջրի», կամ «ես ճնճողով լեմ, որ ինձի ջուր կը տաք. գինու կարաս ինձի շանց տվեք, երթամ գինի խմեմ, զամ հաց ուտեմ»: Եվ զըլուխը մտցնելով յոթ տարվան քացախ գինու կարասի մեջ, դատարկում է ու լի հարբում: Լաց ուտելու և շատ խմելու օրինակներ շատ կան մեր վեպի մեջ:

Ընդհանուր տարածված վիպական գծերից մեկն էլ այն է, որ դիցազները ծնվելուց հետո արդեն ունենում են մի նշան իրենց դիցազնութիւն. արագ աճում, զորանում են և մանուկ հասակում արդեն ցույց են տալիս իրենց գերմարդկային զորութիւնը: Երբ ծնվում է ՄՀերը, Դավիթն ասում է. «Թե որ էզ տղեն ինձնից է, իր մրեն նշան մի, զորութիւն մի

պիտի չդնին: Եթե քանի որ ինքնապաշտպան (բարոյ) էրեցին, ու բերեցին զգութիւն զնորի բնոր տեղ փաթեցին վրա աղին: Տղեն էր, նորոք լաց ու ճմլկոտաց մեջ ճգորին, ընդոր վրա վու փաթեցին զնորի կտոր-կտոր եղավ: Դավթին աչքալույս բերողներն ասում են. «Տղեն լավ տղա է, բայց իր մեկ ձեռքը աղաթ է, խփուկ է. մարդ լի կըրնա բանա զիր ձեռքը: Եկավ Դավթին ու նստավ ու զմանուկի ձեռք մածնց ու բացեց. տեսավ, որ զուսանթ մի արուն իր ձեռի մեջն էր: Ասաց. «Շա՛ւ, հա՛ւ, զաշխարհ արեք է կաթ մի արուն, զրեք է իր ձեռք մեջ: Քե որ ըզի մնաց, ըզոր մտտն զարմանալի բան կ'եղնի: Ձեռքի մեջ ձեռք զերթ արունը նշան է Մհերի ամբողջ կյանքին. սէղա ինձնե շատ արունք պիտի էնա, — գուշակում է Դավթիքը: Մհերն անում է այդ մեծ արունքն իր հոր մահվան վրեժն ասնելիս և հետո: Նույն գրույցը պատմվում է և Լանգթամուրի համար՝ իբրև նշան Լանգթամուրի թափած մեծ արյան:

Ենչ խաղիս տղեք աարավ կմեծանան, Մհեր՝ օրով. ինչ ամսով, Մհեր՝ սհաթով: Այսպես արագ մեծանում են և Մանասարն ու Բաղդասարը, և Մարա Մելիքը, և Դավթիքը, և Ջոշարը, և տղիշները: Նրանք շուտով հասակ են առնում և մանկական խաղերի ու շարութիւնների մեջ արդեն ցույց են տալիս, թե իրենք հասարակ մահկանացու չեն: Դավթի կամ Մհերի համար պատմվում է, թե ինքը երեք տարեկան է, ընկերները ութ, տաս տարեկան, ժամին վրա կովտան, վիր թե հտու ձեռ, թեքեր թռան. վիր ստքեր հտու, ստքեր վտարան: Նրան փակում են տանը և քնած թողնում. սենյու վախտին զարթնեց, երավ ձեռ էթալ, — գուշ շեմքով ասորդարով թռավ, եկավ: Նա բարդի ծառը կոտրում է, երեխաներին շարում վրան, ապա ծառի ծայրը բաց թողնում ու երեխաները մի մի կողմ են ընկնում:

Այսպես եթե շարունակելու լինենք, ուրիշ այսպիսի շատ գծեր էլ կգտնենք, ինչպես, օրինակ, Մհերի կամուրջ կապելը, որոնք հատուկ են ոչ միայն մեր, այլև ուրիշ ժողովուրդների վեպերին: Ավելորդ ծանրաբեռնութեան է ցույց տալ, թե մեր վեպի տր գիծը կամ գրույցը որ ազգի այս կամ այն վեպի մեջ ինչպես է պատմվում: Գրանք ընդհանուր տարածված վիպական եղանակներ են, որոնց մի քանիսը հետո ևս վտեսնենք: Այդ գծերով պատկերանում են դիցազները, մեզնում մեր Աղնանց տո՛մը, իբրև մի անցյալ ազնիվ սերունդ, որ շափազանց օտնոված է անեն մարմնական բարեմանութիւններով, որ և, ըստ առականիոր ձիու տոյրակի զրույցին, աշխարհի կյանքի ու ապրտասի ծանրութեանը քարծրացրել է մկանների տեժով և ոչ խնջի հանճարով: Մհերն իր բոլի, կուպիտ, բուն մարմնական տեժով չ'ապրում, մինչդեռ նրա մոտ՝ Տոսպան քարայրը մտնող հովիվը (տուրակը քարծրացնելու պատմութիւնը կա նաև Մհերի տ մի հովիվի վրա) ասորդարը խնջով է ուտում: Մհերը, ասկայն, հին, շատ հին սերնդի ներկայացուցիչ է, նրա սեժը թաղված է գետին, նա փակված է աչքի մեջ. նրան փոխանակել է մարդկանց նոր սերունդը, որ մարմնով թուլ է, բայց մտքի ուժով է գործում և ապրում:

Հսկանս տե՛ծեղ է, մարդը՝ հանճարեղ.— ահա այս երկպի տարբերութիւնը Ծվ մեր վիպը ակզտում հենց շեշտելով այս տարբերութիւնը, վերնում գրված տապալակի զրույցին շատ գեղեցիկ կերպով իբրև շարունակութիւն պատմում է, թէ հսկա եղբայրները իրենց մոր շինած տան անունը Մարդուն են գնել տայիս, որի համար հսկաների տունը տունվէ, այլ Մատումա:

160. Մովսիսի Ծնունդը.— Ո՞վ են, ինչ ծագում ունեն մեր վիճիարիները, եթէ մարդ չեն:— Արդարև մի քանի պատումների մեջ Ազնանց նախնի երկու եղբայրները պարզապես մարդկային ծագում ունեն, բայց ուրիշ պատումների մեջ այդ նախնի հերոսները աստվածային ծագում ունեն: Ե՞րբ քրից եք բաճում եկել (քոյացել), դուք Ֆորդի սզզ եք, ձեր բանը գտնով էք, — այս է ասում Սանասարի և Բազդասարի մայրն իր որդիներին: Այդ շատ պարզ բնորոշում է մեր հսկաների գերբնական, հասկանալի ֆիզիկական ծագումն, որ մի քանի պատումների մեջ մութը հիշատակութիւնը միայն կա, մինչև ուրիշների մեջ պարզ կերպով պատմւում է:

Մենքերիմը կամ Կուսպաշտ թագավորը Սանասարի և իր եղբոր Հայրաթիվն է միայն. նրանց մայրը Մովսի կամ Մովինար խանումը, հղանում է նրանց աղբյուրի ջրից, փակապես ծովից: Նա, գեռես, կույս, տխուր իր անամա ամուսնութիւն համար, պիշըը երազում տեսնում է. հայտնի չէ թե ում. միայն երազում յոմին նրան ասում է. Ե՛րեւ ծովու բերան, դու քո մուրազ կ'առնես: Գնում է: Նրա ծովսփին նստած լաց է լինում: հանկարծ ծովը բացվում է, տեսնում է՝ մի համեղ աղբյուր է ցայտում: Կաննում, մի քուտը լիքն է փսում, մի բուռն էլ՝ կիսատ: Ուրիշ պատումներում մայրը գնում է ծովսփի գրանկու. լեքն և իր վարդապետը, որ կնոջ հագուստով իր հետ էր, անցնում է մի կղզի, ըստ մի պատումի Վանա ծովի Առտեր կղզին, մտնում են մի այրի մեջ, ուր մի փոքրիկ վանք վար, և վանքի մոտ մի աղբյուր էր բխում և թափվում ծովը: Աչատեղ վարդապետը ժամ է ասում, աղջիկն աղոթում է ու լվացվում, և մի քուտը զիւր փսում աղբյուրի ջրից, մի քուտ էլ՝ կիսատ:

Աղջիկը հղանում է և հասկանում, որ Մովիցն է: Մնվում են երկու եղբայր՝ Ասնասարն ու Բազդասարը, ուրանք գիտեն, թէ իրենք հողածին չեն, այլ ծովային, ինչպես ինքն փրեն անվանում վ՛ Սանասարը: Զուրը նրանք տարրն է, և նրանք անվնաս մտնում են քրի տակ:

Ավերտրդ է ասել, որ ուրիշ ազգերի մեջ ևս վան շատ գիցազներ, որոնք մույնպես ծագում են աստվածային ծովից կամ ջրից:

161. Զորը:— Վիպական տարածված գծերից մեկն է ջրից սե՛ս ստանալը, և ընդհանրապես խմելուց անսովոր այսպութիւնը անհն ու զորանալը մի շատ սովորական եղանակ է թէ արեւմտյան և թէ մասնավանդ արեւելյան զբոսայիտների ու աստապելների մեջ: Դիցազները հանախ իրենց սխրագործութիւնների ակզտում, կամ մի հսկայի գնմ կռվելիս խմում

են աղբյուրի շուր. կամ տարիչ հրաշագործ խմիչքներ, սրից փրկենց ուժը
պրկնապատկվում է: Հնգկական առասպելներին մեջ հաճախ շրի տեղը ըրո-
նում է կովի կարը կամ մեղրը: Իսկ պարսից առասպելներին հիշենք
միայն, որ Ռոստամը Ձուհրարից հաղթվելուց հետո՝ հրաշալի աղբյուրի
ջուրը խմելով՝ ստանում է իր առաջվա մեծ ուժը:

Մեր առասպելներին և վեպի մեջ ևս առանձին տեղ է բռնում ջուրը,
հատկապես աղբյուրը կամ կաթնաղբյուրը: Եթե ջուրը մեր վեպի մեջ
նշանակութուն ունի, ալ միայն այն պատճառով, որ դա մի տարածված
վիպական եղանակ է, այլ և այն՝ որ մեր դիցապոեզիայի ջրնդնն կամ ծո-
վային ծաղում ունենն Լուսինիսկ այն պատմվածքների մեջ, ուր հեղոս-
ների ծովային ծնունդը լիա, ջուրը կատարում է փր դերը, և Սասնա
Ստերի ուժի պատճառը ջուրն է դրվում և հատկապես Սասնա ջուրը կամ
ջրի աղբյուրը:

Երկու եղբայրը հանդիպում են մի գործող ջրի, որ լեռնից իջնելով՝
վարկում է մի մեծ գետի մեջ. սկը կտրեք զրոգ գետ ու կը շերտեր շարի
մեջտեղը: Եվ ասում են. սիրն որ զըտայ ջրի ահ գտնե, ու գիր սուն
լն սուկն վըր իդա ջրին, ընդրա ամլադ լն որ եղնի, հըմլա գործող կ'եղնի:
կամ սիր նստի իդա հողի մեջ, ընդոր ժառանգ անդի, իդա ջուր խմա, իդա
ջրի պես զորընդող կ'եղնի. իմալ որ իդա քիչ ջուր ինա շատ ջրին կը
կտար, և ի ժառանգ լն հըմալ կը կտրա:

Ուրիչ պատումով Ասնասարն ուժ և լեռնանման հսկայութուն է
ստանում հենց այն ծովի աղբյուրներից, արից հողացել էր մայրը: Երբ
երկու եղբայրն իրենց հայրաթիվ, վրասպաշտ թագավորից հրաման ստա-
նալով՝ գնում են աշխարհ տեսնելու, կանգնում են ծովի ափին, Սասնա-
սարն ավելի լավ է համարում իրեն ձգել ծովը, քան կռապաշտն իրեն մա-
տաղ անի: Մասնասար ինքը զցնց ծով: Աստծու հրամանով ծով՝ ինչ շոր
գետին՝ վրա գնաց, ծով բացվեց: Գնաց, մեկ քախիչ միջին տեսավ մեկ
ձի էնտեղ թամբած, կեծակաճ բար վրեն կախ տված: Միտտ արավ, որ
ձին հեծներ, ձին ասաց, սշողանին, ի՞նչ կ'անես, քո միտտ ի՞նչ վա: Ասաց.
սՓեզ կը հեծնեմ: Ասաց. սՓեզ կը տամ արեգական, կը խաշեմ: Ասաց.
սՄովալին ևմ, ինձի կը տամ քո փորի տակ: Որ կը տար արեգական՝
խաշեր, տվավ փորի տակ. որ կը տար՝ երթար հանդունդ, ինք տվավ
քամակ: Ասաց. սՄու քո ձին, դու իմ տեղը Դու նեղցած կը դինես, երթանք
էնտեղ մի ջուր լամիր, հանգատացիր: Գնաց տեսավ մի կութ էնտեղ էր,
երկու դիտր քամրակ դրեց մեջ, դրեց գլուխ, լկանգնեց. մեկ մեջկապ
էնտեղ էր յոթ փոթ եկավ բուր մեջաց, լկայնեց. մեկ ջուլստ կոնդրա,
մեկ-մեկ դիտր քամրակ դրեց, հագավ, հալա մեծ էր... Ջուր խմեց,
քնեց. քնեց մի քիչ, Աստծու շնորհք առեց, վեր ելավ երկու դիտր քամրակ
հանեց վունդրեքաց, հագավ, — էնդուր ստով, մեջկապ՝ մեջքով, կութ՝
գլխով: Ելավ ձին հեծավ, քամրով կ'երթար, մեկ էլ տեսավ ծովու երես:
Թաղդասար տեսալ, որ սար ելեր ա օտրի վրա, ասաց. սՄրթայի կոա-
պաշտ թագավորն ինձ մատողեր, աղեկ էր, քան ես քանակարն փնձ ուտեր:

Մի պատահով Սանասարն իր մոր պէս անքաղ է տեսնում ծովագի ցնալու. «Գառ ձողու բերան, ասաց, ձող կը բացվի ան, կը մտնես հանդի էղածի մ' (նկնողեցի մ') կա հանտեղ, մեկ թուր կա անտեղ, մեկ ազնետարան խաշ փերան. զրև բերեա, ալ քան շտոնեա: Սանասարը ծովի տակին տեսնում է սթոշկ ու սարե մ'կա անտեղ, հալուզ մ'կո մաեջ քոշկ ու սարին կը թալի. ձի մ'անտեղ կարուկ, ձիու շորս ոտան մեջ թուր կծծակին, կապեն Աթրպին, կրտսիկն ը Գլխին, Քեծեքն ը Մշեքը, մտալ մեջ, լողկցալ, էլալ, հակեր կարեց հմեմ. Քլոտկիկ Ալալին հեծալ, թոսմ դուս ձողուց: Սանասար նիծ էր որ մտալ ծով. էլալ, լցալ, դարձալ երեզնէ: Ծրկու եղբայրներն իրենց մոր հետ ճանապարհ են ընկնում սիրանց խերական երկիրը գալու, հասնում են այն ծովի կողին, ուր մայրը գնացել չուր էր իմեւ, մայրն ասում է. «Որդի, դուք էլ գնացեք էն անմահական աղբյուրից խմեք: Տղաները գնում են, խմում. սլցվան, Աստու հրամանքիւ էլան եքա տղամարդի վանքից ելան. վանքի քամակ տեսան մեկ ձիան քուտակ կա. ընտեղ քուտակը բունին, կրկու ախարով. առան բերին, քն հաղորի քրից քն քուտակն էլ խմալ, լցալ, մեծացալ: Էդ տղեքը, վանքի մեջ մեկ դուս կար, քացին. պահալան էր, մեկ թուր էլ կարուկ վեր պատից, մեկ ֆառ էլ էր դրված, էն էլ վերցրին. մեկ շուխտ ալ էլ կար, էն էլ վերցրին»:

Նույն ձևով կաթնաղբյուրի շրի մեջ լողանալը պատմվում է և Գալթի համար: Մայրս Մեկիքի դեմ գնալիս՝ նա իր հոր աղբյուրից ուծ է առնում, լցվում, հաստանում է և հաղթանակում հսկա դառնում, և նոր իր հոր հագուստն ալ գնեցերը լալ զարխ են վրան: Այս կաթնաղբյուրը կամ կաթնով աղբյուրը մի պատահով Գալթի հոր սեյրանտեղում է և Գալթի հոր մահից հետո շորանում է և տեղը փոս մնում. Գալթի առաջ աղբյուրը ծնծնում, դուրս է տարիս: Ե՛հա շուրը տր կա, անմահական չուր ա. շուր քու հերը իմանր էա քրից, կռիվ չէր կարա անի: Այս քուրը տը միայն գորացնում է, այլև ձիու կուտում կողաշարը լալացնում:

Ջրի կենդանարար գործօթյունը շատ լալ երևում է և Գալթի Օղան-Տողան թագաւորի դեմ վարած կռիւի մեջ: Թշնամիները երբ ճար շեն գտնում, սթուղթ են քաց անում և խմանում, որ ս'Գալթի ազգ քրից ա բահում երեւա: Ջրի ճանապարհը կտրում են, շեն թողնում երթա դեպի շուրը. Էշունքի շուր իրիկուն կովում էր, էթըմ, ընկնում էր շուրը, յարեք միավորում էր, առավուտ էլի գալըմ էր կռիւ: Եվ Գալթի լող կռիւց հետո միշտ լողանում է: Այս լողանան անշուշտ արյունից մաքրվելու մի առասպելական պատմվածք է:

Ջրի այս հրաշագործ գորութեան մեջ կա երկու կողմ. մեկ որ, ինչպէս վեպն փնքը բացատրում է, որովհետև մեր դիցաւորները քրից են գոյացել, շուրը նրանց տարրն է, ուստի ուժ ալ կենդանութեան է տալիս նրանց. մեկ էլ ընդհանրապէս հեթանոսական հավատալիք է դա, որ ցարդ ևս մեր ժողովրդի մեջ գեռ տեղ-տեղ մնում է: Այդ հին հավատալիքով շուրը, հատկապէս աղբյուրի շուրը, բույսերի հետ միասին, տա-

լիս է ողջութիւնն և անողջութիւնն, հրկար կլանք և մինչև փակ անամահութիւնն: Այդ պատճառով և շրթի մակղերն է անամահական, անմահութիւնն:

162. Քուռիկ Զալալից և Ռրեղեց ծիանց:— Դիցազնական վեպերն մեջ հաճախ հերոսների սարքքն, այսինքն ձին, զենքերն ու դգեստները նույնպիսի աստվածային ծագում ունեն, ինչ որ իրենք դիցազնները: Գրանք ասացվում են սովորաբար դիցազնների նախնի աստծուց և ժառանգաբար անցնում որդեցորդի: Վերևում արդեն տեսանք, որ մեր դիցազնների սարքքը Մամասարը ձեռք է բերում նույն հայրական ծովի տակ, որ մինևնույն է, թե նույն ծագումն ունի սարքքը, ինչ որ ինքը Մամասարը: Եվ այդ սարքքը որդեցորդի մնում է Մանաս Լոջանց տանը: Սարքի մեջ առաջին տեղը քանում է ձին:

Մեր վեպի մեջ մի քանի դիցազնական ձիեր են հիշվում: Առաջինն է Քուռիկի կամ Քուռիկ Զալալին, որ ասվում է նաև Քուռիկ Գողլաթիկ կամ Գողլաթին, Քուռիկ Զալին, այլ և Կապուտ Քուռակ: Սա է փականական ժառանգական ձին, որ Մանասարից անցնում է իրեն հարորդ գլխավոր հերոսներին և վերջն անմահ Մհերի հետ փակված մնում է Վանա քաղաքում: Քուռիկ Զալալին հրեղեն է, ինչպես կոչվում են մեզանում ջրում ապրող տղիները, հաճե՞րժահարսները և այլն, որոնք մտորու կամ կենդանու կերպարանքով են, բայց մարդկային կամ կենդանական ծագում չունեն, այլ քնոփյան ֆիլիկական հրեղեղների առասպելական անձնավորումն են: Մարգարեք զամ կենդանակերպ:

Քուռիկ Զալալինի ծագումը մեր վեպի մեջ, նայելով պատումներին, երեք ձևով է պատվում. երեքն են քնդաներպես հասուկ են մեր զրույցներին և հին ու մոր ժողովրդական հավատալիքներին², Վերևում դրած հաստվածների մեջ արդեն տեսանք, որ Մանասարն այդ ձին ձեռք է բերում ծովի ստակին, աղբյուրի ջուրը խմեցին: Ըին թամբած պատրաստ կանգնած է, կարծես սպասում է փր տիրոջը: Զին ուրեմն ծովային է: Երկու եղբայր Աբրահեմ ու Իշխանն են, որոնք մասամբ Մանասարի և Քաղաքարի տեղն են անցած, ունեն թու ու կարմիր ձիանք, որոնք սհրեղեն են և ծովից դուս եկած ձիանք անն:

Երկրորդ եղանակը գտնում ենք Մովսեսի պատմի մեջ: Մանասարին փր մայրը շորս տարեկան հասակում ուղարկում է պապի մետ ուսում անելու: Ես մոր խորհրդով ընծաւ ստանում քնոու Վեցոտանի ձին: Պղնձն քաղաք զևալուց առաջ նա այս ձին սթորկեր էր, կյացք էր ծովու բերան, կարածերը Գնաց դեհ իր ձին: Տեսավ կո քուռակ լւ մաու իր ձին ի, կը խաղա ամպեր: Զի մ'ծովուց էլիք դուրս: կացիր վեր էնու ձիան: էդ քուռակ էնու մետ եղիր էր: Այստեղ Քուռիկ Զալալի ծագումը

¹ M. Abeghian, D. Arm. Volksgl., էր. 27, էռն.:

² Մ. Աբեղյան, Ազգային վեպ, ՎՊարե 1890, Ձ 1, էր. 44, էռն., այլև Der Arm. Volksp., էր. 260, էռն.:

մութն է պատմւած. բայց ում որ ծանօթ է ժողովրդական հաւատալիքը, որ Սզնիկ կողքացու ժամանակից ցայժմ կենդանի մնում է, պարզ կիկնի-
ծովերի մեջ ապառզ հրեղեն ձիերի և ափերին ապառզ մաստակների զու-
գաւորութիւնից ծնւում են հրեղեն ձիեր:

Ուրիշ պատճառներով Դաւիթն է ձեռք բերում Քուրկիկ Զաւալին, մանկեով դեերի այրը և պանկիով նրանց, Գեերը միշտ հրեղեն ձիեր ունեն: Սակայն պատճառներից ելնում է, որ այս միջադեպը խանգար-
ված է, և Դաւիթն իսկապես իր հոր ձին է ետ խլում դեերից, տրոնք՝ իբրև
աւազանկներ՝ Դաւիթի հոր մահից հետո կողոպտու են արել և լցրել իրենց
քարայրը: Ըստ մի պատճառի, Դաւիթը մտնում է դեերի այրը, գտնում
ձին, որ ասում է. «Սաստնա ծուռ, դու եկար ինձ գտա՞ր. Աստիած ինձի
քնչիկ չէր դամաթ արել: Մեկ օրփա միջի ուղեկամ աշխարհ կը քանդեմ,
ուզեմամ՝ կը շինեմ (ըստը տեղը մեծեր էր, էդ ձին ծովից էր հանն):
Սա Քուրկիկ Զաւալին եմ, իմ տիրոջ թուրն էլ հետս է. պատից կախուկ
է, Կեկտան քարը»:

Սաստնա տանը կան և ուրիշ հրեղեն ձիանք, թվով քառասուն կամ
երեք հարյուր: Դրանցից մեկն է Բաղդասարի ու Զենով Լովանի Մուրազ
ձին կամ Մրազ ձին, ինչպես և Զենով Լովանի Սպիտակ (բող), Կարմիր-
ե Սև ձիերը, որ մի ակնթարթի մեջ մտքի պես արագ թռչում են: Հրեղեն-
ձի է և Պարան Աստղիկ ձին, այլև Կուպ Բաղին Վեցտարանի ձին, որ թըռ-
չում անցնում է:

Հրեղեն ձիերն ունեն նույն հատկութիւններն, ինչ որ իրենց տերը
նրանք հսկայական են, արագընթաց և ուժեղ: Սանասարն երբ քեռու
տուն է գնում, ժին գտնով վանցամ, մեկ գուրզ տվից, մեկ բուրջ փըլ-
ցրեց, ձին ներս քաշեց: Նրանց վեցտարանի, կամ թեւովոր լինելը, ինչ-
պես Պարան Աստղիկ ձին է, նշան է նրանց արագութիւն: Քուրկիկ Զա-
ւալին թռչումի պես թռչում է օդի մեջ սմեջ նրկինք մեջ գետինք, աստ-
ղերի հետ խաղում: Կամ տղը խաղա ամպեր. սնա քամի է, քամու հետ
գնում է: Երբ թարկտնում է, ասում է. «Կարող եմ քեզ տալ արեգակին,
որ այրվես: Օդի մեջ սընաւարով հանդերձ՝ ես և ազատ շարժում է ջրի
մեջ, որ նրա տարրն է:

Հրեղեններն անասելի ուժեղ են. բայց նրանց տերը միշտ ավելի
ևս ուժեղ է: Զենով Լովանը, որ ձեռքը տալիս է Սպիտակ ու Կարմիր-
ձիերի մեջքին, ձիերը փորերը տալիս են գետին, բացի Սև ձիաց: Նույն-
անում է Դաւիթը, և քառասուն ձիու միջից միայն Կապուտ Քուրկիկը
փորը գետին չի տալիս, այլ ընդհակառակն աքացի է գարնում, և նրա
աքացուց պատը փուլ է դալիս, քերդի պարիսպը կոթմանիում է, և արա-
ցուց կրակ է դուրս գալիս: Բայց հերոսը գլխին մի փռուցք է տալիս,
որով ժժիու քեճը գլխիցը թափում է: Ինչպես Դաւիթը խանութի տանը
քառասուն փահլեղանին քշում է դուրս, հացը մենակ ուտում, նույնպես
և նրա ձին գտնի մեջ քառասուն փահլեղանի ձիերին դուրս է քշում և
նրանց խոս ու գարին մենակ ուտում:

Հրեղեններն, ինչպես շատ վեպերի մեջ, անասուն չեն. հարկավոր տեղը ավատուծու հրամանագրով նրանց լեզու է գալիս, իրենց մասին գանգատով ան և իրրև համատարիմ ընկեր խորհուրդ են տալիս դիցազ-նին, քաջալերում նրան և այլն: Նրանք նախազգում են վատանգը և իրենց արարքով նախազգուշացնում տիրոջը: Ե՛րբ ազգին տվովի յա. մեր ձիանքն իմաստուն են, որ մեր ազգը նեղութիւն մե՛ջ ըլնի, ձիանքն իրենց մարքի տակը կը քանդեն: Ե՛վ վերջապէս, կովի ժամանակ ինչպէս փոթորիկ անցնում են թշնամու քանակով, տիրոջ համտասար և նրանից էլ ավելի կոտորում թշնամիներին՝ աքացով, պոչով, ատամներով և շնչով ու քամիով:

Վիպական շատ տարածված գծերից մեկն էլ այն է, որ հերոսի մահն իմացվում է ատանց հեծքալի տուն վերադարձող ձիուց: Դավիթն որ սպանվում է, Եսայի և Եսայի ծնունդը, ծնակալ կտրեց, ընկալ դուրս, ինչ-քան հովիվ ուստ էկավ, նախորդ ուստ էկավ, տալար, ձի—քիբազի կոտորեց, գնաց, կանգնավ առջև Խանդուք խաթնի դռան: Խանդուք խաթուն էլ էլավ, իրիշկեց, տեսավ՝ ձին էկեր է, տերը հետը չկա: Էն սհաթ խարար էրավ, որ Դավիթ կորուսն ի, չկա: Մի պատումով ձին վերավոր Դավիթին բերանն առած՝ բերում է Աստուծո:

Քուռիկ Ջալալինի թամբը աստափի է, ասպանդակները ոսկի, տանձը՝ պողպատի, պայտերը՝ ակներ: Սմբակը որ փերավորվում է, մեջը յաղոթի, զմրտոխտ են հարում, լցնում: Նրան պայտե՛լ է հրեշտակը:

168. Կայծակի թուր և ուրիշ զենքեր ու զօրտուներ:— Ընդանց տան ամենից նշանավոր զենքն է թուր կեծակին, որի անունն իսկ բացատրում է իր հատկութիւնները: Նա կայծակ է կամ կայծակից շինած: Եթե թուրն որ կա, կայծակից առ, սկեծակ էր, ապա թո՛ւրա: Մի քանի պատումով Երվանդից ընկնում է կայծակը (չանթեքար), որից Քեփի թորուր դարբնի ձեռով շինել է տալիս Սասնա տան Կայծակի թուրը: Դա ամենահաստ ուստերն է աշխարհիս երեսին. կտրում է ամենայն քան: Մի հարվածով Դավիթը շերտ-շերտ կտրում է երկաթե կամ պողպատե սլունը կամ ծառը: Մի խփելով կտրում է քառասուն դարազած գամշի կաշին, քառասուն ջրադացքարը և տակին նստող Մարա Մելքին արնպես է կիսում, որ նա չի զգում, որ գետին շերտում հասնում է Սև ջրին: Եւ ջուր ստելով հասկացվում է ստորերկրյա ջուրը: Լսկայի գետին մըտնելը ասփորական վիպական գիծ է. քայց դա և կայծակի հատկութուններից մեկն է քստ ժողովրդական հավատալիքի: Արհասարակ Կայծակի թուրն փրկե իսկական կայծակ է պատկերանում մեր վեպի մեջ. այդ թրի բերանից կրակ է թափվում, և մարդիկ վառվում են նրա կրակի առջև, ուստի կոչվում և Կեծկտան թուր: Այդ թրով կովելիս պարզ օրը Լիստորին առանց արմպի կայծակ է տալիս և որոտում: Յ. Վերգոյի որդի Պարոն

Աստղիկի ծծոին երևան է զալիս Հավլունի թուրը, որ նույնպես վիպական է և հիշվում է վիպական Տրդատ և Պոռ թագավորների համար:

Ուրիշ զենքերից հիշվում է գուրզը, որ է լախուրը, նախնական վիպական զենքը, որ ախրելի վ է մեր վենպին: Մի քանի պատումների մեջ Գավիթը, թեև Կայծակի թուր ունի, բայց ասվելի բանեցնում է Գուրզ Փերրըզին, կամ Գուրզ Հազարին կամ Սանրիկ Գուրզ: Դա մի ուղմախս է. գրյուգուլ ծանր երկաթ հազցրած: Ապա հիշում է Ըրմիկ Զոբունին կամ Յերզին, ուրմ (նիգազ) նետ-աղեղ, որ ասվելի որսորդութան ժամանակ են բանեցնում. պարան, սրով բռնում են թշնամուն. բայց այս զենքն ասվելի Գավիթի թշնամիների ձեռին է երևում, որոնք բռնում են Գավիթին, Հարկավոր դեպքում մեր դիցազնեյն ևս չեն խորշում նախնական բիրտ զենքը բանեցնել, այն է պատահած ծառը, սովորաբար բարդի, արմատահան են անում և ուսերին դրած՝ ընկնում թշնամիների կամ զազանների ձտեհից:

Պաշտպանութան համար մեր հերոսներն ունեն վաճան. հաղնում են Ծալիկ գրեհղեն կամ շապիկ դրեխին և գրուխներին ունին Քազը Զրեխին: Ապա մարտահրոյի համար ունին Փող Պղտրին:

Այս բոլոր զենք ու դրահները, պատումների մեծ մասով, ժառանգաբար անցնում են որդեցորդի: նույնպես ժառանգական են և գետները, այսինքն գգեառները, որոնց մեջ մտնում են Երբեմն և պենքերը: Այստեղ կթվենք միայն այն զանազան անումները, որ պատումների մեջ կան.

1) գլխու գոտին, գոտիկն ի գլխին, դյուռին ի գլխին, ոսկի դյուռին, կութ, Ֆաս, խոզեն ի գլխին, խուզեն անթարին, քոռ, որոնք շփոթվում են երբեմն գրեխի թագի հետ, որ է սաղավարտը: 2) Կադրֆի կապան, կապեն խարուկին, կապեն աթմանին, կապեն կադրֆին, ջուրեն ի թաթարին, կապեն աթրբին (աթբին), քյուրքիկ դաբրթին (դապութին), դավուխ դադիֆին, արխալուղ, քանավարի: 3) Քամարն ի մեջքին, ոսկի քամար, քամարն ի ոսկի, մեջկապ, մեջկապն ի քայարանդին: 4) Զղմեն եզան կաշին, պողվառեն նալը տակին, կոնդրեք, ջգմեն փ ֆանարին, ջգմեն Արզըմին, ճգմեն Մհերին և այլն:

Այս են դիցազնի բոլոր զենք ու դրահները և հագուստը: Վեպը ոչ մի բան պակաս չի թողել իր հերոսին զինավառելու համար: Լիակալն փահլևանն պիտի ունենա և մի ուրիշ բան, համաբիլը:

164. Համայի սուրբ Խաչ:—Մեր ժողովրդի հասկացութայամբ փահլևանն առանց հմայիլի փահլևան չի: Հմայիլը (հմայիլը) նրան ուժ է տալիս և փորձանքից ու շար աչքից ազատ պահում: Դա ևս կա մեր դիցազների թաարքիս մեջ, որ սեռալ Պարտրաղին վեր աչ թեխնա կամ սՀամայիլ սուրբ խաչ, Մարութա բանձրից սուրբ Աստվարածին: Գավիթն իր ժողովում պահում է Համայիլ և ասնդր: Սանդրը առու երդման համար է, և մի երկու պատումի մեջ է միայն երևան գալիս. խակ համայիլի վրա տված երդումն անպատճառ պետք է պահեր, թե չէ կպատժվեր: Մի պա-

տումով այս ժողի համայնիւր նույնանուն է հաշ Պատարագի հետ: Ուրիշ պատումներով նույն համայնիւր կոչվում է Սուրբ Նշան, այսինքն սուրբ հաշ, որի զորութիւնով Դավիթն անվնաս է մնում: Այս Սուրբ Նշանը հետո Մհերն է դնում ժողը: Մի քանի պատումներով Դավիթն իր աչք թևին Ման խաչ ունի յիրեն նշան, որով նրա դիակը պիտի ընկ՛վէր ուրիշներին: Բայց դա միաժամանակ է համայնիի դերն է կատարում: Ձեռնով Հովանն ասում է Դավիթին. «Տէրչա Մարութա Բանձր Աստվածածին. Ման խաչ որ պատրաստի քու աչք թևին: Դավիթը որ համայնիի վրա երդվում է և երդումը շի պահում, քաջաց վեր իր թևին, տեսա՛վ՛ Ման խաչ անցիր իս: Աչք թևի նույն «Ման խաչ որ պատրաստիս կոչվում է և հաշ Պատրաստի. սկարտիթիկ Աստվածածին, հաշ Պատրաստի վեր աչք թևին»: «Դավիթ հիշաց զՄարութա Բանձր Աստվարածին, հաշ Պատրաստին յուր աչք թևին: Խաշ Պատրաստին կոչվում է և հաշ Պատրագին: «Տէրչա իմ հացե ու զինին, Տեր կենդանին. Մարութա Բանձր Աստվարածին, հաշ Պատրագին վեր իմ աչք թևին: Մի երկու պատումում հաշ Պատրագին և Ման խաչ նույնանուն են, կամ հաշ Պատրագին կոչվում է և հաշ Պատրագին, որ է «հաշ Պատրագին»:

Բերած օրինակներից երևում է, որ համայնի, Ս. Նշան, Ման խաչ, Ման խաչ որ պատրաստի, հաշ Պատրաստի, հաշ Պատ(ա)րագին, հաշ Պատ(ա)րագին,—բոլորը նույն բանն են և անխտիր իրար տեղ բռնում են: Միայն երկու պատումի մեջ դրանք շին նույնանում, բայց պարզ երևում է, որ նույն բանի կրկնվածքն են: «Մարութ որ կենդի, Ման խաչ կար էնու (Դավիթ) աչք թևի վրին. մեկել հաշ Պատրաստին, որ իր վանքի խաչը, կապով էք թևին»: Դավիթն ասում է. «Իմ աչք թևի վրեն»: Մի պատումի մեջ ևս Ման խաչը թևին է, իսկ Ս. Նշանը ժողին:

Այս համայնի Ս. Խաչը ժառանգուկան է. Սանասարը ասորի մյուս յասերի հետ ասանում է ժողի տակին եղած եկեղեցուց կամ վանքից, ուր և հղանում է մայրը: Նրան էլ այս խաչը պոլտիթյունն է ասվիս. «կանչից... հաշն փ Պատրագին վեր Սանասարի աչք թևին»: Դավիթի հոր մահից հետո այս խաչը պահվում է կամ Ջոջանց տանը կամ Մարութա Ս. Աստվածածնի վանքում:

«Համայնի սուրբ խաչ, կամ հաշ Պատրագին»,—մեկը հեթանոսական, մյուսը՝ քրիստոնեական անուն է, որ միացրել է ժողովուրդը: Քրիստոնեականի մասին հետո կգրենք, այստեղ այն մէկան ասենք, որ քրիստոնեական անվան հետ միացած համայնիւր մի հեթանոսական հավատալիք է, որով պիտանը վատարձ փրկեն հովանավորող պոլտիթյան վրա, և այդ վատահովիտներ նրան կրկին ուժ է տալիս: Այսպիսի համայնի խաչ կա ի միլի այլոց և ուսաց վեպի մեջ. Իլլա Մուրոմեցն ունի *Обережь чудный крест* (—պահպան հրաշալի խաչ), որ նրան պահում է հարվածներից: Իլլայի աչք թևի վրա դրած է, թե նա կույի մեջ լպիտի մեռնի նույնպիսի խորհրդավոր դրեր (Runen) է կրում իր թևին էդդայի մեջ՝ Զիգուրդը, որ միանգամայն ունի և մի թալիսման, հաղթութուն շնորհող:

մի քար, որը Տնալեյքի հետ կոչելիս մոռանում է, ուստի և սուր պակասում է: Այս քալիստանի ընտելորութունն ունի մեր սինարի մեջ Խաչ Պատրաստին կամ հաշ Պատարագին (Ս. Նշան, Խաչ Պատարագին), որ նրա համայնին է, այսինքն հմայքը. իսկ Զիգորդի թեկն եղած գրեթե-նուեն-նեղին, համապատասխան է Կալթի թեկն Մաս խալը, մաշմնի վրա դարձված խալը: Դրանք արկուտն էլ նույն հմայքն են, միայն, ինչպես ասացինք, կրկնված ձևով: Այս հմայքը մահից զի ազատում հերոսին, բայց շատ նախնական ազգերի հատուկ անհամապատասխան խոսքերի և դարձնում նրան, լինչպես նաև Դավիթ, Զիգորդի և ուրիշները: Դավիթն ամեն անգամ որ մոռանում է հիշել իր համայնը, վնասվում է, բռնվում և այլն: Իսկ երբ համայնի վրա երգվելուց հետո՝ երգումը չի պահում՝ երգումակուտոր է լինում, խալը սևանում է թեկն, կամ որ նույնն է՝ մեջքը կամ թիկունքը սևանում է մի արակ, որտեղից և խոսքեր է դառնում ու հարված աստվաչով սպանվում, ինչպես և Զիգորդը և ուրիշները: Եվ եթե համեմատութունն ավելի հեռու տանենք, թերևս Զիգորդի՝ միշտպի արյան մեջ լողանալու և թացի թիկունքից, անխոսքի դառնալու մի պատմութունն է նաև Դավիթ լողանալը՝ մատաղած երիշնեղի արյան մեջ այն ժամանակ, երբ Մարութա վանքից ստանում է իր համայնը սուրը նշանը: Դրանք բոլորը, ինչպես և ուրիշ շատ պեծր, նախնական միպական եղանակներ են, ուստի և զարմանալի չէ, որ մեր վեպի մեջ գտնենք, դիցաբանական առասպելների հետ, և դրանց հիշողութունները թեպետ և մասամբ միևնույնն են և անհասկանալի դարձած: Դրանք կարգին պատկանում է և Աքիլեսի անխոսքի դառնալը՝ թացի գարշապարից:

165. Ամպրոպային հերոս Սանաարը և իր առասպելը:— Սանասարն իր բոլոր հատկութուններով հանդիսանում է իր բն կայծակի կամ ամպրոպային հերոս: Նա և իր երկվորյակ եղբայրը ծովածին կամ ծովային են, ինչպես շատ դիցաբանութունների մեջ կայծակի կամ ամպրոպի աստվածները կամ դիցապետները: Նրանց մայրը ջրից Կիշտ այնպես է հղանում, լինչպես դեզման զրույցներն մեջ այն երկվորյակ եղբայրները, որոնց համեմատում են հնդկական տորոպային Ապտիա (չրածին, ջրերի որդի) Ինդրային, որի երկվորյակ եղբայրն է Ագնին, որ ինչպես Վահագնի առասպելի մեջ տեսել ենք, իբրև կայծակի կրակի աստված Ապամ նապուտ, ջրերի զավակ է կոչվում: Սանասարը ծովային լինելով հանդերձ՝ հրեղեն մարդ է: Արդ հրեղեն ծնունդ ծովից, դա միայն կայծակի աստվածը կամ հերոսն է, որ ծնվում է, ասկայն, ոչ կրկնվող ծովից, այլ երկնային ամպերի ծովից, ինչպես Ինդրան, Ագնին և ուրիշները, ինչպես և մեր Վահագն: Արդարև մեր վեպի մեջ արկնաչին ծով չի հիշվում, որից հղանում է Սանասարը, այլ միայն ընդհանրապես ծով, հավանորեն երկրի վրա և Սասունի սահմաններին մոտիկ մի ծով (մի պատմում՝ Վանա ծովը): Իր երկրի վրա տեղափակված մի տրոշ ծով է դարձանալի չէ. մի շատ աստվորական երևույթ է, որ դիցաբանութունն երկ-

նախին տեսարանները, որոնք կազմված են երկրի նմանութիւնք՝ հետագայում դիցազնական վեպի մեջ տեղափոխվում են երկրի վրա մի սրտշտեղ: Նրանց մայրը կոչվում է Մովինար կամ Սովյալ: Վերջինս անպայման մի աղնատվածն է Սովյան անվան: Արդ, ինչպես տեսնել ենք, այդ Սովյանը բառն սկզբնապես եղել է ամպրոպային կամ կայծակի աստվածութիւն մականունը, որ ցույց է տվել նրա ծովային ծագումը: Հետագայում այդ մականունը Սովյան, այլ և Մովինար ձևով, դարձել է մի նույնպիսի աստվածութիւն կամ աստվածուհու անուն: Ապա և պատահական չէ, որ վեպի մեջ կայծակի աստվածուհու այդ անուններով կոչվել է հենց ամպրոպային կամ կայծակի հերոսի մայրը:

Սանասարի ձին, Քուսկիկ Զաչաչին, իսկապէս միևնույն երևույթի տարրեր անձնավորումն է: Նա ևս ծովային հրեղեն է, նույն ծովից: Երկից Սանասարը, թուղւմ է դեպի ամպերն, արեգակ, քամի է ու քամու պէս արևում իրրն փոթաբիկ, շնչով կոտորում և սայլն: Մի խոսքով ամպրոպ ու կայծակի անձնավորումն իրրն ձի, ուր տնին ամպրոպային աստվածները կամ հերոսները, ինչպես Ինգրան:

Կայծակի մի տարիչ պատկերացումն է իրրն զենք՝ Կայծակի թուրը, որ տնի կայծակի հատկութիւններ, և իրրն կայծակ ծագում է նույնպէս երկնային ծովից: Այս զենքը քանիցնում են առաստիկարանութիւն մեջ ամպրոպային աստվածներն ու դիցազնները: Սրանց հատկութիւնն է և ծովի մեջ մտնելն ու այնտեղ կաթնաղբջուրի ջուր խմելը, շատ ուտելն ու խմելը, տրից գորտնում են, ինչպէս մեք Սանասարը:

Սանասարն ունենալով ամպրոպային հերոսի ծնունդ և հատկութիւններ՝ կատարում է և մի գործ, որ դարձյալ ամպրոպային աստվածուհու կամ հերոսի առասպելն է, միայն փոքր վնչ միջնացած և հետը միացած ուրիշ ընդհանուր վիպական դեմք: Դա ամբողջային կոխիլն է: Այդ կոխիլն ունի քաղամական պատմվածքներ, որոնք ցույցի ենթիւնը մեկ է և որ տեսանք Վահագնի առասպելի մեջ:

Պղնձն քաղաքի շուրջը պղնձն պարիսպ է քաշած և դուռ չկա: Քաղաքի տնի մի աղբիկ, Քառասուն-Յլուղ Սամ անունով: Նա մի կուժ ճիջը ջուր է լցնում, խնձորը բերանին դնում, մի կուժ էլ դատարկ՝ խնձորը բերանին դնում, թուղթ է գրում Սանասարին (կամ Բաղդասարին) թե. «Ես Պղնձն քաղաքի թագավորի աղբիկն եմ. իմ սիրտը քան այս դատարկ կուժը սար-սուրբ է, իմ գրուիլը քան այս լիքը կուժը լիքն է: Աստուծու շնորհքով լցված են: Քառասուն տեղից քառասուն մարդ է եկած իմ մշտն ինձ ազելու, ես խոսք չեմ տվել: Սրագով քեզ տեսնել եմ: Արի, ինձ առ. ինձի շատ դուր կու քաս դու: Ես թուղթը կը գրեմ քեզ համար: Կամուկը տալիս է Երկու քույրերի, տրուք բերում, Սանասարի երգից ներս են գցում:

Մի պատահով այս դաները քույրերին փոխանակում է Տալէր. «Գիրը՝ ըմ գրեց, էտու գիր խաւքս, — էնու խաւք կեր, սերբանդ էր, — տար, թալ: Սանասարի հերոսի վնս: Ուրիշ պատմով բաները հալքին ևս փոխա-

Նսակում է քամին. աֆիր գրեց, էտու քամուն, ասաց. աֆամի, նա թուղթ կը տանես, կը տաա իմ տեքը Քաղզասարին, գա ձի տանի Սանասարին: Փամին զթուղը էրի էտու Քաղզասարի ձեռն: Փամին իրրե բաները դուրս է գալիս վեպի մեջ տարիչ դեպքում ևս. Սանասարի ցեղին լսելով իր ծեռորդու համբավը՝ աչլալ թուղթ գրեց, էտու քամուն, ասաց. իմ թուղթ կը տանիս իմ խաբզա (քեռորդի) Սանասարի ձեռ կը տաա Քամին թուղթ էրեք, հակահատից էթալ Սանասարի ձեռն: Անշուշտ նույն դերն է կատարում քամին, կըր Դավթի և Մհերի կռիվ ժամանակ՝ Դավթի մանդիլն ասեմում, ստեմում, ձգում է նանդութ ետքնի տան անըն՝ նրան իմաց տալու, քե Դավթին եկել է: Նույն տեքը կատարում մե հաճախ աշաղենբը: Մեր վեպի մեջ Խանդուխն աշուղենբի ձեռով է իր համբավն ուղարկում Դավթին:

Աշուղենբի, քամու և հարվքի բաներու թշուրը, տը շատ հին վիպական գիծ է, բնականաբար նրանց անդամախորթան հատկությունից է ծագած, և քամու ու թուղթի արագութունից: Մինչև այժմ ևս մեր անասաշատական հավատալիցի մեջ հատկապես կալաղակը կամ ագռավը համարվում է բաները. երբ ծառի վրա նստած խոսում է, ասում ձե. սեկալաղակ, իներ ձա, դես մին էլ եկ. շատ մա՝ գնա ոտդ կոտրվի, էլ մի գաա, և այլն: Հայտնի է, Ս. Սարգսի տոնին կալաղակներով կամ ագռավներով դուշարում էին սոսկազա նշանածի սեղը: Բնաստուն թռչունները շատ սղգների վեպերի մեջ դուրս են գալիս և նույնիսկ մարդու հետ խառնելով հայտնում են գաղտնիքներ, խորհուրդ տալիս, դուշակութուն արևում. հաճախ և ջուր տանում մեկից մյուսին: Այսպիսի թռչուններից են ստիտրաբար աղավների, վարսպ և սագռավ: Առաջին երկուսը երբեմն կերպարանափոխ լինելով՝ դառնում են աղջիկ: Նրանց դերը հաճախ կատարում են և մարդիկ, հրեշտակներ և այլն: Այս թռչունների կարգին է պատկանում անշուշտ և Պղնձ քաղաքի թագափորի աղջկա սահրամնդ հավքը, որին փոխանակում են և ինքը թագափորի աղջիկը, և բաները քույրեր:

Սանասարը տը նստալն ասանում է՝ հեծնում է հրեղենը և քամու հետ հասնում Պղնձ քաղաքին: Որովհետև դուռ չկար, սիր ձիու սանձն ոչորեց, ձիու մեքրան ցաց արսավ, դարձավ կանչեց իր աստված, ասպանդակ մի գարկեց ձիուն, մեկնե թուղթ, քնկավ Պղնձ-քաղան քաղաքի մեջ: Այստեղ նա իջևանում է մի հաչի խանում, մի հալեորի մոտ. կամ հյուր է վնում մի պառսպի տուն: Հալեորը ցույց է տալիս աղբյուր պալատը. սև փանջարեք, սև ամառաքներ, սև երգիսներ: Ընի (թագափորը) սև փարգա ի կապած հերդիկներուն, որ աղջիկ դուռ լսեցնաա: Քայց տանիքի վրա ոսկի խնձորը երագի պես վառվում է: Եվ հալեորն աճեպացնում է. աֆյորը ըմ կալ էնու երգիսներու տակ. ինչ դվաթով էլնի, էն գյորը վերուցի դարկե էն ոսկի խնձոր բերի տակ, գնի իր ծոց, թագափորի հետ կռիվ անի, կտրիճ ընի, աղջիկ կը տանի իրեն: Սանասարն

սոյդպեա էլ անուամ է, սակի խնձորը դնում է ծոցին, և առավոտյան ինչ տեսան.—տեսան սաղչկա երդիսներ քացվի, լուս ավիր ի քաղաք»:

Ըստ մի պատումի Աղջիկն առնելու պայմաններն են. «Պողվտե սուն գլո մեջ դաշտին. ակնունք գլո մեջ ծովու վիշապի բերան ի, ինչ մարդ կտրի՞ն ըլնի, խանիք, նոր աղչկան կտանի իրեն».— Սանասարը սլուներ կտրում է, որի ժամանակ Սասնա կողմից քամի է քայլա, սլան շերտերը շուտ տալիս: Ապա զգնին քշեց մեջ ծովուն... վեր վիշապի գլխուն դադրով. դուրդ ըմ զարկեց վեր վիշապի գլխուն, վիշապ գինք թափ էտու, ակ բերենն թոսվ, դնաց մեջ դաշտին: Վիշապ գինք քափ էտու, ջուր էլից քաղաք ինչըս անձրև գա, ընցկուն գալաք էքացա: Առավոտն ինքը Սանասարը քացատրում է հալնորին, թե յէս գիշեր սև ամպ ըմ Սասնա խնու էլիր էր, անձրև էնու մտեհն էկավ, քաղաք քրջեց»:

Այս հոգեհացը՝ մեռելների վամ մախնայաց պաշտամունքի մնացորդ էր և մի շատ ստարածված հեթանոսական սովորութիւն, որ քրիստոնեական եկեղեցին յուսացրել է: Մհերն ևս փր փախկնուց աստը ցառաւուն սրատարագ է անել ստրիս. սկսմաս տուն քանի մ'որ մեռած ընն, բիրադին պատարագ էրալ: Ուրեմն, նա, վերջին ժառանգը, հոգում է իր մախնայանցի հոգիների մախն:

Նախնիքների պաշտամունքի, իսկապես հավատքի, մի մնացորդ է և այն, որ Մհերը Թաղքասարի գերեզմանի վրա, փնչպես տեսանք, ազոթք է անում և եկեղեցի շինում, և որ նա իր կյանքի վերջում շարունակ դիմում է իր ասնցելոց, որոնք գերեզմանի միջից պատասխան աւ խորհուրդ են տալիս նրան: Նա հերթով կանգնում է Ձեռով Հուլանի, Դավթի և Խանդուքի գերեզմանների վրա, շաշիս աւ ծայն ստգիս նրանց, որ վեր կենան իրեն մի ճար անեն. որովհետև իր անամհուրթյամբ հանդերձ՝ աշխարհից անմատն է մնացել. աշխարհքը շի վերցնում իրեն: Կանգնում է նախ հորեղորդ գերեզմանին, կանչում. Եհրախուտ (հայրահոտ) խորթապեր. վի՛ր իլի: Գերեզմանից ծայն է դուրս գալիս. Ե՛րնա՛ քու հոր մոտ, ես քան շտեղմ: Գաշիս է հոր գերեզմանի վրա:

Խերի՛կ, վի՛ր իլի. խերի՛կ, վի՛ր իլի,
Սասման տնե՛ն քերար եմ լիլի.
Խերի՛կ, վի՛ր իլի, խերի՛կ, վի՛ր իլի,
Աշխարի փրնային բերար լամ մնացի:

Հոր գերեզմանից ծայն եկամ սասց.

Որդի վի՛նչիս անեմ,
Գացիր մեջալն ի ձեռնես.
Գացիր մեջալն ի ձեռնես,
Թափիր մազերն երեսես:

Ասաց.

Խերի՛կ, վի՛ր իլի. խերի՛կ, վի՛ր իլի.
Քու անուշ հոգուն փափագ մնացի.
Քու անուշ խոսքերուտ կարտա մնացի.
էն մենակ աշխար կացի:

¹ M. Abegian, եր. 20, Եմն.:

Ասաց.

Գնա Հալաքա քաղաք.
Քու հաց թխող է.
Քու կերակուր էփուկ է:

Ասաց.

Հալաքա քաղաք փայլ շոճեիմ.
Իմ բար ու փայլ ծախիք վեմ,
Իմ խոսք աւ խաղաար տփիք իմ,
Հալաքա քաղաք շեմ էրթա:

Մհերն էնքան էլաց,
Էլ ձեն շեչալ խոր գերեզմանն,
Դոր գնաց վար մոր գերեզմանն.

Ասաց.

Մերի'կ, վի'նչխ ասեմ,
Ասոր ձի Սասան քաղքեն
Բերար ի խանած:

Ասաց.

Ո'րդի, վի'նչխ ասեմ,
Գացիր դավաանը ձեռնեա.
Գացիր դավաանը ձեռնեա,
Քափիք մաղկան ի դիմեա:

Ասաց.

Մերի'կ, վի'ք յիջի, մերի'կ, վի'ք վի՛ի.
Ես եմ քու ծոփ որդին,
Յոթ ամիս ինձի պաշիր ես վեր քու արտին.
Շատ ստանջաւք ես քաշի վեր պատելոյրին.
Շատ ման եմ եկի աշխար, շիփար եմ ման եկի.
Զտեսա քու պես քաղցրիկ մերիկ վեր աշխարհին:

Ասաց.

Բոյ ի ման դաս վեր աշխարհին,
Մեր վերջը մեռնիլն ի:

Ասաց.

Մեռնիլ շունիմ վեր աշխարհին.
Անժառանգ, անմահ փմ:

Ասաց.

Գնա կանա քաղաք.
Քու հաց թխող է,
Քու ծակ կփուկ է
Մինչև օրն դատաստան:

Ոչ մի բան աշխատ կենդանի չի ներկայացնում անցնելու հոգիների հալատը և մեռնիկների ու կենդանիների սերն ու հարսերեղությունը, որքան այս արտասուղ խառնակցությունը որդու և ծնողների մեջ, արտոն նրկուան ևս անհար են: Մեկը կենդանի և անմահ վճարմանով, բայց այլևս աշխարհի մարդ չէ. նրկիրը նրան չի վերցնում: Մյուսը մեռած է մարտնով, մաղն երեսից ու դլիից թափած, իշխանութունը ձեռից լուկած մի կեսից զերեզմանի մեջ, բայց, ըստ նախնական հալատցի, կենդանի է հոգով, և այդ հոգին այն աշխարհից ծարն է ասլիս և հոգում իր որդու համար: Դա հոգևոր անմահութունն է, որ ըմբռնված է կես քրիստոնեական և կես հեթանոսական հալատքով:

Մարդ հիշում է անմահ և անժառանգ Արտավազդին ու փր հայր Արտաշեսին, մեք Դավթի ու Մհերի նախազատկերնելին: Բայց որքան սարբերութուն: Հեթանոս Արտավազդը մեռած հորը կշտամբում է, որ աշխարհն իր հետ ստալով և թե ինքը ավելյալինի վրա ինչպես պիտի թափաղի, հոյ հոգին զերեզմանից անհիծում է նրան, որ Մաստա քաղը կապեն նրան Ազատ Մատիտում, և անտեղ մնա ու լույս չտեսնի: Ինկ աշտեղ քրիստոնյա հայրը, ճիշտ վճարձյալ տարիչ անթիվ, անհիծում է որդուն, որ անմահ և անժառանգ մնա, և այդ հայրական անեծքը շատ զորավոր է ու դարձյալ նշտությամբ կատարվում է, բայց չի տղնացնում հոր և որդու սիրտ կապը: Նրանց քնքույշ հարաբերությունը, որդին հոր հոգու համար է հոգում, իսկ հայրն ու մայրը որդուն մի նար անելու համար միայն տարբերում են վախա քարայրը:

Վերևում գրածից աղդն էլուում է, թե ինչպես է մեք ժողովուրդը հասկանում անմահութունն այն աշխարհում: Մհերն ևս անմահ է, բայց դա հրաշք է, որ հոր անեծքից է առաջանում: Նա վերջ ի վերջ պիտի զուրս դա փր քարայրից և սշատ ալունքս թտփի ու հալ ազգի համար անահատակի, ճիշտ ինչպես հեթանոս Պայերը, ըստ Եզնիկի, հալատում էին, թե Արտավազդը մի որ պիտի ելնի և հայոց թագավորությունը հաստատի: Մհերի անմահությունն ուրեմն դարձյալ մի վերջ ունի: Բայց ըստ վեպի՝ կա մի տարիչ անմահություն ևս, որ դարձյալ որդու և հոր հարաբերությունն է զուրց ասլիս: Դա սերեզով անմահությունն է: Երբ մեք կանց աշխարհի վրա, պիտի մեռնենք համա, որ մեք մեռնենք, մեր տղան որ սաղ լինի, մենք էլի սաղ կը հիշվինք: Մեր տղնն որ ըլնի, մեք ստան անոն չի կորուսի: Եվ այս հատկացությունը, որ նույնպես մեռնիկների հին պաշտամունքի անսոցորդ է, անքան զորեղ է, որ Մեծ Մհերն ավելի լավ է համարում ինքը մեռնի, միայն թե որդի ունենա, քան թե ապրի անորդի:

178. Գուշակություն, անեծք և կախարհություն: — Հիշենք նախնիքների հոգու և սրբերի արտաամուտեղի հետ կապված մի անխու հալատույնը ևս, որ կան վեպի, ինչպես և շատ տարիչ ազգերի վեպերի մեջ: Դա

ապագան, Հերոսների վիճակը, նրանց սպառնացող վտանգը և այլն նախատեսելը կամ գուշակելն է հրագրով, աստղով և այլն:

Մեր Հին վիպասանների Հայտնի է ԱծղաՀասկի երազը: Երազի մոտիվը կա ուուտական վեպերի, գեղամանական և ներքելուստների երգիչ, Ֆրանսիական ռեոյանդի երգիչ մեր Մնգուտով փրբն գուշակութունն Համարվում են այն երազները, որոնց մեջ հրեշտակները, սրբերը, կամ նախնիքների հողիները երևում են և Հայտնում ապագա իրերի վիճակը. կամ եթե իրենց շնն երևում, ևրազը նրանց ազդումով է դայիս: Երազով գուշակութունը շատ սովորական է: Երազով ըստ մեր ժողովրդական Հավատքի Ս. Սարգսի ատմին՝ Ս. Սարգսի Հրամանով իմացվում էր ապագա նշանաթի ով շինելը: Այսպես երազ վեպանում գեղաման վեպի մեջ Գուրդունը իր նշանաթի մասին, որ փրբն մե քաղե թուշում է իր թևի վրա: Երազով նշանվում են քրդական Միամանդուն և խեղաբուն: Իսկ մեր Վեպի մեջ Պղնձն քաղաքի թագավորի աղջիկը գրում է Սանասարին. «Երազով զքն ահաիր ևմ. արի ընձի առ. ընձի շատ դիր կը զաս դու: Սովնալ Խանումը դիրըը ևրազով Հրաման է ասանում, որ զես ծովափ այնեղ իր մուրազն ատնելու համար: Երազով Համարի մայրն իմանում է իր սրտոց սպառնացող վտանգը, ինչպես Սանասարի և Արամեղի մայրը, որին երազ է դադիս Ս. Կարապետը, փնչպես և Մուրա Մնգիցի մայրը երազով իմանում է, թն որդին պիտի սպանվի: Այսպիսի ևրազով գուշակութունն ընդհանրապես մեր Վեպի մեջ շատ սիրելի մի եղանակ է, որ սովորաբար մի խորհրդավոր, սիմբոլական նշանով է շինում, փնչպես՝ Երևում են վատվող առ մաշվող ճրագներ, Հերոսների ձկերը՝ որ վրտոք Բնու կղում են, Հերոսը վտանգի, կարե կարապի մեջ ընկած, Հերոսի աստղը խափարած, իսկ թշնամունը պայծառ և այլն:

Մեր Վեպի մեջ գուշակութունն մի առանձին եղանակ է և աստղին նայելը, որ նույնպես ժողովրդական Հին Հեթանոսական Հավատքի մի մնացորդ է և կապված հողիների պաշտամունքի հետ: Մարդկանց հողիներն ընդհանրապես աստղերի հետ մոտիկ Հարաբերությունն մեջ են, ամեն մարդ մի աստղ ունի, որ ազդում է նրա ճակատագրի վրա, և աստղի վիճակը ցույց է տալիս Հերոսի վիճակը: Աստղերը երևում են արդար մարդկանց: Այսպես, Բազասաբը որ նեղն է ընկնում, Սանասաբը նայում, տեսնում է. որ ռիազասարի աստղը նվաղի իր, և նա իսկույն օգնութունն է Հասնում իր եղորը: Այս եղանակը Հաճախ կրկնվում է մեր Վեպի մեջ: Աստղին երբեմն փոխանակում է մատանին, իսկապես մատանուակը, որ և Հեթաթների մեջ սովորական է:

Վիպական շատ տարածված մոտիվներից մեկն է և անեմբը, որ կապված է խոսքի ուժի Հավատարմի հետ: Նույն Հայացքից ծագում են և օրհնությունն ու բարեմաղթությունը: Նախնական Հավատքով կարծում էին, թե ինչպես գուշակ երազները նույնպես և այդպիսի խոսքերը կատարվում են: Եկեղեցականներն ևս մեծ նշանակություն են միշտ տվել անեմթին, առանձնապես կրոնավորների անեմթին կամ և օրհնանքին և

դրանով խիստ ազդել են աշխարհականների վրա: Մեր Վեպի, ինչպես 5 կյանքի մեջ առանձնապես մեծ տեղ է բռնել Հոր անեծքը — Արտաշեսի անեծքն Արտավազդին և Դավթի անեծքը Մհերին:

Խոսքի ուժի հավատարմիքի հետ կապված է և երգմենեցումը, հմայումը. սերգմենեցական կամ հմայական աղոթքը, այն խոսքերը, որ կրոնական արարողություններով ասում էին գյութերը, կախարհները զևերին հալածելու, հիվանդություններ փարատելու կամ, ընդհակառակն, մահտարածամ բերելու և այլնի համար: Այս սնահավատքը խիստ տարածված է եղել հնումն և դրա համար հին ազգերի մեջ եղել են որոշ ֆորմուլներ, որ հրեաների մեջ վերաբերում էին Սողոմոնին: Գրա կիրառությունը, ինչպես այս աշխատության սկզբում տեսել ենք, շատ ուժեղ է եղել հայերի մեջ, Քրիստոնեական եկեղեցին ընդունել է դրա կիրառությունը, զի Հիսուս ինքն Ավետարանի մեջ երգմենեցումներ է անում:

Մեր Վեպի մեջ Պղնձե քաղաքի թագավորի աղջիկը հանդիսանում է իբրև կախարդ. նա պատկանում է Վեպի իմաստուն, կարգացվոր կանանց տիպին, որոնք քաջության մեջ հետ են մնում ոչ միայն դիցազներից, այլև շատ դիցազնուհիներից. բայց ունեն ամեն գիտության շնորհք. գիտեն նախատեսել, գուշակել և գաղտնիք իմանալ. օժտված են հաճախ և կախարդությունների շնորհքով և կարող են մի խոսք ասելով կերպարանափոխել ուրիշներին, քար դարձնել և այլն:

Մեր ժողովրդական վեպի բոլոր նշանավոր կանայքն ունեն փոքր լավիով այս կանանց հատկություններից: Իմաստուն և կարգացվոր է, օրինակ, Մովսիսը Խանումը, որ ասում է ինչպես գրքաց. «Ես մեր գրքերին ալքեր եմ. մեր գրքեր կասեն...»: Նա գրքերով իմանում է բնած գործի լարն ու բարին: Գահար Խաթունը, Մհերի կինը, աստղապաշտն է, աստղերին նայելով գուշակում է հերոսների վիճակը: Գիցազնուհի Խանգութ Խաթունն ևս, որ բոլորովին ուրիշ տիպի կանանց է պատկանում, նրանց, որ սղամարդի պես պինդում են, իբրև աղամարդ հագնված շրջում ձիով, ուժեղ են և կոպտ են և այլն, այս Խանգութն ևս սիմաստուն, կարգացվոր է. նա ևս իբրև գրքաց գրքով իմանում է գաղտնիքը և հայտնում, թե ով է Դավթի հետ կոպտ անձանդը: Իսկ Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն ամենից շատ ունի այս տիպի կանանց հատկություններ:

Փառույն-Ճյուղ-Մամը իմաստունության հետ և կախարդությունների շնորհք ունի. նա մի հավք (թույն) ունի, որ կանգնում է քաղաքի պատի վրա ճվում է, և երիտասարդները ծերանում են: Այսպես քառասուն պանաչ կտրիճ ջահիլ տղան նրա ձայնից հալնորել են, մորուսները նկկը դեղին գարձել և պարսպի տակ մնացել են: Սակայն, երբ Սանասարը կամ իր եղբայրն առնում են նրան, ստիպում են աղչկան կախարդությունից ազատել տղաներին. «Աղջիկը սիրաբանդություն արավ, կանչեց իր հավքին բերեց, Հավքն ինչ կանչեց, ինչ ժամանակ էկած էին ջահելութ, էլի են հասակին դարձան»: Ըստ մի պատումի աղջիկն ինքը խոսելի վրա սեհր ի թալիս. Սանասարը քողն աղչկա երեսից առնում է, տեսնում են, և սեհրը

քաղուով է ա կախարհութիւնն, ուրեմն, աղջիկն անձամբ է անում: Մի պատումով նա շատ թագաւորի տղաների, որ նրան ուզելու էին եկած, կախարհել ձգել է սարերը. մեկին աղվես է դարձրել, որ այս սարից այն սարի վրա է թռչում. մյուսին այնպես է կախարհել, որ յոթը ջրաղացի ջուրը խմում է և ասում, թե ծարաւ է. մի երրորդը յոթը փուռ հաց ուտում է և դարձյալ քաղցած մնում և այլն:

Ինչպես կարելի է տեսնել այս կախարհութիւնն հետ կապված է և կերպարանափոխութիւնը: Դյուքը խոսքով ուզած մարդուն պանակաւ կերպարանքներ է տալիս, կամ ինքն ընկունում է զանազան կերպարանքներ, օդի մէջ թռչում խնոցու վրա Իստած, ջրի վրայով գնում և այլն:

Քաղաքան համարելով այսքանը Վեպի մեջ երևան եկած հեթանոսական-քրիստոնեական համատալիքների և կրոնական հասկացութիւնների մասին, տեսնենք, թե ինչպիսի դադափար ունի մեր Վեպը հայ ազգի և ալլազգիների ու նրանց հարաբերութիւնների մասին:

177. Հայ և ալլազգի:— Եկեղեցականները ֆեոդալական դարաշրջանում իրենց շահերի համար նույնիսկ ալլազգի կամ ալլազաւան քրիստոնյաների վերաբերմամբ ոչ մի գիծում չէին անում: Նրանք ավելի ևս չէին կարող անտարբեր մնալ դեպի ոչ քրիստոնյա ազգերը, որոնց բոլորին մի ընդհանուր անունով հնում կոչում էին ալլազգի կամ տաճիկ: Նրանք ամեն կերպ աշխատում էին խտրութիւն անաշացնել հայերի և ուրիշների մէջ: Դրա համար ծաղրում էին ալլազգիների կրոնը, նրանց կարգերը. թույլ չէին տալիս խառն ամուսնութիւններ. երբ աղջիկն ալլազգու հետ էր ամուսնանում, աշխատում էին, որ նա քրիստոնյա մնա. քարոզում էին չհամատալ ալլազգիներին և զգուշանալ նրանցից:

Եկեղեցու այս դադափարախտութիւնն անցել է և մյուս դասերին և անդրադարձել ըստանա Մոսկիւ մեջ: Այստեղ էլ ստանիկն կամ քալազգին տանով հասկացվում են այն ամենքը, որոնք քրիստոնյա չեն, կամ հայ չեն, հայոց եկեղեցուն չեն պատկանում: Վեպի մեջ հիշվում են միայն հայի հովատ և կոպպաշտութիւն:

Վեպասանն իր կրոնը, իբրև սեշմարիտ հովատն կոչում է աստվածապաշտութիւն կամ խալապաշտութիւն, իսկ ալլազգիների, այսինքն՝ ոչ-քրիստոնյաների կրոնն, համարելով սուտ հովատ, զնում է իբրև կոպպաշտութիւն: Թեպետ և օտարների համար, օրինակ՝ Մարում, Խլաթում, հիշվում են մզկիթ, միւսարե, մուլլա, ախունդ, բայց մահմեդականութիւն մասին խոսք չկա, այլ միայն կա աստվածապաշտ, խալապաշտ, քրիստոնյա, հայ քրիստոնյա և կոպպաշտ կամ շաստված պաշտող: Հայն օտարներից տարբերվում է, ըստ Վեպի, դիւանվորապես այս կողմով: Օտարները կուռք են պաշտում: Այսպես կոպպաշտ են Քաղաքի խալիֆան, նահապիթի հայրն ու եղբայրը, և Խանդուքի ուզող քառասուն փահլիվանները, այլև Աղորբշտնի թագաւորն ու իր աղջիկը և ուրիշները: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Վեպի ավանդութիւնը զալիս է հին դա-

րեքից, քանի որ կարելի չէ ընդունել, թե Հայ վիպասաններն և ասացողները լիմասնային, որ մահամեղականները խիստ հակառակ են կուրքերի և արձանների ու սրբազան պատկերների:

Կուրքը կամ լաստվածը, սակայն չի պատկերացվում իբրև անշունչ իր. նա էլ, ինչպես Հին քրիստոնյա հեղինակները գրում են, զորութլուն ունի, բայց «չար թշնամուներ», այսինքն՝ սատանայինն է այդ զորութլուները, «Հեռի լսողաց, շար թշնամին մտավ ընդունց կոքերի միջին, մատաղ ուզեցինս: Եվ կոքերը մարդկային զոհ են պահանջում: Երբ Դավիթը Ագրրոնի թագավորի աղջկա նաժիշտներին տանում է, աղջիկը դիմում է կոքերին. «Կոքհ՛ր, մարգերն աղջիկները փախցուցին. կարող եք գարձնեք, բերեք: «Կոքերուց ձեն ելավ, ասին. Անտվածապաշտ մարգեր շաստվածապաշտ մարգերու աղջիկներ տարան: Քաղաք բիրտդի ձիավորվան, թրեր քաշեցին, ընդան հտններս: Մեծ կառքը մի ամիս շարունակ Արամիիթին տանջում է, ինչպես մի հրեշտակ: Սակայն և այնպես այդ կոքերը, ինչպես Հին քրիստոնյա մատենագիրների համար, Վեպի մեջ ևս ծաղրի առարկա են: Նույնիսկ Արամիիթը մտնելով «կոքատուն» շարդում է քուրք կոքերը, «Ու առավ զարծթներ, լցեց իր մալութի փեշ, ու բերեց, տվեց իր մամուն», և այսպիսով գալով ասում է. «Որն որ իմ աստված կը պաշտա, թող գա իմ թրի տակով անցնիս: Ամենքն էլ ասում են. «Գու որ աստվածն որ կը պաշտես, մենք էլ էն աստված կը պաշտենք»:

Անտվածապաշտն ուրեմն պարտք է համարում կոպաշտների գարձնել իր հավատին: Ամենքը, սակայն, հեշտութլամբ շեն հավատը փոխում: Նրանք հաճախ հաստատ են մեում իրենց հավատին: Վեպը Դավթին պատկերացնում է իբրև մի տիպիկ պաշտպան քրիստոնեական կրոնի նրա ծաղրին, թե իմ ասած բանը. — որ է «Հայր մերս, որ դուք ասեք, աստծու անունը տաք, ամեն ժամանակ առանց հաց ուտելու կը կշտանաք. — փահլեվանները լրջութլամբ պատասխանում են. «Մենք շենք թողնի մեր շաստված, քու աստծու անուն ասուս:

Հավատի կամ կրոնի կոխի, սակայն, Վեպի մեջ առանձնապես չի երկվում հայերի կողմից դեպի տաճիկները: Եթե Մարա Մելիթի մարդիկը Մարաթուկա Սուրբ Անտվածածինն ավերում են, աղ ոչ թե կրոնական ատելութլան համար է լինում, այլ ավարառութլան, Երկու կողմից էլ մի տեսակ հաշտված են այն փաղափարի հետ, թե Հայն աստվածապաշտս պիտի լինի, իսկ այլազգին՝ «կոպաշտս», ամեն մեկն իր հավատին: Բայց այդ չի նշանակում, թե կրոնական զգացմունքը սառն է, և թե կրոնը ըստ Վեպի առանձին նշանակութլուն շունի ազգերի համար: Ըստ Վեպի կրոնն է, որ իրարուց տարբերում է հային և այլազգուն: Երբ կոպաշտս թագավորը խալապաշտի աղջկան ուզում է, հայրն ասում է. «Ես խալապաշտ, դու կոպաշտ. ինչ բան ա, որ ես իմ աղջիկ տամ քեզ: Նա ավելի լավ է համարում կռվել իրենից զորեղ թագավորի հետ, քան թե իր աղջիկը տալ նրան: Բայց նեղն ընկած ժամանակ, մանավանդ երբ աղջիկն իր հոժար կամքով գնում է, նա տալիս է նրան: Այս դեպքում էլ եկեղեցին, որ հա-

կատակ է խառն ամուսնությունների, պահանջում է, որ աղջիկն իր հավատին մնա: Գրա համար աղջկա հետ դնում էին քահանաներ, խրատախոսք, ինչպես գրում է Մխիթար Գոշր: Մովսլախի հետ էլ, ինչպես տեսանք, րստ Վեպի, դնում է մի քահանա կամ վարդապետ, որ մկրտում է նրա որդիներին՝ Սանասարին ու Թաղզասարին: Դավիթը հանդուժին ուղող փահլեմաններին ասում է. «Որ դուք Աստծու անուն չեք տա, ես չեմ թողնի՛ Աստծու պաշտող դուք առնեք. ես տ'առնեմք: Խանդութիւն էլ, որ քրիստոնեյա է, իր կողմից Դավթին է ուզում առնել, ոչ թե նրա շահելությանը, կտրճությանը փափաքելով, այլ նրա աստծուն»:

Ըստ Վեպի հայը այլազգից աղջիկ առնել չի ուզում: «Մենք քրիստոնեյա ենք, մեզի կը սագի՛, դանք, էդ կոսպաշտ աղջիկն առնենք: «Արի, որդի, քե քրիստոնեհի աղջիկ առնենք. կոսպաշտի աղջիկ որ ուզենք, մեր գլուխը զամաղալ կ'ընկնի: Եվ երբ Դավիթը Մարա էլի մեջ խաթցի հանդութիւն նշան է դնում. «էհ, որդի,—ասում է Քեռի Քորոսը,—դեացիք, մեր գլուխը զցիր զամաղալի տակը: Բայց կա և դրա հակառակ կարծիքը, որ ոչ թե Քեռի Քորոսի պես ծերունիներինն է, այլ տաքարյուն երիտասարդներինը. «Որ մենք կոսպաշտներին աղջիկ լտանենք, հայացնենք, թեքենք մեր հավատի վրեն՝ ինչո՞վ պետք է մեր Սասունը հաստատենք»: Ըստ Վեպի թե հայերը և թե այլազգիները սշանի երկյտայից» են մեկը մյուսին աղջիկ տալիս:

Այսպես բռնի հավատափոխության նկատմամբ պատումների ամենամեծ մասի մեջ կարևոր տեղ բռնում է միայն մեկ մեկուց աղջիկ խելին, առևանգելը, որ առևանգողի կողմից մեծ կտրճութուն է համարվում, իսկ աղջկա տիրոջ համար մեծ նախատիք: Միայն մի քանի պատումները մեջ Մհերը, այն էլ հոր մահվան վրեժն առնելու համար, այլազգիներին կամ կոտորում է կամ դարձնում իր հավատին, թե չի կրոնական տառելութուն ընդհանրապես չկա:

Ընդարձակ մտքով հայրենասիրությունն էլ չկա այս Վեպի մեջ: Կա մեծամասամբ այսպես կոչված տեղական հայրենասիրություն: Վեպի հերոսները հոգ են տանում, որ «Մասման տան անունը չկորչի»: Նրանք գրեթե ոչ մի անգամ ընդհանուր հայ հայրենիքի, կամ ուրիշ կողմերի հայերի համար չեն հոգում: Բայց դրա փոխանակ մեծ սիրով կապված են իրանց տեղական հայրենիքին, նրա հող ու ջրին: Նրանք, ճիշտ է, հաճախ հեռանում են Սասունից, օտար երկիրներ թափառում, ուր մեծ քաջություններ են անում, այնտեղ ամուսնանում և երկար կամ կարճ ժամանակով ապրում, բայց վերջը միշտ հիշում են իրենց երկիրը և դալիս, հասնում իրենց սթախտիս: Ոչ մի բան չի կապում նրանց օտար երկրի հետ, ո՛չ ամուսնություն, ո՛չ ձեռք բերած նոր երկիրներն և ո՛չ հարստությունը: Խանդութիւն ուզում է Դավթին սրահել իր քաղաքում: «Չէ՛, ասում է Դավիթը,—ես էլ Սասմա քաղաքի տերն եմ. չէ՛ տ'երթանք Սասմա քաղաք: «Ենչ կար չկար, բոլորը ծախեց, մնացածը քարվան կապեց, եկավ դեպի Սասմա քաղաք:

Տեղական Հայրենասիրութիւնն հետ գտնում ենք և ցեղական սեր: Մասնա մետերն իրար հոտ առնում են հեռւից. միշտ իրար պահում են նեղ ժամանակին: Ձեռնով Հովանն և ուրիշները նախազգալով մերձավորի վրասանգամոր դրութիւնը՝ վեր են թռչում և առանց բուռն կորցնելու օգնութիւն Հասնում: Մհերն իր կնիքն ու թագավորութիւնը թողնում, շտապում է գալ պաշտպանելու իր ծերունի հորեղբորը, որին նեղում են կողքադնի թոռները: Հարազատի ձայնը լսելով՝ հերոսն այլևս ա՛հ ու երկնուղ շունի, և այդ ձայնը կտրում, անցնում է լեռներ ու դաշտեր: Մանուկ Մհերը բանտում փակված լսում է իրեն անծանոթ հորեղբոր, Ձեռնով Հովանի ձայնը և կործանում պատերն ու դուրս գալիս: Ե՛տնիկ մ'կը գեր, լեւմ դիգի հարեհին էր, թե հարմուտն էր, լեւմ դիգի հարաւա էր, թե հլուսիսա էր: Եվ այդ ձայնը սմեշ հլուսիսա էր, մեշ հարաւա էր, մեշ հարմուտ էր, մեշ հարեհին էր: Ինչպես ամպի որոտ՝ ամբողջ տարածութիւնը լցնում է այդ ձայնը, որ միայն նրա համար է ստեղծված, որ կտրի, անցնի ամեն հեռավորութիւն և իրայիններին կոչ անի՝ իր տոհմի մարդու արյան վրեժն առնելու համար:

Այսպիսի տոհմային կամ դերդաստանի անդամների սիրո արտահայտութիւններ միմյանց վերաբերմամբ՝ շատ կան Վեպի մեշ. բայց ավելի լայն ազգասիրութիւն կամ հայասիրութիւն չենք գտնի: Մի ընդհանուր կապող զգացմանք տեսնում ենք դարձյալ տեղական օստունցի ժողովրդի մեշ, և հատկապես մի զգացմունք, որ, ինչպես միջին դարերում սովորական է, կապված է տեղական իշխանական տոհմի կամ հարստութիւնն հետ: Արամեիքը կամ Սանասարը մեռնում է, Մարա Մելիքը նրա երեխաներին տանում է. Ե՛տն թ տարի Սասուն սուգ մնաց Արամեիքի մեռնելուց հետո: Եվ ինչպիսի սուգ. Ե՛տն զգացիք ասեցին,— Քեռի Քորոս, մեր տղեկներ հալվորան, ու մեր աղլիտիք պառվան. թե դու գինաս, թե մեր յոթ տարի սուգ պահելով մեր Արամեիք կը սաղնա, յոթ տարի լե ավելի կը պահենք: Դա ընդհանուր սուգն է, որ գտնում ենք նաև Ե՛տնարից պատերազմիչ մեշ:

Այս զգացմունքի հետ միաժամանակ գոյութիւն ունի և զգացմունք դեպի օտարները, առանձնապես դեպի թշնամիները: Ե՛տն զգի, հապա մարդ թշնամուն սա՞ղ կը թողնիք,— ա՛հա թե ինչ է պատասխանում ծերունի Հովանը երիտասարդ Դավթին, երբ վերջինս հարցնում է, թե՛ ինչու սպանեցիր: Ձեռնով Հովանն սպանել էր այն թշնամիներին, որոնց կյանքը մարտի մեշ իրենց էր բաշխել Դավթի կնշանակն՝ թշնամուն անխնա սպանելը միայն չէ իշխում: Մերունու փորձառութիւնն ասում է, թե թշնամուն կովի ժամանակ սաղ լպիտի թողնել, բայց երիտասարդը վեհանձն է: Եվ մեր Վեպի մեշ կան այդպիսի վեհանձնութիւն ուրիշ պատկերներ ևս: Կարելի է ասել, թե Սասնա ծոերը նույնիսկ թշնամիներից անմեղ, անպարտ արլուն թափել չեն ուզում. միայն Մհերն իր հոր մահվան վրեժն առնելիս սթաց ու շոր չի հարցնում. Իսկ Դավթիք իրեն հետ կովող և իրեն վնասող թշնամիներին անգամ ներում է: Նա մեծահուգի է, թեպետ և հարկավոր դեպքում սարսափելի, նույնիսկ բարբարոսաբար պատժել

գիտն իր թշնամիներին, նա Մտրա Մեխիթի Հասարակ մարդկանց, եթե հնար չիներ, մաղին անգամ չէր դիպչի, բայց իրեն Մտրա Մեխիթի վերաբերմամբ իր բռնալի Հաստակողութունն է բանեցնում:

178. Պատիվ և Վասնա Մուռ:— Ի՞նչ է այս Հաստակողութուն ասածը: ՎՄայրիկ, այդ տղոց հաստակող ազգ է. մեր գլխուն բալա պիտի չիներ... նրանք բալա են, — ասում է Մտրամեխիթն իր մորը, և Դավիթը նրա ծիծը չի ուտում: Եվ Դավիթն իր մանկական խաղերի ժամանակ սպանում է տանկի երեխաներ. Մտրամեխիթը պատրաստ է սպանելու մանուկ Դավիթին, բայց մայրը Մհերի հիշատակի Համար Հակառակում է, ասելով, թե՛ երեխա է, խնջը բան չի կտրում: Երեխա չի, խնջը Հասնում է. ամա Հաստակող է, դիտմամբ է սպանում, — պատասխանում է Մտրամեխիթը: Իսկ երբ մայրը խնդրում է նրան իր հետ խաղի տանել Դավիթին, նա ասում է. ՎՄայրիկ, ինձ հետ կը տանեմ, բայց ինքը Հաստակող ազգ է, վախենամ՝ մեկ պատիժ բերի մեր գլուխս: Եվ իրոք, ԲՄայիթն էր, գինք Հաստակող ազգ էր, մտավ նստավ Հոլտուն, էնկանդար աղաչեց, ախպեր, չըլսավ: Դավիթի տոհմի մասին այս կարծիքն ունեն, ըստ Վեպի, օտարները և նույնիսկ Հայերը:

Հաստակողութունը, դա Համառութուն է, բայց Համառութուն ազգութւյան կամ տոհմային շահերի վերաբերմամբ Այդ պատճառով և Դավիթի ամեն մի արարքն օտարների աչքին փուշ, քրտա, պատիժ է Համարվում: Բայց ամենամեծ պատիժն այն չէ, որ երեխա Դավիթը բերում է Մտրամեխիթի գլխին Մտրա քաղաքում, այլ այն, որ նա կույում է իր երկրի պաշտպանութւյան և անկախութւյան Համար: Ահա թե ինչով է նա Հաստակող: Մտրամեխիթը Հանդիմանում է իր մորը, թե նա չթողց իրեն, որ սպանի Դավիթին, քանի դեռ սա երեխա էր և Մտրա քաղաքում իր ձեռին. չէ՛ որ այժմ նրա խոսքն ապացուցվում է, որ Դավիթը բռնատակող ազգ է և պատիժ պիտի բերի իր գլխին. բէն օր որ դու թողայիր, ես Դավիթին մորթիի, էսօր էս օյին չէր Հանի մեր գլուխս:

ՎՄաստակողութւյանն էական Հատկանիշներէց մեկն է քրտիքը, պատիվը, որ Վեպն առանձնապէս դնում է Ազնանց տոհմի Համար: Եզունքի Ազնանց ջրն էր, թասիրով էր, կամավոր չէր տա, որ իրա մերը տանին: Եվ իրով, Դավիթն ավելի լավ է Համարում մեծակ կույի և մեծնել, քան թե տեսնել, որ Մտրամեխիթը Մասունից Հարկ առնի, կամ Մասունի սահմանները կտրի: Ենչ ինձի թրով զարկեց, ըբա ես չզարկե՞մ: Ելեմ անցնի ես ըտոր թրի տակով:

ՎՄաստակող ազգին արարքներն ընդհանուր ամամբ իրերի բնական դրութւյուն չի Համարվում, այլ գծութւյուն, խենթութւյուն: Այդ պատճառով և մեր դիցազները Վեպի մեջ ՎՄուռ, կամ ՎՄասնա Մուռ են կոչվում:

Ի՞նչ է նշանակում ՎՄուռ բառը:

Մուռ է նա, որ սովորական ճանապարհից դուրս է գալիս: Եթե մտով Հոգն է իրավ դուրսին եզի այլ, իրիշկեց իր ճամբախ. Բրիշկեց, տեսավ,

որ մեկ փերիզ կը գա, մեկ տղա էլ հտեանց կը գա, ճամբխեն դուրս կը քնի: Ինք իր կնկան ասաց.— Ա՛յ կնիկ, ի՞նչ տեղ շինի. մեկ տղա ծուռ-ծուռ ճամբխեն կը քնի: ճամբխեն դուս կը գա. Լնիկ մե ծուռ Գալիթն ի՛նկալաւ: Այստեղ ժծուռ բարդ գործածված է իր իսկական իմաստով: Սակայն այդպիսի ծուռութուններէ համար չէ, որ ծուռ է կոչվում Գալիթը: Վեպի մեջ այդ մականունը տրվում է հերոսներին և բարոյական իմաստով: Սասնա հերոսները սովորական մարդիկ չեն իրենց արարմունքներով, ուստի և ժողովրդի կարծիքով ծուռ, այսինքն զիժ, խենթ են. նրանց գործերն ավելի զժի վարմունք են, քան թէ խելքը տեղը սովորական մարդու: Ահա այդ ժծուռութունները:

Մուռ է այն մարդը, որ առանց աչ ու ձախ մտիկ անելու՞ ոտի տակ է տալիս և պատժում իրեն դեմ կանգնողին, հակառակողին: Երբ մանուկ Գալիթը տանում է ցասման ժամի հարիսայով լի պղինձը, երեցը կանչում է. «Փո աստուծու սեր, ձայն մի՛ հանեք. դա Սասնու ծոերից է. կը դառնա մեզ շարդ ու բուրդ կ'անեն»:

Մուռ է այն մարդը, որ չհնմերում մեծացած, ինքը կտրիճ, հոգին պարզ, ոչ մի բանի մասին երկար ու բարակ մտածել չգիտն և պատրաստ է ամենայն վիրավորանքի փոխարենը հասցնել իսկույն: Այսպես՝ Գալիթը սարում մեծացած լինելով՝ գումեջ շէր տեսած. դաշտ է իջնում երբ տեսնում է զոմեջ՝ գազան կարծելով գուրքը քաշում է, որ զարկի: Այն կողմից գալիս է հոտաղն իր գոմշին հայհոյելով. Գալիթը կարծում է, թէ իրեն է հայհոյում և պատրաստ է արդեն վրեժխնդիր լինելու, որ հոտաղն ասում է. «Փեզ հետ ո՛վ է, եղբայր, դու Սասնու ծո՛ւռն ես, դու աշխարհք չե՛ս տեսել»: Այսպիսի ծուռ են սասունցիները. «Լուտանք Սասնու ծոերն են. մրկա մեկ քամ խոսք կ'ասեն»:

Մուռ է և նա, որ թշնամուց չի վախենում. քաջությամբ կոչվում է և ընդհակառակն ուրիշները նրանից սարսափում են. «Փեղնից փախնող չկա. ձեռնեդ ինչ գալիս է, արա»,— ասում է Իշխանն Աբլազին և մի այնպիսի հարված տալիս նրան, որ կարծում է, թէ սարսն եկավ իր վրեն: Աբլազն այդ հարվածից իմանում է, որ իր ոտիսն Աղնանց տոհմից է, իսկ վիրասասնն ավելացնում է. «Դրա համար են ասում ընդոնց շնտին Սասունա ծոեր»:

«Սասունա ծուռ Գալիթն աս, ասում է ավազակապետն իր ընկերներին,— բարկությամբ կը բռնա՝ մեր քառասունին կը սպանի. ընդոցը տրվածորիկ է. միննաթ արեք, քերեք ըստեղ, որ յուր էրթանք»: «Տեսան որ Սասման ծոերուց է, մեկը էլի բհամ ա էկե, ասին.— Դուրբան արևուդ...»:

Բերած որինակներից արդեն պարզ հասկացվում է, թէ Վեպի մեջ ժծուռ բառն ինչ իմաստով է գործածվում: Բայց ավելորդ չի լինի՞լ այստեղ հիշատակենք հետևյալն ևս: Երբ մենք ասացող մոկացի նախ քան 1886 թվին հարց ու փորձ էինք անում սասունցիներին այժմյան կաթության ու բնավորության մասին, նա հայտնեց, թէ այժմ էլ Սասուն շատ պարիճ փահլեման կա և թէ սասունցիներն իրենց՝ մոկացոց ու մշեցոց պես

չեն. նրանց ոչ ոք չի կարող նեղել. նրանք ծուռ են, ոչ մի քանի մտիկ չեն տալ:— Եվ այդ մոկացիին պատմում էր իբրև ապացույց իր տեսածը, թե ինչպես երկու սասունցի Բաղիշու քաղաքում կռիվ են անում իւր թուրքերի հետ: Այդ սասունցիները, ասում է նա, մրդեղեն էին բերել քաղաք ծախելու: Մի թուրք եկավ, որ վերցնելու թուրքը որ հայի ապրանքն վերցնել այնպես, առանց փողի, հայը ձայն հանել չի կարող. բայց սասունցիները չթողին, որ թուրքը վերցնելու կռիվ ընկավ. քաղաքի իւր թուրքները ժողովվեցին, բայց այն երկու սասունցիները թրերը հանեցին ու իւր թուրքերին դժ կանգնեցին ու թուրքերը շարժացան նրանց քան անելու: Այսպես ծուռ են սասունցիները.— ավելացնում է մեր մոկացիին:— Թուրքը չի կարող նրանց մոտենալ, նույնիսկ եթե մենակ ճանապարհ գնալիս լինին:

Ծուռ է կռիվում, ուրեմն, սասունցին ընդհանրապես և սասունցի հետոսը մասնազտրապես նրա համար, որ իր անձնական իրավունքն է պաշտպանում և ոչ թե ստրկորեն տանում հարստահարութիւն լուծը: Բայց այդպիսի ծուռ միանգամայն և քաշի, կտրիճի նշանակութիւն է ստանում, ինչպես որ Քերովքե Պատկանյանը, Սրվանձախանցի պատումի արտատրպիվածի բառարանի մեջ, հաշող կերպով թարգմանել է ծուռ բառը թե իբրև խենթ և թե իբրև կտրիճ:

Սասունցի լեռնականները հին ժամանակներից արդեն ոչ միայն քաղամարտիկ մեկնազեններ են եղել, այլև վայրենի են համարվել: Եվ երևի հենց այդ հին ժամանակներից էլ գալիս է նրանց ծուռ մականունը: Գաշտարնակ, խաղաղ ու հանգաբարտաբար ժողովրդի աչքին այդպիսի վայրագները քնականորեն ծուռ պիտի համարվեն: Դա մի ընդհանուր տարածված սովորութիւն է, ոչ միայն հայերի մեջ զանազան կողմերում, այլև ուրիշ ազգերի, որ համեմատաբար ավելի քաղաքակրթված դաշտարնակները իրենց դրացի բերին, կոչու ու կոպիտ լեռնցիներին խենթի տել են դնում և նրանց մասին զանազան զվարճալիքներ ու անեկդոտներ պատմում: Անշուշտ, սկզբում այս կերպով ծուռ են համարվել սասունցիներն իրենց դրացի մշեցիներից, և նրանց վրա պատմվել են վրույցների մի ամբողջ ցիկլ, մինչև որ վեպը Տարսնից Սասուն է փոխադրված և կազմված աշխիւն Սասուն վեպը, որի մեջ պիտի մտած լինին այդ վրույցներից մեկը կամ մյուսը: Այդպիսիների կարգին ենք համարում Վեպի մեջ եղած բոլոր զվարճալի քնավորութիւն կրող վրույցները և այն, որ Դավթի կոչու ու կոպիտ շարվածքը, նրա միամտութիւնն են ցույց տալիս. ինչպես են՝ ուլերը նապաստակներից շարքերելը, հերիսով լի կաթսան տանելը, գոմեջ տեսնելն ու վախենալը և ուրիշ շատերը:

Վեպի հերոսների թծուռ կոչման մեջ երևում է մեր ռամկի հայացքը քաջութիւն, ազատասիրութիւն ու պատվասիրութիւն մտաին: Փաջութիւնն ու կարեւորութիւնը ծուռութիւն է, մի հատկութիւն, որ կյանքի սովորական ճանապարհից դուրս է: Սակայն Վեպի մեջ այդ ծուռութիւնն արհամարհելի ու նվաստական չէ, այլ սիրելի ու փայտալի: Ժողովուրդն

իր դիցազններին ծուռ է անվանում, ինչպես մայրն իր սիրասուն որդուն
եծուռ, սգիժա տղա է ասում, երբ նա անհանգիստ ու անդադար քնավո-
րութուն է ցույց տալիս:

Քի որքան եծուռ մականունը մի փաղաքշական կոչում է, այդ լավ
երևում է այն գաղափարական ազնիվ բնավորութունինց, որ ժողովուրդը
տվել է իր մեծ դիցազնին, Մուռ Գավթին, որ իր բուր ծաւթյամբ հան-
դերձ՝ շատ սիրելի մի հերոս է: Նա ժողովրդի իրեան է:



Կ Ե Ն Յ Ա Ղ Ը

170. Վեպի սոցիալական միջավայրը:— Ժիշտ է, Վեպի մեջ հիշվում
են թագավոր, իշխան, հոգևորական և ռամիկ ժողովուրդ — գյուղացի և
արհեստավորներ՝ ջուհակ, դարբին ու որմնադիր, բայց դրանք բուրբ
իրենց նիստ ու կացով, կրթությամբ ու բարքերով հաճախ և հասկացու-
թյամբ իրարուց շատ շին տարբերվում: Ռամիկ և իշխան գրեթե հավասա-
րապես նույն գյուղացիներն են: Իշխանը մի քանի պատումների մեջ նույն-
իսկ վարձկան մշակ է, իր շարքաշ կյանքով, քնավ լի զանազանվում գյու-
ղացիներինց: Թագավոր անվան տակ սովորաբար հանդես է դալիս կամ մի
գյուղական ազդեցիկ տանուտեր, ռես կամ մի հին մելիք, ինչպես եղել են
Ղարաբաղի մելքեները, կամ թի մի քրդական ցեղապետ՝ երբեմն անկախ,
երբեմն ենթարկված ուրիշին, որ իրենից ավելի զորեղ է: Նա նահապետ
է իր ամբողջ ցեղի և դավառի: Ծրենք չկա իհարկե: Նա կառավարում է և
հրամայում իր հասկացած ձևով. կարգադրում ժողովրդի վիճակը իր ցան-
կությամբ, իշխանութունը ժառանգական մէ և որդեցորդի անցնում է անդ-
րանկին ուղիղ գծով. բայց եթե որդիներն անլափահաս են, կառավարում
է հորեղբայրը կամ քեռին, որ և որբերի խնամատարն է լինում: Ժառանգն
ազատ տեր է իր հոր իշխանության և ստացվածքի ու երկրի. բայց և հայրն
ազատ է կտակ անելու և իր կտակով այս կտմ ախ բանը սրան կամ նրան
թողնելու: Աղջիկները շին զրկվում ժառանգութունից և մեծ օժիտներ են
ստանում, նույնիսկ հոր կալվածներինց:

Թագավորի և իր ժողովրդի հարաբերութիւնն ընդհանրապես մտեր-
մական ու հասարակ է: Նույնիսկ ռամիկն ազատ էլ ու մուտ ունի նրա
մոտ. գալիս է իր ցավերը հայտնելու և զանգատվելու: Ժողովուրդը թե-
պետ ենթարկվում է թագավորին, բայց ճորտ ու ստրուկ չէ: Կարող է
ազատ կերպով թողնել հեռանալ իր բնակության քաղաքից ու գավառից,
եթե թագավորը չի լսել նրա բողոքը: Վեպի մեջ թեպետ մի անգամ
սպառնում են այդ անել, բայց այդպիսի բան չի լինում, շին կատարում այդ
սպառնալիքը: Սասունցիներն ընդհանրապես սիրում են իրենց տիրոջը,
որի մահվան համար նույնիսկ յոթ տարի սուգ են անում: Եվ այս շատ
հասկանալի է. այդ վիպական գաղափարականացրած տերերը, ըստ Վե-

պի, նախ ժողովրդի վրա են մտածում և նրա հոգսը տանում, ապա իրենցս ինչպե՞ս և ուր ինչպե՞ս անելու մասին մտածում են։ Երբ արդեն ինչպե՞ս անելու մասին մտածում են, ապա ինչպե՞ս անելու մասին մտածում են։ Երբ արդեն ինչպե՞ս անելու մասին մտածում են, ապա ինչպե՞ս անելու մասին մտածում են։ Երբ արդեն ինչպե՞ս անելու մասին մտածում են, ապա ինչպե՞ս անելու մասին մտածում են։

Իսկ ընդհանուր Մեծ սան անդամներին, որոնք թագավորում են, կան և թշնամիներ, որոնք առանձին դեր չունեն։ Դրանք հին ազնվականներն են։ Բայց լիովին նսեմացած ու խամբած։ Նրանցից միայն խորհուրդ է հարցնում թագավորը երկրի համար կարևոր նշանակություն ունեցող գեղացիների ժամանակ։ Դրանց մասին առհասարակ հարևանցի է անցնում Վեպր։

180. Ռամիկ ժողովրդի պարապմունքը։— Գյուղական կյանքն ու պարապմունքը, առանձնապես Սասունի համար լեռնակալներին հատուկ պարապմունքը շատ ցայտուն կերպով պատկերացված է մեր նոր վեպի մեջ։

Արդարև հիշվում է Սասուն քաղաքը, բայց բուն քաղաքի կյանք իհարկե չէր կարող զարգանալ թարձր լեռների և անտառների մեջ։ Թեպետև մեկ-երկու գյուղ են հիշվում բուն Սասունում, բայց Սասնա քաղաքացիները հենց իսկապես գյուղացի են, գյուղացի են նույնիսկ թագավորն ու իշխանները։

Դրանց բոլորի գլխավոր պարապմունքն է անասնապահություն, մեղվաբուծություն, և ապա որսորդություն, երկրորդաբար միայն երկրի մշակություն։ Դա Սասունի կյանքի իրական պատկերն է, որ Վեպի մեջ քաղական ճշտությամբ հանված է։

Երկրագործությունն անշուշտ չէր կարող ծաղկած լինել մի տեղ, ուր մարդիկ թնակվում են, ինչպես պրոս է Քոմմա Արծրունին, թի խորածորս և ի փապարս լեռանց և ի պրակս մայրեաց, ի գաղաթունս լեռանցս։ Ընդ չպիտի լինել կյանքը մի երկրում, որի հողը շատ քիչ բան է տալիս։ Ե՛լնաբարտեալ յապրուստ անձանց,— ասում է Քոմման,— վճարեն զկարևոր պէտս իրանանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանք... և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առան ի կորեակ կոշիցեալ սերմանեն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ոտոզեալ ոտիք ի միջոցս պրակացն կամ երկմատնի փայտովք սերմանեալս։ Այս կորեակը, սսով ժամանակի հացը, որ հին ժամանակից սասունցիների ապրուստն է եղել, երևում է և Վեպի մեջ իբրև գլխավոր ցանք։ Գրեթե բոլոր պատումների մեջ հիշվում է կորեակի արտ, որի տեղը մի հալնոր կամ պառավ է։ Եթե շուրջ ըստ ըստ ունիմ, ու յոթ կորի կորեակ, ահա մի ամբողջ ընտանիքի ապրուստի միջոցը։ Ազգատությունը սրանից ավելի չի

կարող լինել: Կորեկի համար գութան ու գոմեշ հարկավոր չէ Սասունում, ու չի ա. այնպես որ լեռնական Դավիթը Մշու դաշտում առաջին անգամ գոմեշ տնտեսչիս՝ գազան է կարծում: Մի ուրիշ տեղ նա հարցնում է գութանավորին, թե իրիկունը որ կերթա՞ ինչպես կարգքեք գութանը:

«Սասնա Սոհրա ժողովրդական վեպը իր մեջ առել է ամբողջ սյուժետներ ու մոտիվներ, որոնք պատկերացնում են գյուղական պարապմունքը: Գրանցից է գութանով վար անելը Մշու և Գործութա դաշտերում: Դավիթն, ինչպես նման հերոսներ ուրիշ ժողովուրդների վեպերի մեջ, օրինակ՝ Սերբիական Մարկոն, գութանով վար է անում:

Բացի կորեկից հիշվում է և շաղկամի արտ: Սասունցիներին, հատկապես Դավիթին, ծաղրում են հաճախ եշաղկմակերս բառով, որից երեւում է՝ սիրելի է շաղկամը: Հիշվում է և ցորեն, սրայց սակս լեռնային գոլոյ երկրին սակա բեր է ուստի քնակիւքն ի Մշու առնուն պորեաննա (Նոր հայ., 201), խորածորերում անշուշտ ավելի տագ է. այստեղ աճում են և պտղատու ծառեր, նույնիսկ խաղող: Վեպի մեջ հիշվում է հատկապես ճուղը, որ և իսկապես Սասունի ձորերի գլխավոր բերքերից մեկն է: Ընտան գիւնին մեր հերոսների սիրելի խմիչքն է խնչուչի ժամանակ:

Նոսնային արտաները մեղվարտութայն և անասնապահության համար շատ հարմար են Սասունի բերքերից մեկն է ամեղր ազնիւ (Նոր հայ., 201), և ըստ վեպի մեղրն ու կարագը Սասունում շատ առատ է. Եղը-մեղրը (եղ ու մեղր, ճմուռ), անշուշտ ճճաթով, այսինքն կորեկի հացով, շինած, սիրելի կերակուրն է երեխաների համար: Դավիթը Մարում անպամ իր հայրենի մեղր ու կարագով է սնվում, իսկ Մարութա վանքի պահապանի ուտելիքն է բորեն մեկ տիկ մեղր, մեկ տիկ կարագ:

Ավելի կարևոր տեղ է բռնում հարկավ անասնապահությունը, որով պարապում են և իշխան և ուսմիկ: Դավիթը հետզհետե դառնում է գառնարած, հորթարած և նախորդ: Գրեթե բոլոր պատումներում մանրամասն և սիրով պատմված է այս սյուժետը: Մի քանի պատումների մեջ Դավիթը նույնիսկ ազգատության պատճառով վարձու նախորդ է դառնում, այն էլ ուրիշ գյուղում, նա իր վարձն ստանում է հացով ու ցորենով: Ոչխար, այժ ու արջառ են Սասունի գլխավոր կենդանիները: Հիշվում են և ձիեր, միայն իշխանական տան համար: Տավարը ոստունցիների ապրուստն է, կերակուրն ու հագուստը, սեւ է զգեստ նոցա ասուխս ի ծածկութ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց՝ ի ժորթոց այժից կազմեալս, — ասում է Թովման, — սեւ միով կերակրիւ և միով հանդերձի բաւականանան զամտն և զձեռնն:

Անասնապահության հետ կապված է յայլազ գնալը: Սասունի ձորերում շոգ է, ուստի և ամառը ելնում են լեռնային մարմանդները, հատկապես Սովասարի վրա: Այստեղ սարն են զալիս և Բարա Մելիքի էլը, և խլաթցիները, ու կոխվներ են տեղի ունենում նրանց և սասունցիների մեջ:

181. **Կյանքի գծեր:**— Ինչպե՞ս են կրթվում և ապրում այս ազնիվանական ճօթերը:— Շատ պարզ ու նահապետական ձևով: Նրանց կյանքն ու բարքերը, նիստ ու կացը, ընտանեկան և հասարակական սովորույթները և այլն, բոլորովին նման և նույն են, ինչ որ մեր ուրիշ կողմերի գյուղացիներինն ընդհանրապես: Ասացողներն իրենց կենցաղն ու հոգին են պատկերացրել Վեպի մեջ, և մենք այնտեղ գտնում ենք մեր գյուղացու կյանքի բազմազան կողմերը բավական մանրամասն ու սիրով նկարագրված՝ երեխայի ծննդից սկսած մինչև մահը: Այդ բոլոր կողմերի վրա մի առ մի կանգ առնելը մեզ շատ հեռու կտաներ, այնքան շատ նյութ կա մեր ժողովրդի կյանքի համար մեր Վեպի մեջ: Առնենք միայն մի քանի գծեր Վեպի գեղջկական պատկերը՝ լրացնելու համար:

Մեզում է մանուկը, որի ծնունդը փափաքելի է սիրբն աստուծու օրհնութունն, և նրան պինդ կապում են օրորոցում, որի մեջ լայիս ու ճամբլկտում է: Տանը պահում են մինչև երեք տարեկան հասակը, երբ արդեն փողոց է դուրս գալիս և ազատ շարժվում փողոցներում և պարտեզներում՝ խաղալով իր հասակակից երեխաների հետ: Նրանց գլխավոր զբաղմունքն է ճան (վեգ) խաղալը: Վեպի վրա հաճախ կովում են և իրար քիթ ու պըռունգ շարդում, թե, ոտ կտարում: Հաճախ շուլալվում, հեծնում են ծառեր և լարությամբ իրար վնասում: Հող ու ավազ, ահա նրանց խաղալու նյութը. աչք ու երես, ոտ ու գլուխ թաղված կեղտի ու հողի մեջ, որ նրանք իրար վրա ածում են: Հսկողությունն բնավ չկա վրաները. վնասված երեխաների ծնողները շատ շատ՝ պարտք են համարում դանդաղելի վնասող երեխայի տիրոջը: Սա իր կողմից մի պատիժ է տալիս այդպիսի երեխային, այն է՝ չի թողնում խաղալու գնա, փակում է տանը, երբեմն և ծեծում: Բավական է, որ հսկող աչքը հեռանում է, երեխան դարձյալ իսկույն փողոց է թալում:

Երեխան որ տաս-տասնհինգ տարեկան է դառնում, փորձում են մի արվեստի կամ ուսումի տալ. բայց մեծ մասամբ բան չեն սովորում և ոչ մի արհեստ էլ գլուխ չեն հանում: Ուսման վարժապետն է տերտերը, որ երեխային Սաղմոս կարդալ կամ ասել է սովորեցնում: Սակայն այս ուսման ժամանակին հենց և դրանից էլ առաջ, լսրս-հինգ տարեկան հասակից երեխան արդեն լափահաս է համարվում և մասնակցում տան աշխատանքին, նայելով տարիքին՝ գառնարած, հորթարած ու տավարարած դառնալով: Այդ ժամանակ ևս նրա կյանքն անցնում է իր հասակակիցների շրջանում դաշտում ու սարում: Բանից ազատ ժամանակը միայն տերտերի մոտ է գնում կարդալու:

Այս է ահա ամբողջ մանկութունն իր ընդհանուր գծերով: Գրեթե բոլորովին ազատ թողած երեխան մեծանում է բնության ծոցին ինքն իր գլխու: Բայց և նա մատաղ հասակից սկսած տան համար աշխատող ձեռք է. մանկութունից սովորում է լարքաշ կլանքի, թափառում է լեռների վրա և անտառների մեջ, ենթակա ցրտին ու արևին: Մի օրվա մեջ ահագին ճանապարհ է կտրում հոտերի ետեից բնկած: Հեշտ չէ ապրուստ ճարելը:

կյանքն անապահով է. միշտ պատրաստ կան ավազակներ, ավարատուներ և զազաններ: Եվ մասնուկն այդ կյանքի մեջ եփվում, բրտանում է և դիմացկուն դառնում: Նրա մարմինը զորանում է, բայց միտքն ու հոգին մնում սահմանափակված իր պատկերի ավանդության մեջ:

Աղջիկը մանկությունից սկսած տանն է մնում: Սովորում է քարզահանել, նախշել և պատրաստվել ապագա տանտիկնության, նա ոչ մի զվարճություն չունի, բացի պարելուց, սյայլի խաղ բռնելուց, և սչանիմանս խաղալուց. այն էլ մեծ մասամբ տղամարդին դուր գալու համար, որպեսզի ազուպ տղաները նայեն և հավանեն: Աղջիկները փոքր հասակից արդեն նույնպես աշխատող են և ավելի քան տղաները: Տան շուրջ նրանք են բերում թե աղջիկ և թե հարս ժամանակ, բայց և այնպես այս դորժը ջահելների համար զվարճություն է, որովհետև տնից դուրս են գալիս և մի կես ժամ իրենց հասակակիցներին շրջանում անց կացնում: Զուր բերելիս մինչև անգամ խաղ ու երգ են ասում և պար բռնում:

Ամուսնությունից հետո, որ մեծ մասամբ լինում է ծնողների կամքով և ընտրությամբ. աղջկա վիճակը փոխվում է: «Տղամարդ որ կա՝ զուլս է՝ կնիկ որ կա՝ ոտ է»: Աղջիկը դառնում է իր զխավորի աղախինը և պիտի ապրի իր մարդու համար և ամեն տեսակ ծառայություն անի նրան: Կինը իր մարդու շորերը լվանում է, նրան լողացնում: Նույնիսկ երբ գիշերը մարդը պիտի վեր կենա, պահանջում է, որ կինը նլնի, հրազը կըսցնի, իր հագուստն ու զենքերը բերի և այլն: Մարդ ու կնոջ հարաբերության մեջ փափուկ զգացմունք ու գորովանք շատ կա, բայց մարդու վարմունքն ընդհանրապես բռի է, կոշտ ու կոպիտ, այն աստիճանի, որ երբեմն նույնիսկ «քացի է ուտեցնում» իր սիրած կնոջը: Եվ այս բրտությունը իշխում է բոլոր գասակարգների մեջ:

Այս կյանքի դժերը, հարկավ, միայն սասունցիներինը լին, այլ առհասարակ հայ գյուղացուությանը: Վեպը դրանով ավելի ևս քնդհանուր բնավորություն է ստանում: Մյուս կողմից՝ Հայաստանի լեռնային և նախալեռնային գյուղական տնտեսության նկարագրից, որ Վեպի մեջ կա Սասունի համար, լրացվում է դաշտային վայրերի. — Մշու և Գործուժա գաշտի, — գյուղերի հողագործության պատկերով ու մտիվներով: Այսպիսով ՕՍասնա Մոները դառնում է մի վեպ, որ լրիվ պատկերացնում է մեր շինականությունը:

182. Վեպի ճերտուցների պարավունքը: — Լեռներում ու անտառներում շատ են գազանները: Նախորդ կամ հորթարած Գալիթը, որ նախիրը հանում է սարը, տեսնում է՝ արջեր, գայլեր, խոզեր, առյուծներ ու վագրեր փախում են, ժողովում է դրանց: Ուրիշ անգամ՝ նապաստակ, աղվես, կուղ, կոտորաշ ժողովում ու բերում է Սասնա քաղաքը: Քաղաքացիներն ստիպվում են դռները փակել՝ գազանների վտանգից ազատվելու համար: Սա մի ընդհանուր վիպական գիծ է, անշուշտ, բայց ցույց է տալիս, թի Սասունում որքան մեծ երկյուղ կար նույնիսկ քաղաքում գազանների ձե-

ոքից: Մի ուրիշ վիպական գիծ է և Առյուծածև Մհերի մասին պատմվածքը, թե մի առյուծ է լույս ընկնում ճանապարհների վրա, զնայող եկող կտրրվում է, ու սով է ընկնում Սասունում, մինչև Մհերը սպանում է այդ առյուծը, երկուսի ձեռնով: Գազաններն ուրեմն ըստ Վեպի մեծ վտանգ են պատճառում և վնաս տալիս սասունցիներին: Այդ լեռներում ապրողները միշտ պատրաստ պիտի լինեն գազանների առաջ: Են: են ստացեալ զէնս աշտեայս, — գրում է Արթուրենին, — հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն, որք ի լեռինն բնակենա:

Բայց գազաններին եթէ կատրում են ոչ թե որսորդության, այսինքն ապրուստի համար, այլ նրանցից ազատվելու: Որսի գլխավոր կենդանիներն են՝ նապաստակ, աղվէս ու կուղ, որոնց որսալու սովորութիւնն ըստ Վեպի Գավթի ժամանակից է մնում: Ե՛ն վախտեն յպտարակն էլ շուր մկալի հա կը գենեն, հա կ'ուտեն. աղվես, կուղ կ'ենեն քուրք, կը հագնենա: Այս երեք որսի կենդանիներն, ինչպես երևում է, ամենից տարածվածն են. բայց բացի սրանցից կան որսի էրեներ: Սև սարում, Սոզասարում ու Ավազ սարում կան՝ վերու ոչխար, վերու տավար, մարալ, խազալ (վայրի այծ), շնչրան, քուլի ոչխար (այծյամ): Այնտեղ գնում են որսորդությամբ Եսեհր անելու և Եքեֆ անելու, բայց և որսալով բերում, իրենց համար Եապրուտ են անումա:

Սասունի այս Սև սարը կամ հին Միմ լեռը իբրև որսավայր հնուց հայտնի է. Խորենացին (Բ. Ը.) Ակուռեիների Սուրբի համար գրում է. «Ձսա կարդէ (Վաղարշակ) պահել զլեռանն, որսալ զքօշսնա: Այստեղ այս սարի վրա է որսի ելնում Սողոկ Սիկուրին, երբ նրան սպանում է, ըստ հին վեպի, Էճնացի Մամկոնը: Այստեղ որսի են գնում Գավթի և Ձենով Լովանը: Մի շատ հետաքրքիր որսորդության եղանակ կա մեր Վեպի մեջ: Այս որսի սարերի՝ Սև սարի, Մովասարի ու Ավազ սարի շուրջ (նայելով թե որ պատումի մեջ որ սարն է իբրև որսորդության վայր դուրս գալիս) Սասունի իշխանները, հատկապես Գավթի հայրը, պատ են քաշել, քրչերով ամրացրել, ու պարսպի ներսը էր եներով լցրել: Ե՛նու խեր պատ են քաշեր սարու շորս կողը. սարու ոչխար որ եկեր էր, թափեր մեջ, էլ լէր կարցի դուրս էլին: Դո՛ներ բացին մտան ներս...»: Իսկ Ավազ սարը քաղաքներով և պատած է այնտեղ Եվերու ոչխարը բռնավոր էա: Այս որսի սարն իր շուրջը քաշած պարսպով մեր հին Վիպուսանքի մեջ պատմվածի մի հիշողութիւն է, այդպես են եղել պարսպապատ Մենդոց անտառը և Խոսրովակերտը:

Հավորսութիւնը (թուլնորսութիւնը), ինչպես հայտնի է, հայ իշխանների սիրելի պարսպամանքներից մեկն է եղել: Մեր նոր վեպի մեջ ևս Սասունի տերերի գլխավոր զվարճութիւններից մեկն է հավորսութիւնը: Գավթի թուլն, գլխավորապես լոր, որսում է՝ ինչպես մեր հին իշխանորդիները բազելով: Ե՛րեն համար մեկ բազա բռնեց, Քուրկիկ Զալալին դուրս քաշեց ու գնաց ավղուշ անելու: Գնաց մի կորկի արտի ռաստ էկավ, ու բազեն թողեց մըջ կորկին ու բավականի լոր բռնեց. առավ լորեր ու ետ

զարձալ, էկալ տերտորշ տուն. լորեր խտկնցին, եփին, կերանք: Նա հա-
վորսութիւնն է անում, սակայն, զլիսավորացես Մովսարում: Հավորսու-
թյամբ պարագում է և Մեծ Մհերը սիրեն ձի մը սարքոց ու կ'երթեր ավը-
զուշ էնելու Յերնկ կ'երթեր ավըզուշ էնելու, գիշեր կ'իգեր իր տեղ կը
քներ: Սասուն սով է ընկնում. սավուխուշ կ'եններ, կը բերեր, սասունցոց
վրեն կը ցվեր. յոթ տարի պահեցա:

188. Գինարքուք և զինավարժություն:— Նոր վեպի մեջ էս, ինչպես
մեր հին վեպերի մեջ, հաճախ հիշվում են երկուսն էլ: Դավիթն, օրինակ,
գրեծ զվարթ ուրախութիւն, կերուխում անել՝ սխտտ ազապ լաճեաց.
աղջկտերացա, ինչպես և ուրիշների հետ: Նա մանուկ հասակից վարժում
է զենք կրելու եմ այդ կատարվում է ոչ միայն որսորդութիւն, այլ և
զինայաղեղով: Շատ պատումների մեջ հիշվում է սհուշ կամ սգուրզս
խաղի մասին, որ խաղում են զլիսավորացես մեծերը: Փոքրները սովորա-
բար միայն հանդիսատես են լինում այդ խաղին, քիչ անգամ, հակառակ
մեծերի կամքին, մեջ ընկնելով և զայրացնելով նրանց: Բայց երեսու-
ներն էլ երբեմն փոքր հասակից սովորում են այդ խաղը և իրենք իրար
հետ խաղում: Մեծերը ձիով են խաղում, փոքրները՝ քտով:

Զինավարժութիւն խաղերի ժամանակ պարտութիւնը նույնպես ան-
պատվութիւն էր համարվում, ինչպես և մարտի: Հիշենք Քումանյանի
սկենար-ի մեջ երկու հովիվ ընկերների գոտեմարտութիւն խաղը, որ հին
ըմբշամարտութիւն մի գերապրուկ է դուրացիների մեջ մնացած. մի ըն-
կերը մյուսին գետին է կոխում,— մի բան որ նա լսիտի աներ,— և ահա
դա դառնում է անհաշտելի թշնամութիւն պատճառ: Այսպես և Վեպի մեջ:
Մարամելիքը փահլեանների հետ սգուրզս կամ սհուշ կամ սգունդս է խա-
ղում, մանուկ Դավիթը նրա գուրզը կամ հուրը — նայելով պատումնե-
րին — բռնում է: Ծվ ահա հենց այդ սկիզբն է դառնում Մարամելիքի թըշ-
նամութիւն, մանավանդ որ նա նկատում է Դավիթի ուժը և վախենում է
նրանից ասելով՝

Վերջին դեր էսա տ'ելնի, խտտ ձի կոխի անիս:

Ի՞նչ է այդ խաղը:

Մովսես Խորենացու Հայոց պատմութիւն մեջ (Գ. ձե.) կարգում ենք,
թե պարսից թագավորն իր օրդի Շապուհին կարգում է Հայոց թագավոր,
բայց հայ նախարարները սուր արքայօրէն մեծարէին, զնա յորս կամ ի
խաղուս:

Ապա պատմվում է հետևյալը. «Այլ երբեմն ի մակաճուսակեծ խաղուն
երկիցս պատահեաց Շաւասպալ Արծրունույ զգեղակն հանել ի Շապուհույ:
Ը: նորա ատեալ նմա մակահանան՝ ասէ. Սանի՛ր զքեզ: Իսկ նորա պատաս-

1 Այս մասին ժանրամասն կարելի է տեսնել «Մասնա Մոնթ», Բ հատ. (մասն երկ-
րորդ). խմբագրոց Մ. Արծրյան, աղխատակցութիւն մը Գ. Մ. Օհանջանյանի, Երևան, 1951,
էջ 850—853 (սեփականութիւններ):

խանեալ, թե՞ Այո՞ ասէ, Տանալեմ եւ զիս արքայորդի ի սերմանէ Սանա-
սարայ. եւ ունիմ իշխանութիւն ընդ հղբարս քո զքարձն արքայի համբու-
րել, որպէս ն անուանակոչեցնալս եմ: Եւ զայս ասացնալ յոյժ քամահա-
րար, ի ձիարձակարանէն արփայագնաց լինէրս:

Այսպիսի մի մականական խաղ մինչև վերջերս մնացած է մեր ժո-
ղովրդի մեջ: Խաղացողներից ամեն մեկն առնում է ձեռքը մի գաժազան-
ասպարեզում ձգում է մի գնդակ (= հոլ), որ խաղացողներինց մեկն աշ-
խատում է մականով տանել, ձգել որոշված տեղը (= հոլտուն), իսկ մյուս
խաղացողներն իրենց մականով պետք է գնդակին խփելով՝ հեռացնեն
որոշված տեղից. բայց պետք է այնպես խփեն գնդակին, որ նա, որին
պատկանում է գնդակը ն որ ուզում է որոշված տեղը տանել այն շկարո-
ղանա իր գաժազանով հարվածել գնդակի խփողին. ապա թե ոչ՝ զարնը-
ված մարդը պետք է փոխանակե զարկողին եւ ինքն սկսի գնդակը գնդակի
որոշված տեղը տանել գաժազանով: Ինչպես երևում է, Մ. Խորենացու
հիշատակած մականական խաղը, սույն ժողովրդական խաղը պետք է
լինի:

Այս միևնույն խաղն է նաև «Տարօնի պատերազմի» մեջ հիշված
«գնդի խաղը» կամ «գնդի խաղալը»: Մականական կոչումը խաղի գաժա-
զանից է առնված, իսկ «գնդի» կոչումը՝ խաղի գնդից (հոլից):

Գնդի խաղը հիշվում է նաև մեր հին ժողովրդական վիպական երգի մեջ
իրրև թագավորական խաղ (սէկոնի երգը):

Սուլթանն ի մօլդան ելի

Իր ոսկի գունդըն կու խաղայ:

Այս երգի մեջ հիշված «մօլդան»-մեջյան բառը Մ. Խորենացու
Պատմության մեջ սեփարձակարան է հիշվում, որ միևնույն ասպարեզն-
է: Ինչպես երևում է, մականական կամ գնդի խաղը ձիով էր լինում, որի
համար պետք էր ընդարձակ ասպարեզ: Գնդի խաղի տեղի ընդարձակու-
թյան համար ակնարկված է «Տարօնի պատերազմի» մեջ «երկիր տափա-
րակ եւ դաշտաձև»:



ՎԵՊԻ ԱՅՈՒԺԵՏԻՎԱՆ.

184. Գործող անձերն ու պոմեւտիկան:— Վնայի մեջ հոգևորական
դասից իբրև գործող անձեր մեջ են գալիս Եպիսկոպոս, վարդապետ, քա-
հանա ու սարկավագ, բայց սակավադեպ եւ աննշան դերերի մեջ: Գավթի
ճյուղի մեջ մի սարկավագ իբրև լրաբեր: Համեմատարար ավելի կարևոր
դերերով հանդես են գալիս գործող անձեր աշխատամար. ժողովրդից, ինչ-

2 Տե՛ս «Մուրճ» ամսագիր, Քիֆլիս, 1880 և 1882, Մ. Արթուրյանի, հոգվածը: «Ազգային»
վեպ, էր. 1786, հտև:

պես՝ աղքատ պատալն ու ալևորը, նախորդը, զառնարած, ծառա, մշակ, արհեստավորներ:

«Սասնա Մոծորի» գլխավոր հերոսները, կենտրոնական գործող անձերը գուրզով ու թրով զինված հզորներ — փահլեհաններ, ըմբիշներ են, որոնց շուրջը խմբված են Սասնա ծոփերը, և որոնց վրա պատմվում են բազմաթիվ սխարագործական և այլ սյուժետներ ու մոտիվներ «Համաշխարհային սյուժետների արխիվից»: Մասսան, անգամ Սասնա ծոփի բնտանիքը, շատ քիչ գործ է կատարում ընդհանրապես: Վեպի համար բնորոշ է անձնավորության պատմական դերի շտփազանցումը, ուստի ամեն ինչ որ կատարել է մասսան, վերագրվել է մեկ հերոսի, ծայրահեղ դեպքում մի խումբ ընտրյալների, մի խումբ հզորների:

Վեպի գլխավոր սյուժետը եղել է ամենից առաջ մարտը, մենամարտը և նույնիսկ գոտեմարտը երկու կարիճների: Պատերազմ է լինում, և ահա թշնամու մեծ բանակի դեմ, դուրս է գալիս Դավիթը մենակ: Երբեմն միայն, ըստ մի քանի պատումների, նրան օգնության է հասնում Ձենով Ղովանը կամ Քեռի Քորոսը: Վերջիվերջո պատերազմի ելքը վճռողը երկու հզորի մենամարտն է: Այսպես լինում է մեկ-մեկ նաև «Պարսից պատերազմի» մեջ. հիշենք Մանուելի ու Վարազդատի և Մանուելի ու Մերուժանի մենամարտերը: Նույնն արդեն ավելի հաճախ կրկնված է «Տարոնի պատերազմի» մեջ: Եղիշեն Ավարայրի ճակատամարտի մեջ հայերի պարտության պատճառ դեռում է Վարզան Մամիկոնյանի ընկնելը. «Բայց քանզի անկեալ էր մեծ սպարապետն Հայոց ի պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդն մնացելոցն»: Այսպես և ընդհանրապես վիպական զրույցների մեջ: Բայց զորավարի այս դերը վեպի մեջ միաժամանակ նաև հերոսի իդեալականացումն է լափազանցումով: Իսկ մեր «Սասնա Մոծորի» մի շարք պատումների մեջ դա, այդ մենամարտը, նաև կեղեքված մասսայի հակապատերազմական գաղափարի մի արտահայտութուն է. քանի որ այդ կատարվում է մասսայի ըմբոստացման և պահանջի հետևանքով:

Կարևոր այս սյուժետը, մարտը, մեր նոր վեպի մեջ պատմված է բազմաթիվ և այլազան մոտիվներով: Առենք թեկուզ միայն Նախ Քեռու պատումից «Դավիթի կռիվը Մարամելքի հետ»: Դրա մեջ մեր հերոսի մանկական շրջանից ու հարկահաններին պատուհասելուց հետո՝ կգտնենք բազմաթիվ իրագործութուններ, ինչպես են՝ հարկահանին ծաղրող կանայք, Մարամելքի զորահավաքն ու արշավանքը, Դավիթի պատրաստութունը կովի համար, հորեղբոր օփոստանքը, ուժը փորձելը և այլն և այլն: Այս կամ այն փոփոխակի մեջ այնքան շատ և անբերք մոտիվներ են հարակցվում և մեջբերվում այս մարտի գործողության ընթացքում, որ միահամուռ ստացվում է մի հարաբարդ պատմվածք: Եթե «Սասնա Մոծորի» բոլոր պատումների մեջ բերված մոտիվները թվելու և համեմատելու լինեինք այլ ազգերի ավանդական վեպերի նույնպիսի կռիվների մեջ եղածների հետ, կտեսնեինք, որ սակավ մարտական մոտիվներն են մնացել

միջազգային այդպիսի մտտիվների պաշարի մեջ, որ այսպես կամ այնպես ողտաղործած լինեն մեր Վեպի այս կամ այն պատուհի համար: Զպետք է մոռանալ, որ մարտեր ու մենամարտեր անում են ոչ միայն Դավիթը, այլև մյուս հերոսները: Կան և մենամարտեր, որոնք իսկապես մրցամարտեր են, հերոսի ուժն ու ճարպիկությունը փորձելու համար:

Սերկորդ մեծ սյուժեան է հերոսի ամուսնուլթյունը: Դավիթի, այլ և ուրիշների ամուսնությունը նույնպես ունի շերտական բնույթ. պատմված է, արգարև, ումանտիկական դեպքերով, բայց լկա մեղկ սեր և ոչ կնահանություն: Այդ սյուժետն ևս լի է մարտական արկածներով: Հերոսը բոլոր մրցակիցներին, ոսոխներին և հարսնացուի թշնամիներին հաղթելուց հետո միայն արժանանում է իր սիրած կնոջը: Նվ ոչ միայն այդ: Նա պետք է ուժի և զենքի գործածություն մեջ գերազանց լինի նաև իր հարսնացուից: Ուստի ամուսնությունից առաջ տեղի է ունենում այդ երկուսի մենամարտը կամ մրցամարտը:

Վեպի պատումների մեջ կան տարբեր բնավորության ամուսնություններ և զանազան տիպերի կանայք, որոնց նկարագրեր լպիտի արվի այստեղ: Հիշենք միայն, որ Վիպասանքի համար քնորոշ է հարսնացուի առնվանդումն ու վարձանքը: «Պարսից պատերազմի» մեջ կան քաղաքական ամուսնություններ: Ամուսնություններ կատարել են նաև տնտեսական նպատակներով: «Սասնա Մոծրի» մեջ ևս երևում է օժիտը հողերով: Բայց Դավիթի ամուսնությունը կատարվում է ոչ քաղաքական և ոչ էլ տնտեսական հաշիվներով: Նա իսանդութին զեռ շտեսած՝ նրա համբավից միայն սիրահարվում է նրան: Նա Զմշկիկի նշանը ետ է տալիս, մի քանի պատումներով, նրա հետ կենակցություն ունենալուց հետո, և զնում է իսանդութին առնելու: Նա սիրում է իսանդութին, և սա էլ նրան:

Ավանդական վեպերի սիրած սյուժետներից մեկն է և հերոսի մահը: Վերջինս հաճախ սպանվում է մարտի ժամանակ: Այդ էր պատվավոր մահը թե կյանքի և թե վեպի մեջ: Հիշենք զավճանորեն սպանված Մուշեղի վերջին խոսքը:

Բայց իբրև եհաս ինձ մահս,

Թէ ի վերայ ձիոյ գիպեալ էր...

Ինչքան մարտի մեջ սպանվելը պատվավոր էր համարվում, վեպերի մեջ, սակայն, այդպիսի մահ գտնում են սովորաբար թշնամի մարտիկները: Իդնալական հերոսները — ևթե կուլի մեջ էլ սպանվում են, բայց ոչ հավասար ուժերով և ճակատ առ ճակատ մարտնչելիս: Այսպես և մեր Դավիթը: Զմշկիկ Սուլթանը, որին Դավիթը թողել էր և զնացել իսանդութին առել, նրա զեմն է դուրս գալիս և, իր անպատվության վրեժն առնելու համար, նրան հրավիրում է մենամարտելու: Դավիթը յոթն օր ժամանակ է խնդրում նրանից, որպեսզի իսանդութին տանի Սասուն, և վերագառնա Զմշկիկի հետ կուլելու: Զմշկիկը մեծահոգությամբ թույլ է տալիս: Բայց Դավիթն իր երզումը մոռանում է, և եղբւ տարիներ հետո միայն

զնում է նրա հետ իր կռիվն անելու, երկրորդ անգամ խարված Զմշկիկն ալլևա շի հարգում նրան: Նա, դեռ մարտը չսկսած, ծածուկ կերպով թիկունքից մահացու վերջ է հասցնում Դավթին: Այստեղ անպայման ազդել է և Քոռեիկ Մամիկոնյանի մահվան դեպքը:

Ջուհափ բերին Խանդութ խաթնին.
Ե՛րավիթ սպանվավ առանց կռիվի:

Ահա թե ինչո՞ւմն է ցավը — սպանվել առանց կռիվի Իսկ Խանդութն ամուսնու մահից հետո ինքնասպան է լինում, ինչպես և ուրիշ վեպերի մեջ:

Խանդութ խաթուն լե մեկ թաս զեհիր խմավ,
Դավթի կսկծու Խանդութ խաթուն լե մեռավ:

Չա՞ծ ուրիշ պատումներով այդ հավատարիմ կինը, երբ իմանում է ամուսնու մահը, բերդի գլխից իրեն ցած է գցում, գլուխն առնում է քարին, ու սպանվում է: Իսկ ինչ է անում Դավթի ընկեր ձին, հավատարիմ Քուռեիկ Ջալալինը:

Դավիթ էնդեղ մեռավ...
Փն մեռավ, ձին էնտեղ ծռավ,
Մռակապ կտրեց, ինկավ տուս,
Ինչքանդար խովիվ ռաստ իրի,
Նախրուրթ ռաստ իրի, տավար, ձի,—
Բիրադի կուտուրից,
Կինաց կանգնավ հեռքն Խանդութ խաթնի դուան:
Խանդութ խաթուն էլավ, իրիշկից,
Տեսավ՝ ձին էկիր ի, տեր խիտ շկա:
էն սհաթ խարար էլավ,
Որ Դավիթ կորուան ի:

Սովորական սյուժետ է նաև հերոսի մահվան վրեժխնդրությունը, որ կա նաև մեր նոր վեպի մեջ: Մհերն այդ պատճառով մեծ արունք է թափում.

Ինկան Թանդումտհու կարմնջիճ շուր Իրան,
Ինչ որ կըեր՝ բիրադի կուտուրիցին, ասին.
Ե՛հս մի Դավթի փուխս:

Քողնում ենք ուրիշ սյուժետներն ու մտախմբերը, որոնք թվով այնքան շատ են, որ հնարավոր չէ այստեղ մեջ բերել:

185. Գյուղացու իդեալն և գյուղական պլուժեղները:— Ե՛մասնա Մռե-րի՞ս մեջ պայծառ կերպով երևան է գալիս աշխատավոր գյուղացու իդեալը և գյուղական սյուժետները: Նրա ապրուստի միջոցը ավարառությունը չէ:

Նա անասուններ է պահում և վար ու ցանք է անում: Նրա ձգտումն է իր աշխարհի աշխատանքից արդյունք ստանալ, իսկ դրա համար նա պետք է տենչա ու թե պատերազմ թշնամու դեմ, այլ խաղաղությամբ, խաղաղ կյանք: Ոչ ոքի չդիպչել: Բայց երբ մեկը հարձակում է գործում, անվախ հլենել նրա դեմ և ոչնչացնել նրան, խնայելով աշխատավորներին: Ահա ինչ է գյուղացու հասարակական դիտակցությունը Վեպի մեջ:

Բայց Զրենկին, այսինքն Հոռոմի պապը (հիշողություն խաչակրաց արշավանքների), Եահի թելադրությամբ, սուսնց որևէ պատճառի, նամակ գրելով Դավթին՝ հրավիրում է նրան ի պատերազմ և սպասնում է նրան՝ պրելով:

Ասկար կը քեշեմ քու վերա,
Քու երկիր քարքանդ կ'ենիմ,
Ինչ կա-չկա՝ թալնիմ, լուպկիմ, բերիմ:

Այդ ժամանակ Խանդուվը Դավթի կողմից նամակ գրելով՝ պատ չխանում է նրան.

Մինք քի զարար մը շինք տվի.
Մինք քի լընք ճանչնա.
Մինք քի ի՞նչ ինք էրի,
Վուր կը գաս մի (մեր) վրա կոխվի:
Մինք քու անուն լընք լսի.
Քու դավին մի (մեզ) խիտ ի՞նչ ի.
Մինք քի ի՞նչ ինք էրի,
Վուր կը գաս մի (մեր) վրա կոխվի:

Ապա ավելացնում է.

Վուր դու կը գաս, մեակ մի գա,
Զըս կերի Դավթի վերա.
Հուրիչ թագավուր էլ խիտ քի բի մի (մեր) վրա.
Քը էն էլ գա հոգնի քի:

Ապա դարձյալ՝

Դու էրկու թագավոր գեթ.
Զք կերի Դավթի վերա:

Այսինքն՝ թե երկու թագավոր էլ ձեք զորքով գաք, չեք կարող հաղ-
թել Դավթին:

Բայց Զրենկին գորածողով անելով՝ արշավում է Սասունի վրա և քանակ դնում Մշու գաշտում: Դավթիքը շարդում է նրա զորքը, բայց երբ
ակում են փախչել, կանչում է.

Է՛յ, կ'ըսի՛, մի՛ փախնեք, էլ չեմ սպանի.
Ըձք ժի (ձեք) թագավուր նշանց տվեք:

Ապա Հերոսը մտնում է Քապը Զրենկի քաղաքը, Թագավորին սպանում, նրանց համար նոր Թագավոր դնում. «էղ քաղաք մեկ-մեկ ուր (իր) տեղ կըղենի, ճուշ պատիկ կը ճաննան», այսինքն կարգավորում է քաղաքը: Բայց ի՞նչպես:

Ձաթի ճուշ մարդիր կը սպանի,

Պատիկներ տեղ կը դնի, կ'ըսի.

—Փանի դու միր էք, կռիվ մի՛ք է՛րքա:

Ուրեմն «Ջողերին», մեծամեծ մարդկանց (իշխաններին) սպանում է, փոքրներին (աշխատավորներին) նրանց տեղ դնում և ասում է.— Փանի դու՛ք ողջ հի՛ (սաղ եք, ձեր ամբողջ կյանքում) կռիվ մի՛ գնաք: Միաժամանակ նրանց պատվիրում է՝ ասելով «Երբ դուք նեղը կընկնեք», այսինքն երբ ձեզ վրա կհարձակվեն «ի՛նձ Թուղթ գրեք, ուղարկեք, ես կը գամ», հասկանալի է, օգնություն, իսկ մենք գիտենք, թե ինչ է նշանակում Պավթի այդ խոսքը: Այդ նշանակում է՝ ոչնչացում հարձակում գործողի:

Ապա էղա քաղաք հըմեն

Պավթից՝ կը վախանեն, կը՛սին.

—Պավթ՛թ, լուր մենք մեռնինք,

Քու խոսք տէնինք:

Իսկ այդ խոսքն էր սկսիվ միք էքթա, այսինքն հարձակում մի գործեք:

Ահա աշխատավոր շինականի ձգտումը խաղաղություն, նրա հակապատերազմական հայացքը, որ արտահայտված է հանձին նրա Հերոսի, Այդ են պահանջում նրա շահերը: Այստեղից, շինականի այս իդեալից էլ ծագում են գլխավորապես մեր այս ժողովրդական վեպի որոշ սյուժետներն: Գյուղական աշխատանքի՝ վեքարերյալ, ինչպես են՝ անասնապահությունը, հողագործությունը, դուրանով վար անելը, արտը պահպանելը և նմանները, և գործող անձերն աշխատավոր ժողովրդից՝ նախորդ, արտատեր պահավ և այլն, որոնք հիշվեցին վերևում: Եվ վերջապես այդ շինական իդեալից է ծագում նաև Պավթի ու Մարամեյիթի կռվի նպատակն ըստ ՎՈՒՄՊՈՒՄՅԱՆ:

Մարամեյիթն իր երկրի բոլոր տղամարդկանց,— նորելուկ մանուկներից սկսած մինչև սպիտակամորուս ալեորները,— ժողովել է, քանակ կապել, եկել է Աստուների վրա: Պաշտի մեք նա վրանները զարկել, նստել էր Պավթիթը նախապես իմաց անելով՝ մենակ հարձակվում է Մարամեյիթի զորքի վրա և արյունահեղ կոտորած անում: Այդ ժամանակ մի ալեոր զորական առաջ անցնելով՝ հանդիմանում է Պավթին.

Տու ընչ՞ե՛ էսա մարդեր կը սպանես...

Ամեն մոր մեկ են.

Մարամեյիթ զոռով ի բերի:

Որ տու կտրի՞ճ ես՝
Գնա՛, խետ Մարամեւիքին կռիվ արա:

էղ շիվարներու մեղաց տակ մի՛ մըտնը.
Որ կա՛ թաղա փեսա ի.
Որ կա՛ մորեն մեկ ի.
Որ կա՛ զինք մենակ ի,
Նա տղա ունի, նա աղջիկ.
Մե կնիկ կա՛ թըղի տուն քաղցած, իկի:
Քիրադի զոռով, տփելով ի բերի Մարամեւիք:
էնոնց մեղաց տակ մի ընկնի:
Մարամեւիքս սո էնա զնչլով շարքի տակ քնիր ի.
Կինա, խետ էնոր կռիվ, է՛ն ի քու դուշման:

Ասքար կայնան ու դավա էրեցին,
Քե.— Նաղըմ է, որ մենակ դուք էրկուս կովեք,
Որն որ զոր կէզնի՛ թող կռիվ էնոր էզնի:

Այսպես ուրեմն, խեղճ, քաղցած, աշխատավոր մասսան, որին բռնի կերպով զորք են դարձրել, շի ուզում կուզել ու կոտորվել բռնակալի համար, որ միայն իր շահերը նկատի ունենալով հարձակում է գործել ուրիշի երկրի վրա: Մասսան թշնամի չէ ու հարձակում չի գործում: Նա կազմակերպված է իբրև զորք. ուստի և նրա ներկայացուցիչ զորականը կարողանում է համարձակութայամբ խիստ բողոքել պատերազմի դեմ: Եվ ինքն այդ կազմակերպված մասսան էլ նույնիսկ պահանջում է, որ թշնամիները իրենք երկուսով մենակ կուզեն: Դավիթը, հենց որ զգում է իր անարդար վարմունքը, խսկույն համաձայնում է դրան: Իսկ բռնակալ Մարամեւիքը համաձայն չէ, բայց ստիպված է կատարել մասսայի պահանջը:

Բնական է, որ այդպիսի հերոսին սիրեն ուսմիկ շողոնները, սրանց իդեալը լինի նա, այդ երիտասարդը, որ կուզի գնալիս երգելով հրամեջար է տալիս անխտիր ամենքին.

Ո՛վ քուրիր, կացեք բարով,
Ընձի քուրութին եք էրի.
Ո՛վ մերիր, կացեք բարով,
Զի (ինձ) մերութին եք էրի.
Բարի դիրկիցներ, կացեք բարով,
Կացե՛ք բարով, մեծ ու պատկով:

Եվ ինչո՞ւ է այդ սիրելի հերոսը կովի գնում.— Պաշտպանութան համար: Մարամեւիքը՝ վիրավորված, որ Դավիթը չի թողել հարկ տալ, ահագին բռնակալ է կենց է Սասունի վրա:

Անքար կայեց, էկա՛յ վար Սասմա քաղաքին,
Մընչ դաշտին զոր շաղբը-խեղաթ իզար,
Ջուհար խրկեց Ձենով Շովանին,
Ասաց,— Ձեն'ով Շովան,
Ի՞մ յոթ տարվան խարչ կը տաս' տո՛ւ խաթրով.
Քն շես իտա՛ կը կամ, Սասմա քաղաք ավրեմ,
Տանեմ Մարա քաղաքի քամակ, նոր քաղաք շինեմ:

Սասնա տերերը հանձին Ձենով Շովանի խոհեմութուն են համարում
թշնամու պահանջած հարկը տալ, ՎՄհնք լինք կարա կոխվ անիչ,—ասում
է Ձենով Շովանը: Նա արդեն հայաքն է անասուններ, սերկայն ու կարճօ
կանայք, որ գերի պիտի տանեն, և արդեն ոսկին է շարուժ: Սակայն Գա-
վիթն ասում է.

Սա շեմ իտա ի՞մ խոր խզինեն,
Ինչ կ'անեն, թըխ անեն:

Ռամիկն այդ է ցանկանում:

Վճե՛յ Կուզ Յազին,
Գու գնա, ընկիր շեկ տղի ձեռ,
Աղեկ կը բերես թալանչ,—

Ասում են Սասունի ջրերը կանայք:

Սվ ժողովրդի իրավազուրկ մարդիկը, ամենից աղքատ, պառավը, որ
միայն մի արտ կորեկ ունի, կամ յոթ շունչ ընտանիք և յոթ կորի կո-
րեկ անեցող ալևորը, նրանք զրդում են Գավթին ինքնապաշտպանու-
թյան համար կովի ելնել: Աղքատիկ պառավը գյուղացական մասսայի,
աշխատավորության ներկայացուցիչն է, որ Գավթին հայտնում է, թե
Մարամեջի հարկահանները եկել են Սասուն յոթ տարվա հարկ տանելու
և թելադրում Գավթին շթոնելու, որ հարկ տանեն: Նա կամ ալևորն է
հայտնում Գավթին, որ Մարամեջիքը գրավել է հողեր ու լեռներ Սասու-
նից: Սվ վերջապես այդ խեղճ պառավն է, որ սովորեցնում է Գավթին
հորեղբորից զոռով առնել Մհերի կամ Մանասարի հրաշալի զենքն ու
զրահն, գետտներն ու ձիւն, և համայնի Սուրբ Խաչը, որոնցով միայն հնա-
քավոր էր հաղթել թշնամուն:

Համա խրողքեր խաթրով լիտա էն բաներ:
Վերթաս քո խրողբոր փողպատ կը բռնես,
Կայնե՛ս, զորովն կ'առնես:

Այդպես էլ անում է Գավթիքը: Հորեղբայրն այդ ժամանակ ասում է—

էն քո գիտցած բաներ չի, քե ուտա՞ կա:
— Բերան կուտրեր ջու ասողին:

Ասաց.— Խորխպեր,
Կը տա՞ս ինձը՝, էլնիմ էրթամ կոխի՛

Ձենով շտովանը ոչ թե չի ուզում տալ, այլ Գավիթը երեխա է. չի հա-
զատում, թե նա բան անել կարող է.

Ասաց.— Ա՛յ որդի,
Նոր լոթ տարին թըմըմեր իս,
Տու կոխի՛ էրող չիս:

Ասաց.— Տ՛էրթա՞մ.
Իմ Աստված կանչիմ, էրթամ հեռըն դուշմանին:

Եվ նա, այդ առնական, խիզախ տղան, անձնվեր քաջությամբ գնում
է թշնամուն դիմապրա՛վ: Գնում է ուսմկի թելադրանքով և ուսմկին հար-
կից ու ավերումից ազատելու համար:

Եվ երբ սարի գլխից պահապանը վազելով հասնում, լուր է տալիս,
թե Գավիթը վերադառնում է,

Ղովան էլավ, ա՛նրթա Գավթը հառեչ:
էն գեղական, մարդ-կնիկ, խալվուր-պառավ, ճիժ-բիժ,
Ղըմեն գացրն Գավթը հառեչ:

Գավիթը հորեղբորը հարցնում է, թե՞ այդ կանայք ինչո՞ւ են դուրս
եկե՞լ: Ահա թե ինչ է պատասխանում նա.

Գա՛վիթ, կ՛ըսի, ինչ դու գնացիր,
Չուր մկա էդա շիվարթի կը լըն, Աստված կը կանչին,
Կը վախենեն՝ Մորա Մելըք թի սպանը,
Տաճկընիք գեն, քաղթը մարդիթ՝
Ղըմեն սպանեն, կընկաիր տանեն:
Որ քու գալ լսան, հըմեն խնդացան, ուրախացան.
Ջուլ-պատիկ քու հապով ճկան:

Գավիթը նրանց ետ է դարձնում, առելով, թե Մարամելքին սպանել
է ինքը: Այն ժամանակ՝

էդա խեղճ մարդեր էկան,
Արխային տեներ նստան,
էլ սկի լըն վա՛խենա:

Ահա թե ում համար և ինչի համար է կոչում Գավիթը:

Նա թշնամու երկրին այք շունի, նրա վրա հարձակում չի գործում:
Քայք պաշտպանում է թշնամուց, անվախ դուրս է դալիս նրա դիմ և իր
երկրից մի թիզ հող, մի կտոր ապրանք չի տալիս նրան:

Ահա ուսմկի սիրած հերոսը, ԵՄուռա Գավիթը և նրա նախատիպ Մու-
շեղը, ինչպես տեսանք վերևը, Վերջինս, սակայն, պատրաստ է մեռնելու
և թի վերայ բնակ տերանցա, իսկ Գավթի համար այդ լկա, հարկավ:

Բայց ի՞նչ է անում խրատատու ազքատ պառավը, երբ Դավիթը հաղ-
թությունից հետո զալիս է, իր տանը նստում:

էդ պառավը ըլավ, էկավ Դավթի մոտ, էսաց.

— Դավիթ, բարո՛ւ էկիր.

Դավիթ, բարո՛ւ էկիր:

— Աստժու բարին քի, պառավ:

— Տիսա՞ր, որ իս ցու հըմեն հանքայն շանք տվիմ.

Ապա որ իս քի շքսիր,

Դու քիրիկ, ծառ մ'առիր էր,

Կ'երթիր Մելքի վերա կոհվ:

Քու խոր խաթըր համար

Քի հըմեն քան շանք տվի:

— Պառավ, էսաց, ըծր քիև միևաթ ի.

Կը գա՞ս, ըլնես ըծր մեր (մայր), ըծր մեր (մայր) շունիմ:

— Դավիթ, իս էլի քի մեր (մայր) իմ, իս կ'երթամ իմ տուն,

Ինչ քան շիմ, էլի կը գամ, քի կ'ըսիմ:

Սկի մի վախենա, Դավիթ, ծլիս, ծաղկիս:

Չուր մկա պստիկ էր (էիր), բուլացար.

Մուռ էր (էիր), խիլքըվացար...

Ըվ Դավթի այս մայրաթիվ ռամիկ պառավը շարունակում է հետա-
գայում ևս խրատներ տալ ժողովրդական հերոս Դավթին, և սա լսում է
նրան:

ԺԱ

Ա Ր Վ Ե Ս Տ Ր

166. Վեպի ճյուղերն ու պատումները:— ԵՄասնա Մոներն մեջ ի մի
են հավաքված բազմազան և շատ սյուժետներ ու մոտիվներ, և՛ պատմա-
կան, և՛ առասպելաբանական, և՛ հայկական, և՛ միջազգային, և կազմվել
է մի մեծ վիպասանութուն: Ուստի Վեպն, այդ վիպական մեծ նյութի
պատճառով, ունի բարդ արխիտեկտոնիկա և բարդ զարգացում:

Դա ոչ թե կենտրոնանում է մի եղելության շուրջ, այլ բաժանված
է երեք-չորս, երբեմն և ավելի սերունդների մեջ, որոնցից յուրաքանչյու-
րի վրա պատմվում են երկու-երեք վեպեր կամ տարբեր-տարբեր սյու-
ժետներ: ԵՄասնա Մոներն, ուրեմն, կազմված է բազմաթիվ վեպերից, որ
ասացողներն անվանում են ճեռու: Բայց այս բառը զանազան իմաստ-
ներով են հասկանում: Այդպես կոչում են աւանձին հերոսների մասին
պատմվածները, օրինակ՝ Դավթի ճուղ, Մհերի ճուղ, Ենազանց ճուղն ճուղ,
գանք, դադարենք վար Դավթի ճուղին: Ապա՛ նույն ճեռու բառը գործ
ևն ածում նաև առանձին սյուժետների և նույնիսկ առանձին միջազգային
համար Դավթի համար, օրինակ, հիշում են այսթ ճուղ,-- Երզրթի տը

ասամ որորմի՛ ՚ն օխտ ճուղ Գազթինք: Ե՛ժուղեբրք մեկ-մեկ սկսում կամ՝ վերջացնում են «Ողորմիտով»: Բայց դա էլ հաստատուն նշան չէ՝ Վեպի՝ հատվածների համար: Առանձին արժեք շունի այդ նկատմամբ և այն, որ կան ասացողներ, որոնք որևէ հատված պատմելուց հետո՝ հայտնում են, «Քե՛ստը» վերջանում է, և «ճուղերի» թիվը մեծացնում, անգամ վիպական քառասունին են հասցնում: Ինչպես էլ լինի, էականն այն է, որ այս մեծ վեպը կազմված է առանձին անկախ հատվածներից և պատմվել է, ինչպես նաև ուրիշ ժողովուրդների մեջ, առանձին հատվածներով, որոնք միմյանցից ավելի կամ պակաս զեղիցիկ են: Հատվածներով պատմելու հետևանքով և մեր ասացողները հաճախ ամբողջ վեպը լզիտեն, այլ նրա այս կամ այն մասը միայն:

Վեպի արվեստի նկատմամբ՝ լպետք է յոռանալ նաև հետևյալ հանդամանքը: Մինչ ուրիշ ազգերի մեջ վիպական ավանդույթները դրավոր զեղարվեստական մշակութայն է ենթարկված մեկ կամ մի քանի բանաստեղծների ձեռքով և ստեղծվել են ամբողջական զեղարվեստական վիպասանութուններ, — մեր Վեպը մշակված է միայն բերանացի պատմվելով և հետզհետե այսպիսի մշակութայն հետևանքով է, որ «Սասնա Մերը» հանդես է գալիս երկու կամ երեք խմբերով: Մուշ ու Սասունի, Մոկաց և պարսկահայաց ու խառնուրդ խմբերով: Բայց քանի որ այդ մշակութայնը բերանացի է կատարված, դրանցից ոչ մեկը սենսուն ձև չի ստացել: այլ ամեն մեկն էլ շարունակ ավանդվելով բերանացի, շարունակվել կամ փոփոխութայն է ենթարկվել և մեզ ներկայանում է այլ և այլ վարիանտներով:

Հայտնի են հիսունից ավելի պատումներ, որոնց ասացողներն առանձին մարդիկ են: Վեպի պատմվածքի մեջ, արվեստի նկատմամբ, շատ բան կախված է, հարկավ, նաև վիպասանների իրենց բանաստեղծական շնորհից և անհատական հակումներից: Ուստի և այդ պատումներից մեկը կամ մյուսն ավելի զեղարվեստական արժեք ունի, քան ուրիշները: Բացի այդ՝ միևնույն ասացողն անգամ Վեպի այս կամ այն մասն ավելի լավ է իմացել և կամ, որևէ պատճառով ավելի կենդանի և լուրահատուկ ձևով է պատմել, քան մյուս մասերը: Մի կողմ ենք թողնում այն, որ քանահավաքներն էլ իրենց կողմից կարող են ավելի կամ պակաս հաջողությամբ դրի առած լինել այս կամ այն պատումը:

Արդ, այս ամենի հետևանքով՝ առանձին պատումների և հաճախ նույնիսկ նրանց առանձին դրվագների կամ մասերի ձևը, արվեստը միակերպ չէ և միանման զեղիցիկ չէ: Բայց և այնպես դրանց ընդհանուր բնավորութունը մեկ է, դրանց մեջ սյուժետները զարգացած են մի ընդհանուր վիպական ձևով, քանի որ դրանք բոլորն էլ ծագում են միևնույն վիպական ավանդույթներից: Հենց այդ պատճառով էլ այստեղ այս վեպի՝ ձևը լսողիցիս նկատի ունենք զլիսավորապես ընդհանուր վիպական հատկութունները: Եվ որովհետև այդ բազմաթիվ անկախ վիպական հատվածները, «ճուղերը», կարելի չէ առանձին-առանձին քննութայն առնել, ար-

ուանց լսփազանց ընդարձակելու այս աշխատութիւնը, ուստի այստեղ կանգ կառնենք դրանցից միայն մեկի վրա, որ է Դավթի կոխի վրա Մարամե-լիքի հետ, այն էլ գլխավորապէս ըստ մեկ պատումի:

187. Գործողութեան զարգացումը:— Վեպը հենց սկզբից դնելով գործողութեան հիմնական պատճառը՝ այնուհետև շարունակում է նախապատրաստել երկու հոգրների մենամարտը: Դավթի իր երեխա ժամանակ Մարում գինախաղի միջոցին բռնում է Մարամելիքի գուրդը, և նրան բամբակում անում մեջ խալխին: Եվ այդ դառնում է Մարամելիքի համար անձնական թշնամութեան պատճառ: Բացի այդ՝ Մարա թագավորը վախենում է Դավթից և մտածում. «Վերջին տիր էսա տ'էլնի, խիտ ձի կոխի անի:»

Մուշ ու Մասունի խմբի պատումներով, անձնական թշնամութիւնն այսպէս է ծագում: Մարամելիքը պահանջում է, որ մանուկ Դավթին ու իր եղբայրներն, որոնք Մարում են, ասնցնեն իր թրի տակով, որ հպատակվելու մի ծես էր հնում: Եղբայրներն այդ կատարում են, իսկ Դավթի թր հրատարկում է այդ անեղութ, ասելով.

Կը սպանե՛, թող ըստր սպանե,
Որ խալխ ըսեն՝ ճիժ մ'ըսպանեց:
Ես ընտրա թրի տկով լիժ ընցնա:
Հըմա կ'իլնե, որ վաղ ես մեծնամ,
Սուր լքաշե՛մ ուր (իբ) վրեն:

Քեռի թորսը փորձում է Դավթին զուով անցկացնել Մարամելիքի թրի տակով, բայց

Դավթի լգնաց թրի տկով, կշտով ընցավ.
Ուր ճուլ բոթ (բուլթ մատ) քիսավ ի շարդու քար,
Կրա՛կ էլավ մոտեն:

Մարամելիքն այդ որ տեսնում է, շատ վախենում է և ասում.

Իդա պզտիկ է՛ էսքան է.
Որ մեծցավ՝ ի՞նչ տ'եղնի:
Քե որ ընձի զավալ մ'եղնի, ըդրա մոտեն է:

Եվ եթե նա հենց այդ միջոցին չի ոչնչացնում իր մանուկ ոսոխին, պատճառն այն է, որ դրան արգելք են լինում իր մայրը, կամ իր կիներ, կամ իր իշխանները, կամ նույնիսկ Դավթի անձնական ուժը, որով նա կարողանում է դիմադրել իրեն սպանել ուզող փահլեստներին:

Վիպասանն այդ երկուսի ապագա ընդհարումն այսպէս նախազգալ տալով ունկնդիրներին՝ այնուհետև մանրամասն պատմում է Սասունում Դավթի կատարած այնպիսի մանկական արարքները (հորթարած և այլն). որոնցից գուշակվում է, թե մի անտովոր հերոս պիտի դուրս գա նրանից: Բայց այդ մանուկը դեռ անտարբեր է. զի տակավին լկա երկու իշխանութիւնների հակամարտութեան առիթը:

Եվ ի՞նչ է աչք:

Մարամեկիքը գրավել է Սասունի իշխանութիւնից դաժաններ, որոնց մեջ է Գավթի հոր որսասարը: Նա քանդել է Գավթի հոր Մարութա Բարձր Աստվածածին վանքը և Սասունը գրել Հարկի տակ:

Գավթիքը երեխա է, այդ շգիտե՛. նրան այդ շին հայտնում: Բայց ահա Մարամեկիքը հարկահաններ է ուղարկել և յոթը տարվա հարկ է պահանջում Սասունից: Այն էլ ի՞նչ պիտի հարկ: Նա շի բավականանում, որ հարկը ըստ Սասունի տնտեսութիւն, տրվի միայն անասուններով: Նա նաև կոտորով ոսկի է ուզում, այլն գեղեցիկ աղջիկներ, աշխատավոր կանայք է պահանջում իբրև հարկ:

Ահա թե ինչ է ասում հարկահանը.

Կարճ կնկրտիք՝ էրկանք աղան,
էրկեն կընկտիք՝ զուղտեր բառնան.
Մեր Խորածին գացեր Սասուն ի բան,
Մուղալի եզներ բերե լծան,
Ձկարմիր կովեր բերե կթան,
Գարուն բոլ կը շինենք եղ ու լորթան:

Մի ուրիշ պատումի մեջ նա ասում է.

Կ'առնեմ քառսուն ազապ աղջիկ արմաղան,
Փառսուն կարճ կնիկ՝ էրկանք աղան,
Փառսուն էրկեն կնիկ՝ դավա բառնան,
Կոտորով ոսկի կը շահիմ՝ օխտ տարվան խարչ,
Սասուն էրերում տ'երերիմ, թալան:

Կամ մի ուրիշ տեղ.

Փառսուն անծին մաքի կ'ուզեմ,
Փառսուն անծին էրինք կ'ուղեմ, և այլն:

Ուրեմն միաժամանակ երեք շորս տեսակ հարկեր ֆեոդալական տընտեսութիւն զարգացման տարբեր շրջաններին համեմատ, և բնական արտադրանքով, և դրամով, և աշխատանքով՝ ճորտական կամ ստրկական ձրի աշխատանքներ կատարելու համար:

Արդեն անասունները հավաքել են: Կանանց էլ ժողովել ու փակել մի տան մեջ և ոսկին են շահում: Գավթիքն այդ իմանալով, իսկույն արձակում է անասունները, որ գնան իրանց տները, և ազատում է փակված գերի կանանց: Ընտո գնում է ալետեղ, ուր ոսկի են շահում, և սոսկալի կերպով պատուհասելով հարկահաններին՝ նրանց դատարկածուն ետ է ուղարկում Մարամեկիքին: Ապա տեղեկանալով, որ հայրն ունեցել է որսասար, որին տիրել է Մարամեկիքը, երգով պահանջում է հորեղբորից . գնալ Սև սարը որսի:

Խերախա՛ւթ խորոզեր, խեր շունիմ,
 էրա խերութիւն,
 էրա խերութիւն,
 Սև սարն իմ տըսիր,
 Քալաք բուրջ պուլուր,
 Քալաք բուրջ պուլուր,
 Որ ուր Աստված կը սիրը՝
 էրթանք սեհր էնեչու,
 էրթանք սեհր էնեչու:

Հետեյալ օրը քննում են: Դասկիթը տեսնում է ալիք Մարութա Աստ-
 վածածինը. նա հորեղբորից իմանում է, որ Մարածիչին է ալիքի, այդ
 վանքը: Դասկիթը վերաշինել է տաքիս այդ և մեքը միարաններ քանակեց-
 նամ:

Այսպէս ուրեմն գլխավոր հերոսն արդեն պատիվ վիճակից դուրս է
 եկած: Մնջտեղում կա ոչ չոկ հրկու հարեան իշխանութիւնների հակա-
 մաքառութիւնն ընդհանրապէս, և Մարածիչի անձնական թշուառու-
 թիւնը, այլ նաև կան արդեն իրական հանգամանքեր: Մարտը լինում է
 թշուառու կատարած քրեանքիւնների պատճառով, նայելով պատումնե-
 լին՝ կամ նրան նա մղելու համար, կամ նրա գրաւած գաղանկերը վե-
 րադարձնելու, կամ հարկ շտաբու, կամ վրեժնդրութեան համար: Մի ան-
 զամ որ միս սրկու կարիճների ընդհարման իջական հիմքը, կա, ուրեմն,
 և երկեանը գործողութեան հետագա զորքացման համար, որ լինում է
 բազմաթիւ ղեկավարների և իրադարձութեանների հաջորդութեամբ, սկսած
 Դասկիթի վերելում հիշած արարքներից: Մարածիչիքը նորից ալիքի է տա-
 յիս Մարութուկը. Դասկիթը նորից պատժում է ալիքիչնեչին և միարան-
 ներին կատարողներին: Այսպէս և այլ ինչքեր, այդ այսուծետի բազմաթիւ
 մտախնդրով, մինչև Մարածիչի ասպանելը:

188. Գատնվանքի արվեստավորությունը:—Վիպասանն այդ ամենը
 պատմում է հմտտ արվեստով: Ոտնկերիքները լիեպետ սկզբից զգում են,
 որ Դասկիթը պիտի հաղթի, բայց և արեպես լարված հետևում մն գործո-
 դութեան ընթացքին: Դրա պատճառն այն է, որ վիպասանը հետաքրքրու-
 թեան առաջ բերելու համար կիրառում է տրոշ եղանակը նա Դասկիթին
 բն է հանում մենակ և փոքր հասակում դեռ իրրև մի անփորձ, կոխի
 շմտած պատանյակ: Խճիպիս կարող է, ուրեմն, նա, այն էլ, մենակ,
 հաղթել հակա Մարամեչիին և նրա արեպան մեծ բանակին: Զէ՛ որ շրտա-
 պատողներն անգամ կասկածում են, թե Դասկիթը հաղթութեան տանի:
 Նրա հորեղայր Վեյրգոն և Զեկով Հովանի կին Սառինն, որ քն ունեի-
 նրա դիմ, ծաղրում են նրան: Նույնիսկ Զեկով Հովանը, որ հայրադուր
 սիրով պիտում է նրան, նա էլ թերագնահատում է նրան, և կարծում է
 թե նա իր մանկութեան պատճառով պիտի կորչի: Ուստի նա Դասկիթին

հանապարհ զնեյիս՝ օղջառով հրգում է, ափսոսում Քուռկիկ Զալալին,
Գլխու Գոտին և այլն:

Ափսո՛ս, խազա՛ր ափսոս
Մըր Քուռկիկ Զալալին.
Ափսո՛ս, խազա՛ր ափսոս
Մըր Գլխու Գոտին, և այլն:

Սվ վերջն սվեչացնում է նա.

Ափսո՛ս, խազա՛ր ափսոս
Մըր նորալուկ մեկ թաք մանուկին:
Հազա՛ր ափսոս, զնաց Սասնա տեհն թառան Գավիթ:

Սվ վեճպես շծադրելին Դավթին օւրջեղները, և շափառապար նրան Զե-
նով Ընդանը: Տեսեք, թե փնջպախ կերպարանք ունի այդ պատանեակը իր
հոր զհնք ու զրահի մեջ իր հոր սասարի նմանս մեծ ձիու վրա.

Եւծավ զՔուռկիկ Զալալին,
Գլխս էդի Գլխու Գոտին,
Խազավ զկասպեն խաբուկին,
Կասպեց թուրն ի Եւծակին,
Քամարն ի Մեքքին:
Էնու քամար քառասուն փաթ էկավ բուր մեջքին,
Թուր Կեծակին փչավ գնալու քեշ կ'երթար:
Գլխու Գոտին ընցկուն մեծ էկավ,
Որ քառասուն զիար քամբակ էդի մեջ,
Նոր էն զնաց գլխուն:

Վիպասանն այնուհետև վարողանում է սենկնդիրներին հետաքրքրու-
թյունը շարժված պահել ոչ միայն հրաշապատումներով, այլև արնու,
որ նա Դավթին շարժանակ հանդիպել է առաջիս անհարողոթթուններին,
որոնք, սակայն, շուտով վերադառնում են, զայց սենկնդիրներին դնում են
լարված, սպասողական վիճակի մեջ:

Այսպես, օրինակ, Դավթին իր մահկաթյակն պատենառով մոռանում
է կասարել հորեղբոր կամ Քուռկիկ Զալալինի խրատները և անհարողո-
թյան է հանդիպում. կամ նա միամիտ է և խաբվում է Մարամելից ու
վտանդի ենթարկվում. կամ նա քաղաքիտ է, շարժանակ զիջումներ է
անում իր հակառակորդին և դրանով գոյվարացնում իր գործը. կամ նա
չի հասկանում, որ մի հարվածով մտքել է երկաթի այրուը, և ինքն իրեն
անիծելով՝ կորացնում է իր աչքերը, կտրում իր թևը, և նմանները:
Վիպասանը նույնիսկ մենաստրոի վերջին փրադարձությունները պատ-
մեցիս մէ զեռ առկախ է թողնում վերջնական լուծումը: Այստեղ էլ Գ-
վիթը ի վնաս իրեն զիջումներ է անում: Մարամելիցը, նրա փուլջատու-
թյանը, քառասուն գույ խորոթյամբ հոր է փորել տակիս, ինքը մտնում
է հորի մեջ, վրան քաշում քառասուն շաղացաքար, քառասուն դարադաժ

դումշի կաշի մէլ պցել է տառնիս ըսողացաքարեքի մլքա, որպեսզի նոր Գա-
միթը հարգածի փրեն:

Բայց մխաթն այդ լէ:

Գամիթ գնաց էկամ, որ զուր գորգ զարենք,

Գամիթի մեր էկամ հեռքեմ, ասաց.

— Զէ՞ քե ծիծ եմ ամի՞,

էդ մեկ դարբ ձի (ինձ) խաթեր:

Դամիթ խաթը արեց:

Մեկ էլ գնաց էկամ՝ տը զարենք,

Դոր Մարամեիթի քուր էկամ հեռքեմ, ասաց.

— Դամիթ, ինչ տու տղա էր,

Ես քե ընթրուեմ շըրկիթ Կեմ վար փմ քամկին.

էդ մեկ դարբ ձի խաթեր:

Դամիթ խաթը արեց:

Դամիթ մնաց, Աստված, էն մեկ դարբ:

Գնաց, որ մկամ՝ տը զարենք,

Մարամեիթի քուր էլ ըմ էկամ հեռքեմ, ասաց.

— Դամիթ, էդ մեկ դարբ լե տա՞ս ձի խաթեր:

Ասաց.— Գնա դեն, փուշտ, դաղը.

Եսն եմ, Աստված, էսա մեկ դարբ:

Ունկնդիրները զայլարևուտ եմ Դամիթի աքնան դիքումների համար,
և հանգստանուտ եմ, որ դունքի փերջիկ հարվածը լզիքեց:

Բայց ասա նոր պոքերը: Այս ժամանակ Մարամեիթի

Մեյն մէլ աղջիկներ առից,

Տառափերկու աղար աղջիկ ստից,

Կանգնամ էնու դիսաց,

«Ջուսիման» կը խաղին. էաց.

— Դամիթի տըք ընկնի դախ աղջիկներ,

Դարբ լկպնի Մարամեիթին:

Դամիթ ականջ շերամ էն խոսքին,

Ձեռ էտու, քեշից գթուր Կեծակին...

Բայց արդյոք բավակա՞ն է մեկ հարվածը:

Դամիթ գնաց, էկամ...

Ջուր մեկ գորգ էզար...

Ջրասուտեմ դումշու վաշին կարեց,

Փառասուն շաղցի քար լե կարեց,

Մարամեիթի պիտու գաղաթ լե վարեց...

Ինչ Մարամեիթի դինք թափ էտու,

Մեկ կտոր ընկամ կատեղ, մեկ էնտեղ:

* Այս պատմումը Գամիթի մայրը, Գամիթի հոր մահից հետո, ամուսնանում է Մարա-
մեիթի հետ:

Մեկիքն սպանված է, այն էլ ինչ օքանչի կերպով:

Ասացողները երկու հարոնների այս ընդհարման բազմաթիվ միջադեպերը, ինչպես կարելի է տեսնել, պատմում են ժամանակի կարգով, միաժամանակ և պատճառաբանական հաջորդությամբ, մանրամասնութուններով ու լրջությամբ, բայց առանց զարգարանցների և հանդիսավորութեան: Իրադարձութունների այդպիսի անպաճառն պատմվածքի մեջ, սակայն, նրանք ընդհանրապես կարողանում են մեծ շարժում մտնել և նույն ընդհանուր աշուժին անընդհատ անցնելով ունկնդրի ուշադրութունը դրանով էլ բարձր սպանել: Գրա պատճառներից մեկն էլ այն է, որ առանձին ճյուղերի և նույն ճյուղի մեջ նյութն այնպես է բաշխվում և դասավորվում, որ դիպվածները մեծ մասամբ ընտանիքի ընթացքով և հետզհետե հաջորդում իրար:

Պատմվածքի ժամանակաբանական կարգն առաջ է ընթանում գլխավոր հերոսի հետ: Մեծ-մեծ էլ այդ կարգն ընդհատվում է, և պատմվածքն անցնում է ուրիշ հերոսի: Այդ լինում է այն ժամանակ, երբ մեծ թաղում է առաջ գաղտնի, ինչ անկնդրելի հետաքրքրությունը հասնում է զագաթնակետին, թե հետո ի՞նչ պիտի լինի, կամ թե որտեղ սր է՝ համակրելի հերոսն արդյոք պիտի հաղթի՞ և տնչանա՞: Այսպես, օրինակ, նախ քան որ պատմելի մեջ, իբրև Գալիլիճ շաքար սրտաուհասում է հարկահան Գոլդմանին և ճանապարհ դնում՝ անելով:

Գնա ջուհարի տու ջո Մարամելիին,
ինչ կ'անի, թըխ անի:

Վիպասանն այդ ժամանակ թողնում է Գալիլիին և պատմվածքն առաջ է տանում Կոլդմանին և հետո Մարամելիի հետ, մինչև որ դարձյալ անցնում է Գալիլիին: Նույնպես երբ Մարամելիքը Գալիլիին խաբելով ձգում է հորի մեջ և ստում:

Է՛ն սը, ինչ տը խետ ձի կոխվ էներ-
թըխ կենա էնտեխ, շուր ոսկերքեր փտի:

Այդ ժամանակ ասացողը դարձյալ թողնելով Գալիլիին՝ անցնում է Ձենով Լովանի երազին և նրա հասցրած օգնությամբ: Դրանով Վեպի մեջ մտնում է մի նոր հանգամանք, և դորժողութեան ընթացքը ավելի հետաքրքիր և զարմանալի: Բացի այդ՝ վիպասանը հնարավորություն է տեսնում ավելի ևս զարգացնելու Ստոխաշի վերաբերմունքն ի վնաս Գալիլիին, ընդհակառակն, Ձենով Լովանի հայրագույն խնամքն իր եղբորորդու համար: Այսպիսի ընդհանրումներն և անցումները լինում են և կարճատև և երկարատև, հաճախ սկսվում են հատուկ քանակետով, սեղի մնաց էդ տեղ. ետ դառնանք, էրթանք մանասարի կուշտ, սխաբար ուտից տանք, — հարազր խոսվա Լամզից տանք և նմանները:

180. Ոճը.— Այստեղ գրուցողը պարզամիտ գլուղացին է, որ պատմում է այնպես, ինչպես ինքը սովորաբար մտածում ու խոսում է, ինքնաբերաբար կերպով, առանց հույս տանելու թե՛ր փոփոցկության համար, առանց ոճական վարդապետների: Այս մասին նա զարգացր շունչ էլ: Այդ է պատճառը, որ Վեպի պատումների մեջ ընդհանրապես սակավ են համեմատողքոսեաները, ինչպես են, օրինակ, հետևյալները.

Ի՞նչ կը տեսնա.— իրիշկից՝
Որ քանի մ'աստղ վերիկնք կա,
Մարամեղիք բնցկուն շարժը-խեղձով՝
ածի մընչ զաշտին...
Ք'հետուր ախպկութեն կը խարցնես,
Քանց զարնան ձռն ավտակ է:

Տեսավ՝ որ ինչ էրկու սար
Կ'երթնան, մը քան, զիպին իրար,
Ինչպես փ Դասիթ, ՄԱՆԵր առած փրար:

Ձեռն մտու, զխեր, տղեն հիտ կտրեց իրարուց,
Մնչ որ էրկու դիք կովին,
Մեկ էրթա, հիտ կտրա:

Կան նաև հակադրողքային աբստրակցիոններ, ինչպես, օրինակ, հետևյալները.

Ընոնք էլենն բամբակ,
Ծա լի էլենմ կրակ,
Չեմ կարա գանոնք էրեցըցի.
Ընոնք էլենն գարնան մատղաշ գառներ,
Ծա լի էլենմ գարնան քաղցած գելեր,
Չեմ կարա գանոնք կտրեցըցի:

Մինևույն պատճառով շատ շնն գործածված նաև պիպական մակդիշմեներ, ինչպես են Եադկամակեր Դավիթ, Քուխմուրտու Դավիթ, Քլոր Դավիթ, Ետրելուկ մանուկ, Քուր Կեծակին, Բանձրիկ Աստվածածին: Այսպիսի մակդիշմեղից մի քանիսն արդեն դարձած են անձնանունների անբաժան մասը, ինչպես՝ Ձենտով Ըտվան, Պարտն Աստղիկ: Եստ շնն նաև անձնական վերագիրները, որոնցով որոշվում կամ բնորոշվում են անձրն ու վերըրը, ինչպես՝ պիպտակ ձի, սև ձի, խորտու տղա, պողվատի կոռ և այլն:

Ոճի այս սրբորոշյունը կամ, ավելի ճիշտ, անպարճույն հասարակությունը, նախնական վեպի և ընդհանրապես գրողական քանաստեղծողության հասկողությունն է: Բայց միևնույն գլուղացին մի նախնական, գրեթե մանկական ձևով պիտու է պատեմածքի մեջ կրկնություններ անել, հաճախ անբարոյական կոտորների վերկնողքոսեաներ, որ ասվորական են բոլոր հին պիպասանողքոսեաների մեջ: Այսպես են պատմված, օրինակ,

Նախո Թեոս պատումի մեջ Ձենով Հոգիանի երազն ու ձիւնքին փորձելը, և բազմաթիւ ուրիշները թե այս և թե այլ պատումների մեջ, Պարզամիտ գլուխացին երևում է մեկ-մեկ նաև մի քանի կոմիկական միջադեպերի մեջ, որոնցով ասացողը ծիծաղեցնում է իր ունկնդիրներին, բայց կոպիտ ձևով։ Այսպես, օրինակ, այն որ Դամիթը մի շարք պատումների մեջ կատարում է Սառիայի ծագրական խնդիրը Դամիթին ի մարտ ճանապարհ դնելիս։

Նկարագիր, լինի քնութիւն թե գործող անձերի արտաքինի ու քննվորութիւն, շահագրանք քիչ կա, այն էլ կարճ, մի երկու դժուր, մի երկու բառով արած։ Բայց դրա փոխանակ՝ շատ պատումների մեջ կան հերոսների բերանից ասած երգեր, մեղքերոված կան հաճախ և նրանց մտածումներն իր։ Բոլոր պատումների մեջ ընդհանրապես վիշտում է տրամախոտութունը, որ անվորական է և ուրիշ սղգերի ժողովրդական վեպերում։ Ընդամենը ինքնավորութունը սրած նկարագրով, առջ հենց այդ նշանքով ու խոսվածքներով, ինչպես և նրանց արարքներով ու սխառածումներով։ Նա վեպի գործողութիւն ընթացքում ուղղակի գործի մեջ է հանդես բերում և պծագրում հերոսներին։ Նրա դժուր, նրա շեղք չի նշանում։ Միայն անցման քանակների մեջ, ինչպես և ճշուդիկ սկզբի կամ վերջի ժողովրդիկներին մեղք, ստանում ենք ասացողին։ Այս ու այն պատումի մեջ կան նաև ասակավաթիւ կողմնակի խոսքեր, տրոնցով հարմարում է վիպասանի անձնակերպ կարծիքը, ինչպես օրինակ, հետևյալ դեպքում։ Դամիթը վշտանալով Խանդութից՝ ասում է․

Եհանդոթ խորթան, կանչի իմ Ասված,
Զուր խցիտան, քանի մ'աստղ երկինք կա,
Ընցկուս շաղրո-խնայթ փոփոք քո քաղցին զարեհն,
Հմեն քո խոր գլխու դուշման էլնենն,
Ինչ մրազ էրավ՝ Ասված կատարեց։

Այս պատմելուց հետո՝ վիպասանն ավելացնում է իրենից․

Էն ժամանակ արդար մարդ լին,
Ինչ մրազ ինին՝ Ասված կր կատարելու

Այսպես ուրեմն վեպի մեջ ասացողի անձնավորութիւնը, նրա անձնական կարծիքներն ու հայացքը ջատ քիչ է երևում, այն էլ միայն կողմնակի, հարեանցի նկատողութիւններով։ Ասացողը սառը կերպով, կարծես, անտարբեր ձևով առկա վ գործողութիւն զարգացումը, տրով և որի մեջ պարզվում է վեպի զաղափարախոտութիւնը, լինի դա ուսմկինը թե աղնվականինը Դրանով հենց՝ վեպի զարգացրած զաղափարները, որոնք միանգամայն նաև վիպասանինն են, դառնում են ունկնդիրների համար հափաստի ու անաշտ, լիակ գործողութիւններն ու անձերը թիւում են իրական ու ճշմարտուման, կենդանի ու համակող։

190. Իդեալական Ռերու Ռավիթը:— Բայց այդ բոլոր երևույթներն միայն անտարբերությունն է վիպասանի կողմից: Նրա պատմվածքի մեջ գործող անձերն ամբողջական ճշմարտությամբ ան զրոյան ու քաղաքական տիպերի, ազգային և այլազգի: Վիպասանը հմուտ արվեստով առհասարակ արժարես է առաջ տանում գործողությունը, որ նա, առանց իր կողմից մի խոսք ստեղծելու, իսկապես պայտալում է այլազգի իշխողներան ներկայացնում է՝ վատ, բռնակալ, խարդախ ու կեղծքիչ մի նենգ թշնամի և, շնորհակատակն, դավաբանում է ազգային դրական հերոսին, վերագրելով նրան ամեն տեսակի բարձրասունջություններ:

Պրակտիկ հերոսներին արժանի դարձնելու համար՝ սասցողը դիմում է նաև նրանց իդեալականացմանը շտիպանքով: Նա և հայ և ալազգի գործող անձերի պատկերը, նրանց արարքները շտիպանքով խոշորացնում և ընդհանրացնում է այն աստիճանի, որ, կարծես, անհասկանալիությունը կորչում է: Բայց և այնպես սաստուցի հերոսներին նա զերադուս է ներկայացնում: Նրանց ժողովում շատ ամենի բարձր հասկացություններով, վստի Ռավիթին շատ արվեցի մեծ, զնորական տեղով և ալվիլի հարուստ առ քաղաքացիականի արժանիքներով, քան նրա հակառակորդներին: Պատում է այդ պատանի հերոսի, ինչպես և արիշտերի մասին, ամառվոր առ հրաշալի գործեր: Մեջ է բերում սակն դիրքներ և սնցամ Ռավիթի շղթապատուղներին կարծիքով ամենաբարձր անեղքներ առ խնդրներ: Եր նա լուկույն հեշտությամբ կատարում է. հերոսի առաջ հանում է ունեղնդիկների համար անհաղթահարելի արգելքներ, որ նա, հերոսը, առանց դժվարություն հաղթահարում է, ինչպես այն, որ նա հաղթում է սպաններ և խառնում վրե կախին, կամ մի հարվածով կտրում է երկարի արունը, և նմանեցրը:

Վիպասանն առ ամենում, այս շտիպանքով արգելվոր լսողների մեջ ծնեցնում է պարմանք ու հիացում ազգային հերոսի ու ժողովրդի մասին: Պրակտիկ նա իդեալականացնում է Ռավիթին: Ըն այդ հարկանվոր է նրան:

Պրավիթը բոլոր Վեպի գաղափարախոսությունների, ծնված է Սասու առ նրազը վառ պահելու համար: Պրա համար և Վեպը նրան ժողով է ամենաբարձր աստիճանություններով: Մարմնով նա զեղեցիկ է, ուժեղ առ ճարտիկ: Երաճարտով, հազի անդամներով, պինդ կազմվածքով, հաստաբարձր և արտաբան,—մի խոսքով՝ մի բանձնահուր, թխամորուս կամ խալտաբար կամ շիկ (նախքով պատմվածքին), որի վրա վ աշխարհի ալքը, և տրին պրակտիկա համար աղյկերն ամեն շտորք գործ են զնում: Ետտիկը նրա արտով վատիում են: Եր նա կամեղութի հոր առաջ կանդնում է, թթազավոր, իր վաքիլ, վազիր շիվարան, թե իզամլա էլ մարդ կ'եղնի: Նա իր սկզբնի համեմատ ամեն խոշոր հոգեկան հասկացություններ: Առաջինի լատ ամենաբարձր արժանասունքան: Մի հալքնասեր մարդ, ամեն կան, համարմակ և խիզախ, կտրիճ, քաջ առ անխախ: Այս ամենական հասկացությունների հետ ունի և երգի ու նվարդի շտորք: Իրն զորեղ բնա-

վորութիւն՝ խորը զգացմող, հոգու խորքից հուզվող է. երկար ու բարակ՝ դատել չի սիրում, այլ ասկելի գործել. քեթի շարժառիթներով բորբոքվում է ն իսկույն գործի գիտում: Իբրև գործի մարդ՝ տառաւանում ու վարանում սասածը շգիտեմ, արագ փր վնիւղը դնում է և մի անգամ արդեն վճռածի վրա անդրգլխելի մեկում. նրա համար արդեն լոց քանզ վ որոշումից ետ կանգնելը: Եւ քաղութիւնը կրկնվ է մտնում և մահվան դիմադրամ վի- նում. անձնակեր է, ստեղծեմ, տանում է ամեն մի նեղութիւն: Բայց և միա- ժամանակ մեզ մտնեմ մարդ է, ունի մարդկային կրքեր. իբրև մարդ վո- խեմում է մահից, խորը կեցւոյով զգում իր անկուսակի վիճակը: Իբրև լնանային երկրի ծնունդ՝ պարզասիրտ ու միամիտ է, աննեմզ հոգով, բաց արտով. քայց կրող ու կարիտ փր զարծվածքի ու խաւածքի մեջ: Սարսափելի կերպով պատեմ գիտեմ իր արկի թշնամիներին, ինչպեւ ծն աստեղները հանել և արչն, քայց և միամտամտեակ վիճանն է ու ներդա- միտ դեպի թշնամի, զուր արդուն փափնել չէ ուզում. հեմ տր զգում է իր անարդար վալտեմը, փախուք բարկութիւնից ինչում է, վորձանում փր արարքին: Անում է թշնամիներին, քայց և ստոր միջոցներ շի բանեց- նում նրանց հաղթելու համար, գողումի չէ հարձակվում: Պաշտպան է անզորին ու թուլին. մտածում է իր արկի ու ժողովրդի բարոյութիւնը համար, հալածում է ավազակներին: Փնջութիւնը սիրում է իր ազգա- կաններին, իր արխաւորներին, կեռն, իր ձեռքի տակ ժառայողներին, որանց բողոքի համար և հողացողութիւն տանի, և վերբարեւա իր դրացի- ներին և ամեն դիմացի մարդու: Անընշաւք է վերին աստեղների, նույ- նիսկ թշնամու վերաբերմամբ. քայց և իր հայրենի հարստութիւնը վաւա- նել չէ տալում: Բարեպաշտ է, մեկնեցնակեր, հովանավորող անկողնեակա- ների և վանքերի, ամենայն բոպե աղոթքը փախուքի տանի, քայց և եր- բանն իբրև մարդ մտանում է իր աղոթքը: Երդմնապա՛ է, քայց և մեկ անգամ փր նյանքի մեջ մտանում է կտաւարել իր երդումը, տր և շինում է նրա անծ հանցանքը: Գիտեմ զվարթ կեր ու խում անել և մի՞նչ անգամ շարից դուրս խմել, գինովանալ, քայց երբեք ինքն իրեն չի կորցնում. հարկավոր ժամանակ լիակուքն աթափվում է փր ուրախութիւնից և յրջու- թիւնը գործի գիտում: Ընտանեկան օջախի սրբութիւնը սիրող է, կնոջ պատուի նարանձակները, ողջախո՛ր դուրս է գալիս դեղեցիկ մեկոջ բարած թակարդից, քայց և միաժամանակ իբրև մարդ մի անգամ խաւում է կնոջից: Սերը նշան է կողբացնում է, ուր ախր աղոթեցութիւն տակ կա- տարում վ գոյեկեր, որ ուրիշ դեպքում չէր անիլ: Մինչ ուրիշներն իրենց ծնողներին ընտրութիւնը ու վամքով են ամուսնանում, նա ասկելի քով է համարում ընտրելիւծ գիլքը խաւածարել, նշանը փա ստալ և իր արտի ձայ- նին հետեւել: Ամուսնութիւնը նա անձնակաւն ազատ ընտրութիւնը է հաս- կանում:

Բացի բնավորութիւնն արչա դեմքից՝ Դավիթն օժտված է նաև շատ նահապետական տոյղորակեան հասկութիւններով, ինչպեւ ծն՝ հարգանք դեպի ձեռքերը, իտեւորութիւնն, ամուսնապահպանութիւն ընդունված ծե-

անդի աւ կարգերէն վերաբերումամբ, պատկառանք մեծ ազգականներէն,
Հրաւրագիրութեան և այլն:

Այն շարժանակնց, զնո կարող ձեռք շատ քաղեմամտութեանն թիւն
Գալթի բնակչութեանց: Ատեղծող վիպասանները, պատմները միտ-
հաստու առած, նրա մեջ դրել ձև մի շատ հարուստ և բազմակողմանի
ոգի, և արն՝ ոչ թե նկարագրելով, այլ ուղղակի գործի մեջ հանդես բե-
րելով:

Անսովորութեան այս գծերը վիպասանները բնակւնործն և անկեղ-
ծութեամբ ձև ալտահայտել հերոսի համար: Բնչքան էլ նրա պատկերը
խորոքացրած և իդեալականացրած է, բայց և այնպէս մարդկային է: Նրա
անձի մեջ յուսատեղոր կողմեր միայն ընն դրւում, այլ նախելով պատմա-
նեղին և հնուց ձեկող խաղափորութեանն, սովին վրամ պակաս շահն ըստ
նաև ասովորտ կողմեր աւ մարդկային թուլութեանն: Եվ Գալթին ընկ-
նում է հինց յի թուլութեանն երկից ամենամեծի, յի երդմնագտնցութեան
հետևանքով:

Իր տված խոսքը պահելը, ուխտապահութեանը, դա է Գալթի մեջ
ամ փոխված բարոյական գաղափարներից ամենամեծն ըստ վիպասան-
ների:

ԺԲ

ՎԵՊԻ ԱՎԱՆԻՈՒՄԸ

181. Ասացողներ:— Ո՞վքեր և ի՞նչպիսի մարդիկ ձև «Սասնա Սոճ-
րի» ասացողները: Ո՞ւմ մեջ է պահպանվել Վեպր մեր օրերում և ի՞նչպէս:
«Յարդ ամենցած հետաքրքրութեան», — դրամ է Հայկոմին, — ախ ձգ-
րակացութեան հասած եմ, որ Սասնոն Գալթի և Մհեր դիցազնական
փնայր մտկայցի գգրայններ տարածած են հետու դասիտներ, նաև փոքր
մասամբ կոմանցի և ոգմեցի գգրարներ: Սոքա իրենց արհեստն ուր որ
ի գործ վր դնին, ամո ձա կը պատմեն Սասնաւոր ու Բողոքասար, Գալթի
և Մհեր, նաև այլևայլ հեթիաթներ: Գարուն, ամառ, աշուն սոքա կը տա-
րածվին Բշերի, Ռավանդա, Մահմտանք, Մուշ, Թուանդի, Խլաթ, Արծկե,
Ապադա և այլն, վսկ ձմեռն ևս Ահամ (Երևանա նահանգ): Խումբ-խումբ
կը տարածվին ամեն կողմեր. յուրաքանչյուր խումբ 5—10—15 հոգի
կը լինեն... Գգրարները խիստ շարքաշ կյանք ունին. գլուզե գլուշ, տնե
տուն ման կը դան, ցրտին և անձրեղին ձրերմն դուրսը, կրքմն ներսը,
երբեմն Լոթի, ծաքաւ և արանն անկողնո, շատ անգամ շոր հողի վրա,
գլխո անըքն փրքն քարն մի քար դրած կը մրաբին: Յուրաքանչյուր
խումբ ունի մի հաս Եաղլ ասող, տրպնդի թե իրենց այդ շարքաշ կյանքի
մեջ պաշտօնի և թե ուր գլուզ գնան՝ գրադեցնեն նախն գլուզացիքը:

«Որ անկ խմբի մեջ որ լավ նաղլ ասող կա, այդ խմբի պատիվը շատ
է. եւլն խմբին լավ և առատ ուտեցիք կը տրվի: Մի խումբ երբ ասացին

անգամ մի գյուղ մտաւ, գրուի գրայի տեղը կամ ուսը կը հարցնեն. եթէ
իրենց մեջ լաւ նաղլ ասող լինի, կ'ընդունեն¹:

Ահա թե ում մեջ է մնացել Վեպր: Գրանք թափառական զգրարներ
են, բուրք ու քամբակ գործներ: Գրանք իրենց ապրուստը հարթալթում
են գիւղ անկողով, որի համար վարձ ստանում են աւելորդաբար բուրդ ու
քամբակ: Իսկ ընտրւած աստղն իր սենդիւն համար վարձատրելով է միայն
առատ ուտելիքով և լաւ ընդունելութեամբ: Այսպիսի զգրարք և շալ-
գործող, հունձ անող, քրքիւ ձողող ու քամբակ զողող են մեր ունեցած մի
քանի պատասխանողի աստղները: Ընդու է, գրանք նրանքն հարուստաբար
գյուղեր ման են գալիս և ամեն տեղ ասում են Վեպր, բայց ոչ իբրև վի-
պասան և վեպ ասելու ու վեպի համար վարձ ասանալու նպատակով:
Երբ իրեն արհեստավոր իրենց արհեստը—զգրարութեան, հունձ անել, շալ-
գործել, քիչա ձող—բանեցնելու համար:

Բայց այս թափառական սենդլ ասողներինց կամ քասպողներինց,
ինչպես արդիւմ են այժմ վիպասանները, կան և ուրիշ թափառական
ասացողներ, որոնց գլխավոր պարագայունքն է իբրև գյուղացի մարդու
երկրագործութիւն, կտավագործութիւն, բայց որոնք աղքատութեան
պատճառով նստակցաց կյանքով չեն մնում իրենց հայրենի գյուղում,
այլ աշխատանքի համար երկար տարիներով պանդխտում են այս կամ
այն քաղաքը և պարսպում տանազան գործերով: Գրանք ևս տարածում
են վեպը: Այսպես, որինակ, կան ասացողներ, որ մշակութեամբ և ծառա-
յութեամբ երկար պանդխտել են, ջրաղացներում աշխատել: Բայց կան և
տիրացու և կրեանդիան, ժամագոր և գրուղական պարտպանը ունե-
ցողներ: Բուրդի ընդհանուր պարագայունքն է, սակայն, հողագործութեա-
նը, որ հարկաւոր գեղքում, ինչպես մեր գյուղացիներին զատերը, թող-
նում են և ուրիշ քանի ձեռք տալիս: Վեպը պատմում են մասն կանայք:

Ասացողներն տրեմն պատահակաւ մարդիկ են, որոնք լաւ հիշողու-
թեան տեր լինելով՝ մտնելութեան ժամանակ իրենց համագրուղացիներինց,
մեծ մասամբ ձերուներինց, կամ իրենց բարեկամներինց, հորին կամ
պատկից շնորհով՝ սովորում են և իրենց ևս պատմում սու նորում: Սկսեալ
Սոնդիւն ախանդութեանը կեղանակի մուրն Արով է պատկել և պատկում է:
ցայժմ ժողովարի անջ, ինչպես ամեն հեքիաթի և պոռայի: Զիպան, ռաբուն,
հատուկ սիւպասաններ, սլորնք իրենց համար առանձնապէս պարագայ-
ունք շինած լինելի վեպ պատմելը և դրանով ապրելի, ինչպես աշուղ-
ները, կամ ուրիշ ազգերի մեջ ժողովուրդն ու տրուվիները: Վիպասա-
նութիւնն Վեպի գրի առնվելու ժամանակ մեզնում ապրուստ չի տվել,
որովհետև Վեպն այլևս ամեն տեղ սիրով չեն լսելիս եղել:

Ասացողներին և նրանց ունեկնդիք հասարակութեան այս վիճակից
առաջանում են Ստանա Սոնդիւն նրկու վաղկան հարկութեանները: Եսայ-
ինչպես տեսանք, թեպետ և պատմվում է Ասանա տերերի, հայ սողնվա-

1 Էմիլիան ազգագրական մոզովածու, հատ. Բ, 1901, եր. 8—17:

կաննեղի և իշխանականներու մասին, քայքայ զգնականն և նույնիսկ թափափոր սննվան տակ համարի զուրոս են զազիս մեր զյուրադրները, հայ հասարակ ժողովրդի ականցաղն ու հողին ենք տեսնում աջտեղ, նրա նիստ ու կացը, պարագամունքը, քարքերը և այլն: Ապա՝ Վեպն իր զրի առնվելու միջոցին ընդհանրապես խանգարման միջնակի մեջ է եղել. պակասում է արվեստամիտքութունը, շին եղել արվեստավոր պրոֆեսիոնալ սասցողներ:

192. Վարպետ սասցողներ:—Արդարև մեր որքանում ևս եղել են և զեն կան սասցողներ, որոնք վարպետ են համարվում, քայքայ ոչ պարագամունքով ու արվեստով, այլ՝ սոյն պատճառով, որ շատ վեպեր և հեքիաթներ զխտեն և արվելի համարն ու ախրով ձեն պատմում. ուստի և դրանք ուղիշեների համար իբրև վարպետ մեն հանդիսանում: Վարպետն, ուրեմն, վարպետ է ոչ փեն նրա համար, այլ արվեստավոր է և աշակերտներ է պահում ու առվորեցնում, այլ՝ սոյն պատճառով, որ իրենից առիտում են ուրիշները, քայքայ պատահաբար: Իսկական վիպասան վարպետներ, որ Վեպը պատմել և աշակերտներ են պահել, հայտնի են երեք հոգի: Գրանք են աշուղ Քարսաձը, Մանասերը և Պողոսը: Այդպիսի վարպետներն անցած սերնդին են պատկանում:

Քե ինչպես է եղել հին վարպետների արվեստը, այդ իմանում ենք մեր ժամանակի սասցողների մեջ մնացած մի քանի հատկութիւններէրից: Նրանք կազմել են վիպասանական դպրոց, որի մեջ աշակերտներն առանձին ակնածութիւյամբ են վերաբերվել դեպի վարպետները և միխադարձ հակողութիւն են ունեցել իրար նկատմամբ:

Ինչքան էլ XIX դարի վերջում և XX դարում սասցողների վարպետները պատահական մարդիկ են եղել, քայքայ և այնպես նրանցից սովորողները բոլորը մի ընդհանուր ակնածութիւյամբ մեծացնում են իրենց սվարպետներին, իսկ իրենք իրենց նվաստացնում են նրանց առաջ: Այսպես՝ մեկը հայտնել է, թէ իր վարպետը շատ ընդարձակն զիտեր այս պատմութիւն և թէ մեջ ընդ մեջ շատ տեղեր ուտանալով խաղեր կային, որ ձայնով կ'ներգեր: Քե վարպետը երկու վոշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սովորած էին, և թէ ինքն՝ բավական ժամանակ պատմած լինենելով մոռացած էր: Եւ նույնպիսի կարծիք ունի իր վարպետի մասին և մի ուրիշ սասցող, որ հայտնել էր, թէ իր վարպետը զգիտեր այս նաղլի ? ճյուղն էլ, այն ևս՝ լավ: Մեկն էլ, թէ սովորել է իր պապ Պողոսից, զոր լավ երպիշ էր, ծաղիկներու և բույսերու վրա երգեր կը հորիներ, Գավթի ? ճյուղն էլ խիստ մեծ հաջողութիւյամբ կ'ասեր և 150 տարի ապրած է: Իսկ Պողոսի հայրը Մուրազ զգեղեցիկ սրինգ կ'ածեր: Մի ուրիշն ևս սովորել է թրաբամ անուն աղջնն, որ շատ հմուտ էր ժողովրդական ավանդութիւնց հեքիաթներուն. շատ լավ զիտեր Գավթի և Մհերու Քարսամն էլ սովորած էր իր հորմեն — Մանասերն, որ կ'ասեն շատ հանճարեղ կույր էր, նրա հիշողութիւնը շատ թարմ էր... սասցող էր... սուտ

չէր խոսե՛ր. կիրակին սուրբ կը պահեր և տե՛նցոց ևս թույլ չէր տար, որ նույն օրը գործով պարապենա:

Աշակերտական ակնածութիւնն ու երախտագիտութիւնն առ վարպետները՝ հայտնվում էր, անշուշտ, և Վեպի մէջ, որի մնացորդը գտնում ենք միայն մի պատումում: Ասացողը Գավթի էյուղը վերջացնելուց հետո հրզով ողորմի է աւլիս Վեպի անցյալ հերոսներին և վերջն ավելացնում է. «Աստված ողորմի մեր փիւր վարպետին, ինչ մեզի շանց ի տվիս»:

Այս ամենը ցույց է տալիս, որ իրենք ասացողները Վեպի ծաղկման շրջանն իրենցից առաջ են գնում: Լավ պատմողներն անցել, գնացել են. ակնածութիւն չէ այս, և ոչ էլ ծագում է միայն մարդկային հողու այն ընդհանուր հատկութիւնից, որ անցյալին երանի է տալիս. այլ դա իրական է: Վեպն իրոք անկման ու խանդարման մեջ է:

Ասացինք՝ առաջ վիպասանները, առանձնապես վարպետներն, իրար վերաբերմամբ փոխադարձ հակողութիւն են ունեցնել: Գրա մնացորդներն ևս տեսնում ենք. Վարդանը սիրբն Աստուծո՛մ շնորհյալ մի ավանդ կը պատմեր, շատ անգամ լրջութիւնով կը դայրանա այն անձանց վրա, որ իր դիտցածն ավելի կը պատմեն և այդ ավելին հերյուրած, շինծու կը համարեն, հետեաբար ավելին ևս մեղք. քանի որ տողորմիներս կան, ինչ որ ավանդած է, այնպես ասելու է, կ'ասեր նա: Այս ժերուճի Վարդանը, ինչպես լսել ենք Ս. Չայկունուց, հանդիմանելիս է եղել վարպետ ասացող Զատիկին, թե ինչու նա փոփոխութիւններ է մտցնում: Զատիկն էլ արդարանալիս է եղել, թե ինքը չի փոփոխում, այլ ինչպես իր վարպետից լսել է, այնպես է պատմում:

Արդարև պատմողները դեռ Վարդանի պես պարզամիտ մարդիկ են եղել, մեծ մասամբ միամտութիւնով հավատացել են իրենց պատմածին ու մեղք են համարել մեծը նոր բան մտցնել: Բայց այս չի արգելիլ, որ Վեպը փոփոխութիւնն ենթարկվեր, ձևատվեր ու խանդարվեր նույնիսկ վարպետների բերանին, թեպետ և ոչ դիտավորյալ կերպով: Քանի որ շատ բշբեր գիտեին Վեպը և վիպասանական դպրոց չի եղել այլևս, որ ավտո-դութիւնը ճշտութիւնով պահեր, ուստի և փոխադարձ հակողութիւնը վերացած է եղել, և Վեպն արպպութիւնով ու հեշտութիւնով կորցրել է ու կորցրելու է իր նախնի հարազատութիւնն ու ձեր: Գրան նպաստել է և մի ուրիշ հանգամանք: Ասացողը, անգամ վարպետը, իրբն արվեստ հաստատուն չի ուսած եղել Վեպը և այնուհետև էլ իրբն արվեստ միշտ չի կրկնել անփոփոխ բառացի. այլ պատմել է երբեմն-երբեմն պատահած տեղը. ուստի և հեշտութիւնով կարող էր մոռանալ, ինչպես մի քանի պատմողներ իրենք խոստովանում են այդ: Բայց հենց որ պատմողը մի բան մոռացավ, տեղը բաց է մնում, կամ նոր հեքիաթային բան մտնում մեջը: կամ նոր կյանքի պոփոխ Վեպն աղճատվում է հորինվածի նկատմամբ: Մասերն ու միջազնայերը հետ ու առաջ են ընկնում, մի հերոսի արարք մի ուրիշի է վերագրվում, առաջ են գալիս հակասութիւններ, կրկին պատմութիւններ, այսինքն՝ միևնույն բանը փոքր ինչ տարբեր ձևով երկու անգամ

է պատմվում կամ նույն Հերոսի Համար կամ երկու երեք Հերոսի Համար
ես և այլն: Վեպն այսպիսով կորցնում է իր գեղեցկութունն ու ճշտու-
թյունը:

198. Թիվ ասել, ճալնով ասել և նրգել նվազակցությունը:— Այսպես
չէ ավանդվել Վեպը Հին վարպետների դպրոցում: Քե նրանք Հաստատուն-
սովորած են եղել և սովորածն աշխատել են միշտ բառացի կրկնել, այդ
կարող ենք հետևել մեր ժամանակի ասացողների մեջ հարատևող այն
Հին արվեստավորութան մնացորդից, որ դեռ քիչ ու շատ փոփոխութան
առաջն առնում էր: Ասացողներից մի քանիսն անգիր արած են պատմել
և երկրորդ ու երրորդ անգամ պատմելիս բարասցի, առանց նկատելի փո-
փոխութունների են ասել: կամ «Հայր-մերի պես սերտած ու վարժ»: Ասացողներն
ուրեմն թիվ ուսածն են ասում, կամ «թվում են», ինչպես
մեր Հին Վիպասանքը, որ կոչվում էին և «թվելիք»: Այսպես թիվ ուսած
պատմել են, անշուշտ, և Հին վարպետները և ավելի ևս մեծ ճշտութամբ:

Հին վարպետներն եղել են նաև արվեստավոր պրոֆեսիոնալ վիպա-
սան ու երգիչ: Բարսամի, Պողոսի և Մանասերի նման աշուղներն ասել են
Վեպը և նրա մեջ եղած երգերը երգել են ամենայն Հավանականությամբ
որևէ գործիքի նվազակցությամբ: Մեր օրերում ասացողների ձեռքին
գործիք չկար, և թե կար՝ մեղ Հայտնի չէ: Վեպի մեջ աշուղները դամբուտ
կամ թե սազ են բանեցնում, և նույնիսկ Դալիթը, որ քաչ երգիչ է, սազ
է բանեցնում երգելիս: Եվ քանի որ ասացողները երգում են այն կտոր-
ները, որ Վեպի մեջ իրենք գործող անձերը երգում են, պետք է կարծել,
որ Հին վարպետներն այս նմանողությամբ կատարյալ անելու Համար հե-
լոսի և աշուղների երգերն այն գործիքի նվազակցությամբ պիտի երգեին,
որ բանեցնում է ինքը Հերոսը, կամ աշուղներն իբրև գործող անձեր: Գոր-
ծիքի այսպիսի նվազակցություն գտնում ենք և մեր ժողովրդի մեջ տա-
րածված թուրքական վեպերի Համար, ինչպես են՝ Քոռոզուի և այլն: Աշուղներն
այս վեպերն ասելիս, դեռ շահած, նվազում են մի քանի բոպն՝
ընդհանուր տրամագրություն առաջ բերելու և շափ տալու Համար: Նույնը
պետք է ենթադրել և մեր Հին վարպետների Համար:

Մեր Վեպի շատ պատումների մեջ կան Հատվածներ, որ ասացողները
ոչ թե թվում, պատմում են, այլ երգում: Սակայն այստեղ ևս պետք է
նկատել, որ ասացողներից մի քանիսը այդ Հատվածները դարձյալ ասում
են և ոչ թե երգում: Այսպես, օրինակ՝ Սրվանձտյանցի պատումի մեջ թե-
պետ և կան մի քանի ոտանավորներ, որ ուրիշ պատումների մեջ երգվում
են, բայց Սրվանձտյանցը երգ չի լսել: Ասացողը միայն Հայտնել է, որ իր
վարպետը «մեջ ընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայ-
նով կ'երգեր»: Այս խաղերի թիվը բավական շատ են, ավելի մոկաց պա-
տումների մեջ: Եղանակը միակերպ է, ծանր ու տխուր:

Բնական է, որ ավելի քնարական մասերում երգվի. ուստի երգում
են միայն Հերոսների քերթնից կտորներ, այսինքն՝ այնպիսիներ, որ հե-

րոսների խոսքերն են, նրանց աղոթքները կամ երգերը, որոնց մեջ երևում է և Հերոսների զորեղ զգացումները: Ասացողն իր կողմից երգում է միայն ամեն մի ճյուղի սկզբում Հերոսների ռոզորմին՝ իբրև նախերգանք, երբեմն և վերջում իբրև վերջաբան՝ Հիշելով և իր վարսյեւտին և ունկնդիրների հոբն ու մոր հոգին: Բուն վիպական, պատմվածական մասը լի երգվում, զոնե մեր ունեցած պատումների մեջ. թեպետև զարմանալի շէք լինի, որ այս մասից կտորներ երգողներ լինեին, քանի որ մեր մեջ դեռ տեղ-տեղ, ավելի մոկաց կողմերը, վեպերը երբեմն ամբողջ երգվում են՝ ինչպես սկարոս խաշ, ՎՄկաց Միքզան և ԵԱւլան աղան:

Բացի թիվ ասելուց և երգելուց կա վեպի կատարման մի ուրիշ եղանակ ևս: Գա շայնով ասելն է, որ երգելու և թիվ ասելու միջին տեղն է բոնում: Մինչ թիվ ասում են սովորական խոսակցական կամ գրուցատրական ձևով ու ձայնի բարձրութլամբ, շայնով ասելու ժամանակ ձայնը բարձրացնում են սովորականից ավելի: Բացի այդ խոսքի մեջ որոշ բառեր, նայելով բովանդակութլանն ու բառերի կապակցութլան խմբերին, առանձնապես շեշտվում ու երկարում են, մանավանդ այն վանկերը, որոնք, ոտանավորի կազմութլան համեմատ՝ իրենց վրա պիտի կրեն խոսքի կամ թե հիթմական շեշտերը: Այսպիսի արտասանութլի ժամանակ վանկերը միակերպ մեկին են հնչում և ասացվածը ստանում է մի առանձին սիթմ և եղանակավորութլուն: Արդ, ԵՍասնա Մոնրա պատմողները, եթե շեն երգում այն հատվածները, որ ուրիշները երգում են, հաճախ ձայնով են ասում, և հայտնում են, թե այս ինչ կտորը պետք է ձայնով ասել: Նույնիսկ Վեպի պատմվածքի ընթացքում, Վեպի քնազրի մեջ այդպիսի հատվածների համար գործածվում է կամ սերգելա շխաղով (= երգով) ասել, կամ թե շէ՝ Եձենով ասելա արտահատութլունը:

Այն հանգամանքը, որ Վեպը համեմատաբար քիչ մասերում է երգվում, և որ մի քանի պատումների մեջ թեպետև այդ մասերը կան, բայց շեն երգվում, ջույց է տալիս դարձյալ, որ մեր Վեպը անկման շրջանի մեջ է: Այսպիսի փոփոխութլուն, որով երգը տեղի է տալիս պատմվածքին, տեսնում ենք նաև ուրիշ աղբերի վեպերի վերաբերմամբ: Օրինակ՝ հին հունական վեպը ծնունդ է եղել երգիչների, որոնք ստեղծել են երգելով. բայց հետո երգը տեղի է տալիս մի պարզ պատմվածքի. երգիչը սակայն դեռ երգիչ էր մնում, որովհետև նա դեռ կիթառ էր գործածում նախերգանքի ժամանակ և մեկ-մեկ պատմվածքի միջին: Ապա երգիչներին փոխանակում են հանգերգուներ — ռապսոդները, որ միայն պատմում են ուրիշների հորինած վեպերն առանց երգելու և նվաղելու: Նույն փոփոխութլունը տեսնում ենք և Ֆրանսիական վեպի համար, որ իր զարգացման առաջին շրջանում երգվել է, իսկ հետո երկրորդ շրջանում միայն պատմվել:

Արդոք մեր Վեպը սկզբում ամբողջապես, այսինքն՝ պատմված մասն ևս, երգվել է, թե ոչ: Նույնիսկ Խորենացու մեջ գտնում ենք, որ մեր հին Վիպասանքը պատմվել ու երգվել են. ուստի դժվար է կարծել, որ մեր նոր

ժողովրդական վեպը մի ժամանակ ամբողջապես երգված լինի: Մի րան միայն հավաստյալ կարող ենք ասել, որ առաջ երգված մասերն ավելի մեծ թվով եղած պիտի լինին:

184. Ուսանալորը:— Վեպի երգված մասերը բնականաբար ունեցել են իրենց հատուկ եզրանակը, որով ազդում են ունկնդիրների վրա: Բայց վիպասանները շեն կարող նկատի ունեցած շլիճել ունկնդիրներին նաև այն ժամանակ, երբ լուկ պատմում են: Ունկնդիրը միշտ կա վիպասանի կողքին, ոչ միայն կատարման, այլև ստեղծման վայրկյանին: Այլապես չի ասվում վեպը: Ուստի ունկնդիրների վրա ազդելու համար, Վեպի պատմրված մասերն ևս որոշ շափով կանոնավորվում են և որոշ ռիթմ ստանում: Դրանք ևս ուսանավոր են:

Ի՞նչ է այդ շափը:

Հին ժամանակներից ի վեր մեր վեպերի համար մշակված է մի առանձին տեսակի ազատ ոտանավոր, որ միակերպ գործ է անվել ավիպասանքի և Պարսից պատերազմի մեջ, ինչպես և Վեսնա Մոնթի Թե երգված և թե պատմված մասերի համար: Նույն շափը գտնում ենք նաև փոքր վիպական երգերի մեջ, ինչպես են՝ ՎՄուկաց Միրզա, Վեսնա աղա, Վարոս Խաչ և ուրիշները, որոնք ամբողջապես երգվում էին և մինչև այժմ էլ երգվում են: Տարբերությունը միայն այն է, որ վիպական երգերը մեծ մասամբ հանդավոր են, իսկ վեպերը, և անգամ նրանց մեջ երգված հատվածները, անհանգստ Կան նույն շափով հորինված նաև հոգևոր երգեր, այլ և ժողովրդական սիրու և ուրիշ տեսակի երգեր:

Այդ ոտանավորի կազմությունը մանրամասն և բազմաթիվ օրինակներով ուսումնասիրված է սրա հեղինակի մի ուրիշ աշխատություն մեջ²: Այստեղ բերվում են միայն դրա հորինվածքի ընդհանուր սկզբունքները:

1. Այս տիպի ոտանավորներն ազատ ոտանավորների մի տեսակն են. ինչպես ամեն ազատ ոտանավորների մեջ, նույնպես և դրանց մեջ չկա տողանց, Ամեն մի տողը կազմվում է խոսքի (նախադասություն) մի շարահյուսական ամբողջական մասից, կամ մի առանձին խոսքից (նախադասությունից), կամ խոսքի փոքր մասերից, որոնք միմյանցից անջատվում են մտքի մի դադարով: Մինևույն խոսքի առանձին մասերը գրվում են, ուրեմն, նաև երկու և ավելի տողերի մեջ, բայց միշտ այնպես, որ տողավերջում դադար լինի:

2. Ոտանավորը կազմվում է յամբական պարզ ոտքերով (Մ'), բայց մեջը խառն գործածվում են նաև անապեստոյան պարզ ոտքեր (ՄՄ): Անապեստոների այս խառնուրդն այնպես է լինում, որ իշխող ոտքը մնում է յամբականը, ինչպես որ ներքեում բերված վիպական երգերի մեջ իշխող տողն է յամբական ութվանկանին: Հակառակ դեպքում առաջ է գա-

² Մ. Արեւյան, Հայոց լեզվի տաղավորություն, հր. 365—376:

լիս անապետայան ոտանավոր յամբերի խառնուրդով: Այս երկու տեսակի ազատ-ոտանավորները — յամբական սլարգտոնյա ազատ ոտանավորն անապետների խառնուրդով, թե ընդհակառակն — սովորաբար միմյանց հետ խառն գործ են անում անխտիր, բայց իրենց թվով իշխող մնում են յամբական տողերը: Հաճախ դրանց միանում են նաև մաքուր յամբական, երբեմն նաև մաքուր անապետայան տողեր, պատահում են նաև այլ տիպի ոտանավորներ, որոնք ունեն անդամավոր կազմութուն: Այսպիսի գործածութիւն յամբ ալը ոտանավորներն իսկապես սուրճառնյա խառն քտանալլորներ են:

3. Վանկերի թիւը տողերի մեջ տատանվում է 1-ի և 16-ի մեջ. բայց 6 վանկից պակաս տողեր քիչ են պատահում վիպական բանաստեղծութիւններին մէջ: Քնարական թերթվածների մեջ նույնիսկ մեկ գործը շեշտոված ու երկար վանկը կազմում է մեկ առանձին տող: Վիպական պատմոված թի տողերի մեջ մի այդպիսի վանկը կարող է անցնել երկու վանկի տեղ:

4. Ինչպես հայերենի ուրիշ տիպի ոտանավորներին մեջ, այստեղ ևս բազմավանկ բառերի անշեշտ վանկերն առնվում են իբրև շեշտված: Այսպես օրինակ՝ տողերի սկզբում քառավանկ բառերի 2-րդ վանկը համարվում է իբրև շեշտված, իսկ եռավանկ և հինգվանկանի բառերի սկզբի երկրորդական շեշտերն ընդունվում են իբրև ութմական շեշտեր: Տողը կարող է սկսվել նաև շեշտված վանկով:

5. Ինչպես հայերենի ուրիշ տիպի ոտանավորներին մեջ, այստեղ էլ եռավանկ անապետայան ոտքին (ԱՄ) կարող է փոխանակել եռավանկ քողարբը ոտքը ('Մ տո'ւն ու տե'ղ), իսկ երկու յամբի փոխանակ գործ է անում նաև քորյամբ (ՄՄ ծա'ռ ու ծաղի'կ):

Ինչպես կարելի է տեսնել, վերևի հինգ կետերից միայն 2-րդով հանկապես բնորոշվում է մեր այս վիպական լափը. մյուս կետերն ընդհանուր են և այլ տեսակի ոտանավորների համար:

Այս պարզտոնյա խառն ոտանավորներն իրենց սխեմայով արձակին մոտիկ են. բայց և այնպես չափածո խոսքեր են: Բովանդակութիւնը հեշտ հարմարվող այս ազատ ոտանավորները, եթե բովանդակութիւն համեմատ հաջող հորինվածք ունին, շատ ազդու են զգացմունքների արտահայտութիւն համար, միանգամայն և բավարար չափով երաժշտականը շենց այս պատճառով վեպի մեջ այս նույն լափը գործածված է ոչ միայն պատմվածքի համար, այլ և երգերի:

Բոլոր պատումների մեջ, հարկավ, միակերպ հաջողութիւնամբ լի-գործածված այս լափը, նույնիսկ միևնույն պատումի մեջ միևնույն ասացողի բերանին երբեմն ավելի կամ պակաս երաժշտական է այս կամ՝ այն կտորը: Կարճ խոսակցութիւնների մեջ միայն երբեմն իզուր կլինէր որևէ լափածոութիւն որոնել: Բայց և այնպես ութման որոշ և ուժեղ լավում է գեղեցիկ պատմվածքների, ավելի ևս մոկաց պատումների մեջ, առանձնապես լավ ասացողների արտասանումի ժամանակ: Գրավորն, անշուշտ,

ճշտությամբ չի վերարտադրում կենդանի խոսքն իր ելեէջներով և իր եղանակավորությամբ: Բացի այդ՝ չպիտի մոռանայ, որ այստեղ գործ ունենք բարբառների ու բարբառային արտասանությունների հետ իրենց արագ կամ դանգաղ տեմպով: Պետք է նկատի ունենայ նաև այն, որ զրի առնողներն ավելի կամ պակաս լսփով ոչ կատարյալ հարազատությամբ են գրել: Այս պետք է շեշտել և այն հանգամանքը, որ ասացողները, երբ բանահավաքի գրելու համար են պատմում, բնականաբար ծանր ու դանդաղ են ասում, նրան հասկանալի դարձնելու համար՝ բառեր ու խոսքեր են ավելացնում կամ փոփոխում: Այսպիսի դեպքերում, հասկանալի է, տուժում է խոսքի լսփր:

Պետք է կարծել, որ հին վարպետների բերանին լսփածո խոսքն ավելի մեծ տեղ է բռնել և երբ արվեստավոր ասացողների տեղ անցել են պատահական ասացողներ, այն ժամանակ վեպի լեզուն լսփածոյից դարձել է արձակ, կամ հին ոտանավորը տեղի է տվել մի ոտնավորի, որի մեջ իշխող է արձակը: Եվ եթե մոկաց պատումների մեջ դեռ ավելի է երևում լսփը, այդ այն պատճառով է, որ վեպն ամենից ավելի կենդանի մնացել է մոկացիների մեջ և վեպն ասող մի երկու վերջին աշուղ ևս, որ հիշվում են մոկացի են: Փոփոխության այս երևույթը, որ վեպի ձևատման և տարրալուծման ստադիաներից մեկն է, միայն մեր վեպի մեջ չի նկատվում: Ռուսաց ժողովրդական վեպն ևս հետագա շրջանում ոտանավորից վերածվել է արձակի: ԵՃԱՊՅԱ ասածները, որ ոտանավոր են, դարձել են ПОСЫВАЛЫЦАНА ասածները, որոնց մեջ իշխում է արձակը:

Ավելորդ չի լինիլ նկատել, որ երգը կամ ոտանավորը մեր այժմյան վեպի մեջ ավելի մեծ արժեք ունի քան արձակն ու պատմվածքը, քանի որ այդ ձևը հնութունից է դալիս և ոտանավորը, որ երգվում է՝ միշտ ավելի դժվար կարող է փոփոխության ենթարկվել քան արձակը. ուստի և ավելի երկար պահել է իր նախնական ձևը: Համեմատաբար պակաս արժեք ունի արձակը, որ հեշտությամբ աղավաղվելով ստանում է գրույցի կամ հերիաթի բնավորություն: Բայց այդ չի նշանակում, որ արձակի մեջ ևս պահված զլինեն այնպիսի հին դժեր, որ ոտանավորի մեջ չկան: Ընդհանուր առմամբ միայն՝ երգն ավելի հաստատուն է, քան պատմվածքը: Եվ այդ տեսնում ենք մեր վեպի մեջ, զանազան պատումների երգված մասերն իրարու ավելի նման են քան պատմվածքները:

Ամփոփելով մեր հանած հետևությունները, տեսնում ենք, որ մեր նոր ժողովրդական վեպը, որ բավականին տարածված է եղել միջին Հայաստանում Հարավից դեպի հյուսիս, նույն կյանքն ու զարգացումն է ունեցել, ինչ որ վեպն ընդհանրապես ուրիշ աղբյուրի մեջ: Վարպետ վրպասաններին փոխանակել են հասարակ անարվեստ ասացողներ, և վաղը մոռացության է տրված, երգն ևս մոռացության է տրված մի քանի պատումների մեջ, ուրիշները մնացորդներ միայն ունեն. ոտանավորը տեղի է տալիս արձակին:

Վեպը հնացել է ու մեռնում է:

195. Վեպերի սկիզբն ու զարգացումը:— Այս խորագրի տակ չի դրվում այն հարցը, թե ո՞ր դարում ո՞ր պատմական եղելությունների ազդեցությամբ սկսվել են մեր վեպերը և հետո՝ ուրիշ ո՞ր պատմական իրությունների հետևանքով ընդարձակվել կամ որե՛նչ ձևով փոփոխվել են: Հարցն արտեղ վերաբերում է այն խնդրին, թե՛

1. Որո՞նք են մեր գրականության մեջ այն սկզբնական վիպական տարրերը, որոնք ծագել են կոնկրետ եղելությունների անմիջական տպավորությամբ տակ և որոնցից հետագայում օգտվել են վիպատունները մեծ վեպերի համար:

2. Ի՞նչպիսի աստիճանական զարգացումով ըստ բովանդակության և ըստ ձևի— ըստ ոտանավորի և ըստ կապարման ձգանակի՝ երգերու կամ արտասանելու— պատմական և վիպական երգերը մեր գրականության մեջ հետզհետե մտնեցել են, դիցուք ժԱպենա Մոնրիա վարիանտներից մեկին:

Ճիշտ է, մեք պատկանություն մեզ քիչ նյութ կա փերևի հարցածին իրականացր պատասխանն ստալու համար, քայք, կարծում եմ, կարելի է որոշ շարժում նշել և ցույց տալ այդպիսի տարրերը և պատմական ու վիպական երգերի զարգացումը հիշված աղբյուրությամբ:

Այդ տարրերն ու վիպական երգերն ըստ ինքյան էլ հետաքրքիր են, և արժե դրանցով դրամովելի աշատել:

196. Լացի ու կոծի երգեր:— Առաջին կարևոր տարրը, որ ծագել է կոնկրետ դեպքերի ազդեցությամբ տակ, դա բարբառ քանաստեղծությունն է, որ հարկնում և ասում էին մեծերների հուղարկավորություն կոծն անելիս ողբասաց կանայք: Մյուսն է կոծում էին ձայնարկու, անշուշտ, մեծերների այլա ճշաշտ համար:

Հնումն նշանավոր մարդկանց, թագավորների ու զորավարների թաղումը կատարվում էր մեծ բարձրությամբ և մեծ հանդեսով: Այս ժամանակ ասան ձևապես աստիկ էին ողբում մեծերին, կանայք ու տղամարդիկ հուղարկավորությամբ մասնակցում էին լալով, երգելով ու նվագելով և ծափ տալով, դեմ ու դեմ պարելով ու կաթավելելով: Արանք երեսներն ու քաղովները ցրտում, պատառում էին, ինչպես մի 20—25 տարի ատաղ մեղնում մահմեդականներն անում էին իրենց հայտնի կրոնական տոնի սգի հանդեսը կատարելիս:

Մոզմես երրենացին շՀայոց պատմության մեջ, հավանորեն վիպատներից ազդված, նկարագրում է (Բ. կ.) վիպական Արտաշես թագավորի թաղումը, իր, ասում է նա, շշուրջ զգրքալուսան ընդին կամաւոր մահանքա. ժամբոխովիներ մեծան ի մահուանն Արտաշեսի, սիրելի կանայք և հարնք և մտերիմ ծառայքա: Այդ մահանքը, հարկավ, սկամավորա շեն եղել:

Փ. Բուզանդը գրում է. «Թորժամ զմեծահարևն լաչին, փողովք և փանդ-
քօք և վնօք զկոծան պարուցն կաքաւելով, զտիգան (կռնեքը) հասեալա,
գերեաս պատաստեալս, սրք և կամայք պղծութեամբ ճիտադուքեանս պա-
րուք զնմ ընդրն հարկանելով և կամ ափս (ծափս) հարկանելով, զմե-
ծահարևն յաշարկէին» (Բուզ., Բ. շա.):

Մեծն ներսեսի օրով Աշորշատի եկեղեցական ժողովով արգելում է
մեծերի կոծը. «Մի... անյուտութեանս քի մկրայ զնացնելոցն ոճիրս գործի-
ցնն լաչեացն կոծոյն, զսաստակութիւնս աշխար դնելոյն (Բուզ., Գ. դ.):
Եվ քրք այս կաթողիկոսի օրով «Ոչ սք իշխէր սանյուտութեամբ ... շալ
զմեծահարևն և ոչ կոծ ոք զնէր կամ աշխարհան սեռելոյն, և ոչ ձայնս ոք
արկանէր ի վեղայ մեծերոյն» (Բուզ., Ե. շա.): Ընտո, սակայն, կոծը միշտ
էլ կատարվել է:

Կոծի մասին շատ տեղեկութիւններ ունենք «Պարսից պատերազմ»
վեպից (Բուզանդի և Ազաթանգեղոսի մեջ), որ ընդարձակ լաչեքով անդ-
րադարձել է ֆեոդալական կյանքը II—V դարերում: Նույն կյանքի ծրե-
վութիւններից մեկն է եղել նաև մեծելների կոծն ու լաչիքը, սր զայն է
շատ ափելի հիւն դարերից:

Մեր այդ հերոսական վեպի բովանդակութեանից իմանում ենք, որ
կոծեր են կատարել մի քանի նշանավոր միպական անձերի համար: Այս-
պես՝ մեծ կոծ է փնտում մարտի մեջ ընկած Վաչն զոսավարի համար: Մոքը
խոսրով քաղաքի որը և բոլոր զորքը (ազատախումբ քանակ նախարա-
րակոյտ զօրացնն) քրազում անձկայրեաց արամութեամբ և արտասուա-
կաթ ողբալք և ծանրաթխախիժ հողով, մեծաւ կոծովք և անհնարին աշ-
խարհօք պաշտրեալք, զգնացնելոցն կարին մնացելոցն համարեալ՝
սգային»: «Ըրիւնէր ամենայն աշխարհին սուզ անհնարին»:

Նույնպես՝ ծրե մեծում է քաղաքանցն աշխարհաշէնն խոսրով, թա-
գաւորն Հայոց Մեծաց, ժողովեալ, աշխար եղեալ, լացին ամենայն
սահմանք աշխարհաց զաւստաց Հայոց Մեծաց. և տարան առ իւր նախ-
նիսն յԱնին յԵկեղեցաց գաւառն Գարանաղեացն (Բուզ., Գ. ժա): Հասկա-
նալի է, որ ամբողջ երկրով անցնող և օրեր տնող այսպիսի հուղարկա-
վորութիւնների ծամանակ՝ բանաւրոյտ ձայնարկուեալք պիտի երգեին
ու վիպեին քաղաքանց քաղաքի կյանքից ոչ քի անպատրաստից, այլ
ստաշուց սրատրաստված:

Տիրան քաղաքի գերեւոր վրեժն առնելուց հետո՝ ժողովում են
նախարարներն և իշխանները, սգործակալք և զօրագոյնք, պետք և
ամենայն աշխարհատողք մարմտութեանն եկելոց կոտելոցնն, քեպետ
և թագավորը չէր մեռած, բայց սԿոծ եղեալ աշխարհնօք լաչին զիրեանց
քնակ (ան) տէրն զարքայն Հայոց. սոքայէս և զկորաւտ աշխարհին, և
զանձանց անտէրչութիւնս կործանմանն վարանացն աղիողորմ գործէին
(Բուզ., Գ. յ.):

Ինչքան էլ Մանուելը մեռնելուց առաջ հրամայում է, որ իր համար
չկոծան, բայց «Հրամանն զոր սայլք յտղազս կոծոյն չրեելոյ՝ այնմ ինչ

որ ոչ անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եղեսլ, մեծաւ աշխարհեց լալին զնա առհասարակ ազատք և շինակաւքս (Քուզ., Ծ. խդ.)։ Մանտոնի եղբայր Վաչեր համար ևս թեմեապէս աշխարս և ըսց է ձղի (Քուզ., Ծ. խդ.)։

Նույն կոծը կատարվել է և Մուշեղ սպարապետի համար, քանի որ Քուզանդը դրում է. «Եւ լացին, թաղեցին զնա որպէս օրն էր» (Քուզ., Ծ. լղ.)։ Իսկ սօրէնքքս, թեմեալի կարգքս, ինչպս ասում էին մեր ժամանակ, հենց կոծն էր։

Վեպի մեջ կոծ հիշվում է նաև Խոսրով Մեծի համար, Մարգասպան Անակին հալածող սմարտարաք հայակոյտ դորացնս ետ են դառնում՝ Ժվալիք, ճրվք և ողբովք, և ամենայն երկիրն ժողովեալ՝ դիպապարի՝ աշխարէինս (Աբաթ.)։ Արժեք ըմնի, հարիսով այն, որ վիպական Խոսրով Մեծ թագապետն ինչպես վարժում էմ, իրապես պատմական անձ ըէ։ Մեծի կոծն իբրև կյանքի անգրադարձում կարող էր պատմվել և ստեղծական հերոսի համար, մանավանդ որ վիպասանները հաճատում են վիպական հերոսների պատմական անձեր զինելուն։ Արաքես և Սասանոս Սոսերիս մեջ Արամելիքի մահից հետո Սասանը իբր սարկի սուղ է անում և սուղի պատճառով տղա ու աղջիկ ընեն պակում։ Բայց ոչ ոք չի կարող, անշուշտ, չըրոթյամբ սրնդել, թե Արամելիքն սա Սասանի այդ սուղը նրա մահվան համար՝ իրական ռեբլոթիոն է։

Արաքես արեանի վեպից հենց արևում է, որ կոծն այդ վիպական շքրքանի կյանքի մեջ մեծ տեղ է բռնել։ Եվ որովհետև ողբն արդով ու նովադով էին անում, հետևաբար կոծի համար երգեր են հորինվել և տարածվել։

Դրանք ժամանակի միակ պատմական հիշատակարաններն են եղել կամ ճիշտ ասած՝ մուշն դերն ին կատարել, ինչ որ մեր ժամանակ լրագրերը կատարում են՝ չուր տալով հղած դեպքերի համար և մահարան (նեկրուոգ) դրերով մշակաւոր անձերի մահվան աղիթով։ Եվ ուրիշ կերպ էլ մտածել կարելի չէ մի ժողովրդի համար, որ զիջ ու գրականութունից զուրկ էր։

Այդ ձայնարկոսների մերքը և նրա հետ կապված գրույցը՝ և ձղել են վեպի սկզբնական աղբյուրները, վեպի տարերքը, որոնցից հետագայում օգտվել են վիպասաններն իրենց ասեղծագրութուն ժամանակ։

Թե ինչպես էին պատահած դեպքերի անմիջական ազդեցութուն տակ կոծի միջոցին հորինվում և ասարածիւրում պատմական ձղերը, այդ էլ փնտնում ենք «Պարտից պատերազմ» վեպից։ Արսեղ մանրամասն նկարագրված է Գնդի կոծը և նրա մտաին շլաչեսց. բուսաստեղծութունը (Քուզ., Գ. ձե.)։

Գնդը, Արշակ թագապետի եղբորդիքն, ամուսնանում է Սրտիքի իշխանի դուստրի, գեղեցկուհի Փառանձմի հետ։ Սրան սիրահարվում է թագավորի մյուս եղբորդի Տիրիքն ևս։ Ես, որպեսզի Փառանձմին ինքն ասնի, ցուցյամբ դրդում է Այդակին Գնելի դեմ, մինչև որ Ար-

շակն սպանել է ապիս Գնեկին: Ապա Վեպի մեջ (Քուդ., Գ. ժե.) նկարա-
պրված է, թե ինչպես Արշակ թագապիտոյի հրամանով կատարվում է Գնեկի
կոծը:

Ապա հրաման եղև յարքային,
սևաճակն մարդիկն որ փցնն ի բանակին,
Մեծ և փոքր առ հասարակ,
Երթիցն, տիցն աշխար կոծոց,
Եւ լացցնն զԳնեկ մեծ սեպուհն Արշակունի,
Ջրսպանեալնս:
Իսկ փեքն թագաորն փնացեալ ի լալիսն,
Նստեալ լայր դեղորորդիս փր,
Ջոր ինքն ետպան:
Երթնայ նստէր մօտ առ դին,
Կայր ինքն, և սայր հրաման՝
Կոծ մեծ և աշխար դեմ:
Շուրջ զսպանելով դիակամքն:
Իսկ կիկն ապանեղոյն, Փառանձեմն,
Ջհանդերձան պատասեալ, զգիսս արձակեալ,
Ընդկատիս ի մեջ աշխարանին կոծէր,
Ձայն արկանեղով շչէր,
Յողոս արտասուաց յաղիողորմ գուժի
Առ հասարակ քամենեսեան լացուցանէր:

Տիրիթը, որ սիրահարված լինելով Փառանձեմին՝ սպանել էր տվել
Գնեկին, հենց այդ սաստիկ կոծի ժամանակ լի համբերում և Փառանձե-
մին համբուսել է իր սեղը:

Պատգամ յղէր առ կին մեռելոյն, առէ՛
Ջի սՄի՛ կարի գանձն թո աշխատ առնէր այդ շափ,
Ջի այր բարի նմ ես քան զնա.
Ես ախրեցի զքեզ,
Վասն այտորիկ ժառանցի դնա ի մտե,
Ջի զքեզ առից փնձ կնութեանս:
Արդ մինչ դեռ վո՞ծ մարտիթեան զդիակամքն ջայլէին,
Ղայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն:
Բողոք բառնայր, թէ՛ սխուարո՛ւք ամենքեան,
Ջի սա՛հ առն իմոյ գլտան իմ եղև.
Ջի որ փնձ ակն եդ՞ վտան փմ քայրն իմ ետ սպանանեիս:
Ջհերն փեռէր, շչէր ընդ կոծելն:
Ապա փրկն մեծ իրքն
Ղամարձակ հայտնեցան
Ի յանդիս ամենեցոն,
Եւ ի ձաթարկութն ամենայն,

Եղև նա մայր ողորցն,
 Եւ ձայնարկուքն ամենայն
 Ի ձայն ողորցն սկսան եռազել՝
 Զիրսն տրփանացն Տիրիթայ,
 Զակն դնելն, զհսութիւնն,
 Զնեարս մահու ճիւղն, զսպանումն,
 Զայնիւքն ամենողոցն ի վերայ սպանելոյն
 Ի մէջ կոծոյն քարբառիկն,
 Գեղզնդեալ խանդադատութեամբ,
 Ի եռուանել իւրեանց ձայնիցն՝
 Իրքն յայտնեալ հոչակ հարկանէր:

Հետագործիրն այն է, որ այս հատվածից իմանում ենք, թե ինչպես
 Գեհիի սպանված վիպր հենց նրա հուշարկավորութեան կոծի ժամանակ է
 հորինվում, երգվում և տարածվում: Այդ այնպիսի ժամանակ էր, որ մի
 սերունդ էլ պետք չէր որ անցներ՝ պատմական երգեր ու գրույցներ հո-
 լիմեղու և տարածելու համար:

Վիպրական պատմական երգերը, ուրման, մասամբ ծագած են հենց X
 այդպիսի կոծի երգերից, և լալալաց քանաստեղծութիւնից, այն էլ վիպ-
 ված եղբուքիւններից անմիջապէս կամ քիչ հետո: Գրանք, այդ երգերն
 անմիջական քանաստեղծական հիշողութիւններ . ին կատարված դիպրե-
 լի: Գրանք հետ միտածամանակ և սրտովն . են եղբուքիւններից, և երգ
 ու գրույց միասին են ծագել:

Կոծի համար, անշուշտ, եղել են նաև հետազանդ երգեր ընդհանուր
 քննախորհրդամբ, որոնք կրկնվում էին կոծերի ժամանակ: Այս քննա-
 նելն անհրաժեշտ է, քանի որ եղել են արհեստով ողբասաց կանայք:
 Նրանք, ինչպես վերևում հիշվեց, կոչվում էին ժայնարկուք, ժայնար-
 կու կուսանք սևազգեստը և աշխարողք կանայք, որոնցից մեկը լինում
 էր տեղերամայր: Կամ սիւայր ողբաց (տես նաև խոր., Բ. կ.): Գրիգոր
 նարեկացին, X դարում, այդ ողբասացների կոչում է քրանահիս (=քա-
 նաստեղծ) կանայք լալականը¹:

Մեծելի քանն սու կոծը (ալալիք կոծոյ), մեծելի կենսադրութիւնից
 առնված քանաստեղծութեամբ, ալալքան մեծ դեր է կատարել հետոք, որ
 հարաստել է մինչև մեծ օրերը: Մեր ժամանակներում անգամ ալալքան
 կանայք, հաճախ առանձին վարձատրութեամբ, հրավիրվել են մեծելա-
 սուն և մեծելի ողբն արել քայտիկներ տակալ: Լուսինիս վարձկան քու-
 սանները շատ տեղերում կատարել են և դեռ կատարում են ողբասաց-
 ների այդ հին դերը: Նրանք ասում էին արվանդական երգեր, հարմարեց-
 նելով դրանք նոր մեծելի վրա, կամ թե նոր երգեր էին հորինում մեծելի
 կյանքից՝ նրա սգովքն անելու համար, ինչպես և կրկնում է այդ երգը:

¹ Մ. Արեղյան, Հին զուսանական ժողովրդական երգեր, Թրանս, 1917, էջ 160, հան.

Պետք չէ կարծել, թե մենքնքի կյանքից առած բոլոր երգերը ձայնարկուներն անպատրաստից են ստեղծել, այլ, ինչպես կոճի հանդեսի համար առաջուց պատրաստութեան էին տեսնում, նույնպես և նրանք կատող էին նախապատրաստել իրենց սլաքեաց քանաստեղծութիւննք, մանավանդ նշանավոր մեծերնքի համար, ինչպես են թագավորներն ու զորավարները:

Պետք չէ կարծել, թե այդպիսի բանաստեղծութեան մեջ իրական պատմութեան անմիտ էր նշգրտող հարազատութեամբ, այլ դա հորինման էր տրոշ յուսարանութեամբ, քանի որ մեծերի զգովքն էին անում, ռաստի պետք է ամեն ինչ ծարկեցնեին:

Թե ինչպիսի են եղել այդ երգերը, մենք այդ չգիտենք: Գրանցից ոչ մեկը չի հասել մեզ: Գրիգոր Նարեկացու վկայութեամբ՝ այդ երգերը հորինվելիս են եղել հայրենի շափով: Գրանք անպայման փոքր երգեր են եղել, կես քնարական ու կես միայական, ինչպես են մեր ժամանակի լացի երգերը, երկու կամ երեք երկաստող տներից—բնթիւնից կազմված, ինչպես են XIX դարի լացի անտունիները², որոնք նույն հայրենի շափով են և քայիս են մեծ մասամբ հին ժամանակներից ի վեր: Երկաստող տներով միտ բնթիւնով հորինվածքն այնքան հստակ է եղել այդ կապի երգերին, որ արայաթիւս (—բնթիւն) քառն ստացել է մասն բաների ողբի երգն նշանակութեամբ, մինչդեռ այդ քառով անվանվում են առասպալակ բնթիւնից կազմված փոքր երգերը, ինչպես են մեր ժողովրդական քառյակները:

187. Գոսանների սկզբնական պատմական երգեր:— Երկրորդ և ավելի կարևոր առարկա, աղքատները վերջի համար եղել են գոսանների վիպական ձրգերը, պատմական երգերը, որ ապիւն են ամենահին ժամանակներից ի վեր խնդուցների, ուրախութեան ժողովքների, քինարքունների ժամանակ: Եվ այսպես ոչ միայն մեր, այլև ուրիշ շատ ազգերի մեջ:

Լայ աքնվակամութեան գրիստեր պաշտարանները, երբ նա պատերազմ չի ունեցել, երբ է տրտի հետ և խնդուցք: Նախ ղինում էր հացկեցուցիլը, հետո ակվում էր գիհարբուր (խումը), գոսանների, վարձակների (կին գոսանների) նվագով աւ գոսանական երգերով, և տախացողների սպարով (կերտ պարով) աւ կաքսով: Այս ծրեքը՝ նվագ, կերտ ու կերտ սպար վան կաքսով մտնում էին ազնայականների կենցաղի մեջ իրրե անհրաժեշտ պարման տչ միայն կոճի, այլև խնդուցքի ժամանակ:

Խնդուցները, գոսաններով կատարած ուղտառութեանները, նույնպես մտնում են վեպի մեջ: Պապ թագավորին սպանում են խնդուցի ժամանակ, երբ նա քնալէր ընդ պէս պէս ամբոխ գոսանացն (Բուգ., Ծ. 1ր.): Խնդուցի ժամանակ են սպանում և Մուշեղ սպարապետին (Բուգ., Ծ. 2ե.):

² Տե՛ս Մ. Աբելյան, Գոսանական ժողովրդական արգեր, Երևան, 1940, կր. 287, հոմ.:

Յի վերջապէս Արշակ Թագաւորն ինքնասպան է լինում, երբ Գրաստամասն Պարսիս անէր զնա գուսանօց (Բուգ., Ե. է.):

Բացի ուրախութիւնն, որ է՝ գինու և ախրու երգերից, գուսանները երգել են նաև հին վիպական երգերը, հին սեբոց ասասպելաց, ինչպես նույնն արել են նաև այլ աղբերի մեջ՝ Գուսանները միաժամանակ և հորինել, և ասել են ոչ միայն ուրախութիւնն, այլ նաև պատմական արգեր, ինչպիսիք և ուրիշ վիպական արգեր տւ վիպեր: Այս վերջին դեպքում նրանք կոչվել են վիպասան: Եվ ի պատմեան ուրիշ արվեստագետ շէ. բայց անքան վիպական երգեր հորինող և ասող գուսանը:

Մեր պատմական հիշատակաբանները մեջ շատ քիչ վկայութիւններ անք գտնում այն մասին, որ գուսանները պատմական արգեր հորինած չեն և կատարած դեպքերի անմիջական աղբերցութեամբ, լինելու մեջ են մայրաքրոններ կոծի երգերը:

Այս նկատմամբ մի շատ կարևոր վկայութիւն ունենք Մ. Խորենացոյ Պարսից պատերազմի ժամանակու հետո Արշակի մասին ևս պատմելով, թե այս Թագաւորը չի սրաստարանում հոռմայեցոց կայսրի թոթին, ավելացնում է. «նշկահեալ արճամարհաց զնոսա (= հոռմայեցիներին)». նաև ոչ զհետ Եսպարտի միտեցաւ ամենայն արախ, այլ ամենահաճեալ եղեալ՝ պարծելով հանապազ ի գինարբուս, և յերգս վարձակաց քաջ և արի երեւալ քան զԱրիլիս, իսկ արդեամբք Քերտիտեալ նմանեալ կադի և սրագլխոյ (Խոր., Գ. ԺԲ.):

Այս հասկանալի տխուր կենսադրութեան պատճառով մինչև այժմ ուշադրութեամբ չի անվաճառ Տպագրութի մեջ սգինարբուս քառից հետո ոչ մի կետ չի դրված, իսկ սվարձակաց քառից հետո, ուր ոչ մի նշան չկիրառի ինչի, դրված է միջակետ: Արաքսով ստացվում է այս յառանգութիւնը: Արշակը բարձր տեղ չդրեց, արճամարհաց. նրանց (= հոռմայեցիներին). նաև Եսպարտի կողմն էլ չհակվեց քառու արտով, այլ ինքնահալան դարձավ, պարծեալով միշտ գինարբուցների ժամանակ և վաճակների երգերի մեջ. Արիլիսից ավելի քաջ և արի էր երևում, բայց արծեթով նմանում էր կազ մ սղադուսի Քերտիտեալն: Արաքսը կարող էր պարծենալ գինարբուցների մեջ, այսինքն գինարբուցների ժամանակ, քաջ սվարձակները (կին գուսանները) երգերի մեջ պարծենալ, դա անհեթեթութիւնն է:

Անշուշտ այդ է եղել պատճառը, որ Խորեն Ստեփանն այդ հատվածի վերջին մասը աշխարհաբար թարգմանել է այսպես՝. «Այլ ինքնահալանութիւնով միշտ պարծենում էր ինչպիսիքների մեջ և երգի կառնաց մտ. Արիլիսից ավելի քաջ և արի քառու արտով յորան, նա իսկա-

3 Մանրամասնութիւնները տե՛ս Մ. Արիլիս, Հին գուսանական մոզովորական երգեր, Եր. 173, հտե.:

4 Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց Խորեն Կար. Մանրամասն, Բ. տղ., Ս. Պետերբուրգ, 1897:

պեն նմանում էր կազ և սրազուրիս Քերպիտեպին։ Այն կողմ թողնելով ուրիշ անճշտութիւններ, պետք է ասեն, որ քնազգի շէրքս վարձակացո (վարձակների երգերի մէջ) երբեք չի նշանակիլ տերգիլ կանանց մոտո ինչպէս քարգամանել է Ստեփանեն՝ վերեում հիշված անհեթեթութիւնից զերծ մնալու համար։

Այդ կտորը վարելի չէ և արնպես հարկամալ, թե Արշակն արհամարհելով և հոռմայիցոց կայսրին և պարսից թագավորին՝ սպարծնեում էր զինարարութեանով և վարձակների երգերով։ Նրա պարձանգի հիմն էր իր «քաղութեանը», որով շէր վախենում հարեւաններից, և ոչ թե գիւարբոսն ու վարձակների երգը։ Թե սի պիւարբոսս պետք է հասկանալ «գինարարութի ժամանակ», որան ստացուց է և հետեւելը։ Մ. Խորենացին (Գ. փո.) արտառում է, թե մի օր Արշակը որս է անում. «տեղալ արսաստիկ. ուրախացեալ Արշակ ի զինիս պարծէր, տլ այլոյ տարուք ի թագաւորոց մասն քան զնա սնտ(ուց) անել արնչափ քաղմութիւն նորոց ի միտմ ժամուռ։ Այստեղ «գինարար» նշանակում է «գինարարութե», զինելիսում և ոչ՝ «գինարարութե», զի զինիս» նշանակում է՝ «գինարարութե ժամանակ», նուրնը՝ յնոյ որ սի գինարարութե։ Ոտարի Ստեփանենն ախալ է քարգամանել. «և գինով ուրախացած, քաղավար պարծնեում էր»։ Այդ հասովածի նշքս քաղավարութեանը հետեւաբն է. «Շուտ որս նշքսլ, Արշակը (որսի վրա) տարախացած՝ զինարարութի ժամանակ պարծնեում էր, (թե) իրենից առաջ իրած քաղավարներից ոչ մեկն այնքան շատ էր չի ապանել մի ժամում։ Ինչպէս հայտնի է, մեր ազնվականները որսից հետո խնջուք էին անում և ապրճ հացն ոտեղուց հետո՝ գինարարութե Արշակն ահա գիւարբոսի ժամանակ պարծնեում էր իր որսով։

Այսպէս տարնն, վերելի կտորը կարելի չէ քարգամանել, թե Արշակը սարսիծնեում էր զինարարութեանով և վարձակների երգերով»։

Արդ, «ի պիւարբոսս հասկանալով՝ «գինարարութե», «գինելիսումի ժամանակ», պետք է ջնջել վերեում դրված հատվածի մեջ միակետը սպարձակացոց թարից հետո և ատուպակետ դնել «գինարարութե» բառից հետո։ Կով կետարարութեան այդպիսի ուղղումով այդ հատվածն առանում է մի վարեար նշանակութեան. «դրանից իմանում ենք, որ «իւրնահաւ դարձած Արշակը պարծնելութեան էր անում զինարարութեանի ժամանակ, և վարձակների (կրն գոսանների) երգերի մէջ նա քան և ապի էր երեւում

5 Այդ հատվածը Մ. Խորենացու վեներիկան տպագրութեան մէջ ազնապատ թրքի այդ՝ «ի զինիս» բառից հետո դրված է թախ նշանը, որ և շիրթեցրել է Ստեփանենին Արհատում ուղղված է Տիգրիսի 1913 թ. հրատարակութեան մէջ, որ կտարգրված է «աշխատութե» Մ. Արեղիտ և Ս. Հարութիւնեան. քննարկը կազմել է Մ. Արեղյանը։

6 Ազգայնագիտի «Հայոց պատմութեան» մէջ և «գինարար» բառը «գինարարութե» իմաստով գործածված կա հետեւյալ տեղում։ Տրդատն Անահտին զոհ անելուց հետո՝ «չրեթրին» բազմեցու, և իբրև ընդ զինիս մտիէն, հրամայում է Գրիգորին, որ պատկենելիք տանի Անահտի թագին, «Երբև ընդ զինիս մտիէն չի նշանակում տերը հարբեցին» և՛ «եբբ» զինարարութե սկսեցին։

Անթիլնախց ավելի, քայց իր գործերով նմանում էր կաղ և սրագլուխ Քերտիտիսին: Կնշանակե՞ գուսաններն Արշակի վրա հողիմած են եղել հրգեր, որոնց մեջ քնագավորը գտնվում է իրեն քայ և աղի, որ և երգում էին գինարքուքների ժառանգակ քնագավորի իրեն ներկայութիւնում:

Այդ գուսանները եղել են պաշտարական երգիչներ, որոնց և քնագավորի կենդանութիւնում, անպայման հաճախ և նրա պատմելով են բանահայտանք:

Երգիչներ ունեցել են նաև նախարարները: Տրդատ Բագրատունու վեպի մեջ (կոր., Բ. կգ.) հիշվում է Սյունիքի Բակուր նահապետի նագիւնիկ վարժակը, որ անբռն անասմբա ի պատիւ Տրդատին տրված ընթրիքի ժամանակ:

Այդ պրոֆեսիոնալ պայտական գուսանները խոփել տւ պատմել են ոչ միայն իրենց մեկնանասների համար, այլև երգել են հենց իրենց, քնարտանելով նրանց իրեն քաջարի հերոսներին: Դրա համար գուսանները ժողկենցում, մեծացնում էին հովանավորողների արարքները, հարկավ, հիմնելով գլխավորապես իրենց տեսածների ու յատմենքի վրա:

Քայց այդ երգիչները, փնչպես վեպից տեսնում ենք, իրենց երգերի մեջ, հիմնվելով անհանգսթիւն տւ գրույցների վրա, ներշնչվելով անպայման և հին կոտերի ու սխալական երգիչից, քնարարտում էին մասն իրենց հերոսների նախնիքներին, նրանց ատմել հին մարդկանց:

Քն փնչպիսի անով ան հորինված մղել այդ ակերտական պատմական երգերը, մենք այդ շփումներ: Այդ տարրական երգերից վլ քառացի տղինչ չի մտածել: Դրանց ձևի մասին զարգացար կարելի է կազմել մուշ տեսանքի մի քանի տարի խոփելից, որ տեսում ենք ներքևում:

188. Անոնի երգը:— Ոսենք մի պատմական փոքր երգ, որ հին ժամանակ գրի առնված լինելով՝ մնացել, հասել է մեզ: Դա այսպես կոչված յկնոնի երգն է, որ պատկանում է նույն վիպական շրջանին, ինչ որ տեսանա Մուրնա իր պատմականութիւնում զարգացման վերջին էտապում: Այդ երգով մտտութիւր զարգացար մնց կազմում մեր գուսանների պատմական երգերի ակզմեսկան ձևի և ժազման մասին:

Անոնի երգը, փնչպես նման երգերն տարիչ չազգիքի մեջ, տմնի բնութական-վիւղական բնավորութիւն, հորինված է մի պատմական իրողութիւն վրա, որ հետևյալն է: Եզիպտոսի Բիքարս կամ Յնդիտար տողթանի դեմ վարած պատերազմի ժամանակ Կիլիկիայի հարց Հեթում Ա քնագավորի մի ուղիին՝ Քորտալ սարանվում է, իսկ մյոսը՝ կնոնր քերի է ընկնում 1266 թ.: Հայրը՝ Հեթումը՝ Հալեր քաղաքը փրկանք է տալիս Եզիպտոսի քնագավորին, մխտամանակ և միջնորդելով քնագավորան գերութիւնից ազատել է տալիս Եզիպտոսի մի հայտնի զորավարի, և դրա փոխանակ Եզիպտոսի տողթանն էլ քնագավորանից ազատում է կնոնին, որ հետո, 1270 թ. դառնում է Կիլիկիայի հայոց քնագավոր: Այս դեպքի մա-

սին ահա հորինված է հետևյալ ձրգը, որին վերնագիր է դրված՝ «Ի Լէոն տրդի Հեթմոյս».

Աւա՛ղ զԼէոնն ասեմ,
Որ տանկաց դուռն ընկել գերի:
Իմ զտա, իմ լուա, ու աուրք կոյ,
Աուրք իստն օգնակամ Լէոնիս տւ ամենուս:
Սուլթանն ի մոտոսան՝ ելել,
Իր սակի գոնետըն կու խաղայ:

Խաղաց, ի Լէոնն երես,
«Ա՛ն խաղա, ու տուր դատայիդ՝:
Լէո՛ն, դու տանիկ լինիս,
Ես տւ իմ տաստաս² քն գերիս:

Լէոնն ի փնդդին նստել,
Դաստորտակն՝ աշիցն ու կուլայ.
«Քեզվանդ՝ որ ի Ան կ՛երթաս,
Դուն խաղադ տանիս արայայիս³».

Ոնց որ արայն⁵ այ զայն լսեց.
Շատ հեծել հանեց ձրամով.
Նկամ ի Սուլթանն ելամ⁶,
Շատ գետեր իհան, արքունեց:

Իսո զիր Լէոն տրդին,
Ու հասամ արտին մոլդատին:
Իմ լուա, իմ լուա, ու սուրք կոյ, և այլն⁷:

Այս երգի մեջ եւ, յնչպէս «Սասնա Մռերի» մեջ, այլազգի մահմեդականները, իսկապէս Նգիպտոսի (Մար) մելիքները, հանդես են գալիս նույն ընդհանուր բառերիկա անուևով: Այստեղ էլ, յնչպէս միջնադարում, ընդհանրապէս թե կյանքի և թե վնայի մեջ, հարաբերությունները մեծ մասամբ կատարվում են կրօնական հիման վրա: Սուլթանը, ըստ երգի, սկզբում լամ է վարվում գերի Լեոնի հետ և մինչև . անգամ նրան մատնակից է անում իր գուկի գոնետ խաղին (որ նույն խաղն է, ինչ տր Մարտինելի տ Դավիթի հոլ-գոնետ խաղաղը): Հետո ասուլթանը նրան առաջարկում է հալվաւն ուղարկել, և ապա բանտարկել է սալիս նրան: Կրօնական սարքն ուժեղ կերպով արևտն է գալիս նաև իրգի քնարտարան մտաի անջ, իմ լուա, իմ լուա; որ վերկնելում է ամեն արկատողերից հետո:

1 Սասնա—մեյգան, հրապարակ: 2 Տատա—հայր: 3 Դաստորտակ—թաշկինակ: 4 Քերվանդ—այ քարվան, կարավան: 5 Պարայիս—հորս, պայն—հայր: 6 Ելամ—հարևակից: 7 Տէ՛ն Ա. Ա. Միւրեղաբունց, Քնար հայկական, Ա. Պետերբուրգ, 1888, եր. 136, հտե.

Այս երգը, բացի կրկնակից, հորինված է իր ժամանակին շատ սիրոված հայրենի շահով, երկատող տներով-քնիթերով, որոնց մապակցութեան ըստ բովանդակութեան՝ բազմազան թույլ է։ Ո՞նք պարզ ու հաստատակ է, փնչակն ընդհանրապես ժողովրդայնուն արգելի։

Երգի մեջ պատմական անցքը չի հանձնար իրական եղելութեան նման, այլ փոխված է երգչին հոգեանավորող իշխանի ցանկացած ձևով։ Գեղի ըրգին լուր է ուղարկում հորը, Հայրը և երեխան գերութեանից ազատում է ոչ թե փրկանքով, այլ մեծ հեծելազորով հարձակվում է տուրքանի վրա, մեծ արյունահեղութուն է անում և տրամադես հառնում իր և երեխան։

Զարեք վ՛ մոռանալ, որ երբ ասում ենք, թե այս փնչ լիարկական երգը պատմական է, — կամ երգի, վեպի պատմականություն, — այդ շարտը է երբեք հասկանալի այն մտքով, թե մտքի կամ վեպի մեջ հարստացած ճշտություններ պատմված է կատարված եղելությունը, այլ պետք է հասկանալ այն մտքով, թե երգը հիմնված է մի մատարված իրողութեան վրա։ Հանախ մի արևու զինն ան իրական պատմական, մեացածը եղելութեան քանապատկական մշակությունն է, վիպասանների մտքի և իրականությունն իրական մանրամասնություն, այլև զարգացած — խոստովան նկատմամբ։ Բայց ամեն փնչ, հարկով, հարկման ժամանակին ոգով։

198. Ուրիշ պատմական երգեր։— Յավոք մեզ շնն հասել ուրիշ նման պատմական երգեր, անշուքս, այն պատմաբանով, որ քերականի լինելով՝ մոռացությունն են տրված։ Բայց որ ուրիշ այդպիսի երգեր եղել են, այդ մասին կասկած չի կարող լինել, Կա XIX դարի վերջերին զրի անվանած մի փոքրիկ պատմական երգ ևս, «Մարա թալանի» երգը, որ դստիս է նույն ժամանակներից, ինչ որ «Լեոնի երգը», և վերաբերում է։ Մարա սեղանների փրկանքովյան անկմանը Հայաստանում։

Սկսած XV դարից, և՛քը հայկական անկախությունն ընկնում է, ըստ կանարայի հետզհետե պակասում են հայերեն լեզվով երգերը պատմական նշանավոր նշանություններին անտի, և հին ավանդական երգերն էլ մոռացվում են։ Բայց այդպիսի հայերեն երգեր հորինելու արվեստն ու պահանջը չի վերացվում։ Եստիկան 1880-ական թվականներին մայրին և խիստ սիրված էին մի քանի բուրբուխի նոր հորինված պատմական երգեր 1878 թվականի ռուս-տառեկական պատերազմի զրբանից Տեր-Ղուկասովի և Կոստյա-Մեդրալի մասին։ Կամկուսար Լայնագրած ոմի զբանցից մեկի անկանակը, բերելով բնագրից միայն նշանա տող՝

Օրդան քաշեց աստի հովր
Տերախնն Տեր-Ղուկասով։

Ք 36՝ Մ. Արմաշի, չին ցուանական ժողովրդական երգեր, էր. 198. Գան
Ք 36՝ Կամկուս, Փողովրդ, երգեր, Հայ. Նառագրությունից փոխադրելի Մ. Մեդրալի, 1881, էր. 26.

Տարեբերիս գրողը հիշում է Կարսի առանձնական երգից միայն երկու տուն և կրկնակը: Այդ երգը երգվում էր դեռ 1890-ական թվականներին: Կրկնակն էր.

Վո՛ւ-վո՛ւ, վո՛ւ-վո՛ւ, Մե՛լիքով,
Ղուշումի սարգար Մե՛լիքով:

Այս կրկնակն ասվում էր ամեն երկատող աներգից (տեքսթից) հետո, որոնք են՝

Ջեյրան փտփեր մապեցին,
Կարսա վրեն թախեցին: Վո՛ւ-վո՛ւ, և այլն:

Նախա բոլոր խոսեցաք ա,
Մեյը գյուլի ջանգաք ա: Վո՛ւ-վո՛ւ, և այլն:

Այս երգերն, որոնք իրենց ժապտումով ժամանակակից են երգված իրարաթյամբ, հորինված են նույն արվեստով, ինչպես Վեսնի երգը, միայն ստանալովորի շահը տարբեր է:

200. Տեղական պատմական խաղեր:— Ինչպես տղիչ քանահայտական տեսակների վերաբերմամբ շինու՞մ է, պատմական երգեր հորինելու և պահելու ասվան դոգմը նև հարստանում է գրողացու մեջ, Գյուղացիական միլիտարիզմում հորինվում և երգվում էին փոքրիկ խաղեր, հին տեքստերով՝ «խաղ երգաց», բարբառային ստեղծական ընդհանր ոճով հիմնված ստեղծական տեսակների մեջ: Այդպիսի երգեր, առարարաբար իրենց փառս ձևակերպելու պատճառով, բառական սիրվում տե տարածվում էին: Այսպես, օրինակ, երբ տեղում աչքի ընկնող մեկը ասանվում էր կամ խեղդվում, մյսմ մի հարմար աղջիկ էլն վախցնում, և ահա այդպիսի փոքրիկ համար հերոսի վրա ժխաղ էին մատնում, հին տեքստերով՝ «չեր էին հանում», առանց հորինում էին մի ետք ձևակերպ, մի ետք առանձին կրկնակ և մի քանի քառյակ խաղեր, որոնց մեջ պատմվում էր կատարված երկուգիտներ: Իսկ կրկնակով արտահայտվում էր երգից ցածրունքը և վերաբերմունքը կատարված դեպքին ու նրա հերոսին: Եվ պատրաստ վր քնարական-լիարական փոքր երգը, սպասմանակա՞ն էր, որ իրեն էր քաշում համանման ուրիշ խաղերից ևս քառյակներ, որոնք և առիթարարաբար առանց որոշ զստավորումների ու հաստատուն հարբորության իրան երգվում էին¹⁰:

Այսպիսի երգերի համար իրան օրինակ կարելի է թերեք այստեղ Գուլարեցի Արշակի խաղը, որ շատ սիրված և տարածված էր XIX դարի վերջին քառորդին և մինչև 1910-ական թվականները: Այդ գրողացին,

¹⁰ Տե՛ս Մ. Արևիլյան, Ժողովրդական խաղեր (ուպամբ), Վաղարշապատ, իր. 78, համ.

իր տեղում մի հայտնի կտրիճ երիտասարդ, ցուրտ աշնանը նազակով
մենակ ձուկ բռնելիս է եղել Քալլոյ գլուխում (հին՝ Քալլատվա լիճ), շուրջ
սառչում է, և նա մնալով նազակի մեջ՝ գիշերը ցրտահար է լինում, մեն-
տում: Երգն սկսվում է Արշակի կին Սալաթին ուղղված երկատու կրկնա-
կով, որ ասվում էր նաև յուրաքանչյուր քառյակից հետո՝

Շորորա, Սալաթ, շորորա՛,
Նազակն (վ. լողկեն, դալըղն) Արշակին կ'օրորա:

Արշակն եկավ, ծովը գնաց,
հեղճ Սալաթին ցավեի մնաց.
հարար տարեք խեղճ Քամամին¹¹,
Արթեյի¹² տուն ավեր մնաց:

Քամին ելավ օրան երան,
Նավը գարգալ ծովի տեղան.
հարար տարեք իմ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մնաց վերան:

Երկինք ամպեց, քամին արավ,
Մովի հրեա բուրբ տառավ,
Քիսկ գարկի, վնչ տը արի,
Նավը տեղեն ետ շարավ:

Ըս Արշակն իմ Գուլաբեջի,
Գիշեր ցերեկ ծովին կացի.
հարար տարեք իմ Սալաթին,
Հնար շեղավ, նստա լացի¹³:

Այս էլ մի պատմական երգ է, մի պատահած զիջվածի մասին, բայց, հարկավ, շատ մեծ շրջանի գլուղակաև պատմական ինքս: Դա իր ծարրամով և արվեստով նույնն է, ինչ որ միջնադարյան պատմական երգը և նաև գեղարվեստական մասին, միայն վերջինս հորինված է իր ժամանակի տիրված հայրենի շահով, իսկ ասացինը՝ մեծ ժամանակի քառյակների շահով և սրանց հանգրի սիրված դասավորությամբ — առաջին, երկրորդ և չորրորդ տողերը նույնահասակ, իսկ վերջուրդ տողն անհասակ: Գրանց երկուսն էլ պատմական երգերի սկզբնական փոքր տեսակներն են՝ պատմական խաղիւր «խաղիւր երգը» մաս շնեւ:

201. «Մոկաց Միրզա»¹⁴:— Պատմական երգի համեմատաբար մի ավելի գարգացած մեով է արքա Վրգը, որ նույնպես միջնադարյան մի երգ:

11 Մ-ը տեւեր:

12 Հոր տեւեր:

13 Տե՛ս Վալիստե և Մ. Արիլյան, Հազար ու մի խաղ, ժող. երգերան. Ի հիշակ:

49-րդ էրգը:

14 Տե՛ս նույն տեղում, 50-րդ էրգը:

Ք. Գրա հետզօրոնք երևում է և սողերի վերջում «ենչ (մի քանի տողի վերջում «ինչ») հանգրի միակերպութունից, որ սիրված էր միջնադարում: Դա դեռ քնարական-վիպական եզր է. տեևի կրկնակ՝ «Հազար ասիստ Մոկաց Միրզան», փնչպես և «Բեմոզազ կեննր Կորտ փաղեն», որոնց մեջ «երևում է նորոյն վերաբերմունքը դեպի գործող անձերը: Բայց դա արդեն փոքր եզր չէ, և նայելով վարդանանդին՝ ավելի կամ պակաս շտապով մեծ է: Դա ըն հողինված տը հայրենի ըստի երկատու տեւրով (քեզքերով) և տը ժողովրդական իսպի քառասկներով, որոնք նրկտան էլ, երկատու տուներ և քառասկը, հաստուկ են ստանձնապես քնարական երգերին: Գրա մեջ գտնում մեք արդեն այն վիպական շափր, աքստ տտանալորները, իշխող ութվանկանի սողերով, որ ունենք և մեկ հին աստապելներին, հին ու նոր վեպերի մեջ: Երգը բաժանվում վ 3—9 տողերից կազմված վիոֆե հատվածներին, որոնցից հետո սալում է կրկնակը:

Գրա բովանդակութունը դեռ փոքր է, մեկ դիպված միայն, ինչպես մեծ վեպերի մեջ պատմված մեկ նախդող, մեկ միջադեպ: Ձևով ու բովանդակությամբ, ուրեմն, մտտեւում է արդեն «Սասնա Սոերին»:

(Մոկաց Միրզան Ջղիրն քաղաքից մի ասիրով գլխած հրավիր է ստանում. նա փր ձին հեծնում, գնում է այնտեղ: Իսաչի ժամանակ Կորտ փաղան Արան թոմնալորում է. նրա դիակը քերում են Մոկաց Մաշաքովա քաղաքն ու այնտեղ թաղում: Պատմությունն այս նորի մեջ վարգաքրած ու պատմված վ ավելի մանրամասնորեն և ավելի շարունակական ձևով, քան նախորդ սերի երգերի մեջ է: Ուրեմն և իր տտանալորին, և իր պատմելու ձևով դա ավելի վերական քնալորութուն ունի: Բայց և այնպես երգիչը դեռ հանդիստ պատմել շփտել: Երկրորդ մասը նա ստում է նույնիսկ փր կողմից, և մեջ է բերում փր վերաբերմունքը դեպի Կորտ փաղան ու Մոկաց Միրզան:

Ինք շտաննր Կորտ փաղեն,
Բամն էր կորտ, բըրյամ երկեն...

Ընդհանրապես՝ Մոկաց Միրզան վեր է հանված մեծ համակրությամբ, և նրա գեղեցկութունը ցուցադրված է իսկական միապական եղանակով:

Կանչեց ասաց փր մըշակին.—
— Դուս քաշի Բող-Բեղալին,
Վըրա դըրեք թամքը ասդաֆին,
Սաֆար կներթամ շուր Ջըղերին,
Գրնաց, հասավ շուր Զամբարեն,
Խաթուններ թափան փանջարեն,
Թափան Մոկաց Միրզի թուճաշեն,
Զկեր փր նըման քորդ դունին:
Դնաց, հասավ շուր Ջըղերին,
Ծկան, ժողվան քաղաք գըմեն.

Մոկաց Միրզան'
Կարժեր քաղաք զըմեն:

Բանաստեղծը Մոկաց Միրզի տխուր պատմությանը հակադրում է կանանց պարն ու զվարճությունն այն ժամանակ, երբ մեռած կտրիճի դին բերում են Մալաքայի: Հետաքրքիր է և գերեզմանը, սր նախնական Ան ունի:

Ճկան, ժողովան մոկացիք,
Եկան մոտ Մոկաց Միրզեն:
Տարան, զըրկն մեջ պողերուն¹⁵,
Գուտն էլ բացին հարսով քամուն:

Կացեք բարով
Հազար տարով:
Քանգ նազու խան¹⁶
Քող տան էրկան:

Այս երգի մեջ պատմված դիպվածը շենք կարող համեմատել ոչ մի փրայեա պատահած հեղեղության հետ միայն այն պատճառով, որ սրատմական հիշատակություններ չունենք (Մոկացիների մեջ պատկած է ազանդություն, որ այդ Միրզան ձեռն է Մոկաց իշխաններից, գուցե և վերջինը: Նա նաևել է Մալաքայիում) որի ավերակներն էին ցույց տալիս XIX դարում, և սեր էր մեղել գերդին: Երգի մեջ էլ հիշվում է նաեւր:

Խաբար տարեք Մալաքային,
Խաբար տարեք քերդի խաբուհին¹⁷.
Քող քա վար փր թախթեն.
Հանն թաղան,
Հազնն զհին,
Ինչի՞ բերդի խաթուն է էն:

(Այս ավանդությունն ստում է, թե Ջզիրն քաղաքի թուրք Փաշան նրան ախրով մատակ է գրում, մասնաբաժնով փր մոտ, և նենպությամբ թունափորում: Այս պատմական երգի մեջ պահված է, ուրեմն, մի հաստից դնպի հիշողություն, բայց դա ունի միաժամանակ ընդհանուր պատմական գույն էլ: Գրա մեջ հանգիստ է բազմաթիվ նույնամանակ մեղեդիական ներքին ընդհանուր պատկեր, ինչպես մի համապատասխան ընդհանուր պատկեր, որտեղով օտար բնասարտները, ամենադին ժամանակներից փ վեր, գանազան միջոցներով ուղիւղանել են տվել տեղական հայ ազնվականությունը:

15 Ժայռերի մեջ:

16 Կեռք անուն է:

17 Միրզայի կնոջը:

202. «Կարոս Խաչ»¹⁸։— Այս կրօնական զինպակտն երգն ավելի-
ևս ընդարձակ ու զարգացած է, քան նախորդը։ Ռա ևս ունի քնարական
մաս՝ «Սատա կ'ըջինեմ Կարոս Խաչին» կրկնակր։ Հատվածներն այստեղ
ավելի մեծ են, կազմված են 4—20 տողերից, որոնք, սակայն բացառու-
թյամբ, վերջանում են «ինչ հանգով, ինչպես միջնադարյան քերթված-
ները՝ մեջ, կազմված է սկզբնային իրարուց անկախ մասերից, ինչպես
«Սասնա Սոճոր» մեջ զատ հատվածներ։

Քե որքան հին է այդ երգը՝ կարելի չէ որոշել։ Բայց դրա թուվանդա-
կողման աստիճանն աման վրոն անկախ կրկնակն գրույց գտնում ենք
արդեն Սահփանոս Օրբելյանի պատմության մեջ (XIII դարում)¹⁹։ Նա
Միսակունի (այժմյան Միտիանի) վանքերի մեջ նորոգող տեղում գտնում է
կենդանոցը և դրա մասին բերում է հետևյալ պատյցը։

«Ապա կենդանոց, զորմ է ասան՝ Մանկուց անդեճորք արած էին շոյիլա-
նզանց, և սկսան խաղալ։ Կտրեալ²⁰ կնիւն²¹ մի և արարին խաչ և եղին ի
վերայ քարի մի և սկսան կրկրպագել և ասել՝ «զոր ինչ Երեցն ասէ և
ընձնու, այն ի վերայ քո եղիցի. և յայց եզանցս այս երեքս քեզ մա-
տաղ եղիցիս։ Եւ զոր նորա ընդ խաղս աղբին՝ հոգին ստտուած իջեալ
տնօրինէր մտնուլիս։ Ապա ի ժամ երեկոյին սկսան զնալ, և թէպէտ ջա-
նացին՝ զայն մտկրեալ մատաղսն ոչ կարացին յարուցանել ի տեղոյն.
զնացին և ազդ արարին տէրանցն. և նոքա Եկեալ ոչ կարացին շարժել-
և հարցեալ զբաւանտն ի մանկանց՝ խոստումանեցին զուղիղն։ Կոչեալ
այնուհետև քահանայս՝ որոնեցին զխաչն և զննին զեղինսն և պատուեցին-
զտեղի կնիւնին։ Ազդ լինէր այս իշխանացն Սիւնեաց, և դային ի տնու-
թիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղոցն, և սահմանեցին զնա տուն
կրօնատոյաց. յայց զտեղին կնիւնին թողին յի մէջ Եկեղեցոյն փոս մի-
որտեալեայեայ. և մինչ յատր տեղոյն ձեթ քղիւնը ի փոսույն այնքան՝ զի
ասար ձիթոյ ոչ կարուտանային. այլ Եկեղեցոյն կանթեղոսնքն նուրա կն-
րակրիւր. և դեռ ևս կայ Եկեղեցին և տեղի կնիւնին, և խաչ ևս, որ-
վկայենն անտուտ զոչս։

(«Կարոս Խաչ» մեջ պատմելով է, որ հոտաղները դաշտում մի բոզ
խաչ ան շինում, երկրպագում ան նրան. խաչի մեջ զնորք ու մատուց է
իջնում, թորում գնում է Կարոսի (նեխուրի, քարավաղի) սածուկ մեջ)
տրից և իր անունն է կոչում։ Քահանայն նրազով յմանում է այդ, հայտ-
նում է այդ մասին ունիմ փշխանիկն։ Սա հաղթարում է ժողովրդին և այդ
խաչը մեծ թափաղով բերում, գնում ան տաճարում)

(Յերեկ հովիկ՝ աներ վեր աշխարհին,
Գիշեր չուրս վառաբ կապելը վեր տաճարին։)

18 Կամբոստա և Մ. Արեղյաճ, Հազար ու մի խաչ, շինյալ Բ, 50-րդ նրդ։
19 Պատմութիւն Եանակցին Միտական, արարեալ Ստեփանոս Օրբելյան արքեպիսկո-
պոսի Միւնեաց, Քիջլիս, էր. 338, գլուխ ԿԹ, «Վանորայն և ուրա եկեղեցեաց»։
20 Կազմած է վրդպակով՝ «կարեալ», «խաղ»։
21 Կնիւն—փափուկ նրդ, որից փախթ (խոխր) են գործուծ։

Նրդի աչա առաջին մասը, ինչպես ասվեց, եունն է, ինչ որ Ստ. Օր-
դըյանի պատմած դարւցըր, միայն շափածո բանաստեղծութիւն վերած-
ված: Ասկիչի հետաքրքիրը, ասկայն, այն է, որ այդ գրույցին միացել է մի
ուրիշ անկախ մաս, և կազմել է մեծ վիպական գեղեցիկ երգ, իսկա-
կան վիպական ոճով հորինված, 196 տողից (հիշված փոփոխակի մեջ,
կրկնակերպը չհաշված): Այդ գարգացումն առաջ է անել արևու, որ առա-
ջին դարւցին զեղարվեաւորեն հարակցված է փրոն շարունակութիւն
այն, փնչ որ կա պատմված եան մեր մեծ վեպերի մեջ և սը հաճախ կա-
տարւթած է կյանքի մեջ.— Եկեղեցիների կողպատումն այլազգիների կող-
մից: Արատեղ այլազգին է պարտիկ խանը, փոփոխակի մեջ՝ քուրդ պա-
րունը: Հայերի կողմից չի պահատում մասնիչը:

Մեկ ջում գրգիթ կար մեջ գեպին,
Մարտավ հարց ջուր հալտու.
Գնաց, ասաց Քուրդ Պարունին.
Ետաչ մի աներ Հայոց ազգին...
Էն վայել շէ Հայոց ազգին,
Էն վայել է քո գիվանին,
Ակն ու գոհար քո խանաւին,
Յերեկ հով քանի քո թերդին,
Գիշեր լուս սոս քո քաղաքին:

Քուրդ Պարունը երկու մարդ է ուղարկում խաչը անեղեցուց հարիչ-
տակելու, խաչը կատարեցնում է նրանց: Քուրդ Պարունը գործ է ուղար-
կում հայերի դեմ, յայց գործի մարդիկն փրար կատարում են: Այլ երբ ես
ուզում է նոր գործ ուղարկել հայոց ազգի դեմ, այդ ժամանակ՞

Բերդ երեւաց վեր վր հիւմն,
Կատղավ Պարուն մեջ իր թերդին,
Ձին էլ կատղավ մեջ ախոռին.
Կատղավ մանուկ օրորոցին,
Կատղավ խանում մեջ իր օղին,
Կաթն էլ կատղավ մեջ պրդընձին.
Կատղավ գրգիթ մեջ իր գումին,
Դարձավ, կերտավ միան իր անձին:
Ասոս կ'ըլնեմ կարտա հաշին:

Քուրդ Պարունը զըրում է և սովեն ինչ որ ունի՝ մատաղ է խոստա-
նում կարտա հաշին. քայց նրա խոստումները շեն անց կենում խաչի մոտ:

Քուրդ Պարունի բերդ ավերեց,
Աշխարհ թափան եկան վերան:
Հիվանդացուց էն շում գրգիթին,

Կերն ընկալ զրգրի բերան.

Մեռալ, ստարտն չեջ խորեցին,

Շըներ հանին, տարան, կերան:

Այս վիպական երգը ծագած է և միմյանցից անկախ մասերի նա-
րակցումով զարգացած է շատ պարզ կերպով հկեղեցական միջավայ-
րում իրրև արտահայտությունն նկատ դասիպարախոսությունն ու շահերի
Պրա մեք շնչումված է, շատ հողեորականության հայացքի, եկեղեցու հո-
վանալորու նշանակությունը հայոց սզգի համար. րայց որ գլխավորն է՝
արևտեղ տեժեղ կերպով անդրադարձված է արն գաղափարքը, թե եկեղե-
ցուն դիպչորն փնջը կրկնաավի, իսկապես, ըստ անհնախադքի, առկայի
կերպով մարտահանալի հենց նրա գերբնական զորությունից: Այդ հար-
կալոր էր հողեորականության շահերի համար, և հողեորականությանն
այդ քարտեղ է ամենատին դարելից ի վեր: Հիշենք միայն Քուզանդի
(Գ. դպր. Գ. գլխ.) արտամածը, թե ինչպես ցահանայապետ Վրթանեսին
սպանել և Մշտրշատի եկեղեցին ավերել ուղղեկերի գրագուկց փրտքան-
չիս յետս դարձեալ փ վիրայ իրաքանչիս թիկանց, արտանց իրիք կապ-
լոյ՝ սքանչելապէս կապիալ լինէին: Այսպէս պաշարեալք, ընկապճեալք,
գնչեալք, վանեալք, կեկեալք, ամենեցիան առ հասարակ յերկիր անցեալք
անրադրատ կալին, անխաղաքց փ տեղադին:

Իր այս և այլ քարափառնեքը հողեորականությունն ամեն կերպ աշ-
խատել է պատմապետն ճտև մյոս դասերի մեջ: Մի անգամ տը ղկար հայ
ազնեվականությունը վրամ շատ անըղան վր դարձած, արվելիկ տե ընկել
էին և Հայաստանի քաղաքները, — մեռւմ էր միայն գլուղացիությունը
հողեորականության արտը իր պրտպտգանդայի ու քարտղությունների
համար: Եվ պրա հետևանքով այդ դարաշրջանից ի վեր՝ գրաքացու վրա
ավելի ևս զորացել է եկեղեցականի ազդեցությունը, որ և արտացոլում
է գրաքացիների միջավայրում ասպտած այս վիպական երգի մեջ, ձայնը
ճնշված, հարատահարված են այլազգի ֆեդդալների կողմից, լուրկ եկե-
ղեցին փ՛նչ էր քարտղում նրանց, — իստյի գերբնական պատահատող գո-
րությունը, իստյն է կոլում կողորուլչնեղի դեմ... Այդ էր քարտղում և
երգում հողեորական փր ջարտարանների մեջ ևս.

Սուրբ խաչն օգնական հավատացնից՝

Կանգնեցաւ փ յերկրի յաղիտղ թշնամտոյն...

Աս վ՛ ալն յաղթուցեան...

Եւ սովաւ ջաղթեացոց անորէն թշնամտոյն:

Ահա թե փնչ ենք գտնում այս վիպական երգի մեջ ևս իրրև հետևանք
այդ դարափառախոսության — կրտնական արաքատմոնքը, շքեղ ժուեր դնել,
աղոթք, թափոր, խաչ համբուրել, մատաղ, մատունք, հրաշազորություն
ու հրաշալիքներ, իստյի երազ գալը քահանային և այլն: Եվ իստյն ինքն
իրրև մի կենդանի էակ թուրմ է.

Քրաւ, գնաց մէջ կարոս ածուին...
Կարոս հաշ թըռավ գիրկ Տեր Օհանին...

Աշապն նաև սկսեալն Մտերիս մի հրկու պատումի մեջ հանդես է դարիս Դավթի հաշ-Պատարագինը:

Մի անգամ որ դրութիւնն աշապն է, բնականաբար կարող էին այլազգի ֆետրալները կողուպտել ամեն ինչ, ասելով՝

Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է քա ղիվանին:

Նվ այդ բռնակալ փշխաններք կողմից տղարկւած երկու մարդն անգամ կարող էին համարուակ և անարգել վարակել, ինչպես տղոսմ են: Դիմադրող չկա: Հայկական ազնովականութեանը դեռ չի անհետացած, բայց նա այլևս հին սաղմիկը չէ.— նա խեղճացած ու խնդրող է միայն: Ահա թն նա ինչպես է ձրդի մեջ դիմապտրոս երկու կողոպտիչներին:

Խարար տարան մեծ փշխանին,—
Աստփած որնչի էն փշխանին,—
Կանչեց Մահմադ, կանչեց Ազին,
Ասաց. սերնդիր կ'անեմ Քուրդ Պարոնին,
Աղաչանք կ'անեմ Քուրդ Պարոնին,
Ին բուն շումի հարց խաչին,
Կուզի տակի, կս է տակին.
Կուզի արծաթ, կս է արծաթ,
Չեո մի դարկեք կարոս խաչին:

Չեն ընդունում, գնում են լուսարարի դռուը.

Քափքով զարկին են կոտարարին,
Ելով, բերով օրնով ոսկին,
Ասաց. «Առեք ձեր սարքի գին,
Դարձեք, գնացեք վեր ձեր հետին...»:

Դարձյալ չեն ընդունում: Նրանք գնում, մտնում են ձկնղեցին և երբ ձլնում, կանգնում են բեմի քարի վրայ և ձեռ ձգում խաչին, այն ժամանակ՝

Կատղավ Ազին, կատղավ իր ձին,
Դարձավ վեյսով փր ձիու ցին.
Կատղավ Մահմադ, կատղավ փր ձին,
Ատամն ստաով թևի կաչին,
Ինչպես կտրի ձին իր գարին.
Լցին սեղ մաղն խարարին,
Ուղարկեցին Քուրդ Պարոնին:

Երգն սարդնն գլուղական է դարձած, բայց գլուղացին դրա մեջ բո-
բորովին կրավորական դրուժյան մեջ է. հոգեդրամատոթյան քարոզը
թմբեցրել է նրան, թնայտ և արտաքին հարվածն ամենից առաջ նրան
է հասնում: Մահմադն ու Ալին հենց որ հայ գլուղն են մտնում՝

Փնտ մի զարկին գեղականին

Ինչքան էլ վեպի սկզբում իբրև գործող անձեր հանդես են գալիս
հոտաղները, բայց նրանք ներկայացուցիչ չեն իրենց դասի և աշտա-
հատիչ չեն իրենց շահերի ու գաղափարների: Կրոնական տգին թափան-
ցել է հոտաղների մեջ անգամ:

208. Նարեկացին:— Այդպես չէ Գրիգոր Նարեկացու մասին երգված
սլաւամական հրքը, որի մեջ պատմված մեկ նյութ հրաշագործությունները²²,
Գրա մեջ արատականը Նարեկացին է, մեկ էլ այն, որ ժողովուրդը դա-
րեր շարունակ հատաւապել է նրա հրաշագործությանը:

Այդ երգված գրույցները նույնպես անպայման գալիս են հին ժա-
մանակներից և ժողովրդական են դարձած, ինչպէս թերևս հին կրոնական
գրույցները ժողովրդական երգիչների կողմից ձրգ ու ոտանավորների են
վերածված: Գրանց մեջ սարդն աշխատավոր գլուղացին, մշակներ են
հանդես գալիս, և Գրիգոր Նարեկացին, այդ հրաշագործը, մասնց հաց
ու ջուր ստանողն է: Ես թողնում, գնում է Ղազիզու կապանը. այստեղ
Ապա՝ նա մանրամասն գրում է դեերի ու վիշապների մասին, ինչպես և Մարութա վանքի, Դավթի հուռութքի (խաչ պատարադին), Դավթի զենքերի, Կայծակի թրի, Հալյունի թրի, հրեզն ձիերի և այդ բոլորի ծագման մասին, ըստ ժողովրդական հավատալիքների: Մեջ է բերում Վեպի գլխավոր դիցազնական մոտիվներն ու էպիզոդները՝ հովվութունը, զուսթանով վար անելը, որսորդութունը, անմահական կաթնազրյուրը, ուժ փորձելը և այլն: դիցազնական վիպական ամուսնությունը, դիցազնական կանանց տիպերը, զուսաններ, փահլեաններ, Համբարձման սոն, աստղեր, մեռելների ուրվականներ և այլն, — բոլորի մասին մանրամասնորեն բացատրություններ է տալիս դիցազնական-վիպական տեսակետով, հստակ մեղքերով ու նման մոտիվներ մեր սնոտիպաշտական հավատալիքներից ու նեֆիարներից, հրեմեն և այլ ազգերի վեպերից, ինչպես՝ Մհերի և Ջոհրարի մանկությունը, կամ Ռուստամի և Մհերի ուժը և այլն:

Մեք նպատակը չէ, — գրում է նա, — ազգային վեպի գեղարվեստական քննություն գրել: մենք ուզում ենք մատնացույց անել միայն նրա դիցազնականության վրաս: Ապա բացատրվում է, թե թավան չէ, որ հերոսը սիրագործություններ անի, նրանից պահանջվում է նաև ներքին բարոյական արժանավորություն, ներքին բարոյական ուժ, մեր Վեպի մեջ՝ առանձնապես՝ արդարություն և ուխտապահություն: Պահանջվում է, որ հերոսն իր գործերը կատարի ընդհանուրի օգտին: Եթե նամի դիցազններից ևս պետք է ժողովրդի զաղափարատիպ (— իրեայ) կազմող դիցազն ազատե իր ժողովրդին: Եվ ահա Մարա և Սասմա քաղաքների կոփվեցրը, որ հիշեցնում են Իրանի և Թուրանի կոփվեցրը Շահնամի մեջ:

Սասմու տերերը հանգիստանում են իբրև ժողովրդին սիրելի, ազնիվ տիպեր, որոնց գլխավոր ուղ ու միտքը նրա վրա է դարձրած, որ իրանց հրկիթը պաշտպանեն օտար բռնությունների դեմ: Մարա մելիքներն, ընդհակառակն, ժողովրդի համար սիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեփական ժողովրդի վրա բռնություններ են իշխում: Եվ այդ լավ կերպով երևում է պատերազմի մեջ Եփր հալիվորս զինվորի խոսքերից. Ե՛րավիթ, դու ինչո՞ւ էսա մարդեր կը սպանես... Մարամելիք գորով ի բերի:

«Ահա այս իր ժողովրդի համար իսկ՝ առեկի Մարամելիքը կոտորում է իրեն հարկատու դարձնել Սասունը... Դալիս է Դավթի վրա և այլն:

Դավիթը, ըստ այն ժամանակի առասպելաբանական տեսության, հանդիսանում է մարդկանց բարեկամ սկրտսեր գիցազն, իսկ Մարամելիքը՝ մարդկանց թշնամի Եավազ դիցազն: Դրա համար և օտ Եայնպիսի

պարագաներով է նկարագրված Վեպի մեջ, որպիսի պարագաներով նկարագրվում են մեր Հեքիաթների մեջ դիվական անճոռնի, հրեշավոր արբանեհրը։ Նա իբրև մի տիտանական հսկա, դեհրի պես յոթն օր անզարթնելի քուն է մտնում... նրան զարթնեցնելու համար պետք է երկաթի շամփուրը կամ գուլանի խուլը կրակացնել և տալ նրա ոտքերին։ Պետք է երևակայել այն հսկան, երկայնադեզ, անհեղեղ հսկան,— ինչպես խորհնաջին գրում է Քելի հսկաների համար,— որի համար շիկացած երկաթով խարեղը նույնն է, ինչ որ հողածինների համար լվի կծիւր, որից մարդ պարթնում է, բայց դարձյալ թմրության քնի մեջ է մտնում։ Եւրատհայտության սույն եղանակը,— ասում է նա,— գտնում ենք ռուսաց տարբրական ավագ գյուցաղետուհի նաստասիա Միկուլիշինայի և մարդամասն կրտսեր հսկա Գորբինիա Նիկիտիչի մեջ։ Գորբինիան երեք անգամ իր բոլոր ուժով լախտով ետևից խփում է նաստասիային, բայց սա միայն երբորդ անգամ ետ է դառնում և ասում՝ ես կարծում էի, թե մոծակներն են կծում։

«Վերջապես Մարմելիցը զարթնում է և, իբրև մի տարբրական գծրնական հսկա, ավելի ավագ, քան թե Գավիթը, որ մարդամասն կրտսեր հսկա է, մի տեսակ արհամարհական հայացքով, կարծես, բարձրից՝ ամպերից է նայում Գավթի վրա և փչում։— Նրա փչելով ամեն մի հասարակ արարած պիտի թռչի Կատարյալ նմանութուն մեր Հեքիաթներում պատմված երկաթի մարդկանց նկարագրին, որոնցից մեկի պատկերը գտնում ենք Սրվանձայանի «Համով-հոտովի» Խան-Քոզու անձնավորության մեջ։ Երկաթի մարդ Խան-Քոզուի փնտրողից Քաղիկանը մի արտ է միայն հետու թռչում և այլն։

Այսպես՝ և ուրիշ գիցաղեական գծրի մասին մեր ժողովրդական վեպն ուսումնասիրելու առաջին փորձի մեջ։

«Մուրճի խմբագիր Ավետիք Արասխանյանը «Մուրճ» 1889 թվի տեսության մեջ գրում է. «...Մանավանդ ուշադրության արժանի է վերջինս (սպ. Արեղյանի ազգային Վեպ ընդարձակ ցննադատությունը), որը քննադատության ուժով ուզում է վերականգնել մեր Հին քանաստեղծական աշխարհը, մի դործ, որը անշուշտ գրավելու է ընդհանուրի ուշադրությունը և մնալու է ներկա թվականի հայոց քննադատական գրականության կարևորագույն վաստակներից։

Լնոն էլ կատարում է իր խոստումը, Այն նոր հոգվածը, որի մեջ ուզում էր «մանրամասն խոսել», նա պատրաստում է Մուրճի քաղաքի վերնվում հիշված ընկերական գրական երեկոների համար։ Դա 1889 թ. կարգացվում է այնտեղ, հետո 1890 թվին հրատարակվում է Մոսկվայի սշանդես գրական և պատմականից մեջ, ապա առանձին գրքով արտատպվում է «Մատենախոսություն», բայց իսկապես մի ընդարձակ ու մանրամասն վերապատում է իրեն, Լեոյի, դատողություններով, բացատրություններով ու բնորոշումներով։ Նա սիրով կանգ է առնում ոչ միայն Հերոսների քննվորության և արարքների վրա, այլ ավելի ևս Վեպի արվեստի ու գեղեց-

կութիւն: Եւ այս անգամ,— գրում է նա,— ամեն մի Հայ ընթերցողի առաջ դրված է մի այնպիսի զործ, որի վրա որքան շատ մտածես, այնքան շատ գեղեցկութիւններ կտեսնես: Ե՛րազիթ և Մ՛հերը վեպը Հրատարակելուց Հետո, մենք էլ ամենայն իրավունքով պարծենալու հիմք ունենք, որովհետև մեր ժողովուրդն էլ եղել է գեղեցիկ գործի հեղինակ: Եւ այսպէս, Հասարակ ստեղծագործութիւն է նրա ինքնուրույն վեպը», ամեն ինչ պատմում է զարմանալի սառնասրտութիւնով: Ստեղծողի հոգին լի երեւում: Քիստեհերն են միայն, որոնք խոսում են Հրատարակում: Ե՛րազիթը, զա մի ժբարեբար ուժ է. իսկ Մ՛հերը հենց առաջին օրից երևում է իբրև շար պատուհաս, պատիժ... վնասակար ուժ, մթին դժոխային զորութիւն: Ե՛րազիթը շնք կարող ասել, թե Մ՛հերի վեպի կազմութիւն վրա ազդեցութիւն է արել պարսից հուշակապով հերոսական պոեման, երկուսի նմանութիւնը միայն շափազանց մեծ ուժն է, շահութենքը միևնույնը չեն: Ե՛րազիթը ժողովուրդն ավելի խնամքով է նկարագրել բարի և շար ուժերը, քան պարսիկ ժողովուրդը:

Վերջում հենց ավելացնում է, թե Ե՛րազիթ և Մ՛հերը մի պատմական է, որի վրա կարող է բարձրանալ մի Հրաշալի բանաստեղծութիւն: Ուրեմն՝ մի առաջարկ մեր Վեպը գեղարվեստորեն մշակելու, ավելի ճիշտ՝ վերաստեղծելու:

Նոյն այդ աշխատութիւն մասին 1891 թվին մի գրախոսական է տպւում Ե՛րազիթ ամսագրի մեջ Փլ. ստորագրութիւնով (= Փայանթար, Ալեքսանդր Փալանթար), Ե՛րազիթ լրագրի ապագա խմբագիրն այդտեղ առաջարկում է Շահնամի հերոսների հետ համեմատել մեր Վեպինը, և որ կարևորն է՝ մեր Վեպը հարեանցի, բայց շատ ճիշտ կերպով կոչւում է Ե՛րազիթական (Սասունիական):

Ե

Տողերիս գրողը 1890 թվին հունիսի սկզբներին գնաց Էջմիածին և այնտեղից իր նախկին աշակերտներից մեկի հետ սկսեց Արագածի շուրջը պատել ժողովրդական բանահայտութիւն նյութեր ժողովելու և առանձնապէս մեր Վեպի վարիանտներ որոնելու: Բայց հազիվ մի քանի գլուխ պատելուց հետո, հիվանդութիւն պատճառով, ստիպվեց Կոչ գլուխից վերադառնալ Էջմիածին:

Նույն ամառը նա եղավ Նախիջևանի Աստապառ գլուխում՝ Ծրնգակի մի քանի գլուխերում՝ Փորագաշա, Նորս և այլն: Ապա նա գնաց Հին Զուղա, Ազա, Աղուչիս, Փաղաքիկ, կարծելով թե հին Գողթան վիպասանների սերունդներ կգտնի այդտեղ: Այնտեղից անցավ Մեղրի, պատեց Ղափանի մի քանի գլուխերը, եղավ Հալիձորում, Տաթևում, Գորիսում,— կարծելով, թե քաղերի համարով վայելող այդ վայրերում կգտնի Հայ ժողովրդական վեպը: Բայց, ավագ, ոչ մի տեղ զրա հետք չերևաց, և մինչև որս էլ այդ կողմերից Վեպի ոչ մի վարիանտ երևան չեկավ, և ընդհանրապէս շափազանց քիչ ժողովրդական երգեր:

1891 թվի աշնանը Քիֆլիսում Արեղյանը էլմիածնից ստացավ մի սովոր հատոր ժողովածու «Փշրանքներ ժողովրդական բանահյուսու-թյունից» վերնագրով: Այդ ժողովածուի ժողովրդական բանահյուսություն-նր նախորդ տարում գրի է առնված էլմիածնում գաղթական ժողացիներ-րից և Ապարանում մի քանի գյուղերի բնակիչ ասացողներից: Նա, իբրև անգամ «Քիֆլիսի հայերեն գրքերի Հրատարակության խմբագրական մասնաժողովի», այդ ժողովածուն առանձին ղեկուցումով ներկայացրեց տպագրելու համար: Ենթադրական մասնաժողովը ընդունեց այդ առա-ջարկը, միայն որոշեց Վեպի նոր վարիանտներն առանձնացնել մյուս նյութերից և տպագրել իբրև «Մասունցի Դավիթ ժող. վեպի երկու նոր վարիանտներ»: Տողերիս գրողն այս վերնագիրը դտավ անհարմար, առարկելով, թե Վեպի մեջ բացի Դավիթից ուրիշ հերոսներ էլ կան: Վերջ ի վերջո «Փշրանքներ» վերնագիրը պահվեց նրկորդ գրքի համար (գիրքը տպ-վեց 1892 թ.), իսկ Վեպի վարիանտները տպվեցին «Մասմա Մոեր» վեր-նագրով:

«Մասմա Մոերի» առաջաբանի վերջում ավելացվեց հետևյալը.

«Մի քանի խոսք ևս Վեպի «Մասմա Մոեր» կոչման մասին: «Մասուն-ցի Դավիթ կամ Մհերի դուռ և «Դավիթ և Մհեր» վերնագիրն ամբողջա-պես չի արտահայտում Վեպի բովանդակությունը, որովհետև բացի Դավ-թից և Մհերից Վեպի մեջ կան և ուրիշ գործող գլխավոր հերոսներ (Սա-նասար, Ասլիմեից և ուրիշները): Այդ ի նկատի ունենալով՝ մենք ավելի հարմար ենք գտնում այդ Վեպը մի ընդհանուր վերնագրով անվանել «Մասմա Մոեր», որ նշանակում է «Մասունի Գժեր»: Այդ կոչումը գեղեցիկ ու արտահայտիչ է միանգամայն ժողովրդական է, որովհետև Մասմա Մուռ է Վեպի մեջ գործող յուրաքանչյուր հերոսը, և մինչև յայսօր էլ ժողո-վըրդի բերանում գործածական է Մասմա Մուռ կոչումը Վեպի ամեն մի հերոսի համար և ժողովուրդն այդ Վեպը «Մասմա Մոեր» է անվանում: Մասմա Մուռ կոչումը Վեպի հերոսների համար կա և Սրվանձտյանցի վա-րիանտում: (Այստեղ իսկապես «Մասնու Մոեր» է):

Այսպես ահա գրվեց մեր Վեպի «Մասմա Մոեր» անունը:

Եվ այդ անունով 1892 թվին հրատարակվեց ոչ թե՛ շատ նոր վարիանտներ, այլ մի քանի պատումներ՝ մեկն Ապարանի բարբառով և երեք (ոչ ամբողջական) պատումներ Մոկաց բարբառով:

Նույն 1892 թ. «Նոր-Գար» լրագրի երկու համարի մեջ մի ընդարձակ գրախոսական տպեց տողերիս գրողը «Վարսամ» ստորագրությամբ: Ման-րամասն որոշելով այդ նոր վարիանտների կարևորությունը պատմական և դյուցազնական ուսումնասիրության տեսակետից, նա գրում է. «Վեպը դյուցազնական է, պիտք է, դյուցազնական վեպի բնավորության համե-մատ, Վեպի գլխավոր հերոսները սերված լինին աստվածներից կամ կեն-աստված դյուցազն լինին: Սրվանձտյանցի և Արեղյանի վարիանտներում մուխը հիշատակություններ միայն կան Մասնու Մոերի դյուցազնական ծագման մասին, բայց Մոկաց նոր վարիանտի մեջ («Մանասարի և Բաղ-

դասարի ծնունդը) պատմվում է Սասնու Մանրի նախահայր երկու եղ-
բայրների զիցային ծագումը, որ Սովի աստվածութիւնից է:

Այսպէս ուրեմն, մեր Վեպի սկիզբը, ինչպէս ուրիշ ազգերին ևս, դի-
ցարանական բնավորութիւն ունի:

Բացի այդ՝ երեսց, որ Վեպը տարածված է և մեր կողմերում, հատ-
կապես ապարանցոց մեջ, որոնք գաղթված են Մշու և Թուզանընի կողմե-
րից: Ժողովրդի հետ գաղթել է և Վեպը, որ բարեբախտաբար այս նոր
հայրենիքում մոռացութեան չի տրվել:

Սպասելի էր, որ դիտական խմբեր կազմվեին և գունե իշխածնում,
որ ամեն կողմից հայեր էին ժողովում, և Ռուսական Հայաստանում
զրի առնվեին նոր վարիանտներ: Բայց ցավոք, լեզուով այդ Մեր գրագետ-
ները նույնիսկ լանդրադարձան այդ նոր, շատ կարևոր ժողովածուին:
Զգրվեցին ուրիշ գրախոսականներ: Կարծես կշտացել էին և բավականա-
նում էին նրան վարիանտներով:

Երեք տարի հետո, 1895 թվին, Շուշվա դպրոցների ուսուցիչ Հակոբ
Ճաղարբեկյանը, որ վերնում հիշված ընկերական գրական երեկոների
ակտիվ մասնակիցներից էր, աշդու՞թյամբ իրագործեց այդ երեկոների
ծագած մի միտք: Նա բավական ճաշակով, թեթև գրական լեզվով, վա-
րիանտներից ընտրեց, իսկապէս հյուսելով վերապատմեց և հրատարա-
կեց 1895 թ. սեպտեմբերի Գալիթի:

Այս հյուսվածքն ահա արժանացավ գրախոսականների սերտատա-
ւամտազրի և սՄշակն լրագրի մեջ: Ինքը Ճաղարբեկյանն էլ շէրձագանջեց
լրագրի մեջ տպեց մի հոդված մեր Վեպի մասին: Ե՛ր Գալիթի մեջ, — ասում է
նա, — ժողովուրդը միայն իր ազատութեան և հայրենասիրութեան գաղա-
փարը չի մարմնավորել, այլ ընտանիքի սրբութեան: Բայց մենք շարու-
նակենք:

Շուշվա հիշված գրական երեկոների արդյունք է և հետևյալը: Այդ-
ուեղի թեմական դպրոցի տպարանի կառավարին էր, իր եղբոր հետ, Վա-
հան Գաղայանը (հետո՝ հայիկ վարդապետ): Նա հաճախում էր գրական
երեկոներին և ներկա էր եղել Վեպի մասին տրված զեկուցումներին: Ահա
նա Պարսկաստանի Առաքելոց վանքում գրի է առնում մի պատում, որ է
նույն 1895 թ. տպագրվում է իշխածնի սերտատումն ահ. Վ. Ե. ստորա-
գրութեամբ ու Տեղա Գալիթի վերնագրով:

Դա մի առանձին տիպի պատում է, որի մասին սն. Փ. Ե. (= Նիկողա-
յոս Փարամյան) գրում և սպում է մի առաջաքան: Ե՛ր Գալիթի, —
ասում է նա, — մի շատ հետաքրքրական շրջանի ծնունդ է Դա ոչ գու-
ցազներգութիւն է և ոչ հեքաթ. այլ մի գուցազներգութիւն, որ հեքաթի
է փոխարկվում: Նրա մեջ մի կողմից տեսնում ենք մեզ հայտնի գուցազ-
ներգութեան հետքերը, և մյուս կողմից հեքաթի տարրեր, որոնք հատուկ
են (իրեն հասարակ տեղիք) մեր բոլոր հեքաթներին: Ի՞նչ նա բերում է
այս ճիշտ դիտողութեան համար օրինակներ:

Երկու տարի հետո, 1897 թ., «Братская помощь» ժողովածուի մեջ վերատպվում է Փր. Խալաթյանի վերնում հիշված բուսերեն թարգմանությունը, մի նոր առաջարանով, որ փոքր մասով վերաբերում է մեր նոր վեպին: Այստեղ արդեն Խալաթյանը փոխել է իր հայացքը Վեպի հետքի մասին: Նա Վեպի սեկցիաների խմբագրությունը՝ այլևս չի դնում սքրիտոնենություն առաջին դարերում, այլ գրում է, թե «Վեպը, գոնե իր հիմքով, վերաբերում է, ինչպես ենթադրում եմ, հարավ XI—XII դարերի ուշ ժամանակին, այսինքն՝ այն գարաշրջանին, երբ գործողություն տեղում, Սասունում իշխում էին դեռ հայ իշխաններ, իբրև բնիկ տեղեր, ինչպիսին են նրանք մեր պատմվածքի մեջ: Այդ վերաբերում է Դավթի ճյուղին: Այս դարձյալ նա գրում է. «Դավթի Նույնպես անշահ ֆիզիկական ուժի տեր է, ունի աստվածային ծագում»:

Երկու դեպքում էլ, ուրեմն, Փր. Խալաթյանը յուրացրել է հողմածիս հեղինակի տեսակետը, որ նա արտահայտել էր 1889 և 1892 թվականներին:

Այսպես ուրեմն, 1874-ից մինչև 1898 թվականը, 24 տարվա ընթացքում լույս տեսան Վեպի պատմությունների միայն չորս հրատարակություն:

8

Մ. Աբեղյանը 1898 թ. աշնան ստանձնում է Էջմիածնի ճեմարանի լսարանում հայոց գրականության դասախոսի պաշտոն: 1898—1899 ապրիլ 1901—1902 և 1904—1905 թվականներին, ինչպես և հետո երեք տարին մեկ անգամ, երեք միացյալ լսարաններում դասախոսում է մեր ժողովրդական բանահյուսության, առանձնապես մեր հին և նոր վեպերի մասին: Բնականաբար դրա հետևանքով էջմիածնում և Վաղարշապատում զարթնում է մի մեծ հետաքրքրություն մեր Վեպի նկատմամբ ոչ միայն ուսանողների, այլև ուրիշների մեջ: Էջմիածնի բանվոր մշակների և հենց ճեմարանի ծառայողների միջից երևան են գալիս Վեպի ասողներ, որոնց բերում են Աբեղյանի մոտ: Բայց սա ծանրաբեռնված լինելով իր դասախոսությունների նյութը և հին Վեպի մասը տպագրության համար պատրաստելով, այդ նոր վարիանտները գրի առնելու գործը հանձնարարում է վերջին կուրսի մի ուսանողի և ուրիշներին: Երկու տարվա մեջ գրի են առնվում և մինչև 1902 թվականը տպագրվում են ութը նոր պատումներ: ԵԱրարատ ա մասգրում, «Աղգագրական Հանդեսի» մեջ և առանձին գրքերով:

Այստեղ էջմիածնում էր ծառայում, հետագայում շատ հայտնի բանահավաք Սարգիս Հայկունին: Նա իր պաշտոնով շատ մոտիկ շփում ուներ պանդուխտ մշակների հետ, նա գրի առավ մի վարիանտ, նրա թի գար-

* Այդ աշխատությունը՝ «Հայ ժողովրդական ուսուցիչները Մ. Կորենացու Հայոց պատմության մեջ մաս-մաս պատրաստելով՝ տպագրել էր տալիս «Արարատ» ամսագրի մէջ.

քառով, որ և նույն 1898 թվի վերջում տպագրվեց «Արարատ» ամսագրի մեջ, լրդիտեմ ինչու անստորագրիւր Հաշորդ տարում նա շարունակեց այդ գործը և գրի առավ ուրիշ շորս պատումներ ևս:

Այստեղ կարևոր է հիշել նրա մի ծանոթութիւնը (մի պատումի վերջում, տպված 1901 թ., էր. 15, հտն.) մոկացի, կուժանցի և օղմեցի զրգարանների մասին, որոնք թափառելիս՝ օգաններում ասում էին Վեպը. «Մոքս իրենց արհեստը ուր որ գործ կը զնեն, անգ ևս կպատմեն Սանասար ու Թաղաասար, Գալիթ և Մհեր, նաև այլ հեքաթներ... Խումբ խումբ կտարածվին ամեն կողմեր... Յուրաքանչյուր խումբ ունի մի հատ նաղլ ասող, որպէսզի թե իրենք այդ լարքաշ կյանքի մեջ զբաղվին և թե որ գլուղ զնան, զբաղեցնեն նույն գլուղացիքը: Որ մեկ խմբի մեջ որ լավ նաղլ ասող եղավ, այդ խմբի պատիվը շատ է. նույն խմբին լավ և առատ ուտելիք կտրվի: Մի խումբ, երբ առաջին անգամ մի գլուղ մտավ, գլուղի օղայի տերը կամ ռեսը կհարցնեն, և թե իրենց մեջ լավ նաղլ ասող լինի, կընդունին»:

Հենց սույն 1898 թվի սեպտեմբերին հրատարակած էր իբրև ուսուցիչ էջմիածնի Ընթացքում ծառայելու նորավարտ Թաղաասար Խաչատր Խաչատրյանը: Նա ինքնահոծար գրի առավ մի վարիանտ, որ և տպագրեց տված էջմիածնում հաշորդ տարվա առաջին ամիսներին՝ «Մասնա փահչևաններ կամ Թլոր Գալիթ և Մհեր» վերնագրով, ուտանավորի տողատման մասին խորհրդակցելով Մ. Արեղյանի հետ: Նա մի ծանոթութիւն մեջ գրում է. «Մենք գրի առած ունենք և մի քանի նոր վարիանտներ, որոնք կը մտնեն մեր ժողովածուի մեջ: Այդ ժողովածուն, որի մասին ուրիշ տեղ էլ նա հիշում է լույս շտեմով»:

1899 թ. կայացրիւ լույս տեսավ տողերիս գրողի մի աշխատութիւնը գերմաներեն լեզվով, «Շաշ ժողովրդական համատեքը», որ տպագրութիւն հանձնված էր 1898 թվին: Այստեղ նա «Ամպրոպային գրույցներ» ընդհանուր վերնագրի տակ ունի մի պարագրաֆ՝ «Կայծակի հերոս Սանասար» վերնագրով: «Ժողովրդական Վեպի մեջ, — գրում է նա. — Սա-

* Եփեթութիւնից զերծ պուհելու համար զնում եմ հանելուք. Բ. Խաչատրյանը 1895 թ. վրենստում տպված իր «Շաշ գլուղազնական վեպը» գրքույնի մեջ, էր. 4 ծան, գրում է. «1898-ին գիտական ուղեորութիւնու վաճառակ Մոսկվայի նայտը. Ազգ. Հնկ. կողմից՝ նրբվալան նահանգում գրի եմ առած մտա 12 վարիանտներ, որոնցից ընդարձակագրույցը հրատարակած եմ էջմիածնում 1899 թ. (երկի պիտի լինի՝ 1900 թ.) «Թլոր Գալիթ և Մհեր» վերնագրով: Խաչատրյանի հիշողութիւնը խաբել է նրան: Այդ վարիանտը նա գրել է 1898 թվի աշնանը էջմիածնի ճեմարանում ուսուցիչ նրան ծամունակ, զրա առայարտի տակ ինքը գրել է «1 նոյեմբերի 1898 ամի. Ս. էջմիածին», զբաղեցիլի ստորագրութիւնը կրում է՝ «12 համվարի 1898 թ., Թիֆլիս»: Ուրեմն 1898 թվի վերջին կամ 1895 թվի սկզբին այդ գիրքն ուղարկվել է գրասենիչին: Իսկ զրգի հրատարակութիւն տարին նշանակված է՝ «Եւզգարշապատ, 1898»: Եվ, վերջապես, ինքը Խաչատրյանն էլ վրենստում 1898 թ. տպված գրքույնի սկզբում գրել է վեպի ասացող Զատիկ Խաչատրյանի կենսագրութիւնը, որի մեջ ասում է, թէ նա, Զատիկը, «1898-ին եկավ էջմիածին, այտեղ նույն թվին մեջ գրի առնեց նրանից մեր «Թլոր Գալիթը և Մհերը»: Ուրեմն՝ 1898 թվին:

նասարը, անշուշտ մի փոքր մթնած, հանդիսանում է իբրև մի կայծակի հերոս և վիշապամարտիկ։ Նա ևս իր երկվորյակ եղբոր հետ ծովից է ծընված և կոչվում է ծովային։ Այսպես անվանում է նա ինքն իրեն, ցույց տալու համար, որ ինքը հողեղեն չի։ Երկվորյակ նորարարների մայրը միևնույն կերպ է հղանում, ինչպես գերմանական հեքաթի մեջ այն եղբայրների մայրը, որոնց համեմատել է Մանհարդը (իր Գեներման, միթոլոգիայի մեջ, եր. 216 և հտն.) Ինգրայի հետ։ Նա գնում է ծովափին զբոսնելու... մի աղբյուր է քղիւում, կտանում խմում է մի բուռը լիքը ջուր, մի բուռ էլ կիսատ և թողից հղանում։ Հետագայում Մովային Սանասարը մտնում է ծովի տակ, ձեռք է տերում հրեղեն ձիւն, Այնտեղ նա խմում է կաթնաղբյուրից և դրանից դառնում է լեռնանման, ստանում է շափազանց մեծ ուժ և կարող է իր թշնամիների հետ կռվել... Սանասարի զենքն է կայծակի թուրը, որ նա հրեղեն ձիւն հետ ձեռք է քերում ծովում... Սանասարը գնում է առասպելական Պղնձե քաղաքը, որ շրջապատված է բարձր պարիսպներով և դուռ չունի, նրա հրեղեն ձիւն թռչում է քաղաքի մեջ։ Այնտեղ մուժն ու սև է, այլև ջրի պակասութուն կա։ Քաղաքորի հրապուրելի դուռերը, որ փայլում է ինչպես արեգակ, նստած է իր սև բնակարանում, ինչպես բանտի մեջ։ Նրա պատուհաններին կախված են սև վարագույրներ։ Սանասարը նրան առնելուց առաջ պետք է կռվի ծովի մեջ վիշապի հետ։ Նա կռվում է ծովի մեջ վիշապի հետ և վիշապի գլխից խղում է ակը։ Այդ միջոցին վիշապն իրեն թափ է տալիս, ջուրը լցնում քաղաքի մեջ, շոր թրջվում է, այնպես որ կարծես անձրև եկած լինի։ Ե՛հ նշ են տեսնում հետևյալ օրը։ Քաղաքորի դատեր պատուհանները բացվում են և նրա լույսը տալիս է քաղաքին, այսինքն արեգակ-աղջիկն տալատված է։ Այս առասպելի մեջ ծովի վիշապի հարարներութունը արեգակ-աղջկա նկատմամբ ոչ բուրոսվին պարզ է... Բայց և այնպես ակներև է, որ դա մի ամպրոպային առասպել է, որի մեջ արեգակ-աղջիկը հայտնվում է վիշապից, ինչպես այդ երեան է դալիս ամպրոպային կռվի մեջ։— Ավելացնենք, այժմ, որ ուրիշ վարիանտների մեջ անձրևի հետ ասվում է, թողը կատաղավ, վիշապ քամի քաղաք եղավ։ Ե՛ս ամպ մի Սանաս հետ եկավ— ամպրոպային առասպելի հետքեր են այս ամենը, ինչպես և այն, որ երկվորյակ եղբայրները կանաչ քաղաքում սպանում են աղբյուրի ակին նստող վիշապին և ազատում աղջկան։

Այս մասին համառոտ կերպով հիշատակված է Կառ Մ. Արեղյանի «Հայ ժող. առասպելներ» գրքի մեջ (եր. 138), որի տպագրութունը Նույն թվին սկսվեց։ Նա սվահագնի առասպելը գլխի մեջ խոսելով ամպրոպային աստվածների ծովածին լինելու և կայծակի հերոսուհի Մովինարի մասին, գրում է. «Մովածին է և արդի ժողովրդական վեպի մեջ կայծակի կամ ամպրոպային հերոս Սանասարն իր եղբոր հետ։ Նա իրեն անվանում է Մովային, ունի կայծակի թուր, որ ստացել է ծովից, ունի ամպրոպային առասպել, կռվելու վիշապի դեմ և կռվի մեջ հողմ հարուցանելով և անձրևելով»։

Այս միևնույն գրքի մեջ (երես 577 և հտն.) Մ. Արեղյանը Սանասարի և իր եղբոր զբույրը Քաղզազի հայիֆայի — Սենեքերիմի որդիներ լինելու և Հայաստան գալու (ըստ Մշու պատումների) ոչ թե մի պատմական հիշողութիւն է համարում, այլ թե դա Վ. Գրքի ազդեցութեան տակ է կազմելով ձայն մեջ: Ուրեմն մի նոր տեսակետ վեպի առաջին ճյուղի ծագման մասին:

Այս 1899 թվականից սկսվում են արդեն մեր ժողովրդական վեպի գեղարվեստական մշակումները: Առաջին փորձն անում է Գրիգոր Քալասանյանը իր մի գրքուկով՝ «Առյուծածև Մհեր», օաջպային պոեմա — դուցազներգական-լափական բանաստեղծութիւնն: Նա վեպի բովանդակութիւնը շատ ազատ կերպով ոտանավորի է վերածում: Ե՛մ նպատակն է եղել, — գրում է նա, այդպիսի գեղեցիկ փորձերով տալ հայրենական ազգատիկ գրականութիւնը այսպիսի լափական դուցազներգութիւններ: Հետո նա հաջորդ տարիներում տպագրում է և ուրիշ այսպիսի հատվածներ վեպից:

Ապա 1903 թ. տպագրվում է Հովհ. Քումանյանի «Սասունցի Դավիթը»: Երկու տարի հետո՝ 1905 թվին «Մուրճ» ամսագրում տպվում է Լևոն Մանվելյանի «Սասունցի Դավիթ» սգրամատիկական պոեման դուցազնական ժամանակներից: Ապա Ավետիք Իսահակյանը 1923 թվից ի վեր մշակում է Մհերի ճյուղից հատվածներ՝ «Մհերը քարայրում», «Մհերի բերդը», «Մշակ Մհերի բողոքը», «Մհերի կոիվը Սասնա Զոռանց դեմ», «Սասնա Մհեր», վերջերս Վաղարշյանի «Սասունցի Դավիթը» ոտանավորով դրաման:

Կան և ուրիշ մշակողներ, և այսուհետև շատ ուրիշ նորերն էլ կլինեն մեր ժողովրդական վեպի անսպառ նյութին ձեռք տվողներ:

Գառնանք բանասիրական աշխատանքներին:

8

Փարիզում 1901 թ. լույս է տեսնում Բ. Խալաթյանի «Բրանի հերոսները հայ ժողովրդի մեջ»: Երևան է գալիս, որ ըստ մեր ասացողների՝ պարսից և հայոց վեպերի հերոսները ցեղակից են: Այդ ցեղակցութեան մասին տեղեկութիւն կար 1899 թ. «Արարատ» ամսագրի փետրվարի համարի մի ծանոթութեան մեջ: Այդ ամբիլի մանրամասն պարզվեց Խալաթյանի գրքի Իրանի վեպի հերոսների մասին պատումներով:

Ասացողներից մեկը, Մուրադ Մխիթարյան, գրում է Բ. Խալաթյանը, Իրանի հերոսների սցենը սերում է ուղղակի Մհերից, որին հայտնում է նրա որդի դիվամարտիկ Ռուստամի Զալն: Սա արդեն ասացույց է, որ ժողովուրդը ճգնում է հաշտեցնել իր հիշողութեան մեջ միմյանց հանդիպած զանազան փառչեաններին... Հայացնելով օտարներին: Քննարկեմ

վերնագրով (եր. 24) վիսպական հատվածի մեջ Ջալը Սասուն քաղաքի թագավորն է, Դավիթը՝ Ջալի հղբայրը, Բուրզնէ՝ Դավթի որդին, Բուրզնի հորեղբայրն է Լուվան, որը երբեմն նաև Ձենով Լուվան (եր. 56) է... Այս բոլոր հերոսների հայրենիքը Սասունն է, և նոքա այստեղ ևս, ինչպես և մեր ազգային վեպի մեջ, օտարների ալքում կոչվում են «Սասնա Մոհրա» (եր. 25): Մի ուրիշ հատվածի մեջ՝ «Թուստամի Ջալս վերնագրով, որ Խալաթյանը գրի է առել Ապարանի Չամբուլ գյուղում, Թուստամն իրեն Սասունցի է անվանում (եր. 74) և Կարմիր Դեխց հաիշտակած ավարը Սասուն տանում (եր. 76): Այսպիսով տեսնում ենք, որ պարսից վեպի հերոսները հայացած են և ազգակցական նեղ կապերով միացած մեր ազգային վեպի հերոսների հետ՝: Խալաթյանն իր հիշյալ գրքում մի թեթև համեմատություն էլ է անում հայկական և իրանական վեպերի: Երկու տարի հետո, 1903 թ., Վիեննայում լույս է տեսնում Բ. Խալաթյանի մի ուրիշ գրքույկը, արտատպված 1902 թվի «Շանդես Ամսօրյա»-ից՝ «Շայ ժողովրդական գյուցազնական վեպը՝ հանդերձ քննադատության», երևի ուզում է ասել՝ հանդերձ ուսումնասիրությանը կամ հետազոտությանը:

Սկզբում իբրև առաջաբան, անկախ կերպով, դնում է Սասունի ժողովրդի մասին Թովմա Արծրունու հաղորդածը, որ տողերիս գրողն արդեն բերել էր 1889 թ.: Ապա ընդհանուր կերպով մի քանի շատ ծանոթ բան ասելով՝ «Հայ ասոզներին և աշուղների մասին, Վեպի ոտանավորի և երգերի մասին, տալիս է Վեպի մանրամասն բովանդակությունը: «Շայ դիցազնական վեպի պատմական սերմնա վերնագրի տակ՝ դարձյալ շատ ընդհանուր ձևով խոսում է բարեկարգ, պարսից և աստվածաշնչի ազդեցությունների մասին և վերջը Սանասարի և իր եղբոր կրույցի համար հայտնում է, թե քանական է, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում Ս. Գրոց Սանասարին (—Շերեզեր) հայ դյուցազն է մկրտել, նրանից սերելով Սասուն գավառի անունը: «Ոչ մի կապ չունենալով մեր ժողովրդական վեպի հետ, որ պատմական սերմից է աճել, այս (=Սանասարի և իր եղբոր) գրույցը պետք է այն արվեստական հանգույցների շարքը դասել, որոնցով ժողովուրդն անգիտակցաբար երբեմն կապում է իր ավանդույթյանց թելը հրապարակելով անվանյալ արտաքին նմանությունը: Ուրիշ խոսքով, այդ գրույցը Ս. Գրոցից է, ինչպես հայտնել էր Արեղյանը 1899-ին: «Սակայն գրույցս նրանով է հետաքրքրական, — շարունակում է Խալաթյանը, — որ նրանում ըստ օրինակ հոմեոպատիկ ավանդույթյան՝ երկու հարազատ նղբայրներ քաղաքի հիմնադիրք են հանդիսանում. առհասարակ երկու հղբարց արկածները կազմում էին թափառական ավանդույթյանց նյութ. բավական է հիշել Թոմոկոս և Ռեմոս և այլն: Եվ Բ. Խալաթյանը մեջ է բերում մի շարք գույգ եղբայրների անուններ, որոնց

* «Թուստամ Ջալի ժողովն ու նշանակությունը գրված 1904 թվին և առանձին գրքով ուղարկված Թալի, ժողովրդական վեպ» գրքույկի համար, որ 1905 թ. արտատպված է «Նզդ. Հանդես» 1901 թվի 7—8-րդ գրքերից:

գրույցները, սակայն, շատ էլ նման չեն մեր Սանասարի և իր եղբոր գրույցին, ինչպես օրինակ Կալինի և Արելի:

Փառով Մեծ Մհերին՝ նա ասում է, թե առյուծին կես անելը հիշեցնում է մի քանի դուրսագններ, որոնք հաղթում են գանազան հրեշներին՝ դև, վիշապ, առյուծ, թևավոր հրեշ: Եկայտիսով և այս միջադեպը միանգամայն օտար սնունդ է մեր բուն հայուցազնական ավանդույթից շարժումը:

Կարևոր է Պավթի մասին գրածը: Ե՛լայ դիցազնական վեպն իսկապես հանդես է գալիս Պավթի Սասունցու ավանդույթուններում, որոնցում տըպագավորվել է հայ ժողովրդի պատմական վիճակն արարացոց արջավանքի ժամանակ, խորը դրոշմվել այն դարավոր ազգային կոնվեր, որ ի վերջո ի գահ բարձրացրեց Բագրատունյաց հարստությունն (885 թ.): Ապա ընդհանուր տեսությունն է անում արարական շրջանի՝ ճնշումների, հարկահանութան, ապստամբությունների, առանձնապես Վասպուրականում և Տուրքերանում IX դարի կեսերին, Թուրքի ավերմունքներն և հայ իշխանների գերումը: Վերջը խոսում է Ապուլայի Արծրունու որդի Գուրգենի և սրա ամուսնության մասին: Եկհավասիկ այն պատմական հոլը, որի վերա են աճել Պավթի ավանդույթուններն, — ասում է հայաթյանը:

Այդ բոլորը շատ ճիշտ է, և տողերիս գրողն արգան 1898—1899 թվերին իր գասախոսությունների մեջ այդ շեշտում էր: Այդ ընդհանուրից հետո՝ նա, հայաթյանը, չի կենտրոնանում Սասունի պատմության վրա՝ և այդ պատմության հետ չի համեմատում վեպի քավանդակությունը: Սասունի պատմական հերոսներից միայն հուլիցի Լովանի հիշատակն է նա գտնում Ձենով Լովանի անձնավորության մեջ, որ նույնպես հենց սկզբից հայտնել էր տողերիս գրողը: Մնացած վիպական հերոսների նկատմամբ նա առնում է Արծրունիներին, Կարծես Սասունցի Պավթը վեպը լինեք Արծրունիների վեպ և ոչ Սասունցիների: Այսպես, ըստ հայաթյանի, վեպի Վեդոն, դա բնավատուրաց Վասակ Արծրունու տիպարն է: Վիպական հերոս Պավթի մեջ նա տեսնում է Աշոտ Արծրունի և ավելի՛ Գուրգեն Արծրունի: Ե՛մբկու հերոսների (այսինքն՝ պատմական Գուրգեն Արծրունու և վիպական Պավթի) կենաց մի քանի մանրամասնություններ մեզ հիմք են տալիս նոցա անձնավորություններն ձուլելու, — գրում է հայաթյանը, Իսկ ի՞նչ են այդ հիմքերը:

Ես. Պավթի ինչ ինչ ավանդույթուններում Ե՛լիճկերի տղա է կոչվում, որ նմանություն է քերում Գուրգենի հոր Եկպուլայիճ անվանը:

Այս հնչունական նմանությունը, սակայն, շատ պատահական է: Ե՛լիճկա ժողովրդական բառը նշանակում է՝ շաղգամ, շաղգամի տերևներ: Եկպա շաղգամի, սոխի, գետնախենձորի, կարտոֆիլի այն մանրմունք մնացորդները, որ անճար աղքատներն են հավաքում: Գրանից կազմվել է Ե՛լիճկեր, կամ Ե՛լիճկերի տղա, որ արհամարհական կերպով ասում են աղքատներին: Վեպի վարիանտների մեջ Պավթը շաղգամի արտից պլեճներ է հանում ուտում. դրա համար նրան ասում են Ե՛լիճկեր կամ Ե՛լաղգամական, նայելով վարիանտին:

Խալաթյանի հրկրորդ հիմքը հետևյալն է.

Եր. Գուրգենի ամուսնությունն անձնացյաց տիկնոջ հետ իր սիրահարական մանրամասնությամբ՝ մոտ հիշեցնում է Դավթի և Խանդուբ Խաթունի պատկերը: Իսկ ի՞նչ է այդ պատկերը:— Գուրգենի սրբորձ համբավը գերեց անձնացյաց տիկնոջ Հնդկնեի սիրտը, որն իր ամուսնու մահից հետո, ըստ օրինակ ժողովրդական վեպի հերոսուհու, հայտնում է իր սերը քաջին. «Ընթե հաճոյ թուխցին քեզ կնութեան և կամիցես քեզ զտիրին Անձնացեան,— գրում է նա նրան,— մի վեհերեալ յազարելով դանդաղկոտ լինիր և վերջանար զգութիւնս: Գուրգենը շտապեց տիկնոջ կույին և տիրեց նրա երկրինս:

Դավթը, հարկավ, չի տիրում Խանդուբի երկրին, իսկ մնացածը մի շատ տարածված վիպական մոտիվ է: Նույնն անում է ոչ միայն Խանդուբը, այլև Իսմիլ Խանումը, Նույնիսկ երկրին տիրելու առաջարկով. այլև Գեղձուն-Սամը և շատ ուրիշները զանազան ազգերի վեպերի մեջ, ինչպես Ռուսթավելու «Վաղրենավորի» մեջ Դարեհանը Տարիելին Նույնիսկ երեք անգամ է իմաց տալիս, թե սիրում է նրան, նամակ գրում նրան, և Նույնիսկ կանչում իր մոտ:

Եղ. Արաքական զորապետից Գուրգենին պարզեած զենքերը բառացի համապատասխանում են Դավթի հայրական Քուր Կեծակին, Ոսկի Քամարին և Քուրկիկ Զալալին: Բայց Գուրգենը Բուդայից պարզն է ստանում՝ Սուտեր... գոտի... զմիջառ... քուրք (= գալազան)... և երկվար և ոչ թե զլիսու գոտին, Քուրկիկ Զալալին, Քուր Կեծակին... իսկ Դավթը դրանք ոչ ոքից պարզն չի ստանում...

Այս հիման վրա ահա Գուրգենն ու Դավթը օձույզում են և դառնում են «Գուրգեն-Դավթ» սինականարար Գուրգեն-Դավթի վերա ժամանակի ընթացքում,—ասում է նա,—կարող էին և Աշոտ Արծրունու... շահատակություններն կուտակվել: Բայց թե ո՞ր սշահատակություններն չի առնում:

Ընթե այդպես է, ինչի՞ վեպի հերոսը Գուրգեն անունը չի կրում, այլ Դավթը: Խալաթյանն այդ բացատրում է այսպես. «Այսպիսի մի հույակավոր հերոս, որ... որի մի հարվածով գետին է ստապում հսկա Մարտիկ լիթին, ժողովրդի իսկապես Դավթը պետք է թվար, որ սպանում է Գուրգենին: Համեմատությունը շատ հրապուրիչ էր, և այս անունը ժողովուրդը ընդմիջում իր սերելի դուրսագնին է հատկացրել: Բայց նա միևնույն ժամանակ լավ հիշում էր, որ աստվածաշնչի Դավթը, նախքան թագավոր օձվելը, իր հոր հոտն էր արածում և զանազան զազանների հետ մեկնամարտումս:

Այսպես ուրեմն, ըստ Խալաթյանի, Մասունցի Դավթը Գուրգեն Արծրունի լինելով հանդերձ՝ է՛ Ա. Գրքի Դավթը: Մարամելիքը՝ Ս. Գրքի Գուրգենը, մեր Դավթի զառնարածությունն ու նախորդությունը՝ Ս. Գրքի Դավթի հովվութունը: Այդ բավական չէ. «Է՛ստ երևույթի,— ասում է Մա,— նույն հոգի վերա է հաստատվել Դավթի և Ահնով Հովանի ազգակ-

ցությունն: Հին Կտակարանի տեղեկությունն արքայորդի Հովնաթանի սիրո մասին առ Գավթ... և վերջինիս ազգականանալն նրա հետ արդեն բավական հիմք են տվել ժողովրդին մեր վնասի երկու հերոսին ևս միմյանց արշուճակից ճանաչելու: Տողերիս գրողը նախաթյանից առաջ իր «Հայ ժողովրդ» առասպելները գրքի մեջ արդեն հայտնել էր մեր Գավթի և Մարամելիքի և Ս. Գրքի Գավթի ու Գողիաթի զրույցների նման լինելը: Բայց ուրիշ տեսակետով: Գրելով Հայկի ու Քելի առասպելի մասին, նա ասում է, որ խիստ տարածված նման վիպական պատմվածքներ շատ կան, ինչպես են օրինակ, «Գավթի և հակա Գողիաթի կոխվը», որին նման է Սըմբատի ու Հնվթաղի կոխվը (Սեբեոսի մեջ), իսկ այս երկուսին նման է մասամբ միայն, Տրդատի ու Գթաց իշխանի կոխվը: Հայկի ու Քելի կոխվը՝ որանց նման լինելով հանգե՞ր՞՝ ավելի նման է Սամի և Փերքոյի կոխվը: Մենք օրինակները, որոնց նմանները հետո էլ կը տեսնենք, կարող էինք բազմապատկել: Այսպես է Ջուլյայի և Ռոստոմի մենամարտը, հայհուլայից խոսքերով, նման, մեզ ծանոթ Գավթի ու Գողիաթի, Գավթի ու Սըմբատի լիքի կոխվը և իր մյուս ընկերներին: Այս և բազմաթիվ նման զրույցները, ասում էր Աբեղյանը, ոչ թե մեկը մյուսից փոխառություն են, այլ բոլորն էլ իրենց ձևով մի ժողովրդական ամփոփումն են թշնամի ազգերի մեջ եղած նախնական կոխվների, որոնց մեջ պարագլուխներն առաջին տեղն են բռնում: «Այսպիսի ժողովրդական զրույցները... զանազան ժողովուրդների բերանին միատեսակ կերպարանք են ստացել, քանի որ ամեն տեղ էլ ազգերի վիպական շրջանում ընդհանրապես... պատերազմներն իրար նման են»: Պրանք ընդհանուր վիպական մոտիվներ են, ինչպիսին է, օրինակ, նաև երկու նշանածների, Գավթի ու Խանդուկի մենամարտը, որի հետ Խալաթյանը համեմատում է ռուսական ժողովրդական վնասի հերոս Գունայի մենամարտն իր նշանածի հետ:

Այսպես էլ հայկական վնասի իրանական ազգեցությունը ցույց տալու համար՝ Խալաթյանի զրքույկի մեջ բերված նմանությունները բոլորն ընդհանուր տարածված վիպական դժեր են, որոնց վրա միայն հիմնվելով՝ կարելի չէ հզորակացություններ անել: Գրքույկի վերջում Խալաթյանը խոսում է Մհերի ու Արտավազդի առասպելի մասին և երկար կանգ է առնում Միթրա աստուծու վերաբերմամբ:

Մի բան էլ: Զմշկիկ Մուլթանի անունն ամեն ընթերցողի իսկույն հիշեցնում է Հովհաննես Զմշկիկ կայսրի անունը: Բայց ոչ ոք չէր խիզախել այդ երկուսին նույնացնելու թ. Խալաթյանն այդ անում է. «Այստեղ հետաքրքիրն այն է, — գրում է նա, — որ Հունաց Հովհաննես Զմշկիկ կայսրն (969—976) իրրև կրեարմատ է հանդես գալիս՝ շարունակելով պահել իր սուլթանն տիրողոսը: — Խալաթյանը կարծում է, թե սուլթանն միայն թագավոր է նշանակում. սուլթանն նշանակում է նաև՝ թագուհի, պլսո, արքայուհի: Զմշկիկ կայսրն ունեցել է մի ժամանակ մի սիրուհի, որ Ամիթ քաղաքի տերն էր, նույնպես Զմշկաժագեցի», ինչպես և կայսրը՝ սժողովուրդն անգիտակցաբար փոխադրել է վերոհիշյալ ավանդությունն Գավթի:

զերա, կայսեր անունը տալով նրա սիրուհունք. բայց թե ինչու է հղել այդ փոխադրումը, ինչու «Զմշկիկ սուլթանը», այսինքն «Զմշկիկ թագավորը» դարձյալ դարձել է Դավթի նշանածը, այդ չի պարզվում. և երբեք չի պարզվի:

Դասանք մի ուրիշ աշխատություն, Ինչպես վերևում գրվեց, Մ. Արեղյանը 1904—1905 թվերին էջմիածնի ռեմարանում երրորդ անգամ դասախոսեց մեր ժողովրդական վեպի մասին, և այդ թվին էլ նա տպագրություն համար պատրաստեց իր «Հայ ժողովրդական վեպը» աշխատությունը, որը և ամբողջապես 1905 թվի ամառը Այնթափի գրատպարանում հանձնեց Նրվանի Հարայանին՝ «Ազգագր. հանդեսի» մեջ տպագրելու համար: Դա մաս-մաս տպագրվեց 1906—1908 թվերին: Նույն 1906 թ. Ստեփան Կանայանը, էջմիածնի ռեմարանի ուսուցիչ, «Արարատ» ամսագրի մեջ, ապրիլ ամսի համարում, սկսեց տպագրել իր մի աշխատությունը՝ «Մամիկոնյանց պատմություն», Ա. Մամիկոնյանց նշանակություն և պատմության աղբյուրները: Այդ ժամանակ Արեղյանի աշխատության մի մասն արդեն տպված էր «Ազգ. հանդեսի» 1906 թվի երկու գրքում: Ապա Կանայանը «Մամիկոնյանց պատմության» երեք «հավելվածներ» տպեց «Արարատի» նույն թվի հունիս—հուլիս, օգոստոս—նոյեմբեր և դեկտեմբեր համարներում: Հետո նաև 1907 թ. «Արարատի» մեջ մի հոդված, որ և արտատպված է «Ջողանց տան... վեպի պատմականը» գրքում: «Հավելվածները» տպվեցին, բայց «Մամիկոնյանց պատմություն» այնուհետև այլևս ոչ մի տեղ չհրատարակվեց: Թեպետ և տողերիս գրողի աշխատությունն ավելի վաղ էր կատարված և մասամբ ավելի վաղ տպված և 1898—1899 թվերից սկսած՝ դրա որոշ հղբյուրները զուտախոսությունների և հրատարակարի քննությունների միջոցով բավական ընդհանրացած էին, բայց և այնպես նա այստեղ քննության կառնեմ նախ Կանայանի հիշված հոդվածները:

Ձեռնարկելով գրել «Մամիկոնյանց պատմություն» նա սկզբում հայտնում է, թե «Մամիկոնյանէ, որոնք Դ — է դարում նյութ են դարձել ժողովրդական երգերի, դրույցների և առասպելների իրենք և իրենց երկիրը, Տարոնը, մանավանդ թե Սասունը դարձրել են գլխավոր առարկա և ասպարեզ մեր ժողովրդական գյուցազներգություն» Սասունցի Դավթին և Մհերին: Թե ինչի վրա է հիմնում նա իր այս դրույթը, այդ մասին ոչինչ չկա ասված, թեպետև վերևում դրված Ֆրազից առաջ կա՝ «Այս դրույթից հետո հասկանալի պիտի լինի, թե Մամիկոնյանք...» խոսքը: Բայց դրանից առաջ ոչինչ այնպիսի բան չկա բացատրած, որից հասկանալի լինե՞ր այդ հետևությունը: Բայց շարունակենք արտագրել:

«Սասունի ավիտարանի հիշատակարանում հիշատակված Վիգենը կամ Վեգենը Սասունցի Դավթի՝ ժողովրդական վեպի Ցոսան Վեգեն է: Թեպետ և հիշատակարանը գյուցազներգության նախատական մականվան

հակառակ մեծամեծ գովեստներ է շուայում Վիգենին, բայց վարդան պատմագիրը հաստատում է՝ պատմելով՝ թե Պարսից զորավար Էյակուզը վաթսուներե տարի տիրեց Սասունին: Կարիճ Սասունցին այլ մակդիր չէր կարող տալ Վիգենին, որին աննկուն Մամիկոնյանց անարժան շատավիճ էր համարել: Ի՞նչ է հաստատում վարդան պատմագիրը: Արդյո՞ք Վեգոյի նախատական մականունը.— բավական մութն է:

«Մամիկոնյան է անշուշտ Մշո Մուշեղ թագավորը... աստու որ Վեպի մեջ Մուշեղի անունն է միայն հիշվում, բայց ոչ գործերը, որոնցով կարելի չիներ որոշել, թե որ Մուշեղն է»: Ետունակենք:

«Սասունցի Գավիթն ինքը Սմբատ Մամիկոնյանի որդի Գավիթն է, Աշոտ պատրիկի (743—757) ախյանը, որ իր Գրիգոր եղբոր հետ Լման գերի է տարվում, ապա ազատվում է և ասպատակում Վասպուրականը»: Ապա ծանոթության մեջ, ուրիշ առթիվ, գրում է, թե այդ «Գավիթ Մամիկոնյանն օպանվել է Մրուան Բ. Օմայանի հրամանով, ուրեմն 740—750 թվականին»: Բայց թե ինչո՞ւ այդ Գավիթ Մամիկոնյանն է վեպի հերոս Գավիթը, այդ մասին և ոչ մի խոսք: Բայց դարձյալ շարունակենք:

«Մական ժողովրդական վեպը, որ ժամանակագրություն չգիտե, իր հատուկ ձևով ու եղանակով զուգորդել ու միացել է ուրիշ Գավիթների, այլ և Գավիթ Կյուրոպաղատի հետ, որ Մամիկոնյանց քնազավառ Տայթի տերն էր»:

Եվ Կանայանը մի ծանոթության մեջ գրում է, թե «Գավիթ Կյուրոպաղատը ըստ Ասորիկի... պատերազմում է Բատն կամ Բատ Ապահունյաց և Նիքիեթրոսի ամիրայի հաջորդ քեռորդիների քուրդ Մրուտնյանց դեմ, խուս է նոցանից Մանազկերտը Հայոց և Վրաց թագավորների օգնությամբ, հետո էլ պաշարում է Խլաթը, բայց չի կարողանում նվաճել»: Բայց թե ինչով Գավիթ Կյուրոպաղատն իր այս կենսագրությամբ կապվում է Գավթի վեպի հետ, այդ էլ չկա:

Իսկ ո՞վ են վերևում հիշված սուրիշ Գավիթները: Գարձայ ծանոթության մեջ գրում է. «Եվդիզ, երևի երկրորդը, Հայաստան գալով՝ մի ոտիկան... ուղարկում է Բագրևանդ, և Բագրևան գյուղի Մ. Գրիգորի վանքի միաբաններին ավելի քան քառասուն այր օպանել տալիս. մի հանգամանք, որ ժողովրդական վեպն այնքան շեշտում է... Ըստ Չամչյանի... այս Եվդիզի ժամանակ ապրում էր մի Գավիթ Մամիկոնյանը: Էլ ուրիշ ոչինչ: Եվ ահա օտ էլ դարձավ վեպի հերոսը... Բայց շարունակենք: Նույն ծանոթության մեջ կարգում ենք դարձյալ. «Բուղայի հրամանով 852 թվին բռնվում են Աշոտ և Գավիթ, Տարոնի տեր Բագարատ Բագրատունու որդիքը և իրենց հարազատների հետ ամիրապետին ուղարկվում» և այլն:

Ահա յորս Գավիթ: Հետագայում նա չի բավականանում Մամիկոնյաններով. «Ոչ միայն Մամիկոնյանք, այլև Արծրունիք և Բագրատունիք և ուրիշները՝ մերայիներ և օտարներ՝ նույնպես դարձել են առարկա մեր վեպի»: Ուրեմն մի շատ ընդարձակ ասպարեզ Վեպի մեջ հիշված անձնանունները պատմական անունների հետ նույնացնելու, կարելի է ասել ամ-

բողջ հայոց պատմութիւնը մինչև XV դարը, նա ժողովուրդ է և ժամանակի թե Սասունը, մի կողմ է թողնում այն, որ վնասը Սասնու տե-
րերի պատմութիւնն է:

Տեսնենք էլ ինչ Դավիթներ է գտնում նա: Վեպի պատմութեան յե-
կում Դավիթ վնասը երկնեզքվելով բաժանված է երկուսի. մեկի մեջ հե-
րոսը կոչվում է Դառնիկ Որբիկ. դա իսկապէս ա՛րաւ որք, հայր ու ծայր
լուսնեցող, հերոս Դաւիթն է, նա այս ա՛րաւնիկ բառը նույնացնում է Գրի-
գոր Գերեմիկ կամ Գերեմիկ Արծրունու հետ, ա՛րաւ Գերեմիկն անվան հետ, այլ
և մի ուրիշ իշխանի անվան հետ, որ է Գերեմիկ Անձնացի, սեյս միակ
փոփոխակում մեր դուրսագն Դավիթն է որդի Դառնիկ-Գերեմիկի, որի սե-
րունդներին է Արծրունի Սննեքերի թագավորի որդի Դավիթը. (որ) ու-
րեմն այս փոփոխակում բռնել է Սասունցի Դավիթ տեղը: Այս էլ, ուրեմն
որիշ Դավիթ, Հետո ընդարձակ բերում է նա լոռվա Դավիթ Անհողին թա-
գավորի պատմութիւնը. և վերջում գրում է. «Անտարակոյս է, որ այս
ընտրան ազգի են մեր վեպի և դուրսագն Դավիթ վրաս: Ապա դարձյալ՝
կար և Դավիթ Անհողինի թու Դավիթը:

Այսպէս, Կանայանը Դավիթների որոնումներ է անում: Տեսնենք թե
էլ ինչ անուններ է գտնում նա իր առաջին հոգովածի մեջ:

Խանդութի դռնապան ա՛րաւ Գորգի կամ Գորգիկ վրաց թագավոր
Գորգի կամ Գեորգեն է. կան համանուն և այլ թագավորներ:— Հենց այս-
քան, անուններ միայն:

Խանդութի այդ դռնապանն ուրիշ վարիանտում կոչվում է Համտու,
սրա համար էլ Կանայանը գրում է. «Համտու դռնապանը վրաց Ռուզու-
գան թագուհու դստան Համադուա իշխանը: Դարձյալ հենց այսքան,
անուններ միայն: Կանայանը մոռանում է, որ ա՛րաւ մեծիք ձեռ Ս. Ման-
դինյանինն է, և գրում է. «Արամեիք կամ Մուլամեիք = Մուսուլա մեիք,
որի դեմ կոչում է Դավիթը: Դավիթը կոչում է և Մուլամեիքի հարկապա-
հանքների դեմ, որ են Բաղին և Կողբադին... Սյուլի և Զարխադին: Արդ.
Ստեյի կեն-Պուլի Մահմեդական հարստութիւնը... ցանկերի մեջ գտնում
ենք նախ Բազ անունը, որ ունի և Ասողիկը, ինչպէս տեսանք: Ապա կան
մի քանի Կուտր-աղ-դին և Սիլֆ-աղ-դին և Զախի-աղ-դին, որ վեպի
Բաղին, Կուտրադին, Սյուլի և Զարխադին անուններն են: Դարձյալ
հենց այսքան, անուններ միայն:

Վեպի ա՛րաւը նույնպէս պատմական անձն է երևում և Մամիկոն-
յան. գեթ Մենու անունով մեկը մեկ հայտնվում է իբրև քաջ այր: Բայց
այս փոքր Մհերը հետագայում նույնանում է նաև Ռուբինյան իշխանազն
Միհրի հետ, միաժամանակ դա Միհր-արեգակն է, որոնց մասին քաղական
կանգ է առնում նա: Իսկ ո՛վ է վեպի Մեծ Մհերը:

«Մամիկոնյանց տեք Դավիթի որդի Մամիկոնյան Համազասպը վեպի
Մեծ Մհերն է: Վամազասպ անվան Համո ժողովրդի ցարդ սովորական
կրճատումը կարող է Մեծ, Մեհ փոխվելով՝ Մհերի հետ ժողովրդի բերա-
ձում նուրանալ, անհամապատասխան շենք հաճարումս ինչ որ էլ լինի, պատ-

մական իրողութիւնն է, որ Համազասպ Մամիկոնեանը Քնոզորոս Ռշտունու փեսան է, ինչպէս ժողովրդի վեպի Մհերը՝ Քնաթորոսի:

Քնաթորոսն է, ուրեմն Քնոզորոս Ռշտունին, վեպի Պայ թագավորը՝ հայոց Պայ թագավորը. Զենով Հովանը խոսիցցի Հովնանն է, հավանորեն՝ Մամիկոնեանն Քայց այս վերջինիս պատմութիւնը միացած է և թմովհան Պատրիկընը...

Քնոզ Քորոսը, որ և Քնոզորոս է, դա Եզեսիայի Քորոս Կուրապահատն է: Սրա պատմութիւն մեջ հիշվում են Վեպի Միսիթար թագավորն և մյուսն է՝ խոր Մանուկը: Եվ ինքը Կանայանը վերջում դրում է. «Ինչպէս վեպի մեջ Միսիթարն ու խոր Մանուկը հազիվ մի անգամ հիշվում են եւ այլ ոչինչ լիա նոցա գործերի մասին, նույն վ Համարյա և պատմութիւն մեջ, Միսիթարի և Մանուկի վերաբերմամբ: Ուրեմն դարձյալ լոկ անուններ:

Այս որոնումների ժամանակ Կանայանը, ինչպէս կարծիք է տեսնել ընթացքից, սիրով կանգ է առնում վեպի մեջ հիշված այն անձնանուններին վրա, որոնց մասին վեպը ոչինչ չի պատմում: Այսպէս՝ «Թանած Կուրիկն կամ թճու Կուրիկն — դա Կորիկյան թագավորների հիշողութիւնն է. մնճողով կամ մնճող փոքրիկ — դա խուլ խաչիկի գրույցի մեջ հիշված՝ Ընճուղն է, և նա երկար կանգ է առնում այդ Կորիկյանների ու խուլ խաչիկի գրույցի վրա, ցույց տալու համար, որ վեպի մի վարիանտի մեջ հիշված իշխան և Աբլադ անուններն էլ այդ խաչիկի գրույցից են: Քայց վեպի իշխանը ճշմարիտ է դառնում, դա միաժամանակ և Գրիգոր Աթորունին է, Գերանիկի հորեղբայրը:

Չի մոռացվում և իանդութ իսթունը: Մի ծանոթութիւն մեջ բերելով վեպի մի վարիանտից «Կազզվանու ամիրին աղչիկ մի կա, անունն իանդութն խոսքը, որից իմացվում է, թէ իանդութը կազզվանցի է, նա կցում է. «Մյուս կողմից Կազզվանը Կամսարականների երկրումն է, իսկ Մամիկոնեանն և սոցա խնամութիւնը հայտնի է Ե. դարից: Իանդութի հայրենիքը Կապուտկոզ կամ Քերզ Կապուտին (Գ. Մար. 40, 42) կարող է լինել Երասխաձորի, ուրեմն Կամսարականների, Կապույտ բերդը, որին տիրում էր Հմայակի որդի Գրիգորը: Ըստ այսմ իանդութը կարող էր ծագմամբ Մամիկոնեան ևս լինել: Վերջին սեռ թառից պիտի հեթաղորել, որ Կանայանը մտածել է, թէ իանդութը կարող է մի ուրիշ տոհմից ևս լինել: Երևի, Կամսարական: Քայց այդ չի ասում նա:

Այսպէս, Կանայանը, հիշելով վեպի անձնանունները, ձգտում է դրանք այսպէս կամ այնպէս նույնացնել նման պատմական անունների հետ, վերջիններս փնտրելով ամեն տեղ մինչև XV դարը, և շատ հաճախ պատահական ու հեռավոր բաներ: Վեպի ու Սասունի հետ-կապ շունեցող բաներ իբրև հիմք բերելով, ավելի ևս հաճախ առանց որևէ հիմնավորման առանց պայծառ ու մեկին հիմնավորման, քաղձաթիվ կրկնութիւններով:

Հերթը հասավ 1906—1908 թթ. տպված իմ «Հայ ժողովրդական վեպ» վերնագրով ուսումնասիրությունը: Բայց և այդ կթողնեմ ամենից վերջը և դրանից կտունեմ, առաջուց ասեմ, զլիսավորապես Վեպի պատմականությունը, ծագումն և զարգացումը: Այժմ շարունակենք առաջ ընթանալ ժամանակի կարգով:

«Արարատ» ամսագրի մեջ 1909 թ. տպվում են հրեք պատում Ս. Հայկունու, Հարություն Ավլյանի և Անհայտ Ռմեի դրի առած. դրանք արտատպվում են 1910 թ. «Ձողանց տուն» ընդհանուր վերնագրով Ստ. Կանայանի իմրագրությունում և մի առաջաբանով:

Այստեղ էլ Կանայանը փորձում է մի քանի անունների պատմականությունը որոշել՝ բողոքովին նույն կերպ, նույն մեթոդով, ինչպես իր նախորդ աշխատությունների մեջ: Հետաքրքիր է Պավթի ձուռ Քուրդիկ Զալալիի անվան բացատրությունը: Նա գրում է. «Արդ, ԺԳ. դարում կա մի հուշակավոր հայ իշխան Հասան Զալալ Պուլ (1214—1261) տեր խաչենոս և այլն և ապա բերում է այդ իշխանի պատմությունը: «Արդ, այս Զալալի հայր Վախտանգ Տոնկիկը մի զարմանալի ձի պիտի ունեցած լինի: Վրաց տարեգիրները պատմում են, որ Քամարա թագուհու մարզը, Պավթի Սոսլանը, Զազամի ճակատամարտին, Շամքորի մոտ, նստել էր մի ձիու վրա, որ գնել էր Վախտանգ խաչենացուց, ոչ ավելի և ոչ պակաս քան մի բերդ և գլուզ վճարելով... Կարելի է ուրեմն երևակայել, թե ինչպիսի լափազանցություններով այդ ձիու գովքը կը հնչվեր Հայոց աշխարհի բոլոր կողմերում, որտեղ անձանթ չէր Զալալը իր քաջություններով, բարի գործերով և հզորական վախճանով: Բայց այդ ձիւն եղել է Վախտանգիսը և ոչ թե Զալալինը և արդեն անցել է վրաց իշխանին և սատկել, երևի, այն ժամանակ, երբ Հասան Զալալը դեռ ոչ մի համբավ էլ ունեցած չի եղել: Այդ նշանակություն շունի: Ժողովուրդն այդ ձիւն կոչել է «Զալալի ձիւ», ինչպես ինքը Կանայանը մտանում է, որ ձիւն Վախտանգին է եղել և բավանդակություն մեջ գրում է. «Քուրդիկ Զալալին, ոչ քորդ Զալալ հայ իշխանի ձիու սևուկը: Իսկ այս սևուկընք էլ այսպես է բացատրված: «Հասկանալի է, որ մի ձի կարող այսքան երկար ապրել, բայց նորա սերունդը հաջորդաբար նույն անունով կը կոչվեր. և Ձողանց տան վեպում հիշվում է, որ ժառանգ գլուցաղնի ձիւն իր հոր ձիու սերունդից էր:— Այս էլ թե ինչու «Քուրդիկ Զալալին» է կոչվում և ոչ թե «Չի Զալալին»: Բայց այդպիսով դառնում է «Զալալի սերունդ» և ոչ թե «Զալալի ձիու սերունդ»...

1910 թվին գրած այս Առաջաբանի մեջ կան և ուրիշ հատուկ անունների այսպիսի բացատրություններ, որ թողնում եմ:

«Քուրդիկ Զալալինի» անվան բացատրությունը գուցեով՝ փորձում է տալ Տ. Զիթունի. 1911 թ. «Հալալի» = գորշախառն, գորշասպիտակ (չալ) ու նարնջագույն, ոսկեգույն (ալ): Բացի այդ՝ արարեքն շելալա կամ շելալի» = մեծահատ, վեհություն ունեցող, ալլև՝ անհանգիստ, ըմբոստ: (Զիթունիի ժող. վեպերու հիշած ձևերը): Կավելացնենք, որ «Հա-

լալի» նշանակում է նաև ավազակ հուշկաճար, ելուզակ, Ինչպես էլ լինի, այդ գլուցազնական ձիու անունը դեռ մնում է բացատրելու:

Հիշենք նաև, որ Տիգրան Զիթունին նույն 1911 թվին տպած իր հոդվածի մեջ առաջարկում է մեր ժողովրդական վեպն ընդհանուր անունով կոչել «Մասմանց տուն»։ այս լսել է նա պատմողներից: Այդ կոչումն առաջ էլ հայտնի էր, ինչպես կա նաև «Մասնա տուն» կոչումը նույնիսկ պատմվածքների մեջ, այլ և մի պատումի մեջ «Ջոլանց տուն», իսկ ուրիշների մեջ այդ «չոչերը» կոչվում են «Ազնանք», «ազնանց» ցեղից, որ է՝ ազնվականներ:

Գալով վարիանտներին, 1909 թ. Վիեննայի «Հանդես ամսօրյա»-ի մեջ տպվում է մի կիսատ մնացած պատում, Տիգրան Զիթունու գրի առած, ապա 1912-ին Կ. Պոլսում հրատարակվում է «Մասմանց տուն» Սպարկերտի բարբառից զրականի վերածածո՝ «Ազգ. Հանդես» մեջ ևս տպագրվում է 1910 թ. «Մասնա տուն» նրով. Լալայանի գրի առած, 1911 թ. «Ոստանա տուն», գրի առնողն անհայտ, և վերջապես Լալայանը 1913 թ. տպում է իր «Մարգարիտներ» գրքի մեջ մեր Վեպի մի վարիանտ, լզիտեմ ինչու, «Սենեքերիմ» վերնագրով:

Այսպես, տեսնում ենք, բարբառներով պատմվածք տպված են, կիսատներն էլ հաշված. 1874-ին 1 պատում, 1889—1895 թթ. 6 պատում, 1898—1902 թթ. 8 պատում, 1906—1913 թթ. 7 պատում, ընդամենը 22 պատում, 1 պատում էլ զրական լեզվի վերածածո:

10

1913 թվից հետո մինչև 1936 թ., ամբողջ 22 տարվա ընթացքում չի հրատարակվում ոչ մի նոր պատում: Արտասահմանում, որքան դիտեմ, տպվում է մի պատում, այն էլ ոչ լրիվ և ոչ ամբողջ բարբառով:

1916 թ. տպվում է Վ. Բրյուսովի ռուսերեն թարգմանությունը Արեղյանի վարիանտի առաջին մասի, որ և վերատպվում է 1935 թ., նույն թվին տպվում և վերատպվում են Իսահակյանի և Քումանյանի մշակումները 1916 թ. տպվում է ռուսերեն լեզվով մի մշակում Ա. Կոպեբյակինի՝ «ՄՀերի» դուռը: Վերատպվում է և Մ. Արեղյանի գրի առած պատումը:

1906—1908 թվերից սկսած չի հրատարակվում և ոչ մի ուսումնասիրություն մինչև 1936 թիվը: Կան Հովհ. Քումանյանի և Տիգրան Զիթունու մի քանի մանր դիտողություններ Սասունցի Գավթի ակնարկությանը, այլև Մ. Արեղյանի «Հայոց հին քանաստեղծություն» մասին Քիֆիսում 1916 թ. կարդացած զեկուցման մեջ, որ զբոլակով հրատարակվեց, Ինչպես նաև նրա «Հայաստանություն» հայ ժողովրդական վեպի և հայոց հին գրականության պատմության մեջ և մի երկու ուրիշ առթիվ գրած հոդվածներին: Ռուսերեն լեզվով գրվածների մեջ ևս կան հիշատակություններ մեր Վեպի մասին: Ինչպես Վ. Բրյուսովի «Հայաստանի քանաստեղծություն» ակնարկի մեջ, 1916 թ., այլև նույն թվին Գորկու խմբագրու-

Քյամբ րուսերեն լեզվով *ժՀայ* գրականությունն ժողովածուի *ժՀայ* գրականության տեսության մեջ: Բայց գրանցից և ոչ մեկն ուսումնասիրություն չէ և նոր բան չի ասում: *Ոչ մի* նորություն չի բերում և արտասահմանում 1930 թ. ֆրանսերեն լեզվով տված մի ուսումնասիրություն, որ հունական *Դիգենիա Ակրիտաս* վեպի մասին է, բայց վերջը բավական խոսում է և մեր *Վեպի* մասին, օգտվելով *Մ. Արեղյանի* գրածներից, բայց առանց անունը հիշատակելու:

Միակ արժեքավոր նորությունը գտնում եմ *Սպիրիդոն Մելիքյանի* 1935 թ. տպված *Քրիստոսի* հայ նրածառության պատմությանն աշխատության մեջ: Նա այստեղ շատ կարճ խոսում է մեր *Վեպի* իր գտած երեք երգված կտորների եղանակների մասին, թե սվիդյական բնույթ ունին և ասիմետրիկ ու թմբիկ ձևավորումն: «Թե այս հնագույն հատվածները և թե *Մովսես Միրզան*, պեկլարացիոն բնույթ ունին»:

Ինչպես կարելի է տեսնել, այս վերջին տասնամյակներում պակասել է, բայց բոլորովին չի վերացել հետաքրքրությունը մեր *Վեպի* վերաբերմամբ:

